Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1977 Թ.

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԵՐԿԵՐ
ԵՐԿՈՒ ԳՐՔՈՎ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԵՐԿԵՐ
ԵՐԿՈՒ ԳՐՔՈՎ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Ар 2
Դ—35

Դ 70303 (4034) / 701 (01) 75 77 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1977

ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԴԱՍԵՐԸ

I

Այս անունը ինձ ծանոթ էր պատանեկության տարիներից։ Ես դիտել էի «Քաջ Նազարի» առաջին ներկայացումներից մեկը, կարդացել դասագրքերում զետեղված նրա բանաստեղծությունները և պատմվածքները, մասնավոր գրավաճառից ձեռք բերել «Գարուն» ժողովածուն։ Գրողի կրտսեր ժամանակակիցն էի ես։ Նրան առաջին անգամ տեսա քսանական թվականների կեսերին, Աբովյան փողոցում, որն այդ տարիներին նման էր անտիկ աշխարհի ճեմարաններին։ Այդ խաղաղ փողոցում էին հանդիպում, զրուցում և զբոսնում Երևանի մտավորականները։ Նույնիսկ շոգ օրերին Դեմիրճյանը շրջում էր հովանոց-ձեռնափայտով, վերարկուն թևին գցած։

Միջահասակից քիչ բարձր, նիհար մարդ էր, սուր, թափանցող հայացքով, զուսատ դնմքին հեգնական ժպիտ։ Խոսում էր խուլ ձայնով, հաճախ կակազում։ Դժվար էր նրան լսել, բայց անհնար էր լսել անտարբեր։ Խելացի էր, անկրկնելի իր խոհերով և արվեստի կախարդական ուժով։ Դեմիրճյանը նման չէր այն գրողներին, որոնք ընկալվում են միանգամից, ավարտվում մի ընթերցումով։ Նա մեր հոգևոր զարգացման ճանապարհի պատահական անցորդը չէր, այլ հավիտենական ուղեկիցը։ Սակայն Դեմիրճյանի ստեղծագործական անհատականությունը ինձ գրավեց միայն «Վարդանանքից» հետո։ «Վարդանանքն» անակնկալ էր և՛ ընթերցողների, և՛ գրողների համար։ Ուշ աշնանը գետերը դուրս չեն գալիս ափերից, մինչդեռ Դեմիրճյանի վեպը հայ գրականության անդաստանը մտավ հորդացած գետի նման։

Աշխատելով հեղինակի հետ իբրև «Վարդանանքի» խմբագիր, վերընթեռնելով նրա հայտնի երկերը, ես տեսա, որ վեպի բովանդակության և արվեստի բոլոր նախատարրերը կան նրա ստեղծագործություններում, բայց վերստին հավատալով հեղինակի անզուգական տաղանդը, «Վարդանանքը» միաժամանակ լուսավորում էր գրողի մեծ և անկրկնելի արվեստի հեռավոր սահմանները։

Դեմիրճյանին վերջին անգամ տեսա հիվանդանոցում, մահվանից մի քանի ժամ առաջ։ Նիհարել էր, կարծես փոքրացել, հազում էր ծանր, տանջանքով։ Դեմքը դեմքը քրտնել էր, նայում էր պղտոր հայացքով, անտարբեր։ Հազը մի պահ դադարեց, դեմքը ծածկվեց հազիվ նկատելի ժպիտով։ Նա ինձ ճանաչեց...

— Կանչում են... — շշուկով ասաց նա։

— Ովքե՞ր,— միամտորեն հարցրի ես։

— Եղիշեն, Վարդանը, Խորենացին...

— Դուք ավելի ծանր հիվանդություններ եք հաղթահարել, այս էլ կանցնի և գեռ ինչքա՞ն անելիքներ ունեք։

— Այնտեղ էլ պարապ չեմ մնա...

Նույն մարդն էր, նույն հեգնող իմաստունը նույնիսկ մահվան պահին։

Դեմիրճյանի առաջին բանաստեղծությունները և պատմվածքները լույս տեսան այն տարիներին, երբ միապետական կարգը սպառնում էր հայկական դրպրոցների, լեզվի և մշակույթի գոյությանը։ Բայց նրան վիճակված էր տեսնելու ավելի ահավոր, տեսնելու առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայության բնաջնջումը։ Կոտորածների և գորուստների ողբերգական տարիներից հետո Հայաստանը ողողվեց Հոկտեմբերի լույսով։ Հայ ժողովուրդը փրկվեց։ Դեմիրճյանը խոր հավատով ողջունեց սովետական կարգերի հաստատումը և հիացմունքով պատկերեց այն մարդկանց, ովքեր կերտում էին հայ ժողովրդի իսկական պատմությունը։

Դեմիրճյանի ստեղծագործության առաջին շրջանը կազմավորվեց 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. առաջին երկու տասնամյակում։ Կապիտալիզմի վերջին փուլն էր, սոցիալական հեղափոխությունների նախօրյակը։ Համաշխարհային հեղափոխության կենտրոնը Արևմտյան Եվրոպայից փոխադրվում էր Ռուսաստան, որտեղ ծավալվող բանվորական և համադեմոկրատական շարժումները ոգեշնչում և պայքարի էր մղում Վ. Ի. Լենինի ստեղծած բոլշևիկյան կուսակցությունը։ Բանվոր գասակարգի հեղափոխական պայքարը վճռական բեկում էր առաջացնում հայ հասարակական կյանքում։ Բայց համաշխարհային առաջին պատերազմի տարիներին Թուրքական բռնակալների ոճրագործությունը արյունով ողողեց հայոց պատմության առաջադիմական ընթացքը։ Այս իրադրության մեջ հայ դասական գրականությունն իր ժողովրդայնությամբ, բնականաբար, դառնում էր հեղափոխական շարժումների դաշնակիցը՝ ընդդեմ ճնշման ու շահագործման, ընդդեմ ժողովուրդների գոյությանն սպառնացող աղետավոր պատերազմի։

Դեմիրճյանի ստեղծագործական ուղին սկսվեց բանաստեղծությամբ, թեև նրա արվեստի իսկական ուժը հետագայում շատ ավելի ցայտուն արտահայտվեց արձակի և դրամատուրգիայի ժանրերում։

Դեմիրճյանի ստեղծագործության հիմնական պրոբլեմները և սկզբունքներն ավելի հստակ ուրվագծվեցին առաջին պատմվածքներում։ «Ջուրակ և սրինգ» (1909 թ.) պրոլոգում գրողն արտահայտում է կյանքի և արվեստի փոխհարաբերության հարցը, որը թեև վերացական, բայց հեռու չէր ճշմարտությունից։ Զրույցն սկսվում է երբեմն տարօրինակ հոմվերգությունն. «Փարմ գարուն էր, որը պայծառ, կապուտակ, Ծանգեսի մթին ափատի պարտկում ճախրում էին թռչունները։ Հովը գարշիս, փնջ-փնջ տանում էր ծառերի թևերն ու ջղանցքները, առուն ջլփլում, և գնդեցիկ Լակմեն սիրում էր երջանիկ Հայանթունս։ Երգում է Լակմեն, իսկ Հայանթին եղեգնյա սրինգով կրկնում է նրան, նմանվում նրա երգին։ Աշխարհը կարծես լցված է երգով ու երջանկությամբ։ Լակմեին սիրում է նաև մի տխուր տգեղ Նալը, որ մենակ շրջում է անտառներում, հոբբի աղքներ կախում ծառի ճյուղերից, շորացնում ու ոլորում։ Հեգնանքով խոսում են, որ նա ինչ-որ նվագարան է շինում։

Մի անգամ, գարնանը, երիտասարդների ուրախ հավաքույթի ժամանակ, բանաստեղծ Խալդունի խնդրանքով նվագում են Հայանթին և Նալը։ Հայանթու սրինգը հնչում է իբրև կախարդական պատրանք, երջանիկ մոռացություն։ Սակայն Հայանթու արվեստի գեղեցկությունը խաբուսիկ է, նա մարդկանց օրորում է անոգ կյանքի ու մոռացության երազով, մինչդեռ Նալի նվագը ալեկոծում է մարդկանց հոգին և ատելություն հարուցում տառապանքի հանդեպ։ Դեմիրճյանին հարազատ էր Նալի արվեստը, որ մերժում էր ցավերով ու զրկանքներով լցված իրականությունը։ Մարդկային կյանքի ողբերգությունը «Ջուրակ և սրինգ» զրույցում գեռևս անորոշ էր, վերացական, բայց հաջորդ պատմվածքում գրողն արդեն մոտենում է շարքի ակունքին։

«Սեփականություն» (1910 թ.). այստեղից է սկսվում մարդկային անարատ բնավորության խեղաթյուրումը։ Պատմվածքի խորագրի առօրեական իմաստը դժվար է համադրել Լեման լճի ափին տարածված շվեյցարական գյուղի անկաշկանդ գեղեցկության հետ։ Հոգնած ճանապարհորդը ցանկանում է հանգստանալ ծառի տակ, բայց այդու տերը արգելում է, որովհետև սեփականությունն անձեռնմխելի է, օտարականը իրավունք չունի վայելելու նույնիսկ ծառի ստվերը։ Սակայն նույն սեփականության դաժան օրենքով, այդու տերը՝ ծակ Բուրդիլեն, դատարել է մարդ լինելուց, դարձել իր ունեցվածքի գերին, նրա անբաժան մասնիկը։ Անփոփոխ միօրինակությամբ նա խմում է ամենօրյա գարեջուրը, աղաթում ատոծուն կամ նեղում. «Եվ ինչո՞ւ չքնի... ի՞նչն է պակաս, փառք աստծո, փող կա, ուրեմն ամեն բան կա Զվիցերիայում»։

Բուրդիլեի սեփականությամբ շղթայված կյանքն ավարտվում է այն ծառի տակ, ուր մի օտարական ցանկացել էր հանգիստ առնել։ Սեփականատերը մեռնում է ու մահվան պահին անջատվում ունեցվածքից, վերադառնում դեպի մարդը, դեպի կյանքի ու բնության գեղեցկությունը, սակայն ծանոթ ձայնը նրան հիշեցնում է, որ պետք է հեռանալ, մուտքն արգելված է։ Մարդու անարատ բնությունը և սեփականությունը անհամատեղելի են. այս էր հեղինակի նախնական եզրահանգումը, իսկ հետագա տարիներին, երբ սեփականատիրական կարգը մոլեգնում էր աշխարհավեր պատերազմի կերպարանքով, Դեմիրճյանը հանգեց նրա վճռական մերժմանը։

Համաշխարհային առաջին պատերազմը սոսկալի աղետ էր աշխարհի ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի համար։ Օգտագործելով պատերազմի նպաստավոր պայմանները, Թուրքական բռնակալությունը բնաջնջեց հայ ժողովրդի կեսից ավելին, ավերեց Արևմտյան Հայաստանը։ Ցեղասպանության զարհուրելի տարիներին հայ գրողներից քչերը անդրադարձան այդ ողբերգությանը, նրանցից մեկը Դեմիրճյանն էր։

«Ավելորդը» պատմվածքը ողբերգության նախընթաց օրերի պատկերն է միայն։ «Թուրքը մոտենում է» լուրը տագնապի է մատնում սահմանամերձ փոքրիկ քաղաքը։ Ժողովուրդը գաղթում է, իր կնոջ և զավակների հետ գաղթում է նաև վաճառական Հաջի աղան։ Նա հատուկ եռանդով պետքական իրերը առանձնացնում, տեղավորում է սահնակի վրա, ավելորդ իրերի շարքը դասելով անդամալույծ քրոջը։ Հաջի աղայի երակներում արյան փոխարեն ջուր էր հոսում, ջուր, որ փորձության պահին սառույց էր կտրել։ Սահնակին բազմած վաճառականը անջատվել էր իրականությունից։ Նա այլևս չէր լսում կնոջ թախանձանքը՝ իրենց հետ տանել անդամալույծին, չէր լսում թոռների լացը, թե Սրբուն մամիկին թուրքերը կմորթեն։ Նա հանգիստ խղճով որոշել էր, որ անդամալույծը ավելորդ է։ Զոհաբերելով հարազատ քրոջը, Հաջի աղան փրկում է իր ունեցվածքը։

Երբ ռուսական բանակը նորից գրավում է քաղաքը, պարզվում է, որ Սրբունը անհետ կորել է։ Բարոյական մահից հետո Հաջի աղայի ֆիզիկական կյանքը շարունակվում է ջերմեռանդ աղոթքների մեջ. նա անընդհատ կրկնում է. «Աստծու առաջ հոգին հոգի է, ավելորդ մարդ չկա»։ «Սեփականություն» պատմվածքի հերոսի նման, մահվան պահին Հաջի աղան հրաժարվում է հարստությունից, որպեսզի վերադառնա դեպի մարդը։ Բայց նրա մեղանչումը մարդկային էության արթնացման հետևանք չէր, այլ ողորմելի կյանքը աստծու դատաստանից փրկելու հուսահատ ճիգ։

Սեփականությունը, ունեցվածքը Հաջի աղայի պաշտամունքն է, նրա կյանքի միակ իմաստը, այդ պատճառով թուրքական սպառնալիքը նրա գիտակցությանն է հասնում ոչ թե իբրև ազգային, այլ իբրև անձնական աղետ։ Միանգամայն տարբեր մարդ է բարությամբ տոգորված անդամալույծը. նա ապրում է կարծես մի ուրիշ աշխարհում, ուր ամեն ինչ ողողված է մարդկայնության լույսով, սիրով ու ջերմությամբ։ Հրաժեշտի պահին, երբ Հաջի աղան հեռանում էր այնպիսի անտարբերությամբ, որ իբր թե ոչինչ չի պատահել, իր գործած ձեռնոցները մեկնելով նրան, Սրբունն ասում է. «Ձեռքերդ անցու, ճամփան չմսխա», հետո փղձկալով վրա բերեց. «քոռանա լուսս. տղոցը համար չկրցա գործել»։ Հոգու վիթխարի ուժ պետք էր ունենալ՝ նախատինքի փոխարեն հոգատարության խոսքեր ասելու։ Թուրք բռնակալը աստծո ուղարկած հյուրը չէր։ Սահմանամերձ փոքրիկ քաղաքի բնակիչներին հայտնի էր, որ թուրքական ներխուժումը կոտորածի և մահվան ներխուժում է։ Եվ եթե Հաջի աղան հասկանում էր, որ լքելով քրոջը, նրան դատապարտում է մահվան, ապա իր անսահման հոգատարությամբ մարդու հանդեպ Սրբունը հաստատում էր իր գոյությունը և ապրելու իրավունքը։

Վեհության և ստորության լուռ բախումը ավարտվում է անզոր ու անօգնական անդամալույծի հաղթանակով, մարդկայնության հանդեպ վերստին նահանջում է սեփականության ուժով սրբագործված ստորությունը։ Պատմվածքի գլխավոր կերպարները՝ Սրբունը և Հաջի աղան, բացարձակ հակադրություններ են, բայց դեռևս հին ռոմանտիզմին հայտնի սկզբունքը Դեմիրճյանն օժտել է կենսական, ռեալիստական տիպականությամբ։ Գաղթի և մարդկային բնավորության փորձության նկարագրությամբ չի սպառվում «Ավելորդը» պատմվածքի բովանդակությունը։ Ազգային ողբերգության պատկերումով Դեմիրճյանը հասնում էր համամարդկային ողբերգության՝ պատերազմի և մարդկային ցեղի բնաջնջման գաղափարությանը։ Այս է Դեմիրճյանի լավագույն պատմվածքներից մեկի արվեստի ուժը և հասարակական հարատև նշանակությունը։

Դեմիրճյանը կոտորածներին չանդրադարձավ, նա կարծում էր, թե արվեստի ողբերգականության սահմաններում չէր կարող զետեղվել անօգնական ծերունիների, մայրերի ու մանուկների զանգվածային բնաջնջումը։ Եվ եթե «Ավելորդը» կոտորածների նախօրյակի պատկերն է, ապա նրա զարհուրելի հետևանքները զուսպ գծերով արտահայտվել են «Ժպիտը» պատմվածքում։ «Փախստական հիսուն հազարանոց մի ժողովուրդ եկել շոքել է բաց դաշտում, հրատոչոր գետնին, արևի տակ»։ ...Կոտորածներից փրկվածները մեռնում են քաղցից ու համաճարակից. ամենուր դիակներ, հիվանդներ, մեռելահոտ։ «Մի հոծ ժողովուրդ քայքայվում էր հսկա դիակի քայքայումով»։

Մառի տակ պառկել է հիվանդ մի կին, կողքին ամուսնու դիակը, «հոգ է պահանջում, հրամայում է, որ իրեն թաղեն», հիվանդ կնոջ մոտ նստած է նրա տասնամյա աղջիկը և կոտրած ժպիտով նայում է շուրջը։ Նրանցից մի քանի քայլ հեռու, քարի շվաքի տակ, բուն է դրել կատուն, իր նորածին ձագերով։ Համատարած մահվան մեջ երջանիկ է միայն կատվի ընտանիքը։

«Ժպիտը» արտացոլում է մեր պատմության սոսկալի տարիների մի ակնթարթը միայն, երբ դժոխք դարձած աշխարհով անցնում էին մեռելներով բարձած սայլեր, քաղցից ու հիվանդություններից վայրենացած մարդիկ։ «Ժպիտը» պատմվածքում Դեմիրճյանը չի անիծում ոճրագործին, բայց մարդկային մի զանգվածի եղերական կորստի պատկերը մեղադրական խոսք է ընդդեմ անարդար պատմության, խոսք, համակված իսկական կյանքի տենչանքով։ Այդ մահաշունչ տարիներին, երբ թվում էր, թե ավարտվում է հայ ժողովրդի խռովահույզ պատմությունը, Դեմիրճյանը հուսահատության չմատնվեց, մարդկային խոշտանգված զանգվածի մեջ նա տեսավ ժողովրդի հավիտենության բողբոջը՝ կապույտ աչքիկներով փոքրիկ աղջկան։

Պատմվածքում կերպարներ ու գործողություններ չկան և դա հասկանալի է. «Ժպիտը» մահվան պատկեր է, իսկ այնտեղ, ուր վերանում է կյանքի և մահվան սահմանագիծը, ողբերը մոռացվում են, թեև պատմության ահեղ տրտմությունը իջնում է նրանց սրտի վրա։

Դեմիրճյանի նախասովետական արձակի կերպարները ապրում էին աննկատ կյանքով, ստվերների տակ, նման այն բույսերին, որոնց չի հասնում արևի լույսը։ Աշխատանքի մեջ մաշվել և անպետք իրի նման մի կողմ է նետվել արհեստավորը («Ստամոքս», 1919 թ.)։ Նա թեև ապրում է, բայց հասարակության համար այլևս գոյություն չունի, և ինքն էլ կարծես համակերպվել է անպետքացած մարդու վիճակին։ Արհեստավորը քարշ է տալիս մարդկային իմաստը կորցրած իր գոյությունը, ապրում է իբրև կենսաբանական մի առեղծված, իբրև անհագուրդ մի ստամոքս։ Արհեստավորի տկար օրգանիզմի մեջ ծառացել է ուտելու, մի քան խժռելու ցանկությունը և այդ անգուսպ ցանկությամբ բռնված, նա անընդհատ տնից վազում է շուկա, նայում, շոշափում ուտելիքները, որ այնքան մատ են և այնքան հեռու։ Պատերազմ է, մթերքը՝ կրակի դին, իսկ ինքը՝ անգործ։ Անհագուրդ ստամոքսը անկողին է ընկնում և մեռնում՝ քաղցած հայացքը աշխարհին հառած։ Անանուն արհեստավորը սովորական մարդ էր, նրա կյանքի առօրյա քա-

Թացքը խախտել էր սնփականատիրական կարգը, դատապարտել քաղցի ու վայրենացման։ «Ստամոքս» պատմվածքը ծավալվում է իբրև բուրժուական իրականության մեջ աշխատավոր մարդու կնճռքման ու կործանման սիմվոլ։

Ճշմարիտ ժողովրդականության դիրքերից Դեմիրճյանը դատապարտում էր բուրժուական իրականությունը և նրա բարոյականությունը, իրականություն, որ մարդու մարդկային էությունը փոփոխում էր դրամով։ Մեռնում է գյուղի ծեր քահանան, իսկ նրա կողքին նստած երիտասարդ քահանան երանելի անտարբերությամբ հաշվում է այն եկամուտները, որ իրեն պիտի մնան «մրցակցի» մահից հետո։ Ապրողի համար, որ աշխարհն ընկալում էր միայն ստամոքսով, օտարի մահը անսահմանափակ հաջողություն էր, անձնական շահ նոր աղբյուր։ «Քանի որ փողը,— ասում է Մարքսը,— որպես արժեքի գոյություն ունեցող և գործող հասկացություն, իրար է խառնում և փոխանակում բոլոր իրերը, ուրեմն, նա բոլոր իրերի ընդհանրական խառնակումն ու նենգափոխումն է, այսինքն՝ փողը շուռ տված աշխարհ է, բնական և մարդկային բոլոր հատկությունների խառնակում և նենգափոխում» («Մարքսը և Ենգելսը արվեստի մասին», հ. 1, էջ 283)։

Շուռ տված աշխարհի բնորոշ տիպերից մեկն է ժանգոտ, չոր տառեր խանութպանը («Խանութպանը», 1920), որը «մարդ չի տեսնում իր առջև, նրա ճաղատ աչքերը միայն ձեռներ էին տեսնում և ձեռների մեջ դրամներ»... կոպեկները մարդիկ են և մարդիկ՝ կոպեկներ, որոնք ուշանում են «իր փողերը բերելու և նրան ստիպում են սպասել, հսկել, ձգձգել»։ Ինչպես նախորդ մի քանի պատմվածքներում, այստեղ նույնպես, հեղինակը առանձնացնում և ընդգծում է գլխավոր թերպարի տիրապետող հատկությունը, տվյալ դեպքում՝ կուտակելու կիրքը, մարդու և դրամի նույնացման, ավելի ճիշտ՝ մարդկային բնությունը դրամով փոխարինելու կործանարար պրոցեսը, երբ դժվար է որոշել՝ ապրա՞նքն է մարդուն պատկանում, թե՞ մարդը ապրանքին։ «Մի ծանր, հավիտենական հոտ կար նրա խանութում, փտում էին դաղձահն ու դարակները, փտում էին առաստաղի մրկլված գերանները, փտում էր կարծես և ինքը...»։ Մակայն խարխլվում և փտում էին ոչ միայն խանութն ու խանութպանը, այլև խանութպանի աշխարհը, որ հոգեվարք էր ապրում երկարատև մոլեգնությունից հետո։

Խանութպանի նման շահամոլությամբ հիվանդների հետ նույն երկնքի տակ ապրում էր արդար մարդկանց մի հոծ բազմություն։ Նրանցից մեկը՝ չքավոր մի երեխա, խանութպանին խնդրում է մի կտոր հաց տալ և մերժումից հետո միամտորեն ասում.

— Ես սովից մեռնե՞մ։

Խանութպանի համար անհասկանալի էր երեխայի ասածը և նա ժպտաց, քանի տարի է չէր ժպտացել։ Ժպիտը նրա ժանգոտ երեսին երևում է այն պահին, երբ հիշեցնում են, որ սովից մարդիկ են մեռնում, մինչդեռ «կոպեկ չունեցող մարդկանց ապրելը կամ մեռնելը բնավ չէր հետաքրքրում նրան։ «Խանութպանը» հայ դասական արձակի այն պատմվածքներից մեկն է, որի փոքր մակերեսների միջոցով ուրվագծվել է մասնավոր սեփականության սոցիալական մահվան ակնթարթը։

Այդ դաժան իրականությունը աշխատավոր մարդկանց կեցության վրա իջնում էր կապարի ծանրությամբ, ճնշում, նրանց դուրս մղում բնականոն կյանքի ոլորտից, դարձնում օտար, անհանգիստ մարդիկ։ «Միայնի մեջը» խորագրով պատմվածքում, գրված 1922 թվականին, Դեմիրճյանը կարծես ամփոփում էր, ամբողջացնում բուրժուական իրականության պատկերը։ Ինչպես գրողի մի քանի պատմվածքներում, այստեղ էլ գլխավոր հերոսը անանուն մարդն է, որին զինվորները և հրամանատարները «էյ» են անվանում։ Անվան կորուստը անհատականության կորուստ էր, բուրժուական իրականության բնորոշ երևույթներից մեկը, որը ճշտորեն նկատել է Դեմիրճյանը։ «Առաջ կառապան էր Գիլիչանի տրակտոմ,— պատմում է հեղինակը,— հետո գիշերապահ Թիֆլիսում։ Վերջերս էլ վեց տարի է, հնոցապան էր Բաքու՝ Սպիտակ քաղաքի մի յուղի գործարանում։ Ամեն տեղ իր պաշտոնը քշվածությունն է եղել... Դրանից էլ կարգին փոսել չգիտեմ»։

Այս տողերում ուրվագծվում է այն մարդու կերպարը, որը հաջորդաբար կորցնում է ինքնությունը և առօրյա ազատությունը, մոլորվում իր համար խորթ կյանքի պայմաններում։ Վերջին փորձությունը պատերազմի դաշտն է, որտեղ նրա ներկայությունն ավելի նման է բացակայության։ Վաշտի հետ էյը գնում է դեպի ճակատային գիծ։ Պատերազմը փոխել է ծանոթ աշխարհի տեսքը։ Ամայի դաշտեր, ավերված գյուղեր, գանգի պես պարապ խրճիթներ։ Աղբյուրը չոր է բիսում ոչ ոքի համար, ջրաղացը լուռ է գերեզմանի նման։ Անցնում է էյը քանդված գյուղերով ու ճնշվում ավերի խստության առջև։ Նա չի կարողանում հասկանալ, թե մարդը ինչու է ոչնչացնում մարդու ստեղծածը, և ողջ էությամբ մերժում է պատերազմը, ապրում խաղաղ օրերի երազներով։

«Ամեն տեղ իր պաշտոնը քշվածությունն է եղել». ցավով ընդգծում է հեղինակը։ Բայց քշվածությունը ժառանգական հատկություն չէր, այլ սոցիալական վիճակ, երբ ճնշման ու շահագործման անտանելի պայմաններում նորմալ մարդը թվում է, թե դառնում է աննորմալ։ Աղքատությունը էյին արտաքսել էր գյուղից, իսկ քաղաքում աշխատելու տարիներին, երբ կառապան էր, գիշերապահ կամ հնոցապան, էյը չի շփվել իր նման աշխատավոր մարդկանց հետ և, իրականության հանդեպ իր անբարբաս դժգոհությամբ հանդերձ, մնացել է մենակ ու մոռացված։

Պատերազմի ճակատում նույնպես էյը մենակ է իր հոգսերի ու մտքերի հետ, զինվորները և հրամանատարները անտարբեր են նրա նկատմամբ՝ անունը մոռանալու չափ։ Սակայն քշվածությունը էյի արտաքին վիճակն է միայն, իսկ ինքն իր մեջ ամբողջական մարդ է։ Նա յուրովի վերլուծում ու գնահատում է կյանքի երևույթները, խորապես ցավում, որ պատերազմը ոչնչացնում է մարդու աշխատանքի արդյունքը, ավերում խաղաղ կյանքը։ Ծանր վիրավոր էյը բողոքում է աշխարհի անարդարության դեմ, բայց, ինչպես ամբողջ կյանքում, մահվան պահին էլ էյը մենակ է և անզոր պաշտպանելու իր ճշմարտությունը։

Դեմիրճյանի պատմվածքները հասարակական կյանքի լայն շերտեր չեն ընդգրկում, դրանք պատմվածքի պատկերներ են, որ հոգեբանական առանձին, մեծ մասամբ բացառիկ դրվագների մեջ բացահայտում են մասնավոր սեփականատիրության խարխլվածությունը։ Տիրող կարգերը նվաստացնում էին մարդուն, աղավաղում նորմալ փոխհարաբերությունները մարդկանց միջև։ Դեմիրճյանը ցույց է տալիս, որ բուրժուական իրականության այդ արատներն ավելի այլանդակ ձևերով արտահայտվեցին համաշխարհային առաջին պատերազմի տարիներին։ Խանութպանն, իհարկե, Մարիոս Ալիճյան չէր, թեև իր մանրությամբ մեջ ավելի

հիվանդագին էր նրա կուտակելու կիրքը, որն այլևս հեռանկար չուներ։ Բայց տվյալ դեպքում կարևորը մասշտաբները չեն, այլ մարդկանց էությունը։ Մարկոս Ալիմյանը առասպել էր, կապիտալիզմի ոչ հերոսական էպոսի նախնական բեկորը, կուտակման տենդի սկիզբը, մինչդեռ խանութպանը խորհրդանշում է նույն աշխարհի մայրամուտը։ Բուրժուական հասարակության քայքայման հետ թուլանում էր դասական ռեալիզմի էպիկական ոգին, լայն ընդհանրացումները փոխարինվում էին կյանքի առանձին պատկերներով, որոնցում, սակայն, կար մի լուսավոր շող, մի ներքին թեմա, որ կյանքն այսպես չի կարող հարատևել, որ պետք է մի ամպրոպ, որպեսզի մթնոլորտը մաքրվի։ Դեմիրճյանը շարունակում էր դասական գրականության ավանդները։ Բայց նրա արձակը կրկնություն չէր, այլ նորարարություն, որովհետև տոգորված էր բուրժուական հասարակարգի խորտակման անխուսափելիության կանխազգացումով։

***

Հոկտեմբերի հաղթանակով և Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ սկսվեց հայ ժողովրդի վերածնությունը։ Անդամահատված, հալածանքի և կորստի մատնված ազգությունը վերակազմավորվում էր իբրև սոցիալիստական ազգություն։ Իրականության արմատական հեղաշրջման հետ վերանում էր մարդը. դառնում հասարակական ակտիվ անհատականություն։ Նոր կյանքի ամեն մի օրը, ամեն մի տարին լցված էր աշխատանքով ու ստեղծագործությամբ։ Բայց նորը ոչ միայն ազատ աշխատանքն էր, ավերված երկրի վերաշինությունը, հողի մշակությունը, գործարանները և դպրոցները, այլև աշխատանքային պրոցեսներում կազմավորվող նոր հոգեբանությունը, նոր փոխհարաբերությունը մարդու և հասարակության միջև։

Սովետական տարիներին գրված պատմվածքների առաջին շարքը Դեմիրճյանը անվանել է. «Նրանց ժպիտը»։ Թվում է, թե ծանոթ վերնագիրը պատահաբար չէր կրկնվում։ Առաջին «ժպիտը» (1916 թ.) համատարած մահվան հեգնանքն էր, ժողովրդի հարատևման հույսի կոտրած ժպիտը, մինչդեռ «Նրանց ժպիտը» շարքը լուսավորված է ազատագրված ժողովրդի կեցության իսկական բերկրանքով։ Այդ հակադրությամբ գրողը ցանկանում էր հիշեցնել, թե ինչ ճանապարհով է անցել և ուր է գնում հայ ժողովուրդը։

Դեմիրճյանը 20-ական թվականների ստեղծագործության հիմնական պաթոսը նորի հաստատումն էր, այն, թե ինչպես է անդրադառնում մարդկանց հոգեբանության ու վարքագծի մեջ կյանքի մեծ վերափոխությունը։ Սակայն, նորի հաստատումը միաժամանակ ժողովրդի խեղճ ու անօգնական անցյալի մերժումն էր, անցյալ, որ Դեմիրճյանի երգիծական ստեղծագործություններում բեկվում էր իբրև պատմության ժամածռություն, իբրև «Համառոտ անմահների» կամ քաջ նազարային փուչ հսկաների ծանր մղձավանջ։ Բայց պետք է նշել, որ միայն Դեմիրճյանը չէր, որ այդպես էր ընկալում ոչ հեռավոր տարիների պատկերը։ Նույն կենցեպցիան մենք նկատում ենք Ե. Չարենցի «Երկիր Նաիրի», Ալ. Շիրվանզադեի «Մորգանի խնամին», Ստ. Զորյանի «Կապիտան Երամը» և այլ գործերում։ Նոր գրականությունը սատիրական ծաղրով էր բաժանվում ժողովրդի մոայլ պատմությունից։ Բայց այդ սատիրան շաղախված էր ողբերգության դառն արցունքով։ Հարցն այն է, որ պատմական որոշ հանգամանքներում սատիրային ողբերգության անհարիր թվացող հիմքերը ինչ-որ տեղ աղերսվում են։ Այդ աղերսը նկատվում է Սվիֆտի «Գուլիվերի», Գոգոլի «Մեռած հոգիների», Շչեդրինի «Մի քաղաքի պատմություն», Չարենցի «Երկիր Նաիրի» և «Խմբապետ Շավարշի» էջերում։

«Նրանց ժպիտը» շարքի հերոսները նոր մարդիկ են, ավելի ճիշտ մարդիկ, որոնք ճաշակել են ճնշման ու շահագործման դառնությունները և սովետական կարգերի շնորհիվ նվաճել իրենց անհատականությունը և մարդային արժանապատվությունը։ Բնորոշ է այն հանգամանքը, որ Դեմիրճյանի սովետական շրջանի ստեղծագործություններում այլևս անանուն հերոսներ չկան։ Նրա նոր կերպարները աշխատավոր մարդիկ են՝ գործարանային բանվորներ, շինարարներ, գյուղացիներ, կարմիր բանակայիններ, երկաթգծի աշխատողներ, որոնք լավատեսությամբ ու եռանդով կերտում են ժողովրդի իսկական պատմությունը։ Ժողովրդի գործը հետզհետե դառնում էր նրանցից ամեն մեկի հարազատ գործը։ Դեմիրճյանը հավատում է, որ այդ գիտակցությունը ծնվեց և կարող էր ծնվել միայն սովետական իրականության պայմաններում։

Անհրաժեշտ է նշել Դեմիրճյանի աշխարհայացքի հիմնական հատկություններից մեկը՝ պայծառատեսությունը, նորը ընկալելու հազվագյուտ ունակությունը, որը դրսևորվում է ոչ միայն կյանքի իրադարձությունների ներքին իմաստի հայտնաբերման, այլև մարդկային փորձի ճշմարտացի լուսաբանության մեջ։ Եթե հիշենք, որ Դեմիրճյանի պատմվածքները ստեղծվել են սովետական կյանքի կազմավորման առաջին տարիներին և հետագայում էլ նա միշտ ընթացել է կյանքի հետ, դիտել և մեկնաբանել իրականության զարգացման էական պրոբլեմները, ներկայի մեջ տեսել գալիքի սաղմը, ապա անհնար է առանց հիացմունքի խոսել գրողի մեծ ու իմաստուն տաղանդի, արդիական ոգու և գեղարվեստական ճշմարիտ հայտնագործությունների մասին։

Սովետական ժամանակաշրջանում Դեմիրճյանի ստեղծագործական աշխատանքը ծավալվեց բազմազան ձևերով. պատմվածք, ակնարկ, ֆելիետոն, վիպակ, վեպ, դրամա, քննադատություն, կինոսցենար, մանրապատում և ուրիշ ժանրեր, որոնց միջոցով գրողը ձգտում էր արտահայտել կյանքի բարդ ու հարաճուն ընթացքը։ Նրա առաջին պատմվածքները արդեն նորարարական երկեր էին, մինչդեռ Դեմիրճյանի ստեղծագործության որոշ հետազոտողներ չհասկանալով այդ պատմվածքների խորությունը և ինքնատիպությունը դրանք համարում էին ակնարկներ կամ ակնարկ-պատմվածքներ։ Սակայն դժվար չէ նկատել, որ այդ երկերը իրենց բովանդակությամբ ու արվեստով, երբեմն էլ ոչ ցայտուն սյուժեով ու կառուցվածքով, նոր երևույթ էին և չէին տեղադրվում պատմվածքի ժանրի ավանդական սահմաններում։ Հարցն այն է, որ Դեմիրճյանի մի շարք երկերում պատկերվող իրադրությունների ու բնավորությունների մեջ հեղինակը առանձնացնում է հարափոփոխ կյանքի մի պահը, թափանցում մարդկային հոգու ծալքերը և հայտնաբերում հազիվ նկատելի որևէ հատկություն, որն արտահայտում էր դարաշրջանի բնորոշ գիծը, մարդու և ժամանակի անխզելի կապը։ Սա իհարկե նույնքան բարդ արվեստ է, որքան դասական պատմվածքի արվեստը։

«Դադար» (1922 թ.) խորագրով պատմվածքը սովետահայ արձակի առաջին երկերից մեկն է։ Իր նման բանվորների հետ Զուրաբը հանգստանում է անտառով շրջապատված գեղեցիկ առանձնատան մեջ։ Սովետական կարգերի հաստատումից անցել էր ընդամենը մեկ տարի, բայց կյանքն արդեն նորմալ հունով էր ընթանում, լցված խաղաղությամբ ու աշխատանքով։ Փոխվել էր նաև բնության ընկալումը և բնապատկերը։ «Երեքն անց են կենում միակերպ խաղաղ, անհոգ։ Ամեն ինչ հանգստանում է հանգստյան տանը։ Մինչև անգամ ծառերը, պարտեզը, շինությունը։ Բոլոր ազնուկը սովորական կեցվածք կրկնվում է օրվա որոշ ժամերին և լռում։ Բանվորները ապրում, սառում, խոսում են՝ անկրից, գործարաններից, պատերազմից»։ Հանգստի բոլոր պայմանները կան, բայց Զուրաբը մտահոգ է. «ուրիշներ չարունակ աշխատանքին ընտելացած մարդը կյանքը չի պատկերացնում առանց հոգսի, իսկ հանգստի տանը հանկարծ կորվում է այդ հոգսի թելը։ Սակայն Զուրաբի անհանգստության պատճառը միայն անտեսված վիճակը չէ, այլ հոգսի մի նոր երանգ, մի նոր զգացում՝ սեփական աշխատանքի մեջ հանգրվանի շունչ տեսնելու գիտակցությանը։ Այս զգացողությունը ավելի ամբողջական ձևով արտահայտվել է «Արդուզը» պատմվածքում։

Պատմվածքի հերոսը իսկական կյանքի գիտակցությունը հասնում է տոցիալիստական աշխատանքի փորձով։ Արդուզը եկել է Իրանից, որտեղ նրա կյանքը անցել է տաժանակիր աշխատանքի ու քաղցի մեջ։ Քաղցին զոհ են գնացել նրա կինը, որդին, բարեկամները։ Քաղցը նրան արտաքսել է հայրենի երկրից։ Արդուզը սեզոնային բանվոր է Երևանի բամբակազտիչ գործարանում, ցանկանում է որոշ գումար վաստակել և վերադառնալ հայրենիք։ Բայց վերադարձի մտադրությունը հետաձգվում է, երբ նա սկսում է հասկանալ Իրանի և Սովետական երկրի արմատական տարբերությունը։ «Այստեղ գործն ուրիշ տեսակ էր։ Դարձ նա տաժանք չէր, այլ աշխատանք։ Ապա և այդ գործը նրա բարեկամն էր և ոչ այնպիսի դաժան թշնամի, որ լցնում է, ծեծում, հյուծում, տանում գերեզմանը։ Իրանում, ճնշման ու շահագործման բիրտ պայմաններում Արդուզը խոռվել էր աշխարհից, թշնամացել նրա հետ, իսկ այստեղ, Սովետական երկրում մարդը և աշխատանքը բարեկամներ են, աշխատանքը մարդկանց համախմբել է բոլորի համար նվիրական նպատակի շուրջը։ Արդուզը պարզ տեսնում է, որ «իր գործարանը կապված է քաղաքի մյուս գործարանների հետ, քաղաքինը՝ մյուս քաղաքների հետ և բոլորի աշխատանքի արդյունքը մաներ գետերի պես հոսում, լցվում է մի մեծ արդյունքի՝ ծովի մեջ և այդ ծովը պրոլետարական պետությունն է»։ Պրոլետարական պետությունը իր հարազատ պետությունն է, այս գիտակցությունը Արդուզին սերտորեն կապում է բանվորական կոլեկտիվի հետ և մղում հերոսության։

Սոցիալական և ազգային ճնշման ժամանակներում աշխատանքը անեծք էր ու տառապանք։ Դարեր շարունակ աշխատավորի արդար վաստակը շահագործվում էր արյունով ու ոսկեղենով։ Պատահական չէր այն հանգամանքը, որ «Մեսոնա ծոներ» էպոսից մինչև Վարուժանի «Հայքին երգը» ստեղծագործությունների գլուխգործոցները հայ գրականության մեջ ավարտվում էր ազատ աշխատանքի ստատիկան երազանքով։ Սովետական կարգը այդ երազանքի մարմնացումն էր։ Գաղափարի մեջ առաջին անգամ աշխատանքը գործնական էր ստեղծագործության, մարդկային արժանապատվության չափանիշ։

Մարդու և ազատ աշխատանքի դաշնության մի այլ հատկություն Դեմիրճյանն ուրվագծում է «Քարհատներ» պատմվածքում, որը մի պատկեր է, էսքիզ 20-ական թվականների շինարարական առօրեայից։ Քարահանքում ավարտվում է աշխատանքը, իսկ վերջին քարը համառում է, դիմադրում։ Բանվորները ցանկանում են գործը թողնել վաղվան։ Միջամտում է վարպետ Սարգիսը։ Նա արյունը գլուխը տված, սևացած կրծքի մխոն ու ոսկորները անգթորեն տրորում էր քարի վրա ու ճգնում, հևում, տնքում»։ Քարը պոկվում է, բոլորը հանգստացած շունչ են քաշում։ Քարհատը գործը կիսատ չի թողնում։ «Աշխատանքը նամուս է.— ասում է վարպետ Սարգիսը,— չեն կոտրի։ Քաղաք շինող ենք, աշխատավոր, գործ է, շինարարություն... Ինչպե՞ս կարելի է»։ Աննշան մի դեպք, իրական կյանքի անհամար դեպքերից մեկը, որը թվում է, թե չէր կարող պատմվածքի նյութ դառնալ, Դեմիրճյանի անզուգական տաղանդով իմաստավորվում է, դառնում ճշմարիտ ընդհանրացում՝ աշխատանքը պատվի գործ է, իսկ քարհատի գործը համաժողովրդական շինարարության անբաժան մասն է։

Եթե «Արդուզը» պատմվածքում հեղինակը նշում է հերոսի ներկա և անցյալ կյանքի առանձին դրվագները. կերպարի հոգեբանական շրջադարձը հիմնավորելու համար, ապա «Դադար», «Քարհատներ» և այլ պատմվածքներում հերոսները բնութագրվում են միայն իրենց կյանքի տվյալ պահի հոգեկան վիճակներով, որոնք չլինելով ամենից ցայտունը, բնորոշում են մարդու ամբողջ վարքագիծը։ Այս բնույթի պատմվածքներ ընդգրկում են կյանքի մի բեկորը, մի շերտը, ուր անհնար է տեղադրել ծավալուն գործողություններ։ Դեմիրճյանը այդպիսի նպատակ չի հետապնդում։ Բայց ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ «Դադար», «Քարհատներ», «Հանգստի տանը» և այլ պատմվածքներ, կարծես էպիկական մի ընդարձակ վեպի հատվածներ լինեն, որոնց սկիզբը և վերջը մնացել են ամբողջական երկի էջերում, իսկ այն հատվածներում հեղինակը ձգտում է որսալ մարդու և դարաշրջանի անխզելի կապի ակնթարթը, դարաշրջանի էության փայլատակումը մարդու վարքագծի մեջ։ Այդ չի նշանակում իհարկե, թե Դեմիրճյանի վերոհիշյալ պատմվածքները զուրկ են ամբողջությունից, ընդհակառակն, դրանք ավարտված գործեր են, պատմվածքի ժանրի մի նոր որակ, որ տվյալ ձևի մեջ խտացնում են մարդու լինելիության փիլիսոփայությունը։

«Հողը» պատմվածքի մթնոլորտը լցված է խաղաղությամբ։ Խաղաղությամբ են շնչում լեռները, դաշտերը և անտառները։ Երդիկների ծուխը հանդարտորեն բարձրանում է դեպի վեր, գյուղաքաղաքի փողոցով անցնում է կարմիրբանակայիններ վաշտը, շուկայում՝ գյուղացիներ, գեղջկուհիներ, պիոներներ։ Մարդիկ տարված են իրենց ամենօրյա գործերով ու հոգսերով։ Կյանքը ընթանում է իր բնական հունով, այնքան բնական, որ արդեն մոռացության է մատնվել ֆեոդալական բնաջնջման սպառնալիքը։ Սովետական կարգը սկսվում էր իրրև մարդու նորմալ գոյության բարձրագույն ձև, իբրև մարդու և հայրենիքի, մարդու և բնության ներդաշնակության հիմք։

1921 թ. ապրիլին «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղված նամակում Վ. Ի. Լենինը գրում էր. «Անմիջապես աշխատել քարեկավելու գյուղացիների վիճակը և սկսելու էլեկտրիֆիկացիայի և ոռոգման խոշոր աշխատանքներ։ Ոռոգումը անհրաժ-

ժեշտ է ամենից ավելի և ամենից լուսն կվերափոխի երկրամասը, կվերածնի այն, կթողի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ։ Լենինյան այս իմաստուն ծրագրի կենսագործումով սկսվեց Սովետական Հայաստանի վերածնությունը։ Երկրի տնտեսությունը քայքայված էր, ժողովուրդը աղքատ ու անօգնական։ Սովետական Հայաստանի կառավարության առաջին մտահոգություններից մեկն էր՝ հայթայթել հաց, սերմացու և գյուղատնտեսական գործիքներ։ Հեղափոխությունից քառասունամյակներ տեր ժողովուրդը կարծես նորից էր սկսում իր պատմությունը։ Բայց այդ կացությունը երկար չտևեց։ Երկու-երեք տարվա ընթացքում վերացան քաղցի և թշվառության հետքերը, երկրի նյութական վիճակը վերափոխվեց։ Ժողովրդի հիմնական զանգվածը գյուղացիությունն էր և բնականաբար 20-ական թվականների արձակի մեջ այսպես կոչված գյուղական թեման լայն տեղ էր գրավում։ Սակայն «Հողը» պատմվածքը չի սահմանափակվում իր ուղղակի իմաստով։ Հողը մերթ ինքը մարդն է, մերթ մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը, մերթ էլ այն երկիրը, այն իրականությունը, որտեղ կառուցվում է նոր կյանք, նոր հոգեբանություն։ Հետևաբար, ճիշտ չէր լինի Դեմիրճյանի պատմվածքներում տեսնել հողի պաշտամունք, մի գաղափար, որի ակունքը գյուղացիության խեղճությունը և հետամնացությունն էր։ Անհրաժեշտ է ավելացնել, որ հողի պաշտամունքի գաղափարը ծնվել է նախնադարյան անզարգացած դարաշրջանի և քաղաքակրթության դարաշրջանի, ինչպես նաև քաղաք-գյուղ հետադիմական հակադրության։

«Նորին, իսկական Հայաստան։— Պատմում է Դեմիրճյանը.— խրճիթների, մարագների և ախոռների արանքում՝ տպարան, կոոպերատիվ, էլեկտրակայան»։ Սա հնի և նորի արտաքին, ժամանակավոր համակեցությունն է միայն, իսկ ներքին, աննկատելի, բարդ ու դժվարին բախումները տեղի էին ունենում մարդկանց հոգեբանության մեջ։

«Ծկել եմ հանգստի,— շարունակում է հեղինակը.— սենյակս գյուղի ծայրին է։ Նստում եմ պատշգամբում, գիրքը ձեռքիս։ Դեմից անտառն իր կանաչ աչքերով մռիկ է տալիս... Եվ քունս տանում է»։ Պատմվածքի սկիզբը արդեն ընթերցողին համակում է անդորր տրամադրությամբ, թե արտակարգ ոչինչ տեղի չի ունենալու, որ խոսքը սովորական դեպքերի, ամառանոցային տպավորությունների մասին է։ Բայց հենց սովորական դեպքերի մեջ Դեմիրճյանը կարողանում էր տեսնել հնի և նորի հստակ սահմանագիծը, սոցիալական մեծ հեղաշրջման էական հատկանիշները։

«Տանտերս մի ութսուն տարեկան բիձա մարդ է. ամպի մորուքը դեմքից կախ»։ Բիձան, կամ ինչպես ինքն է իրեն անվանում՝ Մացակ Ավանեսովը հին օրերի ստվերներից մեկն է. նրա հուշերի մռայլ հորիզոններում դեռևս խլրտում են Հասան խան, յաթաղան, ֆարաշներ։ Հետո երկճյուղ միրուքավոր պրիստավ։ Մարակ, ծեծ, հայհոյանք, կաշառք։ Վերջին տարիների իրադարձությունները շփոթել են Մացակ Ավանեսովին։ Այն, ինչ թվում էր մշտական ու անփոփոխ, ինչպես ոտքի տակի հողը, անհետացել էր, նրան թողնելով անորոշ տարածության մեջ։ Անցյալ ժամանակներում հեշտ էր գյուղացուն տարբերել պրիստավից, իսկ այժմ «մարդիկ, նրանց վիճակը, գործը, արտաքինը այնպես են փոխվել, որ բիձայի աչքերը խառնվում են»։ Նա երանությամբ է հիշում անցյալը, երբ ինքը համարյա

պրիստավ էր և անարգել կողոպտում էր Աղբաբայի գյուղացիներին։ «Հեռի քեզնից ավանակի աշխարք էր»։ Բիձան հասկանում է, որ «Ավանակի աշխարքի» հետ վախճանվեց նաև համարյա պրիստավ դարձած Մացակ Ավանեսովը, թողնելով տարտամ մի հիշողություն Մացակ բիձա անունով, որը խեղճ, անհասկացող գյուղացու կերպարանքով թաքցնում է իր ունեցվածքը, բնատնքի անգամների թիվն ու տարիքը և բնազդով կառչում հին օրերից մնացած անպետք իրերին։ «Բացից բիձան ոտքի վրա է։ Ման է գալիս բակում, կտրան, ներքնատանը ուշտամակն պես դուրս է ածում իմպերիալիստական պատերազմը — վայրիվերո, անհարիր, անպետք իրեր — քաղցր կաթի ժանգոտ տուփեր, մեխեր, տաճկական սվին, կարի մեքենայի կոտրած խողովակ, ձիու հին խամուտ, շրապնելի դատարկ ռումբ։ Մխրճվում է նրանց մեջ, խառնրխտորում նորից ածում ներս։ Ինչի՞ է պահել, ինչ է փնտրում նրանց մեջ»։ Հին իրերի նման Մացակ բիձան և կար և չկար, ավելի ճիշտ իր ներկայությամբ, իսկ նա բացակա էր կյանքից։ Սակայն հին իրերը բիձայի հենարանն էին նոր կյանքում, իրերը կային, նշանակում է կար նաև հին աշխարհը։ Այս պատրանքով էր ապրում Մացակ բիձան, խուսափելով դուրս գալ իր բակի սահմաններից ու շփվել արտաքին աշխարհի հետ։ Մասնավոր սեփականատիրական կիրքը Մացակի կերպարում դեռևս լուծյամբ է հակադրվում նոր կարգերին, իսկ տարիներ հետո այն դրսևորվելու է դասակարգային պայքարի մոլեգին ձևերով։

Միանգամայն տարբեր մարդ է «խենթ» բիձան։ Եթե Մացակի գիտակցության մեջ հողը միայն սեփականություն է, իր անփոփոխ սահմաններով, ապա «խենթի» համար հողը սահմաններ չունի։ Նա բնությունն ընկալում է իբրև գերագույն բարիք, որ մարդուն ազատում է ճղճիմ հաշիվներից և մշտապես կապում հողի ու ջրի հետ։ «Խենթը» անսպառ եռանդով խնամում է բոստանը, առուները մաքրում, ճահիճները չորացնում։ «Նրա շինարարությունը,— ասում է հեղինակը,— արդեն հասարակական բնույթ է ստացել»։ Սակայն Մացակի կարծիքով բիձայի կատարած գործը խենթություն է, պարապ հացակերություն, քանի որ այն ոչինչ չի ավելացնում մասնավոր ունեցվածքին։ Հակառակ Մացակի, «խենթը» անտարբեր է սեփականության նկատմամբ, բայց ունի կյանքի իր ըմբռնումը։ «Ինձ արևը կարգել ա, որ առուն ծռեմ, մարգը դրստեմ, ջրերը հավաքեմ, կարտոփը բաժանեմ»... Չնայած խոսքի զավեշտական երանգին, իմաստը պարզ է, ազնիվ աշխատանքով վերափոխել բնությունը և մարդուն դնել կյանքի արդար ճանապարհի վրա։ Մացակը և «խենթը» հակադիր բնավորություններ են, կյանքի հակադիր ըմբռնումներ, առաջինը իր ունեցվածքի գերին է, իսկ երկրորդը՝ իր ազատությունը և անհատականությունը նվաճում է դուրս գալով մերկ շահի ոլորտից, հաստատելով այն համոզմունքը, որ մարդը, հողը և աշխարհը անբաժան են։ Հենց այդ էլ դառնում է նրա արժանապատվության հիմքը. «աշխարքը իմ բահի տակին ա» հպարտությամբ ասում է «խենթը»։

Բնորոշ է այն հանգամանքը, որ նոր կյանքի կենսունակությունը խորհրդանշող պիոներ Անուշը ավելի մոտ է ու հարազատ «խենթ» բիձային, քան իր ծնողներին ու պապին։ Անուշը անսպառ եռանդ է, ծիծաղ, ուրախություն, նրա պայծառ պատանեկության մեջ խլրտում է նոր կյանքը, որը կանաչ ծիլեր էր արձակում հնամյա հողի վրա։ Մացակը և Անուշը կյանքի հավիտենական շարունակ

տարիների փոփերն են, մեռնող և վերածնվող կյանքի փուփերը։ «Նայում եմ նրա ջլուտ դեմքին, ձեռքերին.— խորհրդածում է գրողը.— այո, նա հողից է զանգված, նա հիմա փտում է, որպեսզի ծաղկի Անուշը»...

Ընտանիքի հիմնական աշխատավորը Անուշի հայրն է՝ Վասիլը, նա վարում է ու ցանում, հնձում ու կալում, շաբշարվում իր եզների հետ, եզների նման։ «Վասիլը տանջված երևույթ ունի։ Ցախ-ցախ մորուքի, դարմանի, ցեխի մեջ կորած գեմքը կնճռոտ կաշու պես է, նրա աչքերը պղտոր են»։ Վասիլի միակ մտահոգությունն է հողից ապրուստ քամել, ապրուստ, որ նա ձեռք է բերում ծանր, անմարդկային աշխատանքով։ Ի տարբերություն «խենթ» բիձայի, որն ապրում է իր կատարած գործով, ամենօրյա տառապանքի մեջ Վասիլը կորցրել է իր անհատականությունը, կյանքի հանդեպ դարձել անտարբեր ու դժվարանում է հավատալ, թե կարելի է աշխատել ավելի նորմալ պայմաններում։

«Հողը» պատմվածքում արծարծվում էր նոր իրականության հիմնական պրոբլեմներից մեկը՝ մարդու և աշխատանքի փոխհարաբերության հեղաշրջման սկիզբը։ Դեմիրճյանը խորապես հասկանում էր այդ շարժման դիալեկտիկան։ Նա տեսնում էր, որ իր մեկուսացած ու տանջալի աշխատանքով Վասիլը պատկանում է անցյալին, մինչդեռ խենթ բիձայի արժանապատվության զգացումը և հանրօգուտ աշխատանքի ձգտումը հետագայում պետք է շաղախվեն նոր մարդու գործունեության լայն հասկացության հետ։ Հնի և նորի բախման բազմազան ձևերի մեջ գրողը որոնում էր ստեղծագործական աշխատանքի տարրերը, որոնք դարձան մեծ վերափոխումների հիմքը։ Տարիներ հետո անդրադառնալով նույն հարցին Ա. Մ. Գորկին տեսականորեն հաստատեց, որ մարդու բնավորության կազմավորման հիմքերը պետք է որոնել աշխատանքային պրոցեսների մեջ։

«Խենթ բիձայի» կերպարը դեռևս հարցադրում էր. հեռախուզություն, որն հայտնաբերեց Մերկեին։ Վերջինս «խենթի» տարաբնույթն է, կյանքի տարբեր հանգամանքներում։ Հակառակ «խենթի», որ օր ու գիշեր իր աշխատանքով տարված սակավ էր շփվում մարդկանց հետ, ծերունի Մերկեն միշտ մարդկանց մեջ է, միտինգներում, ժողովներում, թատերական ներկայացումներում, խրճիթ ընթերցարանում, ամենուր աննկատելի, բայց միշտ լցված սպասումներով ու անսպառ հարցասիրությամբ։ «Հողը» պատմվածքը համակված է նյութական, առարկայական բովանդակությամբ, ապրուստի մշտական հոգսերով, իսկ Մերկեի կերպարը հեղինակն ազատել է նյութական մտահոգություններից, որպեսզի ավելի հստակ երևա հիմնական գիծը՝ նորը ընկալելու անհագուրդ ձգտումը։

Գյուղի երիտասարդների հետ Մերկեն դիմավորում է կենտրոնից եկած առաջին ներկայացուցիչներին։ «Ինչի գնաց դիմավորելու,— խորհրդածում է գրողը.— ինքն էլ չգիտեր»։ Երկարատև քնից արթնացած մարդու նման, աչքերը լայն բացած, Մերկեն առաջին օրերը գնում էր հեզկոմի չինովնիկի կոզմը, մասնակցում ժողովներին ու միտինգներին։ Նա բնազդով հասկանում էր, որ ինքը չի կարող հետաքրքիր տեղի ունեցող գեպքերից, որ այդ ամենը անմիջապես իրեն են վերաբերում։

Տարիներ առաջ Մերկեն այդ զգացումը լուներ երբ նա քաղաք էր գնում, անցնում շենքերի, ակումբի, դպրոցների, թատրոնի մոտից, տեսնում լրագիր ընթերցողներին, տեսնում խանութների վիտրինաներին դրված տարբերնակ իրերը, նրա մտքով երբեք չէր անցնում թե դրանից մի փոքրիկ մաս, լրագրից մի լուր, գրքից մի տող իրեն կարող է հասնել։ Տարիներ առաջ Մերկեն նույնքան մոռացված էր, տրորված ու անկատ, ինչպես «էյը» պատմվածքի անանուն հերոսը։ Անցած աշխարհը խորթ էր և օտար Մերկեի համար։ Նա ապրել էր մոռացված մի գյուղի հավիտենական անշարժության մեջ, ուր կյանքը բազմազանվում էր մարդկանց ծնունդով ու մահով։ Մերկեի հետաքրքրությունները գյուղի օդաններն են եղել, որտեղ նա լսել է հեքիաթներ յոթգլխանի դևերի, չորի պառավների, մոլի ու լույս աշխարհների մասին։ Մերկեն սիրում էր գիտակ ծերունիներին հարցնել, թե ի՞նչ է աշխարհը, լուսինը, աստղերը, արդյո՞ք կանաչը, որ բուսնում է՝ երկրի քաշը պակասում է, թե ավելանում։ «Բայց այդ գոմերից ու օդաններից դուրս՝ ինքն էր ու իր կյանքը՝ մենակ, անուրախ, մոխրագույն, չքավոր»։

Նոր կարգերի հաստատման հետ օրըստօրե փոխվում էր Մերկեի կյանքը։ Մոռացության մատնված մարդը արթնանում էր, բուռն հետաքրքրությամբ մասնակցում գյուղի առօրյա գործերին, պիոներների հետ ծառեր տնկում, խրճիթ-ընթերցարանում ունկնդրում թերթերի ընթերցանությանը, հուզվում միջազգային դեպքերով այնպես, կարծես այդ ամենը կատարվում է իրենց գյուղում։ Մերկեն «ագահությամբ վրա էր ընկել իմանալու, անվերջ տեսնելու, հասկանալու»։ Ոմանց կարծիքով Մերկեն տարօրինակ մարդ է, նույնիսկ «ցնդած»։ Մինչդեռ «Դարերով շորացած նրա հոգին ծարավի էր մտավոր ցոլի»։ Տարօրինակությունը թերևս այն էր, որ Մերկեին ավելի հուզեցրել, քան մյուսներին, ձգտում էր ազատվել անցյալի մղձավանջից, հաստատել իր մարդկային արժանապատվությունը։ Մերկեն սկսում էր հասկանալ, որ նոր կարգը ոչ միայն նյութական, այլև իմաստային հոգևոր կյանքի սկիզբն է։ «Ո՞վ էր տեսել,— ասում է Մերկեն,— խրճիթ, գիր, ուսում, թատրոն, շարքացան, տրակտոր... էս ռադիոն, էս հրաշալիքները։ Մեզնից ում են ցույց տվել, երբ են մարդատեղ դրել»։ Նոր իրականության հանդեպ Մերկեին լցված էր հիացմունքի և ափսոսանքի հակադիր զգացումներով. հիացմունք, երազում չտեսածները տեսնելու և ափսոսանք, որ իսկական կյանքը ուշ հասավ իրեն։ «Մերկեն» պատմվածքը բազմաթիվ այլ երկերի հետ գեղարվեստորեն հաստատում էր Վ. Ի. Լենինի այն հանճարեղ միտքը, թե «մենք բոլշևիզմի հաղթական երթով անցանք հսկայական երկրի մի ծայրից մյուսը։ Մենք ազատության և ինքնության կյանքի բարձրացրինք աշխատավոր մասսաների՝ ցարիզմի և բուրժուազիայի կողմից ճնշված ամենաստորին խավերը»։

Բնական, անկաշկանդ փոխհարաբերություններ էին ստեղծվել սովետական կարգերի և աշխատավոր մարդկանց միջև։ Նոր իրականությունը այնքան մոտ էր ու հարազատ, որ կարծես մարդիկ անցնում էին փաղուց ծանոթ կյանքի արահետներով, իրենց պարտականությունները կատարում փստահորեն, պատասխանատվության զգացումով, երբեմն էլ շափազանց ճշտապահությամբ, ինչպես «Ճրագամեջը» կամ «Կայարանի Ակոպը»։ Ակոպը եռանդ է և զգաստություն։ Նա ուշադիր հետևում է կայարանի կարգ ու կանոնին, օգնում ուղևորներին, խնամում անապատան մանկանը։ Կայարանը և Ակոպը անբաժան են։ Դա սկիզբն էր մարդու և աշխատանքի այն բարձր միասնության, որ միլիոնավոր մարդիկ նվաճում էին սովետական կարգերի շնորհիվ։

Բայց Դեմիրճյանը այստեղ կանգ չառավ. գարավոր թմբությունից արթնացած ժողովրդական կյանքի ակտիվությունը լցվում էին մարդիկանց բնության ճշմարիտ գե-

զեցկությամբ։ Կյանքի հզոր շարժման հետ երևան էին գալիս մարդու կոնցեպցիայի բազմազան ասպեկտները։ Ինչպիսին է նոր մարդը, ո՞րն է նրա կյանքի իմաստը, ո՞րն է նրա երջանկությունը։ Այս հարցերի պատասխանը Դեմիրճյանը որոնում էր ամենուր, կյանքի տարբեր բնագավառներում և իր ամեն մի նոր երկրում հայտնաբերում մարդկային բնավորության մի նոր հատկություն։ «Ընկերները» պատմվածքը հավաստում է հայ ժողովրդի հեղափոխական գիտակցության հասունությունը սովետական կարգերի հաղթանակի նախօրեին։ Մանկության տարիներից Ղոնդին և Գրդելը անբաժան ընկերներ են։ Քաղաքացիական կռիվների շրջանում նրանք ընդունվում են կոմերիտմիության շարքերը, դառնում պարտիզաններ։ Հրամանատարությունը նրանց հանձնարարում է կարևոր նամակ հասցնել Թշնամու թիկունքում աշխատող կոմունիստներին և պայթեցնել ռազմական նշանակություն ունեցող կամուրջը։ Առաջադրանքը չկատարած ընկերները գերի են ընկնում դաշնակցական բանդայի ձեռքը։ Հարբած սպան, որ չի կարողանում հարցաքննությամբ որևէ բան պարզել, բանտարկված ընկերներին տալիս է ստորճանակ մեկ փամփուշտով և ասում՝ կենդանի կմնա և կազատվի նա, ով կսպանի մյուս ընկերոջը։

Այս պայմանը անհեթեթ է թվում միմյանց ջերմորեն սիրող ընկերներին։ Սակայն անդադար վեճերից ու տանջանքներից հետո, երբ ամեն մեկը պնդում է, որ ինքը զոհվի՝ մյուսին ազատելու համար, ընկերներից մեկը՝ Գրդելը ինքնասպան է լինում։ Հրամանատարության առաջադրանքը կատարում է բանտարկությունից ազատված Ղոնդին։

Դեմիրճյանի նախորդ պատմվածքների հիմքում ընկած էին առօրյա, առանձին դեպքեր, մինչդեռ «Ընկերները» ծավալվում է իբրև սյուժետային արտասովոր հանգամանքների հյուսվածք, որտեղ գործում են արտասովոր կերպարներ։ Սակայն ինչպես ամեն մի ճշմարիտ ստեղծագործության մեջ, Դեմիրճյանի երկերում նույնպես սյուժեն արտաքին, բովանդակության նկատմամբ անտարբեր հատկանիշ չէ, այլ աշխարհընկալման եղանակ, բովանդակացած ձև։ Եթե նախորդ պատմվածքներում Դեմիրճյանն արծարծում էր մարդու և իրականության, մարդու և աշխատանքի փոխհարաբերության հարցերը, ապա «Ընկերները» պատմվածքում նա մեկնաբանում է անձնազոհության հին գաղափարի նոր իմաստը։ Ղոնդին և Գրդելը ընկերներ են բառիս բարձր առումով. մի կյանք, մի ամբողջական բնավորություն չաժանված երկու համանման մարդկանց միջև։ Հեղինակը, որ նման դեպքերում որևէ երանգով առանձնացնում և բնորոշում է կերպարը, տվյալ դեպքում կարծես խուսափում է անհատականացումից և դրանով իսկ հարստացնում անձնազոհության գաղափարը՝ մարմնավորված երկու անձնավորության մեջ։ Դեմիրճյանը հիացմունքով է պատմում իր հերոսների մասին, պարզ ու հասարակ երիտասարդներ, որ մահվան սպառնալիքը դիմավորում են խիզախ վեհությամբ, գիտակցելով իրենց գերազանցությունը թշնամու հանդեպ։ «Տեղ կա, պետք է ապրել, տեղ կա, պետք է մեռնել։ Մի կարծիր, թե ամեն ապրել ապրել է»։ Այսպես է ասում Գրդելը, բայց այդ խոսքերը կարող էր ասել նաև Ղոնդին, քանի որ նույնն էր նրանց համոզմունքը և մտահոգությունը։

Ընկերոջ անձնազոհությունը Ղոնդու հոգու վրա իջնում է ահեղ ծանրությամբ։ «Արդյոք ինքը Ղոնդին չէ՞ր պատճառը, որ Գրդելը սպանվեց։ Իհարկե ոչ։ Բայց

արտաքուստ այդ այդպես էր»։ Հոգեկան խռովահույզ վիճակում նա ապավեն է որոնում, իսկ միակ ապավենը պարտքի կատարումն է։ «Այո, այո պարտքը կատարել, թեկուզ մեռնել իսկույն»։ Ղոնդու խոր վիշտը ոչ թե հուսահատություն էր, այլ ակնածանք և հիացում կյանքից հեռացած Գրդելի հանդեպ, որն իր մահով բացեց իսկական սխրանքի ճանապարհը։ Այս ճշմարտությանը Ղոնդին հասնում է ծանր ապրումներից հետո...» Ընկերը պետք է մեռներ, այդպես էր այնժամ բոպեն։ Հիմա ինքը պիտի ապրի.— այդպես է բոպեն հիմա»։

Հրամանատարության առաջադրանքը կատարելու պահին Ղոնդին անընդհատ զգում է Գրդելի ներկայությունը, մահը կարծես անբաժան ընկերներին վերստին միավորել էր մի անձի մեջ. կրկնապատկել դժվար պարտականությունը իրագործելու կամքը։

Ո՞ւմ դեմ էին կռվում Ղոնդին ու Գրդելը, ովքե՞ր էին նրանց թշնամիները։ «Ընկերները» ընդարձակ պատմվածքում հեղինակը միայն մի քանի էջ է հատկացրել նրանց։ Հարբեցող գնդապետ, փախուստով մտահոգված կապիտան, բթամիտ խմբապետ, բարոյական կերպարանքից զրկված մարդիկ, որոնք ժողովրդի հանդեպ լցված էին արհամարհանքով ու ատելությամբ։ Սակայն պատմության վճռական պահին բախվում էին ոչ միայն անցյալն ու դալիքը ներկայացնող հակադիր սոցիալական ուժեր, այլև մարդկային հակադիր բնավորություններ։ Թշնամիները սնանկացել էին քաղաքականապես, սպառվել մարդկայնորեն։ Նրանց մնում էր մտածել փախուստի և արտասահմանյան քաղաքներում սպասավոր լինելու մասին։ Տարբեր էին Ղոնդին ու Գրդելը, իսկական մարդիկ, որոնք մարմնավորում էին ժողովրդի ազատագրության մեծ երազանքը, ապրում և մեռնում բարձր իդեալների համար։ Այս էր Գրդելի անձնազոհության և Ղոնդու հերոսության մարդկային իմաստը։

Նոր իրականության պայմաններում վերանում էին միջնորմները մարդու և նյութական աշխարհի միջև, հետզհետե անհետանում էին կեղծ արժեքները, խորհրդավորությամբ պարուրված իրերն ու առարկաները։

«Գինդ են կպչում իրերը» խոսքով է ավարտվում «Իրեր» պատմվածքը։ Նյութը կյանքի առօրյա դեպքերից մեկն է, որտեղ իսկական արվեստագետը տեսնում է դժվար տեսանելին՝ հեղաշրջվող հոգեբանության իրեղեն արտահայտությունները։ Ուսանող Հրանտի քույրը աշնանամուտին մաքրում է իրենց փոքր բնակարանը, անկյուններից հանում ըկտված հովանոց, քահանա պապի գավազանը, պրեստավների և վաճառականների լուսանկարներ, կարկատած կոշիկներ, ծանգոտած բանալիներ և նորից իրեր ու առարկաներ, որ բնակարանը լցրել են «քարայրների խոսող հնությամբ»։

Հրանտի քույրը ապրում է այդ անօգտագործելի իրերով, պահպանում հոգատարությամբ, քանի որ դրանցից ամեն մեկը հիշողության անտեսանելի թելերով նրան կապում է անցյալի հետ և վերաստեղծում անհետացած աշխարհի պատրանքը։ Բնակարան կոչված փոքրիկ տուփից դուրս քույրը ոչինչ չի նկատում։ «Անշարժը, անխախտը սա է, իսկ աշխարհը երկրորդական է, ուրիշները անկարևոր բան»։

«Իրեր» պատմվածքի հերոսուհին Դեմիրճյանի Սովետական շրջանի սակավաթիվ անանուն կերպարներից մեկն է, որ տվյալ դեպքում, մերվելով հին իրե-

բի հետ կորցրել է իր անունը, ինչպես իրերն են կորցրել իրենց բարոյական և նյութական արժեքները։ Տարիների ընթացքում ինչ-որ հարազատություն է ստեղծվել մարդու և անպետք իրերի միջև. իրերը դարձել են մարդու տարերքը, նրա կեցության նախապայմանը։ Սակայն խանդաղատանքի զգացումը հին իրերի հանդեպ թեև մեկուսացրել է նրան արտաքին աշխարհից, բայց չի խաթարել նրա մարդկային էությունը և ջերմ սերը եղբոր հանդեպ։ Ավելին, անպետք իրերին պիտանիություն վերադարձնելու կիրքը զուրկ էր շահադիտական ակնկալություններից և չէր նույնանում իրերի հասարակական նշանակության խեղաթյուրված պատկերացման՝ նրանց պաշտամունքի հետ, թեև վերջին հաշվով երկուսն էլ սնփականատիրական հոգեբանության այլաձևություններն էին։

«Աշխատանքը համալսարանում, բշիջում, շեֆարկյալ գյուղում, հանրային գրադարանում և այս բոլորի հետ իր սիրած գրքերը» Հրանտին անջատել էին հին իրերից ու առարկաներից, փոխադրել կյանքի մի նոր եզերք, որն հեռու էր անցած ժամանակների հասկացություններից։ Հրանտին օտար է, անհասկանալի քրոջ գորովանքը հին իրերի նկատմամբ։ Նա կոտրում ու դուրս է նետում քահանա պապի գավազանը, մինչդեռ քրոջ հասկացողությամբ տունը հենց այդ իրերով է հաստատվում։ Քույր ու եղբայր, միմյանց անհաղորդ երկու բնավորություն, որոնք կարծես եկել են պատմության հակադիր բևեռներից ու ծվարել նույն հարկի տակ։ Հին հոգեբանությունը վերափոխվում էր ծանր ու դժվարին ընթացքով, մեկին կլանում էր նոր կյանքը, տանում իր հետ, իսկ մյուսը դատապարտված էր մնալու հին իրերի գերության մեջ։

Այս և նախորդ մի քանի պատմվածքներում կերպարներն ստեղծվում են մարդկային բնավորության որևէ հատկության խտացման և առանձնացման եղանակով։ Մի դեպքում այդ ազնիվ աշխատանքի գիտակցությունն է, մի այլ դեպքում հին իրերից հոգեբանորեն անջատվելու անհնարինությունը։ Նույն այս սկզբունքով Գոգոլն էր կերտում «մեռած հոգիներ» պոեմի կերպարները. առանձնացնելով բնավորության կոմիկական որակը։

«Իրեր» փոքր պատմվածքը բազմազան կյանքի մի բեկորն է, բեկոր, որ բովանդակում է դարաշրջանի բախումների փիլիսոփայությունը։ Նշանավոր Կյուվեի նման, որը մի ոսկրով վերականգնում էր վաղուց անհետացած կենդանու կմախքը, Դեմիրճյանն առօրյա, սովորական փաստի մեջ տեսնում էր մեծ կյանքի դիալեկտիկան, մարդկային հոգեբանության վերափոխման հակասությունները։

Սովետահայ գրականության կազմավորման առաջին տարիներին ռեալիզմը հանդես էր գալիս իբրև միտում, իբրև ուղղություն, որը ձևավորվում էր Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ա. Բակունցի Ն. Զարյանի, Գ. Սարյանի և ուրիշների ստեղծագործություններով։

Դեմիրճյանի «Նրանց ժպիտը» պատմվածքների շարքը իր գաղափարական դիրքավորումով և նոր մարդու վերնեպտիությամբ դարձավ սոցիալիստական ռեալիզմի հիմնաքարերից մեկը։ Այս պատմվածքներում և հետագա ստեղծագործություններում Դեմիրճյանի ռեալիզմը համակված է զարմանալի կոնկրետությամբ։ Այն միշտ դրսևորվում է պատմականորեն շրջագծված։ Ընկալելով իրականության զարգացման ներքին ընթացքը և էությունը, Դեմիրճյանի ռեալիզմը միաժամանակ կանխատեսում է ապագան, օժանդակում նրա հաստատմանը։ Շարժման բնույթը

ամեն անգամ որոշվում է պատմականորեն տրված ազգային կյանքի բովանդակությամբ, որը պայմանավորում է նաև ռեալիզմի ազգային երանգը։

«Նրանց ժպիտը» պատմվածքների շարքում Դեմիրճյանը կերտեց ժողովրդական կերպարների մի բազմազան աշխարհ, կերպարներ, որոնք հավաստում էին գրականության նոր որակի սկիզբը։ Բնորոշ է այն, որ դրական կերպարները Դեմիրճյանը ներկայացնում է երգիծական երանգավորումներով, բայց դա կոմիկականի տեսության մեջ հայտնի կյանքի այս կամ այն թերությունը մերժող ծաղրը չէ, այլ մարդու հանդեպ տածած սիրո արտահայտման ձև, տիպականացման եղանակ, որը հատուկ է Դեմիրճյանի արվեստին։ Այս պատմվածքներում Դեմիրճյանը իսկական նորարար էր։ Նա առաջիններից մեկն էր, որ անդրադարձավ մարդու և ազատ աշխատանքի պրոբլեմին և այն պատկերից իր բնորոշ, էական գծերով։ Այսօր, այդ պատմվածքների ստեղծման տարիներից ավելի քան կես դար հետո, երբ Հայաստանի բանվոր դասակարգը դարձել է մեր հասարակական զարգացման գլխավոր ուժը, ավելի ցայտուն է գծագրվում Դեմիրճյանի վաստակի գաղափարական և էսթետիկական բարձր նշանակությունը։

ԷԴ. ԹՈՓՉՅԱՆ

ԱՆՑՅԱԼԻ ՈՒՐՈՒՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գեղեցիկ է կապտաչյա Լեմանը... Ասես փիրուզ երկնքի կտոր լինի՝ ընկած Զվիցերիայի և Ֆրանսիայի մեջտեղ և իր երկնայինի կապուտակ անհունն ու անհասկանալի անդորրը հետը երկիր բերած՝ էլ չի ուզում խառնվել այս աշխարհի և ոչ մի գործին։ Կապույտ, օտար հայացքը շրջելով իր շորս բոլորը հավաքված ափերին՝ շարունակ խաղերի ետևն ընկած մի ժպիտ ունի, որ անհասկանալի է այս երկրացուն։

Արոտներ, գյուղեր, վիլլաներ թափել են իրենց դողդոջ ստվերները նրա վճիտ ալիքների մեջ և երկաթուղու հապճեպ գնացքներ, օղակ-օղակ քանդելով ծխի սպիտակ կծիկները՝ սողում, սլանում են նրա ափերին՝ տանելով ու բերելով մի խառնուրդ աշխարհիս ամեն կողմերից ու ազգերից, որ թափվում են Մոնտրեո, Վրվե, Կլարանս և նրանց գլխին, լեռնալանջին նստած Գլիոն և Կո ամառանոցները ու այլ վայրերը այս հսկայական հյուրանոցի, որի անունն է Զվիցերիա։

Պառկած է Լեմանի հյուսիսի ափին անդորրից հոգնած Վրվե ավանը և աչքի տակով նայում իր դեմ արձանացած Սավոյական Ալպերին, որ ոտները դրել լճի կապույտ փեշերին անփույթ նայում են հեռուն։ Պառկած է Վրվեն ու ասես քունը տանում է։ Նրա օրերը անցնում են օրացույցային խաղաղ կարգով, նրա այգիները կանաչում ու դեղնում առանց աղմուկի, նրա փողոցները լուսանում ու մթնում առանց դեպքերի, տներում մարդիկ ապրում ու մեռնում առանց պատմությունների։ Ժնևի ստույգ ժամացույցի պես մի անգամ լարված՝ չկչկում է նա իր մաթեմատիկ ճշտությամբ և

ոչ մի բան չի խանգարում նրա կյանքի խաղաղությունը, որ կարծես հաստատված է մի անջնջելի օրենքով։

Միայն լեմանն է, որ գեղեցիկ, քմահաճ գեղուհու նման զանազան ջնյարդային կծկումներ է անում դեմքի վրա։ Մեկ էլ տեսար ճակատը կծկեց ու դժկամեց... Եվ ահա ճերմակ ճայերը հանգեսի ժամանակ օդում թռչող ճերմակ գլխարկների պես վեր ու վար արին, կարծես գրգռելով մոտեցող փոթորկին, որ գալիս մի երկու ժամ գժի պես մի քանի պտույտ է անում լճի վրա և կրկին գնում, կորչում։ Եվ ահա տեսար նորից մեղմեց, դալկացավ լճի դեմքը, հայացքը մարեց և անհայտ միտք եկավ խլեց նրա ուշը և տարված իր խոհերին՝ պիշացավ մի հսկայական երազի մեջ։

Ժպտում է Լեմանը և ծաղկում են Վրվեի փոքրիկ այգիները։

Մի փոքրիկ ձորակ ունի այդ Վրվեն, որի հեղեղատի երկու ափերին պառկած են լռիկ այգիներ, ասես մոռացված լինեն, մի խճուղի գալարվելով գնում է այդ ձորակն ի վեր։

Եվ ահա հուլիսի մի շոգ օր այդ ճամփով վեր էր գնում մի երիտասարդ՝ ականջը տված ծղրիդների ձայնին։ Մարդ չէր երևում շորս կողմը։ Երբեմն միայն զվիցերական ահագին կովը հնչեցնում էր վզից քաշ արած մեծ զանգակը։

Երիտասարդը շոգից նեղացած չորս կողմը նայեց, որ մի տավեր գտնի պատսպարվելու։ Բայց ստվերը բոլորը այգու մեջ էր։ Աչքը գցեց այգուն, բայց շարունակեց ճամփան։

Ո՞վ է, ո՞ւր է գնում այս շոգին, աստված սիրեք...

Ո՞վ գիտե... Օտարականի մեկը, ռուս ուսանող կլինի կամ բալղար... գուցե և գործադուլ սիրող իտալացի, որ իր երկրից մի անգամ պոկված՝ էլ ոչ այլ երկիր է ճանաչում, ոչ ազգ։

Զգեստներին նայես՝ պետք է որ ռուս ուսանող լինի, որ և նշանակում է անարխիստ է — դեմքն էլ ցույց է տալիս, որ «շատ սոցիալիստ է»՝ ինչպես ասում է տափակախոս զվիցերացին։

Էհ, այդ էտրանժեները... ո՞վ է հասկանում դրանց բանը։

Բայց իհարկե խնդիրը այն չէ, թե ով է նա, այլ, որ վերջապես նրան էլ շոգը նեղել սկսեց։ Եվ ահա կանգնել չորս կողմն է նայում։ Մի առվակ է քրքջում ճամփի եզրին։ Դրանից մի քայլ դենը տարբ ցածլիկ պատն է։ Մի երկու քայլ այն կողմը արոտի կանաչ գորգն է և ծառերի հովանիները։ Ինչ անի, որ լավ լինի։ Դե ռուսաստանցին շատ էլ ձևական չէ... մի ոստյունով ցատկեց առուն, քարձրացավ ցածլիկ պատը և այնտեղից ուղիղ այգու մեջ։

Օխա՜յ, ապրի աշխատող ձեռքը. ինչ հիանալի դրախտ։ Ամենուրեք փռնել է այգու անուշ բուրմունքը։ Պատերի երկայնքով շարված են ծառերը իրենց հովանիներով, որոնց մեջ գոյանում է մի կանաչ պուրակ, ուր կքնել է պատկառազդու կաղնին։ Նրա տակին առվակը վազում, գլորում է գույն-գույն քարեր, ծիծաղում փոքրիկ երեխայի նման։

Երիտասարդը նստեց ափին, մեջքը դեմ տվեց կաղնու բնին ու կրկին սկսեց կծկել իր մտքի թելը։ Ով գիտե ինչ էր նրա հոգսի առարկան։ Ջստանալու ամսականնե՞րը, թե՞ որևէ քաղաքական դեպք, միայն երևում էր, որ միտքը պաշարված այդ համառ խնդրով՝ չէր կարողանում դրա լուծումը գտնել։

Բնությունն էր միայն, որ հոգ չուներ։ Նա, այդ անտարբեր ծերուկ-երեխան իր հավիտենական խաղն էր խաղում, առանց միջամտելու, առանց հետաքրքրվելու իր ստեղծած էակների մտորմունքներով։ Ահա խոտերի մեջ տնարար մրջյունը շտապով քաշ էր տալիս մի ահագին սերմի կտոր։ Տարօրինակ միջատներ, երկարավուն, պնդակազմ, զրահապատ սև բզեզներ մագլցում էին թփերի ու խոտերի վրա, նորից իջնում, և հետո հանկարծ թռչում, կամ մտնում խոտերի անտառը։ Իսկ ականջի մեջ շարունակ այս կամ այն ճանճի միալար վզզոցն է, որ մոտենալիս հանկարծ ուժեղանում է, և մի քանի պտույտ գործելով հեռանում է, կորչում ընդհանուր այլաձայն ու միօրինակ սիմֆոնիայի մեջ։ Անմիտ, հանգիստ և ամեն բան մոռացնող մի համերգ, որ միշտ կա բնության մեջ, թեկուզ ուրախ լինես, թեկուզ՝ տխուր։ Ինչո՞ւ համար է այս բոլորը։ Էհ, ո՞վ գիտե։ Եվ երիտասարդը կամաց-կամաց վարժվում է բնության այս անհասկանալի աշխատանքին։ Մի բոպե խլանում է նրա անքուն հոգսը։ Հանգիստ հոգոց է հանում, զգում ինչ-որ ուժերի մի ներքին, գաղտուկ պաշար, հուսադրվում է, և տարվելով բնության այս ընդհանուր կյանքին՝ ընկնում է մոռացոնքի մեջ և գլուխը փախելով կրծքին՝ հանգիստ նիրհում։

— Պարոնի համար այստեղ գուցե շատ հանգիստ է, բայց... ներեցե՛ք, պարոն... այգին մասնավոր է, և նրա մուտքը արգելված։

... Երիտասարդը բաց է անում պղտոր աչքերը և անշարժ նայում այս աննկարագրելի երևույթին, որ իր դեմ արձանացած՝ սպասում է։

— Հաճեցեք վեր կենալու, պարոն, այգին մասնավոր սեփականություն է... և վերջապես...

Երիտասարդը շիտկվեց։ Հը, ի՞նչ կա, ո՞վ է։ Ո՞վ պիտի լինի, մի սովորական զվիցերացի, մաքուր ածիլած, կարմիր-կլոր դեմքով, շեկունք, կապտաչյա, ժիլետի կոճակները բաց, բաճկոնը թողած տանը, որ երևի շատ հեռու չէր այդ տեղից։

Կանգնել է և սպասում։

— Ինչպե՞ս թե արգելված է, ինչո՞ւ — մեքենաբար հարցնում է ակամա վանդալը և քնոտ աչքերը ուղղելով այդ հաստագլուխ երևույթին՝ նայում նրան։

— Ի՞նչպես թե ինչու։ Չե՞ք տեսնում այն տախտակը, որի վրա պարզ գրված է. «Այս այգու մեջ մուտքը արգելված է»։

— Լավ, ի՞նչ անենք, ի՞նչ եղավ այգին մտնելով։

— Այդ դժվար չէ հասկանալ, պարոն։ Զվիցերիա ապրողը չպիտի անգետ լինի այդ կանոններին։ Այստեղ սեփականությունը հարգված է։ Ես ձեզ խնդրում եմ թողնեք այգին։

— Դուք այս այգու տե՞ր եք,— խոսքը փոխեց երիտասարդը քիչ հեգնորեն։

Զվիցերացին նեղացավ արդեն։

— Պիտի հեռանա՞ք այստեղից թե չէ, պարոն։

— Դա՞ ինչ խիստ ձև է, պարոն։ Իսկ եթե չգնամ...

— Ահ, ստիպված կլինեք։

— Զորք կանչել կտաք, չէ՞,— հեգնեց երիտասարդը և հետո իր մայրենի լեզվով՝ «Թուհ, ձեր այգին էլ, ձեր հերն էլ, ձեր երկիրն էլ անիծված, վահ, մի բոպե չեն թողնում մարդ հանգիստ իր գլուխը լա այս քանդվածում...»։

Ու բարկացած դուրս գնաց այգուց։

Զվիցերացին ապշած ու անթարթ նայեց նրա ետևից տատանվելով՝ թե արդյոք լավ չէ՞ր լինի քարշ տա այդ վայրենուն ոստիկանատուն և տուգանք պահանջի, բայց մինչև նրա վճռելը՝ երիտասարդը հեռացել էր և շոգից շառագունած այգետերը քրտինքը սրբելով վերադարձավ տուն։

Հեռացավ երիտասարդը և Վրվեի խաղաղ կյանքում՝ ինչպես նրա դռան կանգնած լճի մեջ՝ մի քար էլ ընկավ, ալիքավորեց նրան, բայց էլի խաղաղությունը ստացավ իր իրավունքները։ Ապրում էր այսպիսով իր անդորր կալվածքի մեջ անտարբեր զվիցերացին և այնուհետև ոչ մի հույզ, ոչ մի դեպք չէր վրդովում նրա լճացած հոգին։ Վայելում էր այն բարիքները, որ իբրև մասնավոր սեփականություն բաժին էին ընկել նրան, կարծես այլ կերպ անկարող էր լինել։ Իր սեղանի վրա ամեն օր կվայելեր սիրած բուրալից կերակուրները, անհրաժեշտաբար կպարպեր իր հայրենի Վո կանտոնի գինին, կըմպեր մի բաժակ սուրճ, կմաներեր մի քանի բիսկվիտ ու կգնար լճափի գարեջրատունը, կնստեր նրա դռան կիսավրանի տակ, կվառեր մի սիգար, կպահանջեր մի բաժակ գարեջուր, կնետեր խաղաղ հայացքը իրենից մի քանի քայլ հեռու կլկլացող Լեմանին ու կմտածեր ինքնաբերաբար՝ ինչ որ գլուխը գար։

Ահա մի երկու հարյուր քայլ հեռու՝ դողալով ու հևալով ու իր անիվե թևերով կապույտ ջուրը երկու կողմից ճանկռելով անցնում էր մի զբոսանավ՝ արծաթե փրփուրի մի գործվածք փռելով ետևից։ Նավի եզրերն ու տախտակամածը մեղվածեփ փեթակի պես լցված են։ Եվ բազմաթիվ հովանոցներ գույն-գույն սունկերի պես երևում են նավի ամեն կողմից և նրանց տակից ուրախ թաշկինակներ փոփոում են, մինչ նավի զարթեցրած ալիքները փախչելով դեպի ափ՝ «շը՛շշ», «շը՛շշ» ռիթմով փշրվում են քարակուտ ափերին։ Շուտով ամեն ինչ դադարում էր և նավի անճոռնի ոռնոցը իմաց կտար Վրվեի նավամատույցին իր գալուստը։ Լճափի մայթով կանցներ մի անգլիացի զույգ՝ ուղեզգեստով, կարծես այդ անգլիացիներն էլ ուրիշ զգեստ չունեն։ Ահա և պանսիոնի աղջիկներն ուղևորությունից՝ ուղեպարկերը մեջքներին և երկար լեռնացուպերը ձեռքներին։ Զորակազմ անգլուհիներ են դրանք՝ իրենց անուղղելի ֆրանսերենով և կարմրաթուշ, կերցրած, լիակազմ գերմանուհիներ, որ լեռնային զբոսանքից շիկնել են մինչև վզերը և իրենց ուրախ ու անիմաստ քրքիջով ահա շտապում են «նախընթրիքի»։

Իսկ լճի այն կողմը Ֆրանսիան է։ Սավոյան՝ բարձրացել, ահագին աշտարակները դրել ուսին, կարծես ուզում է թափվել Լեմանի կապույտ ծոցը։ Այդ լեռների արանքներում սևին են տա-

լիս անտառներ, իսկ ափին՝ փոքրիկ, սավոյական ավաններ, որ լճի այն կողմից մասնակցում են այն ընդհանուր խաղաղ մրափին, որ հատուկ է Լեմանի բոլոր ափերին։

Թմրել է Ժակ Բուրդիլիեն, գլուխը թեքած կրծքին՝ բոստանի եզերքից կախ ընկած ձմերուկի նման։ Ահա մի հեծանիվ է անցնում մեզմ հնչեցնելով իր բոժոժը։ Ժակը բաց է անում իր անարոշ աչքերը ու բութ հայացքով նայում նրան, մայթին, լճափին՝ ու նորից թաղվում բութ կիսաքնի մեջ։

Արևը մեզմ թեքվում է և Սավոյական Ալպերը իրենց թանձրացող ստվերների միջից ահա ավելի պարզ դուրս են ցցում լայնաբաց երախները՝ ժայռոտ ու սուր ատամներով։ Ահա մի քիչ արևելք Վալեի հովիտն է երկու հսկայական լեռնապարիսպների մեջ, որ վրան քաշած իր ստվերի վերմակը՝ նայում է գողտուկ. նրա կրծքի վրայից Ռոնա գետն է գալիս լցվելու իր կապուտակ իշևանը—Լեմանը։ Մի քիչ էլ այս կողմ՝ Շիլիոնի դղյակն է ոտքերը խրել լճի մեջ ու վերապրում իր արդեն ժանգոտած հիշողությունները։ Այս բոպեիս նրա բազմաթիվ սենյակները լցված են մի բաբելոնական բազմությամբ, որ եկել է տեսնելու Բոնիվարի սյունը և Բայրոնի սենյակը։ Պաղ-հետաքրքիր անգլիացիներ, քառասնամյա միամիտ անգլուհի աղջիկներ և տարօրինակ ամերիկուհիներ իրենց կապույտ աչքերով խուզարկում են հինավուրց կամարները, ուր մեծ տարագիրը այնքան բարձր հնչեցրեց իր սրինգը՝ ազատության մի կորովի երգով։

Ահա հերթով գալիս են Կլարանսը, Մոնտրեոն և ահա նրանց գլխին լեռնալանջին Գլիոնը, նրանից վեր Կոն, ուր մագլցում են ֆյունիկուլյորները, որոնց շալակին ելնում իջնում է մի խայտաբղետ միլիոնատեր ամբոխ, հավաքված աշխարհից ամեն կողմից։

Ժակ Բուրդիլիեն քնած է արդեն։ Նրա այդ տարօրինակ արհեստը իհարկե չի զարմացնում հյուրանոցի սպասուհուն. նա սովոր է այդ համերական տեսարանին։ Որովհետև եթե Ժակը չի գնացել Մոնտրեո իր վարձու տված տան գործերի համար, եթե դպրոցի շինության մեջ որևէ ընտրություն չկա, եթե աղոթարանը չէ, որ ժամերով նստած հավատացնում է իր «բարի Աստծուն», որ ինքը լիովին նվիրված է նրան, և եթե վերջապես չի ճաշում, նշանակում է որճատանը պիտի լինի, ընդունի մի երկու գավաթ գարեջուր ու քնի։ Եվ ինչո՞ւ չքնի... ի՞նչն է պակաս, փառք աստծու, փող կա՝ ուրեմն և ամեն բան կա Զվիցերիայում։

Իսկ կիրակի օրերը Ժակը աղոթատանն է։ Կնստեր մի նստարանի վրա, թաթերը «փառք ի բարձում»-ի պես կգոցեր և նրանց արանքում բռնած մի փոքրիկ ավետարան, որ պաստորը սկսի աղոթքը։ Ժողովարանը լիքն է աղոթողներով — մի բազմություն, հավաքված շրջակա վիլլաներից ու տնակներից, ամեն տեսակի ու դիրքի զվիցերացիներ, զանազան կալվածատերեր, մոմեղեն պառավներ, որ ամենայն անդորրությամբ քիչ-քիչ կրծում են իրենց տարեկան ռենտան, ապրում դրանով՝ և ոչ ուրիշի ունեցածին են ձեռ տալիս, ոչ էլ իրենցից բաժին հանում ուրիշներին։ Այդ մոմեղեն կալվինական պառավները բացի աղոթատուն գնալուց ունեին և մի զբաղմունք — լի օրերը կգնան այս կամ այն վիլլան և հիվանդ «հավատարիմներ» կգտնեն՝ նրանց մխիթարելու համար։ Այնտեղ կան նաև զանազան «քրիստոնյաներ», որ միշտ աղոթում են ինչ-որ երևակայական թշվառների համար՝ նրանցից ոչ մինը չգտնելով իրականության մեջ։ Ահա նաև խակ-խակ աղջիկներ, որ իրենց տատիկների պոչից կպած եկել են աղոթելու առանց իմանալու թե ինչ։ Եվ վերջապես՝ լրջադեմ պաստորներ, որ մի քանի սանտիմի համար հոգի են տալիս և միշտ քարոզում մի տեսակ անհասկանալի գթասրտություն։

Բացարձակ լռություն է։ Ամենքը դեմքերը խոնարհած նայում են գետնին և աշխատում ներշնչվել։ Եվ ահա հանկարծ պաստորը մի բան գանողի պես արտասանում է՝ «Ազաթքի» և բազմությունը վեր է կենում։ Աղոթում են, հետո նստում և մի հոգևոր երգից հետո սկսվում է Ավետարանի ընթերցումը։ Կարդում է պաստորը, և մի ուրիշը, որ նստած է նստարանների մյուս շարքում՝ վեր է կենում կանգնում։ Չոր դեմք ունի նա, քունքերը ցցված և սառուցե աչքերը հառած դիմացի պատին՝ ահա բացատրում է ընթերցվածի իմաստը։

Ժակ Բուրդիլիեն ուշի ուշով ունկնդրում է այդ քարոզին և նայում պատուհանից դուրս։ Ահա երևում է կապուտակ Լեմանի մի հատվածը և Սավոյական Ալպերի մի բեկորը։ Ահա ծիծեռնակները քամուն տված նետերի փունջի պես սլացան տանիքի վրայով։ Եվ այդ բոլորը միախառնված սրբազան գրքի ընթերցանության՝ նրա սիրտը ցնում են մի ինչ-որ հեշտություն, ուրախություն։

Քարոզը վերջացել է։ Երգում են. նա էլ երգում է և այդ բոլոր պառավ, այրի, երեխա և այլ անորոշ ձայների միջից առանձին լսվում է նրա թանձր և ուժեղ տենորը. «Տեր, քեզ միշտ եմ ես հավատարիմ»։

Ժամասացությունը վերջացել է։ Եվ ահա ժամավորը ափից ելած գետի պես տարածվում է փողոցներում։ Գեղեցիկ, զբոսնելու օր է. Վրվեն ժպտում է իր կապույտ լեմանի պես։ Շտապում են տուն։ Եվ Ժակը ահա ամենից ուրախ շտապում է տուն, ուր իրեն սպասում է մի բուրալից և ճոխ սեղան։

Այսպիսով անցան շաբաթներ, հետո ամիսներ և վերջապես տարիներ։ Իր օրենքների վրա հանգիստ քնած Ջվիցերիան ոչ մի փոփոխությամբ չվրդովեց Ժակ Բուրդիլիեի միանգամ իրեն-իրեն գծված կյանքը։ Ոչինչ չէր փոխվում։ Նույն Վրվեն էր, նույն անգլիացիները, գերմանացիները, նույն զբոսանավերը, նույն մանրմունր գործադուլները, նույն ատելի օտարականները։ Կանոնավոր ստանում էր իր տնավարձը, կթում իր այգիները։ Սրճարանի սպասուհին ամուսնացավ մի գերման-զվիցերացու հետ և գնաց Բեռն։ Պաստոր պ. Martin-ը մեռավ։ Մի քանի նոր տներ բարձրացան լճափին, բայց նրա կյանքը և նրա այգին նույնը մնացին։ Միայն նրա կաղնին ճանկերը ավելի խորն ու հաստատուն ցցել էր պարարտ հողի մեջ և այնտեղից կյանքը քաշում էր բունը։ Թռչունները միայն ավելի վախենում էին մտնել այգին, որովհետև Ժակ Բուրդիլիեն հաճախ հրացանի ձայներով փոխանցում էր նրանց, որ ծառերը չփչացնեն։

Բայց այս ըստ երևույթին աննշան փոփոխությունների մեջ կար մի բան, որ ծածուկ, դանդաղ, և հաստատուն կերպով փոխվում էր։ Մի դավ, անհասկանալի, աներևույթ մի դավ կար, որ նյութվում էր գիշեր ու ցերեկ նրա տան, նրա այգու, նրա սրտի մեջ։ Նրա մազերը այդ դավից արդեն սպիտակել էին, ախորժակը պակասել, շուտ-շուտ հոգնում էր ամեն մի դատարկ զբոսանքից անգամ...

Չուզեց բժշկի դիմել, ի՞նչ հիմարություն, կանցնի։ Պատվիրեց, որ իրեն միայն սպիտակ միս տան։ Այց չնայած այդ սպիտակ մսին՝ տկարությունը և ծերությունը իրենց գործն անում էին։

Գեղեցիկ, աշնանային պարզ օր էր. Ժակ Բուրդիլիեի կաղնին

հագել էր արդեն իր ոսկե պատմուճանը և խորհում մի երկարատև քնի մասին։ Ամառվա հանդիսատու թռչունները, ծղրիդներն ու հազարավոր միջատները գնացել էին, հեռացել ասպարեզից։ Նրանք արդեն վճարել էին իրենց տուրքը բնության և անցել ոչնչության դավառները, կարծես այն բոլորը իսկի էլ եղած չլիներ։ Արևն արդեն թեքվել՝ հիվանդագին նայում էր իր ոսկեզօծության։

Եվ ահա այն կաղնու տակ, ուր մի ժամանակ մի օտարական ապօրինաբար հանգիստ էր առնում, նստած էր Ժակ Բուրդիլիեն։ Նստած էր, բայց հիմի արդեն կատարելապես հիվանդ, նվոցը կտրած, մագաղաթի դեմքով, մատները վտիտ, աչքերը փոսն ընկած... Արևի ոսկեզօծ լույսը պսպղացնում էր նրա բիզ-բիզ միրուքի ծայրերը։ Նստած էր ցածլիկ աթոռակին և նայում մայր մտնող արևին։ Ինչ գեղեցիկ էր և օրը ինչ գեղեցիկ է, երբ այդ գեղեցկությունը պտրում ես նրա մեջ։ Արևի լույսը՝ վճիտ, ստվերները՝ վճիտ, օդի մեջ հատ-հատ ցայտող ձայները վճիտ և անգամ լռությունը, որ քնքշորեն փարել էր ծառերին, խոտերին, բլուրներին՝ նա էլ վճիտ, վճիտ էր։ Քիչ հեռու խոտերի մեջ մրմնջում էր առվակը և Ժակ Բուրդիլիեի ուշը գրավում հեռու։ Մինչև անգամ նա, այդ անտարբեր Ժակը, որ կյանքում ոչ մի քնքշություն չէր արել՝ զգաց բնության այդ մեծ խաղաղությունը և հառաչեց։

Հեռու, հեռու, բլուրների այն կողմը, զվիցերական կովը էլի խաղաղ հնչեցնում էր իր ծանր զանգակը և այդ բոլորը այնպես օրորեցին, որ նա գլուխը կախելով կրծքին ննջել սկսեց։ Ոչ մի ժամանակ նա այդպես չէր ննջել իր կյանքում։ Իր առույգ և ուրախ վիճակում նա այդ հաճույքը չէր գիտակցել, իսկ հիվանդանալուց հետո երեք տարի է չէր ունեցել ննջելու այդ անդորրը, ննջելու պարզ, բայց և շատ հարուստ հաճույքը։

Արևը ավելի իջավ և ստվերները երկարացրին իրենց վզերը։

Եվ ահա կես-արթուն, կես-քուն մի երևույթ, խաղաղ ինչպես լռությունը և սառ ինչպես աշնան ստվերը՝ եկավ ու մեղմով նստեց նրա կշտին։ Ժակը սկզբում նրան չէր նկատել և անգամ չէր լսում, երբ նա ինչ-որ խոսել սկսեց։ Միայն երբեմն նրա ականջին հասնում էին հատ ու կտոր բառեր ու դարձվածքներ, որ նա լսում էր, բայց չէր հասկանում։

Հանկարծ սկսեց ուշ դարձնել... Երևույթը մի հասարակ և

չատ հասարակ մարդ էր, կարծես ծանոթ դեմքով, սակայն որին Ժակը չճանաչեց։ Աչքերը ուղիղ նրա աչքերի մեջ խոսում էր նա.

— Ժակ Բուրգիլիե,— ասում էր նա,— Ժակ Բուրգիլիե, ապա մի քիչ հարց տուր, ո՞րտեղից հայտնվեցիր դու այս լճափին։

Անշուշտ չգիտես։ Միայն աչքդ բաց արիր ու տեսար այս տունը, այս այգին և ամենքը քեզ ասին, որ սա քոնն է լինելու։ Վայելեցիր աշխարհիս բարիքները այնպես, կարծես այլ կերպ չէր էլ կարող լինել։ Այս ծառի պես ճանկերդ խրել հողի մեջ և ծծում էիր նրա կյանքը. շահագործում էիր այս հողը, որի անունը դրել էին սեփականություն։ Եվ ոչ ոքին մի շյուղ անգամ բաժին չհանեցիր սրանից։ Ուշի ուշով հետևում էիր քո երկրի մարդկանց ձեռով գրած այն թղթերին, որ օրենք են ասում, հետևում էիր ամեն մի գեպքի, ամեն մի փոփոխության, որ կարող էր որևէ կապ ունենա սեփականությանդ հետ և դիրք էիր բռնում։ Գիշեր ցերեկ մտածմունքիդ առարկան դու էիր և այս սեփականությունդ։ Ատում էիր մարդկանց, երբ նրանց տեսնում էիր թշվառության մեջ։ Սիրտդ գթության մի նշույլ իսկ մտնելիս՝ երբ աչքերդ դարձնում էիր սեփականությանդ վրա՝ իսկույն փոխվում, քարանում էր, գութդ ցամաքում։ Երբեք սերը, այդ մարդկային հասարակ սերը քեզ չմղեց գեպի ուրիշի թշվառությունը։

Եվ ի՞նչ էիր ամեն կիրակի օր աղոթատուն ժողովված այն կծծի ու չոր սիրտ մարդկանց հետ զահլան տանում ձեր այն էակի, որի անունը դրել եք bon Dieu (բարի աստված)։ Ի՞նչ էիր գտել այն տխմարամիտ պաստորների բացատրությունների մեջ՝ մեծության մասին մի աստծու, որին ձեզանից ոչ ոք չէր հասկանում։ Եվ ի՞նչ էիք զորքերով ու օրենքներով բռնադատում այն խեղճ մարդկանց, որոնք գործարանի մեքենաների տակ սերունդե սերունդ ճզմված ու հյուծված մի քիչ օդ, շունչ էին խնդրում ձեզանից՝ մոռանում էիք ձեր այդ Ժեզյու Կրիին (Հիսուս-Քրիստոսին), որ ձեզ ուսուցանում էր սիրել ձեր մերձավորներին, և ծեծել ու բանտարկել տալիս նրանց։

Քո ապահովությունը, քո կալվածքը, քո կերակուրները, քո անկողինը և բոլոր հաճույքները երևակայում էիր ընդմիշտ հաստատված քո անունով։ Ամբողջ լճափը շղթայել եք ձեր մասնավոր սեփականություններով։ Դրել եք բնության վրա ձեր ոստիկանությունը, լցրել եք աստծու աշխարհը այդ ձեր հիմար տախտակնե-

րով, որոնց վրա ազդարարում եք «մուտքը արգելված» — երկնային թռչուններին անգամ ոտ գնելու տեղ չեք ուզում տալ և ապրում եք այնպես, կարծես ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։

Է՜հ, Ժակ Բուրդիլիե, Ժակ Բուրդիլիե, այն հզոր տարերքը, այն մեծ անհունը, որ միլիոնավոր ու հավիտենական ժամանակների մեջ, խաղալով ստեղծագործել է այս վեհապանծ լեռներն ու ձորերը, նա, որ այսպես զեղուն ստինքներով լիացրել է ամենքիդ՝ նրա համար մի շատ էլ մեծ բեռ չես դու։ Նա աչք անգամ չունի ունեցվածքիդ վրա, որ և քոնը չի։ Միայն մի բան կա, որ երբեք չես ուզեցել մտածես, դա այն է, որ արդեն ժամանակդ է այս կաղնու տակից հեռանալու։

— Ինչպե՞ս,— վախեցավ Ժակը։

— Այո, Ժակ Բուրդիլիե, ժամանակն է, որ գնաս տուն, հանվես և վերջին անգամ մտնես անկողին։ Այնտեղ դու կմեռնես, հետո քեզ կտանեն այն գերեզմանատունը, ուր հազար անգամ սրտնեղելով կամ ճաշի մասին մտածելով ուղեկցել ես քո ծանոթներին ու բարեկամներին, հետո այնտեղ կփտես, հետո... է՜հ, էլ ինչ հետո. այսպես է աշխարհի կարգը, հերթով ու ժամանակով է ամեն բան։

Սառը քրտինքը պատեց Ժակի ճակատը։

— Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ... բայց այստեղ, ուր կյանքիս մեջ առաջին անգամ զգացի թե ինչ անուշ է կյանքը, անդորը նընջելը... ի՞նչ ես ուզում ինձանից, թող մի քիչ մնամ, քանի որ տեսնում ես առաջին անգամն եմ զգում, թե ինչ անուշ բան է եղել արևի այդ պարզ լույսը... Թող քիչ մնամ։

— Օ՜, այդ անկարելի է։ Դե՛, Ժակ Բուրդիլիե, երեխա չես, վեր կաց։

— Ա՜խ, այսքան հարուստ աստծու աշխարհին ի՞նչ պիտի պակսի իմ մնալովս։

— Օ, այդ անկարելի է պարոն, սրանից ավելի այստեղ մնալ արգելված է։

— Ո՞վ է այդ արգելքը դնում։

— Է՜հ, Ժակ, Բուրդիլիե, ո՞վ... Սրա տերը։

Եվ հետո հանկարծ բոլորովին սառ և վճռական ձայնով եկվորը հրամայեց.

— Ժա՛կ, վե՛ր կաց...

Ժակը վեր կացավ... ու գնաց դեպի մահվան անկողին։

— Արգելվա՞ծ է...

Զվիցերացին կյանքի մեջ առաջին անգամ էր մտածում այդ մասին։

1910 թ. Լոզան

ԱՎԵԼՈՐԴԸ

Երբեք Հաճի աղան այսպես անխնամ չէր փոխել քայլերը իրենց տնից խանութ գնալիս։ Այն Հաճի աղան, որի փողոցով անցնելն իսկ մի հանդես էր. աղայակա՞ն։ Միշտ հաստ շալը վաթսուն-յոթանասուն տարեկան կուզի վրայով վզին փաթթած, երկար իրանը բերընքսիվար ընկնելու պես՝ առաջ թեքած, ուղտի վիզը առջև երկարած, սև ակնոցների արանքից սապատավոր քիթը օդի մեջ խրած, հայացքը դեպի հեռուն, մի կետի՝ ընթանում էր նա։ Եվ այդ ֆեսավոր Հաճին ծիսակատարությունների նման անխուսափելի գործելակերպեր ուներ փողոցով անցնելիս. գիտեր ամեն դար ու փոսի, քար ու ոտնատեղի սովորական պատռվածքը, և եթե սայլի, ոտի կամ բնության հետևանքով քարերն ու ոտնատեղերը նոր կարգով դասավորվեին, Հաճի աղան կանգ կառներ, լրջորեն կկշռեր նոր ոտնատեղի վտանգի չափը, իր դեղնած գավազանի ծայրով բախելով, կստուգեր ոտը դնելիք քարի հավատարմությունը և, գավազանը ցեխի կամ ջրի մեջ դիմհար տալով, զգույշ աքլորի պես ոտները գետնից պոկելով ու վար դնելով, գերագույն խնամքով կանցներ վտանգավոր տեղը։

Տաս տարի առաջ միայն՝ իր անդրանիկ որդուն թաղելիս՝ Հաճի աղան թույլ տվեց, որ իր կապույտ մահուդ շալվարի տոտերը ցեխոտվեն, և մեկ էլ այսօր, երբ իմացավ, որ թուրք զորքը, ռուսներին նեղելով, հաղթական մոտենում է իրենց փոքրիկ սահմանամերձ քաղաքին։

Ասենք, այսպես դեկտեմբերի ցրտին Հաճի աղան դուրս եկողը չէր, այն էլ այս ցեխին, որ գոյացել էր սայլերի ու զորքի տակ կոխկրտած ձյունից՝ հակառակ որ միշտ այս ամսին գետինը սառած էր լինում։

Անհանգիստ էր վերի՞ն աստիճանի։ Արդեն մի շաբաթ է, ականջին դիպել էր, որ թուրքը գալիս է։

Փորձված, կյանքի չար ու բարուն տեղյակ՝ Հաճի աղան, որ տեսել էր 1877 թվի ռուս-տաճկական պատերազմը, երբ Թուրքը կարծես բնականորեն հաղթվում էր, այն Հաճի աղան, որ «քրդանոցներում ու Թուրքանոցներում» զելվել, առևտուր էր արել և շատ անգամ էր ավազակների ձեռից աղվեսի պես պոչը պրծացրել, նա լավ գիտեր, որ երբեք չեն սպասի՝ վտանգը գա ու փեշիցդ բռնի.— պետք է ժամանակին որսալ խուսափելու անկրկնելի վայրկյանը։

Բայց այս անգամ վրիպեց... Եվ չարաչար։

Երբ մտավ շուկա, փորձված աչքերով չափեց հրապարակը և զինվորների ու խանութպանների եռուզեռում մի անկարգություն նկատեց, որ նրան գուր չեկավ։ Մոտեցավ իր խանութին. խանութը կիսափակ էր։ Ներս մտավ՝ Թուքը կուլ տալով։ Իր քառասնամյա որդին շտապով ապրանքը դարակներից Թափում էր մի տոպրակի վրա։ Գեր ու կլոր տղամարդ էր նա և հևում էր փուքսի պես. քրտնքի կաթիլները շարվել էին նրա շեշոտ, կարմիր երեսին։

Հաճու աչքերը մթնեցին։ Ածիլած կզակը հաստ բեղերի տակ դողաց, և նա բառերը լփտելով՝ մրմնջաց.

— Շմավո՞ն... ի՞ի՞նչ կենիս...

Շմավոնը հորը տեսնելով՝ ավելի մռայլվեց և մեղավորի պես, կարծես ինքը լիներ աղետի պատճառը, չպատասխանեց և աչքերը գետին գցեց։ Իբրև թե՝ «հա՛, իմացի՛ր, մեռել է»։

Եվ իսկապես, կարծես մարդ էր մեռել, կաղ գործակատարը ուրուրետ քաշեց Հաճի աղայի առջև և ասաց.

— Բան չկա, Հաճի աղա, նստե։

— Ջա՛նըմ, ի՞նչ «բան չկա». ֆուրղո՞ն բռնեցեք...

— Միսաքը գնաց խանը՝ բռնելու,— պատասխանեց Շմավոնը։

Հաճի աղան չնստեց. ծուլակն ընկած մկան պես կարծես ելք որոնելով, նայեց չորս կողմը և դուրս եկավ, որ դուրսն էլ նայի։ Բայց հարևան խանութներում առևտուրը եռում էր. խանութպանները հանգիստ էին երևում։ Իրենց հարևանը, Կորկոտենց Եղիշը, լուրջ և անխռով, ինչպես ամեն օր, ահա բան է կշռում կազակների համար։ Հանգիստ է նա իր բահի մորուքով և ընկույզի խոշոր աչքերով։ Ութ երեխայի տեր է. եթե «ենահանջ» լիներ, նա ավելի շուտ պիտի անհանգստանար։ Եվ Հաճի աղան մոտենալով նրա խանութին՝ հարցրեց նրան.

— Եղիշ, ես ի՞նչ կըսեն, Թուրքը գոսի՞ թ է։

— Այդպես բան կա՞, չգիտե՞մ... մեր բակի ֆետպիպիլը ըսավ՝ ամ չկա,— պատասխանեց Եղիշը և շարունակեց իր առուտուրը եպիսկոպոսական արժանապատվությամբ։ Հաճի աղան կանգնեց նրա խանութի առջև՝ չիմանալով ի՞նչ անի։ Նրա մոտից անցնում էր դյուրգար Պողոսը, որ իրեն ձեռ առնող զվարճախոսներից մեկին պատասխանում էր.

— Ա՛տամ[1], ինչ օր ուրիշներու գըլի՝ ան ա Թող մեզի ըլի. աշխըրովի չէ՞։

— Ինձ աշե,— ձայն տվեց հեռու խանութից ձեռ առնողը,— հազրվե՛, կամենդանթը քեզի համար կառեթ պիտի զրկե, որ փախչիս։

— Կառեթը զանգիններուն[2] համար է. սաղ ըլին օտքերս,— հանգիստ պատասխանեց առողջ արհեստավորը և շուռ տվեց ուրիշ փողոց։

Հաճի աղային զայրացրեց այս չարագուշակ զվարճախոսությունը, և այն է՝ հեռանում էր Եղիշի խանութից, որ ներս մտավ նրա ժրագույն աշակերտը և իբրև անմիտ քայլի վրա ծիծաղելով՝ զեկուցեց.

— Խանը ինչ ֆուրղուն օր կա՝ հատը հարուր, հարուր իցցուն մանեթով բռներ են։

Հաճին զգաց, որ բերնի Թուքը ցամաքում է։

— Ի՞նչ... բռնե՞ր են... մեր Միսաքը հո՞ն էր,— հարցրեց շնչասպառ։

— Հոն էր, հըմը չկրցավ բռնե,— պատասխանեց Թարմ ու անհոգ ձայնով աշակերտը և ավելը վերցնելով, սկսեց ուրախուրախ ավլել խանութի սանդուղը։

Հաճի աղան շտապեց իր խանութը և դողդողալով վրա պրծավ իր որդուն.

— Ի՞նչ ես էրիր... Ֆուրղունները ձեռքե բա՞ց ես Թողիր... գերդաստա՞նս մնաց...

Շմավոնի կարճ ու գնդլիկ մարմինը շիտկվեց։ Նա իր քրքրված, շեշոտ գեմքը բարձրացրեց և ապրանքը գոգնոցի մեջ՝ նայեց հորը։ Հայացքներն իրար հանդիպեցին, և նրանք իրար հաս-

---

[1] Մարդ։

[2] Հարուստ։

կացան։ Հաճի աղան չարագուշակ ժպտով գլուխը հանդիմանորեն շարժեց.

— Ֆուրղո՞ւն գտի... տղա՞քս ձեռքե կերթան... տո՞ւնս...

Շմավոնը դեմքը կնճռոտեց։

— Ջանըմ, ֆուրղուն ինչո՞ւ պիտի չըլի,— բարկացավ նա և, ապրանքը թափելով, յուղոտ գոգնոցով քրտինքը սրբեց ու գլորվող տակառի պես կողքե-կողք ընկնելով, դուրս գնաց։

Հաճի աղան երկար նայում էր իր որդու թաղիքե վալիկներին, նրա տափակ փափախին և կարմիր շարֆին. մերթ երևում, մերթ կորչում էր զինվորների բազմության մեջ, մինչև որ անհետացավ։

Հաճի աղան դուրս եկավ խանութից և բռնեց տան ճամփան։

Հասնելով տուն՝ դռան մոտ ոտները չքսեց երկաթե քերիչին, ինչպես անխախտելի պարտականությունն էր հաճիենց տանեցիների, և ներս մտավ։ Իր մեծ հարսը, որ տան միջանցքում բուրդ էր ձաղկում, Հաճուն տեսնելով՝ տիրացուի վարժությամբ, իբրև ծիսակատարության որոշ տեղը, ձայն տվեց.

— Շողո՞, Հաճի աղաս էկավ, ղայֆան բեր։

Բայց երբ Հաճի աղան մրթմրթաց, «Հարամ ըլի՝ ղայֆան»՝ հարսին այնպես թվաց, թե երազումն է, կամ մի անասելի դրժբախտություն եկավ իրենց տան գլխին։ Վրա ընկավ Հաճու ոտներին, հանեց նրա կաշվե կալոշները և, տեսնելով Հաճու շալվարի ցեխոտված տոտերը, վախեցած գնաց խոհանոց՝ տանեցոց իմաց տալու։

Հաճի աղան մտավ «մեծ օդան» և կանգնեց մեջ տեղը տխուր՝ արձանի պես։

Ներս մտավ Հաճի աղայի կինը, Հաճի մարը, մի ժիր ու նիհար կին։

— Ի՞նչ է, Հաճի աղա,— հարցրեց։

— Ի՞նչ պիտի ըլի. թուրքը գուքա, հազրվեցեք։

— Օ՜ֆ, ամա՜ն, Հաճի աղա, «թուրք, թուրք» առել անցել ես, քաղաքը լիքը սալդաթ է։

— Գլխեդ շատ մի դուրս տա, հազրվե՛,— հրահանգեց Հաճի աղան։

— Թուրք չկա, չկա. ղայֆադ խմե,— արագախոսեց ժիր կինը և դուրս գնաց։

Այդ միջոցին Հաճի աղայի թոռը, Շողոն, մի կարմրաթուշ աղջիկ, դուռ ձեռներով ներս բերեց կաթով սուրճը։

Հաճի աղայի մեծ հարսը բերեց կապույտ փոռոցը, փռեց մինդարի առջև, կարպետի վրա, առավ աղջկա ձեռքից սուրճը, որ դեմ փոռոցի վրա։ Բայց Հաճի աղան մոռացավ կախ, հուզված և դժկամ՝ ձեռով արավ, որ սուրճը տանեն դուրս։ Այս արդեն այնպես ազդեց հարսին ու աղջկան, որ նրանք խորտակված իրար նայեցին, կարծես երկրի հաստատությունը խախտվեց։ Հաճի աղան սուրճ չխմի՞...

Մեծ հարսը ձեռքով արավ Շողոյին, որ դուրս գնա, ինքն էլ դուրս եկավ՝ ինչպես հիվանդի սենյակից, որ չանհանգստացնեն նրան։

Հաճի աղան գնաց, ծալապատիկ նստեց մինդարին և թթվեց։ Մտքերով շփոթված հայացքը գցեց իր տան սարք ու կարգին, կարծես օտարական լիներ։ Սենյակը խաղաղ էր։ Մինդարները, մութաքաները, խալիները իրենց տեղից այնպես հարազատ և դաշն խաղաղությամբ նայում էին Հաճի աղային, և այնպիսի մի հաստատունություն կար այդ առարկաների մեջ, որ կարծես ոչ մի զորություն խախտել չէր կարող։ Տարօրինակ թվաց մի վայրկյան այն խռովությունը, որ ընկել էր իր սիրտը, և պատուհաններում հանգիստ դրած այն ծաղկի փայտե թաղարները, որ հաճախ լվանալուց ճերմակել՝ փայլում էին, կամ սենյակի երեք պատերի տակով փռած մինդարներն ու պատերին կպցրած երկար բարձերը անվրդով պատմում էին խաղաղ հրավերքների, ուրախ հարսանիքների, անխռով օրերի մասին։

Եվ այդ բոլորը ահա այսօր անհաստատ բաներ էին։ Այսօր իսկ կարող էին այդ ամենը լքվել... Դեռ տաս տարեկան հասակից իր հոր հետ ճամփորդելով «քրդերն ու թուրքերը», նրանց հետ առևտուր անելով՝ ահա վաթսուն տարի է տուն է շինում Հաճի աղան։ Եվ հիսուն տարի, կանոնավոր ժամացույցի պես խաղաղ չքչքացել է նրա երջանիկ տունը և ահա այսօր պետք է քանդվեր։ Եվ ինչպես ջրում խեղդվողը հանկարծակի արագությամբ հիշում է իր անցած կյանքի մանրամասները, այնպես Հաճի աղան հիշեց իր անցյալը, ինչպես հանգիստ քուն դրեց և թաղեց հանգուցյալ հոր կողքին իր մորը, հիշեց 1877-ի պատերազմը, որ նրա համար անցավ իբրև իրեն չվերաբերող մի փոթորիկ... Միտքը բերեց, ինչ-

պես երեսուն տարեկան երիտասարդ՝ իր կնոջը տարավ Երուսաղեմ... ինչպես այնուհետև ձմեռ, գարուն նրա տանը տոն էր ու հարսանիք, նրա կյանքը առատուր էր, ապրանք ու հարստություն։ Հետո որդիները եկան հասան, ամուսնացան, բեղմնավորվեցին։ Ամեն, ամեն ինչ եկավ իր կարգով ու եղավ, կարծես այդպես դառավ, և այդ տունը այսօր քանդվում էր։

Ի՞ր տունը, հի՞ն տունը։ Արյունը գլուխը խփեց։ Ի՞նչպես, իր բնտանիքը, հարստությունը, այդ նույնքան հիմնավոր բանը, որքան ինքը՝ աշխարքի հաստատությունը...

Եվ Հաճի աղան, իբրև փորձված մարդ՝ իսկույն հարմարվեց ֆենսական իմաստության. որոշեց խիստ ու հրամայական մի կարգ՝ ազատել ամենակարևորը, իսկ եթե այդ չեղավ՝ կարևորագույնը։ Վճռեց ու դաժանացավ.— ամեն ինչ անել, ամեն խստություն գործ դնել, անգթանալ, թեկուզև ստորանալ, բայց փրկել այդ կարևորագույնը՝ իր տունը, իսկ եթե այդ չեղավ՝ իր անձը։

Կողքի «պզտի օդայում», թիթեղե փեճի վրա, հեռավոր զուռնայի պես ծվծվում և ղժժում էր գյուղյումը[1] և սենյակի տաք ու լոր օդը բարեխառնում ախորժելի խոնավով։

Հենց այդ փոքրիկ սենյակում, անկողինների ծալքի տակ նստած էր մի տարեց կին։ Դա Հաճի աղայի անդամալույծ քույրն էր, Սրբունը, որ ամուսնու մահից հետո լվացք անելիս մի անգամ սաստիկ մրսեց, տիֆով հիվանդացավ և անդամալույծ եղավ. էլ չիմացվեց՝ տիֆի՞ց էր, թե արդեն տրամադիր էր։ Ականջներն էլ ծանր էին։ Հաճի աղան իր անվան չուտեցրեց. որ իր հիվանդ քրոջը ուրիշները պահեն և իր վրա խոսեն. հիվանդին բերեց իր տուն և անկյուն տվեց։ Խեղճ կինը, ի բնե աշխատասեր և ինքնասեր, ուզելով մի բանով եղբորը վարձահատույց լինել՝ ընտանիքի կարն ու կարկատանը, ինչպես և գուլպան իր վրա առավ. ու թեև նրա համար սաստիկ դժվար էր այդ աշխատանքն էլ, բայց նա անմրռունչ ու կամովին անում էր։ Գեր էր, ծանր և սաստիկ նեղությամբ նստած տեղից շարժվում էր և գետնաքաշ մի կերպ դուրս գնում։

Հաճու նստած տեղը երևում էին նրա ուռած մատները, որով նա ծնկան վրա-փռած մի կտոր հարդարում, շուռումուռ էր տալիս, նորից հարդարում, չափում ինչ-որ մի կարկատանի համար։

Այդ մատներն սպիտակ էին, կարծես ջրով լիքը։ Եվ այնքան խաղաղ, առօրյա էր այդ մատների աշխատանքը, որ բոլորովին չէր բռնում օրվա խռովիչ դեպքերին։

Հաճին նայեց անդամալույծին, բայց չտեսավ նրան։ Նա սենյակի իրերն էր մտովի տեղավորում ֆուրգոնի մեջ և որոնում էր ամենապետքական իրերը։

Հետո մի տասը-քսան անգամ վեր կացավ, պատուհանից դուրս նայեց՝ փողոցի շարժումներից մի բան գուշակելու համար։ Փողոցում շարժում չկար, կարծես ամեն ինչ խաղաղ ժամանակինը լիներ։

Բայց ահա մթնելու վրա էր, որ խառն ձայներ լսվեցին։ Հաճին վեր թռավ և շտապեց դեպի պատուհանը։ Մի քանի մարդիկ անցան պատուհանի տակով՝ խանութի ապրանք շալակած, որ տուն էին կրում։ Դրանց հետևեց մի սահնակ՝ անտանելի ծանր բեռով, բոլորը կին ու երեխա, ետևից տղամարդիկ՝ ոտով։ Հարևաններ էին։ Այդ առաջի սահնակը այնպես ազդեց Հաճուն, ինչպես մի հիվանդի մահը, որ թեև առաջուց սպասելի էր, բայց դեռ այնպես չէր ազդում։ Բայց երբ վերջապես սպասելին փաստ է դառնում, մի դաժան ու սառը բան է զգացվում, որ առաջ չէր կարելի երևակայել։ Ու մինչ Հաճի աղան դուրս կգար գնացողներին բան հարցնելու՝ հանկարծ իրենց տան դուռը դռռաց։ Ներս ընկավ Հաճի աղայի կրտսեր որդին՝ Հակոբը, և նախասենյակից հուզված ու կտրուկ ձայնով կանչեց.

— Ապլա՛...

Հաճի աղան վազեց դեպի նախասենյակի դուռը։

— Հակոբ՞...— հարցրեց շնչասպառ։

Հակոբը ցեխոտ ոտները հազիվ սրբած՝ «Թուրքերը եկան, փախչինք պիտի» ասելով՝ շնչասպառ ներս մտավ և հարձակվելով անկյունները դրած սնդուկների վրա՝ սաստիկ ուժով առաջ քաշեց։

Հաճին մոտեցավ օրդուն.

— Ֆուրգոն բռնեցի՞ք...

— Ֆուրգոն չկա, խզակ[1] բռնեցինք։

[1] Գրեթե չրաման։

[1] Սահնակ։

Հաճի աղան ընդունեց այդ առաջին մեծ հարվածը. բայց կյանքի բովում զելված մարդը իսկույն անդրադարձավ, որ խորհրդածության ժամանակ չէր. պետք էր ոչ միայն հաշտվել այդ աղետի հետ, այլ եղածն ազատել։ Եվ ի՞նչ պիտի տեղավորվի մի սահնակի վրա... Հաճի աղան ավելի խստացավ.

— Տե՛, ազատելո՛ւն ազատեցեք... ամենեն պետքականը...

Հակոբը քանդեց իր կավագույն բաշլիքը, հանեց դեղնած հաստ վերարկուն և, հարձակվելով սնդուկների վրա, այնպես ուժով առաջ քաշեց, որ զոռից դեմքի ու վզի երակները ուռան։

Իրար ետևից ներս լցվեցին և դռների մոտ արձանացան Շողոն, Շմավոնի կինը, փոքր հարսը և մի հարևանի կնիկ։

Հաճին մոտեցավ Հակոբին և թևը բռնելով՝

— Խելքդ մի՛ կորցնե,— հրահանգեց,— ինչ որ պետքական է, ան ժողվե։

Հետո տանեցոց հրահանգեց.

— Ամենեն պետքական բաները ժողվեցեք, տեսե՛ք ճամփան կմնաք։

Հարևանի կնիկը, որ լուռ ականջ էր դնում սրանց, տեսնելով, որ տան բոլոր անդամները գործի անցան, դիմեց Հաճի աղային։

— Հա՛ճ աղա, օտա՞ցդ մեռնիմ, դուք կերթաք, մենք ի՞նչ պիտի էնենք։

— Ծսի՞մ,— կտրեց Հաճի աղան.— իմ ձեռքս ի՞նչ կա։

Հարևանի կնիկը, որ դառն աղքատի վիճակին էր և համարյա Հաճի աղայի տան գործն անելով՝ մի կտոր, մի փշրանք ստանալու հուսովն էր՝ սարսափեց։ Նա կարծում էր, թե աշխարհն այնպես է շինած, որ չի քանդվիլ երբեք. իսկ եթե քանդվի էլ, Հաճի աղան երևի բան կգիտենա դրա դեմ անելու։ Զանի էլ ու գնա՝ մի բան կանի իր նման անճարներին։

Բայց Հաճի աղայի չոր ու դաժան պատասխանը սթափեցրեց խեղճ կնկան։ Եվ տեսնելով, որ իրեն նայող չկար, հառաչեց ու դուրս գնաց։

Ու մինչ տնեցիք հավաքում էին իրերը, Հաճի աղան սկսեց անցուդարձ անել սենյակում՝ իբրև տխուր ուղտի կերպարանք։ Նայում էր անկարգացած սենյակին, ուր իրար վրա թափված էին «անպետք» ու «ավելորդ» իրերը, տեսնում էր իր տան քանդվելը, բայց հուսահատությունից չէր զգում ցավը։ Ավելի մեծ զուլումը

աչքին բան չէր թողնում երևալու։ Նա դեղնել, մագաղաթ էր դառել։ Տնեցիք շորերը կապում, նորից քանդում և կրկին ընտրում էին, և շարունակ լսվում էր. «Հաճ աղայիս գուլպաները», «Հաճ աղայիս դոշակը», «Հաճ աղայիս քուրքը չթողնեք»։ Շմավոնի կինը կողքից նայելով Հաճի աղային և տեսնելով նրա մեռելադեմ երեսը՝ դիմեց նրան.

— Հաճ աղա, կոնյաք ըմ խմե՞ս։

Հաճի աղան լուռ էր, տխրատեսիլ արձանի պես։ Նրա բերանը հուզմունքից դառնացել էր, և նա թուքը կուլ տալիս դեմքը ծռմբռում էր։ Բայց ներքուստ շտապում էր և դիտում տանեցոց աշխատանքը։ Եվ մռայլ, խստացած բերդապահի պես՝ քանի գնում իր բերդի զանազան իրերի արժեքը վերագնահատելով կարգադրում էր. «Պետքականնե՞րը, պետքականնե՞րը», մերթ սարկազմով. աղաչում էր. «Աստծու սիրուն, հասկցեք. աս պետք չէ, ա՞ն», իսկ վերջը՝ կռիվը ոգևորողի պես՝ սկսեց քաջալերել. «Տե՛, տե՛, տե՛. հա՛, պապամ հա՛... պետքականնե՛րը, պետքականնե՛րը»։ Ու այսպես «պետքականները» կրկնում էր ծիսակատարության ձայնով և զգում էր, որ մեծ գործ է կատարում, տուն է ազատում։

Իսկ այդ միջոցին մյուս փոքր «օդայում» նստած էր անդամալույծը և հանդարտ՝ աչքի տակով նայում էր իր եղբորը։ Վերին աստիճանի խաղաղ էին նրա խոշոր ու մարած աչքերը, որոնց տակերը կապտած՝ պարկեր էին գոյացել։ Նրա դեմքը ուռած, հիվանդագին ճերմակ էր։

Բայց նրան ոչ ոք չէր նկատում։

Տնեցիք արդեն պատրաստ էին, երբ դռան մոտ խզզալով ու դոփելով՝ կանգնեց մի ծանր մեծ սահնակ։ Շմավոնը կարմրած, այլայլված՝ նստել ապրանքներով լի տոպրակների վրա՝ սահնակը բերում էր տանեցոց տանելու։ Նրա գնդլիկ մարմինը վար սողաց տոպրակների վրայից, և նա ներս ընկնելով շնչասպառ գուժեց.

— Զուլումը տեսա՞ք... խանթին ապրանքը մնաց... ֆուրղուն չկա...

— Վո՜ւո՜ւշ... — ծնկները ծեծեցին հարսները և նայեցին Հաճի աղային։

Հաճի աղան ուղտի տխրությամբ նայեց Շմավոնին և լռեց.

— Տե, Հաճի աղա, հագի՛ր, էրթանք,— ասաց Շմավոնը և դուրս գնաց։

Շմավոնի կինը աթոռ բերեց, որ Հաճի աղան նստի. հետո փոքր հարսի ջանությամբ Հաճի աղայի ոտները հագցրին մի երկարագիր շալվար։

Այդ ժամանակ «պզտի օդայից» խուլ հեծկլտոցներ լսվեցին։

— Ատ վո՞վ է,— հարցրեց Հաճի մարը և ներս գնաց։

Հարսները հետևեցին նրան։ Ինչ-որ բան խոսեցին անդամալույծի հետ, որից միայն լսվեց Հաճի մոր ձայնը.

— Հաճի աղան չի սառի ճամփան, մի վախենա։

Եվ նորից սկսեցին խոսել։

Հաճի աղան բուռ հանգստությամբ իր մեջ նկատեց, որ նա ամբողջ օրը չէր մտածել անդամալույծի մասին. և հիմա՝ մտածելով անախորժություն զգաց։ Եվ ոտը կոխելով շալվարի մեջ՝ խոսեց.

— Ի՞նչ է, ի՞նչ է էղիր։

— Հեչ,— պատասխանեց փոքր հարսը,— Սրբունը գուլա։

— Ան ինչի՞ է ձեռք ու ոտք էղիր, ո՞ւր պիտի գա,— խոսեց Հաճի աղան բարկությամբ և մտքում զայրացավ, որ անդամալույծը ինքն իր բերնով չի հայտնում, թե համաձայն է մնալու և ուրիշներին է թողնում այդ բանը հայտնելու անախորժությունը։

Փոքր հարսը զարմանքով լի աչքերը հառեց Հաճի աղային.

— Սրբունին պիտի թողնե՞նք...

Հաճի աղան ծաղրեց։

— Է՛, խանումս, տեսնինք ես ու դուն պիտի էրթա՞նք...

Հաճի մարը, որ դուրս էր գալիս անդամալույծի սենյակից և լսեց այս վերջին խոսքերը, սարսափեց.

— Քա, ձունը գլխուս, Սրբունին պիտի թողնե՞նք...

— Ե՞ս եմ թողնողը,— հարեց Հաճի աղան,— տեսնինք խզակին վրա տեղ կա՞։

— «Տեղ կա՞ն» ինչ խոսք է, Հաճի աղա, ասքան մարդս որ կերթանք...

Եվ Հաճի մարը անընդունելի համարելով ամեն պատճառաբանություն՝ փոքր հարսին ձայն տվեց. ինքն էլ գնալով փոքր սենյակը.

— Եսթե՛ր, օղուլ, Սրբունին հագցրո՛ւ։

Անկյունում մինդարի վրա ծալապատիկ նստել էր անդամալույծը և՝ գլուխը ծնկան վրա կախած՝ աչքերն էր սրբում։

Հաճի մարը ծռվեց նրա գլխին.

— Սրբո՞ւն, քո՞ւրս, ինչի՞ գուլաս։

Անդամալույծը չպատասխանեց։

Շմավոնի տղան, ութ տարեկան Կարոն, որ ներս էր եկել և հետևում էր սրանց խոսակցության, բացատրեց.

— Թուրքերեն կվախենա։

Տիրեց լռություն։

— Ինչ էնեմ,— լացակումեց անդամալույծը,— Հաճ աղաս շատ է վախեցե, վախենամ թե ճամփան ցավի գա։

— Ատոր համա՞ր գուլաս,— զարմացավ Հաճի մարը,— չա՛նըմ, մեր դարդը մի՛ քաշե, հազրվե՛...

— Ե՞ս,— տխրաժպիտ նայելով Հաճի մորն ու փոքր հարսին՝ ասաց անդամալույծը,— ես չեմ գա։

— Ինչի՞,— հետաքրքրվեց Հաճի մարը։

— Դուք ձեր հոգիներն ազատեցեք, ես անդամալույծ եմ. ասօր կամ, էգվան չկամ,— պատասխանեց անդամալույծը տխուր համակերպությամբ։

— Անդամալո՞ւյծն ինչ խոսք է, չա՛նըմ,— հանդիմանեց Հաճի մարը,— հոգին հոգի է. հազրվե՛։

Հաճին մեծ սենյակում անցուդարձ էր անում և լսում այս խոսակցությունը։ Հաճի մոր պնդումները նրան զայրացրին, և նա իր կնոջը ձայն տվեց.

— Թե՛զ էրա, ատոր վախը չէ՞։

Հաճի մարը դուրս եկավ անդամալույծի սենյակից և աչքերը հառեց Հաճի աղային.

— Հեչ կմտածե՞ս, թե ի՞նչ կըսես։

Հաճի աղան ձեռը առաջ պարզած՝ հարձակվեց կնոջ վրա։

— Տեղ չկա՞... կիմանա՞ս... — գոռաց, խեղդելով իր ձայնը, Հաճի աղան և շեշտեց «կիմանաս» բառը։

— Է՛,— հակաճառեց Հաճի մարը,— բեռդ պակսեցո՛ւ՝ տեղ գըլի։

— Է՛,— տնազեց Հաճի աղան,— բեռդ օր պակսեցնես՝ ոզաքդ ինչո՞վ պիտի պահես. աշխարք խո չվերջացավ։

Եվ Հաճի աղան բաշլըղը փաթաթեց։

— Ջա՛նըմ, գնացեք, իմ պատճառովը մի՛ ուշանա, Հաճ աղաս մեղք է,— տրտնջաց անդամալույծը ներսից։

— Այդպես բան չկա, մենք կերթանք, դուն ա պիտի գաս,— հրահանգեց Հաճի մարը և դուրս գնաց կառապանին տեսնելու։

Հարսները ներս եկան, և մինչև անգամ երեխաները բոլորեցին անդամալույծի առաջ։ Բայց նա տեսնելով, որ ամենքը իրեն են նայում և սպասում, վեր նայեց խաղաղ ու բարի աչքերով և ասաց.

— Դուք գնացեք, ինձի մի՛ք աշե, ես կմնամ, իմ ջանս ազիզ չէ։

Այդ ժամանակ ներս մտան Հակոբն ու Շմավոնը և սկսեցին չորս կողմ նայել, թե ինչ կա էլի վերցնելու։

Հարսներն սկսեցին սրանց աղաչել, որ անդամալույծին համոզեն իրենց հետ գալու և տեղ գտնեն սահնակի վրա։

Երկու եղբայր իրար նայեցին լուռ ու դժվարացած, հետո դեպի Հաճի աղան, որ լսեց հարսների աղաչանքը։

Հակոբը կեղծավորություն արավ.

— Հը՞, Շմավո՞ն, ի՞նչ կըսես, ապրանքը թեթևցնե՞նք...

Շմավոնը դեմքը կնճռեց ժլատի պես, որից փող են խնդրում։

— Չգիտեմ, ի՞նչ ըսեմ...

Ու դուրս գնաց։

Երեխաներն սկսեցին լաց լինել։

— Սրբուն մամին թուրքերը պիտի մորթե՞ն...

Եվ ընկնելով անդամալույծի վրա, փաթաթվեցին նրան և սկսեցին համբուրել։

Սա գրկեց նրանց և փղձկաց.

— Աստված հետներդ, գառնե՛րս, գնացեք, ինձի մի՛ք աշե։

Հարսները լցվեցին և երեխաներին քաշեցին մի կողմ։

Հաճին մի երկու անգամ գնաց-եկավ մեծ սենյակում, հետո՝ մուշտակը հագած՝ եկավ փոքր սենյակը և մոտեցավ քրոջը։

— Է՛, Սրբուն,— ասաց նա դժվարությամբ ու տհաճությամբ,— մնաս բարով։

Եվ ձեռը դրեց նրա ձեռի վրա։

— Մի՛ վախենա, թուրքերը քեզի ձեռք չեն տա. եր օր ներս մտնին, ըսե՝ «տունը ձեզի», ինձի ձեռ մի՛ք տա։

Շմավոնը, որ ներս էր մտել, հարեց.

— Ըսե՝ «սիզրն օճախա դյուշմիշըմ», ձեր օճախն եմ ընկե։

Անդամալույծը դողդոջուն ձեռքերով բռնեց Հաճի աղայի ձեռը, տարավ շրթունքներին և համբուրեց։ Մի արցունքի կաթիլ նրա

աչքերից գլորվեց, ընկավ Հաճի աղայի ձեռքին։ Անդամալույծը ծոցից թաշկինակը հանեց և սրբեց եղբոր ձեռքը և ապա՝ մի զույգ «դֆտիկ»[1] ձեռնոց հանելով մինդարի տակից՝ տվեց Հաճի աղային։

— Ձեռքե՛րդ անցու՝ ճամփան չմսիս։

Հետո փղձկալով՝ վրա բերեց.

— Քոռանա՛ լուսս... տղոցը համար չկրցա գործե։

— Բան չկա, բան չկա,— սառը հանգստացրեց Հաճի աղան։

Հետո դարձավ տնեցոց.

— Դե՛։

Ու ինքը դուրս գնաց։ Հաճի մարը այնտեղ չէր։ Ըստ երևույթին գնացել էր հարևանների մոտ՝ անդամալույծի համար տեղ գտնելու։

Հաճի աղան, ընտրելով սահնակի ամենահարմար տեղը՝ նստեց, փաթաթվեց վերմակի մեջ ու մնաց։ Եվ որովհետև տնեցիք ուշանում էին,— անշուշտ անդամալույծին համոզելու համար, որ գա,— Հաճի աղան բարկացավ և գլուխը վերմակի տակից հանելով՝ ձայն տվեց.

— Թեզ էրեք, ատոր վախտը չէ՞... «էկա՞ն»...

Ու շտապով դեմքը ծածկեց վերմակի մեջ, որ չմրսի։

Բայց ներսը ուշանում էին։ Շմավոնն ու Հակոբը հասկանում էին Հաճի աղայի հաշիվներն ու խստությունը։ Գիտեին նրանք, որ կյանքի իմաստությունը հենց այդ էլ պահանջում է։ Եվ տեսան էլ, որ հոր վճռական քայլերի շնորհիվ բավական ապրանք են ազատում և իրենք էլ փրկվում են։ Նրանք հասկանում էին, որ հայրն իրավացի է՝ գնահատելով ժամանակը. պետք էր հասկանալ նաև նրա իմաստությունը. ա՛յն, որ իրենց հարստությունը էլ իրենցը չէր, այլ միայն իրենց փախցրածն էր իրենցը։ Եվ ահա հաշտվեցին, որ իրենց հայրը խելոք է մտածում՝ անդամալույծին թողնելով և ապրանքը տանելով։ Ո՞վ գիտե, օտարություն է, պետք է ապրել, նոր տուն շինել։ Աշխարհք հո չվերջացավ...

Եվ այսպիսի դեպքերի հասկանալի արագությամբ հաշտվեցին, որ անդամալույծը ավելորդ էր իրենց մեջ։

Եվ որովհետև ուրիշների հետ համեմատած՝ իրենց «հաջող» փախուստը, մահից փրկվելը, վտանգից դուրս գալը մի փոքր

[1] Ընտիր բուրդ։

բարձրացրել էր նաև նրանց տրամադրությունը, նրանք մինչև անդամ սկսեցին կատակել.

— Մենք կերթանք հարսնիք՝ հորքուրս կմնա տունը պահելու։

— Երկու օր չի քաշե՝ մենք ետ կդառնանք։

— Թուրքերը խանում-խաթունի պես կաշեն հորքուրին։

— Ջանըմ, անդամալույծին ո՞վ կդիպչի։

— Հե՜շ, հըլպը՜տ օր։

— Քեֆը հորքուրինս է։

Իսկ հարսները, որ լավ գիտեին Հաճի աղայի անկոտրում բնավորությունը, տեսնելով՝ իրենց ամուսիններն էլ անհոգ են, հավերի պես համակերպվեցին ու լռեցին։

Եվ լաց լինելով՝ հագցրին երեխաներին։ Հետո մոտեցան անդամալույծին, համբուրվեցին նրա հետ։ Հետո բերին մի քանի կարտոֆիլի մոմ, հացի մի մեծ կապոց, ջուր, լուցկի, դրին անդամալույծի մոտ և «օ՜ֆ, օ՜ֆ» անելով՝ դուրս եկան։

Դուրսը, թաղի մեջ մեծ տագնապ էր։ Լուսամուտներից ու բաց դռներից դուրս ընկած լույսերի շերտերում բացվում ու խփվում էր բազմությունը։

Գլուխները հաստ շալերով փաթաթած ապլաներ, բաշլըղներով տղամարդիկ, շարֆերով տղաներ ու աղջիկներ՝ իրար անցած՝ խռնված էին դռների առջև, սահնակների ու ֆուրգոնների շորս կողմը։ Աղմուկ, վայնասուն... Ահա ծերուկ ժամկոչը, որի շոր, ածիլած կզակը դողում է, ընտանիքով մնացել է առանց սահնակի. ոտքով պիտի գնան։ Ծերուկը գլուխը կորցրել՝ երեխա է դառել։ Կինը դայակի պես ետևից քշում է այս ու այն կողմ։ Ահա ճամփա ընկան՝ առանց բեռի ու հագուստի։ Ահա մի հասակավոր մարդ կռվում է իր հարևանի հետ, որը նրա կառապանին ուզում է մի բան ավել տալ և սահնակը խլել։ Երկուսն էլ ձիու սանձերը դեսուդեն են քաշքշում։

— Աստված սիրողը իմտա՜տ հասնի... մնացի՜նք...— գոռում է մի կին անպատասխան ժխորի դեմ։

Մի ֆուրգոն, իրերով ու մարդով սարսափելի բեռնած, եկավ դեմ առավ Հաճիենց սահնակին։

— Խաբարդա՜,— գոռաց կառապանը իր մուշտակի միջից։

Մի դեմք՝ շեկ ու կոշտ բեղերով ու մորուքով՝ դուրս նայեց ֆուրգոնի առաստաղի տակից։

Դատարանի գրագիրն էր։

— Ի՞նչ եք կայնե,— գոռաց.

Ուրիշ երկու ֆուրգոն էլ եկան դեմ առան։ Սկսեցին շտապեցնել։ Գրագիրը գոռգոռաց։ Նրան բացատրեցին, որ անդամալույծի պատճառով են Հաճիենք կանգ առել։

— Ի՞նչ եք կայնե, գնացեք,— ձայն տվեց գրագիրը,— անդամալույծ տանելու վա՞խտ եք գտե, бросьте её к чорту!

— Կնկան թողնեն, էրթա՞ն, ի՞նչ կըսես,— առարկեցին ֆուրգոնի միջից։

— А что-ж: Պռավիլա՞ է, ի՞նչ է։ Եփ օր էվակուացիա է, անդամալույծները ավելորդ են։

— Տե, թեզ էրեք, ուշացանք,— կատաղեց Հաճի աղան և ուզեցավ տեղից վեր կենալ, որ գնա, տեսնի, թե ինչ են անում ներսը։

Այդ ժամանակ Շմավոնն ու հայ կառապանը՝ Հաճի մոր թևից բռնած՝ բռնի դուրս էին բերում։ Հաճի մարը զայրացկոտ շարժումներով աշխատում էր թևերն ազատել և ներս գնալ նորից անդամալույծին բերելու։

— Թողե՛ք, ես անոր պիտի տանիմ,— ծվում էր նա։

— Տեղ չկա, մա՛րս, տեղ չկա,— համոզում էր կառապանը։

Բայց կինը կատաղի դիմադրում էր։

Հարսներն ու երեխաները լաց էին լինում։ Իսկ ֆուրգոններից բողոքում և շտապեցնում էին։

Շտապով հարսներին և երեխաներին տեղավորեցին սահնակի վրա։ Հաճի մորն էլ բռնի բերին, դցեցին սահնակի վրա։

Հենց որ նա ընկավ հարսների և երեխաների մեջ, կառապանը մտրակը կատաղի զարկեց ձիերին։ Սահնակը թռավ, և կառապանը ձիերի կողքից վազեց։

Շմավոնն ու Հակոբը մնացին դռանը։ Մեկնելուց առաջ մի պահ սպասեցին և նայեցին իրար։ Պետք էր ներս գնալ և վերջին անգամ տեսնել անդամալույծին։ Պատուհանից երևում էր սենյակի լույսը։ Երկու եղբայր ներս մտան, մոտեցան անդամալույծին։ Սա հանգիստ նստած էր, և այդ խաղաղությունը բոլորովին չէր բռնում այն ընդհանուր շփոթի ու երկյուղի հետ, որ պաշարել էր ողջ քաղաքը։

Հակոբը մոտեցավ նրան։

— Հորքուր ջան... ավել-պակաս հալալ... — և փղձկալով բրոնեց համբուրեց անդամալույծի ձեռը։

— Աստված հետներդ, գառներս, գնացեք... Հաճ աղայիս, տղոցը լավ աշեցեք, չմսին... — խոսեց անդամալույծը հոգածու ձայնով։

Շմավոնը կեղծ ու շիտակ զգացվեց, բերանը ծռմռեց, նա ևս մոտեցավ, համբուրեց անդամալույծի ձեռը և, անարցունք աչքերը սրբելով՝ դուրս եկավ։ Նրան հետևեց Հակոբը, որ դուրս գալիս շտապեց և դիպավ Շմավոնին։

Եվ երկու եղբայր ֆուրգոնների կողքից վազեցին, որ հասնեն իրենց սահնակին։

Քաղաքը տեղից վեր կացել՝ գնում էր։ Ֆուրգոններ, սահնակներ ու նրանց կողքից հետևակ մեծ ու փոքր շարաններ շփոթված, աղմկելով գնում էին։ Երբ Շմավոնն ու Հակոբը հասան իրենց սահնակին, ետևից քաղաքը լուսավորվեց շուկայի հրդեհով, իսկ ֆուրգոնների կտավե ծածկոցները սկսեցին փոփոալ թեթև քամուց։

— Հո՜ո՜ո՜փ,— ձգեց իրենց առջևից գնացող ֆուրգոնի կառապանը և կանգնեցրեց ֆուրգոնը։ Նրան հետևեցին մյուսները, և բոլորը կանգնեցին։

— Ինչի՞ կայնեցիք,— դժգոհեցին և վախեցան զանազան կողմերից։ Բայց ոչ ոք չէր իմանում՝ ինչու։ Միայն երեխաների ճիչն ու կանանց լացը ավելի պարզ լսվեց աղմուկի միջից։ Քաղաքի կողմը, դեպի արևմուտք, որ թաղված էր մթան մեջ, լսվում էին թնդանոթի խուլ դղրդյուններ։ Տագնապը սաստկացավ քարվանի մեջ։ Հաճու թոռները սկսեցին հեծկլտալ։

— Սրբուն մամին մորթե՞ն պիտի...

Հաճի մարը, որ մինչև այդ խստահայաց ու անհաշտ նայում էր չորս կողմ, լսելով երեխաների լացը՝ հանկարծ լցվեց և հեծկլտաց.

Երեխաները տեսնելով նրա լացը՝ ձայները բարձրացրին։

Թնդանոթի ձայներից Հաճի աղայի երևակայությունը վառվեց։ Նա ավելի պարզ սկսեց շոշափել մահը։

Եվ հրդեհի մեջ պաշարվածի պես՝ նա զգաց, որ տարերային մի ուժ նրան միայն մի բան է թելադրում. փախչել, շուտով դուրս գալ մահի ճիրաններից։ Մնացածը՝ կին, երեխա, ընկեր, բարեկամ՝ նսեմացավ նրա աչքում։ Եվ ակամա՞։ Եվ նա զգում էր, թե

որքան դառն է այդ «ակաման», բայց և զգում էր, որ այդ այդպես է։

Նա կարծես ցնորքի մեջ լիներ. նայում էր չորս կողմ և, ամեն առարկա մի վայրկյան տեսնելով, մյուս վայրկյանին մոռանում էր։ Կարծես երազում՝ նրա մոտով, ճամփի եզրով, իրենց հարևան կոշկակար Պողոսը, ուժեղ երիտասարդ՝ յափնջու վրա երկու երեխա նստեցրել՝ քաշ էր տալիս ձյան վրայով։ Նրա ետևից հևալով և լնգլնգալով գնում էր նրա ծերուկ հայրը։ Ահա հոգնեց նա, եկավ կանգնեց և ճամփից դուրս գալով, գնաց խրվեց ձյան մեջ ու մնաց.

— Ալ չեմ կրնա... գնացեք...

Նայում է նրան Հաճի աղան և իսկույն մոռանում է։

Ահա քարվանը նորից շարժվում է։ Լեռնային սառնամանիքը իր սառցե մատներով բռնում է Հաճու մորուքը, և նա դեմքը ծածկում է վերմակի տակ։

Փչում է լեռնային քամին և ձյան փոշին, առաջ օձերի պես սողալով և ապա բարձրանալով իբրև վիշապներ, թռչում են օդի մեջ, նվում, վայում...

— Աստվա՞ծ, դո՛ւն հասնիս,— մրմնջում է Հաճի աղայի փոքրը հարսը։

Մեծ հարսը երեսը խաչակնքում է և սկսում «Հավատով խոստովանիմը» բարձր և զգացված։

Իսկ շալի մեջ Հաճի մարը կծկված՝ մտածում է անդամալույծի վրա և ծանր հառաչում։

Սուր վտանգն ու աղմկալից սարսափն անցել էին, տեղի տալով մի խաղաղ թշվառության, որ ընդունեց փախստականներին հետևյալ քաղաքի մեջ։ Հանկարծակի աղքատներ, մի ժամում անտունացած մեծատուններ, ի ծնե չքավորներին խառնված՝ եկան ապաստանելու՝ ամեն կարոտություն չկռահող, ամեն ինքնասիրություն չհաշվող բարեգործության և նրա միշտ ուշացող օգնության։ Բարեգործականի, դպրոցի և մասնավոր անբնակ տների մեջ խցկեցին սրանց. բերին հաց, շոր, դրամ, նաև մխիթարական խոսքեր, և նման դեպքերի գթառատության ալիքը ինչ վարարությամբ որ հորդեց, նույն արագությամբ էլ ճապաղեց, և թշվառությունը հիմա այլևս անարգել ու հաստատ անցավ իր գործին։

Հաճիենց քաղաքը շուտով ետ առնվեց։ Տղամարդիկ, որոնց

մեջ և Հակոբն ու Շմավոնը, վերադարձան տեր լինելու իրենց այրված ու կողոպտված գույքերին։ Լուրեր եկան, որ գնացողները քիչ-քիչ հաջողում են կորածը գտնել։ Փախստականների երեսը խաղաղվեց։ Հաճի մարը իր հարսների հետ դուրս էր գալիս, այցելում մյուս փախստական ընտանիքներին, հյուրեր էին գալիս իրենց տունը, և հին մեծատան հյուրասիրությունը փորձեր էր անում հին ընթացքով քայլելու։ Ծիծաղն սկսեց երբեմն իր ձայնը լսեցնել նրանց տանը։ Մի անգամ էլ եկավ իրենց քաղաքի զվարճաբան Գարանը և պատմեց ծիծաղելի դեպքեր, թե փախից և թե թուրքերը քաղաք մտնելուց, որ վերադարձողները լսել էին և եկել, տարածել։ Ներկայացրեց մի վաճառականի, թե ինչպես էր շփոթվելուց մուք-ուքան գրկել՝ մինչ երեխան կողքին ընկած լալիս էր։ Լռում էին, ծիծաղում։ Հետո խոսք եղավ անդամալույծի վրա, որի մասին եկողները միաբերան ասել էին, որ անհայտ կորած է, և որի մասին տնեցիք աշխատում էին կամ չխոսել կամ մխիթարվել, ասելով, որ եթե գար՝ միևնույն է՝ ճամփին կմեռներ։ Հաճին ավելի մռայլվեց։ Այդ տեսնելով՝ Գարանը համարձակ և ուրախ հանդիմանեց.

— Ջանըմ, Հաճի աղա, բան չունի՞ս, չարդ տարավ. սաղ ելին հարսներդ, տղաքդ, թոռներդ։

Սակայն Հաճի աղան խորտակված էր։

Այնուհետև ժամերով մի բառ չէր լսվի նրա բերանից։ Նստում էր մի անկյուն, ծխում, համրիչը գցում և երբեմն միայն գլուխն օրորելով մրմռում.

— Է՜, ե՛թ, թո՛...

Եկած օրից ոչ մի անգամ փողոց դուրս չեկավ։

Քաղաքում ծանոթ-բարեկամներ եկան, իրենց տուն հրավիրեցին, կտրուկ մերժեց։

Տնեցիք սկսեցին անհանգստանալ։ Հաճու այս արտակարգ խռովությունը նրանք իսկապես կորցրած հարստությանը վերադրեցին և կարծեցին, որ կարող է ծերուկը խելքը կորցնել. ուստի և լուր ուղարկեցին Շմավոնին, որ ինքը կամ Հակոբը գան։ Պատասխան չեկավ։

Հունվարի սառն ու պարզկա առավոտը նոր էր բացվում, որ Հաճի աղան անկողնում նստեց։ Հաճի մարն ու հարսները՝ երեխա-

ները ծոցերն առած՝ քնած էին փոքր ու նեղվածք սենյակում, որ Հաճին դիտմամբ վարձել էր, մերժելով ձրի սենյակը։

— Հաճի աղա՞, ինչի՞ էլար ասպես թեզ,— անհանգստացավ Հաճի մարը և նույնպես նստեց իր անկողնում։

— Ուշացեր եմ,— մռմռաց Հաճի աղան և սկսեց հագնվել։

Հաճի մարը աչքի տակով ուշադիր նայեց Հաճու դեմքին և նկատեց նրա աչքերում մի տխուր համակերպություն։ Վեր կացավ, օգնեց որ հագնվի, ջուր բերեց, լվացվեցրեց։ Հաճին վեր կացավ և գավազանը առավ։

— Ո՞ւր,— հարցրեց Հաճի մարը մի փոքր վախեցած։

— Ժամ պիտի երթամ։

Հաճի մարը զարմացավ, բայց շրթունքը կծեց։ Դրդեց հարսներին, որ վեր կենան, և ասաց, որ իրենք ժամ են գնում. հարսները զարմացած նայեցին Հաճուն, բայց Հաճի մարը դողունի մատները դրեց շրթունքին, որ չխոսեն։

Դուրս եկան փողոց և ձների ու սառույցների վրայով անխոս գնացին եկեղեցի։ Երբ մտան եկեղեցու բակը, Հաճու դեմքի մկանները ցնցվեցին։ Նա դողդոջուն շրթունքները հպեց եկեղեցու քարե դռան, համբուրեց, երեսը խաչակնքեց և՝ կզակը դողացնելով՝ ներս մտավ եկեղեցի։

Առավոտյան ժամ էր, և եկեղեցին թափուր։ Երբ ավարտվեց, Հաճի մարը առաջարկեց, որ գնան տուն. բայց Հաճին մերժեց և մնաց իր տեղում շոքած։ Սպասեցին պատարագին։ Շուտով եկավ մեծ հարսը։ Եվ հարս ու կեսուր քաշված մի անկյուն՝ սկսեցին փսփսալ. Հաճի մոր համար պարզ էր, որ Հաճի աղան հոգեկան հիվանդ է դառել։ Սկսեց աղոթել, տրորվել։

Ջոքել էր Հաճին և ավելի մտածում էր, քան աղոթում։ Հաճի մարը նայեց նրա սմքած երեսին, կորացած մեջքին, դեղնած մագաղաթե դեմքին, ծխից կարմրած բեղերին և ճերմակ, ցախցախ մորուքին, որոնց վրա փախից հետո ածելի չբանեց, նայեց Հաճի մարը և զգաց, որ ծերուկի վիշտը շատ խորն է։

Մի մինդար քաշեց ծերուկի տակը, բայց սա մերժեց։ Եկեղեցին լուռ էր, ցուրտ։ Խնկի դուրեկան հոտը դեռ օդի մեջ։ Ահա արևի ծիրանի սյուները պատուհաններից կախվեցին ներս։ Եկավ ժամկոչը, հետո քահանան, կամաց-կամաց աղոթավորը շատացավ, սկսվեց պատարագը։ Հաճին անշարժ ու հանգիստ նայում էր

իր առաջ, պաղ քարերին։ Միայն երբեմն, երբ արծաթագլուխ տերտերը շուռ էր գալիս դեպի բազմությունը և հորից լսվող ձայնով ասում էր «խաղաղությո՜ւն ամենեցուն», Հաճին գլուխը կախ էր գցում և երեսը վախեցած խաչակնքում։

Երբ գնացին տուն և ամենքը շարվեցին «դաստախունի» շուրջը և սկսեցին թեյ խմել, մեծ հարսը բերանը մոտեցրեց Հաճի մոր ականջին.

— Գիտե՞ս, Հաճի աղաս տերտերին, տիրացուին բռերը մեկ-մեկ օսկի դրեց։

Հաճի մարը սառած նայեց հարսի երեսը, հետո վեր թռավ և գնաց դուրս և այնտեղից նշանացի կանչեց հարսին իր մոտ։

— Ե՞ր, աղջի...

— Դուն սեղանին էիր մոտեցե, աղոթք կենեիր,— պատասխանեց հարսը,— աղքատներուն ա մեկ-մեկ օսկի տվեց...

— Չէ, ջանըմ... — հևաց Հաճի մարը հուզմունքից։

— Աչքովս տեսա։

— Հը՞... — խռովեց Հաճի մարը,— ձեզի բան կըսեմ՝ չեք իմանա։ Ամա՛ն, աստծու խաթեր, Հաճիս ձեռքէ գնաց, տնե՛-օճդէ հեռու...

Եվ սկսեց ծնկներին տալ ու տրորվել։

Հարսը պատմեց տեղով, որ իր աչքով տեսել է։

Հաճի մարը նորից ներս մտավ, իրեն զսպեց և հարսներին աչքով արավ, որ ուշք չդարձնեն Հաճու վրա։ Ու սկսեց հսկել նրան։

Երեխաները դուրս գնացին ձյունների վրա խաղալու։ Հարսները սփոցը վեր քաշեցին, նորից մի թեթև ավելեցին սենյակը, որ առավոտյան խնամքով ավլել էին, փայտ ավելացրին թիթեղի վառարանին և գնացին «աշխանան»՝ կերակուր եփելու։ Հաճի մարը նստեց Հաճի աղայի դիմաց և, դիտելով նրա ամեն մի շարժումը, դպասեց, որ նա մի բան ասե։

Բայց ո՞չ մի նշան, թե ուզում է խոսել։ Նրա լռությունը ցույց էր տալիս, որ խորին ու մշտական խռովքը և ներքին տաժանելի մի աշխատանք դուր էր գալիս նրան։

Մի պատկեր կար, որ երևակայության մեջ ամբողջացնում էր նա։ Դա նրա կիրքն էր, որ նրան և սարսափեցնում էր և ուրախացնում։ Նա տեսնում էր անդամալույծի դիակը և աշխատում էր նայել նրա սառած, բաց աչքերին։ Ճգնավորի, մոլուցքի մեջ ընկած

հավատացյալի կրքով նա հետևում էր այդ պատկերին և աշխատում էր երբեք, ոչ մի վայրկյան աչքից բաց չթողնել. ինքը, միայն ինքը եղավ այդ սարսափելի պատկերի ստեղծողը։ Դա իր մեղքն էր, ցածությունը, իր անգթությունը։ Եվ ինչքան երկար նայում էր այդ դիակին, այնքան կսկծում էր իր սիրտը և այնքան էլ հաճույք, հանգիստ էր զգում։ Անդամալույծը դառավ մի սուրբ, մի պաշտելի սուրբ նրա համար։ Նրա դիակը սրբագործում էր ծերուկի մեղսալից սիրտը։ Ահա ինչու նա կառչել էր նրան։

Բայց այս ապաշխարողի թեթևացումը երբեմն էր միայն։ Լինում էին րոպեներ, որ նա զգում էր, թե խելագարվում է։ Այդ պատահում էր, երբ նա պայծառ գույներով պատկերացնում էր ի՛ր իսկ մահվան օրը, կամ երբ հիշում էր իր սարսափները փախի գիշերը։ Հիմա էր հաշիվ տալիս իրեն և զգաստորեն հաշիվ տալիս, որ հենց այդ սարսափներն է կրել իր քույրը, այն արհամարհված էակը, որի մեռնելը ինքը ցածոգի կերպով ա՜յնքան հեշտ և հասկանալի համարեց փախի օրը։ Եվ ինչպե՞ս կարելի էր թողնել նրան մահվան առջև, և կա՞ արդյոք մի արարած, որ չտանջվի մարմնական ցավից, չվախենա մահից և իրավունք չունենա ապրելու։ Եվ ի՞նչ համակերպությամբ ընդունեց անդամալույծը իր համար որոշած վիճակը և ի՞նչ անձնվեր հոգատարությամբ նա մտածում էր փախչողների ապահովության մասին։ Սա արդեն խոցում էր Հաճու սիրտը։ Եվ երբ Հաճին հիշում էր, թե ինչպես ինքը անկարող եղավ կյանքի սերը՝ մեռցնել իր մեջ և դիմանալ մահվան մերձեցման, մինչդեռ այն հասարակ, չնկատված էակը այնպես արիաբար վճարեց իր տուրքը, Հաճին խայթված վեր էր բարձրացնում իր խոնարհած գլուխը և խելագարի պես նայում Հաճի մորը։

— Հաճի աղա՞,— արթնացրեց նրան իր կինը։

Հաճի աղան նայեց նրան խորասուզված հայացքով և լռեց։

— Ախր, մեմ ըսե տեսնենք՝ ի՞նչ կմտածես,— հանդիմանեց Հաճի մարը։

Հաճին լուռ էր։

— Թե կորուցածդ է միտքդ ընկե՝ տղաքդ սաղ ըլին. ինչի՞ կմտածես։ Թե Սրբունին վրա է միտքդ՝ բան չունի՞ս. անքանանե՞ր մեռան, ավելի ազիզները... լավ կըսեիր, թե «ան ավելորդ է»։

Հաճին մռայլ նայեց իր կնոջը և գլուխը օրորեց։

Եվ նա սաստեց խստահայաց նայելով Հաճի մորը.

— Սո՜ւս... ավելորդ մարդ չկա. աստծու առջև հոգին հոգի է։

Հաճի մարը զսպվեց։

— Օ՛ֆ,— հառաչեց Հաճի աղան,— գնա, սատկող շանը հարցուր, թե սատկելը ղոլա՞յ[1] բան է։

Նրա դեմքը տխուր էր, աչքերը խորն ընկած, իսկ անածիլած կզակի ու այտերի ճերմակ մորուքի ցախերը նրա դեմքին տալիս էին խստակյաց ճգնավորի երևույթ։

Մի շաբաթ անց Հաճի աղան պառկեց անկողնում։ Երևի ժամում մրսել էր։ Քրտնացրին, ֆելդշեր բերել տվին։ Ոչինչ օգուտ չեղավ։ Եվ մի երեկո ճրագ վառելու ժամանակ Հաճին տերտեր ուզեց։ Հաճի մարը ծնկներն էր ծեծում և գողունի նայում Հաճի աղային, որ տեսնի, թե վտանգն անցնում է, թե ոչ։

Եվ մինչդեռ տնեցիք, թաքցնելով իրենց հուզմունքը, սպասեցին մի պահ ևս, որ գուցե թե Հաճին ինքը մոռանա և էլ չպահանջի տերտերի գալը, Հաճին հանգիստ և պարզ կրկնեց, որ տերտերի պետք ունի։ Կանչեցին։ Եկավ արծաթազարդ տերտերը, որ բնազդով իմանալով, թե հիվանդը մահամերձ է, հետը բերել էր հաղորդությունը։

Տնեցիք բոլորվեցին հիվանդի շուրջը։ Տերտերը ձեռով արավ, որ հեռանան, հասկացնելով, որ հիվանդին պիտի խոստովանեցնեն։ Բայց Հաճի աղան խնդրեց, որ մնան։ Եվ բարձր ձայնով, մոլեռանդ հույզով խոստովանեց։ Պատմեց, թե ինչպես ինքը թողեց անդամալույծին։

— Մեղա քեզի՜, մեղա,— լացեց և համբուրեց ավետարանը։

Տերտերը մխիթարեց և հաղորդություն տվեց։

Եվ երբ հիվանդը հաղորդություն առավ, դողդոջուն ձեռը տարավ բարձի տակը և, հանելով թղթի մեջ փաթաթած մի քանի ոսկեդրամ, տվեց տերտերին։

— Աս քեզի,— շշնջաց նա և, հանելով մի ուրիշ քսակ, դողդոջուն ձեռով մեկնեց տերտերին ու աչքերի երեխայական արտահայտությամբ նայեց նրան և ուզում էր մի բան ասել, բայց մնաց. շունչը կտրվում էր. սաստիկ հուզված էր։

[1] Հեշտ (թուրք.)։

— Աս ո՞ւմ,— հարցրեց տերտերը՝ կռանալով նրա վրա։

— Ո՞ւմ տաս...— մրմնջաց հիվանդը և լռեց։

Արտասուքը խեղդեց նրան։ Շունչ առավ և հառաչեց.

— Ադ ա տուր աղքատներուն...

Եվ խլելով տերտերի փեշը՝ համբուրեց և մղկտաց.

— Ավելորդին հոգուն համար...

ՏԵՐՏԵՐԸ

— Լվացքդ պրծա՞ր, իրիցկին։

Գնդլիկ իրիցկինը սապոնոտ մատով սղալեց ականջին թափած դեղնավուն մազերը, շիտկվեց և նայեց հարցնողին։

Տիրացուի կնիկն էր, չոր ու ցամաք, մնոտ երես, կարմիր մազ։ Եկավ ծամոնը բերնում ծամռելով ու թեշիկը օրորելով նստեց երկար գերանին։

Իրիցկինը քրտնամխած հևում էր։ Կլոր կարմիր երես, ճվաճև, շեկ-սպիտակ հոնքեր ու թարթիչներ, ինքը հաստլիկ, լայն ջաղացքար։

— Մնաց տերտերիս շապկները, ան ա լվամ՝ կպրծնիմ։

Եվ իրիցկինը աչքերը պտտեցրեց խայտաճամուկ լվացքաշորերին, որ նախշուն կարկատանների պես փռել էր սրահի քարերին, պայծառ արևի տակ. և նայեց այնպես լուրջ, ինչպես նկարիչը, որ երբեմն նկարելը թողնում և դիտում է իր կտավը։

Նա նորից թեքվեց լվացքատաշտի վրա, և նրա կուրծքը կախվեց տաշտի մեջ։ Բոբիկ ոտների պճեղները ճպճպում էին լվացքաջրի ցեխի մեջ, և սապոնի սառած փրփուրները թռել-կպել էին նրա ճերմակ բաց սրունքներին։ Եվ նա մի կեղտոտ շապիկ հաստլիկ ձեռքերում խեղդելով սեղմում էր, ցայում, քրքրում, և դա այնպես եռանդով, որ նրա թխլիկ մարմինը թլթլում էր դմբոչիկ գառան դմակի պես։

Մի սև հավ կեղտոտ ոտներով եկավ կանգնեց փռած շորերի վրա և հիմար հայացքը սկսեց շրջել մեկ վար, մեկ վեր։

— Քա քը՞ը՞շ, քը՞շ էրա,— պատռվող կաշու ձայնով ճչաց չար իրիցկինը և ռումբի պես նետվեց դեպի հավը, արագ մի քար խլեց ու նետեց հավի վրա։

Հավը՝ ավելի ճչալով քան պահանջում էր վտանգը՝ թռավ կտուրից օդի մեջ հավանորեն սավառնելով՝ բավական հեռու իջավ տիրացուենց բակը։

Նորից խաղաղությունը նստեց իր տեղը։ Միայն իրիցկնոջ լվացքի ճղփոցն էր լսվում և երբեմն էլ մի նվոց, որ դուրս էր թռչում նրա ելիվող կրծքից, երբ նա մոլեգնում էր և լվացքը չարչարում. և բռնված խոճկորի ձայնի պես ռիթմով խփում էր յը՞ի, յը՞ի, յը՞ի...

— Քա՞, իրիցկի՞ն, տեր-Մարուքը կըսեն մեռնի կը, ասոր շատ է ծանդրցե,— խոսեց տիրացուի կնիկը ճղլիկ աչքերը թեշիկից չպոկելով։

— Է՞հ, եսի՞մ, նեա կմեռնի, նեա կապրի,— մրթմրթաց իրիցկինը և տրորեց ծխից կսկծող աչքերը։

— Չէ՛, իրիցկին, բան կըսեմ, չի ապրի, տիրացուս կըսեր հոգեվարքի մեջ է,— խոսեց տիրացուի կինը ցած ձայնով և զգուշ նայեց չորս կողմը։

Իրիցկինը լուռ մնաց։

— Հը՞, գիտես թը տերտերս է,— հանկարծ ասավ իրիցկինը ու ականջները սրելով՝ լվացքը բռնեց ու մնաց մի վայրկյան։

Տիրացուի կնիկը վեր կացավ և նայեց պատի գլխից։

— Տերտերն էկա՛վ։

Ասաց ու գող կատվի պես ծլկեց իրենց բակը։

— Գուքա՛մ, գուքամ,— լսվում էր հեռվից տերտերի մկկող ձայնը,— մաշտոցս առնեմ՝ գուքամ։

Եկավ տերտերը, տեր-Հմայակը, և մտախոհ նստեց դռան աջ կողմը, քարին։ Ու արձանացավ։ Չոր ու ցամաք երիտասարդ էր, ցորնագույն, չեչոտ-երես, ցանցառ-մորուս, մորուքի թելերը օղակ-օղակ։

Նայեց դիմացը մտազբաղ, սևեռուն աչքերով։ Ներքի լայն շուրթը կախ, պոկոշ, բերանբաց՝ մտածում էր և լուռ էր։

Վայր բերեց դեղնած եղոտ գլխարկը, հանեց լայն կարմիր թաշկինակը ու սկսեց քրտինքը սրբել՝ ինքնագոհ աչքերը լայն ու արագ ճպճպացնելով։

— Տեր-Մարուքը կվախճանվի,— խոսեց նա կարծես ինքն իրեն, գետին նայելով։

— Հը՞, տերտեր ջա՞ն, կվախճանվի՞... — շիտկվեց հանկարծ իրիցկինը և տաք ջրում խաշած մատներով տաշտի եզրը բռնած՝

քրտնաթոր երեսը գարձրեց տերտերին և այրվող քունքերը հարցականորեն վեր քաշելով՝ բերանբաց նրան նայեց ու աչքերը շլեց։

— Ասոր կվախճանվի,— խոսեց տերտերը՝ էլի կարծես ինքն իրեն։

Իրիցկինը վախով թե հեռաքրքիր՝ նայեց նրան մի քիչ էլ և կմկմաց.

— Տերտեր ջա՞ն, հիմի ի՞նչդ պիտի ըլի, հը՞...

— Ի՞նչը,— հարցրեց տերտերը մեքենաբար և սաստիկ մտազրաղ։

— Տեր-Մարուքին ծխերը։

— Ծխերը ինձի մնաց, իցցուն ծխի համար գահանա՞ պիտի կանչեն։ Կլավան, Պոտոյենց Արուքը, Սերոբ աղան ըսին՝ նոր տերտեր չենք բերե։ Քեֆիդ աշե։

Իրիցկինը գորովանքով նայեց տերտերին և խնդմնդաց.

— Վայ ի՞նչ լավ էղավ, տերտեր ջան, ոտներուդ մեռնիմ։

Եվ ուրախ-ուրախ վրա ընկավ լվացքին։ Եվ այնպես եռանդով շրփացրեց շապիկը, որ սապոնը թռավ նրա թշերին, որ հիմի կարմիր ձմերուկի պես արնով լցվել էր։

Հանկարծ կանգ առավ ու դիմեց տերտերին.

— Ջախլամամ էնե՞մ, տերտեր ջան։

— Չէ՛, չեմ ուզե, վախտը չէ։ Դու Եղոյին ղրկե քաղաք, թող քեզի համար շապկցու առնե։ Է՛հ, ես էրթամ. գնա մաշտոցս բե՛ր։

— Բերե՛մ, տերտեր ջան.— ու իրիցկինը լվացքաջուրը կաթեցնելով, գլորվող տակառի պես ներս ընկավ՝ տերտերի պատվերը կատարելու։ Նրա թաց ոտների պճեղները պարզ տպվեցին չոր հողի ու դռան սեմի վրա։

Երկար երազած ու հանկարծ եկած ուրախությունը՝ այնպես էր հուզել ու շշմեցրել տերտերին, որ նա ժպտալու իսկ կարողություն չուներ։ Ընդհակառակը՝ դառել էր լուրջ, հանդիսավոր և հոգածու. հոգածու՝ երջանկությունը ձեռքում մի այնպես լա՛վ պահելու։ Բայց միաժամանակ նա մի տեսակ գորովալից էր դառել և լցվել էր բարությամբ, տեսական բարությամբ դեպի ամեն ինչ։

Իրիցկինը դուրս եկավ՝ թացոտած եղոտ մաշտոցը լվացքում քրքրված ձեռքին։ Տերտերը մաշտոցն առնելով արագ վեր կացավ։ Եվ ափսեց տեղում կանգնած՝ ջփոթված մտածել։

— Կրսեի թը մե չախլամամ խմեիր,— խոսեց իրիցկինը՝ ոչն ձայնով, որ դիմում են հիվանդին։

— Հը՞... չէ՛,— սթափվեց երջանկության մեջ սուզված ու շրջված տերտերը և շարժվեց դեպի իր կարգակցի տունը։ Իրիցկինը կանգնեց, զմայլված հայացքով նայեց տերտերին և այդպես մնաց՝ մինչև տերտերը հասավ գյուղամիջի աղբյուրը, ուր մի պառավ կին դողդողալով մոտեցավ տերտերին, աջն առավ։ Տերտերը ծռվեց դեպի բլուրը և անհետացավ մի դեզի ետև։

— Աջիդ զուրպան,— մրմնջաց իրիցկինը գորովագին և մարդ խեղդողի պես կռացավ իր լվացքի վրա։

Տերտերը մտախոհ հայացքը գետնին՝ գնում էր մեռնող տեր-Մարուքի մոտ։

Լեռնային երկրի մեջ արևը իր կենարար եռանգը թափում էր նրա ուսերին, մեջքին, դեմքին և շարժումները թեթև օդի մեջ տերտերի մեջ այնքան էին վառում կյանքի ծարավը, որ նա իր աբագիլի քիթը երբեմն օդի մեջ սրելով հոտոտում էր ու խմում այդ գալ ու թեթև օդը՝ ընտիր գինու պես։ «Օխա՜յ», հառաչեց տերտերը և աչքերը թրջեց՝ զգալով երակների մեջ մի քաղցր առողջություն։ Նա գոհ էր, որ ինքը չէ մեռնողը, զգաց մի անասելի հաճույք, որ մարդ ուրիշ ժամանակ լավ չի զգում։

Մոտենում էր տեր-Մարուքենց խրճթին։

Մի խումբ կիսամերկ երեխաներ խրճթի առաստաղի պատուհանը շրջապատած՝ զգույշ առաջ կռանալով գողունի ներս էին նայում։ Տեր-Հմայակը նոր էր մոտեցել խրճթի շեմքին, որ ներսից նրա առաջը կտրեց զառամյալ կոբաքամակ տիրամայրը և նրա աջը բռնելով կանգնեցրեց ու համբուրեց։

— Ոտներո՞ւդ մեռնիմ, ախր տերտե՞ր... — քիթը վեր քաշելով, լացակումեց պառավը, կարծես տեր-Հմայակը նրա որդու համար կյանք էր բերելու։ Բաց թողեց տերտերի աջը և կարմիր թաշկինակը գոտկից հանելով՝ փակցրեց մի աչքին, հետո մյուսին և՝—օ՜օ՜օ՜ֆ, քոռանար լուսս, օ՜օ՜օ՜ֆ... մրմնջաց ու հետևեց տեր-Հմայակին, որ արագ անցավ օգան։ Հանեց դեղնած գլխարկը, տվեց սան տակից վրա հասնող կարճահասակ հարսին և նստեց սաքուին։ Նրան հետևեցին տիրամայրը, իրիցկինը, որ ծնկները շփելով՝ ցավում էր ու տրորվում։ Զոքեց մի ծանր լռություն։

Անկյունում, օջախի կողմը, նախշուն վերմակի տակից ցցվել

էր հիվանդի դեղին մորուքը։ Դեմքը խիստ էր ու սրված։ Վերմակը շարժվում էր արագ հևոցից։

Մեռնողի տարեց եղբայրը մոտը թեք ընկած՝ կապույտ թաշկինակով ճանճերն էր քշում նրա դեմքից և հոգացու աչքերով նայում հիվանդին։

Հիվանդին այդ առավոտ հաղորդել էին. բայց տնեցիք, որ անհույս էին, դեռ չէին հաշտվել մահի հետ։

Հիվանդը խոժոռ նայեց առաստաղին, հետո ուզեց մի շարժում անել, բայց թողեց կամ անկարող եղավ և նորից աչքերը փակեց։ Տիրամայրը գլուխը երերցնելով մոտեցավ հիվանդին։

— Տերտեր ջա՞ն։

Հիվանդը աչքերը լայն բացեց և նայեց շուրջը։ Նրա դեղնամոմի դեմքը կաշու տակ արդեն պարզ գծագրվում էր՝ իբրև պարկը գցած գանգ և ահեղ երևույթ էր տալիս նրա հայացքին։ Երկու ակնախոռոչում հարցական սև աչքերը կարծես բներից դուրս նայող անհանգիստ մկներ լինեին։

Տեր-Հմայակը նայեց, նայեց հիվանդի սրված քթին, այդ քիթը փակագծող երկու հարթվող ակոսներին և մտածեց, որ էլ նա վերկենալիք չունի։ Եվ ապահովության զգացումից բարձրաձայն հառաչեց։

— Է՜հ, տիրոջ կամքն է, ի՜նչ էնենք։

— Օ՜օ՜օ՜ֆ, աչքս քոռանար, վո՜ւշ,— գողունի հառաչեց տիրամայրը և թաշկինակը տարավ աչքերին։ Նրան հետևեց չորացած իրիցկինը։

Տեր-Հմայակը երազների հետ էր։

«Սերոբ աղան՝ տարեկան երկու մանեթ. Տիլիպոյենց տնեն՝ երեք մանեթ...» — մտածում էր նա՝ հաշվելով իր նոր ստանալիք եկամուտները։ Բայց չէր կարողանում կենտրոնանալ։

Հանկարծ մի պատկեր։ Ահա ինքը, տեր-Հմայակը եկեղեցի է գնում, գլուխը բարձր, հպարտ, առանց մրցակցի։ Ինքը հերոս է. միակ քահանան. գյուղի կանայք, աղջկերք, ծեր ու ջահել՝ նրան են նայում։ «Տեր-Համայա՜կը» մտածում են ամենքը, և մեծ հերոսություն, հմայք կա այդ բառի մեջ՝ «տեր-Համայա՜կը»... Ահա իր ետևից կանանց խմբի հետ եկեղեցի է գալիս նաև իր իրիցկինը. գլխին կանաչ փուշի, հագին մախմուր՝ միակ իրիցկի՜նը... Ամենքը նայում են իրիցկնոջը, իսկ իրիցկինը նայում է իրեն, տեր-Համայակին։ «Օտա՜ցդ մեռնիմ, տերտե՜ր ջան»,— մրմնջում է իրիցկինը յուրովի։ Եվ ահա հանդիսավոր քայլերով ներս է մտնում տեր-Համայակը եկեղեցի, ամենից գիտուն աչքերը լուրջ, տիրական՝ նայում է իր առջև և սկսում ժամը։ Ի՜նչ երջանկություն... Եվ նա խանդաղատանք զգաց դեպի մարդիկ։ Մինչև անգամ դեպի հիվանդը նա բարի զգացումով լցվեց։ Հետո այդ խանդաղատանքը անցավ դեպի իրիցկինը և այնպես ախորժով ճմլեց նրա սիրտը, անցավ մեջքով և փոխվեց մի քաղցր սարսուռի, որ տերտերը այդ զգացումից ազատվելու համար՝ հառաչեց և աչքերը ճպճպացրեց։

Եվ պահանջ զգաց մի բան ուտելու։

Հետո նորից նա մտածեց իրիցկնոջ մասին։ Եվ նրան թվաց, թե իր իրիցկինը զրկված է, քիչ է գուրգուրված, և ժամանակն է նրան փաղաքշելու, գոհացնելու։

«Խե՜ղճ իրիցկինս. չորս հատ շապկցու առնեմ, թող հագնի պոլ-պոլ» — մտածեց նա։

Նա մոռացել էր մեռնողին։ Հանկարծ միայն նկատեց, որ մեռնողը իրեն է նայում։ Նրան թվաց, թե մեռնողը նախանձում է իր առողջությանը, ծխերին։ Եվ տհաճություն զգաց, որ նա իր նախանձով գալիս է թունավորելու այս երջանիկ օրը։ Նրան թվաց, թե հիվանդատերերն էլ նույն նախանձով են լցված դեպի ինքը։ Եվ ասաց.

— Իշալլա՜հ, տերտերս թեզըմ կլավնա, իրեն ոտքովը ծխերուն նշխարք կտանի։

— Է՜հ, տերտեր ջան, ծխերը քեզի կմնա,— կակծալով փրսփրսաց տիրամայրը և լուռ լացով բերանը ծռեց։ Իրիցկինն էլ լցվեց։

— Վո՜ւշ աս օրն ա՞ պիտի տեսնեինք, վո՜ւշ,— ասաց ու ծնկները ծեծեց, չզսպելով իրեն՝ սկսեց հեծկլտալ։

— Տե՛, տե՛,— չոր ու հրամայական ձայնով սաստեց տեր-Համայակը,— ձենդ մի՛ ցկե, ի՞նչ է էղե, ի՞նչ կա լալու։

Նա զայրացավ այդ լացից և ուզում էր ավելի թունդ հանդիմանել իրիցկնոջը։ Նրա համար սաստիկ անախորժ էր այդ լացը և անտեղի։

Հիվանդի հոգեվարքը սկսվեց։ Դաժան ժպտի նման մի բան շարժվեց նրա ծռմռվող դեմքի անկյուններում։ Հիվանդապահը չոքեց անկողնի մոտ և հիվանդի աջը ձեռն առնելով, ետ արեց նրա

մազերը քթի վրայից։ Մեռնողը նայեց առաստաղին, ուր մի քան կարծես աչքովն ընկավ։ Բայց դա թվում էր։ Նա ցնցվեց, խորը շնչեց և մնաց։

Երկու բոպեաչափ մահը կատարում էր իր կոպիտ, անասնական գործը։ Մեռնողը բացեց բերանը, որսաց օդը և երկար պահեց թոքերում։

Հետո կարծես մի շարժում էր ուզում անել։ Ամենքը վեր կացան և սպասելով նրա շարժման՝ քարացան մնացին նոր դիրքերում։

Հիվանդը հանգել էր արդեն։

Հիվանդապահը նշանակալից հայացքով գողունի նայեց իրայիններին։

Իրիցկինը օձի կծածի պես վեր թռավ ու ճչաց։

Տեր-Հմայակը մի պահ խռովվեց և մահը վանելու համար սկսեց անբնական բարձր ձայնով իր աղոթքը։

Մեռելի սառած աչքերը նայում էին մի անլուծելի, ծանր խորհրդով։

ԺՊԻՏԸ

Մեռելահոտն ընկել էր վանքի բակը, շուրջը, հեռուն, արևախանձ, փոշեթաթավ դաշտերը։

Փախստական Հիսուն հազարանոց մի ժողովուրդ եկել չոքել էր բաց դաշտում, հրատոչեր գետնին, արևի տակ։

Կարծես բնությունը վառել էր դժոխքի բոլոր վառարանները։ Մի բարակ փոշի ծանր պարում էր բազմության գլխին, օդը եռում էր հորիզոնում։

Ի՜նչ բազմություն... խունացած, խանգրած՝ կարծես աֆրիկյան տափաստանների հրդեհից փախած վայրի գազանների ու անասունների ոհմակներ, որ քշվել, ամբոխվել էին մեծ տարածության մեջ և կալմեջ եղած, անակնկալի մեջ շփոթված հևում էր ու ծանր շնչում։ Մղձավանջային հոգեվարք։ Եկել էր ամբոխը և հետը բերել էր իր անասունները, կայքը, ցնցոտիները, քրտինքը, կեղտը և մի զարհուրելի հոտ աղբի, վերքի, գեշի, մեռելի։

Մահը ճարակում էր։ Եվ ամբոխը մահերով խոցված հառաչում էր, տրտնջում, իրար անցնում, անասնանում, և մեռնում։

Խումբ-խումբ ընտանիքներ ուրուր տեսած հավի ձագերի պես ծվարել էին պարիսպների տակ, ծառերի մոտ, քարերի վրա, ճամփի հենց մեջտեղ և մահվան ծուլությամբ քարացել մնացել։

Մի հիվանդ կին էր պառկել ծառի տակ, մի կենդանի մեղրամոմ, գյուղական ժամի մեղրամոմ՝ կեղտոտ և նիհար։ Եվ նվում էր՝ բարակած, վերջին թելն ընկած։ Ծառերի մյուս կողմը հենց գլուխը հիվանդի գլխին տված՝ մեկնվել էր իր հասակավոր ամուսնու դիակը, խստադեմ, աչքերը երկնքին չռած, ատամները բաց։ Մի ծանր, հրամայական արտահայտում կար նրա սրված դեմքի, ոսկրոտ մարմնի և չորացած ձեռների մեջ, որ դրել էր կրծքին։

Հոգ էր պահանջում. հրամայում էր, որ իրեն թաղեն։ Եվ խիստ էր տալիս հրամանը։

Բայց շուրջը դաժան օրգիա էր։ Հարևան խմբերում ևս մեռելներ կային։ Դիմացը, ետևը, ծառերի տակ մեռելավոր ընտանիքներ կային, որ չէին նայում ոչ մեռնող կնոջը և ոչ նրա ամուսնու կողմը։ Այնտեղից հիվանդների տնքոց էր գալիս մերթ սուր, մերթ խուլ և խռպոտ։

Խստասիրտ էին դառել մարդիկ. էակը էակին մտիկ էր տալիս մշուշային աչքերով և չէր տեսնում։ Ասվել էր ամեն ինչ, լսվել էր բոլոր գանգատները, արվել էր բոլոր ճիգը — և մի բան չէր օգնել։

Պիտի մեռնեին ամենքը. հերթով, դանդաղ, անօգ։

Հիվանդ կինը նայում էր երբեմն իր տաս տարեկան աղջկան, որ խելոք նստած, ինչպես իրենց տանը, ինչպես իրենց կոկիկ սենյակում և իր կապույտ-ծաղիկ աչիկներով, կոտրած ժպիտով նայում էր շուրջը։

Եվ իր ամաչկոտ գանգրահեր գլխիկը խնկախաղողի ողկույզի պես մի ուսին ծռած՝ թաթիկները սեղմել, դարսել էր փորին։ Ու սպասում էր։ Ինչի՞։ Ո՞վ էր իմանում։ Կարծես սպասում էր, թե հիմի մայրիկը իրեն թույլ պիտի տար տանից դուրս գալու և խաղալու։ Երբեմն բաց էր անում իր խմոր-խմոր թաթիկը, դրստում էր փեշերը, կոկվում, ուղղվում և էլի խնամքով դնում իր փորիկին։

Կողքի ծառի տակից մի հեծկլտոց լսվեց։ Հիվանդը դեմքը դարձրեց այն կողմը։ Հարևան մեռած կնոջ երեխան էր, որ այդպես հեծկլտում էր։ Ձայն էր տալիս մորը, հրում էր, օրորում. բայց մայրը դաժանորեն լուռ ու համառ՝ չէր լսում նրան։

— Աստծո՜ւ սիրուն, մեռե՜լս մնաց, մի բուռ հո՜ղ.— հեծեց կինը։

Զո՜ւր. նրան լսող չկար. դա նրա հերթական աղերսն էր, մեքենական և դրա համար էլ հուսահատ։

Խուռն բազմությունը բժժում էր փեթականոցի պես։

Ահա կատաղի գայլերի պես ցատկելով մարդկանց դիակների վրայով՝ խուժեց նրանց համար եկող հացի սայլերի վրա և սկսեց կողոպտել իր համար բերած հացը։ Կոխկրտեցին երեխաներին, պառավներին, պատառոտեցին իրարու շորերը։ Օդը լցվեց սուր ճիչերով։ Ոսկրոտ ձեռներ՝ տատասկների պես խրձվեցին հացերի մեջ։ Կինը նայեց իր աղջկան, հոգնած աչքերը դարձրեց մարդկանց ոհմակի վրա, մի բան ուզեց ասել, բայց հառաչ դուրս եկավ։ Ձեռը, որ օդի մեջ էր, հնձված հասկի պես թրփաց գետին։

Ու կինը լռեց։ Լռեցին նաև գայլերը։ Միայն ճանճերն էին, որ փոքրիկ սլաքների պես սուրում էին օդի մեջ, գալիս բզզում էին ականջի տակ և հեռանալով՝ մի տաղտուկ տխրությամբ միտքը համակելով՝ տանում էին հեռուն, դեպի ինչ-որ հուշեր։

Հեռվից մի ձայն ծորեց.— մեռե՜լ, մեռե՜լ...

Բազմության միջից գլուխներ ցցվեցին՝ բորենու հարցական հայացքներ և նայեցին այն կողմը։ Մեռելաթաղ սայլերն էին։ Սայլապանը մոտենում էր և հոգնած անասունի անտարբեր ձայնով մեքենաբար ծոր տալիս՝ «մեռե՜լ, մեռե՜լ»։

Մեռելատերերը կիսովին բարձրացրին գլուխները և բորենու հայացքները հառեցին դեպի սայլերը։ Նրանք ծանր ճռռալով, անշտապ ու տաղտուկ շարժումներով առաջանում էին դեպի մարդկային նախիրը։ Մեռել էին ուզում նրանք։ Բայց մեռելատերերը անշարժ ու լուռ դիտում էին նրանց և տեղներից չէին եռում։ Շոգը, ցավը, ծուլությունը ջարդել էր նրանց. թմրել էին կեղտից, սովից և մեռելահոտից։ Բայց սայլերը մոտենում էին մարդկային փողոցների միջով։ Նրանցից մինը գալիս էր դեպի հիվանդ կնոջ կողմը։

Մեռելատերերը նվաղով վեր կացան, ձեռով արին սայլապանին ու իրենք կռացան մեռելների վրա՝ պատրաստվելով վերցնելու և սայլին հանձնելու։

Սայլը մոտեցավ՝ դողալով և ցնցելով իր վրայի մեռելները, որ սայլի բոլոր շարժումներին հնազանդ՝ թույլ էին տալիս իրենց օրորելու այն հազար ու մի ձևերով, որ սայլի քմայքը կթելադրեր։ Էլ կամքի ոչ մի նշույլ։ Նրանք առարկաներ էին։

Սայլապանը մոտեցավ և ճամփի եզրին կանգնեց։

— Դե, ով մեռել ունի՝ բերի,— գործնական սառը ձայնով կանչեց նա, աչքերը եզներին գցած ու հանգիստ սպասեց։

Ծառերի տակից վեր կացան մարդիկ դանդաղ եզների պես և կարծես շորեր, կարծես գողացած իրեր լինեին դուրս հանելիս՝ վերցրին իրենց մեռելներին և տարան գցեցին սայլի վրա։

— Էլ կա՞, բերեք,— կանչեց սայլապանը իր շուրջը հավաքված բազմության։

Ոչ ոք չպատասխանեց։ Ամենքը լուռ ու խիստ հայացքները հառել էին մեռելներին, որ անբնական դիրքով մնացել էին իրար կողքի, իրար վրա՝ տառեխների պես։

— Դե, շո՜ւտ արեք, շոգը զոռեց, հոտը դիմանալու բան չէ,—

շտապեցրեց սայլապանը և փափախը վերցնելով սրբեց իր թաղիք դարձած կարմիր մազերն ու մրոտ երեսը։

Ոչ ոք տեղից չթնդաց։

Սայլապանը սրտնեղեց ու գոռաց.

— Այ ձեզ մարդ ասողի հերը շուն գառնա, հոտեցրիք աշխարհք, դե բերեք է՞։

Ու իջավ սայլից։

Նրան հետևեցին երկու կին ու մի տղամարդ և լուռ մոտեցան դիմացի ծառի տակ մահացած կնոջ, վերցրին ու օրորվելով, տընքալով բերին, սայլին դրին։

— Մինն էլ հրեն էն կնկա գլխավերին է,— ցույց տվեց սայլապանը։

Խումբը մեծացավ. գութի եկան, մի տեսակ աշխուժ եկավ վրաները։ Սուլությունը պարտվել էր, և մեռել ճամփելու աշխատանքը ինչ-որ անմեկին ուրախություն էր բերում։ Գուցե նրա համար, որ հրապարակից քշվում էին մեռելները, այդ խստապահանջ անգոհ էակները, որ հրամայել և հրամանը միշտ կատարած տեսնել գիտեն։ Եռանդով մոտեցան կնոջ ամուսնու դիակին և արագ վերցրին։ Կինը սկսեց ինչ-որ սվսվալ. բան էր ասում, որ չէր հասկացվում։ Դիակը սկսեց ձեռների վրա մի կոմիկ ու տխրաշուք պար։ Սովն ընկած մակույկի պար, որի մերթ մի եզրը, մերթ մյուսը շրջվում է վար ու հետո վերացող ալիքի հետ ծառանում է և վեր, խաղ անում, շորորում ու հանկարծ իջնում։

Ինչ-որ թաքուցյալ մի եսական բան, ինչ-որ խորամանկ զվարճացում ուներ իր մեջ այդ դիակը։ Կարծես կանչել էր այդ մարդկանց, որ հեծնե նրանց ձեռներին ու զբոսնե. կարծես ամենքը պարտավոր էին ճիգ թափելու. նրանք չանում էին, իսկ սա ոչ մի շարժում, ոչ մի նշան, թե՝ «ես էլ եմ օգնում ձեզ, որ ինձ տանեք»։

Վերջապես դիակը մոտեցրին սայլին, ոտները դրին մյուս մեռելների վրա և հրեցին առաջ։ Մեռելը գնաց, պառկեց և շարունակեց հայացքը խիստ գամել դեպի վեր։

Հիվանդ կինը տնքաց, դեմքը կնճռոտեց և աչքը գցեց իր տղջկան։ Սա տխրամած, կոտրված վար նայեց, խեղճացավ և աչքերը գցեց կողմը։ Մայրը հառաչեց ու սկսեց անաքցունք մի լաց, որ դեմքի ծամածռումն էր ավելի։

Սայլը գլորվեց և բութ ու անտարբեր շարժվեց դենը, դեպի այլ մեռելներ։

Լռեցին ամենքը ու փտած փայտերի պես վայր թափվեցին, անշարժացան։

Արևը թեքվում էր։ Փոշին, հոտը ավելի ծանրացան։ Մի հոծ ժողովուրդ քայքայվում էր հսկա դիակի քայքայումով. կարծես բացվել էր մի ահագին փորոտիք, գզգզվել էին բյուրգալար աղիքներ, և մարդկային կղկղանքն ու լուծվող մկանները գոյացրել էին մի լայն կաթսայի զզվելի շիլափլավ։

Նստած էր տղջիկը, այդ հրեշային թանգարանի արձանիկը և սպասում։

Մի քանի քայլ նրանից հետո, քարի շվաքի տակ մի այլ ընտանիք էր բուն դրել — մի վանա կատու, որ նոր ծնել էր հինգ ձագուկներ՝ կույր-կույր ու բմբլիկ, որ ծվծվում էին։

Կարծես մեջքի վրայից փրփրալի շուր էր թափվում՝ բաժանվելով երկու մասի. այդպես վար էին հոսում նրա մետաքսի երկար մազերը, որ նա խնամքով լիզել էր և մաքուր սանրել։

Մի երջանիկ տխրունակ հոգնություն կար նրա մայրական դեմքին ու աչքերին։ Հանգիստ լիզում ու հսկում էր իր նախշուն ձագերին, որ իրար բոթելով — խուժել էին նրա ստինքների վրա և ծվծվում էին աղվամազ թոշնաձագերի ձայնով։ Ծռում էին, գլորվում հետու, հետո կուրորեն որոնում մայրական ջերմությունն ու ծիծը։

Մաքուր, կոկիկ և ապահով մի տնակ էր դառել այդ քարի հովանին։ Մի երջանիկ ընտանիք էր դա՝ նոր ծնունդներով կենդանի և հուսալի։ Ահա ձագուկներից մինը, որի մի աչքի կողմը սև սաթ էր, մյուսը ճերմակ ձյուն — արդեն ցույց էր տալիս իր ապագա շարաճճի խաղերը։ Պառկեց մեջքի վրա և ճերմակ թավիշ փորիկը պարզելով սկսեց թաթիկներով խաղալ մոր ականջի հետ, որ կախված էր նրա դնչի մոտ. հետո ցատկելու պես արավ, որ շուռ գա և կանգնի, բայց գլորվեց և ընկավ հետու։ Մայրը ասես ժպտաց այդ ձախլիկության վրա, հասկացավ, ներեց և հոգածու ձայնով կիսամլավեց։ Ջարաճճին սողաց դեպի մոր դունչը. սա սկսեց քաղցր մռմռալ և լիզել նրա թաթիկը, դունչն ու մեջքը։

Որտեղից էր այդ կատուն։ Ընտանիքներից մե՞կն էր փախել.

ժամանակ բերել հետը, ի՞նքն էր փախել, որի՞ կատուն էր, կենդանի՞ էր տերը, թե՞ ընտանիքով հանգել էր — ի՞նչ իմանաս։

Միայն այս հանուր դժոխքի մեջ մի գթալի, մեղմ շեշտ էր մտցնում նա։ Անգամ չէր զգում, թե ինչ կար իր շուրջը։ Կուշտ էր նա այսօր և երջանիկ էր ինչպես առողջ մայր ողջ և առողջ ձագերի։ Եվ մոմռում էր, երբեմն խլաձայն մլավում, լիզում էր ձագերին, հոգում էր իր տան ախորժելի հոգսը և վայելում քարի հաճելի շվաքը։

Հիվանդ կինը աչքը դարձրեց իր աղջկան։ Մի բան կար, որ նրան պաշարել էր այդ վայրկյանին. մի բարձր, կյանքից հայնկույս բան՝ վեհ, խիստ և ահավոր։ Եվ նա անհանգստացավ, դիտելով իր աղջկան, որ անգիտակ էր կամ ճնշված, և շուտով պիտի մնար հավիտյան որբ։ Բայց աղջիկը դիտում էր կատվին և թեև չէր ժպտում, բայց զբաղվում էր։ Հիվանդը նայեց և նոր տեսավ կատվի ընտանիքը։ Մտիկ տվեց երկար, դիտեց կատվի երջանկությունը և հետո նայեց իր աղջկանը։ Մի խանդաղանք, մի անուշ տխրություն ծորեց նրա սրտի մեջ, և նա զգացվեց մինչև հոգու խորքը.

— Ողորմությանդ մեռնեմ, աստվա՛ծ որ անպակաս է,— մրմնջաց հիվանդը։

Եվ նայեց կատվի երջանկության, աչքերով շոյեց այդ ընտանիքի ուրախությունը և կարծես հանգստացավ։

Ահագին ցավի տոգորման մեջ մի կում ջուր, որ կաթեց նրա հոգու վրա։

— Աստվա՛ծ,— մղկտաց կինը,— բա իմ ձա՞գը ում պիտի մնա։ Իմ ձագը մեր չպիտի՞ ունենա...

Կասկածն ու կսկիծը նորից սողոսկեցին նրա սիրտը։ Բայց դրա հետ միասին մի անուշ բալասանի պես նրա հոգու մեջ լցվեց մի ուրիշ մոր իրեն չպատկանող ուրախությունը։

Ժպտաց կինը և աչքերը փակեց։

Սկսվեց խաղաղ հոգեվարքը։

1916

ՄԵՔԵՆԱՆ

Դեռ երեխությունից, երբ որբ էր գյուղում, Սերգոն աչքը բացեց չբացեց՝ միայն կարիքը տեսավ։

Առաջ հոտաղ էր։ Սովի հետ քուն էր մտնում, սովի հետ զարթնում։ Իր կյանքում քաղցր վարմունք չի հիշում։ Միայն քեռին Ամերիկա գնալիս իր հին շալվարը նվիրեց նրան։ Այնուհետև, մինչև հասակն առնելը չտեսավ երբեք, որ մի մարդ «լավ մարդ» լիներ։ Լավն էլ ո՞րն է։ Լավ մարդը ուրիշ ժամանակ լավ, քաղցր ասում-խոսում է. բայց կարիքիդ, նեղությանդ մեջ, գործի, սակարկի ժամանակ ոչ մի կոպեկ չի զիջում քեզ։ Միշտ աշխատում է մի կոպեկ ավելի պոկել, մի կոպեկ պակաս տալ։ Հետը գործդ վերջացավ թե չէ — էլի նա իր համար, դու քեզ համար։

Ահա այսպես տեսավ կյանքը դառը մանկությունից։

Պատանությունը մաշեց կառապանության մեջ։ Զուրկ ու չարքաշ։ Պոստի շինության չոր տախտակների վրա, ախոռների անկյունում, ձիերի հետ, շոգին, ցրտին, անձրևին։

Հետո էլ կարիքը քացով տվեց, գցեց գործարան, սղմեց մեքենաներին, կապեց մեքենայի հետ։

Հիմի, քսանհինգ տարի է, գործարանումն է։ Մեքենան է սրբում, յուղում, հսկում։ Երբեմն էլ վարպետի ցուցմունքով քանդում, սարքում։

Առհասարակ շատ աչքաբաց և եռանդուն բանվոր դուրս եկավ Սերգոն։ Գործի հետ կռիվ էր տալիս. ասենք միշտ այդպես է եղել հոտաղ և կառապան եղած ժամանակ էլ։ Գործը նրա սովորությունն էր, բնավորությունը։

Բայց մի բան երբեք չդրստվեց նրանում։ Դա նրա կծու բնավորությունն էր։ Չոր էր շատ, խոսելու մեջ՝ կիրթ։ Դրա համար էլ իր ընկերները քաշվում էին նրանից, ոմանք էլ խուսափում։ Գուցե և չսիրեին էլ նրան դառը վարմունքների համար, բայց գործարանի հին տերերի, գործադուլների, պայքարների ժամանակ միշտ զգացել էին, թե ինչ արժի Սերգոն իր հանդուգն, կոպիտ բնավո-

ությամբ։ Այն օրերին Սերգոն իրո՞ք որ անգնահատելի ընկեր էր, այն ժամանակ շատ էին սիրում նրան։ Նա իր «տեղումն» էր։

Բայց հետո, երբ եկան խաղաղության, շինարարության տարիներ, նրա ընկերները ապրելով երբեմն ուրախ, տոնական կյանքով, երբեմն դժվար աշխատանքի հոգսերով՝ մոռացան հին կռիվները, մեղմացան։ Նրանցից ոմանք թուլացան և սկսեցին անհոգության տալ։ Եղան գործից ուշանալու մասսայական դեպքեր։ «Մլուկ տալը», խմելը ուշադրության առնվեց լրագրերում։

Այս ամենը ոչ միայն սրտի խորքից վիրավորում էին Սերգոյին, այլև զարմացնում էին։

— Գուք իսկի բա՞ն եք հասկանում, թե՞ հենց էնպես... — բարկանում էր նա ընկերների վրա։

— Վա՛խիլ մի, գործը գնում է իր համար,— ծիծաղում էին ընկերները.— վերջապես գործը մեր ձեռին չի՞, կդրստենք։

— Ձերն ա, ձեր հո՞րն ողորմի...

Ընկերները ծիծաղելով անցնում էին գործի, իսկ նա քթի տակ մրթմրթալով ընկնում էր իր մեքենայի վրա։

Ասենք նա մի քիչ խստաբարո էր և բծախնդիր։

Մեքենաները լավ. սարքին, դառնում են, բանում։ Մի որոշ ժամանակ կա, որ պիտի հսկես, յուղես և բավական է. նրանք կաշխատեն իրենց համար։ Բայց Սերգոն սիրում է ավելորդ անգամներ մոտենալ մեքենային, մտիկ տալ, հետը խոսել, վրան մրթմրթալ։ Մեքենան նրա համար շնչավոր արարած է, նույն եզը, նույն ձին, որոնց հետ ապրել է նա մի ժամանակ և հետները տարիներով խոսել։ Դա նրա սովորությունն է։ Անբացատրելի մի զգացմունք քաշում է նրան դեպի մեքենան։ Այդտեղ կա և՛ սեր, և՛ ատելություն, և՛ զայրույթ, և՛ երախտագիտություն։ Բայց կա և մի խոր, ներքին դժգոհություն, թախիծ չսիրված արարածի։ Ինչպես և հոտաղ ու կառապան ժամանակ եզան ու ձիու հետ, այնպես էլ հիմա մեքենայի հետ նա շղթայված է մի խորին անհրաժեշտությամբ — կյանքի, դոյության կռվի անհրաժեշտությամբ։ Սերգոն միշտ բանեցրել է եզանն ու ձիուն, հիմա էլ բանեցնում է մեքենային։ Բայց մի բան ճշմարիտ է, և ճշմարիտ, ինչպես նրա ժանկուց չարչարված, զրկված և ծեծված կյանքը, որ եզն ու ձին նրանք չեն բանել ինքնակամ և չեն թողել, որ նա մի բոպն անհոգ

նստի։ Հակառակ՝ նրանք բանել են դժկամ, խուսափելով, և երբեք, երբեք նրանց պետքը չի եղել, թե Սերգոն ինչ կարիքի, ինչ ցավի մեջ է։ Պետք է շարունակ աչքդ վրաները պահես, շարունակ հետները կռիվ տաս։ Աչքդ մի քիչ դենը պահեցիր թե չէ՝ կթողնեն քեզ ցեխի, ձյան, կարիքի մեջ ու կգնան իրենց բանին։ Նրանք երբեք չեն սիրել Սերգոյին... նույնն է և մեքենան...

Մոմոում է մեքենան իր պողպատե երախներով, «վազում», սլանում է՝ գափելով իր երկար սմբակներով և կրճտելով ատամները, պսպղում Սերգոյի վրա։ Հետո քրտնամխելով ճռռացնում է իր հետևից հսկայական սարքավորումը, կարծես հազարավոր ֆուրգոններ են դղրդալով անցնում դաշտի շոր խճուղով։

Մռայլվում է հին կառապանի մրկած դեմքը, և նա ականջները սրած լսում է մեքենայի մասերի առանձին ձայները. ստուգում։ Դա բարեխղճություն չէ միայն, դա նրա տարերքն է, նրա հոգեկան կյանքը։ Նա մեքենայի մոտն է միայն կարողանում բացվել, մտածել, երևակայել, ինքն իր հետ խոսել։ Նա այնտեղ իրեն այնպես է զգում, ինչպես «տրոյկի» նստարանի վրա, ձիու պոչի հետև։

Ման է գալիս մեքենայի չորս բոլորը, կռանում, տնտղում տակից, կողքից, կարծես էլի այն հին կառապանն է իր ձիերի կողքին, որոնց թիմարում էր, լվանում, պայտում։

Նայում է, նայում ու միշտ մի բան պակաս է գտնում։ Եվ կարծես ինքը մի բան է ուզում, մեքենան միշտ ուրիշ բան է անում։

Մեջները միշտ մի ներհակություն կա..

Հանկարծ խեթում է.

— Հը՞, էլի հևոցն ընկա՞ր, սատկած։

Ցուղ է ածում ականջներում։

Հետո մտիկ է տալիս կարկատած փոկերին, որ տեղ-տեղ ռնիվներից մաշվում են։

— Հը՞, կրծի՞, կրծի՞, սոված անասունի պես։

Ու թքելով կռանում է, մտիկ տալիս մեքենայի մեջերքը։

— Կա՞ց, քու բերնի կապը կդնեմ։

Սերգոն գիտի, թե մեքենայի ինչ մասերն էին թուլ. դա վաղուց էր նկատված և մի կերպ սարքված էր վաղուց, և հոկեն ու խոսելը ավելորդ բաներ են։ Բայց նա չի կարող այդպես չանել։ Դա բարեխղճություն չէ, դա նրա բնությունն է, նրա տարերքը։ Նա

մեքենայի մոտն է բացվում, նրա հետ խոսելով է կարողանում մտածել, երևակայել, ինքն իրեն բարձր խոսել։ Դա նրա հին սովորությունն է ձիու պոչի հետև, «տրոյկի» նստարանի վրա նստած պահին համ գործն արվում է, համ էլ... մտածում։

Մեքենան «գնում է» իր ընթացքով — կարիք չունի Սերգոյի խոսքերին։ Սերգոյի տրամադրությունը լավանում է, նրա մոայլ դեմքին մետաղի մի սառը փայլ է շողում, մի դաժան հաճույք։

— Էդպե՞ս, դե հիմի գնա՞...

Մեքենան պտույտ է գալիս, հիմի ամեն բան լավ է, բայց էլի աչքը չի ուզում նրանից հեռացնի։

Թինկ է տալիս մեքենայի ճաղին, բայց և շուտ-շուտ ետ է նայում։ Ո՞վ է իմանում. «գաղան» է, մին էլ տեսար ատամը գցեց փեշիդ ու փաթաթեց լավաշի պես։

Եվ Սերգոն աչքը ծուռ-ծուռ գցելով մեքենայի ատամներին՝ կատակում է.

— Դե՛, ռեխդ քե՛զ քաշի... — Ու ինքնաբավական ժպտում։

Քաղաքն աղմկում էր կեսօրվա արևի տակ։ Հրապարակը կարմի՞ր, պլպլում էր գաթայի պես։ Գործարանը դղրդում էր, կարծես հարյուրավոր թնդանոթներ էին գափելով անցնում փողոցներով։ Բանվորների լարված, գործի եռ ժամն էր։

Սերգոն կռացել էր մեքենայի վրա, ինչ-որ բան էր տընտղում։ Վզի երակներն ուռել էին։ Մեքենան էլի ինչ-որ համառում էր, և Սերգոն չարացել էր վրան սև տաքդեղի պես։

— Ի՞նչ ես անում, Սերգո, «նալն ընկե՞լ է»,— գլուխը թեքելով դեպի նա՝ գոռաց մի երիտասարդ բանվոր, որ անցնում էր նրա մոտով։

— Գործիդ գնա,— մրթմրթաց Սերգոն։

Բանվորը ծիծաղեց ու հեռացավ։ Սերգոն յուղ ածեց մեքենայի ականջը, դրստվեց և սկսեց քրտինքը սրբել։ Երբ աչքը դուրս գցեց պատուհանից, արևի շողքն ընկավ մեջը։ Չարացավ այդ կատակից ևս։

Հոգնած էր։ Քամակն արեց դեպի մեքենան և շունչ քաշելով հանեց թութունը, սկսեց ոլորել։

Ծխում էր և հետը մտիկ տալիս իր ընկերներին, որ խլրտում էին մեքենաների շուրջը, դազգահների մոտ, մյուս բաժնում։

Մեքենաների դղրդյունը ռիթմիկ զարկում, թնդացնում էր շենքը և հորինելով մի երգ, գրավում էր աշխատելու, մրցման էր գրգռում։

Օրորվում էր Սերգոյի միտքը... Սկսեց դիտել իր ընկերներին, գործարանի անկյունները, պատուհանից դուրս։ Եվ սկսեց երազել։ Իր հին թախիծը։ Մոռացավ կարծես։ Միայն մեքենաբար զգում էր թինկը տված ճաղի ցնցումները։

«Քշում, գնում է» մեքենան... ո՛չ հոգս է հարցնում, ո՛չ թախիծ, ո՛չ էլ Սերգոյի հուշերը, այն սարսափելի, մոայլ օրերի մասին, երբ նրա հինգ հոգիանոց ընտանիքը հալվեց սովի և հիվանդության ճիրաններում։

Ո՛չ ոքի պետքը չէր...

Հիշում է այն առավոտը, երբ իր գրկի մեջ հանգավ իր խարտյաշ երեխան՝ սոված մոր ստինքների շորանալուց։ Հետո ինչպես, դեռ իր զավակին չթաղած՝ նա պարտավոր էր գալ գործարան և բանել մեքենայի կողքին, կանգնել ահա այսպես։

«Սրա էլ պետքը չէր... իսկի՞»։ Եվ դրսի աշխարհի ուժեղների, «ուրիշների» և ոչ ոքի պետքը չէր, թե ինչ վիճակի մեջ էին նաև այս բոլոր մոայլ մարդիկ, որոնք իր հետ և իր պես անց են կացրել դառն ու դաժան օրեր, տարիներ...

Ու այսպես թինկը տված մեքենայի ճաղին, աչքը գցած պատուհանից դուրս՝ երազում էր Սերգոն և կարծես երազի մեջ տեսնում էր, թե ինչպես է փողոցից հոսում կառքերի, տրամվայների և մարդկանց գետը։ Սերգոն ականջ էր դնում այդ աղմուկին, որ հազարբերան ժխորային երգի պես ձգվում, լցվում էր, երբեմն մեղմանում, երբեմն սաստկանում։

Բայց չէր լսում։

Կյանքը ի՞նչ երկար տևեց։ Որտեղի՞ց ո՞ւր։ Սերգոն հիշում է հի՛ն-հին բաներ, իր հոտաղությունը, իր կառապանությունը, բուքերը, երբ ահռելի ձյան թևերի տակից, մահի ճիրաններից մի կերպ — բայց ի՞նչ կերպ — դուրս էր բերում սահնակը, իր կյանքը։

Միշտ կռիվ, միշտ արթնություն, միշտ լարվածություն...

Ու դառնորեն ծխում է Սերգոն։ Եվ հուշերի ու ծխի դառնության մեջ զգում է մի ծածուկ քաղցրություն։

Այդպես էր եղել նրա անցյալը. դառն հուշեր, դառն ծուխ...

Հետևից մեկը շոշափեց նրան։ Թե՞ քաշեցին։

Հաղիվ սթափվեց, ետ նայեց, հաղիվ գլխի ընկավ, որ մեքենայի փոկը ճանկել է իր փեշը։

— Է՛, է՛... — ցնցվեց ու հաղիվ ճչալ ուզեց ու կամենում էր պոկ գալ — մի՛ վայրկյան — մեքենան այնպես հաստատ քաշեց նրան, այնպես հափշտակեց նրա թևը իր երախի մեջ ու տարավ, որ նա ոչինչ չկարողացավ մտածել։ Ցզրտաց կարճ ու անասնային ձայնով։ Եվ իսկույն կտրեց։ Մոռացավ կարծես, կամ ուզում էր մի բան հիշել։ Մի՛ վայրկյան...

Բանվորները ոռնացին, մի վայրկյան քարացան և հանկարծ կատաղած հարձակվեցին մեքենայի վրա, ձեռքերը պարզեցին, որ նրա երախից խլեն զոհին։

Գազանը պսպղացրեց իր ատամները, ոլորեց բերանը ու սասարկ թրփոցով Սերգոյին զարկեց հատակին։

Դուրս պրծավ զոհը ահռելի ատամներից և ազատ ընկավ մի կողմ, բայց ինչպես չվալի միջի մորթած մխս։

Բանվորները կալմեջ արին նրան, սկսեցին բղավել, վազել գես-դեն։ Մի քանիսը դուրս թռան փողոց։ Մեկը գլխի ընկավ վազելու հեռախոսի մոտ։ «Բժի՛շկ» գոռացին։

Ապա շուր սրսկեցին դեմքին, որ դեղնամամի պես սառել էր։

Սպասում էին շուտափույթ օգնության կառքին, բժշկին։

Սերգոն ընկած էր հատակին, աչքերը պղտոր ապակի, բերանաբաց, ատամները սաղափի պես պսպղուն։ Արյունը թրջել էր նրա սև մորուքը և հիմա առատ հոսում էր ասֆալտի վրա։

Վատ էր «կծել» մեքենան։ Ուղղակի ծամել էր թևը, ծամել, ինչպես մի վրիժառու ուղտ, որ վրեժը հանեց իրեն ծեծող ուղտապանից։

Եկավ բժիշկը օգնականի հետ։ Փաթաթեցին Սերգոյի թևը, վերցրին, մի քանի հոգով դրին կառքի մեջ։ Եվ այն առողջ մարդը, որ գործարան էր մտել ողջ ու առողջ՝ գուրս տարվեց այնտեղից իբրև իրերով լի առպրակ։

Հիվանդանոց։

Դեղերի ծա՜նր հոտ — մեռելի հոտ։

Բանվորները շրջապատել էին Սերգոյին, ու թեև հիվանդանոցի հերթապահը խնդրեց, որ շուտ հեռանան, բայց նրանք չէին կարողանում հրաժեշտ տալ վիրավոր ընկերոջը։

Շատ բան էին ուզում ասել նրան, բայց մի տեսակ լեզուները կապվել էր։

Խստաբարո բանվորը մահամերձ էր։

Բանվորները մխիթարեցին նրան, սիրտ տվին, խոսեցին գործարանից, դեսից-դենից...

Մեկը խոսեց մեքենայի մասին.

— Անտե՛ր մնար մեքենան։

Սերգոն աչքերը բաց արեց, խորը նայեց խոսողին։ Եվ թույլ բարկությամբ սրտնեղեց.

— Սարսաղ մի՛ դուրս տա, մեքենան տատամեր չի, որ քեզ գրկած ման ածի։ Կծո՜ւմ է։

Ու երկար լռեց։ Հետո գլուխն օրորեց։

— Կկծի, բա՜ս... կթողա՞, որ մլուլ տաս, ոնց որ ե՛ս արի։ Մեր բանն էդպես է, կռիվ է...

Բանվորները վեր կացան։ Հեռանալու ժամանակ էր։ Զգացին, որ սա վերջին տեսությունն էր։

Մինը չհամբերեց.

— Բա, Սերգո, դու էս օրին ընկնե՞ս...

— Ջաննե՜րդ սաղ ըլի, աշխարհքը լեն, ինձպեսները լիքը։ Բան չունե՞ք. ես չհասա՝ ուրիշները կհասնեն։ Էս էլ մի ճամփա է։

Ասեց Սերգոն, բայց ուժասպառ լինելով՝ խոսքը ծամծմեց.

— Բա՛ց արեք պատուհանը։

Փողոցից ուրախ ժխորը լցվեց ներս։ Քաղաքը մոտից, հեռվից գղրդում էր, գափում, քրտնում, հևում։

Ամենքը «ճամփա» էին գնում։ Միայն Սերգոն էր, որ ընկել էր այդ ճամփին։

Ընկերները շարժում արին։ Նրանք գնում էին. գործն սպասում էր նրանց։

— Է՛հ, հերիք է, գնացեք,— շշնջաց մահամերձը,— ձեր ճամփեն երկար է, «մլուլ մի՛ տաք» ինձ պես։ Սաղ ըլեք, շնորհակալ եմ։

— Վախել մի, դու էլ հրես գալիս ես.— ասաց մեկը՝ վախենալով, որ ուրիշ բան ասի։

— Կգամ, կգամ,— շշնջաց Սերգոն։

Թոլորը սեղմեցին Սերգոյի ձեռքը, գնացին, և Սերգոն «մնաց»...

ՍՏԱՄՈՔՍ

Տնից մեյդան, մեյդանից տուն։

Ահա նրա ամենօրյա մարզը, որ նա չափում է առավոտից մինչև իրիկուն։ Առաջ էլ, երբ հյուսն էր՝ քաղաքում առանձին տեղեր չուներ գնալու։ Բայց գործից տուն գալիս՝ շաբաթ երեկոները ճամփան կծռեր դեպի գինետուն։ Բայց հիմա, երբ պատերազմն ու սովը շատերի հետ նրան էլ ճզմեցին, էլ տեղ չուներ գնալու։ Գործ էլ չուներ. արդեն ծերացել էր, բուրդը տվել և աշխարհքում այնքան կարևոր էր նա, որքան աղքատ գյուղի հացը կտրած պառավ շուն, որ խոպոտ ձայնով պաշտոնապես հաչում է, բայց ոչ ոքի ոչ վախեցնում է, ոչ հիշեցնում իր գոյությունը։

Նա ծեր հյուսն էր, գործից նոր հեռացրած։

Վերջին կապալառուն լավ մղեց նրա հուսկ հյութը և ճամփեց տուն։

Այսինքն՝ դագաղ ու գերեզման։

Քառասուն բանվորական տարիներից ոչինչ չմնաց նրա մոտ, ոչ ուժը, ոչ դրամը, ոչ բարեկամները։ Եռուն ձիերով լծած կառքի պես թռավ այդ բոլորը նրանից, և միայն մի բան մնաց անցյալից, որպես հավատարիմ շուն — անկշտում ախորժակը։ Հին արհեստավորի առողջ ստամոքսը դեռ համառում էր։

Ուտե՞լ, անվերջ ուտել — ահա նրա կիրքը։

Առավոտից մինչև իրիկուն նրա խոսքը, գործը, ծրագիրը— բոլորը ուտելու վրա էր։ Հազար անգամ վեր կկենար տեղից, կերթար բաց կաներ պահարանը, կարոտով կնայեր բոլոր անկյունները, բաց կաներ ամանների խուփերը, ձեռքը կտաներ ծալած անձեռոցիկների արանքը, և միշտ հույս ուներ կամ սուր ցանկություն՝ մի ախորժելի բան գտնելու. տասնյակ րոպեներով կանգ կառներ բաց պահարանի առջև, մտասույզ կնայեր ամաններին ու

թեկուզ մի չոփ էլ չէր գտնում բերանը դնելու, բայց միևնույն բանը կրկնում էր ամեն ժամ, ամեն րոպե։

Եթե հաց լինում էր՝ կերած էր լինում արդեն. շաքարի երկուերեք կտորը կինը թաքցնում էր անգյուտ անկյուններում, և հյուսնը որոնում էր գոնե հացի մի պատառ, խաշած սիսեռի մի հատիկ...

Որ սպանես՝ չկա ու չկա։ Եվ ախորժակը գրգռվում էր, կատաղում։ Հառաչում էր հյուսնը, բերանը լորմում, թուքը կաթեցնում և շրթունքները չփչփացնելով գալիս նստում էր տախտին ու մեջքն ու գլուխը պատին տալով, աչքերը կիսաբաց, երազում կհառեր դիմացի պատի մի կետին ու կմնար ժամերով նույն դիրքի մեջ։

Եվ կմրափեր։ Բայց դա մրափ չէր, այլ տեսիլների մի հանդիսարան։

Հնդուհավի բուդեր, իշխան ձուկ ընկույզով, խավյարի քրսվածքներ, գառան մսով փլավի բլուդներ գալիս երևութք էին դառնում նրա գրգռված երևակայության մեջ։ Մի անվերջ սուփրա՝ բազմազան խորտիկներով բացվում էր նրա առջև, և օդը լցվում էր անուշ բուրմունքներով։

Մի հյութալի լուլա-քապապ ճերմակ, լուսեղեն լավաշի մեջ կսողոսկեր նրա շուրթերից ներս, և լավ աղած մսի հյութը թրջելով լավաշի թերթը՝ հալվում էր նրա քմքի ու լեզվի մեջ։

Հանկարծ թուքը կուլ գնալով կթռչեր նրա շնչափողը, և նա հազալով կզարթներ։ Կզարթներ և սոված գայլի պսպղուն աչքերը կդարձներ շորս դին։ Խիստ, անողոք իրականությունը կսթափեցներ նրան...

Ու ախորժակը կկատղեր։ Վեր կթռչեր տեղից։

Նախ օրորվում էր գլխապտույտից, տարտամ կանգնում էր, հետո պատերը բռնելով դուրս էր գալիս պատշգամ։

Կինը չէր հետևում նրա կյանքին, ուր մնաց շարժումներին։ Ինչքան կուզե թող վեր թռչեր, դուրս գար, ներս մտներ. նրա ոչ մի արարքունքը ոչ մի նորություն չուներ կնոջ համար։ Հյուսնը դադարել էր ապրելուց, նրա բոլոր շարժումները, բոլոր խոսքերը, ամեն մի գործողությունը նախորոշ, կրկնված և մեքենական էին՝ ինչպես ծես, հազարամյա ծես։

Եվ ձանձրալի՞, աշնան անձրևի պես ձանձրալի։

Եվ ի՞նչ պիտի աներ այդ սոված անասունը, որ իր վնասոտ ուղքը գրավեր։ Արդեն ճակատագրի անջինջ վճռով իր ամուսինը պիտի

կրկներ միևնույն բանը. դուրս պիտի գար պատշգամ, պիտի մոտենար անկյունում փռած սև պամիդորին, որ չորանում էր, պիտի վերցներ մեկ-մեկ, տնտղեր դողդոջուն ձեռքերով, մոտեցներ լեզվին, ցած պիտի դներ, հետո անկյունից վերցնելով իր ցուպը՝ վար պիտի իջներ սանդուղից և դուրս գար փողոց։ Եվ ո՞ւր էր նրա գնալու տեղը։ Դա էլ ճակատագիրը վճռել էր անդառնալի — մեյդանը։

Կերթար մի ժամի չափ, ման կգար բոլոր անկյունները, քաղաքի կշեռքի տակ, ձմերուկների, սեխերի, վարունգների, մածունների շուրջը, կհարցներ բոլորի գինը, հետո կանցներ մսագործի խանութի առջևով, կանգ կառներ, բոլոր մսերը աչքով դիտելուց հետո ներս կմտներ, ձեռով կտնտղեր մսերի կակուղ, յուղոտ մասերը և քայլերը կուղղեր մեյդանից դուրս, դեպի տուն։ Հետո երբ հասներ մեյդանի եզրին՝ կանգ կառներ բարձր մայթին, թևերը կհեներ ցուպին ու կարոտակեզ աչքերը կուղղեր մեյդանին ու նրա բոլոր ուտեստի պաշարներին։

Լիքն էր աշխարհքը, լի՜ բարիքով, բայց ափսոս՝ ամեն ինչ թանկ, կրակի գին։

Եվ այդ անսպառ բարիքից, այդ խնկագույն խաղողներից, երկնաբույս եմիշներից, յուղալի պանիրներից ոչ մի պատառ, ոչ մի հատիկ, ոչ մի ծեղ։

Երազ է աշխարհքը, զարմանալի, տանջալի, դաժան երազ։ Այնքան ախորժակ, այնքան բերքի առատություն և այնքան անհաս ամեն ինչ։

Ի՞նչ պիտի լինի սրա վերջը։ Մի՞թե հյուսնը տարիներով կարոտ պիտի մնա մի անգամ թեկուզ կուշտ փորով ուտելուց։

Աշխարհից դեռ չհեռացած՝ նա արդեն մեռած էր աշխարհքի համար։ Չէ՞ որ մեռելներն են, որ չեն ուտում։ Իսկ նա կենդանի էր, աչքով տեսնում էր ամեն բան։ Հենց նոր իր չորացած ձեռքով տնտղում էր ձմերուկի սառն կեղևը, կարծես ափի մեջ դեռ լմլմում է գառան մսի փափուկ ոտը... Ուրեմն աշխարհքը կա, ինքը դեռ չի մեռած։ Ի՞նչ դառավ կյանքը, մի՞թե պիտի իսկապես մեռնի առանց ուտելու...

Դառնանում էր, չարանում, կատաղում։

Եվ ինքն իրեն խոսելով տուն էր դառնում։

Արդեն երբ տան բակն էր մտնում, կինը լսում էր նրա զա-

ռանցանքը։ Աչքերն անգամ չէր ուղղում նրա կողմը՝ դիտելու նրա մուտքը։ Հազար անգամ զառանցելով տուն էր մտել, հազար անգամ ցուպը կպցրել էր սանդուղի աստիճաններին և միշտ ու հավիտյան տեսել էր նրա պղտոր աչքերը, որ չարագույժ մտքերով լարած նայում էին, բայց չէին տեսնում։

Եվ իսկապես հյուսնը այլևս չէր տեսնում ոչ մարդ, ոչ առարկա։ Ամեն ինչի մեջ նա որոնում էր իր փափագելին — ուտելիքը։

Հյուսնը կգար և կնստեր իր տեղը։ Չորս կողմ կնայեր — ոչ մի նորություն։ Կասես աշխարհքը սառել էր մնացել, կանգ էր առել նրա ճախարակը։

Կինը դռան մոտ գուլպա գործելիս կլիներ։ Եվ ահա հյուսնը պահանջ կզգար մի խոսք, մի հնչյուն արձակելու՝ թեթևացնելու համար սրտի բեռը։

— Մեյդանն էի, լավ պամիդոր էին բերել. ուզեցի մի գբրվանքա առնեմ՝ քացախով կուտեինք. անտեր մնա՝ գինը թանկ, փող չկա։

Ու թուքը կուլ կտար անհույս ու տխուր։ Կարծես անապատ ընկած ու ճամփան մոլորած էակ լիներ. գնում էր, գնում, բնակություն չկա։ Այսօր նույնն է, ինչ որ երեկ։

Լռություն էր տիրում։ Կինը չէր խոսում։ Եվ ի՞նչ խոսեր. նա էլ իր ցավի հետ էր։ Միակ աշխատողը նա էր, հազիվ էր մի քանի մանթի ճանկում տան գործով, կարով կամ լվացքով։ Եվ ինչ որ բերում էր՝ տրվում էր հացի, և գնած հացի մեծ մասը գահավիժում էր այն անդունդը, որ նրա ամուսնու փորն էր։ Ճկռում էր խեղճ կինը, հազիվ էր օրական երկու ֆունտի դրամ բերում։ Եվ այդքանը բավ համարելով՝ էլ չէր խոսում։

Ահա վերջապես օրվա հանդիսավոր և երջանիկ վայրկյանը։ Կինը գնում էր փուռը և բերում հացը։ Ու մինչ դուրս կերթար թեյ բերելու կամ մառանից մի բաժին լոբին հանելու՝ հյուսնը բորենու պես վեր կկենար, կմոտենար հացին, կսկսեր կմշտել հացը, կվերցներ, ձեռի մեջ շուռ ու մուռ կտար, կտնտղեր՝ կեղտոտ մատներով, հոտ կքաշեր և էլ իրեն զսպելու անկարող՝ կսկսեր մոլեգին ուտել, ուտել, ուտել՝ առանց ծամելու, առանց համ առնելու, խեղդվելով, կոկորդը քերելով...

Կինը ներս կմտներ, կտեսներ, ձայն չէր հանի։ Նա արդեն իրեն համարում էր գազան պահող մի էակ, որի գործը այդ էլ պի-

տի լիներ։ Երբեմն տրտնջում էր յուրովի, երբեմն ներում, մին-մին էլ կշտամբում էր, բայց ավելի շատ լռում էր և համակերպվում իր դժբախտության հետ։

Ճաշը վերջանում էր տխուր և արագ։

Եվ ահա հազիվ հացը կուլ տված՝ հյուսնը, որ մի փոքր կազդուրված էր լինում, սկսում էր խոսել.

— Հերու էս ժամանակ մի փութ սոխ ունեինք։— Կամ.

— Իրիկվան համար լոբուց պահեցի՞ր...

— Ի՞նչ կար, որ ինչ պահեի,— չարանում էր կինը և ամանները հավաքում։

Բայց այդ բոլորը տեղի էր ունենում դարձյալ իբրև ծես և ոչինչ չէր փոխում մշտական վիճակից։

Վրա հասավ աշունքը՝ իր հոգսերով, սպասումներով։

Հյուսնը նստած էր պատշգամի ճաղերի մոտ և դունչը պատշգամի եզրին դրած դիտում էր դիմացի տան բակի անցուդարձը։ Հարևան խանութպանը սայլի փայտ էր առել և հսկում էր, որ սայլը պարպվի։ Մի ալևոր, կարմրաթուշ սղոցպան եռանդով սղոցում էր և ռիթմով նվում։ Մի զույգ առողջ եզներ՝ մեկը պառկած, մյուսը կանգնած որոճում էին նահապետական դանդաղությամբ։ Ինչ-որ խոտի և փայտի հոտ էր ընկել փողոցը։

Օրը ջինջ էր, արևի լույսը կարմիր ձվածեղ։ Նայում էր հյուսնը այդ բոլորին և տանջվում ախորժակից։ Հիշեց երանությամբ այն օրերը, երբ ինքն էլ ձմեռվա պաշար էր տեսնում. հիշեց իբրև մանկություն, որ քաղցր է, որ անդառնալի է։

Սղոցպանը քրտնամխեց և աշխուժի եկավ։ Սղոցեց մի ժամ և ապա դադարեց։ Հանեց տոպրակից գյուղի կարմիր բոքոն, կաշվե մատներով կոտրեց, դրեց բերանը և սկսեց արագ լոլմել։ Նայում էր հյուսնը և մտովի ուտում էր սղոցպանի հետ։ Հետո հուսահատ նայեց եզներին, որ նույնպես ծամում էին։ Արդեն հյուսնի մտքերը օր-գիշեր ծամելու վրա էին, այդ տեսարանը եկավ և մոլեգնեց նրա երևակայությունը։ Ամբողջ աշխարհը նրա շուրջը ծամում էր. ամեն ձայն, ամեն շարժում, ամեն իր միայն ծամոց էին այդ ժամին։ Հյուսնի աչքը եզներից մեկի վրա էր, որ պառկելով ավելի ցցուն էր դարձրել իր ետևի ոտի բուդը։ Հյուսնը իր մտքում մաշկում էր այդ բուդը, կտրում էր եզան միսը և գցում ամանների մեջ, եփում էր և ուտում, ուտում, ուտում։

Փրփրել էր, կատաղել և աչքերը արցունքով լցվել։ Նա այդ բոպեին մի իսկական գազան էր, մի գրգռված ստամոքս և ուրիշ ոչինչ։

Նստած էր այդպես մինչև վերջ։ Հետո, երբ սայլը գնաց, սղոցպանը հետևեց նրան և փայտը կրվեց ներս, հյուսնը մի դող զգաց։ Պարզ արևի տակ աշնան գաղտուկ ցուրտ էր սողոսկում, որը դիպավ նրան։ Ներս գնաց և փաթաթվեց իր հին վերարկուի մեջ։

Միքանի օր անց նա արդեն լուրջ հիվանդ էր։ Կինը, որ սպասում էր այդ վիճակը ևս, համակերպ կատարում էր իր վերջին պարտքը։ Հյուսնը մածնեսպաս ուզեց և ուզեց կյանք հայցողի պես, բայց ոչ մի հնար չեղավ նրան արժանացնելու այդ երկնային ապուրին։ Դրա տեղ կինը նրան սառը ջուր էր տալիս՝ մեջը հինգ հատ չոր հոն, որ բավական կոտրում էր նրա ծարավը։

Բայց հիվանդը հրամանով խնդրում էր մի ման մածնեսպաս։ Ամբողջ առավոտը խոսեց, սպասեց — ոչինչ չեղավ։

Անցավ ճաշը մի կտոր սև հացով. հիվանդը փորձեց ուտել, բայց կուլ չգնաց։

Երեկոյան դեմ հարևանի կինը նկատեց, որ հյուսնի կինը մեծ մտահոգության մեջ էր։ Մոտեցավ, հարցուփորձ արավ և իմացավ բանի էությունը։ Գութի եկավ և իր տղին ղրկեց կաթնատուն, մածուն բերելու։ Մածուն չկար։ Հետաձգեցին առավոտյան։

Բայց հյուսնը գիշերը ծանրացավ։ Զառանցում էր տաքության մեջ։ Առաջին զառանցը, երբ ուտեստի վրա չէր խոսում։ Սաստիկ ջերմի մեջ հարցրեց կնոջը, թե ուր տարան ինչ-որ գաղթականների։ Կինը չիմացավ, թե ինչ գաղթականներ էին և ուր պիտի տանեին։ Թողեց անպատասխան։ Հիվանդը աչքը բաց արեց, նայեց կնոջը, աչքերը սևեռեց նրան և հարցրեց. «Ապա դու ի՞նչ պիտի ուտես»։ Կինը կարծեց թե մածնեսպասին է մնում։

— Կբերեն, կբերեն, սպասիր.— հանգստացրեց հյուսնին։

— Դո՞ւ ինչ պիտի ուտես ինձնից հետո,— հարցրեց կրկին հյուսնը՝ ակնարկելով իր մահը։

— Է՛, ջահանդամը, եսի՞մ,— քրթմնջաց կինը տխուր ձայնով։

Այդ միջոցին ներս մտավ հարևանի կինը, մի ման մածնեսպասով, որ դրեց սեղանին ու քննող աչքը սևեռեց հիվանդի վրա։

— Մածնեսպաս է բերել, կուտե՞ս,— հարցրեց կինը հիվանդին։

— Կեր, ախպեր, կլավանաս։

— Հը՞,— հարցրեց հիվանդը ջերմի մեջ և աչքերը բաց արեց։

Սպասը մոտ տարան և մի գդալ վերցնելով՝ մոտեցրին հիվանդի շրթունքներին։ Հիվանդը բնազդորեն զգաց, որ իրեն ուտեցնում են. շրթունքները չփչփացրեց, բայց չկերավ։ Ախորժակ չկար։

Առաջի՞ն անգամ կյանքի մեջ։ Փոխվեց, գնաց այն ախորժակը, որ երբեմն աշխատավոր օրգանիզմի հաճույքն էր, հետո նրա պատիժը։

Չկերավ։ Տխուր նայեց իր կնոջը, հարևանուհուն և տնքաց։

-- Վնաս չունի, հետո.— ասավ հարևանի կինը և ամանը տրվեց հյուսնի կնոջը։

Զգացվեց սա։ Եվ տխուր նայելով սպասին, հետո մեռնողին՝ սպասը տարավ պահարանը։

Եվ երբ սպասը պահելու համար բաց արեց պահարանը, ինչ-որ գթաշարժում զգաց և սիրտը ծակեց։ Քանի՞ անգամ բացվել ու խփվել էր այդ պահարանը, քանի՞ տեսակ բարիքներ պահվել այնտեղ, քանի՞ բարեկամի աչքն էր ուրախացել այդ բարիքները հանելիս։ Եվ քանի՞ անգամ հյուսնը վերջերս բաց ու խուփ արավ երբեմնի առատ այդ կյանքի պահարանը։

Դեռ չէր տեղավորել ամանը, որ հարևանի կինը ինչ-որ շշընջաց և նրան ձեռով արավ։

Հիվանդը մեռնում էր։

Ձեռով արավ. բան էր ուզում ասել։

Կոկորդը կծկումների ու շնչառության մեջ ինչ-որ լփրտեց։

— Թե էսպես պիտի ըլեր իմ մեռնելս, ես հոժար եմ,— ասաց հիվանդը։

Եվ մեռավ հեշտ, անսպասելի արագ։

Սենյակում տիրեց դագաղի լռություն։

Հետո՞. միայն սա՞։ Կինը սպասեց, որ մի բան փոխվի։ Բայց ոչինչ չփոխվեց։ Նայեց իր դեմը և աչքին ընկավ՝ մի կողմ սավամահ հյուսնի բաց ու սառած աչքերը և մյուս կողմ պահարանը, որ նույնպես բաց ու անշարժ նայում էր իրեն շարչարողի հետ։

1915

ԽՈՒԺԱՆԻ ՇՈՒՆԸ

Ամեն քթից մի-մի կղպեկ, ամեն մռութից մի կտոր հաց, ամեն քիմքից մի կաթլետի պատառ՝ վզակոթին մի փոքր վրիպած բռունցքի հավելվածով, որ իբրև վերադիր դեսերտ հասցնել է ուզում դռներով ելումուտ անող ճաշարանի ծառայողը — և օր է՝ մթնում գնում է Հայրոյի համար։

Ի՞նչ է եղել Հայրոյի անցյալը։— Մշուշ։ Ոչինչ չի հիշում։ Երազի պես միտն է իր հայրը էշմիածնի լճափին, ծառի տակ, անբնական դիրքով պառկած։ Անշարժ ու ձիգ։ Հետո միայն, մայրը հիշեցնելով նրան այդ դեպքը՝ բացատրում էր, թե հայրը մեռած էր ծառի տակ և տանող չկար թաղելու։ «Մի՛ լա,— ասում էր մայրը,— թե 'չէ՝ դու էլ կմեռնես»։ Մորը կորցրեց Սարդարապատում։ Նա էլ սովից մեռավ։

Ուրիշ ոչինչ։

Մնացածը իր կյանքն էր, իր տասներկու տարեկան կյանքը ընության գահլիճում՝ դաշտում, փողոցներում, այգիների պատերի տակ, խանութների փեղկերի մեջ... Հայրոն մնաց մենակ, իր բախտին։— Ընկերներ շատ ունեցավ. սրանք մեռան, մեռան։ Նոր ընկերներ ունեցավ, սրանք էլ մեռան։ Ինքն էլ շատ հիվանդացավ, սով ու տանջանք քաշեց, շատ անգամ գիշերները պառկում էր այն մտքով, թե պիտի մեռնի։ Առավոտն արթնանում էր՝ որ չի մեռել։

Վերջն էլ տեսավ — որ իսկի չի մեռնում։ Երեսը դեմ արեց ու սկսեց ապրել։

Կյանքի կրունկը որքան կոխ տվեց նրան, այնքան պնդվեց նա, կոփվեց փողոցի սև, բայց երեսը պինդ ցեխի նման։ Քանի գնաց պնդացավ, կարծրացավ ու մնաց։

Մենակ չէ Հայրոն։ Հին ընկերներ ունի. Մքեն, Դավոն, Խեչոն, Անդրասը, Հակոն, որոնց հետ սերտ ընկեր է։ Նրանք ընկեր դառան շատ նեղ օրերին։ Ցուրտը, սովը, հիվանդությունը կուլ

բերեց նրանց ու մոտեցրեց։ Այնքան իրար հետ մուրացին, փախցրին, գողացան, այնքան վտանգվեցին միասին, այնքան գիշերվա ցրտին կիպ կպան իրար, գողացին ու մի կերպ իրար տաքացրին, որ կապվեցին իրար հետ։

Քաղաքում շատ կային խմբեր, որ թաղերը բաժանել էին ազդեցության գոտիների։ Ամեն մի գոտի տուրքադրված էր։ Ամենքից պահանջում էին։

Առաջ թոցնում էին։ Իսկ սովի ժամանակ ուղղակի խլում։ Վերջը թոցնելը դուր չեկավ Հայրոյին։ Պահանջելու էլ տեղը կար։ Հայրոն ուրախությամբ ճաշարանների ու փոների առջև կանգնած սայլերից փայտը կրում էր ներս։ Ջուր բերում, արկղներ էր տեղափոխում խանութ-խանութ։ Շատ անգամ էլ սաստիկ զբաղված մի ծառայողի համար ծխախոտ էր բերում, փող էր մանրում։ Հավատում էին։ Հայրոյի ընկերները սիրում էին նրան շիտակության համար, և նա նրանց խրատում էր. հանդիմանում։

Հայրոն ասավ՝ պրծավ, պետք է գողացածը ետ տանել։

Մի երկու անգամ մանկական ապաստարան տարան։ Առավոտը հաց, ճաշին մի ման կերակուր, երեկոյան՝ քնիր։ Մի՛ խոսի, մի՛ վազի — քունը տարավ, ձանձրացավ։ Ելկեց գնաց իր բանին։

Հայրոն իր խմբով ման էր գալիս ամբողջ քաղաքը։ Ղանթարը, լավաշների շարքը, մսագործների գալերեան, բանկոոպի ճաշարանների դռները։ Ամեն տեղ կոխում էր իր մրոտ քիթը, գիտեր ամեն ինչ, դիտում էր, քննում։ Գիտեր ով որտեղ է առուտուր անում, ով ում ծանոթն է, ով ում ընկերն է, սա ինչ գործի է։ Ամենքին գցել էր ատամի տակ. գիտեր բնավորությունները — կոշտը, փափուկը, ժլատը, առատը։ Գիտեր ում հետ ե՛րբ չի կարելի խոսել, ե՛րբ կարելի է համարձակ պահանջել։

Հայրոն իր խմբի ղեկավարն էր, նրա թույլ անդամների պաշտպանը։ «Տան» հայրը։

Մի շուն էր ճարել։ Ավելի շուտ՝ շունն էր իրեն ճարել Զանգվի ափին։ Սատկում էր աղբի մեջ։ Հայրոն վերցրեց բերեց քաղաք, քսեց մրոտ երեսին, գուրգուրեց, խնամեց, և շունը ապրեց, մեծացավ։ Այնուհետև միշտ հետևեց ման էր գալիս։ Ընտանիքի սիրելին էր, նրա նվիրապետական սանդուղքի մեջ թեև վերջին, բայց

ոչ նվազ մտերիմը։ Շանը մյուս խմբերն էլ էին ճանաչում. և Հայրոյին սիրելով, սիրում էին և նրա շանը։

Զալոն՝ շունը, վազում էր հետևներից փողոցից փողոց և մասնակցում նրանց արշավանքներին։ Հայրոն իբրև ընտանիքի մեծը՝ շունը բերելով տուն՝ հոգսերը շատացրեց։ Եվ գիշերները, երբ ցուրտը փախցնում էր խուժանների քունը՝ Հայրոն պատմում կամ բացատրում էր շատ կենսական բաներ, որ նորեկ խուժանը պիտի իմանար։ Միլիցիոները բարձր է գոռում — ասել է դա նշան է, թե չի դիպչելու, պաշտոնի համար է գոռում։ Ճաշարանի ծառայողը հարձակվում է վրադ՝ մի վախենա, եթե ճաշարանում մարդ շատ կա — չի խփի։ Մասնավոր խանութպանի վրա բարձր գոռա — բալշևիկ չէ։ Նրան բալշևիկները չեն սիրում։ Մեկ կխփի, երկուսը խփի։

Ամառը անցավ երազի պես։ Աչքդ խփեցիր բացիր՝ ամառ չկա։ Աշուն։ Հետո էլ ձմեռ։ Բայց այս անգամ ձմեռը խիստ եկավ ու նստեց։ Անվերապահ, անզիջող։ Հինգ ամիս ավել կամ պակաս ցուրտ։ Սա էլ միլիցիոներ չէ, չի խնայի։ Պետք էր դիմադրել։ Բայց ինչպե՞ս։ Մի տոպրակ — ահա տունդ, ահա ապաստանդ։

Գիշերները, այդ դաժան գիշերները, կարելի էր տեսնել Հայրոյի ընտանիքի անդամներին գունդուկծիկ, իրար փաթաթված, տոպրակների տակ քնած։ Կանցներ մի անցորդ, կնայեր, գլուխը կշարժեր, բայց միշտ կգնար... Դրանից ավելի խուժանին չէր մոտենա։ Խուժանը գիտեր այդ։ Եվ ինչպես խանութի առջևի մայթը կպած էր գետնին, և բնական էր, որ այդ այդպես էլ պիտի լինի՝ այնպես էլ խուժանը պիտի կպած քներ այդ մայթին։

— Էս ի՞նչ եք անում էստեղ,— կհարցներ կողմնակի մարդը։

Պատասխան չկա։

Կամ քնած էին, կամ արհամարհում էին։

Միայն Զալոն էր, որ պառկած լինելով Հայրոյի գլխավերևը՝ գլուխը դուրս էր հանում տոպրակի տակից և հաչում խուժանի պատասխանը։ Միջադեպը դրանով էլ վերջանում էր։

Ցմեռվա մեջ, ցրտից էր թե ինչից, շները քաղաքում սկսեցին կատաղել։ Գործկոմից մարդիկ եկան և սկսեցին հավաքել շներին ու թունավորել։

Հայրոն, որ մի քանի անգամ տեսել էր շներին թունավորելը՝ սաստիկ անհանգստացավ Զալոյի համար։

— Անդրա՞ս։

— Ի՞նչ է։

— Զալոյին կդեզեն։

— Վո՞վ։

— Միլիցան։

— Զոռո՞վ։

— Զոռով կթարկե՞մ, տո՛։ Համա լավ է՝ պահենք։

— Պահենք։ Վի՞ր տեղ։

— Վիր տե՞ղ։ Դու մնա տուն։ Որ մոտենան՝ մտի պատվալի գուռ։ Ես երթամ հաց բերեմ։

— Ջուշանաս։ Ես էլ անոթի եմ։

— Ուշանամ՝ չուշանամ։ Զալոն քեզ պահ կտամ, դու գիտես, հա։

— Հաց կբերե՞ս։

— Ես ի՞նչ գիտեմ։

Գնաց մեյդան։ Մտավ ղանթարը։ Հոտվրտաց դես-դեն։ Ցուրտը նոսր էր պահում մեյդանը։ Մարդ չկար շատ։ Խանութպանները թաթմանները դնում էին ականջներին և պար գալիս։ Բայց և գաժանացել էին։

Ոչ մի կտոր հաց։ Հայրոն սրթսրթաց մի քիչ ու հեռացավ։ Հեռվում մի ինչ-որ բազմություն էր հավաքվել։ Ականջները սրեց։ Հացը մոռացավ — սա ավելի կարևոր էր։ Հետաքրքիր դեպքի համար խուժանը ամեն ինչ կտա։ Վազեց։

Գլուխը կոխելով թևքերի արանքից՝ նայեց։

Մի շուն էր ընկած։ Թունավորել էին, և մարդիկ նայում էին։ Գեղեցիկ, շագանակագույն շուն էր։ Ընկած մի կողքի վրա՝ լեզուն կախ գցած՝ արագ հևում էր։ Երբեմն էլ աչքերը ժպտալու պես անելով՝ հանկարծ ոտքերը շռում էր՝ու ցնցվում ու անիվի պես պտտվում իր առանցքի շուրջը։ Ու մնում։

Մի դպրոցական երեխա իր գալոշը մոտեցրեց շան պոչին։

— Մի՛ ձեռ տա,— մռայլ խնթեց նրան մի կարմիրբանակային ու հեռացավ։

Նայեց Հայրոն և ինքն էլ մռայլվեց։

— Էս ո՞ւմ շունն է,— հարցրեց նա ինքն իրեն և հասկացավ, թե ինչքան գժվար է սատկում շունը։

Մոտեցավ Զալոյի մասին։ Գոհ էր, որ նրան ձեռք չեն տվել։

Մեյդանում բան չգտնելով՝ անցավ մսագործների շարքը, հացթուխների կողմը։

Մի կերպով ճանկեց մի կտոր հաց ու վազեց տուն։

Մոտենալիս նկատեց, որ մայթի վրա ոչ Անդրասն էր երևում, ոչ շունը։

— Կա չկա շանը տարել են,— մտածեց ու վրա ընկավ պատվալի դռան։

Շունը չկար։ Անդրասը նույնպես։

Հայրոն անհանգստացավ, վազեց դեպի բուլվար։ Չկար։ Դիմեց սրան-նրան, ոչ մի խուժան չկարողացավ հաստատ բան ասել։ Բայց խոսում էին, որ այդ օրը բավական շուն են թունավորել։

Կեսօրից անց էր, և Հայրոն քրտնքի մեջ կոքած, ման էր գալիս ողջ քաղաքը։

Մոտեցավ ճաշարանին։ Ընկերները, որ վաղուց եկել հավաքվել էին դռանը՝ ձայն տվին.

— «Ընկեր» Հայրո, ճաշը պատրաստ է, համեցեք։

— Ճաշ է, ճաշ, ճա՜՜՜շ... — կրկնեցին մյուսները ոտքերի վրա օրորվելով և մատները բերաններին փչելով։

Հայրոն շնչասպառ միայն հևաց։

— Շունը տեսա՞ք, շունը։

— Դեղե՞լ են, վո՞վ է դեղել, տո՛։

— Չէ, ի՞նչ կա։

— Շունը դեղել են։

— Միլիցան։

— Է, է՞... հասե՛ք, տո։

Ու պուկ եկան։

— Ո՞րտեղ ա։

— Ես գինա՞մ որտեղ ա։

Առաջ ընկավ։ Գնում է կրակ կտրած, աչքերը սաստիկ մտահոգ, հևալով ու ճաքճքած մերկ ոտքերի ստվերները անխոտոր կոխելով ցեխի, ձյան ու ջրերի մեջ։

Միայն թե Զալոյին ազատի...

— Է, լավ, վո՞վ է տեսել, որ շունը միլիցան է տարել։

— Արի՛ք, արի՛ք։ Վա՛յ, վա՛յ, վա՛յ... վա՛յ Անդրաս, քո՛ռ-

նար քու մամու երկու լուս, չիրցար մի շուն պահե։ Ես հիմի շանը ո՞րտեղ գտնեմ...

Չգիտե լա՞, թե բարկանա։ Խումբը երկար ժամանակ պտըտվում էր փողոցներում։ Բայց ոչ Անդրասը կար, ոչ Զալոն։

— Վա՜յ քու տունը չավերի, Հայրո,— գոռում է հետևից Մքեն շնչասպառ,— էդ շունը դու հիմա՞լ բաց թողիր։

— Ե՞ս բաց թողի, տո։ Տվի Անդրասին, թե պահի՝ ես երթամ ճաշարան հաց բերեմ «տուն»։ Ինքն էլ չկա, շունն էլ չկա։

— Խելքի՜ պուտուկ, Անդրասի ումուտով Զալակը թողիր գացիր «գործի՞»։

— Հա՜, հա՜, է՜դ ասա։ Ես իմ խելքին ի՞նչ ասեմ։ Անդրասի հես. մարդ «գո՞րծ» կբռնի,— ասում է ու քիթը խպշտում է Հայրոն։

— Դպրոցի տղաները չտանե՞ն կորցնեն, յա դեղել տան,— կասկածեց Խչոն։

— Ի՞նչ, շուն կորցնե՞ն, դեղել տա՞ն,— խեթեց Հայրոն,— բերաննե՞ր կճոռթեմ երկու գազ։ Զալոն դեղե՞ն։ Գետնի տակ քառասուն գազ խորեն՝ կհանեմ։

— Տուն չըլի՞ գացած, տղա՜։

— Չէ՜։

— Վա՜յ թե գացած եղնի։ Հայրո՜, քելե տեսնենք։

— Հը՞,— ու Հայրոն կասկածով շուրթերն է կրծում։

Կանգնել են փողոցի անկյունում, խորհուրդ են անում։

Անցորդները չեն հասկանում պատճառը, նայում են, տարակուսում, թե խուժաններն ինչ բանի են։ Անկյունում նստած էր Դավոն։ Մոտեցան նրան, հայտնեցին։

— Բան չեն անի, ձեռ չեն տա շանը,— մխիթարում էր Դավոն։— Կպահեն, կտան։

— Կպահե՞ն... խուժանի շունը վո՞վ կպահի, շա՜շ։

— Էլի՜, էլի՜, էրթանք գտնենք։

Դավոն էլ վեր կացավ։

Պոստի փողոցի անկյունում մարդիկ խռնվել էին։ Խուժանները տեսան։

— Հայրո՜, էն ի՞նչ ա։

Հայրոն պատասխանի տեղ՝ վազեց։

Խուժանները ոտաբոբիկ, ոմանք էլ ծանր, պատռոտած կոշիկները քոթքոթացնելով ընկան նրա հետևը։

Երբ մոտեցան՝ տեսան Անդրասին, որ դիմադրում էր մի մարդու, որը ըստ երևույթին թունավորող բուժակն էր։

Հայրոն ճղեց հավաքվածներին ու գնդակի պես խրվեց նրանց արանքը։ Թևքերի ու մեջքերի արանքից մտիկ տվեց և հանկարծ աչքովն ընկավ Զալոն, որին մի խումբ խուժաններ շրջապատել, պաշտպանում էին։

Հայրոյին տեսան թե չէ.

— Հայրո՜, հա՜սի, Զալակին դեղեցին։

Հայրոն քարի պես նետվեց նրանց կողմը, հափռեց շանը և մյուս կողմից ճղելով բազմությունը՝ սկսեց վազել։

Թունավորող բուժակն ու միլիցիոներները ընկան հետևից։

— Կաղնի՜, կաղնի՜։

Հայրոն ետ չէր նայում։

Խուժանները շրջապատեցին միլիցիոներին ու կախվեցին փեշերից։

Բուժակն սկսեց գոռալ, բայց տեսնելով միլիցիոների փեշերից կախված խուժանների ճիգը՝ ծիծաղն եկավ ու ձեռը թաքի տվեց։

— Թո՜ղ, բան չունե՞ս։ Թե շունը տեր ունի՝ թող մնա։

Միլիցիոները չէր ուզում զիջել։ Թափ տվեց իր փեշին կպած խուժաններին ու փորձեց վազել։ Բայց ցեխը, Հայրոյի հեռավորությունը նրան զինաթափ արին, նա էլ զիջեց ու բաց թողեց «գործը»։

Բազմությունը, որ սկզբում հոհոում էր այս տեսարանից՝ սկսեց կամաց-կամաց ցրվել։

Խուժանները ցեխը ճպճպացնելով վազ տվին Հայրոյի կողմը։

Հայրոն «տուն» էր հասել։

Նստել էր մայթին, շանը գրկել և նրա գլուխը թևի տակն առած՝ շնչասպառ հևում էր։ Հոգնած էր, քրտնքի մեջ կորած, և կաթիլները նրա երեսի մուրը լվալով, գլորվում էին շան վզին։

Նա հոգածու, գոհունակ աչքերով նայում էր շուրջը և երբեմն կռանում, թուշը քսում շան ականջին։

Խուժաններն սկսեցին հանդիմանել Անդրասին, թե ինչպես է բաց թողել շանը։

Անդրասը արգարանում էր.

— Ես իդա տեղ մեզք չունիմ. շունը փախավ, ես էլ ընկա հետևը...

Հայրոն աչքերը չռեց վրան.

— Սո՛ւս, հոգիդ մի՛ սեցուր։

— Տնավեր,— մեջ ընկան մյուսները,— մկա մարդ շունը կը-թորկա ընկնի միլիցու ձե՞ռ։ Շունը որ դեղեին վո՞վ էր տերը։

Անդրասը չէր զիջում։

— Բե՛ր, բե՛ր, շատ մի՛ խոսի, բե՛ր չուլ կապե շան վիզ՝ չտանեն,— վերջացրեց Հայրոն։

Անդրասը դես-դեն մտիկ տվեց՝ փալաս չգտավ։

Այն ժամանակ Հայրոն ատամով բռնեց տոպրակի փեշը, պատռեց մի ծվեն և ոլորելով կապեց Ջալոյի վզին։ Ու ծիծաղեց.

— Էս էլ քեզ խուժանի շուն։

Հետո չորս կողմը նայեց։ Հոգնած էր, չարչարված, սևված։ Մտահոգվեց։ Պետք է մի բան գտնել շան և իրենց համար։ Կարգադրեց, որ ինքը մնա՝ շանը պահի, մյուսները գնան հաց բերելու։

Խուժանները հեռացան։ Հայրոն մնաց տանը — այսինքն՝ ամեն կողմից բաց մայթի վրա, որի մի կողմը, պատի մեջ նկուղի սանդուղք կար։ Ահա այնտեղ մտավ նա, և լուռ, մտախոհ սպասում էր թեք գցած իր հովանու տակ մնացած շանը, որի պաշտպանը միայն ինքն էր — անտուն խուժանը։

1919 թ.

ԽԱՆՈՒԹՊԱՆ

Մի խավար ներքնատուն. դա էր նրա խանութը։ Նրա աշխարհը՝ ավելի շուտ։ Բայց ի՞նչ ներքնատուն. ծակո՛ւտ, մկան բուն, որի բերնի շուրջը մկան դուրս ածած քարի, հողի տեղ կտեսնեիր մանր, կոտրած տաշտեր, ժանգոտ թիթեղե ամաններ, փտած պանտա, մգլած մրգեր, կեղտոտ շիր... Մի քարե կոտրած սանդուխ իջնում էր դեպի այդ փոքրիկ դժոխքը։

Ապրա՞նք — անունը տալ չարժե, վարնո՞ց, կեղտո՞տ, տեսակները անհարիր, անսպասելի... զարմանալի տաղանդ ուներ գտնել մրգերի ստորագույն տեսակը, կակալների կծվածը, խաղողի քացախածը, նկուղից-նկուղ ճամփորդած, հազար խուրջին տեսած, կեղտից սևացած չուրչխելներ, հարյուր անգամ տնտղած, մատնահարած հացեր, երշիկներ՝ այնքա՞ն կասկածելի իրենց ծագումով, որ ոչ մի կասկած չէին թողնում։

Ցերեկը դռնից դեպի ցած նայողը մթան մեջ հազիվ կնշմարեր իրեն, խանութպանին։ Հիսունից անց էր վաղուց, դեղնած մումիա, չոր տառեխ։ Տխուր աղվեսի պես դանդաղ վեր կսողար սանդուղներից, մագաղաթի ճաղատ գլուխը դուրս կհաներ ծակուտից, մի եքկու բերան տխուր աչք կածեր փողոցը, կվերցներ մի փտած տանձ, գոգնոցով կկեղտոտեր, կոզինաղի կտորները ավելի կմանրացներ և քիթը խպշտելով կիջներ ցած և քացի տալով քոսոտ կատվին՝ առաջ կքաշեր մրգերի արկղը՝ ջոկելու համար ամենամգլածը, վերջապես դուրս գցելու վճռով։

Բազմաթիվ արկղներ, կոտրած տաշտեր ուներ, որոնց մեջ տեղոցտեղ էր անում իր ապրանքների տեսակները, տեսակների տեսակները, հոտածների զանազանները, որոնք կլասիկ աստիճանավորումով նախ ընկնում էին մի փոքր նվազ փտածների տաշտը, հետո ավելի մգլածների և վերջը արդեն «ոստիկանական» տեսա-

կը, որի վրա երկար նայում էր տխուր ու բարկացած, վերդիր էր անում, չուզելով հաշտվել արկղը գցելու հետ։

Մի ծանր, հավիտենական հոտ կար նրա խանութում՝ պանրի՞ ասես, թթուների՞, տեղաշորերի՞, կեղտոտ փալասների՞. մի կատարյալ նեխարան։ Փտում էին դազգյահն ու դարակները, փտում էին առաստաղի մրկված գերանները, փտում էր կարծես և ինքը, իր դեղնած, հետո սևացած արխալուղով, որի օձիքը, մեջքն ու թևքերը պլպլում էին՝ ինչպես ֆուրգոնի ձիու սարք։

Թթված, դժգոհ էր նրա դեմքը։ Ինչի՞ց, արդյոք, գուշակելը դժվար էր։ Գործը վատ չէր գնում։ Նա էր միակ մատակարարը թաղի աղքատ, ավուր հացի կարոտ ընտանիքների, տանից մի քանի կոպեկ գողացած երեխաների, սովից մեղրամոմ դառած գաղթական պատանիների, որ ծերերի պես երերալով՝ գալիս կանգ էին առնում նրա ծակուռի առջև և աշխատում ողոքել նրա սիրտը, որ էժան ծախե մի որևէ փտած խնձոր։ Գաղթականը՝ ավելի՞ էժան, մի քանի կոպեկ էժան, իսկ նա՝ ավելի՞ թանկ, գոնե մի կոպեկ թանկ։ Համաձայնություն չէր լինում, և պատանին հեռանում էր թոնթորալով, իսկ նա մոայլ՝ նայում էր գետնին։ Մի տանձի ճեղ, ճաթի մի փշուր, մի բուռ վառած հացի քերիչք անգամ չէր տալիս։ Ամեն ինչ ծախում էր միայն,— հենց այդ մի ճեղ տանձը, ճաթի մի փշուրը, վառված հացի քերիչքը։

Չէր խոսում, քրթմնջում էր. չէր նայում, որոնում էր, դանդաղ, աչքերը գետնին, ի՞նչ, ո՞ւմ, ո՞վ գիտե, և այդ բոլորը չարացած, ժանգոտ, տխուր։

Կքաշեր փողի դախլը՝ փողերը հաշվելու, ստուգելու, վերըստուգելու... Հետո աչքերը կգցեր գետնին և մի բան հիշել ուզողի պես՝ կսառեր կմնար, ապա դախլը կփակեր, հետո ձեռները թևքերը կոխած՝ ժամերով կկանգներ, կթթվեր։

Խռով էր աշխարհի հետ... կա՞ր պատճառ այդպես խռով ապրելու, պա՞րզ էր իր համար, թե ինչո՞ւ էր խռով. բայց նրա գըլխում կոտրած ջաղացի պես բանում էր մի բարդ հաշիվ, որ մի բոպե չէր դադարում։ Նա հաշվում էր ամեն մի փուճ ընկույզի, ամեն կտոր մաստակի առքը, ծախը և օգուտը, հետևում էր ամեն մի կոպեկի կյանքին, թե որի համար եկավ, որի համար ում ձեռքը անցավ նորից, և հետո ի՞նչ կլինի ամեն մի բողկի, կարտոֆիլի, փչացած կեռասի բախտը։ Նա մարդ չէր տեսնում իր առջև.

նրա տխուր, ճպռոտ աչքերը միայն ձեռներն էին տեսնում և ձեռների մեջ դրամներ։ Մարդկանց մտապատկերը վաղուց հալվել էր նրա երևակայության առջև և նրա պատկերացումը Ռյոնտգենի ճառագայթի պես անհետացնում էր մարդը և գրպանի մետաղն էր նկարում նրա աչքերի առջև։ Կոպեկները մարդիկ էին և մարդիկ կոպեկներ։ Ահա այդ դրամներն էին, որ ուշանում էին։ Ուշանում էին և ջղայնացնում նրան, չէին հասկանում նրա հաշիվները, գալիս էին, բայց նորից գնում... Եվ կարծես մարդկանց վրա չարացած էր նրա համար, որ ուշանում էին իր փողերը բերելու և նրան ստիպում սպասել, հսկել, ճգնել...

Եվ երբ թաղի մի աղքատ երեխա տոուզ ու կեղտոտ ափի մեջ կոպեկանոցը սեղմած՝ ներս էր մտնում ծակուռը և իր ուրախ հեվոցը գցում այդ մռայլ դագաղի մեջ՝ ժպտագին սպասելով մի մատնոց սեմիչկին, որ նա՝, խանութպանը, կրկին ու կրկին դատարկում, լցնում, չափում էր մի հատիկ անգամ ավել չտալու համար, կարծես այդ երեխան փախցրած լիներ խանութպանի կոպեկը և հիմա բերեց։ Խանութպանը դեմ էր անում սեմիչկան և խուզարկուի պես, ժանգոտ նեղսրտում.

— Ահա՛, ա՛ռ, ո՞ւր է կոպեկը։

Երեխան բաց էր անում քրտնած բուռը, և խանութպանը կարծես իր կոպեկը տեսնելով, ետ էր խլում և փնթփնթալով գցում դախլը։

Ո՞ւր էր տեղավորված նրա ընտանիքը այդ ծակուռի մեջ։ Դազգյահի ետև մի տախտակորմ կար։ Պետք է, որ այնտեղ լիներ։ Բայց ի՞նչպես էր տեղավորվել այնտեղ, ո՞ւր էր տեղավորվել։ Կարելի էր ենթադրել, գուշակել մի բան, բայց հասկանալու հնար չկար, այնքան նեղվածք էր այնտեղ, այդ բազմազան, անպետք, անթիվ իրերի բավիղում։ Պատերը քանդված էին, հատակը հող, ցուրտ, խոնավ։

Խանութը ավելի էր մռայլվում, երբ մխոտ նավթի ճրագը հիստոտելով պատ ու ապրանք՝ ժլատորեն լուսավորում էր ծակուռը, նրա ներսը, անկյունները։

Ահա նստած է ինքը իր ընտանիքի հետ։ Իր կինն էլ էր մռայլ, հողագույն, ճիլո, մի ծծեր, երեխա գրկին, նվում էր կատվի ձագի պես։

Մի տասներկու տարեկան կաղ աղջիկ ուներ, որ նստած էր լի-

նում դռան մոտ. չա՜ր, ագա՜հ, մեծացա՜ծ-փոքրացած։ Զրմփրմփացնում էր բերնի ծամոնը և դրանով մի փոքր խանգարում ծակուռի տխուր լռությունը։ Հոտած օ՜դ, քուրտ նկուղ, փտող ապրանքնե՜ր...

Եվ փտո՜ղ կյանք...

Ոչ ոք չէր խոսում, չէր շարժվում, կարծես ագավնիների էին, ագահանք նստած։

Նավթի ճրագը մխում էր խանութի ետնդուղների վրա և հիսը նստեցնում փտած ապրանքներին։ Առուտուր չկար։ Ներսը դազգյահը մոտ նստած էին ինքը՝ կեղտո՜տ, բաշլիքը գլխին կապած, կինը իր տեղը, աղջիկը՝ իր, մինչև անգամ քոսոտ հիվանդ կատվաձագը իր տեղը։

Երեխան քնած էր։

Տաքիներ տնցել էին, և ոչինչ նոր բան չէր պատահել այդ ներքնատանը։ Հիմա էլ այնպես։

Դուրսը շարժում էր. մարդիկ գնում էին եկեղեցի, բայց դա չէր վերաբերում նրանց — իրրև բաներ՝ ապրող աշխարհի, որից վտղուց նրանք բաժանված իջել էին իրենց մութ գուբը՝ եգիպտական մումիաների նման։

Ահա մի երեխա թաղի չքավոր ընտանիքից մոտեցավ ծակուռի դռան և կանգնեց։

Խանութպանը վեր չնայեց։

— Ի՞նչ ես ուզում,— ժանգոտվեց աղջիկը՝ տակից վեր նայելով երեխային։

Երեխան չպատասխանեց։ Միայն տատանվելով ներս իջավ և կանգնելով խանութպանի առջև, աչքերը գետնին մրմնջաց.

— Մերս ասավ՝ մի գրվանքա ճաթ տաս, կոտորվում ենք սովից...

— Բա փողն ո՞ւր ա՝ — շտապեցավ աղջիկը դռան մոտից։

— Փող չունենք։ Ամբողջ գիշեր մեր աղոթանցնք։

— Գնա՛, գնա՛, գնա՛ թե չկամ — ձչաց աղջիկը վերից։ Առանց պատասխանելու հարցը

Երեխան աչքերը գցեց նրա կնոջ վրա։ Հույս ուներ նրա գթությանն։ Բայց կինը նրան նայում էր այնպես, կարծես ոչինչ չէր տեսնում — անտարբեր, տխուր, ուրիշ մտքերով պաշարված։

Նայեց իրե՛ն, խանութպանին և սպասեց։

Խանութպանը միայն թևքերից հանեց իր կեղտոտ, գորտի պես փայլող ձեռը և ափով նշան արեց, որ գնա...

— Բա սովից մեռնե՞նք,— լացակումելով հարցրեց երեխան։

Խանութպանը ձեռով արավ՝ գնա՛, գնա՛...

Ու ժպտաց։

Ի՞նչպես...

Առաջի՛ն անգամ իր կյանքում լսում էր մի այդպիսի հիմար հարց։ Քանի՞ տարի է՝ չէր ժպտացել։ Կնճիռները մրոտ երեսին բացվեցին իրրև մամուլի տակ սխալ գցած լրագրի ծալված տեղեր, որոնց չի դիպել տառերի մուրը։

Նորից ձեռով արավ՝ գնա՛, գնա՛...

Ի՞նչպես — ինքը ողորմի՞... Թափ տվեց գլուխը, նորից ժըպտաց և կամաց-կամաց էլի թթվեց։ Ոչ ոք չէր դիմել իրեն այդ ձեվով։ Առաջին դեպքը թաղի մեջ նրա հետ...

Եվ առաջին ժպիտը — միակ նորությունը նրա կյանքի վերջին տարիներում։

Երեխան գլուխը կախեց և դուրս գնաց։ Ընտանիքը թթվեց, լռեց և սկսեց էլի սպասել...

Ի՞նչ բանի...

Ապրիլի վերջերն էր։ Փողոցի մայթերի ակացիաները զգեստավորված, իրենց բուրվառներով խնկարկում էին գարնան գալուստը։

Ծակուռի դռան մոտ թարմ տախտակներ էին ընկած, և տաշեղի ճերմակ գանգուրները դես-դեն էին խռնվում։ Ներքնատանից տախտակի, խեժի դուրեկան հոտը բուրելով դեպի փողոց՝ հետը բերում էր ռանդայի ռիթմիկ, ժիր շղփոցը և ջահել ատաղձագործի լիակուրծ, ուրախ երգի և հեռցի ձայնը։ Դազգյահը նորն էր, դարակները նոր և ճերմակ, տախտակները լվացած և հստակ երեսների պես ժպտում էին։ Քերված էր նախկին կեղտը, պատերը սվաղած։ Իսկ գանը տխուր հանել էր ամեն ինչ։

Եվ այդ բունը գիտեցողը և հիմա նայողը ստատոքեն ծծում

էր ծաղկած ակացիաների և տաշեղի դուրեկան բուրմունքը և կուրծքը ուռեցնելով՝ ախորժակով արտաշնչում էր և երազանքով հառաչում։

Չկար խանութպանի ընտանիքը. ո՞ւր էր տեղափոխվել, հայտնի չէ։

Միայն ինքը խանութպանը մեռել էր մի ամիս առաջ։

1920

ՄԻԱՅՆ ՄԵԿԸ

— Վա՜շտ, կա՜նգ-նի՛ր։

Վաշտը ոչ-ռիթմիկ թափով դադարեց, մնաց ճամփի վրա։

Միակ աղմուկը ամայի շրջակայքում։

Նա էլ դադարեց։

Մնաց միայն զինվորների հևոցը, որ հիմի ավելի պարզ և ալիք-ալիք դիպչում էր շրջակայքի լռությանը։

Սպաները դուրս եկան ճամփից ու քամակները դիմհար տալով խոշոր քարերին սկսեցին անխոս ծխել։

Զինվորներից մի հինգ-վեց հոգի հեռացան ճամփից, իսկ մյուսները մնացին տեղերում։

Գորշ ու անվերջ դաշտավայր։

Երկնքի կափարիչը կապարի պես լուծվում-հոսում է լեռների վրա, այնտեղից էլ բլուրների վրա, և սրանք մոխրագույն մկների պես դնչները խրել են գետնի մեջ ու ականջ են դնում։

Մի չարագուշակ, ժանգոտ բան կա ամեն բանի մեջ։

Օրվա ո՞ր ժամն է...

Եվ դա լո՞ւյս է, թե մոխրափոշի մաղված օդի մեջ։

Զինվորները կապտած ու մրկված երեսները թաքցրել են բաշլիկների մեջ ու չեն խոսում, ինչպես մեռելատանը։

Անձրևն սկսեց փսփսալ։

Ցուրտ է։

Երբեմն հեռվից, կարծես մի խարխուլ մեծ շինության օճորքից, մի քար է ընկնում հատակին ու խուլ թնդում։

Հետո արձագանքը՝ դո՜ւ-ո՜ւմմ.. քայքայվում է ու հալվում օդի մեջ։

— Ա՞մպ է,— խոսեց վաշտի մեջ մի ձայն։

— Դու էդպե՛ս իմացի,— պատասխանեց մի ուրիշ չարաժպիտ ձայն։

Եվ ինչի՞ են սպասում...

— Սվինը վեր բռնի, է՛յ,— մրթմրթաց մի զինվոր իրենից առաջ կանգնածին։

Դիմացինը, որին «էյ» ասաց, դրստեց իր ուսագլխից կախ ընկած հրացանի փոկը, հանգիստ նայեց աչքերին։ Սա էլ նրա աչքերին նայեց։

Եվ ուրիշ ոչինչ։

«Էյը» մեղմորեն հեռաց ու կուզը կրկին դուրս գցեց։ Հետո սկսեց կողքանց նայել անձրևաջրի բարակ թելին, որ սողալ սկսեց ճամփի արխի միջով։

Բարակ անձրևը իր միլիոնավոր մատներով թակում էր զինվորների վերարկուները։ Նա մի խուլ, մտածկոտ պատմություն էր անում։ Էյը ախորժելով էր լսում նրան։ Նա նրան ինչ-որ մի քաղցր բան էր հիշեցնում։ Հասկանում է — սարի դագան, որի թաղիքին անձրևը մտերմորեն թխկթխկացնելով կեսգիշերային լռության մեջ նիրհ է բերում մարդու աչքերին։

Որտեղից է՞լ միտն ընկան այդ անցած-կորած բաները։ Քսան տարուց ավելի է սարի կյանքից հեռու՝ ընկած է եղել քաղաքները։ Իսկի միտն էլ չի, թե ինչպես է ապրել։ Առաջ կառապան էք Դիլիջանի տրակտում, հետո գիշերապահ Թիֆլիսում։ Վերջերս էլ վեց տարի է՝ հնոցպան էր Բաքու՝ Սպիտակ քաղաքի մի յուղի գործարանում։ Ամեն տեղ իր պաշտոնը քշվածությունն է եղել։ Գյուղերից դուրս, տներից դուրս, գործարանի անկյունները։ Ու քսան տարի է՝ նստում է, իր մտքերի հետ ընկնում։ Դրանից էլ՝ կարգին խոսել չգիտե։ Հենց որ գալիս է «պերեկլիչկան», և ենթասպան հասնում է նրա անվան ու պառուզա է լինում, զինվորները հասկանում են, որ դա նա կլինի. բռթում են կողքին ու նա դեմ ընկնելով ու ֆիզիկապես արտասանում է.

— Յա՛*։

Նրա ազգանունը ոչ ոք էլ չսովորեց։ Ուստի և ամենքը «էյ» են կանչում նրան։

Հիմա, իբրև «խաչակիր»՝ պատերազմ է գնում։

Դեռ ականջի մեջն էր իր հնոցների աղմուկը, որ նրան պոկեցին աշխատանքից, բերին մի քանի ամիս զինվորագրեցին, որ պանեն պատերազմ։ Ուրեմն մնաց իր հնոցների կողմը — գործը մնաց կիսատ։ Մենակ գո՞ծն է, տունը մնաց անտեր՝ իր կնոջ ու երեխայի հոգսով։ Հետո քաղաքը, մարդիկ, հազար ու մի բան ու գործ...

Աշխարհքը։

Միտքը գնում է դեպի ետ։

— Քայլերով առա՛ջ... մա՛րշ...

Վաշտը նորից կենդանացավ և հուղարկավորների պես շարժվեց։

Խը՛րթ... խը՛րթ... խը՛րթ...

Կոշիկները ռիթմիկ շեշտով խոսում, խաղ են անում քարերի, կոշտերի հետ։

Հիմի էլ էյը կառչեց այդ խրթխրթոցին։ Հաճելի է ինչ-որ։ Մտիկ է տալիս առողջ զինվորների կարմրած ձեռքերին, շրթունքներին, լսում է նրանց թարմ շնչառությունը։ Հաճելի է։ Ինչ-որ հույս կա դրա մեջ։ Հետո կծկվելով այդ ձայների հաճույքի մեջ՝ մտիկ է տալիս խոզան արտերին։

— Չէ՛, «սրանք» էլ են վարում, ցանում։ Աշխարհքի մեջ մի խելք կա։ «Նա» չի տևի երկար, «նա» չի լինի։

Ահա դաշտի հեռուներից, կարծես գետնի տակից դուրս եկավ մի գյուղ։ Իրիկվան ստվերներ են կախ նրա դռներից ու չարդախներից։ Կարծես շների հաչո՞ց։ Կարծես ինչ-որ մարդիկ են դռների առջև։

Մյուս զինվորների դեմքերն էլ մի քիչ խստակվեց։

Սկսեցին փսփսալ։

— Քշերը մնո՞ւմ ենք։

— Կարելի յա որ մնանք։

— Մի քիչ դենչանանք...

— Բա՞։

— Չյունը ուշացել է։ Ամա թե որ գա՝ կնստի։

— Շհյոֆ... հլա ո՞րտեղ ես։ Տավարը որ հիմիկուց խոտի պաշարին ընկնի՝ գարուն կհասնի՞։

— Բա՞։ Հլա պտի հանդիցը պոկի։

— Կգա ձյունը, ամա չի նստի։

— Մին երկու կգա, կհանի։

— Ամենք մինչի նոտելը տավարը ձեր տակից մի նեքա շաբաթ էլ որ կեր ճանկի՝ էլի մեծ բան ա։

*) Ե՛ս (գերմ.)։

— Կճա՞նկի։

Էյը ականջ է դնում հայ գյուղացի տղերանց այս խաղաղ զրույցը և հանգստանում է։

Գյուղը սողաց-սողաց, օրորվեց, այլակերպվեց և խժռոտ կանգնեց վաշտի առջև։ Վաշտը մտավ ճամփի փողոցը և կանգ առավ։

Ամայի՞ գյուղ...

Գանգերի պես պարապ խրճիթներ, որոնց փտած աչքերի միջից մահը խեթ-խեթ մտիկ է տալիս, ու քանդատած դռները ծամածռվում են քայքայված բերանների պես։

Լուռ է։ Ոչ մի ծպտուն։

— Մարդ չկա՞... — փսփսում է մի զինվոր՝ ականջ դնելով։

— Խարաբա է,— խոսում է ուրիշը և քիթը խաշտում։

Նայում է Էյը և իրեն թվում է, թե տեսիլք է գնացել։

Ահա աղբյուրը,— ջուր է բխում ոչ ոքի համար։

Կողքին՝ ջրաղացը։ Դուռը հանած է, և ներսում կանգ են առել աղորիքները։ Անշարժ գերեզմանաքարեր են թվում նրանք, երբ այլևս չեն աղում։

Ճնշվում է Էյը այս ավերի խստության առջև։

Տունը, որ այնպե՞ս դժվարությամբ են շինում՝ այսքան տները, գյուղերը, քաղաքները այսպես խենթի պես քանդե՞լ։ Տես ի՞նչպես են հանել գերանները։

Հե՞շտ է գերանը կտրել, բերել, դնել։ Ի՞նչ խելք է...

Եվ քա՞նի օր է՝ Էյը անց է կենում այսպիսի ավերակների միջից։

Տո՞ւնդ չքանդվի, աշխարհք։

Որ հազար-հազար մարդ շինում հա շինում էր՝ մտիկ էիր տալիս — էլի շինելու բանը կար ու կար։ Հիմի ի՞նչ են իմացել, որ քանդում են ու քանդում։

Ափսո՞ս ջրաղաց։ Կբերեիր ցորենի չվալները, կկիտեիր այս ջրաղացում, ինքդ կնստեիր ջրաղացպանի ու մյուսների հետ, մի լավ կրակ կանեիր այս ցրտին, հաց կթխեիր մոխրի մեջ, մի կողմից զրույց կանեիր, մյուս կողմից աղորիքները կաղալային խաղաղ հացը։

Ախը, ինչո՞ւ չեն անում այն, ինչ, որ պետք է, ինչո՞ւ են այդ չավ բաները փչացնում։

Էյը հավաքել է ուզում իր շփոթ մտքերը, հանգիստ է բռնում, որին փարվի։ Եվ ծծկվում է վերարկուի մեջ։

Մի՞թե չեն գիշերելու այստեղ։

Ոչ, չեն գիշերելու։

Անցնում են առաջ։ Անցան գոմերը, մարագները... և ահա նորից դաշտ, նորից անձրև։

Օրը նվաղում է, լույսերը մաշվում։

Գիշեր։

Շտապով էլ քամին վեր կացավ։ Լայնարձակ դաշտավայրի անհյուրընկալ դառն քամի։

Բաշլիկները փոփոում են, ծեծկվում։ Անձրևը այլևս մտրակում է, և ցուրտը կծում, ասեղների պես լցվում է մարմինը։

Անձրևի լճակները չարացած ձայներով ճղփում են կոշիկների տակ, ցեխը կծում է կոշիկները, ատամներով բռնում։

Էյը տխրում է։

Ախր ո՞ւր են գնում...

Խրճիթների կերպարանքներ երևացին, որ նոթերը կիտած մտիկ տվին խավարի միջից։

Կայան է։

Պահակներ են ցցված ճամփի եզրին։

Ախոռներից մարդիկ ելումուտ արին։ Վախկոտ լույսերը ծկրակեցին դռների արանքից։

Վաշտը կանգ առավ։ Իրենց գունդը այստեղ է։ Երևի իրենց էին սպասում։ Զինվորներ դուրս եկան ախոռներից։ Խոսեցին։ Ասում են վաղը ելույթ է. գնում են խրամատ։

Զինվորները դողդողալով մտան ներս, վար բերին հրացաններն ու պարկերը։ Վերջապես հանգիստ է։ Ձեռաց մխաց օջախը, և ծուխը լցրեց խրճիթը։

Ու թեև հոգնած էին, բայց չպառկեցին քնելու, այլ խոնվեցին խրճիթում և ձայները բարձրացնելով՝ սկսեցին խոսել, կարդադրել, հարմարվել։

Թեյ հանդես եկավ։ Թթու հացի հոտ։ Ընթրում են։

Խրճիթի մի մասը, որ անասունների բաժինն էր՝ մուրքերի առջև ձիեր էին կապած։ Ախորժելի հասարակություն։

Թոցը օջախում կչրտաց, թեները թափ տվեց, զինվորները կիսաբոլոր նստեցին դիմացը։

Զայնեցը բարձրացավ.

— Էյ, Դաթիկո, «գուրը» հանի։

— Չկա, գնա Ռաստով։

— Ադա, Տիմոֆեյ, շաքարը մի դեսը։

Տիմոֆեյը հանում է կեղտոտ շաքարի քսակը և մեկնում գիմացինին։

Նոր է որոշվում զինվորների կերպարանքը։

Վաշտը մի խայտաճամուկ խառնուրդ է ռուսների, հայերի, վրացիների, լեհերի...

Կրակի ուրախ շրթոցին խառնվեց զինվորների ուրախ զրույցը։

Ուրախ են նաև նրանց ստվերները, որ ահա թռչկոտում, պարում են սևացած պատերի վրա։

Թեյը ժպտում է կապույտ էմալե գավաթների միջից ու ջերմացնում։

Մի շիրակեցի մեջքը դրել է պատին և ոտները մեկնել։

— Հակո՛, էս դրուստ մեր տունն է։ Այ, էն մեկը տեղովը մեր տոլաբն է։

Ու ձեռը մեկնում է դիմացի պատի խորշը։

Հակոն, որ քթի տակին երգում է, գլխով հավանության նշան է անում։

Կարծես տեսած լինի շիրակեցոնց տան տոլաբը։

Շիրակեցին ժպտում է և գլուխը թափ տալիս։

— Տերը փախել է՞, հը՞, Հակո։

Հակոն կոնատակն է քերում ու կլկլացնում։

Էյը նրանց է լսում։ Եվ ուրախ է։ Այս խոսքերի փոխանակությունը նրան անասելի դուր է գալիս։

Նա էլ է ուզում մի բան ասել այդ տան տիրոջ մասին, որ փախել է։ Բայց միայն հազում է և կոտրած ժպիտով նայում է շիրակեցուն։

— Տղերք, ասում են էս կողմերը լավ հաց է ըլում,— ծոծրակը քորելով հորանջում է էյի հարևան Միկիչը։

Եվ դառնում է ռուսերեն՝ իր կողքի նստած մի կարմրամորուք զինվորի.

— Շրի՞շ, Կուզմա, էս գյուղերում չատ լավ հաց է ըլում։

Էյը մտիկ տվեց Կուզմային։ Սա շուռ տվեց իր պզնձագույն գլուխը դեպի խոսակիցը, և մորուքի կարմիր լայնք կասկածներով թափեց ուսագլխից։

— Նո՛ւ, բռատոկ, էստեղի հացով մեզ չես զարմացնի։ Էս տարի մեր Կուբանում հացը ա՛յ մինչև էստեղ է,— ցույց է տալիս իր ճանչը, ինչպես վստահ ու լայն, կարծես հենց ինքը տափաստան երկիրը լիներ։ Հետո կոշտացած մատները սյունաձև բռնելով գավաթի տակին տարավ շուրթերին ու ֆր՞ռի անելով ներս քաշեց թեյը։

Զրույցը մեծացավ։ Սկսեցին խոսել հողի հատկություններից։ Հնձից։ Անասուններից։

Կարծես հիմա պիտի քաղցը քնեն և վաղը գնան դաշտային խաղաղ աշխատանքի։

Միայն Տիմոֆեյը տխուր է։

— Ա՛յ, դուք հիմի երևի հաց ունեք ձեր տանը։ Ամա տեսեք, որ իմ կնիկը, ախպեր ջան, էս բոպեիս մի կտոր հաց էլ չունի։ Ինքս հյուսն եմ։ Վեց ջան երեխեք թափել եմ տանը՝ եկել։ Կեբակրի՞ տեսնեմ։

Ոչ ոք չի պատասխանում։

— Ո՞ւմ համար է էս զալմաղալը — չեմ իմանում։ Ամա աչքդ տես, որ ուրիշը կռիվ է սարքում՝ մեջտեղը մեր ժողովուրդն է կռվում։

— Դո՞ւ ինչ ես էստեղ բերանդ շաղ տալիս,— մրթմրթում է մի մոայլ զինվոր, որը թեք է ընկած և աչքերը հառել է առաստաղին,— ո՞վ է տանը ծառանգություն թողել իր կնկա համար։ Թող գնա աշխատի։ Թագավորական ծառայություն է, հարցանկ չի։

Բոլորը մոայլվում և բարկանում են Տիմոֆեյի վրա, թեև գիտեն, որ սա ճշմարիտն է խոսում։ Եվ մրթմրթան զինվորն էլ հենց դրա համար է քրթմնջում։ Նա էլ համաձայն է Տիմոֆեյի հետ։

— Քնի՛, քնի՛,— խեթում է նրան Տիմոֆեյը,— ես սոված աշխատավոր եմ, դու էլ կուշտ գեղացի չես։

Լռում են մի պահ։

Էյը մտիկ է տալիս երան-նրան, ժպտում է յուրովի, հավանություն տալիս։ Նա ուրախ է այդ ընդհանուր տեսարանի մեջ։ Լավ է նստել են, թեյն խմում, փոքր ինչ է, ոնանունները կարտոֆիլ դի բերեն ուրշ ալ մի ինչանդում գնեն գլ

Բայց ոչ նրա ժպիտը, ոչ նրա ներկայությունը չի երևում զինվորների մեջ։

Էյը գորշ մարդ է, աներևույթ։ Մոտեցավ օջախին, սկսեց շամփուրով կրակը խառնել։ Հիշեց իր հնոցները, և սիրտը ծակեց։

Բայց դա մի րոպե էր միայն։

Նա աչքերը հառեց կարմրամորուք Կուզմային, որի հաղթանդամ մարմինը ոգևորացնում էր էյին։

— Հացը պետք է ժամանակին գցել հողը — դասախոսում է Կուզման։— Հացը երեխա է, իր օրորոցում քնել է ուզում։ Ա՛յ, պատերազմը որ չլիներ՝ գիտե՞ք թե մեր հողը ո՞նց էր կպտաղած բերում հացը։ Աշխատող ձեռքերը գնացին պատերազմ... գեղում պառավներն են լնգլնգում։ Ա՛յ թե բանն ինչումն է։

Ու մորուքը թափ տալով՝ դանակը կոշիկին քսելով սրբում է, խնամքով ծալում, դնում է գրպանը։

— Ձեր տանից մենակ դո՞ւ ես,— հարցնում է նրան Դաթիկոն։

— Ո՞վ,— կարծես բարկանում է Կուզման,— երեք եղբայր ենք։ Այ, Իվանը ավստրիական ֆրոնտումն էր, Երոպական գերմանական ֆրոնտում։ Երկուսն էլ սպանված են։ Ի՞նչ տուն։ Տնտեսությունը քանդվեց գնաց։

— Հա՛, դժվար է,— փիլիսոփայեց Դաթիկոն։

— Աբա՞, բրատեց տի մոյ, տակիյե դելա՛։

Ու Կուզման հացի պաշարը կոկ ու սիրուն տեղավորեց պարկի մեջ ու պարկը դրեց բարձի տեղակ իր գլխավերևը։

Եվ հանկարծ մի վճռական շարժումով թափ տվեց իրեն.

— Է՛, քնելու ժամանակ է։ Թե չէ՝ մին էլ տեսար, աչքդ բաց ես անում որ՝ ելույթ է։

Հսկայի պես ծառանում է վեր, կարծես գետնի միջից։ Ապա փռեց վերարկուն, մեկնվեց ռուսական դաշտի պես անդորր քնելու։

Այս բոլոր խոսք ու զրույցի ժամանակ այնտեղ է էյը։ Այնտեղ, իր համար, զինվորների մեջ, կորեկի հատիկի պես կորած։

Նա համաձայն է բոլոր ասածներին։ Կարծես ամենքը իր ուզածն են ասում։ Փորձում է ինքն էլ մի բան ասել, բայց ոչ խոսքի ծայրը գիտե, ոչ էլ պաչը։ Թափ է տալիս գլուխը, նայում է իր շուրջը հավաքված զինվորներին՝ Դաթիկոյին, որ խաժ աչքերը հառել է կրակին ու «աչքը պաղել է», մնացել։ Տիմոֆեյին, որ ա-

ները կուչ բերած պառկել է կողքին ու մշմշում է, թքում կրակի մեջ։ Մրթմրթան զինվորին, որ շար աչքերով օճորքին է նայում ու իրար ետևից ծխում։

Շիրակեցին ու մյուս հայերը քնել են։ Մյուս զինվորներն էլ անհանգիստ քնած են։

Ու այդպես կորած, անտեսված՝ էյը գնաց կծկվեց մի անկյունում իր վերարկուի մեջ ու դունչը ներս քաշեց։ Դեռ շատ կա մինչև «այնտեղ»։ Դեռ մի քիչ տաքանա, քնի, ինքն իրեն հավաքի։

Պառկած է էյը, բայց քունը չի տանում։ Մարմինը տնքում է հոգնածությունից։ Աչքը փակ՝ ականջ է դնում։ Ախորի հոտը ախորժելի է գալիս նրան։ Հարազատ, խաղաղ մի բան կա դրա մեջ։ Մսուրքներից, ղ՛րթ-ղ՛րթ, լսվում է ձիերի ուտելու ձայնը։ Դա հիշեցնում է հեռուներում թողած կյանքը, խաղաղ կյանքը։ Դա ոչ թե ախորժելի, այլ և սրտառուչ է։ Երբեմն ձին առողջ սրմբակով պինդ դոփում է գետինը։

— Էրնակ քե՞զ,— մրմնջում է էյը և դառնությամբ ժպտում։

Ուզում է ավելացնել, թե «դու չգիտես, որ պատերազմ ես եկել», բայց միտքը չի ձևավորվում։

Ու ընկնում է մտքերի ետև։

Աչքի առաջն է գալիս իր տունը։ Հիմա քնած են՝ իր երեխան ու կինը։ Եվ չգիտեն, որ ինքը այս հեռո՛ւ երկրի մի ախոռում արթուն պառկած՝ նրանց վրա է միտք անում։

Ահա իր փակ աչքերի դիմաց ուրվագծեր են օրորվում։ Իր երեխայի երկար թարթիչները խաղաղ քնած աչքերի եզրերին։ Գիշերվա ճրագը պլպլում է, առկայծում, և լույսը դողում է նրա դեմքին։ Ահա երեխայի և անկողնի ստվերը օրորվում է պատի վրա։

Էյի երևակայությունը սրվում է։ Ահա իրենց գործարանի հնոցները։ Բոցերը պտույտ են գալիս իլիկների պես ու մղվում են հնոցի պառկած խողովակների խորքը։ Փոնչում են նրանք, թռչում, զզզում են կաթսաներն ու խողովակները։ Էյը պարզ տեսնում է։ Այ, տես, դուրս եկավ գործարանի ընդարձակ բակը։ Տեղ-տեղ ինչոր շոգիներ են ֆռֆռում, ինչ-որ խողովակներ են շրթացնում։

Ահա և խաղաղ ծովը, ճոփում է ափին։ Հեռուն մթնում է Թերի-էյրանը։ Դեպի ա՛յ քնած է խորհրդավոր Բաքուն...

— Էյ, վե՞ր կաց,— գոռում է ընկեր հնոցպանը ոչ իր ձայնով և բարկացած։

«Վա՞խտ» է,— վախեցած հարցնում է էյը ու վեր թռչում։

Ջոկապետն է։ Նա է բռթել ոտքով։

Շշմած, դողալով վեր է կենում էյը։

Կեղտոտ մի երկինք ներս է նայում երդիկից։ Դեղնած խոտեր էր դողդողում ու ծեծվում այդ երդիկի եզրերին։

Դուրսը քամի է։

Հավաքվում են։

Զինվորները շար ու ներվային են։ Այնպես են մտիկ տալիս ամեն մեկի վրա, այնպես են խեթում արան ու նրան, կարծես նա է այս ամենը սարքել։

Վերջապես շարվեցին։

Ոչ ոք չի խոսում։ Հրացանները գրկած, ձեռները թևքերի մեջ կանգնել են ու սսվել։ Թշնամու երկրի քամին հաչում է գամփռի պես, կծում, վանում է նրանց։

Դիմացը ժանգոտ բլուրներ են։ Ասում են՝ այնտեղ են խրամատները։ Այն կողմից գնդացիրներ են շոր-շոր հաչում։ էյը ականջ է դնում, և թվում է, թե դա արագիլի կտուցների կափկափոց է։ Մանոթ պատկեր, իրենց գյուղի արագիլնե՞րը... բայց պատկերը վախով ցնդում է։ Դիմացի բլուրներում «գործ» կա, անախորժ, ծանր մի գործ։

Ահա դիմացի բլրից, ուր գնացել էր իր հարևան վաշտը փոխվելու, իջնում է մի ուրիշ վաշտ։

Նրանք գալիս են հեղեղատի միջով, հատ-հատ, դանդաղ։

Վաշտը լարվեց։ Նրանց է նայում։

Ահա ծանրաքայլ մոտեցան նրանք։ Ոմանք կաղում են։ Նրանք գալիս ու բոլորովին լուռ անց են կենում արանց կողքով։

Վերարկուները ճմլա՞ծ, ցեխո՞տ, իրենք մի տեսակ փտա՞ծ, ամքա՞ծ։ Դեղնած մեռելներ։ Եվ կարծես մանկներ չեն, այլ դիմակներ։ Այդ աչքերը, իբրև արդեն մահը տեսած աչքեր՝ ինչ-որ տարբերակ անտարբերություն ունեն իրենց փայլի մեջ։

Ապակու պես են փայլում։

Ահա թե ինչպես են նայում «այնտեղից» եկածները։

Բայց ի՞նչ կա «այնտեղը»...

Մտիկ է տալիս նրանց էյը և հասկանում է, թե ինչ կա «այնտեղ»։

Եվ ծանր մի ձեռ քաշում է նրան «այնտեղ»։

— Դեպի հեղեղա՞տը, մարշ...

Վաշտը շարժվում է դեպի հեղեղատը, որ այնտեղից բարձրանա խրամատների շարքը։

***

Ահա և «այն բանը»... Կարծես առանձին բան չէ։ Ծածկած բներ են, տեղ-տեղ քարած, տեղ-տեղ ցեխոտ, խոնավ խրամատներ, և ուրիշ ոչինչ։

էյը վիզը երկարացրեց, նայեց բլրի մեջքի վրայից դեպի «այն բանը»։ Ոչինչ չի երևում։ Այնտեղ ոչինչ չկա։ Միայն մշուշ, բլուրներ, բլուրներ, մշուշ և ապա կապույտ լեռներ։

Միայն սև, կտրտված թելի պես մի բան զիգզագ գնում է աջ ու ձախ, երբեմն ընդհատվում, մեջ տալիս։

Դա թշնամու խրամատներն են։

Սպաները, որ առաջ գազազած գոռգոռում էին, հիմա հանկարծ սակավախոս դառան։ Ինչ-որ շարաժպիտ հայացքով են նայում վաշտին, էյին և դավադիր փսփսում իրար մեջ։

Կոմանդները կտրուկ են։ Եվ արդեն անկեղծ։ էլ այն հանդիսավոր թատրոնական ձգումները չկան։

Այդ կոմանդները հիմա «նշանակություն» ունեն։

էյը շուտ-շուտ մոռանում է, թե որտեղ է։ Կարծես երազի մեջ է։ Կարծես ամեն բոպե զարթնում է ու նորից ընկնում երազի մեջ։

Եվ այդ բոպեներում ահագին ժամանակ է անցնում։ Բայց դեռ մի քանի ժամ հազիվ է անցել։

Աչքը դարձնում է իր շուրջը և զգում է, որ ինքը իսկապես «այնտեղ է» արդեն։ Բայց ինչո՞ւ չի սկսվում «այն բանը»։ Կարծես ինչ-որ հանդիսավոր կերպով է սկսվելու դա։

Ո՞չ։

Արդեն կրակոցը տրվեց, և հրացանները շոր ձայնով հայթեցին։ Իրան է հասնում հերթը։ Ինքն էլ է կրակում դեպի դիմացի թելը։

Այդ կրակոցները «կավի մկրտության» համար է քավապես։

Վաշտի մեծ մասը սկսնակ է դեռ։ Շիրակեցին ու Միկիչը հուզմունքից անբնական ժպտում են։ Տիմոֆեյը փնթփնթում է յուրովի։ Իսկ Կուզման ունքերը կիտած դիմացն է դիտում։ Նա հանգիստ է ու մռայլ։

Էյը նրան է նայում և սպասում է, թե ինչ կանի, կարծես Կուզման է որոշելու կռվի բախտը։ Հաճելի է նրա մատերքը լինելը։

Բայց ահա Կուզման — և դա ե՞րբ եղավ և ի՞նչքան ժամանակ անցավ... — Կուզման շոքել է և գլուխը դրել խրամատի պատին։ Ի՞նչ է փնտրում։

Սանիտարներ են գալիս կուզեկուզ։

Հարցնում են.

— Ո՞ւր է։

— Այստեղ է. տարե՛ք։

Կուզմային ետ քաշեցին խրամատի պատից։ Մորուքը մեջտեղից թրջվել էր կարմիր արյունով։ Երբ նրան մի փոքր բարձրացրին, արյունը սկսեց պարզ շիթել ցեխի մեջ։

Նրա դեմքը գունատ էր մոմի պես, քունքերը կապտած։

Դրին պատգարակի վրա։

Էյը կողքանց նայում է, թե ինչպես Կուզման սկսեց ռիթմիկ օրորվել պատգարակի վրա, կարծես կոմիկ պար է գալիս, ու ամեն ռիթմից արյունը օձապտույտ ծլծլալով թելի պես գնում, նախշում էր գետինը։

Տարան Կուզմային։

Հետո՞...

Հետո՝ էլ ոչինչ։

Եվ էյը ճնշվում է, ինչպես սպանդանոցում հերթի կանգնած անասուն։

***

Օրերն անցնում են ծանր, սրտի միջով, սիրտը հետը քաշելով։ Վաշտը, դեռ նոր կռիվ մտած վաշտը, դավաճանորեն գնդակահարվում է՝ մեկ-մեկ, աննկատելի, հե՞շտ, ինչպես Կուզման։ Վաշտը, կողքի վաշտերը քայքայվում են, փոփոխվում։

Փոփոխ էլ ինչպե՞ս է — դիրքային։ Դեպքեր չկան, կա միայն մի անշարժ դեպք — անորոշ, անվերջ պատերազմը։

Դա էլ մի գործ է, որ ոչ ոքինը չէ։ Դրա տերերը ինչ-որ հեռու տեղ են։ Նրանք այստեղ միայն սպաներ ունեն, որ դաժանանում, հայհոյում, խստասրտում են, զինվորներին ուղարկում մահի դուռը, երբեմն էլ իրենք են ընկնում արյունլվա։

Եվ «գործը» կանգ է առել։ Դա մի դիակ է, որ ընկել է մարդկանց մեջ ու հոտում, նեխում է ամենքին։

Արդեն ամենքը գազազել ու զսպորեն անկարգացել են։

Տիմոֆեյը սկսել է բարձրաձայն մրթմրթալ։ Ջոկապետը աչքը մեխում է նրա աչքին, մի բոպե խեթում ու շրթունքները ջաղջեղելով ուրիշ կողմ նայում։

— Արնախումնե՛ր... — սեղմում է ատամների մեջ Տիմոֆեյը։

Զինվորները ասում են, որ նա կամ կգժվի, կամ կգնդակահարվի։

Տիմոֆեյի դեմքը ջղաձգորեն ցնցվում է։ Նա դատապարտված ու նեղն ընկած գայլի պես համարձակ է դառել։

Ու քանի գնում է՝ պատերազմը փոխվում է մի այլ բանի։ Վատ գործի։ Մթերք չկա, չեն բերում։ Ջորամասերը անկարգանում են, անկարգանում են և իրենց գործի տերերը — սպաներն ու հրամանատարները։

Լուր չկա։ Սա պատերազմ չէ, այլ անվերջ տանջալի կյանք։

Ի՞նչ պիտի լինի սրա վերջը... ո՞ւր է սրա ծայրը — ոչինչ չի երևում։ Մտածո՞ւմ են այս մասին, և ո՞վ է մտածում։ Ոչ ոք ոչինչ չգիտե։

Սակայն «գործը», այդ ոչ ոքի գործը մի անասնական բթությամբ ճարակում ու անխիղճ խժռում է ամեն ինչ։

Շիրակեցին էլ «գնաց»։

Հինգ ուրիշ զինվորներ էլ «գնացին»։

Էյը չի մտածում, սակայն, որ ինքն էլ «կգնա»։ Դա իրենից շատ հեռու մի բան է։

Նա դեռ սպասում է։

***

Առաջին ձյունը եկավ։

Նախ տաք էր, ապա հանկարծ պաղեցնող, բայց բարձրացավ, հետո նորից հալվեց, նորից շոր ցրտեր։

Սպաներն էլ սկսեցին բորբոքել։ Զանձրույթն ուտում է մեզ-բին ժանգի պես։

Միայն մատակարարն ու իր օգնականներն են, որ ապրում են սովորական կյանքով։

Շատ անգամ ամբողջ խրամատում լուռ է, ինչպես դիականոցում։

Միայն խրամատի ետևը, փոսի մեջ շաքար են բաժանում։ Եվ որպեսզի տրտունջ ու կողմնապահություն չլինի, վիճակ են գցում։ Մատակարարը շաքարը բաժան-բաժան է արել, իսկ օգնականը երեսը շուռ տված կարդում է ցուցակը։

Մատակարարը ծիսական ձայնով հարց է տալիս։

— Կո-ռմո՞։

Եվ արտասանում է օ-յով։

— Սիդո-ռ՞-բովու,— ձգում է օգնականը սարկավագի պես։ Ու երկար դեռ լսվում է այդ ձանձրալի «կոմու»-ն՝ կարծես ինչ-որ թաղման ծես լինի զինվորների գերեզմանների եզերքին։

***

Էյին հետախուզության ուղարկեցին մի խումբ զինվորների հետ։ Պատահաբա՞ր, եղավ դա, թե հետախույզ կոմանդի քմահաճ անփութությունից — բայց եղավ։

Մթնշաղ էր, որ ճամփա ընկան։

Նախ շեղվեցին դեպի ձորակը և անխոս իջան ներքև։

Պետը, ինչ-որ իր մտքի մարդ, հրամայեց մի փոքր սպասել ժայռի տակին։

Ամայի ձորակ։ Ամեն ինչ անծանոթ, դաբանակալ, թշնամի... Գետակի ափին ժայռերի խոշոր, մամուռ բեկորներ էին տխրում ու անհյուրընկալ նայում էին։

Ոչ մի ձայն։

Առվակն էր միայն քրթմնջում։

Եվ ուրիշ ոչինչ։

Շարժվում են առաջ։

Ահա և մի մեծ ժայռի բեկորի տակին մի դիակ։ Մի թևը փորի տակ, մյուսը ցեխի մեջ՝ ընկած է նա թեթևանքթիվաբար։ Գլուխը շրջել է ետև կողմը։ Քարացած է նա, ինչպես դուրս — սիրտը լուծված, թափված։

Ծնգծնգալի ծիծաղը ատամների մեջ, աչքի մեկը ճոռթված, մյուսը կիսափակ՝ էյին է նայում։

Սա էլ նայում է նրան։

Ծանր, մահի հոտ է գալիս նրանից։

Էյը ուզում է խոսել, դարձյալ խոսք չի գտնում ասելու, բայց թևքով բոթում է զինվորներից մեկի արմունկին և ցույց է տալիս դիակը։

— Կորցրո՞ւ, — թքում է սա և երեսը շուռ տալիս։

Նստեցին մի փոսի մեջ։ Մեկը գլուխը դուրս հանեց, սկսեց դիտել շորս կողմը։ Իսկ պետը սկսեց կարգադրել։ Բայց և շուտ-շուտ կարգադրությունը փոխում էր խորհրդակցության։ Ավելի շատն այն էր, որ նա ինքն էլ ոչ մի ծրագիր չուներ։ Երբեմն նա կիսաձայն խոսում էր մի զինվորի հետ, որը ըստ երևույթին նրա պես ծանոթ էր դիրքին ու հանգամանքներին։ Խնդիր էր դրված՝ գտնել փշալարերի կողքերից մի այնպիսի ճամփա, որ կարելի լիներ գիշերը մոտենալ և կտրատել։ Եվ երևի պետը գիտեր, թե որքան են մոտ կամ հեռու վտանգից՝ ըստ երևույթին իր օգնականի հետ հանգիստ էր։

Հանկարծ մթան մեջ մի խուլ ձայն սողաց ու թռավ։

Թփթփոց։

Պետը թնդաց տեղից։ Սա անակնկալ էր արդեն։ Ականջ է դնում։

Ի՞նչ իմանաս, ո՞վ է, ի՞նչ է։

Պետը գործում է խորամանկորեն, զգույշ։ Բայց նրա ամեն մի շարժումը, վճիռը էյին թվում են անսիրտ, մեքենայի պես անսիրտ։ Էյը վախենում է ամեն նրա մի խոսքից։

Եվ ահա պետի մոխրագույն ապակե աչքը կանգ է առնում էյի վրա։ Ապա նայում է իր օգնականին։ Սա էլ խորամանկորեն ժպտում է և հասկանում է պետին։

Պետն ուզում է վտանգն ստուգել։ Բայց կարող է «ծախս» լինել։

— Լեր, է՛յ, գնա մի հարյուր քայլ այս ուղղությամբ և ափսոչ տիր։

«Այսպես ապահով է» — մտածում է նա և նայում իր օգնականին։

«Ճիշտ է» — մտածելով պատասխանում է նրան օգնականը, և ժպտում։

Օգնականը, իհարկե, խղճում էլ է նրան — դե մարդ է, պետք կգա վտանգավոր վայրում։ Բայց պետք է նաև, որ վտանգվելիս ա՛յդ մարդը վտանգվի։

«Անհրաժեշտություն» — մտածում է նա և նայում է էյին, որ շփոթված դեռ կանգնած է՝ ինչպես ոչխարը մսագործի առջև։

— Աշխատի մեզ չկորցնես,— պատվիրում է պետը։

Էյը գնում է։

Իսկ պետը օգնականի և մյուս զինվորների հետ քաշվում են մեկդի, դեպի ձորաբերանը տանող ճամփան։

Հանկարծ բլրի ուսերից լսվեց հրացանի ճայթոց։ Նա ճայթեց չոր ու ընդհատ կարծես քամին ձեռը դրեց հրացանի շրթունքին և լռեցրեց։ Հետո լսվեցին ուրիշ ճայթոցներ ևս։

Էյին այնպես թվաց, թե մեկը իրեն քաշեց վար։

Անզգայորեն նստեց։

Ինչ-որ ստվերներ էին վազում բլրից։ Նա մի շարժում արավ դեպի ձորակը, բայց հանկարծ ոտը գցեց մի փոսի մեջ, որը հենց ուղիղ նրա կրունկի ետևն էր, ու ընկավ մեջը։

Վազողները գետինը դոփելով անցան փոսի մոտից։ Հիմա էլ ճայթոցները ձորակից լսվեցին։ Երևի իր ընկերների հետ ընդհարում եղավ։ Բայց ահա մի քանի ծույլ կրակոցներ ևս, ու ամեն ինչ հանկարծ լռեց։

Ի՞նչ պատահեց — էյը չհասկացավ։

Սպասում է, թե ինչով կվերջանա կռիվը։ Ականջ է դնում։

Հեռացա՞ն։ Չպիտի՞ գան։

Բայց ընկերները չեն գալիս։

Ոչինչ չի սկսվում առայժմ։ Եվ ի՞նչ պիտի պատահի սրանից հետո։ Չգիտե։ Պիտի հեռանա՞, միանա՞ իր ընկերներին, թե մնա այստեղ։

Ի՞նչ պիտի կարգադրեն։

Ականջները թշշում են և ծիծաղանի զղակներ են աշխատավորվում աչքերի մեջ։ Փորձում է վեր կենալ՝ զգում է, որ փորի աջ կողմն ու մի ոտը իրենը չեն։ Կարծես մի գաղտնի ուժ ատամները գցել բռնել է իր ոտից և չի թողնում շարժվելու։

Նա որոշում է սպասել իր ընկերներին։ Թե թեև երկար ժամանակ անցավ, բայց էյը հանգիստ է դեռ։ Չէ՞, կգա՞ն։ Ի՞նչպես կթողնեն մարդ այսպես անխնամ մնա այստեղ և վերքից մեռնի։ Այն էլ այսպես հեշտ, մենակ։

Եվ նա հարցական աչքերը փոսի եզրերին հառած՝ շոտ-շոտ որսում է ամեն մի թվացող շարժում։

Ոչ՞ ք։

Միայն քամին է գալիս և ծառի ու անկարեկից մոմոում։

Հետո թռչում է վտիտտում մոբուլների մեջ, սրանք շաչում են բարակ մտրակների պես։

Ցուրտը սառը ջրի պես սողում է էյի մարմնի մեջ։ Նա դողում է։ Միաժամանակ սուր ծարավ է զգում։

Եվ այդպես մնաց նա՝ աչքը փոսի եզրերին, մինչև լույսը բացվեց։

Դարձյալ ոչ ոք։ Քամին է միայն, որ ինչ-որ անհասկանալի լեզվով խոսում է քարերի ու խոտերի մեջ։

Այդքանը միայն։

Ի՞նչպես... Ուրեմն ամեն բան այսքա՞ն էր։ Վերջացա՞վ։

Ոչ։ Այսպես չէ կարող լինել։

Եվ նա շարժում է անում, որ վեր կենա։ Բայց զուր։ Ծանրացել է արճճի պես։ Ավելի գնալու, անգամ սողալու հնար չկա։ Սաստիկ ցավը նրան իր ատամների մեջն առած անշարժ պահում է գետնին կպած։

Հիմա մենակ հնարն այն է, որ գան և տանեն իրեն։

Եվ նա աչքերը հառած նայում է գլխավերևը։ Այն կողմը բաց է։ Երևում է ձորակը։ Ծովում է քիչ և երեսը շրջում դեպի նա։ Զառիվայրին մի քար քիթը խոզի պես տնկել առաջ ու նայում է։ Հեռուն, գետակից քիչ բարձր մի հին ավերակ է մտորում։ Մարդ, շունչ չկա այնտեղ։ Մահվան պատուհանները անթարթ նայում են այնտեղից։

— Վայ թե իմն էլ էստեղ պիտի հատներ,— մրմնջում է խրոպոտ ձայնով էյը ու ձայնը բարձրացնում է։

— Օգնեցե՛ք, մարդ չկա՞։

Ոչ ոք։

Միայն երկնքում անկարեկից մի ամպ սառն լողում-գնում է իր բանին։

Փակում է աչքերը։

Պայծառ գույներով, ինչպես վենդանի իրական կյանք՝ իր բոլոր անցած կյանքը ետ է գալիս և լցվում իր շուրջը։ Ծրեռյթքի պես գալիս-անցնում է իր մանկությունը, մոռացված դեպքեր են կենդանանում։ Ահա ինքը իր աչքև — փոքրիկ երեխա՝ կոճի է խաղում. դռանը, քարին նստած է իր տատը, իրեն է նայում։ Ահա սար են գնում։ Անտառներ են ծխում ձորի մեջ։ Ինչ-որ լուսաբաց է, ջրերը լույսերի պես թպփվում են։ Ամբոխ մարդիկ ձեռքերում հոսում են քաղաքի փողոցները, տրամվայները, մարդատարները, իրենց գործարանը, Բալախանին, Սպիտակ քաղաքը, մայրուղի ու ցեխի մեջ ոտաբոբիկ կանայք, որ մայրուղի են քաշում կեղտոտ գույլերով։

Սև նավթահորերը։ Հրդեհ։ Շչակները լեռնապատառ ճչում են։ Բանվորները խելագարների պես խռնվել են կայարանի առջև, որ շրջապատված է բոցերով։ Այնտեղ պառկած է հիվանդ Գյուքին։ Նրան են ուզում փրկել։ Ի՞նչպես են կտրատում իրենց, ի՞նչպես են մղվում դեպ ու դեն, մագլցում պատերը, ցատկում կտուրներից, թոկեր նետում։

— Ուռա՜՜՜— գոռում են կատաղի ուրախությամբ բանվորները, և հիվանդ Գյուքին աչքերը մարած, փոս ընկած, գլուխը ծռած մի կողմ, տանջալից հայացքով նայում է դեռուդեն։

Նրան թոկերով կապած վար են բերում կտուրից։

— Հա՜յ գիտի, ընկերտիք... — Ծտի պես կթռչեին իր մոտ և թևերի վրա կթռցնեին իրեն։

Բայց ո՞ւր են նրանք...

Սարե՜ր, ձորե՜ր, դաշտե՜ր, էլի սարեր, էլի ձորեր ու դաշտեր...

Ուզում է լաց լինել, բայց միայն դեմքն է ծամածռում։ Արցունք չկա։ Աչքերը փակում է։

Ահա և իրենց գործարանի ճաշարանը։ Նստած են ամեն ազգի բանվորներ։ Դեմքե՜ր, դեմքե՜ր, դեմքե՜ր... Բոլորը... կենդանի, պարզ, ծանոթ։ Նրանք ասում, խոսում են։

Ականջները դժժում են, ինչպես հեղաղրի ականները։ Եվ կարծես թռչում է օդի մեջ, ու իր հետ գալիս են հոգնած մարդիկ, քաղաքները։ Նրանք վազում են, ինչպես ու գոռում, հասնում, հոսում...

Իր հնոցապան ընկերները — Մարտինը, Սպեկտորը, դոռ

Ահա նրանք վազում են դեպի ինքը։ Ահա եկան, կանգ առան իր մոտ։ Գրկում են իրեն, որ բարձրացնեն։ Ու ինքը մտովի փաթաթվում է նրանց ոտներին, այդքան ավետաբեր ոտներին։

Ի՞նչ էժան էր նայում նա իր ընկերներին, և ի՞նչ թանկ են հիմա նրանք։

Թա՜նկ — կյանքի չափ։

Բայց ի՞նչպես՝ կյանքը մինչև այնտե՞ղ էր։ Այսքա՞նը միայն։ Եվ ուրիշ ոչի՞նչ։ Ի՞նչ անսպասելի բան։

Ահա իր ոտնատեղը, հողի թարմ փլվածքը, երբ ինքը ընկավ փոսը — իր կյանքի վերջին գործը։ Դեռ մինչև երեկ երեկո նա կարողանում էր այդ անել։

— Իմ ոտի թափած հողը,— մտածում է էլը դառնությամբ,— մինչև էնտեղ է՞լ ձեռս չհասնի, էնքան է՞լ չկարենամ անեմ...

Շատ բան է ուզում ասել, բայց այդքան է դուրս գալիս։

— Էդ է,— խոսում է նա բարձրաձայն,— իմ ձեռիս ու ոտիս վերջին գործը։ Սրանից դենը էլ ոչ կրակ կվառեմ զավոդում, ոչ էլ ոտս նորից կկարենամ էդտեղ դնել։

Էլ երբեք, երբեք վերջին ոտնատեղով չի վերադառնա դեպի կյանք։ Ետ գնալ չկա՜։

Այնտեղ կյանքն էր. մի տեղ կա գնալու — դեպի մահ։

Հիմի մի գործ ունի նա — մեռնել։ Կյանքը վերջացավ։ Բայց ի՞նչպես պիտի մեռնի։ Ինքը մեռնի և ինքն էլ տեսնի՞ այդ։ Ինքն էլ հիմի մի կմախք է դառնալու՝ աչքերը ճոթռած, ատամները բաց, ինչպես այն դիակը, որ երեկ տեսավ ձորակում...

Չի՛ կարող լինել այդ։ Ո՛չ։ Ուրիշ բան թող լինի։

Նոր զգաց միայն, որ «կենդանի» ժամանակ, ամբողջ կյանքում նա հանգիստ էր, և դա նրանից էր, որ միշտ մի նեցուկ ուներ։— Հույսը։ Հույսը կենդանի մարդ էր, միշտ իր հետ, միշտ իր սպասին։

Հիմա այդ կենդանի էակը, այդ միշտ պատրաստ նեցուկն ինքը դիակնանում էր իր առջև, իրենից առաջ։

Չէ, դու էն ասա — ուրեմն էլ իսկի՞ չի պատահի, որ մեկը գա իր գերեզմանը փնտրելու։ Գործերը մնաց կիսատ, երեխան չի մեծացել, տունը ամայացավ։ Ուրեմն՝ ոչ ոք և ոչ մի ժամանակ չի ցույց տալ իր տեղը, թե՝ «ահա էստեղ է թաղված»։

Սառը քրտինք է տալիս վրան։

Ու սրտնեղում է։

— Օգնեցե՛ք, մարդ չկա... — Գոնե մի մարդ անցնի, իրեն տեսնի։ Թշնամին թող գա։ Նա էլ մարդ է։ Գազան թող գա։

Եվ զգում է, թե ինչ մեծ բան է մարդը, ընկերները, աշխարհովի կյանքը։ Ի՞նչ բան էր մարդկանց մեջ մեռնելը — խաղ ու պար։

Մի տանջալի պատկեր աչակերպվում, շարժվում է աչքի դիմաց։

Նա մեկ բացվում է, ժպտում, մեկ փակվում։ Իր երեխան աչքերը գարնան օրվա պես ուրախությամբ լի։

Վիրավորը մտովի փաթաթվում է նրա ոտներին և լոր, կաշվացած շուրթերով համբուրում։ Ու մի դառն դաշույն ծակում է սիրտը։

Հետո իր զավակի դեմքը փոխվում է ուրիշ դեմքի, այլայլվում է, քայքայվում։

Չյան հյուսեր։ Անդունդ։ Անձրև՞ն է թե գետը։ Ոչ։ Ականջներն են թշշում։ Գլուխը պտտվում է։ Ինքը երկնքում ճախրում է, երկինքը իր ոտքերի տակին սլանում է ուր-որ, ինչ-որ հարսանիք։ Լեռնային գյուղ։ Աղջիկները պար են բռնել։ Ահա մինը ծիծաղեց...

Մի լեռնային ջրվեժի մեջ է ինքը։ Խմում է, խմում, բայց սիրտը չի հովանում։ Ու ընկնում է զառանցանքի մեջ։

Ի՞նչքան ժամանակ է անցել... Զարթնում է։ Բայց մի՞թե քնած էր։ Չգիտե։ Աչքերը բաց է անում։ Ո՞րտեղ է։ Չի հասկանում։ Իր հետ ինչ-որ շարագուշակ, ժանգոտ բան է պատահել։ Ի՞նչ բան։ Ու հանկարծ հիշում է ու ցնցվում։

Հա՜։ Պիտի մեռնի՜։

Բայց մի՞թե նոր բան է դա։ Մի՞թե չգիտեր։

Այո, նոր բան է, ամեն րոպե նոր բան։ Ամեն րոպե նոր է զգում, հետո մոռանում, հետո լավ զգում, որ պիտի մեռնի։ Եվ չի կարողանում հասկանալ, որ այդ այդպես է։

Ջորացած սմբուլի մի կմախք իրենից մի քայլ հեռու իրեն է նայում և օրորվում։

Միակ շարժուն բանը, որի մեջ մի քաղցր, բայց շատ տխուր ժպիտ կա։ Կյանքի ժպիտը։

Նա իր վրա այնպես է նայում, որ ինքը այլևս մեռած է։

Ուժերն արդեն սպառվում են։ Շունչը կտրվում է։ Եվ կարծում է, որ եթե նստի՝ շունչը կհեշտանա։

Եվ ուժ է անում, որ նստի։ Չի կարողանում։ Գետինը, այդ մեծ ու ծանր գետինը կպել է նրան։ Հևում է, օդն է որսում։ Բայց օդն էլ փախչում է իրենից։

Նայեց սմբուլի կմախքին ու ձեռը գցեց նրան։ Պոկի՞։ Ոչ։ Հետո էլ «ոչ ոք» չի շարժվի իր մոտ։ Միակ շարժուն բանը իր շուրջը։

Ոչինչ չի փոխվում, ոչինչ չի օգնում իրեն։ Ոչ սպասելը, ոչ երազելը, ոչ քնքշանալը սմբուլի հետ, ոչ էլ քնելը։ Մի բան միայն ահավորապես ճշմարիտ է.

Պիտի մեռնի՜...

Արճճի պես հաստատ է դա։

Գոնե այնպես մեռնի, որ ինքը չիմանա...

Տիմոֆեյը ճշմարիտ էր, որ զայրանում էր։ Տեսա՞ք ուր բերին իրեն այս պատերազմը սարքողները։ Ի՞նչպես խորամանկորեն բերին գցեցին մահի ճանկը։ Մեռնել՝ մեռնել։ Ու մի թունավոր զայրույթ է օձանում նրա սրտի մեջ։

— Բռնես դրանց, բերես բերանը սեղմես արյան վրա ու խեղդես. «ահա, արյուն ես ուզում՝ խմի՛ր, տրաքվի՛ր»։

Եվ ինչո՞ւ եկավ, ինչո՞ւ այն հրացանը, որ իրեն տվին, չբարձրացրեց ու չզարկեց տվողի գանգին։ Մեռնել՝ մեռնել։ Այստեղ չէր մեռնի, այնտեղ կմեռներ։ Ո՞ւր էր խելքը։ Հա՜յ գիտի գիժ Տիմոֆեյ։ Ը՜, բռնես այստեղ ուղարկողների շլնքից, բերես այստեղ, երեսները զարկես քարերին, քսես, տրորես.

— Ը՜հ, կերեք, կշտացե՛ք... Է՞ս էիք ուզում... շան որդիք։

Ու գազանը զարթնում է մեջը։

— Մարդ չկա՞... Ո՞վ կա էդտեղ...

Կատաղում է։

Այլևս ոչ մի սարսափ, ոչ կյանք, ոչ մահ։

Եվ խռպոտ ձայնը լարելով, հետզհետե ձայնը սրում է ու զիլ ոռնոց է արձակում, սոված գայլի խռպոտ ոռնոց։ Հետո ճանկրտում է գետինը, ուզում է սողալ, կրճտում է ատամները, պոկում է խոտերը, «իր վերջին ընկերոջը» — սմբուլը, քարը, հողը...

Բայց այդ ամենը բոլորովին զուր։ Պիտի մեռնի...

Գիշերը սողում է ձորակից վեր։ Առարկաները սուզվում են

խավարի թանաքի մեջ։ Վիրավորի բոլոր շարժումները հետզհետև դառնում են անմիտ ու անօգուտ։ Նա բոլորովին արյունաքամվում, ուժասպառվում է։ Եվ սկսում է անկապ զառանցել։

Զառանցեց ամբողջ գիշերը։

Այնուհետև «ինքը» այլևս այնտեղ չէ։

Դա մի անգիտակից մսակույտ է, որ խոխոռում է, ջղաձգվում և մահ է աղերսում։

Լուսանում է։

Անշարժ մի դիակ դաշույնի սառը աչքերը չռել, նայում է վեր։

«144 բարձունքի դիմաց ոչ մի փոփոխություն։ Ամսիս 5-ին, երեկոյան հաջող հետախուզություն ունեցանք։ Միայն մեկը ըսպանված»։

1922

ՁԱՐԳՅԱՀ

Կարավանը ռիթմ է տալիս անապատին։ Ուղտերի տեռնած սապատները ալիք-ալիք՝ մակույկներ են ելնում-իջնում։ Իսկ ճանապարհորդները հոգնել են, հաբբել են անապատից։

Առջևում նառն է՝ ուղտ-պարագլուխը հպարտագլուխ, վեհ։ Քայլ է առնում դարիվ-դարիվ, վրան մատաղահաս Նինգիլը, վրան բոժոժ ու զանգ՝ նազան, ճոճան, զանգ-զրանգ։

Հետևից ուղտերը հատված-հատված, լեռնաշղթա։

Մեղկ ձայն է տալիս զանգը զանգին։ Խոր հետ է դարձնում զանգին զանգը։

Ու ճոճվում են։

Առջևում Նինգիլը։ Ու մինչ սա նետվում է ծովի ալիքի պես առաջ-առաջ, հետևյալ ուղտի մեջքին ծեր Իբրահիմ խանն է ընկըղմում փոսը կիսամրափ։

Հետո բեռներն են վերուվարում՝ հակեր բուրալի, ծաղկած գորգեր։ Հետո Ալի Նիզամը, խանի մուլքադարը — փոքրամարմին ապխտած կապիկ։ Սրան ի պատասխան ճոճում է քիրմանշահցի վաճառական Հյուսեինը՝ սև սաթ գանգրամորուս։ Հետո ծերուկ Բուրխանը — գրագիր փիլիսոփան՝ կրուկե մորուքը օդում, գլուխը քսում երկնքին։ Նրա շարժումը կրկնում է շվեդացի լեզվաբան պարսկագետը։

Հետո բեռներ, հակեր, մարդիկ, գորգեր, բոժոժ, զանգեր, զանգ-զրանգ։

Նիրհում են խանի զառամ կատվի աչքերը։ Հենց նոր Թեհրան էր գնացել նա աչքերը բժշկելու և միաժամանակ ներկայելու երեք ռևոլուցիոներների խեղդելուն կախաղանի վրա։ (Նրանք իր ամբարները կրակել էին)։

Նրանք խեղդվեցին։ Ասում են զվարճացրեց տեսարանը ծերուկին, նա կյանքի եկավ և երեխայի պես ծիծաղեց։ (Այդպիսի

տեսարաններից հետո նա մի քանի օր բարի է դառնում)։ Ասում են՝ նրան էլ խեղդում է իր ամրոց-տան բարիքի կատաղած առատությունը, հարյուրավոր գորգերի արյան գույնը, բուրաստանների թունավոր ծաղկաբույրը ու ցորենը — գյուղացիներից քաշած բոլոր ցորենը, որ փտում է նրա ամբարներում։

Ուղտերը ճռնչում են զանգ-զրանգ ու զանգ-զրանգ։

Իսկ նրանց ապալուցից-սապատ խոսքեր են նետվում։

— Նինգիլը... (Մուլքադարի ձայնն է լսվում, խոժակցինը՝ ոչ), հայրը գյուղացի էր... Չէր տալիս, բայց բռնագրավեց խանը... պարտքի դիմաց... ասում են աղայի համար է տանում, բայց... ով գիտե... Շատ լացեց, բայց ճամփին մնաց լացը... Մաղձի պես բան է՝ արշալույսին կարտասվի, կծիծաղի արևածագին... Սինեման... հետաքրքիր չէր... Բայց Ֆատիհ խանումին հանդիպեցի այնտեղ... Հենց վալազարումն է կենում... տասներկու տարեկան աղջիկ ունի... լավ մազա է... (ծիծաղում է մուլքադարը)։ Հետո հառաչում.—

Դե՛...

«Ուր հայտնվի սերը սուլթան՝

Տեղ չի մնա պարկեշտության»։

Լռում են։

Ուղտերը զանգ-զրանգ։

...— Երեքին էլ կախեցին... Հետաքրքիր չէր, բայց ինքը (խանը) հրամայեց, որ գնամ հետը տեսնելու... Փասիանները... ի՞նչպես ասեմ. գեր չէին, բայց ամբողջ երեկո գլուխ կոտրեցինք՝ չկարողացանք հասկանալ, թե խոհարարը ինչ հնարքով... Ովքե՞ր... Ֆրանսիացի առևտրական ագենտն էր, նորին գերազանցությունը և Մանսուր խանը... Նորին գերազանցությունը սիրեց պորտվեյնը։ Դա շատ մեծ հաջողություն էր... Ռևոլուցիոների ձեռքը կտրեցին... Ոչ, չկարողացավ մինչև բժիշկը վազել... Հենց մեյդան հասավ՝ կյանքը երակից գնաց... Մյուսը բախտավորների մոտ է։ Ընկերոջը կաշառել են, որ «քնացնի»... Զիա-Եդդին Դովլեթին անհարմար էր ձերբակալելը... թեև կերածը քիչ չէ — երեսուն հազար թուման... Իրեն (խանին, որ գնում է ուղտով) ասացի ավտոյով վերադառնաք, գերազանց ուղտը... Մայրը չի սիրում, որ «ատանի» մեքենան տանը մտնեն... Մորից քաշվում է... Հա՛, շատ է բարեպաշտ։ Սուրբ մարդ է... Եվ հետո ճամփան էլ քարքարոտ է. ինչպես մնացել է հայրերից-պապերից, ուղտով... դե՛, կամա՛ց-կամա՛ց։

Թրթռաց օրվա պատուհանն արևմուտքում։ Օրը հանգավ։

Ընթանում են ուղտերը պղնձե, ինչպես դարեր կորաքամակ, զառամ ու նրանց պես հնաթախիծ երգերն են զնգում։

Զանգ — ձայնում է զանգը զանգին։ Զանգը դառնում է զանգին զանգը։ Թաժոժների առվակներն են օդի մեջ ալում, ալում։

Մտորում է ճամփան։

Բարակ դա մի գետ է թախծալի, գնում է լցնում քաղաքներ, գյուղեր, իր սրտի մեջ առնում թախիծ ու մտքեր, տանում ցրվում աշխարհե աշխարհ։ Աշխարհակալներ են եկել զնգացել կարավաններով այս ճամփաներում ու գնացել ցրվել իբրև խռիվ հեռաստաններում։ Կարավաններ են ճոճացել, իրենց հակերում տարել ցորեն, վարդաջուր, արմավ, թիրաք, բեհեղ, թույն, թղթերում ծալած մահավճիռներ, ողջույններ սիրո։ Որքա՜ն հույս, որքա՜ն թախիծ։

Եվ Ռիզան մտորում է՝ հետևակ գնալով Նինդիլի կողքով։ Ռիզան զզզված է, փոշոտ։ Ավազն ու խիճը կրծոտում են նրա ոտների հաստակաշի մատները։ Լափչիները քրքրված են ինչպես փրփուր։

Փնթփնթում է Նինգիլի հասցեին։

— Տեսնես ո՞ր շան համար է։ Ափսոս...

Հարցրեց մոտից գնացող կարավանապետին։ Կարավանապետը խեթ նայեց.

— Բանիդ կաց։

Ռիզան թափառաշրջիկ է, տոպրուկը կողքին։ Նա եղել է բանվոր «Անգրոպերշին Օյլում», բեռնակիր՝ Բենգեր Բուշիրում, մշակ՝ Գիլանում։ Բայց թափառում է ավելի։ Հիմա գնում է կարավանի հետ։ Ուր. այդ գիտե նրա ճակատագիրը — դեպի լուսավոր մի օր, թերևս կախաղան։ Ռիզան մենակ չէ։ Նրա պես հազարներ շրջում են ամբողջ Իրանը։ Նրանք հեքիաթներ են պատմում կարվանսարաներում։ Հյուսում են այդ հեքիաթները գյուղացիների կյանքից, իսկ երբ նյութը պակասում է, նաև իրենց արկածներից։ Բախտավորներն արհամարհում են այդ հեքիաթները, բայց ռամիկներն ու աղքատները սիրով լսում են։ Այդ հեքիաթների մեջ փայլատակում են ցորենի ամբարների ոսկի հրդեհներ, նրանց մեջ

կարմրում է արյունը, արցունք կա նրանց մեջ և վտանգ ասողին էլ, լսողին էլ։

Կարավանապետը մաղլ մարդ է, փորձված ու տանջված։ Նա զգուշանում է Ռիզայից, բայց և չի ատում նրան։

Ռիզան մի քիչ հետ մնաց, սկսեց քայլել Իբրահիմ խանի ոտի հետ։ Խեթ աչքերով, տակից նայում է նրան Ռիզան — խանը սմքել է՝ դառել կնճռոտ վայրի խնձոր։ Գնում է Ռիզան նրա կողքով թասակը ծոծրակին, ձեռքերը քամակին, ճակատը բաց, այդ գյուղացիական ահագին, բազմանկյուն ճակատը, որից քրտինքի կայլակներ են կաթում — դառն, այրող։

Հետո Ռիզան փակում է աչքերը։ Այնտեղ, աչքերի մեջ տեսարան է բացվում — այրող սակայն։ Արևը լափում է դաշտը դեղին շուրթերով։ Մի տաշոր աղջիկ, գույնը լիմոնի, քաղհան է անում մուլքագարի բամբակի արտում։ Տասնամյա աղջկա աչքերը խոշոր են, նա աչքեր է միայն՝ մնացածը ազազիլ կմախք։ Տենդը տղրուկի պես խմել է նրա հյութերը, թողել աչքերն ու թախիծը։ Այդ աչքերը կարոտով են նայում կյանքին, բայց մահվան ժպիտը կաթիլ է արդեն նրանց խավար ցոլքի մեջ։ Աղջիկը պառավել է չերիտասարդացած։

Ռիզայի աղջիկն է։ Ռիզան այդպես թողեց նրան դաշտում ու գնաց տուն։ Խճուղու եզրին քար չարդողը աչքով էր արել նրան։ Նա մոտեցել էր ծխախոտը վառելու պատրվակով։

— Գիլանցիք քանտումն են, «Հեքիաթը» կախված է։ «Պատրույգը» չկա։— Կծիկը դիր...

Տանը պառկած էր կինը՝ հիվանդ, ծանրահոտ։ Տնքում էր առանց օգնություն խնդրելու։ Մի ամիս է չէր դուրս եկել դաշտը։ Օրավարձ չուներ, մնում էր մեռնել։ Մեռնում էր դանդաղ և դա էր ցավը թե իրեն թե ուրիշներին։ Նրա կողքին տենդում տապակվում էր մի ծեր մանուկ։

Ռիզան գնաց հավաքուն, ուր չկար և ոչ մի հավ, հանեց պատի արանքից իր յուղած դանակը, թաքցրեց՝ էլ չես իմանա որտեղ, վերցրեց սև թոքոնն՝ դառն ու մաղձոտ, ինչպես իր կյանքը։ Նայեց հացի տաշտին, ուր մի կտոր կար, ձեռը թափ տվեց վրան։ Մտածեց — մի ամբողջ կյանք — եկավ նայեց կնոջը, որ չէր նայում իրեն, ուզեց մի բան ասել, չգտավ ոչ մի բառ, այնքան շատ բան էր իր ասելիքը, դուրս եկավ դուրը, թքեց երկրի վրա, որը երբեք չէր բուացրել նրա համար մի հատ ուրախության ծաղիկ և գնաց կրկին դաշտ քաղհանի։

... Եկավ երեկոն։ Մուլքագարի մշակները վերադարձան տուն։ Ռիզան մնաց առվի մոտ, տոները լվանալու։ Հետո երեկոն ժանգոտեցնելով ետ դարձավ։ Եվ Ռիզան իրեն նետեց գիշերային խավարի մեջ, գնաց դեպի սարերը հեռուները։

— «Գիլանցիք քանտումն են, «Հեքիաթը» կախված է, «Պատրույգը» չկա։

«Կծիկի» թելը բացվել է։ Հետևյալն ինքն է, հետո ուրիշները, որոնք շրջում են այժմ գյուղեր ու քաղաքներ քրքրված, գզգզված ու դառն, ինչպես ծխամորճի ծխի թույն։

Ռիզան գնում է, տանում է իր հետ իր կյանքը, իսկ արյունը լուրջ հեղուկ է։ Ռիզան մտածում է այդ մասին։

Զանգ զրանգ... Արթնանում է Ռիզան։

Սահում է Նինգիլը մթնաթախիծ ուղտի մեջքին, հրաշքի պես փախչում օդի միջով, և նրա հետևն է ընկել Ռիզան՝ քրքրվելով ճամփի խթեների մեջ։

Ինչն է Նինգիլի մեջ քաշում Ռիզային, այրում. արդյոք այն, թե ինչու է Նինգիլը ուրախ կրակի պես ու լցնում է օդը ցնծագին խնդությամբ, թե՞ ուրիշ բան։

Ահա կոհակում է Նինգիլը կարավանի երգի մեջ։ Գեղեցիկ է նա, երբ ուղտի մեջքից ինչպես աղեղի միջից՝ լարված նետ՝ սլացող միտում է դեպի հորիզոնը։ Նա ամբողջացած է ուղտի հետ, և ամբողջությունն ընթանում է հանդիսավոր՝ ինչպես պոեմ։

Ու մինչ ժպտում է Նինգիլը՝ չարությամբ նայում է նառը։ Զարդարել են նրան, բայց զարդերը իրենը չեն, տակին նրա զայրույթն է։ Նրան չի ուրախացնում ոչ իր այդ գեղեցիկ բեռը, ոչ էլ զարդարանքները։ Ոսկի բոժոժների ու մետաքսի փնջերի մեջ պարուրված՝ նա անմասնակից է իրեն հագցրած այդ գեղեցկությանը։ Հայ՞րտ է նառը — մի՛ նայեք նրան։ Նա ընթանում է ինչպես ժամանակը, որին ամենքը նայում են, իսկ ինքը չի նայում ոչ ոքի։ Ահա բարձրացրեց ու թեքեց գլուխը մեկ աջ, մեկ ահյակ, նայեց հեռուները, ինչպես հպարտ մարգարե կարդալու նզովք աշխարհին։ Ծյդ բոպեին նրա աչքերը ատելություն են ցայտում։ Դժգոհ է գնում նա ու տեղում յուրովի։ Թեհրցն է, շոգիցն, սոված է, հոգնած... Ահա մի ձայն է արձակում դեպի հեռաստանները,

հնագույյան հազարամյա ձայն՝ դառն, ատելի, նախանձափրփուր։

Մի շեշտ կա սակայն այդ ձայնի մեջ՝ խորին, անհուն մի վիշտ։

Ու էլ ոչնչով իր տրտունջի միտքը չի հայտնի, գաղտնի է տանջվում նառը։ Լեզվաբանը ուղտին է նայում. չի՞ կարելի արդյոք վերծանել ուղտին, հասկանալ պատճառը նրա մռայլության։ Ու զարթեցնում է «կրակե մորուքին».

— Ինչո՞ւ է ուղտը տխուր այդքան, Միրզա։

«Կրակե մորուքը» չի լսում։ Նայում է մշուշ աչքերով։ Երազում է արթմնի։

Նրա տեղ արձագանքում է վաճառականը.

— «Ուղտի գործն ի՞նչ է էլ.— Հենց բեռ կրել, տխրել»։

Ուղտերը ճոճվում են, զնգում է նառը, կոհակվում Նինգիլը։

Լեզվաբանն աչքով է անում Նինգիլի կողմը.

— Բայց եթե ուղտն իմանա թե ինչ գեղեցիկ բեռ է կրում...

«Կրակե մորուքը» փիլիսոփայում է.

— Գիշերվա սև մեջքին վարդալույս այգը գնում է ծիծաղով, իսկ գիշերը տխրելով,— մեր կյանքն է դա, բարեկամ...

— Մեր կյանքը...— և լեզվաբանը ժպտում է խորհելով։

— «Այգի լույս ուրախ ինչով իմացվեր՝
Եթե սև գիշերվա տխուրը չլիներ»—
Մեր կյանքն է դա, բարեկամ։
Լեզվաբանը հարցրեց.

— Ուրեմն կյանքը տանջվելով է ուրախանում։ Դա պարադոքս է, Միրզա։

Միրզան քմծիծաղով.—

«Ով կասի թե ինչու
Տրտնջում, քրքջում,
Խինդի մեջ է տանջում
Կյանքը միշտ ինքն իրեն»...

(Իսկ կարավանը՝ զանգ-զրանգ)։

Միրզան ոգում է.

«Նա, ով շինեց կրակե ծաղիկը՝
Նաև նա թույն խառնեց հետը.
Թունավոր է գեղեցիկը,—
Այսպես է ամեն գեղեցիկ։
Սիծաղի տակին արցունքն է պահված,
Ժպտում արև, արցունքն հետը.
Եվ երկուսով միայն խառնված,—
Այսպես է կյանքը գեղեցիկ»։

(Իսկ կարավանը զանգ-զրանգ)։

Հանկարծ անապատը ոռնաց։

Ռիզան էր դուրս եկել ճանապարհից, հեռացել, որ ձայնն արձակ հնչի։ Նա էր, որ ոռնաց տանջված գայլի ձայնով։

Դա գրոհի երգ էր, մարտական կարավանի, որ ոտ է առնում, շարժվում սպառնագին ու դիզվելով զարկում՝ զանգ-զրանգ։ Այստեղ ուղտերը ռազմական են, զանգերը հնչում են մարտի կոչելով, իսկ նրանց մեջքին թունավոր հողի պես գալարվում, թափահարվում է հարձակվողների մոնչոցը և հոսում դեպի թշնամին։

Լսում են՝ շարգյահն է։

Հիմա զանգերը այլ կերպ են հնչում, ուղտերն այլ կերպ են ճոճվում՝ զանգ-զրանգ...

Ռիզան ոռնաց, բողոքեց, լացեց օձի պես, հետո մոտեցավ, վերջացրեց երգը՝ քթի տակ ավելացնելով իր բառերը, ինքն իրեն.—

Գիլանցիք բանտում են,
«Հեքիաթը» կախված է,
«Պատրույգը» չկա —
Այ Նինգիլ...

Ու նայեց Նինգիլին շանթահարող աչքերով։

Վերջին հավելումը երգեց թիվ, հեգնական շեշտով, հետո զայրույթով մռմռաց ու թքեց։

— Այդ ինչե՞ր ես երգում, բարեկամ։

(Մուլքադարն էր)։

— Էսպես մի երգ կա։

— Դա գող ու ավազակի երգ է։

— Գողի, թե ավազակի, բայց ճանապարհի երգ է։ Գնում ես, գնում, ճանապարհդ չի հատնում, երգում ես՝ հատնում է։

Մուլքադարի ախտավոր քիթը կնճռոտվեց լպիրշ ծիծաղով։

— Հատնելն ինչի՞դ է պետք,— գնա՛, էլի։

— Ուղտի վրա ես՝ պետքդ չի։ Իջիր՝ կիմանաս։

— Ներքև ի՞նչ կա։

— Ոչինչ։ Լափչիներգ է քրքրվում, գուլպադ, ոտիդ կաշին։

— Է, թող քրքրվի — նորը կգա վրան։

— Հոգուդ է հասնում, իսկ հոգին կաշի չունի։

— Հոգին էլ թող քրքրվի, հետո...

Ծիծաղում է մուլքադարը, ծիծաղում է քիրմանշահցի վաճառական Հյուսեինը։

Իսկ կարավանը զանգ-զրանգ։

— Է հերիք է, դադար։

Խանը հանգիստ է ուզում — թեև կարավանները գիշերով են գնում առհասարակ։ Խանը սուրճ է ուզում վայելել անապատի հովում, նիրհել մի փոքր։ Իր պալատը հեռու չէ։

Կարավանապետը նառի բերանի պարանը բռնեց ու կախվեց։ Հետևող ուղտերը կուտապ-կուտապ հավաքվեցին, կանգ առան։ Ցամաքեց բուժուժների ու զանգերի երգը, հնչյունները հատ-հատ միայն կաթկթեցին ավազի վրա։

— Իջեք։

Ջոքեցին ուղտերը բլուր-բլուր։

Ճամփորդներն իջան ավազի վրա՝ երազկոտ հոգնությունից։

Դուրս եկան ճամփից, փռեցին գորգերի ու կարպետների դալարը խիճերի վրա։ Ներքև սահեց Նինգիլը նառի վրայից ու գնաց մտավ խանի գրկաբաց վրանի գորգերի վարդաստանը։

Նստեցին ճանապարհորդները կրակների շուրջը.— Կբակե մոբուքը, մուլքադարը, վաճառականները։

Մի փոքր հեռու՝ ուղտապանները։

Հետո լռություն։ Անապատը ականջները սրեց։ Միայն համրիչները՝ չակ-չուկ։ Եվ կրակը՝ հո՜ւռռռ։

Նառը չի հանդարտվում։

Խփում են պարանով,— որ չոքի — չի զիջում, համառում է, բղղում։

— Այնպես է բղղում, կարծես խիստ վիրավորված է, բողոքում է, չի ներում։ Դա ինչ-որ տրտունջի ձայն է,— վերծանեց լեզվաբանը։

Քիրմանշահցի վաճառական Հյուսեինը թիկն է տալիս իր հակերին.—

— Դա տրտունջի ձայն չէ — համրիչի հետ ծանր-ծանր շարեց նա — ուղտը այդ ձայնը հանում է և անբեռ ժամանակ, և չոքած, և կուշտ։ Այդ ձայնը (ծուխը ներս քաշեց Հյուսեինը) մի ձայն է, հենց այնպես, անիմաստ (արտաշնչեց ծուխը)... Եվ ինքն էլ չի իմանում թե ձայն է հանում։ Չի էլ լսում իր ձայնը։

— Բայց մի բան ուզում է,— փորձում է լեզվաբանը։

— Հազար տարիներ ուզում է։ Հազար տարիներ կարավանում գնում է։ Դիտում ես՝ թվում է թե ուղտը գիտես ինչ բան է։ Բայց ուղտին ոչ ոք չի ճանաչի։ Ուղտը անհասկանալի կենդանի է։

(Համրիչները՝ չակ-չուկ)։

— Ուղտը լուռ կենդանի է, չի տրտնջում։ Դա նրա իսկական ներսի ձայնը չի։ Օրեր, շաբաթներ, ամիսներ կընթանա, ոչ կեր կպահանջի, ոչ խմելիք, ոչ հանգիստ — սակավապետ է ու լուռ։ Նա իր ներսինը չի հայտնի։ Տեսեք, ահա քնած է իբր թե։ Բայց թվում է։ Մի կարճ մրափ, և դա է ուղտի քունը։ Նա իր մեռնելն անգամ ցույց չի տալիս։ Ջոքում է, վիզը դնում ավազին, մի տընքոց և վերջ — ուղտ չկա։

— Գոռող է գուցե։

— Ով գիտե։

— Եվ մի վիշտ ունի անշուշտ։ Ի՞նչ կասես, Միրզա։

Միրզան համրիչն է քաշում, ինչպես իր մտքերի շարանը.—

— Մութն է ուղտի վիշտը — ով իմանա։ Նա վիրավորված է։ Նրան խոր վերք է տվել ճակատագիրը, և նա այդ չի մոռանում։ Ուղտը կյանքն է։

Ու լռում են Միրզայի մտքերը։ Միայն համրիչը՝ չակ-չուկ։

Լեզվաբանը մտորեց երկար ու փակեց իր միտքը.

— Բայց մի ինչ-որ տխուր վեհաշուք բան ունի իր ամբողջ կերպարանքի մեջ։

— Անապատից է,— մոմոաց Միրզան։

Մանրում է խարույկի շողշողուն գանգուրները մեղմ հովը։ Պարում են ստվերները անապատի վրա, իսկ վերը երկինքը քընքուշ թավիշով ծաղկում են աստղերը։

— Հիմար կենդանի է,— գոչեց մուլքադարը։

— Հիմար,— արթնացան խոսակիցները։

— Շատ հիմար։ Հազար տարիներ սերնդից սերունդ աշխատող ուղտը չի ընտելանում, չի հաշտվում իր գործի հետ։ Ուղտի գործն ինչ է՝ բեռ կրել։ Բայց — նկատեցեք բեռնելիս, թե բեռը թափելիս միշտ փնթփնթոց է, միշտ համառություն։ Մի հոգս ունի միայն — ճամփին, շարժման ժամանակ, որքան կարելի է շատ պաշար հավաքել իր բարդ ստամոքսը։ Ոչ սովորությունը, ոչ խնամքը չեն ազդում նրան։ Չի կապված իր տիրոջը, չի էլ զգում ով է նստած իր մեջքին, իր տերը թե օտարը։ Ինքը չի աշխատի քեզ վայր գցել, այդքան խելք ու հնարամտություն չունի։ Բայց որ ընկար, չի կանգնի, չի նայի, կգնա, իր համար ուր, ում մոտ՝ ուր պատահի, ով բռնի։ Բայց նկատեցեք,— երբ նստում ես վրան՝ նա մեկ-մեկ ետ է ծռում վիզը, որ եթե կարելի է մի անգամ կծի քեզ և ամենն անգամ մի ուժեղ հարված պիտի հասցնես գլխին, որ դունչն իրեն քաշի։

— Բայց, հախ աստծու՝ դիմացկուն չարքաշ է, հլու անասուն։

— Հլու...— Մուլքադարը խնդմնդաց բորենու պես,— եթե ուզում եք դրանով ասել հիմար՝ համաձայն եմ։

Անապատը մտածում է։

Իսկ համրիչները՝ չակ-չուկ։

Վեր նայեց Կրակե մորուքը,—

— «Կյանք է տանում մեջքին, ինքը մի կյանք է, առանց նրան անապատը կճարակեր շեն ու քաղաք»։

— Բայց՝ տարօրինակ կենդանի է,— հարեց լեզվաբանը։

— Ահա այսպիսի մի բնութք է,— կցեց վաճառական Հյուսեինը։

Եվ երկար լռություն։

Որից հետո՝ մյուս վաճառականը.—

— Մարդու նման է, քմայքներ ունի։

Մթան մեջ մեկը խլրտաց.

— Ժողովրդին է նման,— մոմռաց խուլ, մթան միջից, կարծես դարանից։

Զրուցողները ետ նայեցին։ Ռիզան էր։ Նրա ձայնը բութ հարվածով դիպավ օդին, կարծես քանդի պատի միջով խոսեց նա։

Լուցկին դեղնեց խաղաղ կրակով։ Նրա լույսը ներկեց Ռիզայի մաղձոտ, սև դեմքը՝ խոշոր, դաժան։

— Ուղտը համբերող կենդանի է։ Դրա համար էլ պետք է զգույշ լինել նրանից։

— Ինչ կանի։

— Կթքի։ Իսկ նրա թքի մեջ թույն կա։

— Թույն չկա, մուրտառություն կա,— նայեց նրա կողմը մուլքադարը։ Եվ մատը մեկնեց նառի կողմը։

— Այ, տեսեք, սրան մի անգամ այնպես եմ թակել, որ ձեռքերս երկու օր ցավում էին։

— Ինչո՞ւ։

— Բեռ դրին վրան։ Խանի բեռն էր։ Չի ուզում վեր կենա։ Մշակի պես բան է։ Պիտի գլխին մի լավ տաս։—Ու խեթ նայեց Ռիզայի կողմը։

Ռիզան ծխել սկսեց։ Խուսափուկ, ճկուն ծուխը դառնորեն դուրս էր լողում բերանից, փախչում դես ու դեն ու թաքնվում օդի մեջ։

Մի սև սպի շեշտակի թրատում էր Ռիզայի դեմքը վերից վար։

— Վերջին երաշտ տարին էր,— խոսեց Ռիզան, կարծես ինքն իրեն,— էն որ շատ շատերը հարստացան։ Հիշո՞ւմ եք, որ խանը փտեցրեց հորերում երկու հազար խալվար ցորենը։ Զարմանալի առատություն էր նրա ամբարներում։ Տեղ չուներ պահելու։ Ժողովուրդը ճանճի պես կոտորվում էր։ Եվ — տեսեք — ցորեն առնող չկար։ Հիմար է ժողովուրդը։

Ու լռեց։

— Դու հեքիաթ ասող ես,— խեթեց մուլքադարը չարաժպիտ նայելով դեպի խավարը՝ Ռիզային։

— Եղել է, պատմել ենք։

— «Կրակի հեքիաթներ» էլ պատմել ես։

— Դա ինչ բան է — չեմ լսել։

— Թեհրանում «կլսես»...

Ու ծիծաղեց, աչքով անելով վաճառականներին։ Սրանք էլ ծիծաղեցին։

— Ո՞րն է կրակի հեքիաթը — հանկանալ է ուզում լեզվաբանը։

Մուլքադարը թունոտվեց։

— Սկսվում է ցորենի ամբարներից, վերջանում է սապնած պարանի օղակում։ Ավազակներն են այդ, որ շրջում են ամբողջ

Իրանում, նստում գյուղացիների հետ խանի ամբարների մոտ ու հեքիաթներ պատմում։ Այդ հեքիաթներից կրակ է դուրս գալիս՝ վառում ամբարները։ Մուրտառներ...

Ու ծամածռեց մի քանի հայհոյանք իր կապկային բերանում։

Լռում էր Ռիզան, լռում էր անապատը։

Համրիչները՝ չակ-չուկ։

***

Կարավանը քնած է։

Մութն է անապատում, հեքիաթներ են շրջում անապատում։ Խավարի մեջ ստվերների պես, անհասկանալի, ինչպես ուղտերը՝ լցնելով ամենուրեք ուղտային տխրությամբ։ Մութն է անապատում։ Հենց նա ինքը մի մեծ ուղտ է՝ չոքել, սև ու տխուր սապատները մխրճել հորիզոնի գծի հետ երկինքը։

Իսկ վերը, տիեզերական կապույտ գրքի մեջ կրակի մտքեր են վառվում, և այդ մտքերն են՝ կյանք։ Ծծմբային գրերով այնտեղ գրած է՝ հավերժություն։

Գիշերը շրջեցնում է իր ճախարակը։ Անապատը սկսեց փրսփրսալ։

Դեղնազարհուր լուսինը գլուխը հանեց գետնի տակից՝ ինչպես գերեզմանից։

Հորիզոնի գծի վրա, երկնքի ֆոնի մեջ գծագրվեց նառը։ Նա չէր չոքել, որ նիրհի։ Նա կանգնել էր ինչպես մարգարե և դիտում էր դարերի ընթացքը, այնքան խորասույզ էր նրա կերպարանքը։

Մուլքադարը գնաց դեպի գորգե մեծ վրանը, ուր քնած էր խանը Նինգիլի հետ։ Մոտեցավ նայելու վրանի դռան, ուր գամփռի պես պառկել էր խանի ծառան՝ Մահմեդը։ Մուլքադարը կանգնեց և աչքը վրանի կողմը՝ ականջ դրեց հո արթուն չի խանը։ Ոչ, ըստ երևույթին։ Բայց նա սուր ցանկություն զգաց, որ իրեն թվա թե վրանում շնչառության հետ մի բան է փսփսում։ Շարունակեց ականջ դնել։ Խանդ զգաց՝ տանջալի, հաճելի, անզուսպ հետաքրքրություն և փախչելու դրդում։

Մեղկ լուսնալույսի մեջ հալվում էր ամեն շնչառություն։ Մուլքադարը հիշեց Թեհրանի վերջին մի քեֆ մի երիտասարդ կնոջ հետ, զգաց նրա գաղջ մարմինը և...

Մի բութ աքցան բռնեց մուլքադարի ծոծրակը և սեղմեց։ Նառի ատամներն էին։ Մուլքադարը գոռաց ու հետո... հեռացավ անապատից, երկինքը պտտվեց, աստղերն իջան ոտներից ներքև, երկիրը բարձրացավ վեր։ Նրա կապկային թեթև մարմինը կծկվեց, մի փոքրիկ ոստյուն գործեց ու կախվեց ուղտի ատամներից, որոնք սկսեցին ցայել նրան ավազի վրա։

Ուղտը մի ուժգին շարժումով թափահարեց նրան, ցած դրեց և կանգնեց բութ անասնական անշարժությամբ։

Կարավանը զարթնեց։ Մարդիկ վեր թռան։ Ուղտապաններն և խանի ծառաները հարձակվեցին նառի վրա։ Ուղտը բութ ու անշարժ նայեց նրանց, երբ անգամ գավազաններն իջան իր գլխին։

Կարավանապետը վրա վազեց ու կախվելով ուղտի պարանոցից, սկսեց կատաղի անիծել զարկողներին։ Սկսվեց մի մոլեգին կռիվ նրա և ծառաների մեջ։ Նա գազանի պես մռնչում էր, հևում, ոռնում և ընդունում հարվածները, որ տեղում էին մեկ նրա մեկ ուղտի գլխին։

Վախեցած դուրս նայեց Նինգիլը և չէր հասկանում, թե ինչի են ծեծում ուղտին։

Վեր թռավ խանի գլխավոր ծառան, կացինը խլեց։ Նրա դեմքի այտերը եռում էին, խլթխլթում։ Կարավանապետին մի կողմ քշեցին։ Ծառան գորիլլայի պես կողքե-կողք առաջ եկավ ու կացնի մի ուժեղ հարված իջեցրեց ուղտի ճակատին։ Ուղտը չոքեց անմրոունչ։ Ծառան սկսեց հարվածել ուղտին ինչ-որ մի կուտակված ներքին զայրույթով ու մոլեգնությամբ։ Ուղտը լուռ էր, սատկել էր արդեն, և դա էր կարծես կատաղեցնում հարվածողին։ Ու որքան իջնում էր հարվածները, այնքան ավելի լռում էր ուղտը և տգեղանում, որքան լռում էր ու տգեղանում, այնքան ավելի էին հարվածները զայրանում։ Ուղտը դուրս թքեց իր բոլոր տգեղությունն արյան, ուղեղի, ոսկրի մի զզվելի խմորով։ Զարկողը չհաղթեց։ Ուղտը չհաղթվեց, իր այդօրինակ դիմադրության մնաց։ Մնաց տխուր, լուռ, տգեղ ու ատող։

Եվ գաղտնապահ։

Փշրվեցին նառի բոժոժները, զանգի մեջ խեղդվեցին երգերը, հնչյունները թափվեցին գետին։

Փռվեց ուղտը անշարժ ու այլանդակ՝ բուրելով խոնավ մի հոտ ավազի հոտի հետ խառն։

Մուլքադարի դին մումիայի պես փաթաթեցին վերմակի մեջ։

— Մուրտառ անասուն,— մռմռաց կացնահարողը։— կծածկի, կլոր, չի հասկացնի ոչինչ ու վերջը մի մուրտառ բան կանի, ոնց որ արեց։

— Բայց ի՞նչ եղավ, ի՞նչ էր պատճառը,— խռովահույզ հարցրեց լեզվաբանը։

— Վրեժից — ուղտը վրեժ ունի...

Ռիզան էր։

Հեռացան։ Հարթ անապատի վրա սև թմբի նման մռայլվեց ուղտի դիակը՝ անխոս լեզուն ավազի վրա երկարած։

ԱԴԱՋԻՈ

Հպարտ վարպետը գրկեց իր վիոլոնչելը, կոպիտ աղեղը հպեց լարերին և ապա նայեց դահլիճ, ուր հազար աչքեր իրեն հառած՝ սպասում էին։

Սպառնագին լռություն։

Վարպետը խեթ ու կողքանց նայեց դաշնակահարին և մռայլվեց։

Սպասեց մի վայրկյան ևս։

Հանկարծ զարկեց լարերին։

Վիոլոնչելը օտարոտի կոնչոց արձակեց։ Վարպետը կծեց իր շրթունքները և վիոլոնչելի կոկորդը սեղմեց։ Բայց վիոլոնչելը չհնազանդվեց։ Բողոքեց, հառաչեց։ Տաքացավ վարպետը, սկսեց նրա լարերը թակել։ Վիոլոնչելը կատաղեց, թափահարվեց, կարծես շարժում արեց փախչելու, բայց չկարողանալով՝ սկսեց դժկամ ու խեղդաձայն երգել մեծ հանճարի ստեղծագործությունը։

Վարպետը խռովեց, սկսեց արձակել նվագի կծիկը։ Նվագում էր ու հետն էլ ականջ դնում նվագին։ Վիոլոնչելի ձայնը հնչում էր խորթ, անդուր։ Վիոլոնչելը չէր ենթարկվում, դիմադրում էր դեռ։ Ասենք վաղուց էր նա այդպես. դժկամ էր սկսում երգել, երբ տանն էր լինում, իսկ երբ դուրս էր գալիս հասարակության առջև՝ այլևս բոլորովին վայրենանում էր ու համառում։

Վարպետը նայեց դահլիճ — հասարակության։ Սա անգթորեն լուռ էր։ Ոչ մի նշան ջերմության։ Կարծես նրա համար չեն նվագում։

Ահա նա — այդ հասարակությունը — մի երիտասարդ չարաժպիտ փսփսում է իր կոկետ դամի հետ, ահա մի դեմք մռայլ ու թշնամի նայում է իրեն։

Հանկարծ սրտնեղեց վարպետը, հավաքեց իրեն։ Ի՞նչ է կատարվում իր հետ։ Մի՞թե պիտի պարտվի հնչեցնելով մի անգույն

երգ, մի միջակ բան... ո՞չ, պետք է հաղթել։ Եվ պատրաստվեց կռվի։

Եվ սկսվեց կռիվը։ Մի կողմից վիոլոնչելի, մյուս կողմից հասարակության դեմ։ Վիոլոնչելի կոկորդից բռնած՝ սկսեց խեղդել նրան, որ չհամառի, երգի վսեմ երգը։ Ճոճվեց փոթորկահար կաղնու պես, փոթորկեց աղեղը լարերի վրա, վիոլոնչելը գոռաց դառնաձայն, սկսեց կաղկանձել, բայց համառորեն չհնազանդվեց։ Ու քանի վարպետը մաքառում էր՝ այնքան զգում էր, որ պարտվում է։ Դա հոգու նվագ չէր, այլ ներվային կռիվ վիոլոնչելի և հասարակության դեմ։ Դժբախտաբար հանկարծ էլ ընկավ մի շտապ դահավեժ տեմպի մեջ, որ գնալով սաստիկ արագացավ՝ նման լեռներից գլորվող քարի, որ չի կարողանում իրեն պահել և նետվում է անդունդը։

Այդպես փչացավ ալլեգրոն։

Գոնե փրկվի ադաջիոն...

«Փրկվի՞... հաղթե՞լ էր պետք, ոչ թե փրկվել։ Սա արվե՞ստ է, բարեկա՞մ»։

Եվ ահա ուժերն հավաքեց ու սկսեց ադաջիոն, մեծ հանճարի գերմարդկային տանջանքը և ստոիկ հաշտությունը վշտի հետ։

Նվագեց, այո... սակայն ո՞ւր։ Պարտվածը ավելի պարտվեց։ Ստուն էր դահլիճը, հուզվածը ինքն էր, այսինքն՝ բարկացածը, ներվայնացածը, և բարկությամբ թակում էր իր վիոլոնչելը, ինչպես անասունի։ Անձնատուր չեղան ոչ հասարակությունը և ոչ վիոլոնչելը։ Սա,— այս անկարեկից վայրենին,— դավաճանեց նրան և մինչև վերջ դիմադրեց, չերգեց։

Դժվարի՜ն, աղետալի գործ։

Ավարտեց նվագը։ Պարտված էր վերջնապես։ Վեր կացավ, դժկամ գլուխ տվեց հասարակության և արագ փախավ հետևի օթյակը։ Հասարակությունը հատուցեց սպանիչ քաղաքավարական ծափահարության տուրքը։ Դեռ չէր հասել վարպետը օթյակի դռան, որ աթոռները միահամուռ գոգոացին։

Ուրեմն հասարակությունը ցրվո՞ւմ է... Առանց կրկնե՞լ տալու մի բան։ Դժգոհ է։ Վարպետը իր մեջքի հետև զգում է մի վիշապ, որ մռմռում է, պատառոտվում, խռնվում և դանդաղ սողում դուրս։ Վարպետն էլ գնաց տուն։

Ջիմացավ թե ինչպես հասավ տուն։ Երբ մտավ սենյակ՝ ականջներում լռությունը շշնջաց։ Նա մոտեցավ սեղանին, կանգնեց երկար նրա եզրին հենված, մեքենաբար վերցրեց կոնյակի շիշը և կործեց իր շրթունքներին։ Դա մի փոքր արթնացրեց նրան։ Դժգոհ էր, վիրավոր, ծեծված։ Մի տեսակ ամոթանք, կոտրություն կար նրա հոգում։ Զգաց, որ մի մեծ հանցանք է, վարպետի համար ամենամեծ հանցանքը,— վատ է նվագել։

Լույս չվառեց։ Լիալուսին էր։ Մեքենաբար հանեց աղեղը, վիոլոնչելը դրեց ծնկների մեջ և կքվեց բազկաթոռի եզրին։ Քունը չէր տանում, ներվերը պրկվել էին, անհանգիստ էր, խռովահույզ։ Ջերմ եկավ վրան։ Թերևս ջերմ չէր, այլ խմիչքը, գերագերգիռ հոգեկան վիճակը։

Լուռ էր սենյակը։ Կարծես ամբողջ աշխարհը հեռացել էր, վերջացել արդեն։ Շշնջում էր լռությունը միայն, և վարպետը աչքերը փակ ունկնդրում էր դիշերին և տանջվում։

Դիշերն հոսում էր։ Ի՞նչ գիշեր։ Հոլովվում էր մի Միսիսիպի, խորը, լայն սիմֆոնիկ, տիրական, հուզումնալից։

Վարպետը չէր կարողանում մտքերը կարգի բերել.— ի՞նչ էր պատահածը։ Դիպվա՞ծ, ներվայնությո՞ւն, անտաղանդությո՞ւն։ Անտաղա՞նդ է ինքը...

Վարպետը բռունցքեց բազկաթոռի թևին։ Սկսեց զայրանալ, դատափետել մարդկանց, իրեն։ Ինչո՞ւ են այդպես անզգա, անտոիկ։ Դառն, տարօրինակ ճակատագիր։— Նա միշտ փախել է մարդկանցից, բայց և միաժամանակ միշտ որոնել է նրանց, դիմել է նրանց։ Առանց մարդկանց ի՞նչ երգ... Ահ, ո՞րքան է վարպետը սիրել ու ատել նրանց։ Ո՞րքան է տանջվել կյանքում, որ իր վիոլոնչելը երգել տա հենց այդ մարդկանց համար, հրդեհել նրանց սիրտը։ Եվ կրկի՜ն դառն և տարօրինակ ճակատագիր.— թե՛ նրանք՝ մարդիկ, և թե՛ սա՝ վիոլոնչելը դժգոհ են իրենից։

Դիմացը հայելին էր։ Նայեց մեջը։ Ահա նստած է իր դեմ մի մռայլ, տանջված կերպարանք, կքված, կպած բազկաթոռի եզրին. խորտակված գրկել է իր արտառոց գործիքը։ Ինչի՞ է նման նա...

Իրեն էր նայում վիոլոնչելը։ Ի՞նչ տխրատեսիլ գործիք՝ ականջներով, շեղ աչքերով, սև վզով, գեղնակաշմիր, ուռած փորով և բարակ միակ ոտով, կարծես մյուսը կոտրել են։

Եվ վարպետը դառնաժպիտ ու արհամարհանքով մռմռաց.

— Անասո՜ւն, կապի՜կ... գուցե այն պատճառով, որ վիոլոն-

չելի մարմինը, գույնը, ականջները հիշեցնում էին կապիկի՝ եթե մի փոքր ֆանտազիային ազատություն տաս։ Թերևս այդ ֆանտազիային սնունդ էր տվել վարպետի լսած արևելյան ավանդությունը, որի համաձայն՝ մի մարդ անտառով անցնելիս տեսել է ծառի ճյուղից կախ մի կապիկի չորացած կմախքը, պոկել է այն և բերելով տուն՝ նրանից շինել առաջին ջութակը։

Եվ թերևս այդ կապակցությամբ վարպետը իր վիոլոնչելը երևակայում էր մի կենդանի կապիկ...

«Այո, ես մի կապիկ եմ բերել անտառից, ամբողջ կյանքում ծեծել, ստիպել եմ տանը խաղալ սովորել և ապա դուրս բերել մարդկանց առջև խաղալու, իսկ այս կապիկը միշտ դիմադրել է, համառել, և իբրև թե մի փոքր սովորել է, բայց և շուտով հանկարծ փչացրել «խաղը»՝ ինչպես փչացրեց այս երեկո։ Ո՜ւհ, անիծյա՛լ կապիկ, ո՞րքան ես փչացրել դու իմ խաղերը և իմ կյանքը»։ Ու զայրույթով ցնցեց «կապիկին».

— «Ասա՛, ասա՛, իսկ դու ի՞նչ ես ուզում ինձանից։ Դու փախչում ես ինձանից, փախչում քո անտառը, ինչպես կաներ իսկական կապիկը՝ ձգտելով հետ, դեպի վայրի կենդանական ազատությունը։

Ախ, ես ոչի՛նչ չեմ քան ծիծաղելի, թշվառ կապիկ պար ածող»։

Վարպետը զայրալի զարկեց աղեղով վիոլոնչելի լարերին։

«Կապիկը» կաղկանձեց։

«Կաղկա՛նձ, և ուրիշ ոչինչ»,— դառնագին մտածեց վարպետը.— այդպես այնտեղ, համերգին էր կաղկանձում, չէր ուզում երգել։ Այո, ճակատագիրը նրան կապել է մի թշվառական, չար, համառ կապիկի հետ, որ փչացնում է գործը, մինչդեռ նրան պետք էր մի չքնաղ էակ, որին տաներ մարդկանց մոտ երգել տալու իր երազած վսեմ երգերը։

— Երգի՛ր,— մռմռաց վարպետը չարացած և կրկին զարկեց «կապիկին»։

— Մի՛ դիպչիր ինձ — կարծես այսպիսի ձայն հանեց «կապիկը»։

— Էլի՞ կատաղեցիր, անասո՛ւն։ Երգի՛ր։ Ամբողջ կյանքս մաշել ես ու չես երգում։ Դու պիտի երգե՛ս։ Հասկանո՞ւմ ես, ես չեմ կարող տանել մարդկանց անտարբերությունը, անհասկացողություն։ Պիտի երգես։ (Նա կաղկանձո՛ւմ է... վիրավորված է «կապիկը», ծամածռում է երգը, վնգստում...)։ Ո՛չ, դու պիտի երգե՛ս... Ես խայտառակվում եմ, խայտառակվում վերջնապես...

«Կապիկը» դիմադրում էր։ Չէր ուզում անգամ փորձել։ Չէր ուզում ենթարկվել։ Վարպետը պարզ զգում էր նրա ատելությունը։ Ծեծվող կապիկի ատելությունը իր դաժան տիրոջ հանդեպ։ Նա կաղկանձում էր շարունակ...

— Դե կաղկանձի՛ր, դե կաղկանձի՛ր...

Բայց ինչպես երևում էր՝ հարվածներն ուժեղ էին և կոպիտ։ Կոպիտ էլ ձայն էր հանում «կապիկը»։ Մի ձայն, որ նման էր ցավից կատաղած ու փրփրած իսկական կապիկի ճչոցների, մի կապիկի, որ արդեն կպել էր վարպետին և կծում էր նրա կզակը, դեմքը։ Նրա աղմուկին խառնվեց վարպետի անեծքը, նախատինքը, որով նա բարկացած թակում էր, թակում կապիկին։

Վարպետը կորցրել էր իրեն։ Նա բռնադատում էր իր անասունին, որ սա երգի։ «Կապիկն» սկսեց կատաղությունից լաց լինել, սկսեց ոռնալ։ Էլ ի՞նչ երգել։ Երգելն այդպե՞ս կլինի միթե... Վարպետն սկսեց ունկնդրել այդ լացին։ «Կապիկը» բողոքում էր, մղկտում ցավից, և կարծես մի փոքր ենթարկված, խնդրում էր վարպետին, որ իրեն չծեծի։

Վարպետը թույնը թափելով՝ հոգնեց և մի փոքր անց նաև ինքը հանդարտվեց։ Ցավով և գանգատավոր ձայնով հեծեծեց.

— Երգի՛ր ադաջիոն։

«Կապիկը». Մի՛ դիպչիր ինձ...

Վարպետը. Չեմ դիպչի...

«Կապիկը». Ազա՛տ թող ինձ...

Վարպետը. Ահա՛, ազա՛տ։ Դե՛...

— Ոչ. բոլորովի՛ն ազատ թող, ավելի՛...

— Ահա՛, ավելի՛— թուլացավ վարպետը՝ և հառաչեց ծանր ու դառն։

Տանջալի՜ ճակատագիր.— ամե՛ն ինչ կովով, ամե՛ն ինչ ճիգով։

Կրկին նայեց հայելու մեջ։ Ինչի՞ է նման նաև ինքը, այդ բազկաթոռի եզրին, ինչպես ծառին կպած, կքած նույնանման արարածը, ինչպես իր «կապիկը»... որի հետ կովում է ինքը, կովում ամբողջ կյանքում։ Իսկապես արդյոք նման չէ՞ սա այն

բանին, որ ինքը մշակում, կրթում, կատարելագործում է հենց ինքն իրեն, իր մեջ թաքնված նախամարդկային կապիկին, մղելով նրան դեպի մի վսեմ էակի տիպար։ Եվ այդ տաժանելի գործում՝ ճգնո՜ւմ, ճգնո՜ւմ, ճգնո՜ւմ։ Անդո՜ւլ աշխատանք, պայքար, կռիվ մարդու և կապիկի մեջ, նենգավոր ու հրաշալի անասունի—բնության դեմ։ Եվ ո՞րքան հին է այս պայքարը։

— Դարձյա՜լ ծռում ես եղանակը, անասո՜ւն։ Մի՜ բոպե ազատ թողի քեզ և դու թաքցրիր երգը։ Ա՜խ, չես մնում միևնույն քմայքի մեջ, պետք է շարունակ դավաճանե՜ս, նենգես... (Մի՜ բոպե թողնում եմ անուշադիր՝ կրկին վայրենանում է...)։ Տե՜ս, էլի կսկսեմ. երգի՜ր։ Այդպե՜ս։ Այդպե՜ս։ Ես քեզ կսովորեցնեմ երգել։ Դե՜...

— Մի՜ դեպչիր ինձ։ Լսի՜ր։ Լսի՜ր։

— Լսում եմ։

— Մի՜ տանիր ինձ մարդկանց մոտ։

— Ինչո՞ւ։

— Ես վախենում եմ նրանցից, ես ատում եմ նրանց, նրանք չեն հասկանում ինձ։ Ե՞րգ են ուզում, ինձ երգել տուր այստե՜ղ, այս սենյակի լռության ու մթության մեջ։ Միայն սա է ինձ հասկանում։

— Ա՜խ դու խե՜նթ, քմահա՜ճ, ինքնասե՜ր, խանդո՜տ արարած, այդ ճիշտ է, դու խորթանում ես մարդկանցից և ինձ էլ չես սիրում։ Եվ ի՞նչպես կարող եմ ես առանց մարդկանց։ Ես կարիք ունեմ բյուրավորների մեծ սրտի ջերմության, զգալու մարդկայինը, մարդկայինի համազգացումը։ Առանց մարդկանց ես խեղճ եմ, անօգ, մենակ։ Վերջապես ես ինքս մարդ եմ նույն մթից, նույն ոսկրից։

«Կապիկը» քրթմնջում էր սակայն։

Վարպետը լսել սկսեց։ «Կապիկը» մեղմ հեկեկում էր...— Ա՜խ, քո ճիպոտը, քո մատնե՜րը... Այնքա՜ն ծեծեցիր ինձ, որ դարձրիր կապիկ իսկապես, այլանդակեցիր իմ հրաշալի ձայնս։ Հիմա ես մի թշվառ կապիկ եմ, քո ձեռին գերի, բանտարկված։ Դու շոյում ես իմ մազե՞րը։ Մի՜։ Դրանք չքնաղ գիսակներ էին, որոնց հպում էին լոտոսի բույրերը միայն։ Դու ուզում ես բռնել իմ հնչյունները։ Մի՜։ Դրանց հետ խաղում էին թիթեռների ոսկեթույլ թևերը։

Վարպետը լսում էր այս շշունջը գիշերի վեհական բարբառի մեջ։ Նա փակել էր աչքերը։ Սակայն և առանց նայելու նա զգաց իր խոսակցի դեմքին կախարդիչ աչքերի շլացնող մի ժպիտ.

— Մի՜ տանիր ինձ մարդկանց մոտ՝ ես քեզ համար կերգեմ ակնաղբյուրի խիճերի դայլայլը քարանձավում, հովերի խոլապարը լուսնի շողերի հետ, մամուռների զմրուխտե լռությունը...

— Ա՜հ, հրաշալի կենդանի, ինչե՞ր ունես դու սակայն։ Ապա՞, ապա՞։ Երգի՜ր դա... Եվ եթե դու — (վարպետը երազել սկսեց)— երգեիր մի այնպիսի բան, տանեի մարդկա՜նց... ի՞նչ երջանկություն...

— Օ՜, եթե մի այնպիսի բան երգեի ես... Կերգե՜մ, բայց դու չես կարող տանել այն մարդկանց։ Կերգեմ այնպիսի մի երգ, որը չես կարողանա հիշել, որի հնչյուններից կհալվես, կցնդես կապույտ անհունում։

— Ա՜խ, դու, չարաճճի՜ հրաշք, գեղեցի՜կ խորամանկս... Այդ ի՞նչ կերգես, որ չեմ կարողանա տանել մարդկանց։

Ու վարպետը խորամանկ ժպտաց, ականջները սրեց՝ պատրաստ խաբելով գողանալու նրանից վսեմ երգը, որ նրանից ծածուկ տանի մարդկանց, այրի նրանց սրտերը և բարձրացնի նրանց։

— Ա՜հ, երգի՜ր, երգի՜ր, այդպե՜ս։

— Միայն մի՜ հպիր ինձ, ազա՜տ թող ինձ, ավելի՜... բոլորովի՜ն... բա՜ց թող... հանգա՜րտ, մե՜ղմ, հեռո՜ւ... Այդ երգն սկսվում է այսպես... Ա՜յ... լսո՜ւմ ես... Հիմա կգամ...

— Ո՞րտեղ ես դու,— խոսեց բարձրաձայն վարպետը։

Նա զարթնեց իր ձայնից։

Ոչ ոք չկար սենյակում։ Լռություն էր անհուն։

Նայեց՝ իր գրկում վիոլոնչելն էր և ձեռին՝ կախարդված աղեղը, որ հենց նոր կանգ առավ Ադաջիոյի վերջին նոտայի վրա։

ԱՐԱՄ ԹԱԳԱՎՈՐԸ

Գավառական քաղաքումն էր։ Հինգ տարեկան տղա էի այն ժամանակ։ Իմ աշխարհը մեր տան բակն էր, բակում կենող հարևանները, նրանց երեխաները։ Ի՜սկ որ՝ մի աշխարհ հազար ու մի հ՛աշքներով լի։

Ես երկու ընկերուհի ունեի՝ Սանդուխտը և Խոսրովիդուխտը, երկու քույրեր, որոնք մի փոքր մեծ էին ինձանից։

Օրնիբուն նրանց հետ էի։ Խաղում էինք, վազվզում, զրուցում։ Նրանց հայրը չէր երևում ինչ-որ։ Ինձ շատ էր զարմացնում այդ բանը։ Մի՞թե նրանք հայր չեն ունեցել և չունեն։

Մի անգամ, երբ հարցրի Սանդուխտին և Խոսրովիդուխտին, թե հայր ունե՞ն, նրանք պատասխանեցին, որ ունեն և իրենց հայրը Արամ թագավորն է։

— Արամ թագավո՞րը...

Սա ինձ շշմեցրեց և շատ զարմացրեց։ Լա՜վ, որտե՞ղ է։

— Ուրիշ տեղ է։

— Ինչո՞ւ տուն չի գալիս։

— Կգա։

Արամ թագավո՞րը։ Դա վերի՞ն աստիճանի հետաքրքրական բան է.— մեր հարևանը, այս տան բակում ապրում է Արամ թագավո՞րը։

Նախ ես չէի տեսել և ոչ մի թագավոր, հետո՝ հայոց թագավոր։

Բայց ինչո՞ւ չի գալիս, երևում քաղաքում, ո՞րտեղ է շրջում, ի՞նչ գործ ունի ուրիշ տեղերում։ Եվ ի՞նչ տեսակ մարդ է, ինչպե՞ս են լինում թագավորները։

Հետաքրքրակա՞ն, շատ հետաքրքրական բան։

Երբ մի փոքր շփոթմունքս անցավ, սկսեցի հարց տալ ինձ, թե այդ ինչպե՞ս է, որ Սանդուխտի և Խոսրովիդուխտի հայրը թագավոր է։ Երեկոյան մորս հարցրի թե ինչո՞ւ Սանդուխտի և Խոսրովիդուխտի հայրը թագավոր է, իսկ իմ հայրը ատաղձագործ։

— Դե նա Արամ թագավորն է, նրա բանն ուրիշ է, տղաս,— հանգստացրեց ինձ մայրս՝ իբրև թե բացատրեց մի բան։

Տարակուսանքներ մնացին հոգուս մեջ և մեծ տարակուսանքներ։ Չէի կարողանում լուծում գտնել հարցասիրությանս։ Ուզում էի օր առաջ տեսնել Արամ թագավորին։ Ամբողջ ժամանակ մտածում էի այդ մասին և պատկերացնում էի... Դե՝ հնա՞ր կա բացատրելու թե ինչե՞ր էի պատկերացնում։ Ոսկեհուռ թագը գլխին, հագին ծիրանի, մարգարտաշար գոտուց ակնազարդ սուրը կախած, ձեռին գայիսոն կամ աշխարհագունդը... Ահա իմ գիտեցած թագավորը, որ տեսել էի նկարների մեջ։ Չէ, հետաքրքիր է, հետաքրքիր։

Եվ ուրիշ աչքով սկսեցի նայել Սանդուխտին և Խոսրովիդուխտին։ Նրանց անունները նոր նշանակություն ստացան իմ աչքում։ Նրանք ինձ համար այժմ արդեն դառան միստիկական արարածներ, հեքիաթական հերոսուհիներ։ Նրանց դեմքը, հագուստը, խոսվածքը ինչ-որ արքայական էր, այլևս ոչ այս աշխարհի։

Հանկարծ մտածեցի,— տեսնես Սանդուխտն ու Խոսրովիդուխտը ի՞նչ ձևով են դառնում դեպի Արամ թագավորը և խոսում նրա հետ։ Եվ ի՞նչ խոսքերով։ Նա էլ իհարկե պատասխանում է... Եվ հետո այն հանգամանքը, որ Արամ թագավորը նրանց հայրն է։ Երջանիկ, երջանիկ են նրանք։ Եվ ինչպես մինչև օրս ես չեմ նկատել այդ երկու ընկերուհիներիս մեջ, որ նրանք թագավորի աղջիկներ են։ Եվ նրանք պահում էին ինձանից իրենց գաղտնիքը։ Տես, ինչպիսի աղջիկներ են նրանք։ Սա էլ առանձնապես ներգործեց ինձ։

Չքավոր էին նրանք։ Լսվում էր երբեմն նրանց տան վեճերն ու տրտունջները, անգամ լացը։ Մայրը, մի չարքաշ, թախծոտ արարած, չէր տալիս աղջիկներին ինչ-որ բան, սրանք պահանջում էին։ Երբեմն էլ ծեծում էր նրանց, բայց չնայած նրանց խեղճությանն, կարիքին՝ ինձ համար ոսկեզօծ էր նրանց կյանքը։ Դա-Արամ թագավորի տունն էր։ Ու մինչ այդ լսած հայոց պատմությունից բոլոր խառն ու անորոշ ակնարկները իմ գիտցած բոլոր ֆանտաստիկ դեպքերն ու անձերը կոնկրետանում, պատկերվում էին ահա այդ ընտանիքի մեջ։

Մի օր էլ, ահա, երբ փողոցում ես ընկերուհիներիս հետ արդեն մոռացած այդ հանգամանքը՝ տարված էինք մեր խաղով՝ հանկարծ Խոսրովիդուխտը ձայն տվեց.

— Սանդուխտ, հայրիկը...

Սանդուխտն ու Խոսրովիդուխտը վազեցին դեպի փողոցի անկյունը, որտեղից երևաց նրանց հայրը։ Այսինքն՝ Արամ Թագավորը։ Աղջիկները բռնեցին նրա ձեռքերը և հետը եկան տուն։

Ես արագ ու սրտատրոփ վազեցի նրանց հետևից և աչքերս լայն բացած մտիկ տվի եկողին։ Դա մի հասարակ մարդ էր՝ դեղնած մորուքով, սևագանգուր մազերով, գլխին... կարտուզ և հագին մի կարկատած պիջակ։ Ոտներին չուստեր։ Ուսին էլ մի լիքը խուրջին։

Իս զարմանքն աճեց, ես արդեն կորցրի ամեն չափ ու համեմատություն։ Բայց մոտ գնացի Արամ Թագավորին և շարունակ աչքերս վրան պահած ուղեկցեցի մինչև տան բակը։ Արամ Թագավորը հասավ իրենց տան շեմքին, խուրջինը վայր բերեց և ցածրիկ դռնով՝ մեջքը կռացրած՝ մտավ ներս։

Ես չհամարձակվեցի մտնել ներս, ընկերուհիներս էլ իրենց ծնողով տարված դուրս չեկան։ Գնացի տուն և մորս հայտնեցի.

— Մայրիկ, Արամ Թագավորն եկավ։

— Եկա՞վ,— մեղմ ժպտաց մայրս և էլ ոչինչ չխոսեց։

Ես մնացի բակում։ Երկար ժամանակ ականջ դրի ներսի խոսակցություններին, բայց անորոշ ձայներից բացի բան լսել չկարողացա։ Միստիկական անձնավորությունը — Արամ Թագավորը, չէ՞ր խոսում, թե՞ ցածր էր խոսում, բայց չարժանացա նրա մի բառին։

Գնացի տուն և նստելով մեր պատուհանի գոգին՝ սկսեցի ուշի ուշով, լարված նայել Արամ Թագավորենց պատուհանին։ Խորհրդավոր աղոտ լույս կար ներսը։ Ինչ-որ ստվերներ միստիկական ռիթմով խլրտում էին պատի վրա։ Արդյոք Արամ Թագավորի ստվերը չէ՞ր դա։ Ահա պարզ գծագրվեց մի ձեռքի թափահարումը։ Ում ձեռն էր դա։ Երևի այնտեղ խոսում էին, չէի կարող լսել։ Անշուշտ։ Եվ խոսում էին իհարկե Արամ Թագավորի... ներկայությամբ... թերևս մինչև անգամ նրա հետ... Բայց տեսնես ի՞նչ էին ասում նրան և ի՞նչ էր պատասխանում նա։ Ի՞նչ հրաշք բան, ի՞նչ նշանավոր դեպք պիտի լիներ լսելը, տեսնելը այդ ամենը։

Այս մտքերի մեջ էի, երբ մայրս ձայն տվեց ինձ, որ քնեմ։ Ես մոտս անկողին և դեռ երկար օրորվեցի Արամ Թագավորի և նրա աղջիկների երազանքով, մինչև որ քունը վարագուրեց իմ աչքերից այս հոյակապ տեսարանը։

Հետևյալ առավոտ զարթնեցի բավական ուշ։ Արևն ընկել էր իմ գլխին։ Վեր թռա և վազեցի պատուհան, նայեցի Արամ Թագավորենց տան կողմը։ Այնտեղ հանդիսավոր լռություն էր։ Հագնվեցի, դուրս եկա բակը։

Արամ Թագավորը երեկվանից էլ դեռ կախարդիչ անձնավորություն էր ինձ համար՝ չնայած իր «տարօրինակ» զգեստին, այդ պիջակին և կարտուզին (Թագավորի համար անհամապատասխան)։ Ես փափագ ունեի սակայն լսել Արամ Թագավորի ձայնը, խոսքը...

Հանկարծ դուռը բացվեց և դռան մեջ գծվեց իր ամբողջ հասակով Արամ Թագավորը, մի ինչ-որ գյուղացու հետ, որ չես հասկանում ինչ հրաշքով գիշերը, թե առավոտը եկել էր Արամ Թագավորի մոտ։ Նա հետ նայեց ներս և ասաց իր կնոջը թե աղջիկներին.

— Դը՛, ինչ որ ասի...

Եվ դառնալով գյուղացուն կցեց.

— Երթանք։

Նրանք եկան անցան իմ մոտով։ Ես մոտ վազեցի և շատ լարված նայեցի Արամ Թագավորին, որի հայացքը ինձ թվաց թախծալի և խորհրդավոր։

Սանդուխտն ու Խոսրովիդուխտը դուրս չեկան տնից։

Արամ Թագավորը գնաց փողոց, շուռ եկավ անկյունով և կորավ իմ տեսողությունից հեքիաթային արարածի պես։ Ո՞ւր գնաց, ի՞նչ գործով — այս ևս իմ մանկական երևակայության համար դառավ անվերծանելի մի սեպագիր, ընդունակ միայն իմ մանկական երևակայությամբ զարդարվելով շրեղացվելու։

Ես այլևս խուսափում էի հանդիպել Սանդուխտին և Խոսրովիդուխտին։ Սաստիկ քաշվում էի նրանցից։ Նրանք դառան ինձ համար անմատչելի և օտար էակներ։ Ուստի և աշխատում էի փողոցի անկյունում սպասելով հանդիպել Արամ Թագավորին և մի բան հասկանալ։ Ա՜խ, եթե հաջողվեր լսել նրան, իմանալ թե ինչեր է ասում։

Վերջապես այդ հաջողվեց. հետևյալ երեկո նա բակը մտավ մի քանի գյուղացիների ընկերակցությամբ։ Սրանք լուռ անցան իմ կողքով։ Հետո մտան տուն։ Սանդուխտն ու Խոսրովիդուխտը ներս վազեցին ու կրկին առանձնացան։

Ես կամաց-կամաց, ոտներիս ծայրով մոտեցա նրանց պատուհանին և սկսեցի ականջ դնել։ Այնտեղ ուրախ զրույց էր սկըսվել։ Չէի կարողանում որոշել, թե ինչ են խոսում։ Ինձ զարմացրեց գյուղացիներից մեկի ձայնը, որ ամպի պես գոռում էր։ Արամ Թագավորի կինը մոտենում էր պատուհանին, որի գոգում փայլում էր ինքնաեռը և բաժակները թեյ լցնելով հետ էր տանում։ Հանկարծ գյուղացին գոռաց.

— Է՛, կենդանությո՛ւն, սաղ ըլիք։

— Անուշներ,— լսվեց չգիտեմ ում ձայնը։

Սկսեցին ծիծաղել, ձայները բարձրացավ։ Ես ավելի մոտեցա պատուհանին։ Գոռգոռացող գյուղացին սկսեց երգել։ Նրա ձայնը երերում էր։ Մեկ էլ նա ասաց.

— Էն խաբարը մեկ էլ ասա, էն ի՞նչ բան էր։

— Քա՞նի անգամ պիտի ասի, ասաց էլի,— լսվեց պատասխանը։

— Ամ-մա՛ն, թե հոգիդ կսիրես, Արամ Թագավոր, մեկ էլ,— պնդեց գոռգոռացողը։

Ձայները լռեցին։ Եվ հանկարծ լսվեց... Արամ Թագավորի խոսելը.

— Նամակն եկել է մի ամիս առաջ։ Չինացոց Թագավորը գրել է մեր հայոց ազգին, թե՝ մոտս ուղարկեցեք Մամիկոնյան իշխաններից մեկին, որ գա ստանա նրանց Թողած գանձերը։

— Մամիկոնյան իշխանները ո՞րտեղ են։

— Դե, էն է, փնտրում ենք, որ գտնենք։

— Հա ա՜...— լսվեց ընդհանուրի կողմից։

— Բերանդ տաճար, Արամ Թագավոր,— գոռաց գյուղացին,— մի հատ էլ լցրու, Արամ Թագավոր։— Ու երգեց կրկին։

Երբ երգը դադարեց, նորից լսվեց Արամ Թագավորի խոսքերը.

— Նամակը բերել է չինացոց իշխան՝ Խին-խոն, կաշե փաթթոցի մեջ, մագաղաթի վրա գրած, չինական թանաքով, որ ջրի մեջ չի ծրում։

— Ջո՞ւր ինչացու էր, Արամ Թագավոր,— հարցրեց գյուղացին երգը մոլտալով։

— Ծովի ափերից լողալով եկել է իշխանը, որ Անգլիան չկոտրի,— բացատրեց Արամ Թագավորը։

Ես զգացի մի հաճելի դող ողնաշարիս վրա։

— Հա՜յ, աստված բերնեդ լսի, Արամ Թագավոր,— գոռաց գյուղացին,— դե, լցրեք, լցրեք մի-մի հատ էլ տնկենք։

. . . . . .

Երազանքի ցերեկ էր այդ օրը և կախարդանքի գիշեր, երբ մտա անկողին... Ո՞րտեղ էր հիմա չինական իշխանը. արդյոք կգտնե՞ն Մամիկոնյան իշխաններին։ Ի՞նչպես կարելի է տեսնել այդ բոլորը...

Անցան տարիներ. ես դարձա խելահաս պատանի, և Արամ Թագավորի առեղծվածը լուծվեց։ Լուծվեց չինացոց Թագավորի և Մամիկոնյան իշխանների գաղտնիքները... Դուրս եկավ, որ նա մի հասարակ մասնավոր ուսուցիչ է և գյուղերում եկեղեցիների բակերում կամ օդաներում մի քանի աշակերտ հավաքած՝ նրանց հետ անցնում է տարրական գրագիտություն՝ բնավճարի դիմաց և ընտանիք պահում։ Ազնիվ, խեղճ մարդ է, նվիրված ընտանիքին։ Բայց՝ ինչպես վերջը պարզվեց ինձ համար՝ սիրում էր հավաքել գյուղացիներին և սկսում պատմել։ Ֆանտաստիկ դեպքեր, ջարդեր, հաղթություններ, սխրագործություններ... Եվ ո՞վ գիտե թե ի՞նչ նախճիրներ է նկարագրել, որ սարքում են եղել հայոց Թագավորները Արամ Թագավորի ուժեղ ֆանտազիայի շնորհիվ։ Եվ անշուշտ ջարդված Թշնամիների թիվն այնքան ուռճրած է եղել կամ ով գիտե հայոց Թագավորների քաջությունները նկարագրելիս այնքան անվերապահ է եղել, որ գյուղացիներն ավելի զվարճանալով, քան բանի տեղ դնելով այդ պատմությունները՝ նրան կպցրել են Արամ Թագավոր մականունը՝ իր անվան՝ Արամ վարժապետի հարմար։

Հետաքրքրականն այն էր, որ երբ իրեն դիմելիս էլ այդ անունը էին տալիս՝ չէր վիրավորվում։

Ահա այդ անվանակոչությունը գյուղերից եկել քաղաքի շու-

կան և ամենուրեք տարածվելով հասել էր մինչև անմեղ Սանդուխտին ու Խոսրովիդուխտին։

Արամ Թագավորը մերկացավ իր աչքում և դառավ Արամ վարժապետ։ Արդեն խոսում էր հնոս, զրուցում գյուղերում պատահած դեպքերից, ընդհանուր քաղաքական անցքերից, ամեն տեսակ պատահարներից, որոնցից մեծ մասը բնության մեջ գոյություն չուներ։

Պարզապես ֆանտազյոր էր։

Օրը երեք-չորս բան էր հնարում ամենաբարհուրելի մանրամասնություններով, առանց աչքը ճպելու։

Ո՞րտեղից էին գալիս այս բոլոր անհնարին ֆանտազիաները։ Ինչի՞ց ստիպված հնարում էր այդքան անհեթեթ, անգամ կոպիտ ֆանտազրաները։ Թերևս նյութակա՞ն ակնկալություններից... Բայց ի՞նչ օգուտ կար նյութական թե հոգեկան։ Նրան չէին հավատում, ծիծաղում էին և անցնում։

Վերջին տարիներս մի դեպք պատահեց, որ ճակատագրական նշանակություն ունեցավ Արամ Թագավորի համար։

Լրագրում, վերջի էջերի վրա մի տարօրինակ հայտարարություն երևաց մի հատիկ բառով։

«Աերոլիտա»։

Եվ ուրիշ ոչինչ։

Մի քանի լրագիր կարդացողներ սկսեցին հետաքրքրվել, թե ինչ է նշանակում այդ միակ բառը՝ հայտարարություն սև շրջանակի մեջ։ Խոսում էին, ենթադրություններ անում, բացատրում։

Բան չէր դուրս գալիս։

Չէին կարողանում հասկանալ թե ինչ է նշանակում այդ բառը։ Գտնվեց մի ուսուցիչ, որ ինձ ասաց թե՝ դա ռեբուս է, և ով լուծի, գուցե մի ահագին գումարի պրեմիա կստանա։

Հետաքրքրությունն առավել գրգռվում էր այն հանգամանքով, որ չէր տրվում ոչ մի ակնարկ, բացատրություն թե ի՞նչ նպատակ ունի այդ մի հատիկ բառը հրատարակել՝ թողնելով անհայտ թե իրրև ինչ էր առաջարկում ընթերցողներին, իրրև ռեբո՞ւս թե այլ բան։ Չկար նաև հնար բացատրելու թե ինչպես էր պետք վարվել այդ բառի հետ։

Կատարյալ միստիկա...

Այդ հարցով զբաղվում էր երևի նաև Արամ Թագավորը։ Բայց ո՞վ զարմանք. չէր խոսում այդ մասին, այլ լսում էր միայն և լռում շարունակ։ Երբ իրեն հարցրին մի օր՝ պատասխանեց.

— Դա ուրիշ բան է...

— Ի՞նչ բան...

— Ո՞վ գիտե,— բացատրեց Արամ Թագավորը և լռեց։

Բայց խորասուզված էր և լարված։

Մի օր էլ՝ երբ քաղաքի ընթերցարանում հավաքվել էին մի խումբ ընթերցողներ, մեծ մասը ուսուցիչներ, Արամ Թագավորը ներս մտավ և իբրև սենսացիա հայտնեց, որ քաղաքի սյուներին փակցրել են մի նման հայտարարություն.

«Աերոլիտա»։

Բոլորը հետաքրքրվեցին։

— Ի՞նչ կարող է լինել։

Այն ժամանակ Արամ Թագավորը բոլորին հավաքեց իր գլխին և հայտնեց հետևյալը.

— Դա մի բառ է, որ ինչ-որ մի քաղաքում ինչ-որ մի անհայտ օդակայան ընդունում է մթնոլորտից և ենթադրվում է, որ Մարսից է։

— Ո՞վ ասաց,— հարցրինք մենք։

Արամ Թագավորը բացատրեց.

— Այս քանի օրերս կարդացել եմ մի մասնագիտական ժուռնալում։ Այնտեղ լուր էր տրված, որ Ամերիկայում պատրաստվում է մի տորպեդ օդանավ, որ պիտի թռչի դեպի Մարս, և այնտեղից էլ ազդանշաններ են գալիս լույսի շարժումներով։ Գիտնականները կարդացել են այդ նշանները — դրանք մի բառ են արտահայտում։ Բառի միտքն անհասկանալի է։

— Իսկ ինչի՞ց իմացար այդ ամենը,— հարցրինք մենք։

Արամ Թագավորը ոգևորվեց և սկսեց բացատրել, որ ինքն ահա մի ամիս է ուսումնասիրում է մի հին ձեռագիր, որ քաղդիական ծագում ունի և նրա մեջ օդերևութաբանական գուշակություններ ու նշաններ կան։ Այնտեղ նա այս օրերս կարդացել է... և Արամ Թագավորը չորս կողմ նայելով, ցածր ձայնով և համարյա դավադրորեն փսփսաց.

— Ես կարդացի մի բառ.— այա... եռոտ... ելլի... տահ... Հենց այդ բառն էլ պետք է որ լինի այդ «աերոլիտան» և Մարսի

ազդանշանների հետևանքը երևի մեծ կապ ունի այդ բառի հետ և թերևս շուտով կիմանանք, որ երկար դարեր այնտեղից կանչում են երկրագունդցիներիս։

Տիրել էր մեռելային լռություն։ Ֆանտազիան, լրջությունը, այդ մարդու համառ պայքարը հանուն ֆանտազիայի մի տեսակ զարմանալի թվաց մեզ։ Ի՞նչպես, երբ մարդը օրը ցերեկով այդպիսի բաներ է հնարում կամ մտածում։

Բայց հենց այդ լռությունն ընդհատեց մի ֆիզիկայի ուսուցիչ, որ ամբողջ ժամանակ լուռ կարդում էր և հարևանցի լսում մեր միստիկական զրույցը։

— Հարգելի քաղաքացիներ,— ասաց նա բարեսիրտ իրոնիայով,— «Աերոլիտա» — դա ռուս հայտնի գրող Ա-ի համանուն վեպի ֆիլմն է, որ շուտով պիտի ցուցադրվի ամբողջ Միությանմեջ։ «Աերոլիտան» պարզապես այդ ֆիլմի հերոսուհին է։

— Ուրեմն դա ֆիլմ է։

— Ֆիլմ, և այդ մի բառով հանդես գալն էլ առանց բացատրության ռեկլամ է հետաքրքրություն գրգռելու համար։ Ի՞նչ Մարս, ի՞նչ ռադիոկայան, ձեռագիր...

Հոմերական քրքիջը թնդացրեց ընթերցարանը։ Արամ թագավորը կարմրեց, ապուշ նայեց մեզ և գլխիկոր դուրս եկավ ընթերցարանից։

Մի քանի տարի անց լսեցի, որ մեռել էր։ Մեռել էր չհասնելով իր անհայտ նպատակին, թերևս ֆանտազիայով կառուցել մի անուն, մի գիրք՝ իր անուրախ, անհայտ ու կորած անձի համար։

Խե՜ղճ Արամ թագավոր։

ԳԻՐՔ ԾԱՂԿԱՆՑ

Մաշի ձեռս, դառնա ի ճող,
Գիրս մնա ճիշատակող։
(Միջնադարյան)

Ծաղիկները կրակներ են, պտուղները՝ ազնիվ քարեր,— նա այդպես էր տեսնում,— իսկ թռչուններն ու գազաններն զգեստավորված խեղկատակներ, խաղում են առակներ թագավորների, իշխանների, գյուղացիների կյանքից, այն, որ պատմել է իր տատիկը։ Նրա համար քարափները խռոված նայում են, իսկ լեռներն ալիքներ են փոթորկված Վանա ծովի։

— Տեսե՜ք — մին էլ ասում էր նա,— պատանին առյուծին նստած գնում է։

— Ո՞ւր է... Ո՞ւր է...—Հետաքրքիր վրա էին վազում խաղընկերները։

Ցույց էր տալիս Զվարթը դաշտի քարակույտերը և ծիծաղելով վազում էր գնում փողոցը վայր։

Նայում էին և ոչինչ չէին տեսնում դաշտի քարակույտերում։ Եվ հետևիցն էին ընկնում, որ ծեծեն Զվարթին՝ խաբելու համար։ Բայց նրան հասնում էին բլրի վրա մի ծաղկի գլխի կռացած։ Ու մինչ պատրաստվում էին խփել նրան, նա թավշե ծաղիկը ձեռքը վերցնելով ծիծաղում ու ցույց էր տալիս.

— Վարդապե՜տը, վարդապե՜տը, գլխին վեղար՝ կունձիկ-մունձիկ գնում է վանք։

Ու կոմիկ շարժումներով տիկնիկի խաղ էր սարքում, տրմբռշմբացնում ծաղկի գլուխը, փայլեցնում ձեռքի վրա։ Երեխաները ծեծը մոռացած ծիծաղում էին և հետո էլ զարմանքով նայում նրան.

— Ի՜նչ տեսակ տղա է...

Պատահում էր նստում էին քարափին։ Արդեն Զվարթը պատմում էր.

— Գնացել էի ձորը, գետի ափը։ Փրփուրների միջին մի աղջիկ ինձ փսփսաց. «Արի՜, Զվարթ, արի, արի՜»։ Գնացի, ինձ տարավ

հեռու, գետի տակը։ Պալատներ կային, նախշուն քարերով, մարգարիտներով...

— Սուտ ես խոսում,— գոչում էր ընկերներից մինը, բամփում գլխին և երեխաները կրկին հարձակվում էին վրան խփելու, բայց Զվարթը փախչում էր տուն։ Հետևից քար էին նետում։

Իսկ տանը ծնողներին ու հարևաններին արդեն պատմում էր, որ ձորի միջով ոսկի ուղտեր անցան. մեկ ուղտի վրա կապիկ էր նստած ակնեղեն աքաղաղը ձեռին, իսկ մյուսը՝ նառը, հագել էր ոսկեթել շուրջար, նրա մեջքին էլ վարդն էր նստել, որի դեմքը լուսին էր շրջանակած վարդի կրակե թերթերով։

Ծնողներն ու հարևանները լսում են, իրար նայում նշանակալից ։ տխուր։ Նրանցից մինը գլուխն օրորում է.

— Աստծո՛ւց գտնես փրկություն, զավակս։

Երեկոն մանիշակ ցանեց գյուղի, դիմացի քարափների ու անդնդի այգիների վրա։ Հետո, երբ Զվարթը քնած էր, հարևան պառավ Սանդուխտը դեմքը մոտեցրեց Զվարթի մորը.

— Շե՛ն տիկին, տղադ ցավագա՞ր է, չարոց է։

Իսկ հարևան ծերունի Գադիշոն, խստադեմ, սրբակյաց մի մարդ մարգարեական անհակառակելի խոսքով կտրում է.

— Ընծայեցե՛ք սուրբ Նշանին։

Զվարթի մայրը տխրեց։ Հայրը՝ մռայլվեց։

Ու հստակ այդ երեկոյին, մի հազարամյակ առաջ, երբ հարազատ ծղրիդը մտերմաբար ծղրում էր պատի ճեղքում, Զվարթի ծնողները վճռեցին նրան տանել սուրբ Նշան վանքն ընծայելու։

Գարունը հևում է Հայաստանի լեռնաշխարհում։ Օրը ջինջ աղբյուր՝ կոհակում է խաղաղ։ Զվարթենք, նրանց գյուղացիներն ուխտ են գնում լեռան մի վանք։ Գնում են շարան շարքերով, սայլերի վրա, հետևակ։ Նստել է սայլին Զվարթը և դիտում է գյուղացիների նոր զգեստները և նրանցից մեկը նրան թվում է վագրենի հագած։ Ու ծիծաղում է վրան. «Ո՞ւր կերթաս, չելերի վաղը ես դառել, չելերի»։

Ու զնգում է նրա ծիծաղը։

«Չելեբին» սառը նայում է Զվարթի հորը և գլուխն օրորում։

Իսկ մայրն աչքերն է սրբում։ Զվարթը սողաց դեպի լուծը, որ նստի սայլի գլխին, քեռի Մանուկի մոտ։ Քեռի Մանուկը գրկեց Զվարթին և ճիպոտը տվեց ձեռը։ Զվարթն սկսեց քշել եզներին։ Հետո հանկարծ մատն ուղղեց եզան աչքի մեջ և ցույց տվեց քեռի Մանուկին։

— Քեռի՛, քեռի՛, տե՛ս։

— Ի՞նչ է, ձագուկ։

— Տե՛ս, եզան աչքի մեջ գիշեր է։ Քեռի Մանուկը ծիծաղում է։

Սայլն ընկավ մի մարմանդ հովիտ ու սկսեց սուրալ։ Քեռի Մանուկը երգեց.

Աստղիիկ մը երկնուց ի վաաար կու սիրե ձկնակն ի ծովու

Հայրը, ուխտավորները զարմանքով ու ցավով նայում են վանքի պատին։ Այնտեղ ոչինչ չկա։ Վանքն է բարձրաշեն ու սրբատաշ։ Ճեղքվածների գծեր են խաղում պատի վրա։ Զվարթը մարդ է տեսնում այդ գծերում և զվարճացած ծիծաղում.

— Ա՜յ, ա՜յ, աչքերի վրա աղեղակներ...

Բայց շրջապատողները վախեցած են արդեն։ Հավաքվեցին մյուս ուխտավորները և երկյուղած նայեցին Զվարթին, որ աշխույժ մատով օդում կրկնում է գծերը.

— Նուռը տալիս է եղնիկին։ Տեսե՛ք եղջյուրները։

Ուխտավորները երեսները խաչակնքում են։ Զվարթի մայրն արտասվում է, իսկ հայրը խիստ ազդված, դողահար, բռնում է Զվարթի ձեռը։ Վանահայրն է միայն, որ գոհունակ նայում է Զվարթին։

Զվարթենց հարևանը փսփսում է վանահոր ականջին.

— Աչքին միշտ կերևնան, հայր սուրբ, հայնց որ երազ։

— Շնորհաց աղբյուրին ապավեն լինենք,— մրմնջում է վանահայրը։

Հարևանները, համագյուղացիները սրտերն առնված նայում են Զվարթին և ափսոսում նրան։ Զվարթը պիտի մնա վանքում, նվիրվի վանքին։ Նա էլ չի տեսնելու իրենց տունը։

Ժամերգությունն սկսվեց։ Խորին անդնդից ասես ուղտերի զանգեր եղանակեցին, որոնց արձագանքը ղողանջեց ներսից։ Ուխտավորները, բացի կանանցից, մտան սրբավայրը։

Սևացած, փոշոտ կամարները թուխ արծիվների պես թևաբաց իջնում են վերևից։ Անկյուններում արդեն մթնում են ստվերները։ Կանթեղը թույլ դողում է բեմի խորքում, մշուշի մեջ լողացող աստղի պես։ Սևազգեստ վանականները կոկորդաձայն կոնչում են ինչ-որ աղոթքներ։ Եվ անկյունները տխուր են, տխուր մեռելի փակված աչքերի նման։

Ճնշվում է Զվարթի հոգին։ Նա երկյուղով նայում է հատակին, չի համարձակվում աչքը վեր բարձրացնել։

Ժամերգությունը վերջացավ։ Զվարթին տարան բեմ, մոտեցրին մի ահավոր հանգուցյալի, որի դեմքը կաշվե դեմակ էր, որը մեռելի մեռած մորուք ուներ և ոսկրե ձեռներ։ Նրա այտը և մի աչքի տակն այրված էր մոմից։ Նա շրջանակի միջից ահռելի նայում էր Զվարթին, Զվարթին մոտ տարան դեպի մեռելը.

— Համբուրե, համբուրե,— շշնջացին հետևից նրան։

...Ջրերի կոհակներ են խշխշում, խշխշում են երկար, հեռվից, խորքից։ Մի մեծ ձուկ լաց է լինում, «Ո՛չ, վուշ, Զվարթս, տղաս, վուշ»։

Բաց է անում աչքերը Զվարթը,— ի՞նչ է, ո՞ւր է... Նրա դըլխավերև նստած է հայրը, կողքին մայրը, որ ծնկներին է ծեծում։ Մի կողմ շարված են ուխտավորները, իսկ ոտների մոտ նստած է մի մարմարե ծերունի, որն հանգիստ նայում է Զվարթին և այդ հայացքով նա նման է, այ, հենց այն ծերունի ամպին, որ երկնակապույտի մեջ կորամեջք գնում է ուր որ։

Իրիկնադեմին Զվարթենք և բոլոր ուխտավորները քաշվեցին։ Ամենքը գնացին, մնաց մթնած տուղտը, խավարած վանքը, սառնածոր աստղերը երկնքում։ Անձուկ դառավ վանքի բակը, լռեց, գերեզմանաքարի պես և նրա մեջ թաղված աշխույժ թիթեռը— փոքրիկ Զվարթը։

Հեռուն, հեռուն, որտեղ գնացին Զվարթենք և գյուղացիները, հովիտն է լցված փիրուզե մշուշով։ Դա հայրենիքի ճանապարհն է։ Զվարթը տխուր նայեց այն կողմ և սրտաբեկ հառաչեց։ Վանահոր փոքրավորը նրան տարավ վանահոր խուցը, ուր նա կծկվեց մի ոչխարենու վրա։ Վանահայրը նստեց ձիթաճրագի լույսի առջև, վերցրեց մի սևակաշի գիրք և խոշոր աչքերը գրքին հառած, սկսեց կիսաձայն մրմնջալ։ Նա ծովի էր նման, օտար ու մշուշոտ։ Զվարթը նայում էր նրան և գրքին։ Վանահայրը կախ էր գցել նրա մի էջը, և երևում էր այդ էջի վրա մի ոսկեշող խամութ, կապույտ սյուներ և ծաղիկներ։ Զվարթը տխրեց, երբ տեսավ ծաղիկները։ Դա հիշեցրեց նրան իրենց դաշտերի ու ձորերի ծաղիկները։ Հանկարծ ճրագի լույսը, ծերունին, գիրքը, բոլորը բեկբեկվեցին արտասուքի կաթիլի մեջ, որ բխեցին Զվարթի աչքից։ Նա սկսեց հեկեկալ։ Ինչո՞ւ բերին իրեն, թողին այս լռին ու օտար վայրում։ Ե՞րբ պիտի տանեն իրեն։ Այլևս չի՞ տեսնելու ծնողներին, ընկերներին։ Իրեն թողեցին ու գնացին։ Ամբողջ սրտով լաց եղավ։ Գիշերը տաքություն եկավ վրան։ Տենդի մեջ սկսեց այրվել։ Ջրեր սկսեցին խշշալ նրա ականջներում, ծաղիկների մի հեղեղ եկավ խոնվեց նրա աչքերում։ Ջոր շրթունքները թաղում էր ջրերի մեջ, խմում անհագ ու որքան խմում էր, այնքան ծարավն այրում էր

իրեն։ Մի քանի օր ոչինչ չէր գիտակցում։ Միայն մի ճերմակ ձմեռ — վանահայրը լցվում էր խուցն ու ցրվում հետո։ Ծերունին նայում էր նրան հանդարտ ու սպասում։

Եվ մի օր Զվարթը աչքերը բացեց։ Սառը քրտինքը ճակատին նա հանգիստ շունչ քաշեց։ Նա ապաքինված էր։ Փոքրավորը նրան ապուր բերեց ու աղբյուրի սառնորակ ջուր։

Զվարթն ապաքինվեց, բայց և սկսեց գաղտնի մաշվել։ Հայրենիքի բույրեր հողի ու ծաղիկների հետ գալիս լցվում էին վանքի դավիթը և նրան քաշում հեռավոր տուն, խաղընկերների մոտ։ Մթնակապույտ հեռանում էին լեռները դեպի այդ տունը, ծիծեռնակները սլանում էին այն կողմ, լողում ամպերը, որ կարապներ էին՝ վրան ճերմակ աղջիկներ հեծած։ Նստում էր պարսպի տակ, անդնդի եզրին Զվարթը և նայում դեպի իրենց տան կողմը, լեռներն ու դաշտերը։ Մտերմաբար իջնում էր երեկոն, շոյում նրա վառվող աչքերը և Ղունկիանոսը՝ փոքրավորը նրան գտնում էր քնած անդնդի եզրին։ Զարթնեցնում էր և տանում խուցը։

Իսկ ձմեռը՝ ձյան փաթիլներն աղավնիների պես ճախրում էին անդնդի վրա և Զվարթը մտքովը նրանց հետ խաղում էր, խաղում ու հետո գալիս մտնում խուցը, ոչխարենու մեջ կծկվում, քնում։

Փոքրավոր Ղունկիանոսը, մի խեղճ ու կրակ երիտասարդ էր, բայց անսահման բարի, որ շատ խղճաց Զվարթին և կապվեց նրա հետ։ Վանականների սառ հայացքներից սիրտը պաղած, Զվարթը նրան էր որոնում։ Ղունկիանոսի մեջ ջերմություն կար, կյանքի նշույլ։ Նա էր միայն, որ սիրտ էր տալիս Զվարթին։

Նա Զվարթին սփոփում էր կարծես։ Այնուհետև ոչխարենու վրա պառկած, Զվարթը հանգիստ էր դիտում ծերունի վանահորը, որ անքուն անդադար գրում էր մագաղաթի վրա։ Ի՞նչ էր գրում նա, ի՞նչ մտքերի մեջ էր խորասուզվում այդ խորին ծերունին։ Զվարթի մտքերը թափառում էին այդ ծերունու շուրջը, կորչում, կրկին դառնում նրան։ Տարօրինակ մարդ էր վանահայրը։ Նա, այդ ինքնամփոփ, խոր մարդը վերին աստիճան հետաքրքրում էր Զվարթին։ Ո՞վ էր նա իսկապես։ Ղունկիանոսը լսել էր և պատմում էր Զվարթին։ Վանահայրը նախկին ճարտարապետ է և փիլիսոփա։ Նա կառուցել է վանքեր, լսարաններ ու պարիսպներ։ Այժմ, երբ մարմնական ուժը պակասել է, մտել է վանք փիլիսոփայությամբ զբաղվելու։ Նրան աբեղաները չեն հարգում, քանի որ նա հոգևոր տենչով չի եկել վանք, նա «հոգևորաց» չէ, այլ «մարմնավորաց» է։

Ի՞նչ է նշանակում այս։ Զվարթն ավելի է վառվում հետաքրքրությամբ, որ հասկանա այդ մարդուն։ Եվ ուսուցման ժամերին, երբ նա Ղունկիանոսի հետ ծալապատիկ նստած էին լինում վանահոր դիմաց՝ Զվարթն աչքերը լայն բացած, ուշակորույս ունկընդրում էր այդ անհուն մարդուն։ Միայն դեռ լավ չէր ըմբռնում նրա նոր օրինակ, անլուր մտքերը։ Նա միայն տեսնում էր իր առջև ծովի նման խորը մի էակի, որ խոսում է, խոսում է հենց ծովի պես, որին լսում ես անհագ տենչով, բայց չես հասկանում որի լեզուն։ Զվարթն զգում էր ինչ-որ արբեցնող վերասլացումն։

Խցից դուրս, բնության անհուն դահլիճում շքեղ հանդես է։ Վառվում է երկնային ջահը և լեռներն ու անդունդները շքեղանում են հանդիսավոր լուսով։ Թռչունները սրտապատառ ցնծությամբ ճախրում են օդում։ Աշխարհը տոնում է ամենավսեմ բանը — կյանքը և նրա ուրախությունը։

Վանահայրը նստած է խցում, հանգիստ քաշում փիլիսոփայորեն։ Զվարթն ու Ղունկիանոսը ծունկ-ծնկի ծալապատիկ նստած՝ սերտում են ինչ-որ հատված։ Մեղուն տզզալով կտրում է լույսի ոսկի սյունը և լցնում խուցը կյանքի ուրախությամբ։

Հանկարծ արևի շողքը մթնեց դռան առջև։ Ղունկիանոսը վեր նայեց և տեսավ դռան առջև մի բարձրահասակ մարդու։ Սա իր սապատավոր մեջքը խոնարհեց դռան կամարի տակ և գանգուր այծամորուքի ծայրը ցցելով ներս, նայեց Զվարթին արծվի հայացքով և խոնարհություն արեց վանահորը։ Ապա տաղանդի գծերով կրթված ձեռքից նրան մի գիրք հրամցրեց. Ղունկիանոսն ու Զվարթը վզները երկարացրին, նայեցին գրքին։ Վանահայրը բացեց գիրքը։ Էջերի վրա բնագրի հետ մեջընդմեջող վանքի ու այլ շենքերի նկարներ կային խստագիծ նկարած, որոնց շուրջը ծաղկած էր։ Արծվաքիթ մարդ, որ, ըստ երևույթին, աշխատել էր այդ գրքի վրա, սկսեց բանալ էջերը և բացատրել։ Զվարթը հասկացավ, որ նա էր պարգևել գիրքը վանահոր համար։

— Գրել է և շենքերը նկարել է հայր սուրբը, իսկ Թադեն արտագրել, ծաղկել է էջերը,— շշնջաց Զվարթի ականջին Ղունկիանոսն անհասկանալի բաներ։

Վանահայրն անդորր նայեց գրքին, հառաչեց և այս աշխարհից հեռացողի երազով նայեց գիրքը ծաղկողին։

— Այժմիկ պատրաստ եմ երթալ առ հարս, Թադե, ահավասիկ վաստակք իմ և կտակ իմ։

Ծաղկողը, Թադեն, համբուրեց վանահոր աջը և դուրս գնաց։

Վանահայրը մեղմաժպիտ նայեց Զվարթին ու Ղունկիանոսին և սկսեց բարձրաձայն կարդալ իր հեղինակությունը։ Նա տարվեց իր մտքերով և սկսեց այնպես կարդալ, որ չէր իմացվում, թ՞ր համար էր ընթերցումը, թե՞ ուսուցանում էր Զվարթին և Ղունկիանոսին։— «Կառուցումն է աշխարհն և աշխատք շինողական» — շրջում է գրքի էջը վանահայրը և ոգում,— «Կառուցումն է քաղաքն, կառուցումն՝ խոսքն, կառուցումն՝ միտք»։

Եվ ցույց է տալիս երկինքը, երկիրը, վանքի շենքը, իր ճակատը, իր «միտքը»։ Բացատրում է տիեզերական շինարարության արվեստը։

Զվարթը բոցավառվում է։ Նրա աչքերում գծագրվում և գունավորվում են շքեղ պատկերներ։ Ջնգում են մուրճերը և խստադեմ քարտաշները կտրում են ժայռերը, խոհուն որմնադիրներ կանգնեցնում են հոյակապ քաղաքներ՝ երկնասլաց աշտարակներով։ Փարթամ պարտեզներ կախվում են անդունդների վրա։

— «Աշխատ առնե բնությունն, կառուցանե ծառն, շինարարե մրջյունն։ Եղեք և դուք կառուցողք և շինարարք, որպես մարդիկք երկրի, սիրեցեք աշխատք, զի կառուցումն և աշխատք սուրբ են»...

— «Զքանա բռնություն, փոշիանան գահք և թագավորություններ և մնա շինարարն»...

Խորանում է ծերունին Զվարթի աչքերում։ Այլակերպվում է այդ հրաշքներով լի մարդը։ Նրա մռայլ սքեմը հալվում է և նրա տակից դրսևորվում է «երկրի մարդը», որի միտքն զբաղված է մի մեծ կառուցողական տենչով ու երազով։ Զվարթը խցից դուրս է նայում «աշխարհին»։ Եվ այդ անհուն շենքի մեջ, ուր թռչունները հյուսում են մետաքսե բներ, մրջյունները կառուցում են իրենց բնակարանները, ամբողջ աշխարհը ներկայացնում է որպես մի հսկայական ճարտարապետական կառուցվածք իր երկնքի աշտարակով, նրա վերև կախված արևի ջահով, լեռների սյուներով ու անդունդների նիշերով։

Տանջվում է Զվարթը, գիշերները տապակվում է անքնությունից։ Տանջվում է մի անըմբռնելի տենչից։ Չգիտե որտեղից է գալիս այդ տենչը և ինչ տենչ է դա, ի՞ր մեջ է, թե՞ դուրսը, այլ տեղ — չգիտե։

Ղունկիանոսը նկատում է նրա տանջանքը և ուզում է օգնել նրան.

— Կարդա՛, Զվա՛րթ, կարդա՛,— սիրտ է տալիս, հորդորում։

Զվարթը նայում է Ղունկիանոսին երազով ու տխրությամբ։

— Ես անիմա՛ եմ, Ղունկիանո՛ս, միտքս՝ տկար, ե՞րբ պիտի ես էլ իմանամ թե ի՛նչ եմ։

— Համբե՛ր ունեցիր, Զվա՛րթ, կգա տերը շնորհաց, կընդունես շնորհ և միտքդ կվառվի։

— Ի՞նչ բան է շնորհ ընդունելը։

— Շնորհ ընդունելն այն է, որ նա քեզ կասի թե ի՛նչ ես կամենում և ի՛նչ պիտի անես։

— Ո՞վ է տերը շնորհաց։

Անհասկանալի բաներ է պատմում Ղունկիանոսը, այն, ինչ որ լսել է, բայց ինքն էլ չի հասկացել։ Այդ տերը շնորհաց մի լույս է. այսպես է լսել Ղունկիանոսը վանահորից։

— Լո՞ւյս — վախենում է Զվարթը — չլինի՞ թե գա գիշերը, խավարի մեջ, միայնության ժամին։ Շարունակ անհանգիստ մտածում է այդ էակի մասին։

Շրջում է այդ մտքերով Զվարթը անդնդի վրա, գարնանային արևը լուծվում է ժայռերի, ծաղիկների, ջրերի վրա և Զվարթը նրանց արտաքին կերպարանքի տակ, նրանց մեջ բաներ է տեսնում, որ նրանց այլափոխում, դարձնում են շնչավոր բանական էակներ, որոնց հետ ինքն իր մեջ խոսում է գաղտնի իրենից և գաղտնի լեզվով։ Նա նրանց տեսնում է և ամենուրեք,— ամպերում, պատերի վրա, խավարի մեջ։ Նրանք շարժվում են, մարդու ձևեր ընդունում, խոսում իր հետ, ծիծաղում, կանչում իրեն։

Զվարթն ակամա, ձեռքով, օդի մեջ գծում էր նրանց պատկերը։ Բայց հենց մարմնացնում էր նրանց մտովի գծերով, օդի մեջ, նրանք խուսափուկ ու արագ անէանում էին և նրանցից մնում էին ուրիշ բաներ.— բառեր, կրակոտ բառեր, որ շշնջում էին նրա ականջին։

Շշնջում, շշնջում և կորչում։ Հետո կրկին ու կրկին...

Տանջվում է Զվարթը, տենչում ինչ-որ, ուր-որ...

Բարձրագմբեթ, կամարակապ մի օթևան։ Նրա տակին միայնակ կանգնած է Զվարթը և ունկնդրում լռության։ Գիշերը ծծումբի աչքերով երկնքից նայում է ներս գողտրիկ պատուհանների տրանքով։

Խավար է օթևանում և տխուր։ Միայն դուրսը, անդնդում անքուն գետն է վշշում, հովտում տնքում գիշերահավը։

Հանկարծ օթևանի պատը, որը թվում էր անհուն, հեռվից, շա՛տ հեռվից, ճեղքվեց և ներս հոսեց ո՞վ — ինքը, Զվարթը... Զվարթը չի զարմանում։ Չէ՞ որ նրան նա տեսել է շատ անգամ — աղբյուրների ակունքներում, ցողի մեջ։ Նա արեգակնափայլ աչքեր ուներ, որ վառվում էին գոհարների պես։ Այդ աչքերը այնպես էին նայում, որ Զվարթը զարհուրեց։ (Իր մե՛ջ ահա այդպիսի զարհուրել՝ բան կա եղել...)։

Եվ չիշխեց վեր նայել նրան։ Բայց մի ուժ դրդում էր Զվարթին նայել նրան։ Եվ ահա, երբ նա աչքերը վեր բարձրացրեց, զարհուրած ընկավ հատակին։ Երկար մնաց այդպես ընկած, հետո ինչ եղավ — չի հիշում Զվարթը։ Միայն զգաց, որ էակը մոտեցավ իրեն և կռանալով ձեռքը դրեց նրա ուսին։ Նրա կռանալն զգաց նրանով, որ նա շշնջում էր։ Անբացատրելի էր այդ շշունջը, երգաձայն անուշ։

Զվարթը լսում էր ու օրորվում։ Երգի եղանակի պես ձգվում էր այդ շշունջը։ Զվարթը երևակայությամբ շրջում էր եղանակը և սա ընդունում էր այդ ընթացքը, և այն բառերը, որ կամենում էր Զվարթը։

Զարթնեց Զվարթը։ Դեռ գիշեր էր։ Անուշ քունը հետ էր քաշում նրան։ Միայն մի անգամ աչքերը բացեց Զվարթը և խցի դռան բացվածքից նայեց երկնքին։ Լուսո աստղը հալած ոսկու պես գողում էր լուսացող, հում երկնակապուտի մեջ։ Բայց այն հրաշալի շշունջը դեռ հոսում է նրա ականջում։

Հետո կրկին զարթնեց։ Միծեռը սաղմոսում էր վանքի քիվերում։ Դա նույն այն շշունջն էր, որ քաղցր բարբառում էր։

Զվարթը դուրս ելավ և գնաց անդնդի եզրը և սկսեց շրջել քարից քար։ Արևի շողքերը դեռ նոր էին նկարում ժայռերի մռայլ սյուները։ Գետն անդնդի միջով գնում էր իր օտար ճանապարհը։ Նրա երգի մեջ և լսվում էր երազի այն շշունջը։

Հանկարծ Զվարթն անդրադարձավ «ո՞վ էր նա»... չէ՞ որ ինքը

չէր։ Բայց և ի՞նչպես երազում էր թե նա ինքն է։ Ով էր նա... Եվ նկատեց, որ ինքը շարունակում է այն շշունջը, որ ինքն է շշնջացողը։

Եվ իմացավ, որ երազի էակը ինքն է։ (Ախր, երկու էակ չկա միևնույնը...)։

Եվ հանկարծ Զվարթը զարթնեց արթնության մեջ։ Նա զգաց խոսքը։ Նրա սիրտը մարեց մի անբմբռնելի տենչով։ Նա տենչաց խոսել, խոսել բարձր, երգաձայն, հանդիսավոր, թեկուզ բազմության առաջ։

Եվ սկսեց մի ասք մրմնջալ կիսաձայն։ Պատկերներ բազմաբովանդակ։

Վանականները հավաքված էին գարնան արևին պարսպի տակ և դիտում էին ձորը։ Հանկարծ նրանք տեսան Զվարթին անդնդի վրա երերալիս։

— Գինով է, կգահավիժի անդունդը,— ձայնեց աբեղաներից մինը և վրա վազեց, բռնեց Զվարթին։

Զվարթը հրաբորբոք աչքերով նայեց նրանց և դոզահար շրթունքները բաց սկսեց հևալ։ Նրան բերին վանահոր խուցի դուռը։ Վանահայրը դուրս եկավ։

— Ի՞նչ ունես, հիվա՞նդ ես, որդյակ։

Բռնեց ճակատը։ Տաք էր։ Զվարթը հևում էր ինչպես տենդի մեջ և երազով նայում վանահոր։ Սա շոյեց նրա ճակատը և մեղմ հրամայեց։

— Խոսիր, որդյակ, ասա մեզ բան, ի՞նչ է մտածությունդ։

— Խոսիր, խոսիր,— պնդեցին աբեղաները։

Զվարթը նայեց նրանց, վանահորը և հանկարծ փայլատակեց, սկսեց ոգել։ Ավելի հստակ զգաց, որ ինքը պիտի խոսի այն, որով լիքն է ինքը, սիրտ առավ և կրակվեց աշխուժով։ Նա սկսեց մի վեպ, թե ինչպես ինքը երազ տեսավ, ինչպես շնորհքն եկավ ու լցվեց իր մեջ և որ ինքը կարող է ոգել, ինչ որ կամենա ամեն ոք։ Նա ոգում էր հափշտակված, բառերը անարգել հոսում էին, նա ոչինչ չէր տեսնում,— գալիս է գարունը, ձայն տալիս հողին, զարթնում է հողը, ձայն տալիս բոլոր բույսերին։ Զարթնում է ձնծաղիկը, ձայն տալիս մյուս ծաղիկներին, թե զարթեցեք, զարթեցեք, քանի՞ քնեք հողում, զարթեցեք, լցրեք աշխարհը ուրախությամբ։

Սար ու ձոր լցվում է ծաղիկներով։
Եվ՝
Ծափ է տալիս ծափծափը, ծիծաղում,
Աշխարհը թաց է բոլորում գլխին,
Ղատիֆան հագնում է ծիրանի,
Ծարուրիկը սուրմա քաշում աչքերին։
Եվ՝
Սեր է աշխարհն, սեր են մարդիկ,
Սեր է արևն, սեր՝ ծաղիկն,
Սեր են հավքերն ամեն երկնուց,
Սիրով են ամենքը գեղեցիկ։

Վանականները լսում էին մթին քարերի պես, անարձագանք, սառն։ Միայն նրանցից ամենաչարը տխմարադեմ Ազարիան դառն ու նախանձահույզ ձայնով հարցրեց, բողոքեց.

— Որպես խոսի սա զբանս զայն. զի չէ սա վարդապետ։

Վանահայրը սաստեց նրան.

— Մի՛ բանսարկիր։ Միտք նորա ինքնաբուխ են և պայծառ։ Եվ իմաստուն է պատանին այս, քան զվարդապետ։

Վանականները սաստված նայեցին Զվարթին և պապանձվեցին։

Եվ նկատեց Զվարթը,— նախանձահույզ Ազարին, որ դավ էր ուզում նյութել իր դեմ, նախանձից դեղնեց։ Մյուսները մռայլեցին, ոմանք ամաչեցին, իսկ ոմանք էլ շտապեցին խուսափել վանահոր աչքերից, թերևս նաև Զվարթից։

Վանահայրը արձակեց Զվարթին և վանականներին հրամայեց ցրվել իրենց խուցերը։ Նրանք հեռացան ոխով լցված դեպի Զվարթը։ Նրանք ատեցին Զվարթին։ Եվ ամեն պատահելիս հարձակվում էին վրան, կշտամբում, բարկանում։ Զվարթը չէր հասկանում նրանց և ժպտուն նայում էր նրանց և անցնում։

— Նա ծաղրի է մատնում մեզ,— փրփրալի ժայթքում են վանականները վանահոր վրա, որ նա իր պաշտպանության տակն է առել մի խելագարի։

Սկսեցին հալածանք բորբոքել նրա դեմ։ Բանսարկեցին նրան՝ «հերետիկոս է, չարի գործիք։ դիվային գիրք է գրում նա, պետք է այրել այն»։

Վանահայրը լսեց այդ և շատ վշտացավ։ Նա զգում էր իր մահը։— Ում պիտի մնան իր կիսավարտ մտքերն ու գործերը, իր կառուցումների ոգին։ Ղունկիանոսն անուսում է դեռ, Զվարթը պատանի։ Ում պիտի ավանդի իր կտակը։ Չորս կողմը խավար, անապատ։

Մի օր վանականները Ազարիայի գլխավորությամբ պաշարեցին վանահոր խցի դուռը։ Եկան պահանջելու, որ արտաքսի Զվարթին, որովհետև նա պղծում է սրբավայրը դիվային մտքերով։

Վանահայրը դուրս եկավ խցից.

— Որո՞ իրավամբ, ամբարիշտներ,— բողոքի և վշտի ձայնով հարցրեց նա,— տեսե՛ք նրա շնորհքը, նրա մտքերը։

— Թող դուրս գա, խոսի կրկին, և մենք ցույց կտանք նրա մեղքը։

Վանահայրը դուրս կանչեց Զվարթին.

— Ե՛կ, որդյակ, ե՛կ արդարացիր։

Զվարթը դուրս եկավ և ժպտալով նայեց վանականներին։

— Ահա՛ դու առաջի մարդկանց ասա՛ մի բան, թող դատեն քեզ։

Զվարթը մտածեց մի փոքր և ապա կերպարանափոխվեց։ Նա սկսեց ոգել։ Ինչի՞ մասին էր այդ։

Բովանդակությունը այս էր.—

Եկավ գարունը, ծաղիկները հորդեցին,
Մանիշակը ժողովեց բոլոր ծաղիկներին
Եվ դավ սարքեց վարդի հանդիման.
Վճռեցին սպանել վարդին, որ չլինի թե,
Գա զարդարվի վարդն կարմիր,
Ամենքի ուշը գրավի իր վրան,
Ամենքը նայեն վարդին կարմիր
Եվ իրենք աննկատելի մնան։
Հորոտ-մորոտ ձայնեց ձնծաղկին,
Ձնծաղիկը շուշանին,
Շուշանը նունուֆարին,
Սուսամբարին, նարգիզին
Եվ ինչ որ ծաղիկ կար երկրի երեսին,
Որ գնան կտրեն վարդն կարմիր։

Հանկարծ հնչեց ձայնը բլբուլի,
Եվ վարդը զարթնեց մեջն իր կանաչ վրանի,
Հանեց իր կանաչ կապան,
Հագավ իր վառ ծիրանին։
Ծաղիկները փախան, ցրվեցին. ոմանք ամոթից,
Ոմանք շփոթված, ոմանք սուգ մտան, կապտեցին,
Ոմանք երկյուղից դարձան դեղին։

Վարդը զարդարեց իր բուրաստանը, եկավ բլբուլը նստեց նրա մոտ, հարցեց նրա անուշ հոտից ու երգեց բարձրաձայն, թե —

Սեր է ծառն, սեր ծաղիկն
Սեր է հավքի ձայնն ի ծառին,
Սեր է վարդն, սեր բլբուլն,
Սիրով է նստել վրա վարդին։
Եթե չլիներ սեր իմ սրտիս,
Չէի կախվի վարդի փշին,
Եթե սերն ինձնից զատվի,
Ինձ կտանեն ցուրտն ու քամին։

Տենչում է վարդն բլբուլին, խնդրում է բլբուլին, որ համբուրի իրեն և ցույց է տալիս սիրտը, մեջը դեղին։ Դա իր վիշտն է։ Եվ գանգատվում է.

Պիտի քաղեն տանեն իրեն
Եվ եփեն դեղ հիվանդներին,—
Դրանից է սիրտը դեղին։

Զվարթը վերջացրեց և նայեց վանականներին. նրանց աչքերի սպիտակուցները փայլուն դանակների նման մերկացել էին իր դեմ։

Առաջ եկավ նախանձափրփուր Ազարիան, բացեց իր դառն բերանը և սկսեց բանսարկել։

— Մարմնավորաց են բանք վարդիս և սեր աշխարհի է։
— Պիղծ են բանք դորա,— մռմռացին մյուս վանականները։
— Մի բանսարկեք, մաքուր են մտածությունք պատանվուն։

Սակայն Ազարիան չանձնահարվեց։ Նա ապերասան և կոկոզավիզ առաջ եկավ.

— Դիվահար է, հարկ է սպանանել զնա և դեն, որ է ինմա,— գոռաց նա դառնաշունչ և կատաղի եղան նման հարու տվեց Զվարթի վրա։

— Հեռու, խավարի ծնունդ,— բարձրացրեց ձեռը վանահայրը,— ո՞ր իրավամբ սպանանես զանմեղն։

Բայց անհանգստացավ վանահայրը։ Խռովություն էր բռնկվում։ Պետք էր փրկել պատանուն կատաղած մոլեռանդներից։ Ինչ աներ... Նա հավատով նայեց Զվարթին։

— Կարո՞ղ ես խոսել բան մեկնության,— խոժոռ հրամայեց վանահայրը։

Զվարթը թափանցեց նրա հոգու տաղնապի մեջ, մի վայրկյան թափառեց նրա մտքերի աշխարհը և հետ եկավ լարված ու վստահ։

Ու սկսեց.

Ասե՞մ ով է վարդն կարմիր,
Կամ ով են ծաղկունքն ամեն,
Կամ թե ով է բլբուլը քաջ,
Կամ թե որն է ձայն բլբուլի։

Ծաղկունք քահանայքն են հին օրինի, վարդը Հիսուսը, մանիշակը Հուդան, որ դավեց նրան և բլբուլը Գաբրիելն էր, որ փողը փչեց։ Վարդն, որ հագավ ծիրանին, Քրիստոսն էր, որ հարություն առավ, ծաղկունքը, որ թառամեցին, դեղնեցին, զինվորներն էին, որ փախան նրա գերեզմանից։

Գոհունակ ունկնդրեց վանահայրը, վանականները պապանձվեցին։ Զվարթը հաղթել էր։

Սակայն Ազարիան Զվարթի աչքերում եկատեց մի շող, ճարտար մտքի ճարպիկ խաղ։ Նա զգում էր, որ Զվարթի միտքը «մարմնավորաց» էր։ Բայց իր բութ միտքը չէր ծաղկում այնպես ճարտար, որ կարողանար հակաճառել։ Խավարեց նա քարայրի պես և հետ քաշվեց։ Գնացին և մյուսները։

Այնուհետև ամբողջ օրը խցերից լսվում էր անեծքի գառնաշունչ ձայներ։ Վանահայրն անձկության մեջ էր։ Զգում էր այս ամենի վախճանը։

Մի գիշեր երկար գրում էր նա իր գրքի շարունակության մեջ։ Գրում էր իր կտակը։ Նա դառնացած էր վանականների բանսարկու և նախանձահույզ հալածանքից։

Նա իր կտակի մեջ ձաղկում էր մարդկային տգիտությունը, գովերգում էր ճշմարտությունը։

«...Անէանա մարմինն իմ որպես ծուխ և մնան միտք իմ ճըշմարտության։ Դուք կգողանաք իմ մարմինը, ցրիվ կտաք որպես խոիվ, բայց իմ միտքը կմնա որպես լույսն արեգական։ Մի դիպչեք ինձ, որդիք խավարի,— սպառնում էր նա իր կտակի մեջ,— ճշմարտությունն եմ ես և ես վրեժխնդիր կլինեմ ձեզանից»։

Գրեց մինչև խորին գիշեր։ Լուսաբացին զարթեցրեց Զվարթին և Ղունկիանոսին, մոտ կանչեց, համբուրեց նրանց և ասաց, որ գնում է։

— Ո՞ւր,— հարցրեց Ղունկիանոսը, բայց և իսկույն հասկացավ և դառնորեն լացեց։

Վանահայրն իր նվիրական գիրքը հանձնեց պատանիներին և պատվիրեց լավ պահպանել։ Եվ մեռավ։

Վանահորը թաղեցին բռնադատված շուքով, բայց խորին ատելությամբ։

Ղունկիանոսը նրա գիրքը գաղտնի տարավ Թադեի մոտ, և նրանք թաղեցին քարե գաղտնարանում։

Հետևյալ օրը վանականները Զվարթին փակեցին մի մութ խցիկում և թույլ չտվին երգելու ծաղիկների երգը։ Նրան այցելում էր միայն Ղունկիանոսը։ Զվարթը թախիծով նայում էր նրան և սկսում խոսել, ոգել իր վեպը։ Ղունկիանոսը լսում էր, լսում և երկուսով մոռանում, որ բանտի մեջ էին։ Սիրում էր Ղունկիանոսը լսել այդ վեպը։

Բայց մի օր էլ նրան արգելեցին այցելել Զվարթին։ Այնուհետև Ղունկիանոսը գալիս էր բանտի լուսամուտից նայելու, գլուխը ծռած, տրտում։ Ժպտում էր Զվարթը և նայում երազով, կարծես անհոգ։

Եվ մեռավ Զվարթն այդպես, հոգում ծաղիկներ։

Ավերակ վանքի խարխուլ խցում արևշող կյանք է ծաղկում։ Այնտեղ Թադեն հողի հատակին արևի պես սփռում է գույներ, լույներ, խաղեր։ Առաստաղից կաշվե բարակ թելերից տախտակներ են կախ, վրաները մագաղաթ քաշած։ Թաթախում է Թադեն սուր գրիչը երանգապնակի մեջ և արծվի աչքերը մագաղաթին՝ անշարժանում է, սպասում և հանկարծ այծամորուքը կախելով մագաղաթի էջին սրբությամբ ծաղկում է էջը։ Պատանիներ այծյամի աչքերով նայում են իրենց վարպետին։ Վախենում են նրանից և սիրում նրան։ Թադեն հրաշքներ է գործում իր գրչով։ Քանի մոայլում է նա, այնքան ժպտում են մագաղաթները։ Այնտեղ է Ղունկիանոսը։ Նրա աչքերը գնում են կորչում այդ ծաղկած մագաղաթների ոսկու, լաջվարդի, նարնջի, հակինթի մեջ։

Հարցնում են ի՞նչ գիրք է այս։

Թադեն վեր նայեց։ Նրա աչքերը խորն են հորիզոնի պես։ Նա նոր տեսավ Ղունկիանոսին և արթնացավ։ Երազի մեջ էր։

Նա կրկին կռացավ մագաղաթի վրա։ Նրա ուշքը մի սիրամարգի կողմն էր, որի սրճագույն գլուխն ու վիզը հոխորտ կարկառել էր վերև և գետնի վրա սփռել իր փետուրների ասեղնագործ գորգը։ Մանվածապատ ծաղիկներ հակինթների ու գոհարների ցոլքով խաղում են լուսանցքին։ Իսկ վերևի աստեղալույս երկնքում այնպիսի մի երկնակապույտ է, որ կարծես մագաղաթը ճեղքել էր և ինքը երկինքն էր նայում այնտեղից։

Աշակերտները լռիկ ու հնազանդ լցնում էին ծաղկող վարպետի շրջանակները հետևյալ մանրամասներով։

Երբեմն Թադեն հայացքը շրջեցնում էր դեպի աշակերտները և իր նաղաշական հրահանգներն էր տալիս նրանց.

— Ոսկեձույլ նշողն ընդ նարնջին... ծաղիկ ընդ ծաղկանց... բոլորակն ոսկեճաճանչ, կամարն երկնահան գույն... Պայծառ լաջվարդույք, նոճին կանաչագեղ, թագագլուխ վարդն — ա՛յս է կանոնն...

Գիշեր է։ Թադեի խցում Ղունկիանոսը պատմում է Զվարթի կյանքը։ Թադեն լսում է։ Մոլի է նա, հարբած՝ իր գույներով, բայց գիշերվա մթնում չի կարող ծաղկել։ Քունը չի տանում, քունը փախցրել են երանգները, որ վառվում են խավարի սև պատառի վրա։ Բնությունն է միայն, որ նկարում է երկնքի էջի վրա, սփռում ծաղիկների թերթեր։ Թադեն լսում է։

Ղունկիանոսը ոգեց Զվարթի երգը ծաղիկների մասին։ (Խե՜ղճ Ղունկիանոս, միայն մի հստակ հիշողություն ունի այս աշխարհում և բարի սիրտ)։

Նա ոգեց գեղջուկ ձայնով և անկեղծ շեշտով։ Թադեն ականջները սրեց։ Լուեց, լսեց և գլուխն օրորեց.

— Երանի՜, երանի՜, երանի՜, աեռ՜ւշ է սրտին։

— Ծաղկի՜ր Զվարթի վեպը, վարպե՜տ,— ասաց Ղունկիանոսը արտասվելով։

Վարպետը ցնցվեց։

— Ճշմարի՜տն ասացիր, վաղիվն իսկ կսկսեմ։ Երանի՜ թե կարենամ։

***

Կրքոտված տանջվում է նաղաշը։ Ծաղկում է Զվարթի վեպը վանահոր գրքի մեջ։ Նայում է Ղունկիանոսը նաղաշին խոնարհ ու ջերմեռանդ։ Սա խառնում է գույնը գույնին, խառնում, թողնում ու կրկին, կրկին։ Կրակներ են վառվում մագաղաթի ճակատին ու լուսանցքներին։ Բոցագույն վագրեր թռել են նարնջենի եղնիկների մեջքին և պատրաստվում են հոշելու նրանց։ Դողահար է նկարում նաղաշը, նա թվում է մոլի, խելագար։ Ինչ-որ հիվանդագին ջերմի մեջ, նա հատնում է մոմի պես, նա որոնում է մի շատ դժվար նրբերանգ։ Գույնը չի գտնվում։ Նրա աչքերը մարեցին, կիսախուփ նայել սկսեցին կարծես մի անդունդ, որի հատակին վառվում է մի հազվագյուտ ծաղիկ, աներևակայելի նրբերանգով։ Ու հենց այն է, գրիչը թաթախեց պնակի մեջ և դրեց մագաղաթի վրա, նրբերանգը փախավ ինչպես չնաշխարհիկ թռչուն։ Նաղաշը հոգոց հանեց և հուսահատ նայեց դռնից դուրս։ Աշակերտները պապանձվեցին, նայեցին իրենց վարպետին և ակնածանքով սպասեցին։ Նրանք ապրեցին վարպետի տանջանքը։

Հանկարծ նաղաշը սրտնեղած վեր կացավ և լուռ լուսնոտի պես գնաց դուրս, անցավ գավիթը և հեռացավ։

— Գնաց երանգը գտնելու, գնանք հետևից։

Աշակերտները և Ղունկիանոսն էլ նրանց հետ դուրս եկան։ Նաղաշը գնում էր դաշտը։ Ամբողջ օրը թափառեց նա իր աշակերտների հետ։ Մոտեցավ, նայեց նկարին։ Հետո վերցրեց գրիչը։ Գատանիները քարացան։ Սրբազան լռության մեջ ժպտաց մագաղաթը։

Ոսկեհուր մի գիրք, լի լույսերով և իմաստությամբ։ Բոցա-

վառ կենդանաթռչուններ, ձկնագաղաններ և ծաղիկներ շրջանակել են երկու վեպ. մեկը՝ որ խոսում է աշխարհի կառուցողական սկզբունքի, շինարարական աշխատանքի սրբության մասին, իսկ մյուսը, որ կրակե ժապավենի նման հոսում է էջ էջ — Զվարթի վեպը ծաղիկների մասին։

***

Զյուն է թափվում լույսի նման։ Բայց սև է վանքը և մութ նկուղը, որի մեջ բանտարկված է ձեռագիրների հետ մի գիրք և ոչնչանում է խոնավից։ Ասում են այդպես է լինում միշտ — ոչնչանում են մագաղաթները խոնավից։ Այդ գրքում ծաղիկներ կան։ Արդյոք քնե՞լ են ծաղիկները գրքի մեջ, թե՞ ոչնչանում են նաև նրանք։

Վանականները պորտաբույծ կյանք են վարում։ Նրանք փքվել են գորտերի պես, ու մոռացել Զվարթին, վանահորը, Թադեին և նրա աշակերտներին։ Նրանք բոլորին քշել են վանքից, նրանք ցրված են ով գիտե ուր։

***

Գիշեր։ Զմեռը մրրկում է։ Մրրկում է Հայաստանի լեռնաշխարհում։ Ցուրտ է, երկինքը սառ ապակի։ Լեռների լանջերով գնում է Ղունկիանոսը, մեջքին մի պարկ, ձեռին մի մրոտ մետաքսե կապոց։ Նրա կարկամած ձեռները կապտել են, բայց նա մատները երկաթի պես գամել է գրքի կազմին, որ մետաքսի տակից սառը կծում է։ Կսառեն այդ մատները և նա գիրքը ձեռքից բաց չի թողնի։ Նա փախել է մենաստանից։ Միայն մի բան գիտե, որ գրքերն է ազատում։ Միայն թե ազատվեն նրանք... Ո՞ւր է գնում, ինքն էլ չգիտե։ Աշխարհավեր մրրիկ է լեռնաշխարհում։ Զորքեր են հոսում հովիտներում։ Այրվում են քաղաքներ, գյուղեր, վանքեր, գրադարաններ։

Առավոտյան դեմ բուքը բերանքսիվայր ընկավ դաշտերի ու լեռների վրա։ Մի խարխուլ լեռնավանքի դռան, որ մի ծեր վանական բաց էր արել, ձյան մեջ մի կիսաթաղ մարդ է երևում,

պարկը մեջքին, կողքին մետաքսախառն մի գիրք, որ բացվել է և ժպտում կապույտ երկնքին։

Մեր վանականը նայեց գրքին և վերցրեց դողահար։

* * *

Խավար մի ամպ շղարշում է գիրքը և նրա պատմությունը։ Մի դարու պատմություն։ Ոչինչ չի երևում ուրիշ։ Մի փոքրիկ բացվածք միայն թույլ է տալիս նշմարելու մի բեկոր.—

Զրնգում են ճանապարհները սուլթան էլտերրմի հեծելազորների սմբակներից։

Կարկուտ-ամպի պես է գնում նա սրընթաց։ Պապանձվել է երկիրը, էլտերրմն է լսվում միայն։

Վանքի մի խցում նստել է մի ծերուկ, գրքեր է քննում խորասույզ։ Խուլ է նա դեպի արհավիրքը։ Կարդում է։ Ներս են գալիս երկու զինվոր։ Չի նկատում նրանց։ Զայն են տալիս նրանք։ Չի լսում։ Զայրանում են զինվորները և նետահարում ծերունուն։ Նա ընկնում է։

Մի փոքր անց, կրակն սկսեց լափել գրքերը։ Ճենճահոտ՝ ծա՜նր, դա՜ռն։ Մագաղաթները կչրտում են։ Զինվորները տաքանում են, զվարճանում գրքերի ճարճատյունից։ Հետո հանգստացան, կշտացան, նայեցին չորս կողմ, ծերունուն։ Նայեցին անշարժ աչքերով, երկյուղած։ Զգում են, զուր սպանեցին նրան։

— Ի՞նչ գրքեր են սրանք։

— Ո՞վ գիտե...

— Ասում են գիրքը զայրանում է, պատժում... Նրանց մեջ ճշմարտություն է գրած։ (Խե՜ղճ զինվոր, միայն գրքի՞ մեջ, թե՞ նաև իր մեջ...)։

Հանկարծ մի գիրք պայթեց ու թռավ մի կողմ կրակից։ Դիպված չէ՞ր — մագաղաթ, յուղ, կրակ... Բայց ցնցվեցին և վրա ընկնելով կրակին՝ հանգցրին։ Գրքերը մխալ սկսեցին ծանր, դառն։

Դուրս ընկան ճանապարհ։

— Գիրքը զայրացավ։

— Այո՛, գիրքը չի կարելի վառել։

* * *

Զորում սոսափեցին ուռիները, մտածեցին և կրկին սոսափեցին։ Հետո պաղ գետի պես ձորավերևից հոսեց աշունը և գնաց ձորնիվայր։ Սոսափին խառնվեց և մի ուրիշ սոսափ։ Դա ջրաղացի բանդի մամռահոտ ջուրն էր։ Բաց թողեց ջրաղացպան Հակոբը բանդի ջուրը։— Էլ կարիք չկա նավերից ջուրը հոսեցնելու։

Սով է համայն երկրում։

Հակոբը ուռենու տակ խորհուրդ արեց իր երիտասարդ որդու հետ.

— Գնա, Հուսի՛կ, Դամասկոս։ Աղորիքները կանգնեցին։ Գնա ցորե՛ն բեր, ցանենք, կենդանությունը չմարի։

Հուսիկի կապույտ աչքերը թախծալի ժպտացին։ Նա կրկնեց.

— Կենդանությո՛ւն։

Ու բերանաբաց ժպտով նայեց հորը։

— Ի՞նչ ես հիմար մտիկ տալիս։ Խելքդ գլո՛ւխդ հավաքիր, երկիրը կործանվում է։

Հակոբը մտավ ջրաղաց, հանեց անկյունից մի ծաղկավոր խալաթ, հինգ մետաքս թաշկինակ և հետո կաշվե մատներով շոշափեց ու քսակից հանեց երեսուն դահեկան։

— Տաս բահ եմ շինել — նրա գինն է։ Խալաթը ծախելով ճանապարհը կկտրես, մի քիչ էլ կբանես, կբերես, դարնան մի բան գցենք հողին բերանը։ Կենդանությունը չմարի։

Հուսիկը նայում է հոր աչքերին։ Հայրը ազդում է նրան բնության նման։ Նա ինչ որ խորը, սարսափելի բան է ասում։

Հուսիկը ճանապարհ ընկավ դեպի Դամասկոս։

Գնում է Հուսիկը մի կապույտ տրտմալի ժպիտ աչքերում։ Հեռավորի կապույտը—հեռավոր հայրենիքի։

Հրաշեկ ճանապարհներ են կտրում երկիրը։ Նրանք տանում են բուրալի հակեր՝ արմավի, ցորենի, փստոցի, սուրճի։

Գնում է Հուսիկը, կարծես աշխարհի վրայով և մտածում է։ Եվ յուրովի ժպտում է չարաճճիորեն.—

— «Ի՞նչ էր ասում հայրը՝ «Կենդանությունը չմարի»։ Ո՞վ, ի՞նչը կփրկի մարդուն։ Հո՞ղը, կիլեն։ Ամիրա՞ն, իր զորքերով —

նրա դեմ կանգնած են սելջուկների, թաթարների իշխանները, հեղեղ հեղեղի միջով գալիս են լափում, ջնջում իրար։ Գուցե հարբսոտությո՞ւնը.— բայց տեսա՛վ Հուսիկը թե ինչպես մերկացան հարբուստները, ոսկին գնաց, մնացին կմախքները։ Ուրեմն ի՞նչը կպահի կենդանությունը, ո՞րն է վեմը կենդանության։

Վե՛մը — ահա թե ինչ է որոնում Հուսիկի միտքը։

Ու երերում է Հուսիկը քրտնախաշ, ազազիլ տատասկի պես արևի դեղին ծովի մեջ։

— «Ա՜յ, եթե մարդ թռչո՞ւն դառնար, փախցներ իր հետ ոսկին, հացը, զգեստը, կյանքը։— Բայց ի՞նչ օգուտ — անգղներն ու աքծիվները երկնքում կբզկտեին մարդուն և կհափշտակեին նրա բոլոր ինչքը»։

Ոսկեփոշի քաղաքը հուրհուրատում էր արևի լույսով։ Մի հախուռն բազմություն եռում է այնտեղ։ Հուսիկի աչքերը խայտացին, շլացան։ Ահա մի կրակոտ երիտասարդ՝ բրոնզե ձեռքերն օդի մեջ՝ ծռում է մի հրացայտ սուր։ Պողպատը ցնցվում է ու շիտակվում օձի պես։ Նրան շրջապատել են պղնձե երիտասարդները։ Նրանք ծիծաղում են սադաֆի ատամներով։ Ուղտեր են շոքել չինարների շուրջը, նրանց կողքին ցաք ու ցրիվ հակեր են ցորենի ու բյուր բարիքներով։

Նստեց հոգնած այդ հակերի մոտ, մեջքը տվեց չինարու բնին։ Արևը կիզում էր նրան, տոթը խեղդում։ Նայում է շուկան շրջանակած տներին, մարդկանց,— բոլորը խանձված են բարկ արևից։ Կապուտակ ջրերի կոհակներ վեռվեռացին Հուսիկի աչքերում։ Նա անգամ զգաց նրանց սառցի շրթերը իր պապակ շուրթերին։ Քուն է գալիս աչքերին։ Նայում է մշուշոտ հայացքով։ Երկա՞ր էր նայում, քնե՞լ էր և զարթնել, չէր հիշում — նայեց և ահա տեսավ իր դեմ մի խռնված բազմություն, որ ծիծաղելով իրար ձեռքից առնում և բարկ մատներով կոպիտ բացուխուփ էին անում մի գիրք։ Հուսիկը վեր կացավ, գրավվելով ինչ որ ծանոթ բանով։ Ի՞նչ է դա։ Այո, այդ գրքի տեսքը։ Նա տեսել է դրանցից։ Մոտեցավ։ Անգգույշ կոշտ եղունգներ քերում էին գրքի կողերը։ Մի ուրիշ ձեռք խլեց գիրքը և ինքն սկսեց տնտղել նրա սևակաշի արծաթպատյանը։ Հետո բացեց գիրքը և նայեց էջերին։

Գարուններ բացվեցին և մրգահաս աշուններ, երկինքներ սուտակ, բուրաստաններ, հրեղեն վարդեր, վարդեր ոսկեձույլ, և

ծաղիկներ մանվածապատ, ջերմ, հափշտակված, հրճվալից։ Հուսիկի աչքերում նկարվեցին իր լեռների, հովիտների մտերիմ գույները։

Ի՞նչ էր գրած այս գրքում, որ այդպես ջերմագին ծաղկազարդված էր։ Գիրքը ծախում էին։ Ծախողը մի արաբ զինվոր էր, բարեդեմ ու անհոգ։ Նա ձեռք էր բերել այդ իրը արշավանքի ժամանակ և հիմարություն էր արել բերելու մինչև Դամասկոս... «Ինչի՞ն էր պետք»։

— Հը՞, ի՞նչ տամ,— բերանք ծիծաղով ծռում է մի ուրախ մարդ։

— Երեսուն դահեկան։

Գնորդը փրթկաց, և գիրքը թռավ, ընկավ գետին, փոշու մեջ։ Մյուսները ոտներով խփեցին այս ու այն կողմ։ Զինվորը ծիծաղեց և գնաց ծուլորեն վերցրեց գիրքը և բռնեց ձեռին։ Զվարճանում է, որ ինքը ծախում է, նրանք էլ չեն առնում։

Հուսիկը մոտ գնաց և գիրքը շոշափեց։ Տաք էր արծաթը նրա մատների մեջ։ Բացեց գիրքը։ Նայեց նրան թեթև, հանդարտ։ Աչքերը երևացին ծաղիկների միջից։ Մի գարնանային խմաստություն, մի հարատև կենդանություն բուրեց նրանց միջից։ Գիրքը հանգիստ էր մի մարդու նման, որ գիտե կյանքի բոլոր օրենքները և կենդանության գաղտնիքը և չի վախենում մահից, սիրում է կյանքը և հավատով է ճակատագրի դեմ։ Հուսիկը հեգելով կարդաց. «Չի աշխատաք սուրբ են»։

Հուսիկը հիշեց — հիմա միայն հիշեց — իր գինեսեր ու զվարթ Սարգիս ապուպապին, որի մասին ասել էին, որ մի առույգ որմնադիր էր եղել։ Երգում էր եղել «բանելիս», երգում աղետների օրերին և երբեք չէր ծերանում։ Մի անգամ գործից վերադառնալով նա տեսել էր, որ իր տունը կողոպտել էին։ Ցիպ մերկացավ ընտանիքը։ Բայց Սարգիս ապուպապը քահ-քահ ծիծաղել էր.

— Ձեռքս չեն գողացել։

Ամենանեղ օրերին նա միշտ ասելիս էր եղել. «կաշխատենք-կապրենք»։

Այս էր ասել նաև նրա որդին՝ երևելի կառուցող, սրա որդին՝ և վերջինի որդին՝ Հուսիկի հայրը։ Եվ ասել էր հայրը, լսել էր սրա հայրը, և սա էլ լսել էր իր հորից, որ ամենամեծ բանն աշխարհում աշխատանքն է։

— «Աշխատանքը սուրբ է» — այսպես է գրած գրքում — ասելիս են եղել Հուսիկի պապերը — բոլորն աշխատավոր։ Կրկին կարդաց.

— «Ձի աշխատք սուրբ են»։

Ուրեմն սա այն գի՞րքն է...

Հուսիկի աչքերը վառվում են և միտքը կորչում հեռուն...

Նա հանեց իր դրամները և տվեց զինվորին։ Սա վերցրեց, գիրքը աշխույժ խոթեց Հուսիկի բուռը և ծիծաղելով գնաց։ Ծիծաղեցին նրա հետևից մյուսները և զարմացած նայեցին Հուսիկին։

Սա երազում էր։

Մոտեցան ուրիշ օտար մարդիկ, նայեցին գրքին, Հուսիկին։ Ու մինչ սա գիրքը դնում էր իր տոպրակը, մի ծանոթ ձայն սթափեցրեց նրան։ Սողոմոնն էր, իր հայրենակիցը։

— Դու խելա՞ռ ես, թե՞ հիմար։ Փողդ տվիր գրքի՞ն։

— Հա,— կոտրած ժպիտով, փոքր-ինչ հիմար նայում է Հուսիկը Սողոմոնին։

— Ապա գարնան ի՞նչ ես ցանելու։

Հուսիկը ապուշ նայում է և աչքերում առկայծում է թախծալի մի շող։

Շփոթվա՞ծ է, թե՞ կատակ էր արեց։

— Հիմա գնա տուն, անխելք։

Կգնա տուն և սովը նստած կլինի այնտեղ։ Մոխրագույն մի անդունդ է ընկղմում գիրքը։ Էլ ոչինչ չի երևում։

Ի՞նչ եղավ Հուսիկը, ի՞նչպես վերապրեց սովը։ Այսինքն՝ մահը։ Խե՜նթ, խե՜նթ Հուսիկ...

Գրքի հիշատակարանում գրած է, թե ինչպես նա դրամը տվեց գրքի դիմաց... երևի կարծելով, որ ցորենն անգամ կենդանություն չէ, որ անգամ նա չի փրկի իր կյանքը մահից։

* * *

Հիվանդ երեխայի բարձի տակից — (ահռելիորեն ծանր շարժվել, բայց անցել են կրկին դարեր) — կյանքի հուսով նայում է նա, այն գիրքը։ Ի՞նչ գիրք է, ոչ ոք չգիտե անգրագետ հողագործի այս ընտանիքում։ Նրան գտել են մի ավերակի տան մոխրանոցում։ Ասում են բժշկում է ամեն հիվանդություն։ Երեխան հոգու հիվանդություն ունի...

* * *

— Էս ի՞նչ կարավան է, ո՞ւր էսպես, խոջա՛։

— Վենետիկ, Ճենովա, թե բարին աջողի։

Խոջան կքել է, կարդում է անվերջ, շիկափուկ ճանապարհի եզրին։ Ուղտերի բեռներում՝ որդան-կարմիր, տորոն, մորթիներ, ակնեղեն։

Կարավանն հանգչում է։ Ուղտերը որոճում են։

Կարդում է խոջան և վանում ճանապարհի թախիծը։

* * *

Սև դարերի խորքից գալիս է մի գիրք։ Խավարի միջին թափառող լույսի է նման՝ դողդողում է, բայց գալիս է. թե ինչ վտանգներ է անցնում, չի տեսնում նա։ Ոչ ձմեռ, ոչ խավար։ Ոչ կրակն է այրում նրան, ոչ շոգը խեղդում։ Հրաշքն է պահում նրան, թե՞ պատահմունքը։ Բայց սերունդները խնամում են նրան, թաքցնում, փրկում և ավանդում նրան հետնորդներին, ձեռք-ձեռք անցկացնում դարերի փորձանքներից, անցկացնում հուր, սուր, ջուր։

Ժպտում է գիրքը։ Միամի՞տ է նա, անհո՞գ է նա, խորամա՞նկ է նա և գիտե իր գործը կարգադրել։ Թե՞ իմաստուն է, հայտնի է իրեն իր ճանապարհի գիրը։

Նման արևի լույսին, որ անհոգ խաղում է փրփրած ծովի կատաղի ալիքների վրա։ Դեղնում են ալիքները, կապտում, փրփրալի ժայթքում, գոչում, բռնցքում արևի դեմ, բայց նա ժպտում է։ Վտանգ չի իմանում նա, ատելություն չի դիպչում նրան, ալիք չի փշրում նրան։

Հազար ձեռքեր պահել, շոյել, շոշափել են այս ծաղիկները՝ կյանքի գեղեցկությունը, հազար-հազար աչքեր նայել են նրանց հետևից սիրով ու թախիծով։ Մոխրացել են հազար ձեռքեր, տեսնելի աչքեր և մնացել է այս ջերմ գիրքը։

***

Բնաջնջվում է մի ամբողջ ժողովուրդ։ Ոչ թե մի գիրք։ Թնդանոթներն ահեղ վիճակում են, «նա կորա՞ծ է»... — ո՛չ, «նա փրկվա՞ծ է», «...հրա՛շք է, թե փրկվի...»։

***

Մի կարմիր հողմ փոթորկալի թերթում է ոսկելույս թերթերը գրքի, որ ընկած մի մեծ ճանապարհի վրա նայում է նրան մտերմորեն։ Նա փրկված է իրեն միշտ փրկող ժողովրդի հետ։

Երկաթե գրադարաններում լռում են դարերը։ Մի ալեհեր գլուխ հակված է պատմության անդունդը և խոր հովտում տեսնում է ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ...

ՋՈՒԹԱԿ ԵՎ ՍՐԻՆԳ

Ո՞վ հնարեց ջութակը... Ո՞վ հնարեց սրինգը...

Թարմ գարուն էր, օրը պայծառ, կապուտակ, Գանգեսի մթին անտառի պուրակում ճխում էին թռչունները, հովը գալիս թել-թել տանում էր ծառերի թևերն ու քղանցքները, առուն քշփշում և գեղեցիկ Լակրմեն սիրում էր երջանիկ Հայանթուն։

Հայանթին եղեգնուտի մոտ թեք ընկել, աննպատակ եղեգ էր տաշում ու քաղցր միտք անելով նայում Լակրմեին, իսկ Լակրմեն ծաղիկ էր քաղում ու երգում. և այնքան երջանիկ էր նա, որ չէր իմանում, թե ինչ էր երգում։

Խոսում էր հեքիաթական անտառը, բզզում հսկա փեթակի պես լի կյանքով ու երգով։

Նայում էր Հայանթին իր սիրած աղջկան և աննպատակ տաշում. տաշում էր եղեգը, դեն ձգում, նորը վերցնում, էլի տաշում։ Հետո՝ ինչպես եղավ՝ տաշած եղեգը դրավ բերնին ու սկսեց փչել։ Եղեգը մեղմ սուլեց։ Հանկարծ մի չարաճճի միտք ծագեց նրա գլխում... Ժպտաց քթի տակին ու եղեգը առնելով գնաց մտավ թփերի մեջ։ Ու մինչ Լակրմեն միամիտ, իր համար երգում էր առվակի ափին՝ Հայանթին սկսեց սուլել եղեգը ու նմանեցնել նրա երգին։ Սկզբում սուլոցը դժվար ու կոպիտ էր, բայց շուտով այնպես վարժվեց, որ պատրանքը հաջողվեց։ Ու սկսեց բարձր ու համարձակ կրկնել Լակրմեի անգիտակից երգն ու խաղերը։

— Հայանթի՛,— հանկարծ սթափվելով ձայն տվավ աղջիկը,— այդ ո՞վ է ինձ տնազ գալիս։

— Չգիտեմ,— ասավ Հայանթին թփերից դուրս գալով՝ չարաճճի ժպիտը հազիվ պահելով։

Բայց Լակրմեն տեսնելով նրա ձեռքի եղեգը՝ գլխի ընկավ.

— Սատանա՛, էլի մի բան հնարեցի՞ր, լա՛վ էիր տնազս գալիս, էլ չանես։

Բայց Հայանթին ձեռք չվերցրեց իր հանաքներից։ Այնքան նվագեց, այնքան սրան-նրան տնազ եկավ, որ թե՛ գործիքը կատարելագործեց և թե՛ լավ նվագող դառավ։ Նվագում էր ու ամենքին զվարճացնում։

Մի տխուր տղա էլ կար՝ Նալը, որ սիրում էր Լակըմեին։ Տխուր, հուսահատ կնայեր սրան, կարծես մայր մտնող լուսնյակ լինի՝ գունատ, պղնձագույն։ Լակըմեն գիտեր նրա սերը, բայց էհ, երջանիկ էր, չէր մտածում նրա մասին։ Ասում էին՝ ցնդած է այդ տղան, որովհետև մենակ շրջում էր անտառներում և հորթի աղիքներ կախում ծառի ճյուղերից, չորացնում, ոլորում։ Ծիծաղելով ասում էին, որ նա էլ ինչ որ նվագարան է շինում...

Եվ ահա մի անգամ՝ անտառում Հայանթին ու Լակըմեն ջահել տղաների հետ նստել մի ծառի տակ հանգստանում էին։ Երգում, զվարճանում էին տղաները գարնան սեզի վրա, և նրանց քրքիջն անտառի լռության մեջ՝ զվարճացնում էր նրանց իր առակներով և ինքն էլ զվարճանում՝ լսելով նրանց անհոգ քրքիջը։

Այնտեղ էր և Նալը, որ հեռուն խոտերի վրա նստած նայում էր պատանիներին անժպիտ ու տխուր։

— Հայանթի,— ասավ բանաստեղծ Խալդունը,— մի բան նվագի՝ լսենք։ Այ, Նալն էլ, ասում են նվագել գիտե. նա էլ որևէ մի բան կնվագի, կզվարճանանք։ Դե, ձեզ տեսնեմ, ջահելներս։

— Այո, նվագեցեք, նվագեցեք,— ձայն տվին բոլոր տղաները և զվարթացան։

— Նվագեցեք,— կատակեց չարաճճիներից մեկը,— և ով որ հաղթի, թող նա լինի Լակըմեի սիրուն արժանի։

Բոլորը ծիծաղեցին։ Ժպտաց լուսածիծաղ Լակըմեն և ուրախացավ, որ Հայանթին պիտի իր շնորհքը ցույց տա։ Ժպտաց նաև Հայանթին, բայց հեգնորեն, ինքնավստահ և աչքի տակով նայեց Նալին, որն անշարժ նստել էր՝ իր ծիծաղելի գործիքը թևի տակին։

Եվ որ ցույց տա, թե ինքը ահ չունի, հայտնեց, որ առաջ ինքը կնվագի. «Նվագեմ, թող ձայնները կտրեն» — մտածեց նա իր ուժը գիտակցելով։

Թնք ընկավ Լակըմեն փարթամ ծաղիկների վրա, պատանիների շրջանակի մեջ, կարծես ձյունափայլ լուսին լիներ սև նոճիների միջից նայելիս։

Ամենքը ակամա նայեցին նրա լուսափթիթ դեմքին ու սկսեցին երազել։ Ժպտաց գեղեցիկ Հայանթին, ու այդ ժպիտի հետ ցոլաց նրա ձյունե ատամնաշարը։

Ժպտաց նաև գեղեցիկ Լակըմեն, և նրա վայրահակ սև թարթիչներից կախ ընկավ սիրուն, մանրիկ ժպիտը։

Ու Հայանթին սրինգը դնելով վարդիթեր շրթունքներին՝ սկսեց նվագել։

Դուրս թռավ նվագը ու գնաց հովի պես շնչշնկաց ու սուրաց լռանիստ հովտի մեջ։ Եվ սուլոցները այնպես առատորեն շաղ տվավ, որ կարծես աղբրի մարգարտաշար ու կլկլան կաթիլներ լինեին քարեքար թափվելիս՝ անտառի հստակ լռության մեջ։ Բյուրեղի պես մաքուր և արծաթի պես հնչուն էր այդ սուլոցը, առատ, զարմացնող, շոյիչ ու հարբեցնող։

Եվ ի՜նչ բազմազան խաղեր, ի՜նչ պատրանք... կարծես սոխակներ ու սայրակներ լինեին իրար ձայն տալիս երջանիկ մայիսին։ Եվ ի՜նչ զվարճալի տնազ երկու երջանիկների, որ ծաղիկների մեջ կարծես թռվռալիս, խաղալիս լինեին և մի սիրած ու սիրված աղջիկ քրքջալիս երջանիկ մոռացության մեջ։

Ու այսպես ծլվլաց ու կլկլաց եղանակը, արա՜գ, ինչպես լճակի կայծկլտուք, և մի վերջին ժխորով ունկնդիրներին շշմեցրեց ու նետի՜ պես թռավ, կտրվեց։

— Ապրե՜ս, Հայանթի՜, ապրե՜ս,— ձայն տվին ամենքը հիացած։

— Ապրե՜ս, Հայանթի՜,— ասավ Լակըմեն՝ չկարողանալով ծածկել իր հիացմունքը և գուրգուրոտ աչքերով նայեց շառագունած գեղեցիկ պատանուն։

— Ի՜նչ ճարպիկ ելևէջներ, չէի՜ր ասի, թե մարդ էր նվագողը,— խոսեց մինը հափշտակված։

— Հը՜մ, ճարտար նվագ էր,— ասավ բանաստեղծ Խալդունը։

— Ապրե՜ս, Հայանթի՜, ապրե՜ս,— կրկնեցին ամենքը միաբերան և ծաղիկներ քաղելով նետեցին նրա գիրկը։

Լուռ էր Նալը... անշա՜րժ՝ ինչպես գիշերվա լռանիստ ու մռայլ արձան։ Ունքերը խոժոռ, զուսպ սաստը աչքերում, հիվանդ իր խորհրդավոր արվեստով՝ գետին էր նայում, միշտ թևի տակ սեղմած տարօրինակ գործիքը։

Հերթը նրանն էր։

— Է՜հ, հիմի էլ թող Նալը նվագի,— կարգադրեց ծեր բանաստեղծը։

Ու մինչ Նալը կպատրաստվեր՝ մի շշուկ անցավ բոլորի մեջ, երբ նայեցին նրա ծիծաղելի, հողի գույն գործիքին։

— Շերեփ է,— փսփսաց մինը ու քիչ մնաց փոթկար։

— Թիակ է,— ասավ մյուսը,— վերցնես, մարդու մեջքին բակես։

— Սպասեցեք, գուցե մարդն ուզում է իր այդ աղեղով բուրդ գզել,— ծաղրեց երրորդը։

Ժպտաց մինչև անգամ Հայանթին, և շար էր այդ ժպիտը։

Միայն Լակըմեն չխոսեց։ Երբ նայեց Նալի աչքերին, զգաց, որ այդ պատանու մեջ թաքնված է մի մռայլ ու աղետավոր հոգի։ Եվ մի անորոշ ահ մտավ սիրտը։

Նայեց նրան և ծեր բանաստեղծը և գլուխը թեթևակի շարժեց։

Եվ նա, այդ խորհրդավոր Նալը, հանկարծ շուրջը նայեց. կեմքը այլակերպված էր, ոգևորված ու վճռական։ Հանկարծ գունատվեց, կերպարանափոխվեց, և բոլորը սաստված շունչները պահեցին։ Եվ նա գործիքը ծնկան, ինքը վրան կռացած ինչպես գետնահակ լացող ուռենի՝ հանկարծ ջլուտ, նիհար ձեռքով քաշեց աղեղը լարերի վրայով ու սկսեց։

Տարօրինակ ձայն հանեց այդ գործիքը։ Տխուր ու մաղձոտ մարդու ձայն։ Ինչպես սիրտը լցված մարդ, որ հազիվ է զսպում հեկեկոցը՝ այնպես այդ խեղդված ձայնը ծանր ու տխուր սկսեց դողալ և հետզհետե լցվելով ուժեղացավ, ծավալվեց ու գանգատավոր շեշտով մի հարցմունք արավ, հետո զսպելով իր փղձուկը՝ նորից սրտին ընկավ, մարեց։

Հետո — իբրև դրան պատասխան — մի ուրիշ ձայն, ավելի ուժեղ և հնչուն սկսեց որբ ձայնով ոգել, արծարծել մի տխուր պատմություն, այնքան տխուր, որ կարծես տառապած մարդկության վեպը լիներ։ Սկսեց այնպես հեծկլտալ, այնպես հանգուրհանգուր լաց լինել, որ ծառերի բները լցրեց թախիծով, տրտմեցրեց ծաղիկները, սառեցրեց արևի լույսը, հորիզոնում ծավալեց անապատների անհուն տրտմությունը և աշխարհը դարձրեց տխուր-տխուր վշտերի հովիտ։ Էրջ էր այդ եղանակը, ինչպես մահը և անկեղծ, ինչպես մարդուս մեջ թաքնված սիրտը։ Սրտից էր,— ահա թե ինչու այնպես սաստեց ու հափշտակեց ամենքի

սիրտը։ Ճշմարիտ էր այդ երգը, և ամենքը տրտմած կախեցին գլուխներն ու այդպես գետնահակ մտածել սկսեցին այն մեծ տառապանքի վրա, որը գիտես որ կա, ճշմարիտ է, ամենուրեք, ամենքի համար։

Ու այսպես գնաց եղանակը, տաքացավ։ Ու ոնց հուսահատ անապատի շուրթերից՝ ինչպես գերեզմանից՝ դուրս գար դալուկ լուսնյակը և անապատին նայեր իր մեռելի դեմքով, այնպես հանկարծ դուրս ելավ չորրորդ լարի տխուր ձայնն ու երգեց ծա՜նր, լիաձա՜յն ու տիրաբար։ Ու երբ դրան խառնվեց նաև երրորդ լարը, լսվեցին այնպիսի ոռնոցներ, կարծես այդ անկենդան անապատում լցվել էին գոս տատասկներ, որ պառավ ձեռքերի պես օդում կարկառած գութ էին աղերսում։ Բայց չկա՜ր գութ... Հանկարծ զայրացավ եղանակը, անցավ բարակ լարերի վրա ու սկսեց այնպես սողոսկել, հեծել, ոնց որ խորշակը փչելիս լիներ, տարուբերելով այն տատասկները, որ խելացնոր շարժումներով կարծես կոծապար էին բռնել։ Եվ երբեմն լսվում էին այնպիսի ճչոցներ ու լացեր, կարծես հուսահատ միայնությունը նստած ավազների վրա փետում էր իր գորշ մազերը։

Այնպես երգե՜ց, երգե՜ց ու հետո մեղմելով, հաշտվեց, հեռացավ, ու տխո՜ւր, թախիծով սրտին ընկնելով լռեց... կարծես նորից մտավ իր գերեզմանը։

Մի ծպտուն իսկ չլսվեց։ Ունկնդիրները քարացած էին։ Ամենքը ներշնչված այդ խորը նվագով՝ մռայլ հայացքները բարձրացրին դեպի Լակըմեն ու Հայանթին։

Ահա՜ թե որն է նվագը։

Ցած դրավ սրինգը պարտված Հայանթին և նախանձախնդիր նայվածքը ահով ուղղեց Լակըմեին։ Մռայլվել էր Լակըմեն։ Բայց այդ մռայլը նման էր մի թեթև թուխպի, որ գալիս սքողում է գեղեցիկ մայիսյան օրը։ Ճիշտ է, վախով էին լցված նրա որսորդ տեսած եղնիկի աչքերը, բայց նա բարձրացնելով այդ շողշողուն աչքերը դեպի Հայանթին՝ ասավ կարծես նեղացած.

— Գնանք տուն, Հայանթի։

Տղայքը հարցական հայացքով նայեցին Լակըմեին ու չհասկացան նրա երկյուղը։ Ու մինչ ամենքը շփոթված աչքերով նայում էին նրան, նա վեր կացավ և Հայանթու հետ հեռացավ։

Երբ քիչ հեռու էին՝ փսփսաց,

— Ես քե՛զ եմ սիրում։ Հայանթի, քե՛զ, նա այնպես տխո՛ւր է... Նա ինձ վախեցնում է իր գործիքով։ Նրա նվագը օձի պես մտավ սիրտս ու գալարվեց։ Գնանք, նվագի՛ սրինգդ և նորից ուրախացրո՛ւ ինձ։

Գնաց նա, և մոայլ շիրմաքարի պես մնաց Նալը՝ հայացքը գետի հեռացող անսիրտ ու գեղեցիկ Լակրմեն, զոզդոզ ձեռքը գործիքին սեղմած։

Մնացին ունկնդիրները և ծեր բանաստեղծ Խալդունը։

— Ապրե՞ս, Նա՛լ,— ասին նրանք, և այդ ասին մի ձայնով, որով մխիթարում են մեռելատերին։ Տխրեց Նալը և գլուխը կախեց։ Հանկարծ բարձրացրեց իր գործիքը և ուզում էր քարին խփի կոտրի, բայց միայն դառնորեն օդում թափ տալով ցած դրավ և գլուխն ափերի մեջ առած՝ լռեց։

Նայեց նրան ծեր բանաստեղծը, ժպտաց գորովալից աչքերով ու ծանր թափ տալով իր ալևոր գլուխն՝ ասավ.

— Ինչո՞ւ ես ուզում կոտրես այն գործիքը, որ քեզ հետ պիտի մեռնի։ Նա՛լ, դու այն մարդկանցից ես, որ մեծ տառապանքի համար են աշխարհք գալիս։ Եվ քո նվագը երգն էր այն մեծ արվեստագետի, որի ներշնչողը մահն է եղել, և որը լացել է ստեղծելիս։ Նա արդեն բաց է արել աշխարհիս բոլոր խնդությունների ու ցավերի դռները և նայել ներս։ Է՜հ, Նա՛լ, քոնն է իսկական արվեստը, ու էլ ո՛չ մի գործիք չկա հնարելու։ Ինչ է սրինգը սրա մոտ — ականջի զվարճություն և ուրիշ ոչինչ։

Գնա՛, կյանքի մեջ թշվառ և արվեստի մեջ երջանիկ Նալ, գնա՛, կրի՛ր ակնակուռ թագերի թագը, և թող աշխարհիս ստրուկներն ու արքաները գլուխ խոնարհեն քո արվեստի առջև։

Ու տանջվի՛ր... Այո՛, Լակրմեն սիրում է սրնգահարին, որը նրան տալիս է համեստներից համեստը, բայց մարդկանց համար թանկերից թանկը — այս կյանքը և նրա ուրախությունը։ Նա քեզ չի սիրում և ինչո՞ւ սիրի... Դու կմաշես այդ թիթեռի կյանքը քո անկշռելի տառապանքների մեջ՝ միշտ լսել տալով քո աշնան կոծերն ու մահվան ձայնը...

Եվ ի՞նչ, դու նրան չես էլ կարող սիրել, աղետավոր հոգի, որովհետև քո արվեստը սիրողը ուրիշ բան չպիտի սիրի և արժի՞, և մի՞թե կարող ես ուրիշ բան սիրել...

Այդ օրվանից Հայանթին ավելի երջանկորեն սուլեց իր սրինգը, իսկ Նալը գնաց տառապանքների մոայլ աշխարհները հեծելու և ստեղծելու։

Այդ օրվանից է, ասում են, որ սրինգը սուլում է սիրո մեջ երջանիկ պատանու նման, այնինչ ջութակը միշտ մի անպատմելի թախիծ ունի իր ձայների մեջ։

1938

ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ

Երիտասարդը ծեծեց նախասենյակի մթան մեջ հազիվ երևացող դուռը։ Ներսից մեկը շարժվեց, կարծես ծկավ դուռը բանալու, բայց դադարեց։ Երիտասարդը սպասեց մի փոքր ևս և կրկին ծեծեց դուռը։ Վերջապես մեկը մոտեցավ դռան, շոշափեց նիգը և զգուշորեն, կանացի ձայնով հարցրեց.

— Ո՞վ է։

— Ես եմ,— ասաց երիտասարդը բարձրաձայն և պարզ։

Դուռը բացվեց և կիսամթան մեջ երևաց մի պառավ կին։

— Հա, ընկեր Խոսրովյանն է։ Համեցեք։

Երիտասարդը ներս գնաց մի կոկիկ, մաքուր սենյակիկ, որի պատերը զարդարված էին լուսանկարներով։ Դրանց միջին աչքի էր ընկնում մի մեծադիր յուղաներկ պատկեր հին սերունդի մի մարդու, հաստ բեղերով, նուրբ ածիլած կզակով և բարձր ճակատով։

Խունացած հին կամոդի վրա բազմաթիվ մանրիկ իրեր կային շարած, որոնց տակին փռած էր նուրբ ժանեկավոր մի փոռոց։ Նրանք էլ կոկիկ, մաքուր։

Վերջապես պատից կախած էր հնօրյա ժամացույց, որը սակայն չէր բանում այլևս։ Երևի հնար չկար — շատ էր հին։

— Նստեցեք, խնդրեմ,— ասաց պառավը թարմ ու աղջկա ձայնով և մոմեղեն դեմքի կիսաիրոնիկ ժպտով աթոռ հրամցրեց երիտասարդին։

— Ձեզ պիտի հայտնեմ,— ասաց պառավը հանգիստ ու հոգնած,— որ այն օրը ձեր գնալուց հետո ես մտածեցի, որ...

— Դե ի՞նչ պիտի մտածեք երկար, տիկին...— ասաց ու իսկույն մեղանչողի պես հազաց երիտասարդը, պառավը օրիորդ էր,— հավիտյան հո չեք պահելու իրերը։ Պետական թանգարանը

ավելի ապահով տեղ է և վերջապես դինը կարծում եմ լավ կբարեցի։

— Համաձայն եմ,— հեզ ու տխուր ասաց պառավը։

— Վերջացնենք, որ այդպես է։

Պառավը պահարանից հանեց մի քանի իրեր, նամակներ, այլ գրություններ, լուսանկարներ և բերեց դրեց սեղանին։

Երիտասարդի աչքերը վազվզեցին բոլոր թանգարաններում աշխատողների հատուկ կրքով։ Բայց և իսկույն խորամանկորեն զսպեց իրեն. միայն աննշմարելի ժպտաց բերանի անկյուններով։

Շատ կարևոր էքսպոնատներ էին իրենց թանգարանի համար, ըստ երևույթին, որոնց մասին լավ տեղյակ էր ինքը նախօրոք։

— Սրանք նամակներ են,— ցույց տվեց պառավը մի հաստ կապոց։— Հանգուցյալ հայրս սրանք հավաքել՝ սիրով կարդում էր։ Ասում էր մեծ գրողի նամակները գրքի պես են կարդացվում։ Եվ իսկապես գիրք,— հառաչեց հանգիստ պառավը,— ես էլ եմ կարդում մեկ-մեկ, երբ գործ չի լինում տանը։ Դե մենակ եմ, ինչ գործ էլ պիտի լինի։

— Կարելի՞ է մեկ նայել,— հարցրեց երիտասարդը այնպիսի մեղմ ու հոգատար ձայնով, կարծես երեխա էր ուզում առնել պառավի գրկից, որին պետք էր զգույշ վերցնել։

— Այս րոպեիս,— ասաց պառավը՝ նամակների կապոցը պինդ սեղմած կրծքին։

Նա վայր դրեց իր առջև նամակների կապոցը, ծածկեց մի ձեռով, իսկ մյուսով առաջ քաշեց լուսանկարներ։

— Սրանք էլ լուսանկարներ են։ Ինքն աշխարհահռչակ արտիստ՝ իր պես աշխարհահռչակ արտիստի հետ լուսանկարված— սա ամեն տեղ չես գտնի։ Հիմա ո՞ւր են այդպիսի արտիստներ,— ժպտում է պառավը նուրբ արիստոկրատիկ աչքերով։

Երիտասարդը կամեցավ ձեռքից վերցնել նայելու, բայց վախեցավ խրտնեցնել պառավին. ուստի և կրկին զսպեց իրեն։ Բայց և անհամբեր էր սաստիկ, այրվում էր ուրախությունից և հետաքրքրությունից։

Իրերն անշուշտ հազվագյուտ էին, իսկ պառավը կապրիզներ ուներ, կասկածոտ էր և ինքնասածի — կարող էր միտքը փոխել, սատանան գիտե ինչ մի հովից կամ ճանճի թռիչքից։

Հանկարծ պառավը կարծես մի բան հիշեց թե՞ վճռեց.

— Սպասեցեք, գիտե՞ք ինչ, ընկեր Խոսրովյան, քանի որ այս իրերը տալիս եմ ձեր թանգարանին՝ եկեք... ի՞նչ կասեք դավթարի մասին։

— Հա՞... դըդավթա՞ր,— կակազեց երիտասարդը։

— Ձեռագիրը, մագաղաթը, միջնադարյան երգարան է։

Երիտասարդը շփոթվեց.

— Դուք հին ձեռագի՞ր ունեք։

— Հապա՞... մեջը հին ոտանավորներ կան. «Այ լուսնկա Շուշան ծաղիկ»։ Հը՞, ի՞նչ կասեք, ծախե՞մ, թե...

Պառավը կանգնեց ու նայեց երիտասարդին տարակուսանքների մեջ։

Երիտասարդը հարբած վիճակի մեջ էր։ Ոտանավորներ, շուշան ծաղիկ — անշուշտ միջնադարյան երգիչներից անհայտ մնացած բեկորներ կամ մի նոր երգիչ...

Պառավը սակայն վճռեց և պահարանից հանեց քողի մեջ փաթաթած մի մագաղաթ մատյան, մինիատյուր նկարներով զարդարուն։

Դնելով իր առջև, ձեռքը վրան պահած՝ պառավը սկսեց պատմել այն մասին, թե քանի անգամ ուզեցել է ծախել, բայց քանի որ դա իր հոր ամենասիրելի գիրքն է, ինքը վճռած էր եղել երբեք հրապարակ չհանել։

— Բայց, էհ, կյանքս էլ գնում է. մեռնեմ՝ պիտի ընկնի ով գիտե ում ձեռքը։ Լավ է թող պետական թանգարանին մնա։

— Անշուշտ, անշուշտ,— սրտատրոփ ձայնով ասաց երիտասարդը և լարվեց վերին աստիճան։

Պառավը խոսում էր սակայն, պատմում ինչ-որ բաներ, որ երիտասարդը չէր կարող լսել և հուզմունքից, և շլացումից։

Եվ իրոք վտանգավոր մոմենտ էր, պետք էր շատ զգույշ համբերել և մի կերպ այդ պառավ ձեռքի տակից մեղմով դուրս քաշել ձեռագիրը։ Ազատել։

Երիտասարդն սպասեց, որ պառավը վերջացնի։

Զանձրույթ էր գալիս նրանից։ Նա ոչինչ չէր կարողանում ասել հետաքրքրական։ Դա արդեն իր կյանքն էր — թերևս շատ կարևոր միայն իր համար։ Թերևս կարելի էր և ոնկնդրել նրան։ Բայց ի՞նչ կարելի էր անել, որ գոհացում տրվեր նրան։ Վերադարձնե՞լ անցյալը — անկարելի էր։ Համաձայնել — օգուտ չուներ։

Պատմություն էր, որ պիտի պատմվեր վերջանար — ուրիշ ոչինչ։

Երիտասարդը սակայն խոնարհ ու հլու լսում էր, ավելի շուտ նայում էր պառավի ձեռին, որ հենց վերջանար պատմությունը՝ խլեր ձեռից հազվագյուտ գիրքը։

Մի անգամ պառավն ընդհատեց։ Երիտասարդը շարժում արավ և ձեռը երկարացրեց։ Սակայն պառավը ձեռը սեղմեց մատյանի վրա և շարունակեց պատմելը։ Իսկական տանջանք էր — այնքան անհետաքրքրական զրույց և այսքան կարևոր, կենդանի, հետաքրքրական մի գյուտ...

Բայց — այդպես է շատ անգամ կյանքի իրոնիան — ամենակարևոր բաները գերության մեջ են լինում երբեմն այսպիսի մի սովորական, աննշան անկյուններում։

— Վերցրեք,— ասաց վերջապես պառավը և ձեռագիրը քշեց երիտասարդի կողմը։

Սա խլեց ձեռագիրը, բայց և իսկույն զսպելով իրեն՝ հանգիստ ու հասարակ նայեց ձեռագրին, բացեց և սկսեց դիտել ու կարդալ։

Թանկագին գյուտ... Դա մի հին, շատ կարևոր գիրք էր, իրոք որ միջնադարյան երգիչներից մեկի դեռ անհայտ երգերով։ Կարդաց։ Սքանչելի տաղեր, վսեմ երգեր...

— Ի՞նչ պիտի տամ,— հարցրեց երիտասարդը սրտատրոփ։

— Տվեք ինչ ուզում եք, վերջացած է ամեն բան,— հառաչեց պառավը և լռեց։

— Հինգ հարյուր ռուբլի։

Պառավը ձայն չհանեց։ Նա խորհում էր իր աննշան կյանքի մասին, անընկեր, անսեր, հավիտյան անամուսին կյանքի, որ ահա վերջանում էր։ Վերջանում էր, որովհետև եթե կար նրա մեջ կամ նրա տանը որևէ բան, որ կարող էր դրսի աշխարհից մարդ բերել իր մոտ, զգալ տալ իր գոյությունը,— դա իր թղթերն էին, նամակները, լուսանկարները, գրքերը։ Ահա նրանք մեկ-մեկ գնում են իր տանից։ Մնալու է ինքը և իր վերջին օրերի սենյակը՝ նույնքան դատարկ, որպես և ինքը։

Երիտասարդը հանեց պորտմոնեն, իսկույն հաշվեց գինը և դրեց պառավի առջև ու մինչև ահ կհաշվեր դրամը՝ նա արագ գրեց ստացականը։ Սա էլ մոտեցրեց պառավին և առաջարկելով իր

ինքնահոսը՝ շատ մեղմաձայն, մինչև երաժշտության հասնող քնքշությամբ ասաց.

— Ստորագրեցեք։

Երիտասարդն արագ փաթաթեց ձեռագիրը։

— Իսկ նամակներն ու լուսանկարները՞,— հարցրեց պառավը։

— Դրանք էլ անպատճառ կվերցնեմ։

Եվ կտրեց մի գին, որ պառավը մի փոքր սակարկելուց հետո համաձայնեց։

Երիտասարդը գնած թղթերն ու ձեռագիրը դրեց իր պորտֆելը։ Ու վեր կացավ։

Վերջացել էր ամեն բան։

Այդ սենյակն արդեն ոչ ոք չէր մտնի։ Պառավն անցավ հուշերի շարքը։ Նյութերը գնում էին դեպի նոր կյանք։— Թանգարան։

Երբ դուրս եկավ և իջնում էր սանդուղքներից՝ թևի տակ կրծքին սեղմեց գնածները և հառաչեց բեռից ազատվածի պես — տանջված և ուրախ։

Ն Ր Ա Ն Ց Ժ Պ Ի Տ Ը

ԸՆԿԵՐՆԵՐ

Նրանք մտերիմ ընկերներ էին՝ Ղոնդին ու Գրդրլը, երկու հարևան ընտանիքների «կաթնախպեր» զավակներ։ Դա նշանակում է օրորոցից ընկերներ։

Աչքերը որ բաց արին ու առաջին զգացումն ունեցան թե աշխարհ են եկել՝ առաջին անգամ իրար էր որ տեսան։ Դեռ աշխարհը ազոտ մի բան էր այն ժամանակ,— վերևը կապույտ, ներքևը կանաչ։

Գյուղը ինքը մի մեծ աշխարհ էր, ուր խաղում, վազվզում, երգում, ծեծկվում էին Ղոնդին ու Գրդրլը մյուս երեխաների հետ։ Ջարաճճի էին երկուսն էլ։ Ու միշտ միասին, ինչպես մարդը շվաքի հետ։ Հենց փողոցի ծայրից մինը երևար՝ հարց կտային նայողները.

— Էս՝ Ղոնդին. բա Գրդրլը՞։

— Այ, Գրդրլը։

Մյուսը ժամանակ չէր կորցնում — իսկույն երևում էր նրա հետևից։

Քանի՞ անգամ են նրանք մեկ երկու բացակայության ժամանակ իրար պաշտպանելու համար ծեծել, ծեծվել։

— Ղոնդի՞, քիթդ ինչի՞ է ջարդվել։

— Ձիուց վեր ընկա։

Նույն բանը պատասխանում էր Գրդրլը, երբ ջարդվողը ինքն էր լինում Ղոնդուն պաշտպանելու համար։ Բայց որ իրար էին հանդիպում՝ այս մասին ոչ մի խոսք։

Մի անգամ Ղոնդենց տանը հարիսա էին ուտում։ Գրդրլը գնացել էր սար, հնար չկար նրան կանչելու։ Ղոնդին շատ ներս ու դուրս արավ, փնթփնթաց, անհանգիստ եղավ։ Մայրը նկատեց

այդ, հասկացավ պատճառը, բայց ձայն չհանեց։ Ղոնդին չհամբերեց ու մտահոգ հարցրեց.

— Բա Գրդելը ի՞նչ պետք է ուտի։

— Ոտներս,— անփույթ պատասխանեց Ղոնդուց մի քիչ մեծ եղբայրը։

Հարիսով ամանը թռավ դեպի հանդգնողի ճակատը։ Կերակուրը խառնվեց վերքից հոսող արյան հետ, վիրավորն ընկավ ուշաթափ։ Ղոնդին, որ բարկությունից դողում էր՝ նկատեց անդամ մյուս՝ ավելի մեծ եղբոր ձեռքի թափահարումը իր գլխի վրա, բայց չպաշտպանվեց, ընդունեց հարվածը, և միաժամանակ անսասան կանգնեց ու աչքերը չռած նայում էր թե ինչպես են ուշքի բերում իր ձեռքով վիրավորված եղբորը։ Մի քանի հարված էլ ստացավ Ղոնդին, բայց ոչ տեղից թնդաց, ոչ էլ բողոքեց։ Նա միայն գոհ էր, որ Գրդելին վիրավորիչ խոսք ասողը պատժված էր իր ձեռքով։

Բայց երբ Գրդելը ձիու մերկ մեջքին նստած սարից եկավ և Ղոնդենց դռան առջևով անցավ գնաց իրենց տունը՝ Ղոնդին հազիվ լսելի հարցրեց.

— Հը՞, եկա՞ր։

— Հա,— թթու պատասխանեց Գրդելը և անգամ չնայեց Ղոնդուն։

Եվ նույն երեկո Գրդելը իր փոքրիկ եղբորն ուղարկեց Ղոնդուն կանչելու իրենց տուն, որ միասին ընթրեն և միասին էլ այնտեղ քնեն։ Մի օր էր սարում ապրել առանց Ղոնդու և սաստիկ կարոտել էր նրան։

Քնեցին կտրանը մի վերմակի տակ և երկար ժամանակ Գրդելը փսփսոցով պատմում էր, թե ինչպես էր սարում սիրտը ճաքելիս եղել։

— Ինչի՞— հարցրեց Ղոնդին մեքենաբար։

— Չեմ իմանում։

Բայց Գրդելը շատ լավ էր իմանում։ Ղոնդին այնտեղ չէր։

Երբ Ղոնդուն դպրոց տվին, նա իսկույն տուն փախավ, երբ տեսավ, որ Գրդելին էլ չեն բերել այնտեղ. մինչ մի օր առաջ նրան հայտնել էին, որ Գրդելն էլ պիտի դպրոց գնա։

Համառեց Ղոնդին, չգնաց դպրոց, մինչև Գրդելին էլ դպրոց տարան։ Բարեբախտաբար երկուսին էլ միևնույն դասարան ընդունեցին — այլապես էլ չէր լինի բնականաբար,— և թեև մի նրստարանին չնստացրին և նրանք էլ ինչ որ չկարողացան այդ պահանջը դնել, բայց շուտ-շուտ Ղոնդին ծռվում հետ էր նայում Գրդելին.

— Գրդե՞լ։

— Հա, էստեղ եմ։

Շարունակ, դասի ժամանակ, այնուհետև նրանք իրար էին նայում։ Այդպես ոչ միայն հաճելի էր, այլև դասն այսպես էր միայն հասկանալի դառնում։

Ավարտեցին ծխական դպրոցը, և միասին մտան կյանք։ Կյանքն էլ ինչ էր՝ գյուղական աշխատանք — առաջ գառնարած, հետո հոտաղ և միշտ էլ մեջընդմեջ ամեն բան։ Գյուղի պատանին այս կողմից ամենագետ է։ Հետո ընկան պղնձի հանքերը, բանվոր դառան։ Հետո էլ հազիվ էին հասել սիրո առաջին պտուղներին, որ մի մեծ փոթորիկ վրա հասավ և ամբողջ աշխարհը ոտքի հանեց։ Համաշխարհային պատերազմը պոկեց գյուղից ու քշեց տարավ միլիոնների հետ գյուղի երիտասարդներին։ Հերթը նոր էր հասնում նաև Ղոնդուն և Գրդելին, որ պատերազմը Ռուսաստանում փոխվեց քաղաքացիական կռիվների, Հայաստանը անցավ դաշնակցականների ձեռքը, սկսվեց եղբայրական կոտորածները և լեռնամասը անջատվեց մնացած Հայաստանից իր հոտով, կռիվներով ու կյանքով։

Ղոնդին ու Գրդելը ծանոթացան ընդհատակյա բոլշևիկների հետ և ընդունվեցին կոմերիտականներ։ Եվ երբ նոյեմբերին Հայաստանը խորհրդայնացվեց, լեռնամաս ուղարկվեց մի կարմիր զորամաս։

Սրանց մոտենալը իմանալով՝ երկուսն էլ փախան գյուղից և մտան պարտիզանական մի խմբի մեջ, որ ուղեկցում էր զորամասին։

***

Լեռնային գյուղը ձորերում դառնում է մրգաստան, մինչ վերևը գարու արտերն են ծփում։ Գիշեր է։ Գյուղական տան անշուք պատշգամը բացվում է այգու վրա, որ իջնում է դեպի ձորը։ Մրոտ ճրագը հազիվ է լուսավորում սեղանը, որի հետև նստած է

կարմիր զորամասի հրամանատար Դավթյանը, հնամաշ զգեստներով և խիտ սև մորուքով։ Նա հոգնած, բայց եռանդոտ դեմք ունի։ Նրա դիմաց նստել են կրտսեր հրամանատար Ռուբենը, քաղղեկ Ավետը։

Ավետը երկար բացատրելուց հետո եզրակացրեց.

— Դուք գիտեք, բայց ես հարմար եմ համարում պարտիզաններից այդ երկու հոգուն։

— Ես ճանաչում եմ դրանց, շատ կորիճ տղերք են,— ասաց Ռուբենը։ Դավթյանը մորուքն էր շփում և աչքերը պատուհանի մթության հառած՝ մտածում էր։

— Կորիճ լինելը դեռ քիչ է։ Դաշնակցականների շտաբում նստած է Ասատուրովը՝ դենիկինյան գնդապետ, նա պահակներ կլինի դրած կամուրջի վրա՝ նշանակություն չունի թե կամուրջը իր թիկունքումն է։ Մեծ խումբ չենք կարող ուղարկել՝ կնկատվի։ Մեզ պետք են երկու մարդ, կորիճ, բայց տեղանքին շատ լավ ծանոթ, քանի որ պիտի անցնեն հակառակորդի թիկունքը և կամուրջին մոտենան, ատատանան գիտե ինչ կողմնակի տեղերով։ Ի՞նչ տղաներ են, պայթուցիկ նյութերին ծանո՞թ են։ Սա է ամենից գլխավորը։

— Ծանոթ են,— պատասխանեց Ռուբենը,— պղնձահանքերում աշխատել են։

— Ենթադրո՞ւմ ես, թե հաստատ գիտես։

— Հաստատ գիտեմ։

— Գրագետ ե՞ն։

— Մխականն են ավարտել, ի՞նչ ես ասում,— բացատրեց Ավետը մեծ բավականությամբ։

— Կանչիր ներս,— ասաց Դավթյանը։

Ռուբենը դուրս գնաց։

— Եթե կամուրջը պայթեցնենք, հոգեբանությունը միանգամայն կփոխվի կամուրջի թե այս և թե այն կողմում։ Ես իսկույն պրոպագանդիստներ կուղարկեմ։ Բայց կարծո՞ւմ ես, որ հակառակորդի հրետանին մինչև պայթեցնելը չի անցնի կամուրջը։

— Կարող է և անցնել,— ասաց Դավթյանը,— այդ դեպքում գործը տանուլ կտան գոնե երկար ժամանակ։ Կամուրջը պիտի վճռի ամեն բան։ Բայց պիտի կարողանան...

Տնայնագործություն չանենք. այ կգան տղերքը՝ կտեսնենք,— ժպտաց Ավետը՝ հիշելով ինչ-որ կոմիկ դեպքեր եկողների մասին։

Ներս մտավ Ռուբենը՝ հետևից բերելով Ղոնդուն և Գրդելին։

Դավթյանը խոժոռ, բայց բարի հայացքով նայեց նրանց և հարցրեց.

— Ո՞րտեղացի եք։

— Վերնաշենցի,— պատասխանեց Գրդելը։

— Ի՞նչ ընտանիքից եք։

— Երկուսս էլ մի տեսակ ընտանիքից ենք,— ասաց Ղոնդին։

— Չքավո՞ր ընտանիքից։

— Ուրիշ ի՞նչ կարող էինք լինել։

— Ուրիշ ի՞նչ,— կուլակ, միջակ...

— Կոմերիտականներ ենք,— ժպտալով ասաց Ղոնդին։

— Այդպես ասացեք,— հանգստացավ Դավթյանը։— Լավ։ Ձեզ պիտի ուղարկենք մի շատ պատասխանատու գործի։ Դուք պայթուցիկ նյութեր բանեցրե՞լ եք։

Ղոնդին պատասխանեց զարմացածի պես.

— Բանեցրել ենք, ի՞նչպես չենք բանեցրել։

— Շատ պարզ,— ինչո՞ւ պետք է բանեցնեիք։ Որտե՞ղ եք բանեցրել։

— Պղնձի հանքերում. ամենքն էլ գիտեն, ընկեր հրամանատար,— նույն տոնով պատասխանեց Ղոնդին։

— Շատ լավ,— ասաց Դավթյանը,— հիմա ձեզ կտամ մի առաջադրանք։ Պետք է նամակը հացի խմորում տանեք հասցնեք Վերնաշեն՝ ընկեր Վարդանին։ Շատ կարևոր նամակ է։ Մյուս առաջադրանքն է պայթեցնել գնդապետ Ասատուրովի թիկունքի Շուշանաձորի կամուրջը։ Երկուսով եք գնալու, կամուրջը պետք է պայթեցնեք, չպիտի բռնվեք, նամակը պետք է տեղ հասցնեք. դարձյալ չպիտի բռնվեք և պատասխանը բերեք ինձ։ Ամենաշատ երեք օր է ժամկետը։ Երեք օրը որ անցնի՝ էլ օգուտ չունի համարյա։ Կարո՞ղ եք։

— Կարող ենք,— այս անգամ խոսեց Գրդելը, որ մինչ այդ լուռ էր։

Հրամանատարը փորձել ուզեց.

— Եթե չեք կարող, հանձն մի առնեք։

— Կենդանի չենք վերադառնա, ընկեր հրամանատար,— ասաց Գրդելը։

Դավթյանը կնճռոտեց ճակատը։

— Գործ է պետք։ Ինչ որ կգա ձեռքներիցդ՝ պիտի անեք, ոչ մի վտանգի առաջ չպիտի կանգնեք և առաջադրանքը պիտի կատարեք։ Անպատճա՛ռ։ Անպայմա՛ն։ Կրկին եմ ասում՝ կարո՞ղ եք։

— Կարող ենք,— ասաց Գրդելը հանգիստ ձայնով։

— Կարող ենք,— կրկնեց Ղոնդին, պակաս չմնալու համար։

Դավթյանը զննող հայացքով նայեց ընկերներին։ Նրան դուր էր գալիս նրանց միամիտ ու պարզ վստահությունը, բայց կըշռադատում էր թե ո՞րքան ընդունակ են նաև գործը կատարելու։

— Շատ լավ,— ասաց նա,— ձեզ կտանեն հիմա սակրավորների մոտ, նրանք մանրամասն կբացատրեն։

— Հետո նամակը։ Ծխախոտի թղթի վրա է, զգույշ դրեք հացի խմորի մեջ։— Դե, հիմա կգնաք։ Ինձ նայեցեք։ Զգույշ, վերին աստիճանի, չբռնվե՛ք։

— Ինչո՞ւ պիտի բռնվենք, ընկեր հրամանատար,— մի քիչ վիրավորված հարցրեց Գրդելը։

Դավթյանը քննող հայացքը այս անգամ գցեց Գրդելի վրա.

— Ի՞նչպես թե ինչու։ Պայթեցնողները չե՞ն բռնվում։ Եթե բռնվես՝ ի՞նչ կանես։

— Երկուսս էլ կսպանվենք՝ գաղտնիք չենք դուրս տա։

— Երկուսս էլ...— սկսեց Ղոնդին։

Բայց հրամանատարը ընդհատեց նրանց.

— Դուք իրար հաշվի խոսք մի՛ տաք։ Երկուսդ էլ հո իրար կպած չեք ծնվել։— Հետո դարձավ Գրդելին.— ա՛յ կոնկրետ, քեզ եմ հարցնում։ Դու ի՞նչ կանես։

— Մենք իրար կխփենք, ընկեր հրամանատար,— ասաց Գրդելը։

Դավթյանը հազիվ նկատելի ժպտաց։

— Լավ, ինչպես երևում է՝ մեկդ առանց մյուսի չեք պատկերացնում։ Թող այդպես լինի։

— Մանկուց ընկերներ են,— ծիծաղեց Ռուբենը քթի տակ։

Դավթյանը կանգնեց.

— Շատ ուրախ կլինեմ ձեզ կենդանի տեսնել, կտրիճ տղերք

եք, բայց կամուրջը պետք է պայթեցվի և նամակը տեղ հասցվի։ Սա է ամենագլխավորը։

Գրդելը հուզվեց.

— Եթե այդպես է՝ իմացած եղեք, ընկեր հրամանատար, որ տասը կրակ ու ջուր կանցնենք և գործը մաքուր կկատարենք։

— Եթե գործը փչացնեք, ամբողջ գործը փչացած կլինի։ Իմացա՛ծ եղեք, որ հազարավոր կյանքեր ձեզ կսպասեն,— ասաց Դավթյանը։

Հետո մոտենալով Գրդելին՝ ձեռքը դրեց նրա ուսին.— Ես մեծ հույս ունեմ... դու կառաջնորդես։

Ապա դարձավ Ղոնդուն.

— Նրան մի բան եղավ՝ դու կանես... հասկանո՞ւմ եք։ Դուք երկուսդ էլ ժողովրդի զավակներ եք։ Վերջապես դուք կոմերիտականներ եք։

Գրդելը աչքերը կախեց և ամաչելով ասաց.

— Ընկեր հրամանատար, այս գլխից ի՞նչ խոսենք։ Այ, երբ գործը գլուխ կբերենք՝ հետո հեշտ է...

— Ապրե՛ս, բրավո՛,— ուրախացավ հրամանատարը,— իսկական տղամարդու խոսք։ Դե հիմա գնացեք, բարի ճանապա՛րհ։

Ասաց ու տվեց նամակը։ Գրդելը վերցրեց այն ու Ղոնդուն դրդեց, որ դուրս գա։

Նրանք հեռացան։

— Սակրավոր Լևոնի մոտ,— ասաց Դավթյանը Ռուբենին։

— Լսում եմ, ընկեր հրամանատար։

— Կարծես պիտի կարողանան...—խոսեց Դավթյանը մտածմունքի մեջ ընկնելով։

— Շատ կտրիճ տղերք են,— ասաց Ռուբենը — փորձված են։ Ընկերները ճանաչում են։

— Պետք է ռիսկել,— ասաց Ավետը և ծխախոտը վառեց։

Դավթյանը մտահոգ և մռայլ կանգնեց սեղանի մոտ և խորասուզվեց մտքերի մեջ։

***

Թանձր խավարի մեջ երկու ընկերները դուրս եկան զորամասից և ճամփա ընկան դեպի թշնամու դիրքերը։ Քանի որ հակա-

ռակոչդները դեռ չէին շոշափել իրար, անկարելի էր գուշակել, թե որքան էր թշնամին հեռու կամ մոտ։ Ղոնդին ու Գրդելը գնում էին ճամփից դուրս, բլուրների վրայով։ Նրանք ընկղմել էին այնպիսի մի խավարի մեջ, ուր անկարելի էր գուշակել անգամ թե որքան հեռու է մինչև այն լեռը, որ այդ խավարում սևազանգված ուրվում, բարձրանում էր, դեպի աստեղալույց երկինք։

Նրանք հետզհետե բարձրանում էին մի դժվարանց լեռան լանջով։ Նրանք աշխատում էին ճամփան բարձր բռնել, որ թշնամուն չհանդիպեն։ Կամուրջը, որ գնում էին պայթեցնելու՝ կապված էր մի շատ խոր ձորի գետի վրա և միացնում էր երկու լեռները։ Այդ լեռների անջրպետը միանգամայն անհնարին էր դարձնում հրետանի անցկացնել դեպի ռազմաճակատ։ Այնպես որ՝ պայթեցնելով կամուրջը՝ թշնամու գլխավոր զբաղանցությունը՝ հրետանին՝ զրկվում էր կռվին մասնակցելուց։

Երկար ժամանակ քարակույտից քարակույտ, ժայռից ժայռ մագլցելուց հետո Գրդելը բավական համարեց վերելքը։ Նրա հաշվով այժմ իրենք հասել են այն կետին, որտեղից անվտանգ կարելի էր իջնել դեպի կամուրջը։ Դա Շուշանաձորի «ակունքներն» էին, այսինքն ձորի սկիզբը, ուր նա լեռնային առվակի հետ միասին սկսվում է իրրև փոքրիկ ճեղքվածք, որը ներքև գնալով հետզհետե խորանում էր և իր մեջ առնելով ուրիշ մանր ձորերի ջրերը՝ խորանում էր և լայնանում։ Անտառախիտ լանջերը ներքևից սևին էին տալիս։ Այնտեղից դեպի վեր բարձրանում էին հազիվ նշմարելի արահետները, որ բարձրանալով լեռների բարձր լանջերն ու կատարները՝ կորչում էին ձյունների մեջ։ Դա սարվորների արահետներն էին։ Զգուշության համար նրանք դուրս եկան այդ արահետներից և սկսեցին խարխափելով իջնել սարալանջից։ Իջան մտան անտառը և այնտեղ մի փոքր հանգստացան։

Նրանք ամբողջ երեկոն ու գիշերի մեծ մասը քայլել էին, ավելի շուտ մագլցել։ Շատ հոգնած էին։ Բայց գիշերն անցնում էր։ Եթե այդ գիշեր կամուրջը չպայթեցնեին՝ լուսանալիս այլևս անհնարին էր. պետք է այն ժամանակ ցերեկը թաքնվեին անտառում և սպասեին մթնելուն։

Գրդելը բարկացած էր Ղոնդու և իր վրա։ Ղոնդու առաջարկած ճամփան անվտանգ էր, բայց հեռու էր, խլեց գիշերվա ամբողջ կեսը, մինչ Գրդելի առաջարկած ճամփան կարուկ էր, թեև

ավելի վտանգավոր։ Իսկ հիմա էլ Ղոնդին ընկել էր մեջքի վրա և խոմփացնում էր։

— Այ չո՛ռ քեզ,— մոմոաց Գրդելը և անհանգիստ նայեց աստղերին։ «Շամփուր կշեռքը» թեքվել էր բավականին։ Իր հաշվով դեռ մի ժամ ճամփա ունեին։ Պետք էր շտապել։ Շտապել պետք էր առավելապես նրա համար, որ թշնամու հրետանին կարող էր ամեն րոպե անցնել կամուրջը։ Եվ ի՞նչ օգուտ պայթեցնելուց...

— Ա՛յ տղա, վե՛ր,— ձայն տվեց Գրդելը Ղոնդուն, որը անուշ քնի մեջ կազդուրում էր իր քրտնամխած, ջարդված մարմինը։

Ղոնդին չլսեց։

Գրդելը ցնցեց նրան.

— Վե՛ր, է, ի՞նչ մեռար էլի։

— Հը՛,— դժգոհեց Ղոնդին կես արթուն վիճակում։

— Վե՛ր կաց, ուշանում ենք։

Գրդելը ծծում էր անտառի խոնավ օդը։ Թփերի սառը տերևները համբուրում էին նրա այտը, իսկ հոտավետ խոտը քնով լիքը՝ դեպի իրեն էր քաշում նրա ծանրացած գլուխը։ «Զգույշ» — մտածեց նա։ Բավական է գլուխը գետին դնելը — իսկույն կսահեր քնի աշխարհը և ամեն ինչ կորած էր։ Գրդելը վեր կացավ և մոտենալով Ղոնդուն՝ ոտքով քացի տվեց.

— Շա՞տ ես սատկելու։ Վեր կաց։

Ղոնդին թարժած եղած վեր թռավ և ձեռքը տարավ դեպի ատրճանակը։ Նա մի վայրկյանում արթուն էր և զգաստ։ Իսկույն հասկացավ, որ վտանգ չկար, այլ Գրդելն էր արթնացնողը — միամտվեց և վերցրեց բեռը։ Ու առաջ ընկան։ Գրդելը հետևեց նրան։ Խոտավետ արահետը ծծում էր նրանց ոտնաձայնը։ Հազիվ փրսփրսում էին թափված տերևները, դիպչելով նրանց ոտներին։ Անտառը քնած էր հեքիաթային քնով։ Այնպիսի մի խաղաղություն էր բնության մեջ, որ անհասկանալի էր դառնում կռիվը, արյունը, աղմուկը։ Այդ անդորրը կարող էր ցնցվել մի որևէ դարանամուտ հրացանի պայթյունով և ամեն րոպե։ Բայց զարմանալի էր — չէր կարելի հավատալ նաև դրան։

Երբեմն Ղոնդին կանգ էր առնում և ականջ դնում։ Ձորը, որ հետզհետե լայնորեն էր հորանջում և բաց երախը լցնում գիշերա-

յին խավարով, սկսեց փսփսալ ինչ-որ անհասկանալի և դավադիր մի շրշյունով։

— Ա՛յ տղա, ո՞րտեղ ենք։

— Կամուրջի քերծի գլխին,— հաստատ ձայնով պատասխանեց Ղոնդին։

Գրդելը գլուխը շարժեց։

— Էս ի՞նչ խշխշոց է։

— Ջրաղացի ձայնն է։

— Սիրտդ բաղարջ է ուզում, ջրաղացի ձայն ես լսում,— հեգնեց Գրդելը։

— Բա ի՞նչ ձայն է։

— Գետն է։

Անտառից դուրս եկան և մտան մի բացատ։ Որքա՞ն եղավ նրանց զարմանքը՝ ավելի շատ Ղոնդունը, երբ իրենց առջև մի կրակ ծկլտաց։ Ուրեմն եթե մի փոքր ձախ բռնեին՝ պիտի ընկնեին այդ կրակ վառողների ճանկը։ Եվ ովքեր են նրանք։

— Ղոնդի։

— Հը՛։

— Ջահր ու զխրթի՛։ Ո՞ւր բերիր մեզ։

— Ի՞նչ է, է՞։

— Ջոռը պինչդ է։ Քեզ չէի՞ ասում ձորից գնանք։ Տեսա՞ր ուր ընկանք։ Թշնամու բերանը։

— Ոչ մի թշնամի չկա։ Մեր սարեցիների հոտաղներն են։

— Հա, ախորժակ պահի՝ քեզ խորոված են տալու։— Ու հանդիմանորեն նայեց Ղոնդուն։

— Գիտե՞ս որտեղ ենք։

— Ո՞րտեղ։

— Սաքանենց արտի գլխին։

— Ջրաղացի մոտ ենք։

Գրդելը զայրացավ Ղոնդու համառության վրա։ Եվ իսկույն ձեռներեցությունը վերցրեց։

— Դե հիմա սրանից հետո ես գիտեմ ճանապարհը։ Ե՛կ։

Ու շուռ տվեց դեպի աջ՝ ձորափի ուղղությամբ։

Ղոնդին հետևեց նրան՝ ինքն զգալով, որ իր ձեռներեցությունը վիժեց։

Նրանք դանդաղ ու խարխափելով սկսեցին քայլել ձորափով.

Գրդելը արահետ էր որոնում իջնելու ձորը։ Դրությունը շատ բարդ էր։ Պետք էր իջնել ձորը կամուրջը գտնելու, միաժամանակ անաղմուկ շարժվել, քար չգլորել, չնկատվել։ Ո՞վ է իմանում թե ի՞նչ մարդիկ կարող էին հանդիպել։ Ամենից հավանականը խմբերն էին, որոնք վխտում էին այս լեռներում և ձորերում։ Իսկ եթե գյուղացիները լինեին, նրանք ևս անվտանգ չէին։ Նայած թե ի՞նչ գյուղացի է։

Կրակը որ պլպլացել էր մի քիչ առաջ՝ հանգավ։ Այնտեղից ձայն չէր լսվում։ Կարծես ովքեր որ էին՝ վերջացրին իրենց գործը և հեռացան։

Գրդելը ու Ղոնդին կանգ առան մի մուտի գլխին։ Մուտը բանուկ շավիղի գլխին էր։ Ուրեմն կարելի էր իջնել ձորը, կամուրջը գտնել։ Բայց նաև կարելի էր հանդիպել մարդկանց։ Ընկերներն ավելի լարվեցին։

Իսկ գիշերն անցնում էր։

Հանկարծ Գրդելը կանգ առավ։ Նայեց շուրջը և մթան մեջ նկատեց իրեն ծանոթ քարեր և հասկացավ իրենց ՝ուր լինելը։

— Տեսա՞ր...

— Ի՞նչ է...

— Բեր դինամիտը ինձ մոտ։

— Ի՞նչ կա։

— Բեր թաղենք։

— Ինչո՞ւ թաղենք... Թաղելու համար բերի՞նք։

— Գլո՛ւխդ մեռնի, համ մենք բռնվենք, համ էլ դինամի՞տը։

— Տես ուր ենք։ Սա Սաքանենց արտը։ Կամուրջը այն կողմը մնաց։ Այսպես եթե ուղիղ գնանք՝ կընկնենք այն կրակ անողների ճանկը։ Պիտի հետ դառնանք, ձորի մյուս ափից մոտենանք։ Դե մինչև գնանք կլուսանա։

Ղոնդին զարմացած նայեց Գրդելին.

— Ուրեմն կամուրջը մնա՞ց...

— Կամուրջը կարող է մնալ կամ չմնալ։ Այ այսպես կանենք։ Այսպես թաղելով քիչ-քիչ առաջ կգնանք։ Եթե չպատահեցին՝ կփորձենք պայթեցնելը, եթե ոչ դինամիտը ազատենք։ Մենք չհանգամը։

— Է, լավ, դինամի՞տ չկա, այ մեռած։

— Գլուխդ չի՞ մտնում, որ եթե դինամիտը բռնվի՝ կիմանան, որ կամուրջի համար ենք եկել։

— Խելոք բան ես ասում։ Դե, ապա՞։

Դինամիտը շատ զգույշ փաթաթեցին և թաքցրին քարերի մեջ։ Խնդիրը ավելի բարդվեց։ Պետք էր և տանել դինամիտը և թաքցնել շարունակ, նայած թե որքան վտանգավոր էր որոշ բոպեին և որքան անվտանգ հետևյալ ժամանակ։

Գրդրլին սակայն զբաղեցնում էր թե ովքեր էին կրակ վառողները։ Եթե խմբեր էին, ի՞նչ բան ունեին կրակի հետ։ Նրանք, ճիշտ է, թիկունքում էին և կռվի բռնվելուց երկյուղ չէին կարող ունենալ, բայց և այնպես կարող էին զգուշանալ իրենց տեղը մատնելուց, եթե դուրս էին եկել դասալիքներ որսալու, կամ հետախուզելու թե արդյոք չկա՞ն այս մոտակա լեռներում պարտիզանական խմբեր։ Վերջիններիս մասին խոսում էին անգամ բոլշևիկյան թիկունքում։ Գրդրլը անգամ լսել էր այդ մասին ֆրոնտից այն կողմում։ Ախորժելի չէր նրա համար նաև հանդիպել անծանոթ գյուղացիների, որոնք ինչքան էլ բարյացակամ լինեին՝ միևնույն է՝ կգնային և կտարածեին լուր, որ կասկածելի մարդիկ են երևացել ֆրոնտից այս կողմ։ Նա սկսեց մտատանջվել։ Հիրավի վիճակը ծանր էր։ Մի կողմից գործը պետք էր անպատճառ շուտով կատարել, «ժամկետով», դա խանգարվում էր ամեն բոպե ճակատագրական հանդիպումների երկյուղով, մյուս կողմից գիշերն անցնում էր։ Պետք էր մի բան վճռել։ Այսինքն ռիսկել։ Իսկ ռիսկն այդ դեպքում նույնպես վտանգավոր էր, քանի որ առաջադրանք էր տված — անպայման պայթեցնել կամուրջը։

— Լսիր,— ասաց Ղոնդին,— դրանք կարող են նաև պարտիզաններ լինել։

— Կարող են։ Բայց ի՞նչպես կարող են վաղաժամ հայտնվել։ Չէ, պարտիզանի բան չի։ Խմբեր են, ապահով են զգում իրենց, կրակ են վառում։

— Ուրեմն ի՞նչ անենք։

— Ինչ ուզում է լինի՝ պետք է այս գիշեր գործը գլուխ բերենք։ Հետո կարելի է, բայց ուշ կլինի։ Ռիսկ է, կամ կհաջողվի կամ ոչ։ Գու կաց այստեղ, ես մի գնամ նայեմ։

Եվ Գրդրլը իջավ մուտից։

Ղոնդին, որ ավելի անհոգ էր, քան Գրդրլը՝ գլուխը շարժեց։

Նրա հուշերի մեջ զարթնեցին այնպիսի գիշերներ, երբ նա դարան մտած հետապնդելիս էր եղել այլ նպատակների — այն է՝ ոչխարի հոտերից գառ փախցնելու։ Դա շատ վաղուց էր։ Երբ նա Գրդրլի հետ աշակերտ էր գյուղական դպրոցի։ Ո՞ւր այն վտանգը, ո՞ւր այս։ Ղոնդին մի բոպե մոռացավ թե ինչու համար է եկել այս ձորափը և մտքով գնաց դեպի պատանեկական անհոգ օրերը։ Բոլոր հուշերը կապված էին մի շղթայի մեջ — դա իր ընկերն էր՝ Գրդրլը։ Կյանքը դառել էր նրա համար երկու հոգով ապրելու մի վայր։ Եվ Ղոնդին ժպտաց յուրովի, մտածելով, որ մանկությունից մինչև ահա այս գիշերային գործը նա Գրդրլի հետ է։

Ինչո՞վ պիտի վերջանա այս ընկերությունը։ Ակամա մտածեց այս մասին Ղոնդին և ժպտաց կրկին։ Ղոնդուն ուրիշ ոչինչ չէր պատկերանում, քան կյանքը դարձյալ Գրդրլի հետ։ Ահա թե ինչու նա չէր մտածում վտանգի մասին և զարմանում էր, որ Գրդրլն անհանգիստ էր և ներվային։ «Մեռնել՝ մեռնել» — մտածում էր նա — «Բայց հո միասի՞ն կլինենք»։ Մահն անգամ չէր մոայլում նրա պայծառ սիրտը։

Ձորի խավարից դուրս սողաց Գրդրլի սև կերպարանքը։

— Ներքևում մարդ չի երևում։

— Բաս գնանք։

— Էլ քեզ լսողի հե՛րն անիծած,— մրթմրթաց Գրդրլը և սկսեց դինամիտը հանել քարերի միջից։

Ղոնդին, որ քաղցր մտքերից հանգստացել էր՝ մի քիչ զարմացավ։

— Ա՛յ տղա, ի՞նչ ես կպել ինձ։

— Սո՛ւս կաց, թե չէ՝ հիմի չգիտեմ ինչ կանեմ,— զայրացած շշնջաց Գրդրլը.— քո խելքով գնացի, որ այս օրին ընկա։

— Դե հիմի կպատահի, ի՞նչ անենք։— Կփորձենք՝ գուցե բան դուրս գա։

Գրդրլը խեթ նայեց նրան.

— Իսկ եթե դուրս չգա։

Ղոնդին լրջացավ.

— Դե ինչպե՞ս անենք հիմի, սխալ եկանք։

— Չգիտեմ, պիտի պայթեցնեմ զահրումարը, որ հետո էլ պայթեմ՝ պիտի պայթեցնեմ։

— Է, կարծում ես քեզ մենակ կթողնե՞մ, Գրդրլ ջան։ Հո-

գո՞ւտ մատաղ,— կրկին կատակի տվեց Ղոնդին ու գրկելով Գրդելի գլուխը համբուրեց։

— Թո՛ղ, գլո՛ւխդ կջարդեմ,— հետ մղեց Գրդելը։ Ղոնդին ծիծաղեց ու սկսեց օգնել Գրդելին.

— Շուն ես կտրել այս գիշեր։

Գրդելը փնչաց, հավաքեց գործիքներն ու վեր կացավ։ Կրկին վայր դրեց։

— Կա՛ց, մի գնամ էլի աչք ածեմ։ Թե մարդ չկա ու անիծածները հեռացան՝ գուցե ճղենք անցնենք այն կողմը։ Շրջապատված ենք, անիծածը։

— Ջուշանաս։

— Որ վրա հասնեն՝ հեռացիր թաղած տեղից՝ հետքեր չգտնեն։

Գրդելը դարձյալ գնաց ձորի կողմը։ Նա շարժվում էր անվճռական ու իսկույն էլ հետ դարձավ.

— Բեր դինամիտը։

— Ախր, ասում եմ...

— Շատ մի՛ խոսի։

Նրանք քայլեցին դեպի ձորը։

Սակայն հազիվ էին հասել ձորի պռունգին, որ հետ ընկրկեցին։ Այնտեղից մարդիկ էին բարձրանում։ Հետ վազեցին։ Բայց այս անգամ էլ ձորափից ինչ-որ ստվերներ շարժվեցին նրանց վրա։ Նրանք նկատել էին սրանց այն ժամանակ, երբ սրանք շարժվում էին դեպի ձորը։

Գրդելը դիպավ Ղոնդուն և միայն այսքանը ասաց.

— Իմ հետևի՛ց։

Եվ փախավ ձորից դեպի մոտակա բլուրը, մտադրվելով ընկնել անտառը, այնտեղից էլ լեռան լանջը։ Ղոնդին մեքենաբար հետևեց նրան։ Ստվերներն աղաղակեցին։

— Բռնեցե՛ք։

Ու կրակեցին։

Անտառը մոտ էր։ Ղոնդին կանգ առավ հանկարծ և կրակեց ատրճանակը։ Սա կարծես թե կասեցրեց հետապնդողներին։ Բայց դա մի վայրկյան էր։ Ստվերները նորից վազեցին և հասան նրանց։

— Ձսպանե՛ք,— հրամայեց մեկը բամբ ձայնով։

Հետապնդողները պինդ բռնեցին փախչողներին ու կանգ առան։ Մթան մեջ լավ չէր որոշվում նրանց դեմքերը, բայց որոշ լսվում էր նրանց շնչասպառ հևոցը, որը խառնվեց փախչողների հևոցին։

Գրդելին ու Ղոնդուն քաշ տվին դեպի ձորափ։ Երկ-երկու հոգի այնպես պինդ էին սեղմում բռնվածներին, կարծես գազաններ էին որսացել և վախենում էին նրանց կծելուց։

Նրանց տարան մի մեծ քարի մոտ, որի վրա նստած էին երկու հոգի։ Դրանք փափախավոր, փամփշտակալները խաչաձև կրծքներին կապած հաղթանդամ տղամարդիկ էին։

Մոտ տասնհինգ հոգի նույնպես զինված տղամարդիկ էին մյուսները, որ խիտ օղակով սեղմել էին բռնվածներին։ Մեկը միայն ճիգ էր անում ճեղքել շղթան և ձեռքով մի կողմ էր ուղում քշել նրանց.

— Ո՞րդ էիք կրակողը,— գոռաց նա։

— Թո՛ղ, մեջտեղ բերեք դրանց,— սաստեց քարի վրա նստածներից մեկը։

Հարձակվողը զսպվեց ու մռմռալով հրացանը ցած դրեց կոթի վրա։

Քարի վրա նստածներից մեկը, որի ձայնից երևում էր, որ նրանցից հասակավոր է և գլխավորը՝ չոր հազաց.

— Երկուքդ էիք, թե՞ էլ կայիք։

— Երկուսս էինք,— պատասխանեց Գրդելը գործնական ձայնով, կարծես դատական քննության առջև էր։

— Լա՛վ տղաք կերևիք,— սկսեց կեղծավոր ձայնով քարի վրա նստածը, որը արդեն պարզ էր, որ խմբապետ էր,— դե հիմա եթե ասեք՝ մնացածները ո՛ւր փախան և քանի հոգի էին՝ խոսք կուտամ, որ ձեզի վնաս չի գար։

— Ինչո՞ւ կրակեցիք,— նորից հարձակվեց հետևի կանգնածների մեջ այն հետապնդողը, որն ինչպես երևում է՝ վտանգվել էր գնդակից։

— Սերո՛ւ, հե՛տ քաշվի,— հրամայեց խմբապետը,— կռվի մեջ կկրակեն, կարգն այդ է։ Մինակ թե, ինձի ասեն թե քանի հոգի էին և ինչ տեղեն հայտնվեցան հոս։

Լռություն։

— Ձե՞ք ասեր,— հարցրեց խմբապետը։

Գրդելն ու Ղոնդին սպասում էին կրակոցի կամ ծեծի։ Բայց խմբապետն անսպասելի կերպով զիջեց կարծես։

— Լավ չեք ըներ։

Ու դարձավ զինվորներից մի քանիսին։

— Տարեք գնդապետին։ Գևո՛րգ,— դիմեց նրանցից մեկին,— քեզի կհանձնեմ՝ նրանց ողջ հասցնես գնդապետին։ Իմացա՞ր։ Գլխովդ պատասխանատու ես։ Իսկ դուք, կտրիճ երիտասարդներ, կմեղքնամ ձեզի և խորհուրդ կուտամ ճշմարտությունն ասել գնդապետին։ Տարեք։

Զինվորները կապեցին Գրդելին ու Ղոնդուն և կոպիտ հրեցին դեպի բլուրը։

Գրդելը հասկացավ, որ իրենց հետ են տանում դեպի ֆրոնտ, ուր պիտի լիներ խմբապետի ասած գնդապետը։ Ճանապարհին նա մտածում էր խմբապետի տարօրինակ վերաբերմունքի մասին։ Նա նրանց անվանեց «կտրիճ» երիտասարդներ, ասաց, որ խղճում է նրանց, և վերջապես խստիվ պատվիրեց, որ նրանց ձեռ չտան... Ի՞նչ էր նշանակում այս։ Գթասրտությո՞ւն, թե կեղծավորություն։ Իսկ գնդապետի մոտ ուղարկելը...

Չէ, լավ բան չէր կարելի սպասել։ Ընդհակառակը՝ դա չարագուշակ մի բան էր։

— Շա՞տ պիտի գնանք,— հարցրեց Գրդելը զինվորներին։

— Գնա՛,— եղավ պատասխանը և հրացանի կոթը հարվածեց նրա թիկունքը։

Ղոնդին շարժում արեց թոկի միջից ազատելու ձեռքերը։ Նա ուզում էր հարվածել խփողին։ Սա հասկացավ և հրացանը բարձրացրեց.

— Ի՞նչ ես ոլորվում, սատկա՛ծ։

— Ինչո՞ւ ես խփում։

— Հա՛... դու մնացիր պակա՞ս, ահա մինն էլ քեզ,— ասաց չարախնդորեն զինվորը և մի հարված էլ հասցրեց Ղոնդուն։

Գրդելը կանգ առավ.

— Շա՞տ պետք է լրբություն անեք։

Զինվորները հրացանները ուղղեցին դեպի նրան, և նրանցից մեկը հրացանի փողը մոտեցրեց Գրդելի քթին.

— Հը, ուզում ես, որ սատկեցնե՞նք։

— Ձեզ ասում եմ լրբությունը թողե՛ք,— ատամները կրճտացնելով ասաց Գրդելը։

— Ի՞նչ կանես,— հեգնեց զինվորը։

— Ես գիտեմ ինչ կանեմ,— պատասխանեց Գրդելը, բայց զինվորներից մեկը, Գևորգը, որին խմբապետն հանձնել էր բռնվածներին կենդանի հասցնել գնդապետի ձեռը՝ արգելեց զինվորներին խոսել բռնվածների հետ և բռնելով Գրդելի ուսից կոպիտ բոթեց առաջ։

— Դե՛, շան լեզուդ քե՛զ պահի, գնա՛։

***

Բարձր բլրից ներքև, հովտի մեջ, խավարի ծոցում ընկղմած գյուղը նման էր մռայլ քարակույտի։ Մի ճրագ, փոքրիկ լուսամուտի պես, ծանր սողաց մթան մեջ ու անհետացավ։ Երկար ժամանակ օրորվում էր գյուղի անորոշ կերպարանքը և հետզհետե մոտենում։ Մի պտույտ ևս և ահա շները հաչեցին։ Մռայլ ստվերներ շարժվեցին մի խրճիթի դռանը։ Բայց ոչ ոք առաջ չեկավ։ Գյուղի փողոցները մեռած էին։ Ոչ մի շունչ։ Զինվորներն անցան գյուղի հրապարակը և մոտեցան մի մեծ խրճիթի, որ պատշգամի պես մի բան ուներ դռան մոտ։ Կանգ առան հեռվում։

— Ո՞վ է,— ձայն տվեց պահակը։

— Կալանավոր ենք բերել, կանչիր։

Պահակը մեղմ սուլեց։

Դուրս եկավ մի ստվեր, մոտեցավ.

— Պարոլը։

— «Այգի»,— ասաց Գևորգը։

Ստվերն ավելի մոտ եկավ։

— Ներսն ո՞վ կա,— հարցրեց նրանց գլխավորը, Գևորգը։

— Քնած են,— եղավ պատասխանը։

— Սրանց ո՞ւր տանեմ։

— Գոմը։

Գրդելին ու Ղոնդուն տարան խրճիթի հետևը, ուր գոմն էր և բոթեցին ներս։

Երկու ընկերները՝ կաթսես երազի մեջ՝ մտան գոմը։ Մտատանջությունը, սաստիկ անհանգստությունը իրենց հանձնարարած

գործի այսպիսի ելքից այնքան էր սուր, որ հոգնությունը չէին զգում։ Բարոյական տանջանքը ավելի ուժեղ էր։ Մինչև անգամ մոտալուտ մահը, որ հաստատ կանգնած էր նրանց առջև՝ չէր զբաղեցնում նրանց։

— Խայտառակվեցինք,— ասաց Գրդելը և գլխարկը գետին խփեց։

— Վե՛րջ,— հառաչեց Ղոնդին։

— Հիմա ի՞նչ անենք,— հարցրեց Գրդելը Ղոնդուն,— ամբողջ գործը կքանդվի։

Ղոնդին զարմացած նայեց Գրդելի կողմը՝ թեև չէր տեսնում նրա դեմքը։

— Այսինքն ի՞նչպես թե ինչ անենք, պետք է հանգիստ մեռնենք։

— Ապա գո՞ործը։

— Գործը վերջացա՛վ։

Աքաղաղները կանչում էին։ Այն ժամն էր, որ ուրիշ ժամանակ մի որևէ սայլ սկսում էր ճռնչալ փողոցում, կամ ձիավորի ձին դոփելով գետինը, անցնում էր ու զարթեցնում աշխատավոր շինականին։ Ոչ, աշխատանք չկար, գյուղը մեռելային քնի մեջ էր։ Գտնվելով ֆրոնտի մոտ՝ նա անձկությամբ սպասում էր դեպքերի վախճանին։

Գրդելն սկսեց ականջ դնել, որ իմանա թե գյուղում ի՞նչ է կատարվում, կամ չե՞ն գալիս արդյոք տանելու...

***

Խրճիթի սենյակներից մեկում նստած էր խմբապետը։ Նա հասակավոր էր։ Երբեմն ելումուտ էր անում մի այլ զինվորական՝ շոր ու ցամաք և լուրջ մի սպա, որը մկան նման աչքերը դես ու դեն էր ման ածում և շարունակ ինչ-որ բան էր որոնում։

Սեղանին դրված թույլ ճրագը հազիվ էր լուսավորում սենյակի ծխոտ սև պատերը։ Իսկ միակ պատուհանի հետև թանձրացած էր կեղտոտ խավարը։

Խմբապետը դարձավ դեպի շորուցամաք զինվորականը.

— Պարոն կապիտան, ի՞նչ կլսե գնդապետը, պիտի հարձակվե՞նք բոլշևիկներուն վրա։

Կապիտանը չեմոդանը խառնելով և ուշադրությունը դեպի այն կողմը՝ հազիվ քթի տակ, պատասխանեց.

— Օժանդակ մասերի ենք սպասում։

— Մինչև օժանդակ մասերը գան՝ թշնամին ու դավաճանները մեզի կխեղդեն ճակատեն ու թիկունքեն։

— Ուրիշ կերպ չենք կարող։ Հրետանին պետք է հասնի։

Խմբապետը ծուխը բաց թողեց իր թավ բեղերի միջից և տխուր մտածելով ասաց.

— Դավաճաններ օր-օրի կշատանան։ Թշնամու կողմ անցնողներ բազմաթիվ են։

— Դավաճաններ կան՝ բռնեցեք բերեք։

— Ահա այս երկուքին բռնեցի. մեկ ուզեցա վերջացնել, մեկ ալ ըսի ուղարկեմ շտաբը, սխմենք բան իմանանք։

— Ո՞ւր են։

— Գոմում։

— Գնդապետը քնա՞ծ է։

— Չէ, նոր ընթրեց։

Կապիտանը, որ մինչև այժմ մռայլ էր և խմբապետի հետ խոսում էր անկամ ու թափթփված շեշտով՝ հանկարծ ժպտաց և աղաչական ձայնով դիմեց նրան՝ մոտենալով.

— Լսիր, Սեյրան, ինձ մի լավ ձի է պետք։ Գյուղացիներից պոկիր։

Խմբապետը դրստվեց տեղում և լուրջ շեշտով.

— Շատ աղեկ, ձի մը ղրկեմ քեզի։

Այդ միջոցին հարևան սենյակի դուռը դանդաղ բացվեց և ներս մտավ գնդապետը։ Նա քառասունից քիչ անց, թիկնեղ և խրստադեմ տղամարդ էր։ Քիչ խմած էր և հղփացած։ Սակայն լուրջ և խուզարկող աչքեր ուներ։ Նա հայացքը պտտեցրեց ներկա եղողների վրա և եկավ նստեց սեղանի մոտ։

— Չո՛րտ վազմի,— մռմռաց նա,— գերմանական ֆրոնտ դարձրին անիծածը։ Խրամատային կռի՞վ են ուզում վարել։ Այս պարտիզանական շարժումը սպանեց մեզ։

Հետո դարձավ խմբապետին.

— Նու, ի՞նչ նորություն։

— Դասալիքներ շատացել են, պարո՛ն գնդապետ։

Գնդապետը դեմքը ծանրացրեց դեպի սեղանը և գինովի լրջությամբ մռմռաց.

— Դա տխուր բան է, շատ տխուր բան է։

— Ես կզարմանամ այս գյուղացիներուն վրա,— գանգատվեց խմբապետը։ Ասոնք հայրենիքի գաղափար չունի՞ն։

— Դա տխուր բան է, շատ տխուր բան է,— մռմռաց նույն տոնով գնդապետը և գինովի մոռացության մեջ ընկած սկսեց անխմաստ նայել իր առջև դրված քարտեզին։

— Երեկ էր,— շարունակեց խմբապետը,— հավաքեցի գյուղացիներուն, խոսեցի, հրամայեցի, որ կռվեն, խոսք տվին, երդում ըրին — բայց գյուղացի են խորամանկ — իրենց բանը գիտեն և չեն կռվում։

— Դա տխուր բան է, շատ տխուր,— մեքենաբար կրկնեց գնդապետը։

Նրա գլուխը հաճելի գլխապտույտի մեջ էր։

Հանկարծ արթնացավ գինով վիճակից.

— Նու, ի՞նչ եք անում հիմա։ Հեռախոսագիր կա՞։

— Լռել են ինչ-որ։ Կասկածելի է։

— Բոլշևիկներն էլ սպասում են օժանդակ մասերի,— խմբապետը հազաց և շարժվեց տեղում։

— Այն երկուքին հարցուփորձ չե՞ք ըներ։

— Ձգնդակահարեցի՞ք,— հարցրեց գնդապետը կապիտանին։

— Ոչ,— պատասխանեց նա,— սպասում ենք, որ հարցաքննենք։

Կապիտանը դուրս գնաց։

— Ո՞րտեղ բռնեցիք,— հարցրեց գնդապետը քնատ ձայնով։

— Կամուրջին վերևը, ջրաղացին քով։ Թե չհասնեի՝ պիտի անցնեին ճակատը՝ բոլշևիկների կողմը։

Գնդապետը թեթև հեգնական նայեց խմբապետին.

— Ինչո՞ւ եք ենթադրում, որ այստեղից էին գնում բոլշևիկների կողմը։ Գուցե հակառա՞կն էր։

Ներս մտավ կապիտանը երկու պահակով մեջներն արած Ղոնդուն և Գրդրլին։ Նրանց թևերը կապած էին։

Գնդապետը բերանը ծռեց.

— Ահա՜, պատվելինե՜րս, պատի՜վ ունեմ ողջունելու...

Ու շրթունքները ծծելով սկսեց թուքը կուլ տալ։

Խմբապետը նայեց և ասաց.

— Ահա՛, տղա՛քս։ Պարոն գնդապետին անկեղծ խոստովանեցե՛ք ամեն բան։ Եթե ճշմարիտը խոսեք՝ ես կմիջնորդեմ որ կյանքներդ խնայե։

— Ո՞րտեղացի եք. ո՞վքեր եք,— հարց տվեց գնդապետը։

Գրդրլն ու Ղոնդին չպատասխանեցին, այլ անորոշ նայեցին գնդապետին։

Գնդապետը ճիգ արեց լրջանալու և կենտրոնանալու և սկսեց մեղադրականը։

— Ձեզ բռնել են ջրաղացի վերևը, մեր թիկունքում։ Ո՞ր կողմ էիք գնում։ Լսո՞ւմ եք...

Ուզում էր խիստ տոնով մի բան ասել, բայց բարվոք համարեց դեռ զսպել։

— Բայց ա՛յ, եթե խոսեք, մի բան պատմեք, կասեմ, որ կորիճ տղերք եք։

Ու հարբածի ժպիտով բերանը ծռեց։

— Պատմեցե՛ք,— կրկնեց խմբապետը։

— Իհարկե, կպատմեն։ Նո՛ւ...— աշխուժացավ գնդապետը,— ո՞րտեղացի եք։

Գրդրլը հազաց և շատ սառը պատասխանեց.

— Ի՞նչ օգուտ ունի ասելը,— մին չի՞...

Եվ դառը ժպտաց։

— Օգուտ ունի — կազատվեք,— ասաց գործնական եղանակով գնդապետը և դարձավ Գրդրլին.

— Դու ո՞րտեղացի ես։

— Էլ բան չունենք ասելու,— պատասխանեց Գրդրլը նույն եղանակով։

Լռություն տիրեց։ Այն լռությունը, որին անմիջապես հետևում են բավական դաժան բաներ։ Կապիտանը, որ չեմոդանը խառնելուց չէր դադարում, թողեց գործը և հետաքրքրված վեր նայեց։ Խմբապետը ևս նայեց գնդապետին։ Բայց սա ըստ երևույթին դեռ չէր «վճռում»։ Ընդհակառակը՝ ավելի մեղմացրեց ձայնը.

— Ո՛չ։ Այդպես չի կարելի պատասխանել։ Ասացեք մանրամասն, այ, ո՞ր գյուղացի եք, ո՞ր կողմն էիք գնում, ի՞նչ կապ ունեք բոլշևիկների հետ... մեկ-մեկ լավ կպատմեք, կասեք, քա-

նի հոգի էիք։ Մի՛ վախենաք, մենք նրանց վնաս չենք տա։ Այ, խմբապետը կխոստանա, որ նրանց բոլորին վերցնի իր խումբը, դուք բոլորդ կկռվեք մեր հայրենիքի թշնամիների դեմ։

— Խոսք կուտամ, որ բոլորիդ կընդունեմ խմբիս մեջ,— կցեց խմբապետը։— Ձեզի պես կտրիճ տղաքը ափսոս են, որ տուներնին մնան։ Ես գիտեմ, ձեզի մոլորեցրեր են, խաբեր են, թե խմբբեր գյուղերում վնաս կուտան, գազան են։ Այ տեսեք, ինչպես քաղցր կխոսենք հետներդ։ Կուզեք՝ բաց կթողնենք, ուր կամենաք կգնաք։ Դե՛, տղաքս...

Լռությունը եղավ պատասխանը։

Գնդապետը կրկին մեղմաձայն խոսեց.

— Ես հայ ազգի կադրային զինվոր եմ։ Ես շատ եմ կռվել գերմանացիների, ավստրիացիների, թուրքերի դեմ, շատ բան եմ տեսել։ Թշնամին — ճիշտ է, բարեկամ է դառնում։ Մենք բարեկամ կդառնանք, դուք շատ լավ կծառայեք մեր բանակում։ Միայն մի ծածկեք, ամեն բան մանրամասն պատմեցեք։ Ի՞նչ օգուտ, որ ձեզ սպանենք։ Գործը տանուլ եք տվել։ Եվ այն էլ կա, որ վաղը մյուս օրը ամբողջ Հայաստանը կմաքրենք բոլշևիկներից։ Դա ամենագլխավորն է։ Նո՛ւ, պատմեցե՛ք։

Գրդելի և Ղոնդու լռությունը, որ արհամարհանքի արդյունք էր՝ արդեն սկսում էր համբերությունից հանել գնդապետին։ Եվ՝ սա, որ չնայած հարբած վիճակին՝ դեռ պահել էր իրեն հատուկ զգաստությունը՝ արդեն մի բոպե կատարյալ լուրջ եղանակով դիմեց նրանց։

— Դուք, գիտե՞ք, սուտ էշ մի՛ ձևանաք։ Շատ լավ հասկանում եմ, որ ամեն բան հասկանում եք։ Գիտեմ շատ բան եք տեսել գյուղում, զորքի մեջ, շատ լուրեր եք հավաքել, որ տանեք բոլշևիկներին։ Գուցե ձեզ համար լավ էր, որ տեղ հասցնեիք այդ լուրերը։ Բայց ի՞նչ արած, բախտներդ չբանեց, և լավն էլ այդ էր։ Հիմա օգուտ չունի պահելը։ Հետո՝ չեմ կարծում թե մեռնել ուզենաք։

— Այո, այո, երիտասարդ եք և պետք եք ազգին,— կցեց խմբապետը։

Գնդապետը հազաց և տեղում դրստվելով սպասեց.

— Լսում եմ։ Սկսեցե՛ք։

Կրկին լռություն։

Գնդապետը վեր կացավ, գնաց մյուս սենյակը։ Կապիտանը չարախինդ աչքերով հետևեց նրան, մոայլ նայեց երիտասարդներին խմբապետը, և լռության մեջ, որ այլևս ծանր էր՝ սկսեցին ականջ դնել մյուս սենյակից լսվող թույլ շրշյուններին։ Գնդապետը բաժակը դիպցրեց գինու շշին. դա պարզ էր։ Ուրեմն նա այնտեղ խմեց։ Դա կապիտանի համար նշան էր, որ «պատմությունը» շուտով կվերջանա։ Նա ժպտաց քթի տակ։ Գնդապետը ներս եկավ մյուս սենյակից և բերանը թթվեցրած, դեմքը ուռած, օրորվելով կանգնեց դռան մոտ, հետո դանդաղ եկավ նստեց սեղանի մոտ, վառեց մի պապիրոս։ Ծխեց։ Հետո խոժոռ, բայց զուսպ նայեց կալանավորներին։

— Լեզուներդ պապանձվե՞լ է։

Հետո հռհռաց։

Ու արհամարհանքով դարձավ կալանավորներին.

— Հո՞ւհ, վախկո՛տ նապաստակներ։—Հանեց նագանը և դրեց սեղանի վրա։

Լռությունը, որ մի անգամ կարկամեցրել էր ամեն ինչ՝ շարունակվեց։

— Ձե՞ք խոսում... հասկանո՞ւմ եմ։ Շների պես վախեցած եք։

Հետո վեր կացավ, մոտեցավ Ղոնդուն և քիթը մոտեցնելով նրա դեմքին՝ բերանը ծամածռեց.

— Է՛յ... հիո՞ւհ... լեզուդ հանիր, տեսնեմ։

Նույնը արեց նաև Գրդելին.

— Հը, լեզուդ...

— Իշացել են,— դարձավ խմբապետին և հռհռաց։

Նրան ձայնակցեց խմբապետը, որին հետևեց և կապիտանը։

— Նու, ճշմարի՛տն ասացեք. դուրս էիք եկել թալանի՞, թե՞ բոլշևիկների կողմն էիք անցնում,— սուր նայեց նրանց գնդապետը։

Դռան հետևը ինչ-որ խլրտաց։ Դուրսը ինչպես երևում է մարդիկ սպասում էին հետաքրքիր տեսարանին։

— Սրանք խուժաններ են, ո՞րտեղից հանեցիք, թե կռվողներ են։ Խուժաններ են, դուրս են եկել թալանի, գողության...

— Այո, և եթե ճշմարիտը խոստովանին՝ ես իրենց կառնեմ խմբիս մեջ,— ասաց խմբապետը։

— Այդ կարելի է,— հավանություն տվեց գնդապետը։

Բայց բռնվածները լռում էին։

— Ձե՞ք խոսում,— հանկարծ կատաղեց գնդապետը և բռունցքը սեղանին խփեց,— ես ձեզ խոսել կտամ, շան լակոտներ։ Ձեզպեսներին չէ՛ մենակ, որ խոսեցրել եմ։

Վերցրեց նագանը և դարձավ խմբապետին ու կապիտանին.

— Մի կո՛ղմ։

Նրանք քաշվեցին մի կողմ։ Գնդապետը նագանը բռնեց Գրդզլի ճակատին.

— Քո հերն եմ անիծել... դե, որ չես խոսում...

Կարծես պիտի կրակեր։ Բայց չկրակեց. այլ սկսեց ատրճանակը պտտեցնել մերթ Գրդզլի, մերթ Ղոնդու ճակատի վրա։ Հետո ցած բերեց ատրճանակը և գլուխն օրորեց.

— Դողա՞ց խարդախ հոգիներդ։ Շների պես վախեցած եք։ Մի՛ վախենաք,— գոռաց նա հրամանի ձայնով,— կռիվ եք դուրս եկել՝ շան որդիք, կռվեցեք, մեռեք, ինչպես վայել է զինվորին։ Ապա ի՞նչ, կարծում եք կատա՞կ բան է կռիվ դուրս գալը, փլա՞վ է՝ ուտեք։ Դե շո՛ւտ, ասացեք թե ձեզանից ո՛րն է ղեկավարը։ Թող մեկդ մյուսին մատնի։ Մատնողին կազատեմ։ Դարձյալ լռում ե՞ք։ Ի՞՛, վախկո՛տ շներ։ Տեսնում եմ՝ ինչ եք դառել։— Ու ատրճանակը սեղանին դրեց։

— Դե, որ այդպես է՝ չեմ խփում ձեզ։ Ձեզ հիմա փակել կտամ գոմում, այս նագանն էլ կտամ ձեզ։ Գնացեք ու որ մեկդ որ մյուսիդ խփեցիք սրանով՝ նրան կազատեմ։ Պատվավոր զինվորականի խոսք։ Կազատեմ, ուր կուզի թող գնա, շան տեղ էլ չեմ գցի, ու այդպիսի վախկոտ շանից վնաս չկա։ Իսկի ափսոս էլ է, որ այստեղ մարդ ձեռը կեղտոտի ձեզնից մեկն ու մեկին սպանելով։

Հետո նստեց աթոռին.

— Իսկ եթե իրար չեք խփի՝ քարափից վայր գցել կտամ ձեզ։ Պատվավոր խոսք։ Դե՛, մա՛րշ։

Եվ կապիտանին, որ կես շփոթված, կես ժպտալով նայում էր իրեն և հետո զվարճացավ այս տեսարանով, հանել էր ատրճանակը և պատրաստվում էր տանել կալանավորներին գնդակահարելու՝ գնդապետը զսպեց.

— Չհամաձակվել։ Իրենք պիտի իրար խփեն։ Ասացի, այդ-

պես էլ կլինի։ Մի՛ փամփուշտ միայն դրեք, ավելի ոչ։ Դե, հիմա տարեք։

Խմբապետը ծիծաղեց։ Ծիծաղեց և կապիտանը, սրամիտ գտնելով գնդապետի «կատակը», մանավանդ որ տեսնելով նրա գինովությունը՝ նա կարծում էր, որ միայն մինչև լույս կտևի այս «կատակը»։

— Գնանք,— դաժան ժպտով դիմեց կալանավորներին և վերցրեց սեղանի վրայից նագանը, որի մեջ թողեց մի փամփուշտ միայն։

Կալանավորները դուրս գնացին. դռան մոտ նրանց շրջապատեցին զինվորները և տարան։

Խմբապետը ծխամորճը լցրեց։

— Ձուր ուշացրիք, պարոն գնդապետ, վերջացնելու էիք։

— Հույս ունեք, թե իրար վրա կրակե՞ն,— թերահավատ շեշտով հեգնեց խմբապետը։

Գնդապետը խեթ նայեց խմբապետին.

— Կկրակեն ու կգան կմատնեն ամենքին։

Մի փոքր մտածեց և ասաց.

— Եթե մեկն ու մեկը այդ քայլը ընե՝ կդառնա մեր մարդը, հե՞։ Կառնեմ խումբիս մեջ։— Եվ վեր կենալով տեղից դուրս գնաց։

Գնդապետը սեղանի տակից հանելով օղու շիշը դրեց բերանին, հետո դառնությամբ թքեց.

— Թյո՛ւ, սատանան տանի բոլորին էլ։

Ներս մտավ կապիտանը՝ չարաճճի ժպիտը սուր շրթունքներին։ Գնդապետը նայեց նրան և նկատեց նրա ձեռին նագանը.

— Տարար փակեցի՞ր։

— Գնդակահարե՞մ,— հարցրեց իր հերթին կապիտանը։

— Ո՞չ, հարկավոր չէ. խուժաններ են, հասարակ թալանողներ։

— Լրտեսներ են։

— Թող իրար կոտորեն՝ հետո կերևա թե ինչ են։

— Ձեռ քաշեցեք, ձերդ գերազանցություն, կարծում եք բան դուրս կգա դրանի՞ց — կխփե՞ն իրար։

— Դուրս կգա,— հարբած համառությամբ պնդեց գնդապետը,— ճանաչում եմ այդ վախկոտներին։ Մեկը մյուսին կվերջացնի ու կգա դեռ մյուսներին էլ կծախի։

Գնդապետը վեր կացավ, գնաց ներսի սենյակը և վերադարձավ մի մեծ շշով օղի և երկու գավաթ ձեռին, կանգնեց սեղանի մոտ, փորը ուռցրեց և կուրծքը դեմ անելով օդի մեջ՝ արտասանության պես դիմեց կապիտանին.

— Բաբախա՛նովիչ։

— Լսում եմ, ձերդ գերազանցություն։

Գնդապետը նստեց, լցրեց գավաթները և կարգադրեց.

— Նստի՛ր։ Վերցրո՛ւ։

Կապիտանը նստեց և վերցրեց գավաթը։

Գնդապետը մթնեց և դեմքը իրոնիկ ժպտով ծռմռեց.

— Да; «Հայրենիք»... «Հայրենիք» ենք պաշտպանում... То-то «Հայրենիք»։ К чорту полетели ռուսական իմպերիան, Դենիկին, единая. неделимая եկել ենք այս քնծռոտ Հայաստանը և վախկոտ նապաստակների հետ կռվում ենք վախկոտ նապաստակների դեմ։

Խմեց։ Նրան հետևեց և կապիտանը։ Օղին սկսեց ազդել իր հատուկ խաբուսիկ տրամաբանությամբ, որին դիմում են հուսահատ մարդիկ։

Գնդապետը սուր նայեց կապիտանին։

— Ասում ես չե՞ն սպանի իրար։ Կսպանե՞ն։ Ճանաչո՛ւմ եմ այդ ժողովրդին,— և կրկին լցրեց օղին,— Բաբախա՛նովիչ։

— Լսում եմ, ձերդ գերազանցություն։

— Ասո՛ւմ ես չե՞ն սպանի իրար։ Կսպանե՞ն։ Իրենց սեփական հորը, մորը, քրոջը, կծախեն, կսպանեն։ Խուժանն է՞ն,— գնդապետը գոռում էր արդեն,— խուժաններ են նրանք, մերոնք բոլորը, чорт возьми, բաց թող դրանց վաղը։— Դաժանորեն ծիծաղեց, հետո հանկարծ դառնությամբ՝— թո՛ղ ամեն բան, Բաբախա՛նովիչ — սկսեց սեղանին թակել — ճղե՛նք Կոնստանտինոպոլ, լսում ես։ Կոնստան-տինոպոլ։ Առաջ Կարս, Տրապիզոն ու ուղիղ Կոնստանտինոպոլ, Գալիպոլի, к дрездовцах. գնանք Եվրոպա, լակեյություն անենք։— Ու ձեռը կատաղի զարկեց սեղանին։— К чорту այս փոշոտ Հայաստանը։ Ոչինչ չի դուրս գա այս կավարդակից։

— Այո՛,—հառաչեց կապիտանը հարբած լրջությամբ,—խմբապե՛տ ենք դառել։ Պետք է մի ավելի մաքուր գործ։

— Լակեյությո՛ւն։ Թքա՛ծ այս խուժանների վրա։ К чорту всех их, այս խմբապետներին։ Բա՛ց թող այն խուժաններին, թող գնան իրար կոտորեն ու թալանեն։ Նրանց էլ հերն անիծած, մերոնց էլ, Անգլիա, Ամերիկա, Հայաստան, խալտո՛ւրա։

— Ճղե՛նք Կոնստանտինոպոլ, Բաբախա՛նովիչ... վերցրո՛ւ...

Նորից լցրեց գավաթները։

Ու դառնությամբ խմեցին։

Խմբապետը կրկին ներս մտավ ու լուռ նստեց սեղանի մոտ։

Գնդապետը հղփացած ու շար նայեց նրան, հետո լցրեց գավաթը, քթով նշան արեց, որ խմի։ Խմբապետը վերցրեց գավաթը, ծանր տարավ շրթունքներին, խմեց ու քնատ աչքերը գցեց գետին։ Գնդապետը մրթմրթում էր հատուկենտ բառեր, որոնց իմաստը կապիտանն էր միայն հասկանում։

Գնդապետը նայեց կապիտանի աչքերին.

— Չհամարձակվես։

Կապիտանը հասկացավ, թե ինչի մասին էր խոսքը։

— Ոչ, ոչ, Գավրիլ Մայիսեևիչ։

— Տես, հա, նրանք պետք է իրար խփեն։

— Այո, այո, ես կհսկեմ անձամբ,— հանգստացրեց կապիտանը՝ քմծիծաղ նայելով ինքնասած գնդապետին, որի օրիգինալ խաղը նա համարում էր նրա տրյուկներից մեկը, որոնց սա դիմում էր երբեմն հուսահատ մոմենտներին։

Կապիտանը դուրս գնաց։ Նրան հետևեց խմբապետը։ Միջանցքում խմբապետը կանգնեցրեց կապիտանին։

— Ինձ նայե՛ւ, պարոն կապիտան, ճշմարի՞տ պիտի ազատեք զարկողին։

Կապիտանը սառը նայեց խմբապետին։

— Ո՞ւմ, կարմիր սատանայի՞ն։ Իմ ձեռից ո՞ր ճանճն է պրրծել, որ սրանք պրծնեն։

— Գիտե՞ս ինչու կըսեմ։ Ես իմ խմբերուս մեջ այդ տեսակ տղաներեն մեկ քանի հատ ունեցել եմ։ Ատոնցմե մեկն ու մեկը շատ պետք է ինձի հետախուզության համար։ Կուզեմ քովս տանեմ, համոզեմ։

— Ո՞ւմ համոզես,— դաժանորեն ժպտաց կապիտանը,— բոլշևիկների՞ն։ Բոլշևիկին չես համոզի։—Դառն շարությամբ նայեց խմբապետին։— Եվ զուր ես կարծում թե կխփեն իրար։ Բոլշևիկը

թ անի։— Հետո շատ գործնական եղանակով.— Կուզի խփեն, կուզի ոչ։ Երկուսին էլ գնդակահարելու եմ։

— Վախեցած են,— ասաց նույնպես գործնական եղանակով խմբապետը,— մեկն ու մեկը հոգին ազատելու համար կզարկե մյուսին։ Եթե զարկեց՝ ալ թո՛ղ, կտանեմ խումբս, կհամոզեմ։

Կապիտանը թույլ ժպտաց։

— Կարող ես համոզել, բան-ման դուրս քաշել։ Այ դա գործ կլինի։ Փորձիր, խոսեցրու։ Հետո... կխփենք։

— Լավ։ Փորձենք։

***

Գոմը բոլորովին խավար կլիներ՝ եթե լրացած լուսնի լույսը չլուսավորեր նրա որոշ մասը, մսուրները, հատակի քարերը և սյունը։ Սրա տակին մի քար կար, որի վրա նստած էին կալանավորները։

Նրանք նախ ականջ էին դնում դրսի ձայներին՝ հետևելու համար, թե ինչ է լինելու իրենց վերջը։ Գնդապետի տարօրինակ վարմունքը զարմացրել էր նրանց, մանավանդ Ղոնդուն։

— Գի՛ժ էր անիծածը, թե՝ փորձել էր ուզում,— խոսում էր նա տարակուսած։— Մենք իրար սպանո՞ղ ենք։

Գրդելը լուրջ էր։ Ղոնդին հետախույզ հայացքով քննում էր նրա դիմագծերը։

— Կարծում ես լո՞ւրջ ասաց,— հարցրեց Ղոնդին։

Գրդելն իսկույն չպատասխանեց։

Հետո Ղոնդին ինքն իրեն պատասխանեց.

— Հարբած էր, շուտով ուշքի կգա ու... «կտանեն»։ Միևնույն է։— Դռան հետև թեթև աղմուկ լսվեց։ Նրանք վեր թռան։

— Չէ կարծես... — մռմռաց Գրդելը՝ շարունակելով ականջ դնելը,— կտուրը բարձրացան։ Չե՞ս տեսնում ճեղքը — պիտ հրակեն։

Վերև նայեց, առաստաղին մի տեղ փոքրիկ անցք կար։

— Մի բան անենք,— ասաց Ղոնդին։

— Ի՞նչ։

— Ճղենք։

— Ո՞րտեղից։

— Վերևից։

— Չե՞ս տեսնում՝ կտրանը նստած են։

Ղոնդին նայեց կտրան ճեղքին, որտեղից երբեմն ստվերներ էին ընկնում լուսնի շողի վրա, որ սկսեց նաև այն կողմից ընկնել։

— Ճղելը այս բոպեիս մտքիցդ հանի՛,— ասաց Գրդելը։

— Լսիր, ինչո՞ւ ես հակառակում,— պնդեց Ղոնդին,— դուռը չե՞նք կարող կոտրել ու կրակելով ճղել։

— Կարող է չհաջողվել։

— Է, այսպես հաստատ կխփեն։ Միևնույն չէ՞։

— Միևնույն չէ,— լուրջ ու խորհրդավոր պատասխանեց Գրդելը.— ռիսկ է։

— Ռիսկ՝ ռիսկ։ Ե՛կ, նրանք դուռը բաց անելիս ճղենք։ Նաչանը դու վերցրու, առաջ ընկի, ես հետևիցդ կգամ։

— Երկուսիս էլ ձեռաց կպառկեցնեն։ Կամուրջը կմնա։

Ղոնդին անհանգստացավ.

— Այն է՛լ ես ասում, այն է՛լ։

Գրդելը նույն զուսպ եղանակով ասաց.

— Շատ վատ բան եղավ։

— Է, ի՞նչ ես միտք անում։— Մեռնել՝ մեռնել։ Մի օր եղել ենք, մի օր պիտի մեռնենք։

Գրդելը ինչ-որ բան էր մտածում։

— Ոչ,— ասաց նա շեշտված ձևով,— մի ասի։ Մահը ուրիշ է, մահը խոր բան է։ Երբեմն մարդիկ խորն են ապրում, բայց լինում էլ է, որ խորն են մեռնում։ Պետք է երկուսն էլ իմանալ։

— Դատարկ բան է։ Մահը մահ է,— սրտնեղեց Ղոնդին,— հետո մտածմունքի մեջ ընկնելով սկսեց բարձր փիլիսոփայել — Հա՜յ գիտի հա՜... ի՞նչ բան է կյանքը։ Մի՞տդ է, որ երեխա ժամանակներս ես ու դու գնացինք անտառ պանտա բերելու։

— Ը՞մմ...— ցրված ձայն հանեց Գրդելը։

— Զիկում,— աշխուժացավ Ղոնդին,— բան եմ պատմում, լսի՛ր։ Մի՞տդ է, որ մնացինք անձրևի տակ, թրջվեցինք։ Հետո եկանք մի ծառի տակ, ուզում էինք կրակ անել՝ լուցկի չկար։ Նստեցինք ու իրար պինդ գրկեցինք։ Մի՞տդ է, ասացինք, որ միասին ենք մեռնելու։ Հը՞։

Գրդելը ժպտաց.

— Հա... միտս է...

Ու խորասուզվեց մտքերի մեջ։ Մանկությո՛ւն...

— Տեսա՞ր ինչպես ասածներս կատարվեց,— ասաց Ղոնդին։

Գրդելը լռեց, ու հետո մեղմ ձայնով և երազող աչքերը գետին գցած մի տեսակ խորհրդածեց.

— Է՛, տնաշե՛ն, միասին մեծացանք, միասին ապրեցինք, միասին ընկանք կրակների մեջ ու հիմի էլ պարզ է... միասին պիտի գլորվենք։

— Վախենո՞ւմ ես։

— Շա՛տ,— կատակեց Գրդելը։

— Թե վախենում ես՝ ծոցդ քա՛ր դիր։ Մեռնելուց դենը էլ գյուղ չկա։ Դենը դժոխքն է ու դրախտը։ Այ տղա, ջոկ-ջոկ տեղեր չգցե՞ն մեզ։ Մեկ թոկով կապվենք։ Այ, այստեղ մի իշի պարան կա։

Վերցրեց մի թոկի կտոր, որ աղբի մեջ էր ընկած ու մոտեցավ Գրդելին.

— Բե՛ր վիզդ կապեմ։

Գրդելը փափախով խփեց նրա դեմքին.— գնա՛։

— Գլուխդ թաղեմ, Գրդել, ի՞նչ օրի ես,— ծիծաղեց Ղոնդին։ Հետո լրջացավ։

— Լսիր, բան եմ պատմում։

— Թո՛ղ պատմություններդ։ Արի լա՛վ մտածիր։ Քեզ բա՛ն եմ ասում։ Միևնույն է, մենք այստեղից ազատվողը չենք։ Երկուսիս էլ շանսատակ կանեն։

— Ջհանդա՞մը։

— Կամուրջը մնաց։

— Կամուրջը մտքիցդ հանի՛ր։

— Կամուրջը ի՞նչպես մտքից հանեմ։ Մեզ սպասո՞ւմ են...

— Դե մի՛ հանիր — ի՞նչպես ես պայթեցնում։

Գրդելը բռնեց Ղոնդու ուսը.

— Դինամիտի տեղը հո իմանում ես։

— Իմանում եմ։

— Այ կգնաս ու գործը կկատարես։

Ղոնդին զարմացած նայեց Գրդելին.

— Խելքդ թռցրի՞ր։ Եկ աղոթեմ։

— Ես դրուստ եմ ասում։ Կգնաս, գործը կկատարես։ Դե, վերցրո՛ւ։ Եվ լսիր թե ինչպես պիտի անես։

Ու նագանը մեկնեց Ղոնդուն։

— Հա՛, ա՛յդ ես ասում։ Բեր,— կատակեց Ղոնդին ու արագ վերցնելով ատրճանակը կատակով նշան բռնեց Գրդելի ճակատին։

— Տրա՛խկ։ Դե՛, ընկի՛ր դերասանի պես։

Հետո ցած բերեց ատրճանակը։

— Ա՛յ տղա, էդ հարբած շանն ասենք՝ բաց թողնի մեզ, գնանք դերասանություն անենք։ Հավա՛տա։

Գրդելը տհաճ կերպով դեմքը կնճռոտեց.

— Հիմարությունները թո՛ղ։ Բռնի՛։

Ղոնդին ծուռ նայեց և կես կատակ կես լուրջ հարցրեց.

— Հը՞, հարբել ես վախից, թե՞ այն գնդապետից բան սովորեցիր։ Հետո՝ դու հավատո՞ւմ ես այդ հարբաց գազանին։

— Նա կատվի-մկան խաղ է անում։ Հաճույք է նրա համար տեսնելը թե ինչ կանենք։ Հարբած կոնտրռևոլյուցիոները կատակ արեց՝ դու էլ հավատո՞ւմ ես։

Գրդելն ինքն էլ այդպիսի մտքեր ուներ, բայց նրան գայթակղում էր այդ կատակը։ Ո՞վ գիտե, գուցե այդ կատակից մի ուրիշ բան դուրս գա...

— Կոնտրռևոլյուցիոներ է նա և մեր թշնամին։ Նա կարծում էր թե մենք շատ վախեցած ենք։ Նա մեզ արհամարհում էր։ Դե լա՛վ է։

— Դատա՛րկ բան է։

— Ամենավերջին հնարն էլ որ մնա՝ կոմերիտականը պետք է գործադրի՝ պրոլետարական գաղափարի համար։ Լսի՛ր, այդ կոնտրռևոլյուցիոները միայն մի լավ բան է անում — մեզ ժամանակ է տալիս մի բան անելու։ Նա հարբած է, ինքնասաց մարդ, խաղ է անում, զվարճանում։ Նա մեր «խաղին» է սպասում։ Թե չէ, նա մեզ շանսատակ կաներ իսկույն։ Վաղը կխփեն մեզ։ Ե՛կ փորձենք։

— Ախր, ի՞նչ կարող է լինել, որ փորձենք, բավական է,— բարկացավ Ղոնդին։

— Չգիտեմ, մի բան պետք է անենք,— գործը կմնա,— մի աղմուկ, շփոթ, կամ նա պիտի հիմարանա, մեկն ու մեկիս բաց թողնի, կամ չգիտեմ, մեկս ու մեկիս տանեն խոսեցնելու, ձգձգվի գործը, մի բան լինի մեկս փախչենք։

Մի պահ լռեց՝ լարված.

— Խմբապետը թույլ կողմեր ունի, նա հուսով է, թե մեզ կծռի, իրեն պետք կգանք, այդպես էլ համոզում էր գնդապետին։

Դարձյալ լռեց.

— Վերջապես չգիտե՛մ, պե՛տք է դուրս պրծնենք, կամուրջը պետք է պայթեցվի, հասկանո՞ւմ ես...— ու ատամները կծեց կատաղի մոլուցքով։— Դե՛, սկսե՛նք։ Գնդապետը սրան է սպասում։

Ղոնդին զայրացավ։

— Սրա՞ն է սպասում։ Դե թող չսպասի։ Ահա այս զահրումարը դրի լուսնի շողքում, թող վերևից նայեն ու սպասեն կոնտրոլյուցիոներները, թե ռևոլյուցիոներները իրար են սպանելու։

Եվ ատրճանակը դրեց լուսնի շողքի ընկած տեղի վրա։

— Թող գան իրենք խփեն։ Այստեղ մարդասպան չկա։

— Բայց կամուրջը կմնա։

— Կամուրջը կմնա՛։

Գրդելը զայրացավ։

— Ո՛չ, կամուրջը չպիտի՛ մնա։

— Հիմար-հիմար մի՛ դուրս տա։

— Ես հիմար դուրս չեմ տալիս։ Ես քեզ հաստատ բան եմ ասում։ Կամուրջը պետք է պայթեցնենք։

Ղոնդին սուր նայեց Գրդելին։

— Դու լո՞ւրջ ես ասում։

— Լո՛ւրջ։

— Չե՞ս ամաչում։

— Ո՛չ։

Ղոնդին իբրև կատակ էր ուզում ընդունել, բայց Գրդելի թե շարժումը և թե դեմքի խիստ արտահայտությունը նրան գծից հանեց։ Նա սաստիկ կոտրվեց։ Գրդե՛լը, այն Գրդե՛լը, որի հետ նրանք միայն ու միայն կյանքն էին ճանաչել ու զգացել, այս անգամ մահվան կերպարանքով կանգնել իր դեմ մահ էր առաջարկում։

Ի՞նչ պատահեց Գրդելին... Փոխվե՞ց մի գիշերվա մեջ, թե՞ նրա հոգու միջից դուրս նայեց մի ուրիշ մարդ, օտար, անընկերասեր և դաժան մարդ։ Շատ անախորժ, սառը մի բան զգաց Ղոնդին։ Այսքան տարվա մանկության ընկերը այդպես ուրիշ մարդ լինի՞, և նա, Ղոնդին չճանաչեր նրա՞ն... Եվ Ղոնդին ցանկացավ նրան ուշաբեր վիճակի հասցնել.

— Տո, դու ասացիր ու ես էլ վերցրի ատրճանակն ու քեզ խփեցի էլի՞...— և հուզված գլուխն օրորեց—Հը՞մ... գլո՞ւխդ մեռնի, տես թե ինչե՞ր են անցնում մտքով։

— Ինչ կա որ,— հասարակ եղանակով ասաց Գրդելը,— միևնույն չէ՞, նրանք են խփելու։

— Նրանք ինչ որ կուզեն թող անեն։ Նրանց արածը հաշիվ չէ։

Եվ Ղոնդին սկսեց քթի տակ մի երգ մմռալ՝ վանելու համար անախորժ տպավորությունը։ Հետո հետզհետե ձայնը բարձրացրեց և վերջը բացականչեց.

— Է՛յ, կոնտրռևոլյուցիոներնե՛ր, ձեր հե՛րն եմ անիծել։

Ու ծիծաղելով հանդիմանորեն դարձավ Գրդելին.

— Տո՛, դու կարծում ես այս հնարքները քեզ կպրծացնե՞ն։

— Ես չգիտեմ, մի բան պետք է անեմ։

Ղոնդին շարժվեց տեղից.

— Է, հիմի ի՞նչ ես ուզում... որ մենք իրար խփե՞նք։ Ես քեզ խփողը չեմ։

— Ուրիշ ճար չկա։ Միևնույն է, մեզ սպանելու են։

— Ես քեզ խփողը չեմ։ Թող նրանք սպանեն։ Միասին կլինենք։

— Չէ՛, տեղ կա, պետք է ապրել. տեղ կա՝ պետք է մեռնել։ Մի՛ կարծիր թե ամեն ապրել ապրել է։ Այնպես կապրես, որ մահի նման կլինի։ Քեզ բան եմ ասում։ Ես կխփեմ ինձ։ Ասա, որ դու ես խփել։

— Դու որ քեզ խփես, ես էլ ինձ կխփեմ։ Դա մտքիցդ հանի՞։ Ես ընկեր սպանող չեմ։ Գուցե դո՞ւ ես ուզում ինձ սպանել։

— Ոչ... ես չեմ ուզում սպանել։ Ոչ էլ ուզում եմ, որ դու սպանես ինձ։ Մենք ընկերներ ենք, ի՞նչպես կարող էր ուրիշ ժամանակ այսպիսի միտք գալ ուղեղիս մեջ։ Միևնույն է ինձ համար, թե ով ում կսպանի և ո՛վ կսպանվի մեզանից։ Ինձ այստեղ մտահոգում է գործը։ Ես ամաչում եմ, սարսափում եմ հրամանատարի առաջ, հետևանքների առաջ։ Եթե ոչ, իմ կոմերիտական խիղճը հանգիստ է։

Լռությունը շարունակեց մի բոպե նրա մտքերը։

— Լսի՛ր, բան եմ ասում. կարող ենք մեկս ու մեկս կամուրջին հասնել, նամակը տանել։ Բան եմ ասում։ Եկ անասունի պես չմեռնենք, եկ մեռնենք պրոլետարական գործի համար։

Ղոնդին սկսում էր հետզհետե հասկանալ, որ Գրդրլը լուրջ է առաջարկում։ Նա մտածեց այդպես կարելի է անել, բայց, որ ինքը չի անի։

— Շատ լավ. ահա ես եմ ու քեզ խփեցի կամ դու ինձ խփեցիր։ Եթե կհաջողվի գործը, անպատճառ, հաստատ կհաջողվի՝ ես համաձայն եմ։ Իսկ եթե չհաջողվի՝ ի՞նչ խղճով կապրես նրանից հետո։ Դու կանե՞ս։ Ես չեմ անի։

Գրդրլը թուլացավ մի պահ։

— Եթե չհաջողվի՞... Այո, եթե չհաջողվի՝ սարսափելի բան կլինի... — ասաց նա և ընկավ մտատանջության մեջ. բայց հետո թափահարեց իրեն.— ուրեմն այսպես պիտի մեռնե՞նք։ Սատկած շների պես տանեն գցեն աղբանո՞ցը։ Այն հարբած շունը մեզ ծաղրի՞, արհամարհի՞...

Նա սկսեց անցուդարձ անել գոմում։ Լուսնի շողը գոմի հատակի վրա մթնեց։ Վերևից նայում էին։ Այնտեղից քրքիջի ձայն էր գալիս։

Հանկարծ Գրդրլը հարձակվեց Ղոնդու վրա և բռնելով նրա ուսը՝ պինդ ցնցեց ցավեցնելու չափ.

— Դու խելք չունես, դու չես մտածում։ Դու շան պես պիտի սատկես անօգուտ։

Ու մի հարված հասցրեց նրան։

Ղոնդին, որի նյարդերը ծայր աստիճանի թուլացել էին՝ լացակումեց.

— Ի՞նչ ես ուզում ինձանից. անխի՛ղճ, ինչո՞ւ ես խփում ինձ, թո՛ղ հանգիստ մեռնեմ։

Գրդրլը կանգ առավ։ Ծանր էր նրա համար իր վարմունքը։ Նա իր մտքերի և վճռի տաքության մեջ չկարողանալով սկզբում անդրադառնալ իր գործողություններին՝ Ղոնդու ներվային թուլության մեջ ասած խոսքերից սթափվեց։ Ղոնդին խիստ հանդիմանորեն նայեց նրա աչքերին և ասաց.

— Ուզո՞ւմ ես, սպանի՛ր ինձ։ Եթե միտքդ այդ է՝ դո՛ւ խփի ինձ, ես քեզ չեմ խփի։ Վերջին գիշերն է, ընկերություն չես անում, կովում ես հետս... ես մեռնելուց չեմ վախենում... բայց քո արածն արած չի...

Գրդրլն հենվեց մսուրին և սաստիկ մտատանջված նայեց Ղոնդուն։ Ուրեմն ի՞նչ... Ղոնդին ի՞նչպես է հասկանում իր միտքը։ Գուցե նա ենթադրում է մի ստոր բան, թե Գրդրլը ուզում է գուցե իր գլուխն ազատել։ Շատ դառնացավ և կարծես ինքն իրեն դիմելով՝ ասաց.

— Էհ. այստեղ հա՛րց է թե ո՛վ է ում խփում։ Խփելը մի տեսակ չէ։— Հետո մոտեցավ Ղոնդուն, փաթաթվեց և առաջին անգամ իրենց երիտասարդական կյանքում՝ համբուրեց նրան և շոյեց գլուխը։

— Ղոնդի՛ ջան, լա՛վ, թո՛ղ։— Ախր լսի՛ր, սիրելիս, փահլեվանության տեղ չէ. երկրում արյուն է կաթում։ Գործի համար ենք եկել, ոչ թե քաջություն ցույց տալու։ Ախր մտածի՛ր, սա ում գործն է, ինչի՞ ենք եկել։ Սա աշխատավոր ժողովրդի գործն է, ոչ թե իմ ու քո, որ գանք մահվան հետ դժգոհություններ անենք։ Դժվարը գործն է, այստեղ գիտություն, խելք է պետք, դիմացկունություն։ Քաջությունն ի՞նչ։

— Լավ չէ՞ր ֆրոնտում ընկնեինք,— մռմռաց Ղոնդին։

Գրդրլը զսպեց իրեն և հանգիստ, քաղցր տոնով ասաց.

— Վնաս չունի, Ղոնդի ջան, սա էլ ֆրոնտ է։ Էլի դու իմ Ղոնդին ես, ես քո Գրդրլը։ Ի՞նչ անենք, այսպես պատահեց։ Միասին ծնվեցինք, միասին էլ մեռնում ենք մի գործի մեջ։ Ես քեզ կներեմ, դու ինձ։— Դե՝ վերցրու նագանը։ Եթե չվերցնես՝ տես, ահա ես ինքս կխփեմ ինձ։

Այս ասելով Գրդրլը հետ քաշվեց ու ատրճանակը դրեց ճակատին։

— Դե, կանե՛ս ինչ որ խնդրեցի։

Ղոնդին հարձակվեց Գրդրլի վրա և ճիգ արեց ատրճանակը խլելու նրա ձեռից։ Սկսեցին մաքառել։ Նրանք մեկ մտնում էին լուսնի մեջ, մերթ հեռանում անկյունների խավարը։

Գոմի կտուրից ներքև նայեցին՝ երևի կալանավորների քաշքշուկի ձայնը լսելով։ Եվ մաքառողներն իրար հետ պայքարելուց չլսեցին նրանց քրքիջը։

Գրդրլը կանգ առավ։

— Հաստա՞տ չես խփի ինձ...

— Մեր ընկերությունը վկա։

— Ազնի՞վ խոսք...

— Ինձ հո ճանաչում ես։

— Իսկ եթե ես ինքս խփեմ ի՞նձ...

— Ես էլ ինքս կխփեմ ինձ։

— Հաստա՞տ խոսք,— կրկնեց Գրդրլը։

— Հաստա՞տ։ Դու քո կյանքն ես ուզում ազատել։ Ամո՞թ քեզ...

— Դե ա՛ռ, անիծվա՛ծ,— մռնչաց Գրդրլը կատաղի ու խեղդված ձայնով և այնպես կծկվեց ու կնճռոտվեց, որ Ղոնդին զգաց նրա վճռական միտքը։ Ձեռը բնազդաբար դեմ արեց նրա կողմը և կայծակնորեն արագ մտածեց, որ Գրդրլն ուզում է կրակել։ Գերագույն արագ այդ վայրկյանում, ուր կարելի էր մի ամբողջ աշխարհ տեղավորել՝ նա մտածեց, որ Գրդրլն ուզում է իր վրա կրակել։ Մի ինչ-որ կենդանական, մութ, վատ բան զգաց. բայց հաշիվ չտվեց։ Ու մինչ մշուշոտ նայեց Գրդրլին՝ երազում կարծես լսեց մի շատ ուժեղ շոր հազոցի նման թնդյուն։ Ու էլի մինչ կմտածեր, թե ինքը վայր է ընկնում՝ օդի մեջ երերաց Գրդրլը, հետ շրջվեց ինքն իր վրա, ցնցվեց ու մնաց։ Կատա՞կ էր... Ո՛չ, ի՞նչ կատակ։ Արյունը, իրական արյունը մթության մեջ թելի պես կաթվեց Գրդրլի քունքից։ Ղոնդին վրա ընկավ, գրկեց նրա գլուխը և շրթունքները հպեց նրա ճակատին։

— Գրդրլ...—խեղդված մի ձայն հազիվ հանեց նա և մնաց այդ վիճակում։

Դրսից աղմուկ լսվեց։ Ղոնդին հետ քաշվեց դիակից։ Ոտնաձայները մոտեցան դռան։ Դուռը բացվեց և ներս մտավ պահակը։ Նրանից հետու կանգնեցին ուրիշ զինվորներ՝ հրացաններն ուղղած Ղոնդուն։

— Ձեռքերդ վե՛ր, թե չէ կրակում եմ,— հրամայեց պահակը և հրացանը ուղղեց դեպի Ղոնդին։

Այս գործողությունները տեղի էին ունենում ինչ-որ մի շփոթ վիճակում, որովհետև ոչ Ղոնդին էր ուշքի եկել, ոչ էլ պահակն էր գլխի ընկել, թե ինչ աներ այսպիսի մի դեպքում,— նախապես գիտեր գնդապետի խաղը։

Ու մինչ այս վարանման մեջ էին պահակները՝ ներս եկան խմբապետն ու կապիտանը։

— Ծո՞, իրա՞վ զարկեց... — զարմացավ խմբապետը մթան մեջ տեսնելով Գրդրլի դիակը,— այ գազան տղա...

Կապիտանը մոտեցավ Ղոնդուն և սառը խոսեց.

— Ի՞ր համաձայնությամբ կրակեցիր։

— Թող գնդապետը ներս գա՝ հետո։

Այն ժամանակ ներս մտավ գնդապետը։ Նա զվարճացած նայեց Ղոնդուն։

— Ահա՛, կտրի՛ճ բոլշևիկ... Բռա՛վո։ Որ ասում եմ վախկոտ են բոլշևիկները։— Հետո Ղոնդուն մոտենալով օձի պես ֆշշաց.— վախկո՞տ նապաստակ։

— Ձեմ դողում,— ասաց Ղոնդին մռայլ։

— Так,— և դարձավ կապիտանին,—բերեք ձեր ատրճանակը։

Կապիտանը տվեց։

— Հիմա ես քեզ ցո՛ւյց կտամ ընկերին սպանել։ Ասա՛, այս տղան քո մո՞տ ընկերն էր...

— Մոտ ընկերս էր,— պատասխանեց Ղոնդին։

— Ապա ինչո՞ւ սպանեցիր։— Մի՛ դողա...

— Ձեմ դողում։

— Ասա, ինչո՞ւ սպանեցիր ընկերիդ։ Կյանքդ ազատելու համա՞ր։

— Այո, պարոն գնդապետ։

— Ինչո՞ւ չթողիր, որ նա քեզ սպանի։

Ղոնդին չպատասխանեց։

— Հը՛, ինչպե՞ս կթողնեիր, կյանքը քա՞ղցր է։

Հանկարծ գնդապետը ցնցվեց մի նոր մտքից.

— Սպասի՛ր, գուցե նա ինքն իրեն սպանեց։

Լռություն։

— Հը՛,— սպառնալի մոտեցավ գնդապետը և դաժան մտիկ տվեց Ղոնդու աչքերի մեջ,— ինչո՞ւ դու էլ քեզ չսպանեցիր... Չէ՞, կյանքը քաղցր է։

Հանկարծ ատրճանակը բռնեց Ղոնդու ճակատին։

— Դե հիմա տես թե կյանքը ո՞րքան է քաղցր,— բռնեց երկար միջոց և ապա իջեցրեց ու զզվանքով նայեց Ղոնդուն — ապրի՛ր, գնդակն ափսոս է։— Ու դարձավ մյուսներին։

— Ну, к чорту! ոչ ոք ձեռք չտա սրան։ Դուրս գցեցեք այս կեղտոտ անասունին, թող ազատ գնա գյուղ։ Կոպեկի վնաս չկա սրանից։

Աչքով արեց կապիտանին։ Սա հասկացավ գնդապետին և մոտեցավ նրա դեմքին։

— Տար խմբապետի մոտ, խոսեցրեք ու հետո...— աչքով արեց։

— Հը՛մ... այո՛,— շշնջաց կապիտանը սառը նայելով նրա աչքերի մեջ և դարձավ Ղոնդուն,— գնա խմբապետի մոտ, քեզ հետ ուզում է խոսել մի քիչ։ Գնա, մի՛ վախենա։

Խմբապետը բռնեց Ղոնդու ուսը.

— Դե, տղաս, կտեսնե՞ս, որ կյանքն անուշ է, արի՛ երթանք ինծի, ես քեզ կընդունեմ խմբիս մեջ, լավ զինվոր կդառնաս։

Գնդապետը հարբած ծիծաղելով մատը թափ տվեց Ղոնդու վրա.

— Մյուս անգամ զգո՞ւյշ։ Դե՛, մա՛րշ, վախկո՛տ նապաստակ։

Ղոնդին հեռացավ դռնից դուրս։ Գնդապետը նայեց նրա հետևից և ասաց իր շրջապատողներին։

— Տեսա՞ք թատրոնը։

Հռհռաց։ Մյուսները նույնպես ծիծաղեցին։

— Դիակը տարե՛ք, գնա՛նք։

— Ափսոս չէ՞ կյանքը, խե՛նթ։ Երիտասարդ ես, խելացի տղա։ Ապրես, այդպես էլ մյուս դավաճաններուն մեջտեղն վերցուր, կյանքդ ա՛լ ազատե, հոգիդ ա՛լ։ Երթանք, տեսնենք ի՞նչպես ընկար աս փորձանքներուն մեջ, ո՞վ խելքե հանեց։ Ես գիտեի, որ ասանկ պիտի վերջանար։

Այսպիսի հայրական եղանակով խոսում էր խմբապետ Սեյրանը իր տան ճանապարհին՝ կողքով գնացող Ղոնդու հետ։ Քընկոտ էր սակայն նրա խրատը։ Գինին օրորում էր խմբապետին։ Սակայն նա երբեմն գինով գլուխը հետ էր շրջում և ստուգում հետևից ու հեռվից իրեն հետևող զինվորին, որին հրամայել էր «թույլ թողնել սանձը» և գալ «հենց այնպես»։

— Շա՛տ լավ եղավ, շա՛տ լավ եղավ,— շարունակեց Սեյրանը, շատ ուրախացա, որ ազատվեցար։ Շատ կմեղքնայի... պատմե, ջա՛նս, պատմե։

— Կպատմեմ,— ասաց Ղոնդին խլաձայն և սաստիկ լարումից թուքը կպավ քմքին։ Նա ծոծրակով հսկում էր հետևից եկող զինվորին, լռության մեջ չափելով նրա քայլերի ձայնն ու հեռավորությունը։

— Կպատմեմ, շատ բան կա պատմելու,— խոսեց կրկին Ղոնդին մի ձայնով, որ նրան թվում էր, թե դուրս է գալիս ոչ իր, այլ ուրիշի բերանից։

Ու հանկարծ աչքով նշան դրեց զառիվայրի թփուտը, նեղ

կածանը, հետևի սարը։ Հասարակ ու հեշտ թվաց իրեն այն միտքը, որ կայծակեց նրա գլխում։ Նա արդեն «սպանված» էր, ո՛չ միայն բռնված և բանտարկված։ Նա անտարբեր էր դեպի ամեն տեսակ մահ։ Երկյուղն անգամ, որ միշտ մշուշում, մեծացնում է վտանգը, գլուխը կորցնել տալիս՝ երկյուղը չքացել էր իսպառ։ Ահա թե ինչու նա ամենահասարակ սառնասրտությամբ — այդպես էր թվում նրան, լարված էր — եղնիկի պես կծկեց իր մարմինը և զսպանակի պես թռավ դեպի թփուտը։

— Ծ՛, ծո՛...

Խմբապետը բերանաբաց նայեց ու ձեռը տարավ դեպի ատրճանակը։ Զինվորը վազեց Ղոնդու հետևից։ Թփուտից լսվեց նրա հրացանի կրակոցը։

— Ձարկի՞ր,— հարցրեց խմբապետը՝ սպասելով ուրախալի վստահացման։

Պատասխան չեղավ։ Միայն ավելի հեռվից լսվեցին մի քանի կրակոցներ ևս։

Հուսահատ էին այդ ձայները։ Նրանք ամենից ավելի պարզ ցույց էին տալիս, որ գործը տանուլ տրվեց...

***

Ղոնդին սաստիկ հոգնած փախավ, հեռացավ գյուղից։ Նա անց էր կացրել մի սարսափելի երկար և խորը գիշեր։ Նրան թվում էր, թե մի տարի քաշեց այդ գիշերը։ Եվ մարմնի հոգնածությունը, որ բթացել էր հոգեկան տագնապալի հուզումներից՝ զգալ տվեց նրան իր գոյությունը։ Ղոնդին հեռացավ գյուղից և որովհետև լույսը բացվել էր, անհնարին էր մի բան ձեռնարկել՝ նա մտավ անտառը և խորանալով մի ապահով տեղ՝ պառկեց։ Արճիճի պես ծանր քունը նրան ընկղմեցրեց անէության մեջ։ Ծանր էր սակայն այդ քունը։ Շուտ-շուտ վեր էր թռչում մի որևէ խեղդող մղձավանջից։ Կեսօրին մոտ նա հանկարծ զարթնեց, կարծես մեկը նրան դրդեց։

Ժամանակն էր։ Նա վեր կացավ և աչքերը տրորելով ճանապարհ ընկավ։ Շտապում էր, ուստի սկսեց արագ ընթանալ։ Բայց ի՞նչպես պետք էր անել՝ չգիտեր, թեև գիտեր, թե ինչ պետք է աներ... Արդեն սկսում էր գործն ուշանալ։ Նա զրկվեց օգնականից։ Հեշտ չէր գինամիտ դնելը։ Պետք էր ամեն բոպե հսկել, թե

Արդյոք մարդ չի՞ մոտենում կամուրջին, նշաններ տալ, սկսել գործը, դադարեցնել, թաքնվել... Ի՞նչպես աներ մեն-մենակ։

Սակայն կամուրջի պայթեցնելու գործը հիմա արդեն բարդվեց ավելի սոսկալի մի հոգեկան բեռով։ Ընկերոջ մահը, որ մրգաձավանջի պես գիշերն եկավ ու խեղդեց նրա զգացումները՝ այժմ արդեն սկսում էր լիովին պատկերանալ նրա երևակայության մեջ իր սարսափելի պատկերով։ Նա շատ ավելի հեշտ էր պատկերացնում այդ գործը։ Եվ հիմա, երբ արդեն դա կատարված փաստ էր՝ նոր միայն նրա համար պարզվեցին բաներ, որ առաջ չէր կարող զգալ։

Հանկարծ ցնցվեց։ Հիշեց մի մանրամասնություն այն վայրկյանից, երբ Գրդելը ընկավ։ Հիշեց,— և ի՞նչպես նոր հիշեց նա,— հիշեց, որ երբ Գրդելը գոչեց՝ «ա՜ռ անիծվա՜ծ» ու հենց այն է՝ կրակում էր՝ ինքը՝ Ղոնդին մտածեց, որ Գրդելն իր սեփական կյանքն է ազատում, որ նա՝ այդ քայլը, միայն գործի հաջողության համար քայլ չէր, որ դա վերջին հաշվով եսականություն էր և թուլամորթություն։ Այո, մի վայրկյան էր ժամանակը, բայց հույժ լարված վիճակի մի վայրկյանում չէ՞ որ մարդ հավիտենականություն է ապրում։ Ահա դա էր այն կենդանական մութ, վատ բանը, որ անցավ նրա մտքով այն րոպեին։ Հիշեց հիմա, հիմա գիտակցեց։ Ղոնդին սուր խայթ զգաց սրտի մեջ։ Ընկերը, իր սիրելի ընկերը հանդիմանական տխուր աչքերով նայեց իրեն։ Հիմա հիշեց, որ Գրդելի հայացքը այն վայրկյանին դաժան չէր, որ նրա մեջ մի անսահման ցավ կար։

Եվ հիմա ընկերը, սիրելի ընկերն իբրև մի ուրիշ մարդ, խորը մարդ, բոլորովին այլ հոգով ու մտքով նայում էր նրան։ Այդ հայացքը երևում էր ծառերի բներում, թփերի, քարերի վրա։ Ուր գնում էր Ղոնդին, ուր դարձնում էր աչքերը՝ այդ աչքերը նայում էին իրեն։ Եվ նա, որ կարծում էր, թե եթե ընկերն իրեն սպանի՝ այն վայրկյանին գերագույն ծանր բաներ պիտի զգար ինքը՝ նոր հասկացավ, որ հիմա սկսվեց մի նոր դժվարություն, որ պետք էր հաղթահարել։ Արդյոք ինքը՝ Ղոնդին, չէ՞ր պատճառը, որ Գրդելն ոչնչացվեց։ Իհարկե ոչ։ Բայց արտաքուստ այդ այդպես էր։ Ղոնդին կարող էր ինքն առաջ ընկնել, բայց չընկավ, իրեն կանխեց ընկերը և խզճի խայթերը լցրեց իր հոգու մեջ։ Օ՜, հավիտյան կմնան այդ խայթերը։ Ի՞նչ անել, ի՞նչ անել... Հոգեկան խոովա-

հույզ վիճակում նա փախած եղնիկի պես ապավեն էր միայն որոնում։ Ի՞նչ էր այդ ապավենը։

Նա զգում էր, որ եթե իր պարտքը կատարի լիովին՝ հոգեկան տանջանքները կթեթևանան։ Այո՜, այո՜, պարտքը կատարե՜լ, թեկուզ մեռնե՜լ իսկույն։ Դա է ելքը։ Չէ՞ որ այդ պարտականության համար էր, որ ձեռ բարձրացրեց ընկերն իր կյանքի վրա։

Այս նոր խնդիրը, խղճի տանջանքներից ազատվելու խնդիրը, բռնեց նախկին խնդրի տեղը — այն, որ ձգտում էր կալանքից ազատվել։ Հիշեց, որ այն գիշեր նա հոգեկան մշուշի մեջ էր։ Ապրել-մեռնելու։ Չգիտեր ո՜րն ընտրեր, որի՜ն կառչեր։ Անտարբերության մեղկարար մի թույն թմրեցնում էր նրա ուղեղը, և նա անձնատուր էր դրան այն գիշեր։ Մինչ՝ պետք էր վճիռ կայացնել և շտապ, ինչպես իր հերոս ընկերը։ Ընկերը վճռեց մեռնել, միևնույն է թե ով,— և նա մեռավ ինքը։ Երկար չմտածեց։ Իսկ հիմա ինքը մտածում է, և մտածում է երկար, և չի կամենում մեռնել։ Գիտակցաբար չի կամենում։ Իր ընկերոջ պես գիտակցաբար, որ այդպես էլ մեռավ։ Ընկերը պետք է մեռներ, այդպես էր այնժամ րոպեն։ Հիմա ինքը պիտի ապրի — այդպես է րոպեն հիմա։

Պետք է ապրե՜լ, ամեն կերպ ապրել և գործը կատարել։ Կատարել ընկերոջ նվիրական գործը։ Ի՞նչ պիտի անի նա իր ընկերոջ հիշատակի առջև՝ եթե նրա այդ ավանդը տեղ չհասցնի սրբությամբ։ Դա մի նպատակ է, որին պետք է հասնել՝ խղճի կծու խայթերը մեղմացնելու համար։

Եվ նա սկսեց մոլեգնաբար դիմել այդ նպատակին։

Նա գնում էր ծանոթ անտառով։ Դա իրենց գյուղի անտառն էր։ Նույնն էին ծառերը, արահետները, կարծես չի եկել և անցել համաշխարհային մեծ աղետը — պատերազմը, կարծես այժմ մոտակա լեռներում ու ձորերում իրար դեմ չեն կանգնած երկու բանակ, չեն ձգտում ոչնչացնել իրար։ Ահա այն ծառը, որի տակ ինքն ու Գրդելը պատանի օրերին պատսպարվեցին անձրևից, նա ցնցվեց։ Ահա առարկան ավելի շոշափելի հետ շրջեց ժամանակի անիվը և վերադարձրեց անցած օրերի կյանքը, մտքերը, խաղերը, իրեն՝ Գրդելին երազկոտ ու անձնվեր։

Ահա խոշոր չեչաքարը, որի փոսի անձրևաջրից խմել են ինքն ու Գրդելը։

Ահա և փոքր քարայրը, ուր նրանք գողացած կարտոֆիլ էին խորովում։

Արահետին խաչաձևեց մի շավիղ, որ դեպի սարերն էր գնում։ Դա իսկապես բարակ ճամփա էր, որի եզրերով մարդիկ քայլել էին և դրել իրենց ոտների կնիքը։

Վերևից մի տղա էր իջնում։ Դա անշուշտ իրենց գյուղի տղաներից է։

— Ո՞րտեղից ես գալիս,— հարցրեց Ղոնդին մեղմաձայն։

— Սարից։

— Արտակին ճանաչո՞ւմ ես։

— Արտակի՞ն,— հարցրեց տղան աչքերը խելացի կերպով շուռ,— չեմ ճանաչում։

— Սաքանենց Արտակին չե՞ս ճանաչում, որ ականջն էլ կտրած է։

— Հա, հա, Արտոյին, ճանաչում եմ։

— Այ, երբ կգնաս գյուղ, նրան գտիր և ասա, որ իրենց հորթը ձորաբերանին մոլորվել է, թող գա տանի։

Տղան քննող հայացքով նայեց Ղոնդուն և ասաց.

— Լա՛վ։

Բայց էլի նայեց նրան.

— Դու ո՞ւր ես գնում։

— Ես գնում եմ իմ գործին, մորուտը։

Տղան կրկին կասկածով նայեց Ղոնդուն ու լուռ գնաց։

— Կասես, հը՞։

— Կասեմ, ինչի՞ չեմ ասի։

Ղոնդին մի փոքր դանդաղեցնելով իր քայլերը՝ գնաց տղայի հեռացած կածանով։ Հասնելով մի բացատի, նա մտավ թփերի մեջ ու պառկեց։ Նա մտատանջվում էր թե արդյոք տղան կկասարի՞ հանձնարարությունը։

Հոսում էր ժամանակը։ Հեղվում էր ժամանակը, ինչպես արյունը թանկագին... Բայց նա ուրիշ հնար չուներ — ստիպված էր պատահական ու կասկածելի միջոցներով գործել։ Այն էլ մի գործում, որ այս րոպեիս Գրդրլի ինքնասպանումից հետո պահանջում էր ամենահաստատ ձեռնարկումներ...

Օրը թեքվում էր, և Արտակը չկար։ Արդյոք հայտնե՞լ է, արդյոք Արտակը հավատացե՞լ է, արդյոք ուրիշները չե՞ն իմացել

և այժմ բռնել՝ անտառները որոնելու և բռնելու այդ կասկածելի օտարականին։

Անտառի կածանի ուղղությամբ, որով գնացել էր տղան՝ մի ստվեր սկսեց մերթ խառնվել ծառերի բներին և մերթ հայտնվել։ Ղոնդին նայեց այն կողմ և լարվեց։ Կարող էր Արտակի տեղ հայտնվել վտանգավոր մեկ ուրիշը, կարող էր և Արտակը լինել։

Այո, Արտակն էր, այն տղայի հետ։ Նրանք գալիս էին շտապով։ Արտակի շարժումները, հուզումնալի աչքերը և խուզարկու հայացքը ուրիշ բան էր գուշակել տալիս։ Նա ուրեմն մի բան հասկացել էր... Բայց ինչո՞ւ էր տղային հետը բերել։ Հասնելով բացատը նա արագ անցավ նրա միջով։ Ի՞նչպես իմաց տալ։ Նրանք խոսում էին, բայց ոչինչ չէր լսվում։ Բայց և մի բան պարզ է, որ նրանք գնում էին ձորի կողմը։

Ղոնդին վեր կացավ և սկսեց հետևել նրանց։ Երկար ժամանակ նա գնում էր նրանց հետևից։ Մի տեղ Արտակն ու տղան կանգ առան և սկսեցին խոսել և նայել շորս կողմ։ Ղոնդին շատ էր ցանկանում, որ տղան հեռանար, բայց հակառակի պես նա կպել էր Արտակին։ Ղոնդին մոտեցավ նրանց՝ թաքնվելով թփերի մեջ։ Արտակը պարզապես սպասում էր, և այդ ցույց էր տալիս։ Մի անգամ միայն սարից էր թե անտառից մարդիկ էին մոտենում՝ Ղոնդին նկատեց, որ Արտակը տղային մղեց դեպի թփերը՝ հասկացնելով որ թաքնվեն։ Եվ իրոք՝ նրանք թաքնվեցին։ Գյուղացիներն անցան։ Նրանք կրկին դուրս եկան թփերից։ Ղոնդու համար պարզվեց մի բան, որ տղան վստահելի է, և Արտակը նրա հետ գաղտնապահություն է անում։ Սակայն զգուշացավ և սպասեց։ Այդ ժամանակ Արտակը սուլեց։ Պարզ էր՝ կանչում էր...

Ղոնդին ռիսկ չարեց դուրս գալ։ Նա զայրույթից ուտում էր իրեն և զգում էր, որ եթե հրացանը մոտը լիներ՝ երևի կկրակեր տղայի վրա։ Շատ էլ վստահելի էր, բայց ո՞վ գիտեր... Ղոնդին հիվանդագին զգույշ էր։ Եվ դա մի կողմից տանջում էր նրան, մյուս կողմից ուշացնում, հանցավոր կերպով ուշացնում էր գործը։ Ժամանակն անցնում էր... իսկ Արտակը կարող էր հեռանալ։ Մի փոքր հույս կար միայն, և դա այն էր, որ Արտակը հասկացել էր։ Բայց նա կարող էր այնպես հասկանալ, թե գործը շտապով չի և առհասարակ կարող է կասկածել թե գուցե և ոչ մի խորհրդավոր մարդ էլ չի եղել իրենց հորթի մասին հոգացող պա-

տահական մարդը։ Կարող էր Արտակն ընկերանալ անցորդների հետ և գյուղ վերադառնալ։ Այն ժամանակ անհնար կլիներ նրան մեկուսացնել։ Ղոնդին շատ էր հանդգնել իր կյանքում և այս անգամ էլ նրա համար դժվար չէր ռիսկ անել և մոտենալ Արտակին։ Բայց նա մտադրվելով անպատճառ հաջող գլուխ բերել գործը, ուզում էր միանգամայն լրիվ զգուշություն բանեցնել։

Հանկարծ խնդիրը շատ հեշտ լուծվեց։ Արտակը կամ գլխի ընկավ, որ Ղոնդին չի ուզում հայտնվել կամ այդտեղ չի, տղային ուղարկեց ձորի ուղղությամբ։ Տղան հեռացավ։ Այն ժամանակ Ղոնդին զգույշ սողալով թփերի միջով մոտեցավ Արտակին և օձի պես գլուխն հանեց տերևների միջից, նայեց չորս կողմ։ Վստահելով որ ոչ ոք չի գալիս՝ դուրս վազեց թփերից և գնաց դեպի Արտակը։

Արտակը, որ տասնևինը տարեկան կոմերիտական էր, թե ինչպես էր ձեռք բերել որոշ զգուշավորություն և գործնականություն՝ դա հասկանալի չէր Ղոնդուն, բայց նա դուր եկավ նրան։ Նա գիտեր միայն մի բան, երբ վճռեց կանչել նրան, որ նա Գրդելի եղբայրն է։ Բայց նա չգիտեր նրա կոմերիտական լինելը։

Մոտենալով Արտակին՝ նա ուզում էր նախ հարցնել թե ո՞վ է այն տղան, բայց Արտակը ավելի շուտ զգաց այդ հանգամանքը և ասաց.

— Սա Մանուկի տղան է։

— Շատ էլ Մանուկի տղան է, ո՞ւր ես բերել հետդ։

— Որ հեշտ լինի քեզ որոնելը։

Ղոնդին մտածեց, որ խելքի մոտիկ բան էր նաև այդ, բայց ժամանակ չկար, ուստի և սկսեց գլխավոր գործից խոսել։

— Մանուկը ո՞ւրտեղ է։

— Գյուղում։

— Անմիջապես գնա և կանչիր, ասա թող հրացաններ վերցնի։

— Մեկը նա կվերցնի, մյուսը՝ ես։

— Դու է՞լ ես գալիս... — մտածեց Ղոնդին։

— Անպատճառ։

— Դե, լավ, հրացանը բեր, հետո կվերադառնաս։ Այդ տղային կորցրու։

— Լավ։

— Դե, գնա, շուտ։

Արտակը վազեցրեց.

— Բայց չասիր թե Գրդելը...

Ղոնդին դաժանորեն ընդհատեց.

— Գնա՛, դրա ժամանակը չէ։

Արտակն հնազանդվեց։ Ղոնդին հեռացավ և ձեռքով ցույց տվեց տեղը.

— Ահա այստեղ կլինեմ։

— Լավ։

Ղոնդին թաքնվեց։ Արտակը գնաց տղայի ուղղությամբ նրան որոնելու և վերադառնալու գյուղ։

* * *

Խավարի մեջ երեք ստվերներ սողոսկում էին։ Նրանք սահում էին շտապ և անհանգիստ։ Աստղալույս երկինքը արևելքում կարծես գունատվում էր։ Հորիզոնը հղի էր լուսնով։ Մի ժամ հետո թերևս լիալիր դեմքը պիտի հաներ նա լեռան անտառի կապարճի միջից։

— Էս լուսնյակն ո՞վ շինեց, քանդվի դրա շինողի տունը,— մռմռաց ստվերներից մեկը մյուսին, որ հավասարվեց նրան ձորափի տափակ սեղանի վրա։

— Հնար չկա, պիտի վերջացնենք,— ասաց մյուս ստվերը և սպասեց երրորդին, որ գա միանա իրենց։ Սա մոտեցավ։

— Լսի՛ր, Արտա՛կ։ Դու լավ ծանոթ ես այս տեղերին։ Դու կնայես աջ կողմից կամուրջին մոտեցողներին, իսկ Մանուկը՝ ձախ, անտառի կողմից։ Ես մի դինամիտը գտնեմ։

Նրանք մոտեցան մի քարաբլուրի և կանգ առան։

— Ահա, այստեղ է,— ասաց Ղոնդին և ուշադիր կերպով տնտղեց դինամիտի տեղը։ Կասկածելի ոչինչ չգտավ։ Ապա նայեց չորս կողմը և ասաց,— ես դինամիտը կտանեմ, իսկ դուք հսկեցեք։ Բոլոր նշանները — ինչպես ցույց տվի։ Ինչքան կարելի է՝ մի՛ կրակեք։

Մանուկը նստեց։ Նա քառասունի մոտ, մազերով երեսը ծածկած տղամարդ էր։ Հին որսորդ էր և վերջերս բոլշևիկյան կազմակերպության անդամ։ Նա ըրստեց իր տրեխի կապիչները, նայեց

փամփուշտակալին, քաշեց փակաղակը, պահունակը դրեց մեջը և փակեց։

— Տենամ քոնը ոնց ա,— դարձավ Արտակին։

Արտակը լցրել էր իր հրացանը, բայց անխոս հնազանդվեց Մանուկին, որը մինչև անձամբ չստուգեր՝ չէր սկսի գործը։

Ղոնդին, որ այդ գիտեր՝ նույնպես ձայն չհանեց, թեև Մանուկը նրա հրամանատարության տակ էր։ Երբ Ղոնդին կրկնեց իր հրամանը չկրակելու մասին՝ Մանուկը մռայլ պատասխանեց.

— Գիտում եմ։

Մանուկն ու Արտակը իջան ձորը։ Իսկ Ղոնդին դինամիտը տարավ նրանց հետևից։ Նրանք զգույշ իջնում էին, երբեմն կանգնելով և ականջ դնելով։ Լուռ էր. ըստ երևույթին մարդ չէր շարժվում ներքև ճանապարհին, որը շատ թույլ երևում էր։ Կամուրջը ևս ազատ էր։ Նրանք իջան մինչև ճանապարհը և մեծ քարի հետև թաքնված սպասեցին։ Ղոնդին տեղ որոնեց դինամիտը թաքցնելու համար՝ եթե դրա հանկարծակի կարիքը չզգացվեր։

Մանուկը գնաց դեպի աջ, իսկ Արտակը դեպի ձախ։ Ղոնդին սպասեց, գնաց ձորի պռունկը, նայեց կամուրջին։ Դժվարությունը նրանումն էր, որ կամուրջը գտնվում էր ճամփի կեռմանի վրա և լայն տեսադաշտ չուներ։ Միշտ պետք է թե աջից և թե ձախից լուր բերեին թե մարդ է մոտենում։ Ղոնդին կարող էր միայն այն ժամանակ իջնել կամուրջը և աշխատել, երբ այս ու այն կողմից մոտեցողները շատ հեռու էին։ Նա պետք է աշխատեր մեջեմեջ, որսալով ազատ մոմենտները և շարունակ վերև բարձրանալով, միանգամայն ապահով լինելու համար, որովհետև ճամփորդներից որևէ մեկը կարող էր ո՞վ գիտե՝ իջնել կամուրջի տակը։ Կամ կարող էր բոպե առ բոպե վրա հասնել որևէ պահակախումբ կամուրջին հսկելու։ Կռիվ էր, օր-օրի, ժամ-ժամի. մարդիկ նոր զգուշական միջոցներ են մտածում...

Հանկարծ աջ կողմից եկավ Արտակը։ Ղոնդին նայեց.

— Մա՞րդ կա...

— Ճամփորդներ են։

— Ի՞նչ գիտես։ Զինվա՞ծ են։

— Ոչ։

— Լավ, սպասեք՝ ոտը հանդարտվի։ Հիմի ես քեզ ասեմ։ Եթե անհաջող վերջացավ՝ քեզ մի բան կասեմ գուցե... մի տեղեկություն... կտանես մերոնց։ Բայց եթե հաջողվի, պայթյունը լսես՝ իսկույն անհետացիր դեպի գյուղ։

Արտակը նայեց Ղոնդու մտախոհ դեմքին.

— Դու գյուղ չե՞ս գալու։

— Ոչ։ Ուրիշ տեղ։

— Գ՛ըդըլի մո՞տ։

Ղոնդին չպատասխանեց։

— Դու էլի չասիր թե ո՞րտեղ է Գըդըլը։

Ղոնդին չպատասխանեց։

— Հը՞... սպանել են...

Եվ Արտակը սրտատրոփ նայեց Ղոնդու տխուր դեմքին։ Ղոնդին բերանից թափեց ակամա և անշեշտ.

— Ոչ...

Արտակին դուր չէր գալիս այդ ծածկամտությունը։

— Գըդըլն իմ ախպերն է, ի՞նչ, զինվորական գաղտնիք է, որ չի կարելի իմանալ թե որտեղ է։

— Կիմանաս, դրա ժամանակը կգա։

— Լսիր, Ղոնդի, ես կգամ հետդ։

— Ոչ, դու ինձ հետ չես գա. կգնաս գյո՛ւղ... — և հառաչեց թեթև,— իմ ճամփան ուրիշ է։

Եվ սկսեց ականջ դնել։ Անհանգստացավ։ Արտակը մի բան հիշելով քթի տակին ծիծաղեց։

— Գյուղում ծիծաղում են։

— Ո՞վ, ինչո՞ւ,— մեքենայաբար հարցրեց Ղոնդին։

— Գյուղացիները։ Էլ էնքան բաներ են պատմում քո և Գըդըլի արարքներից։ Պատմում են ու ծիծաղում։

— Լավ են անում, որ ծիծաղում են։

Արտակը նայեց կրկին նրա տխուր դեմքին։

— Քեֆդ ինչո՞ւ է կոտրած։

— Կոտրած չի...

— Ես իմանում եմ — Գըդըլը հետդ չի։ Առանց նրան տխուր ես։ Գիտե՞ս ինչ, Ղոնդի, ես միշտ ասել եմ, որ երկուսդ կամ միասին պիտի ապրեք մինչև ծերությունը կամ միասին մեռնեք։ Դուք մեկդ առանց մյուսի չեք կարող ապրել։

Ղոնդին խոցվեց.

— Լսիր, այդ բաները թող։ Իմացա՞ր, ինչ ասացի քեզ։ Դու կատարիր՝ ինչ որ քեզ կարգադրեցի։

— Դե որ չես ուզում, ի՞նչ անեմ։

Զախից երևաց Մանուկը.

— Հա, հրետանի՞ է,— վախեցած շշնջաց Ղոնդին։

— Հրետանի չի երևում անիծածը։ Սայլեր են։ Բան չի հասկացվում։

— Դատա՞րկ են։

— Բեռնած են՝ զահրումարը։

— Պարզ է, ֆրոնտ են քշում։ Իմացիր՝ ինչ բեռ է։

— Գան հասնեն անտառ։ Դեռ երկար կքաշի։

— Դու ասա պահակ չբերեն կամուրջի վրա։ Հը՞, ի՞նչպես անենք, ուշանո՞ւմ ենք...

— Էսպես հա՛ կգան ու կգնան։ Գնանք դնենք դինամիտը։

— Մեծ ռիսկ է։ Պետք է լավ մտածենք։ Կամուրջը պետք է անպայման պայթեցնել,— հետո դարձավ Արտակին... — Արտակ, դու գնա պոստդ։ Զգույշ, Արտակ, շա՛տ, շա՛տ զգույշ։ Կրկնում եմ։

— Զգույշ որ լինեի՝ չէի ծնվի,— ծիծաղելով ասաց Արտակը,— տնաշեն, մի կյանք չի՞։ Երկու հո չի՞։

— Հիմարություններ դուրս մի տա։ Սա այն տեղն է, որ կյանքը շատ թանկ է և քոնը չէ։

Արտակը անհոգ թափ տվեց ձեռը.

— Կոիվ է, կխփեն, թանկ չեն հարցնի։

Ղոնդին գաղազեց անսպասելի թե Արտակի և թե Մանուկի համար.

— Զգույշ, ասում եմ քեզ, լակո՛տ... թե չէ՝ հետ դառիր, գնա տուն։

Արտակն անխոս հեռացավ իր պոստի կողմը. Մանուկը նրստեց.

— Փոխվել ես, մեր տղա։ Ա՛յ, ինչ բան է պատերազմը։ Քանի Գրդելի հետ էիր՝ օրը հազար մահի հետ գլուխ էիր ջարդում։ Հիմի՝ ինչպես եմ տեսնում՝ շատ ես զգույշ։

— Վախենում եմ,— ժպտաց Ղոնդին։

— Սուտ չի։ Աչքդ մի բանում վախեցած կլի։ Մի զինվոր էնպես բան էր տեսել կռվում, որ չէր կարում պատմի։ Էն է՝ սկսում էր թե չէ, մենակ դողում էր ու սփրթնում։ «Ա՛յ տղա, կամ

սպանել են կամ տանջել, պատմի՛, ի՞նչ կա»։ Չէ։ Լեզուն կապվում էր։ Երևի կռվում մարդու հետ գործ ունենալը դժար է։

Ղոնդին քմծիծաղ տվեց.

— Հը՞, դժվա՞ր... գործի մեծությունը որ չլիներ՝ ո՞վ կդիմանար — ... դեպքեր են պատահում...

Սկսեց ականջ դնել.

— Հը՞, տեսնես ի՞նչ եղավ Արտակը...

— Բան եմ ասում, խոխին ո՞ւր բերիր,— ասաց Մանուկը ծանրը նստելով։

— Գործը պահանջում էր... ուրիշ ի՞նչ մարդ կարող էի վերցրնել գյուղից։ Ա՛յ տղա,— խոսքը փոխեց,— ի՞նչպես պիտի լինի հիմա... ի՞նչպես պիտի անենք։

— Կանենք, վախիլ մի,— հանգիստ ու հաստատ եղանակով ասաց Մանուկը։— Շատ ես քեզ ուտում։ Տնաշեն, հո ամբողջ կռիվը մի կամուրջի գլխին չի։

— Իմ գլխին է։

— Ինչո՞ւ։

Լռեց։ Զգաց, որ խոսքերով ավելի է հուրհրում ներքին կրակը, բայց չէր կարողանում զսպել իրեն։

Ու հրացանը թափով նետեց գետին։

Մանուկն էլ չէր հասկանում Ղոնդու հոգեկան վիճակը։

Խնդրի մարտական և տեխնիկական կողմը Մանուկի համար պարզ էր և հեշտ։ Նա սարի մարդ էր և վտանգի սովոր. ուստի և զարմանում էր, թե ինչո՞ւ են այսքան անհանգիստ մարդուն ուղարկել այս գործը կատարելու։

— Քեզ հետ եմ, գնանք դինամիտը դնենք։ Թե չէ՝ հրես լուսնակը դուրս է գալիս։

Արտակն արագ վազեց ձորի կողմից։

— Հա՞...

— Զինվորներ եկան կամուրջի վրա։

— Պահակներ կլինեն,— հուսահատ շեշտով ասաց Ղոնդին։

— Ախր, քեզ ասում էի,— հանդիմանեց մեղմ ու հանգիստ Մանուկը,— ինչի՞ հակառակեցիր։ Ուշացանք։

Ղոնդին գլուխը բռնեց։

— Պահակնե՛ր կլինեն։ Տեսար ինչ եղավ։ Լսեցե՛ք,— դարձավ նա Արտակին ու Մանուկին,— ժամանակ չկա... հիմա ամեն ինչ կարող է պատահել... բայց էլի... ի՞նչ եմ ասում, Արտակ, գնա... չէ, սպասիր, ես գնամ։

Ու վազեց դեպի ձորը։

— Մինչև գործը գլուխ գա՝ սա իրեն կկորցնի։ Ի՞նչ է պատահել սրան։

— Գործ են հանձնել... երեխա ես,— ասաց Մանուկը և գրպանից թուփունի քիսան հանեց, սկսեց չիբուխը լցնել։ Սակայն հիշեց, որ չի կարելի ծխել, հետո դրեց գրպանը։

Ղոնդին հետ դարձավ։ Նա այլայլված էր։

— Չորս հոգի են,— ասաց նա,— կարող են հետո ավելանալ։ Լսեցեք, գուցե կարելի է հենց... Մեծ ռիսկ է, բայց պատրաստվեցեք։

— Ռիսկը ո՞րն է,— ասաց Արտակը,— մեռանք՝ մեռանք։

— Ի՞նչ անեմ... մեռնել կա, որ մեռնելն էլ քիչ չէ։ Լսի՛ր, Արտակ... Գիտե՞ս... Գրդելն սպանված է...

Արտակը մոտ ցատկեց ուղիղ նրա աչքերի դեմ։

— Ի՞նչ, Գրդելը՞... ո՞վ է սպանել...

— Մեկը նրան սպանեց։

— Մաուզերի՞ստ։

— Ոչ... մերոնցից։

— Ինչո՞ւ։

— Գործի համար... խոսք էր տվել կատարել...

Արտակը բռնեց Ղոնդու օձիքից.

— Ասա, ո՞վ էր... ասա, ո՞վ էր։

Ղոնդին հետ մղեց նրան.

— Սպասիր, դրա ժամանակը չէ,— և ականջ դնելով ձորի

կողմից լսվող չխկոցներին՝ ասաց,— սպասեցե՛ք մի բոպե, էլի մի անգամ նայեմ ու սկսենք։

Ու թռավ դեպի ձորի կողմը։

Արտակը նայեց և գլուխը ձեռների մեջ առած սկսեց մղկտալ.

— Ախր, տեսնում եմ, աչքերից երևում էր...

Բայց նրան սթափեցրեց Մանուկի չոր ձայնը.

— Վեր կա՛ց, վերցրու հրացանը։

Արագ նշաններ անելով վերադարձավ Ղոնդին.

— Գնացին...

— Ահա՛, հա՞... չա՛վ է,— խուլ մռնչաց Մանուկը և վեր թռավ հրացանը խլելով։

Ղոնդին արագ կարգադրեց.

— Դե, էլ հնար չկա։ Լուսինը դուրս է գալու։ Դուք դիրքերից պահեցեք ճանապարհը,— ես կդնեմ դինամիտը։ Ամեն անցորդի մի կրակեք։ Դե...

Ու արագ վերցրեց դինամիտը։ Մանուկն ու Արտակը օգնեցին նրան, տանելով գործիքները։ Նրանք հրացանները կոնատակերին և գործիքները ձեռներին շտապով իջան ձորը։

Հասնելով կամուրջին, Ղոնդին ու արտակը սկսեցին դինամիտը դնելու աշխատանքը, իսկ Մանուկը հսկում էր։ Ժամանակ չկար, պետք էր շտապել։ Բայց երկար տևեց աշխատանքը, քարը դիմադրում էր։ Ղոնդին երազի մեջ էր. նա ամբողջովին դառել էր բնազդ, որը լսում է հազարավոր քայլերի ձայն թեկուզ հինգ վերստից և տեսնում է մարդկանց՝ ժայռի հետև։

— Չէ՞...

— Հիմա, Մանո՛ւկ, հիմա...

Ու Ղոնդին ծակում էր քարը։ Մեկը վերջացրեց, անցավ մյուսին։ Հիմա արդեն Մանուկն էլ էր անհանգստանում։ Գործը գլուխ էր գալիս, բայց ո՞վ է իմանում։ Հանկարծ վերջին մոմենտին...

— Դրի, պատրաստ է։ Վառում եմ, հեռացեք։ Մանուկն ու Արտակը վազեցին ձորափը, եկած ճանապարհով։

Ղոնդին պատրույգները վառեց ու մի անգամ նայեց։ Լավ վառվում էին։ Այլևս չէր կարելի սպասել, կարող էր պայթել։

Բայց նա զգում էր մի քաղցր անտարբերություն։ Հիմա միևնույն է, թող ինքն էլ կործանվի կամուրջի հետ։

Գործը կատարված է, հազարավոր կյանքերի գործը, և գլխավորն է՝ Գրդելի կյանքը զուր չանցավ։

Նա դանդաղ բարձրանում էր ձորից և շուտ-շուտ հետ նայում։ Ահա՛, հիմա՛... հիմա՛...

Նա անշուշտ կպայթի... Արդեն ձորափին էր, որ բոցն ու ծուխը ցայտեցին և ահռելի թնդյունը պոռթկաց կամուրջի վրա։ Ձորն արձագանքեց ու կրկնեց հեռուն ու հեռուն։ Հետո տիրեց հաճելի խաղաղություն։

— Հիմա պետք է լուրը տանե՛լ,— ասաց Մանուկին ու Արտակին սաստիկ անհանգիստ։

Նրանք չհասկացան, թե ինչո՞ւ անհանգստացավ Ղոնդին։

— Դե՛, դեպի սա՛ը,— ուրախ հրամայեց Ղոնդին ու թռավ առաջ։

— Դե հիմա նամա՛կը, շո՛ւտ... — ասաց Ղոնդին մի նոր, ավելի տագնապալի մտատանջությամբ։ Նրան հիմա պաշարեց ավելի մեծ երկյուղ, որ պայթյունից առաջ լավ չէր զգում —հանկարծ իրեն բան պատահի և լուրը չհասցնի հրամանատարին։ Բայց միաժամանակ նա հոգու խորքում շոշափում էր մի այլ բան... Դա ընկերոջ ուրվականն էր.— ի՞նչ պիտի աներ Ղոնդին իր ընկերոջ հիշատակի առջև՝ եթե նրա գործը չավարտեր սրբությամբ։

— Դեպի սարը,— հրամայեց նա և թռավ առաջ։

***

Լեռնային կածաններով կրակ կտրած գնում է Ղոնդին Մանուկի և Արտակի հետ։ Նա չէր կարողանում մտքերը կարգի բերել։ Կյանքի անիվը գուրս էր թռել ու սլացքով գլորվում առաջ։

Լուսինը փայլատակում էր երկնքում։ Նրա աչքերը ուռել էին և այտերը պայթում և դունատ ու մեռած նայում էր ներքև։

Լեռնալանջը, որով գնում էին երեքը՝ քարքարոտ էր ու դարուփոս։ Բայց ամայի էր, կարելի էր անտես անցկենալ։ Չէին խոսում։ Մտքերը փոթորկում էին նրանց գլխում։ Նրանք մոտենում էին Վերնաշեն գյուղին, որի ներքև լեռնադաշտում սևին էր տալիս

անտառի պես։ Շուտով նրանք պիտի իջնեին մի ձոր, որից այն կողմ լեռնադաշտն էր։

Դարձյալ նույն տագնապալի հապճեպը, դարձյալ նույն ժամանակի սղությունը։ Ղոնդին պետք է մտներ գյուղ, գտներ հրամանատարի անվանած Վարդանին և հանձներ նամակը։

Եվ հիմա նրա միտքն այրում էր այդ գործի մասը։ Կամուրջի հետ կար նաև կարևոր նամակ, որ պետք է հասցներ Վարդանին։ Ի՞նչ էր նշանակում այս։ Անշուշտ մի շատ կարևոր քայլ, մի անհրաժեշտ օղակ կամուրջի պայթեցման գործի հետ։

Գրդելի ուրվականը կարծես վազում էր նրա կողքին։ Չէ՞ որ Ղոնդին սովոր էր ամբողջ կյանքում նրան այդպես տեսնել իր կողքին, իր հետ Գրդելը չլինի՞, Գրդելը իր հետ չլինի՞, սա ամենատարօրինակ, անբնական բանն էր Ղոնդիի համար։

Բայց Ղոնդին չէր կարողանում խորանալ այդ իրողության մեջ — ժամանակ չկար։ Ուժն ու եռանդը պետք էր լարել մի ուղղությամբ — գործը կատարել մինչև վերջը։

Բայց նա անձկում էր, շտապում ավարտելու այն գործը, որ մի նստի և իրեն հաշիվ տա, թե ի՞նչ էր կատարվածը Գրդելի հետ։

Եվ նա շտապում էր, շտապում։

Իջնում էր ձորը։ Այստեղ մի նեղ ճանապարհ կա, որով գյուղացիները գնում էին սար։ Կարող է և հանդիպում տեղի ունենալ։ Կրկին երկյուղ այն երիտասարդի համար, որ երկյուղ չէր իմացել իր կյանքում։

Եվ այդ երկյուղը ամենից շատ ի՛ր վերաբերյալ էր։ Հանկարծ բռնվի... Ի՞նչպես պետք է նամակը հասցնել Վարդանին։ Իհարկե նա կարող էր այդ նամակը հանձնել Մանուկին կամ անգամ Արտակին։ Բայց ի՞նչով էր ապահով, որ նրանք էլ չէին բռնվի և տեղ չհասցրած չէին սպանվի։ Եվ ո՞վ էր ապահով այդ երեքից, ո՞րի մոտ պահվեր նամակը, որ վստահ լիներ, թե անպատճառ տեղ կհասցնի։ Թերևս ամենից ապահովն ինքն էր, կամ ամենից անապահովը...

Սակայն հիմա Ղոնդուն պաշարեց մի ավելի մեծ երկյուղ, որ կամուրջի պայթյունից առաջ լավ չէր զգում — հանկարծ իրենց բան պատահի և լուրը չհասցնի հրամանատարին։ Հիմա հոգու խորքում շոշափում էր մի ավելի մեծ խռովքի ակիզբը, որ ծա-

վալվում էր, արծարծվում հրդեհի պես, լուսավորում ավելի տանջալի մտքեր, քան ընկերոջ խնդիրը։ Հիշեց ընկերոջ խոսքերը՝ «դժվար է աշխատավոր ժողովրդի գործը... այստեղ խելք է պետք, գիտություն»։ Բայց Գրդելը, ինքը՝ Ղոնդին ժողովրդի համար դուրս եկան զոհվելու։ Ահա այստեղ է, որ հազար ու մի ասեղի ծակով անց ես կենում՝ մինչև գործը գլուխ բերելը։

Այսպես մտածելով նա ինչպես երազում գնում էր և չէր կարողանում կանգ առնել մի մտքի վրա։

Այս մտքերով նա ինչպես երազում Մանուկի և Արտակի հետ անցավ ձորը, գնաց դաշտով և ահա վերջապես գյուղը։ Նրանք սահելով փողոցներով ու ստվերների պես հալվեցին տներից մեկի դռանը։

***

Կիսախավար սենյակի լռության մեջ Վարդանը, չոր ու ցամաք ու մռայլ մի քսանամյա երիտասարդ, դանդաղ ու զգույշ բաց արեց հացի միջուկից նամակը, կարդաց, դրեց գրպանը և սկսեց մտածել։

Ղոնդին արդեն հայտնել էր նրան կամուրջի պայթյունը։ Բայց ոչ մի տպավորություն ըստ երևույթին։

Մռայլ Վարդանը ոչինչ չասաց Ղոնդուն ու Մանուկին։ Միայն երբ մտածմունքի ու լռության չափն անցավ՝ նա նայեց Ղոնդուն և կարծես ուզում էր հայտնել, թե հիմա ինչ է մտադիր անելու։ Բայց նա միայն հարցրեց.

— Ո՞ր ժամին պայթեցրիր կամուրջը։

— Ժամը չեմ հիշում։

— Իսկ հաստա՞տ գիտես, թե հրետանին չանցավ։ Թե՞ այնպես...

— Հաստատ։

Վարդանը լռեց երկար ժամանակ, և հետո վեր կացավ։

— Լավ,— ասաց նա խորը մտածմունքի մեջ ընկած, կարծես դժվար էր հասկանալը, որ կամուրջը պայթել է, որ հրետանի չի անցել։ Մանուկը լուռ նայեց Վարդանին և ըստ երևույթին հասկանալով նրան՝ ոչ մի հարց չտվեց։ Հետո Վարդանը դարձավ

դեպի Ղոնդին և այս անգամ, առաջին անգամ, նայեց աչքերի մեջ և ասաց.

— Դու կսպասես այստեղ։ Պատասխանը կգրենք կտանք քեզ, որ տանես։ Մանո՛ւկ,— դարձավ նա Մանուկին կարգադրողի հայացքով և մտացի — սրան...

— Հա՛, կտանեմ,— ասաց Մանուկը։

Վարդանը գնաց, Ղոնդին վիրավորված նայեց Վարդանի հետևից։ Ի՞նչ է լռում, ի՞նչ է թաքցնում իր անելիքը։ Եվ վերջապես ի՞նչ ասել է իրեն «կթաքցնեն, կտան պատասխանը...»։

Կարծես հասարակ պոստի նամակաբեր լինի ինքը։ Իսկ եթե այդ չոր Վարդանը իմանար թե ինչե՞ր է քաշել Ղոնդին այս երկու գիշեր...

Ուրեմն Ղոնդին չի էլ կարող իմանալ թե ինչ էր պարոլի միտքը և ինչ են վճռելու այստեղ։ Իհարկե չէր կարող և ներկա լինել այն ժողովին կամ խորհրդակցության, ուր պիտի մշակվեր պատասխանը։

Նա այդ մտքերի հետ էր, որ իր առջև դրվեց սև հացի լավաշը։

Խոտի դեզը, ահա նրա անկողինը մարագի հետև։ Ու թեև դա շատ ապահով տեղ էր՝ մի կողմից մարագը, մյուս կողմից անմիջապես այգին՝ բայց Ղոնդին մեծ տհաճությամբ մտավ մեջը և երկար ժամանակ չէր քնում։ Միաժամանակ նա գիտեր, որ մարտական կյանքն այդպես է։ Նա զգում էր, որ Վարդանից չի կարելի պահանջել մտերմական զրույցներ։ Բայց նրա լարված նյարդերը և այս երկու օրվա ապրումներն այնքան էին նրան թափ տվել, որ նա դառել էր դյուրազգաց։

Վերջապես բնությունը փակեց նրա աչքերն ու մտածմունքների հոսանքը։ Նա ընկավ անէության սփոփիչ գիրկը։

***

Ավելի անտանելի էր ցերեկը, երբ Ղոնդին հարկադրված էր թաքնվել խոտի դեզի մեջ ամբողջովին թաղված։ Շոգը, անշարժությունը, անգործությունը տանջում էին նրան։ Երկարեց, դանդաղեց օրը։ Ղոնդին իր «բանտում» խաշվում էր քրտնքից ու

միջատներից։ Բայց ամենից շատ անորոշ կացությունից։ Ի՞նչ են որոշում այնտեղ, ե՞րբ են վերջացնելու, ե՞րբ պիտի ազատվի այդ տեղից...

Կերակուր բերին իրեն։ Դա նույն սև հացն էր, միայն մի քիչ լուռով։ Երևում էր, որ գյուղում սով էր։ Եվ նա նկատեց, որ շարժում չկար և ոչ էլ աղմուկ։ Խոտի արանքից նայեց հեռավոր տների կտուրներին։ Մի մոմեղեն պառավ դողդողալով իջնում էր կտուրից։ Նա կմախք էր, կենդանի մեռել։ Գոմի կողքով՝ օրորվելով մի շուն անցավ։ Նա կանգ էր առնում, հարբածի պես նայում և երբ որոշում էր շարժվել, տատանվում էր և քիչ էր մնում վայր ընկներ։ Հետո երկու երեխա եկան գոմի պատի տակ կանգնեցին։ Նրանք խաղում էին, ծիծաղում։ Բայց Ղոնդին նկատեց, որ նրանք ծիծաղում էին դիմակի պես, դանդաղ և խոսելիս էլ բառերը կախ էին գցում։ Նրանք հոգնեցին կանգնելուց, նստեցին, բայց էդ էլ հոգնեցրեց։ Նրանք պառկեցին և քնեցին։

Ահա թե ինչեր կային գյուղում։

Վերջապես մութը հանդարտ բազուկներն արձակեց գյուղի վրա։ Մանուկը եկավ և Ղոնդուն ներս տարավ։ Սենյակում Վարդանն էր և մի քանի երիտասարդներ, որ ըստ երևույթին գյուղում չէին անցկացնում իրենց օրը և գիշերաշրջիկ կյանք էին վարում մոտակա լեռներում։

Երիտասարդների ներկայությունը զարմացրեց Ղոնդիին։

Այդ ի՞նչպես էր այդքան լռակյաց ու գաղտնապահ Վարդանը նրանց բերել Մանուկի սենյակը իր տեսակցության։ Նրանք ոգևորված երիտասարդներ էին և արևառ ու կմախքացած դեմքերը պատկերացում էին տալիս նրանց չարքաշ դաժան կյանքին։

Բայց Ղոնդին մի փոքր անց հասկացավ Վարդանի մանյովրը։ Սա երիտասարդներին բերել էր ցույց տալու ֆրոնտից եկած մարդուն, նրանց ոգին բարձրացնելու համար։

Վարդանը հանգիստ և մռայլ լռությամբ ընդունեց Ղոնդուն և երբ սա ներս մտավ՝ դարձյալ երկար ժամանակ լուռ էր։

— Հիմա այսպես է,— ասաց Վարդանը,— ընկերները քեզ կտանեն բոլորովին անծանոթ ճանապարհով և երբ կհասանեք սրաջ տեղ,— նրանք գիտեն այդ տեղը — դու մենակ կգնաս։ Ընդհանրապես մեր գրությունը,— ավելացրեց Վարդանը և ժպիտի պես մի

բան խաղաց նրա աչքերում,— լարված է։ Սպասում ենք անհամբեր։

Ղոնդին սպասում էր մանրամասն զրույցի, սպասում էր, որ Վարդանը հայտնի իրենց անելիքի մասին։

Բայց նա իր մռայլ ու կարծես տխուր շարժումներով վեր կացավ տեղից և կարգադրեց.

— Դե, հիմի ճանապարհ ընկեք։

Այսքանը միայն։

— Ի՞նչպես է գյուղերի վիճակը,— հարցրեց Ղոնդին։

— Ոչինչ, ոչինչ, կանե՛նք, լա՛վ է,— վրա տվեց Վարդանը և դարձավ երիտասարդներին.

— Դե, դուք առաջ ընկեք։

Երիտասարդները մեկ-մեկ հեռացան։ Մնաց մեկը նրանցից, որ պիտի գնար Ղոնդու հետ։ Վարդանը նրա մոտ հանեց մի խմորի կտոր և տվեց Ղոնդուն.

— Ահա՛, սա էլ... նամակը։ Կտանես նույն ձևով ընկեր Դավթյանին։ Պետք է շուտ հասցնել, ժամանակ չկա, գյուղերում կարող են անախորժ դեպքեր տեղի ունենալ։ Վտանգ, «բան» պատահելիս նամակը կտաք մեկ-մեկու և տեղ կհասցնեք։ Դե, դուք էլ ճանապարհ ընկեք։ Գնաք բարով։

— Մնաք բարով,— ասաց Ղոնդին և ձեռքը մեկնեց Վարդանին։

Սա սեղմեց Ղոնդու ձեռքը և թափահարեց ուժեղ ու սրտալի.

— Դե, քեզ տեսնեմ, ընկե՛ր ջան, զգո՛ւյշ և արա՛գ...

Վարդանի մռայլ աչքերի մեջ մի ջերմ շող վառվեց։ Նրա դեմքի վրա խաղաց հոգսերի, մտատանջության և գործի կամքի այնպիսի մի հույսվածք, որով ավելի շատ բան պարզվեց Ղոնդու համար, թե գյուղերում ինչ վիճակ էր, քան եթե Վարդանը պատմեր։

Ղոնդին դուրս գնաց երիտասարդի հետ։

— Այգու միջով, Պետրոս,— կամաց հրահանգեց Վարդանը և ինքը հեռացավ։

Ղոնդին դուրս եկավ Պետրոսի հետ։ Այգու ծայրին սպասում

էր Մանուկը։ Նրանք գնացին դեպի լեռները, որ կողմով և գնացել էին մյուսները։

— Ի՞նչ կա գյուղում,— հարցրեց Ղոնդին Պետրոսին։

— Գյուղում ի՞նչ կա, տնաշե՛ն,— ի՞նչ չկա...— հառաչեց Պետրոսը և քրտինքը սրբեց։ Նա նիհարած էր և ըստ երևույթին զրկանքներից ուժասպառ։

Գիշերային խավարի մեջ հետզհետե միացան մյուսները և խումբը գնաց դեպի լեռնային առապարները։

Ամբողջ գիշեր գնում էին և լռանիստ լեռան լանջերը կլանում էին երիտասարդների հևոցները։ Նոր էր լուսաստղը հալած ոսկու պես պլպլում, որ խումբը կանգ առավ։

Առաջ եկավ Մանուկը և ձեռքը մեկնելով մի մռայլ ձոր, Ղոնդուն ցույց տվեց նրա հետագա ճանապարհը.

— Ահա էն ձորից, որ դուրս գաս քերծի գլուխը՝ էնտեղից կմտնես քո եկած ճամփան։

Ղոնդին գլխարկն հանեց և թափահարեց օդի մեջ։

— Մնաք բարո՛վ, ընկերնե՛ր։

— Բարի ճանապա՛րհ,— պատասխանեցին նրանք,— շուտ եկեք։

— Շո՛ւտ կգանք,— ասաց Ղոնդին և ուժով իրեն գցեց քարաշեղջի վրա։ Քարերը աղմկով թափվեցին, նրա ոտը խրվեց նրանց մեջ ու սահեց վայր։

Շուտով նա ստվերի պես կորավ գիշերվա մեծ ստվերի մեջ։

***

— Շատ գեղեցիկ։

Եվ Դավթյանը, կարմիր հրամանատարը, վայր դրեց սեղանին ճմրթած նամակը։ Կարծես չէր նկատում Ղոնդուն, որ կանգնած էր սեղանի մոտ և լուռ ու խռովահույզ նայում էր Դավթյանին։

— Շատ գեղեցիկ։

Լռությունը կլանեց այդ խոսքը ևս։ Դավթյանն սկսեց մտախոհ նայել պղտոր պատուհանից դուրս, դեր գիշերը լցվել էր սև մրի պես։ Ի՞նչ էր մտածում նա... Շրթունքները սուլելու նման կծկեց նա և առանց սուլելու անձայն փչեց շրթունքներով, նայեց

դես ու դեն, նամակին, քարտեզին։ Մի պահ հայացքն ուղղեց Ղոնդուն։

Երկուսի հայացքները հանդիպեցին իրար։ Դավթյանը չափեց Ղոնդուն ոտից գլուխ, կարծես առաջին անգամն էր տեսնում նրան։ Ղոնդին այլայլված սպասեց, որ Դավթյանը խոսի։ Ցնցվեց։ Բայց Դավթյանը սաստիկ լարված էր իր մտքերով։ Նա միայն մեքենաբար դարձյալ կրկնեց առանց կապելու իր միտքը Ղոնդու, նրա բերած նամակի հետ։

— Շատ գեղեցիկ։

Հետո կիսաձայն.

— Հիմնովի՞ն պայթեց կամուրջը։

— Ամբողջ կամուրջը թափվեց ձորը, ընկեր հրամանատար։

— Հրետանին անցե՞լ է այս կողմ։

— Ոչ, ընկեր հրամանատար։

— Ստո՞ւգ գիտես, թե ենթադրում ես։

— Ստուգեցի տեղում։

— Լա՛վ, դա կստուգենք։

Ու կրկին վերցրեց նամակը։ Չէր կարդում, պարզ էր, մտածում էր։ Հանկարծ վեր նայեց, նայեց Ղոնդուն և արթնացածի պես.

— Հա, ընկե՛րդ ուր է։

Ղոնդին գլուխը կախեց։

— Սպանվե՞ց։

— Սպանվեց...

Դավթյանը չխոսեց։ Մի փոքր անց միայն, կարծես ինքն իրեն՝ շշնջաց.

— Ամեն բան կպատահի։—Հետո՝ բարձր.— Որտե՞ղ սպանվեց։

Ղոնդին դժվարությամբ շունչ քաշեց և սկսեց.

— Դեպքն այսպես պատահեց, ընկեր հրամանատար...— սկսեց հուզմունքից ծանր հևալով Ղոնդին։

Ներս մտան Ավետն ու Ռուբենը։

Նրանք բարձր տրամադրության մեջ էին։

— Ահա և նա,— ուրախ բացականչեց Ավետը՝ նայելով Ղոնդուն,— պատմեցի՞ր ընկեր հրամանատարին։— մոտեցավ Դավ-

Թյանին և մոտ նստեց նրան։— Լավ նեղն եք ընկած եղել, մե՛ր տղա։ Է, ի՞նչ, ուրիշ հնար չկար երևի։

Հանկարծ շուռ եկավ դեպի Դավթյանը և կռանալով նրա դեմքին հարցրեց.

— Հետաքրքի՞ր նամակ է։ Ի՞նչ է գրում Վարդանը։

Նրանք սկսեցին անլսելի ձայնով փսփսալ։ Խոսեցին մի պահ և հանկարծ երկուսն էլ շեշտ նայեցին Ղոնդուն։

— Այսպես է եղել,— մռայլվեց Դավթյանը և լարվեց,— հեռո՞, ձեղանից ո՞րը կամեցավ առաջինը իրեն զոհել։

— Նա... ծանր և ցածր ձայնով ասաց Ղոնդին և զգաց, որ ամենածանր վայրկյանը հասավ։

— Դու չառաջարկեցի՞ր, որ նա քեզ խփի...

— Ոչ...

Լռությունը բռնեց Ղոնդիի կոկորդից և սեղմեց։ Դավթյանը, Ավետը և Ռուբենը ծանր նայեցին Ղոնդուն, որ դատապարտվածի պես նայում էր գետնին։

— Հա՜, շա՜տ ես տխրում,— հարցրեց Ավետը ժպտալով մեղմ։

Ղոնդին հազաց, կամենալով մաքրել կոկորդի ջղաձգությունը։

— Ընկեր կոմիսար... ես շատ դժ.աախտ եմ... որ ես չեղա զոհը, և թույլ տվի, որ ընկերս զոհվեր... Ես նրան ծանր խոսք ասացի... Չէի սպասում թե նա։

Չվերջացրեց, դժվար էր։

— Ոչինչ, ասաց Ավետը, երբեմն կյանքն է պետք, երբեմն մահը, և այդ ամենը վերջիվերջո գնում լցվում է այն մեծ գործի մեջ, որի համար պայքարում ենք մենք։ Հարգենք ընկերոջդ։

Հետո գործնականը։

— Շա՜տ լավ, ազա՜տ ես,— ասաց Դավթյանը և նստեց վառելով ծխախոտը։

Ղոնդին դուրս եկավ և գնաց այն տունը, որի սենյակներից մեկում նա և Գրդելը ապրել էին երկու շաբաթ։ Երբ ներս մտավ աչքը տնկեց այն մահճակալին, որի վրա քնում էր Գրդելը։ Նրա վրա փոքրիկ կապոց էր դրած, որի մեջ կապած էր Գրդելի զինվորական բլուզը, խակի բլուզը, որ նա ձեռք էր ցցել ով գիտե որտեղից։

Ղոնդին քանդեց կապոցը, վերցրեց բլուզը, հոտ քաշեց, բաց

արեց և բլուզի թևերը պարզած, բռնեց օդում։ Գրդելը, իր սիրելի Գրդելը կանգնած իր դեմ, թևերը պարզած, կաթվածահար թևերը։ Այդպես կաթվածահարի պես Գրդելը թևերը պարզեց օդում և ընկավ գետին այն սարսափելի գիշերը։

Ղոնդին գրկեց բլուզը, փաթաթեց նրա թևերը իր դեմքին և այդպես տխուր մնաց մինչև լույս։

Փողերը հնչեցին։ Գունդը գնում է...

ԴԱԴԱՐ

Առաջին առավոտ՝ չնայած երեկվա ճամփի հոգնածության, դեռ ծիտը ջուր չխմած՝ Զուրաբը զարթնեց։

Իսկույն վեր թռավ նստեց անկողնում — մեքենայի պես, ուղիղ այն ժամին, երբ քաղաքում զարթնում էր գործարանի շչակի հետ։

Որտե՞ղ էր... Ուշքի եկավ — հանգստի տանն էր։ և գործարան չէր գնալու։

Հին, քանհինգ տարվա սովորություն (դեռ ավելին — մանկուց). ամեն օր միշտ վաղ էր վեր կացել։ Այսօր էլ այդպես։

Սենյակի պատերը օտարոտի, խաղաղ նայեցին նրան։ Ու թեև կարող էր մնալ անկողնում, շուռումուռ գալ իր համար, բայց համ չառավ։ Հագնվեց, գնաց պարտեզ, լվացվեց աղբյուրի մոտ։

Եվ արդեն պատրաստ էր. մնում էր մի բան ուտել ու վրա ընկնել մի հիմնավոր աշխատանքի։ Եվ թվում էր, թե իսկապես հիմի մի բան կսկսվի, և ինքը մի բան պիտի անի։

Բայց հանգստի տանը ի՞նչ աշխատանք։ Լուռ էր տունը,— բանվորները դեռ քնած, ոչինչ չէր սկսվում։ Նստեց մի քարի, վերդիր արեց իր վիճակը. սնունդ, անկողին, լվացք — այս ամենն իր հոգսերի մեջ չկան։ Ընտանիքն ապահով թողել է քաղաքում։

Քանի քաղաքումն էր, գործարանում ու իրեն հայտնի էր, որ պիտի գնար հանգստի տուն՝ վիճակը որոշ էր, անվրդով սպասում էր գալու օրվան։ Ու մինչև վերջին օրը նա սովորականի պես իր ժամին գնում էր գործի՝ ամբողջ օրը լցված այդ օրվա հոգսով։ Մինչև վերջին վայրկյանը, դեռ էլի իր սովորական հոգսի հետ էր, այդ բարերար, մտերիմ հոգսի հետ։ Հանկարծ կտրվեց այդ հոգսի թելը։

Հետո՞... Հիմի ի՞նչ է լինելու իր հոգսը։ Առանց հոգսի՞։ Տարօրինակ վիճակ։

Կարծես ընկավ մի տեսակ պարապ տարածության մեջ, հիվանդացավ, փոխվեց ուրիշ աշխարհ։

— Հը՞, Զուրա՞բ, էշդ կորցրել ես,— ձայն տվեց պատշգամբից նրա ընկերը՝ Ալեքսոն,— ի՞նչ ես միտք անում. հազարի կեսը հինգ հարյուր է։

— Գիտեմ — պատասխանեց Զուրաբն այնպես ցրված ու լուրջ, կարծես իսկապես այդպիսի հարց էր դրված։

Ալեքսոն պատշգամբից մոտեցավ աղբյուրին, կոշտ ու կլոր դեմքը չոփ-չոփ լվաց ու լայն թաթերով սրբիչախառն հիմնավոր սրբեց ու կուշտ մտիկ տվեց Զուրաբին։

Դա մի կարճահասակ, գորտի աչքերով, մսի կոճի պես մարդ էր։ Ուրախ, գեհիկ։

Եվ խոշոր ատամները կափկափելով ասաց.

— Դե, վեր, գնանք բալկոն, մի նարդի խփենք, մինչև չայը տան։

— Սովա՞ծ ես։

— Ե՞ս։

— Հա, բա ո՞վ... դե լավ, լավ, հիմի կտան։

Բարձրացան պատշգամբ, նստեցին նարդու մոտ։

— Դե, բա՞։

Խաղը տաքացավ։

— Շատ մի՛ մտածի, է՛ս ա, մարս եմ անում,— սկսեց գրգռել Ալեքսոն, ու նարդու քարերը — կարծես հրացանի կրակ էր բաց արել — շառաչով զարկում էր, շարում։

— Էս՝ սե, էս ջահար։ Էղա՞վ։ Հը, Զուրաբ, ֆրոնտդ ճեղքում եմ ահա, տղամարդ կաց,— աղմկում էր Ալեքսոն կոշտ ձայնով։

Զուրաբը լրջացել, մտահոգ նայում էր իր քարերին և այնպես էր կենտրոնացած՝ կարծես համաշխարհային պատասխանատվություն կար մեջտեղը, լավ քննում էր իր քարերը, հետո հանգիստ, համաչափ վերցնում զգույշ, անձայն դնում տեղերը։

— Զուրաբ, բուրդ է, հա՛յ մի դու շեշ,— գոռում է Ալեքսոն և զառերը գցում։ Զուրաբը աչքերն է ճպճպացնում և լարվում։

Մինչ նրանք խաղում էին՝ հանգստյան տունը լցվեց աղմուկով։ Բանվորները վեր էին կացել և դուրս էին գալիս լվացվելու։

Աշխատանքից, մրից, երկաթից և հոգսից կոշտացած, սևացած մարդիկ էին, անկյունավոր շարժումներով։ Ու թեև եկել էն

երկաթուղու գծից, տպարաններից և այլ գործարաններից, բայց բոլորի դեմքին միևնույն մռայլ կնիքն էր — տարիների աշխատանքի կնիքը, որից նրանք ծիծաղելիս անգամ խիստ արտահայտություն ունեն։

— Տղերք, քվեարկում եմ,— գոռաց Ալեքսոն,— ով սոված չէ, ձեռք բարձրացնի։

Բանվորները ժպտալով հավաքվեցին խաղացողների գլխին։ Ալեքսոն ամենքին զվարճալի էր երևում, ինչպես միշտ։

Նա խաղում էր ու չորս կողմ նայելով ոգևորված գոռում.

— Մտիկ ես տալի՞, Զուրաբ, ի՞նչ կոխտա ամառանոց է։ Կարտինկա է թամամ։ Մի էն ծտերին, ծտերին, ոնց են լեկուրի պար գալի լոթիքը։ Պա՛, պա՛, պա՛... մի էն աղբրի ջրին, ոնց է կլկլում. կասես մեր Կախեթու անմահական գինին է խելաթից թափվում։ Ջա՛ն, ձեր հոգուն մատաղ,— գոռաց Ալեքսոն ու քարերը շրա՛խք զարկեց նարդուն։

— Էս՝ փանջ, էս՝ ջահար։— Ու նայում է պարտեզին, տանը,— լավ տեղ են ապրել մեր բուրժուաները, հը՞, ի՞նչ կասես, Զուրաբ։ Տո ի՞նչ ես ծռծռացնում, դե շուտ արա, խփի։

Զուրաբը լսում է նրան, բայց իր բանին է։ Մտածում է։ Կարծես կարևորագույն հարց է լուծում։

Կամաց-կամաց Ալեքսոն բոլորին հավաքեց իր շուրջը իր գոռոցներով ու խաղով։

— Տո, ի՞նչ ես առավոտ-առավոտ կամպանիան սարքել,— նկատում է խոհարարն ու անց կենում դեպի խոհանոց։

Ալեքսոն խոսքի տակ չի մնում.— ո՞նց թե, տու էս շան լակոտ սովը գցել է փորներս — դե մի կտոր հաց տվեք, գցենք ոսխները, է՛։

— Էս ա՝ չայը տալիս են,— պատասխանում է խոհանոցից մի ծիծաղկոտ ձայն։

— Մա՛րս,— գոռաց Ալեքսոն և նարդու քարերն իրար խառնելով վեր կացավ։

Զուրաբն աչքի տակով նայեց, ստուգեց վերջի քարերի դիրքը, որքան հնարավոր էր և լուրջ համաձայնեց.

— Հա՛։

— Դե, էլ ո՞վ ա գալի, մի հատ էլ խփենք,— հրավիրեց Ալեքսոն, քարերը շարելով։

— Ը՞, կեցի տեսնեմ,— աքլորից մի երիտասարդ բանվոր և մեջ մղվեց։

Զանգը տվին։ Թեյը պատրաստ էր։ Գնացին սեղանատուն, շարվեցին երկար սեղանների շուրջը։ Սկսեցին ուտել-խմել շատ գործնական եղանակով, կարծես մեքենան բանի գցեցին։

Ալեքսոն սկսեց աջ ու ձախ քննել, սրան նրան ժպտալ, ձեռ առնել։

Եվ այնպես էր ուտում, որ ահագին բերանը իր հաստ շրթունքներով կափարիչների պես բացվում փակվում էին։

Զուրաբը իր համար պարկեշտ ապրում էր հանգստյան տանը։ Հանգիստ էր, բայց չէր բացվում, դեռ էլի իրեն զգում էր ինչ-որ խորթ վիճակում։ Դոնները զգույշ էր բաց անում — կարծես չէր ուզում խանգարել ընկերների ուշադրությունը։ Պատառաքաղը հատուկ հոգածությամբ էր բանեցնում։ Բայց ընկերությունից էլ չէր քաշվում։ Նստում էր նրանց հետ պատշգամբում, ընթերցարանում, պարտեզում և ավելի ականջ էր դնում, քան խոսում և գոհ էր։ Իր ընկերներն ասում, խոսում, ծիծաղում էին, բազկաթոռների, դիվանների վրա բազմած։

Կահ-կարասին ճռճռում էր բանվորների հախուռն կազմվածքների տակ։

Մի օր ճաշից հետո բանվորները նստած էին պատշգամբում և խաղաղ զրույց էին անում։ Նրանց մեջ էր և Զուրաբը, որը մի կողմից ականջ էր դնում, մյուս կողմից իր մտքերը որոճում, որոնցով նա սիրում էր հաճախ տարվել։

Ներս մտավ Ալեքսոն և իր անճոռնի բերանը բաց արած նայեց Զուրաբին.

— Հը՞, էստեղ ե՞ս, քեզ էի ման գալի։ Ո՞նց ես։

— Լավ եմ,— վերև նայեց Զուրաբը։

— Հա, ղոչաղ կա՛ց։

Զուրաբը ըստ իր սովորության «բարեխիղճ» նստած էր դիվանի եզրին, մեջքը ուղիղ բռնած, արձանի պես։

Ալեքսոն մին էլ մտիկ տվեց նրան.

— Էդ ո՞նց ես նստած, տո՛։

— Ո՞նց։

— Տո մի ձգվի՛, է, քամակդ քաղցրացրո՞ւ, վախում ես դի-

վանի մեջքը ցավի՞։ Թե՞ հորն օղորմի, դրա հին տերը բեդամաղ կելի...

Եվ իր երկաթե ձեռքը գցելով Զուրաբի ուսին՝ կոպտորեն սխմեց նրան դիվանի մեջքին։

— Այ տղա, ի՞նչ ես անում, ուսս կոտրեցիր։

Բանվորները ծիծաղեցին, իսկ Ալեքսոն ձեռքերը պինդ խոթելով գրպանները, փորն անճոռնի առաջ ցցեց, և ամբողջ մարմինը ցնցահարելով գռեհկաբերան հը՛, հը՛, հը՛— մի երկար հռհռոց գցեց՝ հաստ ատամները կափկափելով։

— Լավ տեղեր գիտեին ապրել մեր բուրժուաները, հը՛, Զուրաբ... Հա՛յ գիտի, հա՛...

Ու նայելով Զուրաբին, որ մեջքը տվել էր դիվանին և ժըպտում էր.

— Այ, էդենց, ձգվի մի լավ, որ մարմինդ զվարթանա։

— Էհ, սիրտս նեղանում ա,— խոսեց Զուրաբը ժպտալով։

— Ընչի՞ց, տո։

— Էսպես պարապ-սարապ։

— Հապա ո՞նց գիտեիր, հանգստյան տուն ա, պըտի հանգըստանաս։ Որ եկար, ըստի արգելված ա աշխատելը։ Բա՛ս։

Զուրաբը համաձայնում է, բա՛յց.

— Այ տղա, էդ բուրժուաները ո՞նց էին անում։

— Ի՞նչը։

— Էսպես հանգիստ ապրելը։ Ասում եմ, ո՞նց էին տարիներով պարապ անցկացնում. բա սրտները չէ՞ր ճաքում։

— Բա, ընչեր են քաշել խեղճերը, քո դուշմանը, էս պարապության ձեռիցը։ Հայ գիտի, հա՛։ Էն որ քաղքում (Թիֆլիս) ապրիլ-մայիսի հովը կանցկենար ու ամառանոցի քաղցր հովը կփչեր՝ դուն իս իմ պարոնն, իր ծառեքին ու գուվերնանտկերանց դիփ մոտ կաներ ու երեխանցով, կնկնով, բարեկամներով կգար կնստեր «դաչա»։ Առավոտը չայը, կոֆեն, շոկոլադը լավ մուրաբեքով ու Ժորժ Բորմանի պեչենիքով անուշ կաներ, ճաշին լավ-լավ զակուսկեքով բերան կքաղցրացներ, զուրգելները, զագրանիչնի սարդինկեքը հնդուհավի ու փլավի հետ, իրան հալալ կուտեր, իրիկնահովին էլ սուկու խորոված՝ մրրեն կրդասեր, կըսվաղեր,— բա էսպես էլ տանջանք տեսե՞լ ես, Զուրաբ ջան։

— Հա՛,— ժպտաց ու գլուխն օրորեց մի մռայլ բանվոր՝ ինչ-

որ մի դառն բան հիշելով,— էդ էն ժամանակն էր, որ աղքատն աղքատանում էր, հարուստը հարստանում։

— Բա՛ս,— վրա բերեց Ալեքսոն զվարթ ծիծաղով,— մարդը էսքան տանջանքներ է քաշել, էս ցավերը. ասա թե, Զուրաբ ջան, քո ջանը էս դարդից մին էլ ա իմացե՞լ ա։ Խեղճ սրա տերը... Շատ բան քաշեց հանգստության ու պարապության ձեռքին։ Էդ հանգըստանալն էնպիսի մի խաթա էր, որ դրա համար էլ խեղճին ազատեցինք էս բանտից ու քեզ գցինք փորձանք։ Հախն է, Զուրաբ ջան, ջանդ դուրս գա՝ դնչացիր, հերիք ա։

— Չեմ իմանում էդ բաները, որ ասում եք,— նկատեց Զուրաբը ժպտալով ու վեր կացավ, սկսեց անցուդարձ անել։

Ալեքսոն ծաղրական հայացքով մտիկ տվեց նրան.

— Ը, ը, ը... Տնաշեն, էնպես ես ժած գալի, կասես, ոտիդ տակին ձվաներ ըլեն։ Հը՞, բան ես ասում։

— Քշվածի պես է։ Մի ծաղկի՞, է՞, քե՞ֆ շանց տուր, տո՞։ Մեծ պասվա ժամ ես եկե՞լ,— մեր տունն ա։

Զուրաբը գլուխը շարժում է։

— Նամակ չեկավ, է՞, նամա՞կ։ Մերոնց անիրավներին ասի էլ, թե մի գիր ղարկեցեք։

— Բանն ինչո՞ւմն ա։

— Գործը թողի Սերգոյի ձեռին։

— Թողիր՝ պրծար. էլ ի՞նչ ես ուզում,— խեթեց Ալեքսոն։

— Էկա, ու հիմի ով է իմանում գործն ինչ հալի է։

— Ի՞նչ հալի։

— Խամ տղա է, բանի ոլորքը չի իմանում լավ։ Ո՞վ է իմանում, ամեն դազգահ մի տեսակ չի։

— Ի՞նչ տեսակ է։

— Յը՛...

— Ասա էլի՞, ի՞նչ ես ծոծռացնում։

Ու Ալեքսոն բարկացած բզում է Զուրաբի փորին։ Սա քթի տակին ծիծաղում ու սուր մտիկ տալիս Ալեքսոյին.

— Տնաշե՞ն, ապա հենց գիտես թե գործը փափա՞ է։ Դազգահ է, իր ոլորքն ունի։

Ալեքսոյի սիրտը նեղվում է։

— Դե վե՞ր կաց, վե՞ր, գնանք անտառ վիզիտ։ Կգանք իրիկ-սապահ անուշ կանենք, քաշքի թե թողնեն գնանք թատրոն։ Էս իրիկուն մեր լոթիքը զեկուցում ունեն, վերջն էլ ներկայացում։

— Մենք էլ ենք գալիս անտառ,— մյուս բանվորներն էլ միանում են նրանց։

Օրերն անց են կենում միակերպ խաղաղ, անհոգ։ Ամեն ինչ հանգստանում է հանգստյան տանը։ Մինչև անգամ ծառերը, պարտեզը, շինությունը։ Բոլոր աղմուկը սովորական կերպով կրկնվում է օրվա որոշ ժամերին և լռում։ Բանվորները ապրում, ասում, խոսում են՝ տներից, գործարանից, պատերազմից։

— Էդ կռիվը մեր վզին որ փաթաթեն՝ պտի կռվենք,— խոսում են այսպես։

— Հը՞, Զուրա՞բ, ի՞նչ ես ասում, կկռվե՞նք, չէ՞։

Զուրաբը ունքերը վեր է քաշում ու քիթը ցցում օդի մեջ.

— Հաշիվներ շատ կան...

Բայց միտքն ուրիշ տեղ է, իր գործարանը։

Զուրաբը լուրջ ձանձրանում էր։ Արդեն սկսել էր ման գալ հանգստի տան շենքի բակը, մյուս մասերը։ Մտնում էր պարտիզպանի տնակը, խոհանոց, դիտում խոհարարի, պարտիզպանի, հյուսնի աշխատանքը։ Դա նրան բավական զբաղեցնում էր։ Երկար զննում էր մանավանդ բակում, պահեստում, շենքի շուրջը աչքովն ընկած ամեն պողպատ գործիք, առարկա։ Այստեղ արդեն հատուկ թուլություն ուներ. երկաթի, պողպատի սեր, ձիրք։ Ու այդ իրերը զննելիս մտովին խարտում, ծեծում էր։ Դա նրա ձեռքի, մատների սովորությունն էր, հպվածքը, ինչպես համրիչ քաշելը։

Միշտ աչքի առաջն էր իր դազգահը, որի վրա տեսնում էր գործիքներ, անիվներ, մեքենայի մասեր, որոնց պատկերը, գծերը կառուցիկ ձևերի սիմետրիան նրան սիրելի էին, ինչպես արձանի ձևեր, ինչպես ստեղծագործության արդյունքներ։ Նա իր դազգահի մոտ, գործարանի մեծ ու աղմկալի շենքի մեջ զգում էր մի անվերջ գործի հոսանքն ընկած մարդ, որ գնում էր ստեղծում, շարժվում։

Հիմի այդ ստեղծումը դարերով կանգ էր առել, և իր կյանքը ետ էր մնում։

Անտառի տակ, դիմացը արտ էին հնձում։ Զուրաբը զբոսնելով մոտեցավ, նստեց արտի եզրին ու սկսեց դիտել հնձվորին։

— Հե՞շտ է,— հարցրեց Զուրաբը։

— Դժվար չի, թե իմանաս,— ասաց քրտնքի մեջ կորած մի-ականի հնձվորը և կռացավ գերանդին ծեծի շարժական փոքրիկ սալի վրա։

Ծեծեց, վեր կացավ նորից։ Բայց Զուրաբը առաջը կտրեց։

— Մի դեսը տուր։

Առավ գերանդին և սկսեց անճոռնի շարժումներով հնձել։ Կարծես բան պիտի դուրս գար։ Բայց ետ քաշվեց, չէր լինում։

— Չէ, կոտրվում են։

— Բայց ի՞նչ,— ժպտաց հնձվորը և գերանդին առավ ձեռքից ու սկսեց վարժ հնձել ու հետն էլ հևալ ռիթմիկ կերպով։

Հանկարծ գերանդին կոթից դուրս թռավ։ Հնձվորը թքեց, ուշունց տվեց ու նայեց։ Օղակը կոտրվել էր։ Նստեց, որ ամրացնի։

— Բեր, ես կանեմ,— ասաց Զուրաբը և ձեռքիցն առավ գերանդին։

Օրը շոգ էր, հարբեցնելու չափ։

— Այ տղա, ոնց որ երևում է՝ պարապ կենալու սովոր չենք,— ասաց Զուրաբը։

— Բաս ի՞նչ գիտես։ Պարապը բուրժուայի բան է,— այս անգամ լուրջ պատասխանեց Ալեքսոն։

Հնձվորը ժպտաց ու կողքանց մտիկ տալով սրած գերանդուն, զարկեց հասկերին։

— Գնանք,— ասաց Ալեքսոն։

Զուրաբը վեր կացավ։

— Այշի, էնտեղ լավ էր, հավատա, էստեղ հիվանդանում եմ։

— Ափսոս չի՞ գործը... կյանքի առողջություն է,— փիլիսոփայեց Ալեքսոն,— դե էն է՝ քիչ մնաց, գնում ենք, էլի։

Ծղրիդները միակերպ ծեծում էին իրենց մրճիկները սալին։ Անտառը աչքը կպցնում էր։

1922 թ.

ՆՐԱՆՑ ՈՒՂԻՆ

(էյոուդ իրողություններից, խոսքերից, մարդկանցից)

Հենց այդպես էլ Եգորը գերմանական ռազմաճակատից վերադառնալով գյուղ՝ չկարողացավ մնալ տանը։ Գյուղը ծառս էր ելել։ Ռևոլյուցիայի ալիքը դիպել էր այդ ետ ընկած բնակավայրին ևս։ Ծերերը կշտամբել սկսեցին Եգորին, որ գյուղ է եկել՝ առանց մտնելու Կարմիր գվարդիան։ Մայրն անգամ քիչ էր մնում կացինը նրա բուռը կոխի.

— Էնպիսի զուլում չի բարձրացել, որ փեչի գլխին պառկես, վե՛ր կաց, գնա՛. բարինը էլի գլխներիս է ուզում նստի։

Իր հետ միասին գյուղ վերադարձած ընկերներին էլ օր չտվին։ Հավաքվեցին մի օր Եգորի ընկերները, խորհուրդ տվին, թե ի՛նչ անեն, ո՛ւր գնան։ Պարզ էր, պետք էր գնալ մոտակա ավանը և մեկնել Կարմիրգվարդիական զորամասը։ Մի խոսքով կռիվ սկսել։

Կռի՞վ—չորս տարվա ծանր, երկար, տանջալի պատերազմից հետո։

Տիմոֆեյը՝ Եգորի հարևանը, սկսեց հարցուփորձ անել, թե արժե՞ այդ գործի մեջ մտնել և ի՞նչ բան է դա՝ քաղաքացիական պատերազմը։

— Հասկանալու բան չկա,— վեր կացավ տեղից Եգորը,— էն կլինի, ինչ որ ամենքը կվճռեն, իսկ ի՞նչ վճռելու բան կա՝ երբ ամեն բան վճռել-պրծել ենք։ Ես դուրս եմ գալիս։

— Հենց էդպես ու էդպե՞ս։

— Ես թխսահավ չեմ, թևերս ընտանիքի վրա չեմ փռում։ Թևերը թռչելու համար է տված։ Թռչելու տեղն էլ շա՞տ — կգնամ, թող մարդկանց կյանքը թեթև լինի...

Լուսաբացին Եգորը մնաս բարով ասաց ծնողներին, կնոջը, երեխաներին, վերցրեց հրացանն ու գնաց գյուղի ծայրը։

Շուտով մթնշաղի միջից հայտնվեցին ընկերները։ Հրացան-

ներն ուսներին, պարկերը մեջքներից կախ։ Էլի պատերազմ, էլի երթ։ Ճամփա ընկան։ Գյուղը ետ լողաց, ետ լողաց ու սուզվեց գետնի տակ։

— Էս էլ քեզ տո՛ւն,— խոսել սկսեց Կուզման։— Տո հենց նոր եմ եկել տուն, ուսերս դողում են հրացանից՝ վարժապետն այբբենարանը քիթս է կոխում։

— Հա, է՛, էդ ասա,— գոչեց Եգորի մյուս հարևանը՝ Կարպը,— հիվանդություն է ընկել մեջներս վերջերս — գիր սովորել։ Տո, դու ժամանակ տուր կռվից ետ սովորեմ, մաղձս ետ տամ։ Մատներս զենքին է կպած, գրիչ չի բռնում։

Հետո տնտեսության վրա խոսեցին։ Կուզման՝ հասակն առած գյուղացի մարդ՝ ափսոսաց, որ տնտեսություն չկարողացավ սկսել։

— Ախր հողս երկու տարի էր չէին վարել։ Հողը քաշում էր...

Կուզման շուռ եկավ դեպի նա և խեթ նայեց։

— Ի՞նչ տնտեսություն, ի՞նչ հող... ա՛յ, ես քեզ բան ասեմ, որ գեղացին չի ասի.— քանի դեռ ժամանակը չի գալիս՝ ես իսկի հող էլ չեմ ուզում։ Բոլոր հողը մերը կլինի, ա՛յ, էն ժամանակ մարդիկ կապրեն։

Գնացին անխոս, մի երկու բլուր ևս անցան։ Գործը նոր էր, և բոլորի սիրտը լիքն էր մի անորոշ զգացումով։ Պատերա՞զմ՝ պատերազմ չէ, խաղաղությո՞ւն՝ բայց սա ի՞նչ խաղաղություն է, երբ հրացաններն ուսներին, պարկերը մեջքից կախ՝ էլի գնում են ու գնում։

— Հը՞մ, էլի կռի՞վ,— սկսեց խոսել Ցաշան, ամենաերիտասարդը,— հենց եկա տուն, կնիկս ջուր տաքացրեց, դրեց ինձ տաշտը, սապնեց, սապնեց, բան դուրս չեկավ։ Վերցրեց բութ շեղբը, քերեց, քերեց, նոր կաշին երևաց։

Բոլորը ծիծաղեցին։

Արդեն ավանին մոտ էին, որ Կարպը կանգ առավ.

— Տղերք, լավ կլինի՝ մի զորամասում լինենք։

— Խնդրենք տեսնենք,— ասաց Եգորը։

Մտան ավանը և ներկայացան զինվորական իշխանության։ Պարետը վերից վար նայեց եկվորներին և ուղարկեց համապատասխան ինստանցիան։ Հավաքվել էին մոտիկ շրջաններից շատ

կամավորներ, նրանց մեջ կային մեծ թվով քաղաքից եկածներ, որ թողել էին իրենց բանող, կամ կիսախանգարված ֆաբրիկաները։

Բայց մարտերի և մարտական երթերի անսովոր զորամասի մարտիկներ չէին դրանք։ Ջրի ու կրակի միջից անցած, թրծված, մահի աչքերին հարյուրավոր անգամ նայած մարդիկ։

Դրանք կարծր պրոլետարներ էին. հին ռևոլյուցիոներներ՝ լուռ ու սակավախոս մարդիկ, որ պատրաստվում էին երկարատև պատերազմի։ Նրանցից մի քանիսին Եգորը ճանաչում էր նաև գերմանական ռազմաճակատից։ Դրանցից մեկը փականագործ Միշան էր, միևնույն վաշտից՝ ինչ որ Եգորը, որ վիրավորվել էր, ուղարկվել Մոսկվա և հիմա կրկին այնտեղից եկել էր այս նոր զորամասը։ Նա լավ չէր կազդուրվել, գունատ էր, թույլ։ Բայց մեղմ ժպիտով հանդիպեց Եգորին։ Սա ասաց.

— Հա՛, եկել ես արյուն թափես։

Միշան քթի տակ ժպտալով նայեց Եգորին ոտից-գլուխ և մեղմ պատասխանեց.

— Կապիտալիստների բաժինը թափեցինք, մնաց մեր բաժինը, ա՛յն էլ թափենք՝ վերջանա գնա։

Մոտ եկավ մի ուրիշ ծանոթ — հնոցապան Միխեևը, որի մի ժամանակվա գեր մարմինը հիմա բարեկազմ էր դառել սակավ սննդից։

— Հաց կա՞ գյուղում,— հարցրեց նա։

— Հա՛ց,— ասաց Եգորը և ձեռքիցն առնելով պապիրոսը՝ կպցրեց իրենին։

Նրանք ծխում են և նայում իրենց խայտաբղետ զորամասին։ Դա արտաքուստ ոչ բարեկարգ զորական միավոր է։ Բայց նրանց կապելու է ոչ միայն զինվորական կարգապահությունը, նրանք բոլորն իրենց վայրերից բերել են նաև գաղափարներ, հանուն որի ահա գնում են դեպի հարավ՝ հարվածելու թշնամուն։ Նրանք իրար հետ խոսում են հաճախ կոպիտ բառերով, գնում են իրար վրա, բայց սիրում են իրար, արյուն են թափում իրար փրկելու համար։

Եգորն իր հետ գյուղից եկածների և Միշայի ու Միխեևի հետ մի կամպանիա կազմեց հենց առաջին բոպեից։ Նրանց բախտը բերեց,— բոլորին նշանակեցին մի վաշտում։ Երկու օրից հետո զորամասը շարժվեց դեպի հարավ։

Ու սկսվեց մարտական երթը։ Բայց ի՞նչ երթ։ Զորամասը կիսաբոբիկ, կիսամերկ։ Շատերը հին վերքեր ունեն, դեռ թույլ են։ Հրամանատարները ո՛չ ձի ունեն, ո՛չ մի կտոր հաց ավելի՝ քան հասարակ զինվորը։ Միայն մի հեռադիտակ ունեն, որով տարբերվում են։ Մնացածը՝ ոչնչով չես զանազանի զինվորն ու հրամանատարը։ Գնում է զորամասը շեներով ու ստեպներով, հազար տեսակ մարդկանց միջով։ Ո՛չ թշնամին է որոշ մի կողմ կանգնած, ո՛չ բարեկամը։ Խառն է ամեն ինչ։ Գյուղում, ավանում, սենյակում, անկյունում, ամեն տեղ կողքիդ մահը կանգնած է, և դու չես տեսնում։ Գնում է զորամասը, և ինչպե՞ս։ Հանգիստ չկա օր ու գիշեր։ Կարծես հետևից գազան է ընկել։ Շտապում է։ Առջևում ժողովուրդ է ոչնչանում՝ եթե ժամանակին վրա չհասնես։ Ձյունը, անձրևը, ճահիճները, ձորերը, հիվանդությունները, տիֆերը՝ տեսակ-տեսակ։ Ժողովուրդն իր սեփական պատերազմն է մղում, դեռ նոր է իր զորքը կազմել և կռվում է ահագին թշնամու դեմ —թե՛ կողքիդ, դարանի մեջ, թե՛ հեռուն, ծովերից այն կողմ։ Եվ կռվում է իր մահու-կենաց կռիվը։

Արդեն Եգորի ոտքերի կաշին ուռել, վերք է դառել։ Ընկերների վիճակն ավելի լավ չէ։ Յաշան շոր է փաթաթել իր կոշիկի մնացորդներին։ Կուզման հասարակ բլուզով է՝ մինչ ցուրտը սրխում է անտանելի։ Կարպի ոտքի բթամատը ցրտահարվել է, և նա կաղում է։ Բոլորը կիսաքաղց են, հոգնած։

Արդեն զորամասը որոշ ժամանակից մտնում է նորաստեղծ կարմիր բանակի կազմի մեջ։ Պատերազմն արծարծվում է, տարածվում է ամբողջ երկրում։

***

Գնում է զորամասը։ Վերստին հետևում է մյուս վերստը, պուրակին՝ պուրակը, դաշտերը լուռ ու անտարբեր նայում են երեսիդ։ Հեռուն-հեռուն ճոճվում են կազակների նիզակներն ու կորչում հորիզոնի կաթնագույն մշուշի մեջ, բլուրը ծամածռում է իր դեմքը։ Ծանր մտքեր է լցնում գլուխդ, ու վերջ չկա երթին։

— Մի քիչ ուրա՛խ,— դաշտի լռությունը խախտում է հրամանատարի թանձր բասը։

Եվ Յաշան, որ զիլ ու զանգակի ձայն ունի՝ վեր է քաշում զվարթ.

— Է՛յ դու իմ ստեպ, ստեպ լայնարձա՛կ...

Զորամասը հանկերգում է կարծր ու գոչուն ձայներով։ Մարտիկների դեմքերը՝ արևից, քամուց ու ցրտից կապարի գույն առած՝ ուռչում են երգի ճիգերից։ Զորամասը զվարթանում է։

Բայց մարտական երթը այն ժամանակ էր աշխուժանում, երբ սկսվում էին մարտերը։ Հենց որ մոտենում էին մարտական վայրին՝ մարտիկները կարծես դուրս էին բերում ուր-որ թաքցրած իրենց ուժերն ու աշխույժը, կարծես առողջանում էին ու վերակենդանանում։ Մարտն անցնում էր զվարթ լրջությամբ, կենդանի, լուրջ խաղի նման։

Զորամասը չէր զգում այլևս ո՛չ հոգնություն, ո՛չ տառապանք, մինչև որ սկսվում էր էլի երթը։

Անցավ թուլացնող ամառը, վրա հասավ կարկամող, ցուրտ ձմեռը։

***

Օրը թեքվում էր։

Արևը սառը փայլում էր։ Հեռու, հորիզոնի խորքից դուրս լողացող սև կետերը վերջապես մոտեցան, մոտեցան և խոժռվեցին։ Առջևում կանգնեց գորշ գավառական քաղաքի կերպարանքը.— միահարկ տներ, որոնց ծխնելույզներից մի քանիսը հազիվ ծխում էին։ Քամին զզզում էր այդ ծխի թափանցիկ քուլաները և քշում, կորցնում սառը օդի մեջ։ Հրամանատարը հրամայեց մարտական շղթա կազմել.— քաղաքում թշնամու զորամասն էր, պատրաստ՝ մարտն սկսելու։ Զորամասը դիրքեր գրավեց։ Մարտը սովորականներից էր. թշնամին սկսեց մի տարտամ դիմադրություն, որից նահանջի հոտ էր գալիս։

Եգորի կողքին պառկել է անվրդով Միշան, որի հոգնած դեմքը հողի գույն է ստացել։ Նրա հիմար դեմքին տենդագին փայլող աչքերը դեսուդեն շրջելով, քմծիծաղելով նայում են ծխացող տներին։ Այնպես են նրանք խաղաղ ծխում, կարծես աշխարհիս երեսին ո՛չ պատերազմ կա, ո՛չ անհանգստություն։ Դա խաղաղ բնակիչներն են, որոնք իրենց միջով բաց են թողնում կռվող սպիտակներին ու կարմիրներին, որ սրանք իրենց կռիվը կռվեն,— թող իրենք, այդ խաղաղ բնակիչները մնում են իրենց տներում անմասնակից ու անվրդով, իրենց կյանքի հոգսերի հետևից ընկած։

Ահա այդ «խաղաղ» խխունջներն էր, որ չէր սիրում Միշան։ Ամենից շատ նրան զայրացնում էին նրանք։ Նա թքում է։ Եգորը հասկանում է նրան։

— Նստել տներում, տաքանում են ու խժռում,— մռմռաց նա Միշային։

— Էդ է վառում մարդու,— չար ձայնով ասաց Միշան։

— Ի՞նչ անեն,— հարցրեց Մատվեյը,— գործ չունեն։

— Կտամ նրանց գործ...

Եգորը մռայլվեց, ինքն իրեն մրթմրթաց և ուզում էր բան ասել, բայց փականագործը ճակատը սեղմեց գետնին։ Նա վերք ստացավ, թեթև թե մահացու։ Եգորը կրակել սկսեց՝ խնամքով որոնելով հարվածի կետը։

— Մատվե՞յն էր,— լսվեց մի քիչ հեռվից։

— Հա,— պատասխանեց մի ուրիշ ձայն։

Եգորը ցնցեց Մատվեյին։ Նա շարժվեց, բայց մնաց տեղում։

— Դե հիմի կտանենք խաղաղ բնակչի մոտ, թող իմանա իր գործն ինչ է,— ասաց Եգորը։

Կարճատև մարտը վերջացավ սովորական ձևով — այսինքն՝ թշնամին, որ չես իմանում ինչու է համառ դիմադրում, երբ չի կարող դիմանալ, կամ իսկույն նահանջում, երբ կարող է դիմադրել — այստեղ էլ նահանջեց, չփորձելով փողոցային մարտ ընդունել։ Զորամասը մտավ քաղաք և տեղավորվեց քաղաքի դպրոցում և նրա մերձ շինություններում։

Մատվեյին սայլով բերել էին քաղաք։ Նրան մտցրին դպրոցից քիչ հեռու առաջին պատահած տունը և պառկեցրին։ Տանտերը և ընտանիքը ոչ մի ձևով չարտահայտեցին իրենց վերաբերմունքը եկողներին։ Միայն մի կին, բակի տնվորներից, կաթ բերեց տնվորների համար։ Եվ Եգորը, որ ընկերներով նստել էր հատակին՝ նկատեց, որ այդ կինը համարյա չխոսեց տանտիրոջ ընտանիքի հետ, և նրա դեմքին խաղում էր հազիվ նկատելի հաղթական մի թեթև ժպիտ։ Տանտիկինը՝ բարձրահասակ ու գեղեցիկ մի կին՝ հանկարծ մոտեցավ կաթ բերող կնոջը և խիստ նկատողություն անելով, որ չի կարելի կաթն ուղղակի կաթսայով տալ վիրավորին՝ բաժակ բերեց և լցնելով կաթը, ինքը տարավ և դուրեկան ժպիտով տվեց վիրավորին։ Կաթ բերողը քմծիծաղ տվեց միայն և մեկմեկ նայելով վիրավորին և մյուսներին՝ հեռացավ։

— Գուցե բոլորդ կուզեիք տեղավորվել մեզ մո՞տ,— հարցրեց տանտիկինը Եգորին։

— Ձե՞զ մոտ, ոչ,— արթնանալով իր մտքերից՝ ասաց Եգորը և վեր կացավ։

— Մնացեք բոլորդ, մենք կտեղավորենք ձեզ,— այս անգամ պնդեց տանտիկինը,— տեղներս նեղ, սրտներս լեն։

Եվ ներվայնորեն ծիծաղեց։

— Էստեղ կմնան երկու հոգի վիրավորի մոտ, մենք կգնանք ուրիշ տեղ,— ասաց Եգորը և վեր կացավ։

— Մնացեք, ընկերներ, լավ կլիներ,— նորից պնդեց տանտիկինը։

Երկու հոգի թողնելով վիրավորի մոտ՝ խումբը դուրս եկավ տանից։ Դռան մոտ կանգնած էր կաթ բերող կինը, որը լուռ համակրանքով նայեց հեռացողներին և տեսնելով, թե ուր են ուղղվում՝ քթի տակ ժպտաց և մտավ ներս։

Եգորը իր ընկերների հետ Միխեևի խորհրդով մոտեցավ դրպրոցի հետևի տան փակ դռանը։ Տան պատուհանները գոց էին, իսկ ծխնելույզը հազիվ նկատելի ծխում էր։ Պարզ էր՝ բնակիչները թաքնվել էին, մի կերպ հանգցնելով վառարանը։ Դուռը ծեծեց Յաշան։ Ներսից ոչ մի պատասխան։ Դարձյալ ծեծեց, այս անգամ ծիծաղելով։ Մեռած միջանցքում մի բան քսվեց պատին, թե դռանը։

— Բա՛ց արեք դուռը, բան չենք անի, մե՛ք վախի,— կատակեց Յաշան։

Դուռը կիսով բացվեց, և մի տարակուսալից դեմք դուրս նայեց։ Եկողները ժպտացին։ Դեմքը նայեց կրկին և ապա շշնջաց։

— Համեցեք... եթե...

Ու դուռը բաց արեց։ Մարտիկները մտան տան միջանցքը։ Յաշան առաջ անցավ, արագ ու մի փոքր նայեց միջանցքի դիմաց երկու սենյակները, որոնցից մեկի դուռը կիսովին բաց արեց միայն և գլուխը թափ տվեց անփույթ.

— Մաքուր է,— շշնջաց նա յուրովի։

Հրացանները ցած բերին ուսներից և տեղավորվեցին սենյակում, նրանցից մինը թողնելով տանտիրոջն ու իր ընտանիքին։

Տունը տաք էր և բարեկարգ կլիներ, եթե չկրեր ինչ-որ թաքցնող ձեռքի հետքերը։ Սենյակում պահած էր միայն անհրաժեշտ կահավորումն ու ամանեղենը։ Մնացածը տարել էին։

Սենյակ մտավ տանտերը, որի դեմքը դիմակ էր դառել — անթափանց ու արհեստական կյանքի նշաններով ներկած կաշի։ Նա ժպտաց բերանի անկյուններով, իսկ աչքերը մնացին անշարժ ու սառը, ինչպես անկենդան ապակիներ։ Նա կարճահասակ էր և բավական լիքը։ Զգեստը հասարակ սև բլուզ էր, հին, բայց լավ նստած նրա բարեկազմ մարմնին։ Նա ներդաշնակ շարժումով կիսախոնարհ կանգնեց եկողների առաջ և այտերին մի ժպիտ կոտրելով՝ հարցրեց։

— Գուցե սամովա՞ր կկամենայիք։

— Նեղություն մի՛ կրեք,— կոշտ պատասխանեց Եգորը։

Տանտերը շնորհալի շարժումով շրջվեց դեպի նա.

— Ես իսկույն կարող էի թեյ տալ ձեզ։

Մարտիկները լուռ էին։

Տանտերը աշխույժ թափով շրջվելով՝ ետ գնաց։

Սեղանատան լայն սեղանի շուրջ շարվեցին մարտիկները՝ հրացանները պատերին հենած։ Հանեցին շոր ու սև հացերը. բայց տանտերը կրկին ետ եկավ և ամեն տեսակ ծառայության պատրաստ մատուցողի պես կանգնեց.

— Այստեղ եք գիշերելու, իհարկե։

— Աստված գիտե,— ասաց Կուզման քմծիծաղ։

— Նրա համար եմ ասում, որ դուք հոգնած եք,— հանգիստ ու հեզ ձայնով հոգ տարավ տանտերը և կենտրոնացած ու լուռ կանգնեց։ Մարտիկներն սկսեցին ագահորեն ուտել, իսկ տանտերը շուտ-շուտ գնում գալիս էր, կրկին կանգնում՝ ծառայության պատրաստ։ Նա հանգիստ էր ուզում պահել իրեն, բայց աչքերի ապակին սառն էր ու գաղտնապահ։ Իսկ ձեռքը դողում էր նուրբ ու անկատելի։ Նրա ձեռքը սառել էր մի անորոշ տարակուսանքով։ Նա երբեմն գաղտագողի արագ նայում էր իր սենյակի կողմը, ուր «իր ընտանիքն էր»։ Նրա խելացի աչքերը նայելով սեղանին դրած ուտելիքներին՝ միաժամանակ լարված հսկում էին զինված հյուրերին։ Ամեն մի շարժում սրանց կողմից աչքերի մեջ առաջ էին բերում մի գաղտնի երկյուղ։ Ինչի՞ց էր վախենում նա, ի՞նչ էր սպասում։

Նայում էր Եգորը տանտիրոջը, աչքերը սահեցնում նրա կեր-

պարանքի վրայով և հարց էր տալիս ինքն իրեն. «ո՞վ է սա...»։ Դուր չէր գալիս Եգորին տանտիրոջ բլուզը, որի տակ ներդաշնակ լողում էր նրա բարեկազմ իրանը՝ շուրջը խնամքով գոտին կապած։ Առավել տհաճ էին Եգորին տանտիրոջ փափուկ ու գեր ձեռքերը, որ նա կախել էր և հարգևոր կպցրել շալվարի կարերին։

Տանտերը կարդաց Եգորի հայացքը։ Մի երկու անգամ նրանց հայացքներն իրար գամվեցին։ Տանտերը սառը ժպտաց և հանդարտ, ինչ-որ մի բան հիշողի պես վեր կացավ և անցավ ննջարան՝ «իր» սենյակը։

— Սրան շոշափեցեք,— մոմոաց Եգորը։

— Հասկանալի է ով է... էլ ի՞նչ կարիք...— ասաց Միխեևը։

— Տեսեք ով կա նրա սենյակում,— խեթեց Միխեևը հանդիմանող հայացքով։

Յաշան վեր կացավ և գնաց։ Բաց դռնից երևում էր միջանցքում դիմացի սենյակը, ուր առանձնացավ տանտերը։

— Բա՛ց արեք դուռը,— կոշտ ձայնով ասաց Յաշան։

Դուրս նայեց տանտերը։ Նրա այտը ցնցվեց.

— Այստեղ իմ ընտանիքն է, ընկերնե՛ր, ի՞նչ կարիք կա...

— Ավելի լավ, հո չենք ուտի,— հրեց տանտիրոջը և ներս մտավ Յաշան։

Նրան հետևեց Կարպը։

— Պատերազմի ժամանակ է, մի՛ չարանաք...

Նրանք ներս մտան։ Եգորը նկատեց, որ Յաշան ընկրկեց և ձեռքը բարձրացնելով օդի մեջ՝ պահեց, մնաց։

— Թյո՜ւ, սատանա՛,— արեց Կարպը և ետ եկավ։

— Հա՛, ի՞նչ է,— հարցրեց Եգորը և վեր կացավ։

— Կե՛ղտ, սատանան տանի,— ծամածռեց դեմքը Կարպը։ Հետո քմծիծաղ տվեց.— սատանան հրեց մեզ էս կողմը, հենց ի՛սկը տեղն էր, որ եկանք։

Եգորն ու Կուզման մյուսների հետ գնացին այն սենյակը։ Նրանց առջև բացվեց մի անակնկալ պատկեր,— դագաղ էր, միջին մի հասակավոր մեռել՝ զինվորական մաքուր զգեստով, փայլուն ուսադիրներով ու շքանշաններով։ Մեռելն ուռել էր, և նրա դեմքի գծերը կորել էին ուռուցքի մեջ։ Սենյակում ոչ ոք չկար. ծանր հոտ էր ընկել, որ ավելի շարագուշակ էր դառնում մեռելը թաքցնելու պատճառով։ Փակ փեղկի բարակ ճեղքերից լույսը շոշափում

էր մեռելի անշարժ ու մոայլ դեմքը։ Դիակների ու մեռելների հետ անընդհատ գործ ունեցող մարտիկներին սաստիկ ազդեց այդ քստմնելի դիակը, ավելի շուտ նրա այդ գաղտնի, դավադրական ներկայությունը մի բնակարանում, ուր իջևանել էին նրանք, թեյ էին խմում և չէին իմանում, թե իսկապես ո՛վ էր այդ տանտերն ինքը։

— Ո՞վ է սա,— սպառնալից հարցրեց Յաշան և չոր նայեց տանտիրոջ աչքերին։

Տանտերը գունատվեց, ձեռքերը դողացին, բայց չկարողանալով զսպել նաև իր ներսում եռացող չարությունը, սառը արտասանեց.

— Մահացած է, ոչ ոքի հետ գործ չունի...

— Գիտե՛մ գործ չունի... Բայց դու ունե՞ս գործ և մե՛զ հետ ունես գործ,— վրա գնաց Յաշան և բռնեց տանտիրոջ բլուզը կրծքից,— դո՞ւ ով ես...

— Ով որ եմ, ինձ հետ էլ գործ չունես,— կես համարձակ, կես վախով շշնջաց տանտերը։

Յաշան բռունցքն իջեցրեց տանտիրոջ քունքին։ Նա ընկավ։

Հանկարծ փողոցում իրարանցում ընկավ։ Հեռվից տողեց գրնդացիրը։ Մարտիկները խլեցին հրացաններն ու դուրս պրծան տանից։ Զորամասը հավաքվում էր քաղաքի հյուսիսային ծայրամասը և դիրք բռնում։ Հրամանատարությունը տեղեկացել էր, որ սպիտակները հարձակվում են մեծ համալրումով։ Սկսվեց փողոցային մարտը։

Քանի դեռ մարտ էր՝ հնար չկար բոլոր վիրավորներին դուրս հանել տներից։ Մատվեյի և մյուս վիրավորի բնակարանից դուրս թռած երկու մարտիկները հենց դռների մոտ, առվի մեջ պառկած կրակում էին։ Հանկարծ կողքի փողոցից սրընթաց խուժեցին մի քանի ձիավոր կազակներ։ Մարտիկները կրակելով քաշվեցին ու կորան փողոցի անկյունից այն կողմը։ Եգորն իր ընկերներով կրակելով ետ էր քաշվում դեպի հյուսիսային ծայրամասը։ Անցնելով վիրավոր Մատվեյի տան առջևից՝ նա ուզեց ներս նայել, բայց հետևից թեժացող կրակը թույլ չտվեց, հարկավոր էր անցնել կտրող փողոցի անկյունը։ Հասնելով այնտեղ և սկսելով կրակել՝ նա տեսավ միայն, որ կաթ բերող կինը դուրս էր եկել և անհանգիստ նայում էր դեսուդեն։ Հանկարծ մի ձիավոր մոտեցավ նրան և սկսեց

մի բան հարցնել։ Այդ միջոցին տանից դուրս եկավ բարձրահասակ կինը և ցույց տալով առաջին կնոջը՝ ինչ-որ ասաց ձիավորին։ Սա վայրկենապես թարը վրա բերեց կնոջ գլխին։ Կինն ընկավ։ Ոչ ոք դուրս չեկավ տանից։ Բարձրահասակ կինը մնաց կանգնած։

— Հիմա Մատվեյին կմատնի քածը, նշան բռնիր,— շտապեցրեց Միշան Եգորին։

— Իսկ դու՝ ձիավորին,— ասաց Եգորը։

Կրակեցին։ Ձիավորն ընկավ, իսկ կինը ներս փախավ։ Նրանք նահանջեցին։ Թշնամին տիրեց քաղաքի բոլոր դիրքերին։

Մի քանի վերստ անցել էին, որ կանգ առան։ Հաղորդագրություն եկավ, որ հասնում են օգնական ուժեր։ Մնացին սպասելու։

Գիշերը փոսի մեջ կրակ վառեցին և նստեցին շուրջը։

Թշնամին չէր դուրս գալիս քաղաքից. երևի պատրաստվում էր ուժեղ հարձակում ծավալելու կամ այդ գիշեր կամ հետևյալ օրը։

Սաստիկ հոգնած էին մարտիկները։ Մի քանիսը հացը բերաններին քնեցին։ Չէին քնած միայն Եգորն ու նրա կողքին պառկած Կարպը։ Յուրտը սողում էր մինչև ոսկորները և կտրտում։ Խարույկի ջերմությունը կպչում էր քամու թևերին ու ցնդում նրա հետ։ Յաշան, Կուզման և Միշան քնած էին։

Եգորն ու Կարպը լուռ էին և անշարժ նայում էին հանգչող կրակին, որ աչքերն ահով բաց էր անում երբեմն, նայում քամու կողմը և նորից փակում։

Կարպը տնքաց։

— Օ՜ֆ, բախտ, դառը բախտ... ինչ մտել եմ էս զուլումը՝ մարմինս էնպես է ջարդվել, որ կասես թակած կաշվեպարկ եմ, ոսկորներս ծեծած՝ մեջ ածած։ Մարմին մի ասի, բեռ ասա։

Եգորը արձանի պես նայում էր լուռ ու անշարժ։ Կարպը միտք արեց մի քիչ ու հետո երազելու պես խոսեց.

— Մենակ թե չհավատաս, հիմի ես էն չեմ, ինչ-որ տանից հեռացել եմ։ Ոնց որ իմ տունը հետս գնում է օդի մեջ։ Ռուսաստանը հիմի՝ հենց վերցրու՝ թռչում է։

Յաշան քնի մեջ ատամները կրճտեց ու նվաց։ Եգորը նայեց նրա կողմը։

— Հանգիստ չունի տղան։ Անցյալ տարվա էն բանից եղավ։

— Ո՞ր,— խոժոռվեց Կարպը։

— Էն, որ սպիտակները բռնել էին և գցել ջրհորը։

— Է, հետո դուրս եկավ, չէ՞։

Եգորը քմծիծաղելով նայեց կրակին։

— Դուրս եկավ, բայց էլ ի՞նչ... էնքան էր սպասել ջրի մեջ, էնքան էր պատին փոսեր արել ու դառը տանջանքով դուրս եկել, որ հիմի ջրից վախում է։ Աստված չանի մի ճերմակ բան տեսնի՝ թիթեղ, դանակ, արծաթ,— սիրտը թափում է։

Կուզման վեր թռավ նստեց և դողաց.

— Կտրտում է անիծած քամին... բը՜ռռ...

Եգորը ծիծաղեց.

— Բա կարծում ես հորդ տան փեշի գլխի՞ն է։

Մարտիկները մեկ-մեկ զարթնեցին. ո՛րը նստեց, ո՛րն էլ պառկած՝ սկսեցին հազալ, մռմռալ, քորվել։

— Էդ վախի՞ց եք խոսում,— ասաց մի քիչ հեռու պառկած մի մարտիկ,— է՜խ, եղբայրներ, մի խոսեք։

— Է, դու էլ հենց նրա համար ես մարտիկ, որ էդ պառավական բաներից չվախես,— նկատեց Միխեևը, որ մեջքն արել էր դեպի կրակը և կուչ եկել։

Առաջինը վեր թռավ։

— Այ, դուրս կտաս հիմար-հիմար... — և շուռ եկավ դեպի նա,— չես իմանում ու խոսում ես։

— Բա՞... — ծիծաղեց Միխեևը,— այ, ես գիտեմ մեկին,— գնդակահարվածի կոշիկը հանել էր, որ հագնի։ Հենց ոտը մեջն էր դրել՝ մին էլ մուկը դուրս էր պրծել կոշիկից։ Էնպես էր վախը մտել սիրտը, որ մի ժամանակ բոբիկ էր ման գալիս։ Դա խե՞լք է։

— Էդ ահը գնդակահարվածիցն է գալիս,— խոսեց Եգորը,— էդ նրանից է, որ էս զուլումը մեզ գցել է մի էս տեսակ գործի մեջ։

— Պատերազմ է, դրանից է, դրանից է, չէ՞,— բացատրեց հեռու պառկածը և գոհունակ դեմքը դարձրեց դեպի Եգորի կողմը։

— Պատերազմը պատերազմ է, խոսք չկա, բայց սա էն պատերազմը չի, որ արել են գերմանացու հետ. սա մեր պատերազմն է։ Մենք մարդ ենք ու մարդ ենք սպանում։

— Բա չսպանե՞նք,— շար տոնով հարցրեց Եգորի կողքին նոր զարթնած մի շատ երիտասարդ մարտիկ։

Եգորը չշարժվեց տեղից.

— Ո՞նց թե չսպանենք, խելոք։ Սպանելու էլ ենք ու ջնջելու

էլ ենք մինչև վերջը։ Տղերքն ուրիշ բան են ասում։ Աշխարհքն է ծուռ հիմքի վրա շինած։ Ա՜յ։ Աշխարհքը պիտի դրստենք, թե չէ էսպես կյանք չի լինի։ Սա կյա՞նք է, վեց տարի է հրացանը ուսից վեր չի գալիս։

— Էդ նրանից է, որ մի հավատի չես, սրտով չես կռվում,— մրթմրթաց միջից մեկը, որ նոր էր զարթնել ու ծույլ հայացքով նայում էր խոսակիցներին։

— Էդ ո՞վ է,— ժանգոտվեց Միխեևը և անբարյացակամ նայեց խոսողին։

— Ես ինքս եմ, որ կամ,— արհամարհոտ պատասխանեց խոսողն ու վեր թռավ։ Նրա աչքերում իրոնիկ մի ժպիտ կար։

— Դե որ կաս՝ էդպես էլ կաց,— չոր կտրեց նրան Միխեևը,— դու ոչինչ չես հասկանում։

— Ես ոչինչ չեմ հասկանում,— չարացավ խոսակիցը,— ես ձեզ պես չեմ։ Մտար կռիվ՝ գնա մինչև վերջը։ Շատ մի խոսի։

Եգորը չար աչքերով նայեց նրան.

— Ոչ թե մենք չենք գնում մինչև վերջը, դու չես սկսել գնալ դեռ։ Դու մարտի՞կ ես։ Դու դեռ կռիվ չես տեսել կարգին։ Դու դեռ նոր ես հետույքդ գետնին դնում, իսկ մենք տասը ոսկոր ենք մաշել՝ քսելով հողին ու քարին։ Իսկ եթե դու մեզ դավաճան դուրս կբերես՝ քթիդ կհասցնենք, չենք խնայի։

Խոսողը լեզուն իրեն քաշեց։

Եգորը խառնեց կրակը, հետո թութուն հանեց ու սկսեց լրագրի թղթի մեջ պտտել։

— Դու մեզ հետ գլուխ չես հանի, մի՛ խոսի։ Վերցրե՞լ ենք էս գործը՝ գլուխ կբերենք։

— Էս կռիվը ուրախ կռիվ է, էս մեր կռիվն է։ Ուզում ենք, որ մեր գլխին կապիտալիստ ու բարին չլինի։— Հենց սա էլ դրա կռիվն է,— խոսեց մթան միջից Միշան՝ որ քթի տակին ժպտալով ականջ էր դնում մարտիկներին։

Նրան դուր էր գալիս բանակայինների այս կռվոտուքը։ Դա մարտական կյանքի ամենախաղաղ զրույցն էր։ Միշան սիրում էր երազել ապագայի մասին։ Նա երևակայում էր, որ շուտով-շուտով ամբողջ աշխարհը վեր կկենա և կտապալի զոնությունն ու կեղեքումը։ Նա պլաններ էր կազմում։ Ահա գարնանը կոնտրռևոլյուցիան կխորտակվի, պրոլետարիատը կհաղթի, կսկսվի սոցիալիզմը։

Բայց նա գիտեր, որ դա այդպես շուտ այդ գարնանը և հեշտ չէր լինի, որ դա պիտի դա արյան գետերից և երկաթե մրրիկներից հետո։ Բայց նա սիրում էր այդպես երազել։

Քամին ուժեղացավ։ Հարկավոր էր պատսպարվել։ Բայց որտե՞ղ և ինչպե՞ս։ Մարտիկները կծկվեցին իրենց պատառոտված շինելների մեջ և կուչ եկան։ Խարույկի կրակը ցրվեց, մարեց։

Իսկ հեռուն սևին էր տալիս քաղաքը։ Այնտեղ էին սպիտակները, որոնք ո՛վ գիտե ինչե՞ր էին պատրաստում վաղվա համար։

Եգորը չէր քնում։ Ծխում էր դառնորեն և մտածում։

***

Հետևյալ օր զորամասը կռվով մտավ քաղաքը։

Մարտը քաղաքի փողոցներում երկար տևեց։ Թշնամին դիմադրում էր հուսահատ ճիգով։ Հեշտ չէր նրան ամեն մի փողոցից ու տնից դուրս հանելն ու քշելը։ Մարտիկները կատաղել էին։ Այն սոված ու պատառոտված մարդիկ, որ հոգնությունից երբեմն չէին կարողանում հացը բերանները տանել՝ այժմ կռվում էին դեվերի պես։ Քաղաքն առնվեց արյունահեղ մարտով միայն։ Սպիտակները քշվեցին հեռու, որոնց հետապնդելու ելավ հեծելագունդը։ Բայց ինչպես երևում է՝ շատ էլ հեռու չնահանջեց թշնամին։ Զորամասը կանգ առավ քաղաքից մի քանի վերստ հեռու։ Բավականին վիրավորներ մնացին քաղաքի փողոցներում, նրանց հավաքեցին և տեղավորեցին դպրոցում և տներում։ Ճակատում գործերն ինչ-որ սկսեցին դանդաղել, և զորամասի որոշ հատվածներ, մանավանդ վիրավորները մնացին քաղաքում։

Եգորն ու Յաշան էլ թեթև վիրավորված էին՝ Եգորն ուսից, իսկ Յաշան ականջի ծայրից։ Նրանց վերքերը կապեցին, և նրանք դուրս եկան փողոց։ Իրենց նման թեթև վիրավորված մի քանի բանակայինների հետ ուղղվեցին դեպի այն տունը, ուր թողել էին Մատվեյին։

Գնում էր Եգորը իր ընկերների հետ և նայում քաղաքի տներին։ Եգորի մեջ մի չար բան էր կուտակվում, որ ելք էր որոնում պոռթկալու։

Երբ մոտեցան տանը՝ բակից դուրս եկավ մի պառավ կին և տեսնելով մոտեցող մարտիկներին՝ մազերը բռնեց ու ճչաց.

— Նա չկա՞, նա չկա՞, տարան անիծածները...

— Տարա՞ն,— մռայլվեց Եգորը,— իսկ ո՞ւր է էն կնիկը...

— Կնիկը գնաց իրայիններ հետ։

— Կգնա՞ր, չէ՞ր մնա,— մրմռաց Եգորը և կանգ առավ մտածկոտ։

— Ո՞նց եղավ,— հարցրեց նա ինքն էլ զայրանալով իր անօգուտ հարցից։

— Ծածուկ գնաց շտաբը, էնտեղ մատնեց, որ իր տանը կարմիր կա։ Եկան տարան խեղճին,— բեկբեկվում էր պառավը։

— Ախր, ո՞նց կարելի էր թողնել դրանց մոտ...

Եգորը նայեց իր շուրջը։ Կանայք էին, բոլորն էլ տուժած էին երևում։ Լաց էին լինում և հուսալից հայացքներ ուղղում դեպի բանակայինները։

— Իսկ էն կնի՞կն ով էր, որին սպանեց կազակը։

Պառավը հեծկլտաց։ Կանայք հայտնեցին, որ նա պառավի աղջիկն էր։

— Վաղուց քեն ուներ իմ աղջկանից... Ախր, խեղճը դուրս էր եկել ձեզ իմաց տալու, որ վիրավորին տանեք... Մատնեց, սպանել տվեց օձը...

Եգորն ու մյուսները ներս մտան այն բնակարանը, ուր տեղավորել էին վիրավորներին։ Բնակարանը դատարկ էր, մռայլ, թշնամական լռությամբ համակված։

— Գիշերս փախան... — բացատրեց մի կին, որ շարունակ դալիս էր Եգորի հետևից։

Եգորը միջանցքում կանգ առավ և ինչ-որ բան էր որոնում, բան էր ուզում անել։

Մի ոչ այնքան հասակավոր մարդ մտավ միջանցքը և ոտնաթաթերի վրա մատ գալով՝ եկավ նրանց կողքից անցավ, գնաց իր սենյակը։

— Իսկ դո՞ւ ով ես,— հարցրեց Եգորը, խոժոռ նայելով նրան։

— Ե՞ս,— կրկնեց նա ապահով ու անմեղ ձայնով,— ես խաղաղ բնակիչ եմ։

Եգորը՝ չգիտես ինչու, սկսեց նայել տան մյուս մասերը։ Մտավ մի բնակարան։ Յաշան հետևեց նրան։ Տանտիրանք ընդունեցին զսպված հայացքով։ Ամբողջ ընտանիքը քաշվել էր մի սենյակ և կուչ եկել։ Կանգնեցին, նայեցին։ Մի կին էր՝ երեք աղջիկների հետ։ Նրանք լուռ էին, եկողները ևս լռեցին։

— Ինչո՞ւ եք քաշվել էստեղ,— հարցրեց վեցոջաթես Յաշան։

Տանտիկինը նայեց հատակին և անշեշտ ձայնով պատասխանեց.

— Մենք ոչ ոքի չենք խանգարում։

Յաշան ուզեց խոսել, բայց բան դուրս չեկավ։ Իսկ տանտիկինն իր աղջկերանց հետ լսում էր։ Յաշան շփոթվելով և մի փոքր քաշվելով իր այցելությունից՝ չիմանալով ինչ անել՝ մոտեցավ կոմոդին և ձեռքն աննպատակ դրեց հայելու մոտի ալբոմին։ Տանտիկինն օձի նման նայեց նրան և լարվեց։ Յաշան անշնորհք ժպիտով բացեց ալբոմը։

— Մի ալբոմ ունենք՝ այն էլ տանում եք,— ֆշշաց կինը, շաղ նայելով Յաշային։

Յաշան, որ ալբոմը թերթել էր արագ և նկատել այնտեղ հագցրած լուսանկարները, որոնց մեծ մասը կուշտ ու բարեկարգ վաճառականներ էին ու զինվորականներ՝ ալբոմն ուժով խփեց սեղանին.

— Առեք, ձեզ լինեն ձեր տոզած պապաշա-մամաշեքը, նրանք ատելի են ինձ...

Եգորը, որ կանգնած էր դռան մեջ՝ ետ եկավ և մոտենալով այն դռանը, ուր կանգնած փակվեց այն ներս եկող մարդը՝ ծեծեց դուռը։

Մարդը դուրս եկավ և հանգիստ ու պղտոր աչքերն ուղղեց Եգորին։

— Ի՞նչ կհրամայեք,— հարցրեց։

Եգորը շրթունքները չփչփացրեց ու մտածեց։ Հետո նայեց նրան.

— Իսկ դու ի՞նչ էիր անում, որ մի կռանդ հարազատն էր ապրում, մյուս կռանդ՝ մատնիչը։

— Ի՞նչ պիտի անեի ես,— մեղմ անհանգստությամբ հարցրեց մարդը։

— Ինչ պիտի անեի՞ր։

— Ի՞նչ կարող էի անել,— սիրտ առավ մարդը։

Եգորը կրծեց շրթունքները.

— Իսկ տանը տիտիկ անել կարո՞ղ ես։ Ինչո՞ւ չես դուրս գալիս թշնամու դեմ։

— Թշնամին հայտնի չէ, ո՞ւմ դեմ կռվես,— դանդատավոր ձայնով խոսեց դիմացինը,— ու չես էլ իմանում, թե մենք ինչու ենք տանջվում, որ խաղաղ բնակիչներ ենք։

— Առ քեզ հայտնի թշնամին, ընտրիր հիմա,— բռունցքով զարկեց նրա դնչին Եգորը,— ու մի՛ նստի տանը։

Խաղաղ բնակիչն ընկավ ուշաթափ։ Եգորը թքեց ու դուրս եկավ տնից։ Նրան հետևեցին մյուսները։

Գնում էր զորամասը դաշտերով ու բլուրներով։ Կարծես երբեք էլ վերջ չեն ունենալու այդ դաշտերն ու բլուրները։ Օրերն են դառնում, ամիսները, տարիները, բայց պատերազմի էլ վերջը չի երևում։ Ընդհակառակը՝ ավելի է հուպ տալիս նա։ Իսկ թշնամիներն ավելանում են, այդ օտարազգիները, սպիտակները, բնակչության ողջ կոնտրռևոլյուցիոն զանգվածները։ Մյուս կողմից էլ քաղաքներից ու գյուղերից անընդհատ գետերի պես դեպի կարմիր բանակն են հոսում բնակչության այն մասերը, որ ծառս են ելել տիրող դասակարգի դեմ։ Դրանց մեծ մասը կորցրել է իր տունը, ապրուստը, հարազատներին։ Նա դուրս է եկել գրավելու գործարաններն ու հողը։

Բայց այդ հողը գերի է դեռ։ Նա փռվել է անմշակ ու ամուլ, չի կերակրում ոչ ոքի։ Սովը հյուծում է ժողովրդական լայն զանգվածներին։ Երբ զորամասը մտնում է մի շեն, էլ չի խուզարկում հացի թաքցրած պաշարներ գտնելու համար։ Բանակայինները նայում են բնակիչների դեմքերին և նրանցով էլ դատում, թե ինչ սոնդ կա այնտեղ հայտնի, թե թաքուն։

Մի անգամ Ցաշան գերի ընկավ հետախուզության ժամանակ։ Նրան տարան շտաբը՝ հարցաքննելու։ Դեղնակարմիր սպան տեսնելով, որ Ցաշան չի խոսում՝ հարձակվեց վրան, զարկեց ատամներին և հետո հրամայեց զինվորներին, որ ծեծեն։ Գցեցին ոտի տակ և սկսեցին կրունկներով թակել։ Ընկած էր Ցաշան հատակին, բերանքսիվայր, շրթունքները ցեխոտ տախտակին կպած։ Հանկարծ նա զգաց, որ ատամների և լեզվի արանքում մի հաճելի բան լցվեց։ Դա ցեխոտ հացի կեղև էր։ Ցաշան սկսեց ծամել և ցեխի ու սեփական արյան աղի համի հետ հազիվ զգում էր հացի համը։ Նա մի բոպե մոռացավ և՛ ծեծը, և՛ մահվան մերձավորությունը։

Նրան տարան մարագը, որ հետևյալ օրը գնդակահարեն։ Բայց Ցաշան, որ ագահորեն կերել էր հացի կեղևը՝ կարծես ավելի ագահացավ կյանքի հանդեպ։ Մութ անկյունում նստած՝ նա մտածում էր ապրելու մասին, կարելի՞ բան է։ «Ոչ, ապրել, ապրել, ոչնչացնել այս գազաններին ու ապրել հազար տարի»։

Եվ մինչև լուսադեմ քանդեց հողը և ծակեց դուրս եկավ, փախավ։

Եգորի մյուս ընկերը՝ Կուզման, մնաց ճանապարհի գյուղերից մեկում, ուր գիշերը մարագում քնած ժամանակ հարևան մի կուլակ իր կնոջ ու հարսի հետ նրան տարել ու գցել էին ջրհորը և մի հատ քար էլ գցել վրան։

Իսկ Կարպը վիրավոր ընկավ մի թեժ մարտում։ Զորամասի՝ Եգորի մյուս մտերիմները մնացին։ Նրանք դիմացան արշավանքին։ Փոխվել էին նրանք անճանաչելի դառնալու չափ։ Եգորի մազերում ճերմակներ երևացին, իսկ Ցաշայի ոսկորն ու կաշին էր մնացել։

— Էս է՝ մինչև ազատությունը ձեռք չբերենք՝ էսպես կգնանք աշխարհքի ծերը,— ասում էր Ցաշան Եգորին։

— Ոչինչ, ես էլ կփչանամ, թշնամուն էլ կփչացնեմ, թող աշխարհքի համար թեթև լինի։

Զորամասն անցնում էր մի ավանով։ Փողոցի բազմությունը ճանապարհը բաց արած՝ նայում էր բանակայիններին։ Միշան, որ գլուխը կախ գնում էր շարքից մի փոքր շեղված՝ մտածում էր այն մասին, թե ինչ ասաց Եգորը։ Եվ որքան որ նրա մարմնի յուրաքանչյուր անդամը կարող էր զգալ այդ ճանապարհի երկարությունը՝ նա զգաց մի անվերջություն, որ իրոք փռված է իր առջև։ Նա զգում էր, որ ինքը սովոր է գնալու այդ անվերջությունը, որ կյանքի միակ նպատակն այդ անընդհատ երթն է դեպի մի բարձր նպատակ,— ազատ մարդու տիրապետությունը։

Այդպես մտքերի ծովն ընկած և անգամ մոռացած, որ ինքն անցնում է ավանի բազմության միջով՝ նա պատահաբար գլուխը բարձրացրեց վերև և նայեց մարդկանց։ Եվ հանկարծ բազմության միջից մի կին եռանդուն շարժումներով ճամփա բաց անելով վազեց դեպի Միշան։ Նրա ճերմակող մազերը գզգզված էին, նա մաշված էր, գունատ։ Միշան աչքերը կկոցեց։ Կինը ահով և ուրախացած աչքերով վազեց դեպի Միշան։

— Մերի՛կ...

— Ես եմ, ե՛ս...

Միշայի մայրը... Այստե՛ղ, հարյուրավոր վերստեր հեռու իրենց աննշան գյուղից։ Տես, թե ինչպե՞ս է բարձրացել քամին ու քշում տանում ամբողջ Ռուսիան, Միշայի փոքրիկ, աննշան մոր հետ։

Մայրը դողալով գրկեց Միշային և կարոտով կպավ նրա կրծքին։ Միշան մի թևով պահեց մորը և զգաց, թե ո՞ր աստիճանի թեթևացել էր մայրը։

— Դե հերիք է, մերի՛կ։ Մնա, ես էլի գնում եմ։

— Էլի՞... բա ո՞ւր, էսպես մինչև որտե՞ղ...

— Չեմ իմանում, որտեղ վերջանա...

Մայրը սայթաքելով ու հևիհև վազում էր Միշայի կողքից։

— Իսկ դու որտեղի՞ց, էս ո՞նց... — հարցրեց Միշան՝ կողքանց նայելով մորը։

— Սպիտակներից եմ փախել... գնում եմ Ռյազան՝ քրոջս մոտ։ Մինչև հաղթենք...

— Գնա՛, լավ է։ Մնաս բարով։

— Գնաս բարով, Մի՛շկա, ա՛խ...

Մայրն էլի քաշ եկավ Միշայի կողքից և ետ մնաց։ Աբտասուքների մեջ արտացոլվեց զորամասը, հրացանները, Միշան, մյուսները, բոլորը արևառ, մաշված, կապարագույն։ Հետո կինը կանգնեց, նայեց, նայեց, մինչև զորամասը ճոճվելով ու ռիթմիկ երերալով կորավ հորիզոնի մեջ։

— Հը՛, մե՛րդ էր,— շշնջաց Եգորը,— ճնճղուկ է դառել թեթև։

— Հա՛,— երկարացրեց Միշան,— մտքիցս ընկել էր, կասես ծառի բնից եմ դուրս եկել, ոչ թե մորից։

— Սա էն զուլումը չի — մերդ է՛լ կընկնի մտիցդ, անունդ է՛լ։

— Տես, է՛,— գլուխը թափ տվեց Միշան, ծիծաղեց ու էլի ընկավ մտքերի ծովը։

Բանակայինները գնում էին գլխիկոր ու լուռ։ Եվ ոչ ոք առանձին ուշով չէր նայում այն դիակներին, որ փռված էին լինում դաշտում, ճանապարհի եզրերին։ Դրանք թշնամու ետ մնացած, սառած կամ արյունաքամ վիրավորներ էին, որ թշնամին ցանում էր իր հետևից։ Ագռավները օդի մեջ կախելով իրենց ծանր հետուլքները՝ ծույլ-ծույլ թռչում էին դիակից դիակ։

— Թախծալի է, թախծալի,— բարձրաձայն մտածում է Միշան,— ծանր կյանք է, բայց բոլորը մարդկանց համար է։

Միխեևը ծուռ նայում է նրան.

— Դու մեր սրտերը գութ մի՛ գցի, մենք գիտենք, թե էս պատերազմը ոնց ենք անում։ Էս էսպես կանենք՝ էլ էս բաները չեն լինի։

Զորամասը հասնում էր արդեն Դոնի շրջանները։ Գարունը նայում էր հալվող ջրերի միջից, շողում գողունի ժպիտով։

Սպիտակները նահանջում էին ու նահանջում։ Սևահողը մռայլ, բայց հուսալից մերկությամբ անծայրածիր ու լայն փռված էր ամեն կողմ ու կլանում էր իր գրկի մեջ պրոլետարական բանակը։

Հեռվից, գետնի տակից, դուրս եկավ մեծ քաղաքը։ Այնտեղ թեժ կռիվ էր, որ մղում էր առաջ ուղարկված հեծելազորը։ Զորամասը գնում էր օգնության։ Հոգնած էր նա, բայց կռվի տենչը նոր ուժ էր տվել նրան։ Շտապում էին։ Եգորն ու իր ընկերները լարված հայացքներով նայում էին քաղաքի կողմը։ Միայն Միշան հիվանդ էր և ուժասպառ։ Նա կանգ առավ։

Դուրս եկավ ճամփից և մեջքի վրա փռվելով ասաց.

— Գնա՛ք բարով եղբայրնե՛ր, էլ չե՛մ կարող։

Նրան թողին, որ հետո գա, հասնի։ Նա ուշաթափ մնաց։

Բայց նրան զարթեցրեց թրի խայթոցը։ Աչքերը բաց արեց՝ սպիտակներն էին։ Միշան տեղից չշարժվեց էլ։ Մինչև անգամ թեթևացավ կարծես, որ արյունը գնաց։ Սպիտակներն անցան, թողնելով նրան կիսամեռ։

Հետո ուշքի եկավ, նայեց չորս կողմ, ոչ ոք չէր երևում։ Հեռվում, մթան մեջ, սևին էր տալիս քաղաքը։ Ականջ դրեց՝ հրանոթների ձայն էր գալիս, բայց այն էլ շատ խուլ, ավելի հեռու, քան քաղաքը։ Ի՞նչ էր կատարվում այնտեղ, հաղթո՞ւմ էին կարմիրները, ո՞ւմ էր ժպտում բախտը։ Միշան շուռ եկավ մեջքի վրա և սկսեց դիտել աստեղավառ երկինքը։ Գլուխը պտտվում էր, ականջները թշշում, կարծես գետի ալիքներ էին անցնում իր վրայից։ Քունը, թե ուժասպառումը փակում էին նրա աչքերը։ Նրանից անկախ կարծես իբրև մի երաժշտություն հնչում էին երգներ ու մտքեր, նա խորասուզվում էր երկնքի անհամար աստղերի հույլե-

րի մեջ, որոնք նրան թվում էին ապագա մարդկության ճանապարհի լապտերները։

Ապրե՜լ, ապրե՜լ, հավիտյան ազատ, խոր, խմել գիտությունը, արվեստը, որոնց այնքան ծարավ էր Միշան, որոնց մասին երազել էր շարունակ։

«Շուտո՜վ, շուտո՜վ»,— մրմնջաց նա և աչքերը փակեց։

1924 թ.

ՀՈՂԸ

Խորի՜ն, իսկական Հայաստան։

Նրա քաղաքներից մինը։ Քաղաք՝ ձեռաց շինած։

Խրճիթների, մարագների ու ախոռների արանքում՝ տպարան, կոոպերատիվ, էլեկտրակայան։

Եվ երդիկների ծուխը բարդ-բարդ ծառանում է դեպի վեր։

Մի երկար փողոց գնում է իր համար։ Մերթ անհամոզիչ ծռվում է աջ, երբեմն ձախ ու հետո գնում, գնում, հարու է տալիս և քաղաքից վազում դուրս։

Փողոցի երկու կողմն ինչ-որ արտառոց գոմեր, վայրիվերո բակեր կան հին պոստային վարչություններից մնացած, «ստարոստայական» ռենեսանսի ոճով։ Բակերի ընդարձակություններ, ուր քայքայված ֆուրգոնների տակ, ձիու աղբերի շուրջը հախուռն հավաքույթներ են լինում ճնճղուկների ու հավերի։ Եվ ճանճե՜ր, ճանճե՜ր... բզզում են, պարում օդի մեջ ամենուրեք։

Ցուցանակներ են հորանջում խանութների ճակատին։ Վիթխարի մալականը իր ահագին դեղնամորուքի հետ ման է գալիս խանութե-խանութ։ Մինչ սայլով խոտը ականջդ ճանկելով անց է կենում քունքիդ մոտով։ Ահա և կարմիրբանակային վաշտը. կարմրաթուշ պատանիներ՝ ամուր նյութից շինած գյուղացի տղերք, կարծես քոչարի բռնած իրար են կպել, պատի պես առաջ են գալիս։ Ալեծածան է նրանց ընթացքը և երգը համավոր. մի քիչ էլ համեստ։ Եվ շիրակեցի կարմիրբանակայինը ատամների սադաֆը մերկացրած դողացնում է կզակը.

«Մի—ենք իենք կարմիր բանակը»...

Անցնում են։

Շուկան։ Գյուղացիներ, գեղչկուհիներ, պիոներներ, գինվորական խոհանոցի սայլը, խուրջիններ, եղաններ, ավտոմոբիլ, եղ... Կոոպերատիվ խանութում իրար են խառնված։

Բայց հենց ծովում ես փողոցի մի կողմը՝ աջ կամ ձախ՝ ուրարտական լռություն... Հինգերյա գյուղն է, իր դատարկ փողոցներով։ Հեռուն՝ դաշտերն են արտերի կարկատաններով մինչև լեռների լանջերը։

Իմ տանտիրոջ՝ բիձայի արխալուղի պես։

Եկել եմ Հանգստի։ Սենյակս գյուղի ծայրին է։ Նստում եմ պատշգամբում, գիրքը ձեռիս։ Դեմից անտառը իր կանաչ աչքերով մտիկ է տալիս...

Եվ քունս տանում է։

Տանտերս մի ութսուն տարեկան բիձա մարդ է։ Ամպի մորուքը դեմքից կախ։

Նոր ենք ծանոթանում իրար հետ։ Կողքովն անցնելիս ասում եմ՝ «բարով, բիձա»։

— Այ բարին արևիիի-ի՛դ... — ձգում է ետևիցս մի քանի քայլ։ Դեռ տնտղում է ինձ։ Սպասողական դիրք է բռնել։ Մի երկու հոտոտեց — բան դուրս չեկավ։ Ուզում է իմանալ, թե ինչ մարդ եմ։

Վերջին տարիների վայրիվերումները մի քիչ շփոթել են բիձային։ Վրիպում է շարունակ. մարդիկ, նրանց վիճակը, գործը, արտաքինը այնպես են փոխվել, որ բիձայի աչքերը խառնվում են։

Առայժմ կարծեմ վաճառականի տեղ է դնում ինձ։

Ես էլ դիտմամբ պղտորում եմ ջուրը, տեսնենք ինչ կանի։

Պատշգամբիս առջև տան բակն է, հավերի ներկայությունը։ Աջ կողմը թոնրատունն է. ձախ՝ սենյակներ են վարձու տված։

Օրը շոգ է, փայլում է կարմիր գաթայի պես։ Օրվա քունը տանում է։ Արևի մեղրը հալվում, ծորում է տների, ծառերի, աթարների բուրգերից գետնի վրա։

Թմրում եմ պատշգամբում։ Կիսափակ աչքերիս դեմ մի վաղածանոթ պատկեր է երևում։ Չոր աթարների ճարտարապետությունը, թարմ աթարների գաթաները պատերին փակցրած։ Հավերը իրենց բևեռագիր կատարներով, աքլորի կանչը՝ ինչ-որ ուրարտական շեշտով, որ ծորում է՝ «ծո՛ւղ-ռու-ղո՛ւ-ո՛ւ»։

Մեղուները պստիկ այերոպլանների պես ճախրում են շուրջդ և բզզալով մի տարտամություն են բերում վրադ։

Բակը ամայի է։ Տանտերս է միայն տանը։ Նստել է ջրհորի

բերանի մոտ, գերանի վրա ու գլխով շուտ-շուտ կշռում է ու արթնանում։ Գլխին մի յուղոտ շլյապ ունի, որ անշուշտ մի տյուկի մեջ նավ է նստել Հյուսիսային Միացյալ Նահանգներում և Ատլանտյան օվկիանոսը ճեղքել դուրս է եկել Լենինական քաղաքը։ Եվ ո՞վ իմանա ի՞նչ ժամի՝ երկու վանեցի վաճառական ո՛ր տախտակե խանութի լռության մեջ, երկար շուռ ու մուռ տալով այդ շլյապը՝ խորհրդակցեցին և գինը կտրեցին այսպես.

— Խյնգ շահի։

Եվ շլյապը նստեց բիձայի գլխին։ Բիձան երկու աշխարհ ունի իր վրան։ Ուսից վեր և ուսից վար։ Ուսից վեր Ամերիկա է։ Ահագնագղորդ չուգունե քաղաք. փողոցներով հոսում է ավտոբուսների, տրամվայների, մարդկանց մի հորդ Միսսիսիպի։ Ամերիկյան եկեղեցի։ Աղոթող բազմության դիմաց կանգնել է վշտից գերացած պաստորը, որ հնդուհավի վզի նման կարմիր երեսը մռայլելով՝ ճենճերային ձայնով սաղմոսում է։ Արևելք, աղքատներ, եղբայրներ ի Քրիստոս։ Ս. հոգին այցելում է բազմությանը, և հետևյալ օրը ամերիկացու գլխից շլյապը ճամփա է ընկնում Արևելք, մինչև բիձայի գլուխը։

Գլխարկից վար ուրիշ աշխարհ է։ Հին օրեր։ Հասան խան, յաթաղան, զնջիլ, ֆարրաշներ։ Խանը խոսեց՝ գլուխը թռավ։ Հետո ուրիշ օրեր։ Երկճյուղ մորուքավոր պրիստավ, յասավուլ՝ ահռելի փափախով։ Մտրակ, ծեծ, հայհոյանք, կաշառք։ Քյոխվան կտրան ծերից ըռխալի հայհոյանքով հրամայում է գզրին. «Տո՛ւր, տո՛ւր էդ շուն շան որդուն, տո՛ւր էդ հառամզադին»։ Գյուղացին ծեծվում է, պատռտած բազմակարկատ արխալուղը ծլանգ-ծլանգ փոփոում է քամու առաջ։

Քնած է բիձան։

Կարծեմ ես էլ եմ քնած։

Մեկ էլ հանկարծ։

— Քշա՛, քշա՛, ձեր քոքը վառի...

(Հասան խա՛նը)։

— Քշա՛,— կրկնում է բիձան ու քարը շպրտում հավերի վրա.

Սրանք խուճապով փախչում են և անհամոզիչ կերպով բարձր ճչալով նահանջում են նախօրոք նշանակված դիրքերը նոր հարձակման մտադրությամբ։

Բիձան տան մեծն է։ Արամազդը ինքը։ Ընտանիքի մյուս անդամներից են իր պառավը, երկու որդին 40 և 45 տարեկան, մի որբևայրի հարս և հինգ-վեց մանր ու խոշոր տղա-աղջիկ։

Ընտանիքի մեջ է մտնում նաև մի կիսախենթ բիձա։ Նրան չեն սիրում. նախ նրա համար, որ պառավի եղբայրն է, ասել է՝ տանից չէ, և ապա՝ որ խենթ է, կարելի է չսիրել։ Բայց և այնպես նրան պահում են, քանի որ նա մի պստիկ տուն ունի, որ ամառավորներին վարձով են տալիս և վարձը իրենք են ստանում։ Մեկ էլ՝ իրենց բոստանը նա է պահում։

Խենթը տուն չի գալիս։ Նա իր խելքը — եթե ունի, և երևում է, որ ունի ինչ-որ յուրատեսակի մի խելք — այդ խելքը տվել է բոստանին։

Դանավոր խոսակցության ժամանակ հարևանները նրան «բիձա» են ասում, իսկ առօրյա գործածության համար որոշված է՝ «գիժը»։ Բարձրահասակ, չոր ու ցամաք մի ծերուկ է բիձան, աչքերը խորն ընկած, ման է գալիս գլուխը բարձր բռնած, երերալով, կարծես հիմի պիտի ընկնի, կանգ է առնում ու մրթմրթում։ Շաբաթը մի հետ երևում է բակում, այն էլ հատկապես գոռգոռալու։ Այդ լինում է այն ժամանակ, երբ տանեցիներից մեկը երեխաների մոտ բան է ասած լինում նրա մասին, և երեխաները խոսքը տեղ են հասցնում։

— Ո՞ւմ շներն եք,— գոռում է բիձան,— սոված շներ, ո՞վ ա ձեզ իրավունք տվել իմ վրեն բերան պատռելու։ Ես որ չըլեմ՝ սովից կսատկեք։

Այդ գոռոցը, ճիշտ ասած, դիվանագիտական բնույթ ունի, ավելի մարկայի համար է, որպեսզի իր պատիվը որոշ մակարդակի վրա պահի։

Բոլորը լռում են։ Միայն երբ բիձան կանոնադրության սահմանից անցնում է և գործ է ածում ոչ պառլամենտական ոճեր, տանտերս ձայնը բարձրացնում է.

— Դե, լավ, հերիք հաչես, ռա՛դ ըլի։

— Ո՞ւմ ես ասում ռադ ըլի՝ պրիստա՞վ ես, թե գուբերնատ... — ու այս ոգով դեռ երկար շարունակվում է բիձայի ամբաստանագիրը։ Բայց նրան լսող չկա, նա էլ բավարարված է։ Ուստի և վերջացնում է ու մոմռալով հեռանում դեպի բոստանները։ Ճանապարհին երերում է ու կանգ առնում։ Ահա բահը զարկեց մի քարի ու շպրտեց ճամփից դուրս։ Ահա և կանգնեց, նայում է առուների ջրին։ Աշխատանք գտավ, ուրեմն և մոռացել է միջադեպը։

Այս առավոտ անկողնում էի, որ լսեցի բիձայի ձայնը և մեկ էլ մի անծանոթ երիտասարդի ձայն։

— Դո՞ւ ես տանտերը։

— Տանտե՞րը, ի՞նչ կա որ,— զգուշացավ բիձան։

— Դու չե՞ս տանտերը։

— Ախր մի ասա տեսնեմ ի՞նչ կա։ Հա, ես եմ։

Գլուխս բարձրացրի, որ տեսնեմ, թե ինչ երիտասարդ էր։ Չէր երևում։ Միայն բիձայի միրուքն էր տմբտմբում։

Երիտասարդն ըստ երևույթին գործկոմից էր։

— Քանի՞ հոգի եք։

— Քանի հոգի՞։

— Հա, քանի՞ հոգի եք։

— Ըստե՞ղ,— ու բիձան որջից գլուխ դուրս հանած գայլի պես տնտղում է երիտասարդին,— ըստեղ երկու աշխատող ենք։

— Մի՞թե այդքան միայն։

Բիձան գիտե, թե ինչ է անում։ Չհասկանալու է տալիս, ժամանակ շահում, որ իմանա, թե ո՛վ է երիտասարդը, ինչի՞ է հարցնում և ինչ դուրս կգա տակից։ Դրա համար էլ գորտի պես ջուրը պղտորում է տիղմով և տակին տաղ անում։

— Ո՞նց թե երկու հոգի եք, տանը ուրիշ մարդ չկա՞։

— Կա, ամա նրանք ուտող են։

— Դու ինձ բոլորը միասին ասա։

— Ըստեղ երկու հոգի ենք... — ու հանկարծ կրկին նույն հարցը.— յավաշ, էդ ընչի՞ համար ես հարցնում։

— Պետք է,— կարճ կտրում է անփորձ երիտասարդը և բարկանում։

— Այ ի՞նչ իմանամ։ Միտքս վրաս չի։

Երիտասարդը գրում է ըստ երևույթին.

— Քո անո՞ւնը։

— Գրի՝ Մացաք Օվանեսով, ութանասուն տարեկան։ (Հալիվոր եմ, անպետք)։

— Ձեր կնոջ անո՞ւնը։

— Գրի՝ Թագուհի Օվանեսով։ (Նա էլ վացցուն տարեկան ա, կռները, սաղ ջանը ցավում ա։ Չի կարում թե բան անի)։

Ու տնտղում է երիտասարդին, որ մի կերպ լուծի հանելուկը։ «Թող շարը խափանի»։

— Տղաներդ։ Քանի՞սն են։

— Մինը Վասիլն ա։ Սալդաթություն արած պրծած ա, կրռվում էլ յարալու յա ըլել։ Աշխատողը նա յա։ էն մեկելը, Սիմոնը, էն տարին որ սաթըլջամ ընկավ...

— Քանի՞ տարեկան են։

— Իցցուն, իցցուն հինգ կըլեն։

— Պակաս չե՞ն։ Քառասուն։

— Հա՜, քառասուն, ավել էլ կըլեն։

— Քանի՞ տարեկան են վերջը։

— Վասիլը 40 ա, Սիմոնը՝ 45։

— Հարսներդ, թոռներդ։

— Ի՜, անպետք խալիքը, դրանց էլ ես գրո՞ւմ։

Երիտասարդը գրում է։

— է, վերջացա՞վ։ Հեռո՜։

— Բիձեն մնաց, բիձեն,— ձայն է տալիս հարևանի կնիկը։

— Ուրիշ էլի՞ մարդ մնաց։ Ի՞նչ բիձա, է։

— Մարդ չկա։ էն գժի համար ա ասում։ Դե նա իրա համար կա՜... Պարապ հացակեր ա։

Բայց բիձան հանգիստ չէ։ Չգիտե՝ լա՞վ է պատասխանում, թե՞ վատ։ Մշուշ է առաջը, չի կարողանում պարզել։

— Ստուգման համար էր,— վերջացնում է երիտասարդը, փակելով իր խորհրդավոր տետրակը։

— Հա, վնաս չունի,— կմկմում է բիձան, էլի չթափանցելով մեծ գաղտնիքը։— Թե դրուստ մեր հալը կուզես իմանաս՝ խեղճ ենք, անջախ մի փոր հաց հանում ենք։

Ու ճամփու է դնում երիտասարդին։

Դեռ ուշքի չի եկել։ Անհայտությունը չպարզվեց։ Ու անհանգստացած գազանի պես մտիկ է տալիս հեռացողի ետևից։

Վեր կացա անկողնից։ Լվացվում էի ջրհորի մոտ։ Բիձան նստած էր հարևանի այգու պատի տակ։

Երեսս սրբելով մոտեցա իրեն։

— Բարի օր, բիձա։ Ի՞նչ կա, ի՞նչ չկա։

— Ջանսաղություն։ Լավը դու գիտես, դո՛ւ ասա՝ լսենք։

— Բա դու իսկի լավ բան չե՞ս իմանում։

— Իիի՜...— ճռռաց հին ֆուրգոնի պես՝ քաշելով իր մտքերի ծանր բեռը։— Լավը ո՞րն ա։ Գետինը չանգռելով միջիցը մի բան հանում ենք, ապրում։ Լավն էն ժամանակն էր, որ Աղբաբա թուրքերի մեջ յասավուլ էի։ Քառասունը հի՞նգ... հա՜, հա, մի էդքան կըլի հա՜։ Համարյա պրիստավ էի։ Դելոպռավիզատել Պավլե աղեն բաշ-բյաթիպ էր։ Նրա ձեռի տակին էի։ Իմ ճշմարտությենիցը ինձ շատ էր սիրում։ Ես էլ մեկ սաստիկ գործ էի բռնում թուրքերի միջին։ «Հը՞, ոնց ես, Մացաք»,— կասեի՝ «Լավ եմ, աղա՜»։ Կհաներ մեկ ճռճռան թուղթ մանեթ կխփեր ճակտիս. «Գնա քե՞ֆ արա»։ Թուրքերը դողում էին ինձանից։ Թուրս լավ լազաթին կապա՞ծ։ Տախտիս տակին շաքարը, եղն ու պանիրը իրա կարգին։ Կասեի՝ «Պավլե՜ աղա, թուրքն էկել ա, ուզում ա քեզ տեսնի»։ Կասեր՝ «Ասա իցցուն մանեթ ա»։ Կառնեի իցցուն հինգը։ Հինգը թուրքից կառնեի, հինգն էլ Պավլե աղեն կտար։ Հեռի քեզանից՝ ավանակի աշխարհք էր։ Հըմի ի՞նչ...

Դա նրա սիրելի նյութն է, և միաժամանակ «չեղոք նյութը», որով զբաղեցնում է ինձ...

Բայց դեռ տնտղում է ինձ, ատամի տակ զցում։ Դրա համար էլ իր «որջի բերանից» չի դուրս գալիս։

Հանկարծ հարձակվում եմ.

— Քա՞նի եզ ունես, բիձա՜։

Բիձան անակնկալի եկավ ու պոչն իրեն քաշեց։

— Քանի ե՞զ։

— Հա՜, քա՞նի եզ ունես,— սեղմում եմ պատին։

— է՜հ, ո՞վ ա իմանում։ Ասուված ինչքան որ տվել ա՝ էն ա իրա համար կա։

— Բայց քա՞նի հատ է։

— Էսպես մի չորսը կըլի,— վարագուրում է բիձան։

— Լավ, քո ապրանքը չե՞ս իմանում ինչքան է։

— է, ի՞նչ մի բան ա, թե ի՞նչ իմանամ։ Անասունի բանը ո՞վ ա հասկանում։ էս «դաբաղ» ա, էս սար ու քոլ ա, դող ա, գել ա։ Տակին բա՞ն ա մնո՞ւմ, որ մարդ իմանա քանիսն ունի, քանիսը չէ՞։

— Քա՞նի կով ունես։

— Կո՞վ.— շունչ է առնում.— մի 4—5-ը կա։

Ուզում եմ «մարս» անել։

— Տասը հատ չի՞։

— Դե որ սաղ տանը վրա գցես, տասը շատ բան չի։ Հա մի էդքանը — ու լփոտում է։ — Թե աստված պահի... տեսնենք...

Անորոշությունը բիձայի տարերքն է։ Դա ինձ զվարճացնում է, և ես հարձակումը ծավալում եմ.

— Ո՞ր կառավարությունն է լավ։ Սա՞ թե Նիկալայինը։

— Չեմ իմանում։ Մենակ Նիկալայի ժամանակ խարջը քիչ էր։

— «Սրա՞նք» ոնց են։

— Դե, ջահելի համար լավ ա, մին էլ մարդ մարդու վրա չի կարա ձեռ բարձրացնի։ Մենակ էն ա, որ խարջը շատ ա։

— Բիձա, ախր էն էլ կա, որ սրանք հիմի ձեր գեղը քաղաք են դարձնում։

— Ընչի՞ս ա պետք քաղաքը։

— Տներ կշինեն, գործարաններ բաց կանեն, ապրանքը կշատանա, ճամփաներ կշինեն։

— Ինչ ուզում ա շինեն։ Էդ ամենը պտտվում, պտտվում՝ վերջը էլի գալիս ա խարջի վրա։ Իմը գիտե՞ս ոնց ա։ Իմը խարջն ա. բեր էդ բեռը իմ վրիցը վերցրու՝ էն ա ամեն բան լավ ա ու լավ։

— Ապա ո՞ւմնից առնեն խարջը։

— Ով որ ունի։

— Ո՞վ ունի.— հետապնդում եմ ես.— ում մոտ գնաս՝ կասի չունեմ։ Կուզե՞ս կառավարություն էլ թող չլինի։

— Ըլում ա, թող ըլի իրա համար։ Ինձ համար լավ կառավարությունը նա յա, ով ինձանից խարջը չի առնի։

Լուսաբացից բիձան ոտի վրա է։ Ման է գալիս բակում, կտրան, ներքնատանը ու դաշտամկան պես դուրս է ածում իմպերիալիստական պատերազմը — վայրիվերո, անհարիր, անպետք իրեր — քաղցր կաթի ժանգոտ տուփեր, մեխեր, տաճկական սվին, կարի մեքենայի կոտրած խողովակ, ձիու հին խամուտ, շրապնելի դատարկ ռումբ։ Մխրճվում է նրանց մեջ, խառնըխտորում, նորից ածում ներս։ Ինչի՞ է պահել, ի՞նչ է փնտրում նրանց մեջ...

Պառավը ինչ-որ չկա մեջտեղը։ Դա ներքին արարած է. բերան-մերանը գլխի թաշկինակի մեջ թաքցրած՝ սուս ու փուս քջուջ է անում թոնրատանը։ Բայց թեև ձայնը դուրս չի գալիս, ինչ-որ տակից խեթում, կտցահարում է իր ամուսնացած աղջկան, որ աղքատ մարդու է գնացած, դրա համար այս տանը չեն սիրում ոչ նրան, ոչ էլ ամուսնուն։

Բատրակ է ամուսինը, բայց աներանք նրան գործ չեն տալիս։ Կոմունիստներին դիմավորել է 21 թվին։

Կինը դառն աշխատանքից խունացած մի էակ, հաճախ է գալիս հորանց, տան գործի մասնակցում ու մի կտոր հաց ճանկում։ Հույս ունի, որ ամառվա վերջը հորանց տան բոլոր ամառավորների իրերը իրենք կտանեն կայարան և հինգ ռուբլու չափ էլ դրանից կստանան։

Պառավի ձայնը լսվում է այն ժամանակ, երբ անիծում է, իսկ անիծում է, երբ բարկանում է իր թոռան՝ Անուշի վրա։ Սա մի կարմրաթշիկ, սևաչյա աղջիկ է, զարհուրելի շարաճճի։ Ամբողջ օրը ճպուռի պես վխտում է ներս ու դուրս — կրակ է անում, ավլում, սրբում ու կչկչում։ Պիոներ է։ Աշխատելիս էլ բերանը չի դադարում. կամ երգում է, կամ ծիծաղում, կամ վիճում։ Ամեն բան վեճի առարկա է։ Մի անգամ պատշգամբից լսվում էր։ Վիճում էին ձմերուկի առիթով, թե ով է ստեղծել ձմերուկը։

— Դու կարծում ես աստված ա ստեղծե՞լ,— ճչում էր Անուշը պառավի երեսնիվար։

— Աղջի, լեզուդ լալկի, սո՛ւս կաց, ասում եմ, է՛,— սաստեց պառավը։

— Հա՛, սո՛ւս կաց, խի՞ եմ սուս կենում։ Դե ապա՞ դո՛ւ ասա. ո՞վ ա ստեղծել։

— Ա՛ղջի, սրտա՛մեռ, աստծու ստեղծած բանին կասեն թե ով ա ստեղծե՞լ։ Բա որ աստված չստեղծի՝ ո՞վ կարա ստեղծի։

— Բնությունը։

— Բնությունը ի՞նչ բան ա, որ ստեղծի։ Բոյրդ թաղեմ, բնությունը կարա՞ ձմերուկի կորիզները էսպես կարգով շարի։

— Ինչո՞ւ չի կարա շարի։ Մարդ է ստեղծում՝ ձմերուկի կորիզները չի կարա շարի՞։

— Սո՛ւս կաց, լեզուդ քե՛զ պահի,— զայրանում է պառավը։

Բայց Անուշը պպին է կանգնել։ Զարացել է ու ավելի գրգռելու համար ճչում է։

— Ասա՞ծ ինչ ա, աստված չկա՛, չկա։ Դա հոգևորականների ստեղծածն ա։

— Աղջի, աստվածը քեզ թաղի, չես վախո՞ւմ, ձենդ կտրի, է՞։

— Աստված չկա, աստված չկա. այ, ասում եմ, բա խի՞ չի թաղում,— ճչում է ավելի բարձր Անուշը։

Պառավը ճիպոտը խլեց ու այն է՝ հարվածը իջեցնում էր Անուշի գլխին, սա խաբ տվեց ու փախավ։

— Այ կրակն ընկնի էն ուսումնարանը, հա՛, որ քեզ էդպես ուսում ա տվել,— անիծեց պառավն ու ընկավ Անուշի ետևից։ Մի երկու շրջան գործեցին, բայց պառավը չհասավ, թողեց Անուշին։ Սա ետ դարձավ։

— Ի՞նչ ա, ի՞նչ ես մեր ուսումնարանին բան ասում։ Ապա ի՞նչ, ձեզ նման պըտենք ըլի՞լ։ Իմ ուսումնարանին մատա՞ղ, իմ ուսումնարանի պես լավ բան կա՞։ Նրան բան մի՛ ասի։

Ու գրկում է ինքն իրեն, կչկչում անհոգ, ուրախ։

Մի տասը բոպե անց Անուշը արդեն թոնրատանն է, պղինձ է լվանում։ Հիմի էլ այնտեղից է կչկչոցը գալիս։ Տիծաղի ֆաբրիկա։

— Անուշ ջան, էս ամանիքն էլ սրբի, ես գնամ էն դաշնիկից չորս կապեկը բերեմ։

— Շո՛ւտ արի։ Ես գնում եմ ակումբ։

— Աղջի, էսօր է՞լ ակումբ կա։

— Ըստուց ետը շաբաթը երկու օր ակումբ կա։

— Լավ, կգամ։

— Չէ, շուտ արի, շո՛ւտ, շո՛ւտ, ես չեմ կարա սպասի։ Տե՛ս, որ ուշացար՝ չեմ սպասի, կգնամ։

— Ա՛ղջի, կրա՞կ ես,— չարանում է պառավը։

— Չեմ իմանում, չեմ իմանում։ Շո՛ւտ արի, ես գնալու եմ։ Կոլվարը բարկանում ա, չի թողնում ուշանանք։

Պառավը գնում է։ Անուշը արդեն երգում է ու ամանները գզգզում։ Ու մի քանի բոպեում երգը փոխվում է արտահայտության։ Վերնագիր է տալիս.

«Մենք լենինյան սերունդն ենք»։

Հետո ընդոստ-ընդոստ ու արագ վրա է տալիս.

«Մե՛նք լենին-յան
սեր-ո՛ւնդն ե՛նք...»։

Վերջը փոխվում է ճառի։ Շարում է բառեր — համաշխարհային կոնտրռևոլուցիա՛ն... եվրոպական իմպերիալիզմը, ռևոլուցիայի կարմիր գրոհը... Բայց ինչպես երևում է, նրա նախադասությունները այդպես են կազմված և իրա համար ամփոփ իմաստ ունեն։

Ու հանկարծ զըրը՞նգ — պղինձը գլորվում է գետին, որի ձայնից սարսափած կատուն թոնրատնից փախչում է դուրս։

Ասում էին «Վասիլ, Վասիլ»՝ դեռ իրեն չէի տեսել։ Անուշի հայրն է, բիձայի մեծ տղան։ Վերջապես այսօր տեսա։ Ճաշին եկավ տուն սայլով։ Արդեն փողոցից լսվում էր նրա ճիպոտի շառաչը և գոռոցը եզների վրա.

— Եզն ա՛րի։

Այնպես էր ճղավում, կարծես կոկորդի մեջ արշիններով կտավ է ճոթոում։

Ահա ըռխալի հայհոյանքով սայլը քշեց բակ ու կանգնեցրեց.

— Օհո՛ո՛ո՛... հո՛։

Ածխապան։ Հիմնական մի կեղտ ծոծրակին, երես-մերեսը մազ-միրուքի մեջ կորած, դարմանոտ, փոշոտ։ Ճենճռոտ մի կարտուզ ունի աչքերին քաշած, կոզերյոկը ականջի կողմը։

Աչքերը չեն երևում, բերանն է բաց։

Բարկացած է ուրիշի վրա և եզներին է թակում։

— Վասիլ, ի՞նչ կա,— հարցրեց բիձան մոտ գնալով։

Վասիլը չի պատասխանում։

— Սոնին ա քիչ... բան էլել,— կամաց բացատրում է երիտասարդ հարևանը, որ սայլի ետևից գալիս էր։

Վասիլը նոր օր փրփրեց։

— Ես սրան սել եմ բան տալիս, սա տանում սար ու քոլ ա գցում, սոնին կոտրում։

Ու բերանբաց նայում է սայլին։

Բոլորս մոտ ենք գնում։ Մոտենում է նաև վրացի կայարանապետը, որ նրանց մի սենյակում հանգստանում է պառը։ Նա մանր ժպտով նայում է Վասիլին ու սայլին։

Վասիլը թքում-մրում է հարևանին։ Սա էլ հանցավոր կատվի պես սքլել է։ Չի պատասխանում և եղներն է արձակում։

Վասիլը կարծես հրդեհ հանգցնելու է գնում։ Բոպե չունի։ Ու եփվում է։ Ոչինչ չի տեսնում, չի լսում։

— Բռնի, է՛, բռնի՛, բռնի՛,— գոռում է հարևանին և ինքը գրկում է անիվը, որ դուրս քաշի։

— Դե լավ, դու էլ հերի՛ք արա, Վասիլ,— նկատում է երրորդ հարևանը, որտեղից-որ հայտնվելով օգնելու։

Վասիլը կանգ առավ, շիտկվեց ու ճակտին խփեց.

— Ես է՛շ էէէ՛մ... ինձ նման էշը որ չլի՝ էշի գինը հազար թուման կլի։ Մինը ինձ ասի, թե՝ էէէ՛շ, ո՞նց ես դու էս խոտհարքի վախտը սելդ տալի ուրիշի։ Բռնի, է՛,— ծղրտում է նորից ու անիվը գրկում։

Վերջապես հանեցին։

Ներս վազեց ու դուրս բերեց մի արկղ՝ լիքը մեխերով ու գործիքներով։ Ուզում է սոնին մեխել։

Կայարանապետը քմծիծաղ է տալիս.

— Բան չի դուրս գա, Վասիլ, սոնին կոտրվել է, պիտի օղակել տաս։ Տար դարբնի մոտ։

Վասիլը բերանը ավելի է բացում և աչքերը չռում կայարանապետի կողմը.

— Հը՛ա՞... — քորում է ծոծրակը։ Ու հանկարծ հարձակվում է սոնու վրա.

— Բռնի, բռնի... ա՛խ, ի՞նչ ասեմ, ախր ինչի՞ համար եմ էշ...

Ակը հանում են և արագ-արագ տանում դարբնի մոտ։

Քանի գնում է՝ բիձայենք լարվում են։ Բոլորի ուշքը դաշտի կողմն է, ուր հասնում է հացը։ Եվ կարծես դա հաց չէ հասարակ, այլ մի հզոր, խորհրդավոր էակ, որ բնության ապարանքներից գալիս է։

Ամենքը պատրաստության մեջ են։

Վասիլը երկու անգամ սար գնաց եկավ։ Պստիկ, տաս տարեկան Գևորգը սարից երկու կով բերեց տուն և եղած կովերին տարավ սար մեն-մենակ։ Հետո Վասիլը գնաց խոտհարքի, վերջացրեց, եկավ։ Խոտ կրեց ուրիշի համար։ Բեռ կրեց կոոպերատիվի համար։

Ամբողջ օրը տան բակում թոնրատանը, կտերը, ներքնատանը անդուլ ելումուտ է։ Գալիս են, գոռգոռում, հայհոյում, անիծում, որը վերջանում է երեխաների թակով։ Թակում են ու գնում։

Ամենից շատ գոռում է Վասիլը, նրան ձայն է պահում Սիմոնը։ Բայց սա չի կարողանում տանը տիտիկ անել։ Մի ոտը սարումն է։ Հարմար առիթին ծլկում է այնտեղ։

«Պարապ հացակեր» բիձան՝ գիժը, օրնիբուն աշխատում է։ Լավ խնամում է բոստանը։ Ոտաբոբիկ կխճորում է ցեխերը, առուները դրստում։ Նրա շինարարությունը արդեն հասարակական բնույթ է ստացել։ Նա առուն մաքրում է քարերից ու ճումբերից, ճամփի քարերը շպրտում մի կողմ։

Ահագին տեղ ճահճի ցեխը հավաքեց տարավ, պատվար շինեց, ջուրը բանդ արեց ու մի ծորակ բաց թողեց, որ լվացքի ջուրը այնտեղից վերցնեն։

Ճահիճը ցամաքեց, էլ այնտեղից նեխած հոտ չի գալիս։

— Բիձա,— հարցնում եմ,— էս ինչո՞ւ ես բոլոր առուները դու մաքրում։

Թողնում է գործը, դառնում շեշտ աչքերով նայում ինձ.

— Ինձ հարցրու՝ «դու ո՞վ ես»։

— Դու ո՞վ ես։

Ժպտում է և զինվորի պես արագ-արագ պատասխանում.

— Ինձ արևը կարգել ա, որ առուն ծռեմ, մարգը դրստեմ, ջրերը հավաքեմ, կարտոպը բաժանեմ։ Ասա՝ ընչի՞ համար։

— Ընչի՞ համար։

— Ընդուր որ՝ մարգը ծուռն ա, առուն դրուստ, ջրերը բաժան, կարտոպը մի հատիկ։ Աշխարհքը իմ բահի տակին ա,— եզրափակում է բիձան ու շարունակում իր գործը։

Հարևաններս մի քանի հոգի են։ Վրացի կայարանապետը, նրա ռուս կինը։ Ինքը հաստ բեղերով, սրամիտ առողջ մարդ է, իսկ կինը սուա ու փուս արարած է՝ շաղլիկ ու գնդլիկ։ Մի եր-

կու անգամ գնաց Թիֆլիս, տանելով հետը ճուտ, ձու, յուղ, պանիր։ Ծախեց ու վերադարձավ։ Չրի տո՞մս ունի թե ինչ...

Երկրորդ կենողը մի «բանվորի հայր» է՝ ինչպես ասում են։ Հիսունից անց մարդ է։ Սուրմալուեցի։ Նախկին խանութպան։ Փախստական է։ Հիմի ձեռքը մեջքին, տերողորմյան հետույքից կախ բոլթա է տալիս բակում, դիմացի այգու պատի տակ։ Անգործ է։ Տղան երկաթուղու վրա կոնդուկտոր է։ Աշխատում է և հորը պահում։

Խաղաղ ապրում են հայր ու որդի։ Ընտանիքը ոչնչացած է ճամփին։ Տնտեսը հայրն է։ Առավոտը վաղ գնում է ճամփին նստում, որ հենց մյուս գյուղերից մթերք բերող գյուղացիները մոտենան գյուղին՝ առաջին գնողը ինքը լինի։ Վարպետ է էժան ապրանք առնելու։ Բերում լցնում է տունը յուղ, պանիր, ձու, բանջարեղեն։ Կատարյալ տան պատրանք ստեղծելու համար սուրմալուեցին պատի տակին օջախ է սարքել ու ամեն օր ծխի մեջ խեղդում է բակը, չնայած որ տղան առատ նավթ է ստանում, և կարելի է պրիմուս բանեցնել։

Ժամերով անշարժ նստում է սուրմալուեցին պատշգամբում և աչքերը խփում։ Քնած կկարծես, եթե տերողորմիայի հատիկները չերեկոց չհանեն։ Մտածում է, մտածում ու հանկարծ վեր է կենում ու քշվածի պես գնում է դեպի դիմացի այգու պատը, այնտեղ է նստում մի երկու ժամ, հետո գալիս մտնում է թոնրատուն, բիձայենց մոտ։ Հաճախ կարելի է տեսնել նրան բահը ձեռին, որով հավաքում է կենդանիների թրիքը և տանում ծեփում է պատերին։ Հին կենող է, 21 թվից։ Արդեն ընտելացած է բակին ու բիձայի ընտանիքին։ «Սովետական» կենող է, ուստի և ֆոնդի սենյակ է բռնել։

Նրա կյանքը մի անվերջ ձանձրալի կրկնություն է միևնույն բանի, ինչպես իր տերողորմիայի հատիկները։

Ժամերը, օրերը, իրերը, մարդիկ — ամեն ինչ հատիկ-հատիկ գալիս-գնում են, գնում-գալիս են, բայց ամեն բան մնում է միևնույնը։ Նոր բան չկա, ելք չկա...

Ու քնում է մարդը։

Տղան շաբաթը մի անգամ լապտերը ձեռին տուն է գալիս։ Շատ անգամ հետը նավթ է բերում։

Այդ ժամանակ «բանվորի հայրը» պատի տակ ավելի մեծ օջախ է անում, պղինձը դնում վրան։

Ու ծուխը բռնում է բակը։ Մի երկու անգամ նկատել եմ, թե ինչու պրիմուս չի առնում. հեշտ է և մաքուր։ Տղան էլ է շատ անգամ ասել. բայց հայրը համառում է.

— Օջախս մարել է «էնտեղ», էստեղ պիտի վառե՛մ։ Օջախը տան բարաքյաթն ա։ Առանց դրան տունն ի՞նչ։

Տղան չի պնդում։ Նա շատ էլ այս տանեցի չէ։ Նրա տունը շարունակ գնում-գալիս է Թիֆլիս—Լենինական։ Այնտեղ են նրա ընտանիքի անդամները — իր ընկերները։

Ինչո՞ւ է գալիս տուն... Կարծես օտարական լինի։ Չի էլ խոսում այստեղ։

Ու հայր ու որդի լուռ նստում են պատշգամբում՝ ամեն մինը իր մտքով տարված։

Անուշը օրվա որոշ ժամերի գնում էր պարապմունքի։ Պառավը շատ էր փնթփնթում։

— Այ ո՛տդ կոտրի, ա՛ղջի, էլի՞ յա կորել։

Բայց նա պատրաստություն է տեսնում գնալու հարևան քաղաքը շրջագայելու։ Պիոներական կոլեկտիվի հե՞տ... Պառավը չի ուզում թողնել.

— Հորդ կասեմ։

— Ասա, ես գնում եմ, էնտեղ կարմիր կնունք ունենք և հակակրոնական կամպանիա կա։

— Աղջի, էլի բերանդ պատռեցի՞ր։

Մայրը մեջ է ընկնում։ Շատ է սիրում իր աղջկան և ամեն բանում պաշտպանում.

— Ձեռը վեր կալ, գնում ա՝ թող գնա։

Պառավը, սակայն, համառում է.

— Աղջի, հերդ գա ի՞նչ կասի։

— Ինչ ուզում ա ասի, ես գնում եմ։

— Չի թողալ։

— Ո՞նց չի թողալ. իրան հո կպած չե՞մ։ Պիոները որ էդ տեսակ բաներ լսի՝ ո՞ւր կգնա։

Անուշի ընկերուհիները և մի պատանի՝ նեգրի նման սևա-

մարմին և համարյա մերկանդամ — պիոներներ եկան կանգնեցին այգու պատի տակ։ Անուշը վազեց նրանց մոտ, խոսեց ինչ-որ ու ետ դառավ։

— Ֆուրգոնով ենք գնում։

— Ճամփին կմրսես, կսատկես։

— Ո՞վ, ես սատկողը չեմ։

Մայրը առաջ եկավ.

— Դե, լա՛վ, լա՛վ, գնա՛։

Պառավն էլ համաձայնեց.

— Գնա՛, գնա՛։ Սոսնանց Վասիլին, Նիկոլին, Գիքորին շատ բարև կանես, կասես՝ նանին ասավ՝ աստվածածնա սուրբ կիրակի օրը իրենց սպասում ենք, թող գա՜՜ն։ Իմացա՞ր։

— Իմացա, նանի ջան, իմացա,— զնգում է Անուշի արծաթի ձայնը թոնրատնից և պատռած վերարկուն, հացի պաշար ու երկար ձեռնափայտը խլած Անուշը դուրս է վազում, գնում դեպի իր ընկերուհիները։

Իրիկնապահին Վասիլը փոշեթաթախ եկավ տուն։

Թոնրատան շեմքին նստած, ինչ-որ ջրալի կերակուր էր խոշտում, որ հանկարծ գոռաց (նա միշտ գոռում է).

— Բա Անո՞ւշն ուր ա։

Բացատրեցին։ Բերանը մնաց բաց, ու բեղերից կերակուրը կաթկթեց։

— Ո՞նց թողիք որ գնա։

Պառավը արդարացավ.

— Ինչ քու աղջիկն ա ու իր մերը — կարա՞ մարդ խոսք հասկացնի։

— Լավ, լավ, բան չկա, Սոսնանց տանն ա վեր գալու։

Բայց Վասիլը շատ է սիրում իր աղջկան։ Թե՞ ժամանակ էլ չունի զբաղվելու այդ հարցով։ Այդքանով փակեց հարցը և շտապեց շուկա։

Վասիլին ամեն օր պատահում եմ անտառի ճամփին։ Խոսում ենք մեկ-մեկ։

— Աթա՞ր ես կրում, Վասիլ։

— Բա ի՞նչ, մերն էլ էդ ա։

— Ինչո՞ւ։ Փեյինը աթար շինելու տեղ՝ լավ չէ՞ արտը պարարտացնես։

— Շատ դրուստ ես ասում,— լայնորեն համաձայնում է Վասիլը,— փեյինը արտի հոգին ա։

Ես պատմում եմ ինտենսիվ մշակության, ռացիոնալ տնտեսության մասին։ Տրակտորն եմ բացատրում, անտառների ու խոտհարքների մասին։

— Դրուստ ա, բա՞,— ասում է Վասիլը լուրջ կերպարանքով,— ինչքան մի բան լավ անես՝ էնքան լավ։

Հանկարծ ձայնը մեղմացնում է.

— Հըմի հրամանքդ էլ էս կոմունիստական մարդկանցից ե՞ս, թե՞ հին մարդ ես։

— «Հին մարդ եմ».— ասացի իր տերմինով։

Ջորս կողմը նայեց ու մտերմաբար.

— Էս ի՞նչ բաներ են, էս անկարգ բաները, որ ասում են՝ ժամ չկա, տերտեր չկա։

— Դե ով հավատում է թե տերտեր կա, թող հավատա,— խուսափում եմ ես։

— Հա, էդ մեկը դրուստ ասիր։ Մեր պապական օրենքը ոնց որ դրված ա, էն էլ կպահենք։

Մշուշապատ դուրս եկավ։ Բայց Վասիլը «վերնաշենքից» սկսելով առանց էվոլուցիայի թավալգլոր ընկավ «հիմնաշենքը»։

— Նալոգը շատ ա, նա՜լոգը։ Էս նալոգը թողում չի թե աչք բաց անենք։ Սաղ նալոգի ենք տալի։

— Դու ի՞նչքան ես տալիս։

— Ո՞վ ա իմանում... կա՛, էլի՛։

— Չէ, այսինքն՝ ի՞նչքան,— սեղմում եմ ես։

— Երեսուն, քառասուն, իցցուն. հաշիվը կա՞։ Էն ա՝ ինչ ուզում են՝ գրում են։

Գլուխներս կախ՝ գնում ենք։

— Եզն ա՛րի,— ասում է ինքն իրեն Վասիլը, այնպես, մեքենաբար։

— Վասի՛լ, ուզո՞ւմ ես պատերազմ լինի։

— Պատերա՞զմ,— ժպտում է ներողամտաբար,— տնաշեն, հա մեջքներս կկոտրվի։ Մինն էլավ, հլա տակից դուրս չենք գալի։

— Բա որ մեզ զոռո՞վ կռվել տան։

— Դե էն ա, լավ կքանդվենք, աշխարհք կվերջանա։

— Ո՞վ պիտի կովի։

— Ի՞նչ իմանամ։ Իմը ռանչպարությունն ա.

— Հա՛, ռանչպարությունը... Բայց այդ էլ մենակ ես անում մի կտոր հողի ու մի քանի կովի, եզան հույսով։ Ջորային կա, տավարի ցավ կա, հազար ու մի փորձանք։

— Հալա կգնանք, մինչև բարակելը։

— Որ բարակե՞ց։

— Դե էն ա՝ կկտրվի,— ասում է Վասիլը և հանգստանում։

— Ինչո՞ւ տնտեսությունդ չես միացնում ուրիշների հետ։

— Ո՞ւմ հետ։

— Քեզպեսների հետ։

— Հա՛, էդ էլ կըլի. ամա ո՞վ առաջ ընկնի։

— Դո՛ւ։

— Ե՞ս... ի՛հ, մերը ըսենց պտի գնա՝ ոնց որ եկել ա։ Մեզանից բան չի դուրս գա... Եզն ա՛րի։

Վասիլը տանջված երևույթ ունի։ Ցախ-ցախ մորուքի, դարմանի, ցեխի մեջ կորած դեմքը կնճռոտ կաշու պես է։ Նրա աչքերը պղտոր են, թախծալի։ Նա հիմարական հայացքով, բերանաբաց ինձ է նայում մի պահ, և նրա ճղրիկ աչքերի միջից դուրս է լողում մի նուրբ կասկածանք և մի շողշողուն արհամարհանք դեպի ինձ։ Հողի միջից դուրս եկած այս մրկած, տանջված հանելուկը կողքանց գնալով, հայացքը գցում է գետին և երբեմն միայն աչքի ծայրով մտիկ է տալիս ինձ։ Նա իր հողի մեջ թաքնված մտքեր ունի, բաներ է մտածում իմ մասին և սառը, յուրովի ժպտում...

Ո՞վ իմանա՝ ի՛նչ, ինչո՛ւ...

Երեկոյան բակը խաղաղվում է։ Ամառավորների մի մասը գնում է ակումբի կողմը, մյուսը՝ քնում։

Բիձան մի երկու հայհոյանք թափթփելով դեռ ու դեն՝ մըտնում է թոնրատուն, ուր նվաղում է թույլ ճրագը։

Մի երկու մոմոց ես, և ահա ճրագը ուշաթափվում է, ու բոլորը քնում են։

Ոչինչ չի վրդովում լռությունը։

Բայց բակը միշտ էլ քնած չէ։

Շատ անգամ է պատահում, որ պատերի տակով մի սեղնք է երևում, մլուլ տալիս դես ու դեն։

Դա բիձան է. քունը առել է, հիմի վեր է կացել, բահը վերցրել, գնում է բոստանի կողմը ջուր գողանալու։

Առվի գլուխը անտառի մոտն է։ Այնտեղից ներքև երակներով ճյուղավորվում է դեպի բոստանները։ Հերթով է ջրելը։ Գիշերցերեկ գյուղացիք հերթի վրա են։ Խարդախում են կաթը, խլում իրար ձեռից։

Մի առավոտ զարթնեցին մի բարձր գոռոցից։ Բակն էր եկել մի երիտասարդ և կատաղած հարցապնդում.

— Ջուրը խի՞ եք կտրել։

Բիձան ձեռը կոխել էր կոնատակը և քորում էր միայն։

— Քեզ հետ եմ, ջուրը խի՞ եք կտրել։

— Ի՞նչ ջուր,— հարցրեց բիձան ձայնը իջեցրած։

— Բոստանի ջուրը, «ի՞նչ ջուր»... խի՞ եք կտրել։

— Այ տղա, էդ ինչե՞ր ես ասում, ո՞վ ա ջուրը կտրել։

Երիտասարդը ավելի կատաղեց.

— Այ քեզ ասում եմ, իմ ջուրը կտրել եք, տարել ձեր բոստանը։

— Այ տղա, շա՞ռ ես, ի՞նչ ես, ո՞վ ա քու ջրին ձեռ տվել, մենք մեղ համար միամիտ քնած։

— Լա՞վ միամիտ քնած եք։

Բիձան դեռ անվրդով քորում է կոնատակն ու ներս մտնում։

— Այ տղա, ա՛վտաս մեր գիժը ձեռ տված ըլի։ Հենց ա իմացել, թե հերթը մերն ա։ Տնաշե՛ն, դու էլ տեսար՝ կտրի, էլ ետ տար ձեր բոստանը։

— Գժի արած բան չի։ Թե գիժ ա, բա ո՞նց ա մեր ջուրը ձեր բոստանը տանում։ Սա քու արած բանն ա։ Գանգատ կանեմ վրաց։

Բիձան դիմում է բեմադրության։ Հին օրերի սև սարսափն է ուզում տարածել իր շուրջը. ու գլուխը դուրս հանելով պատուհանից՝ գազանի կերպար է ընդունում.

— Տո գու ո՞ւմ վրա ես գանգատ տալի։ Ինձ Հանեսանց Մացակ կասեն։ Հալա իմ վրա գանգատ տվողը մորը փորից չի դուրս եկել։ Գնա թե չէ՝ էս ա գուրս եմ գալի մեքենդ փռեմ, հասա՞...

Ու գոմռում է ծեր գամփռի պես։

Քյոխվայական մանյովրը, սակայն, չի օգնում։ Հին բեմադրություն է։ Եվ երիտասարդը սպառնում է.

— Շան սատակ կանեմ. դուրս արի ու տես։

Դիալոգը փոխվում է դուետի։ Էլ իրար չեն լսում. միասին են հայհոյում, մինչև որ երիտասարդը հարցը համարելով սպառված՝ մամռալով հեռանում է։

Բիձան էլ զորացման է ենթարկվում ու բոլորովին հանգիստ դիմում է թոռանը.

— Գևորգ, գնա էն մեծ քրեղանը բեր։

Երկու շաբաթ կա, որ գիժ-բիձան չի երևում ոչ առվի մոտերքը, ոչ էլ բակում։

Ոչ ոք չէր նկատել այդ։ Ասենք՝ նրա խոսքը երբեք չէր լինում բակում։

Բայց մի անգամ նրա մասին ինչ-որ լսվեց.

— Ասում ա՝ լավը է՛ս էր, հազիր էն ա՝ կմեռնեմ կպրծնեմ.— բացատրում էր պառավը մի խումբ կնանոց, որ հավաքվել էին թոնրատանը։— Ասում ա՝ պտի հիվանդանայի, երկար քաշեր։ Ըսենց լավ ա։

— Ըրևում ա, որ ուզում ա մեռնի,— նկատեց մինը։

— Էհ,— հառաչեց պառավը,— լավը էդ ա։ Ընչի համար ա ապրում։

Ուրեմն գիժ-բիձան ինչ-որ մեռնում է։

Սակայն բակում դրանով չեն զբաղվում։ Ուրիշ իրարանցում կա։ Նավթի կրիզիս։ Կոոպերատիվը նավթ չունի կամ քիչ է. խանութների առջև աղմկալի պոչեր են։

«Բանվորի հայրը» սպասում է իր նավթին, որ որդին պիտի ուղարկի։ Առանձին կենդանության մեջ է։ Կայարան է գնում-գալիս։

Հարևանները խոսեցին հետը։ Խոստանում է ամենքին էլ բաժին հանել նավթից։

Եվ ահա, իրիկնադեմին, երբ նա ստացավ նավթը՝ բոլոր սպասողներս ուրախացանք, ոմանք էլ ասացին, որ վաղը կոոպերատիվը նավթ է ստանում։ Դրանք չեն ուզում «բանվորի հորից» ստանալ։

Բայց ես և մի քանի հարևան վերցրինք տաս-տաս ֆունտ։ Լա՜վ տեղը սեղմեց մարդը. ֆունտը 40 կոպեկ հաշվեց։ Դու բանին մտիկ՝ եթե կոոպերատիվը վաղը նավթ ստանա։

«Բանվորի հայրը» ինչ-որ սուս ու փուս բաների հետ է։ Սարից եկող թուրքերից մթերք է առնում, նավթ է ծախում, շորեղեն փոխում, մանր-մունր բաներ է սաղացնում։ Ինչ-որ գործեր ունի, պստիկ, բայց բավական մութ։

Բայց, իհարկե, երբ հետևյալ օրը իջա բակը և գերանի վրա նստած զրույց էինք անում նրա հետ՝ խաղաղ, նահապետական բնույթ էր կրում մեր զրույցը։

Ես էի, բիձան, մի հաշվապահ հարևան, որ երբեմն գալիս էր մեր բակը։

«Բանվորի հայրը» պատմում էր պատերազմի անցքերից.

«Անցանք Ալաշկերտ զորքի հետ։ Մի վախտ էստեղ առուտուր արինք, վերջը թուրքը որ զոռեց՝ խանութը փախցրինք Դիադին, էնտեղ էլ որ զոռեց՝ փախցրինք Իգդիր։ Քյուրդը խերով ժողովուրդ ա։ Լավ առուտուր ունեի, տուն-տեղ, ընտանիք։ Փչացավ գնաց, եկանք դառանք գաղթական։ Հինգ տարի է էս տանն ենք։ Դառել ենք տնեցի։ Աշխատողը տղես ա, ես պարապ։ Առաջվանը ո՞վ ունի»։

— Առաջվա ի՞նչը ասես որ լավ չէր։ Հա՜յ գիտի Աղբաբա,— հառաչում է բիձան։

— Լա՜վ կաշառք կար, հը,— ծիծաղում է «բանվորի հայրը», հրահրելով բիձային, գիտենալով նրա սիրած նյութը։

Բիձան սրտաշարժվում է.

— «Կաշառք կա՜ր»։ Տո՜, աղքատն ո՞վ էր հարցնում, մշակն ո՞վ — ուտող ուտողի էր, տանող տանողի։ Հիմի ի՞նչ. ահա երեք տուն ունեմ — մեջը փուչ, օխտը հատիկ։ Չորս տարի առաջ այ էս մարդը (դառնում է ինձ ու ցույց տալիս «բանվորի հորը») ամիսը մի ֆունտ հաց էր քրեհ տալիս։ Վերջը շինեց ամիսը տաս շահի։ Հըմի տալիս ա մի մանեթ։ Գնա ապրի։

— Աբա՜,— հաստատեց «բանվորի հայրը»,— հիմի ավելացրել ենք։

Բայց տպավորությունը դրստելու համար տերողորմյան չիկչիկացնում է և աչքերը մի կողմ դարձրած՝ վեր կենում տեղից։ Ամաչում է։

— Է՛,— հառաչում է բիձան,— թե կավելացնի՝ ինքն ու խիղճը, թե չէ՝ ինքը գիտի։

Ու խեթ նայում է «բանվորի հորը», որը խոցվում է։ Նա էլ հառաչում է և մշուշներ է բաց թողնում.

— Բանը փողը չի,— շեշտում է հատ-հատ, աչքը շարունակ հեռուն,— բանը ճշմարտությունն ա, դրուստությունը։ Թե չէ՝ փողը, տունը, կյանքը, հարստությունը անցվոր, փուչ բաներ են աշխարքիս երեսին։

Ու աչքը հեռուն՝ շվացնում է՝ համբիչը ցուցամատին փաթաթելով և օդի մեջ պտտեցնելով։

Մինչև մութն ընկնելը խոսում են։

Եվ դեռ երկար ժամանակ մթան հետ մերվող նրանց սիլուետների կողմից լսվում է նրանց զրույցը։

— Ասըմ են՝ կոմինեն[1] որ ըլի՝ լավ կըլի.— հորանջում է բիձան քնկոտ ձայնով։— Ա՛յ տղա, ո՞նց լավ կըլի։ Որ բաժան եմ, իմ հացին, իմ ջրին՝ միսս ուտում են. բա որ մի տեղ ըլենք՝ ի՞նչ կանեն։

— Կոմինեն լավ բան ա՝ թե ամենքն էլ աշխատեն.— պատասխանում է «բանվորի հայրը»,— բայց ավազա՛կ են, չե՞ն աշխատի։ Մինը կաշխատի՝ մյո՞ւսը կուտի։ Ավազա՛կ են։

Եվ ավազակ արտասանում է փափուկ ք-ով, «ավազայք»...

— Հըմի ինքը հանգստացել ա՞։

— Ո՞րտեղից, հլա հոգու հետ ա։

Հարևանի կնիկն է. խոսում է պառավի հետ։ Մեծաքամակ, արմատական մի կնիկ, զարհուրելի առողջ։ Խոսքը գիժ-բիձայի մասին է։ Հարևանի կնիկը գող կատվի պես աչքերը չռած՝ հետաքրքրվում է.

— Ոչխար եք մորթելո՞ւ։

— Ի՞նչ իմանամ, այ բալամ, ի՞նչ փողը տամ գլխիս։ Չմորթած ըլիլ չի, մորթե՞նք... ո՞նց ենք մորթում։

— Ընչի՞ց ա մեռնում։

[1] Կոմունա։

— Ի՞նչ իմանամ. թե ասեմ աղիքը հլորվեց՝ պատծու բան ա, ո՞նց իմանաս։

Դեռ մինչև ճաշ դրացի կանայք ղովռում էին թոնրատանը։

Բիձան սաստիկ կենտրոնացած էր և մտահոգ՝ ներս ու դուրս էր անում։

Գիժը ծախսի դուռ էր բաց անում։

Վասիլն էլ տուն եկավ։ Նա բերանը բաց կանգնեց թոնրատան դռանը, քիթը խաշտեց, թևքով սրբեց երես-մերեսը։ Քրտնած էր և դործով սաստիկ զբաղված։

Ներս գնաց թոնրատուն։ Ղովռոցը կտրեց։ Ինչ-որ խոսեցին այնտեղ։

— Տերտերի հոր մեռելն էլ ու նրա օխտը պորտի էլ, ինչ անում եք արեք,—շպրտեց Վասիլը դուրս գալով ու շտապեց դաշտ։

Երևում էր, որ ներսը խոսք կար ոչխար մորթելու գժի հոգեհացին։

Վասիլը հակառակ էր։

Ուրեմն բիձան մեռե՞լ էր։ Դուրս եկա ստուգելու։

— Բիձան մեռե՞լ է,— հարցրի տանտիրոջս։

— Հալա չէ,— մռայլվեց նա։

— Հետո՞։

— Հետո էլ ի՞նչ։ Էն ա մեռնում ա։ Մի շաբաթ պառկեց։

— Բա ճար չարի՞ք։

— Ի՞նչ ճար։ Թե մեռնում ա՝ էն ա կմեռնի։ Մարդ պրտի մեռնի՞ թե չէ։

Բանից դուրս է գալիս, որ իրենց սայլը անկյունում ճամփան ծռել էր և պատին սեղմելով գժին՝ փորը ուժով տրորել էր՝ վնասելով երևի աղիքները։

— Մարդ որ փթած ըլի, էն ա՝ նրան մի սել ա պակաս,— եզրափակեց բիձան։

Ու հանգիստ հեռացավ իր բանին։ Հյուվանդով զբաղվող չկա. նա իր համար այնտեղ պիտի մեռնի։ Այդքանը միայն։

Գնացի բոստանը։ Գիժ-բիձան ապրում է մի քողտիկում, որ շինված է ուրիշի տան պատի տակ։ Դա մի պստիկ տուփ է, որ գիժ-բիձան է շինել։ Ճարտար սարքել է, հարմարեցրել։ Դուռ, պատուհան, տախտ, դարակ։ Միայն փոքր է դագաղի պես։

Դուռը բաց էր։ Եվ գիժը աչքերը առաստաղին՝ հևում էր։

— Բիձա, ո՞նց ես։

Չի պատասխանում։ Կամ ուշքը վրան չէ, կամ անօգուտ բան է համարում խոսելը։

Դեմքը սրված է, աչքերը ապակի։

Երևում է՝ կմեռնի։

Կանչե՞լ բժշկին թե ոչ։

Անօգուտ է, բայց որոշում եմ կանչել։

Եկա տուն։ Բիձային ասացի, որ բժիշկ եմ կանչել տալիս։

— Օրը հասել ա, ի՜նչ բժիշկ։ Պրտի մեռնի։

Տոմս գրեցի, տվի հարևանենց աղջկան, ուղարկեցի բժշկին։

Բիձան զվարճանում է «ուսումնական» մարդու «հավեսի» վրա։ Քմծիծաղ է տալիս։

Երեկոյան բժիշկ եկավ.

— Չի ապրի, ուշ է։

Տերտերը քուցին-քուցին անելով ներս ընկավ բակը, աջը տվեց պառավին ու հարսներին, նստեց և բարձր շունչ առավ։

Տրամադրությունը բարձր էր։ Թաղումից հետո, իբրև մի մեծ շահատակությունից հետո, որ նա կատարել էր, հիմի եկել էր հանգստանալու։

Նրա հետ էր և տիրացուն. հնոտի, բայց առողջ մի տղամարդ։ Տերտերի ծալած շուրջառը դրեց պատին և հոտոտելով, սկսեց աչքերով խուզարկել չորս կողմը։

Գյուղացիները իրար ետևից շարան-շարան հավերի պես թրըփալով իջան բակը և մեկմեկու քամակ բոթելով՝ առաջ գնացին, պառավին «աստվածանից մխիթարվես» ասացին ու ձեռները լվանալով նստեցին սուփրի շուրջը։

Սկսեցին ուտել։ Այնպես լուրջ ու հիմնավոր, կարծես ցեմենտի պատ էին շարում։ Առաջ ցած էին խոսում, քիչ հետո ձայները բարձրացրին։

Բակը կենդանացավ։ Հարևան երեխաները կիտվեցին կտուրներին և սկսեցին ղժվժալ։

Մինչև անգամ ինչ-որ շներ հայտնվեցին և ահռելի սև դընչերը-տնկած սկսեցին աչքերը սևեռել դեպի սուփրան։

Հազիվ մի ոսկր թռչում էր նրանց կողմը՝ յասավուլների պես հասնում էին ու հափռում։

Սեղանը աշխուժացավ։

Վատորակ գինին ազդեց։ Դեմքերը կաս-կարմիր ձմերուկի պես լցվեցին արյունով։ Ու մի ստամոքսային մոլուցքով տարված խժռելով ամեն ինչ՝ սկսեցին կատակել, խոսել առօրյա դեպքերից ու իրենց գործից։ Վասիլը, սակայն, մռայլ էր և լուռ ուտում էր։

«Բանվորի հայրը» խոսում էր Զակտպոյի մասին և համեմատելով բանկոոպի հետ՝ գտնում էր, որ Զակտպոն «զոռում է»։

— Աղը չկա, աղը՜, դու աղն ասա,— բերանը բացեց Վասիլը,— առանց աղ հրե ե՞ն տավարը սարում կոտորվում ա։

— Տավարը դրանից չի կոտորվում, է՜, դրանի՜ց,— ձայն է տալիս մի ճենճոտ գյուղացի,— ես ասում եմ՝ էն շան որդի համազաշիմանցին իր տավարի ցավը գցեց մեր մեջ։

— Բա դոխտո՞ւրն ինչ ա ասում։

— Այ էդ դոխտուրի ֆոտը կտրի հա՜, դոխտուրին ո՞վ ա տեսնում,— ձայն տվեց Վասիլը։

Մինը մյուս կողմից.

— Ա տնածակ տերտեր, խանութդ ե՞րբ ես սարքում, խանութդ։

— Էս ա սարքում եմ, կաց մի տղես գա Թիֆլիսից, որ կաղնացնեմ խանութում։

Վերջապես մեկ-մեկ սկսեցին նկատել, որ կշտացել են, և այլևս ոչ մի հնար չկա ուտելու։ Ականջները տնկվեց։

Ետ նստեցին, որ շունչ քաշեն։

Այդ ժամանակ տերտերը վեր կացավ բաժակը ձեռին։ Մյուսները հետևեցին նրան։ Նա սկսեց մրթմրթալ մի աղոթք։

Հետո — «Աստված լուսավորեսցե Սարգսի հոգուն»։ Նոր հայտնվեց, որ գիժը անուն էլ է ունեցել — Սարգիս։

Ապա բոլորը խմեցին Սարգսի ողորմաթասն ու բխկալով հեռացան իրենց տները։ Վասիլը թոկն առավ ու շտապեց անտառ։

Բակում նոր հյուրեր են եկել։ Բիձայի որբևայրի հարսն է և մի անծանոթ գյուղացի։ Սարից յուղ ու պանիր են բերել ձիով։

Կոճղի պես պնդակազմ կնիկ է, քամուց ու արևից մրթված

դեմքով։ Պիրկ ձեռքերով քանդեց թոկը, բեռները արագ գրկեց, վազեցրեց, տարավ տեղավորեց, ձին տարավ ախոռը։ Բոբիկ է ու ման գալիս գետինը դմբդմբացնում է։ Չի խոսում, այլ հրամաններ է արձակում իր հետ բերած գյուղացուն, որը ուզում է օգնել նրան, բայց չի կարողանում ետևից հասնել։ Դա շորադյալցի է, սարում մշակ է մտել նրանց մոտ։

Մի քիչ դես ու դեն արավ ու մոտեցավ ինձ.

— Հրամանքդ կաղզվանցի՞ ես։

(Ինչո՞ւ պիտի կաղզվանցի լինեմ)։

Ասացի որտեղացի լինելս և ապա հարցրի.

— Ի՞նչ կա։

— Հեչ, գիտես թը ճանանչ ես։

Ոտների վրա տրորվում է։ Հետո նստեց պատշգամբի սանդուղին։

— Ներողություն, եղբայր, քեզի մի բանըմ պիտի հարցնեմ։ Կաթի մաշինան, մեկ էլ մե տրախտորըմ որ ուզենանք բերել տալ, ի՞նչըղ պիտի էնենք։

Ո՞վ է ուզում բերել տալ։

— Ուզող կա սարը։ Ես է մեջն եմ։ Գուզենք կաթի արտել բանանք։ Մենակ մաշինաս չիս ենք թա՞նկ է, աժա՞ն է։

— Ուզում եք տնտեսություն սկսել։

— Հա։ Մաշինի պանիր ու կարագ գուզենք հանե։ Հրամանքդ տեսե՞լ ես կաթի մաշինա։

Բացատրում եմ։ Շորագյալցին ըստ երևույթին մի քիչ ծանոթ է կաթնատնտեսության և հիմի ավելի մանրամասն է ուզում ծանոթանալ սեպարատորին և տրակտորին։ Նա ինձ ուշադրությամբ լսում էր։ Հարցրեց, թե ո՞րտեղից կարելի է ձեռք բերել և ի՞նչ արժե։ Ասացի՝ գները չգիտեմ, բայց եթե դիմեք գյուղկոոպին՝ նա ձեզ կօգնի այդ հարցում։ Հասցեն տվի։

— Էդ տրախտորը որ բերել տանք՝ մենք կրնա՞նք բանեցնե։

— Հազիվ թե. պետք է սովորեք։

Եվ բացատրեցի, որ լավ է շատվոր լինեն։

Շատ հետաքրքիր և աշքաբաց մեկն էր երևում։ Ռուսի և սկսեցի գյուղատնտեսությունից խոսել։ Բերի օրինակներ Շվեյցարիայից, Գերմանիայից։

Նա սկսեց հարցեր տալ։ Նրան շատ զարմացրեց դանիական կովերի քաշը, մեծությունը։

— Յա, էդպես է կով էղնի՞։ Ը՛ը, ը՛ը, ը՛ը, ը՛ը—ծվծվացրեց լեզվով և գլուխը թափ տվեց։

Հետզհետե անցավ նորանոր հարցերի։ Իմ բացատրությունները լսում էր, բայց ինչ-որ միտքը զբաղված էր նաև ուրիշ բաներով և առիթներ էր որոնում կարծես՝ հարցնելու։

Հանկարծ խոսքը շուռ տվեց.

— Վարժապե՛տ, մե բանըմ հարցնեմ։ Քափանակի դեղ գիտե՞ս։

— Քափանակի՞—փորի ճիճվի՞։

— Հա։ Տափակ ճիճվի։

— Դո՞ւ ես հիվանդը։

— Չէ, էնտեղ սարը մի սրտակից ընկեր մ՚ունիմ՝ էնիկ ունի. պիտի թափեմ։

— Դրա դեղը սանտոնինն է։

— Հա՛, ըշտը ադ ըսած դեղը։ Ըսեմ՝ քովդ կունենաս։

Ասացի կա — իսկապես էլ կար,— բայց հին էր նախ և ապա ի՞նչպես տայի։ Բացատրեցի, որ դեղատնից կարելի է ձեռք բերել։ Դժվարացավ։ Դեմքը կնճռոտեց։ Հետո լփռտեց.

— Ես օր էրթամ, կուտա՞ն։

— Չէ, պիտի դիմես բժշկին։

— Է՛, վո՞վ գլոխ ունի բժշկին էրթալու, գիշերս պիտի սարն էրթամ։ Քովդ ունիս՝ տուր։

— Շատ լավ, կտամ։

Շատ ուրախացավ.

— Իսկ մայասուլի յա թե չէ՝ սուսանակի դեղ չունի՞ս։

— Չէ։ Ինչի՞ դ է պետք։

— Ինձի պետք չէ։ Փառք աստծու, իստակ եմ ու գերդաստան ունիմ։ Մենակ թե մեր սարը թուրքեր շատ գուքան քովս՝ կխնդրըվին։ Ձե՞ս կրնա բժշկեն ատ դեղերը առնե։

— Չէ, չեմ կարող։ Հիվանդը ինքը պիտի գնա բժշկի մոտ։

— Լավ. քափանակի դեղը տուր։

Տվի փոշին, հինգ թե վեց հատ։

— Երկնուց գետին շնորհակալ եմ.— ասավ ու ծոցը դրեց։

— Այդ սեպարատորի ու տրակտորի մասին այս կասեմ,—

ասացի ես,— որ եթե կոլեկտիվ դիմում լինի՝ բան դուրս կգա։

— Հա՜, կմտածենք,— պատասխանեց անտարբեր՝ ուշքը ուրիշ տեղ։

Նա փչում էր «իրենց» մտադրության մասին. ես զգացի, բայց լռեցի։ Ինձ զվարճացրեց այդ շորագյալցի հեքիմի տրյուկը։

Իրիկնադեմին, երբ ճամփա էր ընկնում դեպի սար, միամիտ եղանակով հիշեցրի կրկին կոլեկտիվ տնտեսությունը։

Շորագյալցին բաց արեց կարտերը.

— Ջա՜նըմ, ի՞նչ տրախտոր, ի՞նչ բան, ես քոսոտ օչխարըմ շա՜տ ունիմ՝ կաթի մաշինա առնեմ։ Տեսնինք, վրես դրե,— ու խորամանկ ժպտալով՝ աչքով արեց։

Լուր եկավ, թե պիոներները ֆուրգոնով վերադառնալիս՝ մի ֆուրգոնի հետ երեսուն հոգի թափվել են ձորը։

Գյուղում իրարանցում է։ Գործկոմից ձիավոր գնաց։

Շոսսեի երկարությամբ մայրերի ու եղբայրների մի շարան ձգվեց դեպի այն ձորը։

Վասիլը թողեց գործն ու վազեց։ Բայց Անուշի մայրը հանգիստ ժպտում է.

— Սուտ կըլի։ Միշտ, հենց որ պիոներները ոտը դուրս են դնում գեղից, էդպես բաներ են խոսում։

Ճաշից հետո երկար փողոցի կողմից լսվեց դալար ձայներից հյուսված մի «ուռա»։ Պիոներները շարքով-կարգով քաղաք էին մտնում։ Ոտով էին գալիս, իսկ ետևից ֆուրգոնները ծաղիկներով ու ճղներով զարդարած։ Նրանց մեջ փոքրեր էին նստած և մի քանի ծնողներ, որ դեմ էին վազել «աղետի վայրը»։

Փողոցը լցվեց ուրախացած ծնողների ու հանդիսատեսների բազմությամբ։

Պիոներները շիկնած էին ու սևացած և աջ ու ձախ պատ կազմած բազմության միջից լուրջ անցնում էին ու միայն գոչում. «ուռա՜ա՜ա՜...»։

Լուրը սուտ էր դուրս եկել։ Պիոներներն իմացել էին «պրովոկացիան», ուստի և բարկացած էին մտնում քաղաք և իբրև հերքումն և հակացույց գոչում.

— Ուռա՜-ա՜-ա՜...

Դեռ չեն ցրվում. գնում են ակումբ, որ այնտեղից ցրվեն տները։

Մի քսան րոպեից հետո Անուշը կարմիր խնձորի պես ներս գլորվեց բակը, ուրախ-ուրախ գրկեց մորն ու հետո կապոցը քանդելով սկսեց բացատրել, որ գյուղի մութ ուժերը պրովոկացիա են սարքել իրենց մասին։

— Մենք ցույց կտանք այդ մութ ուժերին։

— Աղջի՛, գլխամեռ, էդպես կվախեցնե՞ն,— խոսեց պառավը։

— Ո՞վ ա մեղավոր, ընչի՞ եք լսում կոնտրռևոլուցիոներներին։

Անուշին հայտնեցին գիժ-բիձայի մահը։ Նա վախեցած աչքերը չռեց, և արցունքները ցայտեցին.

— Վա՛յ, բիձե՞ն... իմ խեղճ բիձե՞ն...

Ու գնաց դեպի բոստանը։ Ի՞նչ էր ուզում գտնել այնտեղ։

Երկու օր հետո մի թոքախտավոր պիոների թաղում կար։ Ամբողջ կոլեկտիվը գնում էր դագաղի ետևից։

Հուղարկների մեջ էին նաև տանտիրոջս ամուսնացած աղջիկը և նրա ամուսինը։

— Ազգակա՞ն են,— հարցրի մի պիոների։

— Ոչ, համակրող են,— պատասխանեց կարճ ու լուրջ, կարծես դա մի քաղաքական ցույց լիներ։

Փողոցի ծայրին կանգ առան։ Բազմությունը շրջապատեց դագաղը։

Անսպասելի կերպով Անուշը բարձրացավ մի քարի։ Ի՞նչ, պիտի խոսի՞։ Այո՛։ Խոսում է. «Ընկերնե՛ր։ Մեր ընկեր Սոսին, պիոներական մեր կոլեկտիվի ակտիվ ընկեր Սոսին, այսօր հեռանում է մեզանից։ Բայց մենք չենք հուսահատվում։ Նա մեր մեջ դեռ կենդանի է։ Մենք նոր կյանքի զավակներ ենք։ Մեզ պետք չեն տերտերները, տիրացուները։ Մենք մեր ընկեր պիոներին այսօր թաղում ենք նոր թաղումով։ Այստեղ չկան տերտերներ, այստեղ չկան սգավորներ, այստեղ ներկա են պիոներական ոգին և կարմիր դրոշակը։ Ուրիշ ոչինչ»։

Անուշի դեմքը վառվում էր և ձայնը պայթում կոկորդի մեջ։ Հենց որ վերջացրեց՝ արագ ու լուրջ իջավ քարից։

Զգնացի առաջ։ Օրկեստրը նվագեց մահվան քայլերգը, և հուղարկավոր պիոներները հեռացան։

Վերադարձա շուկա, որ այնտեղից տուն գնամ։

«Ամերիկյան» բազարում ինչ-որ դավոռց կար։ Մի մարդու էին քաշքշում։ Վերարկուի կռիվ էր։

Օրերը քանի գնում՝ կատաղում են։ Շոգը կծում է։ Սարերի ատամնավոր բերդերի աշտարակներին ամպեր են ճլմկոտում, հորանչում, հետո սևակնած, հսկայական գորտերի պես գորտլող տալով սուրում երկնքի ջրերի մեջ։

Վախ կա, թե կարկուտ կգա։

— Հը՛, բիձա՛, հունձի ժամանակը չի՞ հասել։

Բիձան տարակուսած մտիկ է տալիս ամպերին և կիսաձայն, կարծես վախենալով, թե նրանք կլսեն.

— Հասել ա, բա հասել չի՞։ Մշակի բանը դժար ա—թանկ ա, ճարվում չի։

Նստել է քարի շեղջի վրա, բահը գցել առվի շրթին և ցորենի հասկ է փշրում։ Բաց-դեղին հատիկներ են։ Բիձան կենտրոնացած զննում է ու հետո ծեղերը փչում։ Ահա մի հատիկ ընկավ գետին։ Բիձան ուզում է վերցնել, և հաստ մատները հազիվ են բռնում հատիկը։ Նստում եմ ծառի շվաքին, խոտի վրա և թինկը տալիս։ Նայում եմ բիձային։ Նա գունդ ու կծիկ դառած՝ կռացել է իր բռան վրա, և մերուքը ջրվեժի պես թափվում է այդ կոշտ ու կնճռոտ բռան վրա, որ կաշեպարկի է նման։ Հա՜սա։ Ի՞նչ է որոնում այդ հատիկների մեջ, որ այնպես զննում է—չգիտեմ։

— Բիձա, ասում ես՝ մշակը թանկ է. բա ինչի՞ տղաներիդ հետ չես հնձում։

— Տղաներիս մինը տավարին ա մտիկ տալիս, մինն էլ, տեսնում ես, անջախ ա հացնում։

— Այս երկու տղադ ե՞ն։

— Չորսն էին։ Երկուսը էս կռվին սպանվեցին։

— Ո՞ր կռվում։

— Ի՞նչ իմանամ, էնքան կռիվներ էլավ։

— Էդպե՞ս։ Ուրիշ տղաներ է՛լ ես ունեցել։

— Բա ի՞նչ... (հառաչում է) նրանք որ ասելն չգիտին՝ էն ա

մշակին տվածը տանը կմնար։ Հիմի արի՛ մշակի օրականը — տուր, հացը — տուր։ Որտե՞ղից։

— Է՛, հունձ է, պիտի արվի։

— Պիտի՞ արվի, բա՞։

— Շատ ես աշխատում, բիձա։

— Շատ եմ աշխատո՞ւմ։ Տնա՛շեն, ասա գարուն-ձմեռ ա՞լք ենք բաց անում։ Բա որ չաշխատեմ, էս հողը ինձ հա՞ց կտա։ Խեղդում ենք ու զոռով հացը միջից հանում։

— Մենակ ես, էնդուր է էդպես։

— Մենակ եմ, բա՞։ Մենակ եմ ու ո՞նց մենակ։ Քիչվոր եմ։ Որ մին ընկա՝ էլ վեր կենալ չեմ։ Մին էլ էն կա, որ ուտողս շատ ա, ուտո՞ղը... Դա յա տունս քանդում։ Մենակ եմ... — կրկնում է ու կրկին հատիկները խառնում։

— Լավ,— դիմում է նա կտրուկ,— որ չաշխատեմ, հասնո՞ղս ով ա։

— Ո՞վ։ Նոր կարգը։

Բիձան մշուշոտ հայացքը գցում է հեռուն ու մտածում.

— Չեմ իմանում։ Էդ նոր բան ա։ Ամա ինչ էլ որ ա՝ էդ բանը ո՞վ պտի բերի իմ դուռը։

— Ո՞վ։ Անուշը։ Նա հո քեզանից է։

— Հա, ինձանից ա։

— Հավատո՞ւմ ես, որ քեզանից եղածը քեզ համար նոր կյանք բերի։

— Ո՞վ ա իմանում։ Ժամանակը ամեն բան կանի։ Ասում ա՝ «հար զադ զամանա բախար, զաման հե՛չ բիր զադա բախմիյիր». ուզում ա ասի՝ «ամեն բան ժամանակին ա մտիկ տալի, ժամանակը խակի մի բանի մտիկ չի տալի»։

— Էդպես է, բիձա, էդպես է։ Այ իմ բոի միջի հողը։ Ամեն բան սրա միջին է. հացը, խոտը, երկաթը, ես, դու, ամենքը։ Սրա միջին ամեն բան փոխվում է։ Մինը փտում է, մինը ծլում։ Ժամանակն էր, որ հիմի էսպես բերեց։

Բիձան իր սահանքավոր մերուքը դեպի ինձ դարձրած, կասկածամիտ աչքերը վրաս սևեռած՝ ականջ էր դնում։

Դիմացս արտերը դեղին են տալիս և ոսկու հեղեղի պես լցվել են չորս կողմ ու կանգ առել։ Ճպուռները նրանց մեջ «ճը՛ռ-

ճը՞ռ»՝ լարում են իրենց ժամացույցները։ Երկնքում հսկայական ոսկե սարդը խաղում է իր լուսեղեն թելերի հետ։

Հազարավոր մեղուներ, այլանդակ բզեզներ ծաղիկների և ցողունների մեջ ինչ-որ տնտեսության հոգսի ետևից են ընկած։ Խուզարկում են, շտապում։ Հողը հարբել է, խանդոտում և մոլուցքի մեջ բերում է բարիքը։ Նրա ուժեղ հոտը քաշում է իրեն։ Բռնում եմ, փշրում, զննում։ Ոչինչ չի երևում — մանր թելեր, ավազի հատիկները և սև զանգված, միապաղաղ, կո՞ւյր, մո՞ւթ, որի մեջ փտում-ծլում, փտում-ծլում են հազարավոր էակների դիակներ։

Ինչպես այս բիձան, նույն այդ հողից շինած բիձան։ Ինքը հողը։ Նայում եմ նրա ջլուտ դեմքին, ձեռքերին։ Այո՞, սա հողից է զանգված. սա հիմի փտում է, որպեսզի ծաղկի Անուշը...

Սարի կողմից անտառն է. ու թեև մի հարյուր քայլ է հեռու, բայց լսում եմ նրա տարերային խոսվածքը — միլիոն տերևների ու բզեզների լեզուն։ Թմբիր է գալիս վրաս, հաճելի՝ ինչպես գինու առաջին ումպից հետո։ Աչքերս կիսափակ նայում եմ բիձային, որ ճենճերվում է արևի բուրայի մեջ։

Ինչ-որ խորհուրդ կա նրա և ցորենի առաջին հատիկների հանդիպման մեջ։ Նախամա՞րդը, որ հանդիպել է իր ձեռքով ցանած առաջին հատիկներին։ Անողոք կռիվը վերջացել է հաղթությամբ։ Հացը, տաժանելի հացը եկել է։

Ներքևից մի երիտասարդ բահն ուսին գալիս էր դեպի մեզ։ Ջնայած շոգին նա արագ էր քայլում։ Բիձան ձեռքը ճակտին դրեց. նրան նայեց ու բահը ձեռքն առավ։ Երիտասարդը մոտեցավ մեզ ու փնթփնթալով, արագ-արագ սկսեց ճումբերը քանդել առվի գլխից։

Բիձան, որ մինչ այդ շատ հանգիստ երևույթ ուներ, վեր թռավ ու բահով անխոս հարձակվեց քանդված ճումբերի վրա, որ նորից տեղը դնի։

Սկսվեց մի խուլ կռիվ երիտասարդի և բիձայի մեջ։

— Ա՛, քու շուն շան որդի հերն անիծած.— ղռմղաց բիձան, հրելով երիտասարդին։

Բայց սա, որ ավելի ուժեղ էր, ետ հրեց բիձային։

— Թո՛ղ, ասում եմ քեզ։ Հիմի՞ շանսատակ կանեմ, գաղթական շա՛ն որդի, ո՞ւմ ջուրն ես կտրում։

— Վի՞ր ջուր կգողնաս, հառամզադա քոփակ շուն։

Բիձան բահը բարձրացրեց, որ իջեցնի նրա գլխին։ Երիտասարդը փաթաթվեց նրան։ Բռնեցին իրար։

— Բա՛ց թող,— հևաց բիձան։

— Կանի՞,— գոռաց հակառակորդը,— կանի՞ քու դատաստան կտրեմ.— հևում է բարկությունից։

Ես վրա հասա և քաշեցի երիտասարդի մեջքից։ Որտեղից որ էր՝ վրա հասավ մի կաղ մարդ ևս և օգնեց, որ բաժանենք կռվողներին։

Երիտասարդը նորից պոկվեց ու ընկավ բիձայի վրա։

Ես սպառնացի.

— Դու սրան ուզում ես սպանե՞լ, իսկույն միլիցիա կբերեմ։

Երիտասարդը բաց թողեց, բայց սկսեց գոռգոռալ ավելի բարձր.

— Ջիմ տուն կավրի՞ս. իդա բահ կըմլիմ զիտա բոկտի։ Մկա զիմ թարս տամարի՞ս ռասթ էկար։

Սկսվեց երկուստեք հայհոյանքը, որ նշան էր «գործողությունները» վերջանալուն։ Հիմա բանակռիվ էր, ուստի և անվնաս։

Հայհոյելով իջան ներքև։ Կարծեմ այնտեղ հաշտվեցին էլ։

Մի քանի օր է, որ բիձան չի երևում բակում։ Դաշտում էր։ Այնտեղ տեղի է ունենում կատաղի ճակատամարտ, որ աչք չի թողնում բանալու։ Հնձի եռ ժամանակն է։ Աչք չի թողնում բանալու։ Հացը անձնատուր է լինում։

Բակում մնացել են ճանճերն ու ամառավորներից նրանք, որոնք լվացք ունեն։ Սրանք էլ վերջացրին, անտառ են գնում։

Հիմի «բանվորի հայրն» է միակ կենդանության հերթապահը։

Ինչ-որ թուրքեր են գալիս մոտը, որոնց մանր-մունր ապրանք է ծախում կամ փոխանակում մթերքի հետ։

Կատարյա՞լ շոկոլադ՝ ջրի մեջ բացած։ Վասիլը շալվարը հանել, մտել է կալատեղի ցեխը և քշում է եզներին, որ քաշում են մի մեծ փոցխ։ Կալն են պատրաստում։ Ցեխը պիտի հարթվի, շո-

բանա և կալատեղ դառնա։ Վասիլը խափշիկի կերպարանք ուներ։ Երես-մերեսը ցեխի մեջ կորած է։

— Վասի՛լ, կալին հասար, հա՞։

— Հասանք, հա՛։ Էս ա կալը դզում ենք։

Երկար փողոցը թնդում է օրկեստրներից։ Դիվիզիան գնում է մանյովրի։ Ահագին բազմություն է կիտվել մայթերին. դիտում են հեռացող զորքին։

Բիձան նստել է խանութի առջև ու բերանը լամլամորելով դիտում է կարմիրբանակայիններին։

Նրանք՝ քը՛ռթ, քը՛ռթ, քը՛ռթ, քը՛ռթ, միաչափ քայլում են՝ տոպրակները ճոճացնելով։

Ահա մեկը իր վաշտից ուշացած՝ հևալով վազում է որ հասնի։

Ահա և հեծելազորը։ Կարկտեց ամպի պես ձիերի սմբակներով։

Գալիս են, գալիս, գալիս, վերջ չկա։

— Ոքը կտրե՞ց,— հարցնում է բիձան կողքանց նայելով։ Աչքը չի կտրում։

— Որտեղի՞ց։ Հլա գալիս են։

— Ասել ա շատ կա։

— Բա՞։ Հայաստան ա, շատ կըլի,— սրախոսում է մրոտ դարբինը։

Ջահել, քթեղ, կարմիր տղերք... հոսում են գարնան ջրերի պես։

Ու փոշին ծառանում է վեր, դեպի կապույտ երկինքը։

Մի քանի օր անց արդեն անտառի բերանից երևում է բիձայենց կալը։ Երեք հոգի են — բիձան, Վասիլը և մի վարձվոր մշակ։ Երեխաները ճանճերի պես ղժվժում են շուրջը։

Մինչև անտառ գալիս է Վասիլի ծղրտոցը եզների վրա.

— Եզն ա՛րի, եզն ա՛րի։— Հայհոյում է ու ճիպոտում։ Բայց դրա հետ միասին արդեն լսվում է նրա հորովելը.

«Հո՞ արա, եզը՞-ը՞-ը՞...»— ու հանկարծ ճիպոտում է.

— Եզն ա՛րիիի՞...

Երկու օրը մի կալ է։ Ապա թեղում են։ Օրվա մեջ ինչքան որ քամում են՝ ջվալներով բերում են տուն։

Այդպես մի տասն օր, և կալը վերջացավ։ Գնացի այնտեղ։ Վերջին ժամն էր։ Պառավը գետնի վրա կռացած՝ մաղում էր կալում մնացած հողախառն ցորենը։

Մի հատիկ անգամ չի ուզում թողնել հողի մեջ։ Հանում է։ Հողը տանջվել, փշրվել է ու տալիս է վերջին հատիկը՝ օձիքն ազատելու համար։

Վերջապես բոլոր ցորենը լցրին ջվալները, բեռնեցին սայլին։ Մնաց դարմանը։ Դա հեշտ է, դա հետո։ Կալը ավլած է, մաքուր։ Միայն մի տեղ կիտած է քամված, մաղած հողը։

Ջայները լռել են։ Բոլորը հոգնած են, լուռ։ Եզները լծված սպասում են հեռանալու։ Որոճում են միայն։

— Է՜հ, աստված բարի վայելում տա,— մրմնջաց բիձան։

Պառավը գեմքը դարձրեց դեպի կալը և ասաց նրան.

— Կա՛լ ջան, մնա՛ս բարով։ Շնորհակալ ենք։ Ծեծեցիր, քամեցիր, մեր հացը տվիր։ Աստված, տո՛ւր, որ էլի ուրախությունով, սաղ սալամաթ կալ անենք։ Բարով հասնենք մյուս կալին։

Շարժվեցին, գնում են տուն։ Հացը մեղմացած ու ժպտալով անձնատուր եղած, օրորվում է սայլի տատանումներից։

Նա գնում է այնտեղ, որտեղից եկել էր դաշտ։

Ճամփին չեն խոսում։ Լիացած են։

Առվի ափին Վասիլը մի լավ ճոփ տվեց երեսին սառը ջուրը, թևքով սրբեց թեթև ու գնաց, որ սայլին հասնի։

Երեխաները վժվժալով քշում են սայլը։

Երեկո։ Ահա հեռաձիգ հնչեց փողը։ Պիոներների ազդանշանն է — կարծեմ՝ նշանակում է հանգի՛ստ, չշրջել դուրսը։ Մութն է։ Բակը թվում է անդունդ։ Հազիվ նշմարվում են սայլի և եզների սիլուետները։

Սայլը գլուխը դրել է գետնին և ականջ է դնում երկրի ձայներին։ Եզամեքենաները ծանր տնքում են, փնչում։ Երբեմն էլ կարծես ծովն է ճղփում ափին։ Ջաղացքարի ձայներ են գալիս։— Որոճում են եզները։ Կարծես եզներ չեն այնտեղ, այլ երկիրը,

հողը, այդ վաստակած, հանելուկային հողը, որ հևում է և ուզում է քնել։

Լա՜յն հանգիստ կա ողջ բնության մեջ։ Քնել են խրճիթները, լեռները։ Միայն չի քնել, թե՞ զառանցում է ճպուռը։ Երկնքից դողդողալով շիթում են աստղերը՝ ինչպես մեղր։

Ահա մեծ արջը արևմուտքում երկու նիզակաչափ հորիզոնից վեր։

Մեծ տնտեսություն կա նաև այնտեղ, երկնքի կապույտ դաշտերում, աստղացորենի, հարդի այդ մարագներում։

Խորդում է բիձան։ Քնած է նա իր ցորենի ջվալների մեջ, նրանցից մինը գրկած։ Այնտեղ է քնել, որ չգողանան։ Ամուր ճանկերում պահում է նա իր սեփականությունը, և քնի մեջ անգամ հսկում է նրան։

Ինչպե՜ս ճանկերի մեջ ամուր սեղմել է նա իր փոքրիկ սեփականությունը։

Ես մտածում եմ հողի մասին, և կամաց-կամաց քունս տանում է։

Օրերը հասել են նաև այն ամառվա ծղրիդների համար, որ հյուր էին եկել այստեղ։ Ամառավորները գնում են։ Արդե՞ն առաջին մեծ անախորժությունը — պառավը պատշգամբիս տակին կոցահարում է իր ամուսնացած աղջկան.

— Ընչի՞, ընչի՞ համար։ Դաշնիկը մերը չի՞։ Մեր Վասիլը չի՞ կարա տանի, որ մարդուդ տամ տանի՞ նրա վեշշը։ Ասա մարդիդ՝ ուրիշ դաշնիկ գտնի՝ վեշշը տանի վակզալ։

Աղջիկը լաց էր լինում և փեշով սրբում աչքերը։

— Ընչի՞ ես լաց ըլում. ո՞վ ա մեղավորը, որ մարդդ գործ անել չի իմանում։

— Ես դրա համար չեմ լաց ըլում,— ատամները կրճտացնում է աղջիկը.— մին ա, հեր ըլի, մեր ըլի, աղքատին օչ օվ թողալ չի, թե շունչ քաշի։ Իմ հերսը իմ մարդու վրեն ա գալի, որ ինձ ձեր մուննաթին ա գցել։

— Ո՞վ ա մեղավոր,— կոցահարում էր պառավը։

— Գիտամ ո՞վ ա մեղավոր։

— Ի՞նչ ես շինում ըստի,— խեթելով առաջ եկավ աղջկա ամուսինը մի ջղուտ, խստադեմ երիտասարդ և աչքերը լուռ ոլորեց նրա վրա։

Կինը ձայն չհանեց։

— Դե, տուն գնա,— գոռաց երիտասարդը և սպասեց, մինչև կինը շարժվի։

Սա աչքերը սրբեց ու գնաց։ Ամուսինը լուռ հետևեց նրան։ Պառավը անխոս նայեց նրանց ետևից, ինչ-որ փնթփնթաց և մտավ թոնրատուն։

Վասիլը կամաց-կամաց է հարդը տուն բերում։ Ինչ-որ ծուլացել է։

Իրիկնադեմին լուր եկավ, որ կովերը սարում հիվանդացել են։

— Դարաղ ա՞։

— Դարաղ ա։

Եվ ուրիշ ոչինչ։ Բիձան թուքը կուլ տվեց ու դողդոջուն բերանը բաց նայեց լուր բերողին, որ մռայլ շտապով եկավ, հայտնեց ու քայլերն ուղղեց դեպի իրենց տունը։

Վասիլը հևաց միայն, լուռ գնաց թոնրատուն և մահակը հանելով՝ դուրս եկավ բակից դեպի սարը։ Երեխաները ձայները կտրեցին ու սքլած ճուտերի նման հավաքվեցին պառավի շուրջը։

Սա անխոս սկսեց ծնկները տրորել։

Անուշը վախեցած մեկ բիձային էր նայում, մեկ պառավին։

Նրանք հիրավի ազդու էին այդ բոպեին։

Ամբողջ ընտանիքը պապանձվեց ու քաշվեց թոնրատունը։ Բիձան փնչացնելով ներս ու դուրս արավ մի քանի անգամ, վերջը, գնաց նստեց ջրհորի գլխին ու աչքերը գցեց գետնին։

Ներսից գալիս էր Անուշի ձայնը.

— Չէ՛, նանի, չէ՛, չենք մեռնի։

— Կտո՞րվեցինք, գնա՞ցինք, կորա՞նք,— վո՞ւշ էր անում պառավը։

— Էլի կաշխատենք, էլի կըլի,— ասում էր Անուշը։

— Իհի՜հ, որդի, քանդվեցինք, պրծանք։

Ամառավորները անհոգ իրենց պատրաստության հետ էին և

չէին նկատում բիձայենց փորձանքը։ Մի ընտանիք իրերը կապում էր, որ գիշերը պիտի գնար։ Նրանք երգում էին, քրքջում։

Ուշ գիշերով Վասիլը եկավ ու անխոս նստեց Թոնրատան շեմքին։

— Երկուսը կատկի։

— Երկո՞ւսը,— հևաց բիձան.— ո՞րն ա։

— Սոնեն ու Միշկեն։

— Դոխտուրն ի՞նչ ա անում։

— Դեղ ա անում։ Ի՞նչ ա անում։ Ի՞նչ իմանամ։

Երկար մնացին այդպես։ Երեխաները քնեցին։ Մի քիչ անց՝ Վասիլը հաց կերավ ու գնաց մարագի կողմը եզները բերելու, որ ամառավորների իրերը տանի կայարան։

Տանողչեքն էլ կտրեցին այսպես։

— Վերջնական՝ մի՛ մանեթ։

— Լա՛վ, լա՛վ, ձեզ ու ինձ վրա կորած չի։ Թող ըլի մի մանեթ։

Ու չես իմանում ի՛նչ հուսով, ի՛նչ հաշվով — սևահողը ինքը իր մեջ լավ գիտե այդ — Վասիլը ներս գցեց իր վիշտը և անցավ աշխատանքի։

1924 թ.

ՔԱՐՀԱՏՆԵՐ

Լեռը խորդում էր։

Այդ քարհատներն էին, որ կողը մերկացրել քլունգներով ընկել վրան՝ հարվածում էին։

Ժայռի բեկորները, ահագին, անճոռնի գազանի պես բներից դուրս ցցված կրճտում էին իրենց ատամները քլունգների տակ։

— Դե՛, դե՛, մեկն էլ շուռ տվեք ու շաբաշ,— հրահանգեց երիտասարդ բանվորներին և քարի արանքից դուրս եկավ մի ծեր բանվոր ու իջավ ներքև։

Վարպետ Սարգիսն էր։ Ճակատի քրտինքը ցուցամատով կուշտ քերեց, թորեց ու հողոտ բաճկոնը մեջքին գցելով նստեց ծխելու։ Աչքը սակայն բանվորների կողմն էր, որ ծիծաղելով ու հայհոյելով քլունգները խրում էին ժայռի ճեղքի մեջ ու մանր քարերը մաքրում։

Սարգիսը, որ եռ աշխատանքի մեջ էր եղել ամբողջ օրը՝ գոհունակ նայեց օրվա աշխատանքի արդյունքին — քարաբեկորներին, որ անհեթեթ ձևերով բերանքսիվար պառկել էին հողաթմբերի, փոսերի մեջ։

— Էդ է, էդ թևին մի քարը մնաց։ Էգուց էն թևին պիտի քանդենք։

Իրիկնադեմ էր. բանթողի ժամանակ։ Քարհատները հոգնել, քիչ քիչ ձայները փորները գցած՝ քլունգներով հարվածելիս երբեմն փուստ էին անցնում։ Մի մեծ քարի շուրջն էին խմբվել։ Մաքրել էին բոլորքը և ուզում էին գլորել ցած, փոսը։ Պետք էր տեղահան անել։ Բայց դուրս եկավ, որ գա այնքան էլ հեշտ չէր։ Քարը պինդ կպած էր ժայռի բնի մեջ, և սկզբում, որ հեշտ էին կարծում գլորելը, հիմա դեմ առավ, մնաց։

— Հը՞, չեղա՞վ,— ձայն տվեց Սարգիսը՝ ծուխը հաստ բեղերի արանքից փչելով։

Քարհատները չպատասխանեցին ու նոր ուժով սկսեցին հարվածել քարի հիմքին և քլունգները խրելով հող ու ժայռի արանքը, հրում էին քարը։

Կանգ առան։

Ներսոն, ուժեղ, թևով սրբեց քրտնամխած դեմքը և ետ քաշվեց։

— Բան չի դուրս գա։

— Էգուցվա բան է, թողնենք,— վրա բերին մյուսներն ու ետ կանգնեցին։

Սարգիսը ծուռ ու ծուռ մտիկ տվեց նրանց։

— Թամբալութենե իշուն քեռի՞ կըսեք։ Էգուցը ո՞րն է։ Քարը ժաժ կուգա։ Մի զոռըմ բան։

Ու սկսեց շապկի թևերը քշտել։

— Ծո, ես սարեր եմ քանդե՝ չեմ թամբլցե։ Մե քարի՛մ առաջ դեմ կառնե՞ն։ Ամոթ չէ՞ քարհատին, քարը կիսահան թողնի ու փախչի։

— Շատ ա պինդ, ժաժ չի գալիս,— սրտոտացավ մինը։

— Իրեն խո՞սքն է, որ ժաժ չգա։ Մաքուր գործ բռնեք, այ օղուլ, ամոթ է։ Տեսնողն ի՞նչ պիտի ըսե, էստեղ վարպե՞տ է էղե, մա՞րդ է աշխատե՝ թե՞ ինչ... Դե, յալլա՛...

Հինգ հոգին ուժ ու պիրկ թևերով գրկեցին քլունգն ու քարը ու սկսեցին ճիգ թափել։

Բանվորները կարմրել էին ինչպես բաղնիսում, քրտինքը ծըլլում էր վրաներից, շապիկները դառել էին լվացքաշոր։ Քարը կրճտում էր ժանիքները, փշրում, լեռը խորդում էր խուլ, համառ, դիմադրելով։ Բնությունը չէր ուզում տեղի տալ հարձակման, և տեղի էր ունենում կատաղի պայքար մարդկանց ու նրա մեջ։

— Հըլը՛, հըլը՛, իշու ինատի՛ն, տես ժաժ կուգա՞,— մռնչաց Սարգիսն ու աչքերն արնով լցված կատաղած հարձակվեց, ինքն էլ գրկեց քարը՝ ինչպես որսորդը արջին։ Եվ տաքացավ, մազոտ կուրծքը դեմ տվեց ժայռին, սկսեց կռիվ տալ։

Նա չէր խնայում իր շարշարված հողագույն մարմնին ու հազար ու մի այսպիսի տաժանելի աշխատանքների մեջ քերված, կոշտացած մկաններին, որ հիմա պրկել, քերվում, արյունոտվում էին։ Նա արյունը գլուխը տված, սևացած կրծքի միսն ու ոսկորները անդիմորեն տրորում էր քարի վրա ու ճգնում, հևում, տընքում։

Քարհատներն էլ մոռացան բանթողը, դժվարությունը։ Մրցումը գրավեց նաև նրանց և Սարգսի խոսքերից ու շարժումից մղված ուժեղացրին ըմբշամարտը։

— Դե՛, դե՛, դե՛, զոռ տվեք։ Հո՛փ։ Հո՛փ...— ու ծղրտում էր դեմքը ծամածռելով։

Հանկարծ քարը ղռմռաց ու վարազի պես դուրս պրծնելով լեռան ծոցից՝ բերանքսիվար ընկնելով փուխր հողի վրա սահեց ներքև։

Բանվորներն ուրախ բացականչեցին։

Բայց այդ միջոցին Սարգսի ոտնատակի հողը քանդվեց։ Նա նստեց հողին և ինքն էլ քարի հետ միասին սողաց ներքև, ուր նեղանում էր հողաշերտը։ Մի վայրկյան և ահա Սարգիսն ու քարը սողալով խառնվեցին իրար՝ միացան նեղ փոսի մեջ։

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ,— գոռացին քարհատներն ու թափվեցին նրա վրա։

Սարգիսը ուզեց ծղրտալ, բայց ձայնը պահեց հանկարծ։ Քարն ու ինքը խրվել էին նեղ փոսում և կանգ առել։ Բայց վտանգն անցել էր ըստ երևույթին — Սարգսի դեմքին ոչ մի կծկում։

— Բան չկա, բան չկա,— հևաց նա,— ոտքս տակը չէ։ Քաշեք դուս։

Բանվորները մտիկ տվին։ Ոտը մնացել էր քարի և փոսի միջև մի դատարկ տարածության մեջ։ Սարգիսը փրկված էր։

Նրանք քաշեցին դուրս։

— Ցա՞վ տվեց,— հարցրին։

— Չէ, չա՛նըմ,— պատասխանեց հասարակ։ Դուրս եկավ արանքից, թափ տվեց վրան, կանգնեց ու մտիկ տվեց քարին.—

— Հայվա՛ն։

Հետո գնաց նստեց առաջվա տեղն ու հանեց ծխախոտը.

— Դե, շաբա՛շ։

Բանվորները վեր դրին քլունգներն ու սկսեցին թափ տալ շորերը։

Սարգիսը հանգիստ ու լուրջ ծխում էր, իբրև թե հաշվի մեջ չէր իր մարմնի քերծվածքները և որ պիտի ջախջախվեր քարի տակ... Բանթողն էլ ուշացել էր։ Բայց նա գոհ էր և ոչինչ չէր նկատում։

— Ամեն քարի բնությունը մեկ չէ։ Քարի բնությունը պիտի իմանաս։ Քար կա՝ տամար ունի,— իր տամարով պիտի էրթաս, հանես դուս։ Քար էլ կա որ՝ ինադ է,— ինադը պիտի կոտրես, հանես։ Սարթ քար էլ որ էզավ՝ կռիվ գուզե,— պիտի կռվես։

Աշխատանքը նամուս է, չեն կոտրի։

Քաղաք շինող ենք, աշխատավոր, գոթծ է, շինարարություն... Ի՞նչպես կարելի է։

— Դրուստ ա, վարպետ ջան, դրուստ ա,— ձայն տվեց Ներսոն՝ թափ տալով պիչակը։

Մյուսները նույնպես քերծված, շարշարված եկան կանգնեցին վարպետի շուրջը, որի արճիճե ձեռքի մեջ դողում էր ծխախոտի ծուխը։

Վերջացնում էր, պիտի վեր կենար։

Դիմացը, ներքև, այգիների մեջ կորած էր հին քաղաքը, որի կմախքների միջից դուրս էին ցցվում նոր խոշոր շենքեր։ Հեռվում ծխում էր գործարանը է խաղաղ օրը հոգնում էր ամենուրեք։

Սարգիսը նետեց ծխախոտի կոթն ու վեր կացավ, նայեց քարհանքին մտերմաբար ու գոհ։

— է՛, էրթա՛նք։ էղա՛վ։

ԱՍՏԾՈ ՏԱՆԸ

— Բռնած գործերին մտիկ, նզովի՞ց արմատներ...

Փնչացրեց վիթխարի հայր սուրբը և չաղացքարի պես գլորվեց ընկավ մարագը։

— Ժողովո՞ւրդ են... Սրանք կուտեն ինձ. գազանի պես կլափեն։ Բա՜՜՜հ...

Եվ առյուծի մռմռոցը գցեց մարագը, որ լիքն էր փախստականներով ու հիվանդներով։ Առողջները վեր կացան ու իրենց ժողովեցին։ Դրստվեցին նաև գաղթական կոմիտեի եբեք անդամները, և ամենքը սառը հայացքները հառեցին վարդապետի վրա։

Մարդ չլիներ կարծես։ Տնայնագործական անտաշ բանվածք։ Դա մի զարհուրելի շոգեշարժ էր, քրտնամխած ամպ, որ անձրևվում, ֆշշում, փնչում էր ու չէր հանգստանում։

Բարկացած էր։

Հանկարծ կանացի փափլիկ բազուկները սոթեց և բաշառատ գլուխը շեշտակի ռումբի պես մխրճեց բեռների խուրձի մեջ։ Երևի բան էր փնտրում։

Խառնեց, խառնխտորեց, փնտրածը չգտավ ու սկսավ հակերը դես դեն գցել։ Դա մի ահավոր հավի քչուք էր, որ խոշոր, փթանոց հակերը թափահար գուրս էր ածում։ Ապա սկսեց փուքսի պես փչել։ Չգտավ էլի։ Շիտկվեց։ Ու ինչպես գինու տիկը կանգնեցնես մեջտեղ՝ այնպես թիք ու ձիգ տնկվեց ցորենի հակին։ Եվ ահագին մորուքը՝ սև ծով, սկսեց հորձանք տալ նրա հևացող կրծքին։

Մտահոգվեց. բարկացած նայեց գուրս.

— Ժապավենակալը թողել ենք,— մրթմրթաց յուրովի։— Արի՝ ու իմացիր, էսքան քաղմություն որը որոց է։

Կոմիտեի անդամները ձայն չհանեցին։ Լուռ էին և փախստականները։

Հայր սուրբը քաշեց կարմիր թաշկինակը, փռեց իր լայնշի,

կացնաշեն դեմքին, որ քրտնած էր, փռեց թաթերը թաշկինակին, ընչացքները թաշկինակաթաթախ ու քթախառն մի լավ սրբեց, հետո վեր կացավ, որ գնա դեպի դուռը։

— Չեն էլ հարցնում, թե ի՞նչ հալի ենք, անբաննե՛րը...

— Ի՞նչ է եղել, հայր սուրբ,— հարցրեց կոմիտեի անդամներից ավագը։

— Էլ լինելի՞ք մնաց։ Անկարգ անիծյալներ... Ես այս փախստական ժողովո՞ւրդը տանեմ տեղ հասցնեմ, թե՞ դրանց դարդերը հոգամ։

Ավագ անդամը գլխի ընկավ կամ նրան թվաց թե կռահեց բանի էությունը։ Ու վկայեց։

— Ո՞ր մեկն ասես։ Երեկ էլ մեկը եկել վագոնի փող է ուզում։ Տո՛, բոլորս ոտքով ենք, դու էլ ոտով՝ վագոնի փո՞ղ ես ուզում։ Բա, ասում է, որ երկաթուղուն հասնենք՝ ինչո՞վ մտնեմ վագոն։ Տնաքա՛նդ, դուրս եկա՞նք էս դժոխքից, որ վագոնի դարդն ես քաշում։

Բայց հայր սուրբը երևի ուրիշ գանգատ ուներ։ Դեռ հոլովվում էր իր բարկության մեջ.

— Ականջ մի դնի, հայր սուրբ,— խոսեց կոմիտեի մյուս անդամը — գաղթական է, բերանը որ բացեց՝ ուզյանց է։

Ավագ անդամը ծիծաղելու պես արավ։

— Ո՞նց թե ականջ մի դնի,— հոտեց հայր սուրբը,— եկել է ասում է՝ մատյանը գտի՛, ջնջի՛, որ ես պսակված եմ։ Տո գազանի կնիկ, ասում եմ, ի՞նչը ջնջեմ, աշխարհն էլ գիտի, աստված էլ, որ պսակված ես։— Վերցնի ի՞նչ ասի անիծածը։— Մարդս Ամերիկա է կորել. հիմի որ հասնեմ Երևան, ո՞նց կլինի հալս։ Հիմիկուց կնիկը պատրաստվում է՝ մարդու պիտի գնա։ Նզովից ցեղ, եկա ձեզ էս դժոխքի՞ց հանեմ, թե՞ ձեր ամուսինների անունները ջընջեմ։ Ընկել եք ավերակ քրդի գեղ, զոր փախ, գիշեր փախ, քուն դադար չկա։ Պսակացավն ընկա՞ք... Այ, կոտորվեք դուք։ Ժողովո՞ւրդ եք։ Խոզի ցեղ եք։

Եվ հայր սուրբը գնաց դեպի դուռը, որ մի փոքր հովացնի իր բարկությունը։

Հենց այն է՝ դռան պիտի հասներ, աչքով մի պատանի ընկավ, դռան շեմքի հետևը կանգնած, որ ակնածու հայացքը նետեց նրան և փափախը հանեց։

— Հը՞, ա՞ղդ է պակաս, թե՞ մաղդ,— հարցրեց հայր սուրբը մռայլ և սառը։

Պատանին գանգրահեր գլուխը կախեց և լռեց։

— Պապանձվեցի՞ր։

Լռություն։

— Ի՞նչ ես ուզում. անասո՞ւն ես, խոսիր էլի,— կրկնեց հայր սուրբը առաջ գնալով։

Տեսնելով որ պատանին լուռ է՝ ներս եկավ ու կանչեց մի քիչ մեղմ.

— Ներս արի, տեսնեմ։

Պատանին եղունգով խաղաց իր դարչնագույն փափախի հետ, ուզեց ներս մտնել, բայց նայեց դռան ետևը։ Ապա նշան արավ մեկին, որ իրեն հետ գա։ Մի տասնհինգ տարեկան բարալիկ աղջիկ էր, իսկը ցորենի ոսկի հասկ։ Միասին ներս եկան։

Տղան, մեջքը բարալիկ մտրակ, խանչալը գոտկին, բեղատեղը մրով քաշած, կանգնեց ու սև ողկույզի պես գլուխը կախեց։ Աղջիկը նրա կողքին, գեղեցիկ ինչպես ճառագայթ։

— Հը՞, ասա տեսնեմ,— կրկնեց հայր սուրբը հետաքրքիր և լուրջ։

Պատանին թողեց եղունգով փափախը քորելը, և խաս բրնձի ատամները պսպղացրեց.

— Մեք կխնդրեինք, որ մեզի պսակես։

Հայր սուրբը նոթերը կիտեց։ Բարվոք համարեց լսած չլինել։ Բայց կրկնեց.

— Ի՞նչ... պսակե՞մ...

Ու շունչը վարարեց։

Պատանին աչքերը հառեց հայր սուրբին։ Ոչինչ չկար այդ աչքերում։ Միամիտ, լեռնային աղբյուր։

— Ծո՛, հասկանո՞ւմ ես թե... — շնչատեց հայր սուրբը — քեզ պսակե՞մ, ե՞րբ...

— Էսօր, հիմի։

Հայր սուրբի երեսը լավաշի պես կախվեց։ Բերանբաց զարմանքով նայեց ներկաներին։

— Տեսա՞ք բանը։ Արի հիմի...

Փախստականները շարժվեցին, առաջ եկան, հիվանդները վեր նայեցին միգամած աչքերով, իսկ հայր սուրբը ուղղակի քայքայ-

վեց ցորենի հասկի վրա և հուսահատ նայեց զուլֆին՝ բերանը քարայրի պես բաց։

Հետո ձեռը ձեռին խփեց.

— Վա՜յ քու տղիս տղա։ Ո՜ւ, խելքնե՞րդ եք կորցրել, թե նզովք է մտել ձեր ցեղի մեջ։ Ասել է չորս կողմդ չե՞ս նայել, չե՞ս իմանում ինչ բանի եք։

Հայր սուրբն սկսեց հեալ։ Պայթվելու էր պատրաստվում։ Քընանական հայացքով չափեց պատանուն վերից վար ու.

— Ո՜ւ... ծո՜... Ի՞նչ է գալիս բերանս։

Մի պահ թուքը կուլ տվեց։ Եվ ապա.

— Ո՜ւ, ազգով-ժողովրդով քանդվել փախչում եք, էս յոթը քարի արանքում...

Բայց չպայթեց դեռ։ Շնչատեց, մոլտաց ու սարսափելի խոսքը շասելու համար՝ միայն ձեռով արավ.

— Գնացեք բաններիդ, գնացե՛ք։

Այնքան որ բարկացած էր։

Իսկի էլ տեղներից չշարժվեցին։ Ո՞ւր պիտի գնան։ Ի՞նչ է պատահել որ։ Եվ տղան միամիտ ժպիտով նայում էր հայր սուրբին։ Նա անխռով էր ու անգիտակ։

— Չե՞ք հասկանում,— սպառնաց հայր սուրբը։

Ո՜չ, չեն հասկանում։ Ոչինչ չեն հասկանում։

Նայում է աղջիկը հայր սուրբին, և աչքերում լուսաբացի միամիտ մի լույս է շողում, որ մոտ է առավոտելու և ժպտալու։ Այո՜, ոչինչ չի հասկանում և ինչո՞ւ է որոտում այս վիթխարի մարդը, ի՞նչ է պահանջում, ինչո՞ւմն է արգելքը։ Նայում են երկուսը և ըսպասում։ Կարծես երկու մանկիկ եկել՝ հաց են խնդրում իրենց հորից։ Ինչո՞ւմն է բանը։ Ի՞նչ կա՝ եթե իրենց պակի։ Պատկն ի՞նչ դժվար բան է, որ...

— Ո՜ւ, դեռ կանգնե՞լ եք,— սրտնեղեց հայր սուրբը։

Այո, կանգնել են։ Երկու պատկեր, նկարած-անշարժ դրած։

Հայր սուրբի համբերանքը հատավ։ Վերցնի գավազանն ու տուր թե կտաս։

— Տե՜ր աստված, անե՜ծք չար ռատանին։

— Գնացե՛ք, գնացե՛ք,— խոսեց կոմիտեի անդամներից մինը։

— Գնացե՛ք, ամաթ է,— ձայնեց մի փախստական։

— Գնացեք, բալեքս,— խոսեց մի չոր պառավ՝ ակնարկելով կարծես թե տանը մեռել կա։

Տղան խոսեց.

— Ապա ո՞նց պակվենք։

Հայր սուրբը ավելի գժվեց։

Հափոկեց աղջկա թևևն ու այն է դուրս էր գցում նրան, ցընցեց միայն.

— Այս աղջիկն ո՞վ է,— թնդաց,— ծնողք չունի՞։

— Որբ է։

— Դու ո՞վ ես։

— Ես էլ որբ եմ։

— Իսկ թե բացվի, որ սո՞ւտ ես խոսում։

— Սուտ իմա՞լ կեղնի, քանի որ ղորթ է,— պնդեց պատանին։ Ու էլի առաջվա ձայնով.

— Շատ կխնդրվինք, որ մեզի պակես։

Էլ կատաղեց հայր սուրբը։ Խլեց գավազանն ու.

— Ո՜ւ, դուք անասո՞ւն եք, թե՝ մարդ, համբերանք չունի՞ք։ Տեղ չպիտի՞ հասնիք, քաղաք չպիտի՞ մտնիք, անբան ավանակ։ Հը՞...

Պատանին չհամոզվեց.

— Ախր, հայր սուրբ, գաղթ է, փախ է, մեզի կբաժանին։ Պակվինք որ՝ չբաժանին։

— Դուրս, հիմար անասուն,— գոռաց հայր սուրբը։— Դո՜ւրս,— վեր թռավ տեղից՝ մարագը ցնցելով և գավազանը իջեցրեց պատանու ուսին։— Շան լակոտ— անհամբեր անասուն, էս անապատ գյուղում եկեղեցի կա՞, որ քեզ պակեմ։

— Օջախի վրա պակի,— համառեց պատանին, աչքերը ցավից խոնավ։

Հայր սուրբը մին էլ վերցրեց գավազանը.

— Ո՜ւ, տավա՜ր,— գոռաց կատաղի,— ասենք պակեցի, էս քանդված գյուղ, ժողովուրդը իրար գլխի, գիշերը որտե՞ղ պիտի քնեք, հը՞, հիմարացյալ հիմար, որտե՞ղ, հը՞, ասա... — Ու գավազանը բարձրացրեց։

— Մենք արտ կերթանք, հայր սուրբ,— խոսեց պատանին և զարմացավ. որ հայր սուրբը այդ բանը չի հասկանում։

— Ա՜ռ... — հոնքերը վրա բերեց հայր սուրբը։

— Մենք գիշերը միշտ էլ արտն ենք։

— Արտի մե՞ջ պիտի քնեք, ձեր տունն ա՞րտն է...

Եվ հանկարծ հայր սուրբը դեմքը կնճռոտեց, կարծես բոլոր մկանների մեջ մի ցավ սողաց ու գալարվեց։ Լավ պիտի ժայթքեր։ Հանկարծ հրաբխի պես մի ծիծաղ ժայթքեց դուրս, կարծես մի զորք ծիծաղեց։ Հետո հազը բռնեց, խեղդեց։ Կարմրեց հայր սուրբը ու ետ նստեց։

Ծիծաղեցին կոմիտեի անդամները, քահ-քահ խնդացին փախստական ծերերը, ժոռատ ատամները ցույց տալով։ Ծիծաղի ալիքը դիպավ նաև հիվանդներին։

Հայր սուրբի ծովը հանդարտվեց, դադարեց ծփալուց ու քրտնելուց։ Նստեց ու ծիծաղկոտ աչքերը հառեց պատանուն ու աղջկան։

Որքան մխամիտ, հուսալի ու գեղեցիկ էին նրանք։

Լցվեց հայր սուրբը։ Ժպտաց մեղմ ու խանդաղատագին։ Ապա բարձրացրեց աչը.

— Առաջ արիք։

Զույգը առաջ եկավ, շոքեց նրա ոտների մոտ։ Հայր սուրբը լրջացավ, վեր կացավ և մի խորին խորհրդով համակված խռովահույզ ձայնով ասաց.

— Ձեր կամքը լինի, որդիքս, ձեզ կպսակեմ։

Պառավ կանայք առաջ եկան և կորաքամակ բոլորվեցին զույգի և հայր սուրբի շուրջը։ Հայր սուրբը խանդաղոտվեց։ Ապա զույգի գլուխները իրար մոտեցնելով, խաչակնքեց երեսը և կերկեր ձայնով աղոթեց։ Կարճ էր աղոթքը։ Մոայլվեց և հազիվ լփոտաց.

— Ձեզ աստված պսակել է, որդիքս, գնացեք ապրեցեք աստծո տանը

Հետո ժպտաց, աչքերը սրբեց։

Դռան մոտ խռնվել էր մի փոքրիկ բազմություն, որ կամաց-կամաց ներս լցվեց և սկսեց ուրախ քչքչալ։ Զույգը վեր կացավ։

— Լավ տուն գտաք. աստված, երդիկը, հացը մեջը,— սրախոսեց մեկը և ծիծաղը նորից փրթեց։

Մի զառամ կին դողդողալով վեր կացավ անկյունից և ծիծաղից ցնցվելով առաջ եկավ։ Մոտեցավ զույգին, ծիծաղեց, հեաց, ծամածռեց երեսը և դողդողալով համբուրեց երկուսին։

— Կուրանա ձեր մոր աչքերը, բալաներս։— Ու արցունքները խմելով ետ քաշվեց ու դողահար մոմի պես ցոլալով նայեց զույգին։

Զույգը համբուրեց հայր սուրբի աչը և դուրս ելավ։

Բազմությունը նորից քրքջաց։ Քրքջացին բոլորը, ինչպես բարեկենդանի հարսանիք, մինչև որ քաղցր արցունքները սկսեցին հոսել աչքներից։

Գարնան անուշ անձրևի պես...

1923 թ.

ԽՆԱՄԻՆ

Անկուսակցական Կարապետյանը նոր էր սանդուղքներից բարձրացել պատշգամբ, որ երեխաները պատուհանից տեսնելով նրան՝ ուրախ ծափ տվին.

— Քեռին եկավ, քեռին...

Եվ սենյակի դռանը շրջապատեցին նրան։

Կարապետյանը գրկեց նրանց և մտավ սենյակ.

— Բարի իրիկուն, խնամի։

Խնամին, մի պառավ կին, որ շալը գլխին ծալապատիկ նըստել կծկվել էր անկյունում՝ նիրհող աչքերը բաց անելով՝ քնկոտ ժպտաց.

— Մկրտի՞չ, դո՞ւ ես։ Բարով եկար։

Կարապետյանը վեր դրեց ճամփի կապոցը և շուրջը նայեց.

— Ահա, Հրայրը տա՞նն է։

Ու նայեց անկողնու կողմը, երկարավիզ կոշիկներին, որ զինվորական վերարկուի տակից դուրս էին ցցվել և դրվել աթոռի վրա։

— Հա։ Նոր էկավ գեղեն, հաց կերավ՝ պառկավ։

— Որտե՞ղ է ծառայում։

— Ես գիտե՞մ։ Վայենների պռաքուռոր է գյովա (իբր թե)։— Ասաց ու մի քանի խոսք դես դեն շուռ ու մուռ տալուց հետո շարունակեց։

— Բան կրնա՞ս հասկընա։

— Ինչի՞, խնամի,— հետաքրքրվեց Կարապետյանը։

— Դատարկ բան է, ջանըմ։ Հեչ միչեն չէ։ Հիմի ոչ պռաքուռորն է պռաքուռոր, ոչ նաչալնիկը՝ նաչալնիկ, ոչ վայենենին՝ վայենեն։

— Մի՞թե։ Բայց, խնամի, սրանց գործն էլ ուրիշ տեսակ է։

— Ի՜, դատարկ բան։ Գո՞րծ։ Կերթան-գուքան, էելլեն տախտակներու վրան խոսին, խոսին, խոսին. հա՜ բանվոր, հա՜ գեղացի, պատկում։ Հեչ մեչք բան չկա,— էլի էն 60 մանեթ ժալովնին է, էլի էն չորս-հինգ գրվանքա սապոն-մապոնը։ Գո՞րծ։ Կափեկիմ կառնե՞մ։

Վերցնում է թեշիկը և սկսում մանել։

— Խալխին տղաքը, է՜է՜է՜, թյուքյան-պազար սարքեցին, մեկեն զանգնցան (հարստացան), գուբերնաթի կյանք կանցնեն... Նարտիվանենց Ակոփը կա, մաղազա բացեց օ՜ր... ի՜նչ երջանկություն մեջ է... սափուկներուն ճռճռոցը տեյմոր (մինչև) Պետրոպալկ է հասե։ Աս տղա՞ս է,— հայրական սեփական ջաղացքը թողել է, գեղը շներոց ու գելերոց։ Խալխը կուտե, ինքը կաշե։ Ջանըմ, սո՜ւս, սո՜ւս. բալշևիկին գլոխը խե՞լք կա օր... Քամի է։ Թիթին ունի՞ս։

— Պապիրոս է, խնամի։

— Վնաս չունի, փեր։

Ու դառնացած ծխում է ցուցամատի ծայրով բռնած պապիրոսի կոթը։

— Ավալքվա (առաջվա) վա՞խտն էր։ (Հառաչում է)։ Ափսոս չէ՞ր։ Մենծ-պզտիկ կջոկվեր։ Աստված կճանաչեին, թաքավորի պատիվ կար։ Արզրումու կովին գնաց էկավ՝ պալկովնիկի չին ստացավ։ Գյումրի էր էկե։ Տեսնեիր՝ բոյը բուսաթը, պալթոն, պըլպըլան կոճակները, չըները։ Ժալովնան 4—5 հարուր մանեթ։ Թաքավորի կյանք ունիր, թե էն խելքին մնար։ Հիմի վրան-գլխուն աշես՝ դենչիկի ղըլըղ է։

— Ինչի՞, խնամի,— ժպտում է Կարապետյանը։

— Ինչի՞։ Բալշևիկ է, էտոր համար։

— Դաշնակցության ժամանակ ինչպե՞ս էր։

— Է՜, դաշնակներուն վախտն ալ Աղպապաու թուրքերն էին։ Հա ջարթ, հա փախ։ Օրը մի հավամ կփոխվիր։ Մե վախտում աշխարհը խաղաղվավ։ Վերջը խելքերուն ինչ փչեց, ինչ սատանա մտավ միչվին՝ աս բալշևիկ էր, ինչ զուլում էր՝ փերին ույտուրմիշ (հնարեցին) էրին՝ ցկին խալխին ջանը։ Ըսին՝ հիմի ամեն բան բալշևիկ պիտի էղնի։ Աս բալշևիկն էկավ՝ արթը բալշևիկ-դաշնակ իրար խառնվեցան։ Ի՞նչ խելք էր՝ չհասկացանք։ Ջանըմ, յա բալշևիկ. յա դաշնակ. էրկուսն հայ չե՞ն։ Հա՜ կռիվ, հա՜ ղալմաղալ։ Թարթ չմնաց՝ չոլխավ, ունևոր չմնաց՝ աղքատացավ։ Գյուզալըմ քաղաքը քոռ ու փուչ էրին բաց թողին։

— Էդպես, խնամի, ասել է հիմի ամեն բան վա՞տ է,— հազիվ ժպտալով հրահրում է Կարապետյանը։

— Ի՜հ՜հ՜... կյա՞նք է։ (Ցույց է տալիս երեխաներին)։ Խեղճ անասուններս ոտքերը ոտնաման չունին։ (Կանգ է առնում և ձեռքի թեշիկը վայր դնում)։ Է, հիշտեկ սուրբ իրիկուն է, մեղք է։— Վեր կացավ ու գնաց դուրս։

— Էրթամ սամավարին աշեմ։

Սենյակի լռության մեջ լսվում էր երեխաների զրույցը, որ ամեն բոպե զրույցից անցնում էր վեճի և վեճից՝ խաղաղ զրույցի։

— Դու բուրժուա ես, որ էդպես ես խոսում։

— Բուրժուան դու ես։

— Հաա՜, ես ինչի՞ եմ բուրժուա։ Բուրժուան դուն ես, որ խոզի պես ես։

— Հա, խոզի պես ես։

Լռություն։

Ու կրկին։

— Դու բուրժուա տեսե՞լ ես. ես տեսել եմ։

— Ստլիկ, ինչի՞ ես սուտ խոսում։ Բուրժուա որտե՞ղ կա, որ տեսնես։

— Մեյդանի ղասապը բուրժուա չէ՞, փորը հաստ։

Խաչիկը ծիծաղում է քրոջ վրա։

— Դմբո. ղասապը բուրժուա՞ է։ Բուրժուան լրագրի մեջ է լինում։ Այ բուրժուա,— և ցույց է տալիս պատից կախված լրագրի առաջին երեսին Մուսոլինիի պատկերը։

Մոտենում է Կարապետյանին։

— Գիտե՞ս, քեռի, մենք «անկյուն» ունենք։

— Ի՞նչ անկյուն։

— Լենինի անկյուն։

Եվ երեխաները ցույց են տալիս լրագրերից կտրված և պատերի անկյուններին փակցրած պատկերներ՝ Լենինի, Մարքսի ու Լյուքսեմբուրգի, զանազան աստղեր, դրոշակներ...

Սամովարը եկավ, բազմեց պատուհանին և սկսեց թշշալ մտերիմ, խաղաղ ձայնով։ Տիրեց լռություն։

Երբեմն միայն երեխաները ընդհատում էին այդ լռության միալար թելը։

Կարապետյանը մերթ լրագիր էր կարդում, մերթ դիտում սենյակը։

Կատարյալ անկարգություն։ Ռազմաճակատին մոտ վայրերի խառնաշփոթություն։ Կայարան, վագոն։ Կարծես ամենքը պատրաստ են մեկնելու։ Եվ Կարապետյանը զգում էր, որ այո, ամեն բան մեկնում է։ Մեկնում է, և միայն մի արարած կա, որ պիտի մնա։

Պառավը...

Խարխուլ շենքի մոայլ երևույթով նստած էր նա իր անկյունում և նայում իրենից հեռացող նոր կյանքի ետևից։ Ամեն բան փոխված էր։ Որդին որդի չէր, թոռները թոռ. աշխարհը աշխարհ չէր, այլ ինչ-որ երազ։

Առաջ եկավ փոքրիկ Խաչիկը՝ տասը տարեկան մի ճստլիկ տղա։

— Գիտե՞ս, քեռի, մամը չի հավատում, որ աստված չկա։ Էնպես չէ՞, քեռի. աստված որ լիներ՝ կերևար։ Չկա, որ չի երևում։ Ես ասում եմ, մամը թե՝ չէ, աստված կա։

— Հը՞, խնամի, Հրանտը առաջվա պես անաստվա՞ծ է։

— Հրպը ի՞նչ է։ Ինքը ֆարմասոն, տըղոցն էլ շինեց ֆարմասոն։

— Քեռի,— խոսում է Խաչիկը,— Լոլոն (ցույց է տալիս չորս տարեկան աղջկան), Լոլոն կարող է երգել «Կորչի տերտերը»։ Ապա, Լոլո երգիր, ապա «կորչի տերտերը»։

— Սո՛ւս, սո՛ւս, մեղք է,— հանդիմանում է խնամին։

Երեխաները ծիծաղում են։

— Հիմի, Մկրտիչ ջան,— շարունակեց խնամին՝ նստելով սեղանի մոտ,— խոսքը՝ ինքը անաստված անաստված։ Այս պզտրկներուն անաստված դարձնելն էլ ինչ մեղքի պատիժ էր։ Ջանըմ, չափը շատ անցուցին։ Մի մարթմ էլ դրել են, զգաս է, ինչ է անունը։ Սուրբ պսակ կքանտե, սահաթ գլոխ էրիկ-կնիկ իրարմե կբաժանե։ Ես ալ էղավ քրիստոնեութե՞ն։ Էտոնց աստվածը աստված չէ՞, չի՞ տեսնի։ (Հառաչում է)։ Չէ, կերթամ գեղ. էլի գեղականի քով աստված կա, հավատ կա։ Կերթամ իմ մարթուս ջաղացը կընստիմ։ Մարթս ջաղացքը մեռավ, ես էլ էնտեղ կմեռնիմ։ Իմ ապավենս ատ ջաղացքն է։

Մահճակալը ճռճռաց.

— Օհո՞, Մկրտիչ, բարով ես եկել։— Ու Հրանտը ճլմկոտալով վեր կացավ, նստեց մահճակալի վրա։ Աչքերը պղտոր, այրվում էին, բայց ժպտացին։

— Հը, հոգնա՞ծ էիր,— հարցրեց Կարապետյանը։

— Գնացել էի մեր գյուղը։ Մի պստիկ ջրաղաց ունեի՝ «Հայրական կալվածք»... կարգադրեցի...

— Է՞, վե՞րջը,— անհանգստացավ խնամին։

— Տվի գյուղի գործկոմին կառավարելու։

— Գործկոմը վո՞վ է։

— Մեր ընկերներից են։

— Ծո, կեցի. մեր գե՞ղն էլ բալշևիկ կա,— ցավելով զարմացավ խնամին։

— Ապա ի՞նչ,— ժպտում է Հրանտը։

— Լավ,— ու խնամին մտածմունքի մեջ ընկավ։— Ափսո՞ս է՞։ Եղածն եղած է, հրմը էկող տարի հեչ մեկիմ չտաս, ես պիտի երթամ կառավարելու։

— Էկող տարին էլ գյուղգործկոմի ձեռքին է լինելու։

Խնամին աչքերը չռեց։

— Քա՞, մեղա, եկող տարի է՞լ պիտի մնան բալշևիկները։

— Միշտ պիտի մնան,— ծիծաղում է Հրանտը։

Ու հետո մեղմ ավելացնում է.

— Մշտական տվի գյուղգործկոմին, հասկացա՞ր։

— Բաշխեցի՞ր։

— Հա։

— Վո՞ւյ, ձունը գլխուս։ Գյուղալըմ ջաղա՞ցը։ Տեսա՞ր զուլումը։

Այդ ժամանակ հարսը ներս է մտնում։

— Տեսա՞ր տնաքանդությունը,— դիմեց խնամին,— արի տես ինչ է արել մարդը։

— Ի՞նչ է արել։

— Աղջի, ջաղացքը բաշխել է բալշևիկներուն։

Ու սկսեց ծնկները ծեծել։

— Պապական, հայրական միլքը մարդ իր ձեռքով վերցնի ուրիշին բաշխե՞։ Տեսա՞ր բալշևիկի խելքը... Օջախս քանդվեց։ Վո՞ւռ՞ուշ...

Հրանտը ծիծաղում էր։ Հետո ձեռքերը շփեց և ուրախ-ուրախ.

— Դե, թեյ բերեք, թեյ, վաղը ճամփորդ ենք։

— Ո՞ւր,— հարցրեց Կարապետյանը։

— Մոսկվա, դատախազների համագումար։

Եկեղեցու զանգերը ծլնգացին։ Նրանք շարունակվեցին մի պահ և ապա զարկելով վերջին ակորդը՝ լռեցին։

Խնամին վերցրեց շալը, գցեց գլխին և մռայլ, հուսահատ՝ շարժվեց դեպի դուռը։

— Ո՞ւր,— ժպտաց Հրանտը։ Խնամին չպատասխանեց։

— Սուս,— աչքով արավ հարսը,— գնում է եկեղեցի։

Խնամին դողդոջ քայլերով դուրս գնաց՝ փարվելու իր հավատի խարխուլ սյունին։

1925 թ.

ԿՐԱՍՆԱՐՄԵՅՑԸ

— Բռնած գործերի՞ն մտիկ..

Ու Դային դուռը շրխկացնելով՝ հյուրանոցի կորիդորից դուրս եկավ դուռը։

Ջարացած է, պապիրոս է ոլորում։

— Ի՞նչ է պատահել, Դայի՛։

Աչքերը պսպղացրեց.

— Այշի, կրասնարմեյց չդառավ՝ խաթա դառավ գլխներիս։

— Սոկրա՞տը։

— Պա էլ հո՞վ։ Պերան էս գաստինիցեն, որ պոլ սրբի՝ գլխիս խաղեին դառավ։ Վեր ա կացել՝ թե ծառայողին ութը սահաթից ավել իրավունք չունես պանացնելու։ Սայուզին իմաց կտամ։ Հա նավթը ավել ա գնում, փեսը շատ վառեցիք, լամպչկեքը փչացնում եք։ Խե՞... Գլխիս նաչա՞լնիկ ես, թե՞ ջանդար։ Այշի, պոլ սրբող ես՝ պոլդ սրբի։ Էս պոլիտիկի խաբարներումը դու ի՞նչ պեն ունես։

— Լավ, հիմի ի՞նչ էր ասում։

— Պրիկազներից ա խաբար տալիս։ «Մարտիրոսին խե՞ ես քու տան գործով բազար ղարկել. սայուզի իրավունք չի»։ (Հառաչում է)։ Կիլո՞խը մեռնի Դայիի, պա մունք ո՞նց ենք արել։ Ծառայողը որ ութը սահաթ գործ անի՝ գործ շուտ կգա՞։ Ծառայող է՝ ջա՞նը դուրս գա, պիտի բանի 10 սահաթ, 15 սահաթ...

— Խորհրդային իշխանություն է, Դայի, ուրիշ կերպ անկարելի է։

— Հա, գիտում ընք, խորհրդային իշխանություն ա, համա քանի մեջ բան կա...

Բայց սրանք բոլորովին համաձայն չէ Սոկրատը, որ հյուրանոց է մտել «պոլ» սրբելու և կերակուր մատուցելու։ Գործը՝ գործ, բայց իր զինվորական սովորությունները չի մոռանում։

Նախկին կծու «կրասնոարմեյց» է։ Մասնակցել է քաղաքացիական կռիվներին և բանակը մի տարի է, որ թողել է։ Հիմի քաղաքացի Սոկրատ է հյուրանոցում։

Խստակյաց է, կատարյալ փուշ։ Աչքն ամեն բանի վրա է։ Ամեն բանի վրա խոսում է. «Նա չայ» մի՛ տանք, տղերքների հետևից մտիկ մի՛ տաք, լրագիր կարդացեք, դասախոսության գնացեք, պրոֆմիությունի շահերը պաշտպանեցեք։ Մի բոպե ավել աշխատեցիր, մի տառ շեղվեցիր՝ պրծա՞վ։ Դաղում է։ Բայց ամենից շատ ընկած է Դայու հետևից, որը նախկին հյուրանոցատեր է, հիմի հասարակ ծառայող։

— Սոկրա՛տ, ի՞նչ է պատահել։

— Քշել պիտի տամ։

— Ո՞ւմ, ա՛յ տղա։

— Ա՞յ, էդ բանվորագյուղացիական թշնամուն։

— Ինչո՞ւ։

— Էլեմենտ ա, կոնտրռևոլյուցիա յա անում։

— Կոնտրռևոլյուցիա՞։

— Բա՞ս։ Հենց էսօր։ Ծառայողների հետ կոլեկտիվ ժողով սարքեցի։ Ասում ա էդ թողեք, պոյեզդի վախտ ա, պասաջիր կգա։ Այշի, գալում ա՝ գա։ Նոմեր չի՞ ուզածը։ Կտանք։ Մենք մեր գործը գիտում ենք։ Սա ջոկ, նա ջոկ։ Ամա դու չես իմանում. նրա միտքը ուրի՞շ ա։ Ուզում ա նվաճողական գործ բռնի։ Կապիտալիստական աչքը խորհրդային իշխանության վրա յա։ Էդպես ա անում, որ բանվորագյուղացիական ֆրոնտը թուլացնի։

Ու ահռելի բաշը թափ է տալիս.

— Ամա աչքը հանելու եմ։ Կթողամ որ բանդիտիզմ անի՞։ Էնդո՞ւր համար եմ ակոփների մեջ քաղաքացիական պատերազմ տվել, որ սա էսպես սաբոտաժ բաներ սարքի՞։ Դուրս եմ գցել տալու էդ ռեժիմին։

Իսկապես «խաթա»։

Բանակումը է գնում, պրոֆմիություն, դասախոսություն, ֆոնոյից է խոսում, բուրժուաներից, բանվորներից։

Անցյալ օրն էլ թատրոն էր գնացել։

Դային բերանը ծռմռում է.

— Մին հարցնող ըլի, սրա հի՞նչ պենն ա թեատրը, յա կինո... Այշի, դու մելիք-կնյազի թո՞ռն ես, նամեսնի՞կ ես, հի՞նչ ես։ Ջոլի արշ, բաց թողնես՝ գնա սարիցը քար թոլ անի։

— Սոկրա՞տ, ուրիշ ի՞նչ կա, ի՞նչ չկա։

— Իսկի։ Լիկվիդացիա եմ անում։ Էն ա բոլոր գրերը գիտեմ, մնացել է մի երկու հատ։

Որտեղի՞ց էր սովորել։ Ինչքա՞ն ժամանակ, բայց շուտով արդեն գիշերները ժամի 11-ին, 12-ին, սանդուղքից բարձրանալիս լսում էի Սոկրատի ձայնը.

— Աաանգլի... ակաան պառլամեենտում... օօդային մինիստր Սամվել Հոռնը...

— Սողոմոն իմաստունից անցկացար,— մրթմրթում էր Դային,— կազեթ կարթացողիս մտիկ, պրիփիսոր է դառել գլխիս։ Կա՛ց դու...

Բայց Սոկրատի պետքը չի։ Աշխարհք դրստելու հետ է։ Դուն էլ որ դուրս է գալիս՝ վայ թե պահակ գնացող մի նորավարժ կարմիրբանակային տեսնի.

— Ի՞նչ ես քոստքոստացնում, լա՛վ ոտն արա, մե՛կ, երկո՛։... Ղամարլուի ֆրոնտում պիտի ըլեիր, որ քոստքոստը ցույց տայի քեզ...

Նորավարժը ժպտում է ու անցնում։

Ու «խաթան» շվշվացնելով ներս է մտնում։ Դային առաջն է ելնում.

— Հը՞, ամանները սրբեցի՞ր։

— Սրբած ա... — ու շվացնում է։

— Դե հիմի վերևի պոլերն ավլի։

— Ավլած ա...— ու շվացնում է, գնալով իր բանին։

— Լիրբ,— մրթմրթում է Դային նրա հետևից ու ձեռքերը քամակին «տերոդորմյան» քաշելով գնում դուրս՝ սիրտը թեթևացնելու։

Բայց «խաթան» հանգիստ չէ։ Մի շաբաթ է, ինչ որ կռացել է մի թղթի վրա։ Ճկռում է, տնքում։ Բան է գրում կարծես։

— Սոկրատ, ի՞նչ բանի ես։

— Զեկուցում ա։ Պրոֆմիությանն եմ տալու, որ մեր հյուրանոցի աշխատավորության շահերը պաշտպանի։

Մի շաբաթ է, որ Դային էլ չի խոսում, դեղնել է, շրթունքները դողում են։ Նկատողություն է ստացել «վերևից», թե «Մարտիրոսին չի կարելի մասնավոր գործով շուկա ուղարկել և ութ ժամից ավելի աշխատեցնել»։

— Նստի, Դայի։ Հը, ի՞նչ կա։

Դային հառաչում է ու նստում։ Տերոդորմյա է քաշում և աչքերը թախծալի երազանքներով հառում պատուհանից դուրս։

— Ջորացած տառեխի չէ նման։

— Ը-ը... է... Աշխարհք է... (աչքերը պսպղացնում է)... Այշի, հիմի կարծես, թե սրանք բան են հասկանո՞ւմ...

— Ովքե՞ր «սրանք», Դայի,— դիտմամբ խոսում եմ բարձր։

— Էս կոմունիստները, այշի...

— Դայի, էդպես մի խոսի, քեզ կբռնեն։

Կարծես մեկը գլխին բամփեց։ Դային սմքում է, տաբուրետը մոտեցնում կոնսպիրատիվ ձայնով.

— Հայ, ես էլ եմ ասում։— Ու չորս կողմ է մտիկ տալիս։

— Այշի սրանց ի՞նչ պենն ա գաստինիցա պահելը։

Ծխում է, դառն կուլ տալիս ծուխն ու ձեռքը ցայելով հառաչում.

— Պա մենք էլ խազեին ենք եղել, հո՞ւնց ենք արել։ Հա՛յ, հա՛յ... ինչ գաստինիցա եմ ունեցել։ Պետերպոլկի դվարեց... Մին երևելի ստալովոյ ունի, որ գուբերնատորը ներս մտնելիս մաթ էր մնում։ Էն հիանալի կարգ ու կանոնը, էն կոխտա կերակուրները, էն կանֆետի պես աղջկերքը, Սերափիոն Կասպարիչի տղերքը, Սափարոզլու տղերքը, Միշեն, Կոլյան, ի՞նչ քեփ անող, ուտող խմող տղերք էին... Դիփ վիդով, կնյազի պես տղերք, մսխող... փայտոնները ղարավուլի պես պադեզդում կանգնած, սաղ գշերը քեֆ, մարաքա, չաիկարա, տանցևայթ...

Ծխում է ու կարոտալից աչքերը գցում պատուհանից դուրս։

— Հը.. Նոքար 777։ Նոքարը կարա՞ր հակառակ խոսք ասի։ Այ ըսենց բռանս միջին էր։ Աչքերս որ վրան մի հլորեի՝ էն ա, կշորանար տեղն ու տեղը։ Հա՛յ գիդի Աբասթումանն...

Իհարկե չեմ հարցնում, թե ի՞նչ բան է այդ անհասկանալի Աբասթումանը։

— Հիմի ի՞նչ։ Նոքարը նոքար չի, խազեինը խազեին։ Բանի ոլորքը իսկի իմանում ե՞ն։ Մինը նալին ա խփում, մինը՝ մեխին։ Քի՞մ-քիմա։

Եվ իբրև վերջին արգումենտ.

— Այշի, մեկի անունը որ Սոկրատ ըլի, ի՞նչ կլինի։

Ճրրալով վեր է կենում, մի երկու տրորվում է ոտի վրա և.

— Ի ի ի... «գեթտի բյուլբյուլ, գեթտի գյուլ», «իստար աղլա, իստար գյուլ»։

Դուռը բաց արի ու ճամփու դրի ողբերգական Դայուն։

Կեսգիշեր էր։ Հյուրանոցը քնած։ Դուրս եկա կորիդորը։ Ներքևից պարզ լսվում էր Սոկրատի հեգելով ընթերցումը։ «Խը Սը Հը Մը — յապոնական համաձայնագրի շուրջը»։

— Այ զահրըմար քեզ, քար ու քացախ,— մրթմրթաց Դային։— Տես թո՞ղ ա անում քի նոմերի մարդը քնի՞...

ԿԱՅԱՐԱՆԻ ԱԿՈԲԸ

Դեռ գնացքին մի կտոր ժամանակ կա։ Լուռ է երկաթուղու կայարանը։ Հանգիստ քնած է ուղտի ականջում։

Բայց Ակոբն արդեն պոստի վրա է։ Երկաթուղու պահակային զորամասից եկել հսկում է պլատֆորմին։

Ակո՞բը... Ուրիշ տղա է։ Ղարաչուխալու՝ նոր մկրատի՝ վերջին կաղապարի։

Առո՞ղջ՝ ինչպես կարմիր բողկ։ Կայծե՞ր կհանի։ Կազմրվածքն այնպես է հիմնավոր ու պլանը պինդ գցած, որ երկու հարյուր տարի կդիմանա։

Եվ ահա կանաչեզր զինվորական գդակը ծուռ դրած, հրացանն ուսին կախ, շալվարի տոտերը անհնարին ուժերով պրկած երկարավիզ կոշիկների մեջ — քո՞թ, քո՞թ — քայլում է ետ ու առաջ։ «Սապոկ»-ներ չեն, այլ զրահապատ գնացքներ, դրետնոուտներ։ Կրակի պես սրբող «չիստիճին» անաստված պլպլացրել է...

Ճոճոցը ողջ գավառում լսվում է։

Ահա հսկում է, ետ ու առաջ մտիկ տալիս, սրա նրա ձեռքին նայում։

Գողությո՞ւն, «սեմուշկա» չրթե՞լ, պապիրո՞ս, ձվի կճեպ նետե՞լ... Լուցկի որ ընկնի վար՝ ձեռաց կիմանա, պրոֆեսիոնալ ականջը... Խեթ-խեթ մտիկ է տալիս գցողի կողմն ու.

— Ընկե՛ր, չի կարելի։

Արդեն բնազդորեն գիտե, թե այս բոպեիս ինչ է կատարվում պլատֆորմի վրա, ներսը՝ կայարանում, բուֆետում... գավառում։ Գիտե, թեև իր գործը չէ գիտենալը, թե ուր են գնում այս-ինչ որբանոցի աշակերտները, ո՞ր էքսկուրսիան կհասնի այսօր։

Առավոտը ծեգը ծեգեց թե չէ՝ Ակոբից իմացիր, թե քաղաքի որ ճաշարանում ի՞նչ քեֆ է եղել և ո՞ւմ քիթն են ջարդել։ Արդեն լուսաբացից առաջ լսել է «կողմերին»։ Ինչից է թե ինչպես՝ թեև

հետները գործ չունի, բայց քաղաքից ամեն մարդ, որ դիպչում է կայարան, պիտի տեսնի Ակոբին և մի բան պատմի։

— Ակոբ, իրիգվա պոյեզդով ղալթաղչեցի Սերոբը չանցա՞վ։

— Չէ, առավոտս պիտի գա, քթոցով հավկիթները ջարդել է։

— Ծո, դրո՞ւստ, վա՛յ իմանսրզ։ է, ճենճոն քաղա՞քն է։

— Նախճրվան գնաց։ Գալ շաբթու գուքա։

— Քաղա՞քը ինչ կա։

Հետո մտիկ է տալիս Ակոբին ոտից գլուխ.

— է, խո լա՞վ լավ ես։

— Ջանսաղութեն, փափախիս տակը ման գուքամ։

Հարցնողին արդեն այդքանը բավական է։ Ակոբաշափով կարելի է լավ իմանալ, թե ինչ կա գավառում։ Եվ երբ Ակոբը ասավ, թե ամեն բան լավ է, ասել է աշխարհքն իր տեղն է։

Այն էլ ճիշտ է, որ Ակոբը ծառայության կանչվելով՝ պաշտոնապես կտրված է քաղաքի կյանքին մասնակցելուց։

Գնացքի ժամանակը մոտենում է։

Ակոբը աչքը չորս է անում, որ մի անկարգություն որսա։ Բայց անկարգությունը գնդակով չես կարող վայր գցել։ Չկա։

Մի էշելոն է եկել Երևանից և կանգ առել կայարանից հեռու։ Կարմիրբանակայինները ցատկում-թռչում են վագոնները, իրար բռթում, ծիծաղում։

Մի շոգեկառք գոմեշի պես տրլընգալով ետ ու առաջ է շարժվում ու փնչացնում։ Մի քիչ հեռու չիկչիկում է դեպոն։ Կուպրինավթի հոտը սրվում, լողում է օդի մեջ։ Կայարանից լսվում է հեսախոսի ճնկճնկոցը։ Ահա և քաղաքից կառքեր են սլանում լեղապատառ՝ նահապետական փոշիների հանդիսավոր շքախումբը հեռանները գցած։

Եվ օրը պլպլում է, ծիծաղում, ինչպես կարմիր գաթա։

Կառքերը խցկվում են կայարանի հետևում, վեր են գալիս պատկումներ, ապլաներ, կաշվեմարդիկ — խորհրդային ծառայողներ, ամերիկյան որբանոցների սանուհիներ՝ ճերմակ բրդե գուլպաներով և ընդարձակ շուստերով։

Պլատֆորմը կենդանացավ։ Հեռզհետե բազմությունը լցվեց, ժրեց ու մոլտոցը գցեց։ Կայարանի ներսը մի ղժվժոց է, որ կարծես կանանց ընդհանուր բաղնիս է, կամ հրեաների սինագոգ։

Ահա մի խումբ տարբեր հասակի ապլաներ եկան ու սերվիզի պես շարվեցին գծի հենց եզրին։

Երևում է, որ բնակչության այն խավերից էին, որ երեք տարին մի անգամ հազիվ են գալիս կայարան։ Դանավուր շորերով էին։

Պառավներից մինը նայեց Ակոբին ու բռթեց մյուսին.

— Ջանըմ, աս մեր Ակոբը չէ՞։

— Ակոբն է,— հաստատեցին մյուս կանայք ու հետաքրքիր մտիկ տվին Ակոբին, որ կանգնած էր ինչպես ինքն Աքիլլես և հանդիսավոր հսկում էր։

Պառավներն սկսեցին դես-դեն մտիկ տալ։ Ինչ-որ արտակարգ հուզման էին ենթարկվել, ընկնելով մի աղմկալի կենտրոն իրենց այն թաղից, որի անդորրությունը խանգարողը լինում էր շատ-շատ հարևան թաղից գաստրոլի եկած մի աքլորի մենամարտ՝ աքլորական շուկայի ազդեցության գոտու համար կամ շների մի համառոտ գզվռտուք և կամ տղամարդկանց երեկոյան զրույցը դայֆախանայի ցերեկվա զրույցի մասին և այն մասին՝ թե «կոոպերատուրը» չիթը քանիսի է բաց թողնում։

Հիմի ընկնելով այդ կայարանը, մի ավելի որոշ՝ քան անորոշ երկյուղով կանայք մտիկ էին տալիս կայարանի իրարացման։ Արդեն մարդիկ այնպես էին վազվզում, կարծես բոլորը քաղաքից փախչում են։ Կայարանի դուռը բացվելիս ներսից պոռթկում է տոմսակ առնողների խուճապ գցող մոլտոցը։ Իսկ հեռուն էշելոնն է կանգնած՝ նա էլ է գնում...

Ջանգը տվին (գնացքը դուրս է եկել վերջին կայարանից)։ Պլատֆորմը ջղայնացավ։

— Ակոբ ջա՞ն, աս զորքը կերթա՞, ինչի՞ կերթա,— անհանգստացավ պառավներից մինը։

— Բան չկա, մերս, մի՛ վախենա,— «հասկանում է» Ակոբը,— լագռ կերթա։

— Հա՞, օտացդ մեռնիմ... թե չէ... — Հանգստանում է պառավը։

— Ինչի՞ կանհանգստանաս, մե՞րս, աշխարհք խո իրար չանցա՞վ։

— Քա եսի՞մ, տնեն դուրս եմ էկե՝ զարիպի պես եմ։ Զարիպն ու քորը մեկ է։

Ու հանգստանում է։ Որովհետև երբ որ Ակոբը ասավ՝ էլ բավական է. ասել է աշխարհք հանգիստ է։

Ակոբը ամեն բան գիտե։

Պառավները մտիկ են տալիս Ակոբին, որ պինդ կանգնած է ինչպես հեղինակություն, սրա ծանր հրացանին, հաստ կոշիկներին ու լցվում գորովանքով։

Երևանի գնացքն եկավ, դղրդաց ու կանգնեց։ Ապա սուլեց։ Մարդիկ հարայ տալով, բեռները առջևից-հետևից կախ՝ խոյացան առաջ։ Բեռները առաջ լողացին սառույց կոտրող նավերի պես։ Հայհոյանք, հրմշտուք, հիմնավոր հարվածներ ու բոթոցներ։

Պառավները շփոթվեցին և խուճապի մատնվեցին։

Բազմության միջից մի հասակավոր կին համարյա լացով որոնում էր պառավներին, որոնց գտավ վերջապես և ապա վազեց գեպի վագոնները։

Ակոբը գնաց նրա վրա.

— Ո՞ւր կերթաս, մերս,— դիմեց տոպրակավոր կնոջը։

— Երևան կերթամ, տղես կարմիր բանակ է։

— Կեցի՛,— ու Ակոբը երկաթի պես բռնեց նրան,— Երևանու պոյեզդը աս չէ։ Ետ քաշվի, իմաց կուտամ։

— Հա՜, օտացդ մեռնիմ։

Հանգստացան, տենչանքով նայեցին Ակոբին ու հառաչեցին։

— Ինձի չե՞ս ճանչե։

— Ինչի՞ չեմ ճանչե. Սեթոյի մերը չե՞ս։ Ի՞նչ կենե Սեթոն, լա՞վ է։

— Ի՞նչ գիտնամ, նամակ էր էկե, հիվանդ է։ Պիտի էրթամ տեսնեմ ի՞նչ է էղեր։

— Ի՞նչ պիտի էղնի։ Հիվանդ է՝ կլավանա,— որոշում է Ակոբը։

Կարմիրբանակայինի մայրը հարցական նայեց Ակոբին.

— Հը՞, Ակոբ ջա՞ն, հրճրփ պիտի լավնա՞ խեղճ անասունս,— լացակումած հարցրեց մյուս պառավը, ըստ երևույթին կարմիրբանակայինի տատը։

— Կլավնա, մերիկ ջան, կլավնա՜, հեչ դարդ մի էնե։

— Մեռնիմ իրեն. սուրբ Աստվածածնա խոստրցեր եմ, Սեթոս օր լավնա՝ գառմ պիտի մատղեմ։ Երբ օր կըսես կըլավնա, ըսել է՝ կըլավնա։

Ակոբը ավելի լրջացավ։

— Ջանըմ ինչի՞ պիտի չըլավնա։ Սավետսկի իշխանություն է, հեչ կրասնարմե՞յց կըթողնե որ հիվընդնա, յա բան պատահի։ Հե՞չ, սրտերդ հանգրստ պահեք. հիմի բալշևիկի պռավիլները ուրիշ տեսակ են։

Պառավը ձեռքը բարձրացրեց աղոթքի։

— Հառավոտ, իրիգուն սուրբ Տիրամոր կխնդրեմ՝ ինքը բարեխոս ըլի, օր բալշևիկին սապոկը ղայիմ կպած մնա մեր հողին վրա։

— Քա հըլպը՞թ օր, բալշևիկին պահողը աստված է,— ձայն պահեց կարմիրբանակայինի մայրը։

— Լուս իջնի Լենինին գերեզմընին, սրբոց դասը դասվի՞,— շարունակեց առաջինը,— էնիկ չէ՞ր, օր քաղաքը պրծուց։ Էէէ՞է — սաղ աշխարհքը հաց լցուց, լիացուց։

Մի խումբ երիտասարդներ եկան պլատֆորմի մյուս ծայրից թևերն իրար ուսով գցած։ Երևի կամ ճամփու դնողներ էին կամ պարապորդներ։ Մոտենալիս լսելով պառավների և Ակոբի կրոնական զրույցը՝ նրանցից մինը մի ասեղ բաց թողեց.

— Հը՞, Ակո՛բ, բանդ Աստվածածնա է ընկե, կրոնական հարբեցողություն կենես։

— Կրոնական հարբեցողություն էնողը մքլած պապի՛դ տեսնեիր,— խեթեց Ակոբը,— դու չէի՞ր, օր զագս ու ժամ իրար խառնեցիր։

— Ծո, վո՞վ։

— Վով ըսողը։

— Էրեսդ խա՛չ հանե։ Ես ժա՞մ եմ գնացե, թե՞ զագս։

— Ջա՛գս... ճժե կոնըկիս։ Գիտեմ ինչ զագս էր տերտերը գլուխդ վրա։

— Ծո, այ օղուլ, տերտերը զոքանչս բերե՞ց, թե՞ ես։ Բարեկամ էր՝ կանչել են տուն քեֆի, ինձի ի՞նչ։

— Հա՛, տերտերը բարեկամս էր, տիրացուն քեռուս տղեն,— էս մեկը նապաստակի ջուրն էր, էն նապաստակի ջրի ջուրը։ «Կրոնական հարբեցողություն»... քեֆդ քյո՛ք պահե, մենք էլ ենք շուն կուլ տվե, էլ էդ տեսակ բաներ չենք մարսե։

— Ապա ինչո՞ւ մարսեցիր։ Պառավները կոմունիզմդ ժամ տարան բերին։

— Իմ կոմունիզմս ժամ չտարան։ Կրասնարմեյցի մեր է, լեղուն էդպես կդառնա։ Մի՛ վախենա, «սրբոց» ասելով Լենինը սրբոց չեղավ։ Խոսելը վնաս չունի — սիրտը մաքուր էղնի։ (Կարմիրբանակայինի մորը) էս կո՛ղմը, կեցի, պոյեզդը կուգա, տակը չընկնիս։

Հանկարծ աչքը կարթեց մի բարձրահասակ երիտասարդի, որ տուն վերադարձած կարմիրբանակայինի շորեր ուներ հագին։

— Ընկե՛ր, պլատֆորմի վրա չի կարելի աղտոտել։

— Ես չեմ աղտոտե,— հերքեց երիտասարդը։

— Ատկա՞զ ինչի կենես։ Քեզի կըսեմ մի աղտոտե՝ մի՛ աղտոտե։

— Շատ ե՞ս, ծո՛,— բողոքեց երիտասարդը։

Ակոբը հայացքը մեխեց նրա աչքերին.

— Դու կրասնարմեյց էղել ե՞ս։

Երիտասարդը չպատասխանեց և իր հերթին աչքերը չռելով նայեց Ակոբի աչքերին։ Հետո աքլորի պես.

— Դո՞ւ ում կո՞ւռեցնես։

— Ուռեցնե՞լս որն է։ Պառյատկ նառուշիտ կենես ու հիմի եկել ես աչքերուս մե՞ջը կաշես։

Երիտասարդը մի քիչ մոմռաց և նայեց ուրիշ կողմ։ Հետո զանգատվեց.

— Բերանդ մեզի վրա կբացվի, այ օղո՛ւլ։ Աչքդ ինձի՛ տեսավ։

— Հա՛, աչքս քեզի տեսավ։ Սեմուշկա ինչի՞ կչրթես։

— Ե՞ս եմ սեմուշկա չրթե, ըհը՛, սեմիշկա՞ է։

Բաց է անում բուռը և ցույց է տալիս լուցկին։

— Գիտեմ սեմուշկա չէ, հրմը քա՞նի անգամ ներսը չրթեցիր։ Աչքս չի տեսնի՞,— համառեց Ակոբը և հրացանի փոկը ուղղեց ուսի վրա։

Երիտասարդը հեռացավ ու գնաց.

— Կարմի՞ր տաքդեղ ես։

— Կարմիր տաքդեղը ես չեմ,— հետևից նետեց Ակոբը,— կարմիր տաքդեղը պռավիլան է։ Ո՞ւմ ղուռումիշ կենես։

— Հը՞, Ակո՛բ, խաշում ես հա՞,— ծիծաղելով անցավ մի բանվոր։

— Դաղում, ճենճերն է հանում,— խոսեց մի ուրիշ ծառայող ու գնաց նրա հետևից։

Ակոբը շուռ եկավ նրանց կողմը.

— Ես ի՞նչ, այ օղուլներ։ Սլուժբա է, մորքուրիս տղեն չէ։

Հետո մի հավելված շորս կողմը հավաքվածներին.

— Ղուռումսաղներ, ղայֆախանա չէ, պլատֆորմ է։ Մեծ-մեծ բրդելն էլ նո՞ր սորվաք։ Խոսք բմ կըսենք թե չէ՝ թաքարլամիշ կենենք։

Մի երեսը լպստած նեպման, որ նայում էր այս տեսարանին՝ մեջ մտավ և նկատեց Ակոբին.

— Գիտես, պարոն, ստառի ռեժիմի ժամանակ ժանդարմներն ավելի вежливый էին։ Պետք ա, ну, как там, сквозь пальцы смотреть.— Ու գնաց։

— Խելքիդ պուտուկը սիրեմ. կոնտրռևոլյուցիա, Սողոմոն իմաստունին թամքեցի՞ր... — կպցրեց Ակոբը,— Սավետսկի իշխանություն է, ըսավ՝ կտրե՛ց։ Մենք մեր բանը լավ գիտենք։

Հետո.

— Թքեմ կրնկիդ։ «Պարո՞ն»։ Պարոնը գնաց Զանգեզուր։

Վերջապես Թիֆլիսի գնացքը եկավ։

Ակոբն սպասեց, որ եկողներն իջնեն։ Հետո երբ կարգն եկավ նստելու, բռնեց կարմիրբանակայինի մոր թևից ու շոգեկառքի պես տարավ դեպի վագոնը.

— Ե՛լ, նստի։ Հանգիստ քեզի համար, քու տանդ պես։ Ստանցիները չիջնես։ Սեթոյին շատ բարև։

Կինը բարձրացավ, դռան մոտ շնորհակալ եղավ ու ներս գնաց։

Աբլաները քիթ ու մռութները ծռմռեցին, աչքերը տրորեցին ու կարմիրբանակայինի մորն ու նրա Սեթոյին աստծուն հանձնելով, գնացին կանգնեցին վագոնի պատուհանի տակ։

Գյուղացիք դուրս պոռթկացին կայարանի դռներից և այնպիսի մի վերջին դատաստանային խուճապով բռնեցին սրան-նրան, կարծես դա նրանց հատուկ պաշտոնն էր։

— Ո՞ւր, ո՞ւր, ո՞ւր կքշեք,— արգելեց մի վաճառական,— էստեղ պլացկարտ է։

— Պլացկարտդ կոնըկիս,— ասաց մի գյուղացի և ռահվիրեց դեպի այլ վագոն։ Մյուսները խուճապեցին նրա հետևից։

Գնացքը մեկնեց։ Դարձյալ կաթվածն իջավ կայարանի վրա։ Ճամփու դնողներն սկսեցին քաշվել։

Ակոբը նայեց գնացքի հեռացած կողմը, գդակն իջեցրեց աչքերին, հորանջեց։ Ու աչքը մեքենաբար դարձրեց սրա նրա վրա։ Եվ ահա նկատեց մի «խուժան», որ աչքը գետնին՝ պտտվում էր գծի վրա մնացորդ որոնելով։

Ակոբը նրան նշան բռնեց ու աչքերը խոժոռեց վրան.

— Ծո՛, սալախանա շուն, էլի՞ էկար էստեղանները։

Խուժանն աչքի տակով նայեց Ակոբին ու շարունակեց որոնելը։

— Էլի փախե՞լ ես մանկատնեն։

— Տեղ չկար։

— Տեղ կա, հըմը աչքդ գողության է։ Սորվել ես խոզի աղտի մեջ պառկելու։ Դե հայդե։— Ուզեց քացի տալ, բայց խուժանը սմքեց ու մնաց։

Ակոբը նայեց նրան, գլուխն օրորեց ու վճռեց.

— Լավ։ Էգուց արի Կարոյի դուքանը, ես քեզի տանեմ դուրդար Պետրոսի քով — դուրգարությեն սորվե։

Տղան ըստ երևույթին համոզվեց։

— Արհեստ սորվի, մուրալով, փախցնելով փո՞ր կկշտանա։ Ա՛ռ, էսօր գնա կշտացի, էգուց արի։

Ու ձեռը գրպանը տանելով դուրս բերեց իր անդնդախոր պորտմանեն, կոշտ մատները կոխեց մեջը, հանեց երկու պայտի չափ պղնձե շահանոցներ, երկու խորհրդային կուշտ, առատ շահանոցներ և տվեց տղային.

— Դե, քելե, վազե, չափո՛ւկ։

Տղան ցեխոտ թաթը պինդ սեղմած, քիթը խպշտեց ու վազեց։

Ակոբը դես-դեն նայեց, աչք ածավ պլատֆորմին, հանեց գլխարկը, մազերը սղալեց ու քոթքոթացրեց կայարանի հետևը։

1927 թ.

ԷՇԵԼՈՆԸ

Նրա որդին՝ Նիկոլը՝ 1920 թվից դեսը չկար, չէր երևում։

— Կգա, մենակ ճամփաները որ կտրված են, դրա համար լուր չկա։

Ուրիշ ի՞նչ կարելի էր ասել մի խեղճ մոր, որի միակ որդին գնացել է պատերազմ, հինգ տարի է չի երևում։

Մայրը հանգիստ չունի այն օրից, երբ իր Նիկոլին տարան, այդ խեղճ ու կրակ ատաղձագործին, որ մինչև վերջին օրը ուրագը ձեռին, ոտի վրա գործ էր անում՝ կարկատելով պստլիկ խանութներ, նեղլիկ դռներ, աթոռ, սեղան...

Նրա կերպարանքը դեռ երևակայության մեջ տպված է. նիհար, նրբակազմ մի տղա, թախծալի, մտերիմ ժպիտն աչքերի մեջ։ Եվ անխո՞ս։ Միայն կժպտար։ Բան ասելիս է՛լ մեղմ, անլսելի։

Նրանից ոչ մի գանգատավոր չի եղել քաղաքում։ Այդ գավառական քաղաքի չքավոր ծայրամասերը շատ լավ էին ճանաչում բարի Նիկոլին։ Տուն չի եղել, որին մի բանով օգնած չլիներ. դուռ էր կոտրած լինում, պատուհանի փեղկ, օրորոցի ոտ՝ եթե չքավոր տեղ էր՝ Նիկոլը մի արանք կգտներ, կգար ձրի կշիներ։

— Նիկո՛լ, արի՛, հացը գցեցի։

Վեր կկենար ու ներսը մոր հետ կնստեր համեստ ընթրիքի։

Մայրը կխոսեր, կպատմեր, կբացատրեր՝ Նիկոլն ականջ կդներ։

Չէր խոսի։ Միայն մեղմ կժպտար։

Ահա այդ Նիկոլին էր, որ տարան պատերազմ, ու կորավ։

Մնաց մայրն ու պստլիկ տնակը — դատարկ լուցկու մի տուփ՝ մի դուռ, մի պատուհան, երկաթուղու կայարանի մոտ։

Մայրը չէր իմանում թե ում դիմի, ումնից տեղեկություն ստանա իր որդուց։ Հարցրել էր քահանային, ծանոթ խանութպաններին, կայարանում մեքենավարներին, դպրոցի ուսուցչին։ Ասել,

բացատրել էին անորոշ բաներ—միտքը չի մնացել։ Չի հասկացել։ Եվ հիմա ի՞նչ պիտի անի, այդ էլ չգիտե։ Իհարկե ամենքին խոսեցնում է, որ մի նշան, մի հնար երևա։

— Հիմի, տիկին,— ասաց մի գրագիր,— դրա պռավիլան էս է։ Դու պիտի գտնես տղայիդ շաստը, թե որ դիվիզիան, որ պոլկը է եղել։ Մի զայավլենի կտաս վոյենաչալնիկին...

Շատ բարդ է...

Եվ մայրը տխուր նայում է գետնին և գլուխը ցնցում։

Մի միլիցիոներ էլ այսպես բացատրեց.

— Էսպես է, մե՛րս։ Էդ զորամասը Ղարսից քաշվել եկել է Լենինական, ու էնտեղից կամ Ղարաքիլիսա է անցել կամ Երևան։ Քո տղեգ էլ հետները եկած կլինի։

— Հա՞, եկա՞ծ կլինի։

Ու մայրը հրահրվում է մի գաղտնի հույսով։

— Հա, թե որ եկած լինի, էդտեղերք եկած կլինի։

Հարևան կանայք էլ վրա են բերում.

— Ուր է, ուր չէ՝ վե՛րջը-վե՛րջը կերևա։ Երեի ճամփա չկա։

Ու գաղտնի իրար են նայում աչքի տակով։

Բայց անցնում են օրեր, իրար վրա դարսվում, դառնում ամիսներ, ամիսները դառնում տարի...

Միշտ միևնույն բանը — ոչինչ չի փոխվում այն բանից, որ Նիկոլը չկա։

Ու հարևան կանայք դադարում են նրա մասին խոսելուց։

Նա էլ չի խոսում։

Հասկանալի բաներ կան, որ եթե խոսվեն, դառնում են անհասկանալի։

Ու տեսնելով խեղճ կնոջ իրարանցումը, կայարան գնալ-գալը, հարց ու փորձը, հարևանուհիներից մինը մի օր նկատեց.

— Մե՛րս, էդպես գնալով գնալով մի բան գուրս կգա՞ որ։

— Հա՛... Համա ո՞վ գիտե...

Ցույց է տալիս, որ հույսը կորցրել է, բայց իր մեջ չի կոտրում, ընդհակառակը շոյում, մեծացնում է այդ հույսը։

Ու երբ կայարանից կամ ուրիշ փողոցներից վերադառնում է տուն՝ կրակ է անում, կերակուր դնում վրան, նստում կողքին, գուլպա գործում.. և սպասում Նիկոլին։

Այդպես լավ է։ Ա՛յ, ամեն ինչ պատրաստ է։ Ուրիշ էլ ի՞նչ է մնում, որ իր տղան գա տուն։

Իհարկե ոչինչ։

Գնացքները գիշեր-ցերեկ դղրդալով գալիս անցնում են փոքրիկ տնակի առջևով։ Ամեն ազգի, սեռի ճամփորդներ վժժում են վագոնների պատուհանների մոտ։

Մայրը նստում է դռանը, պաղ քարին ու մտիկ է տալիս գնացքներին՝ աչքերը լի մշուշով ու թախիծով։

Վագոններից մարդիկ են դուրս գալիս։

— Հը՞, էն մեկը, Նիկոլը չէ՞...

Սիրտը թրթռում է, գուլպան վայր է դնում ու շտապում կայարան։

Ճամփորդների աղմկահույզ ամբոխը մի կարճ ժամանակ իրար է անցնում, զոռում, վազվզում ու նորից շոգեմեքենան սուլում է, նորից կայարանը դատարկվում...

Մայրը հառաչում է, մի քիչ էլ կանգնում, նայում գնացքի ետևից, ապա դառնում տուն։ Նա չի հուսահատվում։ Ճամփին քաղցրացնում է երևակայությունը — և դա արդեն սովորություն է դառել — երազում է, որ իր որդին քաղաքի ուրիշ ճամփով է եկել տուն։

Հեռվից նայում է՝ արդյոք դռան մոտ մեկը չէ՞ կանգնել՝ իրեն սպասում։

— Ներս մտած լինե՞ր...

Բաց է անում դուռը.

— Նիկո՞լ...

Ոչ ոք։ Սենյակը դատարկ է, ինչպես միշտ։

Դե նա գիտե՞ այդ։ Բայց այդ ամենը նրա ամենօրյա զբաղմունքն է, գործն է, որով լցնում է նա իր գոյությունը։

Մայիսի վերջերքն էր։ Դաշտերը ժպտում էին իրենց կանաչ աչքերով։

Ինչ-որ ձայներ հեռվից կանչում էին ո՞ւմ որ, չես իմանում ինչո՞ւ։

Մի կարմիրբանակային էշելոն էր եկել կայարան և հանգրս-

տանո՞ւմ, թե հերթի էր սպասում, որ ճամփան շարունակի դեպի լագերը։

Նիկոլի մայրը՝ հնազանդ իր սովորության՝ քայլերն ուղղեց դեպի կայարան, դեպի անսովոր աղմուկը։

Էշելոնն իր ձիերով, խոտերով, երիտասարդ ձայներով կայարանից քիչ հեռու տարածության մեջ ժամանակավոր կյանք էր սկսել։ Հարյուրավոր շիկահեր ու սյավ գլուխներ էին վժվժում վագոնների շուրջը։ Մատաղահաս կարմիրբանակայինները ծիծաղում, իրար բոթում, իրար գլխի բամփում, հոհոում էին։ Ոմանք գործ էին անում։

Ահա մի սևաչյա կարմիրբանակային քրտինքը թուխ այտերից կաթեցնելով, դույլը ձեռին գնում էր ջրմուղից ջուր տանելու։

Նիկոլի մայրը կանգնեցրեց նրան.

— Տղա՛ ջան, կեցի քեզի բանըմ հարցնեմ։

Կարմիր զինվորը կանգ առավ, բայց անհամբեր ու շտապով հարցրեց.

— Ի՞նչ կա։

— Օտա՜ղդ մեռնիմ, ախր մեր Նիկոլը... Նիկոլն էստեղ չէ՞։

— Նիկո՞լը, ազգն ի՞նչ է։

Կինը լարվեց.

— Ա՞զգը։ Ազգը Խաչատուրյանց է։

Կարմիր զինվորը մտածեց մի քիչ.

— Խաչատուրյա՞նց։ Ո՞ր վաշտն է։

— Չիտեմ։

— Խաչատուրյա՞նց։

Ու դարձավ դեմից եկող մի ուրիշ կարմիր զինվորի.

— Սեթո՛։ Խաչատուրյանց ո՞վ կա գնդում։

Ուրիշները վրա եկան.

— Ո՞ւմ է հարցնում։ Խաչատուրյա՞նց։ Նիկո՞լ։

Կարմիրբանակայինները եկան շրջապատեցին։ Ու մտածում են։

— Ո՞վ պիտի լինի։

Սեթոն հարցրեց.

— Վաշտը չգիտե՞ս։

— Ի՞նչ գիտնամ, ո՛չ ճար գիտեմ, ո՛չ ճամփա։ Անունը Նիկոլ է, Խաչատուրյանց, կոնսիստորի թղթի մեջ Ղարիբյանց — Խաչատուրյանց է։

— Տղե՛րք,— դարձավ Սեթոն դեպի վագոնները,— Նիկոլ Խաչատուրյանց ո՞ր վաշտում կլինի։

Մի լուրջ, գունատ դեմք դուրս նայեց վագոնից.

— Խաչատուրյանց ես եմ, ո՞վ է հարցնողը։

Կինն աչքը սևեռեց այն կողմը և վախեցած նայեց.

— Չէ, այն չէ,— խոսեց ինքն իրեն կոտրված։ Առաջուց գիտեր թեև, բայց էլի հույս ուներ։ Ո՞վ գիտե, գուցե...

— Գնդի մեջ ուրիշ Խաչատուրյանց չկա,— ասաց Սեթոն սիրտը կոտրած մորը։— Էդպես է, չէ՞, տղե՛րք։

Կարմիրբանակայինները գլուխները կասկածով թե բացասաբար շարժեցին.

— Չէ՛, չկա։

Ու լռեցին։

Գունատ կարմիրբանակայինը վայր իջավ վագոնից ու մոտեցավ կնոջը.

— Ե՞րբ է ծառայության մտել։

— Հինգ տարի կա։

— Հինգ տարի՜... էդ ասել է՝ հին բանակումն է եղել։ Ո՞ւր է գնացել։

— Ղարսա կողմերը։

Կարմիրբանակայինները հազիվ զսպելով իրենց ծիծաղը՝ ժպտացին։

— Է, ի՞նչ էնեմ, հինգ տարի է կսպասեմ, կսպասեմ թե կերևա հա կերևա, հե՛չ չի երևա։

— Թիֆլիս, Բաքու, Երևան հարցրե՞լ ես,— ասաց գունատ կարմիրբանակայինը։

— Է՜հ։

— Ու հինգ տարի է սպասում ես թե որդիդ գա տո՞ւն...

Մայրը շրթունքները ծռմռեց ու սկսեց հեկեկալ։

Կարմիրբանակայինները ժպտալով մտիկ տվին և չէին իմանում ի՞նչ անեն։

Մի ուրիշ կարմիրբանակային մոտեցավ ու կլոր երեսն ընկերների ուսերի արանքով կաս-կարմիր գնդի պես ներս խոթելով՝ խզեց լռությունը։

— Հա՜, ի՞նչ կա։

Բացատրեցին։

— Ի՜հ... Տղեդ մեռած կըլի, մե՜րս, զուր մի՛ սպասիր։ Տղեդ էլ վերջացավ, էն բանակն էլ, էն հին բանակ էր... Հիմի նոր բանակ է։

— Կարո՜,— աչքով արին մյուսները։

— Ջա՜նըմ, թող լա, սիրտը իջնի։ Հապա ի՞նչ։ Մեռա՜վ՝ մեռավ։ Սաղ ըլիմ ե՜ս։

Սեթոն հոհոաց ու բռունցքով խփեց Կարոյի մեջքին.

— Հա՜յ սատկիս դու։

— Խա՜չ։ Սաղ ըլինք ես, դու, մենք։

Կարմիրբանակայինները բարձր ծիծաղեցին։

Իսկ կինը լաց էր լինում։

Մի ծանր քար, որ ահա հինգ տարի է նստած էր նրա սրտի վրա՝ շուռ եկավ հիմա։ Եվ եթե նա բաց արեց իր սրգու գերեզմանը, բայց մյուս կողմից էլ «նա» ընկավ նրա աչքից, հեռացավ։ Աշխարհքը դառավ մի դատարկ բան, չքացավ ինքն էլ ու թեթևացավ.

— Էլ ի՞նչս մնաց...

— Ի՞նչը, մնաց աշխարհքը։

Կարմիրբանակայինները բարձր ծիծաղեցին։

Գունատ կարմիրբանակայինը, որ կարեկցությամբ նայում էր կնոջը՝ մեղմեց մի փոքր.

— Մի՛ նեղանա, մայրիկ, հանաք է անում։ Քո որդին գնաց, մենք էլ քո որդիքն ենք։

— Էդ էլ դրուստ է,— ծիծաղեց Կարոն,— մեկը չըլի — հազարը ըլի։ Այ տես — ու Կարոն գդակը հանելով բամփեց բոլորի գլխին — սրանց գլուխը թաղեմ, սրանք բոլորն էլ քո սրգիքն են։

Կինը աչքերը սրբեց ու հառաչեց.

— Հըլպը՞թ որ... սաղ ըլիք դուք։

— Հեչ դարդ մի՛ անի, մե՛բա,— կատակեց Կարոն,— մի բան որ պատահի՝ այ էսպես հուպ կտանք։— Եվ հուպ տվեց Սեթոյի վիզը։

— Վա՜յ, վա՜յ, վա՜յ, տա՛, կտամա՛ց,— ծվաց Սեթոն ու վիզն ազատելով ընկավ փախչող Կարոյի հետևից։

Կարմիրբանակայինները ծիծաղելով նայեցին նրանց կողմը։ Սեթոն հասավ ու բռնեց Կարոյին։ Սա շուռ եկավ ու սկսեց պաշտպանվել։ Սկսվեց կռիվը։ Բոլորը շրջապատեցին նրանց և կնոջից հեռացան։

Սա նայեց նրանց և մի անասելի հաճույք զգաց, մոր հաճույքը խայտացող երեխաների առջև։ Եվ մի անգամ էլ գորովանքով դիտեց նրանց ու հառաչեց։

Ապա վերադարձավ տուն։ Մոտենալով տանը, բաց չարեց դուռը, ներս չմտավ։

Այնտեղ այլևս ոչ ոք չկար։ Նիկոլն այնտեղ չէր այլևս։

Մութն ընկնում էր։ Ձայները լռեցին։ Միայն դեռ լսվում էր կարմիրբանակայինների անհոգ, երիտասարդ աղմուկն ու երգը։

1927 թ.

ՄԵՐԿԵ

Երբ կենտրոնից առաջին ներկայացուցիչներն եկան գյուղ, այնտեղ սակավաթիվ բոլշևիկների հետ կազմելու գյուղի ռևկոմը՝ նրանց դիմավորող երիտասարդների մեջ՝ ամենից առաջ կանգնած էր նա՝ ծերուկ Մերկեն։

Մերկեն չքավոր, անզավակ գյուղացի էր, ապրում էր իր պառավի հետ։ Նիհար, ճիլո մարդ էր, փորը մեջքին կպած, բայց նիզակի պես պինդ, ճկուն։ Մի բանում միայն աչքի էր ընկնում շատ — արտակարգ ուրախ էր ու ժիր։

Ինչի՞ գնաց դիմավորելու, արդյոք ի՞նչ էր սպասում նա բոլշևիկներից — ինքն էլ չգիտեր։

Եվ մտքովն էլ չէր անցնում պատկերացնելու, թե ի՞նչ պիտի լիներ այն նոր կյանքը, որ բերում էին նրան։

Թե՛ քաղաքից եկածները և թե՛ դիմավորող գյուղացիները ուշ չդարձրին Մերկեի վրա։ Դե, գլուխը խառն ժամանակ՝ ո՞վ պիտի զբաղվեր մի ծերուկով, որին երիտասարդները տարօրինակ մարդ էին համարում, իսկ ծերերն ասում էին.

— Ցնդած ա։

Ու բանի տեղ չդրին նրան, ոչ էլ նրա արթնացած հետաքրքրության, որով նա առաջին օրերը աչքերը լայն բացած գնում էր ռևկոմի շենքի կողմը և կոմիկ ժպիտով դիտում, թե ինչ են անում, կամ երբ գնում նստում էր առաջին ժողովներում ու միտինգներում ու ականջները սրած ունկնդրում խոսողներին։

Մերկեն շատ էր գնացել քաղաք իր հավերից մի երկուսին ծախելու, բան-ման առնելու տան կարիքների համար։ Հազար անգամ անցել էր քաղաքի շենքերի մոտով, ակումբի, դպրոցների, ցիրկի, թատրոնի պատուհանների տակից, տեսել էր բուլվարում լրագիր կարդացողների, նայել էր աֆիշաներին, տեսել հազար ու մի քեֆ, զվարճություն, տնտղել է մագազինների վիտրիններին

դրած տարօրինակ իրերը։ Բայց այդքան ժամանակ — իր ամբողջ կյանքը — մտնելով քաղաք, երբե՛ք,— բայց երբե՛ք — մի օր, մի ժամ նրա մտքով չի անցել, թե դրանից մի փոքրիկ մաս, թատրոնի, կինոյի մի տեսարան, լրագրից մի լուր, ակումբից մի որևէ զվարճալի բան և վերջապես դպրոցից մի տառ իրեն կարող է հասնել։

Զարմանալի բան։ Մի բոպե չի հարցրել, թե ի՞նչ են դրանք, մտքովն անգամ չի անցել, որ դրանցից ինքն էլ կարող է բաժին ունենալ։

Կատարյա՛լ անգիտություն։

Ո՛չ իրենց գյուղում դպրոց է եղել, ո՛չ էլ ուսումնական մարդ է նայել այն կողմը։ Գյուղ էր իր համար — ոնց որ դրած էր վայրի դաշտում՝ այնպես էլ մնացել վայրի, կորած, իր բախտին։ Մարդիկ ծնվում, ապրում, մեռնում — ահա երեք դեպք, որով բազմազանվում էր այդ գյուղի կյանքը։

Մերկեն շատ էր սիրում հեքիաթ ասողներին։ Օդայի, գոմի ջերմեռանդ այցելու՝ սիրում էր լսել օխտը գլխանի դևերի, ջոջի պառավների, մութ ու լույս աշխարհների հեքիաթները։ Բայց և սիրում էր հարցնել գիտակ ծերունիներին, թե ինչ է աշխարհը, լուսինը, աստղերը։ Արդյոք կանաչը որ բսնում է՝ երկրի քաշը պակասո՞ւմ է, թե՞ ավելանում...

Բայց այդ գոմերից ու օդաներից դուրս՝ ինքն էր ու իր կյանքը՝ մենակ, անուրախ, մոխրագույն, չքավոր։

Եվ Մերկեն չէր մտածում թե արդյոք կա՞ մի այլ կյանք, կլինի՞ իր համար նոր կյանք, կտեսնի՞ որևէ նոր բան, թե այնպես էլ կմեռնի, ինչպես իր պապերը, ապուպապերը, ինչպես իր շրջապատի գյուղացիք։

Ահա թե ինչո՛ւ, երբ նա լսեց, որ քաղաքից մարդիկ պիտի գան ռևկոմ կազմելու՝ դուրս թռավ տանից դիմավորելու։

Նրան եկողներից ոչ ոք չնկատեց, բայց նա նկատեց բոլորին և սկսեց անվրեպ հետևել թե ինչ են անելու նոր մարդիկ։

Նոր մարդիկ չքավոր գյուղացի երիտասարդներին առաջ քաշեցին և սկսեցին նոր կյանքի հիմը դնել։

Մերկեն հետևեց, հետևեց և հանկարծ զարթնեց։ Թունդ կպավ Սովետական իշխանության։ Հասարակական որևէ ժողով լիներ՝ առաջին ժողովականը նա էր։ Ներկայացում դրվեր՝ դեռ մի ժամ

առաջ Մերկեն կտնկվեր օդայի դռան։ Ընտրական պայքարներին Մերկեն մինչև բուկը խրված՝ լողում էր միջին։

Եվ ուրախ էր, ծիծաղում։ Մարդ կմեռներ գյուղում, կպատահեր, որ լուրը կբերեին Մերկեին.

— Մերկե, ախր Սոսոլը մեռավ է՛, խեղճը։

— Ի՞նչ անեմ. սաղ ըլեմ ես, դու, խալիսը։ Մեռավ՝ կթաղենք։

Բայց ամենից շատ սիրում էր, որ գյուղում մի նոր բան էին սկսում։ Ինչ կուզի՝ լինի. թեկուզ ծառատունկի օր։ Կգնար իր բահով պիոներների հետ կփորեր, տնկիները կտնկեր, կերգեր, անեկդոտներ կպատմեր։ Պիոներները կծիծաղեին։ Պատահում էր նրանցից ոմանք էլ ձեռ կառնեին Մերկեին։ Չէր նեղանա։

— է, ի՞նչ անենք. ջահել են, վնաս չունի։ Ի՞նչս պակասեց։

Խրճիթ-ընթերցարանի անխուսափելի հաճախորդն էր։ Երբ կարդում էին՝ խորին ուշադրությամբ կապույտ, պստպստան աչքերը կտնկեր ընթերցողի աչքերին և այնպես կենդանի, զմայլանքով կլսեր չինական, հնդկական, ավստրալիական բանվորների գործադուլների, քաղաքացիական կռիվների մասին, այնպես վառ տպավորությամբ կհամակվեր այդ ամենով՝ կարծես այդ բոլորը կատարվում էր իրենց գյուղում։

— Ի՞նչ ա ասում... Ջան-Յո-Լինը... Վա՛յ, շուն-շա՛ն որդի։ Հետո՞...

Հետո ուրիշ մի լուր կգար կինոյի արագությամբ բաց կաներ մի ուրիշ պատկեր.— անգլիական ածխահատների գործադուլը։ Միևնույն է, դա էլ հետաքրքիր է, կենսալից, զարմանալի։ Եվ Մերկեն.

— Կհաղթեն, չէ՞,— հարցնում էր սրտատրոփ խրճիթվար Մադոյանին, որը բարվոք էր համարում հանգստացնել նրան։

— Հա՛, իհարկե։

Մերկեի դրդմամբ շատ բան էր կարդացվում խրճիթում. նրա պատճառով գյուղացիք հաճախ ստիպված էին իրենց գյուղի շարքացանի, տրակտորի և այլ խնդիրներից դուրս գալ և լսել նաև աշխարհիս երեսին պատահած շատ դեպքերի մասին։

Մերկեն գյուղի անհանգիստ տարրն էր։

Տեսնես ի՞նչ էր երևակայում աշխարհի մասին, ի՞նչպես էր աշխարհը և հիմա ինչ էր զգում, որ այդքան ագահությամբ վրա էր ընկել իմանալու, անվերջ տեսնելու, հասկանալու։ Կարծես

ուղղակի գանձ էր բացվել նրա առաջ, և նա շլացած, ագահ նայում էր ու քանդում, քանդում։

Նա հարց էր տալիս լուսնի խավարման, երկրագնդի շարժումների, գարնան, ձմեռվա, բույսերի, ուրիշ երկրների մարդկանց մասին։ Եվ խրճիթվար Մադոյանն ինքն էլ վարակվեց այդ ծարավի մարդու խուզարկու մտքով, սկսեց հաճույք զգալ բացատրելում, խոսելում։

Գյուղացիք, որ առաջ հորանջում էին, երբեմն էլ տրտնջում՝ հիմա իրենք էլ մի առանձին ճաշակ առան գիտելիքներից։

Մի օր էլ լիկկայան գնաց տեսնելու, թե ոնց են պարապում։

— Հը՞, Մերկե, կուզե՞ս գրագետ դառնաս,— հարցրեց Մադոյանը կատակով։

— Հե՞շտ ա, կըլի՞։

— Դժվար չի։ Ուզո՞ւմ ես նստի տե՛ս։— Նստեց, դիտեց՝ ինչպես են հասակավորները գիրկապ անում։ Հարցրեց ոնց են կարդում, իմացավ, որ բավական շատ տառեր պիտի ճանաչի, որ կարդա։

— Լավ, ասաց,— մի էնպես քյասա ձև չկա՞, երկու-երեք տառով կարդանք։

Չէ, չկար դժբախտաբար «քյասա» ձևը։ Հետ կացավ մեծ ափսոսանքով։

Անձնական կյանք չուներ Մերկեն։

Տունը, իր պառավը, իր արտը, որ կիսբարով ցանում էր մի լծկանատերի հետ — նրան չէր գրավում։

Նա դրսի մարդ էր։ Գեղամիջի, հասարակության։ Այրվում էր ցանկությամբ՝ գործ անել, օգնել — բայց ոչ ուսում ուներ, ոչ հասակ... Նա էլ ուժ էր տալիս ուրիշներին խրախուսելու, առաջ մղելու։ Դա էր նրա գործը։ Եվ քիչ բան չէր։ Քանիսների՞ն նա համոզեց բերեց լիկկայան, գրագետ դարձնել տվեց, համոզեց ժողովներին հաճախել, լսել, իմանալ, սովորել։

— Թող բան սովորեն, մեզ պես մութ չմնան։

Իսկ երբ մի հրահանգիչ, մի ուսուցիչ, մի կոմերիտ ճառ էր ասում, երկար բարակ ունկնդիրներին ման ածում և չէր գտնում բացատրության խոսքը, բանաձևը,— ասենք՝ մի վնասի մասին՝ Մերկեն թրի պես կտրում էր.

— Մինչև սելը չշրջի՝ ճամփեն չի դրստվի։

Կամ երբ մեկը զեղծում էր արել և գյուղացիք խոսք էին անում կոոպերատիվը փակել՝ Մերկեն բանաձևում էր.

— Մի լվի համար կարպետը չեն վառի։

Ժողովը կենդանանում էր, և վճիռը կայացվում։

Երբեմն էլ ձանձրալի էր նա — իր անվերջ հարցասիրությամբ, իր միամիտ ցանկությամբ ամեն բան իմանալ։ Այնպես որ Մադոյանը շատ անգամ էլ կարճ էր կապում, անգամ ջղայնանում։

Եվ շատ քչերն էին մտնում նրա հոգին — տգետ, դարերով չորացրած հոգին, որ անապատի պես ծարավի էր մտավոր ցողի։ Խավար գրի մեջ փակված այդ կենդանի միտքն այսօր տեսել էր պատռվածքը մի նոր առավոտի և մղվում էր դո՛ւրս, դուրս, արևերես։

Եվ նրան կոպտաբար երբեմն կշտամբում էին.

— Է՛, դե զահլա՛ տարար։

Լռում էր։ Եվ ժպտում։ Ոչինչ, կասեն՝ կանցնի։

Մի անգամ նստած էր քարին և մտիկ էր տալիս մարգագետնի վրա մարզանքներ անող պիոներներին։ Մոտ եկան մի քանի գյուղացիներ, նստեցին։

Մերկեն թախծալի ձայնով հանկարծ հառաչեց.

— Լա՛վ բաներ կան, է՛, լա՛վ բաներ։

Գյուղացիք նայեցին նրան մի քիչ հեգնությամբ։

— Դու էլ ի՞նչ ես գլուխդ կորցրել, տնաշեն,— հանդիմանեց մի երիտասարդ գյուղացի,— էդ լավ բաները հո նոր չեն։ Վարժապետին հարցրու. ասում ա՝ Ամերիկա մի ամսում քաղաք են շինում, միջին ապրում, հետո քանդում տանում ուրիշ տեղ։ Էդ լավ բաները վաղուց են եղել։

Մերկեն գլուխը տխուր օրորեց.

— Ի՞նչ ես ասում... էղել են... շատ է՛լ։ Բայց այշի՛, մեզնից ո՞վ էր տեսել խրճիթ, գիր, ուսում, թատրոն, շարքացան, տրակտոր... էս ռադիոն, էս հրաշքները։ Մեզնից ո՞ւմ են ցույց տվել, ե՞րբ են մարդատեղ դրել։

Ու հառաչում է՝ աչքերը տխուր հեռուն գցելով.

— Գնում ես խալխի մեջ՝ բան են ասում, բան են անում։ Աշխարհք չրաղդանի պես վառել են ու է՛է՛, միջին հազար հրաշքներ են շանց տալիս։ Էրազում չտեսածնե՞րս տեսանք։

Մերկեի աչքերը վառվում են երազով լի։

Հետո նորից կրակվելով՝ գլուխը թափ տվեց.

— Է՛է՛, ափսո՛ս... լա՛վ բաներ արին. շա՛տ լավ բաներ արին, մենակ մի բանում սխալվեցին։

— Սխալվեցի՞ն,— հետաքրքիր մտիկ տվին կոմերիտները...

— Բա՛, մի բանում սխալվեցին, որ ուշ արին։

— Ի՞նչն ա ուշ, ի՞նչ ես ասում։

— Բա ի՛նչ ա ուշ չի...

Ու էլ չի նայում խոսակիցներին, որ տեսնի թե ինչպես են ժպտում իր այդ խոսքերի վրա։ Առարկում են, բայց հուզված է, չի լսում։ Այդ միտքը մեխի պես ցցված է գլխի մեջ։

Ու տխուր մահոտ աչքերը հեռուները գցած՝ կրկնեց.

— Շա՛տ ուշացան, շա՛տ ուշացան, շա՛տ, է՛... Շո՛ւտ պտի սկսեին։

Մի աշնան երեկո Մերկեն մեռավ։ Մեռավ ամենահասարակ կերպով։ Միայն մի զարմանալի բան պատահեց. նրան թաղելու եկան պիոներներն ու կոմերիտները։ Թաղեցին քաղաքացիական կարգով։

Բավական էլ ծիծաղեցին՝ կրկնելով իր խոսքերը.

— Մեռավ՝ մեռավ, ես սաղ ըլեմ, դուք սաղ ըլեք։

Հետո հիշեցին նրա խոսքը՝ «Ուշացան, շա՛տ ուշացան»։ Ծիծաղեցին բավական։

Այո, Մերկեն չէր նկատել, որ աշխարհը լցվում է նոր կյանքերով որոնց համար իսկի՛ էլ ուշ չէր, ու դեռ շատ ծիլեր կան, որոնց համար դեռ շատ վաղ է...

1927

ՀԱՆԳՍՏԻ ՏԱՆԸ

Ամառը՝ լիալեցուն մի գետ՝ ստինքներն ուռցրած հոսում է, ծավալվում տիրականորեն։ Հողը պտղաբերում է, ու կատաղել է, խանդում է, խելագարվում։ Օդի մեջ հասունանում է արևի կենարար հյութը — մի բուրալից ջերմություն, որ շնչառության հետ ըմպվում է, երակներն ուռցնում, տանջում կյանքի ուրախությամբ։

Ծանր հևում է բերանաբաց ձորը։ Մինչ հեռվում թևատարած արծիվների պես ճախրում են լեռները։ Շոգ է։ Եվ անտառը աչքը կպցնում է ծուլորեն։

Անտառի կանաչ դռների մոտ մի ճերմակ տուն — բանվորների հանգստի տունը — ինքն իսկ հանգստանում է պարտեզով գրկված։

Խոհանոցից հանգիստ չխկոցներ են գալիս միայն դափնետերևի բուրմունքի և մտի ճենճահոտի հետ։ Եվ ուրիշ ոչինչ — ամենքը քաշվել են ուր-որ։

Տարօրինակ սովորներ են անտառում։ Հագեցած մթություններ։

Ահա մի բացատ՝ արևի ոսկի լիճը մեջը։ Լուռ է այնտեղ ևս։ Մեղուներն են միայն—պստլիկ աերոպլաններ — որ բզզալով ծառերի արանքում՝ օդից հետաքրքրում են ծաղիկները։

Այդտեղ, հենց այդ քնքուշ ծաղիկների ու խոտերի մեջ են հաճախ գալիս վեր թափվում բանվորները՝ մետաղի թագավորությունից դուրս եկած կոպիտ, ծուռ ու մուռ էակներ և սկսում են ծխել ու ցածր խոսել։ Բրոնզի թափվածքների պես հանգիստ ու մռայլ են նրանք։ Թողել են աշխատանքի ռազմաճակատը առ ժամ, եկել կրակի երկրորդ գիծը։

Կհանգստանան, ու էլի՜— հարձակում։

Նրանց հետ Սարգիսն էլ է եկել։ Եկել է քաղաքից — այսինքն

տպարանից, որովհետև նրա քաղաքը տպարանն է, այնտեղ է անցել իր ողջ կյանքը։

Եվ հիմա եկել է ամառանոց հանգստանալու։

Անսովոր նորություն։

Վարպետ գրաշար է։ Լավ է «քշում ձիու պես»։

Ծանր էր շարժվում միայն նրա ընտանիքի գործերը։

Հայր, մայր, քույր, եղբայրներ, սրանց երեխաներից բավականին,— ինքը մեջը 55 տարեկան՝ ամուրի։ Գեղեցիկ տղամարդ էր։ Հիմի ներկը տված պատկեր է, տեղ-տեղ նախշուն, տեղ-տեղ խունացած։ Ասենք գեղեցկության հետ հաշիվը վաղուց է փակել, այսինքն՝ հաշիվ չի ունեցել։ Հա սրան պահի, նրան հագցրու, մեկին թաղի, մյուսին պսակի։ Նորոգելով հորը, կարկատելով մորը — խարխո՜ւլ շինություններ — մինչև քույրերին ամուսնացրեց, ճամփեց — մտիկ տվեց, որ աշխարհը ուրիշ բան դառավ։ Հետո էլ պարտիական կազմակերպությունը, բանտ, բան։ Ռևոլուցիան էլ եկավ Թևից քաշեց գցեց կատաղի շուրջպարի մեջ։ Եվ ահա աչքը բացեց որ՝ տարիները չկան։ Մերացավ, այնպես, ոտի վրա, ի միջի այլոց։

Հիմի լավ է։

— Հը՜, Սարգիս, «շարում» ե՞ս,— կատակում են երիտասարդ ընկերները։

— «Քանդում եմ» դեռ,— ասում է Սարգիսն ու աչքով անում, «հին կարգերի» կողմն իբր թե...

Ու այս «շարում ես, քանդում ես»-ը կատակի խոսք էր դառել նաև հանգստյան տան բանվորների համար։

Հիմի Սարգիսը բնության հյուրն է։

Ահա նստել է անտառի բացատում, մեջքը հաստարմատ ծառին՝ շուրջն է դիտում։ Բնությունն աշխատում է զարմանալի հոգածու հաշվով։ Տո՜ւմդ չքանդվի, ա՜յ քեզ տնտես։ Ի՞նչ էլ հարուստ է անիծածը։ Բաց է արել պահեստները, լցնում է հազար ու մի բարիքով։ Մառանները տնքում են. երկրամեջի նկուղներում դրած է մետաղեղենը, քիմիական բաղադրությունները, լույսը, նրա մակերևույթի վրա աճում է հացը, պտուղը, նյութվում հագուստը...

Իսկ վե՜րը։ Ի՜նչ անսպառ լույս ու ջերմություն։ Ա՜յ լամպ։ Սրա նավթը ե՞րբ կհատնի որ...

Սարգիսը նոր է նայում այս ամենին։ Տպարանից առաջին անգամ եկել է բնության տունը։ Հիմի նայում և հասկանում է, որ սա իր տունն է։ Բայց լավ չի զգում։ Ինչ-որ շշմածի պես է։ Ինչպես նոր շոր հագած մարդ, որ ինչ-որ անհարմար է նստում — վեր կենում։ Մի քիչ խանդաղատված է իրեն այստեղ ուղարկողների հանդեպ։ Հասկանում է, որ լավ բան է «ընկերներ» ասածը։ Ջհանդա՜մը, քե՛ֆ արա։ Ո՞վ է խանգարում հիմա բարիքներ աշխատել, բարիքներ վայելել։ Գիտե, իհարկե։ Բայց մի ծանր հոգնություն, քարի պես նստած է նրա ուսերին։

Իր անցյա՜լը... Ո՞ւր կփախչես նրանից...

Եվ ի՞նչ էր իսկապես այդ անցյալը։

Քառասուն տարի — առջևը տառերի կասսա, կողքին մի պատուհան՝ կեսը գետնի մեջ։ Եվ նա շարում էր ու կողքանց նայում պատուհանից դուրս։ Ահա այդ պատուհանն է եղել շարունակ իր և կյանքի միջև։ Այնտեղ, դրսի աշխարհքից — մայթից միայն մարդկանց ոտներ էին երևում։ Քայլում էին այդ ոտները, քայլում արագ, դանդաղ։ Քայլում ամեն տեսակի ոտներ։ Երբեմն էլ հրաշալի կոշիկներ նազելի ոտներով։ Ի՞նչ կյանքեր կային այդ գեղեցիկ ոտների մեջ։ Եվ այդ բոլորը գալիս, անցնում, գնում էին։ Ու էլի գալիս, անցնում, գնում։

Ինչպես որ իր ձեռին էլ տառերը՝ գալիս, շարվում, գնում էին։

Դրսևում կյանք կար, բնություն, ամառանոց, արև։ Բայց ինքը միայն շարում էր։ Շարում էր տառեր, և մեքենայաբար, առանց ուշ դարձնելու իմաստի վրա։

Ի՞նչ էին ասում այդ տառերը...

Իսկապե՜ս որ... Ի՞նչ էր իմաստն այն ամենի, որ նա շարում էր քառասուն տարի։ Միտը չի։ Ո՞վ է իմանում։ Ինչ-որ պատկերներ, վեպեր, ոտանավորներ։ Մինը սիրում էր, մյուսը ձանձրանում և որոնում, և երրորդը կարոտում էր, չորրորդը երջանիկ էր։ Բնություն, գարուն, սեր. սեր, բնություն, գարուն... Ուզե՞ց ինքն էլ սիրել։ Միտը չի։ Ժամանակ չկար։

Նա շարում էր, շարում, շարում։

Իր կողքով էլ, պատուհանի մոտով, անցնում էր աշխարհքը։ Անցնում էր գեղեցիկ աշխարհքը։ Եվ ինքը նայում էր կողքանց, այնպես, աչքի տակով։

Ու շարում, շարում...

Եվ ահա հիմա, անտառի բացատում, ընկուզենու տակ ինչ-որ հեռավոր բան է հիշում։ Հեռվում, շատ հեռվում հիշողության մեջ մի բան է խլրտում։ Կամաց-կամաց հիշում է թե ինչ։

Ինքն աշխատում էր։ Պատուհանի մոտ կանգնեց աղջիկների մի խումբ, և որպեսզի լավ տեսնեն ներսը, հետ-հետ գնացին դեպի փողոց։ Բոլորն էլ հասարակ՝ ինչպես ծաղիկներ։ Չքավոր թաղերից էին։ Տպարանում ոչ ոք չկար այդ պահին։ Աղջիկները շարաճճի հետաքրքրությամբ ներս նայեցին։ Սարգիսը կողքանց մտիկ տվեց նրանց։ Մեքենական հայացք։ Աշխատանքը կլանել էր նրան։ Պետք է «մեքենայի տակ գցեին»։ Բոպե ժամանակ չկար։ Մոմոում էր, բարձրաձայն հեգում ու շարում էր։ Բայց աղջիկները կանգնած էին դեռ։ Ծիծաղում էին։

— Վա՜յ, գիրք են տպում։

Սարգիսը նայեց նրանց և մի վայրկյան աչքը կանգ առավ նրանցից մեկի աչքերին։ Սևորակ, շեղ աչքեր էին, պարսկական նկարների մեջ պատահող, այծյամի աչքեր։

Աղջիկները նայում էին տպարանի առարկաներին ու կատակում։

— Ի՞նչ գեղեցիկ մեքենա է։

— Ինքն է՛լ։

Մինչ Սարգիսը կնայեր՝ աղջիկները քրքջացին ու հեռացան շարաճճի առուների պես։ Միայն «այծեմնիկը» մի անգամ էլ հետ դառավ, ատամներով ծիծաղեց ու «ծիկ» անելով փախավ։

Ի՞նչ եղավ այդ աղջիկը։ Միտը չի։ Ժամանակ չեղավ այդ մասին մտածելու, սկսելու սիրե՛լ մի քիչ. իր շարած տառերի տակին կյանք կար — գլխի չընկավ։ Քառասուն տարի այդ կյանքը ներս էր նայում պատուհանից — այն աղջկա պես։ Բայց ինքը կողքանց նայեց ու կորցրեց։

Թռա՜վ կյանքը ծտի պես...

Եվ հիմա աչքերը խոտերի մեջ՝ նայում է։ Սիրտը լցված է։ Ահա տարօրինակ միջատներ մագլցում են ցողունների վրա և հասնելով ծայրին՝ հանկարծ թրթռում են ու նետիկների պես սլանում օդի մեջ։ Հազար պստիկ մեղուներ ու հսկա բզեզներ ձգում են իրենց ջութակները։ Մրջյունները կրում են, հա կրում։ Ի՞նչ հապճեպ, ի՞նչ շտապանք՝ ապրել, ապրել։ Եվ աշխատո՞ւմ են, թե՞

ապրում։— Երկուսն էլ։ Արևը թափում է նրանց վրա իր նարնջագինին, հարբեցնում մինչև գժություն։

Գինով է Սարգիսը... Երազում է։

Ի՞նչ կլինի, ինչ կասես՝ եթե կարելի լիներ հետ կանչել նրան— այն ծիծաղով լի աղջկան։ Եվ ի՞նչպես ուշ չդարձրեց նրան։

Տեսնես որտե՞ղ է հիմա...

Հագի՛ր հիմա երկաթե տրեխներ, ա՛ռ ձեռդ երկաթե գավազան, գնա ընկի՛ր աշխարհքն աշխարհք, փնտրի՛ր որ գտնես նրան։ Լո՛ւր ուղարկիր, թող գա։ Այսօրվա պես, այն օրն էլ հետը բերի։

Մի՞ վայրկյանում կորցրեց նրան ասեղի պես։

Տառերի պես շարեց ու քանդեց կյանքը ուրիշների համար և կյանքից միայն տառերն ընկան ձեռը։

Եվ կոշտեր մատների վրա...

Սարգիսը հառաչեց։

Արդեն ճաշի զանգը տվել էին։ Չէր լսել։ Նստած էր նա ծառի տակին, հիսունհինգ տարվա կուզը ուսին և աչքերը չռած, կարծես ուզում էր դուրս պրծնել այդ բեռի տակից։

Անցյալի՞ բեռի։

Եվ ի՞նչպես ապրել է ուզում նա իր երիտասարդ ընկերների նման։ Հիմա կարող է, հիմա ո՞ւնի իրավունք։

Ո՞ւշ հասավ «Անիրավը»։

— Սարգի՛ս, Սարգի՛ս,— ձայն տվին նրան,— ճա՞շ է, արի՛։

— Հը՞, ի՞նչ կա,— զարթնեց նա։

— Արի է՞, ճաշ է։

Մի ձայն կատակեց հեռվից.

— Հը՞, «շարում ե՞ս»։

— «Քանդում եմ»,— մռմռաց նա ու վեր կացավ։

1927

ԱԲԴՈՒԼ

Աբդուլը Պարսկաստանից եկել մտել էր Երևանի բամբակազտիչ գործարանը սև-բանվոր։

Հետը բերել էր մի երիզավոր արախչի, մի կավագույն ջվալե վերնաշապիկ, լայն թողկավոր կաշվե գոտի և իր առողջակազմ հասակը։

Գործը պարզ էր։ Բաց անել մամլող մեքենայի կափարիչը, բամբակի հակը հանել մեքենայի միջից։ Իր ընկեր Ահմադն ու Գրիգորը կարում են հակը, իսկ Ռիզան մեկ-մեկ տանում է, բարձում վագոնները։

Ութ ժամ էր գործը — որոշ դադարներով հացի ժամանակ։ Արտաժամյան առանձին։ Դա մեծ տարբերություն էր Պարսկաստանի տաժանակիր աշխատանքների դիմաց։ Ի՞նչ ութ ժամ, ի՞նչ տասնհինգ ժամ։ Կյանքի կեսը եղել է դաժան խանի բարեկեցության համար, մյուս կեսն էլ արտաժամյա դաժանք՝ որպեսզի փրկի իր դժվարին գոյությունը մահի ճանկերից, այն էլ վերջն էլի խանի բարեկեցության համար։

Այստեղ գործն ուրիշ տեսակ էր։ Նախ նա դաժանք չէր, այլ աշխատանք։ Ապա և այդ գործը նրան բարեկամ էր և ոչ այնպիսի դաժան թշնամի, որ լկում է, ծեծում, հյուծում, տանում գերեզման։

Աբդուլը հետևում էր բամբակի կյանքին։ Ահա նա ջվալներով բերվում, թափվում է գործարանի բակը։ Այնտեղից գործարանի մի ծայրում ծծող մեքենան քաշում է բամբակը դեպի ջին մեքենաները, որոնք բամբակը զատում են սերմից։ Սերմը գնում է ներքև, իսկ բամբակն ուրիշ բաժին, ու մամլվում է, հակ դառնում՝ պատրաստ՝ վագոնները բարձվելու։

Ռիզան ու մի ուրիշ բանվոր բամբակի հակերը կրում են, հա կրում վագոնները, որանք էլ տանում են Լենինական, Մոսկվա։

Գոռում են մեքենաները ջիբերի բաժնում, դղրդում։ Բանվորները մեքենաների շուրջը պտտվում են, գալիս շարունակ մի բան դրստում, ստուգում։ Նրանք միշտ լարված են, մի քիչ գրգռված, փոշոտ։

Սկզբում այնպես թվաց Աբդուլին, որ բանվորներն իրար չեն սիրում։ Նրանք վիճում էին, կռվում իրար հետ, խռովում, երբեմն էլ գոռում իրար վրա, կոպիտ խոսքեր ասում — բայց զգում էր, որ նրանք էլի ինչ-որ հաշտ են, սիրում են իրար։ Գլխավորը հարազատ են իրար։ Կան ծույլեր, գործալիքներ, սիմուլյանտներ — սրանցից մեկին հեռացրին գործից։ Դրանց չեն սիրում, նախատում են, խրատում, ուղղում։

Սկզբում տարօրինակ բաներ շատ կային։ Բանվորները՝ տերության գլուխ — լսել էր Պարսկաստանում, չէր հավատացել, անգամ ծիծաղել էր վրան — բայց երբ եկավ՝ տեսավ, որ իսկապես այս երկրի շահը, խաներն ու բեկերը ընկել, մնացել են մուշանները։ Եվ նոր եկած ժամանակ խորթ ու խեթ էր պահում իրեն։ Ի՞նչ գործ ունի սրանց հետ. կաշխատի, մի քանի թուման ետ կգցի, կգնա իրա համար տուն՝ Պարսկաստան։

Բայց հետո աննկատելի ընտելացավ — մնաց։ Ոչ ոք իրեն խորթ չէր նայում, ինքն էլ մոտեցավ։

— Մի՛ վախի, Աբդուլ,— թակեց մի օր նրա ուսը ձեթի բաժնից քուսպ հանող Մարգարը, ձեթոտ, զվարթ կոմերիտը,— էս ամառ համ ռոճիկդ է ավելանալու, հա՛մ էլ գնալու ես մի երկու շաբաթ ման գաս։

Ու ձեթոտ բռունցքը քսեց Աբդուլի այտին։ Սա բռնեց նրա թևը ու մի հատ կատակով բամբեց գլխին։

Բայց Աբդուլին դուր եկավ այս հոգատար խոսքը։ Եվ որտեղի՞ց Աբդուլին ամենքը գիտեն ու առանց իր պահանջի ո՞նց են հոգում նրա մասին։ Ինչպե՞ս է, որ հետաքրքիր են, գիտեն վաղօրոք, թե ե՞րբ է գնալու հանգստյան։

Ժողովներում նրանցից շատերին տեսնում էր Աբդուլը, մենակ չէր խոսել — բայց տես իրեն ուշադրությունից չեն հեռացնում։

Այսպիսի բաներով նրա սիրտը տաքանում էր գործարանի վրա։

Ու մնաց։ Պարսկաստան դառնալը հետաձգվեց։

Մի ժողովում էլ նախագահը դիմեց Աբդուլին.

— Հը՞, ի՞նչ կասես, ընկե՛ր Աբդուլ, ինչպե՞ս անենք, գործից ուշացողներ կան, արտադրությունը տուժում է։

Աբդուլը մի քիչ շփոթվեց, բայց պատասխանեց.

— Գործից ուշացողը ո՞ւմ ա վնաս բերում — իրա՛ն։ Մենք առաջ խանի ու բեկի գործն ենք արել ու չենք ուշացել, բա հիմի ամոթ չէ՞, որ մեր գործից ուշանանք։

Բանվորները չէին սպասում այս խոսքը։ Նրանք, որ ժրպտում էին՝ հիմա ազդվեցին, լրջացան։

— Դրուստ ա ասում, Աբդուլը... Ամոթ, խայտառակություն ա, պետք ա վերջ տրվի ուշանալուն։

Եվ Աբդուլը, որ դեռ առաջներում զարմանում էր արտադրական հանձնաժողովի ընդլայնած խորհրդակցություններից, դրած հարցերից՝ կամաց-կամաց սովորեց, որ — էլ ուրիշ ի՞նչ կերպ պիտի լինի,— գործարանը ուրիշ տեր չունի, տերերը իրենք են, իրենք էլ պիտի հոգան նրա մասին։

Սովորեց նաև, որ այստեղ ոչ ոք սեփական գործ չունի, որ մենակ հոգա։ Այստեղ բոլորը պիտի հոգան։ Դա անչափ հեշտ է — ո՞րտեղից որտեղ... Եվ հետո՝ այստեղ ոչ ոք այնպես անտեր չի գործի մեջ, ինչպես Պարսկաստանում, ուր՝ չոքեցի՞ր գործի մեջ, ընկա՞ր — վերջդ է, մեռի՛ր։ Ահա Պարսկաստանը։

Այստեղ ամբողջ գործարանը՝ բամբակի բաժնից մինչև ձեթի, սապոնի բաժինները, գործարանի բակը ուրիշ մասերով՝ մի ընտանիք է։ Աբդուլն իրեն զգում է մի մեծ տան գործի մեջ, ինքն էլ այդ տան անդամը, ուր կաշխատի, կապրի, կստանա իր բաժին կյանքը։ Միայն թե լավ աշխատի։ Եվ Աբդուլն աշխատում է։ Ինչպե՞ս չաշխատի։ Սա էլ հո խանի կալվածքը չէ, այն կալվածքը, որ հղփացնելով խանին՝ սովամահ էր անում մշակներին։ Եվ Աբդուլը նոր հասկացավ, որ ինքն այս երկրում ոչ թե օտար չէ, այլև շատ բնիկներից ավելի հարազատ է։

Բայց սրանում նա համոզվում էր այն օրերին, երբ մասնակցում էր մի քաղաքական ցույցի, բողոքի, տոնակատարության։ Այստեղ Աբդուլը նկատում էր շատ ուրիշ բաներ։ Որ այս իրար հետ գզուզ անող բանվորները շատ են կուռ միացած, նրանք կանգնած են դրսի թշնամու դեմ՝ իր լսած Անգլիայի, Ֆրանսիայի շահերի, խաների ու հարուստների դեմ։

Աբդուլը պարզ տեսնում էր, որ այս իր գործարանը կապված

է քաղաքի մյուս գործարանների հետ, քաղաքինը՝ մյուս քաղաքների հետ և բոլորի աշխատանքի արդյունքը մանր գետերի պես հոսում, լցվում է մի մեծ արդյունքի՝ ծովի մեջ և այդ ծովը պրոլետարական պետությունն է։

Այդ ցույցերի ժամանակ Աբգուլն զգում է, որ միլիոնավոր ձեռքեր բռնել են իրեն, բարձրացնում։ Աբգուլն էլ չի ընկնի, Աբգուլն էլ մենակ չի։

Եվ արդեն անցնում է մի քանի տարի — Աբգուլը դեռ չի վերադառնում հայրենիք։ Ու միտք էլ չունի կարծես։

Մի գիշեր Աբգուլը զարթնեց անսովոր ձայներից։ Գլուխը բարձրացրեց բարձի վրայից, ականջ դրեց։ Օդի մեջ, բարձրում անհանգիստ, գանգատավոր ձայներով կռռում էին կռունկները։

— Կռլո՜ւ, կռո՜ւ...

Այսինքն՝ գարուն եկավ։

Այնպե՜ս անուշ էր այդ գանգատավոր ուրախությունը Աբգուլի համար, որ նա լցվեց ու մրմնջաց։

— Ջա՜ն, ջա՜ն...

Եվ իսկույն ջինջ պատկերացրեց իր հայրենի գյուղը. ահա՜ կարծես մտավ իրենց փոզոցը, ահա՜ բաց է անում տան դուռը։

Սիրտը մղկտաց։ Աբգուլը չքնեց այդ գիշեր։

Այնուհետև քանի գարունը լցվեց Երևանի այգիներում, քանի փթթեցին ծառերն ու ծաղիկները՝ Աբգուլն սկսեց հաճախ հիշել իր հայրենի տունը, գյուղը։

Հիմի այնտեղ ծաղկում են այգիները, երկնակապույտի մեջ կրակների պես պլպլում են ոսկեշող ծիրանները, թավուտներում ծիծաղում աղբյուրները և տերևների ու վարդերի արանքներում սահում նազելի դեմքեր։

Գնա՜ արդյոք այնտեղ։ Բայց իրեն ի՞նչ այդ բոլորից։ Այն այգիների և ո՛չ մի վարդը, և ո՛չ մի բուռ անկյունը, և ո՛չ մի ժպիտը իրենը չէ։

Իրենն է միայն հողե երկար պարիսպներից շատ դենը փչի դաշտի մեջ երկու հողաթումբ, որի տակ քնած է իր դեռափթիթ Ֆաթման, իր տասներկու տարեկան Քյարամի հետ։ Երկուսն էլ սովից բարակեցին, մոմի պես հալվեցին, մինչև որ մահը փչեց նրանց վրա և երկու վտիտ լույսերի պես մարեց։ Դա այն դաժան տարին էր, երբ մի կողմից խանը ցորենը հավաքում էր ամբարում, մյուս կողմից՝ սովալլուկ ժողովուրդը կոտորվում էր փողոցներում, պատերի տակ, սողալով տներից դուրս, որ ներսը չմնանի անօգնական։ Եվ Աբգուլի ո՛չ մի բարեկամը, ո՛չ մի հարազատը չփրկվեց մահից։ Նա միայն փրկվեց՝ փախչելով գյուղից, երբ թաղել էր արդեն իր կնոջն ու որդուն։

Ու քանի Աբգուլը սովորեց, ընտելացավ գործարանի կյանքին, քանի թեթևացավ նրա վիճակը, կարծես դուրս եկավ խոտադաժան, տատասկոտ անապատից՝ այնքան ավելի խորացավ նրա սրտում այս վերքը — սովամահ կինն ու որդին։

Դաղարի ժամերին, երբ նստում էր հաց ուտելու՝ սկսում էր մտածել, որ այդ հացի մի երկու պատառը կարող էին փրկել նրանց կյանքը։ Ահա՜, հենց որ նրանք մեռան սովից — գտնվեց նրանց փրկությունը։ Հիմա, հացն էլ կա, մարդկությունն էլ կա։ Եվ երբ հացն էլ կա ու մարդկությունն էլ՝ չկա ոչ Ֆաթման, չկա Քյարամը, եղնիկի խոշոր աչքերով թախծալի Քյարամը։

Աբգուլի սիրտը ծակում է մի խորին թախիծ, և նա վեր է թռչում։

Արդեն իսկ գործի էլ ժամ է։

Դա՜նգ, դրա՜նգ, դղրդում են մեքենաները, փոկերը շաչում, վեր սողում սլացիկ օձերի նման։

Ներսը ջիների շուրջը պտտվում են Աբգուլի ընկերները՝ Գրիգորը, Սիսակը, Արտաշը, Հայրոն։ Նրանք աշխատում են։ Աբգուլն էլ։

Բայց ավելի վճռական ռիթմով, հուժկու և հաղթական աշխատում է մեքենան.

— Դա՜նգ, դրա՜նգ...

Աբգուլը մտածում է, մտածում և սկսում է երգել, երգում է խզխզացող ձայնով։ Նրա երգը նման է վիրավոր կռունկի, որ կռլնկում է գանգատավոր շեշտերով։ Կարծես այդ երգը պոկվելով Աբգուլի սրտից՝ կտրատում է իր բույնը և նրանով թաթախված, արյունոտ թռչում օդի մեջ։

Տխուր է այդ երգը հին դարերի նման։ Դա Պարսկաստանն է — կուտակված վիշտ։

Երգում է Աբգուլը և ձայնը խառնում մեքենաներին։

Դա՜նգ, դրա՜նգ — զլում է, կատաղում մեքենան, խլացնում Աբգուլին։ Կարծես չի ուզում լսել նրան։ Կանոնավոր, հաշված,

հուժկու դղրդոցով սաստում է Աբդուլին, ստիպում աշխատել, լարվել, պայքարել, երգել ուրիշ երգ — պայքարի ու հաղթության հավերժական երգը։

Եվ Աբդուլը տարվելով այդ դղրդոցին՝ լռում է ու սկսում է ճիգ թափել։ Հետո մոռանում է։

Մի օր ինչ-որ բանի համար գնացել էր վարչության գրասենյակը։ Այնտեղ նրան մի տասը րոպե պահեցին։

Հանկարծ մի հարայ լսվեց գործարանի բակից։ Սուլիչը ոռնաց ժանգոտ ձայնով։ Ջարագուշակ ազդանշան։

Աբդուլը դուրս թռավ գրասենյակից և վազեց գործարանի բակը։

Բամբակի մամուլ-բաժինն այրվում էր։ Աբդուլը շանթահարվեց — ի՞նչ բաժինը։ Էլ բան չհիշեց, թռավ։

Ծուխը դուրս էր վազում դռներից ու պատուհաններից՝ սև ու երկար մորուքը դուրս քաշելով այնտեղից։ Իսկ ներսից դաժանաժպիտ նայում էր բոցը։ Նրա շեկ թևերի մեջ խլրտում էին բանվորների սիլուետները, որ փակվել էին բամբակի հակերի ու կույտերի հետև։

Վտանգը մեծ էր և սպառնում էր ոչ միայն գործարանին, այլև անմիջապես այն բանվորներին, որ ներսն էին մնացել փակվել բամբակների կույտերի մեջ։ Հայտնի չէ մնացել էին հանգցնելո՞ւ, թե արգելվել էին այնտեղ։

Բանվորները կատաղի օղակով բռնեցին շենքի մուտքը։ Նրանք շփոթված ու զայրացած՝ քլունգներով, բահերով հարձակվեցին հրդեհի վրա։ Դա մի կատաղի հարձակում էր թշնամու վրա։

— Ո՞վ է ներսը... ո՞վ է ներսը։

— Գրիգորն է, Ռիզան, Ահմա՛դը...

— Դե պրծեք, շո՛ւտ, շո՛ւտ,— գոռգոռացին նրանք ու վազեցին ներս։

Բայց բոցերը լիզեցին նրանց, և նրանք ընկրկեցին։

Հանկարծ Աբդուլը մի ջվալով դեմքը վահանած ներս քցեց իրան։ Բանվորները միաբերան գոռացին, բամբակի ծանր ծուխը խսկույն կլանեց նրան, ու բոցերն սկսեցին համբուրել նրա դեմքը։ Նա կորավ հակերի հետև։ Հանկարծ ցավից ծղրտաց, ջվալը

կպցրեց դեմքին ու թռավ բանվորներից մեկի՝ Գրիգորի վրա, որ բամբակի ծխից խեղդված, իրեն կորցրել՝ դես-դեն էր զարկվում թռչունի նման։ Նա, ըստ երևույթին, խեղդվում էր. Աբդուլը խլեց նրա թևը և սկսեց գերագույն ճիգով քաշել նրան հակերի արանքից։ Նա ոչինչ չէր լսում, չէր մտածում։ Միայն մի բնազդական ուժ նրան մղում էր դեպի դուռը։ Հանկարծ ոտքը դեմ առավ մի հակի, և նա վայր ընկավ։ Գրիգորը խելահեղ բոթեց նրան և իրեն գցեց դռան մոտ։ Բանվորները դուրս քաշեցին նրան։

— Աբդո՛ւլը, Աբդո՛ւլը...

— Շո՛ւտ, հասե՛ք...

Գոռգոռոցը սաստկացավ։ Եվ այդ րոպեին, երբ բանվորները ներս էին վազում և դուրս թռչում կրկին՝ կոմերիտ Մարգարը կատաղի, վայրենի մի շարժումով, որ նման րոպեներին է միայն պատահում՝ թռավ ներս ու հարձակվեց Աբդուլի վրա, որ դեմքն աշխատելով թաքցնել հակերի արանքներում՝ պարզապես կորցրել էր իրեն։ Ըստ երևույթին նա փնտրում էր Ահմեդին ու Ռիզային։ Մարգարը շնչելով բամբակի ծուխը և այրվածքներ ստանալով զգաց, որ նրանք արդեն այրված են։ Հարձակվեց Աբդուլի վրա, խլեց նրա ոտքը և սաստիկ թափով քաշեց դուրս։

— Տղե՛րք, շլանգները շո՛ւտ, այրվեցին—գոռում էին բանվորները։

Արդեն հրշեջ հեղուկներն ու շլանգներն սկսեցին հանգցնել հրդեհը։ Բանվորները քիչ-քիչ ներս խուժեցին՝ հաղթահարելով հրդեհը։ Բայց նրանք ուշացել էին։ Ահմադն ու Ռիզան այրվեցին։ Ու մեծ դժվարությամբ հանգցրած հրդեհը չքանալով՝ թողեց իր ահռելի հետքը—ծխացող, թեժ առաստաղն ու հատակը, բամբակի սևամոխիր հակերը, որոնց մեջ թաղված մխում էին Ահմադի ու Ռիզայի սև դիակները։

Երբ փաթաթում էին Աբդուլի այրվածքները՝ նա ավելի ընկերների ցավից էր ծղրտում, քան դեմքի ու ձեռքերի վերքից։

Վիրավորներին՝ Մարգարին և մի քանի բանվորների, բաց թողին ամբուլատորիայից՝ պատվիրելով ամեն օր այցելել, իսկ Գրիգորին ու Աբդուլին դրին հիվանդանոց։

Գրիգորի այրվածքները ծանր էին։ Պակաս չէր և Աբդուլինը։ Նրանք դեռ երկար պիտի պառկեին։

Աբդուլը ապաքինման մասին չէր մտածում։ Նրան տանջում

էր Ահմադի ու Ռիզայի սևացած դիակների պատկերը։ Ու երբ տխուր, պարապ, անկողնում պառկած նա մտածում էր նրանց մասին, զգում էր, որ իր հին վիշտը՝ Ֆաթման ու Քյարամը՝ իրենց մոմեղեն դեմքերով ու եղնիկի թախծոտ աչքերով՝ ընկղմեց ավելի խորը, նրա վրա, նրա տեղ դրվեց նոր, ուժեղ մի վիշտ՝ Ահմադն ու Ռիզան։

Միակ մխիթարությունն իր կողքին պառկած Գրիգորն էր, որը թեև տնքում էր, բայց կյանքի էր գալիս։ «Էհ, կյանք էր, ազատեցի» — մտածում էր Աբդուլը։ Ու մի օր էլ հարց ծագեց իր մեջ, թե ի՞նչ գործ ուներ Գրիգորը մամուլ-բաժնում, երբ նա ջին մեքենաների վրա է բանում։ Այս միտքը կայծակի նման լուսավորեց Աբդուլի աչքում մի ուրիշ բան, որ նա չէր տեսել մինչ այդ։

— Արա՛, դու ի՞նչ բան ուներիր մեր բամբակների մեջ,— հարցրեց Աբդուլը Գրիգորին։

— Գոռոցներն իմացա՝ թռա ու...

— Հա՛, է՞դպես... — լեզուն կծեց Աբդուլը և լռեց։

Ապա հառաչեց հանգիստ ու խաղաղ և խանդաղատանքով մտիկ տվեց Գրիգորին։

Նրա սիրտը թեթևացած էր արդեն։

1928 թ.

ԱՆՀԵՏԱՁՈՒՄ

— Երրորդ գործողության դեկորները պատրաստ չեն,— զեկուցեց ադմինիստրատորը դիրեկտորին։

— Ինչպե՞ս... վաղը ներկայացում է,— անհանդստացավ դիրեկտորը։— Ո՞ւր է Պետիկը։ Կանչեցեք իսկույն։

— Պետիկը չկա։

— Հիվա՞նդ է։

— Ոչ։ Մի ժամ առաջ բեմում էր։

— Նայեք, տեսեք, շենքի մեջ կլինի։ Ո՞ւր պիտի գնա...

Ադմինիստրատորը գնաց։

— «Պետիկը չկա»,— խոսեց կարծես ինքն իրեն դիրեկտորը,— այս ժամին Պետիկը բացի թատրոնից ուրիշ տեղ չի կարող լինել։

Պետիկը հարվածային և երկու անգամ պարգևատրված, թատերական աշխատող, նկարչի օգնական, դեկորատոր։ Ամենքի աչքի առաջ են նրա սև, նիհար դեմքը, ջլուտ, նուրբ կազմվածքը, գանգուր մազերը և թախծալի անուշ աչքերը։

Առավոտից մինչև կեսգիշերը նա շրջում է թատրոնում, կուլիսների միջին նկարում է, սարքում։ Հետևում է պիեսների պատրաստությանը, քննում է մակետները, ուշով լսում է ամեն նկատողություն։ Կատարում է ամեն հանձնարարություն։ Մի բան միայն աչքի է զարկում՝ լռակյաց է և գլուխը կախ, համեստ։ Բայց իբրև հարվածային համառ է և տոկուն։ Ու թեև արտաքին աղմուկ չունի, բայց ներքուստ գործ է անում և աղմկալի, անգամ տաժանելի գործ։

Իսկական ասպետ աշխատանքի։

Ու այդ ասպետը, այդ ամենասովոր Պետիկը, որին ամեն րոպե կտեսնեիր գործի մեջ և ճիշտ նույն ժամերին իր պարտականության որոշ կետերի վրա, այդ Պետիկը չկար թատրոնում։

Տարօրինակ, շատ տարօրինակ բան։

— Չորս տարի է մի բոպե չի բացակայել,— ասաց դիրեկտորը շփոթված,— ախր ո՞ւր պիտի լինի։

— Չլինի՞ տուն է գնացել,— նկատում է մի դերասան և ինքն էլ չի հավատում իր ասածին։

Պետիկը տուն գնա և չհայտնի՞։

Դիրեկտորն սպասում է։ Արդեն միջանցքում լսվում է փնտրողների ձայնը։

— Ֆոյեում չէ՞։

— Ոչ։

— Նայեցեք գրասենյակում։

— Նայել ենք, չկա։

Տխուր ձմեռն իր սառած աչքով նայում է պատուհանից ներս։ Ձյուն է եկել։ Դուրսը մի անախորժ թախիծ է լուծվում կտուրներին, պատերին, հեռուն՝ բլուրների վրա։ Իսկ կտրից ներքև բակն են թռչում ձյան կույտեր և տրոփում թմբիկի պես։ Մեկն արագարագ մաքրում է կտուրը։

Դուրսը ցեխ է, ցուրտ։ Իսկ թատրոնում ներվայնանում է նրա հախուռն առօրյան։ Պիես են պատրաստում։ Ֆոյեից լսվում է ինչոր աղմուկ, դղրդոց... Այնտեղ բարձրաձայն խոսում, պայքարում են նախկին մարդիկ, գեներալներ, մինիստրներ, իշխաններ, հիստերիկ լացով լցնում են շենքը կանայք, ծիծաղում են, երգում, գայրանում բանվորներ, բանակայիններ, և հանկարծ պայթում է ծափահարությունը, թնդում հաղթական ուռան, ճայթում օրկեստրը։ Անհանգիստ շենք... Իսկ միջանցքներում ձեռքե ձեռք են անցնում գնում հանդերձարանը՝ մինիստրների սերթուկներ, սպաների նշանագգեստներ, ազնվական կանանց շրջազգեստներ, արդուզարդ, պարագաներ։ Անկարգ լցվում են անկյուններում կահավորանքի առարկաներ։ Դրանք բոլորը պիտի հանդես գան բեմի վրա, պիտի բերեն անցյալի կյանքը մի երկու ժամով, ապա վարագույրի մի հարվածով անհետանան դեպի անցյալը կրկին։

Պատրանքներ են արտադրվում այս շենքի մեջ, ֆանտաստիկ տեսիլներ։ Պատրաստվում են, հուզումներ, ծիծաղ, բարկություն, հույսեր ու դառնություններ։

Հոգեկան կյանքի գործարան։

Եվ թատրոնի շենքը հուզվում է, եռում... հանկարծ բռնկվում

է վեճ, կռիվ։ Դիրեկտորի կաբինետում կյանքը մի վայրկյանում թռչում է հետ, անցյալը։ Կարգադրվում է բերել անցյալի պարագաները։ Վեճ է փրթում մարդկանց խարակտերների, տիպերի մասին, դժգոհում, լաց է լինում մի որևէ դերասանուհի, մյուսները հաղթական ժպիտով նայում են իրենց դերի վրա։ Հանկարծ վեճը ընդհատվում է մի շատ պրոզայիկ, առևտրական միջադեպով, ցիլինդր են ծախում և դիրեկտորը սակարկում է։

— Քսան ռուբլուց ավելի չեմ տա, ինչի՞ դ է պետք ցիլինդրը...

Եվ իսկապես, ո՞վ պիտի գլխին դնի ցիլինդրը...

— Բայց Պետիկը որ չերևա, դեկորները չհասնեն, վաղվա ներկայացումը վիժած պրծած է,— անհանգստանում է դիրեկտորը։

Եվ ճիշտ է այդ անհանգստությունը։ Պետիկը ամենակարևոր վինտն է բեմադրության։

Նա այնքան ճշտապահ ու մշտական մի երևույթ է թատրոնում, այնքան անվրեպ, անխախտ իր տեղում, որ սովոր աչքերը այլևս չէին հոգում նրա մասին։ Պետիկն իսկապես մոռացված էակ էր թատրոնում, այնքան ընտելացել էր ամենքին և դառել բնական երևույթ, ինչպես օդը, որ շատ անհրաժեշտ է, միշտ կա և միշտ էլ աննկատելի է։ Բոլորը հավաքվեցին դիրեկտորի կաբինետում։ Վերադարձավ և ադմինիստրատորը։

— Չկա՞։

— Չկա։

Անհանգստությունը, ներվային անախորժ անհանգստությունը, մտավ բոլորի էության մեջ։

— Վաղը ներկայացում է,— ողբաց ադմինիստրատորը,— տեխնիկական պերսոնալը չի քնել ահա չորրորդ գիշերը, վայր են թափվում... Եթե դեկորները չգտնվեն մինչև վաղը, նորերը չեն հասնի։

— Պիտի հասցնենք։

— Մատերիալ չկա։ Չենք գտնի շուտով...

— Հիմա ի՞նչ անենք...

Ու այս հարցը սարսափ է ազդում։

Գործը վիժում է... Ուշ է... Ժամկետը հասնում է։

— Վա՜յ, Պետիկ, վա՜յ, էսպես բան էիր արել։

— Հը՞, տեսնում եք ինչ անհրաժեշտ բան էր Պետիկը, հիմա իմացեք։

— Դուք իմացեք։

Լռեցին մի պահ։

Կտուրից թռչում էին ձյան կույտերը և դոփում արագ, արագ...

Վերջապես դադարեց այդ էլ։

Եվ ահա, երբ լռությունը տիրեց անսովոր կերպով, պատուհանից դուրս նայելիս բանվորներից մեկը հանկարծ գոչեց.

— Ա՛, Պետիկը...

— Ո՞ւր է, ո՞ւր,— վրա թռան բոլորը և վազեցին պատուհան։

Պետիկն իջնում էր կտուրից...

— Պետիկ,— ձայն տվին ներսից։

Պետիկը չնայեց, իջավ և կորավ բակում։

Մի րոպե անց՝ ներս մտավ քրտինքի մեջ կորած, կարմրած։

— Ի՞նչ էիր անում, այ տղա,— ձայն տվին նրան հավաքվածները։

— Ոչինչ,— մեղմ ժպտաց Պետիկը և քաշվեց անկյունը քրտինքը սրբելով։

— Բա էսպես բան կանե՞ն, Պետիկ,— հանդիմանեց ուրախացած, բայց և անհանգիստ դիրեկտորը։

Պետիկը հանգիստ նայեց նրան և ոչինչ չպատասխանեց։

<1932 թ.>

ՍԱԹՈՆ

Սաթոն Կոտայքի գյուղերից Երևան գալով վարձվեց մի սովետական ծառայողի ընտանիքում տան աշխատակից։ Ջահել աղջիկ էր, մազերը գզգզված, շորերից ծլանգները կախ։ Խիստ հայացք ուներ, բայց ներքուստ հանդարտ էր, բարի։

Ծառայողի ընտանիքը բավականին խստապահանջ մարդիկ էին։ Բավական էլ շատավոր։ Ինքը՝ տեխնիկ Սմբատյանը, կինը՝ «տիկին Աննան», աղջիկները մեծ ու կրտսեր և փոքրիկ Կոլյան։

Հյուրեր շատ էին լինում և հաճախ. այնպես որ՝ Սաթոն հենց սկզբից գործից աչք չէր բաց անում։ Երբ դուրսն իր նման բան անող աղջիկները նրան հարցնում էին.

— Գործդ ո՞նց ա, աղջի։

— Շատ ա,— պատասխանում էր Սաթոն, և ավելացնում — դե՛, տուն ա, ո՞նց կարա գործը շատ չլինի։ Գեղում քի՞չ ա։

Սաթոն այդպես էլ նայում էր գործի վրա, որ գործը կա, կա՞ ու կա — գետի պես գալիս է, լցվում, իսկ դու պիտի կանգնես ափին, անդադար ջուրը քաշես։ Գործը վերջ չունի։

Առավոտը վաղ կոշիկներ սրբել, թեյ պատրաստել, գնալ հացի հերթի, գնալ Գյուղկոոպ պանրի, յուղի, մեղրի, շուկա՝ մթերքի։ Ապա սենյակներ մաքրել, ճաշին հսկել, աման լվալ, հետո էլի թեյ, ընթրիք... Հյուրեր եկած ժամանակ էլ մինչև կեսգիշեր սպասել, որ ընթրիքը վերջանա, հյուրերը գնան...

Սա անտանելի էր Սաթոյի համար։ Նա, որ սովոր էր գյուղում հավերի հետ քնել, աքլորի հետ զարթնել՝ նստում էր խոհանոցում և գլխով «տանձ կշռում»։ Քնում էր և իսկույն երազ տեսնում — իրենց գյուղն է, գետափը, ուռիների ստվերներում հավաքված են իր ընկերուհիները։ Ինքը նստած է գետափի քարին, ջուրը վազում է, թշթշում։ Ընկերուհիներն իրեն շրջապատել՝ ծի-

ծաղում են. «Աղջի Սաթո, ջուրը թափվեց, իջեցրու, իջեցրու»։ Սաթոն ժպտում է միայն. «գետի ջուրը ո՞նց կիջեցնեն»։

— Աղջի, քեզ հետ եմ, է՛, թափվեց, իջեցրու։

Սաթոն աչքերը բաց է անում։

Ոչ գետ, ոչ աղջիկներ։ Զարացած տիկին Աննան է, կողքին կերոսինի վրա թափվող թեյամանը։ Կրակը բարձրացել է։

— Քնո՞ւմ ես, ինչպե՞ս կարելի է, աչքդ վրան պահի,— գոռում է տիկինը։

Սաթոն վեր է թռչում, ամոթխած ժպտում և աչքերը տրորելով իջեցնում կերոսինկան։ Թեյ է պատրաստում, որ պիտի խմեն ընթրիքի վրա։

Կեսգիշերն անց է, հավերը խոսում են արդեն։

«Տնաշենները ե՞րբ են քնում» — մրթմրթում է քնաթաթախ Սաթոն և կռնատակը քորում։ Իսկ ներսից լսվում է սովետական ծառայող ժորժի աքլորային ձայնը.

— «Ռոռաս-կա-ժիտե վի-յեեյ...»։

Սաթոն ձեռը կռնատակին քնում է և գլուխը կշռում, վեր թռչում, կրկին քնում։

Այսպես ծանր է գիշերը։ Իսկ ցերեկները ոչինչ, տանում է։ Սիրում է գործ անել։ Առողջ է, եռանդուն, բարեխիղճ։

— Թշերից արյուն է կաթում,— ասում է տիկին Աննան՝ կարծես հանդիմանորեն։

Սաթոն առավոտից մինչև գիշեր տանն է, տան գործում. նա ոչ մի տեղ չի գնում։

Դուրսն էլ ո՞վ ունի որ։ Իրենց գյուղից մեկը հազիվ պատահի, որին խնդրի շատ բարև տանել նանին։

Մի անգամ, փողոց գնացած ժամանակ, ուշացավ։ Տիկին Աննան խիստ հանդիմանեց.

— Փողոցներում ի՞նչ բան ունես։ Գործդ տանն է, ե՛կ տուն։

Եվ Սաթոն մնում էր տանը՝ անգամ այն ժամանակ, երբ մի ժամ պարապ էր։

Այն ժամանակ էլ զբաղեցնում էր փոքրիկ Կոլյային, որ նրան ձի արած, նստում էր վզին, ստիպում իրեն ման ածել պատշգամբում։

Մի ուրիշ անգամ էլ Սաթոն հրաման ուզեց կինո գնալու։

— Ո՞վ է տանում,— անհանդստացավ տիկին Աննան։

— Ես, բիլեթ առա։

— Ո՞վ սովորեցրեց տեղը,— գոչեց տիկին Աննան, կարծես հանցանք էր գործված։

— Ծանոթ աղջկերքը։

— Ծանոթ աղջկերքը թող իրենք գնան։ Դու փող ունիս՝ պահի քեզ համար, գյուղ կուղարկես։ Հարկավոր չէ, էլ չգնաս։

Սաթոն խոստացավ և գնաց կինո։

Երբ Սմբատյանը եկավ տուն և ուզեց ծխախոտ բերել տալ՝ ասացին, որ Սաթոն կինո է գնացել։

— Աչքներս լո՛ւյս,— մրթմրթաց Սմբատյանը,— հը՞մ, հը՞մ...

— Մենք նստենք տանը, քոծը գնա կինո,— նկատեց մեծ աղջիկը և քմծիծաղ տվեց։

— Կինոն դեռ ոչինչ, եթե դուրսն իրավունքներ-բաներ չսովորի։

Այնուհետև Սաթոն փողոց գնալ գալով՝ բերում էր ականջն ընկած ամեն տեսակ խառն-խուռն տեղեկություններ, լավ էլ չհասկացած։

— Կին-բաժնի հրահանգչուհի է։

— Ո՞վ է «հրահանգչուհի...» — դեմքը կոկիկ ծամածռում է տիկին Աննան և աչքով անում մեծ աղջկան։

— Ընկեր Ասլանյանը։ Էրթում է մեր գեղարենքը կազմակերպելու,— ասում է Սաթոն միամիտ զրույցի ձայնով։

Նրա անսպասելի բառարանը զվարճացնում է տանեցիներին։

Նրանք իրար են նայում կոմիկ լրջությամբ և քթների տակին ծիծաղում։

— Ասում ես հրա-հանգ-չուհի է, էլի՛,— աննկատելի հեգնում է տիկին Աննան,— լավ, ի՞նչ է անում գյուղում։

— Կանանց անգրագիտությունը վերացնում ա,— պատասխանում է Սաթոն կոտրած ժպիտով։

Բոլորը ծիծաղում են։ Ծիծաղում է և ինքը՝ Սաթոն՝ մասամբ իր անսովորության, մասամբ էլ հենց իր գործածած բառերի վրա, որ իր էլ ծիծաղը բերում են։ Խորթ է նոր բաների մասին խոսելը։

Մի օր էլ հացի գնալով ուշացավ։

— Ո՞ր տեղ էիր,— խեթեց տիկին Աննան։

— Պրոֆմիություն էի գնացել։ Ասում են՝ պիտի մտնես պրոֆմիությունը։

— Ըհը՞— կծեց լեզուն տիկին Աննան և հազիվ լսելի մրմնջաց։

— Էդ էր պակաս։

Սաթոն կողքանց մտիկ տվեց տիկնոջն ու վրա ընկավ իր ամաններին, սկսեց արագ-արագ լվալ։

— Է՞ լավ, ինչի՞դ է պետք պրոֆմիությունը,— փորձեց տիկին Աննան։

— Ի՞նչ իմանամ, ասում են՝ հմի ամեն աշխատանք անող պիտի գրվի։

— Սխալ են ասել. կուզես կգրվես, կուզես ոչ։

— Չեմ իմանում, ընկերուհիներս տարան։

Տիկին Աննան անհանգստացավ։ Ճաշին հայտնեց Սմբատյանին։ Լուրը մեծ անախորժությամբ ընդունվեց աղջիկների կողմից։

— Հիմի կնստի մեր շլնքին։ Ժամով կաշխատի, հանգստյան օր կուզի, ժողով, կոլեկտիվ, նորմա, լիկվիդացիա։ Գտանք գըլխացավանքը։

— Բա՞ս, մենք կդառնանք քոծ, նա՝ տանտիկին,— ասաց տիկին Աննան։

Մի քանի օր հետո Սաթոն բոլոր ձևականություններով մտավ պրոֆմիություն։

Այդ օրը ճաշը վերջացավ տխուր լռությամբ։ Սմբատյանը «հը՞մ, հը՞մ» արավ և ծխախոտը վառեց։

— Ի՞նչ կհրամայես անել,— ձեռները շոյելով եզրակացրեց նա.— «աշխատանքի կոմիսարիատ», «պրոֆեսիոնալ շահեր», «բանվոր ուժի կազմակերպում»...

— Եվ... գեղացի Սաթո՞,— ծիծաղեց կրտսեր աղջիկը։

— Սո՞ւս,— արեց տիկին Աննան,— «եկավ»։— Ներա մտավ «կազմակերպված» Սաթոն ափսեները տանելու։ Բոլորը լուռ նայեցին նրան և նոթերը կիտած տվին իրենց ափսեները։

Դեպքն անախորժ էր։ Ձեռաց ամեն ինչ փոխվեց։ Սաթոն դառավ դեմք, ֆիգուրա, որակ։ Կարծես երկաթը փոխվեց պողպատի՝ կորցնելով հին հատկությունը։ Սաթոյի դիմագծերն անգամ արտահայտություն ստացան։ Կոպիտ հոնքերի արանքում կամքի մի շեշտ գծագրվեց՝ տանեցիների համար խիստ անդուրեկան։ Եվ այդ նախկին բարեխիզճ, աշխատող և աշխարհից անտեղյակ Սաթոն, որ իր առույգ, գյուղական բազուկներով սրբում, լվանում, եփում, խոհանոցից ներս էր բերում ախորժ, հաճույք, հարմարություն, որը չէր հիվանդանում, չէր տնքում, միշտ պատրաստ էր վազելու բժշկի, դեղի, մթերքի, լուրի, անգիտակ իր արժեքին, իրավունքներին, ահա այդ Սաթոն հիմի քաղաքացի է, կազմակերպված մարդ...

Բայց վերջիվերջո հաշտվեցին «աղետի» հետ։ Նոր հարմար աղջիկ չկար, եղածներն էլ կամ «գող» էին, կամ «ծույլ»։

Սաթոն օրինակելի էր, ժիր, բարի։ Եվ, վերջապես, լիկվիդացիոնի հարց կար...

Նրան թողին իրենց մոտ և սկսեցին զգույշ լինել։ Ծանր էր այդ «զգույշ»-ը, բայց էլի լավագույնն այդ էր։

Շուտով դրությունը լրջից փոխվեց նաև կոմիկականի. Սաթոն սկսեց տերմինների անխնա կոտրտուք։

«Քաղաքի մաշտաբով հաց ա եկել»։

«Կանանց օրն այս տարի նոր տեմպով պտի անեն»։ «Հարյուր տոկոսով ասում եմ, որ ճիշտ ա»։

Ծիծաղու մեռնում էին...

Երբեմն էլ, թեյին կամ ճաշին, Սաթոն մնում էր սեղանատանը կանգնած և սկսում պատմել պրոֆմիության գծով տարած աշխատանքների մասին։ Լավ չէր մարսել կազմակերպության արտաքին ձևերը, բայց ներքին էությունը բնազդով ըմբռնել էր։

Խոսում էր այլևս ազատ, խտիր չգնելով իր և տանեցիների մեջ։ Շուտով սկսեց խառնվել նաև Սմբատյանի և հյուրերի խոսակցությանը։ Ընդհատում էր նրանց և, չնայած որ հյուրերը նրան չէին հարցնում, սիրում էր իր սեփական բացատրությունները տալ։ Բացատրում էր երկար, դժվար էր նրան ընդհատել։ Սաթոն հարկադրում էր իրեն լսել՝ թեկուզ արտաքին քաղաքավարությամբ։

Մի անգամ էլ կարծիք հայտնեց.

— Ուսումնականների գործն, իհարկե, դժվար ա, ամա բանվորի ու գյուղացու գործին չի հասնի. սրանք որ չլեն՝ աշխարհք չի ապրի։

— Ուրեմն ուսումը ոչի՞նչ, իշի գլխի պե՞ս ապրենք, ուսումնականներին չո՞ւրն ածենք,— տաքացավ Սմբատյանը, ինչ որ ներքին կուտակված թույներ ժայթքելով։

— Ինչի՞ համար,— խոսեց հանդարտ Սաթոն,— ուսումը լավ բան ա։ Այ էն էլ ձեռք կբերենք ու ամեն բան կթամամի։

— Ձե՞ռք կբերեք էդպես շուտ, ա՛յ, չե՞մ գիտում։

Սաթոն անխոով ամանները դուրս տարավ։ Նա լավ էլ չէր հասկանում տնեցիների չարության պատճառը։

— Այ, էդպես է. գլուխները լցնում են ու բաց թողնում։ Ի՞նչ կարող ես խոսել սրա դեմ,— ասաց Սմբատյանը ծխելով։

Մի երեկո Սաթոն շատ ուշացավ։ Գնացել էր ժողով։ Տիկին Աննան պատվիրել էր, որ չուշանա։ Բայց ուշացավ և ուշացավ այն ժամանակ, երբ լվացքը կիտված էր կիսալվա, ջրմուղի ջուրը կտրվել, հացի մեծ հերթ կար։ Միաժամանակ երեխան էլ նոր էր առողջանում, պետք էր դեղի գնալ։

Սա արդեն հանդգնություն էր։ Տիկին Աննայի տան հիմքերը խախտվում էին։

— Քոծ չի, այլ իշխանուհի։ Քանի գնաց՝ լրբացավ,— գոչեց տիկին Աննան զայրացած,— ես անկարող եմ այսպես ապրել։ Թող գա՝ ցույց կտամ ժողովը։

— Ծառան ծառա չի,— նկատեց մեծ աղջիկը,— ապերախտ խոզ, հին վերարկուս էլ տվի՝ թե խելոքանա։

— Թող գա տուն՝ դուրս կանեմ, կասեմ՝ ջհանդամվիր ուր ուզում ես,— վճռեց տիկին Աննան։

— Հը՞մ, հը՞մ,— արեց Սմբատյանը և սկսեց շվացնել։

Երեկոյան թեյն ուշանում էր, հաց չկար, դեղ էր պետք երեխայի համար, լվացքն անախորժ բուրմունքով սպասում էր լվացարար ձեռքի։ Հարևաններն էլ ջուր չունեին։ Սարսափը տիրեց ընտանիքին։

Տիկին Աննայի կրտսեր աղջիկը վերցրեց փոքր վեդրոն և բարձրակրունկ քայլերով վեդրոն շրջազգեստից հեռու բռնած՝ գնաց ջուր բերելու, բայց իսկույն հետ դարձավ։ Ջարացած կանայք այնպիսի ղժվժոց էին բարձրացրել, որ ֆիզիկական ուժ էր պետք նրանց միջից ջուր հանելու համար։

— Հիմի ո՞վ ջուր բերի, ո՞վ հաց բերի, ի՞նչ կրակ ու պատիժ էր,— սկսեց կատաղել տիկին Աննան,— մարդ գնա էդ ժողովը, մազերը պոկելով տուն բերի, է՞։

— Հը՞մ, հը՞մ,— արեց Սմբատյանը և ժպտաց դառնագին,— էդ ո՞ւր գնացիր...

Վերջապես Սաթոն եկավ։ Նա լուրջ էր, կենտրոնացած։ Պատշգամբից բարձրացավ թե չէ՝ տիկին Աննան հարձակվեց վրան.

— Ինչո՞ւ ուշացար։

— Զեկուցում կար։

— Բա մեր ջո՞ւրը, հա՞ցը, լվա՞ցքը։

— Ես ի՞նչ անեմ, սպասիր՝ կբերի։ Բա ժողով չգնա՞մ։

— Ի՞նչ անեմ ժողովդ՝ ես էստեղ սոված, ծարավ։

— Էդ ա. ուզում ես՝ ուզի, ուզում ես՝ չէ։

— Ձեմ ուզում. էգուց գնա՛ իմ տանից։

— Շա՛տ լավ,— ասաց Սաթոն հանդարտ և սկսեց իր գործը, կարծես բանի տեղ չդնելով սպառնալիքը։

Խլեց խոշոր վեդրոները և պատշգամբը դմբդմբացնելով վազեց ջրի։ Շուտով կարմրած, առույգ, հևալով ետ դառավ, ջուրը կաթկթթացնելով։ Ապա վազեց հացի և մի տասը բոպեից բերեց լավ թխած անուշահոտ հացի բոքոնը։ Մեռած տունը լցվեց ախորժ աշխուժով, դադարած կյանքը եկավ լցվեց տունը։ Մի փոքր անց՝ երեկոն արդեն քաղցր սկսում էր հալվել դուրսը, բակում, սենյակում։

Ամեն ինչ խաղաղեց։ Էլեկտրական լույսը ոսկեզօծեց թեյասեղանն ու շուրջը շարված Սմբատյանի ընտանիքը։ Թեյի թարմ բուրմունքը մլլում էր օդի մեջ՝ հացի հոտի հետ։ Տրամադրությունները բացվեց։ Մոռացան Սաթոյի արարմունքը, և ատելության փուշը կոտրվեց միառժամ։

— Հը՞, հիմի դո՞ւրս ես անում,— հարցրեց Սմբատյանը կնոջը՝ ետ նստելով աթոռին։

— Ախր, ո՞նց եմ դուրս անում,— գանգատվել սկսեց տիկինը,— ո՞նց գտնեմ նորը, ո՞նց ջոկեմ։ Մենք սրա ձեռքին գերի ենք։

— Հը՞մ, բա ո՞նց գիտեիր... ի՞նչ ենք մենք...

Սմբատյանը վեր կացավ, մոտեցավ նարդուն և փոքր աղջկա հետ սկսեց խաղալ։ Մեծը նստեց դաշնամուրի մոտ և մատները սահեցնելով ծայր տվեց Շոպենի սոնատին։ Տիկին Աննան գնաց խոհանոց։

Հենց ներս մտավ՝ լվացքի թանձր գոլորշին անախորժ համբուրեց նրա այտերը։

Սաթոն լվացք էր անում։ Բարկացած էր, բայց զուսպ։ Միայն

ջլապինդ մատները խլելով սպիտակեղենը ուժով խեղդում էին տաշտի մեջ։

Քաղքենի «տիկինը» կանգնեց, մտիկ տվեց «երեկվա» գյուղացի աղջկան, որ գյուղից եկավ, աճեց, բարձրացավ, և այսօր սկսել է հուպ տալ իրեն։

Ատելությամբ դիտեց նրան և լռեց։ Սաթոն առողջ էր ինչպես կյանքը և իր աշխատանքով կյանքից բաժին էր շնորհում քաղքենի տիկնոջ։

Սա ճնշվեց, վախեցավ ծպտուն հանել, զգաց իր անպետքությունը և զգույշ, գող կատվի պես դուրս եկավ խոհանոցից։

1928

ԵՐԵՔԸ

Երկինքն այնպես է լուսավոր ու բարձր, որ կարծես բարձրացել ես աշխարհքի կտուրը և այնտեղից ես մտիկ տալիս նրա անհունությանը։ Արարատյան դաշտի շուրջը լեռները արծվենի թևերը լայն բացած շուրջպար են ճախրում երերքում։ Մինչ դիմացը երկու Մասիսները արծաթե սաղավարտները գլխներին կանգնել Արևելքի դարբասի առաջ՝ անքթիթ մտիկ են տալիս հեռավոր աշխարհների կողմը։

Հուլիսը կրակում է։

Նստած է Սյոման,— սահմանապահ զորամասի հրամկազմից մի ջլուտ երիտասարդ,— իր հողե տնակի դռան, մեջքը տվել պատին, պղտոր աչքերով մտիկ է տալիս դիմացը։ Այնտեղ փլփլած ափերի հոնքերի տակից պսպղում են Արաքսի դիվական աչքերի ճերմակուցները։

Իրենից քիչ հեռու երկար հողե պարիսպներ են, որոնց մեջ շռում են ցից-տնակներ, այգեպանների գիշերային ապաստանները։ Գյուղի բնակիչները ցրված են այդ այգիների ու բոստանների անկյունները, և մեջտեղ մարդ չի երևում։ Սյոման անծանոթ է նրանց լեզվին, նիստ ու կացին։ Դրանք թուրքեր են և հայեր, որ միայն մի որևէ քաղաքական տոնախմբության ժամանակ երևում են գյուղի փոքրիկ հրապարակում։ Այնտեղ է հավաքվում նաև սահմանապահ զորամասը, օդը լցվում է անհասկանալի բարբառների աղմուկով, որ իր իմաստով հասկանալի է ռուս, թուրք և հայ բազմության համար։ Սյոման խանդավառ ճառ է ասում, որի լեզուն շատ էլ չեն հասկանում, բայց բոլորը ծափահարում են, հավանության ուռաներով թնդացնում օդը, այնուհետև զորամասը հավաքվում է ակումբում, ուր Մաքսիմը, Սյոման և նրանց երրորդ ընկերը՝ Միտյան խոսում են կարմիրբանակայիններին հետ։

Ապա օրն անցնում է և գալիս է լի օրը իր գործնական, բազ-

մագբաղ հարցերով։ Զորամասը, վերևից եկած թղթերը, մաքսանենգները, ակումբային դործերը, պարտիական ժողովները, բջիջը, կոլեկտիվը — սրանք լցնում են Սյոմայի կյանքը։ Բայց հենց մի բոպե դադար է առնում այս ամենը և նա նստում է Արաքսամերձ անապատի շամբերում, իր տնակի առջև ձանձրույթը մոտենում է և դատվի պես քսվում նրան։

Մյուս կողմից էլ շոգը հարվածում է, հաղթում է ամեն աշխատանք, լռում է ակումբը, զորամասը, գյուղը։ Եվ օրերն սկսում են ծանրանալ։ Արևը լուցկու պես պայթում է արևելքում, հրդեհում օրը, օդը բոցավառվում է դաշտի լայն հնոցում, թփերն ու փշերը այրվում, խարկվում են, ապա հրդեհը կղզիանալով արևմուտքում նվաղում, դառնում է մի վերջին կայծ և մարում է սպառված մոմի նման։

Այնուհետև ավելի է լռում անապատը և նոթերը կիտած ականջ դնում միայն իրեն լսելի ինչ-որ ձայների։

Իր ծառայության գործերից ազատ ժամանակը Սյոման գնում է Մաքսիմի մոտ։ Սա նրա հին ընկերն է, քաղաքացիական կռիվների ընկերը, ամուսնացած է։ Մարուսիան, մի շատ գեղեցիկ արարած, մտերիմ է Սյոմայի հետ, սիրով ընդունում է նրան, և նրանք երեքով շատ անգամ նստում են մինչև կեսգիշեր, ասում-խոսում։

Մաքսիմը Սյոմայից մի տարի առաջ էր եկել Արաքսի ափը ծառայության։ Երբ Սյոման եկավ՝ Մաքսիմը ավելի մտերմացավ նրա հետ։ Մարուսիան իսկույն համակրեց նրան, և ամուսինները նրան դարձրին իրենց տան մարդը։

Առավոտ, երեկո, ուշ գիշեր — Սյոման կմտներ նրանց մոտ թեյի, ճաշի թե զրույցի, և միևնույն է՝ Մաքսիմը տանն է թե ոչ։

Մարուսիայի և Մաքսիմի ընկերությունը մի փոքր մեղմացնող ժպիտ է Սյոմայի համար սահմանապահ կյանքի չոր ու ցամաք անապատում,

---

— Բարի երեկո՛, Մարուսիա։

Եվ Սյոման կանգնեց Մարուսիայենց տան պատուհանի առջև։

— Բարի՛ երեկո, համեցե՛ք ներս,— զրնգաց Մարուսիայի ձայնը նեղ ու մութ պատուհանից։

— Մաքսիմը տա՞նն է։

— Ո՛չ, դեռ չի եկել։

— Ինչպե՞ս, գնացքով պիտի գար։

— Ո՛չ, ավտոմոբիլով կգա։ Արի ներս։

Սյոման մտավ անճոռնի սենյակը, որի հատակը հող էր և առաստաղի անտախտակ գերանների եղեգներից հաճախ կարիճներ են կաթում և օձեր կախվում։

Անկյունում մռայլվում էր մի հնադարյան մահճակալ, որի վրա հանգստանում էր ամուսինների անկողինը։ Երեք տաբուրետ ձագերի նման կպել էին իրենց մորը — սեղանին։

— Ինչպե՞ս ես, Մարուսիա։

— Շոգ է։

— Ըհը՞։

— Ի՞նչ ես անում։

— Ձանձրանում եմ։

— Գիտես ի՞նչ նորություն,— չարաճճի ծոր տվեց Մարուսիան մանրիկ ժպտալով։

— Ի՞նչ,— ցնցվեց Սյոման։

Մարուսիան տարտամորեն զգաց այդ ցնցումը, բայց իրեն հաշիվ չտվեց։ Ինչպես և Սյոման։ Բայց բնազդորեն դժկամակեց։

— Մորաքույրս ինձ ձմեռս հրավիրում է Մոսկվա։ Լավ չէ՞։

Ու աչքի տակով նայեց Սյոմային։

— Լավ է, ինչո՞ւ չէ,— ասաց Սյոման ներքին դժկամությունը խտացնելով։

— Չէ՞, լավ կլինի մի անցնեմ Մոսկվա։ Այս անապատի լռությունից հետո...

— Այո, գուցե։

— Ախր, մի տես ի՞նչ լռություն է։ Կարծես գերեզմանի մեջ ես։

Մարուսիան մանրաժպիտ մտիկ տվեց Սյոմային և չարաճճի ժպտաց.

— Իսկ դու չե՞ս ուզում Մոսկվա։

— Ոչ, ինչո՞ւ։

— Չե՞ս ձանձրանում։

— Է, ի՞նչ կտա ինձ Մոսկվան՝ եթե ձանձրանամ էլ։

Մարուսիան վառեց պրիմուսը և թեյամանը դրեց վրան։

— Սյոմա՛, լսիր,— ասաց Մարուսիան,— դու ինչ-որ ֆլեգմայի մեջ ես վերջերս, ի՞նչ է պատճառը։

— Մի՞թե ֆլեգմայի մեջ եմ,— հարցրեց Սյոման ցրիվ արտահայտությամբ։

— Այո, դու ինչ-որ ժանգոտված ես թվում։

— Կարելի է։

Նրանց զրույցը չէր կպչում, բայց իրենց համար անախորժ չէր։ Դա նրանց սովորական ձևն էր։ Այս կցկտուր հարց ու պատասխանները նետած քարերի ընդհատ աղմուկների պես վրդովում էին սենյակի և դաշտի լռությունը։ Ու հենց մեկն ու մեկը դադարում էր խոսելուց կամ երկուսով մի րոպե լռում էին՝ անապատի լռությունը լափում էր, մերվում նրա հետ՝ ճնշելով նրանց երևակայությունը։

Մարուսիան բաժակներն էր սրբում։

— Լսի՛ր, Մարուսիա,— հանկարծ դարձավ Սյոման նրան առանց մտածելու թե ինչու,— դու Մաքսիմին սիրո՞ւմ ես։

— Այո, սիրում եմ, հետո՞ ինչ։

— Շա՞տ ես սիրում, սրտի՞ սիրով, թե հենց այնպես, սովորական։

— Չգիտեմ, չեմ մտածել։ Ես Մաքսիմին... Բայց ինչո՞ւ ես հարցնում։

— Չգիտեմ, հենց այնպես։

— Այո՛, ողորմած տե՛ր,— կատակով ծոր տվեց Մարուսիան,— «խոնարհաբար» սիրում եմ իմ ամուսնուն, «հնազանդ եմ նրան» և այլն։

— Ինչպե՞ս եղավ, որ ամուսնացաք։

— Մեր ամուսնությունը մենք էլ չիմացանք։ Մաքսիմը լավ տղա է, այնքան լավ, որ իսկի էլ չիմացանք թե ինչպես սկսեցինք իրար հետ ապրել։ Մենք հետո տեսանք, որ ամուսիններ ենք։ Զգաս գնացինք հայտնի ձևականությունների համար, որ մի տեսակ պարտադրում է Մաքսիմի ծառայությունը, պարտիան...

Սյոման անգամ իրեն համար աննկատելի ինչ-որ բավականություն էր զգում Մարուսիայի այս բացատրություններից։ Նրան զբաղեցնում էր ուրիշի կյանքի ուրախ, ջերմ անկյունները դիտելու այս փորձերը։ Նա միայն շատ ուրախ էր, որ իր մտերմությունը Մարուսիայի և Մաքսիմի հետ թույլ էր տալիս մտնել սրանց ներքին աշխարհը և դիտել, զվարճանալ ուրիշի բախտով։ Եվ այս հեռավոր անապատի կարիճների և օձերի հարևանության մեջ, ուր խանձված տարածությունը տխուր նստում է վրադ օրնիբուն ուր ամեն ինչ դաժան ու չոր հայացք ունի — այս բոլորի մեջ այս սենյակը, այս կնոջ ներկայությունը մի մեղմացնող ժպիտի է նման։ Կյանքի ժպիտը։

— Էյ, դո՛ւք, այս ի՞նչ սիրո բացատրությունների մեջ եք,— լսվեց պատուհանից մի մեղմ ձայն։

Եվ իսկույն ուրախ։

— Մարո՛ւսիա։

— Օհո՛, Մաքսի՞մը արդե՞ն։

Եվ Մարուսիան վեր թռավ, վազեց դուրս։

Մաքսիմը ներս մտավ և աչքը գցելով պրիմուսին ծիծաղեց.

— Հիմարուհի՛, ջուրը եռում է, թափվում, իսկ սա ժամանակ է գտել սիրային հեքիաթներ պատմելու իր հերոսին։

— Օ՜յ, օ՜յ, օ՜յ,— արեց Մարուսիան և վազեց դեպի պրիմուսը։

Մաքսիմը բեռնավորված էր զանազան ուտելիքներով և մի ահագին սեխով։

— Դու ո՞ւր ես կորել, չես երևում,— դիմեց Սյոմային Մաքսիմը՝ ձեռի կապոցները դնելով սեղանին։

— Տանն էի։

— Ինչո՞ւ երեկ չեկար ճաշի։ Սպասեցինք։

— Ո՞վ խոստացավ գալու։

— Բայց շոգ եմ ասո՞ւմ, հա՛, ուղղակի լափում է մարդու։

— Ի՞նչ կա քաղաքում,— հարցրեց Սյոման անտարբեր։

— Հա՛,— թռավ տեղից Մաքսիմը,— դու կարող ես ինձ շնորհավորել։ Հասանի թաքցրած կոնտրաբանտը գտնվել է քաղաքում։ Ախր սատանա՛ն տանի, ես միշտ ասում էի, որ նա իր հետ միայն ածելիներ չի բերել։

Սյոմին հրամ արեց ու լռեց։

— Իսկ դու ինչո՞ւ ես թթվել,— կողքանց նայեց Մաքսիմը Սյոմային,— էհե՛, արդեն ճկռում ես ծառայության տակին։ Մի տարի էլ չկա։

— Հիմարություններ։

— Իհարկե։ Լսի՛ր, Մարուսիան ամենա Մոսկվա է ուզում գնալ։

— Հա, ասաց։

— Ասում եմ, չթողնեմ։

Մարուսիան ծիծաղեց միայն։

— Մի օր չենք դիմանալ այս քանդվածում, այնպես չէ՞, Սյոմա։ Ո՞վ կտա մեզ թեյ, ճաշ, նվագ... Եվ հետո տխուր կլինի, սատանան տանի...

«Այո, տխուր կլինի»,— համաձայնեց մտքում Սյոման։

— Եվ տխուր է այստեղ, Սյոմա, նկատո՞ւմ ես,— կրկնեց Մաքսիմը։— Աչքդ գցում ես այս անապատին՝ սիրտդ շարանում է։ Մեկ-մեկ որ դրսից տուն ես գալիս՝ սիրտդ կարծես ծաղկում է։

Սյոման դարձյալ հրմ արեց միայն։

— Ճիշտ է, գործը շատ է, ժամանակ չունես տխրելու, բայց հանգստի ժամերին սիրտդ ճաքում է։

Մաքսիմն սկսեց խոսել մաքսանենգների մասին, այնտեղից անցավ զինվորական վարչության նորություններին, քաղաքի անցուդարձին։

— Գիտե՞ս ինչ հաջողեցրի քաղաքաժնում — կինո՝ մեր ակումբի համար. այս կիրակի բերում են,— ասաց Մաքսիմն ու նայեց Սյոմային։

Սյոման նորից հրմ արեց։

Արդեն թեյը պատրաստ էր։ Մարուսիան թարմ թեյը ածեց պլպլան բաժակների մեջ և առաջ բերեց։

Սենյակում բուրեց թեյի ախորժելի բուրմունքը։

Մաքսիմը ձեռները շփեց.

— Մարո՛ւսիա, գիտե՞ս ինչ թխվածքներ եմ բերել։

Մարուսիան դատարկեց տոպրակները և սկսեց ծիծաղելով քննադատել ամուսնու ճաշակը։

Սենյակը լցվեց նրա ծիծաղով։ Տրամադրություններն աշխուժացան։

Մարուսիան նստեց Մաքսիմի կողքին և ծաղրադեմ կողքանց մտիկ տվեց նրան.

— Իսկ թաշկինակներն առա՞ր, թե փողը միկիտանում թողիր։

— Փա՞ռք աստծու, դեռ ինձ ձեռների վրա տուն չեն բերել,— ա՞յ թաշկինակներդ։

Եվ գրպանից հանեց բարակ թղթի փաթեթը։

— Հա՜, ապրի՜ իմ «մարդը»,— գոչեց Մարուսիան, վրա պրծավ թաշկինակներին, բաց արեց և բռնեց օդի մեջ։— Ի՞նչ հրաշալի բաներ են։ Դրա փոխարեն կարելի է քեզ մինչև անգամ սիրել։

— Տե՛ս, գուցե իսկապես մի օր էլ սիրահարվես վրաս,— ժպտաց Մաքսիմը։

«Իբր թե չեք սիրում իրար» — ասաց մտքում Սյոման՝ միաժամանակ բարեմիտ և խանդով։

Մութն ընկել էր արդեն։ Բայց նրանք թեյը ձգելով և սկսելով ընթրիքը, ասում կատակում էին, առանց ուշք դարձնելու պատի ավերակ ժամացույցի անշնորհք չխկչխկոցին, որ ամեն րոպե ձանձրալի կրկնում էր, թե կյանքն անցնում է։

Սյոման քիչ-քիչ տաքացավ, սրտի անհասկանալի փշերը հալվեցին, նա դարձավ բարի մարդ և սկսեց անգամ երգել։ Էլ չէր զգում, թե ինքը մի փուշ է երկու վարդենու մեջ կամ մի վարդենի երկու կրակի մեջ։

Դուր եկավ նրան այն զգացումը, որ ինքը չի նախանձում նրանց, չի խանգարում, որ ինքն էլ միանում է ամուսինների ուրախությանը։ Կարծես մի ուրախություն երեք սրտի մեջ։

Մարուսիան նվագող էր։ Վերցրեց կիթառը և սկսեց տրնկտրնկացնել։ Ակորդները թախծով ղողանջեցին։ Ապա այդ թախծի միջից դուրս թռավ Մարուսիայի երգը, ինչպես զնգուն ճիչով թռչունը՝ վարդի թփերի սոսափից։

Եվ հեռավոր Արաքսի եղեգնուտների մեջ, գիշերային լռության ծոցում Մարուսիայի երգը Սյոմային ու Մաքսիմին հիշեցրին Ռուսական դաշտի կանաչող հեռաստանները։

Մաքսիմը ոտը զարկեց գետնին.

— Սատանա՛ն տանի, հիշո՞ւմ ես, Սյո՛մա, այն գիշերը, որ ես ու դու գերի ընկանք սպիտակների ձեռքը։ Հիշո՞ւմ ես՝ վիճում էինք թե քանի ժամ կապրենք. ես ասում էի յոթը, դու թե՝ երեք։ Ինչպե՞ս փախանք, ի՞նչպես պրծանք։ Եվ ահա քանի՞ տարի է ապրում ենք։ Բայց ժամանակներ էին, հա՞...

— Հա՛, ժամանակնե՞ր էին,— բացվեց Սյոման,— ժամանակնե՞ր էին։ Կրա՞կ։ Գինու պես խմեցինք ու հարբեցինք։

— Դառն ու դաժան էր, բայց լա՞վ էր ռևոլուցիան։ Չէ՞։

— Ըհը՞։

Ու լցնում էին կոնյակը։

— Սյո՛մա,— գոչեց Մաքսիմը տաքացած։

— Ասա՛։

— Սյո՛մա, մեկ ուզում եմ Մարուսիային ուրախացնեմ, ուղարկեմ Մոսկվա, մեկ էլ չեմ ուզում։ Սատանա՛ն տանի, տխուր կլինի, ի՞նչ խորհուրդ ես տալիս։

Մարուսիան խորամանկ ժպտում էր։

— Թո՛ղ, հիմար մի՛ լինի, թող գնա ուրախանա՛։ Հը՞, Մարուսկա,— վեր թռավ դեպի նա Սյոման — գնա՛ Մոսկվա, սրան մի՛ լսիր։ Լավ չեմ ասո՞ւմ։

— Շա՛տ լավ ես ասում,— պատասխանեց Մարուսիան նվագը չկտրելով — դրա համար էլ սիրում եմ քեզ։

Հետո թռավ տեղից, խլեց կոնյակի բաժակը և անսովոր շարժումով վեր բարձրացնելով.

— Քո կենա՛ցը, Սյոմա։

— Նո՞ւ, սատանա՛ն տանի քեզ, Սյո՛մա,— գոչեց Մաքսիմը,— դու իմ կնոջ սիրտը գողացար։ Կենա՛ցդ։

Հետո դարձավ Մարուսիային և թևը փաթաթելով նրա վզին ասաց ոգևորված.

— Թողնո՛ւմ եմ, Մարո՛ւսիա, գնա՛։

— Բրա՛վո, բրա՛վո, իմ Մաքսի՛մո,— ասաց Մարուսիան կատակով — դրա համար կարելի է քեզ համբուրել։

Ու շրթունքները մոտեցնելով թեթևակի փչեց Մաքսիմի երեսին։

Մարուսիան կրկին վերցրեց կիթառը և նոր տարափով թափ տվեց նրա լարերի հնչյունները։ Դա «կազաչկի» էր։ Մաքսիմը թռավ ու սկսեց հողի հատակին դոփել ոտներով։

— Ա՜յ սատկես դու, այդպե՞ս,— որոտաց Սյոման ու ինքն էլ թռավ։ Երկու ընկերների աչքերը պսպղացին դիվական ցոլքերով։ Նրանց մազերի խոպոպները ցնցահարվեցին, ու երկու հեծգնդի զինվորականները կարծես թռան իրենց ձիերի վրա ու սլացան։

Մրցման կերպարանք առավ պարը, երբ նրանք դեմքերը վրնռական, աչքերը պլկած ածելիների պես սկսեցին իրար վրա սպառնալից պսպղացնել ու մրրկել, կարկտահարել գետինը։

Վայրի բնազդը, ինչ-որ վերհիշումներ կռիվների, հարձակման, իրար բզկտելու կրակը բռնկվեց նրանց դեմքին, և երկու երիտասարդները, որոնց մկանները պիրկ ձձերի նման փաթաթվել էին նրանց ոսկորներին՝ կարծես պատրաստ էին զարկվելու և մի վայրկյանում ոչնչացնելու իրար։

Ոլորվեցին, փոփոխվեցին, ինչպես երկու հնոցներ օդի մեջ ու հանկարծ կիթառի տարափը մի ուժգին հարվածով մտրակեց նրանց, տեղն ու տեղը հանգցրեց, ու ինքն էլ դադարեց։

Կանգ առան սաստված, քրտնաթոր, և հևհին նստեցին սեղանի շուրջը։

Մաքսիմը լցրեց կոնյակը։

— Մարո՛ւսկա, կենա՛ցդ։

— Կենա՛ցդ, Մարո՛ւսկա,— գոչեց Սյոման, և երկու ըմպակները արագ նետվեցին կոկորդներից ներս։

Արդեն կեսգիշեր էր։

Մարուսիան սկսեց երազել Մոսկվան։ Սկսեց բարձր մտածել, հետո էլ մատներով արթնացնել կիթառի որևէ քնկոտ ակորդը։

Նրանց զրույցը թևերը կախեց։ Հոգնություն եկավ վրաները։ Քաղցր հոգնություն — ժպտուրախությունից։

Սյոման սկսեց դիտել Մարուսիային։ Նա աճում էր իր գեղեցկության մեջ այդ գաղջ գիշերի, փշատիների գաղտագողի հարբեցման, կոնյակի հոտի և ծղրիդների խանդավառ ճռվողյունի մեջ։

Սյոման անկիրք էր նայում Մարուսիային, ինչպես մարդ կնայի իսկական գեղեցկությանը։ Պարը՝ տղամարդու հպարտ խոյանքը, ասպետության գեղեցիկ զգացումը թույլ չէր տալիս Սյոմային ուրիշ կերպ նայելու այդ գեղեցիկ կնոջը։ Եվ այդպես նայելը դուր էր գալիս նրան այդ րոպեին։ Այո, Մաքսիմը իր արյան ընկերն է, միասին են կռվել ռևոլյուցիայի համար, վիճել մահի հետ, միասին ազատվել մահից և ահա միասին են աշխատում սոցիալիզմի կառուցման մեջ։

Մարուսիան հանդարտ նվագում էր։ Մեղմ ու պարզ էր եղանակը։ Նա ոտը ոտին, լիքը կուրծքը կիթառի վրա կախած՝ պոկում էր հնչյունները։ Նրա երկար ճկուն հասակը, բարձր սրունքները, խուզած կարճ մազերի խոպոպները և խաղաղ մատները, որ հպում էին լարերին՝ իսկապես հիացնում էին Սյոմային։ Բայց երգը, պարը, նվագը նրա սիրտը լցրել էին բարձր զգացումներով։

— «Շա՛տ է գեղեցիկ Մարուսիան, բայց և Մաքսի՛մը լավ տղա է» — սկսեց մտածել Սյոման՝ ասունց հաշիվ տալու թե ինչո՞ւ է համեմատում։ Սակայն զգաց, որ այդ համեմատումը իրեն մի

հանգիստ մտքով է տոգորում, ներդաշնակում իր զգացումները։

Ուրախացավ, որ այդպես է։

Նա աչքով մի անգամ էլ գրկեց Մարուսիայի բարձր, կառուցիկ հասակը, որ ուռենու պես ճկվել էր կիթառի վրա, և նկատեց նրա կաթնագույն մորթին, որ ցայտել էր նրա ուսագլխին։ Սյոման աչքերը փախցրեց դրանից, հետո նայեց Մարուսիայի վայելուչ ոտներին, գողտրիկ տուֆլիների մեջ։

Ու հանկարծ վեր թռավ։

Մարուսիան զգաց նրա աչքերի պղտորությունը և բնազդով հասկացավ, որ իր ոտներից էին։ Բայց հեռու չգնաց, չմտածեց ավելի, քան կմտածի մի գեղեցիկ կին, որ սովոր է ամենքի հայացքին իր մարմնի վրա, որ և ամեն անգամ էլ «որևէ բան չի նշանակում»։

«Սյոման դիտում է իմ գեղեցկությունը» — անցավ նրա մտքով։ Սովորական հիա՜ցք...

Մարուսիան վեր թռավ, կիթառը նետեց անկողնի վրա և սկսեց քայլել սենյակում։ Նրա սլացիկ երկար հասակը, շնորհալի բարակ ոտները բեկբեկվում էին հպարտ շարժումներով։ Նա գնաց դեպի բաց դուռը և հենվելով նրան՝ սկսեց դիտել դուրսը։ Դուրսը մութն էր։ Երկինքը իր կրակի քրտնքի կայլակները ճակատին ժպտում էր անհասկանալի հավերժության ժպիտով։ Ու Մարուսիայի խոպոպները ու կիսագեմը թաղվելով նրա մուգ-կապույտ ֆոնի մեջ՝ նկատվում էր իբրև պատկեր նրա վրա գծագրված։ Ֆոնի մի կողմում ուրվականի պես մռայլվում էր Մասիսի սիլուետը։

Գիշերը խորանում էր։

Մարուսիան քթի տակ մի երգ մմռռալով եկավ նստեց իր տեղը։

— Նո՛ւ, բարի գիշեր, ես գնացի,— ասաց Սյոման և խլելով իր պստլիկ գդակը՝ ծուռ կպցրեց ծոծրակին և գանգուրները թափեց հանդուգն ճակատին։

— Ինչո՞ւ ես փախչում, դեռ կա՛ց,— վեր թռավ Մարուսիան։

— Ո՛չ, վաղը օրապահ եմ։

— Դատարկ բան է, քի՛չ քնիր,— պնդեց Մարուսիան,— նստի՛ր։

Ու քաշեց թևից նստեցրեց։

— Չէ՛, Մարո՛ւսիա, պիտի գնամ։

— Ինչ անհամն ես։ Նստիր էլի՛,— ասաց Մաքսիմը և կոնյակը լցրեց։

— Վերցրո՛ւ,— գոչեց նա, վերցնելով իր ըմպակը։

Նրանք չէին խոսում, այլ արմնկելով սեղանին ականջ էին դնում Մարուսիայի նվագին։ Երկար կշարունակվեր այս, եթե վերջապես Սյոման տեղից չշարժվեր։

— Էհ, շնորհակալ եմ, լավ երեկո անցկացրինք։ Բարի գիշեր։

— Բարի գիշե՛ր,— հնչեց Մարուսիայի հստակ, ուրախ ձայնը։

— Է՜հ, անհա՛մն ես, բարի գիշե՛ր,— մռմռաց Մաքսիմն ու վեր կացավ ճամփու դնելու Սյոմային։

Սյոման դուրս եկավ Մաքսիմենց սենյակից և մտնելով խոտերի ու մթության մեջ՝ մեքենայորեն շոշափեց ատրճանակը։

Անապատը խոժոռեց դեմքը նրա վրա և այրված թփերն ու ազազուն փշերը նոթերը կիտեցին՝ մթնաթաթախ գլուխները ցցելով այստեղից այնտեղից։

Քայլում էր Սյոման և նրա կոշիկները ռիթմով փսփսում էր գետինը։

«Լավն է Մաքսիմը, Մարուսիան էլ լավն է» — կրկնեց Սյոման մտքում և տխրեց, որ գիշերվա տարածումը բաժանեց իրեն այդ դույզից, որոնցից նա մի ջերմություն էր ստանում այդ անապատի մեջ։

Սյոման մտածում էր Մարուսիայի մասին։ Բայց իսկույն Մաքսիմի պատկերը գալիս կցվում էր նրա պատկերին։

Մի անբացատրելի բարություն էր զգում Սյոման Մաքսիմի մեջ։ Բարություն ընկերի, մարդու։ Զգաց, որ ինքը սիրում է նրան և ուրախացավ դրա համար։ Կարծես այդ սերը նրան պետք էր մի ուրիշ խռովք խաղաղացնելու իր մեջ, ուրիշ խռովք, որի պատճառը, ոչ էլ էությունը լավ չէր զգում։

«Հիմի նրանք մենակ են և Մաքսիմը նրան կգրկի, կհամբուրի» — մտածեց Սյոման խուսափելով այդ մտքից։

«Արժե Մաքսիմը դրան, նա լավ կովող տղա էր։ Մարուսիան էլ արժե նրան» — ավելացրեց Սյոման, հեռացնելով առաջին մտածմունքը։

Եվ սրա նման մտքեր սկսեցին պտտվել նրա ուղեղում, ճախրել, հեռանալ, մոտենալ։

Սյոման սկսեց մտքերն ուղղել իր վաղվա անելիքների կողմը։

Թղթեր կան վաթչությունից, որոնց պետք է պատասխանել։ Սկսեց կազմել այդ թղթերի բովանդակությունը։

«Այո, Մարուսիան գեղեցիկ է»,— մտածեց նա հանկարծ, ակամա։ Նրանք հիմի գրկախառնվում են, և ինքը չի կարող այնտեղ լինել։

«Նո՛ւ, սատանան տանի»— փսփսաց նա անախորժությամբ և ձայնը բարձրացրեց.

«Ապա ի՞նչ պիտի անեն, հիմա՛ր»...

Եվ ծխախոտ վառելով քայլերն արագացրեց։

«Մարուսիան լավն է և բարի. նրա մասին ոչինչ վատ չպիտի լինի մտքումդ։ Վերջապես ի՞նչ գործ ունես ուրիշի բախտավորության մեջ։ Տղա՛մարդ եղիր»։

Եվ զգաց, որ մի զգացում բարձրացնում է իրեն։ Տղամարդու զգացումը հանդեպ իր ընկերոջ։ Այնտեղ իր ընկերը սիրում է մի կնոջ, ինքը նրանց բարեկամն է ու ընկերը։ Նրանք մինչև գիշերվա կեսի վերջին ջերմ խոսքը, երգն ու հյուրասիրությունը բաժանեցին իր հետ։ Ավելին ի՞նչ կարող էին անել։ Եվ ինչ բաժին որ ինքն ունի Մարուսիայի հարցում — բայց ի՞նչ բաժին... — Նա այդ բաժինը զիջեց ընկերին, ջնջեց այն անախորժ թախիծը, որ սողոսկել էր իր սիրտը։

Առավոտյան, երբ Սյոման զարթնեց՝ առաջին վայրկյանի զգացումն այն էր, որ իրեն ինչ որ անախորժ բան էր պատահել և երկրորդ վայրկյանին՝ հասկացավ։ Մարուսիա՛ն... Եվ տհաճություն զգաց, տհաճություն խաղաղ տղամարդու, որի կյանքը խոովում է մի նորություն։ Ուզեց վեր կենալ — գործի ժամանակ էր, բայց միայն թևերն հանեց դուրս և ծխախոտը վառելով՝ սկսեց մտածել։

Մեղկություն էր գալիս վրան, չէր ուզում վեր կենալ։ Եվ ծխելու դուրեկանության պես քաշում էր նրան երեկվա անցուդարձի հուշը։ Նա երկար կմնար անկողնում՝ եթե ժամանակը չխթաներ նրան։ Վեր թռավ անկողնից և սկսեց արագ հագնվել։ Լվացվելու սառը ջուրը գրգռեց նրա շարժվելու տրամադրությունը։ Եվ նա առանց մի բան ուտելու գնաց պարետային վարչություն։

Ամբողջ կեսօր նա գլուխը մխրճել էր թղթերի ու գործերի մեջ։ Դա նրան զբաղեցրեց և ուրախացրեց։

«Վերջապես ի՞նչ եմ ուզում... Մարուսիայի՞ն։ Ոչ, իհարկե։ Ի՞նչ հիմարություն է այդպես մտածելն անգամ»...

Եվ նա ձեռքը թափ տալով անցնում էր ուրիշ թղթերի։

Գործերի, զբաղմունքի եռ ու զեռի մեջ նա նկատեց, որ Մարուսիան իր հրապույրով այնքան էլ խոցելի չէ նրա համար, և որ գիշերա նա ուրիշ բան էր։ Դրա պատճառը անշուշտ գիշերային ժամն էր, կոնյակը, երգը, պարը։

«Եվ վերջապես մի՞թե ես կին եմ ուզում»։

Գործի տեմպը, կարմիրբանակայինները իրենց բողկի պես առողջ դեմքերով, պաշտոնի հոգսերը մի շնչով փչեցին նրա գրրզրոված երևակայության վրա։ Նա սթափվեց և ինքն իրեն խոստովանեց, որ ինքը անձնատուր է եղել ինչ որ տարտամ, մեղկ զգացումների, որոնք հոգնած ու պարապ ժամերի այցելուներ են։

Թեթևացավ։ Սկսեց սուլել։ Պահակները բերին մի մաքսանենգի, որին բռնել էին Արաքսի շամբուտում։ Պահակը պատմեց թե ինչպես բռնեցին։ Նա ամբողջ գիշերը հսկելիս էր եղել։ Նրա շոգից լղարած դեմքի և խոր ընկած կապույտ աչքերի մեջ մի պողպատե խստություն կար, որ վճռականորեն վանում էր ամեն օրինազանցություն։ Սյոման ախորժանքով մտիկ տվեց նրա կենտրոնացած դեմքին և հաճությամբ ընկավ իր պարտականության վրա։ Կյանքի ընդհանուր հոսանքը, նրա ոչ-անձնական հոգսը, ուժեղ հորձանքը ազդու բալասան էին Սյոմայի մեղկացող տրամադրությունների համար։

Բայց դա կարճ տևեց։ Սյոման գործը վերջացրեց, ճաշեց և դարձավ տուն։ Ընկնելով մահճակալի վրա՝ նա կարծես ընկավ իր մեղկության և միայնության օրորոցը, որ հաճելի և վտանգավոր օրորով նրան քաշում էր դեպի մի թունավոր անդունդ։

Մարուսիայի կարապային իրանը հպարտ շարժումը լողաց պատի, լուսամուտի և այլ առարկաների արանքից և թափանցիկ մի Մարուսիա եկավ կանգնեց նրա դիմաց։

«Կինը պե՛տք է, կյանքի մի պետք» — ասաց մտքում Սյոման։— Հենց նրա համար է պետք, որ նրա մասին չմտածես, ինչպես օդի մասին։ Սեր է, սովորություն է թե ինչ՝ կինը պետք է։ Եվ վերջապես չի կարելի այսքան զբաղվել մի կնոջով։ Ա՜յ, եթե ինքն էլ Մաքսիմի պես մի կին ունենար ապատեղ—մտքում ոչ մի կին չէր լինի.

Նրան հանգստացրեց իր գործնական դատողությունը։ Նա հանգստացավ, որ գտավ իր «տրամադրությունների» բուն պատճառը։ Բայց մի՞թե իսկապես ինքը տրամադրություններ ունի։ Այո, ունի, անհանգիստ է։ Նա մտածում է Մարուսիայի մասին։ Այո, ճիշտ է։

Բայց մի՞թե նա իրա՛, Մարուսիայի մասին է մտածում։ Իհարկե, ոչ։ Լիներ մի ուրիշ կին Մարուսիայի նման, նրա կողքին, իր միտքը կգնար նրա կողմը։ Կսիրեր նրան կամ հենց այնպես, ժամանակ կանցկացներ հետը, և հարցը կլուծվեր։

Եվ վերջապես ամոթ է իր պես տղամարդուն, ռևոլուցիոներին, որ կնոջ շրջազգեստի համար այդքան միտք է մաշում։

Նա քնեց, և քանի որ գիշերը քիչ էր քնել՝ ընկավ խոր և կազդուրիչ քնի գիրկը։

Սյոման քնած էր բավական։ Բաց դռնից ներս մտավ մի սահմանապահ՝ հրամկազմից, սուր հայացքով նայեց տախտի վրա մեկնված Սյոմային և մնաց կանգնած։

«Վաղո՞ւց է քնել սա», ասաց նա կիսաձայն և մոտենալով Սյոմային՝ սկսեց նրան թոթվել։

Սյոման վեր թռավ, բայց և իսկույն հորանջեց.

— Միտյա՞, ո՞ր սատանան քեզ բերեց։

Ու ձեռը տարավ ծխախոտի տուփին։

— Իսկ դո՞ւ որ ջհանդամներն ես կորել։ Ինչո՞ւ չեկար բջիջի ժողովին։

— Ճիշտ է, հիմար բան եմ արել, մոռացել եմ։ Ե՞րբ էր։

— Հիմարն այդ հարցն է։ Օրը հայտնի է։ Հը՞, ախպե՛ր ջան, դու այդտեղերք ինչ որ գործեր ես բաց արել։ Հիվա՞նդ էիր։

— Ոչ։

— Ապա ինչո՞ւ չեկար ժողովին։

— Ոչ մի արդարացուցիչ պատճառ։ Սխալվել եմ, մտից գցել եմ։ Էլ չի լինի։

— Այդ գիտե՛նք։ Բայց ինչո՞վ ես զբաղված, որ վերջերս պարտականություններդ թուլացրել ես։

— Ոչնչով։ Ասում եմ էլի՞, էլ չի լինի։

— Դրանով չես պրծնի։ Վաղը կգաս բջիջ և բացատրություն կտաս։ Կինոյի հարցն ի՞նչ եղավ, գրե՞լ ես Քաղաքային։

— Ոչ։

— Նո՛ւ, տեսնո՞ւմ ես։ Այդպես չի կարելի։ Բանակայինները վայրենի կյանք չեն կարող վարել այստեղ։ Ռադիոն լավ չի գործում, կինո չկա։ Շոգ է։ «Անկյունը» դատարկ է, պատի թերթը զառանցում է։ Կոլտնտեսությունների մասին զեկուցումը պատրաստ է։

— Ոչ, բայց կպատրաստեմ շուտով։

— Ախր գիտեմ, որ քեզ մի բան պատահել է։

Սյոման վեր թռավ տեղից։

— Միտյա՛, դու ինձ մի բան ասա,— վրա ընկավ նա,— դու եկել ես այսօր ինձ պարտիա՞ սովորեցնելու։

— Ի՞նչ,— խեթեց Միտյան փշի պես,— պարտիա սովորեցնելո՞ւ,— ապա ի՞նչ ես կարծում։ Այնպիսի պարտիայի վարպետներին, ինչպես որ դու ես՝ կարելի է երբեմն սովորեցնել։ Ի՞նչ ես քեզանով ներկայացնում, որ չսովորեցնեմ։ Եվ այդ ո՞ր օրվանից ես ու դու այլևս կարիք չունենք, որ մեզ սովորեցնեն։ Դու, ախպե՛ր ջան, այդպիսի խոսքերով ինձ չես վախեցնի։ Սանձդ թուլացրել ես՝ պրծավ գնա՞ց։

— Թուլացել եմ՝ քաշիր։

— Նո՛ւ և քաշում եմ։ Ասենք բջիջը կքաշի, ես՝ ի՞նչ։ Պարտիա է։

Սյոման տաքացավ։

— Լավ է, գնա կա՛թ կեր և գլխիս ավետարան մի՛ կարդա։

— Կկարդամ և լավը կկարդամ — ձայնը բարձրացրեց Միտյան։— Ինչո՞վ ես պարծենում — անցյալո՞վդ։ Ո՞վ չունի անցյալ, սատանան տանի։ Ամեն մեկը եթե քեզ պես անցյալը շիրմա անի ու հետևը քնի՝ ո՞ւր կգնա։

— Դու հիմարություններ ես ասում — մեղմեց Սյոման — ի՞նչ անցյալ, ի՞նչ ապագա։ Քեզ ասում եմ, միտս չէր. կարճ ու պարզ։

— Դատարկ խոսք է,— համառեց Միտյան,— բջիջում կասեմ։

— Հա՛, այդպես։

— Հա՛ այդպես։ Հիմի ձայնդ կտրիր։

Միտյան լռեց և հանելով ծխախոտը՝ նայեց շուրջը։

— Լուցկի՛ տուր։

Սյոման վառեց լուցկին։ Միտյան սկսեց ծխել։

— Շոգ է, սատանա՛ն տանի,— խոսեց նա մեղմ ձայնով,—

չորս նորակոչներ էլի դողացրին։ Եմիլյանին ասացի կոնյակ բերի քաղաքից։

— Ասել է՝ ձանձրանո՞ւմ ես,— ժպտաց Սյոման։

— Ինչի՞ պիտի ձանձրանամ,— նորից կծեց իր սուր հայացքով Միտյան,— կնիկմա՞րդ եմ, ի՞նչ եմ։ Ի՞նչ, դու ձանձրանո՞ւմ ես։

Սյոման չէր սպասում, որ հարցը կվերագառնա իրեն։

— Ե՞ս, չեմ ձանձրանում,— ասաց նա տարտամ եղանակով,— բայց կին չկա, ա՛յ բանն ինչումն է։

— Կի՞ն,— ծոր տվեց Միտյան,— տես ի՞նչ ոգեց սիրտը։ Աստվա՞ծ ենք, ի՞նչ ենք, որտեղի՞ց ստեղծենք։

— Չգիտեմ, բայց կնիկմարդը պետք է,— ասաց Սյոման, և զգաց որ այն չի ասում, ինչ որ զգում է։ Եվ նստեց տախտի վրա։

— Ի՞հ,— արեց նա,— հազար կին էլ լինի այստեղ՝ կարծում ես մարդու սիրտը հեշտ կկպչի՞ դրանց... Կարծում ես մարդ կին է ուզում հենց այնպե՞ս։

— Հապա ո՞նց։

— Կի՞նը, կինը պիտի ուրիշ տեսակ լինի։

— Ինը մի տեսակ է լինում, հիմար,— կտրեց նրան Միտյան։

— Կնոջ ոչ մի տեսակը չկա, ինչպես և տղամարդու։ Մեկը որ ձեռդ ընկավ՝ մյուսներն էլ արդեն գիտես ինչ են։

— Փիլիսոփա մի դառնա գլխիս։

Ու վեր թռչելով՝ պատուհանից խլեց շախմատը.

— Դե նստի՛, նստի՛, քանի գլուխդ հիմար դրությունն է՝ մի մատ անեմ քեզ։

Սկսեցին շախմատ խաղալ։

— Թախծալի է այս այրված անապատը, այս շոգը, մոծակը, այս չոր հողն ու ջեռացած քարերը,— խոսեց Սյոման՝ աչքը շախմատի քարերին հառած։

— Թախծալի՞... է՛հ, ստեպ չես տեսե՞լ Քաղաքացիական կռվի ժամանակ հիշո՞ւմ ես Աստրախանի ստեպները։

— Այնտեղ զբաղմունք կար, կռիվը։ Նա չէր թողնում, որ անիծյալ թախիծը թափանցի հոգիդ։

— Իսկ այստեղ կռիվը չկա՞։ Հիմա՛ր, սա պակա՞ս կռիվ է — իմպերիալիզմի դեմ այս խաղաղ իրամատային կռիվը։ Խրամատի

մեջ ես, անխե՛լք։ Չե՞ս տեսնում ինչպես է ալիքը բարձրանում։ Ի՞նչ ասել է անապատ։ Արաքսի ափը — սա Միության ափն է։

Նա վեր թռավ, թողնելով շախմատը։

— Ես քեզ ճառ եմ ասում։ Դու դիտես, որ դա ճշմարիտ է, իսկ միևնույն ժամանակ թթվում ես քո հոգու մի անկյունում։ Թափ տուր քեզ. ե՛կ բչիջ, գո՛րծ արա։ Կոմունիստը — թախի՞ծ, հիմար հո չե՞ս։ Միևնո՛ւյնն է, սատանան տանի։ Մոսկվա՞ թե Արաքս։

— Նու, նու, լավ, շնորհակալ եմ քաղաքագիտության համար — զվարթացավ Սյոման։ Նա Միտյայի մտքերի կարիքը չուներ, բայց Միտյայի խանդավառ զգացմունքները տաքացնում էին նրան։ Նրան հաճելի թվաց իր հավատացած գործի մասին լսելը մեկ ուրիշի ջերմ խոսքերով։ Դա սրտապնդիչ էր և կենարար։

Ու քանի խոսում էր Միտյան՝ այնքան ավելի նրա ածելանման պարզ աչքերը լցվում էին ջերմ փայլով։ Նրա դաժան դեմքը մնալով դաժան՝ թվում էր մեղմ։

Բայց Սյոման զգում էր, որ Միտյան ևս բավականությամբ էր նկարագրում իրենց դրությունը, որով այս անապատը կապվում էր ընդհանուր ռևոլուցիոն շարժման հետ, շարժման մեջ էր ընկնում և չէր թվում այնքան մռայլ ու լքված մի վայր։ Ոչ, Արաքսի ափն էլ աղմուկի մեջ է։ Նրանք այստեղ կատարում են մեծ գործի մի փոքրիկ մասը։

Այս զրույցը, Միտյան՝ իր պողպատե հասակով, կտրուկ, համառ մտքերով, խստակյաց այդ կոմունիստը նրան ուրախացնում, զբաղեցնում էր։

Եվ նա համարյա չէր զգում այն, որ նա անվանում էր «թախիծ»։

Նրանք խաղացին և խոսեցին մինչև մութն ընկնելը։ Հետո թեյ խմեցին։ Երկար խոսում էին սահմանի անցուդարձից, Ռուսաստանի հացամթերումից, հետո անցան իրենց զորամասի կարիքներին,— մի զրույց, որ Սյոմային բերեց կապեց իր հասարակ ու առողջ առօրյային։

Բայց երբ Միտյան գնաց և մենակ մնացած Սյոման գուրս եկավ դուռը և աչքը գցեց անապատին՝ անախորժ տարտամությունը եկավ պաշարեց նրան։ Նա սկսեց անցուդարձ անել սենյակում։ Հետո կանգ առավ պատուհանի առաջ և կարծես գյուտ արավ,

այնքան հետաքրքրեց նրան այն միտքը, որ թեև շատ վաղուց պարզ էր, բայց պետք է բոլորովին կենդանի հնչեր՝ որ նա թեթևվանար.

— Չէ, կին է պետք, ուրիշ տեսակ կին։

Մի քանի օր Սյոման զբաղված էր իր պաշտոնի գործերով և ժամանակ չուներ խորանալու իր ձանձրույթի մեջ։ Օրերը գալիս, օտարի նման մտիկ էին տալիս Սյոմային և անցնում։ Նա զգում էր նրանց խորությունը, ինչպես իրեն շրջապատող դաշտի չորությունը, որ նրա հոգու վրա թախիծ էր ցանում։

Եվ նա կեսօրի արևից տոչորվելով ճամփա ընկավ դեպի Մարուսիայենց տուն։ Դեռ չհասած հողաշեն, տուփի նման տանը, որ հեռվից դեղնին էր տալիս և բաց դռան սև ստվերով շրջապատի մռայլի մեջ մի ժպտացող կետի էր նմանում՝ նրա սիրտն սկսեց բաբախել։ Երբ մոտեցավ տանը սև ստվերի միջից զնգաց Մարուսիայի հնչուն ձայնը.

— Սյոմա՞։

Սյոման ներս մտավ, բարևելով Մարուսիային։

— Էլի՞ թրև ես գալիս ինչ որ տեղեր, ո՞րտեղ ես, մեռա՛ծ,— լսվեց Մաքսիմի ձայնը։ Նա գդակը դրել՝ պատրաստվել էր գնալու։

— Ո՞նց ես, ո՞ւր ես,— հարցրեց Մարուսիան ծիծաղկոտ հայացքով գրկելով նրան։

— Ամբողջ երեկո սպասում էինք քեզ, հիմա՛ր — նկատեց Մաքսիմը,— Մարուսիան խորոված էր արել։ Քա՞նի անգամ ասել եմ՝ այս շոգերին մի՛ թթվիր, ե՛կ մեզ մոտ։ Նախամարդու կերպարանք ես առել։— Նո՛ւ, ես գնացի, դուք զրո՛ւյց արեք։ Կգամ։

Մաքսիմը գնաց։ Սյոման նստեց և լուռ նայեց Մարուսիային։ Սա նստեց և չարաճճի աչքերը ճաճանչեց Սյոմայի դեմքին։

— Ինչո՞ւ ես բարկացել։

— Ե՞ս, չեմ բարկացել։ Հոգնած եմ։

Իսկապես բարկացած չէր, բայց և հոգնա՛ծ չէր։ Ինչ որ հոգեկան կարկամություն էր զգում, որ ուրախությունից էր։

Նա թեթևացավ նայելով Մարուսիային։ Եվ իսկապես այդ կինը զարմանալի հեշտ փարատում էր ամեն մռայլ բան կյանքի մեջ։ Նրանից բուրում էր մի ջերմ մտերմություն, ինչպես գարունքից։ Սյոման սկսեց գիտակցել, որ Մարուսիայի տունը միակ վայրն է, ուր նա կարող է իր թախիծը բուժել։

Նրանք սկսեցին զրուցել։ Մեկը այն զրույցներից, որ մտերիմների մեջ է լինում — հաճելի մի նյութից մյուսը։ Այդ մտերիմ զրույցը Սյոմայի մեջ ծնեցրեց այն միտքը, որ ինչպես իր և Մաքսիմի մեջ, նույնպես և իր և Մարուսիայի մեջ անշրպետներ չկան, որ իրենք երեք մտերիմներ են։

Մարուսիայի մեջ բնաղդն սկսեց իր աշխատանքը։ Նա նկատեց, որ Սյոման ինչ որ «տրամադրություն» է սկսել։ «Տղամարդը գիտե շուտ տրամադրվել և շուտ էլ մոռանալ» — մտածեց նա և որոշեց նշանակություն չտալ դրան՝ բնական համարելով այդ ամեն տղամարդու մեջ։ Մարուսիան համակրանք էր տածում դեպի Սյոման։ Եվ այնքան այդ մտերմությունը վստահեցնում էր նրան, որ նա չէր վախենում «ոչ մի բանից»։

«Արդյոք կարո՞ղ է Մարուսիան ինձ ևս սիրել... Մաքսիմի հետ» — ծագեց մի այսպիսի չարաճճի միտք Սյոմայի մեջ, բայց նա իսկույն ևեթ մտրակեց իրեն. «ի՞նչ անհեթեթություն»։ Եվ շարունակեց. «Ի՞նչ հիմար բան է այս զույգ ասածը, ինչո՞ւ «զույգ» և ոչ «երեք», «չորս» և այլն։— Դարձյալ հիմար բան ես ասում»— ընդհատեց իրեն Սյոման և միտքը շրջեց ուրիշ կողմ։

Բայց մտքերը անզգալի կերպով տոգորվում էին այդ տրամադրությամբ։ Սյոման չէր մտածում, այլ անորոշ ձևերով զգում էր, որ լողում է այդ մտքերի հոսանքում։ Ճիշտը՝ այդ հոսանքը նրան տարտամորեն քշում տանում էր դեպի «զույգը»։ Եվ նա Մարուսիայի ոսկեղոկույզ գանգուրների, հպարտ գլխի հետևից նշմարում էր Մաքսիմի դուրս լողացող բարի և ազնիվ ճակատը, որ անբաժանելի էության պես նկատվում էր Մարուսիայի հետ։

Դա «զույգն» է, բնական, դարերով հաստատված զույգը։ Բայց ինչո՞ւ էր Սյոմային թվում, թե Մարուսիան, որի ամբողջ վերաբերմունքը դեպի իր ամուսինը պիտի լիներ մի «կորեկտ» սեր դեպի իր ամուսինը՝ այդ Մարուսիան նկատվում էր նրա առջև իբրև անվերծանելի հանելուկ։ Այդ Մարուսիայից շնչում էր անբսպառ ջերմություն, որ տարածվում էր իր շուրջը, տաքացնում, մեղմացնում ամեն իր մոտ կանգնած էակի։ Սյոմայի առջև նա մի անհուն աշխարհ էր մտերմության, կյանքի, ուրախության, որին կարող են դիմել ամենքը։ Նա այնպես էր զգում, թե Մարուսիան ինչպես մայր, ինչպես քույր, ինչպես մարդ, մեկինը չէ միայն,

նա այնքան անհուն է և լի գեղեցկությամբ ու զգացումներով, որ չի ամփոփվի մի հոգու մեջ։

Եվ ինչպե՞ս Մարուսիան հեշտացնում է այսպիսի մտքերը։ Ի՞նչ թեթև իրագործելի է թվում ամեն բան, երբ նայում ես Մարուսիայի «երաժշտական» դիմագծերին, որից ամեն ստոր, նվաստ, մեղավոր միտք վեհանում է։ Ամե՞ն ինչ կարելի է Մարուսիայի հետ ու այդ ամեն ինչը գեղեցկանում է Մարուսիայի հետ։ Նա հեշտացնում է ամեն երևակայություն։

Ահա թե ինչու Սյոման իրեն չէր համարում խորթ ու ավելորդ՝ Մարուսիայի և Մաքսիմի հետ, այլ ձուլված նրանց հետ։

«Ի՞նչ կլինի, եթե ես Մարուսիային սիրեմ» — հանկարծ մտածեց Սյոման։— Մաքսի՞մը... թող չիմանա Մաքսիմը, անգամ Մարուսիան։ Ո՞ւմ եմ խանգարելու»։

Սյոման կարմրեց այդ մտքից և լսելի կերպով հևաց։

Կարծես մութ գրի միջից մի անցք գտավ, որտեղից մի լույս թեթևացնող կերպով ժպտաց նրան։ Նա ագահ վրա ընկավ այդ մտքի վրա։

Հանկարծ նա նկատեց, որ բավական ժամանակ նրանք լռել են։

Լսվեց Մաքսիմի ձայնը։ Սյոման զգաց իր սրտի տրոփյունը։ Եվ երբ Մաքսիմը շառագունած և ժպտալի մտավ ներս՝ Սյոման նայելով նրա թարմ ժպիտին՝ իսկույն ցրիվ տվեց իր մեղկ մտքերը։ Ընկերոջ անգիտակ մտերմությունը, նրա միամտությունը դիպավ Սյոմայի երազանքին և լույսի պես վանեց նրան։ Նա թափ տվեց իրեն:

Մաքսիմն սկսեց պատմել իրենց տանից ստացած մի նամակի ծիծաղելի բովանդակությունը, որ լցրեց սենյակը նոր, աշխույժ տրամադրությամբ։ Մարուսիան վեր թռավ և սկսեց անցուդարձ անել սենյակում։

Սյոման սկսեց դիտել նրան։ Մարուսիան զարմանալիորեն աճում, գեղեցկանում էր նրա առջև։ Նա նոր սկսեց նկատել նրա բարձր հասակը, սլացիկ գեղեցկությունը, որ մարդու սիրտը լցնում է աշխուժով։

Սյոման ուզեց թափ տալ իրեն և ուշը դարձնել ուրիշ կողմ, բայց զգաց, որ այլևս անկարող է շմտածել Մարուսիայի այդ փոփոխության մասին։

Դարձյալ անախորժ թախիծը եկավ տիրեց նրա հոգուն։ Եվ նա պարզեց իր համար մի բան, որ ինքը այլևս անկարող է դիմադրել իր մտքերին, որ ինքը հենվում է հենց այն մտքերի վրա, որոնք իրեն տանելու են անդունդ։

«Ոչ. Մարուսիայի մասին կմտածի նա, բայց Մաքսիմից ծածուկ, Մարուսիայից ծածուկ»։

Քրտինքը տվեց վրա։ Նա խլեց գդակը։

— Ո՞ւր,— թռավ նրա առաջ Մարուսիան։

— Գնում եմ, գործ ունեմ։

— Թո՛ղ, ի՞նչ գործ, ճաշում ենք։

Սյոման չլսեց, գնաց։

Հասնելով տուն՝ ընկավ տախտի վրա և սկսեց ծխել։ Անգամ ֆիզիկապես նա թույլ էր զգում իրեն, այնքան հոգեկան թույլ թուլացրել էր նրան։

Հիմա պարզ է. նա հիվանդ է «Մարուսիայի մտքերով»։

Բայց ինչ արագ բացվեց հիվանդությունը։ Սա կարող է կեղտոտել ընկերական հարաբերությունը։ Մի այնպիսի ընկերի, որի հետ քաղաքացիական կռիվների կրակների միջից միասին են դուրս եկել, որի հետ հաղթել են և հիմա միասին կառուցանում են.

«Ամոթ է,— շշնջաց Սյոման,— դու տղամարդ չես, այլ փալասի կտոր»։

Բայց պարզ տեսնում էր, որ այդ խոսքերը զուր են, որ ինքը կաշկանդված է, և ինչ-որ մի բան պիտի կատարվի։ Եվ այդ բանը, որ նա կարծում էր թե ուշ պիտի կատարվի, ահա կատարվում է հիմա՛, և արագ։ Արագ պարզվեց իր համար, որ ինքը սիրում է Մարուսիային։

Որոշեց չգնալ Մարուսիայենց։ Հետևյալ օրը կրկին մխրճվեց իր պաշտոնական գործերի մեջ։ Աշխատեց համոզել իրեն, որ այսպիսի «վատ» մտքերով չի կարելի մոտենալ Մաքսիմին։ Որոշեց թեկուզ ամբողջ մի շաբաթ, մի ամիս չգնալ նրանց կողմը, մինչև որ անցնի «հիմարությունը»։

— Սյոմա՛, դու այն օրը նեղացա՞ր մի բանից, ի՞նչ է պատահել քեզ,— լսվեց Մարուսիայի ձայնը։

Նա ներս մտավ և կանգնեց Սյոմայի դիմաց։

— Հը՞, ի՞նչ է պատահել։ Մաքսիմն ասում է հիմարացել ես։ Ասա՛, ի՞նչ հիմարություն է։

— Նստի՛ր, Մարուսիա։

— Կնստեմ, դու ասա՛, ինչի՞ փախար հանկարծ նեղացած։

— Ես նեղացած չեմ, Մարուսիա։

— Ապա ի՞նչ է պատահել քեզ։

Սյոման նայեց Մարուսիային, որի աչքերում թեթևակի սկսվում էր կանացի թափանցումը գաղտնիքների։ Մարուսիան ամբողջ էությամբ զրկեց նրան։ Ու այն բոպեին այնքան հեշտ թվաց Սյոմային իր խռովքի պատճառը նրան հայտնելը, որ հենց այն է պիտի հայտներ, բայց հենց փորձեց այդ, իսկույն զգաց, որ դա ամենից դժվար բանն էր աշխարհում։

— Ձանձրալի է այստեղ։ Մարո՛ւսիա,— ասաց նա։

— Ձանձրալի է, գիտեմ։ Հենց Մաքսիմն էլ այդ է ասում քեզ համար։ Ուրեմն ե՛կ մեզ մոտ, հաճախ եկ։

— Չէ՛, Մարուսիա, ես չեմ ուզում իմ ձանձրույթս բերել ձեզ մոտ։

— Գուցե տուն ես ուզում գնալ։

— Տո՛ւն, ի՞նչ կա ինձ համար տանը։ Ինձ համար ոչ մի հանգիստ տեղ չկա։

— Ի՞նչ ես փնտրում, որ չես գտնում այստեղ կամ տանը,— հարցրեց Մարուսիան լուրջ դեմքով։

— Ոչինչ,— և Սյոման աչքերը գցեց գետին։

Մարուսիան վեր կացավ։

— Չեմ պնդում, գուցե քեզ համար մեզ մոտ ևս ձանձրալի է։ Այդ կարող է պատահել։ Բայց ես ու Մաքսիմը միշտ էլ սպասում ենք քեզ — այդ իմացի՛ր։ Մեզ համար էլ պետք է ընկերությունը։ Վերջապես թո՛ղ հիմարությունները, այսօր թեյին եկ մեզ մոտ կսպասենք։

Եվ ուզում էր հեռանալ, բայց Սյոման ձեռով արեց.

— Լսի՛ր, Մարուսիա։ Ճիշտն ուզո՞ւմ ես։ Ես միշտ զգում եմ, որ կարող եմ խանգարել ձեզ... ամուսիններիդ։

— Մեզ խանգարե՞լ,— զարմացավ Մարուսիան։

— Պարզը խոսենք. դուք ամուսիններ եք. կուզենաք ձեզ համար ասել-խոսել ա՛յն, ինչ-որ ձեզ է հաճելի։ Ի՞նչ գործ ունեմ ես ձեզ մոտ։

Մարուսիան ծիծաղեց։

— Նո՛ւ, գաղտնի խոսակցության համար ժամանակ կգտնվի։ Եվ վերջապես ամուսինը չի փախչի։

Սյոմային դուր չեկավ ո՛չ այդ ծիծաղը և ո՛չ էլ այն միտքը, որ գաղտնի խոսակցություններ ունենում են նրանք, կարծես դա նոր բան լիներ նրա համար։

Եվ ինչո՞ւ այդ աշկարա փաստը, որի մասին գիտեր նա, որը ծիծաղեցնելու չափ հայտնի է և սրինական բան է՝ նրան այդպես ծանր խոցեց, երբ դրա մասին խոսվեց, Կարծես դա իսկապես փաստ դառավ, երբ Մարուսիան ինքն ասեց այդ։

Սյոման սրտնեղեց։

«Կարող էիր այդ բանն իսկի՛ էլ չասել» — ասաց մտքում և նոթերը կիտեց։

— Մարո՛ւսիա, այնպես ես խոսում, կարծես ամուսին չունենաս և չես սիրում,— ասաց Սյոման և ասաց հանկարծ, որ չմտածի չասել,— մի՞թե դու այդքան էլ պահանջ չունես ամուսնուդ հետ երկար մենակ մնալու։

— Ինչո՞ւ չէ, ես սիրում եմ Մաքսիմին։ Բայց հո չեմ կարող ամբողջ օրը քիթ քթի հետը նստել։ Ուրիշ մարդիկ էլ են հետաքրքիր։

Այս խոսքերն հանգստացրին Սյոմային։

— Մարո՛ւսիա, կարո՞ղ էիր ուրիշին սիրել,— հանկարծ հարցրեց Սյոման և զգաց, որ ինքը ընկած է մի զառիվայր մակարդակի վրա և գլորվում է ակամա և արագ։

— Ի՞նչ հարց է դա,— զարմացավ Մարուսիան։

— Ոչինչ։ Տեսական հարց։ Կարո՞ղ է մի կին, որ սիրում է իր ամուսնուն՝ այդ բոպեին զգալ, որ հնարավոր է և մի ուրիշին սիրել։

— Հնարավո՞ր. ինչո՞ւ չէ։ Ընդհանրապես կարող է։ Սերը վառվում է, սերը հանգչում է։ Ամեն բան կարող է պատահել։

— Կարո՞ղ էիր դու երևակայել, որ դու մի օր չես սիրի Մաքսիմին, այլ մի ուրիշին։

Մարուսիան մտածեց.

— Մաքսիմի՞ն... ոչ. ես նրան չեմ կարող չսիրել։

— Ամենևի՞ն։

— Ամենևին էլ չէ։ Չեմ մտածել այդ մասին։

— Ապա մտածի՛ր։

Մարուսիան սկսեց մտածել։

— Ո՞վ է իմանում, ինչե՞ր չեն պատահում կյանքում։ Կարող է, իհարկե։ Բայց ես հիմա զգում եմ, որ սիրում եմ Մաքսիմին։

— Իսկ Մաքսի՞մը։

— Մաքսի՞մը, օ՛, նա ինձ շատ է սիրում։

Նրանք լռեցին։

— Այո,— շարունակեց Մարուսիան,— դա ինձ համար մեծ ուրախություն է այս անապատում։ Առանց Մաքսիմի, ի՞նչ մեղքս ծածկեմ, ես այստեղ չէի կարողանա գործ կատարել։

«Մարուսիան շատ է գեղեցիկ — մտածեց Սյոման — և ի՞նչ պիտի անեմ ես»...

Եվ նա մտիկ տվեց նրա ձյունեղեն ուսերին, նեղ իրանին, որ ուռենու պես ճոճվում էր ման գալու ժամանակ և բարակ, երկար ոտներին, որ երաժշտության պես քայլում էին սենյակի երկարությամբ։

«Մարուսիան աղետավո՞ր կերպով գեղեցիկ է» — կրկնեց մտքում Սյոման և ճնշվեց այդ զգացման ծանրության տակ։

Մարուսիան նայեց Սյոմային և մի անախորժ բան զգաց։ Որ արդեն կոտրվել է այն սահմանաքարը, մինչև ուր մի տղամարդ կարող էր մոտենալ իրեն։ Եվ իբրև փորձված բժիշկ, որ դնում է ճիշտ դիագնոզը և գիտե որ տվյալ հիվանդությունը թեև թեթև նշաններ ունի, բայց անցնելուց առաջ դեռ մի ծանր շրջան ունի անցնելու և պատրաստվում է երկար խնամքի — այնպես Մարուսիան որոշեց «հիվանդությունը» և լրջորեն իրեն հետ քաշեց։

«Պատմություն է սկսում» — մտածեց Մարուսիան և մոտենալով պատուհանին՝ ձեռքերը ծալեց կրծքին։ Նա դուրս էր նայում, իսկ Սյոման ճնշված դիտում էր Մարուսիայի կանգնվածքը, որի մեջ մի հատուկ բան կար, որ նվաճում էր մարդու — բարձր հասակի հրամայող, սաստող շեշտը, տիրական գեղեցկությունը, հաղթող հպարտանքը։

«Սա ինձ ամեն բան պիտի անել տա» — կայծկլտեց Սյոմայի գլխում։

Անդիմադրելի, բնազդային մի ուժ, հրաբխային հարվածի պես նրա հոգու խորքերի տակից՝ խոսեց Սյոմային։ Եվ առաջին անգամ նա տեսավ, որ անց է կացել սահմանը։ Նա միայն մի բան որոշեց։ Որ նա չի կարող դավաճանել իր ընկերին, և չի կարող

մեռցնել աղետալի զգացմունքը դեպի Մարուսիան։ Ուստի և դա կմնա ծածուկ երկուսից էլ։ Թող տևի տարիներ թեկուզ։ Միակ ելքը սա է, քանի որ նա անդարձ «հիմարացել» է արդեն։ Եվ ահա այս ելքը — այս թույլտվությունը, որ դավաճան զգացմունքը դա և ծածուկ բնակվի նրա հոգու մեջ.— հանգստացրեց Սյոմային։

Մարուսիան հրաժեշտ տվեց նրան տուն գնալու համար, բայց Սյոման ընկերացավ նրան մինչև նրանց բնակարանը։

Սյոման մի նոր կենդանություն նկատեց իր մեջ։ Կենդանություն, որ զգում է մարդ՝ խոհերից վճիռների և գործողությունների անցնելիս։ Նա նկատեց նաև, որ իր մեջ մեկ ուրիշը իրենից անկախ գործում է, կարգադրում, հրամայում և հիմի հայտնվել է արդեն։ Եվ թելադրում է։

Եվ արդեն պարզ է։ Սյոման սիրում է Մարուսիային։ Ճիշտ է՝ ծածուկ, իր մեջ, բայց դրա մեջ հույս կա, որ ընկերական պարտականությունը հարվածող այս հիվանդագին զգացմունքը մի ելք գտնելով դուրս կգա իր հոգուց և կանհետանա։

Մի քանի օր Սյոման ապրեց այդ հոգեկան վիճակով։ Սակայն այդ մի քանի օրը ոչ թե հանգստյան օրեր եղան, այլ ավելի շուտ պարզեցին նրա խաբուսիկ վիճակը, որին ապավինել էր նա։ Նա իրեն զգաց մի հորձանքի մեջ, որն այլևս տանում էր իրեն, և ինքը դիմադրել չէր կարող։

Նա սկսեց կռվել իր հետ։ Արդյոք չէ՞ր կարելի հեռանալ այս պատմությունից։ Չէ՞ր կարելի երազել մի ուրիշի մասին։ Գրտնել Մարուսիայի նմանին։ Ավելի գեղեցիկը։ Նա սկսեց պատկերացնել ուրիշին, նրա նմանին, նրա քրոջը։ Բայց նրան զարմացրեց սիրո այդ անիմաստ կամ իմաստուն հիպնոզը, որ կաշկանդում, կապում է մարդու սիրտը միա՛յն մի էակի, միա՛յն մի հոգու հետ։ Բայց եթե այդ էակի արտաքին նմանությունն անգամ չէր կարող գոհացնել մարդկային հոգու քմահաճույքներին՝ ուրեմն, ի՞նչն է այն հատուկ էությունը, որ մի արարածի դարձնում է միակը, միա՛կ այդպիսին։ Իսկ եթե Սյոման այնպես սիրի Մարուսիային, որ ընդմիշտ կապվի նրա հետ, անկարող նրան թողնելո՛ւ... Իսկ եթե Մաքսիմը այնպես է սիրում իր կնոջը, որ նույնպես անկարող է թողնել և գիշել Սյոմայի՛ն... Իսկ եթե Մարուսիան, որ անշուշտ առարկա չէ, որ անխոս գնա նրան, ով իրեն տանում է...

Մարուսիան մենակ էր։ Նա հարթուկում էր երեսսրբիչները։ Նրան տեսնելով Սյոման ուշքի եկավ։ Զգաց, որ ճամփին ավելի հեշտ էր մտածել իր անելիքի մասին, քան թե անել։ Բայց ի՞նչ է ուզում անել։

Մարուսիայի լուրջ դեմքը և բացակա Մաքսիմի ներկա պատկերը խայթեցին նրան։

— Նո՛ւ պատմի՛ր, ի՞նչ կա,— սկսեց հասարակ ձևով Մարուսիան, երբ Սյոման նստեց։

— Ոչինչ։ Եթե ինձ ուղարկեին մի ուրիշ վայր, շատ լավ կլիներ,— ասաց հանկարծ Սյոման, չսպասելով թե այդ պիտի ասի։

— Օհո՛, դու ուզում ես հեռանա՞լ այստեղից — ժպտաց Մարուսիան։

— Եթե հնար լինի՞...

— Ռուսաստա՞ն ես ուզում։

— Միևնույն է թե ուր։

Նրանք լռեցին։

— Մեզ համար տխուր կլինի,— խոսեց Մարուսիան կարծես ինքն իրեն։

— Ինչո՞ւ պիտի տխուր լինի,— հարցրեց Սյոման և զգաց որ սիրտն ուժգին զարկեց։

— Դե՞, սովորել ենք իրար։

— Ուրիշ ընկերներ շատ կան։

— Շատ կան, և նրանց հետ էլ լինում ենք, բայց...

— Բայց...

— Մաքսիմը շատ լավ է զգում իրեն քեզ հետ։ Ընկերություն է՝ ինչքան չլինի։

— Իսկ դո՞ւ ինչպես...

— Ե՞ս,— և Մարուսիան այնպես ճնշեց հարթուկը, որ մերկ ճերմակ ուսը ուռչելով դուրս լողաց զգեստի տակից։

Սյոման նկատեց այդ և շփոթվեց։

— Այո, դու,— ասաց Սյոման և զգաց, որ ձայնը իրենը չէր, այլ մի ուրիշ մարդու, որին ինքը լսում է։ Եվ հազաց հուզմունքից խեղդված։

Այդ նկատեց Մարուսիան և բնազդաբար լռեց։

— Մարո՛ւսիա, գիտե՞ս ինչ,— ասաց Սյոման դարձյալ իր համար օտարոտի ձայնով,— ես սիրում եմ քեզ։

Այս ասելով իսկույն մտածեց. «ի՞նչ շուտ եղավ այս ամենը»։

Եվ սակայն անասելի հաճույք զգաց, ինչպես պատերազմի ժամանակ վաղուց սպասված մարտը սկսելիս։ Այսինքն «վերջապես, ինչ կլինի՝ կլինի»։

Լռություն տիրեց։ Սյոման սպասում էր անսպասելի մի բանի։ Ահա փոթորիկը կսկսվի։

— Ես զգում էի այդ,— պատասխանեց Մարուսիան խուլ և հանգիստ։

Եվ գլուխը կախ շարունակեց հարթուկելը։ Լռեցին, բավական երկար։

— Եվ հետո՞,— դողալով հարցրեց Սյոման և աչքերը մթնած նայեց Մարուսիային։

— Հետո՞... հետո ոչինչ։ Դու կմնաս մեզ բարեկամ և... կմոռանաս։ Կպատահի։ Հասկանում եմ։

Բոլորովին չէր սպասում Սյոման այսպիսի վախճանի։ Նա ինչ որ հիմար ճամփի վրա էր, որից հետ գալ չէր կարող, ինչպես և կանգնել — պետք էր առաջ գնալ։ Ու վեր թռչելով մոտեցավ Մարուսիային։ Սա ոչ մի շարժում չարավ։

— Մարո՛ւսիա։

Պատասխան չեղավ։

— Մարո՛ւսիա,— և թևը տարավ Մարուսիայի ուսին,— թո՛ւյլ տուր, Մարո՛ւսիա։

Մարուսիան հանդարտ շարժումով ուսն ազատեց և շարունակեց հարթուկելը։

Ապա հանգիստ ասավ.

— Նստի՛ր տեղդ։

— Մարո՛ւսիա,—շշնջաց Սյոման,—ես ոչինչ չեմ կարող ասել քեզ բացի այն, որ հիմա լսեցիր։ Գուցե նեղացա՛ր։ Լսի՛ր, բան եմ ասում։ Չե՞ս լսում։ Նո՛ւ, մնաս բարո՛վ։

Սյոման դուրս թռավ դռնից։

— Սպասի՛ր,— հրամայեց հետևից Մարուսիան։

— Ի՞նչ է,— խիստ ձայնով հարցրեց Սյոման, կանգնեց և աչքերը խոժոռած նայեց գետնին։

— Գնա՛ տուն, բոլոր հիմարություններդ թո՛ղ այնտեղ և էլի ե՛կ։ Ամոթ է քեզ պես տղամարդին, որ այդպես փալաս ես դառնում։ Վերջապես դու Մաքսիմի ընկերն ես։

Սյոման սպասեց, որ Մարուսիան շարունակի, դա դուր եկավ նրան։ Նա էլի կանգնեց, որ Մարուսիան շարունակի իր խայթոցը, բայց Մարուսիան հարթուկում էր և չէր նայում նրա կողմը։

Սյոման պոկվեց տեղից և արագ քայլերով գնաց տուն։

Ամոթը, խղճի խայթը, իր նվաստացումը և Մարուսիայի բարեկամությունը այնպես խանգարելու զգացումը նրան խարանեց շիկացած երկաթի պես։ Նա բաց արեց կոնյակի շիշը բռնեց բերանին։

Մինչև ուշ գիշեր բերնքսիվայր ընկած էր տախտին, բայց քունը չէր տանում։

Այնուհետև մի քանի օր կամ պաշտոնատեղին էր կամ տանը։ Չէր վճռում գնալ «նրանց կողմը»։

Միայն մի շաբաթ հետո եկավ Մաքսիմը և սկսեց միամիտ պատմել ընկերներից մեկի թյուրիմացությունները մաքսային վարչության հետ։

— Գնանք մեզ մոտ ճաշի,— հանկարծ ասաց Մաքսիմը։

Սյոման չհամարձակվեց խոսել։

— Այո՛, այո՛, վե՛ր կաց։ Մարուսիան սպասում է քեզ։

«Սպասո՞ւմ»... Սյոման և՛ զարմացավ, և՛ թեթևություն զգաց։ Ուրեմն Մարուսիան ներել է և մոռանում է։ Ինքը և՛ս թեթև ու մոռանալի համարեց իր աթածը։

Ի՞նչպես Մարուսիան փարատում է և հեշտացնում ամեն գժվար բան։

Գնացին։ Ներս մտնելիս Սյոման աչքի տակով փնտրեց Մարուսիային։ Բայց նա տանը չէր։

— Ո՞րտեղ է Մարուսիան։

— Գնացել է գյուղ։ Կարծեմ ընկերները ներկայացում են կազմակերպում երկաթուղու կայարանի բանվորների և սահմանապահների համար։ Մարուսիան չի սիրում խաղալ, բայց պարտականություն է հանձն առել։ Շուտով մեզ գյուղում բնակարան կտան, էլ կարիք չի լինի այդպիսի բաների համար ահագին ճամփա կտրել։ Մարուսիան սիրում է ժիտոր։ Հիմար Եգորումն ինձ ասում է մի՛ թողնի Մարուսիային տղերանց մեջ՝ կխլեն։

— Դա՞ ինչ ես ասում։

— Հիմարությո՞ւն, ի՞նչ պիտի ասեմ. ո՞վ կարող է խլել Մարուսիային։ Մարուսիան ի՞նչ է, ի՞նչ է։ Եվ վերջապես ամեն բանից

վախենալով ո՞ւր կգնա։ Լա՞վ սոցիալիզմ կշինենք, եթե կնիկներս գնենք վանդակ։

— Չե՞ս խանդում։

— Իսկի՛։

Մարուսիան եկավ։ Նա հասարակ և ընդհանուր ձևով ասաց.

— Բարի օ՛ր։

— Բարի օ՛ր,— շշնջաց Սյոման և նայեց Մարուսիային։

Սա դարձյալ ընդհանուր ձևով ասաց.

— Մեր կոլեկտիվում զեկուցում կա այս երեկո փոխօգնության մասին։

Մարուսիայի ամբողջ էությունից շնչում էր մի հանելուկ։ Վերջապես ի՞նչ է նա. մտերիմ հոգի՞, դավադի՞ր, թե կոկետ։ Նրանից բուրում էր մի ջերմ հարազատություն, որ ուղղակի գրկում էր մարդու։ Զարմանալի հեշտ է թվում ամեն բան նրա հետ,— և՛ կյանքը, և՛ մահը, և՛ վերածնությունը։

Մարուսիայի բարձրուղեղ հասակը և հպարտ գծերը դարձյալ ճնշեցին Սյոմային։ Նրա կարճ շրջազգեստը և թևերի, ուսերի բացվածքները շնորհալի ընկվածքով վիժում էին ցած, մինչ ինքը Մարուսիան սլանում էր դեպի վեր գլխի, ուսերի ու վզի վճռական բռնվածքով։ Նա նիհար էր թվում, բայց հասուն մկանները մատնում էին մի գիրգ ու պիրկ մարմին։

Սյոման զգում էր, որ վերջնականապես տեղի է տվել և ընկրճվել։ Որ այդ գեղեցկության դիմադրել չի կարող։ Որ նա մի բան կանի։

Ճաշը պատրաստ էր։ Նստեցին սեղանի շուրջը։ Մարուսիան բացեց կոնյակի շիշը։

— Քո կենացը։ Սյո՛մա,— ասաց Մարուսիան,— շատ մի՛ տխրի, քեզ կլծենք աշխատանքի։

Խմեցին առաջին ըմպակները։ Խմեց նաև Մարուսիան։

Սյոման քիչ-քիչ բացվեց։ Կարկամությունը, որի պատճառը այն դեպքն էր, կորցրեց իր սրությունը։ Ուրեմն Մարուսիան կամ ներել է իրեն և նշանակություն չի տալիս, կամ կարող է պատահել չի խմանում ինչով ծածկի անցյալի մեթկ մարմինը, որ աչքի չերևա։

Մարուսիան վերցրեց կիթառը և սկսեց հանգիստ ու լուրջ նվագել։ Մաքսիմը կրկին ոգևորվեց։

Դուրսը ճամփի ծայրին մի ձիավոր երևաց, որ երգում էր՝ սանձով քաշ տալով մի ուրիշ ձի։ Նա վեր ու վար էր նետվում ձիու վրա՝ գալով դեպի այս կողմը և փոշին քառասմբակ պայթում էր ձիերի սմբակների տակից։

Մոտեցավ. սահմանապահ կարմիրբանակային էր։

Մաքսիմը դուրս եկավ։

— Ի՞նչ կա, Եմելյա՛ն։

— Շտապ գրություն,— ասաց կարմիրբանակայինը և պայուսակից հանեց մի ծրար։

Մաքսիմն առավ ծրարը, ստորագրեց գրքույկը։ Կարդաց։

— Նո՛ւ, լավ,— մռմռաց Մաքսիմն ու ծոծրակը քորեց։

— Ի՞նչ կա,— հարցրեց Մարուսիան։

— Իսկույն գնում եմ պարետային վարչություն։

— Ե՞րբ կգաս։

— Չգիտեմ։ Դուք վերջացրեք ձեր ճաշը։

Գործը սովորական էր, և Սյոման չհարցրեց նրա մասին։

Մաքսիմը նստեց ձին և առաջ ընկավ։ Կարմիրբանակայինը խթեց իր ձիուն և մոտենալով նրան՝ գնաց պահելով մի պատշաճ հեռավորություն։

Մաքսիմի գնալուց հետո Սյոման կարծես ընկավ թակարդը։ Կարծես մի աներևույթ ձեռ նրա համար դավ նյութեց, որից ազատվել չէր կարողանալու։ Կոնյակից և երաժշտությունից տաքացած արյունը քունքերի մոտ զարկեց նրան լսելի ուժով, և նա աչքերի տակով նայեց Մարուսիային, որը անհոգ երևույթով կնտկնտացնում էր կիթառը և զարթեցնում անկապ ակորդներ իր երկարուկ, գողտրիկ մատներով։

Լուռ էին։ Սյոման չէր լսում նվագը, և գոհ էր, որ դա ծածկում էր անհարմար լռությունը։ Նա դուրս էր նայում։

Հանկարծ նրանց հայացքներն իրար հանդիպեցին։

Մարուսիան կատակ-լուրջ դեմք շինեց և սուր նայելով Սյոմային՝ շրթունքները ուռեցրեց.

— Հո՛ւ, երեխա՜...

Ու շարունակեց նվագը։ Սյոման չպատասխանեց։ Մարուսիան ներողամիտ ու կիսաժպիտ նայեց նրան։ Անսահման կանացի մեղմություն կար նրա այդ հայացքի մեջ, շոյող, գուրգուրիչ մի ցոլք։ Եվ ի՜նչպես Մարուսիայի այդ մեղմ, խաղաղ զարմանքը, հանգիստ

խոսքերը անբացատրելի ուժով մեղմացնում, հեշտ էր դարձնում ամեն ծանր, մեղսալից միտք, փոխելով անմեղ, հասարակ խաղի ամեն վարմունք, որ կարող էր թույլ տալ Սյոմայի բորբոքված երևակայությունը, կարծես պատրաստ զիջելու ամեն ինչ, որ թելադրում է մարդու քմահաճ սիրտը։ Եվ դա Մարուսիայի գեղեցկությո՞ւնն էր, որ իր ներդաշնակ գծերով ուղղակի երգում, նկարվում էր նրա սլացիկ մարմնի ձևերում, թե՞ նրա մեղմ, քրոջական, գրեթե մայրական խոսքերի, գուրգուրիչ ժպտի հմայքը — բայց դա այդպես էր։ Եվ դա ավելի էր բորբոքում, գրավում Սյոմային։ Մարուսիայի այդ գեղեցկությունն ու խոսքերը գրկում էին Սյոմային, նա ընկղմվում էր այդ անդունդը՝ զգալով մի քաղցր գլխապտույտ, և մեղկանում էր պարզապես։ Սյոման սկսեց մտածել, որ այդ շոյիչ, գուրգուրիչ կնոջ մեջ ավելի կա սեր ու գգվանք, քան թե պետք է միայն մի էակի։ Սերը — մի՞թե մեկինն է միայն։ Սերը — մի՞թե սեփականություն է դա։ Մեկի՞ սեփականությունը։ Օդը, արևը, ջուրը, կրակը — մի՞թե մեկինն է միայն։ Ինչո՞վ է սերը տարբեր օդից, արևից, ջրից, կրակից։ Ո՛չ, սերը մութ բան է։ Ինչպես և բնությունը։ Օդը, արևը, ջուրը, կրակը։ Սերը չգիտե, թե ում է գնում։ Նա տունկի պես է։ Պոկի՛ր տունկը իր հողից.— կարծես նա բողոքում է իր արմատի կտրտված թելիկներով։ Բայց տնկում ես նրան ուրիշ հողում՝ այնպես է աճում, ծաղկում, կարծես այստեղ էր բուսել։ Հիմարությո՛ւն — սերը սեփականություն չէ։

Մարուսիայի ամեն բան թույլատրող, այնքան մտերիմ թվացող գեղեցկությունը Սյոմային հեշտացնում էր այս մտքերն անելիս։ Եվ Սյոման առաջին անգամ պարզ տեսավ, որ ինքը ուր որ գնում է հիմա, մղվում մի բանի, որ այլ ժամանակ կսաստվեր անգամ մտածելուց։ Եվ նա վճռեց, որ դա նույնքան հեշտ ու ախորժ կլինի, որքան և Մարուսիան գեղեցիկ ու մտերիմ է իրեն։

Մարուսիան դադարեց նվագելը և դարձյալ նույն կատակ-լուրջ ձևով ասաց.

— Չես ամաչո՞ւմ... «սիրահարվե՛լ է»։— Ասացե՛ք խնդրեմ։ Ի՞նչ ռոմանտիկա, Ոչի՛նչ, ոչի՛նչ, կմոռանա՛ս։

Ապա ընդոստ շարժումով վեր թռչելով մոտեցավ Սյոմային և ձեռը նրա ուսին հպած՝ կռացավ նայեց նրա աչքերի մեջ.

— Երեխա՜...

Սյոման ձեռը տարավ Մարուսիայի իրանը գրկելու։

Մարուսիան թեթևակի հետ պահեց իրեն ու գնաց դեպի կիթառը։ Սկսեց մեղմ երգել կիթառի նվագակցությամբ։

Հետո աչքերը խոժոռեց Սյոմայի վրա ու մեղմ ձայնով ասաց.

— Նո՜ւ, Սյոմա, բավական է։ Թո՛ղ հիմարությունները։ Ես քեզ ասացի, որ թողնես։ Իսկ դու...

Սյոմայի աչքերին կարծես մի փառ եկավ։ Մարուսիան թվաց ինչ-որ մշուշի մեջ, շա՜տ հեռու։ Նրա սիրտն ուժգին զարկեց, և նա ծանր հևալով վեր կացավ, մոտեցավ Մարուսիային։ Սա շարունակեց նվագելը։ Բայց այլևս լուրջ էր։

— Հետո՞,— ասաց լուրջ, և կողքանց նայելով շարունակեց ճանկռոտել կիթառը։

Սյոման, անվճռական, հարբածի պես կանգնել էր նրա մոտ։

— Հետո՞,— կրկնեց Մարուսիան բարձր և նվագը կտրեց։

Սյոման լուռ էր։

— Սյո՜մա, դու հիմար չե՛ս,— ասաց Մարուսիան մտերմական շեշտով,— ես ուրիշի կինն եմ, հասկացի՛ր։

Սյոման դարձյալ լուռ մնաց։

— Գնա տե՛ղդ,— ասաց խիստ տոնով Մարուսիան։

Սյոման պղտոր աչքերով նայեց Մարուսիային։

— Սյոմա՞, դո՞ւ գժվե՞լ ես,— սկսեց Մարուսիան, բայց երբ հանկարծ վեր նայեց Սյոմային, նկատեց մի այնպիսի դեմք և աչքեր, որ իրեն հիշեցրեց իր քեռուն, որին սպիտակները մորթեցին նրա աչքի առջև, և նա տեսավ գաշույնը նրա կոկորդին քսելիս։

Չէր սպասում, բայց հիմա ուշ էր այլևս։ Սյոման կարծես նրա հայացքին էր սպասում. հանկարծ բռնեց նրա ուսերից և քաշ տվեց դեպի մահճակալը։

— Սյո՜մա,— սաստեց նրան Մարուսիան ցած ձայնով և հետ մղեց նրան։

Սյոման խոպոտ մի բան ասաց, որ կոկորդում խեղդվեց, և կրկին կպավ Մարուսիայի ուսերին։ Մի տեսակ հեշտ ու քաղցր էր թվում նրան այս քայլը, որ նա անում էր։ Բռնաբարության մասին չէր մտածում, այլ իր արածը համարում էր մի վարմունք, որ Մարուսիան թույլ պիտի տար նրան անշուշտ։ Նրան թվում էր, որ ինչ էլ անելու լիներ, Մարուսիան վերջիվերջո կներեր նրան որպես ընկեր, որպես մտերիմ, որպես գեղեցիկ և բարի կին։ Հետո զգաց մի այնպիսի մղումն, որին դիմադրելու ոչ թե ուժը, այլև ցանկությունը կորավ։ Մնաց տարերային խելագար մոլեգնությունը։ Նրան այնպես էր թվում, թե ինքը չէ այդ անողը, այլ մի էակ, որ կոխկրտելով թե իր և թե Մարուսիայի բոլոր հասկացողությունները՝ գալիս էր անցնելու նրանց վրայով։

Մարուսիան թեթևակի դիմադրեց նրան՝ կարիք չտեսնելով լուրջ, մարմնական ուժի՝ հույս ունենալով այլ կերպ արգելելու։ Բայց Սյոման սկսում էր իրեն մոռանալ։ Նա մինչև անգամ դրժգոհությամբ ծամածռեց դեմքը, որ այդ կինը դիմադրում է, չի զգում այն անհուն քաղցրությունը, որ կա իր վարմունքի մեջ։

— Սյոմա՛, թող,— ճչաց մեղմ Մարուսիան և կատվի պես դուրս ոլորվեց նրա գրկից։

— Թո՛ղ ինձ, ասում եմ, դա՛ւրս գնա,— գոչեց Մարուսիան՝ ջանալով դուրս վազել։ Սյոման հարձակվեց նրա վրա և կրկին գրկելով նրան՝ սեղմեց թևերը։ Ապա համբուրեց։ Մարուսիան փախցրեց դեմքը։ Շատ սառն, անախորժ և հասարակ թվաց Սյոմային այդ համբույրը։ Կարծես այն վսեմ էակը փախավ Մարուսիայի մարմնից և տեղը թողեց դեմքի անկյանք մորթին։ Նա չհամբուրեց «Մարուսիայի՜»։

Եվ ինքը բաց թողեց Մարուսիային։

— Բանդի՛տ,— չճաց Մարուսիան դողահար բարկությամբ և դուրս վազեց սենյակից՝ մազերը խռիվ։

Մի կարմիրբանակային էր անցնում հարևան տան մոտով։ Նա նկատեց Մարուսիայի հուզումը, և կանգ առավ մի պահ։ Մարուսիան ներս փախավ և մազերը մատներով սանրելով հրամայեց.

— Գնա՛ իսկույն այստեղից։

Սյոման խլեց գդակն ու դուրս գալով՝ արագ քայլեց դեպի տուն։

«Մի՞թե նա այդպես հասարակ է նրան հպելիս» — մտածեց նա և զայրացավ իր արածի վրա։

Ամբողջ գիշեր նա խմում էր ու տախտի վրա ծխում։ Բայց չէր կարողանում հարբել։ Եվ դուռը նայելով սպասում էր Մաք-

սիմին։ Նա մի տեսակ անտարբերություն էր զգում դեպի Մարուսիան։ Շատ կոպիտ դիպավ իր սրտին նրա հանդիմանությունը, անսպասելի, ծանր քարի պես։ Իր վարմունքի վրա նա չէր անդրադառնում։

Ամբողջ երկու օր նա շփոթ ու անձուկ տրամադրությամբ անցկացրեց՝ գնալով պարետային վարչություն։ Իրեն թվում էր, թե իր բոլոր զգացումները միանգամից փշրվեցին, և նա ոչնչով կապված չէ Մարուսիայի հետ։ Եվ ուրախացավ։

Բայց սպասում էր Մաքսիմին։ Ինչո՞ւ — ինքն էլ չգիտեր։

Նա Մաքսիմին սպասում էր տանը, բայց պատահեց ճամփին, եղեգնուտի մոտ։

Մաքսիմն ուզում էր կողքից անցնել արագ. բայց երբ հավասարվեցին՝ ակամա կանգ առավ և դեմքը շրջեց դեպի Սյոման։

Կանգ առավ և Սյոման։ Մաքսիմի դեմքը ծռվեց։ Երկուսն էլ բնազդաբար ձեռները տարան ատրճանակներին, բայց և ըստ սովորության իսկույն թողին։

— Նո՞ւ,— արեց Սյոման։

— Նո՞ւ... — կրկնեց Մաքսիմը և ծանր շունչ քաշելով, նայեց Սյոմային, լռեց մի փոքր և ապա իրեն տիրելով՝ ասաց,— ես քեզ շան սատակ կանեի այս րոպեիս, եթե չլիներ պարտիական դիսցիպլինան։

— Ես է՛լ նույնը,— կարճ կտրեց Սյոման ցած ձայնով։

— Կգաս պարտիական դատի, կտեսնվենք,—սպառնաց Մաքսիմը։

— Գիտեմ,— պատասխանեց Սյոման մռայլ։

Մաքսիմը կրկին նայեց Սյոմային, ուզում էր մի բան ասել ավելի ծանր, ավելի ազդու, բայց միայն ասաց.

— Լի՛րբ և հանդուգն մարդ, ա՛յ թե ինչ...

Սյոման շուռ եկավ գնալու։

— Բանդի՛տ,— բռունցքով սպառնաց Մաքսիմը և կարճ կապեց պատմությունը, որովհետև անկյունից գյուղացիներ երևացին։

Ու արագ հեալով գնաց պարետային վարչություն։

Սյոման գնաց իր ճամփան։ Բայց կարծես նրա մեջքը մեկը դաշեց կրակե մտրակով։ Այդպես զգաց նա մինչև Մաքսիմի անհետանալը։ Հետ նայեց։ Նա անցել էր անկյունը։

Ուրեմն սրա՛ համար էր սպասում Մաքսիմին։ Սպասում էր,

որ Մաքսիմը ևս որակի իր արածը։ «Բանդի՞տ...»։ Սա էլ է ասում այդ խոսքը։ Եվ Սյոման հիմա՛ էր պարզ պատկերացնում, որ իր արածը, որ առաջ այնպես թեթև, քաղցր, երազային էր թվում, հիմա մի կոպիտ, իրական բան է այլևս։

Երեկոյան նրա մոտ եկավ Միտյան։

— Պարտիական դատը տեղի կունենա երեք օրից հետո,— սկսեց նա առանց նախաբանի և կանգնեց սենյակի մեջտեղ։

Սյոման բութ հայացքով նայեց նրան և երեսը շրջեց դեպի պատուհանից դուրս։

— Հը՞մ,— շարունակեց Միտյան,— գո՛րծ բացվեց։ Կարող է դատը շատ լուրջ վերջանալ,— ավելացրեց նա՝ տեսնելով որ Սյոման չի խոսում,— և քեզ կարող են... այո...

— Այդ մեկը ներողություն կանես,— սառը կտրեց Սյոման։

— Ո՞նց թե։ Գիտե՞ս ինչ ես արել,— քննող աչքերով նայեց նրան Միտյան։

— Գիտեմ... — պատասխանեց Սյոման ցած ձայնով, լռեց և ապա հանգիստ հարցրեց,— ի՞նքն է գանգատվել Մաքսիմին, թե Մաքսիմն է հարցրել...

— Դա կարևոր չէ։ Մաքսիմն է գանգատվել բշիշին։

— Ավելի լավ. ով տուժել է՝ թող նա էլ բավարարվի։

— Ի՞նչպես թե ով տուժել է. կարծում ես միայն Մաքսի՞մն է տուժել կամ Մարո՞ւսիան,— և Միտյան մոտեցավ Սյոմային ու բռունցքը հպեց նրա քթին,— այստեղ տուժել է պարտիական էթիկան։ Հասկանո՞ւմ ես։ Դու գիտե՞ս թե ինչ ես արել։ Բռնաբարման փորձ։ Խելքդ կորցրե՞լ ես։

Սյոման լռեց

«Ուրեմն իմ արածը նկատվում է իբրև բռնաբարման փորձ»— մտածեց նա խայթվելով այդ բառից։ Եվ ուրիշ ոչի՞նչ — միայն բռնաբարությո՞ւն»։ Նրան շատ անախորժ թվաց այդ պաղ, դատարանական բառը։ Ինչպես տաք մարմնին սառ երկաթը։ Շատ էր կոպիտ, անխնա և անվերապահ — «բռնաբարությո՞ւն»։

Բշիշը քննություն նշանակեց։ Ձևականությունները քիչ էին, բայց ձևականությունների մեջ շատ բաներ կային, որ մեքենական էին, կարծես իրեն՝ Սյոմային չվերաբերող։ Օտար, կոշտ առար-

կայի պես ընկնում էր շարունակ նրա զգացումների թելերի մեջ և կտրտում, ցավեցնում — «բռնաբարությո՛ւն»։

Նախագահում էր Միտյան։ Ճիշտ է՝ նրա արճիճե կերպարանքը չէր սարսափեցնում Սյոմային, բայց նրան հիշեցնում էր քաղաքացիական կռիվների Միտյային, որն իր ձեռքով երկու բոպեում գնդակահարեց իր ընկերոջը մի հանցանքի համար։ Միտյայի ձեռքը չէր դողա և Սյոմայի առջև, բայց անցել են այդ օրերը և գործը ուրիշ էր հիմա։

Մյուս ընկերները մռայլ նայում էին հատակին և լռում։ Այնտեղ էին Մաքսիմն ու Մարուսիան։ Սա ավելի հանգիստ էր երևում, քան պետք էր մի նման դատի ժամանակ։

— Ի՞նչպես եք ներկայացնում դեպքը, պատմեցե՛ք,— դիմեց Միտյան Մարուսիային։

Մարուսիան սկսեց պատմել։

— Ես չգանգատվեցի Մաքսիմին։ Ես մի օր թաքցրի դեպքը, ճիշտն ասած փորձելու համար, թե արդյոք կարելի՞ է մոռանալ... Բայց վերջը վճռեցի հայտնել Մաքսիմին, և դա ոչ նրա համար, որ Մաքսիմը կարող էր հարցնել ինձ, թե ինչո՞ւ Սյոման, ընկեր Միրոնովը, չի գալիս մեզ մոտ, ո՛չ նրա համար, որ իմ թաքցնելը այդ դեպքում կարող էր ավելորդ կասկածների և տանջանքների տեղիք տալ, այլ պարզապես նրա համար, որ իմ և Մաքսիմի, և եթե ուզում եք, նաև ընկեր Միրոնովի ինքնատիրությունից ցած բան կլիներ այդպիսի անարժան գաղտնիքներ պահելը։ Ես կարծում եմ, ընկեր Սյոման ևս համաձայն կլինի ինձ հետ, որ ես պարտավոր էի հայտնել այդ դեպքը Մաքսիմին։ Ես հայտնեցի և խոսք առա Մաքսիմից, որ նա իրեն պարտիականին վայել կերպով կպահի։ Նա կատարեց իր խոստումը։ Ես ուրախ եմ։ Բայց նա որ հայտնեց բժիշկին — դա իր գործն է... Թերևս ես...

Սյոման սաստիկ ցանկացավ լսել վերջին խոսքերի շարունակությունը, բայց Մարուսիան չվերջացրեց։

— Շատ լա՛վ, պատմեցե՛ք ինչպես եղավ։

Մաքսիմը մռայլվեց և դաժան կերպարանք առավ։ Մարուսիան ծամծմեց շրթունքները։

— Ես կպատմեմ,— մխիթարեց Սյոման։

— Ընկե՛ր, մի՞ խանգարեք,— ընդհատեց նախագահը։

Մարուսիան պատմեց դեպքը հաստակ ձևով, առանց ընդգծելու, առանց ծանրացնելու։

Մի քանի հարց ուղղելով Մաքսիմին և Մարուսիային՝ նախագահը դիմեց Սյոմային.

— Ընդունո՞ւմ եք ձեր հանցանքը, ընկե՛ր։

— Այսինքն ինչպե՞ս,— հարցրեց Սյոման,— դուք հարցնում եք ձևականի՞ կողմից... Թե...

— Ընդունո՞ւմ եք բոլորը ձևականի և բովանդակության կողմից... որ դուք ցանկացել եք բռնաբարություն գործ դնել,— չկարողացավ ավելի մեղմ և հավաք խոսքով արտահայտվել նախագահը։

— Դուք տերմինները ջոկելո՞վ եք խոսում, թե՞ կարիք կա ձեզ... — զայրացավ Սյոման։

— Խնդրեմ առանց հուզվելու և վիրավորվելու,— կտրական խոսեց նախագահը,— պարզ՝ ընդունո՞ւմ եք ձեր հանցանքը։

— Ես ասում եմ՝ դուք տերմինների մասին հասկացողություն ունե՞ք, թե երեխայի պես եք գործածում բառերը...

— Դուք վիրավորում եք, ընկե՛ր,— ձայն տվին բջիջից լուռ ընկերները։

— Եթե դուք կարծում եք, թե ես եմ ձեզ վիրավորում և ոչ թե դուք ինձ, այն ժամանակ ես հրաժարվում եմ բացատրություն տալուց։

Եվ Սյոման վեր կացավ։

— Այն ժամանակ գործը կհանձնվի ուղղակի ԿՎՀ պարտիական կոլեգիային։

— Ինչպես կուզե՛ք։

— Դա աններելի վերաբերմունք է, ընկե՛ր,— ձայնը բարձրացրեց բջիջի անդամներից մեկը,— դա կոմունիստին վայել չէ։ Փոխանակ անկեղծ խոստովանելու հանցանքը, դուք բռնում եք ինչ-որ մեշչանական փքված դիրք և ուզում եք գործը ձգձգելով քնացնել։ Դա ռևոլյուցիոների վարմունք չէ։

Սյոման կողքանց խեթ մտիկ տվեց նրան։

— Դուք երեխա եք,— ասաց նրան Սյոման,— և լավ կլինի այդ ձևով չխոսեք։

— Ի՞նչ ձևերով է խոսում սա,— գոչեցին բջիջի մյուս անդամ-

ները,— ի՞նչ է երևակայում իրեն,— հանձնեցեք գործը պարտկոլեգիային, պրծավ գնաց։

— Ուրեմն առաջարկ կա գործը հանձնել պարտկոլեգիային։ Համաձա՞յն եք։

— Այո, այո, համաձայն ենք։ Թե չէ, ի՞նչ է սա իսկապես...

Բոլորը վեր թռան և սկսեցին մի անգամից խոսել, բողոքել։ Իսկ Միտյան ծխախոտը վառելով հեռացավ սեղանից։ Սյոման արագ դուրս գնաց։

Նրա հետևից պայթեց մի տաք վիճաբանություն։

— Նա խենթացել է, հանդուգն է դարձել։

— Վերջապես ի՞նչ է ուզում։ Ընդհատակյա աշխատա՞նք է ասում, քաղաքացիական կռի՞վ,— գիտենք, յոթը կաշի մաշել ենք դրանց մեջ, ի՞նչ է ուզում ասել դրանով։ Գլխներիս խա՞ն է ուզում դառնալ։

— Նո՛ւ, ընկե՛ր, այլևս ավելորդ է մեր խոսելը։ Նա պիտի ենթարկվի բջիջի պահանջին։ Համենայն դեպս մենք մեր դատավճիռը կարձակենք։ Վե՛րջ տվեք։

— Ի՞նչ է,— շարունակեց բողոքողը,— որ ռևոլյուցիոներ է, պարտիական, պետք է աջ ու ձախ բռնաբարի՞ և բացատրություն էլ չտա՞։ Ո՞վ է նա...

— Լա՛վ, լա՛վ, մի՛ տաքանա,— ասաց Միտյան մեղմակի և մոայլ գնաց դուրս։

Սյոման դուրս գալով բաց դաշտը՝ դանդաղ գնում էր։ Նա չէր կարողանում հաշիվ տալ կատարվածի մասին՝ այնքան հախուռն և անսպասելի կոպիտ էր թվում նրան այդ բոլորը։

— Միևնույն է բջիջը իր դատավճիռը կկայացնի և կհանձնի պարտկոլեգիային, չես փախչի, ախպե՛ր ջան,— լսվեց Սյոման հետևից Միտյայի ձայնը։

Սյոման կանգնեց և դեմքը շուռ տալով Միտյայի կողմը՝ ասաց թթու ձայնով.

— Դո՞ւ ինչ ես ձեռ առնում մարդու։

Միտյան դեմքը մոտեցրեց նրա դեմքին՝ սուր հայացքը խրեց նրա աչքերի մեջ.

— Է՛յ, սատանի լակոտ. դու կարող ես պարտիայից դուրս թռչել, իմացի՛ր այս։

— Թո՛ղ այդ ձևը,— խոսեց խուլ ձայնով Սյոման և վերևից ներքև մտիկ տվեց Միտյային։

— Իսկի է՛լ չեմ թողնի այս ձևը,— սեղմեց Միտյան,— քեզ ասում եմ դուրս կվռնդեն քեզ պարտիայից, հասկանում ես, շա՛ն որդի, խելքդ գլո՛ւխդ հավաքի։

Սյոման համառ, կողքանց մտիկ տվեց Միտյային և արհամարհանքով լռեց։

Առաջ շարժվեցին։

— Լսի՛ր,— ասաց Միտյան,— դու ինձ մի բա՛ն ասա կարճ ու պարզ, դու ուզե՞լ ես նրան բռնաբարել։

Սյոման նայեց Միտյայի խայթիչ աչքերին և տեղի տվեց.

— Այո։

Միտյան անսպասելի իր համար զարմացավ.

— Չո՛ռտ վազմի,— ապա ինչո՞ւ բջիջում չասիր, որ դու ուզում էիր նրան բռնաբարել։

— Ես չէի կարող նրան վիրավորել։

— Ո՞ւմ։

— Մարուսիային։ Նա կվիրավորվեր այդ կոպիտ, անասնական բառից։

— Ուրեմն դու ուզո՞ւմ էիր բռնաբարել,— նո՛ւ, այդպես կարճ կապի։

— Այո, միակ կարճ, մեշչանական խոսքը, ճիշտ է։ Որպեսզի ձեզ նեղություն չպատճառի մտնելու ավելի խորերը։ Դա հեշտ է ձեզ համար...

— Նո՛ւ, նո՛ւ, նո՛ւ, սկսե՞ց լեզու ածելը։ Դու, ախպեր ջան, պա՛րզն ասա՝ խրվել եմ կեղտոտ պատմության մեջ, ուզում եմ մաքուր դուրս պրծնել։

Սյոման լուռ մնաց։ Նա աչքերը վայրահակ՝ լսելի շնչում էր և ավելի մտածում բջիջում անցուդարձի մասին, քան թե լսում։

— Մեշչանական խո՞սք,— հեգնեց Միտյան և շրթունքը ծամածռեց,— ամեն ծծկեր հիմա գործ է ածում այդ բառը։ Ինչ որ ատամիդ տակ չի ընկնում, դժվարդ գալիս է, մեղդ ճկռում է տակին և ուզում ես խուսափել կեղտոտ դեղերտիրի պես,— մեշչանակ խո՞սք է, ասա՛ ու պրծի՛ր... Արդեն աշխարհքը բամբասում է մեզ, որ համայնացրել ենք նաև կինը, որ մենք քանդում ենք մարդկային գոյության բոլոր հիմքերը... Կոպիտ բռնաբարու-

թյուն, խառնակեցություն արա և երբ պարտիական ընկերներդ քեզ պատին են սեղմում,— անվանի՛ր մեշչանականություն։ Ահա սա՛ է մեշչանականությունը։ Դա հեշտ է քե՛զ համար ասելը։

— Դու իմանո՞ւմ ես, թե ինչեր ես խոսում,— հանկարծ հարձակվեց Սյոման Միտյայի վրա։

— Այո, այո,— փակեց նրա ձայնը Միտյան,— իմանում եմ։ Դու միայն մի վախեցնի ինձ և լսի՛ր։ Կգաս բջիջը և ամեն ինչ կխոստովանես, որ ուզել ես բռնաբարել, բջիջը որոշում կտա, կուղարկենք պարտկոլեգիային։ Երկաթացնելու միտքը թո՛ղ, չես պրծնի։ Սա պարտիա է, հորս տղան չէ։

— Դու չե՞ս սովորեցնելու ինձ այդ բանը։

— Նո՛ւ, ավելի լավ։ Վաղը կրկին կհավաքվենք. կգաս բջիջ և կխոստովանես։ Իմացա՞ր։

— Առանց իմ խոստովանության պարզ է ամեն բան։ Ես զարմանում եմ, թե ինչպես դու չես հասկանում։ Մաքսիմը հայտնել է, Մարուսիան ասաց բոլորը։ Ուրեմն էլ ի՞նչ փաստեր են պետք։ Գործը պարզ է առանց իմ խոստովանության։ Այո, բռնաբարման փորձ։ Գիտեմ, գործը կհասնի պարտկոլեգիա և նա վճիռը կհանի, պարտիայից դուրս կանեն, թերևս ժամանակով, թերևս և ով գիտե... ընդմիշտ,

— Եվ դա քեզ համար ոչի՞նչ բան է։ Հա՞։

Սյոման հանգաստ նայեց նրան և շարունակեց.

— Հիմարություններ մի՛ ասի։ Լսի՛ր։ Ես նրան ուզեցի բռնաբարել,— եթե այդպես ես ուզում, և ինձ ազա՛տ թող։ Ցտեսություն։

Եվ Սյոման արագ-արագ հեռացավ։

Սյոման չգնաց բջիջ, ուր նշանակված էր երկրորդ նիստ նրա գործը քննելու համար։ Բջիջը որոշում հանեց,— վտարել Սյոմային պարտիայից և իր որոշումն ուղարկեց ԿՎՀ պարտկոլեգիա։

Սյոման հարցի քննության ժամանակ երևան է բերել կոմունիստին ոչ վայել վերաբերմունք. փոխանակ անկեղծորեն խոստովանելու իր ոչ կոմունիստական արարքը՝ նա վիրավորում է բջիջի անդամներին, անվանելով երեխա և այլն և հրաժարվում է բացատրություն տալուց։

Պարտկոլեգիան արձանագրելով, որ այդ հանցանքի համար Սյոման արժանի էր պարտիայի շարքերից վտարվելու, սակայն նկատի ունենալով նրա կողմնակի կերպով խոստովանելը իր հանցանքը, երիտասարդ հասակը, կատարած ընդհատակյա աշխատանքը, ռևոլուցիայի մատուցած ծառայությունները և որ նա առաջին անգամ է նման հանցանք կատարում, նաև նկատի առնելով սահմանապահ զորամասի ճատուկ պայմանները՝ Սյոմային հայտնել ամենախիստ նկատողություն՝ վերջին նախազգուշացումով։

Պարտկոլեգիայի որոշումը հայտնվեց բջիջում, գրվեց լրագրում և դարձավ սահմանամերձ շրջանի խոսակցության առարկա։

Սյոման մի քանի օր խմում էր և անընդհատ ծխում։ Ամեն բան, ամեն առարկա, ամեն մարդ մերկացավ կարծես, սկսեց երևալ բոլորովին պարզ, հասարակ գույնով։

Իրականության գույնով...

Ճախուտներ, շամբեր, աղուտներ և այրված թփեր...

Սեպտեմբերի արևը փռել էր իր ոսկեթել սավանը անապատի վրա, ուր Սյոման և Միտյան ձիավորված գնում էին սահմանամերձ ճամփով։

— Հիմարություններ ես ասում,— «Մարուսիան ինձ չհասկացավ»,— ասում էր Միտյան՝ հանգաստ ինչպես միշտ,— Մարուսիան չի կարող ամեն իր դեմը վազողի գիրկն ընկնել։ Նա ուրիշի կին է, հասկացի՛ր։

— Սեփականությո՛ւնը ասա։

— Սեփականությո՛ւնը։ Այսինքն թեկուզ սեփականությունն այնքան ժամանակ, այն չափով, որ ինքը կամովին գնում է մեկին և մեկը՝ նրան։ Նո՛ւ, քեզ չի գալիս, չի սիրում, վախում է ամուսնուց, հասարակությունից, սիրում է ամուսնուն, վերջացրեց խորը չի մտածում այդ մասին։ Կա՛մք չունի,— քի՞չ բան կարող է պատահել։ Ազատ չէ՞։

— Ազատ է։

Եվ Սյոման հառաչեց.

— Ազա՛տ է, ազա՛տ, ճիշտ է,— բորբոքվեց հանկարծ Սյոման և գոչեց։— Բայց լսիր, Մի՛տյա... Ափսո՞ս չէր ռևոլյուցիան... Ափ-

սոս չէ՞ր ռևոլյուցիան, որ և ո՛չ ոքինը չէր, ամենքինն էր և ամենքս էլ ազատ էինք նրան սիրելու։ Եվ այնտեղ տղամարդությո՛ւն կար, կրակվե՛լ կար, թռչել, ընկնել կրակի ու փոթորկի բերանը։ Այնտեղ ամենքս մի բան գիտեինք, որ մեզնից ով ավելի մեծ սիրով կսլանա նրա գիրկը և կվերցնի ավելին,— կարո՞ղ է, իրավունք ունի։ Սիրո՞ւմ ես, տղամա՞րդ ես, թռի՛ր, գնա՛, վերցրո՛ւ։ Անձնվիրության, սիրո, քաջության տեղ էր։ Իսկ ի՞նչ է սա, այս կինը... Ինչքան շատ ես սիրում, այնքան վատ քեզ համար։

— Նո՞ւ, տեսնո՞ւմ ես։

Սյոմային դուր չեկավ Միտյայի համաձայնելը իրեն։ Կարծես միայն ինքն ուներ իրավունք այդպես մտածելու, ինչպես ինքնասպանության դիմողը, որ այդ գործը համարում էի միայն ի՛ր կամքին ենթակա բան և համաձայն չէ, որ դա կատարվի ուրիշի ձեռքով։ Եվ սկսեց տրտնջալ.

— «Ուրիշի սեփականությո՞ւն»... Սուտ է. սերը սեփականություն չէ. սերը ամենքինն է և ամենից շատ նրանը, ով շատ է սիրում։

— Մաքսիմն ավելի շատ է սիրում,— սկսեց գրգռել Միտյան։

— Մարուսիան չգիտե, որ ինքը ոչ իր ամուսնունն է, ոչ իմը և ոչ էլ ինքն իրենը,— համառում էր Սյոման տանջվելով, որ չի կարողանում իրեն տանջող մտքերին ձև տալ և արտահայտել,— այո՛, հոգին չես չափի, նրա հատակին չես հասնի։ Մարուսիան «ուրիշի սեփականություն չէ»։ Նրա հոգու դռանը փականք է դրված—մեշչանականության փականքը։ Դա նրան թույլ չի տալիս հոգին բանալու և դուրս նայելու ա՛յ այս բարձր, անհուն եթերքը, որտեղից արևի հետ մեզ է գալիս բնական սերը։

Միտյան ուզեց հասկանալ նրան.

— Սպասի՛ր,— և ձիու սանձը քաշեց, կանգ առավ, Սյոման հետևեց նրան,— սպասի՛ր։ Դու ուզում ես խառնակեցությո՞ւն ամեն բանի։ Պա՛րզ ասա, առանց գեղեցիկ խոսքերի։

— Բնությունը կհավասարակշռի,— պատասխանեց Սյոման հասկանալով նրան, ավելի քան նա ասաց,— ոչի՛նչ չի քայքայվի։ Ավելի բնական զույգեր կկազմվեն։

— Կինը տվյալ մոմենտին նրա՞նն է, ով ամենից շատ է սիրում նրան, այսպես չասացի՞ր։

— Այո։

— Նո՛ւ, ուրեմն Մաքսիմն ավելի շատ է սիրում Մարուսիային,— դարձյալ գրգռեց Միտյան։— Եվ կինը նրանն է ում ամենից շատ սիրում է կի՛նը ինքը — պրծավ գնաց։ Ի՞նչ ես խելքիդ զոռ տալիս։

— Նրա՛ն է սիրում կինն ամենից շատ, ով ամենից շատ սիրում է իրեն կնոջը,— համառեց Սյոման գրգռված։

— Սոփեստությո՛ւն, հիմարությո՛ւն, չարժե մի գրոշ,— ու Միտյան ձին քշեց,— դու խենթացել ես։

Սյոմայի ձին ինքը գնաց հետևից և հավասարվեց։ Նրանք երկար ժամանակ լուռ կարկտում էին ճամփան՝ դիպչելով նրան ու վեր-վեր թռչելով։ Ձախ կողքին լռում էր շամբուտը։ Դաշտը ժրպտում էր դեղին երանգներով, իսկ օդի մեջ մղղում էր հեռվից հասնող զողանջը ուղտերի, որ չէին երևում։ Արևը ուրախության պես լցվում էր հոգու մեջ։

Սյոման մտածում էր Մարուսիայի մասին։ Հանկարծ պարզ պատկերացրեց նրան։ Ահա նա՝ ուռենու ճկուն հասակով, խնկագույն մազերի գանգուրներն ինչպես ողկույզներ գլխին դրած, աչքերն առավոտյան լճակների պես ջինջ և հասակի այն հպարտ, հրամայական սլացքը, որ խենթացնում էր իրեն...

Ու հանկարծ մի խայթոց զգաց։ Ծանր, ծանոթ խայթոց, որ նրան պատահում էր միայն մի վայրկյան, երբ նրա երևակայության առջև կանգնած մշուշը — զգայությունը բթացնող մշուշը — մի վայրկյան ճեղքվում էր և միջից լույսի պես ցայտում էր սիրած կինը կենդանի, իրական, իբրև մի սևեռյալ հիվանդագին պատկեր։

Աղետալի՜ Մարուսիան։

Սյոման վայրենացավ, աչքերը կրակեցին։ Եվ նա դեմքը ցընցեց, որ թա՛փ տա իր աչքերից այդ պատկերը։

Մի խորին զգացում՝ ճշմարիտ, ինչպես կյանքը, անբացատրելի ինչպես կյանքը՝ զնգում էր խորունկից նրա հոգու մեջ։ Նա զգում էր, որ ինքը ճշմարիտ է։

— Լսի՛ր, Միտյա, հո գիտես, ինձ համար ավելի բարձր և տանջալի բան չէ եղել և չկա, քան ռևոլյուցիան։ Բայց նրա չափ ճշմարիտ է, որ ես սիրում եմ այդ կնոջը։ Բայց լսի՛ր...

— Նո՞ւ,— պողպատի պես զարկեց նրան Միտյան։

— Ես գիտեմ, ամեն մի անկարգ քայլ, ամեն մի սխալ հար-

վածում է մեր վերելքին, ռևոլյուցիային, սոցիալիզմին։ Ես սիրում եմ ռևոլյուցիան, նրա դաժան դիսցիպլինան։ Ես մսերս կծելով կհնազանդվեմ նրա բոլոր հրամաններին։ Բայց աստվա՛ծ է վկա, նո՛ւ, սատանան տանի, այդ աստծուն, ռևոլյուցիան վկա,— դու հո գիտես, որ մարդուց բարձր բան չկա,— այդ կինը ի՞մն է և ո՞չ ոքինը...

Միտյան չպատասխանեց, այլ քշեց իր ձին։ Սյոման գնաց կողքից։ Դարձյալ շամբուտը լռում էր, հեռվում պսպղում էր Արաքսի կոտրտված դաշույնը, իսկ ավելի հեռուն, ուղղակի երկնքի մեջ հետևի ոտների վրա պառկած և առաջինների վրա հենված անքթիթ նայում էր Մասիսը իբրև մի հսկայական սֆինքս։

ՅԱՎԱՏ ՍԵՐ

Տոնական մթնոլորտում պատահեց այդ։

Դա մի թռիչք էր երազում, գարնանային թրթիռ։

Մայիսի երկուսին, շենքը հանձնելու երրորդ օրը, Ռուբենն իր բրիգադի հետ գնաց քաղաքամերձ այգիներից մեկը քեֆ անելու։ Սրանով յոթերորդ շենքն էր, որ հանձնում էր նրա բրիգադը։ Ռուբենը գերազանց վարպետ որմնադիր էր և օրինակելի բրիգադ էր պահում։

Թարմություն է բուրում այդ բլրի գագաթից։ Բոլորն էլ բանիմաց, ուրախ տղերք, սերտ կապված իրար հետ։

Ռուբենը բարձրահասակ, ջլուտ երիտասարդ էր, մարտական դեմքով։ Ոսկեգույն բեղեր ուներ, պինդ սեղմած շուրթերի վրա, և հոխորտ սրում էր այդ բեղերը։ Շատ համեստ էր և լուրջ, կարգադրում էր հանգիստ բաս ձայնով, խրատում էր ավելի, քան կըշտամբում և քանի բարկանում էր, այնքան ավելի էր ցածրացնում ձայնը և դեմքը մոտեցնում խոսակցին։ Ընդհանրապես համառ էր առաջ տանում իր միտքը։ Նա հեղինակություն էր։

Նրան հարգում էին։

Ահա, այսպես, տոնական օր, էր, որ նրան պատահեց այդ դեպքը։ Բայց պատահեց մի տեսակ դարանակալ անսպասելիությամբ։ Ռուբենն ու իր ընկերները շրջում էին այգում ծառեծառ, կանաչների վրա նստոտում, կատակում։ Հետո ըմբշամարտ եղավ։ Բրիգադից երկու հոգի, որ ծանր ատլետիկայի հերոսներ էին՝ սուտ ըմբշամարտեցին։

Այդ ժամանակ էր, որ Ռուբենը նկատեց այգու տանակի առաջ մի աղջկա, որ խոր նայում էր իրենց։ Հայարտ գլուխ ուներ նա, խրոխտ կապույտ աչքեր։ Նա հրամայող գեղեցիկ էր, բարձրահասակ։

Ռուբենը նայում էր ոտքիշներին, ծպտում գլուխ, ինքնիրեն։

Հետո կրկին աչքը գցեց տնակի կողմը։ Աղջիկը ներքին հայացքով իրեն էր նայում։

Ճաշի ժամանակ, երբ բրիգադի հետ հավաքվեց նաև այգեփրոշ ընտանիքը, որ միշտ չես իմանում ովքեր են և ինչպես հայտնվեցին՝ հպարտադեմ աղջիկն անաղմուկ սողոսկեց այնտեղ։

Շատ մտերմական ընթացավ ճաշը և ուրախ, գարնանային թեթևությամբ։ Ոչ մի տգեղություն։ Երգեցին, հետո պարեցին։

Աստղիկը,— հպարտադեմ աղջիկը,— որ ըստ երևույթին այլևս չէր հետաքրքրվում Ռուբենով և հիմա էլ ուրիշներին էր նայում՝ մի անգամ միայն ներհուն հայացքն ընկղմեց Ռուբենի հայացքի մեջ և մնաց երկար։ Ռուբենն զգաց, որ այդ աղջիկը մտավ իր հոգու մեջ, տիրեց իրեն։ Նա այլայլվեց։

Հետո գինի՞ն էր, ծաղիկները՞, թե՞ ընկերները,— Ռուբենը հանկարծ միտք դրեց միանալ այդ աղջկա հետ։ Ընկերներն էլ զգացին, որ մի բան կատարվեց Ռուբենի մեջ։ Կենացների վրա ակնարկներ արին, կատակեցին՝ հասկացնելու չափ։ Բոլորը ժպտացին կես ուրախ, կես լուրջ։ Աստղիկը լուրջ ընդունեց այդ ամենը, համարձակ հանգիստ նայեց Ռուբենին, նայեց հպարտ ու հաղթական...

Ռուբենը կորցրեց իրեն։

Մի քաղցր սարսուռ անցավ նրա մեջքով։ Նա շնչատեց, կուրծքը ուռեց, և մնացածը շարունակվեց ինչպես երազում։

Ուշացած գարուն էր, ապրիլը փչել էր և նրա շնչից փթթել էին ծառերը։ Դեղձենին մի տեսակ վարդագույն լույսով պարուրված՝ գրկում էր սալորենու կաթնագույն լույսը, հետո այդ ծառերի սաղարթից թափվում էին լույսերը կանաչ արոտի վրա։ Ծոթրինը պատերի տակից ու դաշտից արբեցնող բուրմունքով սողում էր օդի մեջ ու մարդուն քաշում դեպի դաշտերի վայրենությունը։

Ռուբենն այնպես զգաց, որ ընկերների երգերը, կատակները, ճառերը, հարվածայինների հաղթական հայացքները խառնվեցին ինչ-որ մտերմական ընտանեկան մի այլ հույզի հետ՝ սիրո հետ։ Ուղղակի սիրո։ Ռուբենը նոր զգաց, որ ինքը լցված էր սիրով, որ բուռն սիրում էր մեկին — թե ում՝ չգիտեր — բայց հիմա այդ մեկը եկել է կանգնել իր դիմաց և հրամայական մտերիմ պահանջում է իր տենչերի պատասխանը։

Ճիշտ է՝ գինով էին ամենքը, բայց միայն գինին չէր, որ

հարբեցրել էր Ռուբենին։ Նա զգաց, որ իր աշխատավորական կյանքի մեջ հաղթական բրիգադի հետ միասին իրեն պակասում էր նաև կին-ընկերը։ Զգաց և մի այլ բան, կարծես ամենքը՝ բնությունը, իր ընկերները, իր հասարակական գործը և այս կինը միախառնվեցին, դարձան զորավիգ իր կյանքի, մի աշխույժ թռիչք, ներդաշնակ երգ։

«Մի կին է պետք — և ամեն ինչ լրացավ» — մտածեց Ռուբենը։ Եվ մի կին՝ այնպես թվաց, որ այդ լուռ ու հպարտ էակը վաղածանոթ է ու մտերիմ։ Սուրբ սիրով լցվեց դեպի նա, գրկեց ողջ էությամբ նրա նազելի հասակը։

Եվ երբ սուփրան քաղեցին ու խումբ-խումբ զբոսնել սկսեցին այգում՝ Ռուբենն առանց մտածելու՝ ինչպես ընկներ գեղեցիկ ու ահավոր մի անդունդ՝ հանկարծ մի շատ հաճելի գլխապտույտ զգաց և առանց այլևայլի առաջարկեց Աստղիկին իր կինը դառնալ։

Աստղիկը համաձայնեց։

Դա արդեն բոլորովին դյութեց Ռուբենին։ Կյանքը սլացավ արագ, արագ, նրա սիրտը կրկին ուռեց, լցվեց՝ շնչարգելի չափ։ և նա սիրեց Աստղիկին այնքան բուռն, որ ուզում էր դուրս փախչել այգուց։

Թե հետո ինչպես թեյի նստեցին, ինչպես գնացին տուն,— այդ ամենը կատարվեց անգիտակ վիճակի մեջ։ Թռան հավիտենական վայրկյաններ, Ռուբենն այնպես իմացավ, թե ինքը երեսուն և երկու տարի սիրում էր ու միայն նոր հասկացավ, և հասկացավ անսպասելի գյուտի պես, հանկարծ, ինչպես նոր ծնված լիներ։

***

Մեղրամիսն անցավ փոթորկալի, աղմկահույզ։ Ռուբենն հարբածի պես էր աշխատում նորակառույց պատերի վրա։ Եռանդն հորդում էր գարնան գետի պես՝ պղտոր, վայրի, բայց թարմ, կենսալի։ Գործը թռցնում էր նրան։ Փայլուն ցուցանիշներ էր տալիս նրա բրիգադը։ Ռուբենը կայտառացել էր, սկսել էր կատակել, երգել։

Աշխատանքի եռուն ժամանակը, երբ իր կնոջ սլացիկ դեմքն

օդի մեջ երերալով գալիս արձանանում էր իր դիմաց՝ խանդաղատանքից մարում էր Ռուբենի սիրտը։ Եվ նա պղտոր ժպտով հառաչում էր։ Նա իր բուռն սիրո բոցերի մեջ չէր տեսնում, չէր զգում ոչինչ ուրիշ բան։ Իր բրիգադով խոսք էր տվել տալ կվարտալում ամենաբարձր ցուցանիշները։ Աչք ածեց շորս կողմը, կարգադրեց իր բրիգադի անդամներին ազնվորեն կատարել խորհրդակցության ժամանակ ընդունած վճիռը և սրբատաշ քարերն սկսեց գարդարանքի պես շարել նորակառույցի հպարտ պատին՝ երբեմն մուրճը վերցնելով և տաշած քարն ավելի գեղեցկացնելով գողտրիկ ու մանրիկ հարվածներով։

Ռուբենը սիրում էր նայել իր շենքին, թե ինչպես էր սա հասակ քաշում գեղեցիկ աթձանի պես։ Լաստակների թևերի մեջ գրկված՝ շենքը հպարտ ծառանում էր վեր։ Վարդագույն տուֆն աբշալույսի պես ներկում էր նրա ճակատը և հակադրվում հետևի բլուրների, ժայռերի գորշության։ Հեռու, քաղաքի վերևի մասերից ձեռով էին անում իր բրիգադի բարձրացրած շենքերը։ Ռուբենը քաղաք է կառուցում բոլոր կառուցողների հետ — դրանով էլ հպարտ էր նա և վարպետ որմնադիրի պատվի զգացումը բարձրացնում էր նրան մինչև ասպետականություն։ Նրա բրիգադը մի տեսակ «օրդեն» է,— օրդեն ընտրովի ասպետների, որոնք իրենց անձը դրել են բարձր նպատակի վրա։ Ռուբենի «օրդենին» հետևում են մյուսները, և քաղաքում հայտնի է թե ո՞ր շենքերն են բարձրացել այս օրդենի ձեռքով։ Սա պատվի խնդիր է։

Բայց տարօրինակ էր. Ռուբենը մի տեսակ կապ էր զգում իր հպարտ շենքերի և իր կնոջ մեջ։ Հետո այդ կապը գնում էր ավելի հեռուն — իր ընկերները։ Այդ ամենը կապված էին մի ընդհանուր կյանքով, որ ներդաշնակ մի երգի պես երգվում էր կառուցող երիտասարդի հոգում։

Աստղիկը ծաղկում էր ու դառնում ավելի տենչալի։ Հետո ժամանակ եկավ՝ նրա աչքերը լցվեցին երազով, դեմքը դառավ խնկագույն, պտուղի պես լցվեց և նա սկսեց սրբած ու հոգնած ժպտալ Ռուբենին։

Եվ պտուղի պես էլ կաթեցրեց մի գեղեցիկ աղջնակ։

Եկան Ռուբենի ընկերները և ասնձակոծ սրին խրեցին առաջ այն էլ լցված ուրախությունը, երգեցին, պարեցին, լցրին Ռուբենի տունը այն թարմ ուրախությամբ, որ հատուկ է ընկերական շրջանին։

Միայն Աստղիկը ներվային էր այդ օրը։ Բայց նրան նայող չկար։ Երեխան աճեց ու կարմրեց խնձորի պես իր գեղեցիկ մոր և ասպետատեսակ հոր գրկերում։ Ռուբենի կյանքը հոսել սկսեց լեռնային առվակի պես զվարթ ու խաղացկուն։

Մի բան միայն, մի սավեր սողոսկում էր աննկատ և նստում Ռուբենի տան անկյունում։ Աստղիկը կոպիտ էր վարվում նրա հետ։ Բնավորությունն էր այդ, թե անցողիկ ներվայնություն, դեռ հայտնի չէր։ Ռուբենը նկատում էր այդ, բայց սիրո բուռն հոսանքում բարեխառնվում էր այդ։ Ինքը չէր ուզում նկատել իր շուրջը հավաքվող այդ ստվերները։ Սակայն, երբ կոպտության վարագույրի հետևից նայում էին Աստղիկի աչքերը՝ սառն օտար և ապակի՝ դա մնում էր Ռուբենի հոգում։ Եվ նա գործի ժամանակ հիշելով այդ, մի բոպե կանգ էր առնում ու աչքերը պաղած մտածում։

Եվ այդքան միայն։ Ռուբենը հետզհետե նկատեց իր և Աստղիկի մեջ մի աննկարագրելի հնչյուն, որ շարունակ լսելիքի մեջ խանգարում էր նրա ընտանեկան նրջանիկ երգի նազանակին։ Աստղիկն ինչ-որ կզգիանում, մեկուսանում էր ինքն իր մեջ։ Դժգոհ էր ինչ-որ։ Իր վիճակի՞ց, Ռուբենի՞ց, նոր միջավայրի՞ց — չէր հասկացվում։ Ռուբենը ջանում էր նրան խառնել իր ընկերության մեջ՝ ընդգծորեն զգուշանալով նրա մեկուսացումից։ Հեշտ էր կարծում այդ, և սկզբում չէր էլ նկատում, որ դա շատ դժվար բան է։

Աստղիկն, այդպիսի-առևտրական ընտանիքի աղջիկ՝ բնազդաբար զգալով իր աշխարհի չքացումը նոր աշխարհի մեջ՝ գալով Ռուբենի ընտանիքը՝ հույսեր ուներ թե իր համար կբացվեն նոր ուղիներ։ Նա հաճախ երազում էր այդ ուղիների մասին։ Պարզ չէր թե ինչ կյանք էր պատկերացնում այդ ուղիների մեջ և ինչ էր իսկապես այդ ուղիների կոնկրետ կողմը։ Բայց նա կենդանական բնազդով զգում էր, որ պետք է կառչել նոր մարգկանց, գնալ նրանց հետ մի փոքր առաջ՝ հետո տեսնելու համար, թե որտեղ կդադարի այդ երթը, և ինչ կլինի այդ երթի վախճանը։ Եվ նա այդ անորոշ երազներով ու խաբխափումներով էլ եկավ Ռուբենի մոտ։ Եկավ հեշտությամբ, նրա մի կանչով։ Եվ երբ եկավ նրա մոտ՝ նոր զարթեցին իր մտքերը, ավելի ճիշտը, նոր ուշքի եկավ, որ իր

մեջ խոսում էր իր ընտանիքի, այգեպան-առևտրական հոր ու շրջապատողների հաշիվը,— կառչել նոր մարդկանց և նրանց միջոցով լողալ գնալ նոր կյանքի ծովով՝ մնալով հինը։ Աստղիկին շատ էլ հաճելի չէր Ռուբենի արհեստը։ Նա երազում էր Ռուբենին ինչ-որ իր երևակայած մի տնտեսական հիմնարկում, դրամների ծովում և ավտոների ու գնացքների եռուզեռի մեջ։ Երբ ընկերացավ Ռուբենի հետ, նախ զգաց իր մի սխալը — այգում Ռուբենը թողել էր շատ ինտելիգենտ տպավորություն, ինտելիգենտ մի հիմնարկի ղեկավարի չափ,— իսկ այժմ Աստղիկը տեսնում էր, որ այդ արտաքուստ գեղեցիկ ու կոկ երիտասարդը հասարակ բանվոր էր, թեև բանիմաց և առաջավոր։ Եվ նա հիասթափվեց։ Բայց սկսեց ճիգ գործ դնել Ռուբենին հանելու որմնադիրի վիճակից և տանելու տնտեսական առևտրական գծով։ Ռուբենն, իհարկե, ծիծաղում էր այդ երազների վրա։

— Միևնույնն է, ջանիկս, ես իմ տեղումն եմ ու լավ եմ։

— Ով է ասում,— կոկետ ու թթու ժպտով պատասխանում էր Աստղիկը,— տես ինչպե՞ս է ապրում մեր հարևանը։

Ակնարկում էր մի ուտող-խմող ծառայողի։ Ռուբենը Աստղիկին ավելի սերտ մոտեցրեց իր բանվորական շրջանի ընտանիքներին, Աստղիկը կռվեց նրանց հետ և հարաբերությունը կտրեց։ Նա չէր սիրում բանվորներին։ Եվ ահա եկավ կատարյալ հիասթափումը — Ռուբենը այն նոր լոկոմոտիվը չէր, որ Աստղիկի հին գնացքը տաներ նոր կյանքի ռելսերով։

Մի անգամ քաղսովետի ընտրության ժամանակ, երբ բանվորների ահագին բազմության մեջ դրվում էր Ռուբենի թեկնածությունը՝ Աստղիկը, որ ներկա էր իբրև հանդիսատես՝ սկսեց հակառակել և շրջապատողներին լսելի ձայնով Ռուբենից պահանջել, որ հրաժարվի ընտրվելուց։

Ռուբենը ձեռքը դրեց նրա ծնկան և շոշափելով հասկացրեց, որ իրեն պահի։

Աստղիկը զայրացավ։

— Դու ժամանակ չունես, դու երեխաներ ունես. էդ էլ քեզ հերիք է։

— Դա քո բանը չէ,— սաստեց Ռուբենը։

Աստղիկը զայրացավ։

— Չէ, իմ բանն է։ Ես չեմ կարող քո երեխաներին պահել, որ դու գնաս գիշերներ լուսացնես քո քաղսովետում։

— Հիմարություններ մի դուրս տա։

Եվ Ռուբենը համբերությունից դուրս եկած՝ դողաց ու պապիրոսը վառեց։

— Հիմարություններ դո՛ւ մի դուրս տա,— դիմադարձ կանգնեց Աստղիկը,— նրանք հենց հիմարի են ման գալիս, որ հազար մի գործեր վրան գցեն ու իրենք հանգիստ ման գան։

Ռուբենը շրջապատողների հայացքից այրվեց ու բարվոք համարեց լռել։ Նրան ընտրեցին քաղսովետի անդամ։ Եվ ծափահարությամբ։ Ընկերները, իր բրիգադի անդամները մեծ խանդավառության մեջ էին։ Միայն Ռուբենն էր, որ չէր կարողանում ուրախանալ։ Նրան թիկունքից դանակ էին զարկել։ Այն ոսկի թել կապը, որ ջերմորեն անցնում էր նրա հոգուց դեպի իր ընկերները, հասարակական գործը և այնտեղից էլ իր կինը, ընտանիքը՝ կտրվեց։ Աշխարհը, այն ծաղկավառ այգին, ուր նա գտավ իր ընկերների մեջ հոգու մի այլ ընկեր՝ կինը, բաժանեց նրան իր հոգու մյուս կենսալից վայրից, իր շենքերից, ընկերներից, ընդհանուրի գործից, որի մեջ նա զգում էր, որ բարձրանում է։

Աստղիկը չէր սիրում այդ գործը։ Նրա համար ատելի էր այդ գործը, որի համար Ռուբենը երբեմն երեկոներն ուշանում էր, որի համար երբեմն ուտելիքն էր պակասում, շքեղ հագուստ չէր լինում։ Գործ, որի շուրջը հազարավոր մարդիկ ցնծում, ծափահարում, երջանկանում են, բայց որ անշուք է, ինչպես ակումբի գրասենյակ... Աստղիկին այժմ պարզապես քաշում էր քաղաքի հին ընտանիքների կյանքը՝ լոտոն, թղթախաղը, ճաշկերույթները։

Եվ Ռուբենի մեջ չգտնելով իր ձգտումների իրականացումը, նա կամաց-կամաց թողեց նրան և սկսեց որոնել... Ի՞նչ.— հազիվ թե լրիվ գիտեր, ինչպես և չգիտեր, թե ո՞րտեղ պետք է այն գտներ։ Նման այն որոնողներին, որ սկսում են որոնել, մինչև պարզվի թե ինչ են ուզում գտնել՝ Աստղիկն սկսեց դուրս նայել իր ընտանիքից։

Գեղեցիկ, երիտասարդ կինը բնազդով գնում էր դեպի մի կողմ։ Այնտեղից մի շնչառություն շոշափում էր նրա կույր տենչանքները և քաշում դեպի իրեն։ Եվ այդ երկու էությունները մթան մեջ իրար էին գալիս՝ ինչպես ծղրիդներ...

Անցավ ժամանակ և ծնվեց մի տղա։ Նա բերեց նոր հոգս և կարծես նաև նոր մտերմություն։ Ռուբենն ուրախ էր այդ հոգսի համար. դա վանում էր այն վատ ստվերները, որ սահում էին Ռուբենի սիրո վրայով։

Մի առավոտ միայն, երբ նա թեյն արագ խմելով ու հետն էլ բլուղի կոճակները գցելով խոսում էր Աստղիկի հետ՝ Ռուբենն ինչ-որ հապճեպ նկատեց նրա շարժումների մեջ։ Աստղիկը կարծես շտապեցնում էր նրան, որ սա գնա գործի. բայց դա անում էր ոչ խոսքով։ Դա չէր երևում նրա թեյ ածելու մեջ, հայացքի մեջ։ Այնտեղ նկատելի էր մի տագնապալի շտապ, որ անհանգիստ նայում էր Ռուբենի կողմը։ Այդ հայացքը թելադրում էր Ռուբենին շուտ վերջացնել։

Ռուբենը դրան առանձին նշանակություն չտվեց, բայց դա մնաց նրա հիշողության մեջ։ Ու երբ տանից դուրս էր ելնում՝ բակից անցնելիս նայեց պատուհանից ներս՝ տեսավ որ Աստղիկը արագ մոտեցավ հայելուն և սկսեց երեսը պուդրի քսել։

«Շուկա է շտապում» — մտածեց Ռուբենը և միամիտ դուրս եկավ բակից։ Երբ հասավ շենքի վայրը՝ տան մտքերն ու Աստղիկը ցնդեցին ծխի նման։ Առողջ ու կենդանի աշխատանքը գրկեց նրան ու տարավ հզոր բազուկներով։

Երեկոյան վերադարձին Ռուբենը Աստղիկի շարժումներից նկատեց մի տարօրինակ բան։ Կարծես սա իրեն չէր տեսնում։ Գնում էր գալիս սենյակից սենյակ, վերցնում, վայր դնում աննպատակ մի առարկա։ Պարզ էր — Աստղիկի միտքը զբաղված էր մի բանով, որ կապ չուներ այդ ընտանիքի հետ։

— Ի՞նչ կա, Աստղիկ,— հարցրեց Ռուբենը։

— Ոչինչ,— շեշտ պատասխանեց Աստղիկը, ապա սառը նայեց նրան և հարցրեց,— ի՞նչ ես կպել ինձանից։

— Ով է կպել քեզանից...

Աստղիկը լռեց։

Ռուբենն սպասեց որ Աստղիկը խոսի, բայց նկատելով որ Աստղիկը շարունակեց իր մտքի հետն ընկնելը՝ զարմանքով նայեց նրան և լռեց։ Հոգնած էր։

Հետզհետե Ռուբենը նկատում էր մի բան, որ Աստղիկն անտեղի կոպիտ պատասխաններ էր տալիս իր անմեղ հարցերին։

Նկատեց, որ Աստղիկը տան գործերն էլ երեսի վրա էր թողնում, կռվում էր երեխաների հետ։ Սկսեց նաև ծեծել նրանց։

Դա առիթ տվեց, որ Ռուբենը միջամտի։ Դա արդեն վեր էր Ռուբենի ուժերից — նա սաստիկ սիրում էր իր երեխաներին։ Շուտով երեխաների լացը, Ռուբենի հանդիմանությունները և Աստղիկի ճիչը դարձան միակ ձայները, որ լսվում էին այդ ընտանիքում։ Այդ ձայներից զատ՝ մնացածը լռությունն էր, որ տիրում էր նրանց տանը։

Սակայն՝ մի հանգամանք։ Եվ դա սկսեց աչքի ընկնել։ Չնայած ներվային խոսակցություններին, վեճերին՝ Աստղիկը առանձին ջանասիրությամբ զարդարվում էր ամեն օր, և դա առավոտից սկսած։ Ի՞նչ գործ ուներ այդպես վաղ... Ռուբենին զարմացնում էր այդ, բայց նա գլխի չէր ընկնում։ Մի անգամ միայն ինքնիրեն հարցրեց. «Երեկո չէ, թատրոն չի գնում, կինո չի գնում, ինչի՞ է զարդարվում...»։

Այդ զարդարանքները բոլորովին չէին բռնում Աստղիկի կովաբար վարմունքներին և մռայլ, ներվային դեմքին, որով նա անհամբեր շրջում էր սենյակում և ներս ու դուրս անում։

Մի ինչ-որ լարված խուլ պատմություն էր սկսվում նրանց ընտանեկան կյանքի մեջ, որ խոսում էր անձայն բառերով։ Նրանք դեռ ականջ էին դնում։

Մի անգամ Ռուբենը շենքի գործերով քաղաք էր գալիս տրամվայով։ Հանկարծ փողոցի մայթին նրա աչքովն ընկավ Աստղիկը մի երիտասարդի հետ թեվանցուկ արած։ Երիտասարդի ախտավոր դեմքը կոծկվում էր մի լկտի ժպիտով։ Նա շատ ազատ էր կպել Աստղիկի թևին։ Ռուբենին խոցեց Աստղիկի ցոլուն, վառվող աչքերը։ Նրա հարբած դեմքի վրա խաղում էր անսովոր ուրախություն, հրճվանք։ Անգամ Ռուբենին թվաց, թե Աստղիկը իրեն նկատեց, բայց էլի շարունակեց մոտեմոտ գնալ, հպվել երիտասարդին։ Ռուբենը գլուխը թաքցրեց ուղևորների մեջ։ Նա զգաց խանդի թույնի առաջին հաճույքը, որ հետո է դառնանում։ Նա ամաչեց և վախեցավ հայտնվել։ Վախեցավ իրենից։ Բայց դա մի բոպե. հանկարծ նա վեր թռավ, առաջ մղվեց, որ իջնի վագոնից, բայց ճանապարհ չէին տալիս։ Ու մինչ նա կթռչեր վայր՝ Աստղիկն ու երիտասարդն անհետացել էին բազմության մեջ։ Արդյո՞ք մտան մոտակա խանութներից մեկը, թե ինչ, բայց հետքերը կորան։ Ռու-

բենին խիստ մտահոգեց այդ անհետացումը։ Դրա մեջ ինչ-որ դավադրական չար բան կար։

Խանդն ու զայրույթը խեղդեցին Ռուբենին։ Նա հապճեպ նայեց խանութները, խաչաձևող փողոցը, բայց զուր — Աստղիկն ու երիտասարդը ցնդել էին։

Ռուբենի երևակայությունն սկսեց նկարել թունավոր պատկերներ, որ ինչքան գաղտնի են ու խուսափուկ, այնքան վառ են խանդող սրտի համար։ Նա մղվում էր ամեն կողմ, դեպի բոլոր տները, բռնելու, հետ քաշելու Աստղիկին այդ մռայլ, չարորակ գողությունից։ Բայց նրան կաշկանդել էր իր դրության անզորությունը։ Ո՞վ գիտե ուր մտան, հեռո՞ւն, թե մոտ,— ահա այս տա՞նը...

Ռուբենը ալեկոծ վիճակի մեջ վերադարձավ, նստեց տրամվայ, անցավ տրեստի վարչությունը։ Թե ինչ խոսեց գործի մասին՝ չիմացավ։ Այդ ամենը կատարվեց՝ ինչ-որ հարբած վիճակում։ Նա խոսում էր, և նրան թվում էր, թե դա իր ձայնը չէր, որով խոսում էր։ Նա արագ վերադարձավ շենք։ Այնպես էր շտապում, այնպես հապճեպ էր պատը շարում, կարծես թե ամեն բան կախված էր պատի կառուցման վախճանից։ Շենքի պատերը, որ առաջ շարժուն էին, կանգ առան, քարերը չէին բարձրացնում շենքը։ Գործը մեռավ։ Հարվածը տաք էր, Ռուբենը չէր մտածում այլևս։ Նա գերի դառավ իր մեջ ինչ-որ քնած բնազդներին։

Օրվա կեսը դառավ անսպառ ժամանակ, արևը կանգ էր առել։ Նրան թվում էր թե դեպքը պատահել է մի ամիս առաջ, այնքան խորացել էր, այնքան երկար էր տևում ժամանակը։ Օրը թվում էր դեպքերով լիքը, չարագուշակ էր փողոցը, մայթը, մարդիկ, վերջապես Աստղիկը այն լկտի երիտասարդի հետ։

Ահա նա հասնում էր տուն։ Ահա մի քանի քայլ և կսկսի տենչալի բացատրությունը։

Երբ Ռուբենը մտավ սենյակ՝ Աստղիկը չկար։ Այս չէր մտածել։ Դատարկ սենյակը թշնամական լռությամբ նայեց նրան։ Երեխաներն եկան հարևաններից տանից։

— Ո՞ւր է մաման...

— Մաման չի եկել։

— Չե՞ք ճաշել։

— Ճաշել ենք, մեզ համար առավոտը կերակուր շինեց ու

գնաց,— բացատրեց մեծ աղջիկը, որի աչքերում մատղաշ մտահոգություն կար։

— Ո՞ւր գնաց։

— Չգիտեմ։

Ռուբենը դուրս նետվեց։

Դարձյալ նույն դարանակալ փողոցներն ու տները, որ կուլ են տալիս ամեն գաղտնիք։ Անցորդները ամենքն անտարբեր գնում էին իրենց բանին։ Վերադարձավ։ Սպասել սկսեց։ Ոչինչ չի փոխվում։ Երեխաները տարակուսած ու ճնշված իրեն են նայում։ Նրանք էլ բնազդաբար մի բան հասկանում են։

Ռուբենը ծխում էր և հուզմունքից հևում։ Օրը մթնել էր։ Լամպը վառեցին։

— Պապա, բա թեյ չե՞նք խմելու,— լացակումած հարցրեց երեխան, որ ավելի ճնշված էր հոր զայրալի դեմքից, քան թեյի ցանկություն ուներ։

Ռուբենը թեյամանը դրեց մեքենային։

Բակում շրջազգեստի ներվային խշրտուք լսվեց։ Մեկն արագ մոտեցավ դռան շեմքին։ Աստղիկն էր։ Ներս մտավ, աչքի տակով նայեց Ռուբենին, հետո լուռ մոտեցավ երեխաներին, կռացավ նայեց, հետո Ռուբենին դարձավ.

— Թեյամանը վաղո՞ւց ես դրել։

— Վաղուց,— պատասխանեց Ռուբենը կտրուկ և անշեշտ։

Աստղիկը գլխարկը վայր բերեց, սկսեց հանվել։ Երեխաները զգալով ինչ-որ անախորժություն՝ չխոսեցին։ Ռուբենը լարված ծխում էր և նայում հատակին։ Վերջապես ոչ իր ձայնով՝ հարցրեց։

— Ո՞րտեղ էիր։

— Մորս քրոջ մոտ։

— Ամբողջ օրը...

— Ամբողջ օրը։

Աստղիկը թանձր ներկել էր շրթունքները, ներկը տարածվել էր նրա այտերին, կզակին։ Դեմքը դիմակ էր դառել պուդրուց, իսկ վրայից բուրում էր ինչ-որ օծանելիքի անառակ հոտը։ Նրա աչքերը մարել էին գաղտնի կրքային փոթորկից հետո և նրանց տակին եզերվել էին կապույտ գծեր. Աստղիկն ապրել էր...

— Իսկ էն երիտասա՞րդն ով էր,— հանկարծ խայթեց Ռուբենը։

— Ի՞նչ երիտասարդ,— ցածրաձայն ու բռնի հանդարտությամբ հարցրեց Աստղիկը։ Եվ նայեց պատուհանից դուրս։

— Տրամվայից որ տեսա...

Աստղիկը աչքի տակով արագ նայեց Ռուբենին։ Չպատասխանեց իսկույն։ Հոսեց ծանր լռություն։

— Էն երիտասարդը ընկերուհուս եղբայրն էր։

— Ո՞ր ընկերուհուդ։

— Թիֆլիս մի ընկերուհի ունեմ — նրա։

— Իսկ տուն, երեխա... ամուսին ունե՞ս։

Խեթ նայեց Ռուբենը և ձեռը տարավ դեպի Աստղիկի կոկորդը, որ բռնի, բայց ձեռը թափ տվեց, հետ դարձավ դեպի պատուհանի գոգը, նստեց և սկսեց կծել պապիրոսը։

Աստղիկը լուռ էր, և այդ լությունը կատաղեցնում էր Ռուբենին։

— Լավ, վերջը՞։

— Վերջն էն, որ ես գլուխ չունեմ էդ տեսակ հարց ու փորձերից։

— Ես ազատ եմ։

— Ազա՞տ ես։ Փողոցի կի՞ն ես դառնում։

Հետո ցույց տվեց երեխաներին։

— Սրանց նայիր։

— Երեխաներս տեղն են։ Երեխաների պատճառով չեմ կարող փտել քո տանը։ Ես կյանք եմ ուզում։

Ռուբենն արագ դուրս գնաց տանից ու ընկավ փողոցները։

Շարժումը, հոգնությունը թվում էր, թե կբթացներ նրա հուզումնալի սրտի կսկիծը։ Շրջել սկսեց մինչև կեսգիշեր։

Այդ գիշեր քաղաքն ու փողոցը դատարկվեցին իր համար։ Դատարկվեց և կյանքը։ Նա կորցրել էր իր առաջին սիրո կինը։

***

Աստղիկն ստեղծեց իր համար դրսի առանձին կյանք։ Նա իր շուրջը բազմացրեց կասկածելի ծանոթներ, որոնց հետ շրջում էր կինոները, ճաշարաններն ու այգիները։ Ռուբենը հպարտությունից իր մեջ գտնեց այդ գաղտնիքը։ Ինչ-որ ատելախառն սիրով այդ կնոջ հետ կապված՝ ելք չէր կարողանում գտնել։ Մյուս կողմից մեջտեղ էին ընկած երեք երեխաները, որոնց խնամել էր պետք։ Նա հույս ուներ, սիրող մարդու հույս—որ Աստղիկը կուղղվի։ Աշխատանքի տղամարդ և բրիգադիր, պատվին չէր ուզեցնում դուրս տալ գաղտնիքը։ Կամենում էր մի կերպ լուծել խնդիրն իր տանը, Աստղիկի հետ մենակ։

Սակայն արտաքին աշխարհը չուշացրեց իր մասնակցությունը։ Շուտով շշուկներով լցվեց տան բակը, հարևաններն սկսեցին խորիմաստ նայել Ռուբենին։

Ընկերները դադարեցին այցելել Ռուբենին։ Գործի ժամանակ նրա ներկայությամբ չէին խոսում Աստղիկի մասին։ Պարզ էր — դատապարտում էին նրանք, ովքեր տարիներ առաջ, այգում ուրախ շուրջպարով շրջապատել էին Ռուբենի առաջին սիրո թրթիռներին։ Ընկերների և ծանոթների լությունն ավելի էր ճնշում Ռուբենին։ Գոնե խոսեին, գոնե պահանջ ներկայացնեին։ Նա ևս իրեն մեղավոր էր զգում. բայց ինչո՞ւմ — չէր կարողանում հաշիվ տալ իրեն։

Մի անգամ փորձեց գինու տալ իրեն։ Զզվեց, չէր էլ կարողանում հարբել։ Հանդիմանեց իրեն այդ փոքրոգության համար և դադարեց շուտով։

Փորձեց տարվել գործով։ Վաղ գնում էր գործի և սկսում ներվային եռանդով աշխատել։ Աշխատում էր հարբելու չափ, հարբածի պես։ Սկսեց խստապահանջ դառնալ դեպի իր բրիգադը, անգամ բծախնդիր։

Ընկերները լուռ տանում էին, իբրև հիվանդ մարդու արարքներ, բայց և դժգոհում էին։ Դժգոհում էին և սպասում մի բանի — ինքը ևս սպասում էր այդ բանին — և դա իրենից էր կախված։ Նա պետք է որևէ վճիռ կայացներ։ Պետք է վերջ տար կացության։

Նա տեսնում էր, որ այդ վերջն էր իր փրկությունը։ Եվ նա վճռում էր։ Բայց միայն աշխատանքի ժամանակ, երբ իր կնոջ մասին մտածում էր նրա վարքի մտահոգություններով։ Սակայն, երբ գալիս էր տուն և աչքն ընկնում էր իր կնոջ դեղձան մազերը, խրոխտ հասակը և թունավոր գեղեցկությունը, խանդը բռնկվում էր փրուց ավելի։ Նա թուլանում էր այդ թույնից և ճնշվում, կծկվում։

Գտնում էին նաև բացատրության երեկոներ։ Ռուբենը խոսում էր երկար, համոզում Աստղիկին, սա ենթարկվում էր

կարծես, զզջում։ Հետևում էին համբույրի կարճ վայրկյաններ։ Ռուբենը դրամ էր տալիս երեխաներին, որ կանֆետ առնեն։ Աստղիկը նոր զգեստ էր կարում։

Բայց այդ վաղանցուկ հաշտությունները չէին հանգստացնում Ռուբենին։ Ավելին՝ երկարացնում էին հիվանդությունը։ Աստղիկը չէր փոխվում, շարունակում էր ավելի ախտավոր դառնալ։ Հետևյալ օրերը դարձյալ սկսում էր կասկածելի ուշացումները։ Տուն էր դառնում այտերի ու վզի կարմրած շերտերով, կրկին սև եզրերը աչքերի տակին...

Մի անգամ Ռուբենը ճաշարան մտնելիս տեսավ Աստղիկին մութ անկյունում մի հարբած երիտասարդի հետ։ Նրանք իրար մոտ նստած խմում էին։ Ռուբենը հանդարտ, բայց լարված մոտեցավ և կանգնեց ուղիղ նրանց առջև։ Հարբած երիտասարդն անտարբեր ու արբշիռ նայեց նրան և գինու բաժակը բարձրացրած սպասեց։ Աստղիկը վեր կացավ։ Հարբածը բռնեց նրա թևը և ուժով նստեցրեց.

— Նստիր։

Ռուբենը սուր նայեց Աստղիկին, նայեց աչքերի մեջ՝ երկաթի պաղ հայացքով՝ և ցածրաձայն հրամայեց.

— Վեր կաց։

Աստղիկը նորից վեր կացավ ու շարժվեց դեպի դուռը։ Հարբածը ընկավ նրա հետևից։

— Թո՛ղ,— ճչաց Աստղիկը նրան ու վազեց դուրս։

Հարբածը հետևեց նրան, բայց ճաշարանից մարդիկ դուրս եկան և նրան բռնեցին։

Ամուսիններն շտապ տուն հասան։ Աստղիկն սպասում էր մեծ դեպքի։ Բայց Ռուբենը ոչինչ չարեց։ Երկար լռություն տիրեց, որից հետո Աստղիկը մռայլ հարցրեց.

— Հետո՞։

— Հետո՞,— կրկնեց Ռուբենը և մնաց պահ մի։— Հետո, էրոպլեիս կգնաս կամ հորանցդ, կամ ում մոտ կուզես։ Վերջ։

Երեխաներն սկսեցին լաց լինել։

Աստղիկը մնաց այդ գիշեր — վերջին գիշերը և հետևյալ առավոտը կապելով իրեն պատկանած իրերը՝ մշակ կանչեց և երեխաներին անասնական անտարբերությամբ լքելով՝ գնաց։

Ռուբենը չհարցրեց թե ուր։

* * *

Երեխաների լացը չդիպավ Ռուբենի զգացումներին։ Այնքան քարացել ու խստացել էր նա, այնքան կարոտ էր մի վճռական քայլով դուրս գալու իր հոգեկան անձուկ վիճակից։ Այդ քայլը կատարվեց — և նա ուրախ էր։ Եսականության ուրախությունը նրան այնքան էր հաղթահարել, որ չէր ուզում նկատել երեխաների վիճակն անգամ։

Հարևան մի կնիկ՝ առանց խոսքի՝ եկավ երեխաների մոտ՝ հանգստացրեց, դպրոց ուղարկեց մեծին, փոքրիկներին իր մոտ տարավ։ Նա ևս ուրախ էր։

Բակում ձայներ լսվեցին — թեթևացած մարդկանց զրույց՝ կատարվածի մասին։ Ամենքը ճնշված էին Ռուբենի ընտանիքի տարիներ տևող զուսպ մղձավանջից, որ հիմա վերջացավ։

Երբ Ռուբենը գնաց շենքի վայրը՝ կարծես հիվանդությունից դուրս եկած լիներ։ Իրեն զգաց ամուրի, նախկին երիտասարդը, որ պատ էր շարում և սպասում է քաղցր կյանքի։ Դիմացի կանաչ բլուրը, այդիների ծաղկած սալորենիները, նրանց տակին կանաչած գետինը կրկին խոսել սկսեցին և խոստանալ ինչ-որ ուրիշ խնդություններ։ Ռուբենը քաղցր շունչ քաշեց և սկսեց աշխատել։ Հետո մտքերն սկսեցին պրպտել, խուզարկել այն արահետը, որով հեռացավ Աստղիկը։ Հետո նրա երևակայության մեջ նկատվեց նախընթաց գիշերվա դեպքը։ Նոր զգաց, որ դա իրեն խոր ազդել էր։ Վերքը ցավել սկսեց — նա չէր զգացվում՝ քանի դեռ տաք էր։ Հանկարծ նրան շանթեց այն միտքը, որ Աստղիկը կարող էր գնալ հենց այն հարբածի մոտ։ Օձը զարթնեց մեջը։ Տխրեց,— ուրեմն խանդը չի անցնում՝ սիրո անցնելուց հետո։

Բայց երբ նոպան անցավ, նա զգաց որ ինքն ազատ է։ Ճիգ արեց փարելու այդ նոր զգացմունքին։

Մի քանի օր անցավ հոգեկան տարուբերումների մեջ։

Նոր կյանքը՝ սկզբում դրամատիկ և հանդիսավոր՝ հետագայում սկսեց բերել իր առօրյան — հոգալից ու սրտամաշ։ Երեխաները. Լուսիկը — մեծ աղջիկը ութ տարեկան, չէր կարողանում պահել իրենից փոքր Պետիկին ու ավելի փոքր Մուշիկին։ Նա դրպրոց էր գնում։ Հարևան կնիկն էլ գնում էր իր բանին։ Պետք էր տնօրինել երեխաների կյանքը։ Աստղիկը գնաց այնպես, կարծես երեխաները իրենը չէին։

Հարևանները ձայները բարձրացրին — սկսեցին պարզ խոսել Աստղիկի սանձարձակ վարքի մասին՝ ճաշարաններում ու մասնավոր տներում։ Դա և խոցում էր Ռուբենին, և ուրախացնում։ Ուրեմն վերադարձ չկա։ Աստղիկը կորած է ընդմիշտ։

Ռուբենը հույս ուներ, որ իր վերքն այսպիսով էլ կամաց-կամաց կբուժվի։ Հիմա արդեն երեխաների վիճակն էր սրվում, դա էր խռովում նրան։ Ցերեկները թողնում էր պատշգամբում, բակում, պատվիրում էր որ սպասեն իրեն և երբ հոգնած գալիս էր տուն՝ տեսնում էր պատուհանի տակ փոքրիկները քնած, իսկ Լուսիկը խեղճ-խեղճ մոտները նստած՝ սիրտը մղկտում էր։

Մի օր էլ փոքրիկը լաց էր լինում։ Լուսիկը բացատրեց,— մամային է ուզում, չի իմանում որ էլ մաման չի գալու։

Սա խորը վիրավորեց Ռուբենին։ Ներս մտավ հարևան կնիկը և սկսեց խոսել Ռուբենի հետ նրա երեխաների մասին։

— Էսպես չի լինի, այ որդի։ Երեխաներդ ափսոս են։ Դեն գցած կատվաձագերի պես մնացին խեղճ։

— Լավ, ի՞նչ անեմ, մե՛րս։

— Մի ռուս կնիկ կա հարևան տան բակում։ Բեր պահի, նա էլ երեխանցդ կնայի։

— Ո՞վ է, ի՞նչ կնիկ է։

— Լավ կնիկ է։ Մենակ ոտները ցավում են։

Ռուբենը շմտածեց երկար։ Եվ հուսահատորեն կարճ կտրեց.

— Կանչիր գա։

— Մեզ համար մամա են բերում,— ուրախ-ուրախ խոսեց միջնակ երեխան՝ Պետիկը։ Իսկ Մուշիկն արցունքոտ աչքերով նայեց հորը.

— Լավ մամա բեր, որ չգնա։

Ռուբենը դառնորեն ծխել սկսեց։ Հարևան կնիկը գնաց։

Նոր «մաման» երկու ոտքով կաղ լնգլնգալով բակից ներս մտավ։ Բադի էր նման։ Նա ուսին սպիտակ փուշի էր գցել, որ իջնում ծածկում էր ուռած փորն ու հաստ կոնքերը։

Նա լղար էր սակայն։

Նրան ուղեկցում էր հարևան կնիկը։ Պառավն առաջ ընկավ, առանց դուռը ծեծելու ներս մտավ Ռուբենի սենյակը և ձեռվ արեց կաղ կնոջը։

— Կարելի՞ է,— հարցրեց սա հնչուն ու սրտաբաց ձայնով։

— Համեցեք,— ասաց Ռուբենը և վեր կացավ տեղից։

Ռուս կինը ներս մտավ և առանց շուրջը նայելու նստեց տաբուրետի վրա։ Նա և Ռուբենը իրար նայեցին։ Հարևան կնիկը մոտեցավ Լուսիկին և բռնելով նրա ձեռը՝ նստեց։ Փոքրիկը — Մուշիկը քնած էր։ Միայն Պետիկը թմրած ու հոգնած աչքերով նայեց նորեկին.

— Սա՞ է նոր մաման։

Բոլորը ժպտացին։

Ռուբենը կրկին նայեց կնոջը և չկարողացավ սկսել։ Ծանր, դժվար, անհասկանալի էր իր անելիքը։ Իսկապես ո՞վ էր, ի՞նչ կին էր դիմացինը։

— Դուք երեխաների համար տանտիրուհի՞ եք որոնում — հարցը պարզ դրեց կինը։

— Այո,— պարզ պատասխանեց Ռուբենը թեթևացած։ Ռուբենն զգաց մի ինչ-որ թարմ հոսանք իր սենյակների ծանր մթնոլորտում։

— Նու, եթե ուզում եք՝ փորձեցեք։ Ես կպահեմ երեխաներին, կնայեմ տանը։ Հարմար եղա՝ կմնամ, եթե ոչ՝ դուք ազատ եք, ինչպես և ես։

Ռուբենը մի տեսակ ամաչեց, զգալով, որ ինքն այդ բոպեին ամենից շատ մտահոգված էր հենց այդ վախճանի հոգսով։ Նա համաձայնեց, որ կինը մյուս օր գա իր մոտ։ Հարևան կնիկը, նշաններով հասկացրեց ռուս կնոջը, որ իրերը բերի։

Ռուս կինը վեր կացավ։ Նա կանգնած իսկ՝ օրորվեց իր ոտքերի վրա։ Սաստիկ կաղ էր։ Հետո թեթև ցտեսություն ասաց և մեղմաժպիտ նայեց երեխաներին։

Դա նուրբ, խոր ժպիտ էր մի մարդու, որի պրոֆեսիան կարծես ինչ-որ ջերմ, ներքին բան է, որ մենակ բարի մարդն է ունենում իրրև տաղանդ՝ մարդկային սերը։

Երբ նա շրջվեց, այսինքն պտտվեց իր մի ոտքի առանցքի շուրջը, և դուրս քայլեց օրորվելով՝ Ռուբենը նկատեց նրա սարսափելի խեղանդամ կոնքերը, ծուռ ոտները։ Այն ջերմությունն ու խանդաղատանքը, որ մի փոքր առաջ զգացել էր նա, սուզվեց ստվիճ մի հոգեանքի մեջ։ Ինչ-որ մի դառնություն զգաց Ռուբենը՝

արդյո՞ք դեպի այդ կաղ կինը, թե՞ դեպի իր վիճակը։ Մի հուսահատ, ատելախառն դառնություն։ Եվ ձեռը զայրալի թափ տվեց։

— Թո՛ղ, մեջն անիծեմ։ Էսպես կյանքի... միևնույն է...

Ռուբենը թափ տվեց ձեռն իր սեփական կյանքի վրա, արհամարհանքով անձնազոհ եղավ, մտավ մի ինքնամոռաց վիճակ։ Դա ծխի պես դառն էր, այրող, բայց դուր էր գալիս նրան։ Կարծես վրեժ էր լուծում իրենից։ Նաև կնոջից։ Եվ ամենքից։ Կարծես արդարություն էր վերականգնում — ինչ-որ մեծ արդարություն։

Խռովեց իր կյանքի ուրախությունից և իրեն տվեց հանրային ուրախությանն ու երջանկությանը։ Սկսեց թաղվել գործի մեջ, նեղվել իրեն, չարչարել։ Դա ևս ոգելից խմիչքի պես այրող էր ու ընդարմացնող։ Դաժանությունը դառավ նրա մտերիմ զգացումը։ Ոչ ոքի չէր պատմում իր կյանքի մասին։ Արտաքուստ չէր ուզում կասկածել տալ, որ իր մեջ հուզվում է մի գաղտնի վեպ։

***

Սոֆիա Պետրովնան — կաղ կինը — եկավ մտավ Ռուբենի ընտանիքն ու եկավ շատ ծանրակշիռ և լուրջ։

Ռուբենը չէր ապրում հետը։ Սա պարզ էր։ Նա իր գործին էր ամբողջ օրը։ Կինը խնամում էր երեխաներին և Ռուբենին։ Սոֆիա Պետրովնան շատ կարևոր ու հիմնավոր դրեց իր գործը։ Եվ շատ խորքից։ Սրբեց, պլպլացրեց տունը, դուռը, երեխաներին նախշեց խնձորների պես, միջնակին՝ համբերատար ջանադրությամբ՝ կաղալով տարավ տվեց մանկապարտեզ և կարգեց խիստ կանոններ կենցաղի։ Իրեն հասկանալի և իր մեջ արդարացրած ինչ-որ ճշգրիտ ու խիստ բարոյախոսություն ուներ, որով վարվում էր։ Եթե մի բան պետք է՝ պետք է ուրեմն — վերջացավ։ Ուրեմն երեխաները ուղիղ ժամը ութին քնում են, վեր են կենում ութին։ Սա օրենք էր։ Լաց լինել չէր կարելի։ Կարելի էր ամեն բան խնդրել և նայած թե խնդրածն ինչ էր՝ ստանալ։ Բայց այնքան չափավոր, որ չհիվանդանաս։ Ժլատ, ագահ չէր — բայց խնայող էր։ Երբ տունը լավ կարգի ընկավ՝ սկսեց երեխաներին զբաղեցնել։ Սկսեց հեքիաթներ պատմել։ Հետո սկսեց նաև երգել։ Երգում էր շատ մեղմ ու համավոր։ Այսպես՝ աղվեսն ասաց գայլին — ու երգում էր թե ինչ ասաց գայլին աղվեսը։ Թուխս հանած հավի պես էր՝ ճտերը չորս բոլորը։ Միշտ զգուշացնում էր, ամեն րոպե կանչում, ուղղում։

Լավ եղանակներին երեխաներին մաքուր հագցրած տանում էր զբոսնելու երբեմն դեպի բլրի խճուղին, մաքուր օդ շնչելու, տեսարաններ դիտելու։ Երբեմն էլ տանում էր շուկա։

— Թող կյանքն էլ տեսնեն,— բացատրում էր Ռուբենին Սոֆիա Պետրովնան։

Ռուբենին մի փոքր զարմացնում էր՝ թե ինչու էր այդ ցավագար կաղը վճռում կատարել իր ֆիզիկականից վեր գործեր. մանավանդ որ ոչ ոք չէր պահանջում։ Դա Սոֆիա Պետրովնայի կենցաղի խստականն, յուրահատուկ հասկացողությունն էր։ Կարծես այդ ամենն իր համար էր, ո՛չ երեխաների։ Նա էլ իր ներքին ինչ-որ աշխարհն ուներ, որտեղից այդպիսի տարօրինակ բաներ էին դրսևորվում։

Ռուբենն անտարբեր ու համաձայն լսում էր Սոֆիա Պետրովնայի բացատրությունները, և ոչինչ չէր ասում։ Նրա համար դա ուրիշի գործ էր։ Բայց վերջերս նա կտրվեց իր ընկերական շրջանից։ Կտրվեց այն մտքով, որ զբաղվում էր միայն բրիգադի գործով աշխատանքի ժամերին։ Դրանից դուրս կապ չէր պահպանում ընկերների հետ։ Նրանք իրենց կենսուրախ կենցաղով ճնշում էին իրեն, ինքն էլ չէր ուզում թունավորել նրանց իր դժբախտությամբ։ Գործը վերջանալուն պես գալիս էր տուն և նստում ժամերով։ Մխում էր մտազբաղ։ Սոֆիա Պետրովնան նկատել էր, որ նա չի սիրում խոսել, ինքն էլ՝ չէր խոսում։ Դրա փոխարեն երեխաներն էին իրենց կաղ «մոր» հետ խոսում, աղմկում։ Դա սկսեց հանգստացնել Ռուբենին։ Վերջերն ինքն էլ սկսեց մասնակցել նրանց զբոսանքներին՝ Սոֆիա Պետրովնային օգնելու համար։ Շատ էր նեղվում սա երեքին զբոսանքի տանելիս։

Մի օր էլ ճանապարհ ընկան դեպի փողոցն ի վեր՝ բլուրը։ Մայթի վրայով մի տեսակ ձգվեց այդ ընտանիքի շարանը, տեսարանի պես։ Առջևում իր փոքրիկին գրկած գնում էր Ռուբենը՝ մտախոհ ու լուռ, նրանից մի փոքր հետո քայլում էր Լուսիկը՝ աչքը խանութների վիտրիններին։ Ամենից վերջը Պետիկի ձեռից բռնած, ընդլնգում էր բադի պես Սոֆիա Պետրովնան՝ շատ լուրջ և կարևոր դեմքով, իր գործի մեծ գիտակցությամբ։

Գնում է Ռուբենը՝ իբրև դառն հանդիմանություն, իբրև հա-

մակերպված, անձնուրաց մի մարդ, որին անիրավել են, լքել, և որը հպարտորեն կրում է իր լուծը։ Նա միայն մի տենչ ուներ — չպատահի ծանոթների, ընկերների, ցույց տա իր գեղեցիկ վիշտը և տգեղ ընտանիքը։ Երբեմն արագ քայլելուց շատ առաջ ընկած՝ կանգնում էր, որ Սոֆիա Պետրովնան հասնի։ Եվ սրտնեղում էր.

— Հը՞, գալի՞ս ես։

— Գալիս եմ,— հանդարտ ու բարի աչքերով նայում էր Ռուբենին կաղ կինը և հևում։

Գալիս էր, բայց որքան դանդաղ, ինչպես հանգիստ։

Ռուբենը մտքում նեղանում էր նրա այդ հանգստությունից և կաղությունից։ Նա հասկանում էր մասամբ նաև ինչու համար Սոֆիա Պետրովնան շատ էր գոհ իր կյանքից։ Գոհ էր, որովհետև իր վրա դրած պարտականությունը կատարում էր սրբությամբ։ Ռուբենի երեխաներին խնամում, կրթում էր անձնվիրաբար, ոչ ոք չէր կարող կշտամբել նրան որևէ թերության համար։ Բայց Ռուբենն զգում էր այդ կաղ կնոջ հանգստության նաև ներքին աղբյուրը։ Սոֆիա Պետրովնան միանգամայն բավարարված էր իր կյանքի այս ելքով։ Նա ապահով էր։ Եվ իրոք՝ Սոֆիա Պետրովնան շատ դժբախտ էր ապրել։ Կաղությունը նրան ընդմիշտ զրկել էր ավելի բարձր երջանկությունից՝ սիրուց և փայփայանքից։ Ավելին։ Կաղությունը նրան դուրս էր գցել նաև իր հարազատ քաղքենիական ընտանիքից։ Ծնողները մեռել էին վաղուց, եղբայրները չէին օգնում, և ինքը Ռոստովի կիսակիրթ կնիկ՝ ընկել էր կյանքի երախը, սեփական ուժերով պայքարելու ստիպումով։ Դա մի տարած-տրորած էակ էր, որ կյանքի ալիքների մեջ տարուբերվում էր դյուրաբեկ խոտի նման։ Վերջերս էլ ընկնելով Երևան՝ ծառայել էր մի երկու տեղ, բայց ֆիզիկապես ուժեղների մրցման չդիմանալով անգործ, սաստիկ կարիքի մեջ էր, երբ Ռուբենի դժբախտությունը վրա հասավ նրան փրկելու։ Արդ, փրկված էր նա և խեղդվելուց նոր ազատվածի մոլեգնությամբ ամուր բռնել էր ափի խոտերն ու քարերը։ Նա հիմա շատ ու շատ թանկ էր գնահատում իր այս վիճակը և ճիգ էր անում պահել ձեռքում այս ափիթը, վերջապես ապրելու... Եվ ահա ապրում էր այնպիսի ուժով, ծարավով... Միաժամանակ գիտակցում էր իր դերի նշանակությունը — նա պետք է մարդկանց, նա գրավում է մի այնպիսի պոստ, որ ուրիշը չի կարող, չի կամենում։ Վերջապես ինքը խաղաղացրել է մի մարդու

ընտանիքի փոթորիկը։ Սոֆիա Պետրովնան զգում էր, որ ինքն է գերիշխում այդ ընտանիքում։ Ահա թե ինչու նա այդպես հանգիստ ու անվրդով քայլում էր Ռուբենի հետևից։ Նա հպարտ էր... և երջանիկ։ Կաղ կնոջ խաղաղ երջանկությունը, որին մասնակցում էին նաև երեխաները, եկել կարծես թե թառել էր Ռուբենի դժբախտության վրա։ Բավական էր, որ դժբախտ երիտասարդը թափահարեր ինքն իրեն՝ այդ երջանկությունը կթափվեր գարնան կեռասենու հասած ծաղիկների պես։ Պե՞տք է անել այդ...

Ռուբենը կրկին հետ նայեց և սպասեց, որ կաղը հասնի։ Ուզեց հանդիմանել նրան, բայց կնոջ հեքը տեսնելով զսպեց իրեն։ Ցավագարն շտապում էր որքան կարող էր, դանդաղում էր, որովհետև անկարող էր ավելին։ Նրա աղջկային, թարմ այտերը շառագունել էին քայլելուց և հասնելու ճիգից։ Ի՞նչ կարելի էր ասել։ Հանդիմանեց Ռուբենն ինքն իրեն, արդարացրեց ցավագար կնոջը և շարունակեց ճամփան։

Բայց այնուամենայնիվ մի բան մնում էր անողոք ճշմարիտ։ Որ Ռուբենը դժբախտ էր։ Որ այդպես նեղվում, շտապում էր նրա սիրտը, իսկ հետևից քաշ էր գալիս իր հոգսը, լքած ընտանիքը և իր ճակատագիրը — կաղ կինը։ Սկսեց խղճալ իրեն, մտքում հանդիմանել այդ ճակատագիրն ուղարկողին։ Թերևս ուրիշ կերպ կարող էր տնօրինել իր բախտը։ Թերևս սխալվել էր այդ կաղ կնոջ իր տուն բերելով... Կարող էր — չէ՞— մի այլ էակ, գեղեցիկ ու թրթռուն այժմ թևանցուկ արած քայլել իր կողքով։ Պատկերացրեց այդ աննյութ էակին, զգաց նրա գիրգ թևերի հպումը իր երկաթամկան թևերին։ Սակայն, երբ նայեց իր գրկում ննջած երեխային և հիշեց հետևից քարշ եկող մյուսներին՝ ցնորքը թռավ ճառագայթի թեթևությամբ։ Ո՞վ, ո՞ր կինը կբերի իր գեղեցկությունը մաշելու երեք երեխայի խնամքի, հոգսի մեջ... ոչ, զուր են երազները։

Եվ ահա երևակայության արբեցման մեջ, մշուշոտ աչքերի դիմաց սկսեց գծագրվել ու երերալով գնալ իրենից հեռացած էակի կերպարանքը։ Այնպես, ինչպես սիրել էր նրան այն ուրախ գարնան ծաղկած այգում, երբ չէր ճանաչում նրան, բայց սիրեց բուռն կերպով։

Նրա հետևից հնչեց իր աղջկա և միջնակի զանգակի ծիծաղը։ Ինքնաբերաբար ինչ-որ բան ցույց տվին «մամային», սա՝ «այո, այո»

ասաց։ Բայց Ռուբենը իր երազի հետ էր, անգամ հետ չնայեց։ Աչքերը կիսախուփ, մշուշոտ՝ նա հառաչեց ու հայացքը գցեց հեռու հորիզոնները։

Ոչ, այս ընտանիքը, այս կինը իր ճակատագիրն էր, պետք է տաներ, տանջվեր և այդպես էլ չորանար, վերջանար։

Դառն ծխի պես ներս քաշեց այս միտքը իր մեջ. դա արդեն վրեժի ցասման քաղցր դառնությունն էր, որ նրան պետք էր գինու, ծխախոտի պես։

***

Մի հանգիստ օր, երբ Սոֆիա Պետրովնան երեխաներին տաբել էր զբոսնելու և Ռուբենը պառկել տախտի վրա նիրհում էր՝ ներս մտան նրա ընկերները։

— Բարի օր, հյուր կընդունե՞ս — կես հեգնական ասաց վարպետ Սերոբը։

Դա հիսունի մոտ մի կոճղ էր, ուրիշ բրիգադի բրիգադիր։ Նա կոշտ բեղերը սրեց և հիմնավոր նստեց տաբուրետին։ Մյուսները լուռ տեղավորվեցին։

— Հը՞,— արեց վարպետ Սերոբը և կծու նայեց Ռուբենին,— բավական չի՞։

— Ինչ եմ անում,— անշեշտ հարցրեց Ռուբենը։

— Բռնած ծրագիրդ ծրագիր չէ։

Ռուբենը վեր նայեց և բութ հայացքը գցեց վարպետի աչքերին։ Վարպետը սակայն անսասան էր։

— Ես իմ գործն ուրիշին չեմ անել տալիս, պլանները կատարում եմ, ոչ ոքի էլ չեմ խանգարում աշխատելու։

— Հարվածայնությունն էդ չի,— կտրեց մյուսներից մեկը, որ մինչ այդ լուռ էր,— հարվածայնությունն էդ որ լիներ՝ մեքենան ամենից լավ հարվածայինն է։ Մաքրիր՝ կգնա։ Հարվածայի՞ն ես՝ հարվածային կաց։

— Կնիկ ունեիր՝ թոցրիր, կպատահի։

Խուլ ձայնով խոսեց մի ուրիշը։

— Թքի գնա,— ձայն տվին մյուսները։

Վարպետ Սերոբը սկսեց վարժապետական տոնով.

— Կնիկդ գնա՞ց։ Ուրիշին բերիր՝ ընտանիքդ ապահովեցիր։

Բանը հո մենակ կնիկը չի։ Աշխարհքին մտիկ տուր, տես ուր է գնում։ Արի աշխատանք արա, ափսոս չի՞ աշխատանքը։ Ամենակյանքի բանը հենց աշխատանքն է։ Դե վե՛ր, դե վե՛ր։

— Ո՞ւր,— վախեցած հարցրեց Ռուբենը։

— Ավիացի օր, գնանք,— ուրախ ձայն տվեց ամենից կարճահասակ մի բանվոր, որ չէր հասկանում ոչ Ռուբենի վիշտը, ոչ էլ այդքան երկար խրատելու կարիքը։ Նա սևասաթ աչքերը պսպղացրեց ու դուրս եկավ բադի պես օրորվելով։ Ու կանգնելով պատշգամբում, թևի մկաններն ուռեցրեց ու ըմբիշի պես հարձակվեց իր նման մյուսի վրա.

— Ըմ, կնկա հե՛րն եմ անիծել։

Իսկ ներսում Ռուբենը համառում էր։ Նրա թևերից քաշեցին, դուրս բերին։

Ռուբենն ակամա դուռը կողպեց, բանալին դրեց նշանացի տեղն ու գնաց։

— Ախր, ո՞ւր եք տանում է։

— Զխկում քեզ, գնա — բոթեցին կոպիտ բռունցքներով ու հռհռալով դուրս եկան բակից։

— Հիմի բանը երեխեքն են,— շարունակեց վարպետ Սերոբը.— դու պիտի աշխատես լավ երեխեք տաս պետությանը։ Երեխեքանցդ գործն էլ դրստել ես, էլ ինչ ես ուզում, տնաշեն։ Թքիր գնա...

***

Սակայն տանը ծաղկում էր խաղաղ ուրախությունը, չէր նայում ոչ Ռուբենի վիճակին, ոչ նրա դառնության։

Սոֆիա Պետրովնան հիմնարկի պես սարքել էր տունը և նրա կենցաղը։ Երեխաներն այնպես էին կապվել նրա հետ, որ չէին ուզում հիշել իրենց մորը, բացի Լուսիկից, որ թեև չէր խոսում, բայց սրտում կրում էր այդ վիշտը։ Սոֆիա Պետրովնան Լուսիկի հետ միասին տան գործերը վերջացնելով՝ երեխաների հետ դուրս էր գալիս տան բակը և նստելով պատշգամբի սանդուղքին՝ ասեղնագործում էր և հետն էլ մասնակցում երեխաների խաղերին։ Խաղերն ստեղծում էր ինքը։ Բակի առուն կապել էր տալիս երեխաներին և հիդրոկայան էր խաղացնում։ Կանչում էր բակի մյուս

երեխաներին։ Սրանք էլ էին մասնակցում «երկրի շինարարության» — ինչպես կոչում էր խաղը Սոֆիա Պետրովնան։ Երեխաներն արդեն իրենք շարունակում էին ստեղծագործել։ Երբեմն կռվում էին, երբեմն երգում, տոն կատարում։ Հանդիսավոր երթն աղմկում էր բակում։ Տանեցիները դուրս էին գալիս պատշգամբ դիտելու «բանվորների» տոնակատարումը։

«Հիդրոկայանին» հետևում էր որևէ «գործարանի» կառուցում։ Սոֆիա Պետրովնան տալիս էր պլանը՝ երեխաները կառուցում էին։ Հետո նա պարգևատրում էր երեխաներին՝ տալով ամենքին կես-կես կոնֆետ։

Բանն այն էր, որ ինքը ևս շատ սիրում էր այդ խաղերը, դրանց մեջ իրականանում էր նաև իր երազը՝ ապրել կենդանի կյանքով, մասնակցել շինարարության, իբր թե ինքն էլ ամենքի պես «նորմալ» մարդ է, պիտանի է և գոյություն ունի։

Նրա կյանքը թունավորվում էր մի բանով միայն։ Լուրեր էին բերում, որ Աստղիկը լսելով նրա մուտքը «իրենց» տուն՝ սրվել է իր դեմ և պիտի գա պատիժ տալու անկոչ հյուրին։ Սոֆիա Պետրովնան սաստիկ վախենում էր նրանից։ Նրա վախը հիմք ունեցավ։ Աստղիկը կատարեց այդ հարձակումը։ Դա պատահեց այն րոպեին, երբ Սոֆիա Պետրովնան խաղում էր երեխաների հետ։ Աստղիկը բակից ներս ընկավ ու վազեց դեպի նա։ Սոֆիա Պետրովնան փոքրիկին գրկած մի կերպ իրեն գցեց հարևան կնիկ սենյակը։ Երեխաները ճչացին, բայց կուչ եկան մոր առաջ։ Աստղիկը գրկեց Պետիկին և սկսեց վայրենի համբույրներով սեղմել նրան իր կրծքին՝ հետն էլ հևիհև հարցնել.

— Մոռացե՞լ ես մամայիդ, հա՞, մոռացե՞լ ես...

Երեխան լաց լինելով կպավ նրա կրծքին, իսկ Լուսիկը մռայլ ու լացակումած հենվեց պատին։

Աստղիկը սկսեց բարձրաձայն հայհոյել Սոֆիա Պետրովնային, որը դողում էր վախից։ Հարևան կնիկը դուռը կողպելով դուրս եկավ նրա առաջ։

— Ի՞նչ ես ուզում խեղճ կնկանից...

— Դուրս գա, թող դուրս գա, հոգին հանեմ,— ճչաց կատաղած մայրն ու հարձակվեց կողպած դռան վրա, սկսեց թակել։

Երեխաները վայնասուն գցեցին.

— Մամային սպանում են, մամային...

Այս ավելի կատաղեցրեց վիրավորված մորը։ Նա սպառնաց, որ պետք է սպանի «կաղին», ներս նայեց պատուհանից, բռունցքով սպառնաց և հետո գնաց։

Դուռը բացվեց և Սոֆիա Պետրովնան դուրս եկավ։

Երեխաներն ուրախ-ուրախ վազեցին կպան նրա փեշերին։

Ռուբենը իմացավ դեպքը, բայց ձայն չհանեց։

Մի անգամ Ռուբենը փողոցով գնում էր։ Հանկարծ անցորդների մեջ նկատեց Լուսիկին, որ իր առջևից գնում էր դպրոց։ Նա իր բարակ մատներով խնամքով բռնել էր թանաքամանը և նիհար ուսերը ծռել, որով երևում էր այն ճիգը, որ նա գործում էր զգույշ քայլելու։ Աղջիկը կոկիկ հագնված էր և ձախ թևքի տակ գիրքը սեղմած՝ նա ամբողջովին դառել էր ուշադրություն, խնամք և ուրախություն, որ դպրոց է գնում։ Մաքուր էին նրա մազերը, զգեստը, կոշիկները, հայացքը։

Ռուբենն ուրախացավ և մոտենալով աղջկան՝ ձեռքը դրեց նրա ուսին.

— Դպրո՞ց ես գնում։

— Հա, պապա,— փաղաքշական ձայնով պատասխանեց Լուսիկը։

Աղջկա աչքերում երջանիկ մի շող էր խաղում։

— Գնա, բալիկ ջան,— գուրգուրեց Ռուբենը և ճանապարհը ծռելուց առաջ ինչ-որ հակառակ պահանջի դրդմամբ հանկարծ հարցրեց աղջկան.

— Մամայիդ հիշո՞ւմ ես։

Աղջիկը ծաղկի պես գլուխը կախեց։ Ռուբենը բռնեց նրա գլուխը, բարձրացրեց վեր։ Աղջկա աչքերում արցունք կար։

— Լավ, լաց մի լինի, գնա, բալիկ ջան,— շշնջաց Ռուբենն ու ձեռքը բաց թողեց։

Մի փոքր առնվեց աղջկա այդ թաքուն վշտից, բայց կարծրացած սիրտը չէր թողնում ավելի խորը թափանցել փոքրիկի հոգեկան աշխարհը։ Ձեռքը թափ տվեց ու գնաց իր գործին։

Երեկոյան տուն վերադարձավ սրտեղ տրամադրությամբ։ Փողոցի ուրախ ձայները նրան հանգստացնում էին։ Սիծաղը մրտրակում էր նրա հոգին, ուստի փախչում էր փողոցներից, որ չլսի։

Մտնելով բակը՝ նկատեց, որ իրենց սենյակում ինչ-որ շարժում կա։ Երեխաները կչկչում էին։ Ի՞նչ կարող էր լինել այնտեղ։

Մոտեցավ պատուհանին նայեց ներս։ Հարևան երեք երեխա մեջքով դեպի պատուհանը կանգնել՝ տարված դիտում էին ինչ-որ տեսարան։ Պատուհանի եզրից Ռուբենը տեսավ Սոֆիա Պետրովնային, որը պարում էր, հետն էլ հևալով համեստորեն երգում։ Նա աշխատում էր պարել ավելի իրանով՝ քիչ գործադրել իր կաղ ոտները, որոնք ամեն մի շարժման արգելք կարող էին լինել։ Դա մի տեսակ կաղապար էր, ափիկ-ափիկ, կողք-կողքի։ Նա երգում էր մեղմ, աղջկային ձայնով, թախծալի — ուրախ շեշտով և տարված էր։ Ինչո՞ւ էր վճռել պարել, ի՞նչ էր պատճառը այդքան բարձր տրամադրության։ Ուշի ուշով նայողը կստանար այն տպավորությունը, որ նա երեխա է, մի ջահել աղջիկ։ Եվ իրոք՝ չնայած նրա քսան և ութ տարուն, նրա մեջ դեռ չապրած երեխայություններ կային, որ դուրս էին գալիս, երբ գտնվել էր հարմար միջավայր։ Չունենալով ուրախ մանկություն, խաղընկերներ, չապրելով վաղահաս տարիների ուրախությունը՝ նա մի տեսակ խաղընկեր էր դառել այդ երեխաների մեջ։ Ուրախությունն այնքան էր գրկել նրան, որ նա տարված չնկատեց Ռուբենի ներկայությունը։ Սա ներս մտավ մռայլ ստվերի պես և հանգցրեց ուրախությունը։ Կաղը կանգնեց, սառեց, երեխաները դուրս գնացին։

— Ուրիշ բան չգիտեի՞ր,— նկատեց Ռուբենը կոշտ ու սառ։

Կաղը զարմացավ.

— Ի՞նչ եմ անում որ...

— Դա ի՞նչ պար է։

— Երեխաների համար պարեցի — ի՞նչ եղավ, ուրախացան։

Ռուբենը սրտնեղեց.

— Լավ-լավ, սեղանը գցիր։

Կաղը վիրավորված նայեց նրան։

— Սեղանը կգցեմ, բայց դու ինչո՞ւ չես թողնում երեխաներին զբաղեցնեմ։

— Լավ, ասացինք, բավական է,— գոռաց Ռուբենը,— պարելուց առաջ կաղ ոտներիդ նայիր։

Կաղը շանթահար նայեց Ռուբենին և նրա մանկական պարզ աչքերի մեջ ցայտեցին արցունքները։ Նա լնգլնգալով գնաց մյուս սենյակը և ընկնելով անկողնի բարձերին՝ գլուխը թաղեց մեջը։

Երեխաները վախեցած նայեցին հորն ու փախան կնոջ մոտ, ծվարեցին վախեցած ձագերի պես։ Բնազդաբար բռնեցին նրա

փեշից՝ կարծես երկյուղ կրելով, որ նա կարող է հեռանալ իրենց տանից։

Ռուբենը նստեց մի պահ, ծխեց և հետո մտնելով մյուս սենյակը՝ կանգնեց մեջտեղը.

— Հետո՞, շա՞տ պիտի սպասեմ։

Կինը ձայն չհանեց.

— Թո՛ւ,— արեց Ռուբենը և շարժում գործեց դուրս գնալու տանից։

Հանկարծ հետ դարձավ։

— Ի՞նչ է, կարծում ես նորությո՞ւն ասացի, ինչի՞ ես վիրավորվում։

Կինը ձայն չհանեց։ Երեխաներն էլ նրան հետևելով լռեցին ու սկսեցին հանդիմանական հայացքով նայել կոպիտ հորը։

Ռուբենը դուրս գնաց։ Կինը վեր նայեց։ Երեխաները պինդ կպան Սոֆիա Պետրովնային և սարսափած նայեցին նրան՝ պատրաստ ճչալու։ Կինը հասկացավ նրանց, և այն շարժումը, որ պատրաստվել էր անել՝ սառեց նրա մեջ։ Նա հանդարտ վեր կացավ, երեխաներին կանչեց սեղանի մոտ, թեյ տվեց, և հրամայեց շուտ խմել և լվացվել։ Երեխաները սրբությամբ կատարեցին հրամանը։ Կինը դառել էր նրանց ամենաթանկ բանը, որ սարսափում էին կորցնելուց։

Կես ժամ անց նրանք պառկած էին անկողիններում։ Լուսիկը չէր քնած, հսկում էր, իսկ Պետիկը սկսեց թնկթնկալ։

— Դու ի՞նչ ես անում,— հարցրեց Սոֆիա Պետրովնան։

Երեխան հեկեկաց։ Լուսիկը վեր կացավ և մոտենալով նրա անկողնին՝ կամաց փսփսաց.

— Մի լար, թե չէ՝ մաման կգնա։— Երեխան զսպեց իրեն և սկսեց ճիգ գործել, որ զսպի իրեն, բայց չէր կարողանում։ Գլուխը թաքցրեց անկողնի տակ և սկսեց դառնագին ու անձայն հեկեկալ։

Լուսիկը երկար չէր քնում ու թաքուն հսկում էր։ Սոֆիա Պետրովնան նկատեց այդ և սառը կարգադրեց.

— Քնիր։

Վախեցած աղջիկը բարակ վիզը երկարացրեց դեպի նա և վախով ու պաղատանքով հարցրեց.

— Մամա, չե՞ք գնա։

— Ոչ,— եղավ պատասխանը։ Ձայնը հնչեց Սոֆիա Պետրովնայի հրամայական և հեղինակավոր շեշտով։ Լուսիկն հասկացավ և հանգստացավ։

Երեխաները քնեցին։

Դեպքը պատահեց հետևյալ օրն իսկ։

Ռուբենը գործի էր գնացել։ Սովորական մռայլ տրամադրությամբ շարում էր պատը՝ կիսաձայն կարգադրելով օգնականներին, որ քար ու շաղախ տան։ Հիշեց նախընթաց երեկոյի դեպքը և բարկացավ Սոֆիա Պետրովնայի վրա, որ չի հասկանում իրեն։ Չէ՞ որ նա դժբախտ է, զոհ է մի դուրս ընկած կնոջ, որը երեք երեխայի հոգսը գցելով իր ուլինքը՝ լքել գնացել է։ Վերջապես մի՞թե իր հոգսը հերիք չէ, որ ավելին ևս դնում են վրան։ Կշտամբեց մտքում, կինը հաշվի չի առնում այդ բանը։

— Էհ,— շշնջաց բարձր ու քարը սեղմեց պատի շաղախի վրա, սեղմեց դառնորեն, իբրև իր տաժանելի ճակատագրի վրա սեղմեր տանջված ձեռքերով։

— Վարպետ, լսո՞ւմ ես, քեզ են կանչում,— արթնացրեց նրան աշակերտը։

— Ո՞վ, ի՞նչ է,— վրա ընկավ Ռուբենը։

— Ներքևից են կանչում, այ էն պառավը։

Ռուբենը ցած նայեց։ Հարևան կինն էր։ Նրա դեմքը ժպտուն թվաց։ Ռուբենը վար իջավ։ Երբ մոտեցավ կնոջը, սա խնամքով գլխի շալը ուղղեց և մոտ գալով արագ՝ փսփսաց.

— Գնանք տուն, Սոֆին խեղդվել է...

Կարծես վաղուց էին ասել իրեն այդ բանը, այնքան խորը խոցեց նրան այդ լուրը։

Մինչ բանվորները կխմբվեին, հարցուփորձ կանեին՝ Ռուբենը վազեց տուն։

Բակի կենողները խորը նայեցին նրան և ճանապարհ տվին, որ ներս մտնի։ Սենյակում երեխաները լաց էին լինում բարձրաձայն.

— Ո՞ւր է, ի՞նչ է,— վրա ընկավ Ռուբենը։

— Հիվանդանոց են տարել... Ջորումն է պատահել,— ասաց հարևան կինիկը, որը մինչև այդ չէր խոսել։

Ռուբենը վազեց հիվանդանոց՝ երեխաների ճիչն ականջների մեջ։

Երբ մտավ դիարանը՝ սեղանի վրա հանդիսավոր պառկած էր ցավագար կինը։ Նա չէր փոխվել, մի փոքր միայն լցվել էր — շուտ էին հանել ջրից։ Վեհորեն հանգիստ էր նա և դեմքին մի քնքուշ կուսական ժպիտ ուներ, մանկական այն թարմությամբ, որ միշտ բնորոշ էր այդ բարի հանելուկային էակին։ Դա այն կոտրած ժպիտն էր, որով վերջին անգամ երեխաների շրջանում պարեց։ Որսած թռչունի պաղած աչքերը կիսափակ նայում էին ոչ ոքի և նայում անկշտամբ՝ ինչպես որ նայել գիտեր նա։

***

Խեղդվածին թաղեցին պարզ և լարված լռությամբ։ Դագաղի հետևից գնում էին Ռուբենը, հարևան կնիկը և Լուսիկը։ Հետևից շարժվում էին Ռուբենի ընկերները և խաղաղ հայացքներով պատահական մարդիկ, որոնք ինչ-որ անհասկանալի համակրանք են տածում դեպի մեռնողները։

Ահավոր երեկո եղավ այդ օրը։

Փոքրիկը չէր ուզում պառկել քնելու։ Պահանջում էր «մորը»։ Նրան բռնի հանվեցրին և դրին անկողին, բայց նա վեր էր թռչում տեղից և գոռում էր.

— Մաման գա, մաման գա...

Հարևան կնիկը, որ եկել էր օգնելու Ռուբենին՝ զուրգուրում էր և Լուսիկի օգնությամբ համոզում էր փոքրիկին քնել.

— Քնի, բալա ջան, կգա։

Բայց փոքրիկը վախեցած և բնազդով ինչ-որ մի չար բան զգալով՝ դողահար ու բարձր ճչում էր.

— Մաման գա, մաման գա...

Ռուբենը դուրս փախավ փողոց։ Քաղաքի աղմուկը սակայն չէր կարողանում խլացնել նրա հոգու մեջ սարսափելի երեխայի կշտամբող ձայնը. «մաման գա»։

Հարցաքննության ժամանակ Ռուբենն առաջին անգամ կյանքում զգաց մարդկային հայացքի ծանրությունը։ Հասարակական հարցաքննողի,— որը Ռուբենից խստորեն պահանջում էր դժբախտ կնոջ արդարությունը։ Ռուբենը խստովանեց լիովին, որ ինքն էր դժբախտության պատճառը։ Ծանր խոսքեր ասաց իր հասցեին։

Պատմեց ամբողջ դժբախտ դեպքը։ Մեջընդմեջ թելը կորցնում՝ շոշափում էր իր դժբախտ սիրո պատմությունը...

Հայացքը, հարցաքննողի խորաթափանց, կշտամբող հայացքը նայում էր նրա հոգու խորքը։

Ինչ ուժեղ էր եղել կաղ կինն այս հարցաքննողի հայացքում։ Ռուբենը քանի գնում՝ իր առջև տեսնում էր մի ահավոր անդունդ, որ առաջ կարծել էր մի հասարակ փոս։

— Ոչ, ընկեր, դուք այնքան եք տարվել ձեր անձնական սիրո խնդրով, որ չեք նկատել... Ձեզ եմ հարցնում, քի՞չ էր ձեզ համար այն կնոջ գործը, որ հասարակության համար պիտանի մարդիկ էր կրթում... Դուք հարվածային եք, պետք է հասկանայիք այս...

Երբ Ռուբենը վերադարձավ տուն՝ երեխաները լուռ նստած սպասում էին դատարկված սենյակում։ Անխոս ինքը ևս նստեց։ Եվ ըստ սովորության սկսեց սպասել։ Ո՞ւմ... Նա չէր գալու այլևս։ Երբեք։ Միայն սենյակում դեռ մնացել էր նրա խնամոտ ձեռների դրոշմը։ Դեռ անկյուններում իրեր կային, որ չէին աղարտել իրենց դիրքը։ Այն տեղերք էր, որ մնացել էր նա։ Ռուբենը նայեց շուրջը, նայեց բոլոր առարկաներին և նոր տեսավ, թե նրանք ինչ մանրակրկիտ ձևով էին դարսվել իրենց տեղերում։ Նոր սկսեց տեսնել այդ պատահական, իսկապես անծանոթ էակին և նոր սիրեց նրան։ Եվ սիրահարի խանդաղատանքով նա բաց արեց պահարանը, սկսեց խառնել ցավագարի դարսած սպիտակեղենը։ Ահա Լուսիկի շապիկը, ամենամանր տեղերն անգամ ջանադիր կարկատած։ Ահա Պետիկի թաշկինակը անկյունածալած, հատուկ ձևով հարթուկած։

Անսահման սեր կար այդ ամենի մեջ։ Ահա և նրա անձնական արկղիկը։ Մի քանի իրեր հասարակ, պարզ, աղքատիկ, բայց հիմա նվիրական։ Ռուբենի մոլոր մատների մեջ շրջանակվեց մի համեստ լուսանկար։ Դա նա ինքն էր՝ մի փոքր ավելի վաղ հանված։ Այստեղ նա իսկական աղջիկ էր՝ մանկադեմ՝ պայծառ ժպտով։ Մի փոքրիկ չորացած ծաղիկ սպիտակ թելով կապվել, փարվել էր այդ լուսանկարին։ Ի՞նչ նշան էր այդ և ի՞նչ ծաղիկ։ Անկարելի էր այդ գուշակել, այնքան հասարակ էր նա և անգույն։

Ռուբենը դողդոջուն շուրթերը հպեց լուսանկարին ու ծաղկին։ Լաց եղավ։

Հետո խորտակված վար իջեցրեց ձեռը՝ մատներում լուսանկարը սեղմած։

Մեծ գիշերը հոսել սկսեց։

Երեխաները քնած էին շորերով, բաց։ Ռուբենը մտածել սկսեց։ Նրա հոգու առջևով եկան անցան վարպետ Սերոբը, իր հարվածային ընկերները, քննիչը, հարևան կնիկը, իր երեխանները, հանդուցյալը, միլիոնավոր մարդիկ։

Մի զորեղ սեր, զորեղ ավելի քան ամեն ինչ աշխարհիս երեսին՝ կանչում էր նրան դեպի նոր կյանքը։

Գնալ, աշխատել նրանց երջանկության համար։

ԻՐԵՐ

Հրանտն ուրախ վերադարձավ ամառանոցից։

Աշնանամտի այն ուրախությունը, երբ «կյանքն սկսվում է»։ Հով սեպտեմբերը, կազդուրիչ զովը և աշխատալից հետաքրքիր ձմեռը, որ սպասում են մարդուն։

Ամառանոցում վատ չէր. մինչև իսկ շատ անգամ ուրախ էր։ Ամբողջ ամիս ու կես գեղեցիկ նվագի պես անցավ Դիլիջանի գողտրիկ անտառներում, ուր իր նման ուսանող կոմերիտ ընկերների հետ, ծառերի տակ, անտառի բացատներում վազվզում ու թռչկոտում էին խենթ նժույգների պես, կամ բորբոքված վիճում համալսարանի, քաղաքի կյանքի և... ամբողջ աշխարհի մասին։

Մի բան միայն ամառանոցում վատ էր։ Չէին թողնում ընթերցանությամբ պարապել, որ Հրանտի մասնավոր կրքերից մինն էր։ Բայց երբ ինքն էլ արանք էր գտնում առանձնանալու մի ծառի տակ՝ անտառն այնպես էր նրան օրորում, որ քնում էր գրքի վրա։

Վերջապես բնությամբ արբեց, հագեցավ և վերջը ձանձրույթ զգաց։ Քաղաքը քաշում էր։

Հրանտը ճամփին պատկերացնում էր գալիք աշունն ու ձմեռը։ Աշխատանքը համալսարանում, բջիջում, շեֆարկյալ գյուղում, հանրային գրադարանում և այս բոլորի հետ իր սիրած գրքերը՝ տանը... Հետո վերջապես այնպիսի բաներ, որ ինքն էլ չգիտեր թե ինչ, բայց որը միշտ հեռուներից ձեռով է անում, կանչում—ոսկեղենիկ ապագան մի երիտասարդի, որին նա քաշում է մտահոգ ծովի նման։

Հրանտին միշտ այնպես է թվացել, որ ինքը քիչ է աշխատում։ Միշտ թվացել է, որ աշխարհը լի է այնքան ձգտումներով, պարտականությամբ, կատարելագործությամբ, հրաշքներով, եռ ու զեռով, և ինքը ոչինչ, դեռ ոչինչ չի արել, ետ է մնացել։

Հենց որ քրոջ հետ կառքից իջան, մտան տուն՝ Հրանտն ասաց

— Դու, շո՛ւտ, շո՛ւտ, սենյակը մաքրի, սարքի, ես սկսում եմ աշխատանքներս։

— Սրբի ասիր ու պրծա՞ր,— մտահոգվեց քույրը,— աշխարքի գործ կա, տունը պիտի դուրս թափեմ։

Հետևյալ առավոտ սկսվեց սենյակների «դուրս թափելը»։

Հրանտը գնաց համալսարան, ակումբ, փողոց, տեսնվեց ընկերների հետ, շրջեց, եկավ տուն։

— Դեռ չե՞ս պրծել։

— Պրծե՞լ,— հեգնեց քույրը բարկությամբ,— փոշին աչք ու երես է ուտում։

Եվ գլուխը կոխելով տախտի տակ՝ շարունակեց դուրս ածել իրերը։ Հրանտը նստեց պատուհանի մոտ, վերցրեց «Նախնադարյան կուլտուրան» և սկսեց կարդալ։

Քույրը մոլեգին աշխատում էր և ինքն իրեն քրթմնջում։ Դա մի չոր ու ցամաք հասակավոր կին էր, բարի, մշտաշարժ, խստադեմ։ Բազուկները շոգեկառքի թևերի պես անդադար շարժման մեջ էին։ Ավլում էր, սրբում, վերցնում, դնում։ Նա իր ամբողջ կյանքը նվիրել էր Հրանտի կյանքի ծառայության։ Նրա շնորհիվ էր Հրանտը տան հոգսից ազատ՝ դրսի կյանքին նվիրվել։

Սենյակը սակայն այլանդակվել էր։ Այնքան իրեր կան դուրս թափած անկյուններից, տախտերի տակից, պատուհաններից, որ շարժվելու հնար չկա։

Հրանտի քույրը դեռ պեղում, դուրս էր ածում նոր իրեր ու ինքը մեջը թաղվում։

Եվ որտեղից էլ այսքան իրերը հավաքվել՝ մնում են Հրանտի տանը։ Ու ինչ անհաշիվ քանակ ու տեսակով, պետքական կամ ու ամանեղեն է մոռացվել, խորթ իրերի հետ լցվել միատեղ։

Բայց,— նայում է Հրանտը,— ի՞նչ արարողություն է սկսել քույրը. ինչպե՞ս է ապրում նա այդ իրերով։ Ինչ ջերմեռանդությամբ է սարքում իր փոքրիկ խաղաղ տունը։ Նա ուրիշ ոչինչ չի նկատում այս տուփից դուրս։ Անշարժը, անխախտը սա է, իսկ աշխարհը երկրաբջջական է, ուրիշինը անկարևոր բան։

Նայում է Հրանտը այդ իրերին, որ իրենց սովորական դիրքերից դուրս գալով, հետևները դուրս են բերել նաև շատ մոռացված փոքր։

Բզկտված հովանոց, կարկատած կոշիկներ, մեխեր, ժանգոտ բանալիներ...

Հնամենի, ծանր կամողի բաց զզրոցներից դուրս են թափվել մաշված գրքեր, իր մեռած քրոջ երեխի հագուստները, կոշիկները, լուսանկարներ են փռվել հատակին։ «Հայազգի» պրիստավ Մելիքովը, բեղերը մինչև ականջները սրած, թևը գցել է Հրանտի փեսի վզով։ Արբած ժամանակ են նկարվել։ Բազմաթիվ հին վաճառականների և այլ «զանազան տեսակ մարդկանց արտառոց լուսանկարներ, որոնց տերերը չկան այլևս։ Սևացած կաղնե հավանգը, անատամ պառավ բերնի պես ստվերը մեջը, կողքին ընկած է ձվաձև յուղոտ քարը — հնադարյան գործիքի նման։ Ինչպես այն փոշոտ երկանքը, որի վրա տատը կռացած պտտում էր ու կորկոտ անում։

— Հա՜մա մեր տանը խառն ի խուռն իրեր կան,— ժպտաց Հրանտը։

— Հապա ի՞նչ, տո՜ւն է։

Տո՜ւն... Քարայր է՝ որ գնում կորչում է անցյալի ուղղությամբ, որի հազար քունջ ու պուճախում թաքնված են իրեր, որոնց կարգը մեր օրերից բռնի գնա մինչև նախամարդը։

Եվ կարծես այդ իրերին ձեռ է տվել նախամարդն ու հետո ինքն անհետանալով՝ թողել խավարի մեջ։ Բրածո կենդանիներ են կարծես, որ անցյալի մթությունից առերես ելնելով՝ նայում են, անհեթեթ ծամածռում շրթունքներով, և նրանցից բուրում է մի խորին խոսող հնություն։

Քարայրների՜ հնությունը...

— Սրանք մի տանեմ արևին փռեմ, հոտը քաշվի,— ասում է Հրանտի քույրը։

— Այո, փռի՛ր,— խոսում է Հրանտը ցրված,— բայց ավելի լավ է՝ կորցրու։

— Ինչո՞ւ։

— Ինչի՞ են պետք։ Ի՞նչ պիտի անենք։

— Ինչ անենքս ի՞նչ էր... Ափսոս չէ՞, տուն է, նեղ ընկած տեղը պետք կգա։ Անպետք բան կա՞,— պնդում է քույրը՝ ջերմեռանդ սրբելով մի հին մոմակալ։

Ու ինքն իրեն խոսում։

— Ասում ես անպետք։ Լավ չէ՞ր, մայրիկիս սեղանը նորգել տվի, հին գրքերդ ու տետրակներդ մեջը դրինք։ Այ, էս հովանոցը շինել կտամ, էլի բան է։

— Դե՛ն գցի, պլաշչ ունեմ։ Հովանոցն ո՞վ է գործ ածում։

— Ի՜,— ասում է Հրանտի քույրը և կոտրված ժպտում՝ թաքցնելով վիրավորանքը,— սա Մարոյիս հիշատակն է։

Մեռած քրո՜ջ...

Հրանտը լեզուն կծում է։ Քույրը շատ էր սիրում հանգուցյալին, Հրանտն է՛լ իհարկե, և հաշվի առնելով քրոջ դգացմունքը՝ չի ուզում վիրավորել։ Բայց ի՞նչ բան է իրի հետ կապել ամեն ինչ։ Եվ ինչպե՞ս կպչուն բան է այդ իրը, ի՞նչ կպչուն է նաև իր քույրը։ Կուռքի պես պաշտում է իր հորը, մորը, բարեկամներին, ծանոթներին — նրանց իրերը։

Եվ շնորհիվ քրոջ կպչուն բնավորության, այդ բոլոր իրերը մնացել, տեղ են բռնել։ Շատերն արդեն տգեղ են, տխուր տեսք ունեն, տարտամություն են փչում մարդու հոգուն, ինչպես ահա այն տատական անճոռնի կամողը։

Այդ իրերը՝ շնորհիվ Հրանտի քրոջ ծիսական կենցաղի՝ իրենց հատուկ տեղերն ունեն, ու երբ նրանք կսարքվեն, կդրվեն իրենց մշտական, անխախտ, օրինական տեղերը, որ նա մի անգամ օրինել, հաստատել է, այն ժամանակ նրանք կսկսեն մտիկ տալ իրենց համառ աչքերով, ինչպես որ տարիներ մտիկ են տվել Հրանտին՝ դնելով իրենց կնիքը նրա հոգու վրա։ Կշարունակեն տիրել նրան, գամել նրան։

Եվ ի՞նչ... իրեր կան, որ Հրանտի քրոջ համար էլ ավելորդ, անպետք են։ Վերջապես Հրանտը ինքն էլ ունի իր ավելորդ իրերը։ Բայց նրանք մնացել են ու մնում են։ Ծուլություն, անփութությո՞ւն։

— Ինչքա՞ն ավելորդ են դրանք, և ի՞նչպես փչացնում են սենյակի օդը,— խոսեց Հրանտը։

«Ինչպես և մեր հոգու սենյակներում ավելորդ իրերը մնում փչացնում են հոգին»,— մտածեց Հրանտը և դառնորեն ժպտաց։

Զանձրույթ, սրտնեղություն եկավ վրան։ Անցյալի փոշին, մանր, աննկատելի փոշին, ներկա շատ ավելորդ փոշիների հետ խառն, համր նստել է նրա վրա՝ ինչպես հայելու վրա, և երբ նա մատի ծայրը քսում է վրան՝ փոշին գծեր է քաշում, գրեր է գրում։

Սրտնեղած ման է գալիս Հրանտը և տնտղում չորս կողմը։

Հանկարծ կանգ առավ։

Անկյունում դրած էր իր քահանա պապի գավազանը՝ պղնձե գլխին առաքյալների քանդակով։

— Սա ինչո՞ւ ես պահել,— բարկացած խոսեց նա։

— Ի՞նչը։

— Գավազան է, ի՞նչ է։ Ինչի՞ է պետք, որ պահել ես։

— Թող մնա՛, քեզ ի՞նչ, ինձ պետք է,— ասաց քույրը և մի կողմ քաշեց գավազանը։

— Ո՛չ, դե՛սը տուր,— հարձակվեց Հրանտը և խլեց գավազանը։

— Ի՞նչ սլիտի անես,— հարցրեց քույրը վախեցած։

— Դեն գցեմ։

— Վո՛ւյ, քոռանամ ես, պապիս հիշատա՛կը...

— Անիծած մեջը սա՛ ի՞նչ է, պահել ես,— գոռաց Հրանտը և գավազանը դնելով ծնկան վրա՝ կոտրեց, տարավ բակը նետեց։

— Ի՞նչ է անում. ի՞նչ է անում,— ճչաց քույրը և սարսափած վազեց հետևից գնաց բակից բերեց կոտրած գավազանը։

— Վա՛խ, տեսա՞ր ինչ արավ, տեսա՞ր ինչ վայրենություն արավ,— մղկտաց քույրը և սկսեց լաց լինել։

Հրանտն սկսեց արագ-արագ անցուդարձ անելով ծխել։

— Էդպես ես, միշտ կոպիտ, վայրենի, ի՞նչ էր ուզում քեզնից գավազանը, վաթսուն տարվա հիշատակը։

— Թքա՞ծ մեջը։

— Թուքը երեսի՛դ,— ճչաց քույրը զայրացած շեշտով։

— Վերջապես՝ ես չեմ կարող,— գոռաց Հրանտը,— ընկերներս որ տեսնեն՝ ի՞նչ կասեն. կհավատա՞ն, որ ե՛ս չեմ պահողը։

Այս խոսքերի հետ Հրանտը մոտեցավ մյուս պատուհանին, ուր արկղներ էին դրած, և հանկարծ նրանց մեջ նկատեց մի նկար, որ նրան ավելի զայրացրեց։

«Փառք Հայաստանի» նկարը, զարդարված հայ հին թագավորների պատկերներով։

— Սա՞ ինչ բան է,— գոռաց Հրանտը և դուրս քաշելով նկարը՝ թափով նետեց դեպի շեմքը։

— Գազա՞ն ես կտրել, ի՞նչ ես կատղել,— հարձակվելով նկարների վրա՝ ճչաց քույրը։

— Գազա՞ն եմ՝ հեռացիր։

— Կհեռանա՛մ։

— Բաժանվե՛նք։

— Բաժանվե՛նք, հիմիկվանից շուտը չկա՛, ո՞ւմ ես վախեցնում,— գոռաց քույրն ու վայր դրեց նկարը։

— Թո՛ւ, էսպես կյանքի մեջն էլ անիծած,— ասաց Հրանտն ու դվխարկը խլելով դուրս թռավ։

«Թող կորչի՝ ուր ուզում է, կամ ե՛ս կհեռանամ»,— խոսեց ինքն իրեն Հրանտն ու արագ գնաց փողոցով։

«Ի՞նչ քաղքենիություն, վերջապես ի՞նչ դառան գլխիս այդ նկարները»։

Հեռանալով մինչև փողոցի ծայրը, կանգ առավ։ Նայեց տան կողմը, որ տեսնի՝ արդյոք քույրը դուրս չի՞ գալիս։

Քույրը չէր երևում։

«Կոպիտ էր... բայց ի՞նչ անեմ»,— մտածեց Հրանտը։

Նայեց դարձյալ տանը, որ այժմ ավելի կծկված, փոքրացած էր երևում, ծիծաղելի մի տուփ, որ ծփում է ահռելի օվկիանոսում. որ այս աշխարհն է։ Ահա այնտեղ, այդ փոքրիկ տուփի մեջ այնքան իրեր կային, իրենց պատմությամբ և համառ «անխախտությամբ»։

— Ոչինչ, կհանգստանա,— մտածեց քրոջ մասին Հրանտը և անցավ մյուս փողոցը։

«Բայց ինչպե՞ս անեմ ես էլ... ես էլ ի՞մ սկզբունքներն ունեմ»,— շարունակեց նա։

Եվ միաժամանակ զգում էր, որ ինքն էլ իր հերթին տանը մի «իր» ունի, որից չի բաժանվում, որի հետ դեռ երկար պիտի ապրի նա, որքան էլ նա օտար է, նախապաշարված։

Իր հնապաշտ քույրը, որը սիրում է իրեն, խնամում և որը մնացել է իրեն՝ «հնուց»։

— Այո, պինդ են կպչում իրերը,— մտածեց Հրանտը...

ԿՈՆԴՈՒԿՏՈՐ

Շոգեկառքը կոկորդիլոսի պես ոտներն արագ ծուլ ու բաց անելով վազում, քաշ էր տալիս իր մարմինն ու պոչը։ Վագոնները դղրդում էին և Շիրակի բամին փոփոխվում էր պատուհանների վարագույրները։ Եվ դաշտերը ետ հոսելով՝ հեռվում պտույտ գալով, լեռներն առաջ վազելով ստեղծել էին մի հսկայական պար, որի տակտով հեռագրասյուների ցուցամատերը մեկ մեկու հետևից խրվում էին վագոնների աչքը։

Այնպես ուրախ, գարնանային առավոտ էր, որ երգն աննկատելի դուրս էր թռնում մարդու բերանից։

Բայց վագոնների մեջ մի փոքր այդպես չէր։ Գնացքը Լենինականից նոր էր հեռացել և այդ վիճակում Երևան մեկնող ուղևորները դեռ վիճում էին տեղերի գրավման համար։ Մի լենինականցի կնիկ ահագին բողչան դրել նստարանի վրա՝ չէր ուզում տեղ դիջել նախկին ուղևորին, որ մի բոպեով գնացել էր բուֆետը, և ոչ էլ բացատրում էր, թե ի՞նչ իրավունքով էր գրավում ամբողջ նստարանը։ Դիմացի նստարանին էլ մի գյուղացի մեկնվել քնել՝ չէր ուզում ոտները քաշել տեղ տալու մի ուրիշ գյուղացու, որն իր տոպրակի ապրանքով բոթում էր նրա ոտներին։

Այս վեճը խլանում էր մյուս կուպեներում տիրող աղմուկից։ Այնտեղ էլ ուրիշ մարդիկ էին վիճում տեղերի կամ այլ անհարմարության համար։

Վագոնը դեռ հանգիստ չէր։

Ներս մտավ վագոնի հաղթանդամ կոնդուկտորը՝ շեկ թուխունե թավ բեղերը շրթունքների վրա կախ։

— Ընկերնե՛ր, տոմսնե՛րդ, բիլե՛թ...— ասաց նա փափուկ, բարի տենորով։

Ուղևորները միահամուռ ոռնոցով ընկան նրա վրա։

— Ա՜խ ինչ կարգ է, ինչո՞ւ են մեր տեղերը բռնում, տե՛ղ տվեք... ինչո՞ւ չեք հոգում...

Կոնդուկտորը ձեռք հեղինակավոր ծանրությամբ բարձրացրեց բոլորի բաց բերանների դեմ և շատ հանդիսավոր ընդհատեց.

— Հրլը յավա՛շ, կեցե՛ք, մե՛կ-մե՛կ, բան հասկանանք։ Տեսնենք ինչ է էղե։

Լենինականցի կնկան.

— Քո՛ւրս, ի՞նչ գուզես, վեշչերդ դիր վերի պոլկեն, էստեղ պալակաթ չի էղնի։

Հետո գյուղացուն դառնալով.

— Ընկե՛ր ջան, օրը ճաշ էղավ. պռավիլա չէ օր ոտներդ էրկնցնես պոլկի վրա. ե՛լ, ե՛լ, պասաճիրին տե՛ղ տու։

Գյուղացին կիսաքուն ճմլկոտաց.

— Օ՜օ՜ֆ, հեչ գիշերս չեմ քնե, բանե խապա՞ր եք։

Առաջ գնաց դեպի մյուս կուպեները, ուր աղմուկը սաստկանում էր։

— Հա՞, ի՞նչ է, ի՞նչ զալապալըղ է։

Մի գյուղացի կնիկ, չէր իմացվում ի՞նքն էր առաջ տեղը բռնել, թե մյուսները եկել խցկվել էին այդ կուպեում, աղմկում էր։ Տեղը նեղ էր, և ոչ ոք չէր ուզում անցնել մյուս կուպեն։ Գոռգոռում էին իրար վրա։

Կոնդուկտորն սկսեց կարգ հաստատել։

— Գնացեք մեկել կուպեն, տեղ կա։

Չէին գնում։

— Դո՛ւ գնա,— դարձավ գյուղացի կնկան։

— Յաա՜, ընչի՞ ընձեն էտև գան՝ տե՞ղ զավթեն։

Սկսեցին զուվռալ։ Կոնդուկտորը սրտնեղեց.

— Լա՛վ, լա՛վ, ջաղչի հեքիաթը մի՛ շինեք։ Փոխեք տեղերդ։

Եվ գյուղացի կնկան, որ ամենից բարձր էր ճղավում.

— Տը սո՛ւս, լա՛վ, էլ էրկան ալելույա պետք չէ։

Հետո ձանձրացավ.

— Դո՛ւք գիտեք. գուզեք գնացեք, գուզեք սխմվեք։ Հրմը կռիվ մի՛ էնեք, կռիվ չի էղնի։

Վերջն էլ.

— Ատա՜ամ (մա՛րդ), հոգի հանեցիք։ Գլոխս դինգ էղավ։

Ու հեռացավ իր կուպեն։

— Այ օղուլնե՛ր, լեռն աշխարքի մեջ ի՞նչ նեղ կապրիք։

Նստեց։ Չնայած այդ վեճին՝ չէր կարողանում լավ նեղանալ, անախառժել։

— Է՛,— մտածեց նա՝ դառնալով իր տրամադրությանը և ախորժանքով մտիկ տալով թեյամանին, որի եռ ջուրը նոր էր վերցրել կայարանից։ Գույնը տվել էր։ Գոհաժպիտ աչքերով շոյեց իր պղտոր բաժակը, թեյ ածեց ափսեն — ամեն գործողություն զատ-զատ ապրելով իբրև կյանքի մեծ քաղցրություն — հետո շաքարի պստիկ բեկորը կենսահատիկի պես նետելով բերանը՝ բեղերի փունջը թրջեց ափսեի թեյի մեջ և փոշտոցով ներս քաշեց անձկալի հեղուկը։

Անբացատրելի հոգեբանություն։

Ապա գրպանից հանեց պատկառելի ծալովի դանակը, բացեց, կոշտ ձեռը մեկնեց կարմիր բոքոնին ու դարձյալ զգալով ամեն գործողություն և դրանց մեջ մեծ քաղցրություն՝ սիրով մի ճեղ կտրեց բոքոնից և չոր եզրը թրջելով թեյի մեջ, տարով բերանը. կերավ. թեյն էլ վրան խմեց ու հառաչեց.

— Օխա՛յ, բաղնիքմ արժե՞ր։

Թեյը վերջացրեց և ուզեց մի բոպե նստած մնալ, բայց նրան խթեց անհանգիստ մի բան՝ առողջությունը, որ եռում էր մեջը, գինու պես և տրամադրությունը թրթռացնում։

Ու ինչպես ամեն առողջ մարդու, այնպես էլ նրա մեջ ամեն բան շնչին գործողություն, մի անցք, առարկա, թեթև շարժում՝ հաճույք էր ինքնին։ Եվ նկատելի։

Արդեն սոսկ ապրե՛լը նրա համար ախորժանք էր։ Արյունը առողջության հետ հոսեցնում էր նրա երակներում այդ զգացումը։

Գործերն էլ լավ էին երևի։ Բայց ի՞նչ կարող էին լինել մի կոնդուկտորի գործերը... Թիֆլիսից՝ Ջուլֆա, Ջուլֆայից Թիֆլիս։ Բայց նրա մեջ այնքան անսպառ էր կյանքի ախորժակը, գործ անելու հաճույքը, որ վագոնին հսկելը, տոմսերին նայելը, կայարաններում իջնելը, վագոնում մոմեր վառելը, այս ամենի մեջ մեծ խորհուրդներ կային նրա համար։

Նա գյուղացի էր։ Երբ աղքատ, հողազուրկ դառավ՝ հողը վռնդեց նրան։ Ընկավ երկաթուղին, և ահա քսան տարի էր կոնդուկտորի պաշտոն կատարելով՝ ակամա էր արհամարհել հողը, սիրել երկաթը։ Նա իր սերը տվեց երկաթուղային գործին՝ գնացքին, կայարաններին, դեպոյի բանվորներին, ծառայողներին։ Ու մինչ

գյուղում, հողի վրա մենակ էր, զուրկ, այստեղ երկաթի վրա ապահով էր՝ զգալով իրեն մի մեծ ընտանիքի անդամ, ամբողջ միության երկաթուղում և հետո, ինչպես լսում էր ժողովներում՝ գործարաններն ու ձեռնարկները, բոլորն իր ընտանիքինն էր։ Դա նրան ուժ էր ներշնչում։ Դա իր տունն է, իր տնեցիք։ Առաջվա մի հատիկ շուքի տեղ հիմա բանում է մի հսկայական գործիք՝ գնացքը, միշտ սարքին, կարգին, հարյուր հազարավոր ընկերների օգնությամբ, որ այդ մեծ գործիքների վրա աշխատում են, պայքարում, իրար պահում, և ամենքն ապրում են։

Սովորաբար վագոնում նստում են մշտահոգ, տխուր, քիչերը կախ ուղևորներ, հաճախ նրանց մեջ նէպմաններ, որ ողջ ճամփին միայն մտածում են, թե ինչպես մի մեծ գումար չանթեն այսինչ ձեռնարկությունից կամ մի մաղձոտ ծառայող, անտարբեր տեխնիկ, մի պեսիմիստ ինժեներ, թերևս հոգնած, ուղղակի կյանքից դժգոհ մարդիկ սրտնեղում են երկար ճամփից։ Եվ բոլոր այդ մարդիկ ախորժակները կորցրած, ծխում են, ծխում, շտապելով տեղ հասնել, սարքել մի դժվարին կոմբինացիա ավելի շահելու համար, մի կերպ դուրս պրծնել անփույթ գործի, վնասարարության համար իրենց հետապնդող պատասխանատվությունից։ Մինչ այդ մարդիկ, որոնք չեն ուրախանում, ձգտելով մի կերպ քշել կյանքի մնացորդը դեպի ոչնչություն ու ներվոտ, մաղձոտ նայում են ժամացույցին և հորանջում։ Կոնդուկտորը չգիտե, թե ուր պարփակի իր քառասուն ռուբլիանոց կյանքի ուրախությունը։

Գնացքը կանգնեց հետևյալ կայարանում, կոնդուկտորը շտապեց իջնել վագոնից։ Կայարանը դուրս էր քաշում։ Բայց վագոնի դռանը կանգնելու պարտականությունը մեխեց նրան տեղում։ Նա ժպտաց՝ նայելով փնչացող մի շոգեմեքենայի կողմը։ Այնտեղ մի շչակ էր գոռգոռում։ Նա քրտնամխել էր։

— Մեխակ,— ձայն տվեց նրան կոնդուկտորը ուրախ ձայնով։ Մեքենավարի օգնականը վեր նայեց ու բարկացած շպրտեց.

— Հը, ի՞նչ կա։

— Ի՞նչ ես կրակ կտրե, էտ ո՞ւր, իմանանը։

— Թիֆլիս,— պատասխանեց Մեխակն այնքան ցած, որ չէր լսվում, բայց կոնդուկտորը հասկացավ։

— Գնա՛, գնա՛. Սերոբը Սանահին քեզի կսպասե։

Կայարանի հերթապահը, որ գնացքին հանդիպելիս հազիվ

կոճակները կոճկել և շտապ դուրս էր թռել՝ քնատ նայում էր գնացքին։

— Հը՞, Բարսեղ,— մոտեցավ նրան կոնդուկտորը,— ի՞նչ ես ամքե, դոշդ դուրս քցե, ա՛յ օղուլ։

Հերթապահը քնատ-քնատ նայեց նրան և հորանջեց։

Կոնդուկտորի հետևից մեկը կոպիտ բզեց։

— Դո՞։ ինչ էիր առավոտ կանուխ ձենդ ցկե օրթըլաղ։

Կոնդուկտորը արագ ետ նայեց։

Սյաքավարն էր։

— Գլուխդ թաղեմ, Մուգո՛ւշ. գլուխդ, գիշերս մրսե՞լ ես։ Աբի, արի, չայմ խմցնեմ՝ ոսկոռներդ բացվին։

— Չայը թարկ եմ էրե, արաղ կխմեմ։

— Շատ լավ կենես։ Տես, Սեթոյի օյինը չխաղաս։

— Ի՞նչ է էրե։

— Խմել քներ էր, սեմաֆորը վեր էր վարե՝ սաստավը դուրս եկավ։

— Չէ հա՞։

— Հրպը՞։ Իրեն էլ դուրս էրին։ Տնաքանդություն չէ՞. դուշմանը չի էնե։

Ու կոնդուկտորը ճմլկոտում է ուրախ.

— Օ՞օֆ. գիշերս հեչ չեմ քնե։— Այնպես է ասում այս խոսքերը. ինչպես մի ուրիշը կասեր. «գիշերս շատ լավ քնել եմ»։

Աչքերն ուռել՝ անքնությունից ջերմորեն պսպղում են, բայց դա կոնդուկտորի տարերքն է։ Կոնդուկտորը չգիտե երբ է քնում, երբ գարթնում։ Երկաթե առողջությունը, որ բերել է գյուղից՝ ոչ մի կերպ չի մաշվում։

Գնացքը նորից դուրս եկավ կայարանից և սկսեց կոկորդիլոսի պես սողալ դաշտի միջով։

Անիվները զնգում են վագոնի տակ, զնգում է ինչ-որ մի շղթա, արևը ջերմացնում է լեռնային օդի սառը հեղուկը՝ առողջության ըմպելիքը։

Կոնդուկտորը մի անգամ անցուդարձ արավ իր վագոնում, ստուգեց տոմսերը, խոսեց սրա-նրա հետ և դարձյալ գնաց իր նեղ կուպեն. որ նրա համար լայն էր, ինչպես աշխարհը։

Ու մինչ վագոնում քրթմնջում էին կյանքից տրտնջող ուղևորները՝ կոնդուկտորի կուպեից դուրս էր թռչում նրա առողջության անզուսպ պոռթկումը՝ ուրախ երգը։

ՆԱՐԳԻԶԸ

Նա ընտրվեց գյուղխորհրդի անդամ. գնաց մինչև խորհուրդների Համահայաստանյան համագումար։

Նա՝ Նարգիզը։

Երեսունի մոտ մաշված մի կին էր նա՝ մտրակի ճկուն մարմնով, թախծային ժպտի ցոլքերը խոշոր սև աչքերում։

Համագումարի նախօրյակին նա ճամփա ընկավ Երևան իրենց հարևան Սոսոյի սայլով, որ մի քանի գյուղացիների հետ գնում էր քաղաք։

Սոսոն հաստ շրթունքներով շվացրեց մի եղանակ, աչքերը ճամփին գցեց, հետո գլուխն օրորեց և ասաց ինքնիրեն.

— Կնանիք զոռում են, հա՞...

Նարգիզը բատրակի կին էր։ Երբ նրան պատգամավոր էին ընտրում՝ ամուսինը ամոթխած ժպտով ետ նայեց իր ընկերներին.

— Այ տղա, ձե՛ռ քաշեք։ Նարգիզն ի՞նչ կարա անի։

— Նարգիզը սարը շուռ կտա։ Էդ քու բանը չի,— ձայն տվին բատրակներն ու ծափահարեցին։

— Դուք եք իմանում,— ձեռը թափ տվեց ամուսինը,— խելքս չի կտրում...

— Ընկեր Նարգի՞զ, ընկեր Նարգի՞զ...

— Լա՞վ, լա՞վ, քվեարկում եմ։ Ովքեր համաձայն են...

Բոլորի ձեռքերը քամու պես փչեցին դեպի վեր։

Ամուսինն էլ ձեռը բարձրացրեց։

Եվ ահա Նարգիզը Երևանումն է։ Տեղավորվել է նոր հյուրանոցում և դուրսը զբոսնում է։

Աբովյան փողոցով մարդկային բազմություն է հոսում։ Փնջվում են, քանդվում, խումբ-խումբ, մենակ, անցնում անտարբեր, անուշադիր, շատերը քթերը կախ։

Այդ բազմության մեջ աննկատ անցնում է Նարգիզը ածուխի

ժպիտը աչքերի մեջ։ արևոտ դեմքը շրջելով շենքից շենք։ Մեկ-մեկ դիտում է խանութները, կրպակները, դուքանակները, ֆանգիում է վիտրինների առջև։ Ոչ ոք այնքան բան չի նկատում, որքան Նարգիզը։ Ոչ ոք չգիտե ինչ մեծ հաճույք է այրվում նրա սրտի մեջ չնչին առարկաներն անգամ դիտելիս։ Ո՛րքան վճիտ են այն նիկելի թեյամանները, սառցե ծաղիկների նման ապակեղենը, կտորեղենների գունագեղ ջրվեժները վիտրիններում՝ վերից վար։ Բոլորը փայլուն, շքեղ, ժպտուն։ Ո՞վ է ասում, թե դրանք հասարակ իրեր են։ Դրանց բոլորի մեջ ժպիտ կա, կանչ՝ դեպի նոր կյանքը, դեպի ապագան։

Նարգիզն ապրում է, ապրում այդ բոլորը մեկ-մեկ, շոշափող զգացումով, ֆիզիկական ախորժանքով։ Եվ այնքան խորն է այդ զգացումը, այդ իրերի կենդանի տպավորությունը, որ նա խանդաղատվում է։

Ախ Նարգիզը նոր է կյանք դուրս եկել։ Նա նոր է սովորել գրել-կարդալ և արագ մտավ կյանքի շրջապտույտը, և ահա ագահությամբ ծծում է կյանքի, իրերի հաճույքը։

Վերադարձավ հյուրանոց։

Շենքի կամարների ռեզոնանսը դիպավ նրա ականջին։ Այդ ձայնի մեջ կա մի նորալեզու բառ, որ Նարգիզի հետ խոսում է նոր կենցաղի հրաշալիքներից։ Վեր գնացող սանդուղքները տանում են ոչ թե մաքուր սենյակներ, այլ կավիճային կամարների մի ճերմակ աշխարհ։ Այնտեղ վերևը պատգամավոր կանանց սենյակ էին հատկացրել։ Նարգիզը օրվա ուրախություններով արբած ներս մտավ։

Նրա դիմացն ելավ հեռավոր գավառներից մեկի պատգամավորուհի Սավգյուլը, մի ճակատով, զալում կնիկ, գյուղխորհրդի նախագահ։

— Հը՛, ո՞ւր էիր, աղջի՛, ի՞նչ ես շատ թրև գալի։

— Կնկա էի ման գալի, որ մարդիս պսակեմ։

Քրդուհիները փոթկացին։ Իսկ թրքուհիները թարգմանել տալով նրա ասածը՝ կես լուրջ կես կատակ ասացին.

— Գտի, գտի, մի-մի հատ էլ մեզ համար։

Երևկոյան բոլորը գնացին համագումար։

Մտնելով թատրոնի շենքից ներս՝ Նարգիզը գնաց շրջեց ցուցահանդեսը, ուր դրած էր երկրի բոլոր արդյունաբերության արգասիքը. կաշիներ՝ գույնզգույն, փայլուն. ծխախոտ, տեքստիլի նախշուն կտորեղենը, մարմար, սապոն, արթիկուտ, երկաթեղեն, բամբակ...

Այսպես խռնված բազմության արանքով սահեց ներս։ Պատգամավորները ծեփ էին տվել սրահը, որ գոռում էր նրանց մոլտոցից։ Նարգիզը ներս մտավ ու նստեց։

Բեմը լցվեց։ Համագումարը բացվեց ինտերնացիոնալի թընդյունով, որ արձակեց դարմիր բանակային օրկեստրը պատշգամբից։ Հետո լսվեց նորընտիր նախագահության անունները և մինչ Նարգիզը ուշքի կգար՝ ինչ-որ ծափերի մի մրրիկ թոցրեց նրան բեմ։ Ծափերի կարկուտի մեջ նստեց կարմիր սեղանի հետև և իր շուրջը տեսավ բանվոր-գյուղացի տղամարդիկ, թուրք ու եզիդի կանայք։

Բեմը շառագունել էր արյունոտ արշալույսի պես. այնտեղ հրդեհվում էին դրոշները, վառ վարագույրներն ու սեղանը կարմիր ծածկոցով։

Պատշգամբից շողշողացին շեփորների պղնձափայլ կրակները, հետո սրահում էլեկտրական կարմիր լույսերի մեջ պայծառ օրվա պես հոսեցին կինոյի լուսարձակները։

Ներս մտավ Անդրժողկոմխորհի նախագահը և սրահում պայթեց որոտալի ծափահարությունը։ Բանակայինները շեփորեցին ողջույնը, որ ծափերի մրրիկի մեջ ճայթում էին.

Տրա՛—տա՛, տրա՛—տա՛...

Տրա՛—տա՛, տրա՛—տա՛...

Ու բեմի, սրահի, դրոշների այս կարմիր բոցերի մեջ Անդրժողկոմխորհի նախագահը խոսում է համաշխարհային հրդեհի մասին։

Այս ամենը տեսնում, լսում է Նարգիզը և ժպտում ինչպես համեստ ծաղիկ, որ դուրս է եկել արևերես։ Կարմիր թաշկինակը գլխին։

Գիտե՞ նա, թե ինչ հրդեհի մեջ է այժմ...

Ժպտում է Նարգիզը, իսկ նրա շուրջը կարմիր վարագույրների հրդեհի մեջ դրոշների բոցերը ժպտում են մի ուրիշ դաժանատեսիլ ժպիտով։ Կայծակն է ցոլում նրանց մեջ, գալարվում մեծ փոթորիկը, որ պայթելու է ամբողջ աշխարհի գլխին։

ԽԱՎԱՐԻ ԱՆԴՈՒՆԴԸ

Մոայլ կամարները կախված են գմբեթաձև առաստաղից։ Ծծմբային մշուշը գալարվում է այդ գմբեթի տակ, և նրա դաժան որոգայթի ճեղքերից երևում են սրահի մութ պատերը։ Դժոխքի ձայներ են գալիս պատի մյուս կողմից։ Այդ շենքի մյուս աչքն է, դեպի որը մի նեղ անցք է բացված, որը տանում է դեպի երկրի անդունդը։ Ձայները խուլ թնդում են, կերկերում և ահով հանգչում։ Անկյունները կուլ են գնացել խավարի մեջ։ Հատակին պղտոր ջրեր են պտտվում, որոնց երեսին պայթում են մահահոտ պղպջակներ։ Առաստաղի նեղ ծակերից, որ պղտոր աչքերի նման բացված են դեպի երկինք՝ հազիվ թափանցում է օրը, ու չգիտես ցերեկ է, թե գիշեր։ Չգում ես, որ ընկել ես չարագուշակ մի ստորերկրյա աշխարհ, մի գուբ որի խավարի մեջ ատամները կրճտում են ինչ-որ սարսափելի էակներ և ահա ուր որ է, կհարձակվեն վրադ ու քեզ կքաշեն ոճիրներով խեղդված մի հոր...

Ո՞ւր չքացավ օրվա լույսը, որի մեջ աղատ լողում էր քո հոգին, ինչպե՞ս ընկար այդ գեհենը, մահտարաժամի անդունդը...

Շունչդ կարկամում է, մտքերդ սառչում ու հեղձամահից սրտնեղած ուզում ես գոռալ և զարհուրած դուրս փախչել այդ գեհենական անդունդից։

Բայց ո՞ւր պիտի փախչես։ Դու կաշկանդված ես։ Դու պիտի անցնես այդ խավարակուռ աշխարհի բոլոր անդունդները, պիտի տեսնես մահվան յոթը գույն գոլորշիները, մարմինդ պետք է խաշվի երեք ջերմությամբ հալվածքների մեջ։

Բայց ահա մշուշը ճեղքվում է և դեպի քեզ է գալիս մի դաժանատեսիլ էակ։ Նա մերկ է, միայն դեղնավուն լաթ է ծածկում նրա առաջը։ Նա ձեռին ունի մի դույլ, որի մեջ դրած է մի կոպիտ ձեռնոց և մի այլ դեղնավուն, մահագույն լաթ։

Դա Քարոնն է այս շենքի։ Նա քեզ պիտի տանի դեպի ստորերկրյա զարհուրելի ոլորանները և անցկացնի խավար աշխարհը։

Բայց նախքան այդ՝ դու պետք է քավես քո անցյալը։ Դու պետք է ընդունես յոթը գույն շոգիները և երեք ջերմության հեղուկը։

Քարոնը քեզ նշան է անում պառկելու քարե տախտին։ Դու լռելյայն հպատակվում ես, ու ահա սկսվում է դժոխային ծեսը։ Նա իր պողպատ ձեռնոցով շփում է քո մարմինը և ջարդում անդամները։

Դու դեռ չես մեռել։ Ոչ թե միայն չես մեռել, այլ մինչև անդամ կենդանի ես, թերևս մի փոքր էլ թեթևացած։ Դու ազատվել ես անցյալիդ բեռից։ Այդ մարդը քեզ պարզապես լողացնում է, և դու ամենահասարակ մի շենքի մեջ ես՝ բաղնիքում։

Դու լողանում ես, աշխուժանում և ախորժանքով լցվում։

Բայց ի՞նչ մոայլ շենք է այդ հին բաղնիք ասածը։ Վերևում ասածներս չեմ կարծում թե շատ բռնաղբոսիկ լինեն։ Մարդ մի տեսակ թուլանում, մոայլվում է բաղնիք մտնելիս։ Նրան պաշարում է ինչ-որ մի միջնադար։ Կարծես դարերը ետ են գնում և դու տեսնում ես տասներորդ դարը, կամ ավելի հին մի ժամանակաշրջան։ Կարծես դուրսը վայրենի ցեղեր են ճակատամարտում իրար դեմ և ուր է ուր չէ, ներս պիտի խուժեն դարավոր մարտիկներ և նիզակներն ուղղեն մերկ կրծքիդ։ Կարծես կիսամութ խցիկներում դարի սև անցքերն են ժամանակագրում տխրաշուք վանականներ։ Եվ դաշտերից անցնում են դաժան ֆեոդալները՝ հետևից քարշ տալով գերի վարած ճորտերին։ Իսկ հեռուն ձորերի վրա սողում է հրդեհված գյուղերի ծուխը։

Իսկ մանուկ ժամանակ ամեն բոպե կսպասեիր, որ բաղնիքի խորքից, պատի մյուս մասից ահա ներս կնայի կապույտ դեմը, կամ ջրերի միջից դուրս կգա փերին, քեզ կտանի կփաթաթի իր կրակե մազերի մեջ ու կընկղմի ջրերի անդունդի մեջ։

Այսպիսի մի բաղնիք իր խոնավ պատերի սևությամբ մոայլվում էր Երևանի Նալբանդյան փողոցում։ Գնալով այնտեղ՝ մտածում էի իմ մանկական և տղայական օրերի բաղնիքների ու այլ մոայլ շենքերի մասին։ Իհարկե, անցել են այդ երևակայական աշխարհի սարսափները, բայց մի մոայլ վիշտ կար այդ բաղնիքի մթության ու հնության մեջ։

Մի օր անցնում էի այդ բաղնիքի մոտով։

Ոչինչ չէր մնացել նրա տեղը։ Մաքրած էր ոչ միայն բաղնիքը, այլև շրջակա տները։ Մի լայն հրապարակ էր բացված այդ հին շենքերի տեղը, սրտաբաց, ազատ, արևային։ Բաղնիքի տեղը ցածրիկ սեղաններ էին դրած, որի շուրջը բոլորվել էին հոկտեմբերիկների երամները և ճովողում էին արևի տակ։ Փչում էր գարունը և իր շնչի հետ սփռում ծառերի ծաղիկները հոկտեմբերիկների գլխին, նրանց սեղանների, պատկերների, խաղալիքների վրա։

Չէի կարող հավատալ, թե դա այն մռայլ շենքի տեղն է։

Ինչպե՞ս արևի շողքը կյանքը փոխում, զվարթացնում է՝ ամեն բան։

Որքան դաժա՞ն ու մռա՞յլ բան կար այսքան փոքրիկ մի տեղում։

Տպավորություն։ Բայց տեսեք ի՞նչ բան էր այն։ Ի՞նչպես էր վառում երևակայությունը, իրական մարմին տալիս սին պատկերացումին։ Դրանք մռայլ մտքեր էին, ուրվականներ, որոնք բոլորովին չկան իրականության մեջ։ Եվ դարերի ընթացքում որքան այդպիսի պատկերների աշխարհը ծանր քարերի պես նստել էր մեր հոգու վրա, ճնշել, ստրկացրել հոգին։

Ո՞ւր է նա, ցնդել է անհետ, նա այժմ մի սին հիշողություն է արևի թրթռուն լույսի մեջ, մանուկների փարթամ փնջերի տակին։

ՍԱԲԵԹ

Ե՛վ ամբողջ հարցաքննության ժամանակ, և՛ կոլտնտեսության նախագահ Սեթոյի հարձակողական մեղադրականի ժամանակ, երբ սա ամեն հնար մտածում էր Սաբեթի ամուսնու գողության հանցանքը ծանր ներկայացնել, և վերջապես այն ժամանակ, երբ ՄՏ կայանի վարիչ Մարուքեն լրացուցիչ մեղադրականով ձայնակցում էր Սեթոյին՝ շրջգործկոմի նախագահ Հայկը նայում էր սենյակի մռայլ անկյունում կիսամթան մեջ նստած Սաբեթին։

Սա գրկին մի ծծկեր երեխա ուներ, որը ագահ ու արագ ծծում էր նրա թուխ ստինքը։ Իսկ կողքին նստացրել էր երկու սև գնդլիկ տղաներին, որ ախորժակով կրծում էին գազարը և հանգիստ նայում Հայկին՝ միանգամայն անտարբեր՝ թե ինչ է կատարվում իրենց շուրջը։

Սաբեթը կոլտնտեսուհի էր և կոլտնտեսությունից դուրս էր արված, որովհետև նրա ամուսինը գողություն էր արել և այժմ բանտարկված էր։

Սաբեթը գանգատ էր տվել շրջգործկոմ, որ իրեն հեռացրել են։

Խնդիրը պարզ էր։

Սեթոն ու Մարուքեն էին, որ կրկին ու կրկին լրացումներով նորանոր պատճառաբանություններով ծանրացնում էին գործը։

Հայկն սպասում էր Մարուքեի բացատրությունների վախճանին։ Նա մի քիչ մտորուն տրամադրության մեջ էր։ Այնպես որ՝ թեև նա երկար ու մտախոհ նայում էր Սաբեթին, նրա ծծկեր երեխային ու խոշորաչափ տղաներին, բայց նրա հայացքի մեջ ուրիշ մտքեր էին մշուշվում, որովհետև նա մեջ ընդ մեջ նայում էր պատուհանից դուրս։ Մի բլուր, մի՝ կորամեջ բլուր, հասարակ, ինչպես բազմաթիվ նման բլուրներ՝ գրավել էր նրա ուշադրությունը։

Դա էր հուզում նրան։ Այո՛, հուզում։ Դա այն բլուրն էր, որի վրա նրա զորամասը կռվի բռնվելով դաշնակցական խմբի հետ՝

փախուստի մատնվեց մի բուք, ցուրտ և լարված գիշեր։ Այս գյուղը իր մի բուռ խեղճ ու կրակ բնակիչներով կծկվել էր ձյան մեջ, ախուր, ամայի լճափին։ Կոմունարները ձյան մեջ թաղվելով ու դուրս պրծնելով՝ այս բլուրի վրա հարձակվելով, հենց այստեղ վճռեցին կովի բախտը։ Գյուղացիները դուրս եկան գետնափոր խրճիթներից, կարծես գետնի տակից, հանդիպեցին իրենց գյուղից փախստական դառած կոմունարների, գյուղը կյանք առավ, բոլորն հավաքվեցին հաղթական կոմունարների շուրջը։

Հայկի մտքերը թռան առաջ։ Կոլեկտիվացման տարիները։ Երբ ինքը նույնպիսի մի ձմռան օր մտնում էր այս գյուղը։ Հենց այս շենքի դռանը նրա առջևը դուրս եկան երեսները ծածկած կանայք և չթողին, որ նա մտնի շենքը, արգելելով որ խոսի։ Նրանք «դեմ» էին կոլտնտեսության։ Պարզ էր, կուլակներն էին լարել կանանց և առաջ գցել՝ նրանց հետևում պահելով տղամարդկանց։ «Հաղթել» էին կուլակները։

Իհարկե ժողովը կայացավ, և կոլտնտեսությունը հիմնվեց։

Գյուղում կային կոմունիստներ, որոնք ղեկավարում էին կոլտնտեսության աշխատանքները։ Այն ժամանակ կուլակները հարվածեցին ուրիշ կողմից։ Սկսվեց անասունների կոտորածը։ Գյուղը կոտորում էր իր տնտեսությունը, ինքն իրեն։ Կույր տգիտությունը և աչքը բաց պրովոկացիան համաձարակի պես հնձում էր գյուղում անասուններին։

Հայկը հիշում էր իր այցերը այս գյուղին։ Ամեն անգամ մի բան խանգարում էր կոլտնտեսությանը։

Դժվար էր սկզբում։ Գյուղացին դիմադրում էր, դիմադրում էր ինքն իրեն, իր մեջ զարթնած նոր ցանկություններին՝ լավ ապրելու...

Հիշում է Հայկը իր զրույցները գյուղացիների հետ, որոնք ճորտ էին Մելիք-Բարխուդարի ձեռին։ Մելիք-Բարխուդարը, այդ ֆեոդալը, որն իր այդին տնկել էր մի թուրք այգեպանի ձեռքով և երբ այդին կանաչել, բարձրացել էր, սպանել էր տվել այգեպանին, որ սա ուրիշ տեղ այդպիսի այգի չգցի, այն ֆեոդալը, որ գյուղացիներին, իր ճորտերին միայն ծեծում էր, միայն կեղեքում, միայն սպանում։

— Ա՛յ տղա,— ասելիս էր լինում նրանց Հայկը, այս բոլորը զառնությամբ հիշելով,— ա՛յ տղա, շատ էլ ճորտ ես եղել, շատ էլ

հարուստները լավ են ապրել, բա հիմի դու չե՞ս ուզում յուղ ու մեղր ուտես,— ա՛յ սրիկա, բա դու մարդ չե՞ս։

— Ճիշտ ես ասում, ընկեր Հայկ, ճիշտ, ամա՛...

— Ի՞նչ ամա,— դաղվում էր Հայկը,— սրիկա՛,— ասում էր նա փաղաքշական տոնով,— բա դու չե՞ս ուզում տրակտոր, կոմբայն բանեցնես, լուսավոր տուն, տեղ, մաքուր շոր, թատրոն, կինո...

— Ի՞ի՞, ընկեր Հայկ, բան չունե՞ս։ Մեր պապերը տեսե՞լ են, որ ես տեսնեմ։

Ապա Հայկը մտածեց, որ հիմա, այդ գյուղացիները դաշնամուր են պահանջում, Մոսկվայից մահճակալ են բերել տալիս, կոլտնտեսականն իր կնոջը փափուկ վագոնով Մոսկվա է տանում։

Սաբեթը այս գյուղից է։ Նախկին ճորտուհի, հիմա ազատ կոլտնտեսուհի, որին ահա դուրս են արել կոլտնտեսությունից։

— Հիմա դու ի՞նչ ես ասում,— դիմեց նրան Հայկը,— ա՛յ, ընկեր Մարուքեն ասում է, որ մարդդ յուրացրել է, կոլտնտեսության նախագահը հաստատ ասում է, հազար վկաներ կան...

Սաբեթը վեր կացավ, բարձրահասակ, վայրի, կոպիտ գեղեցկությամբ հպարտ նայեց իր շուրջը և արձանացավ։

— Ի՞նչ պիտի ասեմ,— խոսեց նա պղնձի ձայնով,— էստեղ ամենքդ էլ վկա եք, որ անարդար դատ եք կտրում...

— Սպասիր, սպասիր...

— Ի՞նչ պիտի սպասեմ։ Բա էսպես դատաստան կլի՞։

— Սպասի՛, ասում եմ քեզ։

Ու Հայկը մատիտով տկտկացրեց սեղանին։

— Կարգով խոսենք, կարգով վերջացնենք։

— Ես էլ հենց կարգով եմ խոսում։ Ինչի՞։ Իմ դատը որ պաշտպանում եմ՝ էդ ինչի՞ համար կարգին չէ, բա սրանք որ (ցույց է տալիս Սեթոյին ու Մարուքեին) իմ տունը քանդում են՝ կարգի՞ն ա։ Բա ես...

— Ընկերուհի, ընկերուհի... մի վրա տա, չեղավ,— ընդհատեց Հայկը և ասաց մեղմ հանդիմանությամբ,— ախր մի քիչ մտածի։ Մենք էստեղ դատ ենք անում։ Մարդդ բանտարկված է... Սրան ի՞նչ կասես։

Սեթոն մեջ ընկավ։

— Առաջ սրա մարդն ուզում էր ուրանա։ Ասում էր. «բուրդը

իմը չի, անեբս ա բերել գրել իմ տունը։ Հարցրի՝ ի՞նչքան ժամանակ, ասում է՝ մի ամիս։

Սաբեթը սփրթնեց։

— Սուտ ա, ո՞նց կբերեր մի ամիս բուրդը կդներ տանս։

— Ո՞նց թե ոնց,— մեջ ընկավ Մարուքեն և նրան ձայնակցեց հաղթաժնի վարիչը,— ինչի՞ չէր կարող։

— Բա ե՞ս որտեղ էի,— սաստեց Սաբեթը շանթահարող հայացքով։

— Դա փա՜ստ է,— ծիծաղեց Սեթոն։

— Սպասեցե՛ք, ընկերներ, մի ընդհատեք,— խիստ ձայնով ասաց Հայկը և հետաքրքրված նայեց Սաբեթին,— Թո՛ղ քաղաքացի Սաբեթն իր խոսքն ասի։

Սաբեթը, երեխան գրկին, գլուխը բարձր բռնած, հոնքերը հպարտ իրար բերելով հարցրեց Հայկին.

— Ի՞նչ եք ուզում ինձանից։

Հայկն ակամա պաշտպանողական դիրք բռնեց.

— Ի՞նչ ենք ուզում... Դու հասկանո՞ւմ ես, որ սա դատարան է։ Քանի՞ անգամ պետք է կրկնեն, որ ամուսինդ յուրացում է կատարել։ Բա էս փաստը քեզ համար նշանակություն չունի՞։

— Ես ինչ անեմ, որ ունի։ Իմ մարդը գողություն ա արել՝ դրա պատասխանը ե՞ս պիտի տամ, յա իմ երեխե՞քը։ Նա ո՞վ, ես ո՞վ։

— Բա մարդդ...

— Նա ի՞նչ իմ մարդն ա, որ գողություն ա անում։ Ինչց հերը գողություն անի՝ սրա՞նց ինչ (ցույց է տալիս երեխաներին)։ Բա սրանք մեծանան կոլխոզ, բանակ չպիտի՞ մտնեն, երկիր չպիտի՞ պաշտպանեն։ Բա սրանք մեծանան՝ ձեզանից դատաստան կուզեն. ի՞նչ պատասխան պիտի տաք, որ էսպես կորցնում եք։ Էդպես բան չկա, իմ դիմումը լավ քննեք, սրտով դատաստան կտրեք ու իմ ստախանովի անուն, իմ ճծեր գոզի հետ մի խառնեք։ Սա ո՞ր աշխարքն ա, էն որ ապրում էինք... էն գնաց, էն չկա։ Մարդս էլ կթողնեմ, հերս էլ, մերս էլ, կառնիմ իմ ճծեր կերթամ Հրևան, Մոսկով, դիմում կտամ։ Ես էս սև գեռնի տակից եմ դուս եկել, սև աշխարքից, էս լավ իմացեք։

Սաբեթը նստեց ու ստինքը պոկեց արդեն քնած երեխայի կոշտ շրթունքներից։ Երկու տղաները իրենց սեաշլորի խոշոր աչքերով հանգիստ նայեցին Հայկին։

Ապագա կարմիրբանակայինները...

Հայկը հուզված էր... ու երբ փորձեց խոսել՝ դարմացավ,— կոկորդը սեղմվում էր... Ավելի անտանելին այն էր, որ աչքերը լցվում էին։ Ամաչեց ինքն իրենից։ Հին զինվոր, գերմանական, տաճկական, քաղաքացիական կռիվների բոլոր ֆրոնտներից անցած կոմունիստը՝ հանկարծ...

— Ընկեր Սաբեթ... դու ոչ մի տեղ էլ չես գիմի... մենք խորհրդային իշխանություն ենք... դու մեզ վրա էգպես մի՛ մտիկ տա... Քո մարդու հանցանքի համար քեզ չենք պատժի... Ես կարծում եմ կոլտնտեսության նախագահը քեզ ե՛տ կընդունի։ Դնա կոլտնտեսություն և շարունակիր գործդ...

Ու ազատ շունչ քաշեց։

Մինչ սրանք խոսում էին՝ սենյակը լցվել էին կոլտնտեսականները, որոնք հետևում էին այս դատին։ Հայկի վճռական խոսքը հանգիպեց բուռն ծափահարությունների։ Մի՛ծաղը հնչեց մասյլ սենյակում։

Սաբեթը գլուխ տվեց և հպարտ դուրս եկավ երեխաներից մեկի ձեռից բռնած։

Ինչպե՞ս էր Սաբեթը մտել կոլտնտեսություն՝ Հայկը չգիտեր։ Ո՞րտեղից եկավ այդ կինը։ Ո՞րտեղ էր գաղթին, սովի օրերին։ Ո՞վ էր վերջապես։ Լեռնային չքավոր ու խավար գյուղի մեջ ո՞վ կնկատեր Սաբեթին։ Այստեղ բոլոր կանայք ծածկված էին գնում հարևանների տուն։

— Այ տղա, սա էն գյուղը չէ՞, որ սովի ճանկերում գալարվում էր։ Սրանք էն ճորտերը չե՞ն, որոնց շորացնում էր Մելիք-Բարխուդարի մտրակը։ Այն ի՞նչ պատահեց, ե՞րբ աճեց։ Հրաշք է...

Նայեց Հայկը կրկին այն բլրին և հիշեց բուք ու սառնամանիք գիշերը կոմունարների հետ...

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ, ԵՐԿՈՒ ՔՈՒՅՐ

Դա իմպերիալիստական պատերազմի տարիներին էր...

Ինչպես փոքրիկ դեպքերը երբեմն կարողանում են հանկարծ... բայց թողնենք այս... ինչպես ասացի՝ չարաղետ տարիներին էր այդ։ Երեկոյան ուշ տանից դուրս եկա, ես՝ տասներկու տարեկան աշակերտ՝ Բաթումի ծովափը։ Ծովը հևում էր ափին, քամի էր, ցուրտ։ Զբոսնելը միտք չուներ։ Որոշեցի մի փոքր էլ անցնել ծովափի փողոցով և վերադառնալ տուն։ Դրսի ցրտին ու քամուն, երբ մութն էլ վրա է հասնում՝ առանձնապես կարոտում ես տաք սենյակին, ամփոփ անկյունին։ Առնել մի գիրք, նստել ուրախ ու հանգիստ մի անկյուն և կարդալ։

Հանկարծ ուշադրությունս գրավեց մի տեսարան։ Փողոցով անցնում էին երկու երեխա, մի տղա և մի աղջիկ։ Ինը և յոթը տարեկան կլինեին։ Աղջիկը լաց էր լինում, իսկ տղան համոզում էր, հանգստացնում։ Ես չէի հասկանում նրանց լեզուն։ Հասկացա, որ հայեր էին և փախստականներ։ Ես հետևեցի նրանց։ Աղջիկը դողում էր և շարունակում լացը՝ կծելով ձեռը, որ երևի շատ էր մրսեցրել։ Տղան, որ նույնպես դողում էր՝ կանգ էր առնում դռների առջև, և բռնելով աղջկա ձեռը՝ քաշում էր ավելի հեռու։ Ես հասկացա, թե բանն ինչումն էր։ Աղջիկը չէր դիմանում ցրտին, տղան ուզում էր մի տեղ գտնել, տաքացնել նրան։ Հասկացա և չգիտեմ ինչու չէի կարողանում հեռանալ, գնալ տուն։ Ինձ պաշարեց այն միտքը, թե ի՞նչ պիտի անի տղան, ի՞նչպես պիտի փրկի աղջկան սառչելուց, երբ ինքն էլ նույն վիճակի մեջ էր։ Մութը վրա հասավ, անձրևն սկսեց ձաղկել մայթերն ու պատերը։ Ես թրջվում էի։ Գնամ տո՞ւն... բայց մի բան բռնեց ինձ — ինչպե՞ս գնամ, երբ... Այս մտքերի մեջ էի, երբ աղջիկը բարձրաձայն սկսեց լաց լինել։ Տղան կանգնեցրեց նրան մի ծառի տակ և նրա թևը ցնցելով սաստեց, որ ձայնը կտրի։ Հետո բարկացավ, գոռաց աղջկա վրա ու սկսեց ինքն էլ լաց լինել բարկությունից։

Ես մոտեցա և վրացերեն (ես վրացի եմ) հարցրի, ո՞վ եք, ի՞նչ բան ունեք այստեղ։ Ով պետք է լիներին, հասկանալի էր... Ես տղային հասկացրի, որ չգոռա այդպես աղջկա վրա։ Նա լուռ ու խեթ նայեց վրաս։ Ես սկսեցի համոզել։ Նա ոչինչ չէր հասկանում։

— Տուր սրան, կտանեմ մեր տուն,— ասացի տղային և բռնելով աղջկա ձեռը քաշեցի մեր տան կողմը։

Տղան հասկացավ և ինքն էլ քաշեց աղջկան։ Սա կամաց հեկեկալով եկավ։ Հասանք մեր տուն։ Տղան կանգ առավ։ Ես աղջկան տարա ներս։ Ինչո՞ւ այդպես արի, ի՞նչ էր իմ իսկական մտադրությունը՝ ես ինձ հաշիվ չէի տալիս։ Ես միայն մի բան գիտեի, որ նրանցից հեռանալ չէի կարող, չէի կարող թողնել փողոցում։ Ես աղջկան տարա ներս։ Մտանք միջանցքը։ Բայց ինչո՞ւ տղային էլ չտարա։ Մի պահ ես չէի իմանում, թե ի՞նչ եմ անում։ Աղջկան ներս տանեմ, թե ետ դառնամ տղային էլ կանչեմ ներս։ Կարծում էի, թե տղային հետո կհամոզեմ ներս գալ։ Ուստի և առաջին վայրկյանին հոգացի միայն աղջկա մասին։ Օ՜, երբեք ձեր կյանքում չանեք ճակատագրական սխալներ, սիրելի ընկերներ, չանեք, շատ թանկ կնստի ձեզ վրա այդ... բայց դա հետո, հետո. ես աղջկա ձեռից բռնած տարա մինչև հորս սենյակի դուռը, բաց արի և նրան տարա ներս։ Նոր զգացի, որ ես մի քայլ եմ արել, որ դեռ պետք է հանդիպի մերոնց, մեր ընտանիքի դիմադրությանը։ Նրանք կարող էին դուրս անել աղջկան իսկույն ևթ։ Երբ մտանք ներս, հայրս լրագիր էր կարդում և նրա ալեհեր գլուխը թաղված էր լրագրի էջի հետև։ Նա ուշադրություն չդարձրեց մեզ վրա։ Բայց մեր լռությունը և անշարժ վիճակը հանկարծ արթնացրեց հորս։ Նա գլուխը դուրս բերեց լրագրի տակից, ակնոցները հանեց և նայեց մեզ։

— Հա, ի՞նչ կա, ո՞վ է դա...

— Փողոցից եմ բերել, մրսում է...

Հայրս նայեց աղջկան և հոնքերը կիտեց։

— Փախստական է, պապա, հայ է,— ասացի ես,— մրսում է, տուն չունի։

Հայրս լուռ նայում էր աղջկան։ Հետո մոայլ նայեց ինձ։ Նայեց աչքերիս մեջ, այո՜, այո՜, ուղիղ աչքերիս մեջ։ Առաջին անգամ

հայրս այդպես նայեց ինձ քննող, խորը, զարթնած մտքերով։ Ի՞նչ պիտի ասի տեսնես։

— Ինչո՞ւ ես բերել դրան,— հարցրեց ուսուցչի ձայնով, որ դաս է հարցնում իր սիրած աշակերտին։

— Քույր արա սրան, պապա, մեղք է, թող սա լինի իմ քույրը, ես չեմ մնա այս տանը, եթե...

Հայրս նայեց ինձ, նայեց աղջկան և հանգիստ ձայնով ասաց.

— Լավ, թող մնա մեզ մոտ, դառնա քո քույրը։

Եվ վեր կացավ, մոտեցավ աղջկան, բռնեց ուսը, գգվանքով նայեց և ասաց.

— Սիրուն էլ աղջիկ է, խելոք աչքեր ունի, լավ աղջիկ կդառնա։

Օ, թանկագին, թանկագին պապա, ի՜նչ ուրախություն տվիր ինձ։ Այնպես հուզված էի, որ չնկատեցի մեր տանեցիներին, որ ներս էին եկել և դիտում էին տեսարանը։ Իմ երկու եղբայրս և մի քույրս ավելի շուտ զվարճացան այս տեսարանով, քան զարմացան։ Մայրս միայն կիսաձայն հարցրեց հորս.

— Կարո՞ղ ենք... ապրուստը դժվարանում է ու...

— Մամա, խնդրում եմ... ես չեմ ուտի, չեմ հագնի, միայն...

— Լավ, լավ, դու էլ հորդ կտորն ես։ Թող մնա,— ծիծաղեց մայրս և աղջկան տարավ խոհանոց ու հորաքրոջս հետ հանեց նրա ցնցոտիները, ջուր դրին տաքացնելու և...

— Պա՜հ, տղան մնաց, տղան սպասում է,— հանկարծ կայծակի պես շողաց իմ մտքում և հիմա էլ եմ հիշում՝ հետը մի շար կտրված թե չլինի՞...

Վազեցի դուրս, որ կանչեմ նրան։ Հասա փողոցը՝ նա չկար։

Չկար... արդյո՞ք կամեցել էր աղջկանից ազատվել և ուրախացավ, որ մի կերպ տեղավորեց, թե՞ շատ սպասելուց հուսահատվեց, որ իրեն ներս կառնեն, թե՞ վիրավորվեց, վշտացավ... Չկար, ինչպես հեքիաթի մեջ։ Բայց աղջկան փրկելու ուրախությունը տաք էր իմ տղայական սրտում, դեռ լավ չէի զգում, թե ի՞նչ խղճի խայթեր պիտի կրեի հետագայում իմ խոշոր սխալի համար։ Ետ դարձա տուն՝ մի փոքր ուրախություն մթագնած և անհամբեր սպասում էի, որ աղջկան լողացնեն և բերեն ներս։ Նա էլ լաց չի լինի, նա կուրախանա, կկշտանա, նա հիմա պաշտպաններ ունի՝ հայրս, մայրս, ես, եղբայրներս, քույրերս։

Հորս սենյակում սպասում էինք նրան... Եվ ահա մայրս ձեռից բռնած ներս բերեց նրան՝ մաքուր, գեղեցիկ, բայց տխուր... Մենք շրջապատեցինք նրան, սկսեցինք խոսել, բայց նա լաց եղավ։

— Հանգիստ թողեք նրան այսօր,— ասաց մայրս, և դարձավ քրոջս,— տար սրան սեղանատուն, ուտեցրու և միայն դու ու Թամարան խոսեցեք հետը։

Այդպես էլ արին։ Աղջկան տարան սեղանատուն, մենք մնացինք հորս սենյակում։ Հայրս գլուխը ծռեր օրորեց և շշնջաց. «Անիծվի՜ պատերազմը... տեսնես ի՞նչ տանից է, ո՞վ է... ինչպե՞ս է ընկել Բաթումի»...

Որոշվեց այսպես։ Աղջիկը կդառնա մեր տան անդամ, հավասար անդամ, ինչպես բոլոր երեխաները։ «Դա Սանդրոյի (իմ) բերածն է, նրա բարությունն է, թող այդպես էլ լինի՝ հավասար»,— ասաց հայրս ու խրատեց սիրել աղջկան և խնամել։

Աղջիկը մնաց մեր տանը, սովորեց վրացերեն, ընտելացավ մեզ, բոլորս նրան սիրում էինք ավելի, քան իրարու։ Դուրս եկավ, որ նրա անունը Մարո է, և այն տղան իր եղբայրն էր եղել։ Մարոն մեծացավ, նրան տվինք դպրոց։ Հայրս այնքան էր սիրում նրան, որ մինչև նա դպրոցից տուն չգար՝ սեղան չէր թույլ տա գցել։ Մարոն լավ ձեռագործ գիտեր,— հիշում էր, թե ինչպես — գործում էր իր հայրենի տանը տեսած բաները։ Մենք շուտով մոռացանք նրա ծագումը, նա դառավ մեր տան սիրելի և հարազատ անդամը։

Բայց մի գաղտնի վիշտ նրան կրծում էր։ Դա զգացվում էր։ Երբ հարցնում էինք՝ ասում էր չեմ տխրում։ Բայց մենք գիտեինք և մինչև հիմա էլ գիտենք,— դա նրա եղբոր վիշտն է։ Մենք սկսեցինք որոնել նրա եղբորը։ Մի անգամ լսեցինք, որ Բաքվումն է։ Գնացի Բաքու, ոչինչ դուրս չեկավ։ Ցավն այն է, որ Մարոն միայն իր և իր եղբոր անունները գիտե, ազգանունն անհայտ է նրան...

— Տարօրինակ պատմություն է,— ասաց ինքն իրեն ժպտալով երիտասարդ ուղևորը նույնպես երիտասարդ պատմողին,— այսինքն ոչ թե պատմությունն է տարօրինակ, այլ...

— Իմ սենտիմենտալիզմը...

— Ինչպե՞ս ասեմ. շատ խորը հետք է թողել ձեր հոգում այդ պատմությունը։

Այո՛, այդ պատմությունը դառավ իմ կյանքի պատմությունը։ Այդ տղայի ուրվականը միշտ իմ աչքի առջև է։ Նա մնաց դռանը։ Հետո ի՞նչ եղավ — հետաքրքրում է ինձ անչափ։ Մեռա՞ծ է նա, ապրո՞ւմ է, արդյոք զո՞ւր եմ մտածում նրա մասին, կփրկեի նրան էլ, եթե ներս տանեի... Սա իմ հիվանդոտ միտքն է, որ հետապնդում է ինձ։ Կոչեցեք ինձ սենտիմենտալ — ոչինչ։

Վագոնը սուրում էր, օրորում էր մտքերը երկու ուղևորների, որոնք ճամփա էին ընկել Թբիլիսիից դեպի Հայաստան և մտել լուռ ու վիթխարի ձորը։

— Այո՛, այդ պատմությունը դարձավ իմ կյանքի, մեր ընտանիքի կյանքի պատմությունը։ Մի ծիծաղեք, Մարոն ոչ միայն դարձավ մեր ընտանիքի սիրելին, այլև հեղինակությունը մեր երեխաների, իմ։ Մարոյին փրկելը ուրախություն բերեց մեզ։ Ամենամեծ ուրախությունը՝ մարդկայնությունը։ Մարոն դարձավ մեր ընտանիքի՝ կասեմ՝ խիղճը։ Նա մաքրագործեց մեզ։ Իհարկե այդտեղ կա և մեր տարօրինակ ընտանիքի հանգամանքը։ Մեր ընտանիքի տրադիցիան... Հայրս հեղափոխական ուսուցիչ էր Գուրիայում, էնտուզիաստ էր, իսկ պապս մի ժողովրդասեր դատավոր էր։ Երբ մեռավ, նրա վրա ողբալու եկավ իր խմբով սարերում ապաստանած ասպետ ավազակ Գոբեչիան։ Վտանգվելով, քաղաքում, օրը ցերեկով... Այսպիսի տեսարա՞ն...

Լեոնիձեն ծիծաղեց։

— Ես շատ եմ երազել ուրախացնել Մարոյին՝ գտնելով նրա եղբորը։ Նա ինձ ոչինչ չի ասում, բայց ես զգում եմ, նա տանջվում է։ Գիտեք, լինում են շատ խորը նատուրաներ, այնքան խորը, որ չեն կարողանում խոսել։ Բայց խոստովանանք լինի՝ նրանից շատ ես եմ տանջվել։ Խի՛ղճս։ Որ այդ անապատան տղային լքեցի դռանը, և նա գնաց երևի ինձնից վիրավոր։ Ասում եմ, մարդ երբեմն կատարում է ճակատագրական սխալներ։

Գնացքը ծանր թափով բարձրանում էր ձորնիվեր։

Լեոնիձեն դուրս նայեց պատուհանից։

— Չեմ կարողանում պատկերացնել, համենայն դեպս, թե ինչ երկիր եմ գնում։ Չնայեցի քարտեզին։

— Պատկերացրեք մի փոքրիկ ձկնիկ՝ աղչկա գլխով,— դա Հայաստանի քարտեզն է։

— Օհո՛, այդպես պատկերավո՞ր — ծիծաղեց Լեոնիձեն։

— Այդ աղչկա կրծքի մեջ էլ կապույտ սիրտ՝ Սևանի լիճը։

— Հետո՞, հետո՞։

— Ականջին մի մեծ խոպոպ՝ Արագած լեռը։ Եվ այլն...

— Դուք բանաստեղծ չե՞ք պատահաբար։

— Ո՛չ,— ժպտաց Վազգենը մեղմորեն,— ես քիմիկոս եմ։

Նրանք լռեցին մի պահ։ Լեոնիձեն դուրս նայեց մութ պատուհանից։ Խավարի միջից վերևից ներքև էին նայում ամեհի քարափները՝ հոնքերը վրա տված։ Խոսակիցը՝ Վազգենը պատմեց այդ ձորի և ընդհանրապես Հայաստանի մասին։ Բայց հանկարծ մի տեղ ընդհատեց.

— Ձեզ չի՞ ձանձրացնում այս խոսակցությունը։

— Ընդհակառակը։ Ես այս բոլորը պիտի պատմեմ Մարոյին։

— Այսպես ուրեմն։ Հայաստանը մեզ կյանք է տալիս սովետական իշխանության շնորհիվ։ Այլապես նա մահվան երկիր է։ Մեր ժողովուրդը ո՛չ ազատվել է իրեն ջնջողներից, ո՛չ էլ ոչնչացել։ Տանջվել է և դիմացել։ Եվ այդ դիմանալու մեջ կա մի գաղտնիք։ Դա այդ ժողովրդի շինարարական հանճարն է։ Այդ հանճարով նա դարեր կպած է եղել ի՛ր հողին, ի՛ր կառուցողական հուշարձաններին, ի՛ր գրքերին և երկիրը շենացնելու անզուսպ ծարավին։ Նրան շատ են քանդել և հասցրել հուսահատության դուռը, բայց նա պահել է վառ մի հույս, որ մի օր կազատվի, որ կգա շինարարության դարը։ Նա բնազդով գնացել է դեպի այնպիսի մի իրավակարգ, ուր աշխատանքը լինի երկրի ամենաբարձր օրենքը։ Ո՞րքան հարմար են եղել նրա որոնումներն ու տենչերը մեր էպոխայում։ Աշխատանքը մեր ժողովրդի դարավոր կիրքն է եղել։

Վագոն մտան մի խումբ երիտասարդ մասնագետներ։ Ծիծաղով ու կատակներով նրանք տեղավորվեցին կուպեներում։

— Օհո՛, Վազգեն,— գոչեցին երիտասարդները խուժելով նրա կուպեն։

Վազգենը ծանոթացրեց նրանց Լեոնիձեի հետ։ Շուտով սարքվեց նախաճաշի սեղան և երիտասարդները բոլորվեցին։ Նրանք էլեկտրո-ինժեներներ էին, քիմիկոսներ, գյուղատնտեսներ։ Գնում էին էքսկուրսիա՝ Երևան—Քանաքեռ—Սևան։

Լեոնիձեին դուր եկավ մի ծիծաղադեմ շարաճճի երիտասարդ, որ շարունակ զննում էր նրան իր ածուխի աչքերով։ Նրանք մտեր-

մացան շատ շուտ, և երիտասարդը հարցրեց Լեոնիձեին, թե ո՞ւր է գնում։

Լեոնիձեն հայտնեց, որ գործով գնում է Երևան, իրենց հիմնարկի ներկայացուցչի մոտ։

— Գիտե՞ք ինչ,— ասաց Վազգենը,— եկեք մի լավ ծանոթացեք մեր ընկերների հետ։ Սա նախ և առաջ։ Հետո՝ պատմեցեք ձեր երկրից, մեր երկրից, ձեր պատմությունը, մեր պատմությունը, և կարգին, ինչպես պետք է գնանք Երևան։ Սրանք բոլորը էքսկուրսիայով գնում են այնտեղ։

Եվ Վազգենը մեկ-մեկ ներկայացրեց.

— Ահա այս չարաճճին՝ Սուրենը հիդրավլիկ ինժեներ է։ Սրան 15 թվին կազակները ռուս-տաճկական ֆրոնտից բերել են՝ հանելով գետից, ուր սրան նետել էր նրա հոգնած փախստական մայրը։ Ինչպես տեսնում եք՝ իմունիտետ ունի ջրից և հաղթում է ջրին։ Սա Տիգրանն է՝ նույնպես նախկին որբ։ Սա եկել է եզան մեջքին նստած. նրան հանել են Լենինականի երկրաշարժի ժամանակ մի տան փլվածքի տակից, դրա համար էլ գեոլոգիա է ուսումնասիրում։ Մյուս ընկերները բոլորն էլ մասնակիցներ են գյուղատնտեսության զանազան ճյուղերում։ Ահա սա էլ վիճակագիր է, ընկեր Լեոնիձե...

Եվ Վազգենը երիտասարդներին պատմեց Լեոնիձեի պատմությունը։

— Դատարկ բան է,— ասաց Սուրենը,— մենք կգտնենք «նրան»։

— Անհույս բան,— ծիծաղեց Լեոնիձեն։

— Ի՞նչ է անուն ազգանունը,— ասաց Տիգրանը։

— Ի՞նչ, ասում եք կրկին զբաղվեմ այդ հին ու տխուր պատմությա՞մբ,— ասաց Լեոնիձեն,— Լևոն է անունը, բայց ազգանունը չգիտե անգամ նրա քույրը։

— Կգտնենք,— պնդեց Սուրենը։— Ես որբերի գործերին հմուտ եմ։ Այո՛, այո՛, կգտնենք։ Բայց մենք ձեզ «պատանդ» կպահենք Հայաստանում, բաց չենք թողնի, մինչև մեր «գերին» չտաք մեզ։

Զրույցն աշխուժացավ։ Իսկ Լեոնիձեն խորասուզվեց մտքերի մեջ։ Նրան ժպտալ սկսեց այդ չարաճճի միտքը։ Հանկարծ... ի՞նչ տրախ և հետաքրքիր ոյուրպիզ։ Բայց մի՞թե կրկին հեքիաթ, կրկին անակնկալ պատմություն։

Եվ Լեոնիձեի հետ պատահեց այն, ինչ պատահում է մարդկանց մեծամասնության հետ՝ չի հավատում, բայց երազում է։ Նրան զվարճացնել սկսեց այդ երազը — տեսնել Լևոնին, հայտնել նրան, որ...

Լեոնիձեն տխուր ժպտաց.

— Զուր հույսեր են, շատ ենք որոնել և հիմա հավատացած ենք, որ նա գոյություն չունի։

— Բայց ձեր «քույրը» դեռ հույս ունի՞։

— Ոչ, նա հույսը կորցրել է բոլորովին։ Եվ հետո՝ չարժե նորոգել նրա վիշտը՝ կրկին որոնելով անհայտ կորածին։

Խոսակցությունները լռեցին։ Ճիշտ էր ասում Լեոնիձեն։

Այդ լռության մեջ ևս ամեն մեկը դարձյալ երազում էր։ Հանկարծ գտնվեր... ի՞նչ ուրախություն կլիներ, թեկուզ և իրենց համար, որ չեն տեսել ո՛չ քրոջը, ո՛չ եղբորը։ Բայց Լեոնիձեի տխուր վճիռը, թե կորածը մեռած է՝ հանգցրեց այդ հույսը։

Այդ մտքերով էլ հասան Երևան։

Վազգենն ու մյուս երիտասարդ մասնագետները խոստացան Լեոնիձեին այցելել։ Լեոնիձեն հյուրանոցում սպասում էր իրենց հիմնարկի ներկայացուցչին, որը քաղաքում չէր։ Նա համարյա պարապ էր։

Մի առավոտ, երբ նա նստած էր հյուրանոցի համարում և մի գիրք էր թերթում, հանկարծ դռան մոտ շտապ ոտնաձայներ լսեց.

— Սա՛նդրո, Սա՛նդրո, «նա» գտնված է...

Եվ Սանդրոյի ընկերները ներս թափվեցին նրա համարը։

— Ինչպե՞ս...— վեր թռավ Սանդրոն մեծ հուզմունքով։

Նրանց հետ եկած երիտասարդ ուսուցիչը պատմեց իր գիտեցած մի երիտասարդ ինժեների մասին, որն աշխատում է էլեկտրակայանի կառուցումներում։

Մի քանի րոպե անց ավտոն թռավ։ Ամբողջ այդ վազքի ընթացքում Լեոնիձեն դառել էր լարված ներվերի մի կծիկ։ Նրա աչքին պատկերացավ կրկին այն անձրևային օրը Բաթումում, այն թրջված խեղճ տղան, որ լացող քրոջ ձեռից բռնած քայլում էր փողոցներում։ Նա այնքան էր տենչում հիմա տեսնել կորած տղային, որ եթե հանկարծ սխալ դուրս գար այդ ամենը՝ նա երևի կհուսահատվեր ամեն բանից։ Միաժամանակ էլ բուռն հետաքրքրությունը...

Ավտոն կանգ առավ էլեկտրակայանի շինմասում։ Լեոնիձեն հուզմունքի մեջ՝ չգիտեր կառուցումների՞ մեջ է, թե ինչ-որ մի հեռավոր աշխարհում, աֆրիկյան անտառում, ուր որոնում է մի շատ կարևոր մարդու։

Ախր, մի քանի րոպե հետո նա պիտի հանդիպեր այն էակին, որ այնքան տանջել է թե՛ իր «քրոջը» և թե՛ իրեն։

***

— Ահա այնտեղ է, մենակ «նա».— երիտասարդները ներս մտան էլեկտրակայանի շենքի տուրբինների բաժինը։ Կիսամութի մեջ տուրբինների կուռ խողովակներին կռացած դիտում էր մի սև, նիհար երիտասարդ։ Նա լուրջ էր և կարծես բարկացած։ Փոշոտ ու մրոտ զգեստներն ու ձեռները ցույց էին տալիս, որ նա անձամբ է ստուգում մեքենաների մասերը։ Նա սաստիկ խորասուզված էր իր աշխատանքի մեջ։

— Ընկեր Լևոն, ձեզ են ուզում,— ասաց առաջնորդող բանվորը։

Երիտասարդը ծանր վեր նայեց և մարմնով դարձավ դեպի եկվորները։ Վազգենն առաջ եկավ.

— Ընկեր Լևոն, ծանոթացեք մեր հյուրի հետ — Վրաստանից։

Լևոնը թախծալի ժպիտով ցույց տվեց իր մրոտ ձեռները։ Ծանոթացան, և Լևոնը շարունակեց նայել իր մեքենաներին։

— Ընկերը եկել է ծանոթանալու Հայաստանի շինարարության հետ և...

Լևոնը բացատրում էր։ Նա խոսում էր հանդարտ, պարզ և համեստ, մաքուր ռուսերենով։ Որտե՞ղ էր սովորել։ Սուրենն ուզում էր մատնել «գաղտնիքը», բայց տղաները արգելեցին։ Սանդրոն դիտում էր Լևոնին և միաժամանակ լսում նրան։

— Վալը դեռ վիբրացիա է տալիս,— ասաց Լևոնը,— ուզղում ենք։ Պետք է մաթեմատիկ ճշտություն։ Մոսկվայից կգա ընդունող հանձնաժողովը և... մենք պիտի քննություն բռնենք նրա առջև։ Ծիծաղեց, նայեց Լեոնիձեին, որ խորհրդածելով նայում էր իրեն և չէր կասկածում, որ պատրաստ էր հայտնելու մի այնպիսի գաղտնիք...

Լևոնը տարվել էր իր նյութով (Լեոնիձեն արդեն նկատել էր,

որ իրեն շրջապատող երիտասարդները տարվում են առհասարակ) և Լեոնիձեին գրավեց իր էնտուզիազմով, մտքերով։ Սա մի՞թե այն խեղճ տղան է, որ... Լեոնիձեն վճռեց համբերել դեռ...

— Ո՛չ, մեր երկիրն այլևս այն խեղճ ու կրակ երկիրը չէ, որտեղից փախչում էին բնիկները... — ասաց Լևոնը։— Նա անճանաչելի է...

— Ինչպես դուք,— դուրս թռավ ակամա Վազգենի բերանից։

— Ինչպե՞ս,— չհասկացավ Լևոնը և ժպտաց։

Լևոնն իր մտքերի ջերմության մեջ էր դեռ...

Սուրիկն ու Վազգենն իրար նայեցին.

— Հայտնե՞նք...

— Ոչ, սպասիր,— փսփսաց Վազգենը։

Երիտասարդները որոշեցին վերադառնալ Բանավան ձորի գլուխը։ Լևոնը հայտնեց, որ իր հերթը վերջացավ, ինքն էլ է գալիս։

— Մենք ուզում ենք ձեզ մոտ հյուր լինել այսօր,— ասաց Վազգենը։

Լևոնը մեղմ ժպտաց,— համեցեք, շատ ուրախ եմ։

Լևոնի սենյակը մի տախտակե համեստ խուց էր։ Նստեցին։ Եվ լռեցին։ Նայեցին իրար։ Հետո՝ Վազգենը հարցրեց Լևոնին նրա հին հայրենիքի մասին։ Լևոնը պատմեց ինչքան որ հիշում էր։ Պատմեց Մարոյի մասին։

— Բայց մի՞թե նրան երբեք չորոնեցիք։

— Որոնեցի, բայց զուր անցան փորձերս։ Նա կորած է,— ասաց Լևոնը հանգիստ տխրությամբ,— տունը մոռացել էի...

Դարձյալ լռություն։ Հետո հանկարծ Սուրենը.

— Ոչինչ, մի մտածեք, ընկեր Լևոն, մեր հյուրը ձեզ իր քրոջը կուղարկի ձերի փոխարեն։

Լևոնը տխուր ժպտաց և նայեց Լեոնիձեին։ Սա լուրջ ասաց.

— Այո, կուղարկեմ իմ քրոջը և նա ձեզ միանգամայն կհատուցի կորածի փոխարեն։

— Մինչև անգամ հնին կմոռանաք,— ասաց քիմիկոսը։

Լևոնը կատակի մեջ ինչ-որ բան զգաց։

— Դուք լո՞ւրջ եք ասում... — Նայեց Լեոնիձեն։ Սա հուզված լրջությամբ նայեց Լևոնին։ Լևոնը գունատված վեր թռավ և մոտեցավ Լեոնիձեին։

— Այո... նա հիմա իմ քույրն է,— ասաց Լեոնիձեն, վեր կացավ և բռնեց Լևոնի ձեռը, որ սա մեկնել էր դեպի նա։

— Ուրեմն... ուրեմն դուք նա՞ եք, որ...

— Այո, այո, այո,— գոչեցին երիտասարդները աշխույժ և հուզված ու վեր կացան, շրջապատեցին երկու անծանոթ հարազատներին։

Լևոնն ու Լեոնիձեն համբուրվեցին... Նորից լռություն, որի մեջ հատ-հատ լսվեց Վազգենի խորը ձայնը.

— Այո... ուրեմն դուրս է գալիս երկու եղբայր, երկու քույր։

— Լինելով երեք հոգի,— վրա բերեց Սուրենը,— աշխարհը այդպիսի հանելուկներ էլ ունի...

Լևոնը շշմած էր, զարմացած, ուրախացած, բայց և չէր կարողանում տանել այդքան զգացումների բեռը։ Նա հուզված նստում էր, վեր կենում, անցուդարձում։

— Նա՞, Մարոն... Մարոն,— խոսում էր նա ինքն իրեն և նայում Լեոնիձեին երազանքով ու երախտագիտությամբ։

Ընկերները լուռ նայում էին սրանց և իրենք էլ երազում։

— Է՛, ինչ կա,— վեր կացավ Սուրենը,— հեռագրենք Մարոյին թող գա։

— Ա՛խ, այո՛, թող գա,— պնդեցին երիտասարդները։

Լեոնիձեն ասաց.— ոչ, ավելի լավ է գրեմ, համոզեմ, որ գա, եթե ոչ՝ հեռագրով...

***

«Սիրելի Մարո։ Ես երկար մնացի։ Մնացի մի երկրում, որտեղից գարեր շարունակ փախել են բնիկները, փախել օտար բռնակալներից, սեփական կեղեքիչներից, սովից, երկրաշարժից, կոտորածից, և որտեղ հիմա այդ ժողովրդի համար այնքան է ապահով, հարուստ և ուրախ, որ գեռ ամեն կողմերից հավաքվում են աշխատավոր ներգաղթողներ... Դրանք ապրում են իրենց ավաններում՝ Նոր Արարկիր, Նոր Սեբաստիա, Նոր Բութանիա և այլն։ Ունեն ընդհանուր արհեստանոցներ, կիսագործարաններ, դպրոցներ, ամեն բան։ Ավաններում լսվում է ֆրանսերեն, հունարեն, տեղերեն... Որքան շատ բան կա այս մի փոքրիկ խորհրդային օրկրում... Տեսնելով այս միայն՝ կարելի է գաղափար կազմել, թե

որքան մեծ բովանդակություն ունի Խորհրդային Միությունը՝ եթե նրա այս փոքրիկ մասը այսքան... բայց մի՞թե, սիրելի Մարո, չէիր ցանկանա ինքդ գալ Հայաստան և անձամբ տեսնել։ Լուրջ առաջարկում եմ քեզ Նինայի հետ իսկույն ճանապարհ ընկիր Երևան, ամսիս 20-ին, մենք մի ահագին խմբով ձեզ կդիմավորենք։ Սպասում եմ, անպատճառ եկ։ Ե՛կ և հետո... Ես քեզ մի բան կասեմ»։

***

Երբ Մարոն և Նինան վերցրին իրենց փոքրիկ պայուսակները, որ իջնեն վագոնից՝ Սանդրոն ու Լևոնը ներս ընկան, նրանց հետևից Վազգենը, Սուրիկը, գեոլոգը և մյուսները։ Սրանք եկել էին հանդիպման վայրկյանը դիտելու։ Սանդրոն առաջ վազեց, բռնեց Մարոյի իրանից և ներկայացրեց Լևոնին։ Մարոն ցնցվեց, ընկավ նրա ուսին և հեկեկաց։ Ապա, երբ հուզմունքի առաջին պոռթկումը մարեց՝ Մարոն վեր նայեց Լևոնին, որ տեսնի նրան։ Սա նա է, նա, այն խեղճ ու կրակ երեխան, որ մնաց դռների մոտ և անհետ կորավ...

Մի հինգ րոպեից հետո Նինան և Մարոն շրջապատված երիտասարդներով սլանում էին Երևանի փողոցներով դեպի հյուրանոց՝ Սանդրոյի համարը։

***

Երեկո էր։ Սանդրոյի համարում ոչ ոք չկար, բացի Լևոնից ու Մարոյից։ Նինան Սանդրոյի, Վազգենի և մյուսների հետ գնացել էր զբոսնելու։

Եղբայր ու քույր մնացել էին մենակ, դեմուդեմ։ Կարծես նոր միայն պիտի տեսնվեին իրար հետ և իսկապես որ նոր պիտի խոսեին սրտանց, իմանային իրենց անցյալի այն մասը, որ մթությամբ էր պատած։

Նրանք խոսում էին և իրար դիտում։ Այդ քույր ու եղբայրը նայում էին իրար և այն վայրկենին, երբ զգում էին հարազատ՝ հետո էլ զգում էին ինչ-որ օտար մի բան, բայց հենց որ մտա-

ծում էին այդ օտարության մասին՝ մի հարազատ բան կրկին ջերմացնում էր նրանց։

— Հետո՞, պատմիր ուրիշ էլ ինչ որ գիտես,— ասաց Լևոնը մեղմով ծեծեց քրոջ ձեռքը։

— Շատ բան կա պատմելու,— պատասխանեց Մարոն,— բայց ինչքան էլ որ պատմեմ, չեմ կարող վերջացնել։ Շատ բան տեսա, շատ բան ապրեցի։ Միայն այդ բոլորի մեջ Սանդրոն ու իր ընտանիքը ամենաքաղցրն են եղել իմ կյանքում։

Լևոնը հանկարծ վեր կացավ տեղից։

— Լսիր, Մարո, մի՞թե դու չես գա Երևան...

Նրանք վեր կացան երկուսով և սկսեցին անցուդարձել։

Մարոն շեշտ նայեց Լևոնի աչքերի մեջ, գրկեց Լևոնի մեջքը և նրան առաջ տարավ անխոս. Լևոնն սպասեց, որ նա խոսի։ Բայց Մարոն աչքերը հատակին հառած լսում էր։

— Հը, Մարո, եկ Երևան, միասին կապրենք, տեսնում ես ինչ է դառել երկիրը։

— Տեսնում եմ, շատ ուրախ եմ։

— Չե՞ս գա...

— Ո՛չ... — ասաց Մարոն դեմ առնելով և գնաց ընկողմանեց բազմոցում։ Նրանք լռեցին։ Լևոնը շարունակեց անցուդարձել.

— Լսիր, դու գուցե... սիրում ես Սանդրոյին և պետք է...

— Ո՛չ, ես սիրում եմ Սանդրոյին և չպետք է... Սանդրոն ունի իր ապագա զույգը։ Ես Սանդրոյի քույրն եմ և նա իմ եղբայրն է։

Ասաց Մարոն և հանկարծ գրկելով Լևոնին համբուրեց նրան։

Լևոնը հասկացավ.

— Ճշմարիտ է, Մարո։ Շատ ճշմարիտ է։

Հետո, երբ բավական լռել էին՝ Լևոնն սկսեց՝ կարծես ինքն իրան.

— Ի՜նչ անակնկալներ ունի կյանքը, ո՜րքան անսպասելի, երբեմն էլ ողբերգական, տարօրինակ, անհարիր, երջանիկ, անսահման սիրով լի — ո՜րտեղից որտեղ...

— Գիտե՞ս ինչ,— ասաց Մարոն,— ինձ թվում է, թե ես զարթնել եմ մի շատ ծանր, մեռցնող քնից, և այդ քունը մարդուս նախամարդկային վայրենի բնազդներն են, որով դեռ շարժվում է մարդկության մի մասը։ Դա մարդկային խտրությունն է մարդու վերաբերմամբ։ Դասակարգերը խորթ են իրար — դա հասկանալի է և պետք է։ Բայց միևնույն դասակարգի մարդը ուրիշ մարդուց խորթանա... Դու անշուշտ հասկանում ես, թե ինչ եմ ասում։

Լևոնը վրա բերեց.

— Իհարկե, Մարո, իհարկե։ Մենք զոհ դարձանք այդ ազգայնական ատելության։ Իսկական սովետական մարդը հեռու է այդ ատելությունից, անգամ հասարակ խորթությունից։

Մարոն սկսեց պատմել Սանդրոյենց ընտանիքի մասին։ Դա բացառիկ, հրաշալի ընտանիք է։ Դա մի գոհար է մարդասիրության և ազնվության։ Դա այնպիսի մի ընտանիք է, ուր ամեն մարդ իրեն կզգա հարազատ միջավայրում։

— Ափսոս, որ դու կորար։

— Այո, ես կորա, լավ կորա, մինչև որ գտնվեցի մեր երկրում։

— Դե հիմա պատմիր, Լևոն։

Լևոնը պատմեց։

Դուրս է գալիս, որ Լևոնը այն րոպեին, երբ բաժանվել էր Մարոյից՝ մի բան էր միայն մտածել։ Այն է՝ ազատվել քրոջից։

— Այո, Մարո ջան, ես այնպես էի հուսահատվել, այնքան էր վախենում, որ դու կմեռնես իմ աչքի առաջ, որ... միայն ուրախ էի, որ քեզ տանեն մի տեղ, ինձանից հեռու։ Մի խոսքով ես մտածում էի միայն, որ դու ազատվես։ Եթե ես գայի քեզ հետ՝ կծանրացնեի երկուսիս վիճակը։

Մարոն գլուխը դրեց եղբոր ուսին, և արցունքները հոսեցին նրա թախծոտ աչքերից։

— Իսկ մենք մտածում էինք, որ դու վիրավորվեցիր շատ սպասելով և հեռացար վշտացած։ Բայց չես պատմում, թե հետո ուր հեռացար, ինչպե՞ս ազատվեցիր սովից, նեղություններից։

Լևոնը պատմեց, որ ինքը այնուհետև բաժանվելով գնաց ընկավ տների բակերը, սրճարանների, ճաշարանների դռները, սկսեց կես մուրալով, կես աշխատելով ապրել։ Նա եղել էր Թիֆլիսում, Բաքվում, Հյուսիսային Կովկասում։

— Հետո եկա քեզ որոնելու։ Բայց ընկա որբանոց, ինձ բերին Հայաստան և բախտը ժպտաց։ Այստեղ ինձ ապաստանեցին, դպրոց տվին, համալսարան և ահա տեսնում ես, ես այժմ...

— Տեսնում եմ, տեսնում եմ,— ուրախ բացականչեց Մարոն և ծեծեց Լևոնի ձեռքերը։

— Մենք այսպես կանենք,— ասաց Մարոն մի փոքր մտածելուց հետո։— Դու կգաս Բաթումի, մեզ մոտ, կտեսնես մերոնց, նրանք էլ քեզ կտեսնեն։ Իսկ մյուս ամառ մենք կգանք, երկար կմնանք քեզ մոտ։

— Շատ լավ, շատ լավ,— հանգստացավ Լևոնը,— ապրիր այնտեղ, ուր ցանկանում ես, միայն երջանիկ եղիր։

Մարոն շեշտ նայեց եղբոր աչքերին և զննել սկսեց նրա հոգեկան ապրումն այդ բոպեին։ Նա զգում էր, որ Լևոնը սիրում է իրեն և որ նա հեռու լինելով իրենից՝ չի սառել, չի մոռացել իրեն։ Բայց Մարոն վեր կացավ և գնաց դեպի պատուհանը։ Ապա հենվելով պատուհանի գոգին դարձավ դեպի Լևոնը.

— Գիտե՞ս ինչ, Լևոն։ Ես քեզ շատ լավ եմ հասկանում։ Դու չես կամենում ինձ ստիպել, որ գամ քեզ մոտ։ Բայց դու կկամենայիր, որ ինքս իմ կամքով գայի։ Բայց և այն մտածիր, Լևոն, որ Սանդրոյենց ընտանիքը կապված է ինձ հետ, որ վերջապես ես չեմ կարող որևէ կերպ վիրավորել մայրիկին։ Նա ինձ խնամել է իր հարազատ զավակներից ավելի։ Ես պարտավոր եմ նրա տանը լինել, նրա ծերության օրերում։

— Հասկանում եմ, հասկանում, Մարո,— աշխույժ ու ջերմ բացականչեց Լևոնը,— մենք զուր ենք երկարացնում։ Մարդկայինը ուժեղ է, և այնքան ուժեղ, որ նրա առջև ոչինչ են դառնում հարազատի անցավոր զգացումները։

Ներս մտան Սանդրոն և Նինան։ Նրանք հոգնել էին զբոսանքից, բայց գոհ էին և ուրախ։

* * *

Երեկոն մարում էր Աբարատյան դաշտում, Երևանի վրա իջնում էր խաղաղ գիշերը։ Քանաքեռի խճուղով բարձրանում էին Սանդրոն ու Մարոն — մյուս քույրն ու եղբայրը, որ խորթ էին եղել, իսկ հիմա հարազատ էին։

Սանդրոն ուզում էր Մարոյին հարցնել մի բան, բայց ուշացնում էր։ Ներքևում ծփում էին հազարավոր լույսերը՝ սովետական կյանքի լույսերը։ Մայրաքաղաքը թրթռում էր երիտասարդ ու գեղեցիկ կնոջ նման, իր ժպտուն զարդարանքների մեջ։ Այդ լույսերը

երբեմն խմբված, երբեմն նոսր, երբեմն էլ այնպես էին հեռանում, մի, կամ զույգ գծերով, որ կարծես անհերևույթ մի ձեռք կրակե թելեր էր քաշում դաշտի միջով։

— Գեղեցիկ է,— ասաց Սանդրոն։

— Գեղեցիկ է,— պատասխանեց Մարոն խորասուզված իր մտքերի մեջ։

Սանդրոն անցավ բուն նյութին.

— Մարո, դու պիտի մնաս եղբորդ մոտ։

— Ո՞ր եղբորս,— հնչեց մեղմաձայն կատակը Մարոյի ձայնի մեջ։

Սանդրոն աշխուժացավ։

— Հարազատ եղբո՛ր։

— Իմ եղբայրներս հարազատ են,— երկին կատակեց Մարոն։

Սանդրոն կարծես հանգստացավ։

Բայց էլի սպասում էր ավելի որոշ պատասխանի։

— Սանդրո,— խոսեց մի փոքր հետո Մարոն լրջությամբ և վճռական ձայնով,— դու ավելի լավ գիտես, թե ինչ եմ զգում ես և կամ ինչ կանեմ ես։ Ի՞նչ բացատրեմ քեզ, մի՞թե հասկանալի չէ, որ կան բաներ...

— Այո, կան բաներ,— ընդհատեց Սանդրոն,— որ ես, դու, Լևոնը, Նինան, Վազգենը և ամենքս նոր ենք զգում, նոր ենք հասկանում։ Դա եղբայրական զգացումն է, որ տածում է ազնիվ մարդը մարդուն, որը վեր է ընտանիքից, ցեղից, երկրից, լեզվից, գույնից։ Դա ես հիմա եմ հասկանում այնքան պարզ, որ...

— Այո՛, այո՛, այնքան պարզ որ,— վրա բերեց Մարոն,— ես վերադառնում եմ մայրիկի մոտ։

— Իսկ Լևո՞նը...

— Լևոնը կգա մեզ մոտ, մենք Լևոնի մոտ։

Մարոն փաթաթվեց Սանդրոյին և համբուրեց նրան։

Սանդրոն հանգստացավ։ Միաժամանակ զարմացավ, թե որքան ուժեղ էր եղել իր մեջ սերը դեպի Մարոն։

— Հազար նախապաշարումներ փշրվեցին այստեղ, Մարո,— ասաց Սանդրոն։

— ... — Նախապաշարումներ, որով լիքն են՝ շատ մարդիկ, թե՛ այնտեղ մեզ մոտ և թե՛ այստեղ, անշուշտ։

Ներանք լռեցին։ Համաձայն էին և ուրախ։

Իսկ ներքևում երիտասարդ քաղաքը ծաղկում էր լույսերի մեջ։

* * *

Երկու ավտո թռչող կոկորդիլոսների պես սուրում էին դեպի Սևան, դեպի լեռները։ Հետևում Արարատյան դաշտն էր, ձախում՝ Զանգվի անդունդները, որոնք նույնպես սողում էին դեպի լիճը։

Հյուրերը վերադառնում էին տուն։ Հրաժեշտը՝ Սևանի կղզում։ Ահա մի բլուր ևս ու մոնումենտալ. դրամատիկ բացվեց Սևանի հայելին, լույսերի անդունդը։ Երկնակապույտ էր նա դույնով և հստակ ջրով։ Ափերի լեռները կորչում էին երկնքի և լճի կապույտի մեջ։ Նստեցին նորաձև բարկասը և մտան կղզին։ Հինավուրց վանքերը քնել էին իրենց պատմության մեջ։ Կղզին՝ վանականների լռակյաց աքսորավայրը, զնգում էր իր՝ սանատորիայի հանգստացողների ու տուրիստների երգերով, կանչերով։ Բարձրացան բլուրը, նստեցին ժայռի ափին, ջրերի վրա...

* * *

Ուրախ հյուրասեղանը, սուփրան փռած ծաղիկների վրա, ծաղկել էր նրա շուրջը բոլորված երիտասարդներով։ Հայաստանի ոսկե գինին, Սևանի երկնակապույտը, լեռնային թեթև օդը և հրաժեշտի թախծալի թրթիռը խոսեցնում էին, երգել տալիս սեղանակիցներին։

Սանդրոն և Մարոն, ինչպես Նինան և Լևոնը տարբեր ու խոր հուզումների մեջ էին։ Լևոնը մնում էր իր նոր հայրենիքում, Մարոն վերադառնում էր իր նոր հայրենիքը, Սանդրոն թողնում էր նոր եղբորը, Նինան սիրել սկսեց իր նոր եղբորը...

Վեր կացավ Լևոնը։

— Սիրելի Մարո, սիրելի քույրս, մենք կորցրինք մեր հին հայրենիքը, գտանք նոր հայրենիքներ։ Գնում եք դուք եղբայրական Վրաստան, բայց մենք չենք բաժանվում ո՛չ քեզնից, ո՛չ Սանդրուից, ո՛չ Նինայից, ինչպես և մենք բաժան չենք ամբողջ Միության ժողովուրդներից։ Հայրենիքը մեր մեջն է, Միության ժողովուրդների մեջ։ Սիրենք մեր մեծ հայրենիքը՝ Միությունը, սիրենք

մեր փոքր հայրենիքները՝ Հայաստանը, Վրաստանը, սիրենք մեր աշխատանքի և ստեղծագործության վայրերը՝ մեր հայրենիքը։ Ամենքի հայրենիքը՝ ամենքիս հայրենիքն է։ Գնաք բարով, սիրելիք։

* * *

Մի տասնհինգ րոպե անց՝ ավտոն դողաց, ցնցվեց և թռավ։ Երկու քույր, երկու եղբայր բաժանվեցին՝ շուրթերի վրա պահած ջերմ համբույրների քաղցրության զգացումը։

ՆՈՐ ՊՈԵՄ

Նրան՝ Հայրոյին, միշտ կարելի էր տեսնել դիսպուտներին։ Ավելի շատ գրական դիսպուտներին։ Անխուսափելի հյուր էր նա, և ամենքի աչքին սովորական մի կերպարանք։ Եվ իր տեղն էլ ուներ դիսպուտների սրահում — ամենավերջինը։ Կնստեր, մեջքը ուղիղ պատին կպցրած և անշարժ կնայեր դեպի ամբիոնը։ Կդիտեր խանդավառված։ Նրա երկարավուն, արծվաքիթ և բերանաբաց դեմքին մի մշտական ժպիտ կար։ Զարմանալի ժպիտ ահա հենց նոր բացվող մի ինչ-որ շատ հետաքրքրական տեսարանի առջև։

Համբերությամբ, ներողամիտ հետևում էր բոլոր գրողների կրքոտ բանավեճերին։ Հարգում ու կարեկցում էր ամենաթույլ գրողին անգամ։

Նա գրախանութների մշտական հաճախորդն էր, նրան կարելի էր տեսնել ընթերցարաններում, գրադարանապետների կաբինետներում, վերջին, դեռ նոր լույս տեսած գիրքը ձեռքին։

Ամենատեղյակ ընթերցողն էր։ Ջանադիր պրպտում, ուսումնասիրում էր ամենահամեստ մի բանաստեղծի գործերը, կարդում խորասույզ, հարգանքով։

Շատերին այնքան էր պատահել ամեն տեղ, որ ծանոթ էր կարծվում։ Բարևում էր բոլորին, բարևն առնում էին բնական ձևով։ Միայն երբեմն մեկն ու մեկը մի փոքր հետաքրքրված՝ հարց էր տալիս։

— Ո՞վ է սա...

Այս հարցը մնում էր համարյա անպատասխան, որովհետև ոչ ոք նեղություն չէր կրում իմանալու Հայրոյի իսկական զբաղմունքը։ Այնքան ամեն տեղ տանու մարդու պես աչքի առաջ էր լինում միշտ, որ մի տեսակ հատուկ տեղ էր գրավում դրողների շրջանում։ Այսինքն՝ որ նա էլ «հենց այնպես մի երիտասարդ է»,

որի գերն այդ է. ներկա լինել դիսպուտներին։ Նրա զբաղմունքի մասին այդպես էլ չհարցրին։

Թվում էր, թե նա չունենալով ստեղծագործող գրողի սեփական բախտը՝ ապրում էր ուրիշների բախտով։

— Հասարակությունը եկել է, սկսենք,— կատակում էին գրողները նայելով դահլիճը և տեսնելով միայն Հայրոյին, որ ամենից առաջ եկած էր լինում և նստած իր տեղը՝ հետին շարքերում։

— Ոչ մի ընթերցող էլ որ չունենանք՝ Հայրոն բավական է,— ասում էին նրանք, միաժամանակ մի ինչ-որ ներքին համակրանք զգալով դեպի այդ ջերմեռանդ ընթերցողը։

Հայրոյի դպրոցական ընկերները նկատելով նրա սերը դեպի գրական երեկոները՝ մեկ-մեկ իրենք էլ գալիս հետևում էին։ Բայց երբեմն էլ քաշ էին տալիս Հայրոյին.

— Գնանք կինո, հերիք է ինչ լսեցինք։

Հայրոն մերժում էր, դուք գնացեք։

— Է՛, ի՞նչ է, բանաստե՞ղծ ես դառնալու, գնա՞նք։

Հայրոն ծանր քարի պես մնում էր տեղում։

Մի օր էլ գրողներից մեկը Հայրոյին ասաց.

— Եթե ձեզ չափ ես էլ մասնակցեի այս գրական երեկոներին՝ ես էլ գրող կդառնայի։

— Ապա գրող չեք, ի՞նչ եք,— վերադարձրեց կատակը Հայրոն։

— Ձեզ պես գրական հասարակություն։— Հետո լրջությամբ ու մեղմ թախիծով ավելացրեց,— դժվար է գրելը։

Հայրոն գնաց տուն և երկար մտածեց այս խոսքի վրա։ Երկար ժամանակ նստած իր գրասեղանի առաջ խորասուզվել էր ինչ-որ մտքի մեջ և խորամանկ ժպտում էր։

— Չէ, զուր է այդպես ասում,— վճռեց Հայրոն և թափ տվեց այդ մտքերը՝ պետք է գրել։

Վեր թռավ, ձեռքերը տրորեց, անցուդարձ արավ սենյակում, հետո մոտեցավ սեղանին և գզրոցից հանեց մի հաստ տետրակ։ Կարդաց մի քանի էջ և գրիչը վերցրեց։

Մի օր էլ, երբ թերթի խմբագիրը ներվային ձայնով հեռախոսում էր տպարանի աշխատողի հետ, որը հինգերորդ անգամը ուղարկել էր էլիշները՝ Հայրոն դուռը կամացուկ բացեց և գիրքը

ներս տարավ սենյակ։ Խմբագիրը, որ սովոր էր դռների այդ հավիտենական բացուխուփին՝ անգամ վեր չնայեց։

Այն ժամանակ Հայրոն կիսովին ներս մտավ։

— Կարելի՞ է,— հարցրեց։

Խմբագիրը վեր նայեց հոգնած ու մշուշային հայացքով.

— Հա, ի՞նչ կա...

Խմբագիրը նայեց Հայրոյի ձեռներին, և մի տետրակ տեսավ։

Հայրոն հանցավոր ժպտով նրա առջևը դրեց տետրակը։ Նրա մշտական հիացողի աչքերում ինչ-որ մի երկյուղ կար և հույս միաժամանակ։

Բայց...

— Ահա սա է... ես ունեմ և ուրիշները։

— Սա՞ ինչ բան է,— հարցրեց խմբագիրը, որ լավ գիտեր թե ինչ է։

— Սա... նախկին գրածներս չէ, իհարկե... այն առանձին կբերեմ... դեռ մշակում եմ։ Սա վերջին երկու տարվանն է, որ...

Խմբագիրը նայեց տետրակին, հետո Հայրոյին և կրկին տետրակին։ Բթամատով բաց արեց մի էջը։ Սյունաձև գրությունը մատնեց բանաստեղծության ներկայությունը։ Հայրոն ճմրթված ժպիտով նայեց խմբագրին։

— Բանաստեղծություն է,— խոստովանեց նա հանցանքի նման և սպասեց։

Խմբագիրը շուռ ու մուռ տվեց տետրակը, կարդաց մի քանի տող.

«Խորին բնության ժպիտը
գունավոր,
Նրանք թռչում են մտքեր
թևավոր»։

. . . . . .

«Կյանքը բազմագույն ծաղկանց
մի պարտեզ,
Ծաղիկների հետ մտորում եմ
ես...»

— Նստեցեք,— ասաց խմբագիրն այնպիսի մի ձայնով, որ դուշակում էր պարզապես ձեռնարկության հետևանքը։ Այսինքն

թե՝ «ի՞նչ անենք, պարտավոր ենք կարդալ, թեև սկզբից ասենք՝ գրածդ անարժեք բան է»։

Հայրոն նստեց և խանդակաթ ծնողի նման, որ սպասում է իր զավակի քննություն բռնելուն՝ անձկալի ժպիտով սպասեց խմբագրին։

Սա մտավ իր դերի մեջ։ Եվ սկսեց... Երկար էր բացատրությունը, թե ինչու անհաջող էր բանաստեղծությունների այս շարանը։ Հայրոն լսում էր հուսալից անձկությամբ։ Գուցե հույսի մի նշույլ, մի փոքրիկ պատուհան բացվեր դեպի բանաստեղծության աշխարհը...

Ոչ մի հույս։ Հայրոն պետք է կամ թողնի բանաստեղծությունը կամ շատ աշխատի։

— Ես շատ եմ աշխատում, ընկեր Մարգարյան։ Այդ կողմից կարող եմ ասել...

— Այո, բայց...

Հեռախոսը զանգեց։ Խմբագիրը դժկամ վերցրեց լսափողը.

— Հը՛... հը՛... ալլո՛...

Ոչ ոք չէր խոսում լսափողում։ Խմբագիրը թափով տեղը դրեց այն և եզրակացրեց.

— Պատկերները բռնազբոսիկ են... մաշված... տաղաչափությունը վատ է... մարդկային կյանքը կորցրել եք բնության մեջ, փիլիսոփայություն եք անում։

Հայրոյին թվաց, որ խոսակցությունը շատ էր չոր, շտապ, գործնական։ Իսկ նա այնքան բաներ ուներ անելու...

Մի ամբողջ աշխարհ։

Եվ իրոք, քանի տանն էր, գրում էր ինքն իր համար՝ հորիզոնը պարզ էր, և մտքերը թռչունների պես սլանում էին։ Հայրոն իր տանը կախարդի էր նման։ Նրա կամքի ամեն մի հրամանով դաշտը լցվում էր կրակե ծաղիկներով, աստղերը ադամանդներ էին շարում երկնակամարի վրա, մարդը ժպտում էր աշխատանքի հաճույքից։ Իր տանը ամեն բան դյուրին էր, թռչում էր Հայրոն իր մտքերի, հույզերի հետ։

Իսկ այստեղ... Մտախոհ և խիստ խմբագիրը ահա գրչի հարվածներով կտրտում է իր տողերը և գտնում է անկյանք, սխալ, անճոռնի։

— Ուրեմն հաջող չէ՞,— վախով հարցրեց Հայրոն։

— Ո՛չ, և բանն այդ չէ։ Իհարկե հաջող չէ։ Բայց խնդիրն այն է, որ հույս էլ չկա, թե դուք կարո՞ղ եք բանաստեղծություն գրել երբևէ...

— Մի՞թե...— կակազեց Հայրոն...

Խմբագիրը ժպտաց և այս անգամ բարեկամորեն.—

— Իհարկե՛, ընկեր... Սա է, որ ինձ այս բոպեիս զբաղեցնում է։ Քանի որ, եթե այս անգամ հաջող չէ, թերևս ուրիշ անգամ հաջողվեր... Բայց...

Կրկին ժպտաց և ներողամիտ նայեց Հայրոյի աչքերի մեջ.

— Դետք է թողնեք այս գործը։

Այսպես կտրեց Հայրոյին և թողեց ինչ-որ դատարկ տարածության մեջ։ Հայրոն հիմարավուն ժպիտով նայեց խմբագրին և մի վերջին ճիգ արեց.

— Մի՞թե ոչ մի կտոր ձեզ դուր չի գալիս։

Խմբագիրը նեղացավ.

— Դե էլ ի՞նչ կարող է դուր գալ։ Ահա մի կտոր.

«Ոգևորունչ կյանքը բխում է
ամենուր
Եվ խոտից և ամեն կենդանի
շնչից,
Կյանքը ամենուր է, և իմաստ կա
խոր
Ամեն տենչի մեջ՝ որքան էլ չնչին»։

— Ո՞ւր է այստեղ տաղաչափություն, ո՞ւր է հանգ... Ոչինչ չկա։ Հետո՝ ընդհանուր, վերացական մտքեր կյանքի մասին։ Մի խոսքով անհաջող է։

Խմբագիրը ետ մղեց տետրակը դեպի Հայրոն և հառաչեց այս ձեռնարկության ծանր բեռից։ Դժվար էր համենայն դեպս հուսահատեցնել մի երիտասարդի, որ միամտորեն մտել էր բանաստեղծության ծաղկանոցը, չիմանալով, որ դա իր տեղը չէ։

Հայրոն վերցրեց տետրակը, որ մինչ այստեղ բերելը մի կենսաթրթիռ թռչուն էր, բայց որը սպանվեց և թևերը կախեց։ Նա դուրս եկավ սենյակից և բերանը բաց, սպանված դուրս եկավ փողոց։ Մարդիկ հիմա պարզ ու հասարակ էին, ոչ այնպես հանդիսավոր՝ ինչպես մի փոքր առաջ։ Հայրոն ուզեց տուն վերադառնալ, բայց զգաց, որ նա էլ դատարկվեց։ Այս երիտասարդ մարդը, որին ոչ ոք չէր ճանաչում իբրև բանաստեղծ և որին բացի իրենից և մի փոքր առաջ՝ կոնսուլտանտից՝ ոչ ոք չէր կարող կըշտամբել վատ բան գրելու պատճառով՝ մեծ հարված ստացած մարդու պես գնաց փողոցնիվայր, հիասթափված սրտով։ Նա զրկվեց մի մեծ հարստությունից, որի տերն էր մի կես ժամ առաջ։ Պոեմը գրել էր նա մի տարի առաջ, մշակել երկար գիշերներ։ Դրա համար նա ունկնդրել էր տասնյակ գրական դիսպուտներ, կարդացել էր համարյա բոլոր գրական կլասիկներին։ Ճամփին դեռ երկար ժամանակ սառչում էր Հայրոյի դեմքին այն հիմարական ժպիտը, որ նրան այդ երկու-երեք տարին դարձրել էր ծիծաղելի, անլուրջ, անշնորհք մարդ ընկերների աչքում։

Նա գնաց քաղաքից դուրս, շրջեց դաշտերում և ուշ երեկոյան վերադարձավ տուն։

Խորապես դառնացավ Հայրոն։ Մի քանի օր խելքի չէր գալիս։ Եվ չէր էլ սպասում, որ այսպես վատ կազդի իրեն անհաջողությունը։

Մի քանի օր անց նա ուշքի եկավ. սկսեց սփոփել իրեն։ Միաժամանակ զգաց ինչ-որ ներքին մղում, դիմադրել, փորձել նորից։ Եվ կարծես այս նոր վճիռը Հայրոյին սփոփեց։ Նա անցավ աշխատանքի։ Նոր անհաջողության հեռանկարները նրան չվախեցրին։ Շատ էր ուժեղ նրա մեջ ձգտումը ստեղծագործության։ Անմեկնելի մի հաճույք, երանության հասնող մի զգացում նրան քաշում էր դեպի այդ ստեղծագործության աշխարհը։ Շատ էր այդ հրապույրը գայթակղիչ և արդարացի, իրավունք ուներ նա արտահայտվելու։ Բոպեներ էին լինում, երբ Հայրոն անգամ զարմանում էր, թե ինչո՞ւ իրեն մերժեց կոնսուլտանտը։ Ինչպե՞ս կարելի է մերժել այսպիսի ուժեղ, հիմնական, գեղեցիկ մի ձգտում՝ ստեղծագործել, անվերջ ստեղծագործել։

Նայում էր Հայրոն իր շուրջը, և ամեն առարկա, երևույթ քաշում էր նրան ինչ-որ մի վսեմ խորհուրդով։ Նրա աչքին ամեն մի բան ստեղծագործության պրոցես էր տպրում։ Մութը, որ աճում էր, տունը, որ կառուցվում էր, մարդիկ, որ շարունակ հոսում էին փողոցներում, գործարանների հեռավոր շչակի ձայնը, ավտոների հպճեպ վազքը նրա համար անվերջ ու անխափան ստեղծագործության պրոցեսներ էին. Հայրոն ուղղակի տեսնում էր, շոշափում այդ։ Եվ ժամերով կգնար փողոցն ի վեր, դեպի բլուրը, կբարձրա-

նար մի ժայռի վրա և այնտեղ նստած կսկսեր ունկնդրել սոցիալիստական քաղաքի, թանձր, բազմաձայն սիմֆոնիան։ Ու քանի երկար էր ունկնդրում, այնքան ավելի մոտ, ավելի շոշափելի զգում էր իր համար հաճելի, կրքի չափ անդիմադրելի մի բան։

— Քաղաքն է, ստեղծագործվում է ամեն րոպե,— մտածում էր նա։

Եվ հանկարծ մղվում էր կատարելու մի շարժում, որ անդիմադրելի ուժով խաղում էր իր մեջ։ Ձեռը գնում էր... գրելու։ Մտքերով ու զգացմունքներով լեցուն, ծանրաբեռն՝ Հայրոն միայն այդ կերպ էր կարողանում գտնել դրանցից ազատվելու ելքը՝ գրելը։

Եվ գրում էր։

Եվ ահա այստեղ էր, որ տեղի էր ունենում ամեն սկսնակի ողբերգական սխալը։— Ոգեշնչված շարում էր բառերը բառերի հետևից և չէր հոգում նկատելու, թե իրո՞ք այդ բառերն այն մտքերն են և զգացմունքները, որ այրում են իրեն։

Հայրոն գրեց մի նոր պոեմ։ «Քաղաքը լցված է շնչով» — այսպես էր սկսվում պոեմը։ Եկել է նոր մարդը և ամենուրեք լցնում է ստեղծագործության ուրախությունը։ Ազատ է այդ մարդը, նրան ոչ ոք չի շահագործում. նա բաց է արել իր միտքը և մտածում է մի բան միայն՝ լցնել աշխարհը հրաշքներով։

Հայրոյի դպրոցական ընկերները, որոնք չգիտեին, թե ինչ սիրով է զբաղվում նա գրելով՝ ծիծաղում էին նրա երազկոտ մտքերի վրա։ Դրա համար էլ Հայրոն նրանց ցույց չէր տալիս իր գրվածքները։

Բայց մի օր, ինչպես եղավ, երբ Հայրոն գյուղից պաշար էր ստացել և ընկերները հավաքված էին նրա համարյա դատարկ սենյակը «քեֆ» անելու. ընթրիքից հետո Հայրոն հանկարծ վեր թռավ և ծառանալով սեղանի մեջտեղ՝ հայտարարեց, որ ուզում է կարդալ իր նոր պոեմը։

Ընկերները չքաշվեցին հենց սկզբից կատակախառն ծաղրանքներով դիմադրելու Հայրոյի բանաստեղծական կարիերային։

— Այ սղա, էլ՝ սկսեցի՞ր։

— Ձեռ չես քաշում, էլի՞։

— Լավ, լավ, կարդա, միևնույն է...

Հայրոն ծիծաղելով, բայց ներքուստ հուզվելով սկսեց կարդալ իր «Քաղաքը լցված է շնչով» պոեմը։

Նա կարդում էր ոգևորված, մեծ սիրով։ Նրան թոցնում էին տողերը։ Պատկերներով էին լցվում փողոցները, տները, մարդիկ մեծախորհուրդ մի ցնծությամբ կերտում էին սոցիալիստական քաղաքը, մուրճերը զնգում էին, գնացքները դղրդում, ամբողջ քաղաքը եռում էր ստեղծագործական ջերմով բռնված...

Երբ վերջացրեց՝ ընկերներից մեկը մոտեցավ և ձեռքի թաթը լայն բաց արած բամփեց Հայրոյի գլխին։

— Այ մեռնե՞ս դու ոչ, Հա՛յրո,— գոչեց նա անկեղծորեն ու սիրով,— մի՛ գրի, մի՛ գրի, մի՛ գրի։

Հայրոն կարմրեց, հուզված ժպտաց և հարցրեց.

— Ինչո՞ւ, վա՞տ է։

Ընկերը նորից բամփեց նրա գլխին։

— Հա՛, հա՛, է՛, հա՛,— մի՛ գրի, մի՛ գրի։

Մյուսները ծիծաղեցին և կատակով սկսեցին քաջալերել Հայրոյին։

— Ինչո՞ւ, այնքան էլ վատ չէր։

— Կարծես մեջը միտք կար։

— Կարծե՞ս, բայց ո՞ւր է միտքը։

Հետո սկսեցին իրար գզգզելը։ Ոմանք գտնում էին, որ Հայրոն պետք է թողնի ծիծաղելի փորձերը, որ նրանից բանաստեղծ չի դուրս գա։ Մյուսներն էլ նշում էին պոեմի մեջ ինչ-որ մտքեր, որոնք հուզում են կարծես։ Բայց թե ի՞նչն է իրենց հուզում, որո՞նք էին այդ մտքերը՝ նրանք չկարողացան ասել։

Հետո վեր կացան և հեռացան։

Հայրոն դուրս եկավ նրանց հետևից, գնաց դեպի այգին։ Նա անբավական էր, տխուր, կոտրված։ Նստեց այգում և մթության մեջ երկար նայում էր մի կետի։ Նրա դեմքին այս անգամ սառչում էր մի հիմարական թախիծ։ Անհաջողակի թախիծը։ Բայց այդ թախծի հետևից, նրա աչքերի խորքում լուրջ սևեռվում էր մի անբացատրելի, համառ միտք։

Հայրոն չէր ուզում պարտվել։

***

Հայրոյի նկրտումները դեպի բանաստեղծական կարիերան շուտով դարձավ քաղաքի երիտասարդության սեփականությունը։

Արդեն շատերն էին ծիծաղում նրա վրա։ Հայրոն շուտով հայտնի դարձավ ամենքին՝ շնորհիվ իր անշնորհքության։

Մի բան Հայրոյին փրկում էր։ Անսահման բարի և ներողամիտ բնավորությունը։ Նա ինքն էլ երբեմն մասնակցում էր այդ ծիծաղին։ Սա փարատում էր ընկերների զայրույթը և ցրում այն կասկածը, թե Հայրոն մեծամիտ է կամ փառասեր։

Բայց ընդհանուր շրջապատում Հայրոն ծաղրանքի առարկա էր դառել։ Այդպես էր անհաջող «բանաստեղծի» ճակատագիրը։ Հայրոն այդ գիտեր և այնքան էլ չէր դառնանում։ Նա ավելի շուտ իրեն էր մեղադրում, քան ուրիշներին։

Բայց չէր կարողանում հրաժարվել գրելու «ախտից»։ Գրեց երրորդ պոեմը։ Գրեց վճռական շեշտով և նոր վերջացրած՝ տարավ մի ուրիշ թերթի խմբագրին։ Տեսակցությունը կարճ տևեց։ Խմբագիրը շատ քաղաքավարի մերժեց տպագրել։ Բայց մի բան աղդեց Հայրոյին։ Դա խմբագրի բացատրությունն էր.— շատ հանգամանալից, խորը և խելացի։ Նա ամեն տեսակ ստուգումներով բացատրում էր, թե ինչու է պոեմը անհաջող, ցույց էր տալիս օրինակներով և ապա հարցնում էր Հայրոյին, թե ինչ է ուզեցել ասել այս կամ այն կտորում։

— Տեսնում եք, դուք ուրիշ մտքեր ունեք և այլ բաներ եք գրում։

Հայրոն մտածեց.

— Մի՞թե...

— Ապա ի՞նչ,— ժպտաց խմբագիրը ընկերական հեգնանքով,— դուք աչքի առաջ ունեք շատ լուրջ և հետաքրքիր դաղափարներ, բայց չունեք ոչ մի միջոց այդ բոլորն արտահայտելու։

Հայրոյին հաղթահարում էր խմբագրի բարի, ընկերական զրույցը։

Եվ երբ խմբագիրը տետրակը փակեց ու մեկնեց դեպի Հայրոն՝ նա զգաց, որ ինչ-որ մի թել, շատ թանկագին թել կտրվեց իր և տետրակի միջև...

Հայրոն բանաստեղծ չէ։ Սա ճիշտ է և ապացուցված էր հենց սկզբից, բայց այս խմբագիրը ինչ-որ գտավ հնարը այդ հասկացնելու Հայրոյին։

— Այդպես, չեք կարողանում,— կենքեց իր խոսքը խմբագիրը և մեղմ ու բարի ժպիտով նայեց Հայրոյին։

Այդ ժպիտի մեջ կար և սեր դեպի մարդը, և ափսոսանք, որ սա չի հաջողել, և մի տարտամ հույս... Բայց ի՞նչ հույս, նորի՞ց գրելու, նորի՞ց փորձելու։ Ո՛չ։ Այդ չէր կարելի հուսալ խմբագրի ոչ մի բացատրությունից։

Տիրեց ծանր լռություն, երբ հայտնի է դառնում, որ մեկը մեռնում է և ոչ մի հույս չկա։ Չգիտես ինչու՝ Հայրոն համոզվեց այս անգամ, որ ինքը գրելու շնորհք չունի։ Եվ սթափ ու տխուր նայեց խմբագրին։ Սա մտախոհ էր սակայն։ Կարծես մի բան ուզում էր անել, գոնե ասել։ Եվ դա ճիշտ էր։ Խմբագիրը ետ նայեց, նայեց Հայրոյի աչքերին և մի իմաստուն շեշտով ասաց.

— Դուք ուրիշ բան կարող եք դառնալ։ Ինչո՞ւ միայն բանաստեղծ եք ուզում։ Ստեղծագործությունը անսահման է և ամեն բանի մեջ։— Փորձեցեք ուրիշ բան, գտեք ձեր մեջ ձեր մարդը։

Հայրոն վեր կացավ, մեղմակի գլուխ տվեց, շնորհակալ եղավ քրքմնջալով և դուրս գնաց խմբագրի մոտից։

Երեխայական հույս... Նրան թվաց թե խմբագիրը ետ կկանչի, խորհուրդ կտա մի նոր պոեմ փորձել, հանկարծ կզգա, որ սխալվել է։ Ախր, չի կարելի արմատից կտրել մարդուն։

Ո՛չ, խմբագիրը ետ չի կանչում։ Վերջացավ։ Հայրոն բանաստեղծ չէ։ Այդ էին ասում բազմաթիվ անցորդների սառն ու անտարբեր հայացքները, որ ընկնում էին իր վրա։

Ո՞ւր գնա... կարծես գնալու և ոչ մի տեղ չմնաց։ Կյանքը կարծես դատարկվեց Հայրոյի շուրջը։ Նոր զգաց Հայրոն, որ նրա մեջ կտրեցին բանաստեղծության ձգտումը։ Զգաց, որ գրելու սերը դեռևս քիչ է գրելու իրավունք ձեռք բերելու համար։

Եթկար շրջելուց հետո գնաց տուն։ Դուռը բաց էր։ Երբ ներս մտավ՝ տեսավ իր քրոջը, որը գյուղից եկել էր նրան այցելության։

Առաջին իսկ հարցուփորձը սթափեցրեց Հայրոյին։ Քույրը կարծես կյանքի իրականությունն ինքը լիներ։ Նա հաշիվ էր պահանջում։

— Լավ, գործդ ավարտեցիր, հիմա ի՞նչ ես անելու։

Իսկապես... Բանաստեղծ դառնալ չհաջողվեց, դա պարզ է։

Մինչև կեսօր քույրը մնաց եղբոր մոտ, խոսեցին գյուղի անցուդարձից։ Էլեկտրականն են կառուցում, ջուր են բերել սարից։ Քսան ընտանիք արդեն նոր, գեղեցիկ տներ են կառուցել։ Կամուրջը նորոգել են։ Գյուղը փոխվել է...

— «Այնտեղ էլ է կյանքը շարժվում»,— մտածեց Հայրոն։

Եվ նայեց քրոջը։

— Իսկ դու ի՞նչ ես անում։

— Ի՞նչ. գյուղխորհրդի նախագահության անդամ եմ,— պատասխանեց քույրը պողպատի ձայնով, կարծես կռվի է դուրս եկել,— բա ի՞նչ, գործ պետք է անել։ Իսկ դու պարապ վեր ես ընկել քաղաքում։ Կամ մի բան դառիր, կամ եկ գյուղ։ Գործ շատ կա, մարդու կարիքը մեծ է։

Հայրոն ընդունեց, որ քույրը ճշմարիտ է ասում, բայց սիրտը կոտրված էր — լռեց։

Քույրը վեր կացավ գնալու։

— Ո՞ւր, ի՞նչ կա։

— Գնամ ապակի ու մեխ առնեմ ու հենց այսօր էլ՝ գյուղ։

— Մնա այս գիշեր,— ասաց Հայրոն անկամ ու աննպատակ։

— Ո՛չ, վաղ առավոտ զեկուցում ունեմ սերմերի պահպանության մասին։

Հայրոն չստիպեց։

Սենյակի անկյունում մի բան կչկչաց։ Չորս վառեկներ էին, ոտքերը կապած։

— Սա էլ մայրիկն ուղարկեց, վաղը մորթիր։

— Է, ո՞վ գլուխ ունի,— դժկամ ձայնով ասաց Հայրոն։

— Դե, դու գիտես,— վճռեց քույրը և մնաս բարով ասելով դուրս եկավ՝ ծուռ-ծուռ նայելով Հայրոյի սենյակի անկարգությանը։ Սանդուղքի գլխին կրկին կանգնեց և Հայրոյի աչքերի մեջ նայելով ասաց.

— Պարապ մի մնա, կամ այստեղ մի գործի մտիր, կամ եկ գյուղ։

Հայրոն ժպտաց, և աչքերը քնկոտ, կիսախուփ նայեց քրոջը։

Քույրը գնաց։ Հայրոն մտավ սենյակ, նայեց վառեկներին, ուսերը թոթվեց և գնաց ընկավ անկողնի վրա։

Զարդված էր հոգեպես։ Ուզում էր մարմնական հանգստությամբ մեղմել ներքին հույզերը։ Ուժեղ ապատիա եկավ վրան, որը փոխվեց ինքնաձաղկման ինչ-որ անհասկանալի հաճույքի։

Ուրեմն նոր կյանք... Բայց Հայրոն դեռ շատ էր հեռու այդ նոր կյանքի զգացումներից։ Դեռ կարիք էր զգում, որ բոլորովին մեռնի իր մեջ այն, որ վիրավոր էր դեռ։ Նա այժմ չէր կամենում

վերակենդանացնել այն բանը, սպասում էր նրա ոչնչացմանը։ Հայրոն այլևս կապված չէր նրա հետ, հույս չկար նրանից։ Բայց Հայրոն զգում էր, որ թեև դա մեռնում է իր մեջ, բայց մի ուրիշ զգացում մնացել է անկոտրում, կենդանի։

Ի՞նչ էր այդ... լոկ դատարկ ապրելո՞ւ տենչը, թե՞ ուրիշ բան։ Հայրոն չգիտեր։

Ուշ երեկոն սկսում էր խորանալ, գիշերը դեռ նոր էր թանձրանում, որ Հայրոն քնեց։ Սենյակը մութն էր և միայնության լռությունը պարուրել էր մտախոհ երիտասարդին։ Ոչ ոք չէր կարող իմանալ, թե որքան խորն էր ազդել նրան անհաջողությունը...

Կեսգիշերին Հայրոն զարթնեց, և զարթնեց միանգամից, լրիվ, եվ առաջին միտքն այն եղավ, որ իրեն մերժել են, ինքն այլևս բանաստեղծ չէ։ Իհարկե, նրան ոչ ոք բանաստեղծ չէր կոչել, և դա նրան այնքան չէր ազդել, քանի որ ինքն էր իրեն կոչել բանաստեղծ և զգացել էր բանաստեղծության շունչը։ Իսկ հիմա ինքն էլ էր օտարացել իրեն, ինքն էլ էր միացել ուրիշներին։

Այո, Հայրոն բանաստեղծ չէ...

Թութ, անձև, տարտամ մտքերը գալիս են անցնում տոթ գիշերի ամպերի նման։ Լռություն էր սենյակում։

Հայրոյի պատուհանից ներս էր նայում դուրսը ծավալվող գիշերը, իր անորոշ, բազմաձայն շշունջներով։ Հայրոյի համար այդ պատուհանից անմիջապես դուրսը ոչ թե հասարակ փողոցն էր կամ քաղաքը, որ քնած էր, այլ աշխարհը, և այդ շշունջը քնած երկրի, մարդկության շնչառությունն էր։

Կարծես դա երկրագնդի հևքն է տիեզերական իր թոիչքի մեջ։ Քեզ զգում ես երկրի վրա պառկած, մի երկրի, որ շարժվում է, գնում։ Զգում ես նրա տատանումը, ռիթմը։ Հայրոն ունկնդրում էր այդ գիշերային ձայներին, ապրում էր այդ բոլորը։ Նա ուներ այդ սովորությունը, սիրում էր անքուն գիշերը։ Անդիմադրելի կրքով նա նետվում էր գիշերային մտքերի վրա և անհագորեն սուզվում նրանց մեջ։ Չէ՞ որ նա բանաստեղծ էր... Կամ այդ ի՞նչպես է, որ նա բանաստեղծ չէ։ Թող ոչ ոք չընդունի այդ։ Նա անհիշաչար մեկ-մեկ միտքը բերեց իր բոլոր «քննադատներին և ընթերցողներին», որոնք շարունակ ծաղրել են իրեն կամ անտեսել։ Ժպտաց յուրովի, և բարի ժպիտը հալվեց նրա դեմքին։ Նա լրջացավ։ Էհ, ի՞նչ արած, չեն ընդունում իրեն։ Բայց հո ինքը կարող է այժմ և միշտ խորհել

անհուն տիեզերքի մասին։ Նա շատ է խորհել այդ մեծ առեղծվածի մասին։ Դա նրա համար մի անապատ թանգարան է՝ շքեղ առարկաներով։ Նրան ամեն իր զարմացնում է, զբաղեցնում։ Ամեն իրի մեջ նա տեսնում է տիեզերական մի գաղտնիք։

Պատուհանից դուրս գիշերային անհուն թավիշը տեղ-տեղ կայծկլտում էր աստղերով։ Նրանք թրթռում էին, դողում, կային և աստղեր, որ անշարժ պելացել էին ծծմբային լույսով։ Արդյոք ո՞ր ժամն էր։ Ոչինչ չէր կարելի իմանալ։ Շուրջը ոչ մի բնակարանից չէր լսվում շշունչ, ոտնաձայն։ Բակը, փողոցը, քաղաքը քնած էին։ Հայրոն ընկավ անվերջ ու հախուռն մտքերի գետերի մեջ։ Երկար ժամանակ նա մտքով կրկին ապրեց իր մանկության օրերը, իր հոտաղի կյանքը, կրկին վերակենդանացրեց բազմաթիվ գեպքեր, կռիվներ, վեճեր ընկերների ու պատահական մարդկանց հետ։ Հիշեց կարդացած գրքերի բովանդակությունը։ Մի անգամ էլ աչքի առաջ բերեց իր «գրական» կյանքի սկիզբն ու վախճանը... Եվ հուսահատ հոգնածություն եկավ վրան, դառն ապատիա։ Գրական կյանքն իր համար չէր։ Ապա ի՞նչն էր։ Ախր մի բան, ստեղծագործական մի մարմաջ անհանգիստ է անում իրեն։ Մի բան կա իր մեջ։ Թե՞ խաբուսիկ է այդ մարմաջը։

Սենյակի առարկաները մթնաթաթախ կերպարանքներով նայում էին նրան։ Միտք չկար նրանց մեջ. ոչ մի նշույլ հույսի, ուրախության։ Եվ Հայրոն ծանր հառաչեց։

Հանկարծ սենյակի անկյունից, որ լավ էր լուսավորված գիշերային թաքուն լույսով՝ երիտասարդ աքաղաղը թևերը թափ տվեց և ծուղրուղու կանչեց։ Նա արձակել էր ոտների կապը։

Հայրոն նոր նկատեց, որ վառեկներից մինը աքաղաղ էր եղել։ Նայեց նրան։

Աքաղաղը, բավական գեղեցիկ մի ասպետ՝ ժիր ու հոգածու պատրաստվում է դիմավորելու հետևյալ օրվա լուսաբացը։

— Օհո՞... — շշնջաց յուրովի Հայրոն,— սա ծուղրուղու էլ է կանչում։

Այո, աքաղաղին ըստ երևույթին չէր խանգարում ոչ իր սարայման վիճակը, ոչ օտարությունը, ոչ էլ իրեն սպասող վիճակը՝ կերակրի կաթսան։

— Մարդը պատրաստվում է ապրելու և կատարում է իր պարտականությունը,— մտածեց Հայրոն և ծպտաց մթության մեջ

Եվ իրոք փոքրիկ աքաղաքն սկսեց իր առավոտվա «տուալետը». կտցով քրքրեց կուրծքը, թևատակերը, իր շարժումներով զարթեցրեց երկու մյուս հավիկներին, պատրաստվեց բացվող նոր անտեսության։ Երևի հույս ուներ, որ իրեն կտրամադրեն որևէ անկյուն նոր բակում, ուր նա կարողանա իր ընկերուհիների հետ սկսել կյանք, ապրուստ։ Եվ որքա՜ն համոզմունք ու լրջություն կար այդ փոքրիկ արարածի մեջ, միամիտ, բայց Հայրոյի գերագոգոված նյարդերի համար հուզիչ հույս, հավատ, որ պիտի ապրի, որ այլ կերպ էլ չի լինելու հետևյալ օրը։

Փոքրիկ աքաղաղը այս մութ սենյակի փոշոտ անկյունում սպասում էր կյանքի, պատրաստվում էր կյանքի։

«Ո՜րքան ուժեղ է կյանքը»,— մտածեց Հայրոն,— Ո՜րքան լուրջ է նա և ո՜րքան խոր իմաստ կա լինելության մեջ։

Եվ արդյոք այս աքաղա՞ղն էր պատճառը,— նրա մեջ զարթնեցին ինքնապաշտպան մտքեր։ Եվ իսկապե՞ս աքաղաղը։ Ո՜չ։ Դա ինչ-որ անհաղթելի մի տենչ էր, մի ուժ, որ միշտ թրթռացել էր իր մեջ, Հայրոյի էության գաղտնարանում։ Նա քնած էր իր մեջ, նա թողնում էր Հայրոյին շրջելու տարտամ ու տխուր մտքերով, բայց ահա երբ հասավ կյանքի վճռական մոմենտը, «աքաղաղը» զարթնեց։ Հայրոն մի նոր հոսանք զգաց իր թուլացած երակներում։ Նոր դրդում, նոր ծարավ ապրելու։

Այդ ինքն էր, Հայրոն, կենսաթրթիռ, երիտասարդ Հայրոն։

Եվ մի՞թե ամեն բան պարփակված էր բանաստեղծության, պոեմի մեջ։ Մի՞թե իսկապես իրեն հրահրողն ու գրավողը բանաստեղծի կրքերն էին։ Մի՞թե ստեղծագործությունը կատարվում է միայն պոեմի մեջ։ Ահա մի չնչին, փոքրիկ աքաղաղ, որքան կյանքով էր լեցուն։ Ի՞նչ հոգ, թե ընկած է մի անհայտ սենյակի անկյուն, ուր հազիվ կապից ազատված, իր կաշկանդված ընկերուհիների կողքին, վաղվա օրվա անհայտությամբ։ Կյանքը մղում է ապրելու, և աքաղաղն ապրում է։

Հայրոյի մեջ զարթնեց լինելու, ապրելու և կրկին ստեղծագործելու տենչը։ Ստեղծագործելու ուրիշ բան, այն, ինչ որ ինքը, Հայրոն կարող է։ Մեր այս սոցիալիզմի վերելքը ասպարեզ է անվերջ, բազմազան, հրաշալի ստեղծագործության։ Եվ Հայրոն իր գերն ունի դրա մեջ։

Լույսը բացվում էր։

Աքաղաղը կրկին կանչեց։ Լսվեցին հեռվից ուրիշ կանչեր։ Հետո մրմռացին զարթնող ձայներ։ Մի սայլ խուլ դղրդաց հեռվում։ Պատուհանից ներս նայեց վաղ առավոտի հում, միամիտ լույսը։ Մի աստղ գունատվել, ուշաթափվել էր երկնքի հատակում։ Օրը հուսալից, կենսազվարթ սկսվում էր։ Որքան մեծ էր նրա խորհուրդը, նրա ուժը։

Հայրոն նայեց աքաղաղին։ Դա մի սիրուն, ոսկեփետուր ասպետ էր, հպարտ և լուրջ։ Նա խնամոտ ու գորովալից նայում էր իր կողքին կապած ու հատակի փոշում թավալած ընկերուհիներին և սպասում։ Սպասում լիահույս, ծարավի, ուրախագին...

— «Ո՛չ, չեմ մորթի»,— կարծես աքաղաղի հարցին պատասխանեց Հայրոն,— մարդը պատրաստվում է տուն-տեղ սարքել, բնատնիք կազմել։ Եվ ծիծաղեց։

— Գնա, ապրիր, թույլ եմ տալիս,— կատակեց նա աքաղաղի հասցեին և շուռ եկավ մյուս կողքին։— Ջեն ուզում, որ բանաստեղծ լինեմ, է՜հ, ես էլ կապրեմ համեստ արարածի պես։ Ամեն տեղ կյանք է, ստեղծագործություն, անգամ չնչին բանի մեջ։

Մտքերը, այրող մտքերը հանդարտվեցին, քաղցրացան։ Կարծես մի բան վճռվեց Հայրոյի համար — թե ինչ, ինքն էլ չգիտեր, բայց Հայրոն մի նոր կյանքով լցված աչքերը փակեց և քնեց։

***

Հետևյալ օրն իսկ Հայրոն աքաղաղն ու վառեկներն առավ ու գնաց գյուղ։ Առաջին խոսքն այն էր, որ թռչուններին ձեռք չտան։ Տնեցիք ծիծաղեցին, բայց երբ Հայրոն լուրջ պնդեց՝ մի փոքր զարմացան նրա հիմարության վրա։

— Բա ի՞նչ ես անելու սրանց,— հարցրեց քույրը։

— Ոչինչ, թող մեծանան։

Այնուհետև Հայրոն սկսեց գրքեր կարդալ։ Բնագիտական գրքեր։ Դրանց մեջ նա գտավ այն մթնոլորտը, որի շունչը զգալիս էր լինում բանաստեղծություններ գրելիս։ Բնագիտությունը, բնության կյանքը, բնության ստեղծագործ կենսագրությունը հագեցնում էր այն ծարավը, որ կար Հայրոյի հոգու մեջ։

Հայրոն ոգի առավ, ամրապնդվեց։ Սկսեց խառնվել իրենց

գյուղի կյանքին։ Մոտիկացավ գյուղատնտեսին։ Ժամերով դիտում էր նրա աշխատանքը, գնում էր հետը դաշտերը, լսում էր նրա զրույցները կոլտնտեսականների հետ և խորասուզվում իր մտքերի մեջ։ Նա այժմ սկսում էր պարզ ու որոշ տեսնել, շոշափել իր ներքին ձգտումների առարկան։ Այն, ինչ որ Հայրոյին գրավել, վառել, տանջել էր բանաստեղծության մեջ, այժմ կերպարանք առած, ամբողջ հասակով կանգնել էր նրա առջև և ժպտում, կանչում էր նրան։

Գյուղական երեկոն հալում էր իր ոսկեղեն նարինջները բլուրների ու ձորակի քարաշեղջերի վրա։ Հայրոն ու գյուղատնտեսը նստած էին ձորափին։ Նրանք երկար ժամանակ զրուցել էին և հիմա լուռ մտորում էին։ Հեռվում ձորափին նկատվում էր նոր գյուղը։ Քառակուսի, համեստ, բայց ուրախ շենքերով, որոնք իրենց տրամադրությամբ հաղթում էին քարափների թախիծը։ Երիտասարդ գյուղատնտեսը Հայրոյենց գյուղից էր։ Նա մի քանի տարի առաջ էր ավարտել գյուղատնտեսական ինստիտուտը և մոլեռանդի պես եկել հարձակվել իրենց գյուղի հողերի վրա, բարձրացնում էր բերքը։

Ահա այդ երիտասարդ գյուղատնտեսի հետ էր անցկացնում Հայրոն իր օրերը։ Նրա հետ շրջում էր դաշտերը, շփվում կոլտնտեսականների հետ, աննկատելի մասնակցում նրանց հոգսերին, ժողովներին, աշխատանքներին։ Նոր կյանքի կրակը վառվում էր գյուղում, գյուղացիները մոլեգին, կրքով կպել էին իրենց դաշտային աշխատանքներին։ Ստեղծագործ մի կյանք էր փոթորկվում գյուղում։ Հայրոն նկատում էր, որ կոլտնտեսականները բոլորովին փոխվել են, դառել են նոր մարդիկ։

Դիմացը, քարափից այն կողմ խոժոռ նայում էր անջրդի մի լայն դաշտ։ Գյուղատնտեսը ցույց տվեց այն կողմը և ասաց.

— Այ, ջրի են սպասում այդ հողերը։ Ջուրը կգա և կտեսնես ինչ պոեմ կստեղծվի այնտեղ։ Դու միայն քո պոեմի կորուստն ես ողբում։

Հայրոն քնից զարթնեց կարծես։ Կարծես ինքն էր, որ այդպես խոսեց։ Հաճելի էր նրա համար զրույցի այդ ձևը։ Եվ նա ուշադիր նայեց գործի մարդու այս փիլիսոփայությանը։

— Այո, ապա ի՞նչ,— շարունակեց գյուղատնտեսը — նեղ մտածողություն է այն, որ պոեմն է ստեղծագործությունը։ Պոեմն

ինչ է՝ կյանքի արձագանքը։ Դու կյանքին նայիր, տես ինչ ստեղծագործություն է նա։ Լավ մոտեցիր մեր կոլտնտեսականին, տես ինչ փոփոխության է ենթարկվել նա։ Դարեր են թռել նրա գլխի վրայով, իբրև մի ժամ։ Չինաստանից է հարցնում, բևեռային հեքոսների վիճակով է հետաքրքրվում։ Միաժամանակ տես ինչպես է հարձակվել իր հանդի հողերի վրա և դուրս է քաշում հողի ուժը, ես կասեմ գեղեցկությունը։ Դա ստեղծագործություն չէ՞։ Կարդում ես մի պոեմ և զգացվում։ Ապա պոեմի պես կարդա այս նոր տները, գյուղի նոր աղբյուրները, ջրանցքը, էլեկտրականը, մեքենաները... Մարդիկ են ստեղծել այդ բարիքները։ Սա մի՞թե պոեմ չէ։

Հայրոն մտասուզվեց։ Նրան ուրախացնում, ջերմացնում էր այս զրույցը։ Նրա մեջ զարթնում էր մի նոր կիրք։ Սկսել մի նոր գործ, թաղվել նրա մեջ, նվիրվել մինչև մոռացությունը։ Ի՞նչ էր այդ նոր գործը — նա թերևս չգիտեր, բայց զգում էր, որ դա մոտ է երևան գալու։ Դա ինչ-որ հողի մեջ էր, ահա այս խոտերի, թրուչունների, ահա այն հեռավոր նոր տների, իրենց գյուղի նոր մարդկանց մեջ։ Հայրոն զգաց ապրելու այնպիսի մի սուր պահանջ, որ կուրծքն ուռավ, շունչը կտրեց։

— Այո, մի բան պիտի անել, մի բան պետք է սովորել։

— Իհարկե,— հանդիմանական բարեկամական շեշտով հաստատեց գյուղատնտեսը։— Գործը խեղդում է մեզ հեղեղի պես — մարդը պակասում է։ Գնա մի բան սովորիր։

Հայրոն վեր թռավ տեղից։

— Գիտես ինչ... Ես կասեմ, դու մի ծիծաղիր։ Ճիշտ որ ամեն բան ստեղծագործություն է և ես դրա գերին եմ եղել, սկսելով բանաստեղծությունը։ Թերևս սխալ է եղել իմ ուղին, բայց ես կասեմ, որ դարձյալ ճիշտ եմ եղել։ Ես կրկին ուզում եմ սկսել ստեղծագործությունից։

— Էլի գրել... — խեթ նայեց գյուղատնտեսը։

— Ո՛չ, ես ուզում եմ վետերինար դառնալ։ Ես սաստիկ սիրում եմ կենդանիներին։ Մի ծիծաղիր։

— Ծ՞ս, ես չեմ ծիծաղում,— ժպտաց քթի տակ գյուղատնտեսը,— ես միայն քեզ կասեմ, որ գյուղը լցնել նոր, առողջ կենդանիներով — դա ինքնին գեղեցիկ գործ է։

— Եվ ուրախություն է,— ասաց ինքն իրեն Հայրոն։

Գյուղատնտեսը խոր նայեց Հայրոյին և ասաց.

— Գնա՛, գնա՛, սովորիր ու եկ, սկսենք բարձր կուլտուրական անասնապահություն։ Շրջանը մեծ ապագա ունի։

Հայրոն մտքում կրկնեց. «Շրջա՞նը»... Եվ նա երևակայեց այդ շրջանը — ծանրանիստ, հյութալի, խոտով բեղուն լեռներ, հովիտներ, հողի կատաղի ուժը, և նրանց վրա ուռճացող գեղեցիկ, առողջ անասունները։ «Շրջա՞ն» — դա մի պոեմ էր, առողջ ստեղծագործություն։ Հսկայակա՞ն կյանքի գիրք...

***

Մի շքեղ ֆերմա, անասնապահական ֆերմա գողտրիկ ու գրավիչ պատուհաններով, սպիտակազգեստ կնոջ մտերմությամբ ուրախացնում էր լեռնադաշտը։ Հանդիսավոր է այդ լեռնադաշտի փովածքը։ Նրա կրծքին արածում են ոսկեղեն կովեր։ Առողջություն է բուրում նրանցից, և վարիչը՝ Հայրոն, սուր ու զննող աչքերը հառած նրանց՝ բացատրում է էքսկուրսանտներին այդ կովերի ցեղային հատկությունները։ Նրա խոսքերի մեջ ջերմանում է մի ինչ-որ շատ ավելի հարուստ ու փարթամ ապագա մեր երկրի անասնապահության համար։

Նա հարուստ երևակայություն ունի, որով էքսկուրսանտներին գրավում, սիրել է տալիս այնպիսի մի «պրոզայիկ» նյութ, ինչպես անասնապահությունն է։ Երբ նա բացատրում է անասունների կյանքը, զգում ես, թե ինչպես է լեռների խոտը, ծաղիկը, ջուրը, օդը արևի լույսի հետ խոսում այդ ոսկեղեն կովերի ու եզների մարմինը և գեղեցկացնում նրանց։

Արդյոք Հայրոն սխալվե՞լ էր մի ժամանակ...

Ո՞վ գիտե։ Կամ ինքն արդյոք հիշո՞ւմ էր իր իսկ տողերը և՛ անշնորհք, և՛ կարծես թե ինչ-որ ներքին մի նշույլ երևակայությամբ ջերմացած։

«Ոգեշունչ կյանքը լխում է
ամենուր
Եվ խոտից և ամեն կենդանի
շնչից,
Կյանքն ամենուր է, և իմաստ կա
խոր,
Ամեն տենչի մեջ՝ որքան էլ
չնչին»։

***

Ամբիոն ելավ եռանդուն, համակրելի և լուրջ մի կերպարանք։ Ամբողջ երկրին ծանոթ և սիրելի այդ երիտասարդը։ Նա պետք է տար իր հեղինակավոր զեկուցումը, որից հետո համագումարը նրան և ուրիշներին ուղարկելու էր Մոսկվա։

Համամիութենական համագումարին...

Եվ Հայրոն զեկուցում էր։ Նրա խոսքերի մեջ նկարվում էին լեռնահովիտներ, ոսկեզօծ եզներ ու կովեր, ցողաթարմ առողջ սեզեր ու լուսեղեն ջրեր։ Ուրախություն էր լցված ամբողջ համագումարում։

Հայրոն խոսում էր իր, ընկերների և մասսայի ստեղծագործության մասին։ Եվ երկիրը լսում էր նրան խորին ուշադրությամբ։

«ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ»

Ընդարձակ բակը մեծ տան մեջ՝ շրջափակ փոքրիկ զբոսայգի է դարձրած. ծաղիկներով նախշած ածուներ, ծառերի տակին նստարաններ, ծառուղիներ, մեջտեղը տաղավար ու ավազան։

Մանուկներ են լցվել տաղավարը և նրա շուրջը։ Մեծ եռուզեռ է։ Խաղում են, կարծես ցրիվ ու անկախ իրարից, բայց երբ մոտ ես գնում՝ տեսնում ես որ մեծ խաղ է կազմակերպած։

Տղաներ ու աղջիկներ են՝ ութ, իններ, տասն—տասներկու տարեկան։

Տաղավարի կողքին, ծառի տակ հավաքվել է մի ինչ-որ «հիմնարկ»։ Լրագրեր են փռած, որոնց վրա պառկել են տղաներ։ Կողքին թոկով մի այլ բաժանմունք է առանձնացրած, որտեղ աղջիկներ են պառկել նույնպես լրագրերի վրա։ Նրանք պառկել են անշարժ և շատ կենտրոնացած տեսք ունեն, աչքերը կիսափակ՝ կարծես քնի են պատրաստվում։ «Բաժանմունքների» մեջտեղը երեք միջանցք է. այդտեղ ման են գալիս ոտների ծայրով։

Ամեն երևույթից հասկացվում է, որ դա «հիվանդանոց է»։

Ահա լրագիրը խալաթի պես հագած՝ հիվանդներին է մոտենում թղթե ակնոցներով մի երեխա, որ փայտե լսափող ունի ձեռքին։ Դա «բժիշկ» է։ Նա լրջախոհ, դանդաղ բռնում է նրանց բազուկները, զննում զարկերակը և դառնում է իր հետևից եկող երկրորդ բժշկին ու քրոջը.

— Մալարիա է, խինի՛ն կտաք։

Երկրորդ բժիշկը ինչ-որ բան է նշում իր բլոկնոտում։

Անցնում են մյուս «բաժանմունքը», «կանանց» պալատը, ուր նույն քննություններն ու պատվերներն են, և հեռանում են, գալիս մի փոքր հեռու թփերի բացատ՝ մի աղջկա մոտ, որ շատ հպարտ ու լուրջ հայացքով նստել է արկղի հետև և թղթե ակնոցը աչքերին «գրանցում է» մի նորեկ հիվանդի։ Նրանցից մի փոքր

հեռու լրագրի գոգնոցը կապած «դոնապանը» կանգնել է երկու թփի արանքը, այսինքն «դռանը» և հսկում է, որ հիվանդատեսները անկարգ ներս չմտնեն։

Բոլորը՝ թե «հիվանդները» և թե «բժշկական պերսոնալը» չեն խոսում։ Օրինակելի լռություն է «հիվանդանոցում»։ Տաղավարի շուրջը, «հիվանդանոցից» մի փոքր հեռու մի մեծ փոս են փորում։ Դա ըստ երևույթին մեծ «ջրանցք» է, որ հետզհետե խորանում է և երկարում։ Դիտմամբ ընտրված է զբոսայգու մի ամայի տեղը, ուր ոչինչ չի ցանած և «անջրդի» է։ Ջրանցքի երկայնքով շարված են մի քանի կարտոնե տուփեր, մի երկու մեծ արկղներ. դրանք էլ «բետոնատարներն ու էքսկավատորներն» են։ Հողը նախ վերցնում են էքսկավատորի վրա, այնտեղից թափում են բետոնատարների վրա, որ խսկույն քշում են և տանում, լցնում մի փոս։

«Ջրանցքի» մի ափին էլ նրան զուգահեռ գծով փոքրիկ ճյուղեր, տերևներ են խրում հողի մեջ։ Դա էլ «անտառաշերտն է»։

«Բանվորները» շապկանց են կամ մերկ ու գլխաբաց։ Միայն նրանցից մեկը, կեպին ծոծրակի կողմը ետ քաշած, ուժեղ թևքերը քշտած, բադի նման օրորվելով մեծ-մեծ քայլեր է գցում և երբեմն կանգնում է և երկու ձեռները գոտկատեղին կանթելով նայում է բանվորներին ու գոչում.

— Հարվածայի՛ն աշխատեցեք, ընկե՛ր ստախանովականներ, պլանները գերակատարեցե՛ք։ Լիլի՛կ, դու ի՞նչ ես կանգնել,— նկատում է հանկարծ մի փոքրիկ աղջկա, որ բերանբաց նայում է ջրանցքի աշխատանքներին,— հող կրիր է՞, պարապ մի՛ մնա։

«Բրիգադավարն է»։ Տեսնելով, որ աշխատանքը կարգի է ընկնում՝ ինքը ևս վրա է վազում և գեր ձեռքերը կոխելով հողի մեջ, արագ-արագ դուրս է տալիս հողը, ածում «էքսկավատորի» մեջ։

Սակայն խիստ լուրջ են «ջրանցքի» կողքին մի արկղի մոտ նստած երկու հոգի։ Նրանք «ինժեներներ» են։ Արկղի վրա փռել են «Огонёк»-ը և նայելով Վոլգա—Դոն ջրանցքի մի տեսարանի՝ «մշակում» են «հատակագիծը»։ Ահա նրանցից մեկը ձեռքով իր մոտ կանչեց «բրիգադավարին»։ Սա վազելով եկավ, ծռվեց «հատակագծի» վրա։ «Ինժեները» առանց խոսելու մատը տնկեց «հատակագծի» մի տեղի վրա և լուռ նշան արեց նրան։ «Բրիգադավարը» վերցրեց «հատակագիծը», նայեց, ապա նայեց «ջրանցքին» և

վազեց ուղղվեց ինչ-որ սխալ «տարատայի» ուղղությամբ։ Ապա մոտ գնաց մի բանվորի, լուռ նշան արեց նրան։ Սա վազեց քարեր բերելու։ Մյուս բանվորներն արագ-արագ աշխատում են, չեն խոսում — երևի սա նրանց հասկացած ուղիղ ձևն է աշխատանքի։

Հափշտակություն — այսպես կարելի է բնորոշել ջրանցքի շինարարության նվիրված «բանվորների, ինժեներ-տեխնիկական պերսոնալի» եռանդուն աշխատանքը։

Տեսարան է նաև մի «մեծ» տան կառուցումը, իսկական մեծ տան կառուցման զարմանալի ճիշտ ընդօրինակումը։ Ճարել են պատի քանդվածքի ծեփ, խառնել հողի ու ավազի հետ՝ դա շաղախն է։ Փայտե մուրճերով «քարտաշները» հղկում են տուֆը, մեկը մեխով քանդակում է տան ճակատի քարերից մեկը, իսկ «աբմնադիրը» գցել է պատերը։ Շենքը բաժանված է բնակարանների, տների, միջանցքների...

Սակայն իսկական և ամենից աշխույժ տեսարանը տաղավարան է։ Ըստ երևույթին քաղաքի մի մեծ դահլիճումն է տեսարանը։ Լցվել է «հասարակությունը», միտինգ է։

Մի պստլիկ սեղան է դրած տաղավարի մեջ, որի նստարանին նստած են երեք հոգի՝ երկու տղա, մի աղջիկ, որը «նախագահ» է, մյուսները «նախագահության» անդամներն են։ Մի փոքր այն կողմ կանգնել է «հռետորը», մի կարմրաթշիկ, սևաչյա, կլորերես երեխա, որը եռանդուն շարժումներով գոչում է.

— Քանաքեռգէէ՛է՛սը, Միության հերոսնեե՛ե՛րը, սոցիալիստական շինարարո՛ւռո՛ւթյունը, ընկերներ։ Այո, բանվորները, կոլտնտեսականները։ Այո, մենք գերազանցիկ ենք ուզում դառնալ, մենք աշխատում ենք, ստախանովականները աշխատում են, պլանն՝ե՛ե՛երը, ընկերներ։

Կեցցեն մեր բանվորները... «Հասարակությունը» բուռն ծափահարությամբ խլացրեց հռետորի խոսքերը։

... Ընկերներ, գարնանացանը սկսվում է, կոմունիզմի կառուցումները լավ կատարեցեք, մեզ պետք է մաքրություն։ Կեցցե՛ Սովետական Միությունը...

Դարձյալ ծափահարությունների պայթյուն, որ ծածկում է ճառախոսին, թեև նա դեռ թափահարում է ձեռքն օդի մեջ և որոնում է նոր խոսքեր։ Խոսքերը չեն պակասում. հռետորը լավ գիտե իր գործը, իսկույն թռչում է այլ թեմայի, ընկերներ, մեր երեխա-

ները չպետք է կախ ընկնեն տրամվայից, փողոցային երթևեկությունը, ընկերներ... (խոսքը կապ է ընկնում, որը սակայն, ծածկվում է ծափահարությամբ և հռետորը կրկին գտնում է շարունակությունը)։ Ընկերներ, խաղաղության կոչի տակ ստորագրեցեք, մենք չենք ուզում կռվել։ Մենք ուզում ենք խաղաղություն, մենք ուզում ենք դպրոցներ, գրքեր, դասագրքեր, մենք...

Ծափահարությունը վերջին անգամ բոլորովին խլացնում է հռետորին և նա «իջնում է ամբիոնից»։ Ամբողջ «հասարակությունը» հոտնկայս երգում է խաղաղության երգը։

Նախագահուհին ծանր ու լուրջ շարժումով վեր է կենում.

— Ընկերներ, քանի որ մենք չենք ուզում պատերազմ և ուզում ենք խաղաղություն, ստորագրենք խաղաղության կոչի տակ։ Ստորագրեցեք, ովքեր կողմնակից եք խաղաղության։ Կեցցե խաղաղությունը։

— Ուռա՜,— գոչում են երեխաները և դուրս թափվում տաղավարից, ցրվում բակի նստարանների շուրջը։ Նրանց հետևից ստորագրություն հավաքողները մի-մի կտոր թուղթ ձեռներին՝ մեկ-մեկ մոտենում են ամեն մի նստարանի, որ ըստ երևույթին «տներ» են և առաջարկում են ստորագրել «խաղաղության կոչը»։

Ըստ երևույթին խաղը ծրագրված է և ունի որոշ հերթականություն տեսարանների մեջ։ Երեխաները, որ ցրված էին բակի զանազան նստարանների շուրջը՝ խումբ-խումբ հավաքվում են ծառուղիներում և շարք կանգնում։ Ամեն խումբ «կոլեկտիվ» է որևէ «հիմնարկի», «ձեռնարկի», «գործարանի», ունի իր դրոշակը։ Ոլորած թղթի փողային օրկեստրը «մարշ» է փչում։ Բոլորը թողնում են իրենց աշխատանքը և հավաքվում, շարքի կանգնում։

— Քայլով մա՛րշ,— գոչեց ժիր «բրիգադիրը» առաջ ընկնելով, և ահա գնացին «բժիշկները», «մեծ տան» և «կոմունիզմի մեծ կառուցման» «շինարարները»։

Ըստ երևույթին դեպի Լենինի հրապարակը։

ԲԺԻՇԿԸ

Ես և բարեկամս խոսում էինք Բ-ի մասին։

— Վերջապես ի՞նչ արեց նա,— հարցրի ես,— թողե՞ց բժշկությունը։

— Թողե՞ց,— մտածելով պատասխանեց բարեկամս և հանկարծ պապիրոսը վառելով՝ կարծես ինքն իրեն խորհրդածեց,— ոչ, թողնել չի կարելի ասել։

— Ես նրա գործը չեմ տեսնում,— ասացի ես,— նրան կարելի է գտնել և՛ գրադարաններում, և՛ կոնցերտներում, և՛ հասարակական հավաքույթներում, բայց նրան քիչ եմ տեսել հիվանդանոցներում կամ տներում՝ հիվանդների մոտ։

— Այդ ճիշտ է և սխալ,— խոսեց բարեկամս, կրկին խորհրդածելու տոնով՝ կարծես մտքում որոնում էր մի ինչ-որ եզրակացություն բժիշկ Բ-ի մասին և չէր գտնում։

Նոր տարու գիշերն էր։

Ժամանակը բնակարանի մտածկոտ լռության մեջ զցում էր իր կյանքի հաշվիչը։ Իսկ պատի վառարանից ռոմանտիկ ժպիտով նայում էր մարմրող կրակը։

Բարեկամս վեր կացավ և սկսեց անաղմուկ անցուդարձել գորգի ծաղիկների վրա։

— Այո, այդ ճիշտ է և սխալ,— կրկնեց նա իր պարադոքսը։

Ես մտածում էի Բ-ի մասին, որին վաղուց էի ճանաչում հեռվից։ Ինձ թվում էր երբեմն, թե նա իր մասնագիտությունն արհամարհում է, դժգոհ է դրանից, կուզեր ուրիշ գործով զբաղվել։

Ի՞նչ մեղքս ծածկեմ՝ ես նրան երբեմն համարել եմ անբարեխիղճ, անտարբեր բժիշկ։

Երբ այս մասին խոսեցի՝ բարեկամս շարունակելով իր անցուդարձը՝ հանկարծ կանգ առավ և պատուհանից նայեց սևագիշեր

հորիզոնին, ուր աստղերը քուրան ընկած ոսկիների պես հալհլում էին։ Հետո մտախոհ ասաց.

— Ոչ, բժիշկ Բ-ն անբարեխիղճ չէ և ոչ էլ անտարբեր։

— Ապա ի՞նչն է նրան խանգարում զբաղվել մի մասնագիտությամբ, որ միաժամանակ պրակտիկա է։ Պարտավո՞ր է նա վերջապես բժշկել՝ երբ բժիշկ է։

Բարեկամս նստեց և այս անգամ խոհերից արթնացած նայեց աչքերիս.

— Այո, պետք է բժշկել՝ երբ մարդ բժիշկ է։ Այս մասին ես նրա հետ խոսել եմ շատ վաղուց։ Լավ չեմ հիշում, թե ի՞նչով էր բացատրում նա իր թույլ եռանդն այդ գործում, բայց մի անգամ նրան տեսա դեղարանում, ուր շտապեցնում էր, որ շուտ պատրաստեն դեղը, որովհետև ինքն էր ուզում անձամբ տանել հիվանդին։

— Ուրեմն այդքան ուշադի՞ր բժիշկ է։

— Այո, իհարկե։ Բայց տարօրինակ բաներ էլ ունի։ Հիշում եմ փողոցում նրա հետ խոսում էի կանգնած՝ մին էլ մոտեցավ մի երիտասարդ և գանգատվեց, որ սիրտը թրթռում է։ Բժիշկը ձեռով արեց, որ հեռանա և իրեն չխանգարի։

— Տարօրինակ մարդ է։

— Համենայն դեպս ոչ հասարակ։ Մի ժամանակ էլ ամեն բան մոռացած՝ գրքեր էր հավաքում։ Եվ պիտի ասել, որ հրաշալի գրադարան ունի, հետն էլ մի այլ հրաշալիք։— Կարդացել է և կարդում է բոլորը։

— Թերևս ասենք ավելի շուտ հարմար էր, որ նա փիլիսոփա, գիտնական լիներ, քան բժիշկ։

— Թերևս... բայց ինչո՞վ պակաս կլինի մի բժիշկ՝ եթե փիլիսոփա և գիտնական լինի։

— Ես այդ չեմ ասում։

Բայց ի՞նչ էր ուզում իսկապես ասել՝ չխորացա այդ հարցում։ Ինչ-որ մի միտք դառնում էր գլխիս մեջ, որից ազատվել չէի չանում, բայց և չէի կարողանում պարզել։ Բժիշկ Բ-ն ինձ զբաղեցնել սկսեց։ Ես նրան հանդիպել էի շատ անգամ, բայց ոչ իբրև հիվանդ։

— Բժիշկներն ի՞նչ կարծիք ունեն նրա մասին։

— Մեկը նրան «դերվիշ» անվանեց մի անգամ։

— Ի՞նչ է, նրան չե՞ն սիրում։

— Չեն հասկանում,— մտածելով ասաց բարեկամս և մի փոքր հետո կարծես իրեն պատասխանեց,— Թերևս հասկանում են, բայց... լսիր, գիտե՞ս ինչ, կյանքի պայմանները շատ անգութ անողոք են։ Լինել այնպիսի մասնագետ, որից ամենքը գոհ լինեն կամ սիրեն՝ շատ դժվար է։ Իհարկե...

Դուռը բախեցին։

Բարեկամս գնաց բաց անելու։ Միջանցքում նա խոսքի բռնվեց մի այցելուի հետ։

— Այդպես շուտ-շուտ գալիս եք մեր բակը և ինձ չե՞ք այցելում, բժի՜շկ,— հարցրեց բարեկամս ներս գալով։— Դե նախ համեցեք ներս, տաքացե՛ք։

— Հա՛, շատ եմ մրսել... մի բոպե վատ չէր լինի... ներեցեք... — դողալով ու կցկտուր խոսեց նրա հետևից այցելուն՝ ինչպես դերասանը իր մուտքի ժամանակ,— բա՛րև ձեզ...

Ես ընդառաջ գնացի և սեղմեցի նրա ձեռը։

Դա բժիշկ Բ-ն էր։

Նա նստեց վառարանի մոտ և ձեռները շփելով նայեց կրակին։ Նա ներշնչված դեմք ուներ։ Հակառակ սովորության՝ նա մորուք էր պահում և հիշեցնում էր Ռաբինդրանատ Թագորին։ Թերևս դա իմ տպավորությունն էր։ Նա հոգոց հանեց և ինչ-որ մտմտաց իր մեջ։ Ինչ-որ մի հոգս, մի միտք զբաղեցնում էր նրան։

— Հանեցեք վերարկուն, բժի՜շկ,— ասաց բարեկամս։

— Ոչ, ես հիմա պիտի գնամ հիվանդիս մոտ, հերթական այցելությանս։

— Ի՞նչ մարդ է։

— Նրան հիվանդանոցից ուղարկել են տուն... հետագա բուժման...— թեթև իրոնիայով խոսեր բժիշկը։

— Հույս կա՞ բուժելու նրան,— հարցրեց բարեկամս։

— Հո՞ւյս... հույսը միշտ գալիս է մեզ հետ մինչև գերեզման և նրանից էլ հետո,— կրկին նայելով խորհեց բժիշկը։

Ծխախոտ հանեց։

— Միայն հո՛ւյս կա շատ անգամ և ուրիշ ոչինչ,— ավելացրեց նա։

— Միայն հույսով ի՞նչ կլինի։

— Եվ դա կյանքն ի՛նքն է... է՜հ, ներեցեք, ես շտապում եմ,

ինձ Հիվանդն սպասում է,— վեր թռավ նա, պապիրոսը կպցրեց և ցտեսություն ասելով դուրս գնաց սենյակից։

— Ցտեսություն,— ասաց բարեկամս,— Հիվանդի մոտից դուրս գալիս՝ անցեք, կխոսենք մի փոքր։

— Հազիվ թե կարողանամ... — խոսեց կոտրած ժպիտով բժիշկ Բ-ն և նրա աչքերում ցոլաց մի խորհրդավոր թախիծ։

Բժիշկը գնաց իր Հիվանդի մոտ։

— Իմացել էի, որ բժիշկ է գալիս Հիվանդի մոտ, բայց չգիտեի թե սա է։ Վաղուց է բերել են Հիվանդանոցից,— մտածելով շարունակեց նա,— ի՞նչ Հիվանդություն պիտի լինի։ Եվ էլ ինչո՞ւ են տուն բերել...

— Եվ էլ ինչո՞ւ են բժիշկ հրավիրել... — կցեցի ես։— Երիտասա՞րդ է Հիվանդը։

— Ի՞նչ երիտասարդ,— կարծես վրդովվեց բարեկամս,— վաթսուն, վաթսուն հինգ կլինի...

— Ո՞վ է։

— Չեմ ճանաչում, նոր է եկել, կարծեմ՝ Մոսկվայից։ Հյուծված էր դեռ Հիվանդանոցից առաջ։ Հիմա արդեն...

— Ուրեմն հույս չկա՞ որ ապրի։

— Չեմ հասկանում։ Միայն գիտեմ, որ մի երկու բժիշկ եկան ու դադարեցին։

Բարեկամս մի փոքրիկ սեղան սարքեց, հանեց կոնյակի շիշը, ուտելեղեն։

— Շուտով կխփի ժամի 12-ը, ասաց նա,— բժշկին կբարեմաղթենք բախտավոր նոր տարի։

Մենք որոշեցինք սպասել բժշկին։ Բայց նա ուշացավ։ Ենթադրեցինք, որ նա Հիվանդի մոտից գնաց իր տունը։ Եվ չգիտեինք սպասել թե ոչ։

— Ընտանիք ունի, երևի շտապեց տուն, հասնելու տարեմուտին,— ասաց բարեկամս։

— Հնարավոր է։

Բարեկամս դուրս գնաց պատշգամբ։ Այնտեղ մեկի հետ խոսեց և վերադարձավ սենյակ։

— Հիվանդի մոտ է,— ասաց նա,— ի՞նչ կարող է լինել։

Անցավ ժամի 12-ը։ Անցավ ավելի։

— Գնաց տուն, պարզ է,— ասացի ես։

Նախասենյակում ոտնաձայն լսվեց։ Դուռը ծեծեցին։

— Մտե՛ք։

Ներս մտավ բժիշկը.

— Ես զգացի, որ քնած չեք։ Ասացի՝ մինչև գնամ տուն, վերադառնամ Հիվանդի մոտ, լավ է այստեղ, ձեզ մոտ մի փոքր...

— Բժի՛շկ ջան, խնդրե՛մ, խնդրե՛մ, մենք հենց սպասում էինք ձեզ։

Բժիշկ Բ-ն տարօրինակ, բայց և հանգիստ ժպտում էր։ Ի՞նչ էր պատահել Հիվանդի մոտ՝ հայտնի չէր։

— Հազիվ քունը տարավ և քնեց,— ասաց նա բարի խորամանկ ժպիտը պահելով դեմքին։

— Դուք սպասում էիք նրա քնելո՞ւն,— հարցրեց բարեկամս։

— Մի որևէ հանգիստ դրության համենայն դեպս։

— Եվ այսքան ժամանակ ի՞նչ էիք անում, ներեցեք որ հարցնում եմ։

— Ոչինչ, խոսում էինք։

— Ուրեմն Հիվանդը կառողջանա՞։

— Ոչ, նա գիշերս կմեռնի,— ասաց բժիշկը մեղմ, թախծալի ժպիտով։

— Եվ ոչ մի միջոց չկա՞ փրկելու նրա կյանքը։

— Ոչ մի միջոց։

— Ի՞նչ տխուր պարտականություն,— ասաց բարեկամս,— նստել անհույս Հիվանդի կողքին և իմանալ, որ պիտի մեռնի, և դու ոչինչ չունես անելու։

— Ոչի՞նչ,— ընդոստ շարժումով դարձավ նրան բժիշկը,— ի՞նչպես ոչինչ։

— Դե նա մեռնում է և կմեռնի առանց ձեզ, բժի՛շկ։

Բժիշկն իսկույն չպատասխանեց։ Նա հոգոց քաշեց ու վառեց պապիրոսը։

— Գործ կա, և շատ կա և դա անվանել «ոչի՞նչ»...

Եվ հանկարծ վեր թռավ.

— Դուք այնքա՞ն եք ճանաչում մարդու տրագիզմը... ա՛յ, ա՛յ, ա՛յ...

— Տրագի՞զմ, ի՞նչ տրագիզմ։

— Ապրելու, կյանքը պահելու, չմեռնելու պայքարը։ Կար-

ծում եք մարդը մինչև անհույս հիվա՞նդն է, մարդը շարունակվում է մինչև վերջին շունչը։

— Համեցեք սեղանի մոտ, բժի՛շկ,— հրավիրեց բարեկամս։

Մենք կրկին նստեցինք սեղանի մոտ։ Բժիշկը հոգնած դեմք ուներ և կարիք էր զգում թարմանալու մի փոքր։ Խմեց մի ըմպանակ կոնյակ և կրկին սկսեց ուժգին ծխել՝ ծխի քուլաների մեջ կորցնելով դեմքը։ Հետո դարձավ բարեկամիս.

— Ոչի՞նչ, եթե մի փոքր հետո հիվանդի հարազատներն այստեղ դան ինձ հարցնելու։ Թեև ես այստեղ շատ էլ չեմ մնա։

— Ի՞նչ եք ասում, բժի՛շկ,— ջերմ վրա բերեց բարեկամս,— թեկուզ մինչև լույս նստեք այստեղ։

— Դե, դա լավ է,— հանգստացավ բժիշկը,— թեև կարծեմ շուտով կարթնանա, և ես կգնամ մոտը։ Դեղ եմ տվել, որ մի փոքր թմրի իր մահից առաջ։

Բարեկամս դուրս գնաց և մի քանի րոպեից վերադարձավ։ Նա հանգստացրեց բժշկին, որ տեսել է հիվանդի հարազատներին և խնդրել է առանց քաշվելու դիմել իր բնակարանը՝ եթե հիվանդը զարթնի։

Բժիշկը շնորհակալ եղավ դրանից և սկսեց ավելի ապահով զգալ իրեն։ Ապահով եմ ասում, որովհետև տարօրինակ անհանգստության մեջ էր երևում։

— Միայն թե երկար չտևի առաջին «քնի» և երկրորդ «քնի» միջոցը,— խոսեց նա կրկին մի առեղծվածային կիսաժպիտով։

— Ի՞նչ առաջին և երկրորդ «քուն»,— հարցրի ես։

— Այսինքն, երբ արթնանա՝ շուտ վերջացնի հաշիվները կյանքի հետ։ Ախր նա, իսկապես ասած, հիմա մահվան ցուցակումն է արդեն։ Կյանքի հետ քիչ կապեր ունի։

Բժիշկն սկսեց պատմել հիվանդի մասին։ Որ նա հետաքրքիր գրադարանապետ է։ Ծառայել է մայրաքաղաքների առաջնակարգ գրադարաններում։

— Այն տիպերից է, որ գրադարանների լռության մեջ ապրում են գրքերի ներհայեցական կյանքով։ Դրանք տեսնում են անհնարին թվով մեծ գրքեր։ Անդունդ։ Լուռ համփորդներ են դրանք անկատելի շրջում են հեռավոր վայրեր, խորասուզվում են մարդկային մտքի հոգու անհունության ծովում, խոսում են աշխարհի բոլոր իմաստունների հետ, քննում այս կյանքի և մահվան առեղծվածները,— խոսում էր կարծես ինքն իրեն բժիշկը։

Հետո աչքերիս նայելով շեշտեց.

— Շատ է ապրել նա, ինչպես գրքերի աշխարհն ընկած մարդ,— ասաց բժիշկը,— նրբացե՛լ է և հիմա դժվա՛ր է մեռնում։

— Բայց կա՞ մարդ, որ հեշտ մեռնի,— խոսեցի ես ավելի ինձ հետ։

— Եվ ո՛չ մի մարդ,— ուղղեց իրեն բժիշկը,— և ո՛չ մի մարդ։ Տարբեր է մեռնողի երևույթը միայն։

Նա լռեց։ Վառարանի կրակը շիկահեր կատվի նման կծկվեց, գունչը կոխեց փորի տակ և հանդարտ շնչառությամբ քնեց։ Լռությունն սկսեց փսփսալ։

Գիշեր էր անցնում։

Ես չէի շտապում տուն գնալ։ Այդպես էր իմ ու բարեկամիս սովորությունը՝ իրար մոտ հյուր գնալով կնստեինք երկար, մինչև խորին գիշեր։

Բարեկամիս սենյակը հրավիրում էր հայեցական մտքերի. գրադարակներում ինքնամփոփ գրքերը խորհում էին և մարդու միտքը տանում լինելության խորին աշխարհը։ Գրասեղանի վրա հին շրջանակի միջից նայում էր Միքելանջելոյի Մովսեսը՝ պատրաստ հրաբորբոք մի խոսքի։

Նրան ի պատասխան դիմացի պատից փոթորկում էր Բեթհովենի գիսախռիվ գլուխը։

Եվ արդյոք բժշկի զրո՞ւյցն էր պատճառը, նրա տրամադրությո՞ւնը, թե ինչ — մեր մտքերը թափառում էին կյանքի և մահի ոլորտներում։

— Ի՞նչ է կյանքը, ի՞նչ է մահը,— սրա վրա գլուխ շատ է կոտրել հին մարդկությունը և չի դադարում կոտրել տակավին,— խոսեց բժիշկը։—Սա շատ կզբաղեցնի թերևս բանաստեղծներին ու փիլիսոփաներին, բայց մեզ՝ բժիշկներիս, կանգնեցնում է այդ առեղծվածների լուծման առջև։ Մեզ չեն հարցնում ի՞նչ է կյանքը — մեզնից պահանջում են կյանք՝ թե ապրողները, և թե մեռնողները։ Դուք պատկերացրեք մի պրոֆեսիա, որի գործը կյանքն ու մահն է, բայց որը...

— Դուք հավատո՞ւմ եք բժշկության,— հարցրի նրան հան-

կարծ՝ կանգ չառնելով այն բանի առաջ, որ նա կարող էր թերևս անախորժել։

— Բժշկությա՞ն...—հարցրեց իր կողմից բժիշկը և նայեց աչքերիս մեջ՝ բարի նենգ հայացքով։—Որպեսզի զարմանաք՝ կասեմ՝ այո։ Մանավանդ նրա ապագային։ Բայց չեմ կարծում, որ դրանով բավարարվեք։ Ճշմարիտ չէ՞։

— Ճշմարիտ է, բժի՛շկ։

— Այո, չեք բավարարվի։ Բայց ես գիտեմ շատ սկեպտիկ բժիշկներ, որ նեղ հիվանդ ժամանակ շտապել են բժիշկ հրավիրել։ Եվ դա անմտություն չէ և ոչ էլ ծիծաղելի քայլ։ Եվ կարծում եք հիվանդը բժիշկ է կանչում, որ միայն բուժի՞, փրկի՞ իրեն։ Ո՛չ, նա մարդ է կանչում իր մոտ, նրան նաև մարդն է պետք։

— Իսկ հարազատներն ի՞նչ են։

— Հարազատները վատ չեն, նրանք պետք են և քիչ չեն օգնում մահամերձին։ Բայց նրան պետք է մարդ, առանձին հատկություններով։ Պետք է մի մարդ, որ նրան խաբի։ Նո՛ւ, այս բառը կոպիտ է։ Ասենք՝ պատրի։ Հիվանդը պատրանք է որոնում այն օրերին, երբ ինքն էլ չի հավատում ոչ մի պատրանքի։ Նա որոնում է մի մարդ, որ իրեն պատրի ի՛ր պես։ Պատրանք, ինքնապատրանք,— դա է երբեմն էլ բժշկի պրոֆեսիան։

— Նո՛ւ, բժիշկ, դուք...

— Չարախոսո՞ւմ եմ... Ո՛չ... ես չեմ չարախոսում, ես ուրիշ բան եմ ասում։ Ես խոսում եմ բժշկի այն դերի մասին, որ ամենից ձանձրալին է՝ թերևս շատ բժիշկների և շատ մարդկանց համար։ Վերջիվերջո՝ մարդս միայն չի բուժվում, այլև... մեռնում է։ Բժիշկը պետք է նաև մահի համար։ Դուցե նույն չափով, որքան և կյանքի։ Այո՛, այո՛, լա՛վ խորհեցեք...

Բժիշկը տաքացավ։ Նա սկսեց ինչ-որ պայքար ում-որ դեմ։

— Այո։ Հիվանդը չի՞ կարողանում մեռնել,— հասկանո՞ւմ եք ի՞նչ ահավոր տանջանք է սա։ Նա դառնում է անհանգիստ, վհատ թուլահոգի մի էակ։ Նա հորիզոն չունի այլևս, այլ մի բութ հոգե վերջակետ։ Նա մի խարխլակ է այլևս, նա որ հոյակապ մարդ էր մի ժամանակ և տեսնում է իր ավերակը։ Նրան պետք է մի մարդ, որ վերջին ժամերին բարձր պահի նրա ոգին։ Դա բժիշկը պիտի լինի։

— Սրտամաշ պրոֆեսիա,— ասաց բարեկամս՝ չգիտես իրոնիկ, թե լուրջ։

— Այո, իհարկե։ Շատ անգամ հոգնում ես, թուլանում, տրանջում անդամ...

Բժիշկը ծխախոտ վառեց։

— Բայց նկատեցեք նաև ժամանակը, այս պատերազմը, որ բժշկի առաջ դնում է անհնարին մեծ խնդիրներ։ Այ, ես աշխատում եմ հոսպիտալում։ Հարյուրավոր մարդկանց կյանքը քո ձեռին է։ Ի՞նչ կանես։ Կընտելանա՞ս նրանց տանջանքներին, մահվան։ Վա՛յ քեզ, եթե ընտելացար։ Այլևս դու բժիշկ չես, այլևս դու մարդ չես։

Դուռը ուժգին ծեծեցին։

— Հա։ Հիվա՞նդն է,— վեր թռավ բժիշկը և գնաց դուռը բացեց։

— Բժի՛շկ, հիվանդը դարթնեց, ձեզ է խնդրում։

— Եկա։

Նա վրան գցեց վերարկուն։

— Կարելի՞ է ձեզ հետ գալ հիվանդի մոտ,— հարցրի ես։

— Եթե չեք ձանձրանա՝ խնդրեմ,— ասաց բժիշկը,— գնանք։

— Իսկապես, հետաքրքիր է,— ասաց բարեկամս,— նա ինձ ճանաչում է և տանեցիք չեն նեղվի։

Մենք գնացինք հիվանդի բնակարանը։

Դռան մոտ մեզ դիմավորեց մի երիտասարդ կին, հոգնած և գունատ դեմքով։ Հետո պարզվեց, որ նա հիվանդի աղջիկն է։ Նա աղերսող հայացքով նայեց բժշկին և ուղղակի նրա բերանին էր նայում՝ լսելու մի հուսադրող ջերմ խոսք։

— Հարազատներին էլ գցեցեք հիվանդի շարքը,— խոսեց բժիշկը միջանցքում, դասախոսի եղանակով,— պետք է բուժել նաև նրանց։

Նա ժպտալով ներս մտավ։ Հիվանդի վրա կախվել էր նրա կինը, հիսունից անց մի նուրբ պառավ։ Նա մի բան էր փսփսում հիվանդին, որը թերևս չէր լսում։ Նրա բարձր ճակատը, խելացի աչքերը և բրոնզե արձանի գլուխը պարուրված էին մահվան վեհությամբ և անհունությամբ։ Նա գլուխը թեքած դեպի մի կողմ նայում էր մի ինչ-որ անդնդային հեռավորության։ Տեսնելով բժշկին՝ նա մեղմ ու խոր ժպտաց և ինչ-որ բան ասաց, որ չլսվեց։

Պառավը նա քաշվեց և կանգնելով իր աղջկա կողքին՝ նայեց բժիշկին։ Երևում էր, որ նրանք պայքարում էին անտանելի մի բանի դեմ — հուսահատության։ Մի նոր խոսք, նոր հնար, նոր միջոց հիվանդին փրկելու մահից։

Մեզ հրավիրեցին նստել։

Բժիշկը թեթև շարժումով մոտեցավ հիվանդին, մեղմ բռնեց նրա զարկերակը և ուրախ ու հաստատող շարժումով դլուխը թափ տվեց.

— Շատ գեղեցիկ։

Հետո դարձավ տանեցիներին.

— Մի բաժակ ջուր։

Բերին։ Գոհունակությամբ վերցրեց, մոտեցրեց հիվանդի շրթունքներին։ Սա թքեց բերանը և աչքերը պարզ բաց արած նայեց բժշկին։ Սա խորը և մտերմորեն հայացքը հառեց նրա աչքերին և մեղմ ու զվարթ ժպտաց։

— Կարծես մի տեսակ թեթևացավ, բժի՛շկ, լավին է դառնում, չէ՞,— խոսեց հիվանդի աղջիկը մեկ հիվանդին և մեկ բժշկին նայելով։

— Եվ ավելի կթեթևանա,— ասաց բժիշկը։

Պառավն ուրախացած առաջ եկավ։

— Բժի՛շկ ջան, ճիշտ է, հասակն առած է, բայց ախր նա կարող է էլի ապրել։ Ես չեմ ասում 30, 40 տարի, գոնե...

Բժիշկը կրկին բռնեց հիվանդի ձեռը և գլխով հաստատական շարժում արեց.

— Իհարկե, իհաբկե։ Ձեր հիվանդը կարող է և պետք է դեռ էլի ապրի։

— Ա՜խ, բժի՛շկ ջան... — ուրախացած լցվեց աղջիկը և արտասուքները խոնավացրին նրա հոգնած աչքերը։

Բժիշկը շարունակելով պահել հիվանդի ձեռքը՝ կրկին ժպտաց նրա աչքերի մեջ և հարց տվեց.

— Հիմա, իհարկե, ավելի ակսեցիք լավ զգալ, այնպես չէ՞։

Հիվանդը թախծոտի ժպիտով նայեց բժշկին։

— Այնքան լավ չեմ, բայց մի փոքր թեթև է կարծես.— շշնջաց հիվանդը։

Հետո գլուխը թեքել թափ տալով երկարացրեց.

— Ի՞նչ բան է կյանքը... մա՜հը...

Ու ինքն իրեն շարունակեց,— երկուսն էլ խո՜ր, խո՜ր, անհատա՜կ, անհո՜ւն...

— Բայց կյանքը կարճ է,— ասաց բարեկամս։

— Ոչ, կյանքը երկա՜ր է, սարսափելի՜ խոր, հավերժակա՜ն՝ մինչև վերջին վայրկյանը։ Կյա՜նք, մա՜հ — երկու անվերջություն՝ ե՜ր...

Բժիշկը որսաց այդ միտքը և ծածուկ գլուխն օրորեց։ Համաձայն էր հիվանդի հետ ըստ երևույթին։

Ես խորհել սկսեցի այդ պարադոքսի մասին։

Բժիշկը «ներարկեց» նրան ուրիշ միտք։

— Բայց խորհեցեք, բարեկա՜մս, ախր ի՞նչ նշանակություն ունեն տևողությունները, որ հավերժություն եք ասում։ Ապրեցիր, ասենք հարյուր տարի, հարյուր քսան տարի, ի՞նչ եմ ասում, ձգե՜նք թիվը՝ միլիո՜ն տարի. հազա՜ր միլիարդ տարի... Վե՜րջը։

— Վերջը մա՜հն է,— հառաչեց հիվանդը։

— Ուրեմն ի՞նչ է կյանքի տևողությունը հավերժության մեջ։

— Օ՜, կյանքն է՛լ է հավերժական՝ ո՛չ իր գծի հորիզոնականի մեջ, այլ իր ուղղահայացի — կյանքը խո՜րն է, սարսափելի՜ խորը...

Հիվանդը դառն ժպիտով լռեց և հառաչելով վերջացրեց իր միտքը.

— Հավերժական՝ մանավանդ վերջին ժամին։

Եվ ապա մի փոքր հետո ավելացրեց.

— Օ՜, այդ փոխանցումը մեկ հավերժից մյուսը...

Բժիշկը մոայվեց, հազիվ նկատելի, սակայն և որոնում էր ուրիշ «դեղ»... Նա զգում էր մահամերձի անհուն տանջանքը, հոգեկան տրագիզմը։ Տրագիզմը հիվանդի, որ փիլիսոփայում էր մի մտքի մասին, որ իրականացնում էր անձամբ։ Իրականացնում էր իր անձի մեջ։

Բժիշկը սակայն հանգիստ ու անվրդով ձև տալով իր գործողություններին՝ ձեռնարկեց բուժման միջոցների։ Նա խնդրեց թեյի բաժակ, գդալ, վերցրեց դեղերի սրվակները, նայեց մեկ մեկ, խառնուրդ ստեղծեց և խմեցնելով հիվանդին՝ սկսեց կրկին սրվակները զննել։

Բայց որքան հուզիչ էր այն, որ հիվանդը, այդ խելացի և սկեպտիկ մարդը երեխայի հավատով, մահամերձի ամենատրա-

դի՞կ հատկությունը, հետևում էր բժշկին և սպասում։ Ինչի՞ն...

Հետո՝ իբրև թե նշանակալից և կարևոր գործողությունների հետ՝ ի միջի այլոց անցնելով փիլիսոփայության՝ Հիվանդի գլուխն ուղղեց և սկսեց շփել ձեռները։

— Ճշմարիտ եք, բարեկամս, կյանքն էլ հավերժական է իր խորությամբ...

Հիվանդը հառաչեց.

— Եվ խորացրո՞ւ ինչքան կուզես... նա կխորանա՞ հավիտյան։

Հնա՞ր չկա... հնա՞ր չկա... ազատվելու այդ մտքից...

Բժիշկը նշանակալից նայեց մեզ։ Հիվանդի և նրա դիալոգի երևույթի տակ տեղի էր ունենում մի ապրում, որ իրոք խորապես արագիկ էր։ Հիվանդն իր սարսափն էր բացատրում։ Նրան հասկանալ էր պետք։

— Եվ ի՞նչպես պետք է լինի... — խոսեց Թույլ, բայց անհանդիստ ձայնով Հիվանդը։

— Դուք կքնեք, դա ամենալավ բանն է, որ կլինի։ Քունը ամենաքաղցր դեղն է նեղացած ժամանակ,— չհասկանալու տվեց բժիշկը։

Հիվանդը խոժոռ նայեց բժշկին։ Սա սկսեց հանգիստ.

— Բնությունն ամեն բանի դեղն ստեղծել է։ Իսկ մենք չենք գտնում։ Քնել, քնել, քնել։ Շատ մտքերի սարսափը երբեմն մարում է այդ պարզ բանի մեջ,— քնե՛լ, բարեկա՛մս... ընդունեցե՛ք այս, հանգստացեք, ի՞նչ եք հուզվում։ Դուք հո ծանր հիվանդ չե՞ք։

Հիվանդը հառաչեց և իրոնիկ ժպտաց բժշկի երեսին։

— Ծանր եմ, թե թեթև, բժի՛շկ, գիտեմ, ինձ քնել է պետք, քնե՛լ, մոռանա՛լ, անէանա՛լ։ Ճշմարի՛տ է...

— Հանգի՛ստ, անվրդո՛վ, լա՛յն մտածեցեք,— սկսեց օրորել բժիշկը,— կյանքից հագենալ չկա, մահից խուսափել չկա։ Իհարկե դուք կառողջանաք, բայց մի օր, թե՛ դուք, թե՛ ես, թե ձեր հարազատները վճարելո՞ւ ենք մեր պարտքը բնության։ Եվ մեռնելով մենք հո հեռու չենք գնում։ Մնում ենք միևնույն բնության մեջ։ Մենք գնում ենք, գալիս են նորերը, ինչպես մենք նորերս եկանք, երբ գնում էին հները։ Եվ հանգի՛ստ եղեք, իսկապես մահ գոյություն էլ չունի։ Կյանքն է միայն որ կա, կյանքն է միայն խոսում, գործում, անհանգստանում։ Եվ հետո մի՛ մոռանաք — մենք ապրում ենք հետագա մարդկության կյանքի մեջ։ Պառկեցեք ավելի հանգիստ։ Դուք հոգնած եք, պիտի քնեք։ Այդպես։

Հիվանդը կարծես կամենում էր պառկել, բայց հանկարծ ձեռը պարզեց օդում և փորձեց խոսել։ Նրան այդ չէր հաջողվում։ Հետո նա ճիգ արեց, նրա դեմքի մկանները լարվեցին, դողացին։

— Ի՞նչ եք կամենում,— մեղմ հարցրեց բժիշկը՝ կարեկցաբար թեքվելով նրա դեմքին։

— ...Մարդկայնությո՛ւն... խորի՛ն մարդկայնություն...

Նա լռեց մի պահ և աչքերը դես ու դեն շրջելով նայեց իր կնոջն ու աղջկան, որոնք ճնշված կանգնել էին նրա մահճակալի գիմաց և կրկին խուլ ու դառն ձայնով կրկնեց.

— Մարդկայնությո՛ւն, խորի՛ն մարդկայնություն։ Մարդկայնությո՛ւն տվեք։

Հիվանդի ուժերն ահեցին։ Կարծես նա գտավ մահվան դեղը, փրկությունը։ Կարծես դա նրա ամենամեծ, գերագույն գյուտն էր, այն խոսքը, որ որոնել էր ամբողջ կյանքում։ Այդ խոսքը նրան թեթևացրեց կարծես, ազատեց երկար, անվերջ խոսելուց։ Մի բառ — մի ամբողջ տիեզերք։

Հանկարծակի բռնկման հետևեց մարումը։ Նա ներս գցեց ձայնը, սմքեց և դառնագին նայեց բժշկին։

— Բարեկա՞մ... — հարցրեց սա։

— Ոչի՞նչ, ոչի՞նչ... Մեռել է Պլատո՞նը, մեռել է Արիստոտե՞լը, Սոֆոկլե՞սը, Աղեքսանդր Մակեդոնացի՞ն, Միքելանջո՞ն, Շեքսպի՞րը, Գյոթե՞ն, մեռել է Բեթհովե՞նը, մեռել են միլիարդավո՞ր միլիարդավո՞ր էակներ...

— Այո, ո՞վ է հավերժական... — վերջացրեց բժիշկը զգույշ տոնով։

Հիվանդի կինը, մոմեղեն մի պառավ, լի հեզությամբ և խոր վշտացող մարդու արտաքին հանգստությամբ՝ ունկընդրում էր այս տանջալի փիլիսոփայությունները և նայում էր բժշկին տխուր համաձայնությամբ։

Բայց աղջիկը տանջվում էր լացի ներքին պահանջից և ճիգ էր անում զսպել իրեն։

Հիվանդը ինչ-որ բան շշնջաց։

— Ի՞նչ է ասում, բժիշկ,— հարցրեց Հիվանդի աղջիկը։

Բժիշկը հասկացավ և բռնեց Հիվանդի ձեռը։ Սա թույլ բացեց

աչքերը, շնորհակալությամբ նայեց բժշկին և աչքերը կրկին փակեց։

— Հանգստացե՛ք։ Այդպե՞ս։ Այդպե՞ս։ Դուք քնեցե՛ք, ես կբռնեմ ձեր ձեռը. ես այստե՛ղ եմ, չե՛մ գնա...

Հիվանդը երեխայի պես լսում էր նրան և հնազանդվում։ Նրա սրված, գունատ դեմքը ծածկում էր իր տակ գերմարդկային տանջանք և սարսափելի մտքեր։ Նա մի անգամ ևս սևեռեց հայացքը, նայեց չորս կողմ. բայց ոչինչ չտեսավ ըստ երևույթին։ Հետո նրա դեմքն աշխուժացավ, մեղմացավ։

Հիվանդի աղջիկն ու կինը մոտեցան մահճակալին և հարցական նայեցին բժշկին։ Սա կարծես չէր տեսնում նրանց։ Տանջող մտքերով լի և միաժամանակ ծիսական ինչ-որ լրջությամբ համակված՝ նա սպասում էր վախճանին։

Հոգեվարքն սկսվեց։ Հիվանդը հանկարծ ամբողջ մարմնով ցնցվեց, դեմքն սկսեց կծկումներ անել։

Բժիշկը դեռ բռնել էր նրա ձեռը և նայում էր հատակին։ Մի՞այն մի անգամ աղատ ձեռը բարձրացրեց հիվանդի աղջկա վրա, որ ուղում էր հեկեկալ և հայացքով արգելեց նրան։

Հիվանդը հանգավ։ Բժիշկը ձեռը ազատեց նրա ձեռից և մոտեցավ գրկեց հիվանդի հարազատներին.

— Ձգո՛ւյշ, կարող է թերևս լսել... Հանգստացե՛ք. հնար չկար փրկելու. երեխաներ չեք, հանգստացե՛ք, սիրելի՛ք։

Հիվանդի աղջիկը դեմքը ձեռներում թաղելով դուրս վազեց և սկսեց հեծկլտալ։ Նրա հետեից գնաց պառավը՝ ձեռները ծեծելով։

— Սա չկա այլևս,— ասաց բժիշկը,— հիվանդը մնացողներն են։

Ու դառն ժպտաց։

Հետո գնաց դուրս, պատշգամբ։ Այնտեղ ինչ-որ խոսեց ումոր հետ։ Շուտով ներս եկան հարևանները։ Գեպքերն անցան իրենց կենցաղային կարգը։ Մեր մնալն այլևս ավելորդ էր։

Եկանք բարեկամիս սենյակը։ Բժիշկը ձեռները լվաց և հոգնած եկավ նստեց սեղանի մոտ։

— Է՛, հանգստացեք, բժի՛շկ,— ասաց բարեկամս՝ լցնելով կոնյակի ըմպանակները։— Վերցրե՛ք, վերցրե՛ք։

Բժիշկը վերցրեց ըմպանակը և քմծիծաղ տվեց.

— Երբ մահամերձն իմանար, թե որքա՞ն անզոր էիր ես։

— Թերևս իբրև բժիշկ,— ասացի ես։

Բժիշկը դառն ժպիտով նայեց ինձ և աչքը պաղեց։ Խորհո՞ւմ էր, հաշի՞վ էր տալիս իրեն, կշտամբո՞ւմ։ Շա՛տ բան։

— Ի՞նչ տվի նրան։ Ոչի՞նչ,— շարունակեց նա պաղած աչքերը դարձնելով դեպի պատուհանը։— Կյա՞նք։ Միևնույն է, վերջիվերջո մահվան դեմ ոչ մի դեղ չկա։ Բայց փորձեցեք մեռնել։ Փորձեցեք հաշտվել մահի հետ։ Խե՜ղճ մարդ, նա իմ ձեռներին էր նայում, որ նրան կյանք տամ... Կարողացա՞, կարո՞ղ էի... Բայց ես պայքարում էի կյանքի համար մինչև վերջը, և հիվանդը տեսնում, հավատում էր ինձ։ Այս ենք մոռանում հաճախ։ Այս է, որ չենք սովորում։— Գիտենալ մարդուն հոգով-մարմնով, դառնալ նրա ամենամոտ ընկերը։ Գործուղել նրան կյանք, ուղեկցել մինչև գերեզման, պայքարելով նրա կյանքի համար։ «Մարդկայնությո՞ւն, խորի՞ն մարդկայնություն»,— ասում էր այն մարդը՝ չգրտնելով ուրիշ և ոչ մի այլ խոսք իր հոգին հասկացնելու։ Մարդ է պետք։ Դա է, որ մոռանում ենք հաճախ տալ մարդուն։ Դա է պետք մարդուն։ Մա՛րդը, մա՛րդը... Տվե՛ք տեսնեմ, ո՞րտեղից այդքան մարդկայնություն։ «Խորի՞ն մարդկայնություն»...

Բժիշկը ոգևորվել էր. նրա հնդկական դեմքը վարդագույն էր դառել, և աչքերը ցոլում էին վեհ մտքերով։

— Գիտե՞ք ինչ — ապագայում, մարդկության շատ ավելի խոր և նրբին կյանքում բժշկին սպասում է մի նոր, վեհ, դժվարին, ծանր թերևս, բայց բարձր առաքելություն։ Հերոսական կոչում։ Լինել մարդ, սովորել մարդուն, գիտենալ մարդուն և դառնալ մարդու դաստիարակը, նվիրական ընկերը։ Այսպիսի մի «պաշտո՞ն»...

— Անկարելի դժվարին բան է,— ասաց բարեկամս։

— Դժվարին է, երբ արհեստ է։ Բայց այս նոր գիտություններ պիտի դառնա ստեղծագործություն և այն ժամանակ կդյուրանա, կազնվանա, կվեհանա։ Երբ մի բան դառնում է արհեստ՝ ինչպես բժշկությունը,— մարդո՞ւ գիտությունը,— նա դառնում է անսիրտ, ոմարդի, հաճախ դաժան։ Բժիշկը չպետք է ընտելանա հիվանդի տանջանքներին, մահվան։ Նա պիտի կենդանի, թարմ մարդ լինի մարդու մահճի մոտ։

Բժիշկը լռեց։ Նա վրդովված էր, բորբոքված, ներքուստ պայքար էր մղում՝ ամենքի դեմ, նաև իր դեմ։

— Բայց դա իդեալական բժիշկն է,— ասաց բարեկամս։

— Ի՞նչ ասել է իդեալական,— բարկացավ բժիշկը,— իսկ ձեզ ո՞վ ասաց, որ կատարելատիպ դառնալը մեր պարտականությունը չէ։

— Նստեցե՛ք, բժի՛շկ, դուք հոգնեցիք,— ասաց բարեկամս կուրը փոխելով։

— Այո, բավական հոգնեցիք,— հաստատեցի ես։

Բժիշկը նստեց։ Բայց ախորժակ չուներ։ Միայն խմում էր։

Մութ լուսամուտի մեջ սև սաթի պես փայլում էր գիշերը։ Աստղերը, որոնք պիտի անհետանան մեկ-մեկ տիեզերքի անէության մեջ՝ տենդային փայլով այրվում էին՝ շարունակելով իրենց միլիոնավոր դարերի հատնումը մի նոր տիեզերական կյանքի համար։

— Լավ,— ասացի ես,— բժի՛շկ. ի՞նչն ստիպեց ձեզ բժիշկ դառնալ։

— Այո, ես բժիշկ չեմ՝ ուզում եք ասել, այսինքն պետքական բժիշկ։

— Ոչ, ինչո՞ւ այդպես։ Ի՞նչպես եղավ, որ վճռեցիք բժիշկ դառնալ։ Երևում է, որ պատահական չեք բժիշկ դառել։

Բժիշկը ժպտաց։

— Պատահական եղավ, բայց մի խորը տրագեդիա պատճառ դառավ իմ բժիշկ դառնալուն։ Դուք կծիծաղեք, բայց ես մինչև օրս չեմ մոռանում։ Այո, դուք կծիծաղեք։

— Պատմեցեք, եթե անհարմար չէ։

— Այո... դա մի փոքր պատահմունք էր, բայց ուժգին ցնցեց ինձ։ Ծիծաղելի կլինի գուցե, բայց պատմեմ։— Անցնում էի փողոցով։— Ես այն ժամանակ նոր էի վերջացրել գիմնազիան։ Ուրախ անցնում էի փողոցով։ Մեկ էլ տեսնեմ դեմից գալիս է մի սայլ, եզներ լծած։ Սայլապանն իջել էր սայլից և եզների կողքից գալիս էր։ Ես պատահմամբ, թերևս ուշքս այլ բանի՝ նայեցի եզներից մեկին, որ առաջի ոտից կաղալով գալիս էր և... քաշում սայլը։ Նրա ոտը ցավում էր։ Ես նայեցի նրա աչքերին՝ նրանց մեջ թեթև պղտորություն կար։ Նրա թիակի կաշին ցնցվում էր։ Նրա բերանը կիսաբաց էր և լեզուն կիսովին դուրս էր գցել, կծում էր անզոր, երկարելով լեզուն և երկար մի լորձունք, որ ամեն տեսակ ազգի լեզու արժեր... Եզը լուռ էր, տանջվում էր լուռ, ինքն իրեն։ Հարցրի սայլապանին՝ ասաց կճղակի միջից մեխը խրվել է ոտը... Եվ եզը պետք է քաշեր սայլը մինչև տուն, տանջվեր անտանելի ցավով՝ մինչև արձակեին նրա լուծը և մեխը հանեին... Ի՞նչ տանջանք։ Իսկ տունը հեռու էր, և սայլապանն անվրդով, համենայն դեպս ոչ շատ անհանգիստ։ Պետք էր նայել այդ անասունին, հասկանալու համար, թե ինչ բան է ցավը, երբ չի արտահայտվում գոնե մի բառով։ Ի՞նչ պիտի ասեր եզը, այդ անասունը — ոչի՞նչ։ Ես հետո հասկացա, թե ինչու ինձ խորապես տանջեց այդ դեպքը։ Այո, սիրելի՛ք, դուք ինձ գուցե հասկանաք, թե ինչ էր ինձ հուզող պատճառը։ Ես հետո հասկացա, որ այդ րոպեին ինձ ցնցեց այդ եզան լռությունը և այն բանը, որ նա չգիտեր, թե այդ ցավը մի ժամից, կես ժամից կդադարի, որ մեխը կհանեն։ Նա անշուշտ ապրում էր հավերժական մի ցավի զգացումը։ Մարդը կդիմեր մարդուն, օգնություն կհայցեր, կսպասեր օգնության, կհուսար և կթեթևացներ այդ գերբնական ցավը։ Բայց անասունը զուրկ էր այդ հույսից։ Լորձո՞ւնք, երկարավո՞ւն, ձգվո՞ղ, անխո՞ս, անտրրտո՞ւնջ և ծա՞նր պարտականություն — քաշել սա՛յլը։ Դեպքն այնքան ազդեց ինձ, այնպիսի խոր վերքով մտավ հոգուս մեջ, որ երկար ժամանակ ես չէի կարողանում էլ տեսնել։ Ես ստացա մի հիվանդություն՝ խղճահարության նոպա, որ երբեմն բռնում էր ինձ և հոգեկան ծանր տանջանքներ պատճառում։ Ես վճռեցի բժիշկ դառնալ... և դուք տեսնում եք, թե ինչպիսի բժիշկ եմ։

— Դուք հրաշալի բժիշկ եք,— ասացի ես։

— Թողեք,— ձեռքը թափ տվեց բժիշկը,— իմ բաժինս՝ ես ինձ կանվանեի խղճով արհեստավոր... Տեսա՞ք ինչ էր ասում հիվանդը. «մարդկայնությո՛ւն, խորի՛ն մարդկայնությունն»։ Ի՞նչ էր ճըգնում ասել այդ մի բառով։— Մի ամբողջ տիեզերք։ Բայց ի՞նչ է այդ բառը, ո՞րքան աղքատ է այն արտահայտելու մի այնպիսի անբավ, անհուն հավերժություն — Կյա՛նք, Մա՛հ... ի՞նչ է այդ բառը, ի՞հ, լորձո՞ւնք, այն եզան համը, անձայն, անզոր լորձունքը, անհնարին տանջանքի այդ իղձուկ արտահայտությունը...

— Ի՞նչ ահավոր մեծ բան է կյանքը,— բացականչեց բարեկամս՝ կարծես կամենալով ազատվել մտքերի ծանր բեռից։

— Ահավո՞ր մեծ... անչափելի՞, անարտահայտելի՞...

Բժիշկը թիկնեց բազկաթոռի մեջ և հայացքն ուղղեց դրասե-

պանի վրա դրած մի փոքրիկ յուղանկարի։ Նա գլուխն օրորեց և մատով ցույց տվեց նկարը։

— Ահա տեսե՞ք...

Միրանավառ հորիզոնի հարթ, անվերջություն չեշտող գծի վրա նկարվում էին եգիպտական բուրգերը։ Ինչպես հավերժության վրա կամ նրա գեմ լուռ պայքարի մտած ամենահակիրճ, ամենասուր մի ձև՝ եռանկյունին։

— Մարդկության հի՞ն տանջանքը,— խոսեց բժիշկը,— պայքարը մահի դեմ։ Ապահովումը կյանքի՝ անգամ մահվան մեջ։ Ի՞նչ անօրինակ պայքար մահի դեմ, հանուն կյանքի։

Ուժե՛ղ բան է կյանքը...

ՁԱԿՈՆԱ՝

Արոնը ջութակ էր սովորում Վարշավայի կոնսերվատորիայում, պանական Լեհաստանի օրերին։ Հայրը՝ Դավիթը, որ շուկայի մի փոքրիկ ծակուռում հին նոտաներ էր գնում վաճառում՝ շատ է։ հավան չէր նրա այդ գործին։

— Ինչացո՞ւ են այդ տղտղոցներդ։ Խելքս դրանցից բան չի կտրում։ Միջակ բանը արժեք չունի։ Եթե մի բան չես դառնում, ուրիշ գործի անցիր։ Եվ հետո՝ ես քեզ չեմ կարող կոնսերվատորիայում պահել։ Գլխիդ ճարը տե՛ս։

Եվ դարձավ կնոջը.

— Խոսի՛ր, համոզի՛ր դու էլ։

Կինը լուրջ ու մռայլ նայեց ամուսնուն ու լռեց։

Դավիթը ուներ հիմքեր մտահոգվելու։ Նա երաժշտությունից վռնված էր։ Նա ջութակով էր սկսել իր բախտը փորձել այս աշխարհում։ Բախտը զարկեց նրա ձեռքին, նա չհաջողեց, ետ կացավ այդ ձեռնարկից։ Բայց այդ ամենից նրա սրտում մի այրող կարոտ մնաց։ Կարոտը երաժշտության։ Եվ իր չարքաշ կյանքում նա միայն մի շռայլություն և մխիթարանք պահեց, երբ քաղաքը որևէ նշանավոր ջութակահար էր գալիս, իր խնայած չնչին դրամը տալիս էր նրանց կոնցերտներին։

Արոնը խիստ վիրավորվեց հոր նկատողությունից և այնպես հակառակի ընկավ, որ այնուհետև նրա տանը եղած ժամանակ այլևս բոլորովին չէր նվագում։ Իսկ կոնսերվատորիայի ուսումնավճարը հոգում էր մայրը՝ կար անելով։

Քանի գեռ փոքր էր Արոնը, ցույց չէր տալիս մի աչքի ընկնող ընդունակություն։ Վերջին երկու տարին միայն ինչ-որ մի կրակ,

---

1 Եգիպտական հին գործիքային ժողովակ՝ պարային բնույթի։

տիրական բան թափանցեց նրա հոգին։ Հանկարծ կերպարանափոխվեց նա։

Մի օր էլ Արոնը հայտնեց, որ պետք է հանդես գա կոնսերվատորիայի ավարտման վերջին կոնցերտին։ Վճռական շարժումով մոտեցավ հորը.

— Պապա, իմ վերջին քննական կոնցերտն է, եկ լսելու։

Դավիթը զարմացած ու խեթ նայեց Արոնի աչքերի մեջ։ Աչքերը լուրջ էին և ինչ-որ հանելուկային։

Դավիթը փակեց խանութը և ընտանիքի հետ գնաց կոնսերվատորիա։ Ողջ ընտանիքով նստեցին դահլիճի ամենավերջին շարքում։ Տանեցիք հագնված էին քիչ շատ տանելի, բայց Դավիթի դեղնած պինջակն ու հնամաշ կոշիկները հարմար էին ավելի թաքցնելու, քան ցույց տալու։

Սկսվեց կոնցերտը։ Հանդես եկան մի քանի աշակերտներ, նվագեցին բավական հաջող ու գնացին։ Բայց երբ բեմ եկավ Արոնը իր պրոֆեսորի հետ, որը նստեց բեմի աջակողմում՝ ողջ դահլիճը քարացավ, լռեց։ Դավիթը ճմլված հայացքով նայեց Արոնին, պրոֆեսորին, հասարակությանը և հուզմունքով սպասեց։

Ուրեմն Արոնը գո՞րծ է շինել, սատանա՛ն տանի,— մտածեց, թնդն հառաչեց և կոտրած, մի փոքր հիմար ժպիտով հայացքը ուղղեց բեմի կողմը։

Արոնը մոայլ նայեց դահլիճին, հոնքերը կիտեց, մի վայրկյան մտածեց և հանկարծ զարկեց Բախի «Չակոնան»։ Բայց ինչպե՞ս... Տիրական հնչեցին առաջին ակորդները։ Հնչեցին մեծացած-փոքրացած մարդու ապրումների ներքին ուժով և իմաստությամբ։ Զգացվեց, որ ծավալվելու է ինչ-որ մեծ շնչով մի վեհ բան։ Մի երկարաշունչ խոսք։ Մե՞ծ հոգու խոսք։ Հնչյունները բացվեցին, ծավալվեցին և մի շնչով հոսեցին, սկսեցին դիզվել ու կերտել մի վեհատիպ կառուցումն։ Ու ողջ ընթացքում, որքան հյուսվածքը փոխում էր իր ձևերը՝ մի երկարաշունչ բարբառ շարունակ տևում էր նույն ուժով, ինչով սկսվեց և նույն ուժով գնաց, գնաց ու հանգչեց վերջին դուբլ ռե-ի վրա։

Երբ վերջացրեց, ողջ դահլիճը դեռ մի պահ մնաց քարացած։ Հետո հանկարծ զարթնեց բուռն ծափերի մի տեղատարափով։ Դահլիճը ևս մի վեհ հոգեկան թռիչք առավ, նայեց հազթական և հպարտ։ Հպարտ՝ մարդկային բարձր ստեղծագործությամբ։

Երբ պրոֆեսորը մոտեցավ Դավիթին շնորհավորելու նրան՝ սա հուզված, ճնշված՝ կորցրեց իրեն և չկարողացավ ոչինչ խոսել։ Եվ հազիվ թաքցնելով աչքերում ցայտած արցունքի կաթիլը՝ գնաց — ո՞չ — վազե՛ց տուն։

— Ա՜յ, դա Արոն, ա՜յ, դա Արոն,— բոունցքները սեղմած բացագանչեց նա, մտավ սենյակը և սկսեց հուզված անցուդարձ անել։

— Լա՜վ, հանգստացի՛ր,— ասաց կինը,— ի՞նչ իրար անցար,— լավ նվագեց՝ ավելի լավ։

— Պապան ուրախացել է, ի՞նչ ես ուզում,— հանդիմանեց Արոնի քույրը։

— Թո՜ղ, սա ի՞նչ է հասկանում,— ասաց Դավիթը և ձեռը զարկելով սեղանին գոչեց,— բե՛ր այստեղ կոնյակը, սատանա՛ն տանի։

— Ո՛չ, ո՛չ, ի՞նչ կոնյակ, էլի սկսեցի՞ր,— արգելեց կինը։

— Բե՛ր, այսօր մե՛ծ տոն է։ Այսօր Դավիթ Այլտմանը, որ կորցրել էր իրեն՝ գտե՛լ է իրեն, սատանան տանի։

Խմեց մի փոքր և ապա սկսեց հուզված ման գալ սենյակում։ Եվ խոսում էր ու ոչ ոքի չէր լսում։

— Դու հասկանո՞ւմ ես, ա՛յ կնիկ, դու կարո՞ղ ես հասկանալ, թե ի՞նչ արեց Արոնը... Գիտե՞ս, թե դա ի՞նչ նվագ էր։ Նա մե՛ծ արտիստ կդառնա... Ծակո՛ւս կծախեմ, տնա՛կս կծախեմ, շապի՛կս գրավ կդնեմ՝ Արոնին կտանեմ Բրյուսել։ Իզային այնտեղ չէ՞, Իզային մեռե՞լ է, բայց Իզայիի շունչը մնացել է այն կոնսերվատորիայում։ Արոնը թող մե՛ծ արտիստ դառնա... Ա՜յ, դա Արոն. ա՜յ, դա Արոն...

— Դու խելքդ կորցնում ես,— մրթմրթաց կինը։

Դավիթը չէր լսում։ Նա եփվում էր, գլուխը թափ տալիս, գնում պատուհանի մոտ, մոտենում Արոնի նոտաներին։

— Ա՜խ, այն տե՛ղը, որ անում է՝ տիրա՛, տիրա՛, տիրա՛, տիրա՛, հետո գնում է ու ծավալվում ու, ա՜խ, սատանա՛ն տանի... Հա՞...

Եվ Դավիթը թեթև ու լայն շունչ քաշեց։ Տարիների կուտակված հոգեկան պահանջը մի խորը, մեծ, վեհ բան ասելու — ահա նա այսօր տեսավ արտահայտված իր զավակի ջութակի միջոցով։

— Հը՞, Բախի «Չակո՞նան»... կատա՞կ բան է։ Ես լսել եմ Թիրոյին, լսել եմ Հուբերմանին, Կրեյլսերին, ես լսել եմ իրե՛ն՝ Իզա՛յիին։ Գիտե՞ս ով է Իզային, մե՛ծն Իզային։ Նա մի մարդ չէր։ Նա մի ժողովուրդ էր։ Եվ եթե իմ Արոնը... ո՞չ, սատանա՞ն տանի, ցամաք հացի ու ջրի կկապվեմ, Արոնիս մեծ ջութակահար կդարձնեմ։ Աղքատ կապրեմ, ոչի՞նչ։ Սա՛ է հարստությունը։

— Չե՞ս անի,— ժպտաց կինը։

— Կանե՞մ։ Իմ հայրս հո գիտե՞ր անել։ Պապս արե՞լ է... Ես է՞լ կանեմ։ Հո գիտես ինչպես հայրս հինգ ռուբլու դատ սկսեց գերմանացի Հայզերի մոտ, որը գանգատ տվեց, թե հաշվի մեջ հայրս պակաս է վճարել իրեն։ Հո գիտես, որ վերջին հազար ռուբլին ծախսեց դատարաններում և տարավ իր դատը, իր խոսքը, որ ինքը վճարել է լրիվ։ Այ, միլիոնատեր Աբրամզոնը իր որդու հարսանիքին «չարը խափանելու» համար ջարդուփշուր արեց ամենաթանկագին ջահը։ Մյուսները ջարդում էին շատ ավելի թանկարժեք իրեր։ Հիմարությո՞ւն։ Ա՛յ, թող այսպիսի բաների վրա «ջարդեն»։ Եվ ես կջարդե՛մ, վճռվա՛ծ է,— գիտեմ, լեհական պաները թույլ չեն տա ինձ Մոսկվա տանելու սրան։ Ափսո՞ս։ Այնտեղ էր Արոնիս տեղը։ Վճռվա՛ծ է։ Ամեն բան ծախում եմ, գնում Բրյուսել, Արոնի հետ ապրելու, մինչև կավարտի բարձրագույն կուրսերը և... Սատանա՛ն տանի ամեն բան, իմ որդին պիտի տիրի մարդկանց հոգիներին... — բարձր ոճով վերջացրեց Դավիթը։

Ներս մտավ Արոնը լուրջ ու զուսպ։

Դավիթը վրա վազեց և հեկեկալով գրկեց նրան։ Տանեցիք ևս հուզվեցին. համբուրեցին Արոնին։

— Բրյո՞ւսել, Բրյո՞ւսել, Իզայի՞ի գասարանը, նրա ստվերի մոտ...

Արտիստով, բարձր թռիչքներից արբած, երջանիկ օր էր դա։

***

Բանը չհասավ սակայն մինչև Բրյուսել։ Դավիթ Այլոմանը նոր էր ձեռնարկում իր որդուն տանել այնտեղ, որ ողջ Եվրոպայի վրա փչեց Ֆաշիզմի չարաթույն շունչը։ Եվ Դավիթ Այլոմանը իր ընտանիքով բնակավ Օսվենցիմ։

Կոնսերվատորիա՞, ջութա՞կ, «Չակոնա՞»... Սո՞ւտ էր այդ ամենը ողջ Եվրոպայում։ Ճիշտը սա՛ էր։ Օսվենցի՛մը։ Հետտո՛ն։ Հնոցնե՛րը։ Այստե՛ղ էր գնում Եվրոպան...

Եվ գործողությունները կարճ են այստեղ։ Արագ։ Հասարակ։ Ոչնչանում են հարյուրական հազարներով։ Լափում են հնոցները։

Դավիթին, ողջ ընտանիքը տեսավ այդ, բկից բռնած կիսախեղդ քշեցին հնոցը։ Նրա ընդոստ շարժումները, ցնցահարվող մորուքը, ցասումնալի աչքերը տեսնելու բան չէին։ Նա գնաց բռունցքը օդում ճոճելով և կենդանի մտավ հնոցը։ Հնոց գնացին նաև նրա աղջիկները, ընտանիքը տեսավ այդ։ Աննային, Արոնի սիրած աղջկան հետապնդում էր դաժան խոշտանգիչը։ Նա անցավ գործի։ Եվ ահա, երբ ներս եկավ Աննային առևանգելու և բռնեց նրա թևից, Արոնը ցատկեց տեղից, հարձակվեց վրան և սկսեց բռնցքահարել նրան։ Իսկույն նրան սեղմեցին մի քանի տասնյակ մագիլներ։

— Ա՛խ դու, հրեա՛ լակոտ։ Այդպե՞ս...

Աննային և Արոնին տարան։ Մայրը վազեց հետևից, բռնեց Արոնին և Աննային, բայց նրան խփեցին գետնին. քացիներ տվին և նա մի փոքր տեղ քաշընկած գնաց ինչպես փալաս ու մնաց ուշաթափ։

Արոնին տարան տանջարան։ Դեղին աչքերով, դեղին դեմքով խոշտանգիչը նայեց նրան ու մռմռաց.

— Կարծում ես մա՞հ։ Միամտությո՞ւն։ Սա մահվան վայր չէ։ Մահը երջանկություն է։ Դա կարելի է ձեռք բերել կովում, տանը, անկողնում։ Սա ուրիշ բանի տեղ է։ Եվ կտեսնե՞ս ինչ բանի։

Արոնին խաչեցին։ Խաչեցին հետտոյի դարբասին, որ ամենքը տեսնեն։ Թույլ տվին մոտենալ, նայել, կանգնել։ Խստիվ արգելեցին ձեռ տալ։ Պահակ դրին։

Մայրը վազեց, եկավ կանգնեց նրա ոտների տակ։

Սկսվեց աննկարագրելի մի բան։— Դանդաղամահը։

Անկարելի էր նայել Արոնին։ Նա ատամները պինդ սեղմած, աչքերը փակ հևում էր։

Մարդիկ խուսափով, անկապ խոսքեր մրմնջալով, սարսափած

անցնում էին մոտով, կամ հեռվից սահմռկած նայում և անհանգիստ սպասում, որ վերջանա խոշտանգը։

Ո՛չ հառաչանք, ո՛չ նվոց, ո՛չ խոսք։ Չտվեց այդ հաճույքը իր խոշտանգողներին։ Գերմարդկային ուժով պահել սկսեց Արոնը մի ահավոր լռություն։ Սկսեց ոգորել լռելյայն, իր մեջ, հոգեկան պայքարով իր խոշտանգողների դեմ։

Ողջ հետտոն լարվեց, սահմռկեց։ Իրար անցավ ողջ ճամբարը։ Միայն մի բան ցանկացան ամենքը։

Վե՛րջ, վե՛րջ Արոնի տանջանքին և ուրիշ ոչինչ...

Արոնի դիմաց հպարտ արձանի նման կանգնած էր նրա ստոիկ մայրը և հրամայական լռությամբ նայում էր նրան երկար, երկար։ Երբեմն միայն, երբ Արոնը բացում էր աչքերը, նայում մորը՝ սա ընդոստ շարժում էր անում դեպի նա և շատ խուլ չգիտես՝ հրամայո՞ւմ, աղաչո՞ւմ, սի՞րտ տալիս, թե՞ խեղդում էր ահավոր վիշտը։

— Արո՞ն...

Արոնը լուռ էր մնում, շարունակում էր այդպես լուռ նայել մորը և երկար, երկար և ապա կրկին փակում էր տենդավառ աչքերը։ Երկար մնում էր այդպես։ Եվ ապա կրկին բացում և սևեռուն նայում մորը։

— Արո՞ն...

Կրկին լռություն։ Գերմարդկային ուժով պահում էր Արոնը ահավոր լռությունը։

Սկսեց խենթանալ հետտոն, հետո՝ ճամբարը — հետո՝ ֆրանսիացիները, բելգիացիները, իսպանացիները, հետո՝ լեհեր, հոլանդացիներ, ֆաշիզմի դեմ մարտնչած գերմանացիներ... Մարդիկ բռունցքները սեղմած ծեծում էին օդը, անիծում, սպառնում, խելագարվում։ Նրանք իրար էին վազում, իրար դիմում, օգնություն խնդրում իրարից Արոնի համար.

— Մա՜հ, մա՜հ,— պահանջում էին նրանք։

Երկու կսենձներ աղոթքի չոքեցին երկու օր, երկու գիշեր, որ վրա հասնի այդ մահը։ Բայց խոշտանգը տեղի չէր տալիս։

Գերմարդկային ուժով ոգորում էր Արոնը, ոգորում նրա մայրը։

Հանկարծ սկսվեց մի չտեսնված բան։

Մոլեգնեցին, ոգորել սկսեցին բոլորը, տոգորվեցին մի կուռ միության, եղբայրության, մարդկության վսեմ պաֆոսով։

Կարծես բոլորի հոգիների մեջ Արոնը լցրեց մի վերասլաց նվագ, մարդկության նոր հաղթական սիրո նոր, վեհաշունչ մի չակոնա։

Մեռավ մա՛հը — հաղթեց սե՛րը։ Եվ երրորդ օրը Արոնն իր մոր, հետտոյի, ճամբարի հետ միասին հանգեցրեց իր «չակոնան» հաղթական «դուբլ-ռեի» վրա...

ԱՆՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Լևիկը անհայր ծնվեց։ Նրա ինժեներ հայրը ընտանիքից բաժանվելով՝ կնոջ երեսին էր նետել ալիմենտը և գնացել կորել հեռավոր վայրեր, խզել ամեն կապ, կարծես ոչ եղել էր, ոչ կար։

Երբ դեռ շատ էր փոքր Լևիկը՝ մայրը՝ Անահիտը, նրա այս անհայրության գործը պատահմամբ լավ լուծեց։ Այսպես մի անգամ, երբ հիմնարկ էր գնում՝ Լևիկը նրան ասաց.

— Տուն որ կգաս՝ ինձ համար խանութից պապա բեր։

Թե ինչ էր այդ խանութից բերվելիք պապան և ինչպես էր պատահել, որ փոքրիկն այդպես էր պատկերացնում հայրը՝ Անահիտը սկզբում չհասկացավ, բայց և իսկույն ուշաբերվեց ու կատակի տվեց.

— Լավ, ջանիկս, խանութում քեզ համար մի հատ պապա կգնեմ կբերեմ։

Երկար ժամանակ այս զվարճալի կատակը լցնում էր ընտանիքի տխուր դատարկությունը։ Ամեն անգամ, հենց որ Անահիտը տուն էր վերադառնում՝ Լևիկը վազում էր ընդառաջ և մոր մատները մեկ մեկ բաց անելով նայում էր ձեռքի մեջ.

— Բերի՞ր պապան։

Անահիտը կատակով հառաչում էր.

— Ա՜խ, Լևիկ ջան, այսօր պապան թանկ էր, չկարողացա գնել. այ երբ կէժանանա՝ կգնեմ...

— Է՜է՜ է՜, ե՞րբ կէժանանա, ե՞րբ կբերես։

— Շուտո՜վ, բալիկս, շուտո՜վ...

Ուրիշ անգամ.

— Պապան էժանացա՞վ։

— Չէ՜է՜, բալիկ ջան, ավելի թանկացավ... Մի քիչ էլ սպասիր...

Այսպես կատակով, խաբխաբելով տարիներն անցան, Լևիկը

մեծացավ և հասկացավ, որ հայրերը խանութում չեն ծախվում, որ հայրը ուսանում են, որ հայրը ապրում է տանը, մոր և երեխաների հետ, որ նա իր մոր նման հիմնարկում աշխատող մարդ է, տուն է գալիս՝ գրկում, համբուրում է իր երեխաներին, խաղում նրանց հետ. նրանք էլ ցույց են տալիս իրենց գրքերը, տետրակները։

Նայում էր Լևիկն իր շուրջն ապրող հայրերին ու երեխաներին և տխրում։ Բայց նա արդեն սովորում էր և դպրոցի առաջին աշակերտներից էր։ Անահիտն ուրախանում էր։ Մանավանդ որ՝ ազատվել էր «պապա գնելու» ծանր կատակից... Ճիշտ է, նայելով իր զավակին՝ նա ևս տխրում էր։

Բայց մի օր Լևիկը հարցրեց.

— Մամա, բա իմ պապան իսկի՞ չպիտի գա։

— Ի՞նչ պիտի անես, որ գա... — անհանգստացավ Անահիտը։

— Ուզում եմ տեսնել, խոսել հետը... Բա ես պապայիս չպիտի՞ տեսնեմ։

Անահիտը լռեց։ Բայց Լևիկը չհանգստացավ։

— Մա... ե՞րբ պիտի գա...

— Չգիտեմ, բալիկս, գործը շատ է, չի վերջացնում, որ գա...

— Ի՞նչ շատ է գործը, որ չի վերջացնում, գալիս տուն։

— Չգիտեմ, բալիկս, չգիտեմ...

Երեխան հուսահատ կախեց գլուխը և արագ շարժումով դուրս ելավ բակը։ Անահիտը հուզվեց, տխրեց և հառաչելով անցավ տան գործերին։ Բայց գոհ է, որ հեշտ անցավ փորձությունը։

Այնուհետև Անահիտը նկատեց, որ Լևիկը դասը սովորելիս ընկնում է տխուր մտորումների մեջ։ Հասկանում էր պատճառը, բայց չտեսնելու էր տալիս, որ երեխայի վերքը չնորոգի, և մոռացվի բանը։

Բայց շուտով նկատեց, որ Լևիկը չի քնում, շուռումուռ է գալիս անկողնում ինչպես ջերմող հիվանդ։ Մի անգամ էլ հարցրեց.

— Լևի՞կ, ինչո՞ւ քնած չես։

Լևիկը ձայն չհանեց։

— Քնիչ, քնիր։

Կարծես հանգստացավ։ Եվ մյուս գիշերներն էլ կարծես քնում էր։ Բայց ոչ։ Մի գիշեր էլ մայրը լսեց, որ երեխան հեծկլտում է։ Վեր թռավ, մոտեցավ անկողնին։

— Ինչո՞ւ ես լալիս։ Լևիկ, ի՞նչ է եղել։

Ոչ մի պատասխան։

— Ասա, է՞, ինչո՞ւ ես լալիս։

Երեխան թռավ նստեց անկողնում և լաց եղավ.

— Ես ուզում եմ պապայիս ցույց տալ, թե ինչպես եմ սովորում, ուզում եմ, որ նա տեսնի տետրակներս... Ես պապա՜ եմ ուզում,— գոչեց նա բոունցքը թափահարելով օդում,— սիրտս պապա է ուզում... շա՜տ է ուզում...

Ու ավելի բարձրաձայն լացեց։

Երեխան հոգեպես ծարավի էր։ Պապա էր ուզում։ Որտեղի՞ց պապա... Պապան վճարում էր ալիմենտը և տարիներով լռում, ինչպես անտարբեր ժայռ։ Որտեղի՞ց պապա...

— Ես ուզում եմ նամակ գրել պապայիս, որ նա էլ ինձ գրի։ Ասա ո՞ւր գրեմ։

Ո՞ւր գրի...

Երեխան հիվանդանում էր։ Դա պարզ երևում էր։ Անահիտը հուսահատվել՝ չգիտեր ինչ անել։ Վշտանում էր և լռում։

Մի օր էլ Անահիտը նամակ գրեց իր մտերիմ ընկերուհուն, մոտակա քաղաքներից մեկը։ Գանգատվեց բախտից և հայտնեց, որ իր զավակը «հայր է ուզում», որ ինքը չգիտե ինչ անել։

«Երբ փոքր էր՝ ասում էր շուկայում պապա գնիր ինձ համար։ Խաբխբում էի։ Հիմա մեծացել՝ ասում է ուզում եմ նամակ գրել պապայիս, պատասխան ստանալ։ Ես որտեղի՞ց նրա համար պապա ճարեմ, որ նրա նամակը կարդա և պատասխանի». այսպես կոմիկ վշտով գրում էր Անահիտը իր ընկերուհուն՝ Աստղիկին։ Վերջում ավելացրեց, որ ինքը վախենում է, որ երեխան լուրջ հոգեպես հիվանդանա։

Ուղարկեց նամակը։ Բայց քիչ հետո մի միտք հանկարծ խայթեց նրան։ Ինչպե՞ս չէր մտածել այդ մասին։ Շատ անհարմար մի հանգամանք։— Աստղիկը ամուսնացել էր այն մարդու հետ, որի և Անահիտի մեջ մի ժամանակ ռոման էր անց կացել և ամեն նրանց հանդիպմանը Աստղիկն զգում էր, թե ինչպես էր իր ամուսնու ձայնը դողում։ Անահիտն էլ նման դեպքերում անհույզ չէր պահել իրեն, թեև միշտ խլացրած էր եղել իր զգացումները։ Աստղիկը անտարբեր չէր դեպի այս երևույթները, Անահիտը գիտեր այդ, ինչպես և Աստղիկը գիտեր։ Բայց երկուսն էլ իրարից աննկատելի

զգուշանում էին որևէ կասկածելի քայլից և առիթից։ Եվ ահա արդեն ուշ էր. նամակն ուղարկված էր։

Աստղիկը կարդաց նամակը, բարձր ծիծաղեց իր լուռ սենյակում։ Ծիծաղեց և ապա լրջացավ։ Երկար մտածում էր այդ մասին։ Հետո կրկին ժպտաց։ Մի միտք ծագեց նրա գլխում, մի որքան չարաճճի, նույնքան և լուրջ միտք։ «Հը՞, չի՞ կարելի արդյոք»։ Եվ երբ ամուսինը՝ Երվանդը տուն եկավ՝ Աստղիկը պատմեց նամակի մասին։ Երվանդը քահ-քահ ծիծաղեց «խանութի պապայի» վրա։ Եվ միայն այդքանը։ Բայց Աստղիկը դեռ շարունակում էր զբաղվել Անահիտի հարցով և այն մտքով, որ ծագել էր նրա մեջ։ Եվ ժպտում էր։

— Ի՞նչ ես մտածում,— հարցրեց Երվանդը նամակի հանգամանքը մոռացած։

Աստղիկն ասաց, որ նամակի մասին է մտածում։

— Նամակի մասի՞ն։ Լավ, ի՞նչ կա մտածելու։

— Լսիր, Երվանդ, մենք այսպես կանենք։ Երեխան նամակ կուղարկի մեր հասցեով, այսինքն քո, դու նրան կպատասխանես։

— Ե՞ս։

— Այո։ Քո անուն ազգանունը նույնն է ինչ որ երեխայի հորը։ Կգրես իբրև նրա հայրը, կգովես նրա առաջադիմությունը, թող հանգստանա։

— Համեցեք,— ծիծաղեց Երվանդը։

— Մի անգամ էլ, եթե հարմար նկատվի՝ կգնաս, կտեսնվես երեխայի հետ։

— Գնա՞մ... ոչ, դա ինչպե՞ս կլինի։

— Կլինի՜, կլինի՜։ Կտեսնվես հետը, կգուրգուրես, կգովես, թող ուրախանա՜։

— Իսկ եթե ասի թե մնա մեզ մո՞տ,— ծիծաղեց Երվանդը։

— Կասես որ անհրաժեշտ գործով ստիպված ես իսկույն վերադառնալ և շրջում ես հեռավոր քաղաքներում և երբ մի քանի ժամանակ հետո վերջացնես՝ կգնաս տուն։ Իսկ այդ միջոցին ժամանակը կանցնի։ Ժամանակ է պետք սրան։

— Հը՞մ,— լրջացավ Երվանդը,— տես ինչեր են պատահում կյանքում։ Լա՜վ,— թափ տվեց գլուխը։

Աստղիկը գործով պիտի գնար Երևան։ Օգտվելով առիթից, անցավ Անահիտի մոտ, հայտնեց իր որոշումը նրան։ Անահիտը

այն է՝ զարմանում էր, բայց երբ խորը նայեց Աստղիկին՝ սրտատրրոփ ու վախկոտ ձայնով հարցրեց։

— Կլինի՞ այդպես...

— Կլինի՛, կլինի։ Ես խոսել եմ Երվանդի հետ, թող երեխան նամակ գրի նրա անունով, Երվանդը կպատասխանի։ Թող Երվանդը գա, տեսնվի երեխայի հետ, գուրգուրի նրան...

Անահիտը դողաց հուզմունքից։ Գլուխը կախեց։

— Թող երեխան հա՛յր տեսնի...— մտախոհ ասաց Աստղիկը։

Անահիտը կրկին խորը նայեց Աստղիկին, որը փոխանակեց նույն հայացքով։ Հետո Աստղիկը վճռական ասաց.

— Այո, այո՛, թող գա, եթե կարիք լինի՝ շատ անգամ գա...

Հանկարծ Անահիտը խանդաղատանքով ուժգին փարվեց Աստղիկին։ Երկուսն էլ լաց եղան։

Երկու կին իրար շատ լավ հասկացան։

ՈՒՐԻՇԻ ԵՐԵԽԱՆ

Մայրիկոն իր ամուսնուց՝ Վաչիկից բաժանվեց պատերազմի հենց առաջին օրը և այնուհետև նրանից չստացավ ոչ նամակ, ոչ լուր։ Կարծես ասեղն ընկավ ծովը։ Անտանելի էր այն համառ անտեղյակությունը, անհույս լռությունը, որից ոչինչ չես հասկանում՝ հիվա՞նդ է, սպանվա՞ծ է, կորա՞ծ։ Եվ հետո՝ կվերադառնա՞ երբևէ։ Մի քիչ ժամանակ անց, նամակ ստացավ այն մասին, որ ամուսինը սպանված է։

Երիտասարդ, գեղեցիկ կինը, ճիշտ է, մեծ խանդավառությամբ մասնակցում էր ճակատի օգնության բոլոր ձեռնարկումներին, շարունակ աշխատանքի մեջ էր, շփվում էր մարդկանց հետ, սակայն ամուսնու բացակայությունը մահի չափ ծանր էր. նա միայնակ զգում էր սիրո դառնությունը, մտերիմի, մոտ մարդու կորուստը։

Բայց այս ապրումների մեջ, կարծես անգամ գրանցից անկախ՝ նրա կյանքում պատահեց մի անհասկանալի, զայրացուցիչ միջադեպ։ Մայրիկոյի նման կնոջ համար զայրացուցիչ։ Նա ուրիշից երեխա ունեցավ։ Ի՞նչպես պատահեց. ներելի՞ էր, թե դատապարտելի, այս ու նման բազմաթիվ հարցերի դիմաց այդ մի փաստը հենց միայն նրանով էր ուժեղ, որ փաստ էր։ Հարևանները շատ ցավեցին Մայրիկոյի համար, ճանավանդ Վաչիկի, որ կռվում էր, ոմանք էլ ագահ վրա ընկան բամբասելու, փսփսացին, շարախոսեցին և վերջը հոգնած լռեցին։

Սակայն փաստն էլ մնաց կրկին փաստ, որ Մայրիկոն ուրիշից երեխա ուներ։

Պատերազմից մի տարի հետո — և սա էլ զարմանալի, թե անսպասելի՝ Վաչիկը վերադարձավ։

Մայրիկոյին խիստ ցնցեց այս դեպքը։ Կարծես գինով էր եղել, երկարատև քնի մեջ և տհա առավոտվա պարզ լույսի տակ

տեսավ իր վիճակն ու գլխով անցածը։ Հասկացավ մի բան, որ ամենևին անհասկանալի բան չէր, պետք էր միայն պարզ նայել վրան։ Եվ ինչ որ է՝ նրա առջև կանգնեց իր ամուսինը, որին սիրել էր և հիմա էլ սիրում էր՝ չնայած միջադեպին։

Սակայն հիմա, իհարկե, այլևս այն վիճակը չէր, երբ նա երեխա ունեցավ, երբ նա բարեկամների ու շարեկամների փսփսոցով շրջապատված՝ իրեն տվել էր երազանքների, մոռացության և չէր պատասխանում այն հարցերին, թե ինչ է արել ինքը։

Նա այժմ հարկադրված էր իրական պատասխան տալու իր ամուսնուն.— ի՞նչ երեխա է սա, ի՞նչպես եղավ։

Մայրիկոն չթաքցրեց։ Պատմեց ամեն բան։ Հոգսերի, վշտերի օրերին, ընկերական ընթրիք, անզգույշ մտերմություն, պատահական բոպեի կիրք՝ խլացնելու համար հոգեկան ճնշումը։ Թերևս ոչ այս, ոչ այն, այլ ճիշտն ասած՝ ինքն էլ չգիտեր՝ ինչպես եղավ։ Դե իհարկե, ինքը սիրում է Վաչիկին...

Վաչիկը լարված լսեց այս ամենը, պինդ մտածեց։ Նա ևս խոր կապված էր իր կնոջ հետ։ Բայց երբեք մտքով չէր անցկացրել նման դեպք։ Շատ մտածեց Վաչիկը և վերջն այսպես վճռեց.

— Լա՛վ։ Դե հիմա էլ ի՞նչ երկար-բարակ խոսենք։ Դու՝ քեզ համար, ես՝ ինձ համար։

Մայրիկոն լռեց։

— Այո՛։ Ես կռվելու չեմ եկել տուն։ Հերիք է, մինչև բուկս կռվել եմ այնտեղ։

Մայրիկոն աչքերը թացացրեց, բայց լռեց։

Ընկերները մեջ ընկան, խոսեցին մի քանի օր, որ համոզեն Վաչիկին։

— Ամեն բան հաղթեցիր ու հիմա եկար սրան դե՞մ առար, տնա՛շեն, խեղդի՛ր մեջդ, անց կաց, գնա՛,— ասաց ընկերներից մեկը։

Վաչիկը շատ բան էր տեսել պատերազմում, վճռական էր գործել այնտեղ։ Հենց թերևս այդ էլ լուծեց խնդիրն անսպասելի կերպով։

— Լավ, համաձայն եմ։ Միայն մի պայման, երեխան պիտի գնա մանկատուն ու էլ ոտը չպիտի դնի այս տունը։

— Այդպե՞ս...

— Հա՛, թող կորչի, գնա՛, չերևա՛ աչքիս։

— Վաչիկ... գուցե կմտածես դու... որ...

— Խնդրում եմ, այլևս ոչ մի խոսք այդ մասին։

Համաձայնեցին։

Համաձայնեց նաև Մայրիկոն։ Ամուսնու տեսքը, դեմքի սպիները, կրծքանշանը, կենտրոնացած հայացքը շատ բան էին պատմում, թե ինչեր էին տեղի ունեցել այնտեղ, իրադարձությունների ահավոր դաշտերում։ Մայրիկոն ուղղակի ճնշվեց ամուսնու առաջ։ Կապված էր հետը։ Չէր ուզում վշտացնել այդ տարիներ տանջված, պայքարած, հաղթած մարդուն, որը եկել էր տուն և դառնանում էր՝ կորցնելով իր սերը։ Մայրիկոն զգում էր ամուսնու վիրավորված սերը, թաքցրած խռովքը, ուղղակի վիշտն այդ սիրո կորստից։ Մայրիկոյի զոհը, անշուշտ, մեծ էր և դաժան, բայց պետք էր։ Դեռ նա այդպես հաշվեց։ Մայրիկոն համաձայնեց. Վաչիկի համար։

Վաչիկը այսպես վերջացնելով պատմությունը՝ հանգստացավ։ Հիմա մնում էր գործադրել վճիռը, տանել երեխան մանկատուն։ Այդ ևս հոգացին։

Երկու օր հետո, երեկոյան, երբ երեխային պետք է տանեին մանկատուն՝ Վաչիկը կողքի սենյակում, ծոծրակը ափերի մեջ դրած, տախտին մեջքի վրա պառկել, թերևս մռայլ, բայց հանգիստ սպասում էր, որ գործը վերջանա։ Գործը՝ այսինքն երեխային մանկատուն տանելը։ Մի անախորժ քառորդ ժամ...

Լսվում էր, թե Մայրիկոն ինչպես էր կողքի սենյակում հագցնում երեխային։

— Մամա՛,— լսվեց այնտեղից երեխայի ձայնը,— հիմա որ ես գնամ մանկատուն, էլ տուն չպիտի գա՞մ, չէ՞, մա...

— Ոչ, պիտի մնաս մանկատանը,— պատասխանեց Մայրիկոն ճնշված ձայնով։

Երեխան մի փոքր մտածեց։

— Նրա համար, որ հիմա ես մանկատան տղա եմ դառնում, չէ՞ մա։

— Դու գնում ես մանկատուն, որ խելացի տղա դառնաս։

— Հա, մամա ջան, դու որ ասում ես գնա՝ ես էլ կգնամ։

Մի փոքր հետո երեխան հանկարծ մանր քրքջաց. հի՞, հի՞, հի՞։

— Ի՞նչ է, բալիկ ջան։

— Մամա ջան, մեր փիսիկին չենք կարող մանկատուն տա-

նել, չէ՞, մա ջան։ Որ տանեն, կթռչի պահարանի վրա, կգնան որ բռնեն՝ թռ՞ռ, կթռչի ներքև, ներքև էլ որ վազեն բռնելու՝ թռ՞ռ պատուհանը, ու պատուհանից էլ թռ՞ռ փողոց, կվա՞զի, կգա տուն, չէ՞ մա ջան։

Մայրիկոն լռում էր։

— Մամա ջան, ես որ գնամ՝ փիսիկին լավ կնայեք, չէ՞, մա։

— Հա, բալիկս։

— Իմ բաժին հացը նրան տվեք։ Թող նա իմ մահճակալին էլ քնի։

Մայրիկոն լռում էր։

— Փիսիկի համար լավ է, մամա ջան,— ասաց երեխան տխուր ձայնով,— նա երեխա չէ, որ մանկատուն տանեն։

Ու սիրտը վեր քաշեց։ Հասկացե՞լ էր իր գլխին կատարվածը, թե՞ հենց այնպես էր խոսում։ Բայց մայրը լուռ էր։ Եվ երկար ժամանակ չէին խոսում մայր ու երեխա։

Վերջապես լսվեց Մայրիկոյի արագ շարժումը։

— Դե՛, բալիկ ջան, գնա՛նք։

Նրա ձայնը թեթև դողաց։

Երբ Մայրիկոն երեխայի ձեռքը բռնած եկավ Վաչիկի սենյակը, որ դուրս գնա տնից՝ Վաչիկը վեր թռավ տեղից և կանգնեց նրա առջև։ Առաջին անգամ ուշադիր նայեց երեխային, որին մինչև այդ չէր նայել համարյա։

Երեխան միամիտ ու անմեղ աչքերը լայն հառեց նրա աչքերին։

— Թո՛ղ,— ասաց Վաչիկը։

— Ի՞նչ ես ուզում,— չոր հարցրեց Մայրիկոն։

— Հարկավոր չի, մի՛ տանի։

— Է՛հ, Վաչիկ,— տխուր հրաժարվեց Մայրիկոն։

— Քեզ բա՛ն եմ ասում, մի՛ տանի։

— Ո՛չ, նա կգնա՛,— հաստատուն շեշտով ասաց Մայրիկոն և քաշեց երեխայի ձեռքը։

Վաչիկը բռնեց Մայրիկոյի թևը, բայց սա ուժգին թափ տվեց և երեխային տարավ։

Երբ վերադարձավ տուն՝ Վաչիկը հուզված անց ու դարձ էր անում սենյակում։ Մայրիկոն գնաց իր սենյակը, նստեց պատուհանի մոտ։ Եվ երկար ժամանակ մնաց տեղում քարացած։

Վաչիկը գնաց նրա մոտ, կանգնեց դիմացը։

— Ինչո՞ւ տարար, ինչո՞ւ չուզեցիր թողնել,— սկսեց Վաչիկը։

Մայրիկոն չպատասխանեց։

— Ես չեմ հասկանում, վիրավորվեցի՞ր։

— Ո՛չ։

— Վիրավորվեցիր, գիտեմ, ասա՛, վիրավորվեցի՞ր։

— Ես չվիրավորվեցի... Նա վիրավորվեց...

Ու արագ թափով Մայրիկոն դեմքը թաքցրեց ափերի մեջ։

Երկար ժամանակ, մինչև գիշեր, անց ու դարձ էր անում Վաչիկը սենյակում, կանգնում պատուհանի առջև, ծխում ու մտածում։

Հետո վճռական շարժումով մոտեցավ կնոջը և ուսը բռնելով թեթև ցնցեց.

— Վաղը, առավոտ, կգնաս և ետ կբերես երեխային...

ՄԱՐՈՒՇ

Նստած էի ամբուլատորիայի միջանցքում, սպասում էի հերթի։

Միջանցքը նեղքնահարկ էր, կիսամութ կամարների էլեկտրական թույլ լույսը լավ չէր լուսավորում։

Երբեմն երկար էի սպասում, կամ լրագիր կարդալով հերթս բաց թողնում։ Լրագիր էի կարդում։ Մեկ էլ զգացի, որ կողքիս մի բան է խլրտում։ Շուռ եկա տեսնեմ՝ մի սիրունիկ, փոքրիկ աղջիկ է՝ խելացի աչքերով։ Նրա գլուխը փաթաթված էր բրդե սպիտակ շալով՝ ծայրերը փորի վրայով մեջքին հանգուստած։ Այսպես նա նման էր մի փոքրիկ կնոջ։

Աղջիկը դեմքն ինձ դարձրեց, ճպճպացրեց խոշոր աչքերը և լայն ու շիտակ հայացքը գամելով աչքերիս՝ մեղմ ու հանգիստ հարցրեց.

— Դի-ա-դիա, դու տիկնիկ ունե՞-ե՞ս։

— Ունեմ,— ասացի։

— Ինձ կտա-ա՞ս։

— Կտամ։

— Ե՞րբ կտաս։

— Վաղը որ գամ՝ կբերեմ։

— Բեր։

Հավատաց որ կբերեմ, և հիմա գոհ նստել կողքիս մտածում է։

Մի քիչ հետո.

— Դի-ա-դիա՞։ Քո տիկնիկի անունն ի՞նչ է։

— Փոփուշ։

— Ազգանո՞ւնը։

— Թուքուշիկյան։— Իսկ քո՞ անունն ինչ է։

— Մարուշ է։

— Հենց ամեն օր էլ Մարո՞ւշ։

— Հի՛, հի՛, հի՛, հի՛,— քրքջում է մանրիկ ատամները աղբյուրի խիճերի պես ցույց տալով և թշիկներում փոսիկներ գցելով։

Մի փոքր հետո նրկին.

— Փոփուշը երգո՞ւմ է։

— Երգում է։

— Այսպե՞ս է երգում։

Փոքրիկը քթի տակ ինչ-որ եղանակ է տզզում կցկտուր ու անհասկանալի։

— Հա, հենց այդպես էլ երգում է։

Լռում է։ Ապրումները հաճելի են. նա գոհ է և քթի տակ մեղմ ժպտում է, ինքն իրեն ինչ-որ փտփտում։ Հետո.

— Քո տիկնիկը կարմիր անկյուն ունի՞։

— Ունի։

— Լենին պապի ունի՞։

Հանկարծ սեղմվում է ինձ և գորովալից ու մեղմաձայն շշնջում է.

— Ես շատ եմ սիրում Լենին պապիին։ Իմ տիկնիկն է՛լ ունի կարմիր անկյուն,— շշնջում է նա և ցույց է տալիս մութ անկյունում ինչ-որ մի կարտոնե տուփ, որի վրա փռել է կոնֆետի թղթեր, դրել մի հատ կոտրած մատիտ, մի փոքրիկ գրքույկ և վերջապես արկղի մոտ, պատին թիկն տված մի փայտի կտոր՝ կարմիր շոր հագցրած։

— Սա՝ ով է,— հարցնում եմ։

— Ընկեր Ամալիկն է։

— Ի՞նչ է անում ընկեր Ամալիկը։

— Սպասում է, որ երեխաները գան մանկապարտեզ՝ խաղացնի։

— Ինչ լա՞վն է ընկեր Ամալիկը։

— Փոփուշին բեր Ամալիկի մանկապարտեզը։

— Կբերեմ։

Նա թռչում է մտքից միտք։

— Դիադիա, Լենին պապին միշտ ինձ է մտիկ տալիս։ Մի՞շտ, մի՞շտ, մի՞շտ։ Ես շուռ եմ գալիս, մտիկ եմ անում՝ ինձ է մտիկ տալիս։ Էլի եմ շուռ գալիս՝ էլի, էլի՝ էլի. ամեն օր, ամեն օր, ինչքան օր կա։

Չի կարող գազար տալ իր մտքերին։

— Դի-ա-դիա,— ծովում է դեպի ինձ ու երեսը մոտեցնելով իմ երեսին՝ շարաճճիորեն ծիծաղում է,— ես տեսել եմ Փոփուշին։

— Տեսե՞լ ես, որտե՞ղ։

— Կինո էր գնում։ Էնտեղ մեծ, մեծ կինոներ են, շուտ, շուտ, շուտ վազում են, գնում են, կորչում։

Նա էլի ինչ-որ բաներ է փտփտում քթի տակ։ Արդեն ինքն իրեն է խոսում՝ ինձ մոռացած կարծես։ Բայց ոչ, ամուր կպել է կողքիս և այդպես լավ է զգում։ Մի տեսակ ընկերություն է վայելում։ Արդեն ինձ ընդունում է իբրև իր խաղընկերը։

Հանկարծ նա ուժով սեղմվում է ինձ և գլուխը դնում թևիս։

— Ես շատ եմ սիրում քեզ։

— Հա՞, շա՞տ ես սիրում, ինչքա՞ն։

— Ամպի չափ։

— Ամպի՞։ Ինչո՞ւ ամպի։

— Ամպը շատ է։

— Մի՞թե շատ է։

— Բա՞. շատ է էնքա՞՞՞ն, մեծանո՞ւմ է. մեծանո՞ւմ է, հետո գնո՞ւմ է, գնո՞ւմ, գնո՞ւմ, ինչքան գնում է՝ չի պրծնում, ինչքան գնում է՝ չի պրծնում։

— Ինչո՞ւ չի պրծնում, բա որ առաջը մեծ սար լինի՞։

— Չէ՞է՞, դիա-դիա՞, սարի վրայից անցնում է, էլի գնում, գնում, գնո՞ւմ։

— Բա որ առաջը հաստ պատ լինի՞։

— Չէ, չէ, չէ՞, դիա-դիա՞, միջից անցնում է, գնո՞ւմ է...

... Ի՞նչ կարող ես առարկել սրա այս «տիեզերական անվերջությունը»։

Բայց ինձ խորհրդածությունից հանում է քրոջ ձայնը.

— Ընկե՛ր... համեցե՛ք ներս։

Թժշկի մոտից դուրս գալիս տեսնում եմ Մարուշին նստած նույն տեղը, մտախոհ և հանգիստ։

— Է, Մարուշ ջան, ես գնում եմ։ Վաղը կգամ և Փոփուշին կբերեմ։

— Լավ։

Դրսի դռնից ներս է գալիս մի հասարակ հագնված կին՝ երկար խոզանակն ու թեփի դույլը ձեռքին։ Տեսնելով Մարուշին՝ սուր նայում է նրան և մոտենում մեզ։

— Ի՞նչ ես անում էստեղ։

— Ձեր աղջի՞կն է,— հարցրի ես,— ինձ հետ զրույց էր անում։

— Ի՞՞՞, սրան որ լսես՝ առավոտից մինչև կեսգիշեր հա՞ կխոսի, կխոսեցնի։ Մանկապարտեզ էր գնում, հիվանդացավ, նոր է լավացել, տանը մարդ չկա, բերել եմ հետս։

Հետևյալ օրը բարձրանում էի ամբուլատորիա, երբ միտս ընկավ Մարուշի տիկնիկը... Ետ դառնալ խանութները ուշ էր։ Փողոցում կոնֆետ առա և մտա ամբուլատորիա։ Մարուշը հենց որ ինձ տեսավ՝ վազեց.

— Բերի՞՞՞ր...

— Չբերի, Մարուշ ջան, գնացել էր դպրոց։ Վաղը կբերեմ։ Ա՛ռ, այս կոնֆետը, Փոփուշն ուղարկեց քեզ։

— Փոփո՞ւշն ուղարկեց։ Ասա՞ց որ կգա։

— Այո, այո։

Հետևյալ օրը մի փոքրիկ տիկնիկ գնեցի և նախաճաշակելով Մարուշի ուրախությունը՝ ներս մտա ծանոթ միջանցքը։ Նա դեմ վազեց, ես տվի տիկնիկը։ Նա նայեց և մի տեսակ զարմացած ասաց.

— Վա՞յ, սա Փոփուշը չի՞...

— Ինչպե՞ս, բալիկ, սա Փոփուշն է։ Լա՛վ մտիկ տուր։

Նա կրկին նայեց։

— Չէ՞ է՞, դիա-դիա՞, չէ՞։ Ախր Փոփուշի մազերը սև են, աչքերն էլ կապույտ։ Հագինն էլ էսպես չի։

Ես զգացի սխալս։ Ախր նա այն օրը, որ հայտնեց, թե տեսել է Փոփուշին, պետք էր հարցնել տիկնիկի արտաքինը։

— Հաա՞, ճի՞շտ է, ճի՞շտ է, սա Փոփուշը չի, սա Փոփուշի ընկերուհին է, Լիլիկը, միասին են գնում մանկապարտեզ։

— Չէ՞ է՞, դիա-դիա՞։ Սա Ռուզիկն է, գնում է տղաների հետ ֆուտբոլ է խաղում։

Սարքելուց բան չէր դուրս գա։ Պետք էր ստեղծագործել...

— Լսիր, Մարուշ, Փոփուշը սիրուն է, լավիկն է, չէ՞։

— Հա ա, հա՞, դիա-դիա՞, հենց նա՞ է,— հրճվեց Մարուշը։

— Մանկապարտեզ է գնում, չէ՞։

— Հա, հա՞, գնում է մանկապարտեզ. խաղում է...

— Հա, հա՜, խաղում է, երգում էլ է, «Լենին պապին» է ասում, չէ՞։

— Հա, հա՜, ա՜յ, նա՛ է, դիադիա։

— Առավոտը վեր է կենում, մաքուր լվացվում է, սանրվում է ու... հա՜, ո՞ւմ հետ է գնում մանկապարտեզ, մոռացա...

— Լիզա տյոտայի ու նրա աղջկա հետ։

— ... Ճիշտ է, Լիզա տյոտյայի ու աղջկա հետ։ Հետո՝ պարում է, շատ ուրախ է, լաց չի լինում, միշտ վազվզում է։ Բերե՞մ նրան Ամալիկի մանկապարտեզ։ Հա՞։

— Հա՛, դիադիա՛, բե՛ր, բե՛ր... Ուրիշ տիկնիկներ էլ բեր, որ ընկեր Ամալիկը խաղացնի, նստեցնի մանկական երկաթուղի, տանի է՛յ հեռո՛ւ, հեռո՛ւ... էնտեղ ծաղիկներ կան, թռչուններ, ուրիշ քաղաքնե՛ր, երեխանե՛ր...

Մենք բաժանվում ենք։ Ի՞նչ հրաշալի ծաղիկ է փթթում այս փոքրիկ, անշուք միջանցքում։

ԼԻԶՈՉԿԱ

Նամակ պետք է տայի մի բարեկամիս, որ հետևյալ օրը առավոտը շատ վաղ թռչելու էր քաղաքից Մոսկվա։ Ուստի չնայած, որ երեկոյան ինն էր ժամի, գնացի նրա բնակարանը։ Կինը՝ Մարուսյան էր միայն տանը։ Դա մի խաժակնյա, բարձրահասակ, գեղեցիկ ուկրաինուհի էր։ Մոտ բարեկամներ էինք նրա հետ, ուրախացավ այցելելուս համար։

Զարմանալի կին էր, չնայած արտաքին գեղեցկության՝ ավելի գրավիչը նրա անչափ գեղեցիկ բնավորությունն էր։ Ընկերս ճակատում եղած ժամանակ, Ուկրաինայում, ինչ-որ մի տեղ ամուսնացել էր հետը, մի արձակուրդի ժամանակ նրան բերել էր Երևան և տեղավորել ժամանակավոր մի բնակարանում։

Նրան ցնցել էր մի սոսկալի դեպք։ Էվակուացիայի ժամանակ, երբ ֆաշիստական ռումբը ջարդել էր նրանց վագոնը, իր չորս տարեկան աղջիկը ընկել էր անիվների տակ... խենթացած, խորտակված, մի կերպ թաղել էր զոհին, և հետո էլ թիկունքում լսել էր նաև իր նախկին ամուսնու զոհվելը։

Նոր ամուսինը շատ էր մտահոգված եղել, որ նա որևէ աշխատանքի մտնի, զբաղվի, մոռանա վիշտը։ Բայց խեղճ կինը նյարդային էր դառել այն աստիճան, որ բարվոք էին համարել առայժմ տանը պահել նրան։

Երբ մտա սեղանատուն, տեսա նրա որդեգրած տասնամյա աղջկան, որ սեղանի մոտ նստած կարդում էր։

— Ա՜, Լի՛զոչկա, բարև,— ասացի ես և մոտեցա աղջկան։

Նա մեղմաժպիտ վեր կացավ, բարևեց և գրկեց ինձ։ Մենք լավ էինք մտերմացել։ Ես խոսեցրի նրան։ Հիմա նա սովորում է և գերազանցիկ է։

— Շա՞տ ես կարդում, Լիզոչկա,— հարցրի ես։

— Այո։

— Դասերին չի՞ խանգարում։

— Ոչ։

Ես շոյեցի նրա գլուխը և թողի իր գրքի հետ։

Նա շարունակեց կարդալը, բայց մի անգամ էլ վեր նայեց, հայացքն ուղղեց ինձ, խորազնին, երկար նայեց աչքերիս մեջ։ Չգիտեմ թարգմանիչ ասեմ, կասկածո, խորթությո՞ւն... մի ինչ-որ բան կար նրա հայացքի մեջ։

Եվ դա միայն այդ երեկո չէր։

— Դե՛, Լի՛զոչկա, ժամի ինն է։ Գնա քնի՛ր,— ասաց մայրը նրան։

— Մա՛մա...

— Ո՛չ, ո՛չ, ե՛կ համբուրեմ, գնա քնի՛ր։ Չի կարելի ավելի։

Լիզոչկան մոտեցավ մորը, որը համբուրեց նրան, ինքն էլ մորը, և լուրջ, մտախոհ գնաց ննջարան։ Ես նկատեցի, որ նա գանդաղ գնաց, ստը կախ գցելով։ Չէր ուզում։

— Շա՛տ է կարգում Լիզոչկան,— ծոր տվեց մի տեսակ մտախոհ Մարուսյան, կարծես մի հիվանդության մասին լիներ խոսելիս։

— Ի՞նչ է, վա՞տ է, որ կարդում է,— հարցրի ես։

— Չեմ կարող ասել վատ է,— պատասխանեց Մարուսյան մի փոքր գանգաղ ու մտածելով,— բայց ախր նա չի կարդում խկապես։

— Հապա ի՞նչ է անում։

— Մտածում է։— Այո, կարգում և մտածում է։ Եթե ես չխանգարեմ, կնստի ժամերով, կընկնի խոհերի աշխարհը։

— Իսկ ի՞նչ է մտածում ձեր կարծիքով։

— Ա՛, սիրելի բարեկա՛մս...

Մարուսյան հառաչեց և լռեց։ Ես սպասեցի, որ նա մի բան կասի այդ մասին։ Բայց նա չգիտեմ ուզեց խուսափե՞լ, թե՞ նոր բան մտաբերելով՝ մոռացավ՝ ասաց.

— Գիտեք, ես այսօր ստորագրեցի Ստոքհոլմյան խաղաղության կոչի տակ։

Նա ասաց այդ մի տեսակ տարօրինակ հանգիստությամբ և այնպիսի տոնով, կարծես ես էլ նույնը չէի արել, և կամ դա մի առանձին հազվագեպ բան լիներ նրա կյանքի մեջ։

— Հը՛մ,— ասացի ես համարյա մեքենաբար։

Ստոքհոլմյան կոչի տակ ստորագրելը սովետական մարդկանց համար որքան մեծանշանակ, նույնքան և հասկանալի, սովորական բան է, որ մտածեի թե ի՞նչ զարմանալի բան կար այստեղ։ Դա ոչ զարմանալու, ոչ առանձնապես շեշտելու, և ոչ էլ իբրև մեծ նորություն հաղորդելու դեպք էր։

Մարուսյան, սակայն, ինչ-որ մտքերի հետ էր։ Նայում էր հեռուն, պատուհանից դուրս։ Նա կրկին նայեց ինձ և դեմքը ցնցելով, այս անգամ առանձին շեշտով և հուզված կրկնեց.

— Այո՛, ես ստորագրեցի Ստոքհոլմյան կոչի տակ։

— Ասել է՝ չեք ուզում պատերազմ, էլի՞,— կատակեցի ես, երկին նշանակություն չտալով նրա ասածին։

— Պատերա՞զմ... — լուրջ ընդունելով հարցս՝ առանձին հանգստությամբ նայեց ինձ Մարուսյան,— պատերա՞զմ... Գիտե՞ք, եթե մի մարդու իրավունքը միայն մի ստորագրություն լիներ, այլ որքան որ նա կկամենար, ես կգնայի, կընկնեի աշխարհե-աշխարհ, կստորագրեի բոլոր մարդկանց տեղ, որ պատերազմ չլինի։ Որ ձեռք չտան երեխաներին... Օ՜, այդ երեխաներին...

— Երեխաների՞ն։

— Գիտե՞ք, պատերազմի մեջ ես ամենից շատ սարսափում եմ երեխաների համար։

— Հա, իհարկե։

— Ամենից շատ երեխաների՜ համար, օ՜, ամենից շատ երեխաների՜...

— Հասկանալի է...

— Ո՜չ, պետք է լինեք, որ զգաք, հասկանաք,— և Մարուսյան սարսափով նայում է ինձ։

Ես հասկացա, որ նրան ինչ-որ մի կոշմար է հետևում։ Նա չի կարողանում հանգիստ խոսել այդ մասին։

Ես կամեցա խոսքը դարձնել ուրիշ կողմ։

— Հասկանում եմ, երեխաների գործը դժվար է,— ասացի ես,— որքան էլ որ ծնողազուրկ երեխաներին ապահովում են պետությունը և բարի մարդիկ...

— «Երեխաներին ապահովո՞ւմ են»։ Իհարկե ապահովում են, բայց թե ինչեր է անում պատերազմը երեխաների հետ...

— Այո, իհարկե... Բայց ձեր երեխան շատ բախտավոր եղավ, ինչպես տեսնում եմ,— ասացի ես։

Մարուսյան լռեց։

Բայց նա խորապես հուզված էր։ Նա վեր նայեց անհանգիստ, վրդովված և մի տեսակ բողոքող ու խեղդված ձայնով ասաց.

— Օ՛, մի՞ ասեք, բարեկամս. սա ինձ այնքա՞ն թանկ է նստել... սա ինձ... Բայց լավ է պատմեմ... Լիզոչկան փոքր էր, չորս տարեկան, երբ նրան որդեգրեցինք այստեղ, Երևանում։ Նրան բերել էին Ուկրաինայից, էվակուացրած երեխաների հետ։ Ամուսինս առաջին օրվանից սկսել էր մտածել իմ մասին, թե ինչպես պետք է մենակ անցկացնեմ կյանքս Երևանում։ Ինքը, ինչպես ասացի, եկել էր արձակուրդով և ինձ բերել այստեղ։ Ճիշտ է, մեզ բնակարան տվին մի հայ դերասանի սենյակներից երկուսի մեջ, և դերասանը ինքը գնացել էր զինվորական հիմնարկ խնդրել, որ եթե պետք է խտացնեն իր բնակարանը, թույլ տան, որ ի՛նքը ընտրի իր կենողներին։ Թույլ էին տվել և նա մեզ ընտրեց ու ամուսնուս հետ շատ խաղաղ ապրում էինք նրա բնակարանում։

Դերասանն իր կնոջ հետ շատ բարի, հանգիստ և կրթված մարդիկ դուրս եկան, և ես, ճիշտն ասած, բոլորովին էլ մենակ չէի, բայց ամուսինս մտածում էր մի բանով ինձ զբաղեցնել տալ։ Մտածեցինք, որ լավ կլինի մի որդեգրուհի վերցնենք էվակուացված մանկատնից։ Այդպես էլ արինք։ Գնացինք մանկատուն, ընտրեցինք երեխային, եկանք տուն։ Ես հետևյալ օրը գնացի մանկատուն և վարիչին խնդրեցի, որ մեր ընտրած փոքրիկ աղջկան մի երկու շաբաթ առաջ նախապատրաստեն, որ իր մայրը պիտի գա. թող սպասի, տրամադրվի։

Երկու շաբաթ ես նրա հագուստներն էի կարում, անկողինը, խաղալիքները պատրաստում։ Որոշեցի նվերս — առաջին տեսակցության պահին՝ մի խայտաճամուկ, սիրունիկ տիկնիկ և կոնֆետներ։

Գնալուս օրը ուղղակի դողում էի։ Ես ևս տրամադրվել էի։ Կարծես իրոք իմ հարազատ աղջկան պիտի տեսնեի։ Երբ ներս մտա վարիչի կաբինետը, նա որոշեց, որ երեխային կբերի ընդունարան, կասի. «մաման եկավ»։ Այդ րոպեին ես ներս կմտնեմ և կհանդիպեմ «իմ աղջկան»։

Այդպես էլ արինք։

Երբ ներս մտա ընդունարան և տեսա «աղջկաս» քույրերից մեկի ձեռքը բռնած ներս մտնելիս՝ «բալի՜կս» ասացի ես և գորովագին գրկեցի նրան։ Աղջիկը իսկույն կպավ կրծքիս։ Հավատացնում եմ ձեզ, ես իսկույն մայր դառա այդ րոպեին։ Համբուրո՜ւմ եմ, սեղմո՜ւմ կրծքիս, սիրո՜ւմ, փայփայո՜ւմ...

Տվի նվերներս, աչքերը փայլեցին...

Մնացի մի ժամի չափ, ու մինչ դրասենյակում ձևակերպում էին պաշտոնական գրությունները՝ երեխան ինձ հանձնելու մասին՝ ես սկսեցի աննկատելի կերպով հասկացնել փոքրիկին, որ պիտի գնանք տուն։

Դժվարություն չեղավ։ Արդեն երեխային նախապատրաստել էին, որ մաման պիտի գա և իրեն վերցնի տանի տուն։

— Ուզո՜ւմ ես տուն գնանք, ջանիկս,— հարցրի նրան,— թե՞ ուզում ես մնալ այստեղ։

— Ուզում եմ գնալ տուն,— ասաց նա և կրկին գրկեց ինձ։

Բերի տուն, երեկոյան թեյ տվի, կերակրեցի և տարա իր մահճակալը պառկեցրի։ Քնեց հանգիստ։ Առավոտյան զարթնեց և առաջին խոսքն էր՝ մաման։ Իմ էլ առաջին խոսքն եղավ՝ ի՞նչ է, ջանիկս։ Շատ ջերմացնում էր ինձ այդ «մաման» բառը, իմ «ջանիկս» ասելը։

Ես մտածում էի, թե նման դեպքերում դժվարն իմ կողմից պետք է լիներ, և շատ ուրախացա, որ այդ դժվարությունը չզգացի, որ այդպես շուտ ընտելացա, դառա «մաման»։ Հավատացնում եմ ձեզ, երբեմն ինձ թվում էր, թե իսկական հարազատությունը նախապաշարմունք է։ Հարազատանում ես օտար մարդու հետ, ամուսին ես դառնում և նրան կորցնելիս քիչ է մնում խելքդ կորցնես։ Իսկ ինչո՞ւ օտար երեխան չի կարող հարազատանալ։— Ոչ, ուրախ էի, կասեմ ուղղակի, երջանիկ։

Միաժամանակ էլ ուրախ էի, որ երեխան այդքան մտերմացավ, մոտեցավ ինձ, ընդունում էր իբրև հարազատ մոր, որին կորցրել էր և հիմա գտնելով նույնպես երջանիկ էր։

Երեխան շատ սիրեց ինձ, շատ կապվեց։ Լավ է — խնդիրը լուծվեց։

Մի օր կար էի անում մեքենայով։ Լիզոչկան եկավ կանգնեց մոտս, սկսեց հետևել։ Պետք է ասեմ, որ նա ուներ այդ սովորու-

թյունը՞ մոտենալ, նստել մոտս և երկար հետևել, թե ինչ եմ անում։

Ես դրա մեջ ոչինչ չէի տեսնում։ Բայց ինչպես երևում է դա ուրիշ դրդումից էր։ Երեխան նստեց, սկսեց նայել ինձ, նայել երկար, տարված։ Ամենից շատ նայում էր ձեռքիս։

Մի բոպե դադարեցրի մեքենան։

— Մա՛մա,— դիմեց ինձ Լիզոչկան։

— Ի՞նչ է, ջանի՛կս։

— Մամա, ինչո՞ւ քո ձեռքերը սև են։

— Դե, այդպես է, Լիզոչկա, ի՞նչ կա որ։

— Ախր ինչո՞ւ են սև։ Չէ՞ որ քո ձեռքերը սպիտակ էին այն ժամանակ։

Մտածեցի՝ երևի մանկատուն գնացած ժամանակ։

— Այն ժամանակ երևի գործ չէի արել, դրա համար էլ սպիտակ էին,— ասացի ես և շարունակեցի կարելը։

Լիզոչկան ձայն չհանեց։ Եվ այս էպիզոդը շատ էլ չգրավեց ուշադրությունս։

Անգամ մոռացա։

Բայց մի ուրիշ անգամ, երբ ես Լիզոչկային հեքիաթ էի պատմում և ինձ թվում էր, թե նա ինձ ուշադիր լսում է՝ նկատեցի, որ նա շարունակ նայում է աչքերիս և ուրիշ բան է մտածում։

— Մամա՛։

— Ի՞նչ է, բալիկս։

— Մամա՛, ախր քո աչքերը սև էին, ինչո՞ւ են հիմա կապույտ դառել։

Իսկույն հանգստացրի.

— Չէ՛, ջանի՛կս, իմ աչքերը միշտ էլ կապույտ են եղել, սև չեն եղել։

Լիզոչկան լռեց, կարծես համոզվեց։ Բայց դեռ երկար ժամանակ լուռ նայում էր ինձ։ Հեքիաթը մոռացել էր, չխնդրեց շարունակել։ Ես չգիտեմ ինչու մի տեսակ անախորժություն զգացի և էլ չշարունակեցի։

Ես սկսեցի մտահոգվել։ Ուրեմն երեխան դեռ չի ընկալել իր հոգում իր «մորը»։ Անշուշտ, ինձ շփոթում է ուրիշ մի կնոջ հետ, որին կարծել է կամ ասել են, որ իր մայրն է։

Բավական անորոշ, կասեմ տխուր մի բան զգացի։ Ա՛յ քեզ

բախտ. Երեխա եմ վերցրել, որդեգրել, ուզում եմ մայր դառնալ, երեխան չի կարողանում հարազատանալ։

Ես սկսեցի մեղմ ու հանգիստ համոզել նրան, որ ես ուրիշների նման չեմ կարող լինել, որ ես միշտ այդպես եմ եղել։

— Հիմա հասկացա՞ր, հոգիս, դու սխալվել ես։ Քո մաման ինչպե՞ս կարող է սև աչքեր ունենալ։ Տե՛ս, կապույտ են նրանք և կապույտ էլ կմնան մի՞շտ, մի՞շտ, մի՞շտ...

Ասում եմ, գրկում նրան, համբուրում, լաց լինում...

Նա էլ կպավ կրծքիս և սկսեց համբուրել։ Բայց զգում եմ, որ ուրիշ տեսակ է համբուրում ինչպե՞ս ասեմ, վախեցած, կրքով, ուժով։ Կարծես վախենում էր, որ ես փախչեմ, չլինեմ, կորցնի ինձ, կարծես իրենից փախչում է մի բան, կարծես նա իրեն ուզում է մի բան համոզել։

Մի անգամ էլ, երբ նստած նայում էր ինձ,— ա՜խ, այդ շարունակ նայելը, որ այնքան տանջում էր և տանջում է ինձ...— հանկարծ ասում է.

— Մամա՛, ախր դու մեռած էիր, ինչպե՞ս վեր կացար եկար։

Ես մեռա՞ծ... ցնցվեցի։ Կասկած չկար, որ երեխան ինչ-որ իրական բան ասաց։ Դեռ ուշքի չեկած՝ ես իսկույն վրա բերի։

— Բալիկ ջան, ես մեռած չեմ եղել... մեռածը չի վեր կենա, գա և...

— Չէ՛, մամա՛, ֆաշիստները քեզ սպանեցի՛ն... Շուրջդ արյուն էր... ես շատ լաց եղա...

Տեղումս քարացա մնացի։— Ուրեմն ինչպե՞ս էր եղել՝ տպավորվել էր երեխայի մեջ սպանված մոր կերպարանքը... Ահա՛ թե որտեղից էր ձեռքերի սպիտակությունը, աչքերի սևությունը։ Եվ ինչպե՞ս չեմ մտածել առաջուց, որ կարող են այդպիսի բաներ լինել։ Բայց և ինչպե՞ս մտածեի։

Ես շփոթված էի. խոսք չկարողացա ասել, լռեցի և կարծես լավ արի։ Նա ևս լռեց, և կարծես այդպես լավ եղավ։

Դրանից հետո ամիսներ անցան, և ես թեև զարմացած էլ էի, բայց հանգստացա մի փոքր, թե փորձությունն անցավ։ Մենք լում էինք։ Մի անգամ միայն, երբ նա կրկին խոսեց այդ մասին, պնդեց, որ ես էի սպանված մայրը՝ ես վճռական ասացի.

— Լիզոչկա, ես չէի այն մեռածը։

— Չէ՞, դո՞ւ էիր, մա՞մա,— ասաց և հանկարծ ու խոր նայեց ինձ։

Ես սարսափով կասկածեցի, որ նա «ետ քաշվեց», կարծես մտավ մի թանձր պատյանի մեջ ու լռեց։ Եվ այդ լռությունը եղավ իմ մեծ սխալմունքի պատիժն ու տանջանքը հետագայում։ Ամեն մի նոր խոսք նոր կասկածի կամ համոզվելու առիթ պիտի լիներ։

— Բայց և այնպես հարցուփորձով հետո բան չկարողացա՞ք իմանալ,— հարցրի ես։

— Օ՜, մի՛ ասեք,— ինչ որ անհասկանալի նյարդային խրստությամբ ասաց Մարուսյան,— հենց այնուհետև էր, որ սկսվեց իմ տրագեդիան։ Ես բնազդով կառչել էի լռության։ Ի՞նչ միտք ուներ խոսեցնելը։ Ամեն նոր խոսք պիտի նշանակեր ավելի լայն պատռել արդեն ճեղքված վարագույրը։ Ես զգացի, որ նրա մեջ տեղի է ունենում գուցե և իր համար անհասկանալի՝ դաժան աշխատանք։ Ինձ թվաց, թե նա սկսեց ինչ-որ բան գլխի ընկնել, բայց չէր կարողանում։ Եվ հիմա, այս բոպեիս ի՞նչ է ապրում նա։ Ընդունո՞ւմ է ինձ իբրև իր մայրը...

Վերջին խոսքը նա մրմնջաց ինքն իրեն։

— Ամենածանրը ինձ համար նրա լռությունն է։ Այն օրից, երբ ինձ հարցումներ էր ուղղում, լավ էր, քանի որ ես էլ պատասխանում էի։ Բայց հանկարծ դադարեց և մեր մեջ սկսվեց այս ծանր լռությունը։ Ես լռում էի և հիմա էլ լռում եմ երկյուղից, որ կբանամ հանկարծ նրա հոգում թաքնված գաղտնիքը, և գուցե նա էլ է լռում հենց նույն պատճառով։

— Երեխան ապրում է սիրելիս,— շարունակեց Մարուսյան ինքն իր հետ մտքում խոսելուց հետո,— նա ուժեղ պատկերներ ունի իր մանկական մատաղաշ հոգու մեջ, ինչ ուզում ես՝ արա։ Այո՜, այո՜, նա իր ներքին կյանքն ունի, խորհում է, իսկ մենք անցնում ենք կողքից։

— Ես խուսափում եմ և զգում եմ, որ նա ևս խուսափում է։ Ինչո՞ւ։ Գուցե վախենում է, որ կորցնի ինձ... կամ խնայում է ինձ... Այս տրավման, կոտրվածքը, որ կա նրա հոգու մեջ, այս անհանդիստ միտքը, որ խլրտում է նա փոքրիկ ու թույլ բանականության մեջ...

Ես սրտնեղեցի.

— Է՜է՜է՜, թողե՛ք, Մարուսյա,— գոչեցի ես,— ի՞նչ եք փորփրում, քրքրում, վշտեր հնարում ձեզ համար։ Պետություն կա, հասարակություն կա։ Սրան կմեծացնեն, կյանք կմտցնեն, գործել կտան, կերջանկացնեն, շատ բաներ կամ հենց բոլորը մոռանալ կտան։ Լիզոչկան կարող է թերևս ամենաերջանիկ կինը դառնալ։

— Գիտե՞մ, գիտե՞մ,— ասաց Մարուսյան,— գիտե՞մ այդ բոլորը,— բայց հասկացե՛ք ինձ... ի՞նձ...

— Ձեզ. դո՞ւք։— Նա սիրում է ձեզ...

— Ես հիմա չգիտեմ ինչ է ապրում նա իր հոգում. ընդունո՞ւմ է ինձ իբրև իր հարազատ մայրը։ Չգիտեմ... կամ գուցե գիտեմ,— մրմնջաց Մարուսյան ինքն իրեն,— նա սիրում է ինձ, բայց... իբրև ո՞ւմ...

— Իսկ դուք ի՞նչ էիք կամենում։

Արցունքը կայլակեց նրա կոպերի տակ.

— Կարծում եք կոտրվածքը միայն նրա՞ հոգու մեջ է,— և Մարուսյան այնպիսի մեծ վշտով նայեց ինձ, որից ես զգացի արդեն իսկական կոտրվածքը նրա հոգում։ (Զոհված աղջիկը, և ինչպես իմ միտքը շարունակ այս աղջկա կողմն էր...)։

— Ես ուզում եմ իսկական մայր լինել... Իհարկե մենք իրար սիրում ենք... — սկսեց ինքն իրեն շշնջալ Մարուսյան։

Հանկարծ ընդոստ վեր կացավ.

— Այո՜, սիրում եմ սրան, գուրգուրում, զբաղեցնում, ուրախացնում։ Թող մոռանա՝ եթե հիշում է, չգիտենա՝ եթե կատարվել է։ Այժմ ես եմ նրա մայրը, հասարակությունը, պետությունը։ Այո, բայց շատ էլ, շատ էլ։ Ի՞նչ է, դուք պատրաստվում եք նորից որբե՞ր հավաքել, մայրեր «ստեղծել»։ Ինչո՞ւ պետք է անպատճառ վերքեր ստանալ, որպեսզի հետո էլ բուժենք։ Ասացեք ինչո՞ւ, ինչո՞ւ... Պետությո՞ւնը։ Այո՜, պետությունը կանի, ավելի մեծ բաներ էլ կանի։ Բայց շատ է՞լ։— Մենք ամեն արգելքներ խորտակում ենք, այո՜։ Բայց ինչացո՞ւ են այդ արգելքները։— Ո՜չ։ Պատերազմ չպե՞տք է լինի։ Ազատեցե՛ք մեր մանուկներին ու մայրերին պատերազմից։ Նրանք պատերազմ չպե՞տք է տեսնեն... Եվ վե՛րջ։

ՔԵՓԹԸՆ

Երևանի արվարձաններից մեկի՝ Արաբկիրի ցածրիկ երկսենյականոց տնակից դուրս եկավ մոտ վաթսունհինգամյա մի ծեր մարդ և կանգ առավ դռանը։

Չնայած տարիքին, պնդակազմ էր նա, կեցվածքը ձիգ, ինչպես լինում են հին զինվորականները, բանվորներից շատերը, ֆիզիկական աշխատանքով ապրածները։

Հայացքը հրամայական շեշտ ուներ և առաջին խոկ վայրկյանից լարում էր մարդու, թերևս վանում։ Անբարյացակամ էր թվում այդ հայացքը։

Նա Հայաստան էր վերադարձել մի քանի տարի առաջ ու վերջնականապես պինդ հաստատվել էր Երևանի այս արվարձանում, իր սեփական տան մեջ։ Արևմտահայ էր, գյուղացի, հետագայում բանվոր՝ եվրոպական շատ երկրներում և Ամերիկայում։ Փող կուտակելը ատել էր ողջ կյանքում։ Բայց իր բնավորության հակառակ՝ բանվորական աշխատանքի վերջին տարիներին խնայողություն արեց, լսելով որ հայրենադարձություն կարող էր լինել։

Իր այս տունը նա շինեց խնայած դրամով, ուղղակի խնդրելով թույլատրել իրեն, որ «նեղություն չպատճառի պետության», այդ համարելով «իր հատուկ պարտականությունը և խոնարհությունը սիրեցյալ կառավարության առաջ»։

Ապրում էր մենակ, ուներ իր մշտական գրքերը, որ կարդում էր կրկին ու կրկին, բայց անհաղորդակից չէր, գնում էր հարևանների մոտ, ընդունում էր նրանց իր մոտ։

Իր հետ Հայրենիք եկած երիտասարդ Ատոմը քաղաքի գործարաններից մեկում անվանի փականագործ դառավ։ Երեք այլ երիտասարդ հարևաններ շոֆեր էին քաղաքի հիմնարկներում, մի ուրիշը ատաղձագործ էր և սրանց երեսը նա հազիվ էր տեսնում նույնիսկ հանգստյան օրերին։

Իր շրջապատում կային նաև իրեն հասակակից, իրենից մի փոքր ավելի պակաս տարիքի հայրենադարձներ, որոնք չէին աշխատում կամ երբեմն էին աշխատում։ Նրանց հետ էր ավելի շատ հաղորդակցում, զրուցում։ Այդ զրույցների նյութը մեծ մասով վերաբերում էր այն պահանջին, որ միշտ դնում էր Քեփթընը՝ (նրա մականունը) արժանավայել պահել իրեն Հայրենիքում։

Ընդհանրապես նա մռայլ էր և սակավախոս. լսում էր ավելի, եթե հետաքրքրական բան պատմեին, բայց միշտ իր մտքի հետ էր։

Նրա հայրենակիցներից շատերը գիտեին այն անհանգիստ, աստանդական կյանքը, որ նա վարել էր օտար երկրներում։ Ո՞ւր ասես չէր աշխատել, մտել բանվորական կազմակերպությունների մեջ, պայքարել, ցույցերի մասնակցել, ծեծվել և անգամ ծեծել։

Բայց մի շրջան էլ եղավ, որ նա իրեն տվեց զինվորական գործի, որի ոչ սերն ուներ և ոչ էլ երբևէ մտքովը կանցներ, որ պիտի զինվորական դառնա։ Եվ իսկական զինվորական էլ չէր։ Խաղաղ ժամանակները դուրս էր գալիս բանակից, և ապրում էր բանվորությամբ։ Նա բանակ էր մտնում միայն այն ժամանակ, երբ որևէ պետություն պատերազմ էր մղում Թուրքերի դեմ։ Դա իր կիրքն էր և կյանքի գործը։ Նա սկզբներում կապիտանի աստիճան ուներ, բայց հետո էլ, երբ այդ աստիճանը բարձրացավ, նրան շարունակեցին անվանել կապիտան-Քեփթընն։ Այդպես կոչում էին մի փոքր հումորով նրան լավ ճանաչողները, նեղ շրջանի մտերիմները։ Դա մի ներողամիտ ժպիտ էր նրա անզուսպ մղումների հանդեպ, որով նա այնքան տարիներ բարեխղճորեն մասնակցում էր «հատուկ» պատերազմների Թուրքերի դեմ։ Քեփթընը այսպիսով մի տեսակ կատակ մականուն էր դառել նրա համար։ Սակայն կատակը երևութական էր։ Ներքուստ դա նրա տրագիկական պատմությունն էր. պատմություն, որ նրա անցյալ կյանքի վրա շարաշուք մի գիծ էր քաշել և այդ բառով նշավակում էր նրան — այդ ծագումով գյուղացի, հետագայում անհանգիստ բանվոր մարդուն։ Նա մասնակցել է երկար պատերազմների, որոնցից մնացին միայն տխուր հիշողություններ, ավերված, ցրված, մարդահանված մի հայրենիք, նրա մոխիրը, մի խոշտանգված ժողովուրդ և այդ ամենը հիշեցնող իր քաջագործությունները, շքանշաններ՝ ամերիկյան, բուլղարական, հունական, անգլիական և վերջապես ռու-

սական, վերջինից երեք խաչեր, այսինքն՝ լրիվ կավալեր։ Եվ այդ բոլորից անգլիական մականունը՝ Քե՛փթը...

Վերջին պատերազմը նրա համար իր վերջին պատերազմն եղավ. ռուս-տաճկական սահմանի վրա, որ նրա առջև բացեց մի սև, ահավոր անդունդ, ուր գահավիժվեց նրա ժողովուրդը և նա ընկրկեց սարսափով, ետ դարձավ պատերազմից ավելի ճիշտը՝ պատերազմներից։

Սովորապես խստականոն մարդ, սկզբունքի անդիմադրելի պաշտպան՝ նա կիրթ շարժումով, մեկընդմիշտ, անխախտ ընդունեց, համակրեց սովետական կարգերի սկզբունքը և այդպես էլ մնաց, կանգ առավ դրա վրա վերջնականապես։

Անդիմադրելի հայրենասիրություն և ինչ-որ ռոմանտիզմ կար այդ սկզբունքային մարդու մեջ։ Ամենքին հայտնի էր նրա համոզմունքն ու հաստատուն համակրանքը դեպի սովետական սկզբունքը, որով նա եկավ ու վերջնական բնակություն հաստատեց Հայաստանում։ Եվ այստեղ սկսվեց մի նոր պատմություն նրա համար։ Մինչ հարևանները, նրա մի քանի հարազատ բարեկամները թողին Հայրենիք մուտք գործած օրերի արտակարգ հուզմունքն ու հանդիսավորությունը և լիովին թաղվեցին իրենց առօրյա հոգսերի մեջ, մի-մի զբաղմունք գտան իրենց համար՝ Քեփթընը շարունակեց պահել այն բարձր, առնական տրամադրությունը, որով մտել էր Երևան և սկսեց զբաղվել... Հայրենիքով, ինչպես գործ, ինչպես ուրիշները լրագրի խմբագրությամբ, հաշվապահությամբ, ուսուցչությամբ, դեղագործությամբ... Եվ բոլորովին գործ չէր հաշվում իր փոքրիկ պարտեզի մշակումը, որ ջանքով առաջ էր տանում, խնամելով հարյուրներով տնկիներ, տալիս արվարձանի բնակիչներին նվեր, կամ փականագործական օգնություն հասցնում շարունակ սրան-նրան։

Նրա տնակի դիրքը իր ընտրած հողամասում այնպես էր, որ այնտեղից երևում էր Երևանի մեծ մասը նրա արվարձաններով՝ Արարատյան դաշտավայրը։ Մասիսները և ավելի հեռուները։ Կնստեր դռան առջևի քարին, որ մի խոշոր բազալտ էր, իր նման կարծր ու հաստատ, որի վրա նստելով՝ հայացքը կուղղեր դեպի քաղաքը ու կնայեր ժամերով։ Նրա հայացքը անշարժ էր, բայց մի ինչ-որ տրագիկ խառնով լի։ Նա բարկացած էր թվում մի՞թե և երեվում էր, որ դեռ վերապրում է մի մեծ տրագեդիա, չի կարողանում մոռանալ մի այրող միտք։

Ի՞նչ էր որոնում այնտեղ, ի՞նչ էր խորհում։ Թվում էր, որ նա պետք է ուրախ լիներ տեսնելով, թե ինչպես է զարդարվում քաղաքը թանգարանի պես, տարածվում դեպի բլուրներն ու դուրս թափվում դրանցից։

Երեկոները, երբ ներս էին մտնում նրա մոտ հարևանները, բարեկամները միշտ տեսնում էին նրան լրագրի որևէ համարով տարված լուռ, երկար կարդալիս։

Թե ինչ էր մտքում որոճում, այդքան մտասույզ կարդալով՝ կարելի էր միայն կռահել. բայց հատկապես ինչո՞ւ էին դրանք այդքան շատ զբաղեցնում, գրավում նրան՝ լավ չէր հասկացվում։ Իսկ եթե պատահեր, որ այցելուները հարց տային ընթերցածի մասին, Քեփթընը կսկսեր սովետական երկրի և արտաքին աշխարհի մասին հեղինակավոր բացատրություններ տալ այնպիսի արժանապատվությամբ ու գերագույն լրջությամբ, կարծես պրեսկոնֆերանսում նստած լիներ։ Այդ բացատրությունները կրքոտ էին, և նա ոչ մի հակաճառություն, քննադատություն չէր ընդունում։

Ոչ մի դեպքում, ոչ մի տեղ, ոչ ոքի չէր զիջում իր սկզբունքների համառ պաշտպանության մեջ։ Ոչ մի բանից տրտունջ թույլ չէր տալիս։ Բարկանում էր ամենափոքր գանգատից և զայրանում էր գանգատավորի վրա։ Այստեղ արդեն բանը հասցնում էր մինչև զվարճալիության։ Համառ, բայց և մի յուրահատուկ կարծրություն ուներ իր այդ սկզբունքների ընկալման և պաշտպանության մեջ։

Եվ այս բանում շատերը, որ նրա հետ էին վերադարձել Հայրենիք, գիտենալով նրա բնավորությունը՝ ջանում էին նրա մոտ չգանգատվել որևէ թերությունից։

Ամենքն արդեն սովոր էին Քեփթընի սովետական կարգերի պաշտպանության այս ոճին, որ հասնում էր մոլեգին կրքի։ Չէր հասկացվում միայն նրա ալեկոծող այդ կիրքն ու համառությունը։ Այստեղ արդեն խոսում էր խստականոն զինվորական բնավորությունը, որ կոտրել անհնարին էր։

Քեփթընի լուրջ զբաղմունքների մեջ էր մտնում շուտ-շուտ քաղաք իջնելը և շրջելը նրա հրապարակներում, պողոտաներում, դիտել կառուցումները։ Այնպես էր զննում շենքերը, նորակա-

ռույցները, շինանյութերը, կարծես ինչ-որ մի էքսպերտ հանձնաժողովի նախագահ լիներ և պատրաստվում էր սպառիչ զեկուցում տալ քննած նյութի մասին։ Երկար շրջելուց հետո կգար կպատմեր հարևաններին այնպիսի կառուցումների, փողոցների մասին, որոնցից ոչ մեկի մասին իր հարևանները բոլորովին տեղյակ չէին։

— Հրապարակի անկյունները աղեկ կգոցվին, միայն որձաքարը պիտի ուշացնե գործը, հազիվ թե հոկտեմբերին հանձնեն,— կասեր նա հեղինակավոր կերպով, կարծես չափել, ճշտել է հաշվել էր ամեն բան։

Վերջացնելով լրագիրը՝ Քեփթընը վեր կացավ և դուռը ծածկելով միայն առանց փակելու՝ շարժվեց դեպի քաղաք։ Անցնելով տրամվայի կանգառի մոտով՝ տեսավ մի քանի հայրենակիցների, որ սպասում էին տրամվայի։

— Ինչո՞ւ կանգնած եք,— հարցրեց խիստ, ինչպես սպան իր զինվորներին։

— Քաղաք պիտի իջնենք, Քեփթըն,— ասացին նրանք։

— Ոտքո՛վ իջեք,— հրամայեց՝ առարկություն չվերցնող ձայնով, և հետո մի փոքր մեղմացրեց,— ոտքո՛վ իջեք, որ շենքերը տեսնիք։

— Տեսեր ենք, Քեփթըն։

— Տրամվայով չեք տեսնիր, տրամվայը կվազե, շենքերը աչքե կփախցնե։ Քայլած ատեն լավ կտեսնիք։

Առարկեցին, բայց նա ազդու ձայնով ստիպեց ոտքով իջնել։ Գիտեին անզիջում բնավորությունը և ապա չուզեցին վիրավորել նրան։

Հարգում էին։

Գնացին։ Եվ կարծես հանդես բացվեց Քեփթընի ուղեկիցների առաջ։ Քեփթընը կանգնեց Բաղրամյան փողոցի գլխին, ձեռքերը դրեց քամակին, մեջքը ուղղեց և գլուխը ցցեց։ Ոճազարդ շենքերը սանդուղաձև իջնում էին ներքև, և նա այնպես խիստ ու երկար նայեց դրանց, կարծես զորատես էր անում իր զինվորներին։ Խանդավառված՝ նա չէր նկատում, ճիշտը՝ չէր հաշվի առնում իր հետ քայլողների և այլ անցորդների գործնական առօրյայի տրամադրությունը։ Նա այնպես էր ընդունում, թերևս պահանջում, որ բոլորն էլ իր նման խանդավառության մեջ լինեն։ Մի փոքր էլ զվարճալի էր Քեփթընը իր այդ հանդիսավորությամբ։ Զվարճալի էր

նրա շեշտված, բարձր բռնած գլխի հպարտանքը, ինչպես աքաղաղի կատարի սանրը։ Սակայն դա արտաքուստ էր այդպես. ներքուստ նա լուրջ էր և խոր հուզմունքը աննկատելի դողացնում էր նրա երկաթե կզակը։ Դա հպարտանք էր «իր» երկրի նվաճումների հանդեպ, հպարտանքով էր նայում իր ուղեկիցներին, իրեն նայողներին։ Եվ զարմանալի է։ Նա գիտեր, որ ամենքն էլ գիտեն, որ այս բոլորը կառուցել են ուրիշ ձեռքեր։ Բայց չգիտես ինչից այնպես էր զգում, կարծես ամենքն են այս շենքերի կառուցման մասնակցել անձամբ։ Եվ ահա երբ Քանաքեռի բլրից աչքերի առջև հպարտ գծագրվեց քաղաքի վեհ տեսարանները, նա կանգնեց և գլուխն ավելի խրոխտ բռնելով դարձավ իր ուղեկիցներին և խրոստահայաց դեմքի խոժոռ հայացքով ասաց.

— Հը՞, ի՞նչպես է։

Եվ գլուխը թափահարեց պարծանքով ու հաղթականորեն հպարտ նայելով ուղեկիցներին և այնպես զգաց, որ ինքն է կառուցել այդ քաղաքը։ Նա հպարտ էր իր ժողովրդի, իր ուղեկիցների, իր իսկ հանդեպ... Անցան շուկայի կողմերը։ Ուղեկիցներից մեկը կամեցավ զվարճություն պատճառել մյուսներին՝ գրգռելով Քեփթընին և կես կատակ, կես լուրջ ցույց տվեց մի խարխուլ տուն.

— Բան մը չէ,— ասաց Քեփթընը։

Ուղեկիցները իրար նայեցին քթների տակ ժպտալով ծածուկ։

Մի փոքր առաջ գնացին։ Փողոցը, որ պիտի անցնեին, ընդհանրապես մաքուր էր. միայն մեջտեղը, փոս ընկած մի տեղում անձրևաջրից տիղմ էր գոյացել։

Կատակաբանը կրկին դարձավ Քեփթընին.

— Այս ցեխին ալ նայե, Քեփթըն։

— Նայեցի։ Բան մը չէ,— սաստեց Քեփթընը հրամայական ձայնով և արհամարհանքով, թեև ցեխը աչքի էր ընկնում։

Ինչո՞ւ «բան մը չէր» այդ ցեխը՝ լավ չհասկացան։ Միայն գիտենալով նրա կարծր ու տարօրինակ բնավորությունը՝ դրան վերագրեցին և ոչ ուրիշ բանի։ Իրենց մեջ սկսեցին կիսաձայն հարցնել իրար, մտածել այդ մասին։ Անքննադատ համառություն։ Պարզ էր։

— Կչափազանցնես, Քեփթըն,— ձայնը բարձրացրեց քննադատողը, կատակից լուրջի անցնելով,— նայե այս փողոցին ցեխը։

Չենք ըսեր, թե մաքուր փողոց չկա քաղաքի մեջ։ Բայց մաքուրին մաքուր կըսեն, ցեխին՝ ցեխ։

— Բնավորությունը գիտեք, մի առարկեք,— ասաց մեկը կիսաձայն։

— Ոչ, ինչո՞ւ,— ձայնը բարձրացրեց քննադատողը,— մի՞թե իրոք այս փողոցին ցեխը չի տեսներ Քեփթընը։

— Ո՛չ,— ասաց Քեփթընը։

— Ինչպե՞ս չես տեսներ,— կանգ առավ վիճաբանողը, չորս կողմ նայեց և մատը տնկեց հենակների վրա ծռված մի պատի կողմը,— ահա, փլչելու վրա է.

— Է, բան մը չէ, ըսինք յա,— կտրեց կրկին Քեփթընը։

— Ինչո՞ւ բան մը չէ։

Քեփթընը վճռական շարժումով՝ խոժոռված շրջվեց դեպի առարկողը և կանգ առավ.

— Է, քա՞նի տարի պիտի մնա այս հենակներով տունը։

— Քանի տարի՞։

Երկո՞ւ, տա՞սը, քսա՞ն, քառասո՞ւն։

— Է, ո՞ւր գացիր,— քառա-սուն։ Իհարկե քառասուն տարի չի մնար։

— Որ չի մնար, ըսել է, բան մը չէ։

Ծիծաղեցին։ Նրանցից մեկը, որ չէր մասնակցում վեճին, ասաց.

— Թերությունները պիտի նկատենք, Քեփթըն, խոսիլը վնաս չունի։ Ավելի առաջ կերթանք։

Քեփթընը սպիտակ ու թավ հոնքերի միջից խեթեց նրան.

— Պիտի մաքրե՞ս փողոցը։

— Ե՞ս...

— Այո, դու, անձամբ պիտի մաքրե՞ս։

— Ո՛չ։

— Ըսել է՝ թող մաքրողները խոսին։ Դուն մի խոսիր։ Այս փողոցն ալ պիտի մաքրվի, այն ալ, ամենքն ալ։ Ամեն բանեն վերջը ատիկա է։

Հետո հանկարծ կանգնեց և չափեց բոլորին ոտից գլուխ,— է, դուք ուրկե՞ եկած եք,— Փարիզե՞ն, Նյու-Յորքե՞ն, Լոնտոնե՞ն։ Ըսեք ինձի,— ո՞վ է շիներ այդ քաղաքները։ Դո՞ւք։ Ո՛չ։

Օտարին շինածներով մի պարծենաք։ Այս փողոցը մերոնք են

շիներ և այսքան են կրցեր։ Եվ կտեսնիք ալ թե ինչ են կրցեր։ Ավելին կրնա՞ք, դուք շինեցեք։ Աղե՞կ է, գե՞շ է, ձեր տունը սա է։

Ասաց անհողդողդ, զգացված և այնպես, կարծես ոչ թե իր խոսակիցներին է ասում, այլ շատ հեռավոր մարդկանց, որոնց կուզեր ասել այդ։

Լռեցին։ Ապա բաժանվեցին։

* * *

Ուրիշ քաղաք այցելելու պատճառով, Քեփթընը մոտ հինգ ամիս թե ավելի՝ չէր եղել Երևանում։ Մի անգամ գնաց շուկայի կողմերը։ Իր սևեռյալ մտքերով տարված՝ անցավ մի փողոցից, ապա գնաց կողքի փողոցով և կանգ առավ շփոթված։ Կորցրել էր շուկայի մոտի փողոցները իրենց հայտնի նշաններով, տներով, սյուներով։

Այնպես կարծեց, թե մտքով տարված, ինչպես նրա սովորությունն էր, անցել է շուկայի մոտի փողոցները, կամ ուրիշ փողոցներ մտել։ Շեղեց ճանապարհը, գնաց կողքի ուղղությամբ, անցավ երկու փողոց և հազիվ նկատեց, որ կայարանի կողմն է եկել։ Ետ դարձավ, գնաց հակառակ կողմը, բայց ավելի վատ։ Բոլորովին կորցրեց թե շուկայի փողոցները և թե շուկան։ Զարմացավ իր վրա։ Չէ՞ որ ինքն էր ուրիշներին ցույց տալիս փողոցները, ի՞նչպես է, որ մոռացել և շփոթում է հիմա։

Մոտեցավ միլիցիոներին.

— Ընկեր միլիցիոներ, ըսեք ինձի՝ ո՞ւր է շուկան։

— Այ, շուկան,— ցույց տվեց միլիցիոները բարեկարգ, լայն փողոցներով, նորակառույցներով շրջապատված շուկան՝ Քեփթընի չսպասած կողմը,— դեսը կանգնիր, մեքենան,— զգուշացրեց միլիցիոները։

— Գիտեմ,— մրթմրթաց քթի տակ, արհամարհելով վտանգը հին զինվորականը՝ չնայած որ մեքենան քսվեց նրա կողքին։

— Առանց թույլտվության ուզում ես մեքենայի տակ ընկնել,— կատակով, թե բարկությամբ ասաց միլիցիոները։

— Դուն խոսքդ ըսե,— արժանապատվությամբ նկատեց Քեփթընը,— կերևա թե այս փողոցները փոխվեր են,— ավելացրեց լուրջ տեղեկանք պահանջողի պես։

— Ի՞նչ փողոցներ,— չոր հարցրեց միլիցիոները ուշադրություն դեպի մեքենաներն ու տրամվայները։ Հետո երբ մի պահ լարումը դադարեց՝ քթի տակ ծիծաղեց.

— Էն փողոցները գնացին իրենց պապի մոտ։

Քեփթընը խոժոռ ու հպարտ նայեց միլիցիոներին և շուրջը։ Փողոցները նորոգված էին, մի երկուսը նոր բացված, լայնացած, ասֆալտած։ Հաճելի էր նայելը, բոլորովին անծանոթ, գեղեցիկ, նոր քաղաքի տեսք էր ստացել թաղամասը։

Հաղթական քայլվածքով Քեփթընը գնաց շուկա՝ խոսելով ինքնիրեն.

— Է, փափագս ալ աս էր. մեյ մը երթամ կորսվիմ։

Հետո հիշելով իր շփոթվելը, քթի տակ ժպտաց.

— Ըսել է՝ ես ալ ետ մնացած եմ։ Է՞, բան մը չէ,— ծիծաղեց իր խոսքի վրա։

* * *

Երեկոն հանգիստ մարմրում էր, երբ Քեփթընի տունը ներս մտան հարևանները։ Նրանք հազիվ լսելի ձայնով բարևեցին և առանց հրավերի նստեցին։

Քեփթընը մի պարբերական ուներ, որի մեջ կենտրոնացած գննում էր ինչ-որ նկարներ։

Երկար լռել էին նստած, կարծես եկել էին դասախոսության կամ հրահանգի և սպասում էին, որ Քեփթընը սկսի։ Եվ իրոք, վերջապես նա հայացքը պոկեց պարբերականից։

— Վերջերնիս սա է,— ցուցամատը բարձրացրեց նշանակալի կերպով։

— Ի՞նչը, Քեփթըն,— հարցրին այցելուները։

— Քոմունիզմը։

Եվ սկսեց բացատրել։

Նոր էր նա «խորացնում» իր տեսակետները, երբ ներս մտան պոլիտեխնիկական ինստիտուտի մի ուսանող և լեզվաբանական ֆակուլտետի մի սունողուհի՝ նրա ազգականները։

— Ինչպե՞ս ես, հայրիկ,— հարցրեց ուսանողուհին։

— Աղեկ, ինչպե՞ս պիտի ըլլամ,— խիստ ու զարմացած պա-

տասխանեց Քեփթընը և շարունակեց բացատրել կոմունիզմը։

— Այս գործը ուրիշ մեծ գործերու դուռ պիտի բանա,— ցույց է տալիս արդյունաբերության վիթխարի կառուցումները,— ահա այստեղ,— ցույց է տալիս լրագրից կտրած նկարները, ուր գյուտարարներ, ստախանովականներ՝ ինժեներներից սկսած մինչև հասարակ բանվորներ՝ կանգնած իրենց դազգահի հետև, հնարած գործիքները ձեռներին,— այս գործիքները, մեքենաները ուրիշ մեքենաներ պիտի շինել տան, մեքենա շինող մեքենաներ պիտի շինեն։

Քեփթընի ազգականները զարմանքով հետևում էին նրան։ Նրանք գիտեին անդիմադրելի հայրենասիրությունն ու համառ ռոմանտիզմը, գիտեին նրա դեպի առարկությունների դեմ անհանդուրժողականությունը, որ հասնում էր մոլեգին հիվանդության։

— Պիտի գա՜՝, պիտի գա՜՝ քոմունիզմը, պիտի գա՜՝,— կրկնեց Քեփթընը մի ինչ-որ ներքին կրքով և անբացատրելի դառնությամբ,— պիտի չմեռնիմ, պիտի տեսնիմ։

Քեփթընի այս կրքոտ խոսքը, նրա մյուս անգամների չոր, սուր տոնը վիճաբանության մեջ, նրա արտակարգ, դեմոնստրատիվ հպարտանքները երկրի շինարարության հանդեպ, նրա զայրացկոտ ձայնը, երբ խոսում էր՝ թերևս վերագրվում էր ինքնասածի տարօրինակություններին։ Սակայն նա մի վիշտ ուներ սրտում, խոր, հին մի վերք, որ հանգիստ չէր տալիս նրան, չէր բուժվում, ավելի ճիշտը՝ չէր բուժվում լիովին, որ նա չզգար այդ, մոռանար։ Սակայն ուշի-ուշով հետևողը կնկատեր, որ նա խոսելիս դիտում էր ուրիշ մի դաժան բանի, որ կատաղի գայլի պես աչքերն արյունլցված հետևում էր նրան երևակայության մեջ։ Քեփթընը խոսում էր այդ գազանի հետ։ Նրա ցավը իր բազմաչարչար ժողովրդի զարհուրելի անցյալն էր, դարավոր տառապանքները։

Քեփթընի ազգական երիտասարդն ու աղջիկը չէին տեսել մեծ Արհավիրքը՝ հայ ժողովրդի աննախընթաց Աքսորը, Անապատը, Տեր-Զորը՝ խոշտանգավայրը և Մեծ Մահը։ Նրանք տեսել էին միայն օտարությունը Սիրիայում և կապիտալիստական երկրների մանր ու խոշոր ճնշումները, Հունաստանն ու Ֆրանսիան։

Ահա այդ անցյալի հետ էր կռվում Քեփթընը՝ պատմելով ապագա կյանքի կատարելության՝ կոմունիզմի մասին։ Եվ այդ

բոպեին, ինչպես պատահեց, հանկարծ առանց մտածելու՝ ուսանողը, երևի կարծելով, որ Քեփթընը վերջացրել էր իր ասելիքը՝ խոսքը փոխեց և մտահոգված ձայնով ասաց.

— Հորեղբայր, դժբախտություն պիտի հայտնեմ քեզի, մեր տան շինության գերաններեն երկուսը գողացել են։

Քեփթընը զայրալից նայեց նրան.

— Բան մը չէ՛է՛,— գոչեց զայրալից,— բան մը չէ՛է՛,— կարծես մտրակով ձաղկեցին նրան։— Ժողովո՛ւրդ, քանի Արհավիրքը կա, Աքսորը, Անապատը, Տեր-Զորը, ի՞նչ ցեխ, ի՞նչ հենակ, գերանի գողություն։ Մոռցե՞ր եք, չե՞ք գիտեր։ Պարապ բաներ կխոսիք։

Քեփթընի ցասումի մեջ վերակենդանացավ դաժան, տրագիկ պատմությունը հայ ժողովրդի։ Դա գիտեին Քեփթընի մտերիմ հասակակիցները, որոնք թեև երբեմն զվարճանում էին նրա խստապահանջություններով, բայց այժմ հասկացան նրան և մռայլվեցին։

— Դուք ինձի մոռացնել տվեք անմո՛-ռա՛նա՛-լի՛ի՛ն,— գոչեց Քեփթընը,— անմոռանալին տվին մեզի անոնք,— Արհավիրքը, Անապատը, Տեր-Զո՛ո՛ո՛ը... ասոնք հանեցեք մտքես,— և տեղից վեր կացավ, սկսեց անցուդարձել։

— Հորեղբայր, մի՛ զայրանա, սխալվեցի,— սկսեց ուսանողը։

— Ես քեզի չեմ զայրանար, տղաս։ Քեզի հետ չեմ։

Ծերուկ զինվորականի ծնոտը դողում էր, շրթունքները կնճռոտվել էին։

— Ես քեզ հետ չեմ,— կրկնեց Քեփթընը,— ես անոնց ալ չեմ ուղղեր իմ խոսքը։ Իմ խոսքը կուղղեմ մեր ծածուկ ու անկեղծ թշնամիներուն և հայտնի ու կեղծ բարեկամներուն։ Թող գա քոմունիզմը, ոտք դնե վրաները և ճզմե՛ե՛ն։ Աշխարհն արդարության վրա պիտի շինվի։ Եվ արդարությունը, որ մեյ մը ծայր տա, պիտի լցվի աշխարհը և մեր երկրին արդարությունն ալ մեջը պիտի ընկնի։

Համաձայն էին իր հետ թե ոչ՝ բայց նա խոսում էր չհոգալով այդ մասին։ Հանկարծ կանգ առավ և դիմեց իր ունկնդիրներին.

— Քոմունիզմը պիտի գա... այնպես չէ՞։

— Պիտի գա։

— Որ պիտի գա, գործներիդ նայեցեք, բան մը չեն սա ցեխը, հենակը, գերանը, գողությունը...

Քեփթընի ունկնդիրները դառնությամբ և՝ մի վշտով, որ նաև նրանց հին վիշտն էր՝ գլուխները կախեցին դեպի սենյակի հատակը։ Այդ հատակը դեռ չէր տախտակամածվել, և նրանց ոտքերի տակից նայում էր իրենց ազատ նոր Հայրենիքի սևահողը։

Իսկ Քեփթընը ձեռքերը մեջքին, կրկին շարունակեց անցուդարձել հին զինվորականի ամուր քայլերով։

ՏՈՒՆ

Վարպետ Արթինը Կիլիկիայի Քիլիս գյուղից էր։ Նրանց ընտանիքը կիլիկեցի, Գյավուր գյուղից, Թուրք կառավարության հետ շատ ընդհարումներ ունենալու պատճառով վերջինիս հրամանով բռնի բերվեց բնակեցվեց Քիլիս գյուղը։ Հանեցին պապենական, հին դարերի գյուղից, «կոտրեցին» ժայռի բեկորի նման ժայռին կպած տունը, թափեցին ձորը, նրան էլ նույն բեկորի նման պոկեցին այս տնից, ուր ծնվել ու մեռել էին նրա պապերն ու հայրը։ Եվ նա ստիպվեց նոր տուն շինել նոր վայրում։ Արթինի հայրը փայտի գործ էր՝ անում, լեռներից փայտ կտրել տալիս և գետի հոսանքով բերում ներքևի վայրը։ Դա մի փոքր մութ գործ էր, կապված մի կողմից կաշառակեր պաշտոնյաների ագահությունը բավարարելու, երբեմն հրացանի կրակների մեջ նրանցից փայտ փախցնելու և այլ բազմաթիվ հնարքների հետ։ Արթինի հայրը իր սերնդի մարդկանց այն ժամանակվա հասկացողությամբ քաջագործության հետ էր կապում փայտի այդպիսի մատակարարումը, ավելի գրավված կյանքի վտանգների հետ խաղեր սարքելուց, քան թե նրա խաղաղ շահախնդրությունից։ Նրան մեծ հաճույք էր պատճառում պաշտոնյաներին հիմարացնելը, նրանց հակառակ գնալը։ Արթինի հայրը դեռ չէր մոռացել իրենց աքսորումը Գյավուր Դաղից։

Քիլիսումն էլ գյուղի պաշտոնյաները սկսեցին նեղել Արթինին։ Նա էլ մի օր իր պտտած լեռների հովիտներից մեկում մի խանգարված աղբյուր տեսնելով տնտղեց նրա չորս բոլորը և գտավ, որ դա շատ լավ գյուղի տեղ է, միայն պետք է մաքրել, աղբյուրը բաց անել և շեն գցել։ Ձեռնարկող մարդ լինելով համոզեց ուրիշներին ևս ու գյուղ շինեց։ Բայց հենց այն է, ուզում էր տեղավորվել նոր տուն՝ հարևան քուրդ աղան գնալ գալով՝ նախանձեց և

աչք դրեց գյուղի վրա։ Կազմակերպեց Արթինի հոր սպանությունը, կաշառքի և բռնի ուժով գյուղը գրավեց։

Արթինը մնաց մենակ։ Մենակ՝ իր վրիժառու մտքերով և ձեռնունայն գործով։ Լավ էր՝ վրա հասավ մայրը։ Տեսնելով, որ այս սպանությունների ճանապարհով իր զավակը շատ հեռու պիտի գնար՝ արհեստի տվեց նրան։ Արթինը դառավ կոշկակար։ Շուտով վրա հասավ զինվորությունը և Արթինի կյանքը դրվեց ուրիշ հունի մեջ։ Դեռ զինվոր չգնացած՝ Արթինին ամուսնացրին, որ «օջախը չմարի»։ Տունը ամրանա հողի վրա, տաքանա կյանքը... Եվ ահա 1914 թվին Արթինը զինվոր գնաց։

Թե ինչ էր մտածում Արթինը բանակում, զինավարժությունների և զորախաղերի բուռն զբաղմունքների հետ, գուցե իր համար ևս պարզ լիներ, եթե չխանգարեր մի բան — նա չէր կարող անուշադիր թողնել իր հոր սպանությունը։

Ինչպե՞ս կարելի էր մոռանալ դա։

Արթինը որոշեց փախչել, գնալ Զեյթուն և այնտեղ կռվել Թուրքերի դեմ՝ հոր վրեժը հանելու համար։ Այդ բանը հայտնեց իր քեռիներին։

Քեռիները ետ պահեցին Արթինին այդ մտքից, հասկացրին, որ դրանով տունը կավիրվի, համոզեցին մնալ բանակում և Արթինը համակերպվեց, մնաց։

Բայց ուրիշ բան պատահեց նրան, երբ նրա զորամասը տարվել էր Գալիպոլի, անգլիացիների դեմ։ Ինչպես եղավ, մի օր հյուր գնաց մի երիտասարդ հացթուխի, որ նրա ազգականն էր։ Նոր պատրաստվում էին նստել ճաշի, հացթուխն Արթինին ասաց, որ նա նամակ ունի տանից։ Նամակը վաղուց էր ստացվել, և որովհետև հացթուխն անգրագետ էր՝ չէր կարողացել և չգիտեր էլ որքան կարևոր էր կամ շտապ։ Արթինը, որ իրենց գյուղի դասարանյան կրթություն էր ստացել՝ նա միայն կարող էր այդ որոշել։ Բայց նա հանգիստ էր, միամիտ։ Կիլիկիա, ռուսական ճակատից հեռու, ի՞նչ մի առանձին բան կարող էր պատահել տանը։ Հանգիստ բացեց նամակը և կարդաց։ Հացթուխը նույնպես հանգիստ սպասում էր ընթերցման, որ սկսեն ճաշը։ Հանկարծ նա մի այլայլմունք նկատեց Արթինի դեմքին։

— Արթին, ի՞նչ է եղել։

— Ալ կհարցնե՞ս. ցարդեր, աքսորեր են անապատ։

— Ջարդը, աքսորը ներսերը չպիտի ըլլար, յա՞,— տարակուսեց հացթուխը։

— Ի՞նչ չըլլար որ, ալ եղած լմնցած է. տունս, ողջ սպանչակը քշեր են։ Վա՜յ, ասոնց հավատը։

Հացթուխը լաց եղավ։ Խորը ազդեց լուրը։ Վերցրեց կերակուրը, ամանով դուրս նետեց.

— Մեր կերած հացը հարամ է։

Արթինը զուսպ ու լուռ վճռեց հենց նույն րոպեին, նույն տեղից անմիջապես մեկնել տուն։

— Է՜, ես գնացի,— ասաց նա հացթուխին,— ձգե՝ բե, թուրքին ծառայիլը։

Եվ իրոք հենց նույն ժամին Արթինը փախավ զորամասից և ճանապարհ ընկավ տուն։ Հեշտ է ասել։ Ճանապարհ Գալիպոլից մինչև Կիլիկիա, այնտեղից էլ արաբական անապատները։

Ամայի, անշավիղ, ժայռեղեն լեռներ, անանցանելի ձորեր, քար, փուշ, փոս, անդունդ, մեծ մասը մութ գիշերներով, ամեն քայլին մի փորձանք, զապթիա, դավաճան, թշնամի։ Սնունդի հոգսը քաշում էր դեպի շեները, բայց վտանգը հեռու էր շուն բնակիչներից։ Սովը ստիպում էր կյանքի գնով մի այծ, մի ոչխար փախցնել, վայրի խոտեր ճարակել։ Հագուստ, կոշիկ, բոլորը գըզգըզվեց, թափվեց։

Ճանապարհի թաքստոցներից, ուր նստած սպասում էր գիշերվան, հաճախ տեսնում էր կախաղաններ, դիակներ, ձերբակալվածներ, որոնց տանում էին «դատելու» և քանի մոտենում էր իր ծննդավայրին, այնքան երկիրը ամայանում էր, այնքան աչքի էին զարկում քաղաքների և գյուղերի հայկական դատարկ թաղամասերը։

Աղետը քանի գնում ավելի ծավալուն էր ցույց տալիս իր մռայլ, ահռելի կերպարանքը։

Գնում էր Արթինը լեռների լանջերով, ձորերով, գիշերները մոտենում էր բնակավայրերի, դիտում էր չարագործությունը և մտատանջվում։ Մի՞թե մի փոքր առաջ ինքը չէր պաշտպանում օսմանյան «վաթանը», ի՞նչ պատահեց իրենց ընտանիքի ու կառավարության մեջ։ Այս ինչպե՞ս բոլորը միասին, առանց բացառության հանցավոր դուրս եկան կառավարության առաջ։ Ապա դրանց մեջ մեկը անմեղ դուրս չեկա՞վ։

Չէ, այստեղ ուրիշ բան կա, շատ մեծ բան և հին բան։ Արթինի հայրը, պապը, Գյավուր Դաղից արտաքսումը Քիլի, քուրդ աղայի դավադիր դաշույնից զոհված իր հայրը...

Չէ, այս երկրում չկա օրենք, արդարություն,— ասել են հնները, ասում են և նորերը։ Ողջ հայ ժողովուրդը օրենքից դուրս է հանված։

Հայկական թաղի տներն ավերված, այրված էին, սևացած պատերը ցցվել էին այլանդակ ու չարաշուք։ Արթինը գողեգող մոտեցավ իրենց տանն ու պարտեզին։ Ամեն բան գետնին էր հավասարեցրած, մոխիր շինած։ Ծառերն անգամ այրվել էին։

Չարագուշակ լռությունը ծանրացել էր ավերակների վրա։ Ավերվել ու քանդվել էր իր ողջ մանկությունը, պատանեկությունը, ընտանիքի կյանքը իր գունագեղ դեպքերով, հարազատների կենդանի, այնքան սիրելի դեմքերով։ Որքան հուշեր, որքան ապրումներ։ Ամեն, ամեն բան մեռցրած է, կնքած։ Վերջ,— չկա հայրենի տունը։ Այն տունը, այն տեղից-տեղ թափառած տունը, որ ուր գնում տանում էր իր նախնիների շունչը, որի սենյակների անկյուններում կարծես փսփսում էին Արթինի նախնիները, պատմում անցած, գնացած կյանքի պատմությունը։ Այլևս չի լսվի երեխաների լացը՝ հետագա կյանքի հուսալի ձայնը։ Վե՜րջ։

Արթինը մոռացած ամեն վտանգ, հոգնածություն՝ գամվել, մնացել էր իրենց դռանը։ Չէր կարողանում ըմբռնել այն իրողությունը, որ իրենց տունը չկա այլևս։ Տունը, հուսահատ մի տենչով փարվեց տանը։ Դա իր կյանքի ծագման վայրն էր։ Այնտեղից սկսեց նա իր կյանքը։ Դա քարաշեն մի փոքրիկ շենք չէր միայն, Արթինի շարունակությունն էր, բնությունն էր՝ հաստատ, անվերջ, անկործանելի։ Այստեղ պիտի ծնվեին և ապրեին իրենից հետո նորանոր սերունդներ։ Եվ ահա այդ տունն էր, որ ավերել էին աքսորելով նրա հարազատներին, քշելով նրանց անապատ՝ ավազների հետ հողմացրիվ անելու։

Այդ պահին առաջին անգամ նա զգաց, որ իրենց տունը կործանելի բան է և կործանվել է և, չկա հաստատություն այդպիսի տան համար անգամ։

Այո, վերջ։

Ապրելու բնազդը սակայն Արթինին մղեց թաքստոց որոնելու։ Թաքստոց, ուր կարելի լիներ խելքը գլուխը հավաքելու և որոշելու,

թե ինչ անել։ Տունը կործանված էր, պետք էր գտնել նրա շունչը ընտանիքը։ Գտնել նրա հետքը։ Գնաց դեպի մորեղբոր տունը։ Տունը կիսավեր էր։ Էապես շատ չէր վնասվել, կարելի էր բնակվել, թաքնվել մեջը։ Դուռը փակ էր։ Նայեց դռանը, շոշափեց։ Կեղծի՞ք, դարա՞ն, մոռացության մատնված տան վիճա՞կ։ Եվ արդյոք մեջը մարդ կա՞ այս ժամին և ովքե՞ր են՝ հայե՞ր, թուրքե՞ր։

Շատ էլ երկար չէր կարելի տարակուսած կանգնել մնալ, քանի որ այս լռությունն ու անշարժությունը երկար չէին կարող տևել։ Քաղաքը պետք է հսկիչներ ունենար, հետապնդողներ։ Կարող էր բախվել գիշերապահների... Վճռեց դուռը բախել։ Կարելի էր ներսից խոսողի, դուրս ելնողի ոչևէ նշանից հասկանալ բարեկամ, թշնամի լինելը և արագ ծլկել մի կողմ։

Բախեց դուռը։

Ոչ մի պատասխան։ Կրկին բախեց ավելի պինդ։ Կրկին ոչ մի պատասխան։ Կամ ոչ ոք չկար ներսում, կամ զգուշանում են ձայն տալ։ Թերևս զգույշ մոտենում են դռանը, որ բռնեն եկողին։

Մինչ կփորձեր մի այլ բան՝ բոլորովին անսպասելի կողմից, ոչ փողոցի, այլ այգու ճեղքվածքից դուրս եկան սև ստվերներ և խլրտացին դեպի իր կողմը։

Արթինը բնազդաբար նստեց և մեջքը տալով դռանը՝ սեղմեց։ Բնազդը երբեմն ավելի խելացի է լինում, քան զգաստ միտքը։ Դուռը դիմադրեց։ Բայց Արթինը սեղմեց անհնարին ուժով։ Դուռը բացվեց։ Արթինը ներս ընկավ և կրկին աներևակայելի արագությամբ դուռը փակեց ներսից։ Ներսից ոչ ոք չեկավ իրեն դիմավորելու։ Բայց դրսից մոտեցան դռանը և ցածրաձայն խոսեցին։

— Մա՞րդ ներս մտավ, թե՞ դուրս փախավ։

— Դո՞ւռն էր որ...

— Դուռը չէր, ուրիշ բան կլիներ։

— Է, բայց այսքան արագ։ Սատանա՞ էր...

Լռեցին մի փոքր։ Հետո մեկը ասաց.

— Սատանա մի ասիր, զինված փախստական կլինի անշուշտ։

— Մտնենք։

— Հը՞...

Եվ տարակուսանքով լռեցին։ Հետո անցան ուրիշ կողմ, բարձրացան կտուրը, թռան Կողքի փոքր պատուհանից, որի ապակին կոտրված էր, մեկը համարձակվեց գլուխը ներս խոթել, վիրը երկարացրեց. նայեց։ Արթինը վախեցավ, որ լուցկի կվառվի, պինդ սեղմվեց անկյունի տախտակների հետևում։ Հետո ձայները կլռեցին, կարծես հեռացան։ Բայց ոչ, պարտեզի կողմից խշրտուքը մատնեց նրանց ներկայությունը։ Արթինի համար մի բան պարզվեց, որ ներսը կամ ոչ ոք չկա, կամ հայեր են։ Այնտեղ ոչ ոք չշարժվեց։

Երկար չտևեց սակայն հետախույզների պտրտուքը։ Չկամեցան կյանքները վտանգել է դուռը կոտրելով ներս մտնել։ Կողոպուտներով ու առանց կռիվների, անվտանգ իրենց կյանքը, որ հայերի աքսորների հետևանքով ճոխացել, թանկացել էր, նրանց դարձրել էր ավելի զգույշ և վախկոտ։ Բավականին անշարժ կանգնելուց հետո, Արթինը դուրս եկավ անկյունից և փորձեց իրեն ծանոթ անցքերով մտնել ներս։ Խլրտոցը մատնեց։ Եթե հետախույզների ձայները կասկած հարուցեցին, որ մարդ մտավ ներս, ապա այս խլրտոցը հաստատեց այն և սրված բնազդը թելադրեց, որ եթե մարդ է ներս ընկել, անշուշտ փախստական է և հայ։ Ներսում շարժվեցին. զգուշաբար, թույլ լույսի օգնությամբ ընդառաջ եկան Արթինին, և հայտնվեց, որ իր հարազատներից էին. քեռին և նրա ընտանիքը։ Ռիսկ էին արել, թաքնվել, մոտակա շենքերում անցկացնելով ցերեկը, իսկ գիշերը իրենց տանը։

Փարվեցին իրար, համբուրվեցին այրված կարոտով, մեծ վշտով, արցունքները տխուր աչքերին իրար նայեցին խորը և գնացին ներս, նստեցին։

Պատմելու ոչինչ չկար։ Ախ ու վախ և մի երկու չոր տեղեկանք, ո՞ւր քշեցին, ե՞րբ, լուր կա՞ և ումի՞ց։ Իսկ ապագայի մասին...

Իրար երես էին նայում.

— Հիմա ի՞նչ պիտի ընենք...

Սրան հետևում էր միևնույն սրտամաշ խոսքը անզորության.

— Ի՞նչ կրնանք ընել...

Եվ իսկապես. ի՞նչ կարելի էր անել այն մեծ, ահավոր աղետի դեմ, որ վեր էր կացել երկրաշարժի, փոթորկի, ժանտախտի նման։ Ի՞նչ էր մի կամ մի քանի մարդու ուժը նրա առջև։ Արթինի ընտանիքը անապատի ճանապարհին էր հավանորեն, անցել էր շատ փորձանքների միջով և թերևս մի տեղ ոչնչացել էր։ Իր մորեղբ-

բայրը երկար չէր դիմանա այս թաքստոցային կյանքին, սա ևս կոնչանար։ Ինքը ևս կընկներ ծուղակը՝ վաղը. վաղը չէ մյուս օր, վերջապես մի օր։ Ամեն ինչ ենթակա էր ոչնչացման։ Ահա իրականությունը։

Բայց Արթինի մեջ նյութվում էր և մի այլ, ներքին դրդում։ Փրկվել, ապրել, գտնել ընտանիքը։

Դա հայտնեց իր մտադրությունը մորեղբորը։

— Գնա, թերևս բան մը ընես...

Արթինը չուզեց երկար մնալ Քիլիսում։ Թեև լեռնային ճանապարհները գզգզել էին նրան, բայց ուժերը չէին սպառվել։ Վճիռը նոր զորություն տվեց նրան։ Նա մի օր միայն մնաց մորեղբոր տանը։ Հետևյալ օրը, լուսադեմին, տունը պաշարվեց։ Ըստ երևույթին հետապնդությունը որոշել էր «հանելուկը» լուծել մեծ ուժերով։ Ի՞նչ անել։ Կարելի էր կռվել, բայց մորեղբոր ընտանիքը կվտանգվեր անպայման, մինչև տեղն ու տեղը ոչնչացումը։ Արթինը փորձեց անցնել հարևան տունը։ Մասամբ վտանգն անցած էր համարում, երբ ընկավ այնտեղ։ Բայց հենց այնտեղ դարան էր։ Անկյուններից վրա հասան երեք հոգի և երկաթե բազուկներով շղթայեցին նրան։

Արթինին տարան։ Էլ չիմացավ, թե ինչ եղավ մորեղբոր ընտանիքը։ Բանտարկեցին և անցան գործի. կազմեցին մի երկար ամբաստանագիր, որ Արթինը հայրենիքի թշնամի, ավազակ, ոճրագործ է և ճամփու դրին Հալեպ։ Կարիք չկա ավելացնել՝ «սպանելու»։ Դա ինքնին հասկանալի է։

Գնում էր Արթինը գլխիկոր ու մտածում, թե որքան վիճակներ կան դեպի ավելի վատը։ Մի քանի օր առաջ նա վատ վիճակի մեջ էր ազատ լեռներում, ապա վատ էր իրենց տան դռան առջև։ Բայց ահա մի վիճակ, որ դրանից ավելի վատ եղավ...

Քայլելիս Արթինը նայում, տնտղում էր ուղեկցող ոստիկանին։ Ոստիկանը երիտասարդ էր և մի փոքր անփորձ։ Արթինը գիշերը փախավ ոստիկանի առջևից։ Ոստիկանը կրակեց, բայց վրիպեց։

Եվ ահա կրկին գնում էր Արթինը, ընտրելով գիշերների գաղտագողությունը, գնում է շարագութ, օտար երկրում և ոչ ոք, ոչինչ չկար իր հարազատ հայրենիքից, լուսնից և ծանոթ աստղերից բացի։ Կրկին լեռներ, կրկին նույն թաքստոցները, քարն ու փուշը, խոտն ու ջուրը, նույն գազանի ու թշնամու վտանգը։

Բայց նա գնում էր ավելի եռանդով, ավելի ջանքով։ Գնում էր Միջագետք, իր ընտանիքի հետքերով, գտնելու նրան։ Բայց դա գնալ չէր և ոչ ճանապարհ, ոչ էլ ճանապարհի նեղություն։ Դա զզզզուք ու ծեծկոտուք էր քարերի, փշերի հետ, կռիվ՝ արևի տաշոր ճառագայթների դեմ, աղիքները ոլորող սովի դեմ, ամեն ոտ պես թշնամու չարագործ աչքերին հանդիպելու վտանգի դեմ։

Եվ ինչպես երևում է՝ անկարելի բան չկա աշխարհիս երեսին. Արթինը գտավ իր ընտանիքը. մորը՝ փոշեթաթախ, պատառոտված, հյուծված, կնոջը՝ բարակ թել դառած, եղբորը՝ ուժասպառ, ստվեր։ Նրանց գտավ Ազիզում, ապաստանած մի համաքաղաքացու ընտանիքում, օրվա հացի կարոտ։ Հանդիպման րոպեին կանգնեցին մայր ու զավակ իրար դեմ. ոչինչ չկարողացան խոսել։ Եղբորը միայն մի քանի կցկտուր խոսք ասաց Արթինը, և իսկույն լռեցին։ Շատ էր վիշտը մեծ, որ խոսելով կարելի լինի արտահայտել։ Վերջին դրամներով մի խրճիթ վարձեցին և սկսեցին ապրել։ Դաժան բախտը խնայեց։ Արթինին և եղբորը չկարողացան բռնել կամ սպանել։ Գիշեր-ցերեկ խուսափուկ, վախ, շփոթմունք, շարունակական փախուստ։ Ֆրանսիական զորքերը մտան Կիլիկիա։ Հայրենիք վերադառնալու հույսը գրավեց Կիլիկիայի հայերին։ Ֆրանսիական կառավարությունը դրդեց հայերին վերադառնալ Կիլիկիա։ Հայերից մնացորդ կիլիկեցիները նոր կյանքի՝ հուսով վերադարձան տուն։ Արթինն ևս գնաց իր ընտանիքով։ Եվ ո՞վ հրաշք. մորեղբոր կիսավեր տունը մնացել էր։ Մորեղբայրը իր ընտանիքով անհետացել էր և ներկա պահին այնտեղ չէր։ Գնաց բռնեց մորեղբոր տունը, սկսեց վրան գուրգուրալ, սիրել, վերաշինել։ Այստեղ մի փոքր հարազատություն կար. կյանքն էլ ապահովվեց։ Ահա նա ել ու մուտ է անում դռնից, նստում, քնում է իր պապի շինած տանը։ Ինչպես կործանված, ոչնչացված էր համարում նա իրեն այն չար գիշերները, երբ եկավ և կառավարական կնիքը գտավ դռան վրա։

Բայց հրաշքը կարճատև եղավ։ Ֆրանսիական զորքերը հանկարծ լքեցին Կիլիկիան և հայերին թողին իրենց թշնամու հետ դեմ դիմաց։

Ֆրանսիացիք խաբեցին հայերին՝ և պատմությունը վերջացավ։

Մի բախտ միայն բանեց Արթինի համար։ Նրան չսպանեցին, գրին աքսորվող քարավանի մեջ ու քշեցին Քիլիսից։

Կրկին աքսոր, կրկին քարավան, կրկին անապատ։

Այստեղ նա կորուստներ ունեցավ։ Մեռավ մայրը, որ աքսորի ճանապարհներին սպառել էր իր ուժերը։ Նոր էր Արթինը կրել այս վիշտը, որ տիֆից մեռավ նաև եղբայրը։ Մնացին ինքը, կինը։

Բայց բախտը բերեց, թե անբախտությունը՝ Արթինը զավակ ունեցավ, որ մեծ ուրախություն էր նրա համար և մեծ հոգս՝ փորձանքներով լի այն աշխարհում։

Պետք է ապրել սակայն։ Եվ Արթինն ապրեց։ Դրությունը մի փոքր փոխվել էր։ Հայերին քշելով Սիրիայի և Լիբանանի անապատները՝ մեռցնելու նպատակով, թշնամի տարրերը տեսան, որ նշանք բարեկարգություն են մտցնում այնտեղ իրենց արհեստներով։ Կարելի էր օգտվել նրանց աշխատանքից։ Եվ շատերը իրենց հալածողներին ապրեցնելու կարողությամբ վերապրեցին։ Արթինին փրկեց իր արհեստը՝ կոշկակարությունը։ Դա կարևոր գործ էր բնակչության համար. սկսեցին գործ տալ նրան. հաճախ չէին վճարում, բայց և երբեմն էլ վճարում էին։ Եվ որ գլխավորն էր՝ օգնում էին, որ ոստիկանությունը ձեռք չտա։ Արթինը պետքական մարդ դառավ։ Ապրեցին մի քանի տարի այսպես, թե՛ իբրև օտար և, թե՛ իբրև «հարազատ»։ Մի օր մի մեծ հաջողություն էր լինում, Արթինը լավ վաստակ էր ունենում, ուրիշ օր նրան կողոպտում էին լկտիորեն։ Երբեմն բանտ էին տանում, ապա բաց թողնում կաշառք առնելով։ Բայց չէին սպանում։

Արթինը երկրորդ երեխայի տեր դառավ։

Ընտանիք էր ջերմանում... Արթինի համար կարծես այնքան վտանգներից, մահից ազատվելուց հետո սա մի արժեք էր այլևս։ Եվ Արթինն սկզբում չէր տրտնջում։ Բայց հետո սկսեց հետզհետե տխրել և անհանգստանալ։

Կինը չէր հասկանում նրա այս բացառիկ անհանգստությունը և ոչ էլ պատճառը, բայց մի բան էր նկատում, որ Արթինը արտակարգ վիճակի մեջ է, ինքն իրեն խոսում է, գիշերները չի քնում, հառաչում է, վեր կենում նստում պատուհանի մոտ, երկար նայում դուրս։ Նախ կարծեց, թե ինչ-որ թշնամիներից է վախենում, հարձակման կամ ձերբակալման է սպասում։

— Ի՞նչ ունիս, մարդ աստծո, ըսե նայեմ, ինչ կմտմտա,— հարցրեց մի գիշեր կինը,— գեշ բանե՞ր ես իմացեր։

Արթինը չպատասխանեց և շարունակեց ծխել ու նայել պատուհանից դուրս։

— Տուն չունիմ,— ասաց վերջապես Արթինը,— տուն, կհասկանա՞ս։

Կինը գիտեր, զգում էր ինքը ևս այդ պակասը։ Բայց այդքան էլ հիվանդագին կրել այդպիսի մի ցավ։

— Տուն չունիմ,— կրկնեց գլուխը թափ տալով Արթինը,— անտուն կապրվի՞։

— Չապրվիր, շիտակ է, բայց ալ քեզի համար մեծ ցավ մի՛ շիներ։ Ի՞նչ ընենք։

Արթինի համար տունը սակայն շատ մեծ վիշտ էր, ավելի մեծ, քան կարելի էր կարծել։ Դա սոված մարդու հացի կարիք չէր և ոչ հագուստի և առհասարակ նյութական պետք։ Տունը հոգեկան այրող մի կարիք էր Արթինի համար։ Ընտանիքը, որ ցրվեց, պակասեց նրա մեջ ամեն բան, դատարկվեց, շուրջը ամայացավ. ավելի անապատ դառավ, քան այս աքսորի անապատը։ Եվ հիմա կառչեց տան մտքին։ Նա զգում էր, որ միայն տունը կարող էր մխիթարել, հիշեցնելով կորածը, կարող էր հավաքել կորածների հուշերը, պատրանքը, թե նրանք կգան, թե նրանք կան... Տուն է պետք, որ գա, ամրանա հողին, մեջը լցվի նոր կյանքը, հնանա, խորանա, տունը տուն դառնա։

Այսպես տենչում է Արթինը, որ տունը խորանա, լցվի, միաձուլվի հողին։

Տան հետ նա կապում էր միլիոն բաներ։

Արթինը չէր մխիթարվում։

Մի օր էլ կինը զայրացավ վրան.

— Պիտի խենթանաս, մարդ, հերիք չեղա՞վ։

— Չես հասկնար, Մարիամ,— հառաչեց Արթինը։

Կինը, որ միշտ ամեն բանում արտաքուստ հակաճառում էր ամուսնուն վիշտը մոռացնելու նպատակով՝ այս անգամ ևս մնաց Արթինի դիմաց, քարե արձանի պես։ Նա ինքը ևս այրվում էր կարոտից, և նրա կարոտն էլ շատ բաների հետ էր կապված, շատ հարազատների, անցած օրերի հազար ու մի սիրելի պատկերների հետ։ Հավատարիմ իր ստոիկ զսպվածության՝

չձայնակցեց Արթինին և ոչ մի հառաչանքով։ Միայն ասաց մեղմ ու հասարակ.

— Է՛, տուն շինե, թե կրնաս։

— Պիտի շինեմ, տուն մը շինելու եմ,— վճռեց Արթինը։

Եվ տան տանջանքն այնքան սկսեց նեղել Արթինին, որ երբ գործերը բավականին հաջող գնացին՝ ձեռնարկեց այդ տունը շինելուն։ Շինեց մի շատ հասարակ տուն և տեղավորվեց մեջը։ Վերջապես...

Կինը կարծեց, որ իրոք վերջապես փարատվեց Արթինի վիշտը։

Սակայն կինը հիշում էր երկար ժամանակ Արթինի խոսքը, երբ առաջին անգամ նստեցին սենյակում իբրև արդեն սեփական տանտերեր, Արթինն ասաց.

— Այս տունը մեր տուն չէ։

Հարկավ իրենց տունը չէ։ Իրենց տունը Քիլիս մնաց։ Այսպես մտածեց կինը և չանդրադարձավ Արթինի ասածին։

Մի բան միայն աչքի ընկավ տան շենքի մեջ. դուռն առանց փեղկի էր. տախտակ էր դնում և անցքը փակում. Կինը կարծեց, թե պատահական բան էր դա, որ Արթինը կշինի։ Բայց բավականին ժամանակ անցավ, և դուռը չէր շինվում։ Թե ինչու՝ ոչ ոք չէր հասկանում։ Առաջ կարծում էին, թե հետաձգում է՝ սպասելով հարմար փայտեղենի և երկաթի։ Բայց անցավ մի ամիս, երկու, երեք ամիս, դուռը մնաց բաց։

Մի օր էլ կինը հարցրեց.

— Դուռն ինչո՞ւ չես շիներ։

Արթինը մռայլվեց.

— Դուռը պետք չէ,— ասաց նա և մռայլ նայեց գետնին։

— Առանց դուռի, հասարակ տախտակով ինչպես կըլլա, ցուրտ է, գող է։

— Ես կպառկիմ տախտակին հետևը,— խոստացավ Արթինը։

— Քուկին պառկելուդ ի՞նչ պետք կա,— սրտնեղեց կինը,— գուռ մը շինե, տունը շնորքի գա, բե՛։

— Այս տունը մերը չէ,— ասաց Արթինը։

— Է՛, գիտենք մեր տունը չէ. հեչեն չըլլա՝ տուն է։

— Տո՛ւն չէ, ատոր համար ալ դուռ չուզեր։

— Է, դուն հորդ տո՞ւնը կուզես։ Անիկա գնաց։

— Գնաց։ Է՛, ըսել է, ես տուն չունիմ,— ձայնը բարձրացրեց Արթինը և խոսեց ավելի պարզ ու որոշակի,— ասկե ետքը այս տունը դուռ չի պիտի տեսնի։

— Է, քուկին տունդ ունեցիր ու դուռ ալ շինե,— հուսահատվեց կինը։

Ունեցիր։ Բանը մի՞թե տունն է, որ պիտի ունենալ։ Ահա կար տուն, հայրենի, հարազատ, իբրև թե գետնին հաստատ միացած։ Բայց կործանվեց, գնաց։

Դժվար է ապրել Ազիզում։ Ջարշարանքը մեծ՝ վճարը փոքր։ Հալածանքը չէր դադարում, կամայականությունը, քաղցը կար ու կար։ Համը գնաց։ Ասենք չկար էլ այդ համը։

Շուտով Արթինի դրությունը վտանգվեց։ Ոստիկանը հակառակվեց հետը ապօրինի պահանջների պատճառով։ Շարունակ նոր կոշիկներ էր պատվիրում և չէր վճարում։ Արթինն ստիպված՝ իր ծախսով կաշիներ էր ձեռք բերում և նրա համար կոշիկներ կարում։ Վերջը հուսահատվեց, մերժեց։ Հետևանքն այն եղավ, որ ոստիկանը զինվորական իշխանության ուշադրությունը հրավիրեց «փախստական ասքյարի» վրա, սկսեցին հետապնդել Արթինին։ Նա փախավ Հալեպ, իր հետևից քաշ տվեց նաև ընտանիքը, տունը մնաց անտեր։

— Ես ըսի՞ որ տունը մերը չէր,— ասաց Արթինը։

Եվ մի կերպ հաստատվեց Հալեպում։ Բայց ի՞նչ էր այդ հաստատվելը...

Ահավոր բնակարանային պայմաններ։ Երեք իրար օտար ընտանիքներ մեկ սենյակում, ահավոր գնով։ Բայց հնար չկար, պետք էր տոկալ և մնալ Հալեպում։

Այստեղ կարծես դրությունը բարելավվեց։ Մինչև այդ սկսել էին զավակները մեծանալ։ Կյանքի փուշը կոտրվեց, սկսեցին ապրել լավ-վատ, վատ-լավ։

Արթինը կրկին տան ցավով բռնվեց։ Անհանգիստ էր առանց սեփական տան, պետք էր տուն ունենալ, տուն, առանց տան չի լինի... Բայց նա ունեցավ արդեն մի տուն և տեսավ, թե ինչ է այդ տունը։ Մի՞թե կրկին փորձի տուն ունենալ։ Ո՞վ գիտե, թերևս հիմա սիրտը հանգստանա։ Գուցե կարողանա այս անգամ ինքն իրեն խաբել, հանգստացնել։

Որոշեց փորձել։

Հիմք դրեց մի ավելի մեծ, կարգին տան։ Ինքը ևս աշխատելով որմնադիրների, հյուսների հետ, գլուխ բերեց գործը։ Եվ ահա 1928 թվին, Արթինն իր կնոջ և զավակների հետ նստած էր սեփական տան մեջ։

Երկհարկանի էր տունը, ոչ շքեղ, բայց դուրեկան տեսք ուներ։ Թե՛ քարային մասը, թե՛ փայտեղենը, անգամ երկաթեղենն իրենց տեղումն էին։ Վերին հարկը ննջարանն էր, ներքևը՝ սեղանատունն ու խոհանոցը։ Փոքրիկ պարտեզ ևս գոյացավ տան առջև, անգամ ծաղկանոց։ Այլևս ի՞նչ կարելի էր ավելացնել վրան, ցանկանալ ավելին... գրեթե ոչինչ։

Բայց տխուր էր Արթինը և տխուր՝ գաղտնի, ինքն իր մեջ։ Արդեն զավակներն այնքան էին մեծացել, որ կարելի էր հետները քիչ-քիչ խոսել. և խոսում էր, պատմում իր կյանքը, պապի կյանքը, նորից խոսում էր ամեն բանի մասին, բայց տան մասին լռում էր։ Խուսափում էր, անհարմար էր զգում. վախենում էր չհասկանան, վշտանան, դժգոհեն։ Ինչպես,— կասեին,— այսքան չարչարանքով շինեց տունը և չգոհացավ կարծես։ Բայց դարձյալ նույն տարօրինակ բանը՝ տան գլխավոր մուտքի դուռը կրկին մնացել էր կիսատ։

— Այս տան դո՞ւռն ալ չպիտի շինվի,— հարցրեց կինը մի օր՝ հուսալով, որ Ազիզի տան դուռ չունենալը տրամադրության հետևանք էր։

— Այս տան դուռն ալ չի պիտի շինվի,— վճռական պատասխանեց Արթինը։

Չէ, Արթինի մեջ այդ միտքը հաստատ նստած էր։

— Հայրենիք պիտի ունենանք, որ տուն ունենանք, տունն ալ դուռ ունենա,— համառ շեշտով փակեց դռան հարցը Արթինը։

Իսկ հայրենիքը ինչպե՞ս, որտե՞ղ։ Չխոսեց կրկին այս մասին։

— Հայրենիք որ չունինք, ի՞նչ տուն, ի՞նչ դուռ...

— Հայրենիք,— ան չիկա, ան գնաց,— ասաց կինը դառնագինորեն,— Հայրենիք... Գնա, փնտռի, գտիր...

Երևի ինչ-որ մի երևակայական երկրում, որ հուսահատ մարդու հոգում պատկերվում է և հուսադրում նրան։ Աշխատում էին չդիպչել նրա այդ երազանքին։ Թող հուսա և ապրի։ Ի՞նչ վնաս։

Բայց Արթինը կատակ չէր անում և ոչ էլ սին երազներ տեսնում։ Նա շատ էր մտածում հայրենիքի մասին։ Հայրենիք պետք է

ունենալ։ Այսպես շարունակ խորհելով հայրենիքի մասին՝ նրա ուղեղում մի մտքի խաղ սկսվեց։ Ախր չէ՞ որ այդ հայրենիքը կա, երազ չէ։ Կա, գոյություն ունի, իր հողն ունի, ժողովուրդը, պետությունը, կառավարությունը։ Այնտեղ ուրիշ կարգեր են, ուրիշ մարդիկ։ Շատ բան չի հասկացվում, շատ բան անսովոր է։ Հազար ու մի բան են պատմում այն երկրի մասին. բայց ամենքը մի բան հաստատ են ասում, որ այն երկիրը ժողովրդի երկիր է և այնտեղ արդարություն է։

Ժողովրդի՞ երկիր է, արդարությո՞ւն է — բավական է։ Կարելի է ապրել և պետք է այնտեղ գնալ ապրել։

— Չէ, պիտի երթանք, վերջերնիս հոն է,— ասաց մի օր վճռական եղանակով Արթինը։

— Ո՞ւր պիտի երթանք,— հարցրեց կինը։

Տղաները, որ բավականին մեծացած էին՝ լարվեցին։

— Ո՞ւր, հայրիկ։

— Հայաստան պիտի երթանք։

— Ո՞ր Հայաստանը, մարդ աստծո,— գլխի չընկավ կինը։

— Մեկ Հայաստան կա։ Ան Հայաստանը, որու տերը հայն է, որը ազատ է։ Սովետ Հայաստանը։

— Է՜, է՜, ո՞ւր գացիր...

— Վերջերնիս հոն է. մեր տունն ու հայրենիքը հոն է։ Պիտի երթանք Սովետ Հայաստան,— վճռական եզրակացրեց Արթինը։

Տղաներն ուրախացան։

Եվ սկսվեցին այնուհետև ամենօրյա զրույցները Սովետական Հայաստանի մասին։

— Է, ի՞նչ կգրեն, ի՞նչ լուր հայրենիքեն,— կհարցներ ամեն օր նա իր տղաներին, որ այնքան թերթեր էին կարդում։

Արթինն այնպես էր ապրում հայրենիքի կյանքով, որ իր զավակների և արդեն անգամ իր կնոջ մեջ համոզմունք էր ստեղծել, թե հայրենիքը գտնվեց և վերջ ի վերջո պիտի գնան հայրենիք։

— Պիտի հայրենիք երթանք, հոնկե եկած ենք,— հիմա էլ այսպես խորացրեց հարցն Արթինը։

Կարդացե՞լ էր, լսե՞լ այս բնիկ հայրենիքի մասին, բնա՞զդն էր խոսում մեջը. անհասկանալի էր։ Թերևս բուռն ցանկությունը, գնալու իրականություն դառնա՞լը, հնարավորությո՞ւնը, թերևս։

Բայց այս մտադրություններն ու զրույցները սկսեցին անհանգիստ անել Արթինին։

Ահա այդ ժամանակներից մի փոքր հետո էր, որ Արթինը չէր նկատում, բայց արդեն իր տղաները ևս սկսել էին խոսել հայրենիքի մասին։ Նրանք մեծացել էին։ Ամենամեծը գնաց Բեյրութ՝ սովորելու։ Մյուսները մնացին Հալեպ, ուր նախնական կրթություն ստացան։

Կյանքն էլ փոխվել էր շատ։ Չկային նախկին մեծ հալածանքներն ու սպանությունները։ Նորակազմ Սիրիայում հայերն արմատավորվել՝ մի կերպ հանդուրժում էին և իրենք էլ... հանդուրժվում։ Կար իհարկե օտարի սառնությունը, վերից վար նայելը, երեսով տալը։ Օտարը պետք է բարեհաճեր, որ հանդուրժման ու համակեցության որևէ ձև ստացվեր։ Իսկ երբեմն էլ, որ չէր բարեհաճում՝ ցույց էր տալիս մյուս երեսը։ Դժվար էր օտարության մեջ։

Սերոբը՝ Բեյրութի դպրոցում սովորողը, ամառները Հալեպ գալով, հետը լուրեր էր բերում գործադուլների, բանտարկումների մասին։ Հայ տղաները բանտ էին նստում արաբ տղաների հետ։ Ի՞նչ էր նշանակում այս։ Արթինը շատ էլ չէր լսում և ոչ մի անգամ էլ չանդրադարձավ այդ երևույթներին։

Դե, հայերն արդեն սկսում են արաբների պես ապրել, նրանց գործերում լինել, պարզ է, որ կենթարկվեն միևնույն փորձանքներին։

Սերոբը շատ բաներ էր պատմում իր փոքր եղբայրներին Բեյրութի, այնտեղի արաբ ու հայ ընկերների մասին, որ նրանք կռվում են հարուստ արաբների դեմ, ֆրանսիացիների դեմ, որ նրանք բանվորներ են և չեն ճանաչում ազգային խտրություն իրենց գործի մեջ։

Այս պատմությունները պատանի եղբայրների մեջ առաջ բերին ուրիշ մտահղացումներ։ Նրանք սկսեցին ավելի կենդանի հետաքրքրություն ցույց տալ դեպի այն հայրենիքը, որ Արթինի երազանքն էր արդեն և տենչերի վայրը։ Սկսեցին իրենք ևս խոսել հայրենիք գնալու մասին։ Գնալ այնտեղ, ապրել այնտեղ, մասնակցել հայրենիքի կյանքի վերելքին, ապրել լայնարձակ սոցիալիստական կյանքով։ Վերջապես տեսնել մի անգամ, թե ինչպես է իրականության մեջ սոցիալիզմը։

Արթինին շատ դուր եկավ իր տղաների այս խանդավառությունը և նա սկսեց այնպես պատրաստվել, կարծես մի շաբաթ հետո գնում է հայրենիք։

— Երթանք Հայաստան՝ մեր տունը շինենք,— ասաց մի օր տղաներից մեկը։

— Ապրես, նոր հասկցար, որ ասիկա մեր տունը չէ, որ մեր տունը հոն է,— ուրախացավ Արթինը։

Մինչ այս, մինչ այդ՝ վրա հասավ պատերազմը, երկրորդ համաշխարհային պատերազմը...

Ֆաշիստական Գերմանիան, ողողելով ողջ Եվրոպան, հավաքելով նրա բոլոր զինագործարանները՝ ուխտադրուժ կերպով հարձակվեց Սովետական Միության վրա։ Ի՞նչ վախճան կունենա... Ի՞նչ կլիներ իր հայրենիքը այս աշխարհավեր փոթորիկի մեջ։

— Լենինի գործը կհաղթե,— ասում էր Արթինը։

Կնստեր ժամերով լրագրից կտրած Լենինի պատկերի առաջ Արթինը և կնայեր երկա՜ր, երկա՜ր, կխորհեր իր բոլոր խոհերը, կերազեր բոլոր երազները։

Արդեն իր տղաները սովոր էին նրա ձևերին։ Գիտեին, որ այդ նկարը երկար դիտելուն կհետևեին նաև Արթինի դատողությունները։

Կխոսեր աֆորիզմներով.

— Ասիկա մեծ մարդ է։ Դեմքը կխոսի։

Ու դարձյալ.

— Սովետական Միությունը որ մեյ մը մեզի խոստացել է ընդունել՝ կընդունե։

Ու սպասում էր անձկությամբ։ Սպասում էր՝ տան դուռը կխոսատ, անջանադիր կարելով կոշիկները, սիրտը կախ և ականջը ձայնի։

Ահա թե ինչու, երբ հայրենադարձության լուրն ընկավ Սիրիա, Արթինը կենդանացավ և սկսեց պատրաստվել, գործերը կրճատել, հաշիվները վերջացնել։ Ու երբ առաջարկ եղավ և հարցմունք, թե ովքե՞ր են կամենում վերադառնալ հայրենիք՝ Արթինը առաջիններից մեկը եղավ, որ գրվեց ողջ ընտանիքով։

«Ռասիան» վիթխարիորեն, շրջվեց, ջրերը խառնվեցին իրար, ափերը տեսիլների պես շարժվեցին Բեյրութի հետ միասին և նավը սուր կուրծքը դեմ տվեց Միջերկրականին։

Մի վայրկյանում աշխարհը փոխվեց։ Հազարավոր աչքերի գիմաց արաբական ափերին ու նրանց հետև փռված անապատներում մնաց քստմնելի, դժոխային պատմությունը, Տեր-Զորը, կանանց մազերով հյուսված աքսորի ավազադաշտերը, մարդկանց ավերակները՝ գանգեր ու ոսկորներ, ոստիկանների մտրակներն ու ջարդարար ամբոխների հոնդյունները, ու այնուհետև օտարի դառն հացը։

Արժանապատվորեն, ինքնազուսպ, հազիվ նկատելի օրորով սկսեց իր հսկայական լողը «Ռասիան» դեպի տուն։ Սոցիալիստական մեծ երկրի մի բեկորը. կրում է նրա բոլոր մեծությունը։ Նա ամենուրեք հիշեցնում է մեծագործություններ, կրելով իր վրա նոր մարդկության մասին մեծ մտքեր, մեծ հույսեր, մեծ կյանք, նա կտրում է օվկիանոսներ և ծովեր, մտնում է այլ երկրների նավահանգիստները և լարում հազարավոր հայացքներ իր վրա, և ամենուրեք լայն բացած աչքերով նայում են նրան, և կտրվելով առօրեականից՝ խորհում մեծ մտքեր...

Ծփում է նաև Արթինն իր ընտանիքի և այլ հազարավորների հետ դեպի հայրենիք։

Նա հիմա վաթսուն տարեկան է։ Մի բաճկոն եվրոպական տիպի, մի լայն թումպան նեղ տոտերով սրունքների մոտ, ոտներին բոշեր, գլխին՝ բաշլըղ՝ լուրջ ու արժանապատիվ նստած նավեզրին նայում է առաջ։ Կենտրոնացած է։ Նա սրբագործություն է կատարում, հանդես. մի տեսակ ծիսային են դառել շարժումները։

Թուրքական ափերին մոտենալիս մռայլվեց։ Ահա Գալիպոլին, որտեղ նա կռվեց։ Ահա իրենց խրամատները...

Ապա անցան Դարդանելը, Բոսֆորը և մտան մեծ հայրենիքի ջրերը։

«Ռասիան» գնաց, գնաց ու կանգնեց Բաթումի նավահանգստում։ Արթինն իր ընտանիքի հետ ոտը դրեց սանդուղքին, որ իջնի։ Առաջին անգամ սիրտը դողաց, հևաց ակամա։ Ոչինչ չի կանգնում մի վայրկյան, որ Արթինը տեսնի, սրոշի՝ ի՞նչ է, ովքե՞ր են,

ի՞նչ են անում... ամեն ինչ ջրերի պես հոսում, խշշում, հորձում է։ Ուռաներ ափից, նավից, նվագախումբ, թաշկինակներ, ծաղկեփնջեր։ Եվ Արթինը ոտը դրեց նավամատույցի վրա։ Եվ հանկարծ զգաց, որ թուլանալու տեղը չէ, պետք է արժանապատվությունն ու կարգը պահել

«Այս հողն իմ հայրենիքիս հողն է»,— մտածեց Արթինը։

Կարծես մի ծանր բեռ ընկավ Արթինի հոգուց։ Նա թեթև զգաց իրեն, և նոր հասկացավ, թե որքան ավելի ծանր է եղել իր հոգու բեռը և ինքը չէր զգում։

Ամեն բան դյուրին թվաց իրեն, կյանքի ամեն ձգտում, ամեն գործ, ամեն երազ։ Այստեղ, այս երկրում է տեղի ունեցել մեծ ճակատամարտը, որի մասին դեռ Սիրիայում լսած ժամանակ իբրև «ասքյար» տվել էր իր գնահատականը։ Այս երկրումն է ժողովրդի իշխանությունը։ Այստեղ է արդարությունը։

Եվ այստեղ է, ահա այս մեծ երկրումն է իր սեփական ժողովրդի հայրենիքը՝ Հայաստանը։ Երբ ճամփա ընկան դեպի Երևան՝ քանի անգամ զգուշացրեց, որ եթե Հայաստանի հողին մոտեցած ժամին հանկարծ քնած լինի ինքը, զարթնեցնեն բոպե առաջ։ Այդ իրձը կատարեցին սրբությամբ։

Եվ երբ գնացքը կանգ առավ սահմանի վրա՝ Արթինը իջավ գնացքից։ Նայեց մի վայրկյան։

Ինչպես անկարելին՝ կարելի, ինչպես հրաշքը՝ իրողություն — ահա Հայաստանը։ Նա է... Մութն էր. խավարած բլուրներ են նայում իրեն մտերմորեն և օտարոտի միաժամ։ Մի քանի քայլ ռելսերից այն կողմ բարձր խոտ կար, ծաղիկներ։ Արթինը վազեց այն կողմ և չոքելով երեսը երկար դրեց հողին, համբուրեց, մի բուռ խոտ ու ծաղիկ քաղեց, դրեց սրտին։ Հետո ջուր պահանջեց, որ տղաներն արագ հասցրին։ Արթինը խմեց ու գնաց նստեց գնացքը։

Գնացքը շարժվեց։ Շուտով ձախից Դեբեդը դեմ եկավ։ Հետո, երբ նոր էին մտել Լոռու ձորը, քարափի եզրին պայթեց լուսնի պատրույգը, կլորացավ և բարձրացավ։ Աջ ու ձախ սկսեցին խավարից դուրս պրծնել աշտարակներ, ամրոցներ, հսկաներ։ Շոգեմեքենան ձգում էր իր սուլոցը, որի արձագանքները գնում հալչում էին ձորերի վիհերում։ Իսկ երբ գնացքը կանգ էր առնում՝ լսվում էր Դեբեդի մի անգամ սկսած և երբեք կանգ չառնող վազքը։ Հետո հանկարծ Երևան։ Ուռաներ, գորգաբան, ջենջեր, և Ալավերդու

պղնձահանքը սանձելով տարերքը, լցրել էր նախկին ահռելի ձորը կյանքով ու աշխատանքի ուրախությամբ։

Արթինը մերթ նիրհում էր, մերթ զարթնում։ Նայում էր վագոնի պատուհանից, ականջը շոգեմեքենային, որ հափհափում էր օդը, կռվում, ճամփա բացում դեպի վեր։ Ու այսպես նիրհելով ու զարթնելով անցան Կիրովականը, Լենինականը, ապա լայնթափահարումով բացվեց Արարատյան դաշտը։ Արթինի աչքերից ցայտած արցունքների միջին դողում էր Մասիսը, ինչպես ապակե ալունքի մեջ։ Մտան Երևան։ Բոլորը երազում։ Եվ ի՞նչ կպատահեր հանկարծ, որ Արթինը զարթներ և տեսներ, որ Ազիզում է կամ Հալեպում... ինչ չար կատակ...

Չէ, երազ չէ. Հայաստանը երազ չէ, ինքը եկել է, Հայաստան է եկել, հայաստանցի է...

Բայց կրկին ու կրկին՝ երազը երազ չէր, բայց կարծես էլի երազ էր...

Արթինը տեղափոխվեց իրեն հատկացված սենյակը։ Առաջին պատահած մարդը, որի հետ խոսեց Արթինը, մի երիտասարդ էր։ Հարցրեց.

— Այս թաղին իշխանավորին տունը չե՞ս գիտեր։

Երիտասարդը, որ ավտոյի շինն անց էր կացրել թևը, ինչ-որ բանի վրա բարկացած, արագ դուրս էր գնում, կես դժգոհ, կես կատակով անցավ և այսքանը միայն թողեց օդում.

— Էդքան բան որ իմանամ՝ կծերանամ, պապաշ ջան։

Մինչդեռ այդ պահին իր տղաները զրուցում էին մի ուսանողի հետ։

— Եկուր, հայրիկ, մենք ամեն ինչ տեղեկացանք։

Հարևան մի պառավ կնիկ ահագին թեյնիկը բերեց եռ ջրով, իսկ նրա թոռը՝ բաժակներ ու շաքար։

— Համեցեք, անուշ արեք։

— Շնորհակալ ենք,— ասաց Արթինը։— Է՜, մենք ալ հայաստանցի դարձանք։

— Լավն էլ էդ ա, բա ի՞նչ,— ասաց պառավը շատ խորիմաստ լրջությամբ։

— Տուներնիս քիչ մը...,— սկսեց Արթինի կինը։

— Տուն էլ կունենաք, ամեն բան էլ,— ծիծաղեց պառավը,—

բա մենք ո՞նց ենք ըլել. բալկոնի տակին։ Հմի տես ինչ բնակարան ունենք։

Ցույց տվեց երկրորդ հարկում իրենց բնակարանը։

— Տղես գործարանում ցեխի վարպետ է։

Արթինը և կինը գլուխները տմբտմբացրին։ Անհասկանալի էր։ Բայց նրանք այնքան հասկացան, որ պառավը լավ բան ասաց։

Առաջին գործը տան կառուցման հոգսն էր։ Իր տղաների հետ պետք է ձեռնարկեր տան վարկի, հողամասի, շինանյութի պատմությունը։ Խնդիրը բարդանալու էր նրանով, որ Արթինը կամենում էր երկհարկանի բազմասենյակ տուն կառուցել։ Տուն՝ իր և կնոջ, բոլոր տղաների, նրանց ապագա կանանց և երեխաների համար...

Երկրորդ օրը դուրս եկան քաղաք, դեպի ներգաղթի կոմիտեն, ուր պիտի կարգավորվեր իրենց տան գործը և տեղեկանային, թե ուր դիմեն քաղաքացիական բոլոր խնդիրներով։

Արթինը որքան կարող էր մեջքը ուղիղ պահած՝ քայլել սկսեց և հետը դիտել Հայաստանի մայրաքաղաքը։ Հախուռն ցանկություններ, մղումներ՝ ընկնել քաղաք, շրջել, տեսնել բոլորը մի անգամից, բայց միաժամանակ և ուրիշ կիրք այրում էր, շտապեցնում դեպի կոմիտեն։ Տունը։ Կառուցել տունը, որ երազել էր այնքան քսանից ավելի տարիներ, տեսնել իր տան տեղը, հողը...

Այն փողոցը, որտեղից անցնում էին՝ քարուքանդ էր բոլորովին. հին շենքերի դիակների վրա բարձրանում էին նոր բազմահարկեր։ Քարտաշների մուրճերը, բեռնատար ավտոների խորդոցները, որմնադիրների կանչերը վերևից, ներքևից,— այս բոլորը լարում, աշխուժացնում էին։

Քաղաքը դղրդում էր հազարավոր ավտոմեքենաների, տրամվայների և մարդկային աղմուկներից։

Արթինն առաջին իսկ կիրակի օրն իր զավակներին առավ և դուրս եկավ քաղաքը դիտելու։ Երբ դուրս եկան Լենինյան պողոտա, ձեռքը բարձրացրեց.

— Սպասեցեք մեյ մը։

Կանգ առավ և ծանր արժանապատվությամբ դարձավ, մեկ դեպի վեր նայեց, չափեց, ապա դեպի ներքև, մտածեց և որոշեց ինչ-որ մի բան և գնաց վերև։ Մի փոքր անց, իր առջև, աջակողմում բացվեց ու վեհ հանդգնությամբ նայեց քաղաքին մի հոյակապ շենք։ Նա նոր չնայեց, վաղուց նայելիս էր լինում, բայց Ար-

թինը իր համար առաջին անգամ տեսավ նրա նայելը։ Այսպիսի շենք Սիրիայում չկար և ոչ էլ Արթինի բնիկ երկրում՝ Քիլիսում։ Արթինին դուր եկավ շենքի հաստատուն ու լուրջ կանգնվածքը, հպարտանքը։ Կարծես փառք լիներ քարի կերպարանքով, եկել տարածվել էր հրապարակում։

Տղաներն իմացան շենքի ինչ լինելը. օպերան էր. բացատրեցին Արթինին։ Լավ չհասկացավ, բայց այդ չէր կարևորը։ Կարևորը այն էր, որ իր հարազատ պետությունն այդքան հարուստ է, որ այդպիսի հավերժական շենքեր է կառուցում։

Առջև ընկած գնում էր Արթինը և ոգևորվում. կարծես ինքն էլ էր մասնակցել շենքի կառուցմանը։ Այդ ամենն իր հայրենիքն էր։

Անցան այգիները, բարձրացան վերև, Շրջանային փողոցը, ապա Աբովյանն ու վեր։ Սև տուֆե մի շենքի առջև երիտասարդներ էին խոնված Մոսեցյան։ Տերեկացյան։

— Հայրիկ, իմ համալսարանս,— բացականչեց Սերոբը։

— Բաբով արժանի ըլլաս, տղաս,— հառաչանքով թեթևացրեց Արթինն իր հուզմունքը։

— Հայրիկ, ասանկ ոտքով մենք հեռուներ չենք երթար, թրամվայ նստինք,— ասաց Արամը։

Նստեցին տրամվայ և ճանապարհ ընկան դեպի Օրջոնիկիձեի պողոտան։

Հսկայական քաղաքը լցվել էր աչ ու ձախ։ Կրկին բարձրանում էին նորակառույցները։ Զորս կողմը լաստակներ, քարտաշների մուրճերի չիկչիկոց, քար ու կրի փոշի ու հոտ։

Արթինն այլևս չէր կարող հիշել, թե ինչ փողոցներ անցան, ինչ շենքերի անուն տվին։

Մտան գործարանների բավիղը, խառն, իրար հետևից լցված, տարածված։ Դիմացը ահա ծածկելով Արարատի դեմքը՝ ծխում էր գործարանը։ Հսկա դոմնաները թանձրացնում էին օդը՝ առանց խնայելու մարդկանց շնչառության պահանջները։

Արթնին ճնշեցին շենքերի այս մեծ զանգվածները և այն թափը, որով ավելացվում, կառուցվում, կուտակվում էին նորերը։ Զգաց ինչ-որ կիրք, շտապողականություն։ Հապճեպ վազում էին մեքենաները, խորդում, հևում, հապճեպ քաշքում, իրար առաջ կարում մարդիկ, հապճեպ զարկում էին մուրճերը, անգամ հապճեպ դուրս էին ժայթքում դոմնաների ծխի քուլաները։

Հապճեպ՝ կառուցելու, կառուցելու և կրկին կառուցելու։

Քաղաքը շտապում էր, սլանում առաջ, շինարարության անդիմադրելի կրքով բռնված։

Արթինի սիրտը թունդ առավ։ Զգաց պետության գերագույն հոգսը՝ շինարարություն, արագ, անդադար, անվերջ շինարարություն։

— Է՛, ըսել է ամեն բան ունինք,— եզրակացրեց Արթինը։

Բայց այս ճոխ տպավորություններն սկսեցին ճնշել Արթինին։ Հասկացավ նաև, որ մի այցելությամբ չէր կարող ողջ քաղաքն ընդգրկել, հասկանալ։ Որոշեց մոտ օրերը կարգին ման գալ քաղաքում և հանգամանորեն ծանոթանալ ամեն ինչին։

Ներքուստ մի բան շտապեցնում, դրդում էր նրան, տան կիրքը, իր տան կիրքը։

Արթինը դիմում տվեց, որ իրեն հողամաս տան քաղաքի արվարձանում։ Հատկացրին հողամաս, բայց երբ իր տղաների ու հողաչափի հետ գնացին հողամասը տեսնելու և ընդունելու՝ Արթինը առաջին անգամ խորը նայեց հողամասին։

— Աղեկ է, աղեկ, կհարմարեցնենք,— ոգևորեց նա որդիներին, և նրանք համաձայնվեցին։

Արթինը գնաց շարացած, դեղնած խոտերի և քարերի միջով։ Մի քանի մողեսներ փախան նրա առջևից։ Բայց Արթինը շարունակում էր խոր նայել իր հողամասին, իր տան տեղին։ Նա զգաց, որ վճռված է։ Սա իր ապագա տան տեղն է։ Սա իր տունն է։

Կռացավ, մի բուռ հող վերցրեց, մատների մեջ շոշափեց, մաղեց վայր և դարձավ իր զավակներին.

— Ահա որ եկանք տուն։ Ես կտեսնիմ տունս։ Դրախտ պիտի շինեմ հոս։ Գե՛։

Հետևյալ օրվանից, ինչպես մարտի գնան, ամենամեծ եռանդով սկսեցին մաքրել տեղամասը։ Սկսեցին վարպետների հետ աշխատել։ Հիմք դրին Երկհարկանի վեց սենյականոց մի տան։ Ստացել էին տնամերձ հողամաս։ Զուր բերեցին վերևից, որով մշակեցին մի կտոր հող՝ ապա և բանջարանոց։ Բայց սկզբում փոքր էր ամեն բան։

Սակայն ոչ մի դժվարություն, շինանյութի, բանող ձեռքի վճարի, սեփական ապրուստի, ոչ մի արգելք, ոչ մի անկարելի

ման չկար Արթինի համար։ Հաստատ, համառ, ինքնամոռաց աշխատանքով, գիշերը ցերեկ արած բարձրանում էր տունը։

Վաղ առավոտից արդեն տան կառուցման վրա էր։

Մի օր նա արտակարգ տրամադրության մեջ էր։ Վերջացել էր առաջին հարկի պատերի աշխատանքը։ Խոսում էր ինքն իրեն։ Տղաները նայեցին նրան և իրար աչքով արին։ Արթինը պտտվեց տան շուրջը, ամեն կողմից մտիկ տվեց, հեռացավ, մոտեցավ, չափեց անկյունների մեջ մի քանի մեծ քարեր և հետո կանգնեց, երկար-երկար նայեց ու ասաց.

— Այս քարը Լյուֆթի բեյի վրան դրած քար է։ Անիկա զիս իմ տունեն հանեց, կործանեց տունս։ Այն մյուս անկյունում ուրիշ քար,— աս ալ Շերիֆ բեյին վրայի քարն է։ Անիկա զիս շղթայի զարկեց, սպանելու ղրկեց։ Այս առաջին հարկը թշնամիին վրա է դրված։ Ահա կտեսնե՞ք, նայեցեք այս շարքին քարերը. ասոնց տակ Հալեպին կյանքս է։ Այս շարքին տակ Ազիզն է, Հալեպն է։ Բայց այս ամենուն տակի շարքը Գելիպոլուեն մինչև Քիլիս իմ քար ու փուշ ճամփաս է։ Ամեն շարք ասանկ իմ անցած կյանքիս օրերն են։ Այս տունը իմ վրեժիս տունն է։

Արթինի որդիները, որ կիսակատակ ժպտում էին և սկսել էին հոր տարօրինակ ճառը լսել, սարսուռ զգացին։ Արթինի աչքերը կայծկլտում էին, դեմքը կծկվել էր դաժան կնճիռներով։

Արթինը թափում էր հոգու թույնը, անեծք անցյալի դաժան պատմության ու քաշածների։

— Դրեք քարերը, թող տակը մնան տեսածնիս,— թունավոր շեշտով վերջացրեց Արթինը։

Այդ օրը աշխատեցին լուռ ու ամփոփված։ Արթինի խոսքերն ազդել էին իր զավակների վրա։

Օրեր անցան, և տունը բավականին բարձրացավ։ Եվ հենց որ մի սենյակը շտապ կարգով պատրաստվեց՝ ընտանիքը մտավ մեջը։

Դա իրերով լցված, բայց կարգին սարքված սենյակ էր, դեպի Մասիսն ու Արարատյան դաշտը նայող պատուհաններով։ Այս պատուհանից կնայեր դաշտին ու կսկսեր երազել Արթինը։ Նա արդեն մտովի բաժանել էր բոլոր սենյակները, միջանցքները, նկուղի և խոհանոցի անկյուններն իր չորս տղաների ապագա ընտանիքներին։

Տունը դեռ շատ լրացումների կարիք ուներ։ Դեռ տունը, պատրաստ երազած տունը, չկար, և Արթինը ոգևորությամբ շարունակում էր տան կառուցումը։

Բայց աշխատանքի եռուն ժամանակ Արթինի զավակները՝ Սերոբը, Արամը, Ատոմը՝ անցան իրենց գործին։ Սերոբը մտավ համալսարան, Արամը՝ տեղի տեքստիլ գործարանը, Ատոմը նույն տեղի դպրոցը որպես ուսուցիչ, մնաց միայն փոքրը. բայց նա էլ տանը չէր ճաշերից առաջ։ Տան կառուցման գործը վտանգվեց, որովհետև որմնադիրների հետ աշխատում էին բոլորը, իսկ հիմա պիտի աշխատեին գործից ազատ ժամանակ միայն։

Սա նոր հանգամանք էր։ Զբաղվել տան կառուցման գործով և սպասեցնել տալ համալսարանին, գործարանին և դպրոցին՝ ծիծաղելի միտք կլիներ։ Ժամանակը, գործը իրենցն են պահանջում։ Եվ Արթինի զավակները թաղվեցին իրենց գործի մեջ։

Ժամանակ քիչ կար իրենց տան կառուցման գործերով զբաղվելու։ Եվ ահա մի օր էլ՝ նորություն։ Սերոբը հայտնեց, որ չի կարող ամեն օր գնալ քաղաք, համալսարան։ Դիմում է տվել, որ իրեն հանրակացարան ընդունեն։

Արթինը և վշտացավ, և զարմացավ։

— Խելքդ ո՞ւր է։ Տուն չունինք, տուներնիս լմնցնենք մեյմը։

— Երբեմն կուշանամ, հայրիկ,— արդարացավ Սերոբը։

— Տունը լմնցնենք՝ ետքը կերթաս համալսարան։ Չգե։

— Չէ, հայրիկ, չեմ կարող,— հակաճառեց Սերոբը։

— Է, քանի՞ տարի պիտի մնաս քաղաքը։

— Հինգ տարի։

— Չըսե՞ս, քուկին տունիդ մեջ չի պիտի ապրիս։

— Այդ արդեն չեմ գիտեր, հայրիկ։ Համալսարանը չեմ ձգեր, իմացիր։

Սա ի՞նչ խոսելու եղանակ է, սա ի՞նչ հրամայական պահանջներ են նոր կյանքից։ Արթինը չգիտեր ինչպես վարվի։ Եվ տղան պետք է սովորի. դա իր բաղձանքն է եղել վաղուց, և տուն պետք է կառուցվի։

Հանդուրժեց Արթինը, բայց շատ վշտացավ։ Իր զավակը, իր տան սյունը գնում է «դուրս»։ Սա իր մտադրությունների մեջ չկար։

Սերոբը գնաց քաղաք և այնտեղ հանրակացարանում անկյուն

առացավ։ Միայն կիրակի օրերն էր գալիս տուն։ Երբեմն էլ չէր հաջողվում՝ ժողովների և այլ պատճառներով։

Արթինի աշխատող ձեռներից մեկը համարյա պակասեց, առանց այն էլ շատ պետք չէր գալիս։

Մի փոքր այսպես չէր սպասում, բայց հնար չուներ, պետք է հանդուրժեր նաև այս։

Միաժամանակ տան գործը՝ թեև դանդաղ, բայց առաջ էր գնում։ Բայց այսպես էլ երկար չտևեց։

Մի օր Արամն ու Ատոմը շատ ուշ վերադարձան տուն։ Արթինը ոտով գլխով մտած տան կառուցման գործի մեջ՝ ցեխակոլոլ, փոշոտված և գրգռված վիճակում էր։ Զայրացել էր որդիների վրա։ Իսկ նրանք հոգնած թեև, փոխանակ մոտ գալու, գործի մասին հարցնելու և աշխատելու, վիճում էին իրար հետ ինչ-որ թեկնածուի մասին, որին առաջարկել էր իրենց շրջանը։ Նրանք այնքան էին տարվել իրենց վեճով, որ բոլորովին մոռացել էին տունը։

— Է, շլմնցա՞վ, անցեք գործի։

— Օգուտ չըներ, հայրիկ, հաց պիտի ուտենք և դարձյալ գործի երթանք։

Արթինը զարմացավ։ Ուրեմն սրանք այնքան տարված են իրենց նոր կյանքի հոգսերով, որ մոռացել են տունը։

— Է՞, ուրիշ ժամանակ կերթաք, գործը չփախավ դե,— սրտնեղեց Արթինը։

— Անկարելի է։ Այսօր մարքսիզմ-լենինիզմի դասն է,— հակաճառեց Ատոմը։

— Ըսել է տունը մնաց...

— Չի մնար, հայրիկ, միայն... Հայրիկ, չերթալ չըլլար, պարտականություն է,— բացատրեց Ատոմը և իսկույն դարձավ Արամին,— անկե ետքը կոլեկտիվի ժողով է։ Ես կշտապեմ...

— Այդպես է, հայրիկ, այդպես է. ժամանակ չի կա։

Ժամանակ չկա...

Արթինը այնպես զգաց, որ ինչ-որ մի ձեռք քշել-տարել է իր զավակներին տանից, որ նրանք դառել են դրսի մարդ։ Եվ մտածում է. «Նոր չէ՞ր, որ իրենք իրեն օգտեին, այնինքն՝ նորեկներ մտան այս քաղաքը և ոչ մի բանի չկապված, նրա գործերին անմասնակից, անպարտավոր՝ ունեին միայն իրենց հոգը, իրենց

տան կառուցումը, իրեն գլխավոր նպատակ՝ դրած առաջին հերթին։ Հիմա դրսի գործերը չեն թողնում, որ գոնե այդ վերջացնենք։

Բայց տղաները հորը չվիրավորելու և որ գլխավորն է՝ չվհատեցնելու համար ամեն առիթի մի որևէ արանք գտնում էին իրենց՝ իսկ որ բազմազբաղ ժամանակից, և կրկնակի հոգնություններով ու ճիգերով օգնում էին տան կառուցմանը։

Արթինն ստիպվեց վարժվել նոր հանգամանքներին։ Տունն էլ արդեն ավարտվելու մոտ էր.— հարկերը պատրաստ էին, փայտեղենը միայն լրիվ չէր։ Արթինը կրկին սկսեց ոգևորվել։

Առավոտը շատ վաղ վեր կկենար, կսկսեր տան գործը, կառուցումը։ Կերգեր քթի տակ, կխոսեր, կկանգներ որևէ քարի առաջ, երկար կնայեր վրան ու կասեր.

— Քար, քանի՞ հազար տարի պիտի մնաս։

Կամ դռան կամարին նայելով՝ կդիմեր նրան.

— Կամարիդ տակեն քանի՞ սերունդ պիտի անցնի։

Որդիները ծիծաղում էին, բայց և ուրախանում էին իրենց հոր երջանկության վրա։

Երբ կիրակի օրերը ընտանիքը հավաքվում էր, նոր միայն սկսվում էր տնական կյանքն իր բոլոր նախկին ծեսերով ու սովորություններով։ Սկսվում էին հետագա կյանքի մասին երազանքները, որ Արթինի սիրած զրույցի ձևն էր։ Նա չէր թաքցնում իր մտադրությունը, այն է՝ բոլորին ամուսնացնել, տեղափոխել յուրաքանչյուրին իր սենյակը և ապրել միասին, իբրև մի ընտանիք։

Դա Արթինի միակ պատկերացրած և վստահորեն իրական ձևն էր կյանքի, որի մասին ոչ մի կասկած անգամ չուներ։

Նա երանության մեջ էր նայում, չէր նկատում սակայն իր զավակների մեջ առաջացած փոփոխությունները։ Նախ՝ նա չէր զգում այն ժպիտը, որով իրար մեջ նրանք մտքեր էին փոխանակում երբեմն, երբ իրենց հայրը խոսում էր տան, իր ապագա հարսների, թոռների և միասնական մի ընտանիքի մասին։ Բայց և չէին կամենում վշտացնել իրենց հորը որևէ նկատողություն, ակնարկ անելով այն նոր կյանքի մասին, որի մեջ ընկան նրանք գալով հայրենիք։

Եվ իրոք՝ նրանց կյանքը հիմնովին փոխվել էր։ Նախ՝ նրանք իրենց նոր տանը չէին լինում օրվա մեծագույն մասը։ Եվ ապա նրանց զբաղեցնում էին բոլորովին նոր հոգսեր ու գործեր։ Նոր

հայրենիքի մայրաքաղաքի, դրանից դուրս շրջանների, ողջ երկրից դուրս լայն, անվերջ ծովի պես լցվել էր մի ավելի մեծ, օվկիանոսային կյանք, որի մասին ամեն օր գրվում, խոսվում էր իրենց շուրջը, իրենց հետ, քաշելով, տանելով նրանց ևս։

Արթինը շինում էր իր տունը ուրախ ու անդորր։ Չէր խառնվում իր զավակների զբաղմունքին։ Նա ինքը միշտ երազել է, որ նրանք պիտի գործի մտնեն, աշխատեն, մարդ դառնան։ Այդ կատարվում էր, ուրեմն և լավ է, նա էլ կարող է իր տանը նայել ու կառավարել տունը։

Տան այսքան պաշտամունքը, որին ծանոթ էին Արթինի զավակները, դեռ քանի Սիրիա էին, ուներ մի վեհ, պատկառելի բան, որ նրանց ևս համակում էր։ Օտարության մեջ այդ տունը կարծես մի վայր էր, որ կարելի էր քաշվել իր համար, սահմանափակվել և ապրել ամենքից կտրված կյանքով։ Այդ տունը կարծես մի ամրոց էր, ուր կարելի էր ապաստանել այնքան թշնամիներից։ Այդ տունը այն վայրն էր, ուր ինքը ամենից ազատն էր դրսի աշխարհի շրջապատից, իր բոլոր նվիրական, սիրելի բաներով։ Վերջապես, այդ տունը իր միակ սեփականությունն էր, իր պետությունը, ուր ազատ էր տնօրինել, մտածել, ապրել ինքնուրույն կյանքով։

Այնտեղ տունն այլ խորհուրդ ուներ, այլ էր նրա դերը։

Բայց ահա, երբ եկան Երևան և կառուցեցին այս տունը՝ մի տեսակ նեղ եկավ սա Արթինի զավակների համար։

Առաջին տարին Արթինը համարյա իր հարևանների տնատեղերից հեռու ոչ մի տեղ չեղավ։ Բայց վերջերը սկսեց գործի հանգամանքով անցնել մյուս ավանները, քաղաքը։ Սկսեց դիտել, տեսնել նոր մարդկանց «իր Հայաստանի» բնակիչներին։ Ամեն դեպք նոր էր, ազդում էր, հետաքրքրական էր։

Մի անգամ նա այցի գնաց էջմիածնի խճուղու վրա միհարկանի տուն, որ կառուցվել էր խճուղու երկայնքի շարանի մեջ։ Իր բարեկամը տուն էր ստացել այդ շարքում։

Գեղեցիկ տան հետ նաև տնամերձ այգի էր ստացել իր բարեկամը, միաժամանակ նաև աշխատանք սովխոզում։ Զրուցում էին։ Եվ ահա դեմից եկավ անցնելու մի զորամաս։ Դրանք սևահեր, սևաչվի, հայացքով այրող, սրաժպիտ զինվորներ էին, որ երգելով գնում էին պարապմունքի։

Արթինի աչքերը փայլեցին, շլացան։ Նա ձեռաց խմեց ողջ

տեսարանը, զենքերը, զինվորական կեցվածքը, տրամադրությունը։

Աչքերը լցվեցին, բուկը խեղդվեց։ Եվ արցունքների կաթիլների միջոցով բեկված զինվորների համրատատան քայլքը, դիմվածքը, ոտների դոփը և անհոգ արհամարհանքը դեպի ամեն դժվարությունն ու ամեն դիմադրությունը, ուժը, այն հրաշալի ուժը, որ խորտակել էր թշնամուն և կարող էր կրկին ու կրկին խորտակել՝ այս ամենը իրականության մեջ տեսավ Արթինը և նոր զգաց, որ դա իր մեծ հայրենիքումն է։ Իր տնով տարված՝ նա իսկ որ չէր տեսել այն հայրենիքը, ուր եկել էր։

Շատ բան պատմեց Արթինի բարեկամը, որ ավելի մեծ առիթներ ուներ տեսնելու իր նոր կյանքը։

— Ըսեմ քեզի։ Ամեն բան ամենունն է,— ասաց Արթինի բարեկամը, հայացքը կոմիկորեն գամելով նրա աչքերի մեջ,— ի՞նչ կըսես։

Շարունակեցին իրար նայելը և հանկարծ երկուսն էլ փոքրկացին։

— Չի տեսած բաներս տեսանք դե։

— Կամքը ժողովուրդինն է,— ասաց Արթինը,— ժողովուրդը ինչպես կուզե, անանկ ալ պիտի ապրինք։

Մի անգամ, կիրակի օր, ճաշի վրա, երբ Արթինն ու իր զավակները, ինչպես միշտ, ուրախ տրամադրության մեջ էին, Արթինն ասաց.

— Է՞, տուներնիս շինվեցավ. մենք ալ տուն ունեցանք, լմընցանք։

Արթինի այս խոսքերը ժպիտներ առաջացրին նրա որդիների դեմքերին։ Նրանք իրար նայեցին նշանակալից և լռեցին։

Արթինն զգաց, որ մի բան անցավ նրանց մեջ։ Նայեց մեկմեկ նրանց աչքերին և ժպտաց.

— Է, կխնդաք կոր, բան մը չկա՞։

— Կուրախանանք կոր, հայրիկ,— ծածկեց Ատոմը։

— Տուն ունեցանք,— շեշտեց Արթինը գլուխը թափ տալով և խոհուն աչքերով նայեց հատակին։

— Տուն,— կրկնեց նա մի փոքր հետո, արձագանքելով ինքնիրեն։

— Երնեկ ձեզի, որ ինձմե ավելի պիտի ապրիք մեջը,— ավելացրեց առանձին կարոտով։

— Այդ մ'ըսեր, հայրիկ,— ասաց Սերոբը,— դուն մեզմե ավելի պիտի ապրիս մեջը։

— Ինչո՞ւ,— զարմացավ Արթինը։

— Որովհետև մենք հյուր ենք հոս, հայրիկ. այսօր հոս ենք, վաղն ո՞վ գիտե։

— Վաղն ո՞ւր պիտի երթաք,— հանգիստ, բայց ներքին խռովքով հարցրեց Արթինը։

Ատոմն ու Արամը ծիծաղեցին, որ կատակի ձև տան գրույցին և ծածկեն կամ մեղմացնեն Սերոբի ասածը կամ ասելիքը, որ գուշակում էին, թե ինչ էր լինելու։ Նրանք այդ մասին շատ էին իրենց մեջ խոսել։

— Լուրջ խոսեցեք, բան հասկնանք,— սրտնեղեց Արթինը,— ի՞նչ կխնդաք։

— Քուկին տունդ ասիկա է, հայրիկ,— ասաց Սերոբը՝ շարունակելով մեղմ ու բարի ժպիտով, որ չփչացներ հոր տրամադրությունը,— դուն հոս պիտի ապրիս, բայց մենք ո՞վ գիտե ուր պիտի ապրինք։ Ես ուսուցիչ պիտի դառնամ, ինձ ուր որ ուղարկեն՝ պարտավոր եմ երթալու։ Ասոնք նմանապես։

Արթինը կարծես արթնացավ։ Սուր նայեց Սերոբին և գլուխը թափ տվեց։ Չխոսեց, շարունակեց լուռ ուտել իր առջև դրած ապուրը և սկսեց մտածել։

Նոր անդրադարձավ, որ իր որդիներն իսկապես ուրիշ կյանքով էին ապրում։ Որ նրանք տարված են ավելի մեծ կյանքով, որ եռում է իրենց ավանում, հարևան ավաններում, հեռավոր գյուղերում, քաղաքում, ողջ երկրում։ Քանի անգամ նրանք գնացին զանազան վայրեր, բացակայելով գիշերներ, օրեր։ Որ նրանք իրոք տնական կյանք չունեն, տուն չունեն։

Տխրեց Արթինը։ Այսքան երազել իր սեփական տունը, այսքան տարի ձգտել կառուցելու իր տունը, որոնել այն, գտնել վերջապես, և ահա այդ տունը կորցնում է իր խորհուրդը...

Ուրեմն ի՞նչ, տունը մենակ ի՞նչ համար էր։ Չէ՞ որ նա տուն էր շինել իր որդիների համար, որ նրանք անբաժան, միատեղ ապրեն, բազմանան և շարունակեն իր ցեղը հեռավոր ապագայում։

Մի օր էլ, երբ իր տղաները բոլորը տանն էին, Արթինը չնկատեց, որ նրանք առանձնացան տան պատի տակ, մինչ ինքը փո-

բում էր բանչարանոցը, սովորաբար նրանք տուն հասնելուն պես տան գործին էին անցնում։

Նրանք ինչ-որ մի բանով շահագրգռված վիճակումն էին։ Ատոմը հայտնեց իր մտադրությունը՝ գնալ Լենինական և մտնել այնտեղի Տեքստիլ գործարանը։

— Միևնույն չէ՞, հոս ալ տեքստիլ չէ՞,— հարցրեց Արթինը։

— Տեքստիլ է, բայց այստեղի մեքենաները հարմար չեն իմ գյուտիս համար,— բացատրեց Ատոմը,— ինծի էնժենները բացատրեց Լենինականի գործիքներու սիստեմը։ Հոն կըրնամ գյուտս կատարելագործել։

— Մի թողուր, ո՞ւր պիտի երթա։ Օտար տեղ կուզեր՝ օտար տեղ էինք դե,— ասաց Արթինի կինը։

— Լենինականը օտար տեղ չէ, մայրիկ,— նկատեց Սերոբը մանր ժպտալով։

— Անանկ է,— դառնությամբ, թե զղջալով ասաց Արթինը,— ամեն բան մտածեր էինք, բայց աս չէինք մտածեր։ Անանկ է, պիտի երթա։

Կինը նյարդայնացավ.

— Ջանըմ, տունը չշինած, չլմնցած՝ ասոնք ուրիշ տուներ կցրվին։

— Անանկ է, անանկ է,— շարունակեց իր խոհը Արթինը և չէր հասկացվում ի՞նչն է «անանկը». լա՞վ է, թե վատ։

Սերոբը, որ հաշտարարի դեր էր ստանձնել, ուսուցչական եղանակով և զգույշ բացատրեց.

— Հայրիկ, մենք հոս գործի համար եկած ենք, չէ թե տունին մեջ նստելու։ Հայրենիք է, գործերը շատ, ալ պիտի վազես, որ հասցնես։ Սոցիալիստական շինարարություն է։ Մենք այն կրնենք ինչ որ մեզի կսովորեցնե Լենինը։

— Լենի՞նը,— մրմնջաց Արթինը, կարծես ինչ-որ մի սխալմունք էր գործել իր կամքին հակառակ և հիմա սթափվեց ու գիտակցեց,— իրավունք ունիք, ճշմարիտ է։

Եվ ջերմեռանդ լրջությամբ, կարծես վճռվում էր իր կյանքի գերագույն խնդիրը՝ ասաց.

— Շատ աղեկ, տղաքս — գացեք, ինչ որ Լենինը կսովրեցուցնե՝ այն ըրեք։

Հանկարծ Սերոբը մեղմ ժպտով, բայց վճռականորեն հարձակվեց հոր վրա և գրկեց։

— Այդպես է, այդպես է, հայրիկ,— ասաց քնքշորեն Սերոբը,— տունն՝ հայրենիքն է, չէ թե՝ աս,— ցույց տվեց իրենց տունը։

Ատոմը, որ մինչ այդ քթի տակ ժպտալով լսում էր Սերոբին և Արթինին, առաջ եկավ.

— Հայրիկ, ես մեր տունեն չեմ հեռանար։ Ես մեր տունը կերթամ։

— Ատանկ է,— ատանկ է,— մի փոքր կոտրված, ասաց Արթինը,— աշխարհը նոր է, նորի հետ պիտի երթանք։

— Է, ես ձեզ համար այս տունը շինեցի, դուք ալ ինծի համար տունը ճշմարիտ շինեցիք։ Ապրեք, ձեր խոսքն է. տունը՝ հայրենիքն է։

Եվ Արթինը աղոտ կերպով զգաց, որ տունը, այն տունը, որի համար նա եկավ հայրենիք և շինեց, փոխվեց նրա աչքում, դառավ ուրիշ բան։ Ավելի ճիշտը խորացավ, միացավ մեծ հայրենիքի հետ։

Ավանի բարձունքներում բլուրն ի վեր նայելիս կարելի է տեսնել Արթինի տունը։ Ոչ մի պաճուճանք, ոչ մի հավակնություն։ Դա կարմիր տուֆի մի տուն է։ Կնայես՝ չես նկատի, կանցնես։ Սակայն դա Արթինի համար, Արթինի ձեռքով յուրովի գրված պատմություն է։ Նրա մեջ նա դրել է իր ողջ կյանքի դրվագները։ Քարերի շարվածքները տողեր են, հիերոգլիֆներ, Արթինի համար վերծանելի։ Ամեն քարը դնելիս նշել է Արթինը, թե ի՞նչ բանի և ո՞ւմ հուշերի վրա է դնում՝ ծածկելու համար, երբ նա սկսում է նոր իր կյանքը։

Դա նրա հաղթանակի տունն է։

Որդիներն էլ ամեն անգամ այդ տանը նայելիս զգում են այդ և ակնածում։

ԱՆԱՀԻՏ

Դա սկսվեց պատերազմի օրերին։

Անահիտը, հիմնարկային մի հասարակ աշխատող, ճակատի մարտիկներին ընծաներ ուղարկելիս անծանոթ մի մարտիկի այսպիսի նամակ գրեց.

«Սիրելի ընկեր՝ մարտիկ.

Մեր Հայրենիքը մեծ վտանգի մեջ է։ Բայց նա երբեք չի ընկճվի թշնամու առաջ, շնորհիվ քեզ նման հայրենասեր մարտիկների, շնորհիվ անձնվեր թիկունքային աշխատողների՝ մենք հաղթենք։ Մեծապես վստահ եմ, որ իմ այս նամակը հասնում է մի ճշմարիտ հերոս մարտիկի ձեռքը։ Հաղթություն եմ բարեմաղթում»։ Անահիտի նամակի հասած օրը Տիգրանը, այդպես էր մարտիկի անունը, պատրաստվում էր իր վաշտը գրոհի տանել։ Մարտիկները քնած էին խրամատում։ Նա արթուն էր, բարձրացած տրամադրության մեջ։ Գիտակից և ակտիվ մարտիկը շփոթություն չէր, որ ապրում էր այդ ժամերին։ Դե՛, մարտ է, կամ գրոհում ես, կամ գրոհվում։ Հո չես եկել խաղաղ աշխատանքի։ Հետո՝ կռիվ է. կամ կսպանես կամ կսպանվես։ Ի՞նչ արած։ Քո տեղը կբռնեն միլիոնները։ Գործը չի տուժի, սա է գլխավորը։ Բայց և մարդկային է. կուզենայիր, որ կենդանի մնայիր, տեսնեիր հաղթությունը։ Օ՜, այդ երազների երազը։

Բայց դա էլ անպայման պայման չէ, որ դո՛ւ տեսնես։ Կարող ես և ինքդ չտեսնել։ Թախիծի պես մի բան մտավ Տիգրանի սիրտը։ Ոչինչ, դա էլ բնական է։

Բնական է և այն, որ այդ րոպեին կուզեիր տեսնել, թեկուզ մի վայրկյան, հայրենի դաշտերը, քո տունը, հարազատներիդ, եթե հնարավոր է՝ ողջ Սովետական Միությունը, հետո ինչ կլինի թող լինի։ Իհարկե Տիգրանը այն էլ էր մտածում, որ հայրենիքը, տունը, ողջ սովետական ժողովուրդն իր հետ են, իր շուրջը, իր մեջ։ Դե իհարկե։ Ահա նրա մի շունչը, ահա մի մարդ, մի հոգի։

Կրկին բաց է անում նամակը։ Ո՞վ է այս Անահիտը։

Տիգրանը — այդպես է լինում մահի-կյանքի սահմաններում. պետք է լինել ճակատում, որ իմանալ,— ներվերը գերզգայուն են դառնում, մարդ մի փոքր փափկում է... Տիգրանը հափշտակված է այդ Անահիտով, կա «ճակատային» սեր, որ բոցավառվում է մի բոպեում։

Տիգրանը զգում էր այդ Անահիտի ջերմ սիրտը։

Տիգրանը Անահիտին նամակ գրեց, ուր ի միջի այլոց ասում էր. «... Մեր հաղթությունը չի լինի հաղթություն միայն ֆաշիզմի դեմ. դա կլինի նոր մարդկության հաղթությունը հին մարդկության դեմ։ Կսկսվի նոր մեծ էպոխա։ Պատրաստվենք աշխատելու այդ էպոխայում»։

Շուտով ստացվեց Անահիտի պատասխանը, և այսպիսով սկսվեց մի իսկական նամակագրություն այս երկու իրար անծանոթների մեջ։ Դա ահագին հոգեկան հաճույք էր Տիգրանի համար։

Մի անգամ էլ Անահիտը այսպես գրեց... «...Ես հավատացած եմ, որ մենք նոր հայացքով կնայենք մեր գործերի, մեր կյանքի վրա։ Եթե մենք անցյալում քայլում էինք արագ և այժմ վազում ենք, ապա պատերազմից հետո կթռչենք։ Ճիշտ եք ասում (Անահիտը անցել էր «դուք»-ի) բոլորովին նոր էպոխա է սկսվելու»։

Տիգրանը պատասխանեց.

... Ճիշտ եք ասում. հետևյալ էտապը թռիչք է և ոչ դեպի առաջ ընթացող մի հետևյալ հասարակ քայլ։ Մենք կգործենք համաշխարհային մասշտաբով»։

Մի անգամ Անահիտը ինչ-որ մի առիթով նամակի մեջ այս տողերը գրեց.

«Քաջության կարիք չկա, եթե քայլի, գործի մեջ իդեա չի դրված։ Խիզախելը խելացի անհրաժեշտություն պիտի լինի»։

Տիգրանը այդ գիտեր, բայց հիմա ավելի զգոնացավ. ավելի պարզորոշ պատկերացրեց երկյուղը իբրև կենդանական բնազդ, իսկ գիտակից մահը՝ անմահություն մեծ գործի մեջ։ Նա ավելի արիացավ, ինչպես վայել է պարտիականին, կոմունիստին։ Ավելի լավ «զգաց թիկունքը», հասկացավ. որ իր հետ խոսում է ոչ միայն մի կին, այլ մարդ, որը հաղորդակից է դարձնում իրեն ողջ մտածող սովետական ժողովուրդը։ Զգաց, որ այդպես մտածող ժողովուրդը ահա այս նամակների միջով իրեն է նայում և իրենից սպասում է հաղթություն։

Այլևս ի՞նչպես չհաղթես, ի՞նչպես լավ չկռվես, որ հաղթես։

Երբեմն, երբ հուզող մարտից հետո, հանգստանալու համար Տիգրանը պառկում էր մեջքի վրա՝ սկսում մտածել Անահիտի մասին՝ որքան հետաքրքիր բաների մասին կարելի էր խոսել այդ խոհուն, զարգացած աղջկա հետ։ Կուզեր տեսնել նրա լուսանկարը, բայց չէր համարձակվում խնդրել նրանից։ Նա էլ չէր ուղարկում, չէր մտածում այդ մասին։

Բայց պետք է ասել, որ Անահիտը մի փոքր տարբեր էր վերաբերվում դեպի այդ նամակագրությունը։ Առաջին նամակը, որ ուղարկել էր մարտիկին քաջալերելու, թեկունքից մի ջերմ խոսքով ուրախացնելու համար, թերևս նրա համար ևս մի շարաճճիություն ուներ իր մեջ և ավելի քան Վարսիկի համար։ Չէ՞ որ Տիգրանն իրեն էր գրում և ոչ Վարսիկին։ Այստեղ մի հաճույք կար. անծանոթության վարագույրի հետև թաքնված, խոսել անծանոթի հետ։ Ուստի այժմ, Անահիտը իր աշխատանքով կլանված, իր գործերը լավ կաղմակերպած, ակտիվ, հանգիստ սրտով ապրում էր իր համար, և հոգեկան «նեցուկների» կարիք չէր զգում։ Ինչպես թիկունքի մարդ նա ապրում էր միայն ընդհանուր լարվածությունը, ճակատի հաջողություններն ու դժվարությունները, ուներ իր անձնական այլ հոգսերն ու կյանքը։ Մի խոսքով՝ նա լավ էր իր համար և չէր կլանված Տիգրանի անձնական հոգսերով։

Բայց ինքն էլ սկսեց «արծարծել» նամակագրությունը՝ ուրախ, որ կարող էր հոգեկան օգնություն մատուցել մի մարտիկի, որ բարձր է ապրում տրամադրությունը, թող այդպես շարունակվի, թեև նա, որ գիտակից պարտիական է երևում՝ անշուշտ այս նամակներից չէ, որ պիտի առաջ մղվի, այլ շատ ավելի մեծ ու լուրջ խնդիրներ լուծելու համար։ Բայց դե՛, պատերազմ է, մարդիկ մի փոքր զգայուն են դառնում։

Նամակագրությունը շարունակվեց, որով Անահիտը ևս համակվեց ընկերական, պարտիական մտերմության զգացմունքով, և այսպիսի կապը նրան դուր եկավ։

Հաճախ մտածում էր Տիգրանի անձնական բախտի մասին,— ի՞նչ լավ կլիներ, որ փորձանքի չգար այդ եռանդուն երիտասարդը։

Սակայն ուրիշ բան դառավ այս նամակագրությունը Վարսիկի համար։ Նրան սկզբում զվարճացնում էին քրոջը գրած նամակներն իբր կատակ, բայց վերջն իր համար գառավ հոգեկան պա-

հանջ Տիգրանի հետ խոսելը։ Նրան ավելի գրավեց ծանոթության, մտերմության այս ձևը։ Վերջապես այս մտերմությունը։ Վարսիկը տենչում էր, որ պատերազմը շուտ վերջանա, որ Տիգրանը վերադառնա տուն, հանդիպեն, արդեն իրար հետ խոսեն «իրական կյանքում» և ոչ այսպես ինչ-որ մի վեպի մեջ, որ ճիշտ է՝ զվարճացնում էր, հետաքրքրական էր, բայց միաժամանակ էլ դրդում էր բաց անել իրենց մեջ քաշած վարագույրը՝ տեսնել նրան, խոսել, ձեռ տալ իրար, բարևել։

Մի անգամ Տիգրանը իր նամակում այսպիսի տողեր գրեց.

«Հաճախ աչքերս փակում և պատկերացնում եմ Ձեր դեմքը, կերպարանքը։ Երևակայում եմ, թե որքան թովիչ պիտի լինեք Դուք, որ այսպիսի բաներ եք գրում։ Դուք չեք կարող չլինել թովիչ։ Այսպիսի մտքերի, այսպիսի ֆանտազիաների տեր, այսպիսի սրտի տեր կինը ուրիշ բան չի կարող լինել»։

Այս տողերը սթափեցրին Անահիտին։ Նա զգաց, որ ինչ-որ բան կոտրվեց իր և Տիգրանի միջև։ Մեկ ուզեց ուղղակի գրել, որ Տիգրանը թողնի ճակատային ֆլիրտը, շարունակի իրենց նախկին բարեկամական նամակագրությունը։ Բայց հետո մտածեց, որ երբեմն էլ լինում են «ճակատային սիրո» խանդավառություն, սիրահարվածություն։ Թող մարտիկը չկոտրվի, սառեցնի մարտական ոգևորությունը, թուլանա գործի մեջ։ Բայց և ճիշտն ասած շարունակել նամակագրությունը, սուտ խոսել չէր կամենում։

Բայց ինչ-որ արհեստականություն մտավ իրենց մեջ։ Նամակագրության վեհությունը կորավ իրեն համար։— Խոսում էին ոգեվորիչ, բարձր նյութերի մասին, և հանկարծ ահա այդ բոլորը հանգեց հասարակ սիրային ֆլիրտի։ Չգիտես ինչու՝ սա մի տեսակ դիպավ Անահիտի ինքնասիրությանը։ Ո՞վ գիտի մի օր էլ կգա, կկանգնի քույրերի առջև, կնայի, կստուգի և կհավանի՞— չի՞ հավանի իր երևակայածին։ Ինչ-որ քաղքենիության հոտ է գալիս։

Անահիտը հայտնեց Վարսիկին իր անախորժությունը այս մասին և հարցրեց՝ շարունակվի՞ թղթակցությունը...

— Տգեղ կատակի, խաղի մեջ ընկանք. լավ չի՞ լինի ուղղակի ընդհատեմ նամակագրությունը։

— Ո՛չ, ո՛չ, մի՛ անիր,— աղերսեց Վարսիկը,— մի՛ կոտրիր բարձր տրամադրությունը։ Ինչո՞ւ վիրավորել նրան,— խանդավառված կովում է... այսպես լավ է...

Եվ Վարսիկը շարաճճի ժպտաց։

— Ես չեմ կարող քեզ համար նամակներ հորինել։

— «Ֆրիր» տրամադրությունը, խոսքդ շուտ տուր գործի կողմը։

— Չեմ կարող սուտ ու անկեղծ փոխադարձություններ, հայրենասիրական ու սիրային դիպլոմատիա։ Ամենագլխավորը՝ ես ինքս չեմ կամենում՝ և վե՛րջ։ Վերջապես նա գիտակից մարդ է, պարտիական, անպատճառ թիկունքից նամակագրությո՞ւն է պետք, որ հոգեկան նեցուկներ ձեռք բերի ու կռվի՞։ Նա իր գործը գիտի, բանի՛դ կաց։

— Ճիշտ ես ասում, բայց լավ է, թող զբաղվի մի քիչ...

— Ես չեմ կարող միտքս զբաղեցնել ամեն տեսակ բաներ հնարելով։

Այն ժամանակ Անահիտը Վարսիկին առաջարկեց, որ նա շարունակի նամակագրությունը։ Զասեց իսկական պատճառը։ Ասեց որ ինքը շատ է զբաղված և նամակագրությունը դառնում է արդեն հոգս, խանգարում է իրեն։

— Լավ, եկ չվիրավորենք մարտիկին, գրենք,— ծիծաղեց Անահիտը և ձեռքը թափ տվեց.— գրենք, թող հանգիստ սրտով կռվի, զբաղվի իր գործով, եթե միայն... Տեսնենք։ Հավատացած եմ, որ պատերազմի հետ էլ կվերջանա «ճակատային» ռոմանը։ Դու ասա կենդանի, ողջ վերադառնա՝ ամենակարևորից ամենակարևոր։

— Այո՛, այո՛, գրե՛նք,— ուրախացավ Վարսիկը։

«Այդպես լավ կլինի»,— մտածում էր Անահիտը,— ինքը ետ քաշվեց՝ քանի բանը լուրջ կերպարանք չի առել, հասել անախորժ առաջարկների, մերժումների, հիասթափումների։

Ճիշտ է, մեջտեղ ինչպես Անահիտին ասաց՝ մի տեսակ անտեղի խաղ է մտնում գործի մեջ, մի ինչ-որ անմտածված կատակ։ Բայց Անահիտն էլ ավելի չխորացավ, ավելի երկար չմտածեց այդ մասին։

Կատակասեր, շարաճճի Վարսիկը իր վրա վերցրեց «գործը». նա հետաքրքրվում էր, թե ինչ կստացվի այս «խաղից»։ Բայց խնդրեց միայն, որ Անահիտը երբեմն օգնի իրեն, մտքեր տա։

— Ի՞նչ մտքեր։ Գրիր, քաջալերիր, ոգևորիր, ա՛յ քեզ մտքեր։ Կօգնեմ երբեմն։

— Բայց կստորագրեմ քո անունով. դա չի իմացվի, քանի որ

դու մեքենագրած էիր թղթակցում և ես պետք է ձեռագիրը ստորագրեմ։

— Լավ։

Վարսիկը մի փոքր «հասկացավ» Անահիտին։ Անահիտը տգեղ չէր, բայց դեմքի, արտաքին կողմից բավական հասարակ էր, անհրապույր։ Եվ երևի զգում էր,— այսպես մտածեց Վարսիկը,— իր անհամապատասխանությունն այն երազին, որ կրում էր իր հոգում խանդավառված երիտասարդը։

«Երևի վախենում է հիասթափումից»։

Դա սխալ ենթադրություն չէր։ Չէ՞ որ կարող է մի օր Տիգրանը ռազմաճակատից գալ իրենց մոտ։ Մտքովն անցավ՝ թե ի՞նչ կարիք կար իսկույն անախորժ զգացում զարթեցնել մի խանդավառված երիտասարդի մեջ։ Թող իսկույն, առաջին իսկ տեսակցությանը չկոտրվի, հանդիպելով մի՝ սատանան գիտե ինչ արտաքինով աղջկա, որին ռազմաճակատում երևակայել, պատկերացրել է ով գիտե ինչ և որով սնել է իր երիտասարդական անզուսպ ֆանտազիան։

Այստեղ մի փոքր էլ խոսեց Անահիտի ինքնասիրությունը։ Ճիշտ է, նա չէր կապվել այդ երիտասարդի հետ և մեծ ֆիասկոյի չէր ենթարկվի ինքը։ Չլինի Անահիտը, լինի Վարսիկը։ Բայց դե, մաքդ է...

Ինքը Վարսիկը երկյուղ չուներ նման բաներից։ Նախ նա ուրախ, անհոգ և չարաճճի արարած էր և ապա շատ գեղեցիկ էր։ Հարկ եղած դեպքում... Օհո՜...

Սակայն Անահիտն այն էլ մտածեց,— այս մարդը նամակ է գրում, բայց իրոք՝ ո՞ւմ... իրե՞ն, թե Վարսիկին։ Որի՞ հետ է կապված, և ի՞նչպես է կապված։ Եթե մի օր իրար պատահեն երեքով.— ո՞ւմ պիտի «ընտրի»։ Ճիշտ է՝ ինչ-որ տարօրինակ բան կատացվեր։ Հետո՝ ի՞նչ մի առանձին վտանգ կա Տիգրանի հետ։

Նամակագրությունը թող շարունակի Վարսիկը։ Տիգրանի հետ պիտի շարունակի միայն մտերմարար թղթակցել, զրաղեցնել, ոգևորել։ Ավելին ոչ ոք Տիգրանին չի խոստացել, նրա հետ զգացմունքի կապ, պայման ոչ ոք չի կապել և ոչ ոք նրան չի խաբում, չի դավում կամ դավաճանում ոչ մի ուխտած զգացմունքի մեջ։

Եվ ահա Անահիտը օգնում էր, մտքեր էր թելադրում...

Եվ Վարսիկը, ոչ հիմա «Անահիտ» էր դառել, զգում էր, որ

շատ զբաղված է և չի կարողանում ավելի հանգամանալից, այսինքն «խելացի» նամակներ գրել, թող Տիգրանը ներողամիտ լինի։ Բայց նամակներն անհետաքրքրական չէին լինում։ Միշտ Անահիտի խոր, ինքնատիպ մտքերը տպավորիչ մի բան մտցնում էին նամակների մեջ։

Եվ ահա մի օր էլ բնակարանի դուռը բախեցին։ Վարսիկը գնաց բաց արեց։ Անծանոթ մի — ըստ երևույթին զորացրված՝ երիտասարդ զինվորական։

Մինչ Վարսիկը կհարցներ նրա ով լինելը՝ անծանոթն ասաց.

— Դուք ինձ... ճանաչո՞ւմ եք...

Վարսիկը նայեց։ Մի վայրկյան միայն։ Մտերմորեն ժպտացող դեմքը և հարազատի հայացքը։ Ո՞վ պիտի լինի։

Դե իհարկե նա է, ուրիշ էլ ո՞վ — Տիգրանը։

Քամահար, արճիճագույն դեմք, պողպատաձույլ գեղեցիկ կիսանդրի, բարձրահասակ ջլոտ, ամրապինդ երիտասարդ։

Նա ձեռքը մեկնեց.

— Անահի՞տն ես...

— ... Այո,— դուրս թռավ Վարսիկի բերանից ուղղակի անդիմադրելի, անմտածել, Վարսիկը նայեց Տիգրանի աչքերի մեջ և ժպտաց քթի տակ։ Սա նկատեց Տիգրանը և քննող հայացքը տարավ Վարսիկին վերից վար. Վարսիկը ևս չափեց վերից վար։ «Տեսան իրար»։

«Ահա թե ինչպեսն էր եղել»,— մտածեցին երկուսն էլ։ Վարսիկը հրավիրեց Տիգրանին և բարձրաձայն ուրախ կանչեց դեպի ներս։

— Ընկեր Տիգրանը... Տիգրանը...

— Ընկեր Տիգրա՞նը,— հետաքրքրված, ուրախացած առաջ եկավ Անահիտը։

— Քույրս, Վարսիկը, ծանոթացիր, Տիգրան,— ասաց «Անահիտը» ցույց տալով Անահիտին և սուր, ստիպողի հայացքով նայեց նրան։

Անահիտը ակամա ենթարկվեց, ինչ-որ անհարմարություն զգալով։

Ծանոթացան։ Գնացին սեղանատուն։ Տիգրանը իսկույն տեսավ, որ ընտանիքը բաղկացած է երկու քույրերից միայն։

Նստեցին։ Երկին նայեցին իրար։

Դժվար էր նրանց համար հաշտվել այն խառն տպավորության, որ ստանում է մարդ այդպիսի բոպեներին, նման տարօրինակ դեպքի ժամանակ։

Ե՛վ այն է մարդը, և՛ այն չէ։ Ե՛վ այդպես է, ինչպես կուզեիր որ լիներ, և՛ այնպես չէ։ Հիասթափումն ինչ-որ, բայց մի տեսակ էլ նոր ջերմություն։— Ախր, դեմդ կանգնած է ոչ թե մի ստորագրություն՝ «Տիգրան», այլ իրական, կենդանի, գեղեցիկ մի երիտասարդ։ Եվ աչքերից, դեմքից, ողջ էությունից երևում է, որ լավ տղա է։ Նույնը զգաց նաև Տիգրանը, երբ նայեց Վարսիկին։

Հաճելի մի բան ևս կար այդպիսի հանդիպման մեջ։— Բոլորովին օտար մի մարդ, վայրկենապես հարազատանում է քեզ, դառնում սիրելի։ Եթե մի փոքր առաջ փողոցում պատահեիր նրան, որ այդ բոպեին քեզ հետ միասին ձեր տունն էր գալիս, չէիր իմանա, թե նա է և ձեր տունն է գալիս։

Տիգրանը մտերմաբար նայեց Վարսիկին և հարցրեց.

— Հետո՞, ինչպե՞ս են գործերդ։

Վարսիկն ասաց։ Ապա ինքը հարցրեց.

— Զորացրվա՞ծ ես։

— Այո։ Անցնում եմ թիկունքային աշխատանքի։ Ես կոնստրուկտոր եմ։

Խոսում էին և շարունակում զննել իրար։ Տիգրանը խոսում էր ավելի Անահիտի հետ, չմատնելու համար իր բուռն ցանկությունը խոսել Վարսիկի հետ։

Բայց զրույցը հետզհետե տաքացավ, դառավ հետաքրքիր։ Նյութ շատ կար.— պատերազմը, հաղթությունը, խաղաղությունը, նոր հնգամյակը, ապագան։ Խոսեցին երկար՝ մոռանալով մինչ այդ եղած տարօրինակ ծանոթությունը։ Այնպես էին խոսում, կարծես երկիրը նոր էր ծնվել, և սկսվելու էր մի նոր, հրաշալի ստեղծագործական աշխատանք։ Տիգրանն այնպես էր նայում իր ձեռնարկելիք գործերի վրա, կարծես նրանք իր կյանքի ամենահանդիսավոր բաները պիտի լինեին։

Իսկ Վարսիկը հետևելով քրոջ և Տիգրանի զրույցին՝ զգում էր այնպիսի մտերմություն, որ շատ հաղիվ է պատահում մարդու կյանքում։

— Ի՞նչ եռանդուն երիտասարդ է,— ասաց մտքում...

Եվ շուտով սկսելով ավելի հիացած նայել Տիգրանին քան լսել, միայն ասաց.

— Ուրեմն որքա՞ն մեծ նշանակություն եք տալիս ձեր գործին։

— Իմ գործը առանձին վերցրած շատ չնչին բան է,— ասաց Տիգրանը,— ես վերցնում եմ իմ ողջ երկրի գործը միասին։

Տիգրանը տարվեց իր իդեայով։ Նա ասաց, որ պատերազմը ակամա ստուգատես եղավ երկրի ուժերի համար։ Երկիրը ցույց տվեց, որ ամեն բան կարող ենք՝ եթե կամենանք։ Եվ հիմա մենք ավելի համարձակ ձեռնարկների կանցնենք։ Կոմունիզմը շոշափելի է դառնում արդեն։

Անահիտը ևս տարվեց Տիգրանի խանդավառությամբ և սկսեց խոսել նորանոր հնարավորությունների մասին։ Նա խոսում էր ծանր, համոզիչ եղանակով այնպիսի բաների մասին, որ պահանջում է հերոսական թռիչքներ։

Տիգրանը իսկույն նկատեց, որ Անահիտը սովորական աղջիկներից չէ, որ շատ պատրաստված, ակտիվ, նվիրված պարտիական է երևում։

«Քույրը ևս շատ խելացի աղջիկ է»,— մտածեց Տիգրանը,— լավ է թափանցում իրերի խորքը։

Բայց այս հաճելի, սահուն զրույցի մեջ կար այնուամենայնիվ մի ինչ-որ բան, որ չէր ներդաշնակում դրությանը. կային «ստորջրյա խութեր»...

Անահիտը շատ լավ էր զգում այդ։ Մեջտեղը մի անպատշաճ կեղծիք կար համենայն դեպս։ Կատակ-խաղը։ Դա արված էր պատերազմի օրերին, արտակարգ ռոմանտիկ պայմաններում՝ իրարից հեռու, անծանոթ մարդկանց մեջ։ Այն ժամանակ կարելի էր անցկացնել կատակը, քանի որ երկու կողմերը կարծես կոնկրետ մարդիկ չէին, և դա անտարբեր, անմեղ բան էր նրանց համար։ Իսկ հիմա, երբ այսքան մտերմություն առաջ եկավ և մարդիկ էլ «իրականացան» կանգնեցին իրար առջև՝ պետք չէ՞ր բաց անել կամ թաքցնել կատակը։ Անահիտը մտածեց, որ պետք էր բաց անել այն, բայց նրան կաշկանդեց մի այլ բան։— Ի՞նչ պիտի նշանակեր այդ հայտնելը։ Տեղյակ դարձնել երիտասարդին, որ նրա գրավվելը սխալմունքի՞ հետևանք է, որ նա հիացած է եղել իր մտքերով

և ոչ թե քրո՞ջ։ Դա կլիներ անտեղի մեծամտություն և տգեղ մի-ջամտություն։ Եվ ի՞նչ իրավունքով։

Վարսիկն էլ սկսեց ճարպկորեն կատակել՝ իր և Անահիտի անունները դիտմամբ խառն գործածելով,— երբեմն իրեն Անահիտ, Անահիտին Վարսիկ անվանելով։ Անահիտը այդ կատակը ևս թույլ տվեց։ Դա կարծես ավելի հարմար ելք էր։

Վերջացրեց նրանով, որ մտածեց թե. ըստ երևույթին սրանից մի ուրիշ բան պիտի դուրս գար՝ ինչո՞ւ խանգարել... Վերջը կիմացվեր «գաղտնիքը», բայց երջանկացած զույգի համար ի՞նչ նշանակություն պիտի ունենար նման «սխալը»։

Անահիտը ուղղակի պարզ տեսավ, որ Տիգրանը շատ խանգավառվեց Վարսիկով և սա էլ ըստ երևույթին հետաքրքրվեց Տիգրանով, և մտածեց այսպես. քանի որ ինքը կապված չէ Տիգրանի հետ և Վարսիկն է «սկսում» կամ սկսել էր վերջին ժամանակներս և Տիգրանն էլ չի զգում, թե ուր է գնում՝ ի՞նչ կարելի է անել այժմ։ Արժե՞ր անախորժ կատակը բաց անել այս բոպեին։ Այստեղ մի բան «սխալ է», մի բան «ուղիղ»։

Դժվարացավ որոշել, թե ինչ կարելի էր անել այդ պահին։ Մնում էր մի փոքր սպասել։

Այսպես մտածեց Անահիտը և առաջին օրը ոչինչ չհասկացրեց Տիգրանին։ Շարունակեցին կատակի տալը։

Շատ շուտով Տիգրանն ու Վարսիկը մտերմացան։ Կատակը, որի ձեռնարկողը Անահիտն էր, այսպիսով դառավ լուրջ բան։ Այլևս մինչև անգամ ավելորդ էր խոսել այդ մասին։

Մեղադրել Անահիտին շատ էլ չէր կարելի։ Ինչո՞վ էր պարտավոր նախատեսել, նախազգուշացնել Տիգրանին։ Չէ՞ որ նրանց մեջ հատկապես իր և նրա մեջ ոչ մի դաշինք չէր կապված։ Դա լոկ մի հայրենասիրական զգացմունքի թռիչք էր նրանց մեջ. գոնե Անահիտը միայն այդ զգացմունքով էր առաջնորդվել։ Եվ այժմ էլ՝ զգուշացնելն անհարմար էր ու ծիծաղելի։ Ի՞նչ ասեր Տիգրանին. «ի՛նձ պետք է սիրեիր և ո՛չ նրան, մի առաջարկիր ամուսնական կապ նրա հետ»։

Տիգրանն էլ կպատասխաներ. «իսկ ո՞վ է քեզ սիրում և ո՞վ է մտադիր առաջարկություն անելու քեզ»։

Ո՛չ, ծիծաղելի զրույցներ կստեղծվեր։ Ինչ որ է՝ Անահիտը հա-

գիվ թե կարողանար միջամտել ու արգելել Տիգրանին կապվել Վարսիկի հետ։

Տիգրանն արդեն քայլն արեց։ Ուշ էր։

Եվ հետո՝ ի՞նչ մի վատ ու անբնական, սարսափելի բան է մի երիտասարդի և մի աղջկա մեջ՝ սիրեց մեկը, հավանեց մյուսը։ Հայրենական պատերազմի հերոսը կունենար այնքան ազնվություն, որ չքանդեր այդ ամուսնությունը «ինչ-որ սխալի» պատճառով։

Մի խոսքով գեպքերն իրենք քայլեցին, ընթացան և դրանց կանգնեցնելու հարկը չկար։

Մի օր Վարսիկը Անահիտին հայտնեց, որ իրենք ամուսնանում են։

— Մի՞թե,— զարմացավ անակնկալ բան լսածի պես Անահիտը, թեև գուշակում էր այդ։

— Զարմանո՞ւմ ես։

— Ո... ո... ո...չ։

— Նա ինձ շատ է դուր գալիս, Անահիտ,— դուշակեց Վարսիկն Անահիտի տարակուսանքը։

— Այո՞... իսկ դո՛ւ...

— Ե՞ս... այսինքն՝ ես ի՞նչ...

Անահիտը լռեց։

— Չէ, մի բան գիտես, բան ես կասկածում,— մի փոքր անհանգիստ նայեց քրոջը Վարսիկը։

— Ո՞... ոչինչ...

— Անահիտ, եթե դու կասկածում ես նրա զգացմունքի վրա, ես կարող եմ քեզ հավատացնել, որ նա շատ և շատ սիրում է ինձ։

Եվ հանկարծ գրկեց Անահիտին։

— Անիկ ջան, մի անհանգստանա։ «Այն» անցավ, այն ուրիշ բան էր, դատարկ կատակ... մոռացել եմ բոլորովին։ Նա էլ չի կռահում բոլորովին, էլ չկա այն...

Անահիտը լռեց երկար։ Մի բան դուր չեկավ այս հապճեպ ու անվերապահ քայլի մեջ։

— Ասում ես՝ շա՞տ է սիրում քեզ,— հարցրեց նա մտախոհ։

— Այո՛, ես ևս...

Անահիտը ուշացրեց խոսքը.

— Ավելի լավ։ Դու գիտես։ Միայն տես հիմարություն դուրս

չգա, չզղջաս։ Թե նա ի՞նչ է որոնել և ի՞նչ է գտել, կամ դու ի՞նչ գտար, դա էլ քո՛ գործն է։

Եվ մտածեց իր մեջ կրկին.— «Ինչո՞ւ հայտնեմ «ստույգը» և խանգարեմ։ Եվ ի՞նչ իմանամ — նրա «ստույգը» այս բոպեիս թերևս այս է՝ քույրս, և ոչ թե... ես։ Առանձին զգացմունք չեմ տածում դեպի նա, մրցակից չեմ»։

Եվ ձեռքը թափ տվեց՝ մի փոքր պղտոր խղճով։

Զանցավ մի քանի օր՝ Տիգրանն ու Վարսիկը ամուսնացան։ Այնքան ուրախ, երջանիկ եղավ ըստ երևույթին այդ ամուսնությունը, որ թվում էր հալեց իր մեջ, սրբեց բոլոր կատակներն ու խաղերը, թույլ տված սխալները։

Պատմությունը վերջապես վերջացավ, դրությունը, որ այնքան արհեստականություններ ու պայմանականություններ ուներ՝ դառավ բնական։

Մի երեկո Տիգրանը ինչ-որ հոգնած էր, թե թախծոտ։ Մտորում էր ինչ-որ.

— Գիտե՞ս, Վարսիկ, քույրդ շատ խելացի աղջիկ է։

— Այո՞...

— Այո,— իր մտքերում խորասուզված և հայացքը դեպի պատուհանից դուրս՝ շշնջաց Տիգրանը։

Վարսիկը մի փոքր տխրեց։

— Է, լա՛վ, ինչո՞ւ ես ինձ ասում այդ։

— Ինչո՞ւ,— զարմացավ Տիգրանը,— հենց այնպես։

Վարսիկը տխուր ժպտալով սկսեց ցուցամատի եղունկով փորփրել ծնկան վրա ընկած շրջազգեստի ծաղիկը։ Տիգրանը հանկարծ գլխի ընկավ.

— Լսիր. քեզ որ չսիրեի, այդպիսի բան չէի ասի քեզ։ Սա լավ իմացիր, խելոք։

Եվ գրկեց Վարսիկի ուսը։ Վարսիկը գլուխը դրեց նրա ուսին, հետո ընդոստ շարժումով ընկավ նրա գիրկը և սկսեց համբուրել նրան։

— Այո, խելացի աղջիկ է Անահիտը, և դա ինձ ուրախացնում է։

— Ինչո՞ւ է ուրախացնում,— շողացնելով աշխույժ ու փորձող աչքերը և նենգորեն մոտեցնելով Տիգրանի աչքերին ճակատը դրեց նրա ճակատին։

— Ինչո՞ւ։ Հը՞ը՞։ Թող այդպիսի պարտիական աղջիկներ շատ ունենանք։

Վարսիկը չհանգստացավ բայց։ Նրան թվաց, որ Տիգրանը ինչ-որ գլխի է ընկնում կատակ-խաղը։ Կամենալով կանխել՝ ինքը մի օր, սիրո երջանիկ բոպեներին Տիգրանին հայտնեց «գաղտնիքը»։

Տիգրանը շփոթվեց։ Կարծես իրեն հայտնեցին և հաստատեցին, որ իր ծնողները մինչև օրս իր գիտեցածները չեն եղել, այլ բոլորովին անծանոթ, ուրիշ մարդիկ։ Տարօրինակ բան զգաց, չգիտես ախորժելի՞, թե տգեղ, ծանրակշի՞ռ, թե աննշան, հասարակ բան։

Երբ առաջին շփոթությունը անցավ՝ Վարսիկը գրկեց նրան, սկսեց փայփայել։ Իսկական զգացմունքը իսկույն չքացրեց այդ շփոթությունը։ Ինչ էր, ինչ չէր՝ Տիգրանը սիրում էր Վարսիկին։ Ուրեմն և վերջ։

— Ոչինչ, թող այդպես լինի...

Ծիծաղեցին, բայց կրկին ու կրկին զարմացավ Տիգրանը կրկին ծիծաղեց և համբուրեց կնոջը ի նշան «հաշտվելու»։

Միայն մատը թափ տվեց վերջը.

— Այ դու չարաճճի։

Վարսիկը թեթևացավ այդ գաղտնիքի «հոգսից» ինչպես և ենթադրում էր՝ «անց կացավ» առանց միջադեպի։ («Եվ վերջապես, ի՞նչ մի ահավոր բան էր պատահել»)։ Անցավ իր հերթական, առօրյա հոգսերին, սկսեց «տուն սարքել»։ Իրեն օգնեց Տիգրանը։ Միասին գնեցին կահավորանք, զարդարանք։

Վարսիկը լիովին բավարարված էր իր նոր կենցաղով։ Հիմնարկում շատ գործ չուներ և չէր էլ ջանում մեծացնել դրանք։ Նրա գլխավոր հոգսն ու բավականությունն այժմ իր տունն էր և իր ամուսինը։

Անցյալի հետքերը հարթվում էին, կորչում։ Տիգրանը Վարսիկի հետ հաճախում էր Անահիտին, այնտեղ ասում խոսում էին գործի մասին, տան մասին, Վարսիկի մասին և ամեն բան կլանեց անկեղծ, բուռն զգացմունքը։ Տիգրանը իրոք կապվեց Վարսիկի հետ։ Այնպես որ մի երեկո էլ, երբ Տիգրանն ու Վարսիկը նստած էին բազմոցի վրա՝ Տիգրանը խոսեց իր անելիք նորարարությունների և գյուտերի մի ամբողջ շարքի մասին՝ Վարսիկը վեր-

ջապես հաճելի անդորրություն զգաց, որ իրենց ընտանեկան վիճակը հաստատված է արդեն, որ Տիգրանն այնքան կգբաղվի, կտարվի իր ձեռնարկներով, որ կատակից հետք չի մնա նրա հիշողության մեջ։

Վարսիկն ուրախացավ։

— Իհարկե, շուտ կլինեն այդ գյուտերը։

— Չգիտեմ, տեսնենք։

Վարսիկը գլուխը դրեց Տիգրանի ուսին, բայց սա այնպես էր հափշտակված իր գյուտի մտքերով և այնպես հանկարծ վեր թռավ, որ Վարսիկի գլուխը մի փոքր ծռված մնաց օդի մեջ։

— Լավ բաներ դուրս կգան, Վարսիկ. լավ բաներ,— և սկսեց արագ անցուդարձ անելով արագ շփել ձեռները,— այնպիսի բաներ, որ երևակայել չի կարելի, թե կարելի են։

Չեղած բաներ։

Լռեցին։ Վարսիկը քթի տակ ժպտաց.

— Բայց... Գիտես, ինձ թվում է, թե զուր պիտի աշխատես,— ասաց հանկարծ առանց մտածելու Վարսիկը։

— Ինչո՞ւ,— կանգ առավ Տիգրանը զարմացած,— ինչո՞ւ ես ասում այդ։

— Դե, հիմա... ո՞վ գիտի։ Գյուտը հեշտ բան չի։

— Հեշտ բան չի, այո. բայց ի՞նչ բանն է հեշտ։ Բաներ շատ ենք արել՝ ի՞նչն է հեշտ եղել։

— Կարող է պատահել շատ աշխատես, բայց սխալ բան դուրս գա։

— Սխալ բան չի դուրս գա։ Կտեսնես։

Վարսիկը ոգևորվեց։ Նա գիտեր Տիգրանի անհանգիստ բնավորությունը, և հավատաց, որ երբ նա մտադրվեց՝ կկատարի էլ։

Իրոք՝ Տիգրանը տարվեց իր գյուտերով ու նորարարություններով։ Գործարանում, տանը, ամենուրեք մշտական եռուզեռի մեջ էր, մոռացել էր կողմնակի ամեն բան։ Աշխատանքի այդ ոճի մեջ նա հիշեց իր համար մի շատ սիրելի առանձնահատուկ բան, որ կար պատերազմական գործի մեջ և այստեղ արդեն շատ պետք եկավ նրան.— վճռականություն, ստուգություն, ակտիվություն։— Աշխատել համառ, անդիմադրելի ճիգով։

Տիգրանը ամբողջովին լցվեց իր աշխատանքի հոգսերով. ընկավ իր գյուտերի ու նորարարությունների հետևից։ Մի՞քանի գյուտեր, նորարարություններ թողեց մի կողմ, առայժմ ընտրեց դրանցից մեկը. հնարել մի այնպիսի մետաղակտրիչ, որ երեսուն անգամ կրճատեր պրոցեսը։ Իրեն օգնական վերցրեց ցեխի վարպետին, որ կոնստրուկտորի հմտություն էր ձեռք բերել և երիտասարդ բանվորներից երկուսին։

Խմբակը երբեմն էլ հավաքվում էր Տիգրանի մոտ, և մինչև ուշ գիշեր խոսում, վիճում էին մետաղակտրիչի մասին։

Գիշերվա ժամը մեկը կլիներ, որ Անահիտն ու Վարսիկը մի անգամ Տիգրանենց սեղանատանը նստած սպասում էին նրան, որ վերջացնի գործն ընկերների հետ, գա իրենց մոտ։ Գրասենյակից լսվում էր խառն վեճ, որ մերթ մեղմանում էր, մերթ պայթում խառնաձայն։ Երևում էր, որ այնտեղ այնպիսի մի բուռն վեճ կար, որ հազիվ թե այդ գիշեր դադարեր։ Անահիտը մեկ ուզեց տուն գնալ, բայց շատ էր ուզում Տիգրանին տեսնել։

— Է, ի՞նչ կլինի, մտնեմ մի բոպե խանգարեմ,— ասաց Անահիտը,— ծանոթներ ենք, չեն նեղանա։

— Գնա ներս, ի՞նչ ես հարցնում,— ասաց Վարսիկը։

Անահիտը մտավ նրանց մոտ.

— Բարև, ընկերներ, ներեցեք որ խանգարում եմ։

— Խնդրում ենք, խնդրում ենք, ընկեր Անահիտ, համեցեք, գուցե դուք գործը գլուխ բերեք,— խոսեցին իրար խոսք կտրելով վիճաբանողները, տեղ բաց արին Անահիտին և Վարսիկին։

— Ընկել են անհայտի հետևից,— ասաց ինժեներ Արզումանյանը, որ ինքն էլ հետաքրքրվել եկել էր այդ երեկո ծանոթանալու գյուտին,— ինձ էլ մեջ են քաշել։

— Դե անհայտն է, որ դառնում է հայտնի, ընկեր Արզումանյան,— ասաց Անահիտը, հայտնին ի՞նչ արժեք ունի, որ դառնա հայտնի։

Ծիծաղեցին։

— Է, բան-ման դուրս գալի՞ս է,— հարցրեց Անահիտը կոմիկ ժպիտով նայելով բոլորի վրա մեկ-մեկ։

— Այո՛, այո՛,— տաքացած շտապեցին պատասխանել երիտասարդները։

— Գտնված է համարյա,— ասաց ինժեները։

— Էլ ինչո՞ւ եք վիճում։

— Փորձարկելու վրա է վեճը, ընկե՛ր Անահիտ։

— Փորձարկել... կանենք,— ասաց Տիգրանը մտախոհ և գլուխը կախեց գծագրությունների վրա,— հը՛, ասա, է՛,— դիմեց վարպետ Առաքելին։

— Չի դուրս գա, ընկե՛ր Տիգրան,— ասաց վարպետ Առաքելը,— կուզես վաղվանից մասերը ձուլեմ, տես։ Դեռ լավ մշակի։

— Մոտ է, է՛, մո՛տ,— սատանան տանի,— խոսեց ինքն իրեն ինժեներ Արզումանյանը,— համարյա գտնված է։

Եվ դարձավ Անահիտին.

— Այ, այսպես է ինժեներական գործը, ընկե՛ր Անահիտ, ինչպես որ մարդ լինի, որ պիտի ծնվի ինչպես անշունչ առարկային բերան շինեք, բերանը հանկարծ բաց անի, որ խոսի։

Սկսեցին ծխելը։ Գծագրությունը թողին սեղանի վրա, մի փոքր ցրվեցին, որ հանգստանան։

— Ընկերնե՛ր, ասաց ցեխի վարպետը,— ես խորհուրդ եմ տալիս վերցնել առաջին պրոյեկտը։ Թող հինգ անգամ կրճատի կտրելու ժամանակը։ Էն հաստատ բան է։ Իսկ սա չի դուրս գա։

— Ինձ էլ է թվում, որ դուրս չի գա,— ասաց Տիգրանը։

Անահիտը զարմացած նայեց Տիգրանին։

— Բայց հենց ա՛յդ է, գրավում է և արժեք ունի։

Սկսեց ծխի քուլաներ ու օղակներ բաց թողնել օդի մեջ։

— Հենց ա՛յդ, հենց ա՛յդ,— կրկնեց նա երազկոտ ձայնով։

Բոլորն սպասեցին, թե ինչպես է բացատրում նա իր միտքը։

— Հենց այդ։ Դուրս բերել, ուղղակի ստեղծել ոչնչից այնտեղ, ուր թվում է, թե հաստատ ոչինչ չի դուրս գա։ Առաքե՛լ, ե՛կ փորձենք, մի փոքր էլ ճշտենք ու...

— Եթե բան պիտի դուրս գա, թեկուզ մի տարի աշխատես՝ ափսոս չի,— ասաց վարպետը,— բայց եթե հաստատ գիտես, որ չի դուրս գա...

Տիգրանը բռնեց վարպետի ձեռքը և թափ տալով՝ ծիծաղեց.

— Առաքել ջան, հենց գյուտն էլ ա՛յդտեղ է լինում, որ «հաստատ» գիտենք, թե բան չի դուրս գա։ Կհանձնվի՞...

— Է՛, մետաղ է ու չի հանձնվում։

— Իր խո՞սքն է։ Կհարկադրենք՝ կհանձնվի։

— Կհամոզե՛նք, կհամոզե՛նք,— կատակեց նաև Արզումանյանը,— սովետական խոսքը մետաղն էլ կթեքի մեր կողմը։

Ու ծիծաղելով բարձրաձայն բռնեց վարպետ Առաքելի մեջքը։

Սկսեցին վիճել կրկին։

— Է, ընկերնե՛ր, ձեզ թողնում եմ շատ հետաքրքրական մոմենտին և նախանձում եմ ձեզ։ Բարի՛ գիշեր, ես վաղը շուտ եմ գնալու աշխատանքի։

Տիգրանը դուրս եկավ ճանապարհելու Անահիտին։

— Ո՞նց ես, Տիգրան,— հարցրեց Անահիտը,— վերջերս չես երևում։

— Ի՛, գլուխս ծախված է,— ասաց Տիգրանը ցրիվ և հոգնած,— դո՛ւ արի, ես բոլորովին ժամանակ չունեմ։

— Լավն էլ այդ է, բարի՛ գիշեր։

— Գիշե՛ր բարի։

Տիգրանն ուղղակի մարտ էր մղում իր խմբակի հետ՝ կարենալու հաղթել այն անկարելին, որ կանգնած էր իր առաջ։ Վարպետ Առաքելը սկսեց զգալ դժվարության հաճույքը, ինժեներ Արզումանյանը ևս միացավ խմբակին, և սկսեցին համառ ուժով «գրոհել»։ Երիտասարդ բանվորները շատ բան սովորեցին այդ վեճերի և փորձերի մեջ. բայց նրանց սովորածի մեջ ամենից կարևորն այն իդեան էր, որ պետք է կռվել անկարելիի դեմ, որովհետև այդ անկարելին, որ միշտ է թվում իրոք անկարելի, վերջը տեղի է տալիս...

Այդպես էլ պատերազմում էր լինում շատ անգամ։ Անկարելին կանգնում էր առջևդ, բայց համարձակ և իմաստուն հարձակումը ընկճում էր այդ անկարելին։ Տիգրանը սովորել էր այդ ոճով աշխատելը։

Սրանք Տիգրանի համար վերացական մտքեր չէին, այլ շոշափելի իրականություն, գործ։ Նրա ասելով՝ այն մեքենաները, որ ինքը ընկերների հետ հնարում էր,— հենց դրանք իրենց դեպի կոմունիզմ էին տանում։ Դրանք կոմունիզմի մեքենաներ էին։ Ամեն, ամեն ինչ, որ հիմա արվում է, գործվում, ստեղծվում, մտածվում,— բոլորը իմաստավորված են այդ իդեալով՝ կոմունիզմ։ Սա թոցնում էր Տիգրանին, ինչպես պատերազմում հաղթանակը։

Տիգրանը «հաղթեց» նաև իր ընկերներին, խանդավառեց նաև նրանց։

Վարսիկը այս հավաքույթների ժամանակ թեյ և ճաշիկ էր բերում, նստում, և անգամ լուռ «մասնակցում»։ Բայց քիչ-քիչ սկսեց

նահանջել, թողեց Տիգրանին, որ զբաղվի իր գործով, իսկ ինքը քաշվում էր իր սենյակը և գիրք ընթերցում։ Շուտով ընթերցանությանը հետևեց կարը։ Վերջն էլ քնում էր և Տիգրանին թողնում մենակ, եթե մենակ էր նա կամ ընկերների հետ, որ զրուցեն, մտածեն, վիճեն իրենց «գյուտի» շուրջը։

Երբեմն Տիգրանը մենակ էր նստում իր կաբինետում և մինչև կեսգիշեր աշխատում, Պատահում էր, որ հոգնած ժամերին մեկ-մեկ ետ էր նստում թիկնաթոռի մեջ, նայում պատին մի կետի վրա, մտորում։ Հիշում էր իր զինվորական կյանքը, նամակագրությունը Վարսիկի հետ, իր մտքերը, «նրա» մտքերը, «նրա» քաջալերանքները, խելացի մտքերը և իր երազը՝ տեսնել մի օր «նրան», խոսել հետը, գուցե և հայտնել, որ ինքը անտարբեր չէ դեպի «նա», ամուսնանալը «նրա» հետ և միասին աշխատելը, երազելը միասին...

Ո՞ւր կորան այն երազները, որոնց մասին Տիգրանը և «Վարսիկը» գրում էին իրար։ Նոր կյանք, նոր մարդկություն, երթ դեպի կոմունիզմ... Երազներ, որ պիտի ջերմանային նաև իր ընտանիքում... Բոլորը երազներ էին։

Մի գիշեր Տիգրանը ոգևորված իր հաջողություններով, ուրախ սուլում և վեր էր թռչում աթոռից, արագ, աշխույժ ման էր գալիս սենյակում։ Հիշեց նման վայրկյաններ։ Դա որտե՞ղ էր։ Այո, ճակատում։ Ինչպե՞ս ուռչում էր կուրծքը մի հուզող հաղթությունից հետո, ինչպես լցվում էր պայքարի պաթոսով, ինչպես մահի դեմ կանգնած վեհություն էր ապրում, իր փոքր գործի միացումը ընդհանուր մեծ գործին, մարդկության ազատագրումը։ Ի՞նչ ապրումներ էին։ Զգաց, որ այժմ մի բան պակասում է իրեն։

Գնաց ննջարան։ Վարսիկը քնած էր։ Երջանիկ խաղաղություն կար նրա կիսաբաց շրթունքների մեջ։ Զարթնեցնե՞լ։

— Ո՞չ, պետք չէր։ Եվ... Կարժի՞։ Վարսիկը չէր տա իրեն այն վայրկյանները, որ այրվեցին այնտեղ, ճակատում։

Զգաց, որ մինչ ինքը թռչում էր՝ դիպավ ինչ-որ մի բանի, ընկավ, կանգ առավ, և որ դա նկատվեց, երբ արդեն բավական ուշ էր։

Մի օր էլ գնաց Անահիտի մոտ։ Առանց Վարսիկի։ Անահիտին հետաքրքրեց այս հանգամանքը։ Զրույց արին երկար։ Բայց Տիգրանը ոչինչ առանձին բան չասաց, Անահիտը ոչինչ չնկատեց նրա

մեջ։ Երևաց, որ եկել է պարզապես զրուցելու։ Բայց քանի զրույցը խորացավ, Անահիտը զգաց, որ Տիգրանը ռազմաճակատի դեպքերի մասին խոսելով ուզում է սիրտը թեթևացնել։

— Լա՞վ էր այնտեղ,— ասաց նա և պատմեց մի քանի էպիզոդներ։

— Բայց մի՞թե վատ է այստեղ,— խստորեն հարցրեց Անահիտը։

— Այստե՞ղ, ի՞նչ ես ասում,— նեղացավ Տիգրանը,— ես այդ չեմ ասում։ Ես ուրիշ բան եմ ասում։

Եվ Տիգրանը երկար խոսեց։ Բոլորն, ինչ-որ ասում էր՝ հանգում էր այն բանին, որ ժամանակը փոխվել է, որ հիմա պահանջվում է ստեղծագործ աշխատանք, ակտիվություն։

Նրա ասածներում չկար և ոչ մի նորություն։ Թե ինչու էր ուրեմն խոսում այդ բաների մասին՝ Անահիտը այնպես էլ լավ չհասկացավ։ Տիգրանը գնաց տուն, առանց այդ ուրիշ բաների մասին խոսելու։

Տիգրանն այնուհետև սկսեց հաճախ այցելել Անահիտին։

Սկսում էր պատմել իրենց գործարանի մասին։ Նկարագրեց իր մտցրած ռացիոնալիզատորական, նորարական մյուս գործերը, որով գործարանը տոննաներով մետաղ էր խնայում։ Զրույցը խաղաղ բնույթ էր կրում։ Տարօրինակն այն էր, որ դա արվում էր Անահիտի հետ այնպես, կարծես մի ընտանիք լինեին, սիրող ամուսիններ։ Թերևս ոչ ամուսիններ, այլ ավելի, ինչ-որ մտերիմներ, որոնք այսպես պարտավոր են այցելել իրար, մի տեսակ հաշիվ տալ իրար, ինչպես վայել էր և բնական միևնույն գործով շահագրգռված մի զույգի։ Կարծես Անահիտն ևս մասնակից էր այդ աշխատանքին, և հարկ կար նրան հաղորդել ամեն նորություն երկուսի համար, ընդհանուր մի մեծ գործի մեջ։ Ըստ երևույթին դա շատ մեծ բավականություն էր պատճառում Տիգրանին։

Նա տուն էր գնում կենդանացած, հանգստացած։

Բայց հե՛նց այս տրամադրությունն ու հաճախակի այցերն էին, որ սկսեցին անհանգստացնել Անահիտին։ Մանավանդ որ՝ Տիգրանը այցելում էր միշտ մենակ... Նա հասկացավ Տիգրանին։ Պարզապես Վարսիկը չէր հասկանում Տիգրանի այս ստեղծագործական աշխատանքը, և Տիգրանը դիմում էր «հին հասցեին»...

Անահիտը սթափվեց կարծես։ Տարօրինակ կերպով նրա հա-

մար պարզվեց մի բան, որ արդեն պարզ պիտի լիներ և էր է՛լ առաջ։ Նա երբեմն մտածում էր, թե ի՞նչ դուրս եկավ այս պատմությունից։ Մեկ դատում էր այսպես, որ ինքն այն ժամանակ չխորացրեց իր միտքը Վարսիկի մոտ, և եթե խորացներ, Վարսիկը կտեսներ, որ ինչ էլ կուզի լիներ՝ այդ «գործի» մեջ կար մի շատ աննկատելի մազային ճաքվածք, որ առաջ էր եկել հենց «այն» օրերում, երբ Անահիտը զգուշացնում էր Վարսիկին։ Այն էլ գիտակցեց, որ հիմա ուշ է այլևս։

Անահիտը զգաց որ «գործ» սկսվեց և մի բան պետք է անել։ Եվ չշփոթվեց։ Սկսեց նրա հետ մտերմական, ընկերական հարաբերություն։ Եվ ինքն էլ սկսեց խոսել Տիգրանի նորարարություններ, գյուտերի մասին։

Այնտեղից անցնում էին ողջ Միության կյանքին։ Կոմունիզմի հիմքերը,— գիգանտնե՛ր, գիգանտնե՛ր, գիգանտնե՛ր, կարծես օվկիանոսներ են շարժվում, բարձրանում, կարծես երկրագնդի ձայնն ես լսում։ Այս ո՞ւր է գնում սովետական ժողովուրդը...

Ոգևորվում էին, լցվում հպարտությամբ։

Անահիտն ևս տարվելով այս զրույցներով՝ ինքն էլ ավելի լցվեց մի նոր կյանքով։

Նա ևս ուրախ էր այդ նոր զրույցների համար։ Նրա մեծ, ընդհանրացնող ուղեղը, գիտական ֆանտազիան, ուժեղ տրամաբանությունը, խիզախ ռեալիզմը փայլում էին ջերմ զրույցների ժամերին։

Անահիտին դուր էր գալիս Տիգրանի խանդավառությունը, անմար կրակը, գործի, պայքարի, հաղթության ծարավը, մարտական ոգին։

Բայց Անահիտը սպասում էր որևէ «դեպքի»... Դա էր նրան անհանգստացնում։

Մի օր Տիգրանը գանգատվեց Վարսիկից։ «Չի ապրում մեր էպոխայով, չի այրվում, չի ձգտում ոչնչի»։ Ասաց, որ իրեն, Տիգրանին, տանը պակասում է այն թռիչքը, ջերմությունը, որ զգում էր ճակատում։ Շատ են փոխվել մարդիկ,— դա լավ է։ Իրենց կոլեկտիվը, գործարանը՝ բարձրացնում են՝ դա լավ է։ Բայց այդ ամենը դո՞ւրսը, հասարակության մե՛ջ։ Իսկ տա՞նը...

— Հասկանում եմ... — ասաց Անահիտը։

— Տա՞նը։ Ախր, ես կուզեի, որ ինձ հետ միասին այրվեր

նաև ե՞ւ։ Նա՛ ինձ հետ միասին չէ։ Նա տնային կին է և ուրիշ ոչինչ։

— Հասկանում եմ...

— Ախր, պատկերացրո՛ւ,— ի՞նչ ժամանակ ենք ապրում։ Այս իրականությունն անցկացավ անգամ այն բոլոր ֆանտազիաներից, որ ունեինք պատերազմի ժամանակ։ Արդեն հիմա ավելի մեծ մասշտաբով դուրս ենք եկել համաշխարհային ասպարեզ, Անահի՛տ... Մենք համաշխարհային երևույթ ենք։

— Հասկանում եմ, հասկանում եմ, սիրելի՛ս...

— Դե որ հասկանում ես՝ էլ ի՞նչ ասեմ։

Անահիտը հանկարծ կտրուկ դրեց հարցը.

— Լսիր, Տիգրա՛ն, կարճ՝ հիմա ի՞նչ ես պահանջում։

— Պահանջո՞ւմ...

— Այո։ Պահանջում ես, որ մենք ամուսնանա՞նք. ես ու դու։

Անսպասելի, կտրուկ հարցը շփոթեցրեց Տիգրանին։— Կատակո՞ւմ է, լո՞ւրջ է ասում։

— Ո՞չ, ո՞վ ասաց,— թոթովեց և զարմացած նայեց Անահիտին։

— Ուզում ես ապահարզա՞ն պահանջել կնոջիցդ,— հարձակվեց կրկին Անահիտը։

— Ո՞չ... Ինչո՞ւ։ Ոչ մի ապահարզան, կարիք չկա։

— Ես էլ եմ այդպես կարծում,— ասաց Անահիտը հանգիստ և մտածկոտ։

Նրանք լռեցին։

— Այո, մենք չենք ամուսնանա,— խոսեց հանգիստ տոնով Անահիտը,— դու ապահարզան չես ստանա Վարսիկից։ Բայց քո կյանքում մի սխալ տեղի ունեցավ, որից երևի չէիր կարող խուսափել։ Ես ու Վարսիկը քեզ հետ կատակ-խաղ արինք, բայց դա չէր պատճառը, հավատա ինձ։ Սխալը քո զգացմունքն էր դեռ ճակատից սկսած։ Դու լավ չհասկացար քեզ։ Դա սեր չէր, դա բարձր էր սիրուց և ամեն բանից։ Դու զգում էիր, բայց չէիր հասկանում։ Եվ եկար սխալ հասցեով մի ուրիշի հանդիպեցիր։ Ուզում էի զգուշացնել քեզ, բայց կարծում եմ զուր կլիներ. դու այն վիճակին չէիր։ Դու պետք է ապրեիր այդ սխալը և ապրեցիր էլ։ Թերևս ես մեղավոր եմ։ Կներե՛ս։ Մեծ մեղք եմ գործել։ Դուցե...

... Այո, դու չէիր կարող։ Դու ռոման ունեիր, որ պետք է վառվեր և հանգչեր, ինչպես որ և հանգավ։

— Ճիշտ ես ասում, Անահիտ, ճիշտ, բայց ասա ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ,— մի տեսակ վշտով հարցրեց Տիգրանը։

Անահիտը չպատասխանեց։ Նա խորհում էր։ Երկար լռեցին։

Բայց այդ լռությունը ավելի պերճ էր, քան մարդկային լեզուն։ Տիգրանը հասկացել էր, որ իր որոնածը այլ բան էր եղել, քան ինչ-որ գտավ։ Բայց ի՞նչ բան։ Չէր գտնում բառը։ Ինչ-որ շատ բարձր, վեհ բան։ Սովետական մարդու զգացմունքը՝ ահա սա էր այն միակ թանկագինը, որ կար իր և Անահիտի մեջ։ Այն զգացմունքը, որ զգում են միլիոնավոր, հարյուր միլիոնավոր մարդիկ՝ մի ընտանիքի անդամների պես իրար կապված և ընդհանուր գործով ոգևորված սովետական մարդիկ, աշխատանքի ստեղծագործությամբ խանդավառված։

Անահիտն էր դա, սովետական կինը, իսկական կոմունիստը։ Նա մտել էր Տիգրանի սիրտը, խոսել նրա հետ։

Անահիտը լուռ մտածում էր։ Նայելով նրա խելացի, հանգիստ աչքերին, նրա հաստաբակ և միաժամանակ ներշնչված դեմքին,— Տիգրանը ակնածեց նրանից։ Նա հավատաց, որ Անահիտը, մի հնար կմտածի, մի ուղի կգտնի։ Պատի ժամացույցն իր ձայնեղեն ոտիկներով քայլում էր դեպի ապագան։ Տիգրանին մի փոքր զարմացրեց, թե ինչո՞ւ Անահիտը չանհանգստացավ։ Ի՞նչպես հեշտ ասաց,— ճիշտ է՝ ոչ լուրջ,— «պահանջում ես որ ամուսնանա՞նք»... «Ուզում ես ապահարզա՞ն պահանջել կնոջիցդ»... «Կարիք չկա»... Ուրեմն նա գիտե ողջ պատմությունը։

Ջարաճճի մի ժպիտ խաղաց Անահիտի նուրբ ու գեղեցիկ շրթունքների վրա։ Նա խոր նայեց Տիգրանին։ Սա սպասեց։

— Հիմա ի՞նչ ես ասում, ի՞նչ ես անելու։

— Չգիտեմ,— դժգոհ պատասխանեց Տիգրանը, որ ուրիշ խոսք էր սպասում լսել։

— Ոչի՞նչ չես կարող անել։

— Ոչինչ։

Անահիտը լռեց՝ շարունակ շարաճճի ժպիտը շրթունքներին։ Տիգրանը, որ Անահիտից սպասում էր խելացի և «գործնական» խորհուրդ կամ պատրաստակամություն՝ միջամտելու, օգնելու, մի տեսակ հիասթափվեց։ «Ուրեմն այսքա՞նը, ուրիշ ոչի՞նչ»։

— Ասում ես ո՞չինչ չի կարելի անել։ Հը՞։

Տիգրանը վեր թռավ։

— Ուղղակի ասում եմ ինքս ինձ։— Շուրջդ աշխատանք, ստեղծագործություն, էնտուզիազմ, մարդիկ ուղղակի վազում են։ Մտիր գործարանները, հիմնարկները. ինչ եռուզեռ, ինչ եռանդ։ Իսկ նա...

— Հըմ... Չի կարելի,— ասում ես։

Դարձյալ մանր ժպտաց և գուրգուրոտ, բայց և հանելուկային աչքերով շոյեց Տիգրանին։

— Այսքան մեքենաներով զբաղվում եք, չեք կարողանում մի փոքր էլ մարդով զբաղվել։

— Է՜հ...

— Տնաշեններ, մեքենաներ եք կարողանում «համոզել», մեքենաներ եք «հնարում», ծռում, շտկում,— չեք կարողանում մարդուն համոզե՞լ, չեք կարողանում մարդուն «հնարե՞լ», «գտնե՞լ»...

— Կատակ ես անում...

— Կատակ, իհարկե,— և ժպտալից հայացքով մեզմ շոյում է Անահիտը։

— Չէ։ Լուրջ ես ասում։

— Լուրջ՝ եթե ուզում ես։

Տիգրանը զարմացած նայեց Անահիտին։ Իրոք լո՞ւրջ է, թե՞ կատակ։

— Այո, այո, մտադրը հնարեցեք։ Չկար մարդը, խոսեցիք,— մեկ էլ տեսար՝ հնարվեց։ Վարսիկը մեքենա չէ, նա լավ կըմբռնի։ Նա էլ կարող է փոխվել, իբրև նոր մարդ։

Անահիտը ձայնը բարձրացրել էր և մի փոքր կարմրել։

— Նա լավ մարդ է, հավատացնում եմ ձեզ, ունի պոտենցիա, պետք է «տանել հետը»։

— Չի գա, Անահիտ, գիտեմ նրան, չի գա, չի թեքվի։

— Ինչո՞ւ։ Մետաղը կարելի է թեքել, անել տալ ինչ-որ ուզում ես, իսկ մարդուն ո՞չ... Ներողություն... Անուններդ դրել եք գյուտարարներ, նորարարներ եք կոչվում, սիրում եք հնարել, գտնել նոր մեքենաներ. ստեղծել, գտնել դժվար, անկարելի բաներ... Այ, ինչո՞ւ չփորձել գտնել մարդուն իրեն, մեքենաներ ստեղծող մարդուն ևս։

Տիգրանն զգացվեց։ Անահիտը լուրջ էր խոսում։

— Ապա ի՞նչ։ Ի՞նչ ես երեսիս նայում, ճիշտ չէ՞։ Պայքար մարդու համար, մարդու գյուտարարը, նորարարը...

Ու ժպտում է՝ չգիտես լուրջ, թե կատակ...

Կատակ էր անում իհարկե և միաժամանակ ինքն էլ մտածում էր. «մի՞թե ճիշտ չեմ ասում»։ Բայց երբ Տիգրանն ավելի լուրջ և խոր նայեց Անահիտին՝ նա այնպես զգաց, որ Անահիտը հոգու խորքում լուրջ էր։

— Ստեղծիր նրան, Վարսիկին. նա ունի տվյալներ։ Նա լավ աղջիկ է, հավատացնում եմ քեզ։

Նայեց Տիգրանը Անահիտին, այդ խելացի, բարի ու տաղանդավոր հոգուն, և առաջին անգամ գրկեց համբուրեց նրան։ Անահիտը չընդդիմացավ։ Լուռ մնաց Անահիտը և հետո կրկին խոր նայեց նրան.—

— Հիմա հասկացա՞ր, թե ինչ ենք մենք,— ես և դու այս բոպեիս։

— Գիտեմ...

— Այո՛, կոմունիստներ, ընկերներ։

ՀԱՅՐԵՆԻ ԿՏՈՒՐԻ ՏԱԿ

Հայկական դիվիզիան՝ ինչպես մի ալիք ամբողջ անծայրածիր օվկիանոսի մեջ՝ հորձանք է տալիս։ Նա ևս լցված է այն հարձակման ոգով, ինչ որ տոգորել է ազատարար ժողովուրդներին և կապել իրար։ Նա էլ է գնում ազատելու մարդկությանը։

Երեք մարտիկ՝ Հակոբը, Ռուբենը և Ալեքը՝ միշտ անբաժան են այս երթի մեջ։ Նրանցից առաջինը՝ Հակոբը, երկուսի կատակների առարկան է միշտ՝ անխոս, բադի պես օրորվելով գնում է մեջքին ռազմական ծանր բեռը տանելով։ Նրանց դասակը աչքի է ընկել իր խիզախությամբ. ուստի և նրանք շարունակ իրար հետ կատակում են ու ծիծաղում։ Հակոբը մի փոքր դժվարաշարժ երիտասարդ է։ Տանը լավ բանող կոլխոզնիկ էր։ Բանում էր դանդաղ, բայց հաստատ։ Եվ հիմա, երբ զորամասը շարժվում է արագ ընթացքով՝ գունդուկծիկ Հակոբը քրտինքի մեջ կորած է։ Կաթիլները գլորվում են նրա քթի ծայրից։ Նա թևով սրբում է այդ կաթիլները, հետո հրացանի փոկը նետում է մի ուսից մյուսը, թափ է տալիս իրեն և մշմշալով քայլում։

Օդում տագնապ կա սակայն։

Մարտիկներից առաջ մի առաջապահ զորամաս շփման մեջ է թշնամու հետ։ Այնտեղից հեռվից լսվում է նրա հրանոթների խուլ որոտը։

Զորամասը գնում է հասնելու և փոխարինելու նրան։

Ճանապարհի սառած հողն ու սառույցը փշրվել, խառնվել են իրար՝ գծելով մի սև ժապավեն։ Աջ ու ձախ թափված են ջախջախված տանկեր, սայլեր ու ավտոներ։ Տեղ-տեղ անշարժ փռվել են մարդիկ։ Դա գերմանացիների դիակներն են։ Նրանք մի վերջին շարժում ևս կանեն տեղից մինչև գերեզման և այնտեղ կմնան հավիտյան անշարժ։

Զորամասը մտավ մի բնակավայր։ Ամայի, ավերակ, այրած

մի վայր էր դա։ Քառակուսիներ՝ գետի վրա, ածուխի և մոխրի սև գույնով տպված. դա նախկին տներն են։ Երկար ձգված է մի սև շերտ. դա գյուղի գլխավոր փողոցն է։ Երբեմն միայն մի նեղ քառակուսի սվաղած սյուն տնկված մնացել է այդ քառակուսիների մեջ. դա վառարանի հետքն է։

— Մինչև տակը վառել են անիծածները,— ասաց Ռուբենը։

— Քար չկա, եղածը փայտ է, բա ի՞նչ կլի,— բացատրեց Ալեքը։

Հակոբը լուռ նայեց ավերակներին և խուլ հազաց։ Նրա աչքերից չեն խուսափում ամայի գյուղերի մոխրակույտերը։ Նա մտածում է հին բաների մասին։ Իրենց գյուղերը հեռավոր հայրենիքում։

— Մերն ուրիշ տեսակ էր. պատերը մնում էին,— ասաց Ռուբենը։

— Դե մերը քար էր,— ասաց Ալեքը։

Ճանապարհից մի փոքր աջ՝ թմբի վրա մի բարակ ծուխ էր գզգզվում քամուց։ Մի դարմիր թիթեղե կտուր էր, որ հրդեհից իջել էր, նստել, գետնին։ Ահա նրա տակից, ինչպես գետնի տակից, ծուխը դուրս էր գալիս։ Ինչ-որ խորհրդավոր բան կար այնտեղ։ Ի՞նչ ծուխ էր դա...

Ռուբենը քայլերը ծռեց դեպի այն կողմ։

— Հա՞, ի՞նչ կա,— հետաքրքրվեց Ալեքը։

— Գնամ տեսնեմ ի՞նչ ծուխ է։

— Զգո՞ւյշ...— խուլ խոսեց Հակոբը։

Ռուբենը չպատասխանեց և գնաց։ Ալեքը չուզեց նրան մենակ թողնել, հետևեց նրան։

Հակոբը կանգնեց։

Ռուբենը մոտեցավ ավերակին։

Թիթեղե կտուրից մի փոքրիկ թիթեղե խողովակ էր ցցված, որտեղից ծուխն էր դուրս գալիս։ Կտուրի մի եզրին գետնափոր տանդուղք էր փորած, որ տանում էր ներքև, փոսը։ Ռուբենը կռացավ նայեց։ Կիսամութի մեջ մի կին էր կծկվել փոսի մեջ՝ երեխան գրկին։ Կինը վեր նայեց, բայց չշարժվեց տեղից։ Ռուբենը ժպտաց.

— Էս ի՞նչ բան է, էս ո՞ւր ես մտել,— հարցրեց նա կնոջը։

Կինը միայն տխուր վեր նայեց։

— Ի՞նչ բան է,— հարցրեց Հակոբը և մոտեցավ, հետաքրքրքրված նայեց փոսին։

— Չլինի՞ վիրավոր կա։

— Չէ, ի՞նչ վիրավոր,— ասաց Ալեքը,— մտել է ծակուրը, տաքանում է։

Հակոբը նշանակալից նայեց կնոջը, գրկի երեխային, թիթեղե առաստաղին, փոսին, վառարանին՝ կարծես շատ կարևոր էին այդ բազմազնին դիտողությունները։ Հետո գլուխն օրորեց։

— Վաղո՞ւց է եկել ես,— հարցրեց կնոջը։

— Չէ,— պատասխանեց կինը,— հենց որ մերոնք մտան գյուղ՝ թաքստոցից եկա տուն։

— Տո՜ւն... ախր սա ի՞նչ տուն է,— ծիծաղեց Ռուբենը։

— Դե ո՞ւր գնար,— բացատրեց Ալեքը։

— Ասենք՝ դրուստ է,— մտածեց Ռուբենը բարձրաձայն։

Հակոբը համակված նայեց կնոջը և ինչ-որ բան անցավ նրա հոգով՝ ծանո՞թ այնպես, սիրելի՞...

Եվ նա գլուխն օրորեց։

— Լա՞վ է այդտեղ, քույրի՛կ,— հարցրեց նա կնոջը։

— Իհարկե լավ է, իմ տունն է,— պատասխանեց կինը՝ օրորելով գրկի քնած երեխային։

— Ինչո՞ւ չպասեցիր, մինչև կարգի ընկներ ամեն բան,— հարցրեց Ռուբենը։

Կինը ժպտաց.

— Չէի կարող համբերել... Ինչքան չլինի՝ տունս է, էլի տաք է այստեղ։ Հանգիստ է սիրտս։

Կինն արտասվեց և թևով սրբեց արտասուքը։

— Բա ախր ի՞նչ է մնացել էստեղ,— խոսեց ինքն իրեն Ռուբենը,— պատերը մոխիր են դառել, առաստաղը գետնին է կպել։

Կինը վիրավորվեց և ցասումնալի շեշտով գոչեց.

— Ի՞նչ է մնացել, շա՜տ բան է մնացել... ինչպե՞ս չեք հասկանում։

Հակոբն աչքով արեց Ռուբենին.

— Թո՛ղ...

— Ի՞նչպես ոչինչ չի մնացել։ Այստեղ իմ ամուսինն է ապրել, իմ երեխաներն են ապրել։ Այստեղից են նրանց տարել սպանելու։ Այստեղից եմ մտիկ տվել մեր գյուղին, իմ համագյուղացիներին,

ապրել մեր կոլխոզի հետ... Այստեղ շա՜տ բան է մնացել։

Կինը թևով սրբեց աչքերից կրկին հոսող արցունքները.

— Այստեղ իմ տունն է, ասել է իմ հայրենիքը, այստեղ իմ ուրախությունն է մնացել, իմ ազատությունը։ Առաստա՞ղը — ոչի՜նչ, կբարձրացնեմ, պատերը կշինե՜մ։ Տունը տեղն է։ Տունը կա՜,— դա իմ սիրտն է։ Ի՞նչպես ոչինչ չի մնացել։

Հակոբը հառաչեց, հանեց պարկից հացի բոքոնը և վայր գլորեց դեպի կինը.

— Սի՜րտդ պինդ պահի, քույրի՜կ, ամեն բան լավ կլինի։

Ու հեռացավ։ Ռուբենն ու Ալեքը հետևեցին նրան։

Հակոբը համակված կնոջ խոսքերով՝ մտածեց... Կրկին այն հաճելի բանն անցավ նրա հոգով, այնպես ծանոթ, այնպես սիրելի։ Դա իր տունն էր իր Հայաստանում, որտեղից այս բոպեիս նույնպես մի բարակ ծուխ էր ոլորվում դեպի լազուր երկինքը։ Եթե նայես այդ ծխի քուլաներին՝ նրանց արանքից կտեսնես գլուխները երկինք հասցրած երկու հսկա Մասիսները։ Եվ մի կին՝ Հակոբի կինը՝ երեխան գրկին նույնպես նստած է այնտեղ վառարանի կողքին։ Բայց չգիտես ինչու դառն եկավ նրա սրտին այդ պատկերը։ Ամենքը, ամենքը սպասում են նրա վերադարձին, այն բանին, որ կյանքը քաղցրանա։ Որքա՞ն հեռու, հեռու են նրանք։ Բայց և որքան մոտ են նրանք, նման են իրար։ Այնտեղ շեն է ամեն ինչ, բայց նրանց գլխին էլ նույն միտքն է սավառնում... Պետք է լիովին դիտել այն բոլորին։ Այն բոլորը քոնը չէ՝ եթե չես հաղթի թշնամուն...

Տո՜ւն — դա ասել է հայրենի՜ք...

ԽՈՇՏԱՆԳՎԱԾԻ ԱՎԱՆԴԸ

Շուլցը, էսէսական զորամասի կապիտանը, երկաթե կազմվածքով, հին կադրային զինվորական էր, դեռ բավական երիտասարդ։ Նրա սուր հայացքը, և սեղմ շրթունքները՝ երբ նա աչքերն անթարթ նայում էր դիմացինին՝ ակամա ազդում էին։ Նա ճակատ եկավ սովետա-գերմանական պատերազմի հենց առաջին օրից։ Եվ երբ սկսեց գործի անցնել՝ իսկույն զգացվեց հմուտ պրոֆեսիոնալի ամուր ձեռքը։

Կապիտանը չէր կարողանում առանց իրոնիայի լսել, թե պարտիզանական ջոկատները լուրջ խանգարում են գերմանական զորքերին։ Նա պարտիզանների հաջողությունները բացատրում էր գերմանական հրամանատարության տարտամ վերաբերմունքով դեպի գործը, պատժիչ զորամասերի անվճռականությամբ։

Տեղական բնակչությանը վերջնականապես ճնշելու համար նա միշտ առաջարկում էր գնդակահարել։

— Իսկ երբ չեն հնազանդվում՝ դարձյալ գնդակահարել և կրկին գնդակահարել։

Շուլցը չէր ընդունում պարտություն հասկացողությունը։ Նա բացատրում էր, որ միայն պետք է հաղթել և ուրիշ ոչինչ չպատկերացնել։

— Անդիմադրելի,— ահա թե ինչ կարծիք պետք է ունենանք մենք մեր մասին,— ասում էր նա։

Կապիտան Շուլցը չէր խուսափում նաև փիլիսոփայությունից։ Բայց դա զինվորականի փիլիսոփայություն էր։ Երկաթյա մի օրենք էր դա, որ կաշկանդել էր նրա մտքերի թելը, կարծես հենց պողպատի մի լար էր դա նրա գլխի մեջ պարուրած։— Ամեն ինչ, որ իբրև արգելք դեմ է կանգնել գերմանական զորքի առաջ՝ լինի զորք, բնակիչ, դիրք, հրանոթ —բոլորն ընդհանրապես վերցրած՝ դիմադրական նյութ է միայն, որ պետք է ճզմել, ոտնատակ անել և անցկենալ վրայից։ Ուստի և նա գերի չէր ընդունում՝ գնդակահարել էր տալիս։ Չէր էլ սիրում շարշարել,— այդ էլ ոչ թե

գթությունից, այլ ավելորդ ժամանակի կորուստ էր համարում, անօգուտ զվարճություն։

— Նյութը, օրինակ հողը, քարը, փայտը չեն չարչարի, նյութը կոչնչացնեն։— ասում էր նա։— Մեր նպատակը տիրելն է նյութին, մեջտեղից քշելը։

Այս պատճառով էլ նրա զորամասի անցած ուղին «անաղմուկ» էր դառնում միշտ։ Դեպքերը դաժանորեն կարճ էին տևում,— կտկտում էին գնդացիրներն ու ատրճանակները, վայրը «մաքրվում էր» և սկսվում էր զորամասի թիկունքային «խաղաղ» կյանքը մինչև առաջավոր դիրքեր հասնելը։

Նա գործադրում էր իր առանձին զինվորական կանոնները։ Եթե այն բնակելի կետը, որ ինքն էր մտնում իր զորամասով՝ իրենցից առաջ գեստապոն «եղել է» մի անգամ՝ նա կատարում էր մի հավելյալ մաքրագործում ևս։ Նա կամենում էր անձամբ վստահ լինել վայրի կատարյալ անվտանգության։ Իսկ այդ կարելի էր ձեռք բերել, նրա ասելով, միմիայն կանխիչ խստությունը հասցնելով մինչև սարսափի և ճնշման վերջին կետը։ Ճնշել վերջնականապես, վճռականապես, անխնա։

Միայն մի «արիստոկրատիզմ», թե ռացիոնալիզմ ուներ՝ չէր սիրում կախել։

Այն առավոտ, որ կապիտան Շուլցը մտավ ռուսական ավանը, ուր ինչ-որ բան էր լսել այդ ավանի մոտակայքում գտնվող ռուսական հուշարձանի կործանման մասին, և ուր երկու սպաները խոսում էին ռուսական կուլտուրայի մասին, նա փնթփնթաց.

— Կուլտուրան գերմանական է։ Ուրիշ կուլտուրա չկա։

Հետո դառնալով մի սերժանտի, որ իր հետ ներս էր մտնում իրենց հատկացված տան բակը՝ նա մեքենական տոնով ասաց.

— Հանգստացնել գյուղը։

— Լսում եմ, կապիտան,— նույնքան մեքենական տոնով պատասխանեց սերժանտը և իսկույն կրնկի վրա պտտվելով դուրս գնաց։

Սերժանտը լավ գիտեր, թե իր կապիտանի տերմինով ինչ է նշանակում հանգստացնել.— վտանգի վերջին հնարավորությունը՝ գիմադրությունը հակառակորդ գյուղացու, պատանու, հասակավորի ու կրտսերի բոլոր գոյությունը մեջտեղից վերացնել։

Մի տասը բոլզեից գնդացիրները կտկտացին։ Հեռվից խուլ

աղմուկի, շների հաչոցի հետ լսվեցին սուր ծղրտոցներ։ Կես ժամից ամեն ինչ հանդարտեց։ Միայն շները շարունակում էին ոռնալ ու հաչել անտառի եզրին։

Կապիտան Շուլցն անտարբեր լսեց այդ ձայները, որ նրա համար սովորական էին որևէ բնակավայր մտնելու առաջին ժամերին և սկսեց տեղավորվել սենյակում։

Նա իսկույն հանվեց և պառկեց մահճակալին։ Նա ապահով էր միանգամայն։ Գյուղը «մաքրված էր և հանգիստ»։ Վտանգավորները մինչև վերջին մարդը գնդակահարված էին, գյուղը՝ խուզարկված։ Մնացած արարածները՝ «զառամյալներն ու շները» ոչ մի վտանգ չէին ներկայացնում։

***

Տան հետևում կից մի երկու փոքրիկ տնակներ կային, որոնցից մեկի դուռը բացվեց և տարտամ քայլերով դուրս եկավ մի գունատ ծերուկ։ Նա ետ շրջվեց դռան մեջ և խեթ նայեց ներս։

— Հա, ի՞նչ ես էլի նվում։

Ու դժգոհ նայեց ու սպասեց պատասխանի։

Տնակից դուրս եկավ մի պառավ, որ լացակումած աչքերով նայեց չորս կողմ և ապա գլխիկոր մտածելով՝ կարծես ինքն իրեն ասաց.

— Սիրտս մղկտում է։ Էլի զարթնեց երևի։

Ծերուկը, որ միականի էր, մի աչքով խեթեց նրան։ Բայց պառավն անհանգիստ էր։ Նրա ձեռները դողացին և այտերի մկանները խաղացին հիվանդագին ցնցումներով։ Նա գունատվեց։ Ծերուկն ինքն էլ անհանգստացավ։ Եվ կարծես վախենալով, որ պառավը կբռնվի ինչ-որ մի հիվանդության նոպայով՝ անախորժ, բայց տարօրինակ դժգոհությամբ, որի մեջ նաև մեղմություն կար, ասաց.

— Գնա մտիկ տուր, տես։

Պառավը զարթնեց իր մտքերից, որ նրան կաշկանդել էին։

— Բա ի՞նչ կլի... էնքան թխթխկոցներից։ Գնամ, այո, գնամ, հիմի զարթնած կլի։

Հետո նայեց ամուսնուն և ասաց ցած ձայնով.

— Հիսունի չափ գնդակահարեցին։ Պավլովն էլ մեջն էր,

Կուզման, կողքին Զյորնիխն էր։ Հասկերի նման պառկեցին։ Հենց իսկը հասկերի նման։ Էն որ վարպետ հնձողի գերանդու տակ պառկում են, է։ Իսկը։

— Լավ, լավ, հերիք հաշիվ տաս, գնա բանիդ։

Պառավը կրկին հիշեց իր ցավը, անհանգստացավ և շտապով գնաց։

Ծերուկը գնաց մտավ կողքի մութ մեշեմեջ շենքը։ Գրպանից հանեց մի դանակ և սկսեց եղունգները կտրել։ Այդ զբաղմունքը նրան շատ երկար ժամանակ մեխեց միևնույն տեղում։ Հետո, երբ վերջացրեց՝ դանակը ծալեց, դրեց գրպանը և մտազբաղ սկսեց նայել հատակի մի կետին՝ կարծես մի բան էր որոնում, կամ գտել էր։ Իրոք՝ նա շարունակում էր իր մտքի թելը։ Մտածում էր պինդ, լարված։ Ապա սկսեց հոգածու և խուզարկու հայացքով նայել շենքի խորքը։

Դա բաղնիք էր։ Թաց տախտակների գաղջ հոտը մտնում էր նրա քիթը։ Նա տնտղեց անկյունները, որ խավարի մեջ էին։ Հետո ինքն իրեն մի քանի հավանություն տվեց և գլուխը վճռականորեն թափ տալով՝ դանդաղ դուրս եկավ բաղնիքից։

Նրա կռացած իրանը՝ պինդ ամրացած երկու փակագծաձև, ծուռ ոտների վրա, ցույց էր տալիս, որ նա շատ է բանել դաշտերում ու տանը։

Ծերուկն սպասում էր պառավին, որ գնացել էր մարագի հետևը։ Նայեց այն կողմը և բարկացած աչքը բացուփուփ արեց անհամբեր։

Պառավը լացակումած վերադարձավ և տարակուսանքով նայեց ամուսնուն։

— Հա, ի՞նչ է, չի՞ հանգստացել։

Պառավը հեծկլտաց.

— Ախր ո՞նց կհանգստանա, Լեկսեյ Պետրովիչ, ո՞նց կհանգստանա իմ աղունակ Ֆեդկան, որ միշտ հարցնում ես, ո՞նց կհանգստանա իմ արև բալեն։ Հնգաթև աստղերն այրում են նրա թշերը, կսկծում, չեն թողնում քնի։ Ախր աչքերը չկան, որ փակի, խոռոչներ են...

— Դե, դե, զոռցը մի դնի, ես սրրտ չունեմ,— սրտնեղեց դյուրագրգիռ ծերուկը և չար միականի հայացքով ծակեց պառավի

հայացքը։— Սուս,— սաստեց նա կտրուկ ու շրջվեց, որ գնա դեպի անտառը։ Նրա չոր ձեռները դողացին։

— Ի՞նչ,— ուրախ տարակուսանքով հարցրեց պառավը։

— Ո՞ւր,— բարկացավ ծերուկը,— գնամ տեսնեմ ինչ կանեմ,— ու ինքն իրեն փնթփնթաց,— չի հանգստանում էլի, ինձ էլ չի թողնում հանգստանամ։

— Բա, չի հանգստանում... Ասում ես, ասում ես,— կենդանացավ պառավը,— ո՞նց հանգստանա, էս գնդակների կտկտոցը զարթեցրեց։

— Լավ, լավ, տեսնենք, կանեմ մի բան,— հանգստացրեց ծերուկը և շարժվեց։

— Շատ հեռու չգնաս։ Հիմա երևի կհրամայեն, որ բաղնիքը տաքացնեմ։

— Ես փայտի եմ գնում,— բացատրեց ծերուկը և հանկարծ կանգ առավ ու ընդոստ դարձավ դեպի պառավը.— թող հրամայեն։ Այո, թող հրամայեն։ Ամեն օր չեն հրամայի։ Չեն հրամայի ամեն օր։

Եվ իր միակ աչքով շարագույժ նայեց պառավին։

Նկատելի էր, որ ծերուկը ևս բռնված էր ինչ-որ հոգեկան անհավասարակշիռ դրությամբ։ Բայց ըստ երևույթին նրանք իրար հասկանում էին։

Ծերուկը գնաց։ Պառավը երկար նայեց նրա հետևից և ինքն էլ ուղղվեց դեպի մարագի հետևը, ուր կանգ առավ մի գերեզմանի մոտ, որ տեղ-տեղ ներս էր փլել։ Պառավն սկսեց խոսել գերեզմանի հետ.

— Ախ, չես հանգստանում, Ֆեդկա, ախր դու պետք է հանգստանաս, որ մենք էլ հանգստանանք։

***

Կապիտան Շուլցը ճաշի մոտ զարթնեց, դուրս եկավ պատշգամբ և փորը ճաղերին սեղմած՝ սկսեց դիտել տան բակն ու փողոցը։ Մոտ եկավ սպասյակը որևէ հրաման ստանալու։

— Սա բաղնիք է՞,— հարցրեց Շուլցը ցույց տալով բաղնիքը։

— Այո, բաղնիք է,— ասաց սպասյակը։

— Ա,— կենդանացած շեղտով ձայնեց կապիտանը,— և այն

էլ այսքան մո՞տ, մեր տա՞նը... Ես կլողանամ այս երեկո։

Եվ մտքում ավելացրեց ժպտալով. «ռուսական միակ կուլտուրան, որ ճանաչում եմ»։

Սպասյակը տաբուրետ բերեց, որի վրա նստեց կապիտանը և անձնատուր եղավ իր մտքերին։ Նա երազող չէր։ Նրա մտքերը ռեալ հաշիվներ էին իր նեղ մասնագիտական գործերի, որոնց մեջ սիրում էր թաղվել նրա գործնական խելքը։

Շուտով, շուտով, և դա պարզ է, պատերազմը կվերջանա հաղթությամբ։ Նա հող կստանա այս հարուստ երկրում, կդառնա կալվածատեր։ Նա Գերմանիայից ընդմիշտ կտեղափոխվի այս նախկին ռուսական երկիրը, որի անունը հետո կփոխվի, իհարկե։ Եվ իհարկե պատերազմը կվերջանա թշնամու հավիտենական պարտությամբ։ Կսկսվի խաղաղ կյանքը և ինքն այստեղ կաճի ու կբազմանա, թողնելով իրենից գերմանական մի նոր, երկաթյա սերունդ։ Սա պարզ է, ինչպես մի հեշտ, թվաբանական խնդիր։

Այս մտքերի հետ էր, որ նրա առջևով անցան պառավն ու ծերուկը՝ վերջինիս մեջքին փայտի կապոց։

Դա կտրեց նրա մտքի թելը։ Նա իհարկե նրանց միջատի տեղ էլ չէր դնի, բայց նրան մեքենաբար վիրավորեց սրանց համարձակությունը՝ անցնել այն տան բակով՝ որ ինքը գրավել է։

— Իսկ ինչո՞ւ են օտարներն անցնում բակով,— հարցրեց կապիտանը դժգոհ։

— Նրանք նախկին տնատերերն են,— բացատրեց սպասյակը։

— Քշել բակից։

— Լսում եմ, կապիտան։

— Եվ բաղնիքը տաքացնել տալ։

— Սրանք են տաքացնողները։ Արդեն սկսում են տաքացնել։

— Իսկ ո՞վ հրամայեց։

— Ես կարգադրեցի, կապիտան, մտածելով, որ դուք ըստ սովորության այսօր կլողանաք։

— Հա, լավ, թող տաքացնեն։

Կապիտանը նայեց ծերուկի ոտներին, որ այնպես էին ծռվել, կարծես նրա ցամաքած իրանն անգամ ճնշում էր և պատրաստ էր կոտրել դրանք։ Ծերուկը քայլում էր երերալով, ոտի քիթը կպցնելով քարերին ու հողի կոշտերին։

Նայեց կապիտանը ծերուկին ու պառավին և զզվանքի ու արհամարհանքի մի նշույլ փայլեց նրա ապակե աչքերի մեջ։

«Նայելն անգամ կեղտ է աչքի համար։ Ջնչին մարդուկներ»,— մտածեց նա և ատելությամբ թքեց պատշգամբից վայր։

Ուշ երեկոյան կապիտանը գնաց դեպի բաղնիք։ Դռան մոտ, ճանապարհի մի կողմ, կանգնած էր ծերուկը։ Սա չնայեց կապիտանին, այլ աչքը գետին գցած սպասեց, որ անց կենա։ Կապիտանն արհամարհանքով նայեց ծերուկին և կոշկի ծայրով լուռ զարկեց նրա ծնկին։ Ծերուկը ետ-ետ գնաց, բայց ուժ արեց մնաց իր ծուռ ոտների վրա։ Նա մի ծպտուն չհանեց, միայն իր մի աչքով խոր նայեց կապիտանին։

Կապիտանը մտավ բաղնիք, որի հանվելու նստարանի վրա սպասյակը արդեն վաղօրոք ներս մտած՝ բաց էր արել փոքրիկ ճամպրուկը սպիտակեղենի և ցամքոցի հետ։ Սպասյակը հայտնեց, որ ամեն ինչ պատրաստ է։

Կապիտանը հանվեց ու մտավ ներսի մասը։ Այնտեղ նա լվաց իր պիրկ մարմինը, հետո բարձրանալով վերևի դարակը՝ պառկեց։ Նա վարժվել էր ռուսական բաղնիքի ձևերին։

Սպասյակին պատվիրել էր սովորել տեղացիներից և գործադրել գոլորշի առաջ բերելու կերպը։ Եվ երբ սպասյակը գոլորշին բարձրացրեց ներսում և դուրս գնաց՝ կապիտանը մտավ ներս ընդունելու «ռուսական կուլտուրան»,— ինչպես ինքն էր ասում։

Գոլորշին պարուրեց նրա կարմրած մարմինը, որը երբեմն տոգորվում էր մի քաղցր, անհասկանալի սարսուռով։ Սարսուռ, որ կատաղեցնել կարող էր մարդու, մոլուցք առաջ բերել՝ մարմինը ծեծել, խաշել, ցնցել։

Հետո նա «թթվեց», թուլացավ, երազել սկսեց։ Մի անորոշ, անձև պատկեր սկսեց երևալ նրա երևակայության մեջ։ Քուն էր գալիս վրան, բայց նա զսպում էր իրեն և երանության մեջ աչքերը կիսախուփ վայելում էր ջերմ գոլորշին, որ շնչում էր նրա մարմնի վրա, շոշափում պլաստիկական շարժումով և ցրվում։

Դա մի ճերմակ մորուք էր, որ գալարվում էր հատակին, պատերին, առաստաղին։ Միայն խոնավությունից սևացած դուռն էր գծագրվում իբրև մի սև քառակուսի ստվեր։ Այդ ստվերը թանձրանում էր մերթ ու նոսրանում։ Կաթնագույն գոլորշին էր այդ, որ խաղալով գռան կողմը՝ առաջ էր բերում գույների այդ ռիթմը։

Շուլցը լավ չէր էլ նայում այդ կողմը։ Եվ կիսափակ աչքերը դարձրեց առաստաղի կողմը։

Մի անգամ միայն նա հայացքը ակամա կրկին դարձրեց այն կողմը, որովհետև նրան թվաց, թե ինչ-որ մի բան լողաց դռան մեջ։ Նայեց կողքանց, այնտեղ ոչինչ չկար։ Եվ հենց ուզում էր կրկին աչքերը դարձնել առաստաղին, որ հանկարծ դարակի տակից վեր սողաց մի սիլուետ։ Մարդկային կերպարանք։ Եվ գոլորշի՞ն էր արդյոք սպիտակացրել նրան, թե իրոք նա սպիտակ էր խոզաճարպի նման։ Նա մերկ էր ու դեմքից կախ էր ընկել և պարուրում էր մի գոլորշու քուլա՞, թե մորուք։

Հենց այն է, կապիտանն ուզում էր շարժվել և լավ նայելով որոշել, թե ով էր այդ արարածը՝ հանկարծ սիլուետը հարձակվեց նրա վրա, դանակը պիրկ հարվածով մխեց նրա որովայնի մեջ և հուժկու մի շարժումով պատռեց ամբողջ որովայնը վերից վար։ Միաժամանակ մի թանձր թաց շոր գցեց կապիտանի բերանի վրա և ճնշեց։ Հարվածող ձեռքը պրկվելուց դողաց։ Մինչ լողացողը փորձ արեց ցատկել վեր՝ աչքերը մթնեցին և գլուխը պտտվեց։ Նրան թվում էր, թե գոռում է, բայց իրոք դա անձայն արտաշընչումն էր։ Ականջները թշշացին, տակի դարակը խորտակվող մակույկի պես շուռ եկավ իր հատակի վրա, առաստաղը շրջվեց անդունդի վրա և կապիտանը ուշքը կորցրեց։

Սպասյակը, որ գոլորշին պատրաստելուց հետո գնացել էր բակը և միամիտ շրջում էր այնտեղ և հեռանում էր, մոտենում բաղնիքին՝ բնազդորեն անհանգստացավ։ Նրան թվաց, թե ինչ-որ ստվեր էր սահել ներս՝ բաղնիքը։ Մոտեցավ դռանը և խլրտում ու ճնշված ձայներ լսեց։ Սպասյակը ներս վազեց։ Սշուշի մեջ նա տեսավ ծերուկին ու պառավին, որ ինչ-որ բան էր փաթաթում սավանի մեջ։

— Հա՛լտ (կանգնի՛ր),— գոռաց սպասյակը և երկաթե մագիլները ցցեց ծերուկի վզի մեջ, մյուս կեսը գցելով պառավի ուսին։ Նրա համար պարզվեց եղելությունը։ Անլուր սարսափելիություն... նա գոռաց և ծերուկին ու պառավին խփելով պատին բաց արեց արնաթոր փաթեթը։ Նրա մեջ կապիտանի արյունոտված դիակն էր։ Սպասյակի գոռոցի վրա ներս վազեցին երկու զինվորներ։ Նրանք բռնեցին ծերուկին ու պառավին և դուրս բերին։

Ծերուկը հանգիստ էր ըստ երևույթին, միայն արագ թարթում

էր մի աչքը և թեթև լսում։ Նրան ցնցում էին, բայց նա շարժվում էր իբրև առարկա։ Պառավը դողում էր հուզմունքից։ Նա թուքը կուլ տալով նայեց ծերուկին և բավարարված հանգստացավ։

***

Ծերուկին ու պառավին տանում էին հրապարակ, կախաղանի մոտ։ Հակառակ սպանվածի սովորության՝ որոշել էին կախել ըսպանիչներին՝ բնակչության համար խրատական տեսարան սարքելու նպատակով։ Գյուղացիներին, գնդակահարման սպառնալիքով, հարկադրել էին ներկա լինել։ Ու մինչ մի կողմից հրացանի կոթերով ժողովում էին ուշացած բնակիչներին՝ դատապարտված զույգը գնում էր դեպի կախաղան։ Ծերուկը իր ծուռ ոտները հաստատ դնելով գետնին, գնում էր շուտ-շուտ նայելով իր շուրջը՝ կարծես ինչ-որ մարդկանց որոնելով, իսկ պառավը որքան կարող էր, գնում էր մի տեսակ շտապով, կարծես ձգտելով հասնել մի ցանկալի գործի։ Միայն նրա դեմքը հանգիստ էր և հանդիսավոր։ Այդպես հավատացյալները եկեղեցի էին գնում հաղորդվելու։ Պառավն իր ամենօրյա հագուստը, որով բռնվել էր սպանության վայրում, այդ օրը ձեռքով հարթել էր մեծ խնամքով։

Երբ մտան հրապարակ՝ բազմությունը հազիվ լսելի հեաց։ Պառավը չնայեց ոչ ոքի։ Նա իրեն զգում էր մի մեծ անջրպետով բաժանված՝ կյանքի մարդկանցից։ Բայց նա զգում էր մի ջերմ համակրանք, որ հոսում էր բազմության կողմից դեպի իրենց։

Ծերուկը հասարակ քայլերով գնաց կանգ առավ կախաղանի մոտ։ Նա կանգնեց, հանգիստ շունչ քաշեց և անվրդով նայեց բազմությանը։ Նրա հայացքում կար մի ամուր վճիռ՝ մեռնել երբ մահն եկել է և իր գործն էլ դրանով փակել։

Զինվորները կատարեցին վերջին արարողությունները, փորձեցին պարանների պնդությունը, կարծես մահապարտները ահագին տոննաներ կշռելիս լինեին կամ կարող էին փախչել։ Բազմությունը գլխիկոր գետնին էր նայում։ Նրանց միջից լսվում էր խեղդված հեծկլտոց։

Հանկարծ ծերուկը այլակերպվեց, ցնցվեց և գոռաց.

— Է՛է՛է՛յ...

Բոլորն ակամա լարվեցին։

Ծերուկի կրծքից դուրս թռավ մի դողդող և զարմանալի ուժեղ բաս ձայն.

— Ասեք սրանց, որ մենակ մի բռնակալ չի փորձել մաքրվել իմ բաղնիքում։ Նրանք շատ են և հիմա իջել են իմ ջրհորի դժոխքը։ Ասեք, որ ոչ մի բաղնիքում ու ջրհորում չեն լվա իրենց արարմունքները։

Սպան մոտեցավ և մի շառաչուն ապտակ շփեց մոլեգնած ծերուկի երեսին։ Սա պահեց իրեն, ետ-ետ չգնաց, ուղիղ նայեց սպային և թքեց նրա դեմքին։ Սպան հայհոյեց և գոչեց զինվորներին, որ գործի անցնեն։

Այդ ժամանակ պառավը, որ շարունակում էր հանդիսավոր նայել հեռուն՝ մի ձեռքը քամակին դրեց և մյուս բռունցքը մեկնելով դեպի սպան՝ գունդուկծիկ թափ տվեց իր կուզ մեջքը և ետ առաջ պար գալով տեղն ու տեղը կոնչաց.

— Բա,— թուքը կուլ տալով դողացրեց շրթունքները,— բա իմ Ֆեդկան, իմ անթառամ Ֆեդկան, որին խոշտանգեցիք աչքերիս առաջ. նրա արյան փոխարեն միլիոնները պիտի պատասխան տան։

Պառավի ամեն մի ֆրազի պոռթկումից նրա կուզը ռիթմիկ ու ազդու ցնցվում էր։ Կարծես այդ կուզի մեջ, դառն աշխատանքից, պայքարից գոյացած կուզի մեջ լիներ հավաքված նրա կյանքի ողջ մաղձն ու զոհված զավակի, գյուղում տեսած խժդժությունների ծանր վիշտն ու վրեժը։ Պառավի սղալած մազերը գզգզվեցին, և նա շարագույժ աչքերով սոսկալի էր այդ մոմենտին և նման էր կատաղած հսկա թխսկան հավի, որ փշաքաղված փետուրներով հարձակվում է ուրուրի վրա և կոտցում նրան։

Զինվորները պառավին ուժգին հրեցին կախաղանի տակ, բայց նա նույնպիսի ուժեղ թափով առաջ մղվեց և իր ցնցապարով և խռպոտ ձայնով ֆշշաց զինվորների վրա.

— Իմ Ֆեդկան չի մեռած, նա քնած է հողի մեջ. նա կվեր կենա մի օր։ Բոլոր թաղվածները կվեր կենան և էն օրը վայ ձեզ, անիծյալ հերովցիկոներ։

Զինվորները խլեցին պառավի ոսկրացած թևերը և պարաններով կապկպեցին։ Պառավը դադարեց խոսելուց, բայց նրա կզակը ցնցվում էր ու դողում։

Մի երկու բոպեից հետո ծերուկի ու պառավի մարմինները

պարել սկսեցին օդում՝ իրար տնազ տալով կարծես, կամ կրկնելով իրար։

Հավաքված բազմության միջից, որոնց մեծ մասը զանազան հասակի կանայք ու փոքրաթիվ երեխաներ էին ծերերի ու պառավների հետ՝ դուրս թռավ մի ճիչ, որ և իսկույն խեղդվեց հեկեկոցի մեջ։ Ծերուկներից մեկն անձայն կափկափեցնում էր ներքին կզակը։ Իսկ մյուսները արձանացած ու գլուխները հպարտ, ցնցագույժ աչքերով նայում էին հեռուն, լի փոթորկալի մտքերով։

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ

Մինչև թարգմանը կվերադառնար, որ զինվորների հետ գնացել էր նշանավոր պարտիզանի հորը բերելու՝ գյուղսովետի շենքում հավաքված գյուղացիներն ու գերմանացի սպան սպասում էին։ Բոլորը լուռ կանգնած էին սեղանի առաջ, որի մոտ նստած էր սպան, որ շրթունքները կծելով և թուքն արագ-արագ կուլ տալով մեկ նայում էր դռնից դուրս և ապա գյուղացիներին։ Անհամբերությունից նրա կաս-կարմիր դեմքը, ծալքավոր ծոծրակը և ներվային կծկումներով խլթխլթող այտերը կապտում էին։ Նրա մազերն ու հոնքերն սպիտակ էին, լուսանկարի նեգատիվի նման։ Իսկ ապակի աչքերը որևէ բարի բան չէին գուշակում։ Դրանից էլ բոլորը հատակին էին նայում։ Միայն մեկը նրանցից՝ միաչքանի ու նենգ՝ համառ նայում էր սպային։ Սպան ընդոստ շարժումով թեքվեց դեպի դռան կողմը և անհամբեր ու դժգոհ փնթփնթաց.

— Նո՞ւ, ի՞նչ են անում այնտեղ։

Շների հաչոց էր գալիս «այնտեղից», որ երբեմն ընդհատվում էր հանկարծակի աղիողորմ կլանչոցով։ Դա զինվորներն էին, որ ծեծում էին շներին։

Վերջապես մի խուլ աղմուկ՝ խառն ոտնաձայնի հետ։ Սպան լարվեց։ Գյուղացիներից մեկը ծանր հոգոց քաշեց՝ թեթևացնելու համար խեղդող շնչառությունը։

Ներս մտան զինվորները թարգմանի հետ՝ հրելով մի բարձրահասակ, նիհար գյուղացու։

— Ա՜, սա՞ է... — չարախինդ նայեց գյուղացուն սպան և ոտից գլուխ չափեց նրան։

Թարգմանը, դեղնադեմ ու մսոտ այտերով մի կարճահասակ մարդ, որ չես հասկանում որտեղից էր լույս ընկել և ինչպես էր ծանոթ գյուղացիներին, նրանց կյանքի անցուդարձերին՝ կոտրած ժպիտով հաստատեց սպայի հարցմունքը։

Գյուղացին հանգիստ ու հպարտ նկավ ուղիղ կանգնեց սպայի առաջ։ Հավաքվածներն ավելի քարացան իրենց լռության մեջ։

Սպան, որ ըստ երևույթին մեծ կրքով սպասել էր այս վայրկյանին՝ ուզեց սկսել, բայց ատելության և չարության բեռից խեղդվելով՝ չկարողացավ ոչինչ ասել. նա միայն հառաչեց և հայացքը սևեռեց եկողի վրա։

Սա հենց եկել ու արձանացել էր նրա դիմաց՝ պարթևահասակ, փառահեղ մորուքով և աջ ձեռքի բթամատը գոտկի մեջ խրած, սապոգների միջի երկաթի ոտները պինդ ու համառ հատակին դրած՝ ուղիղ նայում էր սպայի աչքերին։

— Ի՞նչ ես նայում աչքերիս մեջ, ես չեմ սիրում, որ նայում են աչքերիս մեջ,— սկսեց սպան։

Թարգմանը բացատրեց։ Բայց գյուղացին համառեց ու շարունակեց ծանր նայել սպայի աչքերին։

— Դե՛, հիմա ասա՝ ո՞ւր է պարտիզան որդիդ,— սկսեց հարցաքննությունը սպան՝ չսպասելով թարգմանին և խոսելով կոտրտրված ռուսերենով։

Գյուղացին չպատասխանեց և շարունակեց վերևից ներքև նայել սպային։

— Լռո՞ւմ ես... հը՞... ո՞չ միայն դու, այլև սրա՛նք պիտի ասեն ու հաստատեն, թե ո՞ւր է պարտիզանը։ Դե՛։

Գյուղացին աչքերն անգամ չճպեց։ Եվ եթե չլիներ նրա ելևէջող կուրծքը, որ շարժում էր նրա մարմնի այդ մասը՝ կարելի էր ասել, որ նա արձան է։

Սպան զսպում է իրեն, որովհետև դեռ տատանվում էր՝ ծեծո՞վ սկսել ու սպանելո՞վ վերջացնել գյուղացուն, թե՞ իսկույն ևեթ սպանել և վերջ տալ նրան։ Նա որոնում էր կոտանքի ազդու ձևեր և մեկից մյուսին անցնելով՝ դանդաղում էր և նայում գյուղացուն։ Նրան ատելի էր այդ կերպարանքը, որի մեջ նա տեսնում էր մի օտար երկրի ողջ բնակչությունը։ Նա այրող նախանձ էր զգում տեսնելով այդ գյուղացու բարձր հասակը, ուղիղ իրանը, կոշտ, ջլուտ մատները և այն համառ, պինդ կեցվածքը, որով նրա ոտները կպել, տիրում էին երկրին, այն հարուստ սևահողին, որի մասին սպան առասպելներ էր լսել։ Նա շատ էր տեսել այդպիսի գյուղացիներ և հիմա իր դիմաց կանգնածը կարծես միախառնել էր նրանց բոլորին։

Սպան հիշեց շարանն այն մարդկանց, որոնց նա կտտել և ոչնչացրել էր հարձակման ճանապարհին։ Բայց և ահա նրանք կրկին հարություն են առել։ Սրանք անվե՞րջ են, սրանք չե՞ն ոչնչանալու։ Սրանք այսպես անվերջ կմաշե՞ն, կհատցնե՞ն հենց իրեն, սպային։

— «Մի՛շտ միևնույն մարդը դիմացս»,— մրթմրթաց սպան յուրովի և թափ տվեց իրեն կաշկանդող մտքերը։

Նա ձեռքը զարկեց սեղանին և թնդաց.

— Դու չպե՞տք է ասես որդուդ տեղը։

Գյուղացին կրկին ոչինչ չպատասխանեց և միայն մի ոտից հենվեց մյուս ոտին։ Եվ միշտ՝ հայացքը սպային, հաղթական ու լուռ։ Նա կարծես չէր մասնակցում սպայի սարքած տեսարանին, այդ համարելով իրեն չվերաբերող մի գործ։ Բայց նրա աչքերի մեջ խորը պահված էր մի կայծ, որ ապրում էր, մտածում, որ խոսում էր մի ինչ-որ ահավոր բանի մասին։

Սպան նայեց բոլոր գյուղացիներին, որ ուղիղ կանգնել էին իր դիմաց, աչքները հատակին և զգաց, որ նրանք ևս լռելու են շարունակ։ Եվ կատաղեց.

— Ի՞նչ, դուք չե՞ք ուզում խոսել։ Ես ձեզ հիմա խոսել կտամ...

Մոտեցավ պարտիզանի հորը։

— Դու վերջիվերջո չե՞ս խոսելու...

Ծռմռեց բերանը, վնգաց և բռունցքով սաստիկ զարկեց գյուղացու դեմքին։ Գյուղացին դեմքը թեթևաշարժ թափ տվեց և մնաց նույն տեղը, նույն դիրքով։ Արյունն աշխույժ փայլով հոսեց նրա մորուքի վրա և սկսեց կաթկաթել հատակին։

— Ա՛հ,— մի անգամ ևս հարվածեց նույն տեղին։ Կրկին մի անգամ ևս։

Եվ եկավ նստեց տեղը։ Հետո դարձավ բազմությանը.

— Է՛, լսեցեք, և թող սա էլ իմանա վճիռս։ Բոլորիդ պիտի կոտորեմ՝ եթե չիմանամ, թե ուր է պարտիզանը։ Ես նրան պիտի ոչնչացնեմ քանի նա դեռ չի եկել գաղտագողի։ Նո՞ւ,— կրկին դարձավ ծեծվողին։

Բայց պարտիզանի հայրը լռում էր համառությամբ ու շարունակությամբ։ Նա անլսելի հևում էր և հայացքն հառած սպային՝ նայում էր սպառնալի։ Սպան վեր թռավ և սկսեց մոլեգնությամբ ծեծել

նրան։ Եվ ինչքան զարկում էր՝ այնքան այլանդակվում էր գյուղացու դեմքը, որն ինչքան այլանդակվում էր, այնքան ավելի կատաղեցնում էր սպային, չէր հաղթահարում, ընդհակառակը՝ ուժ էր առնում, ճնշում էր, ինքն էր հաղթում։ Սպան խելագարվում էր։ Ձեռքը հոգնել էր, արյան մեջ կորել, ցավում էր։ Նա խլեց ատրճանակը պատյանից և սկսեց կոթով հարվածել գյուղացուն։ Բայց ծեծված դեմքն անճանաչելի այլանդակվեց թքախառն արյան մորուքի պատառներով մսակույտերի մեջ։

— Հիմա կասե՞ս... — խռպոտ հարցրեց սպան։

Գյուղացու դեմքն այդ րոպեին արդեն իրոք սարսափելի էր։ Սպան նայեց նրա արյունոտ աչքերին, ատրճանակն ուղղեց դեպի նա, նա ուզեց կրակել, բայց ետ քաշվեց։ Գյուղացին անողոք նայում էր նրան...

— Սա կսպանի ինձ իր հայացքով, իր լռությամբ,— դարձավ զինվորներին,— դուրս տարեք սրան, վերջացրեք, չեմ կարող տանել սրա հայացքը։

Զինվորները խլեցին գյուղացուն և դուրս տարան։ Սենյակի բազմությունը շունչը պահեց։ Դրսից լսվեց մի չոր կրակոց։ Լռվեց, թե ինչպես թրմփաց գետին գյուղացու մարմինը։ Հետո դարձյալ կրակոց, կրկին ու դուրսն ամեն ինչ լռեց։ Բազմության մեջ մեկը խուլ նվաց։

— Նուո՞ւ... — խեղդված մռմռոցով լռեցրին նրան մյուսները։

Սպան գնաց դեպի դուռը, նայեց դուրս.

— Դու այդպես կնայե՞ս ինձ, դու նրան կբերե՞ս ինձ ոչնչացնելու... համա՞ռ շուն... Երկաթե ներվեր են պետք սրանց համար։ Բայց ես ունե՛մ երկաթե ներվեր,— նորից քաջալերվեց սպան և սպառնալի դիրք բռնեց։

Ու թքելով եկավ նստեց, հեռաց սեղանին հենվելով և գլուխը թաղելով ափերի մեջ։

Հետո գլուխը բարձրացրեց դեպի մնացածները.

— Գիշերս էլի կկանչեմ ձեզ՝ վերջացնելու համար պարտիզանի գործը։ Ձեզ ևս սպասում է այսպիսի մահ։ Հիմա քաշվեցե՛ք տներդ և մտածեցեք...

Եվ ծանր դոփելով հատակին ու սանդուղքի փայտե աստիճանների՝ հեռացավ։

***

Խոպոտ երգն ու հարբած բացականչությունները հետզհետե մարում էին արբշիռ, հղփացած սպաների շրթունքներին։ Մի երկուսը քնում էին մահճակալի վրա։

Սպան և մի այլ պաշտոնյա դեռ խմում էին։ Սպան չէր տարբում, թեև խմել էր կարգին։

Չոր ու ցամաք պաշտոնյան, որ ավելի սակավ էր խմել, բթի տակ մոմռալով մի երգ, երբեմն դուրս էր նայում պատուհանից, որ սև քառակուսի խավարով մի անդունդ էր բաց անում դեպի դուրս, դեպի երկինքը։ Դուրսը ամպ էր ու մշուշ։

Պաշտոնյան վեր կացավ, գնաց դեպի պատուհանը, դուրս նայեց երկար ու կրկին եկավ նստեց սեղանի մոտ։

Սպան նայեց նրա աչքերին և իրոնիկ շեշտով հարցրեց.

— Հը՛, ո՞ւմ ես սպասում։

Պաշտոնյան ներվային ժպտով նայեց սպային.

— Ե՞ս... հենց այնպես...

— Նա կգա՞...

— Ո՞վ։

— Հը՞մ։

Պաշտոնյան շարունակեց ժպտալ։

— Չի կարող։

Հետո լրջացավ և տարակուսած հայացքը հառեց սպային։

Սպան հառաչեց.

— Նա կգա՞, նրան կբերի այն սարսափելի սպանվածը։ Ինձ կատաղեցնում, հուսահատեցնում է այդ համառ, չար հայացքը։ Նա ինձ նայում է ամեն տեղ։ Լսիր, դու հավատո՞ւմ ես նախազգացմանը։

— Ե՞ս... չգիտեմ։

— Ես հավատում եմ։ Ես նախազգում եմ, որ նա կգա։

— Ո՞վ նա,— սրտնեղեց պաշտոնյան, թեև կրկնվեց մի քանի անգամ, թե ում մասին է խոսքը։

Սպան վերցրեց գինով լի բաժակը։ Նրա ձեռքը հուզմունքից դողում էր։

— Ես հավատում եմ նախազգացման։ Նա կգա, այն պարտիզանը։ Այդպես էր ասում սպանվածի հայացքը։ Նա կգա՞ և կգտնի ինձ։ Ես զգում եմ։ Անիծյա՞լ երկիր...

— Անհիմն զգացումներ են,— ասաց պաշտոնյան, բայց և ինքը սարսափեց այդ մտքից։

Հետո կրկին վերկենալով տեղից՝ անցավ դեպի դուռը՝ բացեց, նայեց դուրսը և վերադարձավ։

— Բայց ախր ի՞նչ հիմք ունես,— հարցրեց նա,— գյուղացին սպանված է, մյուսները համարյա բանտարկված, գյուղում մեր զինվորներն են։ Մինչև մտնի գյուղ, մինչև մոտենա տանը...

Դուրսը մի բան սվսվաց։ Կարծես քամին շոշափեց դռան ճաղերը։

— Պահակներն են,— ինքն իրեն սիրտ տվեց պաշտոնյան,— այնպես չէ՞...

Սպան բերանբաց ու մտքերի մեջ կորած՝ հևալով նայեց նրան։

Դուրսը լռեց ամեն ինչ։ Միայն հեռվից, անտառից հատ-հատ կաթոցի նման տնքում էր գիշերահավի ծկլթոցը։

— Ծանր է այս երկրում,— խոսեց պաշտոնյան՝ խլացնելու համար այն խռովքը, որ զարթնել էր նրա մեջ գիշերային այս պահին, օտար թշնամի երկրում, օտարի տան հարկի տակ։

— Անիծյա՞լ ցեղ,— մռնչաց սպան։— Չի՛ ընկճվում, չի՛ հանձնվում։ Այստեղ ես կգտնեմ իմ վախճանը— ահա թե ինչով կվերջանա բանը...

— Դու նախապաշարված ես, էրիխ,— խոսեց պաշտոնյան հասարակ ձայնով, վերջ տալու համար այն միստիկական մթնոլորտին, որ լցրել էր սենյակը և տոգորել նրանց,— դու նախապաշարված ես։

Հազիվ էր վերջացրել իր խոսքը պաշտոնյան՝ երբ դուռը անկատելի բացվեց և ներս նայեց մի կերպարանք, որը պղնձե դեղնագույն, նիհար դեմքին փայլում էին շարաժպիտ աչքերը։ Եվ միայն այս էր, որ տեսան սպան ու պաշտոնյան։ Նայողը ետ ընկրկեց և արագ թաքնվե՞ց, թե հեռացավ տանից։ Հետևյալ վայրկյանին պայթեց ռումբը և ամեն ինչ խեղդվեց ու կորտվեց ծխի ու մետաղի մեջ։

Դա կատարվեց այնքան հեշտ ու բնական, որքան անխուսափելի բանը, որ սպասվում է։

Շները հաչեցին, դուրսն իրար անցան, լսվեցին անկանոն, երկարատև կրակոցներ, ապա հետզհետե ձայներն հեռացան և ամեն ինչ լռեց։

***

Անտառի խաշամկուտը ռիթմիկ խշշում էր պարտիզանի քայլերից։ Նա գնում էր հանգիստ և երբ ծխախոտը տանում էր բերանին՝ մի վայրկյան խավարի միջին կարմրում էր հոգնատանջ բայց հուսալի մի դեմք, որ մտածում է։

Պարտիզանը վերադառնում էր իր ջոկատը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դեմիրճյանի դասերը—էդ. Թոփչյան 5

ԱՆՑՅԱԼԻ ՈՒՐՈՒՆԵՐ

Սեփականություն . . . 23
Ավելորդը 37
Տերտերը 60
Ժպիտը 67
Մեքենան 73
Ստամոքս 80
Խուժանի շունը 87
Խանութպան 95
Միայն մեկը 101
Ջարգյահ 123
Աղաչիո 137
Արամ թագավորը . . . 144
Գիրք ծաղկանց . . . 153
Ջութակ և սրինգ . . . 179
Թամգարանի նյութեր . . 186

ՆՐԱՆՑ ԺՊԻՏԸ

Ընկերներ 191
Դաղար 252
Նրանց ուղին 260
Հողը 281
Քարհատներ 319
Աստծո տանը 323
Խնամին 330
Կրասնարմեյցը 336
Կայարանի Ակորը . . . 341
Էշելոնը 349
Մերկե 356
Հանգստի տանը . . . 362
Արդուլ 367
Անհետացում 375
Սաթոն 379
Երեքը 387
Ցաված սեր 431
Իրեր 462
Կոնդուկտոր 468
Նարգիզը 473
Խավարի անդունդը . . . 476
Սաբեթ 479
Երկու եղբայր, երկու քույր . 484
Նոր պոեմ 502
«Քաղաքացիներ» . . . 521
Բժիշկը 525
Ջակոնա 543
Անհայրություն 550
Ուրիշի երեխան . . . 555
Մարուշ 560
Լիզոչկա 565
Քեփիքն 574
Տուն 586
Անահիտ 617
Հայրենի կտուրի տակ . . 641
Խոշտանգվածի ավանդը . . 645
Անխուսափելին 656

Դերենիկ Կարապետի Դեմիրճյան
Երկեր երկու գրքով
Առաջին գիրք

Дереник Карапетович Демирчян

Сочинения в двух книгах

Книга первая

Рассказы

(На армянском языке)

Издательство «Советакан грох, ул. Теряна, 91.
Ереван, 1977

Կազմող՝ Ա. Ս. ՔԻՇՈՅԱՆ

Խմբագիր՝ Մ. Ս. Թերզյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Դասպարյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Դ. Փիրուզյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Ս. Միրզոյան

Հանձնված է շարվածքի 6/VIII 1975 թ.։
Ստորագրված է տպագրության 11/I 1977 թ.։
Թուղթ՝ տպագր. № 1, 60×84 1/16, տպ. 41,5 մամ = 38,59 պայմ. մամ., հրատ. 31,1 մամ.։ Պատվեր՝ Հա 4։
Տպաքանակ 50 000։ Գինը՝ 2 ռ. 99 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.